


ԵՐԿՐԱՆՅՈՍ ԸԳՐԵՉ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՈՒՍՏԻՆԵՆԿԱՍ
ԳԵՂՇՐԵՆԿԱՄ



947.925/
Ն-20_{h2}

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԸԳՈՆՉ



ՀԱՅԱՍՏԱՆԵ ՀՈՒՍՏԻՆԵՆՈՍԻ ԳԵՐԱՇՐՋԵՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ
ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ

2465



ԵՐԵՎԱՆ
«ՀԱՅԱՍՏԱՆ»
1987



Ուսերենից թարգմանեցին՝
Ա. Ք. ԽՈՆՆՊԿԱՐՅԱՆ և է. Հ. ԽՈՆՆՊԿԱՐՅԱՆ
Մասնագիտական խմբագիր՝ Շ. Վ. ՍՄՐԱՏՅԱՆ

Հրատարակության պատրաստեց
է. Հ. ԽՈՆՆՊԿԱՐՅԱՆԸ

Ա. րոնց Ն.

Ա 205 Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի /Ռուս. թարգմ. Ա. Ք. Խոննդկարյանը և է. Հ. Խոննդկարյանը.— Եր.: Հայաստան, 1987, 639 էջ, քարտեզներ:

Աշխատությունը բաղկացած է երկու մասից. առաջին մասը նվիրված է Արևմտյան կամ Բյուզանդական Հայաստանին, իսկ երկրորդը՝ Արևելյան կամ Պարսկական Հայաստանին:

Աշխատության մեջ նշվում են I, II, III, IV Հայքերի սահմանները, պատմական նշանակալից դեր խաղացած մեծ քաղաքների ու ավանների տեղագրությունը և Մարզպանական Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը, նախարարությունների ժաղումը, բանակը, նրանց տոհմական հիմքերը: Հեղինակը բացահայտում է նաև Հուստինիանոսի ռեֆորմների դերն ու ազդեցությունը կայսրության սահմաններում գտնվող նախարարությունների ճակատագրի վրա:

Անվանի գիտնականի այս աշխատությունը առաջին անգամ է հրատարակվում հայերեն: Այն օգտակար կլինի պատմության և բանասիրության բնագավառի մասնագետներին, ուսանողներին, ինչպես նաև հայ մշակույթի պատմությանը հետաքրքրվողներին:

Ա 0504020000 74—86
701(01)87

ԳՄԴ 63—3(22)1

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հուստինիանոսի դարաշրջանը, որ սույն հետազոտության առարկան է, առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ Բյուզանդիայի պատմության համար: Դրա տակ չի հասկացվում միայն Հուստինիանոսի թագավորության տարիները: Հեղինակը մեծ ինքնակալի անունով կոչում է այն ժամանակահատվածը, որ սահմանագիծ է պատմության հոմեական և բյուզանդական շրջանների միջև: Դա անտիկ պետականությունից դեպի միջնադարյան պետականությունն անցնելու մի շրջան է:

Ճիշտ է, գիտության մեջ տարբեր կարծիքներ կան այն մասին, թե երբ է սկսվում բյուզանդական դարազլուխը. արդյոք Կոստանդին Մեծի ժամանակվանի՞ց, Թեոդոսիոսի օրոք կայսրության բաժանումի՞ց, թե՛ Հուստինիանոսի դարաշրջանից, բայց այս տարակարծությունները, ըստ էության, իրար չեն բացասում: Կոստանդնուպոլսի հիմնադրումը Գ դարի սկզբին և պետական կյանքի կենտրոնի փոխադրումն այնտեղ, ինչպես նաև կայսրության բաժանումը երկու մասի՝ Գ և Ն դարերի սահմանազլխին՝ նոր ժամանակաշրջանին անցնելու պրոցեսում առանձին և շատ կարևոր մոմենտներ էին: Ինչպես էլ որ բնորոշելու լինենք բյուզանդական մշակույթին ու պետականությունը, ի տարբերություն անտիկ շրջանի, չի կարելի ժխտել, որ այն սկզբունքների կազմավորումը, որոնց ամբողջականությունը կոչվում է բյուզանդականություն, տեղի է ունեցել քաղաքակիրթ Արևելքի հետ ունեցած սերտ շփման հողի վրա: Ուստի, մայրաքաղաքի տեղափոխումը արևելք, և ապա արևելյան մասի անջատումը արևմտյանից պետք է դիտել իրրև պետականության արևելականացման նշանակալից ակտեր:

Հուստինիանոսի գահակալությունը իրենից ներկայացնում է

կայսրության վաղեմի ավանդույթները փրկելու վերջին ճիգերի մի շրջան: Մեծ աշխարհակալը ձգտում էր կրկին միավորել կազմալուծված կայսրությունը՝ երազելով վերագործնել նրան նախկին վեհաօթյունը: Ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում ձեռք բերված ազմկալի հաջողությունները կարծես թե արդարացնում էին ինքնակալի հույսերը, և մի պահ թվաց, թե հարություն են առել հոռմեական հզորության լավագույն ժամանակները: Բայց անհատներին վիճակված չէ ետ դարձնել պատմության անիվը: Հուստինիանոսի երազանքները շիրականացան, և նրա ձգտումները, վերջին հաշիվով, ավելի շուտ հակառակ արդյունքներ ալվին: Հոռմեական ավանդույթների, հոռմեական ոգու պահպանման համար մղվող պայքարում անտիկ հեթանոսական աշխարհայացքը աննկատելիորեն փոխակերպվեց քրիստոնեական-բյուզանդականի: Ինքը՝ Հուստինիանոսը, մի այնպիսի միապետի կերպար էր, որ համառնդում էր թե՛ հոռմեական և թե՛ բյուզանդական շրջանի կայսրին հասուն կրթության գծերը: Քրիստոնեություն ընդունելու հետևանքով պետական կյանքում առաջ եկած բեկումը այդ ժամանակ այնպիսի լարվածության հասավ, որ Հուստինիանոսի դարը կարող ենք համարել սահմանորոշ մի շրջան, որը փակում է պատմության հին դարազրույթը և բացում նորը՝ բյուզանդականը:

Ուսումնասիրության առարկա բնորելով հատկապես այդ անցման ժամանակաշրջանը, մենք ելակետ ենք ունեցել նախ և առաջ հայոց պատմության համար նրա ունեցած կարևորությունը:

Հայոց պատմությունը բառի բուն իմաստով սկսվում է Հայաստանում քրիստոնեության հաստատման ժամանակներից: Եթե պատմություն ասելով հասկանալու լինենք մի գիտություն, որը հնարավորություն է տալիս երևան հանելու տվյալ ժողովրդի անցյալն այնքանով և այնպիսի գծերով, որ կարելի լինի գաղափար կազմել նրա հոգևոր նկարագրի մասին, ապա հայերի համար այդպիսի պատմություն գոյություն ունի միայն հիշյալ շրջանից սկսած: Հայոց նախաքրիստոնեական կյանքը, գոնե պատմագիտության ներկա վիճակում, ծածկված է խավարով. մեզ հայտնի են մեծ մասամբ հայերի և հարևան տերությունների հարաբերություններին վերաբերող առանձին փաստեր, կցկտուր, երբեմն էլ հանդամանալից տեղեկություններ: Այդ կարգի նյութերը իբրև աղոտ, բեկբեկուն ճառագայթներ, թեքև, հնարավորություն են տալիս որսալու ընդհանուր

քաղաքական կյանքի ուրվագիծը, բայց միանգամայն անզոր են լուսավորելու կենցաղի ներքին և իրական կողմերը:

Ժողովուրդների պատմական կյանքի ամենալավ վկան և նրա մեղմարները լեզուն ու դպրությունն են: Պատմագիտությունը ամուր հայի վրա է կանգնում այն պահից, երբ իր տրամադրության տակ տննում է տվյալ ժողովրդի լեզվով խոսող փաստաթղթեր: Այդ տեսակետից հայ պատմագրությունը սկսվում է, խիստ ասած, դպրության երևան գալու ժամանակվանից:

Հայերի գիր ունենալու հոգսը սկիզբ է առնում Հայաստանում քրիստոնեության հաստատման հետ միաժամանակ՝ Դ դարի սկզբին: Այդուհանդերձ վերջնականապես մշակվում է Ս դարի սկզբին: Իսկ զբաղության առաջին հուշարձանները, ավելի ճիշտ՝ մեզ հասած պատմական գրականությունը վերաբերում է Ս դարի վերջերին: Քրիստոնեական գրականության սկզբնական վավերագրերը հակվում էին գերազանցապես դեպի ասորա-պարսկական եկեղեցական աշխարհը, բյուզանդական եկեղեցու հետ նրա առավել սերտ շփումը սկսվում է 2 դարից:

Միշտ էրեք հիմնակետերը՝ Դ դարի սկիզբը, Ս և Զ դարերը հանդիսանում են նույնպիսի նշանակություն ունեն, ինչպես Բյուզանդիայի համար: Գրանք դեպի բյուզանդականությունը կատարվող շրջագրանքի ամենացայտուն պահերն են: Հայաստանը, հաղորդակից մեկը ժողովրդի քրիստոնեական մշակույթին, դարձավ լայնածավալ բյուզանդական աշխարհի մի մասը: Ի՞նչ էր ներկայացնում Հայաստանը Բյուզանդական կայսրության կազմավորման նախօրյակին, ինչպիսիք էր նրա վիճակը, գերազանցապես քաղաքական վիճակը այն ժամանակ, երբ նա կայսրության շահերի շրջանակն էր ներգրավվում, — ահա այն հիմնական խնդիրը, որ սույն աշխատության ընկերության առարկան է: Սույն խնդրի ուսումնասիրությունը թելադրվում է ոչ միայն երկնելով հայոց պատմության շահերից, այլ, ինչպես սովոր, նաև Բյուզանդիայի շահերից:

Բյուզանդական կայսրությունը բնավ էլ միատարր չէր ո՛չ իր վերնաշրջանի կազմով և ո՛չ էլ նույնիսկ մշակութային ու կենցաղային տեսակետից: Պետության ամբողջականությունը հիմնված չէր որևէ միջուկի, վերնաշրջանի որևէ տարրի մյուս ժողովուրդների վրա ունեցած գերակշռության վրա: Այստեղ գոյություն չուներ, ինչպես հոռմեացիների մոտ, հաղթողներին պարտվածներից տարբերող սահման: Հույն ազգն իր ուժով ու նշանակությամբ, անկասկած, գտնը-

վում էր հատուկ վիճակում, բայց ասել, թե բյուզանդականութունը նրա արարչությունն է, այնքան էլ ճիշտ չէր լինի: Համենայն դեպս այդ ժամանակաշրջանը բազմակողմանիորեն ուսումնասիրելու և ճիշտ բնորոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ամենը, որ ցնդային առանձին աշխարհները ներդնում էին պետական և հոգևոր կյանքի ընդհանուր գանձարանը: Նրանց մեջ հայոց աշխարհին և առհասարակ արևելյան ժայրերկրին պատկանում էր առաջին տեղերից մեկը, նրա ավանդը կայսրության ընդհանուր կյանքի մեջ շափազանց մեծ էր: Մյուս կողմից, նույնքան ճիշտ է և այն, որ կայսրության հունի մեջ ներդրաված արևելյան երկրները իրենց հերթին կրում էին կայսրության կրթական հզոր ազդեցությունը: Այդ իմաստով Հայաստանի հարաբերությունը Բյուզանդիայի հետ մասի հարաբերությունն է ամբողջի հետ: Հետազոտել հայկականը Բյուզանդիայում և բյուզանդականը՝ Հայաստանում, մի խնդիր է, որի մեջ հավասարապես շահադրգոված են և՛ հայագիտությունը, և՛ բյուզանդագիտությունը: Այստեղ անհրաժեշտ է հաշվի նստել երկու տեսակետների հետ էլ, կանգնելով բացառապես կայսրության տեսակետի վրա, կարելի է շատ բան չնկատել և ընդհակառակը՝ հնարավոր է նույնպիսի վտանգ նեղ հայկական տեսակետից: Երևելքները ըստ արժանվույն զնահատելու համար պետք է հաշվի առնել ինչպես կայսրության, այնպես էլ տեղական շափանիշը:

Համապետական շահերից բացի հայերն ունեին նաև իրենց ազգային և շատ կողմերով ինքնատիպ կյանքը: Մենք չենք կարող սահմանափակվել հայկական կյանքի միայն այն կողմերի քննությունում, որոնցով նա շփվում էր կայսրության հետ: Նույնիսկ Բյուզանդիայում ծագած հայկական հոսանքները հատուկ նպատակով ուսումնասիրելու համար ավելի արգասավոր կլինեն ելնել հայկական հողերի ընդհանուր վիճակից, չխոսելով արդեն այն մասին, որ դա է պահանջում նաև հայերով զբաղվող դիպլոմատիկ ինքնուրույնությունը: Այդ պատճառով էլ մենք վերցնում ենք հայկական հողերը im toto և քննում ենք ոչ միայն Բյուզանդիայի գերիշխանության աակ եղածները, այլև մյուսները՝ նրանց պարսկական մասերը: Քաղաքականապես մասնատված Հայաստանը մյուս տեսակետներից ներկայացնում էր մի ամբողջական մեծություն: Իհարկե, երկրի վրա ծանրացած քաղաքական վարչակարգը փոխում էր նրա նկարագիրը՝ կախված այն քաղաքական իրավիճակից, որի մեջ գտնվում էին երկրի տարբեր մասերը և համապատասխան փոփոխություններ

էին աեղի ունենում նրա ներքին կյանքում: Արշակունիների անկումից ի վեր երկրի քաղաքական մասնատվածությունը կարծես դառնում է կեցություն բնականոն ձև: Այդ հանգամանքը իր ազդեցությունն է թողնում կյանքի մյուս բնագավառների վրա և խանգարում երկրում համընդհանուր տրամադրություն ստեղծելուն, որի բացակայությունը մշտապես ողբում են հայ պատմիչները և որը համարում են Հայաստանի գլխին թափված բոլոր աղետների գլխավոր պատճառը: Բայց այս ամենի կողքին կար և մի ինչ-որ ընդհանուր բան՝ ամենից առաջ լեղուն, դարությունը և պատմական ավանդույթները, որոնք քաղաքական-տերիտորիալ սահմանադատամեներից զուր հանդիսանում էին ազգային միասնության շաղախ: Հայոց պատմությունը պատշաճ ձևով լուսաբանելու համար պետք է հաշվի առնել այդ հանգամանքը և հայկական հողերի բազկացուցիչ մասերի նախատադիրը քննության առնել ամբողջությամբ և յուրաքանչյուր հատվածինը՝ առանձին, այսպես ասած՝ ընդհանուր և մասնաձևը իրազրություն մեջ: Այլապես անխուսափելի կլինեն սխալները, որոնք կարող են առաջ գալ ոչ ճիշտ ընդհանրացումներից և ամբողջ երկրին աջախիսի բաներ վերագրելուց, որը ճիշտ է միայն նրա մի որևէ մասի վերաբերյալ: Սույն աշխատության մեջ հայկական հողերը քննության են առնված նրանց մասնատվածություն և քաղաքական վիճակի տեսակետից, և կազմված է համապատասխան աշխարհագրական քարտեզ*:

Մեր աշխատության հիմքում ընկած են որակով ու ծագումով տարբեր նյութեր, որ քաղված են ազգային և օտար աղբյուրներից: Ընդունելով Հայաստանի մասին դասական գրականության տվյալներն ամբողջ արժեքը, մենք չենք բաժանում հայկական նյութերի նկատմամբ շատ հետազոտողների կողմից սեփականացրած բացասական տեսակետը: Մենք հեռու ենք այս կամ այն կողմի՝ դասական կամ հայկական աղբյուրների տվյալների նկատմամբ կանխակալ կարծիք ունենալուց: Վիճելի դեպքերում հավասարապես քննադա-

* Մեզ է օգտակար, որ մեզինք անկախ մի շարք պատճառներով տպագրության պատրաստ քարտեզը հնարավոր չեղավ հրատարակել սույն աշխատության ընդհանուր տեսակով:

Մանրագրեր. — Հրատարակության պատրաստելով ներկա հայերեն թարգմանությունը՝ կատարում ենք հեղինակի ցանկությունը. աշխատությանը կցում ենք նաև քարտեզ, որ պատրաստել է Հայկական ՍՍՀ ՔԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը (է. Ն. Խոնդկարյան)

տորեն ենք վերաբերվում մեր ձեռքի տակ եղած նյութերին, անկախ նրանց ծագումից: Հայ մատենագրության տվյալների անբավարար լինելը պայմանավորված է Հայաստանի ճակատագրի առանձնահատկությամբ: Հայ ժողովրդի հոգևոր կյանքը մեծ բեկումներ է ունեցել և այնպիսի անակնկալների է ենթարկվել, որ երբեմն ուղղակի ընդհատվել է՝ ամբողջովին կորցնելով կապը նախկինի հետ: Քաղաքական տաղանապալից հեղաշրջումները այնպես էին փշրում պատմական հաջորդականության շղթան, որ երբեմն հաջորդ սերունդը ոչ հեռավոր անցյալի նկատմամբ այնքան անտեղյակ և այնպիսի անօգնական վիճակի մեջ էր ընկնում, ինչպես մենք այսօր: Երկրի մասնատված վիճակը և կյանքի բնականոն ընթացքի հաճախակի ընդհատումները խանգարում էին միասնական ավանդույթների մշակմանն ու պահպանմանը:

Հենց որ հանգարտվում էին քաղաքական փոթորիկները, ետևում էին մնում ձախորդությունների սուր շրջանները, և կյանքը սովորական հունի մեջ էր մտնում, արթնանում էր հետաքրքրությունն անցյալի նկատմամբ, սկսվում էր տաղանապալից ժամանակներից փրկված հուշարձանների ուսումնասիրությունը՝ հին ժամանակների հետ եղած կապը հասկանալու, ներկան անցյալի հետ որևէ կերպ շաղկապելու նպատակով: Այդպիսի դեպքերում անցած օրերին սեևոված միտքը սովորաբար տրամադրվում է ուսմանտիկոթին: Որքան ավելի քիչ է հաջողվում որսալ անցյալի ուրվագծերը, որքան ավելի մշուշապատ են վեր բարձրանում հարազատ դեմքերը ժամանակների խավարի միջից, այնքան ավելի շեշտված է արտահայտվում ուսմանտիկ տրամադրությունը: Բազրատունիների դարաշրջանի մարդիկ կարծես չէին նկատում իրենց ժամանակի ուրախալի երևույթները, այն փայլը, որի մասին վկայում են այժմ պեղումների ժամանակ գտնված մշակութային արժեքները, և մտքով թռչում էին հեռուն, դեպի այն ժամանակները, երբ իշխում էին Արշակունի թագավորները, երբ գործում էր սուրբ Լուսավորիչը: Նման հանգամանքներում, իհարկե, չի կարելի սպասել ճիշտ հայացք ու սեփական անցյալի ճիշտ ըմբռնում: Նախնիների գրական ժառանգությունը վերամշակվում էր ժամանակի տրամադրություններին ու հայացքներին համապատասխան, տվյալ տրամադրության տեսակետից անկարևոր համարվող երկերը կամ մոռացության էին մատնվում կամ ոչնչացվում էին: Քիչ հուշարձաններ զոհ չդարձան դավանական և քաղաքական անհամերաշխության հողի վրա բոբրոբված կուսակցական կրքերի:

Այդպիսի պայմանների հետևանքն այն եղավ, որ պատմական հարցերի վերաբերյալ մի կողմից շատ շուտ հաստատվեցին շոր կաղապարներ, որ հետո կրկնում էին դուրահավատ հեղինակները, իսկ մյուս կողմից ազատ հրապարակ էր մնում սուբյեկտիվ մեկնաբանությունների համար՝ նման դեպքերում պատմական հետանկարների նկատմամբ անխուսափելի սխալներով կամ հետագա երևույթները ճանաչելու, կամ էլ հին երևույթները նոր հայացքների ու շահերի ընդդեմ տակ վերամեկնաբանելու պատճառով: Գլուխ հանել այս հարցերից, արձակել այս բոլոր արհեստական հանգուցյաները՝ մատենագրության պատմության խնդիրն է. այնուամենայնիվ մենք շենք խուսափել զրանք բնությունն առնել և աշխատել ենք ուժերը ներածին շափ պատասխանել զրանց, որքանով այդ պահանջել է մեր աշխատանքի ընթացքը: Մեզ համար գերազանցապես կարևոր է վիճելի հարցերի պատմական կողմը: Այդ պատճառով ոչ միշտ մտնելով գրական ըննադատության մանրամասների մեջ, մենք կանգ ենք առել փաստական նյութերի հավաստիության աստիճանի և հարաբերական հնության վրա: Մենք աշխատել ենք զրավոր հուշարձաններում փնտրել մեր խնդրի համար պիտանի նյութեր, այն խրամքազրպան պայմանականություններից ու մշակումներից դուրս, որոնցով զրանք հասել են մեզ: Երջանցելով սխեմայացման ավանդական սովորույթը, մենք թանկ ենք դնահատել միայն պատմական արժեքը, թեկուզև այն չի համապատասխանել գրական արժեքին:

Վերլուծության գործը բարդանում էր նաև նրանով, որ պատմական նյութերն անհրաժեշտ էր լինում քննել ոչ թե նրանց հավաստիության տեսակետից ընդհանրապես, այլ գլխավորապես մեր կողմից ուսումնասիրվող շրջանի կապակցությամբ: Երևույթների զարգացման մեջ համապատասխան պահը որոշելու համար շատ անգամ հարկ եղավ դիմել ժողովնաբանական հետազոտման մեթոդի օգնությանը, այսինչ՝ հարցերը լուսարանել պատմականորեն, զրանց զարգացման հաջորդական փուլերը դիտել մինչև մեզ գրադեցնող դարաշրջանը: Այս ձևով հնարավոր եղավ կողմնորոշվել բաղմամբիվ հավաստական, երբեմն անհամատեղելի տվյալների մեջ և համոզվել, որ տարակարծությունը հաճախ ծագում է պատմական դիժը շլպահանջից և տարբեր ժամանակներին ու տարբեր վայրերին վերաբերող տվյալները իրար հետ շփոթելուց: Այդ պատճառով մեր աշխատանքը հաճախ դուրս է եկել նախագծված սահմաններից, թերևս է վնաս նրա կառուցվածքի: Առանց ժողովնաբանական տեսու-

թյան և առկա նյութերն իրենց ամբողջությամբ օգտագործելու զբժ-
 վար կլինեն որսալ Հայաստանում եկեղեցական կազմակերպության
 և նախարարական վարչակարգի հիմնական գծերը տվյալ փուլում:
 Նախարարութիւնը հայոց պատմական կյանքում շատ բնորոշ
 երևոյթ է և հսկայական կարեւորութիւն ունեցող մի գործոն: Հա-
 յաստանում քաղաքական աղտոտության վախճանը վրա հասաւ իս-
 կապէս ոչ թէ Արշակունիների կամ Թագրատունիների թագավորա-
 կան հարստութիւնների անկումով, այլ մոնղոլների արշավանքի
 շրջանում նախարարական տոհմերի կործանումով:

Արեւելյան Հայաստանում նախարարության և Արևմտյան Հա-
 յաստանում ներքին վարչակարգերի քննարկումով մենք ուրվագծել
 ենք հայկական հողերի գույավիճակը մեզ հետաքրքրող դարաշրջա-
 նում, քանի որ այդ անհրաժեշտ էր քաղաքական և այլ կարգի իրա-
 դարձութիւնները հասկանալու համար, որոնց շարադրանքին նվիր-
 ված է լինելու մեր աշխատության հաջորդ մասը:

Ի վերջո, թերեւս ավելորդ չէր լինի նկատել, որ, հրատարակելով
 սույն աշխատութիւնը, մենք շատ հեռու ենք այն կատարյալ համա-
 րելու մտքից: Հայ բանասիրութիւնը դանդաղ է այնպիսի վիճակում,
 որ դեռևս իսսը չի կարող լինել անասարկելիորեն ճիշտ որևէ եղրա-
 կացության ու տեսության մասին: Հայոց անցյալն ուսումնասիրող-
 ները հարկադրված են պատմական բազմաթիվ հարցերին մոտենալ
 խարխափելով, ավելի կամ պակաս հաշոյ կռահումներ անելով, ո-
 որոնց մի մասը կարող է հետապնդում հաստատվել, մյուսը՝ ոչ: Մեր
 աշխատության նկատմամբ մենք համակված ենք այն գիտակցու-
 թյամբ, որը կարող է արտահայտվել եվրոպական ֆեոդալիզմը ու-
 սումնասիրողներից մեկի խոսքերով. für eine Zeit, in welcher die
 Quellen aus Fragmenten bestehen, wird niemand das allein
 Richtige gefunden zu haben glauben.

Ն. Աղոնց

Գ Լ ՈՒ Խ Ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հայաստանի պատմական պայմաններ և նրա դիրքը հարևան երկրնե-
 րի շարքում: Հայաստանի բաժանումը՝ Արևմտյան կամ Քյուզնեղական
 Հայաստան և Արևելյան կամ Պարսկական Հայաստան: Սանճանգքը Դա-
 րայից մինչև Քեղզաստաղիս և այնուհետ մինչև Սև ծով: Սանճանգքի
 վրա բնկած գլխավոր կետեր և սանճանապան պահականոցները: Դարս և
 Մշրբն: Մարտիրոսուպոլիս, Փիսն, Արբախ և Կղեսուրք: Ակբա, Քղիմար և
 Փում: Կիքառին և Արտալեան: Երեզ և Աղնուա: *Արտաղիք-Նեղիս բնակա-
 վայրերը: Քեղզաստաղիս և Գու: Բողոն և Փառանգլին: Շաղազոմ և Ախալ,
 Ճանիք և Տայք: Եզր:

Տեղեւորիալ իրադրութիւնը այն դիտության կարևոր բնագա-
 վաններէն մեկն է, որ զբաղվում է արտաքին պատմությամբ: Հան-
 րահայտ է, որ այն նյութական միջավայրը, որտեղ զարգանում է
 տվյալ ժողովուրդը, նրա կյանքի պատմական ընթացքը պայմանա-
 վորոզ գործոններից մեկն է: Գերադասեցապես այդ միջավայրում են
 թաքնված արտադրողական այն պայմանները, որոնց առկայու-
 թյամբ ձևավորվում է ժողովուրդների անհատական դիմագիծը և
 որոշվում նրանց անցած պատմական ճանապարհի առանձնահատ-
 կութիւնը: Ուստի հասկանալի է, որ տերիտորիալ իրադրության
 վերլուծութիւնը պետք է նախորդի պատմության վերաբերյալ որևէ
 այլ հետազոտության:

Հայաստանի, ինչպես և յուրաքանչյուր այլ երկրի համար, որին
 վիճակված չի եղել աշխարհակալական դեր խաղալ համաշխարհա-
 յին քաղաքականության մեջ, այդպիսի վերլուծութիւնն ունի ա-
 տանձնահատուկ նշանակութիւն: Նյութական իրադրութիւնն ասե-
 լով մենք հասկանում ենք, իհարկե, ոչ միայն աշխարհագրական
 միջավայրը, այլև պատմական իրադրութիւնն ընդհանրապես, այ-
 ղինքն՝ ոչ միայն երկրի բնական պայմանների ամբողջութիւնը, այլ
 նաև այն դիրքը, որ նա զբաղւում է շրջապատող երկրների և ժողո-
 վուրդների խմբերի միջև: Հայաստանը գտնվել է փոքր երկրների՝

Վիրքի, Աղվանքի, Ատրպատականի, Ասորիքի և Կապադովկիայի միջև, որոնց հետ նա այս կամ այն շափով մշակութային կապի և ցեղային ազգակցության մեջ է նդել և նույն քաղաքական ճակատագիրն է ունեցել: Այդ երկրները տերիտորիալ առումով միշտ միևնույն կայուն մեծությունը չեն ունեցել: Նրանց սահմանները հաճախ փոփոխվել և որոշվել են յուրաքանչյուր տվյալ դարաշրջանում գոյություն ունեցող ուժերի փոխհարաբերությամբ: Հայերի բնակության գոտին կամ տարածվել է այս կամ այն ուղղությամբ և կամ կրճատվել՝ նայած մշակութային և քաղաքական պայմաններին: Պատմության ասպարեզում երևան գալու պահից ի վեր Հայաստանը հայտնվեց միմյանց հետ մրցող հզոր պետությունների միջև, որոնց ազդեցությունը շատ մեծ եղավ նրա ներքին կյանքի վրա: Քաղաքական ուժը մեկ անգամ չէ, որ խաթարել է Հայաստանի օրգանական աճը, կոտրելով և ձևափոխելով երկրի դարգացման բնականոն ընթացքը: Այս կամ այն պետության քաղաքական գերակշռության ազդեցության տակ Հայաստանում հաճախ փոփոխվում էին մշակութային կյանքի կենտրոններն ու նրա ամբողջ բնույթը: Այդ փոփոխությունները առաջացնում էին բնակչության նորանոր տեղաշարժեր՝ տարբեր կողմեր նետելով ցեղային ալիքները: Սխուլաստիկան հաճախ Հայաստան է տեսնում այնտեղ, որտեղ աշխարհագրական տերմինները այլևս չեն արդարանում նախկին ցեղային բովանդակությամբ և, ընդհակառակը, աչքաթող է անում կամ ճիշտ չի գնահատում հայերի նշանակությունը այլ շրջաններում:

Սկզբում հայերի տեղաշարժը կատարվում էր արևելյան ուղղությամբ և Արշակունիների ժամանակ հասավ առավելագույն սահմաններին: Հայաստանում քրիստոնեություն ընդունելու նախօրյակին հայ Արշակունիների տիրապետությունը տարածվում էր մինչև Ատրպատականի մայրաքաղաքը՝ Գանձակ¹, այսինքն՝ ընդգրկում էր հին Մարաստանի ճիշտ կեսը: Ըիշտ է, այդքան հեռուն էին տարածվում միայն քաղաքական սահմանները, բայց այստեղ չի կարելի ժխտել նաև ցեղային հիմքը՝ հայկական տարրի ճնշումը Ատրպատականի ժայռամասում:

¹ Չպետք է շփոթել Ուտիքի կամ Օտենիի գավառում գտնվող նույնանուն քաղաքի՝ Գանձակ-Նիդզավեստոլոյի հետ: Ատրպատականի Գանձակը գտնվում էր այժմյան Քալբախից բավական հարավ: Գանձակաները այն նույնացնում են այժմյան Քալսուր-Սուլեյմանի հետ, Ջնեջանի մոտ: Հայաստանի սահմանների հարցը կրճատվի սուրբ:

Ավելի ուշ տեղաշարժ է նկատվում հակառակ ուղղությամբ. Հուստինիանոսի դարաշրջանում ուժեղանում է ձղտումը դեպի արևմուտք, և նախկին Կապադովկիայի մի զգալի մասն այն աստիճան է հայացվում, որ պաշտոնապես նրան տրվում է Հայաստան անունը: Հայ ազգաբնակչության տեղաշարժը կամ հասարակական կյանքի կենտրոնի տեղափոխությունը ուղեկցվում էր հարևան ժողովուրդների կողմից Հայաստանի վրա համապատասխան կողմերից գործազրկող ճնշմամբ, նրա տերիտորիայի մասնակի կորուստով: Էթնիկական մակընթացությունների և տեղատվությունների այդպիսի նշույթներ էին տեղի ունենում նաև Հայաստանի հարավում ու հյուսիսային ծայրամասերում, որտեղ, զրա հետևանքով, նրա սահմանները նույնպես աչքի չէին ընկնում իրենց կայունությամբ:

Այս պայմաններում որոշել Հայաստանի, իբրև աշխարհագրական մեծության, դիրքը սահմանակից երկրների՝ Վիրքի, Աղվանքի, Ատրպատականի, Ասորիքի և Կապադովկիայի միջև և հետևել նրանց տերիտորիալ փոխհարաբերություններին պատմական հետազոտում, յուրաքանչյուր դարաշրջանում փոփոխված տվյալների համաձայն, մի բարդ խնդիր է, որ կարող է հատուկ ուսումնասիրության նյութ դառնալ: Մեր խնդիրը այս առումով սահմանափակվում է գերազանցապես մեղ հետաքրքրող Հուստինիանոսի դարաշրջանի շրջանակներով և կայանում է նրանում, որ նախապես ուրվագրենք պատմական այն թատերաբեմը, որի վրա ծավալվել է հայ ժողովրդի կյանքը նշված ժամանակաշրջանում:

Համեմատելիների և պարսիկների դարավոր պայքարը Հայաստանի համար Գ զարի վերջում հանդեցրեց նրա բաժանմանը երկու մրցակիցների միջև, ապա նաև արքայական թագի վերացմանը Հայաստանում: Այն գրությունը, որ ստեղծվեց բաժանման ժամանակ դաշնադրային համաձայնությամբ, պահպանվեց նաև հետագա դարերում՝ մինչև Զ զարի վերջը, երբ Հայաստանի կենտրոնական նահանգները Մասանյաններից անցան Բյուզանդիային: Երկրի քաղաքական բաժանումը երկու՝ արևելյան և արևմտյան մասերի հայ ժողովրդի կյանքում առաջ բերեց նաև մշակութային երկատվածություն, որ պայմանավորված էր բյուզանդական և իրանական պետականությունների տարբերությամբ: Տիրապետող տերությունները զրաջ ազդեցություն ունեցան Հայաստանի՝ իրենց ենթակա մասերի հասարակական կառուցվածքի և հայ իրականության շատ կողմերի վրա: Այսպես, օրինակ՝ հայերի անհավասար, ուղղակի առած, երկա-

կի վերաբերմունքը այդ ժամանակ ամբողջ քաղաքակիրթ աշխարհն արեկոծող ընդհանուր եկեղեցական կյանքի երևույթների նկատմամբ պետք է բնավի ու լուսաբանվի քաղաքական կյանքի ոչ միատարր պայմանների հետ կապված: Հայտնի է, թե որքան հաճախ իշխանությունները խուժում էին եկեղեցական կյանքի բնագավառը ոչ միայն Բյուզանդիայում, այլև Պարսկաստանում և տիրաբար արդում գավառապետական վեճերի լուծման վրա՝ հօգուտ քաղաքական տարրեր ըմբռնումների: Այս պատճառով էլ Հայաստանում բյուզանդական և պարսկական իշխանությունների արդեցություն գոտիների ամենախիստ սահմանադատումը ներկայացնում է ոչ միայն աշխարհագրական, այլ նաև մշակութային մեծ հետաքրքրություն:

Հայաստանի բյուզանդական կամ, ինչպես կոչում էին Արևելքում, հռոմեական և պարսկական մասերը միմյանցից բաժանող սահմանագիծը հյուսիսում անցնում էր Թեոդոսուպոլիս-էրզրումի և հարավում՝ Մծբինի մոտով՝ ընդ որում առաջինը մնում էր հռոմեական, իսկ երկրորդը՝ պարսկական բաժնում: Մծբինի դեմաց, մի քիչ ավելի հյուսիս, բյուզանդական մասում գտնվում էր Դարա ավանը, որ Անաստաս կայսեր օրոք վեր էր ածվել բերդաքաղաքի և նրա անունով կոչվում էր Անաստասուպոլիս: Ժամանակակից պատմաբանի վկայությամբ Դարան գտնվում էր Մծբինից 98, իսկ պարսկական սահմանից՝ 28 ստադիոն հեռավորության վրա: Այժմ քաղաքի տվերակների վրա կանգնած է աննշան մի դյուղ Դարա կամ Կարա-Դարա անունով, որ մոտավորապես նույն հեռավորության վրա է գտնվում այժմյան Նիզիբիս-Մծբինից: Քսանուի ստադիոնը հավասար է մոտավորապես 4,5 վերստի, նշանակում է, Դարան համարյա թե պարսկական սահմանի վրա է գտնվել¹:

¹ Proc. Pers. I, 10, p. 49. Kiepert, Kleinasien.
² Պրոկոպիոսը De Aedificiis-ի մեջ (II, 1, p. 210) ճշտում է Դարայի տեղը հետևյալ խոսքերով. Ξγχιστα τη των Περσικών ὄρων... Δάραις, ἔστι 98 κερὰ 4 κερὰ τῆς ἀπὸ τῆς μιλίων τῆς αὐτῆς πόλεως (sc. Δαρῶς) εἰσι τὰ μεθόρια καὶ οἱ ὄροι Πέρσιδος καὶ Συρίας p. 46. Հռոմեական մղոնը հավասար է 7 ստադիոնի, 6 մղոնը կազմում է 42 ստադիոն: Պրոկոպիոսը նույն տարածությունը համարում է 28 ստադիոն: Հարիվ թե Կրպրացու ցուցումը վերաբերում է ուրիշ ժամանակի: Ավելի հավանական այն է, որ Պրոկոպիոսի ստադիոնը 210 մետրից՝ ստադիոնի սովորական չափից ավելի է: Ուղիղ դժով Դարայի և Մծբինի միջև եղած տարածությունը 30 կիլոմետր է, իսկ Պրոկոպիոսի մոտ՝ 98 ստադիոն:

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանին առավել մտածիկ սահմանը Նիմփիոս գետն էր, որի ափին գտնվում էր Մարտիրոսուպոլիսը՝ սահմանային կարևոր պահականոցներից մեկը: «Հայաստանում, որ կոչվում է Սոփանենն (Սոփք), —ասում է պատմագիրը,— կա մի քաղաք՝ Մարտիրոսուպոլիս, որ գտնվում է Նիմփիոս գետի ափին, թշնամու սահմաններին շատ մոտ, քանի որ Նիմփիոսն այդ տեղում հռոմեական տիրույթները բաժանում է պարսկականից: Գետի մյուս կողմում ընկած է Արքսանա երկիրը (sc. Արզան-են-ե), որ հնուց ի վեր ենթակա է պարսիկներին»¹:

Նույնը կրկնվում է մի ուրիշ տեղ. «Մարտիրոսուպոլիս քաղաքը գտնվում է Սոփանենն (Սոփք) կոչվող շրջանում, Ամիդից հյուսիս, նրանից 240 ստադիոն հեռավորության վրա: Այն գտնվում է Նիմփիոս գետի ափին, որը հռոմեական տիրույթները բաժանում է պարսկականից»: «Նիմփիոս գետը հասում է Մարտիրոսուպոլիս մոտով և Ամիդից գտնվում է մոտավորապես 300 ստադիոն հեռավորության վրա»²:

Մի ուրիշ անգամ հեղինակը Մարտիրոսուպոլիս և Ամիդի միջև եղած տարածությունը հաշվում է «արագաբալլ հետիոտնի մեկ օրվա ճանապարհից մի քիչ ավելի», որ համապատասխանում է նախորդ տարածությանը՝ 240 ստադիոն, քանի որ համաձայն նույն հեղինակի վկայության մեկ օրվա ճանապարհը, իբրև շափ, հավասար է 210 ստադիոնի³:

Մարտիրոսուպոլիսից ոչ հեռու, նրանից 100 ստադիոն հեռավորության վրա էր գտնվում Աթթախ գյուղը⁴:

¹ Proc. Aed. III 2 p. 248. ἐν Ἀρμενίᾳ τῇ Σοφανήνῃ καλουμένῃ πόλις ἐπὶ τοῦ Μαρτυροπόλεως ὄνομα παρ' αὐτὸν ποταμὸν Νυμφίον κειμένη καὶ τῆς πόλεως ὡς ἀγχοτάτω πρόσοικος οὖσα՝ ἐπεὶ ὁ Νυμφίος ποταμὸς ἐκρίθη ἐνταῦθα τὰ Ῥωμαίων τε καὶ Περσῶν ἡθῆ. ἐπὶ θάτερα γὰρ τοῦ ποταμοῦ Α ρ ξ ἄ ν η ἡ χώρα δίκαιται Περσῶν κατήκοος ἐκ παλαιοῦ οὖσα.
 Արևմտյան մասին, իբրև պարսկական հարուստ նահանգի, տեղյակ է նաև Նալեկ Եփեսոսցին. Եփեսոսց. Եփեսոսց. պատմութ., VI, 15, գրք. Բարզմ. էջ 243, ինչպես նաև՝ De Beatis, p. 191, Arzanene Persarum.
² Proc. Pers. I 21 p. 107. Ib. I 9 p. 42. ἔστι δὲ ὁ ποταμὸς οὗτος Μαρτυροπόλεως γέν ἀγχοτάτω, Ἀμιδῆς δὲ ὄσον σταδίων τριακοσίων.
³ Aed. III, 1, p. 249. Vand I, 1, p. 312.
⁴ Pers. I 21 p. 108, χωρίον Ἀτταχίς. Georg. Cyrp. κάστρον Ἀτταχῆς, p. 67, καὶ Ἐσθηβί, 9, 36, երկրաշարժից վնասված վարերի թվում հիշատակած գյուղատեղը մագաղաթ բերդին Դիլաթայ և Աթթախ:

Հին Ամիրը, որ թուրքերեն կոչվում է նաև Կարա-Ամիր¹, եղել է այժմյան Դիարբեքիրի տեղում: Իսկ Մարտիրոսուպուլիսը նույնացվում է Մայաֆարկին քաղաքի հետ, որ գտնվում է Բաթման գետից ոչ հեռու, Մասնա բարձունքներից դեպի Ամիր ձգվող լեռնաշղթայի լանջերից մեկի վրա: Մայաֆարկինից դեպի հյուսիս, լեռներում այսօր էլ կանգուն է Աթթախը Բաթմանը՝ Տիգրիսի կարևոր վտակներից մեկը, պետք է ենթադրել, որ Մարտիրոսուպուլի մոտով հոսող հին Նիմփիոսն է: Մարտիրոսուպուլիսը գտնվում էր Ամիրից 240 ստադիոն, իսկ Նիմփիոս գետը՝ 300 ստադիոն հեռավորության վրա, որից երևում է, որ քաղաքը, ընայած հեղինակի ἄγχοτάτω արտահայտության, անմիջապես գետի ափին չի եղել, այլ հրանից 60 ստադիոն՝ մոտավորապես 10 վերստ հեռավորության վրա: Ըիշտ այսպիսի տեղադրություն ունի Մայաֆարկինը Բաթման գետի նկատմամբ: Հայկական գրավոր հուշարձաններում քաղաքի անունը հնչում է նփրկերտ, և նրա հիմնումը վերագրվում է Մարութա անունով մի եպիսկոպոսի, որն այդ քաղաքը որպես թն կառուցել է ի պատիվ մարտիրոսների իր ձեռքով հաճաքած մասունքների²: Այս ավանդությունը կապվում է քաղաքի Μα-ρ-τ-υ-ρ-ο-π-ο-λ-ι-ς անվան հետ, որ հասկացվել է որպես «նահատակների քաղաք»: Հայկական ձևը՝ նփրկերտ (nēfērkert), համապատասխանում է ասորական mēfarkt-ին, իսկ հայկական մուհարկին muharkin և ասորերեն mēfarkin-ը համազոր են արաբական miyya-fārkin-ին: Առաջին ձևը պետք է համարել ավելի հին: Վերջին վան-

¹ Եթե սև ածականը արաբ հեղինակները բացատրում են նրանով, որ քաղաքը շինված է եղել սև գույնի քարերով, le Strange, *The lands of the Eastern Caliphate*, p. 108: Իր այժմյան անվան համար քաղաքը պարտական է ոմն Բեքրի, այդ շրջանի կառավարիչն է եղել, ԿՆՆՆՆ նշանակում է Բեքրի շրջան, որ սկզբում ամբողջ շրջանի անունն է եղել, իսկ հետո փոխանցվել է նրա մայրաքաղաքին:

² 726 թ. ժողովին ներկա է եղել «Աթմանա նփրկերտու եպիսկոպոս»: Գիրք բրդրագ, էջ 224, Ասողիկ, էջ 193, «քաղաք Մարտիրոսաց պոլիս, որ է նփրկերտ»: Հովհ. Դրասխանակեցացի, էջ 47: «Չորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք Մարտիրոսաց պոլիս, այսինքն՝ նփրկերտ»: Սրբ. Մարութայի վարքի մեջ ասվում է, որ նա ժողովեց մինչև 280.000 մասունք. 120.000 հումնական կայսրությունից, 20.000 Ասորիից, 80.000 Պարսկաստանից և 60.000 հայկական հողերից: Վարժ Սրբագ, 1874, II, էջ 31: Յամաուրք Մերենցի, 28 մայիս և Իսրայիլի 25 փետրվար: Կասկածից դուրս է, որ այս թվերն առասպելական են: Ղիթական Յամաուրքում քաղաքի անունը ծագում է Մարութայից. die Stadt einen von dem namen des heiligen Marutha abgeleiteten namen erhielt, *Wüstenfeld*, 1879, p. 312.

նք՝ kert, kai իրանական բառ է, որ նշանակում է քաղաք: Հավանորեն առաջին մասի մեջ ևս տեղական ծագում ունեցող որևէ բառ է թաքնված¹: Վերահիշյալ ձևերը, անկասկած, ընդհանուր ծագում ունեն: Դրանց թվին է պատկանում, ըստ երևույթին, նաև Մարնաթիկ-ոնը, որ հանդիպում է բյուզանդական հեղինակ Մենանդի մոտ, եթե, իհարկե, զրա տակ շտեմելի հայկական Մարդպետականը: Պատմագիրը հաղորդում է, որ պարսից խոսքով թագավորը կայսեր դեսպանին դիտմամբ պահում է Դարայում, իսկ ինքը ճանապարհ է ընկնում և անցնելով այսպես կոչված Առեստոն և Մարնաթիկոն գավառներով, հասնում է Պարսկահայք²: Կարծես թե խոսքը այստեղ Արզնի և Մայաֆարկատի մասին է: խոսքովը Հայաստան է մեկնում Դարայից և իրոք, ինչպես այնուհետև երևում է պատմագրի խոսքերից, գալիս է Բագրևանդ և Տարոն: Նրա ճանապարհը անցնում էր Արզանենի վրայով՝ Մայաֆարկատի մոտով: Թվում է, հենց զրանք էլ պետք է համարել փնտրված վայրերը՝ Ἀρεστων և Μα-ρεπ-τιχων փոխանակ Ἀρεστων և Μα-περ-κιτων: Ենթադրենք ենթադրում էր, որ հիշյալ բնակավայրերից առաջինը

¹ Ենթադրենք, էջ 100, Մուհարկին Ասողիկ, էջ 193, Մոֆարդին: Աշխատեցրած մեջ հեղինակը նվառն ընթերցումը, եթե միայն նփո(կ)եաի վրիպալը չէ, կարելի է համարել ասորերեն mēfaraki-ի հետ, * mēfaraki-ի միջոցով: Արարենք ուղիղ-նալ-ը առաջարկելով miyya-farkin հավանաբար կամեցել են տեսնել նրա մեջ ընտ չորք բառի հոգնակին ըն-ից (չոր) նման Meiacarira-ի, որ ավել է Տիգրիսի աջ ափին, Մարդինի մոտ, և իր անունը ստացել է ստոն աղբյուրներից. Meiacarire nomine... cui fontes dedere vocabulum gelidi. *Ann. XVIII*, 6, 16. Tab. Peut-ի մեջ p. 305, հիշատակվում է Aquae Frigidae թարգման. երկրի մեջ: Քաղաքի մաս գտնվում են աղբյուրները ܡܝܝܢܘܢܘܡܝܢܘܢ, Djehan-numa, Գաղտոյ-ի մոտ, t. I, pr. I, p. 143, որոնք մի գետակ են կազմում, որը քաղաքի մոտը հասն է զեպի Բաթման գետը: Հնարավոր է, որ հենց այդ ջրերի գոյությունը ցել է խաղաղի հիշյալ ստուգաբանության ժամանակ, եթե ճիշտ են գիտնականների փորձումներն այն մասին, որ հին Տիգրանակերտը գտնվում էր Մայաֆարկին-Մարտիրոսուպուլի տեղում, ինչպես ենթադրում են W. Belck և C. Lehmann, *Zeit. für Ethnologie*, 1899, Bd. XXXI, p. 263, ապա Բաթման դեպի համապատասխանում է նրանից ցածր գետին, որի վրա կանգնած էր Տիգրանակերտը, Tac. XV, 4: Արդյոք նրա ընտ ուղիղ-նալ-ի և հայկ. նրվոր-ի, ասոր. mēfar *nakfar-ի միջև: Ենթադրենք Նիքոնի-նալ-ը արտածում է իրանական nēzak-farr աγαθότυχος-ից: Եվթ որպես հայեր է վերջին վանկի համարությունը հայկական փոր-ի (նոր, ցի) *Ann. Erantzer*, pp. 161—162:

² Menand. p. 393. διὰ τοῦ λεγομένου Ἀρεστων κλιματος καὶ τοῦ Μα-ρεπτιων ἀπέτατο ἐν Περσαρμενίᾳ.

հայկական Առեւտն է, իսկ երկրորդը հրաժարվել է բացատրել¹: Κλίμα արտահայտությունը ավելի շուտ համապատասխանում է Ռշտունիքին, որ ավելի հայտնի էր, քան Առեւտը, որ մի աննշան քաղաք էր Վանա լճի ափին: Ըստ պատմագրի Խոսրովը գալիս է Բագրևանդ և Տարոն: Եթե միայն պատմագրի կողմից ճիշտ է տրված պարսից թագավորի երթուղին, ապա նա Դարայից Բագրևանդի վրայով Տարոն դալու համար պիտի անցներ լճի արևելյան ափով: Այդ ճանապարհի վրա ընկած էին թե Ռշտունիքը, և թե Մարդպետականը: Խոսրովը, պետք է ենթադրել, Դարայից գնացել է Ռշտունիք, շրջանցել է լիճը և մտել Մարդպետական, այնտեղից թեքվել է ձախ՝ Բագրևանդ և իջել Տարոն: Այս դեպքում Առեւտոնն ու Մարեպտիկոնը կարելի է համարել Վասպուրականի հայտնի գավառները՝ Ռշտունիքը և Մարդպետականը:

Աշխարհացույցի մեջ Նիմփիոս գետը կոչվում է Քաղիթթ և ըստ Պրոկոպիոսի հոտոմների երկիրը պարսկականից բաժանող սահմանագիծն էր: Ըստ Աշխարհացույցի Աղձնիքում «զնփոռեռ և զԱղձն, ընդ որոց մէջն իջան է գետն Քաղիթթ, զոր Շիթթ <իթ> մա կոչեն տաճիկք, այսինքն՝ արիւնարբու»²: ...«Քաղիթթ քղխէ ի լերանց Սաւնայ եւ Սանասնոյ եւ իջեալ կտրէ յիբերաց զնփրկերտ եւ զՔղիմար, որով բաժանեցան հոտոմք եւ պարսիկք եւ կոչի այժմ Շիթթիմա, որ է արիւնարբու»³:

Իեշու Սյունակյացը գիտե Kalad գետը Ամիգի մոտ, որ համապատասխանում է Քաղիթթին: Այն քաջ ծանոթ է նաև Հովհան Եփեսացուն, ըստ որի Մայֆերակտի դիմաց՝ գետի մյուս ափին, վեր է խոյանում մի բարձր ու դիք լեռ, որի վրա կանգնած է եղել պարսկական Ակրա ամրոցը⁴: Մի այլ հեղինակ ճիշտ նույն բառերով է նկարագրում այդ անառիկ ամրոցի դիրքը, «որ կանգնած էր Մարտիրոսուպոլսի դեմառդնմ, գետի մյուս կողմում գունվող բարձունքի վրա»⁵:

¹ Lebeau, Bas-Empire, X, p. 132.
² Աշխարհացույց, էջ 30 (Ս. Նրեմյան, Աշխարհացույց, էջ 107).
³ Նույն տեղում, էջ 37.
⁴ Սիկեց. պատմ. VI, 36, գերմաներեն թարգմ. p. 265. Jenseits des Flusses Kalat aber auf der grenze gegen Maipheract zu ist ein steiler Berg auf dem...Akba:
⁵ Evagr. Hist. IV 15. Τὸ Ὀκβας ὄχυρώτατον φρούριον, ἀντικρὺ Μαρτυροπόλεως ἐς τὴν ἀντιπέρας ὄχθην διακείμενον ἐπὶ τινος σκοπέλου

Այդ ամրոցը գտնվում էր Նիմփիոսի ափին և պաշարվել էր հոտմեական զորավար Հովհանի՝ կողմից, որ նշանակում է, թե այն պատկանել է պարսիկներին: Ըստ այդ տվյալների հին Ակրան կարելի է նույնացնել այժմյան Անուշիրվան-կալայի հետ: Հովհան Եփեսացու ասելով պարսիկները վաղուց էին ուզում Ակրա լեռան վրա ամրոց կառուցել, բայց այդ նրանց չէր հաջողվում, որովհետև լեռը գտնվում էր հոտոմների հողից ընդամենը մի քանի մղոն հեռավորության վրա, և հոտոմները նրանց խանգարում էին: Վերջապես, ուզվելով հարմար առիթից, նրանք իրագործեցին իրենց ծրագիրը, բայց շուտով հոտոմները գրավեցին և կործանեցին ամրոցը: Այս պատմությունը վերաբերում է Խոսրով Անուշիրվանի ժամանակին և իր անվամբ ամրոցն անշուշտ պարսկական է նրա հիմնադրին՝ Անուշիրվան թագավորին:

Ակրայից բացի, սահմանագծի վրա պարսիկներն ունեին երկու ուրիշ ամրություններ ևս՝ Ափում և Քղիմար²: Այդ երեք ամրությունների գեմ էլ զլխավորապես գործում էին հոտոմների զորքերը այն նպատակն ունենալով, որ սկսվեցին Զ դարի վերջին և ավարտվեցին, ի միջի այլոց, նրանով, որ 591 թվականին, Խոսրովի գահ բարձրանալու ժամանակ Արղանենեն (Աղձնիքը) անցավ Բյուզանդիային: Ափումի դիրքը ստույգ հայտնի է: Իլիջա լեռան ստորոտին, որտեղից սկիզբ է առնում Բաթման գետը կաղմոզ գետակներից մեկը, կա մի ավան, որ մինչև այժմ էլ կոչվում է Փում:

ἀποκρίματα, ὄθεν καὶ ὀνομαστος ἡ πᾶσα καθεισότηαι πόλις.
¹ Simoc. I 12, ἔτε πλεόντων τοῦ Νυμφίου, καὶ τὸ Ἄκρβας ἐνεχείρει αἰρήσειν.
² Τὸ Ἄφουμῶν ἢ καλοῦμενον φρούριον, Sim. III 15 ἢ II 9. Ἄφουμῶν φρούριον, Menand. pp. 410 ἢ 415. Κάστρον Ἄφουμῶν, Georg. Cypr. p. 47. Χλομαρῶν, Sim. II 7 ἢ 8. Χλομαρῶν, Menand. p. 329. Fum ἢ Klimar, Չալի. Սիկեցի. VI, էջ 36, Klimar = հայ Քղիմար-ին: Աշխարհացույցի մեջ Քղիմար կոչվում է նաև Կուսմոսան = Աղձնիք հայոց, յորում քաղաք Կուսմոսան, որ է Քղձար եւ Քիչ եւ Շուկառարա», էջ 37: Արդյո՞ք Կուսմոսան Χλομαρῶν-ի աղձառված մեջ չէ՞ Կուլեմոսի: Մարկվարտը Ափումը և Քղիմարը համարում է ասորեստանյան արձանագրությունների մեջ հիշված U-bu-mu-ն և Ku-li-me-ri-ն, Eran-ձառ, p. 158: Քիչը, որի մասին սույն գիտնականը ասում է, թե ոչ մի տեղ չի հիշատակված, եպիսկոպոսանիստ QIՏ քաղաքն է, որի ներկայացուցիչը մասնակցել է 544 թ. եկեղեցական ժողովին: Chabot, Syn. Orient. p. 322—323: Շարոն = այդ քաղաքը փնտրում է Խորասանում: ib. p. 680, միեղին այն գտնվում էր Աղձնիքում (Արգանեն) և, հավանորեն, նույնն է, ինչ որ Զոխ քաղաքի մոտ գտնվող այժմյան Քուլը:

Ափումից ոչ հեռու ընկած էր Քղիմարը: 586 թվականին հոմեական զորավար Փիլիպիկոսը, որ պաշարել էր Քղիմարը, կեղծ տաղնապի հետևանքով թողեց պաշարումը ու փախավ Ափում և այնտեղից էլ, անցնելով Նիմփիոս գետը, եկավ Ամիդ¹: Այստեղից հեռանում է, որ պաշարված Քղիմար բերգը գտնվում էր Փումից արևելք: Իրեն սահմանապահ կետ, նա ընկնում է Ակրա-Ափում պաշտպանական գծի վրա և հավանորեն գտնվում էր այժմյան Ներջիրի և Տալվորիկի շրջանում: Այդ նույնը երևում է նաև Աշխարհացույցից, ըստ որի նույն Քաղիթթ գետը Արզն-Աղձնիքի շրջանը բաժանում է Մայաֆարկինից և Քղիմար-Քղոմարից, իսկ այդ հնարավոր է այն գետը, եթե Քղիմարը գտնվեր գետի մյուս ափին, Մայաֆարկինից հյուսիս, որովհետև հիշյալ գետը շրջանցում էր քաղաքը հյուսիսարևելյան կողմից, և նրա արևելյան ափին՝ Մայաֆարկինի գիմաց գտնվում էր Արզնը²:

Քղիմարը և Ափումը գտնվում էին պարսկական մասում: Մորիկ կայսրը 578 թվականին Ափումը խլեց պարսիկներից և այնտեղ պահակ կարգեց: Բայց մինչ այդ այն պատկանել է պարսիկներին:

Պարսկական ամրությունների դիմաց՝ գետի մյուս ափին գտնվում էին հռոմեների ոչ պակաս ամուր պահականոցները՝ Մարտիրոսուպուլից ու Աթթախից բացի, նաև Փիսոնը իր անառաշելի կապաններով՝ «Մարտիրոսուպուլից գետի արևմուտք, — գրում է Պրոկոպիոսը, — այդ նույն Ստիանենն կալվող Հայաստանում Մարտիրոսուպուլից մեկ օրվա ճանապարհից մի քիչ պակաս հեռավորության վրա կա Փեյսոն անունով բնակավայր: Դրանից այն կողմ՝ մոտավորապես ութ մղոն հեռավորության վրա, զատիթափ և բուրբուլին

¹ Simoc, II, 9:

² Հմմտ. Hoffman Գեյցերի մոտ, *Georg. Cypr.* p. 167: Հնարավոր է, որ Νικηφόριος-Νυμφιος, Καλαθ-ξιδιθμα սկզբնապես նշանակել են միևնույն գետի տարբեր հասանքները կամ վտակները Քանի որ առաջին անունը համադրվել է Մայֆար-կատի հետ, թերևս փարեյի է կապ տեսնել նաև kalath-ի և κερκαθιο-κερτα-ի միջև karrath-ի միջոցով: Ξιδιθμα-ն հանդիպում է նաև Իբն Սեբուպիոնի մոտ, *Jour.Roy. As.Soc.*, 1895, p. 18, > ساجدات دلت, փոխանակված ساجدات, որը Մարիվարը համարում է ոչ թե արարական, այլ արամեական ծագում ունեցող և իրոք որ նշանակում է արշուճարտ, կաղձված ξαδι-ից և dema-ից, *Eranşahr*, p. 161: Այդ անվանումը Մարիվարտի կարծիքով կարելի է բացատրել նրանով, որ այդ գետի ափերը բազմիցս հանդիսացել են արյունահեղ պատերազմների թատերաբեմ:

անանցանելի լեռները միանալով՝ կաղձում են երկու կիրճ, որոնք իրարից հեռու շեն գտնվում և կոչվում են Կղեսուրք: Եթե մարդ ուզե- նա Պարսկահայքից գնալ Սոփանենն, լինի դա պարսկական սահ- ժաններից, թե Կիթաուիճ բերդի կողմից, նա չի կարող այնտեղ հաս- նել այլ կերպ, քան հիշյալ երկու կիրճերով: Տեղական բնակիչները պահանջի մեկը կոչում են Իլլիրիս, իսկ մյուսը՝ Մափխաս: Նույն պատմագրի ասելով՝ Հուստինիանոս կայսրը ամրացրեց Փեյսոնն ու Կղեսուրքը նոր կառույցներով և պահակ կարգեց, որպեսզի իս- պոս փակի ճանապարհը թշնամու առև¹:

Մայաֆարկինից ոչ հեռու, Գինի և Գազրուի միջև, մինչև այժմ էլ իրոք գտնվում է Փիսոն անունով մի փոքրիկ գյուղ: Նրա հյուսիսա- չին կողմում մի ամբողջ մղոն տարածություն վրա գտնվում են հին բերդի վեհապանծ ավերակները, որոնց 1861 թվականին այցելու- թյան է գնացել Դիարբեքիրի անգլիական հյուպատոս Թեյլորը²:

Փիսոնի շրջակայքում էր գտնվում Կղեսուրքը: Վերևում հիշա- տակված Փիլիպիկոսը Ափումից Ամիդ նահանջելիս կառուցապատեց Իզալա լեռներում գտնվող Փատտախ և Ալալեյս ամրոցները և այն- տեղ պահակ կարգեց: Այդ ամրությունները, անկասկած, համապա- տասխանում են հռչակավոր Կղեսուրքին: Դրանցից մեկի անունը հայերենում հնչում է Ոլոր, ասորերենում՝ Halōras, այն հանդի- պում է նաև արաբ հեղինակների մոտ՝ Halāris ձևով³:

¹ Aed. III 3, p. 250, χωρίον ἐστὶ Φεῖσὼν ὀνομα, ինչպես նաև *Pers.* II p. 262, τὸ Φεῖσὼν καλουμένω φουριῶ ὅπερ ἀγχιεῖσά πη τῶν Μαρτυρο- πύλαιος ὀρίων ἐστί. καλοῦσι δὲ αὐτῶν οἱ ἐπιχώριοι Ἰλλύριον μὲν τὸν ἑτερον, τὸν δὲ ἄλλον Σαφράς.

² J. Taylor, *Trovels in Kurdistan* p. 39, a mass of ruins that covered the slopes of the hill for a space of one mile, fragments of thick walls and neatly-cut blocks of stone were strewn over the road and impeded our progress, the re- mains of the old city of Fees. A small village near them is also called Fees, *Alis and Alisios*. Փշփաշ վայրը Մարտիրոսուպուլի մոտ հիշատակում է Ասողիզ (Թեյլոր, որ Փշփաշ կոչի, էջ 193), կարող է պատահել, որ վրիպակ է՝ Փիշ փաշ, Փշփ փոխարեն:

³ Simoc. II 9. τὸ μὲν προσαγορεύεται Θαθαχῶν, τὸ δ' ἕτερον Αλαλεισός. Հարթած, Մեկնոր. Մեկն. (ըստ Ինժեճյանի Լեվոսու Հայաստան. էջ 44) «Տիրիս, որ Գլաթ գոչի, ելան է Զորրորդ Հայոց Ի Հաշտեն դուռն է և ի գղէջ Ոլորայ. նաև Գրիգոր Ելաթեցի, Տաշլանի Յուցակը, ձեռագիր № 167: Հմմտ. Աշխարհացույց, էջ 20. «զՀաշտեն յղմէ բղխեն աղբուրք Տիրիս գետոյ»: Ասոր. Haloras, wo der Tigris entspringt, Nöldeke, *Alexanderroman*, p. 28, Denkschrift. d. Wiener

Հյուսիսից Փիսոնի վրա իջնում են Հայկական Տավրոս լեռնաշղթայի ճյուղավորությունները, որոնք մեծ աղեղի ձևով ձգվում էին Մուրադ գետի երկարությամբ՝ Եփրատից մինչև Վանա լճի ափերը և ափնի հեռուն: Չեֆթլա և Գարկոշ բարձր լեռնաշղթայով արտահայտված աղեղի դագաթն իջնում է Լիջա՝ Տիգրիսի ակունքների շրջանը: Նրանց ճյուղավորությունները իջնում են մինչև նույն այդ Փիսոնը: Ըստ Պրոկոպիոսի և հայ հեղինակ Վարդանի հենց այս շրջանում պետք է փնտրել լեռնանցքները: Կղեսուրքը այն միակ լեռնանցքն էր, որտեղով կարելի էր Սոփենե մանել հյուսիսից: Ներկայումս Դիարբեքիրի շրջանը Մուրադ գետի հովտին միացնող ճանապարհը անցնում է Փիսոն (կամ Գինի)-Լիջա-Շավերդյան գծով: Շավերդյանից ներքև, Զիրանա-Տիգրիսի ակունքների մոտ, գտնվում է մի հետաքրքրական լեռնանցք, որը երկու մղոն երկարությամբ և 80 սանաչափ բարձրությամբ ստալակտիտե քարայրեր ունեցող մի բնական թունել է, որի միջով հորդում է հիշյալ գետը: Այդ տեղը այժմ կոչվում է Բաքիրեյն:

Շավերդյանից ճանապարհը դառնալիք բարձրանում է լեռը և դալի բարձրության վրա անցնում է Տիգրիսի և Եփրատի շրջափան գիծը կազմող լեռն ու ժայռոտ լեռնանցքով, որտեղից ճանապարհը մտնում է Զուլ-Կարնեյն կիրճը և սարալանջերով իջնում դեպի Մուրադ գետը, հենց գետի ափին գտնվող Թիմուր-աղա գյուղի մոտ: Ինչպես Բաքիրեյնի մոտ, նույնպես և Զուլ-Կարնեյնի մուտքի մոտ մինչև օրս պահպանվել են լեռնանցքները պաշտպանող հին ամրությունների և պահակակետերի մնացորդները: Հենց այս կիրճերն էլ պետք է ընդունել որպես պատմական Կղեսուրք¹:

Աk. 1890, Bd. 38: Ըստ Ալ-Կիսրավի *سفرنامه* Տիգրիսի ակունքներում է, Tomaschek, Sasun, p. 23: Ըստ Յակոբի, Halilras-ը Տիգրիսի ակունքների մոտ է, որտեղ նահատակվեց հայազգի Ալին, Le Strange, Eastern Calaphate, p. 110: Արդյո՞ք հայերեն ուրբ բարբ. h-olor (հուրեղ) բառից չէ, Ուրեալ՝ ուրբիբից:

¹ Քեյլորի Նկարագրությունը Travels, p. 42 և Wilson, Handbook for Travellers in Asia Minor, 1895, p. 247—248: Խորենացին, Բ, ք. նույնպես ծանոթ է Կղեսուրքին. «զլեռնե Տավրոս, որ և Սիմ և Կղեսուրն ամենայն», Ասողիկը Գ, 36, վկայում է, որ երկրաշարժից «շարժեցաւ երկիր, բայց սասակազոյն աշխարհն Չորրորդ Հայոց, Հաշտանք, Խորձան, Մոփք, Բալու, և Պաղնատուն և բոլորովին փլան շինուածք ամենայն... և բերդն Բալու հանգրծ շինուածովն և բարն ևս փլուզանիք, խարխարեալ ճապաղջուր բերդին Գիլաթայո: Ըստ երևութիւն Էսր-ը այստեղ որոշակի վայրի նշանակություն ունի և կարող է նույնացվել Կղեսուրքի հետ:

Կղեսուրքի և հանդիպակաց պարսկական Ափում բերդի տեղերը պարզելով՝ ճշգրտվում է երկու պետությունների սահմանը նիմֆիոսի վերին հոսանքում և առհասարակ Տիգրիսի ավազանում: Այն անցնում էր նիմփիոսի առավել արևմուտք ընկած վտակների հոսանքով, այսինքն՝ Իլիջա-Խուլփ-Բաթման:

Եփրատ-Արածանու հովտում և այնուհետև Թեոդոսուպոլսի ուղղությամբ Հաշտյանք և Խորձյան գավառներում, Կիթաոիճ-Արտաքա մարտցների գծով բյուզանդական հողը հարում էր պարսկական նին: «Հաշտյանքում գտնվում էր Կիթաոիճ գյուղը, որտեղ բլրաձև մի բարձունքի վրա Հուստինիանոսը կառուցեց բոլորովին անմատչելի մի բերդ, որ մինչ այդ այնտեղ չկար, որը չէր կարելի գրավել ոչ մի միջոցով: Այնտեղ էլ նա առատ ջուր բերեց և բնակիչներին ապահովեց անհրաժեշտ ամեն բանով: Կիթաոիճից դեպի Թեոդոսուպոլսի և մյուս Հայաստանի կողմն ընկած գավառը կոչվում է Խորձյան: Նրա երկարությունը ոտքով երեք օրվա ճանապարհ է, ընդ որում այն ոչնչով բաժանված չէ պարսկական հողից, ո՛չ ճահճուտներով, ո՛չ գետի հունով, ո՛չ էլ լեռնային կապաններով, և նրանց սահմանները խառն են: Գրա հետևանքով էլ տեղական բնակիչները, լինեն նրանք հուսիսայիններին ենթակա, թե պարսիկներին, չեն վախենում միմյանցից և չեն կասկածում միմյանց որևէ շար դիտավորության մեջ: Նրանք միմյանց հետ ամուսնանում են, սպարանքներ փոխանակում և միասին էլ մշակում են դաշտերը: Եթե պատահում է, որ մի կողմի տիրակալը (ἄρχοντες) իր թագավորի հրամանով պատերազմի է ելնում մյուս կողմի դեմ, նրանք մերձակա բնակիչներին միշտ էլ անպաշտպան են գտնում: Եվ իրոք, երկու կողմերում էլ, մեկը մյուսին շատ մոտ տարածություն վրա, փոխած են խիտ բնակչություն ունեցող գյուղեր, իսկ հին ժամանակներից սկսած ոչ մի կողմում ամրություն չի եղել: Այդ պատճառով էլ պարսից թագավորը հնարավորություն ուներ ազատ և համարձակ ասպատակելու հոսանական հպատակների երկիրը, մինչև որ Հուստինիանոս կայսրը վերջապես ձեռք առավ նախազգուշական միջոցներ, այսինքն՝ այդ երկրի կենտրոնում գտնվող Արտալիս անունով գյուղը պատեց ամուր պարիսպներով և դարձրեց առաջնակարգ բերդ՝ մըշտական պահակադրքով»¹:

¹ Aed. III 3, p. 20: ἐν δὲ τῷ Κιθαριζῶν χωρίῳ, ὅπερ ἐστὶ Ἀσθιανήνης τῆς καλουμένης ἔστι... ἐκ δὲ Κιθαριζῶν ἕξ τε Θεοδοσιούπολις καὶ Ἀρμενίαν

Արանից հետևում է, որ Կիթաոիճն ու Արտալեսը այն կետերն են, որոնց վրայով անցնում էր երկու պետությունները միմյանցից բաժանող սահմանագիծը: Բերդերից մեկը նախատեսված էր Հաշտ-յանքի, իսկ մյուսը՝ Խորձանի պաշտպանության համար: Այդ երկու գավառներն էլ գտնվում էին կողք-կողքի, պարսից տերիտորիային սահմանակից, ընդ որում մեկը հարում էր մյուսին հյուսիսից, Թեո-գոսուպուլսի կողմից: Ըստ Պրոկոպիոսի Կիթաոիճից Թեոգոսուպուլիս ըստ օրվա ճանապարհ է, իսկ Խորձանը գտնվում էր այդ նույն կե-տից դեպի Թեոգոսուպուլիս երեք օրվա ճանապարհի վրա, ուրեմն՝ նա մինչև քաղաք չէր հասնում, այլ գտնվում էր նրանից մեկ օրվա ճանապարհի վրա: Երզրումից՝ հին Թեոգոսուպուլից մոտավորապես նույն հեռավորության վրա (մոտ 40 կմ) են գտնվում Խալխալ և Խաշ լեռները, որոնք պարսպի նման գրկում են Քըղի կամ Լիճիկ գետի ափունքները, այդ բնական սահմաններով էլ հյուսիսում փակվում էր Խորձանի սահմանագիծը: Եվ իրոք, վկայություններ կան այն մա-սին, որ այդ լեռների ստորոտում տեղավորված Մորմերան քաղաքը համարվում էր Խորձանի սահմանագրուխը: Գավառը, այդպիսով, գտնվում էր Քըղի գետի հովտում: Ըստ Աշխարհացույցի, Խորձանը այն վայրն է, որի միջով Կողորբերդի մոտով ցած է սլանում Գայլ գետը: Գայլը այն գետի հին անունն է, որը հին Կող կամ Կողո-րբերդ մարցի անունով այժմ կոչվում է Քըղի:

Ըստ Պրոկոպիոսի նկարագրության Խորձանը հարավից միա-նում էր Հաշտյանքին, իսկ ըստ Աշխարհացույցի այն գրավում էր Չորրորդ Հայրի հյուսիսարևելյան մասը, այսինքն՝ այն երկրամա-սի, որի մեջ էր մտնում նաև հարևան Հաշտյանքը: Խորձանից արև-մուտք՝ Քըղի գետի վտակներից մեկի վրա է գտնվում Պաղնատուն կամ Պաղանական-տուն, Պաղան գավառը, Պաղին քաղաքով, որ մինչև այժմ էլ պահպանվել է Պերի քաղաքի մոտերքում որպես մի

την ἐτέραν ἰοντι Κορζάνη μὲν ἡ χώρα καλεῖται... χωρίον τῆν ἐπί μέσης τῆς χώρας Ἄρταλῆσων ὄνομα. նաև Pers. II 24 p. 261. Κιθαρίζων τὸ φρούριον α χωρία τῆς Χορζιανήνης.

¹ Լատիվերացի. էջ 93, սեյին ընդ Խորձանի ի վերս... էջ 94 «և եկին մինչև ի դուխ գավառին ի գեօշն, որ կոչի Մորմանա: Ինճիճյանի մոտ որպես տար-բերակ ունենք Մորմանս ձևը», Հեախս., էջ 43: Մենք այն համարում ենք ներկա Միումերան քաղաքը, որ համարեն սխալ ստուգաբանության հետևանքով քարտեզներում նշվում է Molla Omer կամ Mulla Omar ձևով, ինչպես Լինչի քարտեզում:

փորրիկ գյուղ: Պաղնատուն գավառից հարավ է գտնվում Բալահովի-տի, Մուրադ-Արածանիի վրա գտնվող այժմյան Բալուի շրջակայքը: Ինչ վերաբերում է Հաշտյանքին, Աշխարհացույցը սահմանափակ-վում է հիշատակելով միայն, որ այնտեղ են գտնվում Տիգրիսի աղբյուրները: Գրանով իսկ Հաշտյանքի կենտրոնը տեղափոխվում է Արածանիի հովիտը: Իր այդ դիրքով Հաշտյանքը, ըստ Պրոկոպիոսի, ընկնում է Խորձանից հարավ և տարածվելով Մուրադ գետի երկա-րությամբ՝ միաժամանակ հարում է նաև Խորձանին այնպես, ինչ-պես արևմուտքից նրան հարող Բալահովիտը՝ Պաղնատանը: Կիթա-ոիճ և Արտալես մարտիկներին դիրքը ճշտորոշելու համար կարևոր է իմանալ, թե որքան էր այն զետափնյա շերտի լայնությունը, որ գրավում էր Հաշտյանքը, այլ կերպ ասած՝ որտե՞ղ էր այն սահմա-նադատվում Խորձանից:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ սովորաբար գավառնե-րը միմյանցից բաժանվում էին բնական սահմաններով՝ լեռներով և գետերի ավազաններով, բնական կլիմեր ենթադրել, որ Հաշտյանքը գրավում էր Գոյնուկ գետի հովիտը: Մի քանի նկատառումներ, սա-կաթ, առիպում են ընդունել, որ հիշյալ գետի մարողը հոսանքը չէր, որ պատկանում էր Հաշտյանքին, որ նրա ափունքները գտնվում էին Խորձանում կամ պարսկական մասի հարևան գավառներում: Այդ կողմից Հաշտյանքին հարում էր Արշամունիքը: Վահան Մամիկոն-յանը օգնություն ստանալու համար կամենում էր զնալ Հաշտյանք, առաջ ուղևորվում է Արշամունիք և հասնելով այնտեղ, կանգ է առ-նում Երեզ քաղաքում: Որ Երեզը գտնվում էր Հաշտյանքի ճիշտ

¹ Աշխարհացույց, էջ 30 «Երթան լիցից հիսիսոյ, ընդ որ իջան է միս Գայլ գետ առ Կողորբերդն. զՀաշտեն, յորժև բղխեն աղբյուր Տիգրիս գետոյ. իսկ ի մտից Խորձանոյ է Պաղնատուն գաւառ, հանդէպ հոմանուն բերդով. եւ հանդէպ նորա ի հարաւ՝ Բալահովիտ գաւառոյ Կողոյ բերդ, Կողոյ մարցոց. այստեղից՝ Կեօշ, Կեդ, սեռական՝ Քըղի, այժմ՝ Քըղի-կասաբա, որ համապատասխանում է հին Կողորբերդին: Քըղի է կոչվում նաև մարցը շրջանը՝ հին Խորձանը:

² Hübschmann, Orisname, p. 293, Հաշտյանքի տեղը որոշում է Գոյնուկ գե-տի վրա և կարծում է, որ Կիթաոիճ բերդը այժմյան Կոնարիչ ավանն է, որ առաջար-կում է կարգալ Կոտարիչ: Այդ դեպքում միայն Հաշտյանքը կրոնքը սահմանային մարողը գոտին և Խորձանը կղանար ներքին գավառ, մինչդեռ Պրոկոպիոսը թշնա-մու համար սահմանային բաց գոտին վերագրում է Խորձանին, որի պաշտպանու-թյան համար կառուցվել էր Արտալես մարցը: Թացի այդ, ըստ Աշխարհացույցի նկարագրության Հաշտյանքը հարավից հարում էր Խորձանին:

³ Ղազար Փարպեցի, էջ 149, Վահան գնայր ի սահմանս Հաշտենից, ըստ յառա-յապրեալ յորհրդոյն իրոյ, (էջ 148, կամենել անցանել ի կողմն սահմանակցու-

սահմանագլխին, այդ երևում է նաև նրանից, որ պատմիչները այդ գյուղը մերթ վերագրում են Արշամունիքին, մերթ Հաշտյանքին: Վասիլ կայսրը, 1001 թվականին անցնելով Անձիտով և Բալուով, բարձրանում է Կոհեր լեռը և այնտեղից գալիս Արշամունիք գավառի Երիզ քաղաքը: Կոհերը, անկասկած, Գոյնուկ գետի աջ ափին բնկած ալթմյան կարեր լեռներն են: Նրանց գիմաց՝ մյուս ափին, գտնվում է Ողնուտ գյուղը՝ պատմական Եղանց ամրոցը, որ կոչվում էր նաև Եղնուտ կամ Ողնուտ: 1036 թվականին Իվանե իշխանը՝ Հաշտյանքի Երիզ քաղաքի տերը, օգտվելով հարմար առիթից, հարձակվում է Եղանց ամրոցի վրա և խաբեությամբ գրավում այն, բայց շուտով պատժվում է իր ինքնագլուխ քայլի համար և նետվում Եղնուտի բանտը¹: Երկու դեպքում էլ խոսքը միևնույն ամրոցի մասին է: Երկու անունների նույնության մասին է վկայում նաև Հովհան Մամիկոնյանը²: Կաստիլեթոցու խոսքերից կարելի է կուսնել, որ Իվանեի գրաված ամրոցը շատ հեռու չէր Երիզից:

Քեանե Հաշտենից, յազպս գտանելոյ ի նոցանէ օգնութիւն) և հասեալ բնակեր ի դաւառին Արշամունեաց, ի զիւնւ, որ կոչի Երիզ:

¹ Ասողիկ, էջ 376. Ըս անցնել թաղաւորն ընդ Բալու, ելանէ ի լեռն Կոհերայ և տեղուտ գայ հասնել ի դաւառն Արշամունեաց ի քաղաքն Երիզայ: Կաստիլեթոցի, էջ 82: Որդի կիպարտին Իւանէ անուն, որում տուեալ էին ի պարզեա ի տեղես բնակութեան զմեծ ավանն Երիզայ ի դավառին Հաշտենից... զնաց և խաբանօք էսո զամուրն Եղանց բերդ կոչեցնալ. էջ 83. դատաւորն... զինքն և զ ի յնդնուտն ի բանտի:

² Հովհան Մամիկոնյան, էջ 25. Ըս տանել յԵղանց բերդն (տարբնթերցվածք՝ յՈղնուտ), զոր դեռ Եղնուտն (տարբնթերցվածք՝ Ողնուտն) կոչեն: Չենք Գլախի մոտ 26-րդ էջում հիշատակված Ողիան բերդը ավելի շուտ մեզ հետաքրքրող վայրն է, քան Տարոնի հռչակավոր Ողականը՝ Մամիկոնյանների ամրոցը: Գլախի պատմութունից երևում է, որ Ողիանը գտնվում էր Կուառսից (այժմ Գուառա՝ Բողանի մոտ) ոչ հեռու, աղբյուրի այն կողմում, որի տակ պետք է հասկանալ ներկայիս Կուառսից հյուսիս գտնվող այսպես կոչված Եղանե եղբայրների աղբյուրը: Մամիկոնյանների ամրոցը գտնվում էր Եփրատի վրա «Ողական, որ կայ ի վերայ զնոտն Եփրատայ», Փավստոս, Ե, գ, ուստի չի կարելի շփոթել Ողականը Ողնուտի հետ, մանավանդ որ Հովհ. Մամիկոնյանը տարբերում է Եղնուտը Ողիանից: Միայն թե նշված դեպքում, ինչպես մեզ թվում է, Ողիանը գործ է ածվում Ողնուտի իմաստով: Tomaschek-ը Sasun, p. 21, Ողականը թարգմանում է runderlich՝ շփոթելով հայերեն աղբ-օղ, ող-ի հետ, ինչպես ճիշտ նկատել է Հյուրշմանը, Ortsname, p. 460: Բայց Հյուբշմանը ևս նման մի սխալ է գործում, երբ Եղնուտ, Եղանց բերդը թարգմանում է Burg der Hirschkühe և Hirschkühe reich, ib. p. 423: Սկզբնական ձևով Ողնուտ, Ողին, նաև Ողական ծագում են հայերեն ողն-ից (ողնաշար, մեջք), որ գործ է ածվում նաև լեռների համար Եսմենայն սղունք, ձորք և ձործորք և սարք՝ Գր. Նյասացի, ըստ Հակոբյանի բառարանի Ողնուտ նշանակում է պարզապես բլուր:

Ղաղար Փարպեցին Երիզի մոտ հիշատակում է Ողին, հին տառադարձությամբ՝ Օլին գյուղը: Պարսից ճամբարի վրա կատարած գիշերային հարձակումից հետո Վահան Մամիկոնյանը գնում է Ողին գյուղը՝ այնտեղ գիշերելու: Ակներև է, որ այդ գյուղը շատ մոտ էր Երիզին, ուստի Վահանը հասցնում է գրոհել թշնամու վրա, կոտորած սարքել և ապա «երթեալ հանդիւր զմնացեալ մասն ի գիշերոյն»,— ինչպես ասում է պատմիչը: Ողինը թե՛ Երիզից ունեցած հեռավորությամբ, և թե՛ իր անունով միանգամայն նույնանում է Ողնուտի՝ Ողնու-բերդի հետ:

Ողնուտից 6—7 վերստ ներքև կա մի ավան, որ Կիպերտի նոր քարտեզի վրա բնթերցվում է Aziran, կինչի մոտ՝ Azizan, այս երկու բնթերցումներն էլ, ամենայն հավանականությամբ, արդյունք են քուրդական տառերի սխալ կետագրության. հիշաը կլինի Arizan²: Թվում է, թե մենք գտել ենք պատմական Երիզի հետքը, առկա են բոլոր ալթմյանները՝ Արիզ-անը գտնվում է Կոհեր-Կարեր լեռների զմայ (ըստ Ասողիկի), այն մոտ է Ողին-Ողնուտին ու ընկած է Հաշտյանքի և Արշամունքի սահմանի վրա: Ըստ Փարպեցու հիշողության գտնվում էր Երիզից հյուսիս, որովհետև Երիզի մոտ տեղի ունեցած գիշերային ճակատամարտից հետո Վահան Մամիկոնյանը գնում է Ողին, այնտեղից էլ Վաղարշապատ և ապա՝ Գլխին. և դա համապատասխանում է Արիզանի դիրքին, որն իրոք ընկած է Ողնուտից հարավ:

Երիզը նույնացնելով այժմյան Արիզանի հետ, կանխորոշվում է նաև այն հարցը, թե որտե՞ղ պետք է տեղադրել Գոյնուկ գետի վերին հոսանքը: Բանն այն է, որ Վահան Մամիկոնյանը Երեզ է գալիս Կարինի մոտերքից (Արծաթի գյուղից, որն այժմ էլ գոյություն ունի

վոր, Եղանց բերդ, փոխ. Ողանց բերդ, նշանակում է բերդ բլուրների վրա: Ողինը Ղազար Փարպեցու մոտ Ողին սեռական հոլովն է, զիւղ Ողին, ինչպես զիւղ Երիզայ: Ոչ ոնգայնացված արձատից կալմվում է Ող-ական (ինչպես ձեռ-ն-ից ձեռական). բերդ Ողին=բերդ Ողական պետք է համեմատել Երիզ, Երիզայ=Երեզ-ական=այժմյան Երեզկա, որ ծագում է Երեզկան-ից, համեմ. այժմյան Երեզկան, փոխ. Երեզանի նահանգ: Ողինի և Ողականի նույնության օգտին է խոսում նաև այն, որ դասական հնդկականները Տարոնի Ողականը կոչում են Օլճոթ, Strabon, p. 743, Volan(d)um validissimum castellum, Tacit, XIII, 39:

¹ Փարպեցի, էջ 150. Վահան Մամիկոնեան զարծեալ ի կոտորածէ թշնամեացն երթեալ հանդիւր զմնացեալ մասն ի գիշերոյն յՈղին զեղջն, զոր Շտեայ անուանեն, ի զոմս տեղեացն... և ի ծագել լուսոյն՝ երթալ բնակեր ի զիւն Շտէոյ:

² Այսինքն տաճկերեն ازبازان և ازبازان փոխ. ازبازان:

էրզրումի հյուսիսում), իսկ էրզրումից Արիզան տանող ճանապարհն անցնում է Գոյնուկ գետի ափով՝ սկսած նրա ափունքներից մինչև Արիզան-Ողնուտ: Հավանորեն այդպես էր նաև հին ժամանակ, համեմատյան դեպս ճանապարհը շէր կարող անցնել ավելի արևելք, որտեղ վեր են բարձրանում Բինգյուլի բարձր սարերը:

Մինչև Երեզ հասնելը Վահանը պետք է անցներ Գոյնուկ գետի վերին հովիտով: Եվ եթե նա Երեզ հասնելով միայն հայտնվում է Հաշայանք գավառի սահմանի վրա, ապա պարզ է, որ հիշյալ գետի վերին հոսանքները չէին մտնում Հաշայանքի մեջ: Նրանք չէին կարող պատկանել նաև հարևան գավառին, այլապես կստացվեր, որ Վահանը Երեզ է եկել Հաշայանքի կամ հոռոմների տերիտորիայի վրայով, ինչ որ հակասում է պատմիչի վկայությունը, ըստ որի Մամիկոնյան իշխանը չի անցել սահմանի այն կողմը: Նա ուզում էր միայն «անցանել ի կողմն սահմանահյուսթեանն Հաշտենից», այսինքն՝ Արշամունիք, և իրօք, նա «գնայր ի սահմանս Հաշտենից և հասեալ քնակէր ի գաւառին Արշամունեաց, ի գիւղն որ կոչի Երեզ»:

Ըստ Աշխարհացույցի Արշամունիք գավառը ընկած էր Տարոնից հյուսիս, Սրմանց՝ այժմյան Բինգյուլ լեռան մոտ: Այդ տվյալներով Արշամունիքին կարելի է հատկացնել Բինգյուլ գետակի շրային տարածությունը և Գոյնուկ գետի վերին հոսանքները:

Հարավից նրան հարևան Տարոնի և Հաշայանքի միջև ընկած մի փոքրիկ շերտ կաղմում էր Պալունյաց գավառը, որի գլխավոր քաղաքն էր Կուառը կամ Կուառսը, այժմյան Գուվառսը, Բողլանի մոտ, որով ճշտվում է Պալունիքի տեղը Մենասկուտ գետակի վրա: Աշխարհացույցի հեղինակը չգիտե Պալունյաց գավառը և նրա գրաված տարածությունը վերագրում է Տարոնին: Ի միջի այլոց Պալունիքի և Տարոնի տեղադրությունը քաջատեղյակ Տարոնի նախարարական տոհմի պատմիչը Պորպես քաղաքը տեղադրում է «ի զլուսն Տարօնոյ», այսինչ Պորպեսը՝ այժմյան Բորբասը, գտնվում էր Մենասկուտ գետի վրա Կուառսից հարավ և, նշանակում է, մտնում էր Պալունիքի մեջ: Մի այլ տեղացի հեղինակ՝ Զենոր Գլակը, Կուառսը համարում է Պալունիքի մայրաքաղաք և այն տեղադրում է Մամիկոնյան իշխանների կավածքում, այսինքն՝ Տարոնում¹: Ըստ երևույթին, Պալունյաց

¹ Զենար Գլակ, էջ 25, «զզացուցին սրբոյն Գրիգորի, եթէ ի գաւառն Տարօնոյ երկուս բազինս մնացեալ են... իսկ նորա դէմ եղեալ գայր, զի ևս զայն քանդեցէ. և եկեալ յերկիրն Պալունեաց յաւանն մեծ Գիսանէ ի քաղաքագեղն Կուառս»:

գավառը հետագայում անցել է Մամիկոնյաններին և այդ պատճառով էլ, իրրև ինքնուրույն գավառ, տեղ չի գտել Աշխարհացույցի մեջ: Արևմուտքից Պալունիքը սահմանակից էր Հաշայանքին, որից բաժանվում էր բնական սահմանագծով՝ Նավշանի (4636 ոտն. բարձրություն) կիրճով: Արշամունիքն ու Պալունիքը անկասկած ընկած էին պարսկական մասում կամ Արևելյան Հայաստանում, քանի որ դրանք հիշատակված են պարսիկների դեմ ուղղված Ս դարի շարժումների կապակցությամբ: Այդ երկու գավառներն էլ կաղմում էին սահմանամերձ շերտը:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանը միմյանցից բաժանող սահմանագիծը անցնում էր Փումից Չաֆթլա լեռների վրայով, Նավշանի լեռնանցքով դեպի Արիզան-Ողնուտ և, կտրելով Գոյնուկ գետը, նրա աջ ափով բարձրանում էր դեպի Բինգյուլ-Սրմանց լեռնազանգվածի արևմտյան զառիվայրերը: Այդ ուղղությամբ սահմանագիծը համընկնում է միբրատից դեպի Բինգյուլ լեռները ձգվող լեռնաշղթայի գծին, իսկ այն հանգամանքը, որ քաղաքական սահմանագիծը համընկնում է բնականին, մեր եղբայրամիտներին հաստատուն է:

Կիթաոնի և Արտաշեսի տեղադրության հարցը մնում է չլուծված: Մեզ համար պարզ է միայն, որ այն գավառները, որտեղ դրանք գտնվում էին, միմյանցից բաժանվում էին Երիզ-Ողնուտին հանդիպակաց կարեր լեռներով: Պրոկոպիոսի նկարագրած սահմանամերձ երկու կողմից էլ անպաշտպան տարածությունը հենց այն հովիտն է, որ ոռոգվում էր Գոյնուկ գետով:

Հետևելով Պրոկոպիոսի ցուցումներին՝ Կիթաոնի բերդը պետք է փնտրել Կարեր լեռներում, նույնացնելով այն ներկայիս ամրացված տեղանքներից մեկին՝ Շեյխ-Սեյիմ-Կալային կամ Աղնաբերդին, կամ Աստեղաբերդին (ավելի ճիշտ՝ Շեյխ-Սեյիմ բերդին, Աղն և Աստղ ամրոցներին), որոնք գտնվում էին հիշյալ լեռների հյուսիսային լանջերին՝ միմյանցից ոչ հեռու: Այդ դեպքում Արտաշեսը, ըստ նույն պատմագրի, կլինի մի քիչ հյուսիս, ավելի մոտիկ Մանազիքին:

էջ 43, «գային հասանլին ընդ գաւառն Պալունեաց և երկուս աւորս մնացին ի մեծ աւանն Հոռեանս և անտի ելին եկին ի գեղն Կուառս»: Մամիկոնյանների կավածքների թվում հիշատակվում է «Կուառս, որպէս կայ յ որի իշխանացն Մամիկոնեից», էջ 37: Հովն. Մամիկոնյան, էջ 31, «եկն ի զլուսն Տարօնոյ, և շինէ զաւերտայն Զիսկերտ քաղաք մեծ, և փոխէ զանուն... Պորպէս»:

Αρταλεσ-ων-ը հայերեն պետք է հնչի artali-s, artali-է արտաղիս, արտաղիք, բառ, որ իր կազմությամբ հակվում է դեպի mardali-է, manali-է, Մարդաղի-ք, Մանաղի-ք՝ հորձյանին հարևան գավառների անվանումներին: Մարդաղիքը տարածվում էր Բինգյուլի լեռների հյուսիսային զառիվայրերին, մինչև Կարինի սահմանները. այլ խոսքով՝ Բինգյուլի նկատմամբ հյուսիսից զրավում էր այնպիսի գրբք, ինչպիսին Արշամունիքը՝ հարավից: Մարդաղիքից էր սկիզբ առնում Բինգյուլ լեռներից բխող Մուրցը՝ Արաքսի առաջին վտակը, որ այժմ կոչվում է Եգրի կամ Արաղ (Արաքս): Արևմուտքից Մարդաղիքը հարում էր Մեղեգուխ լեռանը, որ նույնացվում է հալիսալ լեռներին, որոնց մասին մենք առիթ ունեցանք հիշատակելու, իսկ հյուսիսում այն Կարինից բաժանվում էր Այծ-պտկունք լեռով, որի առկ պետք է հասկանալ էրդրումը հարավից կիսալուսնի նման շրջադաստղ լեռնաշղթան¹:

Այսպիսով, Մարդաղիքը ընդգրկում էր երեք դետերի՝ Արաքսի, Լիճիկի և Թուրլուի ջրբաժան շրջանը, ըստ որում հալիսալ լեռը մի բնական սլատնեղ էր Մարդաղիքի և միաժամանակ Արևելյան կամ Պարսկական Հայաստանի համար: Արևմուտքից հալիսալ լեռանը իր մի ծայրով հարում էր Մարդաղիքը, հարավից՝ հորձյանը: Մեղ թվում է, որ հորձյանի մի մասը, որ հալիսալ լեռան մոտ հարում էր Մանրաղիքին և Մարդաղիքին, հին ժամանակ կրում էր նրանց աղակից Արտաղիք Artali-է անունը, 'Αρταλεσ-ων համանուն բերդով:

576 թ. հոսրով Անուշիրվանի արշավանքի ժամանակ հիշատակված 'Αραβεσσων դուղը իր տեղադրությունը համապատասխանում է Արտալիսին: Այդ թվականին հոսրովը Արզնի և նիբիկերտի վրայով մտավ Հայաստան, անցավ Բաղրևանդ և Տարոն դա-

¹ Աշխարհագրույց, էջ 31, Աշմունիք առ Սրմանց լեռամբ, որ գույն կատար երկ-րի, յորմէ ոյծ բղիենն ազրիբք (հմմտ. այժմյան كوكبك Բինգյուլ, Բիւրակն տեղանունը, որոց ըստ հիւսիսի Մարդաղի առ Մեղեգուխ լեռամբ, մինչև ցնոյն Այծ-պտկունք, որ բաժանէ ընդ Կարին և ընդ նմա... յորոյ յիւրից բղիեն Մուրց դետ Սրմանց անունը կարելի է բաղդատել Սրեն, Սրենց ձոր, Սրենմաձոր, Սերենմաձորի հետ Հովն. Մամիկոնյան, էջ 41—42: Այծ-պտկունք (այժի պտկուներ), այսպես են կոչված լեռները, ըստ երևույթին, նրանց մերկ, ատամնավոր կատարների պատ-ճառով (հմմտ. էրդրումի տակ գտնվող Թէքթէ-դերէ՝ այժի հովիտի հետ, եթե միայն ճՃՅ այստեղ նշանակում է այժ և ոչ թե վանք կամ դերեղմանատուն): Այժմյան անունը՝ Փայան-Թյոթեն, այսինքն՝ թամբ վայր նետող, նույնպես ընդ-գծում է լեռների դառիթափ լինելը:

վաները և առաջանալով դեպի Բասեն՝ Թեոդոսուպոլսի կողմից ներխուժեց Հոռոմական Հայաստան: Հոռոմների համար անսպասե-լիորեն նա սբանակեց մի դյուղում, որ կոչվում էր Արաքս և դանը-վում էր քաղաքից դեպի հարավ ընկած գավառում, իսկ հոռոմների զորքերը, ինչքան որ այդ պահին այնտեղ կային, ետ բաշվեցին հյուսիս՝ < > կոչվող շրջանում գտնվող մի լեռան ստորոտը¹:

Դատելով տեղադրությունից, Արաքսը այլ վայր չէ, եթե ոչ Արտալիսը: Գեպրեբի պատմիչը հաղորդում է, որ պարսից թագավո-րը բարձր գնահատելով Թեոդոսուպոլսի ստրատեգիական նշանա-կաթյունը, որն իշխում էր ամբողջ Հայաստանի և Իբերիայի վրա, նպատակ էր գրավել այն: Հնդ որում, ինչպես երևում է, նրա տակտի-կական նպատակն էր եղել Թեոդոսուպոլիսը կտրել մերձակա աղ-մական պահանջանքներից՝ Արտալիսոնից և Կիթառիճից: Այդ նպա-տակով նա կանգ է առնում Թեոդոսուպոլսից հարավ ընկած մի վայ-րում, որը մենք անվանեցինք Արտաղիք: Այդ հիման վրա էլ կար-ծում ենք, որ Արաքսը պարզապես Արտալիսի աղավաղումն է՝ 'Αραβισσο-ων, փոխ. Αρ<τ>αλισσο-ων. Այս աղավաղումը, ինչ-պես երևում է, անց է անցել Գաղաթը-վիսի 'Αράβισσος հայտնի

¹ Menand, p. 394. προβαίνοντι δὲ Χοσρόη ἀνὰ τὰ πρόσω οἱ ἐν τῷ κλίματι Μακροβαθῶν καὶ Ταρανῶν ἤριστα ἔμενον. p. 395, εἶτα ἐς τὰ πρόσω ἤλθον ἐπὶ τῆς καλουμένης Βαδιανῆς... ἐσβάλλει τε εἰς τὴν 'Ρωμαίων 'Αρμε-νίαν κατὰ Θεοδοσιούπολιν... ἐστρατοπεδεύσατο ἐς τὸ 'Αραβισσο-ων ἐπι-κεκλημένον χωρίον, ἀμφὶ τὸ μεσημβρίνον κλίμα τοῦ ἄστεος, τὸ δὲ δὴ 'Ρωμαίων στρατεύμα, αὐτὸ γὰρ δῆπου τὸ συναθροισθὲν, ὡς πρὸς ἄρκτον περὶ τὸ κλίμα τὸ καλούμενον < > συναγόμενον ἐς ὑπώρειάν τινα ὄρους. Մ. Մարտինը, ուղղկով լատին թարգմանչի սխալը, որ ἄρκτον-ը դարձել է հատուկ անուն (ad Arctum), ինքն էլ նույնպիսի սխալ է թույլ տվել, συναγόμενον-ը համարելով աշխարհագրական անբձին՝ à Synagomenon! Lebeau, X, 135: Իրականում գավառի անունը քաղաքից դուրս է ընկել: Դարայի մոտից դեպի Հայաստան և Թեոդոսուպոլսի վրայով դեպի Կեսարիա հոսրովի արշավանքի մասին պատմում է նաև Հովն. Սիմեոսյան, Եկեղ. պատմ. VI, 8: Այն մասում, որտեղ խոսվում է Թեո-դոսուպոլսի մոտ տեղի ունեցած ընդհարման մասին, քննադիր խաթարված է, որի հեռանկարով քննարկ եցր-ն սխալ է մեկնարանվում դերձանացի թարգմանչի կող-մից (էջ 232): Բար-Չեբրեյի մոտ այդ նույն բարձր կարգացվում է Bagrava: Տարա-կույս չի հարող լինել, որ այստեղ թաքնված է ճակատամարտի տեղի անունը: Չե-ղինսյանի մեկնում է ունեցել, անկասկած, հայոց Բաղրևանդը՝ Մենանդի Μακρο-βαθῶ-ων (փոխանակ M-β-ακραβαθῶν-ի, որտեղ μβ արտահայտում է հին-β), որից ոչ հետև, հոռոմացիների մասում տեղի ունեցավ ընդհարում նրանց և պարսից զորքերի միջև:

քաղաքի անվան ազդեցութեամբ: Այն վայրը, որտեղ մենք տեղադրում ենք Արտադիբը, այժմ հայտնի է Ն և դ ե ռ ի ս անունով, որ հավանորեն Արտալեսի թուրքական արտասանութիւնն է: Այստեղ՝ նախ լեռան ստորոտում էլ գտնվում է Արտալեսոն բերդը, մոտավորապես այժմյան Մելիքանի շրջակայքում:

Արտալեսի և Կիթաոի միջև եղած տարածութիւնը մեծ չէր՝ մոտավորապես մեկ օրվա ճանապարհ: 542 թվականի Գլինի արշավանքի նախօրեին հոռոմների զորքերը տեղավորված էին սահմանապահ կետերում, զորամասերից մեկը կանգնած էր Կիթաոի ճում, մյուսը՝ նրանից ոչ շատ հեռու՝ Խորձյանում՝ այն է՝ Արտալեսում, իսկ երրորդը՝ Փիսոնում: Խորձյանի զորամասը, առանց մյուսներին նախազգուշացնելու, առաջինն անցավ սահմանը. Կիթաոի զորամասը, այդ իմանալով, հենց մյուս օրը շարժվեց նրա ետևից, իսկ Փիսոնում եղած զորքերը ներխուժման մասին ուշ իմացան, քանի որ «մյուս զորքերից հեռու էին գտնվում»²: Այստեղից հետևում է, որ Կիթաոի վրայի մոտ էր Արտալեսին, քան Փիսոնը՝ Կիթաոից, մի հանգամանք, որ չի հակասում Կիթաոի և Արտալեսոնի դիրքի մասին մեր հանգած եզրակացութիւններին:

Ըստ մի հետաքրքրական վկայութեան Կիթաոի ընկած էր Ասորիքի և Հայաստանի միջև³: Եթե հայկական հավակնութիւնները հասնում էին մինչև Մծբին, ապա հասկանալի է, որ այդ կարգի շահագանցութիւններ կարող էին թույլ տալ նաև ասորիները: Այդ իմաստով Մուրադ-Արածանի գետը ընդունելով իրրև Ասորիքի սահման, մենք պետք է որ Կիթաոից տեղաշարժեինք դեպի Մուրադի ակօսքը: Ներկայումս ճապարջրում գտնվող Դարեզոս ավանի համադրութիւնը Կիթաոից հետ կարող է նույնիսկ գալթակղեցնել (Կ-Քաոիդից սկզբի հնչյունի անկումով):

Մեզ ավելի հավանական է թվում, որ ասորի պատմագիրը Ասորիքի սահմանների մեջ է մտցրել հայկական հինգ սատրապութիւն-

¹ Ենդե-ր-իսը կամ Ենդե-ր-իսը Արգա-լ-իսի ազգավաղումն է: Թուրքերի խոսքում տեղական չ հնչյունը ր-ի փոխելու մի ուրիշ օրինակ է ապիս Պե-ր-ին, հին Պե-լ-ի = Π α λ ι ο ς χάστρον, հայերեն՝ Պաղի-ն:

² Proc. Pers, II, 24, p. 261—263.

³ Հովն. Նիսեսացի, Եկեղ. պատմ. VI, 14: Մորիկը, պատերազմի էլնելով պարսից զեմ, շեկավ և կանգ առավ Հայաստանի և Ասորիքի միջև, այսինքն՝ Կիթաո-նում: Գերմ. թարգմ., p. 242:

ները, որոնց թվին էր արտականում, ինչպես հայտնի է, նաև Հաշտյանքը: Այդ դեպքում հասկանալի է դառնում, որ Հաշտյանքի հյուսիսային ծայրում ընկած Կիթաոիցը կարող էր սահման համարվել Ասորիքի և Հայաստանի միջև:

Մարգարիքի մյուս կողմում՝ Թեոդոսուպոլսի շրջանում և ավելի այն կողմ սահմանագիծը անցնում էր Թեոդոսուպոլսից մինչև Ճոբոս գետը ընկած լեռնաշղթայով. էրզրումի աջ կողմից դեպի հյուսիս ձգվում են նախ Դելի-բոյնուի և ապա Կարգարազարի լեռները, որոնք իրենց վերջնակետում, Կանդիլ գագաթի մոտ (10230 ոտնաշափ), որ ամենարժար կետն էր ամբողջ լեռնաշղթայում, շրջվում են դեպի արևմուտք և ձուլվում Դումլի լեռնաշղթային: Դումլին ձգվում է էրզրումի վերևից դեպի Ճոբոսի ակօսքը՝ Սպերից վերև: Վերոհիշյալ գծին հարում էին պարսից կողմից Բասենը և Տաջի Բուխա և Ոքաղե գավառները, որոնք ընկած էին հոռոմների մասում գտնվող Կարինի և Շաղագոմի դիմաց: Ծիշտ սահմանի վրա, Թեոդոսուպոլսի դեմ հանդիման ընկած էր Դու գյուղը, որը միաժամանակ սահման էր Կարինի և Բասենի միջև:

Վահան Մամիկոնյանի պատմութիւնից հայտնի է, որ արարելի զորապետը, հետապնդելով հայ պատամբներին, կանգ է առնում Դու գյուղում, որը պատմիչը համարում է երկու պետութիւնների միջև սահմանային կետ: Վահանը՝ այսպատմբների ղեկավարը, կանգնած էր ոչ հեռու՝ Մկնաոին զյուղում: Մյուս զորավարը՝ Հազարավոյսը, Վահանի հետքերով գալիս է Ոքաղե գավառը՝ Գյուղիկ և Վարդիշեն գյուղերը: Իսկ այդ ժամանակ Վահանն արդեն գտնվում էր սահմանի մյուս կողմում, բայց Հազարավոյսին մոտիկ՝ հոռոմական Շաղագոմ գավառում: Պարսիկների հետապնդումը ոչնչի չհասցրեց, և նրանք Ոքաղեից իջան Բասենի Դու գյուղը, իսկ Վահանը գնաց Մաղիկ գյուղը, որ Մամիկոնյանների սեփականութիւնն էր, որտեղից էլ մտադիր էր անցնել Հաշտյանքի կողմը¹:

¹ Փարպեցի, էջ 136, «և էր բանակ սաստիկութեան զօրոն Արեաց ի գեօղն, որ անուանի Դու, ի սահմանափոխութեան պարսից և հոռոմոց. և զօրավարն հայոց Մամիկոնեանն Վահան մերձ ի նա իբրև երկուք հրասախօք, ի գեօղ մի, որ կոչի Մկնաոին», էջ 145. «յն Ոքաղե ընակըր մօտ ի գեօղն, որում անուն էր միումն Գյուղիկ և միումն Վարդաշեն. և քանակեալ անդ զօրն զայն՝ լսէր ի վաղին, թէ Մամիկոնեանն Վահան մօտ է ի նա ի Վարայրվարոյն ի հոռոմ տան, ի գաւառին, որ կոչի Շաղագոմ», էջ 148. «Վահան... բանակէր ի գիւղ մի մերձ, որ էր ընդ իշխանութեամբն Մամիկոնեացի, որում անուն էր Մաղիկս, Լասիվեւոցի, էջ 67. «գայ ի գլուխ

Հիշյալ գյուղերը գոյաթյուն ունեն մինչև այժմ. Դուն էրզրումի մոտ, Կարգարազար լեռների ստորոտում, և այժմյան արտատանու-թյամբ կոչվում է Տու-եա, որ հավանորեն սեռական հարովածեն է: Երկու Դու կա՝ Մեծ և Փոքր, գրեթե կոզք կոզքի Դրանցից մի քիչ դեպի արևելք ընկած է Կունիճ գյուղը, որն, անկասկած, պատմա-կան Միկստինճն է: Լուս պատմիչի, նրա հետազոտությունը Դուից երկու փարսախ է՝ մոտ 12 կիլոմետր, որ և համադաստասխանում է Կունիճի դիրքին:

Ավելի հյուսիս, Կենդիլ լեռան մոտ, ճիշտ սահմանադրված, գտնվում է Մադկի գյուղը (ժողովի բառի սեռական հոլով): Մյուս եր-կու գյուղերը տեղադրված են ավելի վերև, Քորթում գետի հովտում, Քորթումի մոտ և առաջվա նման կոչվում են Դյուղիկ և Վարդիշեն: Այդ գյուղերն էլ որոշում են Որադևի և միաժամանակ հստատեկան Շազագում գավառի դիրքը, որ ընկած էր նրա մոտերքում՝ «մալտի նա» և նշանակում է, թե գտնվում էր լեռների մյուս կողմում, Սեր-լամ գետի հովտում՝ Կարինի և Սպերի միջև:

Ի հակակշիռ հոռոմների թեոդոսուպոլիս ամբության, պարսեա-կան հողում, Թեոդոսուպոլիսից ոչ հեռու՝ Բասենի գավառում գտնվում էր Բող (Բող-բերդ) ամրոցը: Այստեղ բանտարկված էին Կամարա-կան իշխանների կանայք, որոնց Վահան Մոմիկոնյանի օրոք ձերբա-կալել էին պարսիկները: Բողը ծանոթ է նաև արևմտյան պատմագիր-նեքին և հսկայական դեր է խաղացել Չ դարի քաղաքական իրադար-ձությունների ժամանակ: Նրա տեղը մեղ ճշտությամբ հայտնի չէ: Մի վկայությամբ նա գտնվել է Բասենում, մի այլ վկայությամբ՝

Բասենոյն, մերձ ի գեօղն, որ փոյի Դունս Դուն հիշատակվում է նաև Սերևոսի մոտ Որդրոյի ճեա միասին ... Եղև պատերազմ մեծ ի Դու և յՈրդրու, էջ 77: Որդրուն հայտնի է Փալատոսին, որպես Որդունաց տոմի կալվածք. զորուն գեղն Որդունաց, որոյ անունն էր Որդորուս, էջ 10: Ինճիճյանը և նրան հետևելով՝ ուրիշները Դուն և Որդրուն համարում են այժմյան Մեծ և Փոքր Տու-ն. Ինճիճեան, Աշխաբնագր., էջ 90:

Բայց ինճիճյանը է, որ Որդրուն այս երկու Դուերից և ոչ մեկը չէ, այլ համա-պատասխանում է զեռես Վահան Մամիկոնյանի պատմությունից հայտնի նույն Բա-սենում, Օրտու-սու գետակի վրայի՝ այժմյան Օրտուին՝ Օլուար գյուղից արևելք, Փարսեցի, էջ 154. «Ի գալստն Բասենոյ, ի գեղն, զոր Ալուարն կոչեն»: Բսկ Ինճիճ-յանը Մադկի գյուղը տեղադրում է Հաշտյանքի սահմաններում, Սառագր., էջ 104, մինչդեռ Փարսեցու պատմությունից երևում է, որ այն ընկած էր Որադևից ոչ հեռու «Ի գեղ մի մերձ Հազարապոլսոսին, որ նստած էր Որադեում», էջ 148 և գետի Կարին ու մոտակա Աբժաթի գյուղը տանող ճանապարհին:

«Թեոդոսուպոլիսի սահմանների մոտ»¹: Սուլորաբար այն համարում են այժմյան Հասան-կալան: Հասան-կալայի տեղում գտնվում էր Վազարշակներտը, որտեղ ներսես Շինոզ կաթողիկոսը կառուցեց սուրբ Աստվածածին եկեղեցին²: Քիչ է հավանական, որ նախկին Բող բերդը հետո կոչվեր Վազարշակերտ, որովհետև վերջին անունը ըստ էության չէր կարող հին ծագում ունենալ. մնում է թերևս են-թադրել, որ նախքան Անաստաս կայսեր կողմից Թեոդոսուպոլիսն ամրացնելը պարսից Վազաշ (կամ Վազարշ, 484—488 թթ.) թագա-վորը վերականգնել է Բող ամրոցը և վերանվանել Վազարշակերտ, այսինքն՝ Վազարշի քաղաք:

Մեղ թվում է, ավելի ճշմարտացի կլիներ Բողը փնտրել հարևան Տայրի Բուխա գավառի սահմանների մոտ, նկատի առնելով նրանց անունների համահնչյունությունը: Բուխան ընկած էր Օլթի գետի վտակներից մեկի ակունքների մոտ Բասենի հարևանությամբ: Ի միջի ալլոց, Կարգարազարի լեռներում, երկու գավառների սահմանի վրա, այժմ էլ գտնվում է մի բերդ, որ կոչվում է Բուա-կալա: Եթե Բուան հողում է Բուհա, Բուխայից, ապա Բուա-կալայի մեջ ունենք հին Բողը:

Բող ամրոցի ճեա անբաժանելիորեն կապված էր Փառանգիոն ճեաքի քաղաքական բախտը, որտեղ ոսկի էր արդյունահանվում

¹ Փարսեցի, էջ 146. «Շապհոյ տարեալ զԿանայս Կամարականացն յամուր բերքն Բասենոյ, զոր Բողբերդն կոչեն», նաև Proc. Pers. I 15, p. 77. Βῶλον τὸ εὐρύσιον, ἄγχι τὰ πη ὄν τῶν Θεοδοσίου πόλεως ὀρίων, I 22, p. 112 և 114. Goth. IV 13, p. 526.

² Լով. Մամիկոնյան, էջ 57—58. «Ներսես կաթողիկոս, որ ի Տայոց էր մեկգամբ, այն որ զՎազարշակներտոյ Սուրբ Աստվածածինն շինեաց»: Հասանկալայի մոտ այժմ էլ գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին: Ժ դարում Վազարշա-կերտում նստում էր վրաց եպիսկոպոսը, Լաստիվերտցի, էջ 9:

³ Բուխա անունը հանդիպում է Աշխաբնագույցի մեջ, էջ 35, «Բուխա և Ազոր-դագիորս և Գահեմամկալում, Բուխա Դիմաբսեան: Երկու զեպում էլ Կարևի է ընդու-նել որպես Բուխի սեռական հոլովը: Ձեռագրերի մեջ հանգրված է նաև Բոխա ըն-թերցումը. Ինճիճյան, Չխախա, էջ 371: Բողը կամ Բողը այնպես է վերաբերում Բուխա-ին, ինչպես Ուխտի-քը (Ուղտի-ք-ից)՝ Օլթիին: Լաստիվերտցու մոտ՝ Ուխտիք, էջ 4 և 6, և Ուխտիք, էջ 9: Ասողիկի մոտ, «Քաղաք Ուխտեաց», էջ 189, 278: Այժմյան Օլթի ձևը ցույց է տալիս, որ Ուխտիքի մեջ իս հնչյունը ծագել է զ-ից՝ Ուղտի: Ի միջի ալլոց պետք է նկատել, որ Օլթիից արևմուտք, Քորթում լճակի ափին, գեռ այսօր էլ կա Ուխտա գյուղ, որի անունը ավելի է մոտենում Ուխտիին. Լինել մոտ Oklida:

պարսից թագավորի համար: Սա ընկած էր հայկական հողում՝ Ճանիքի սահմանների մոտ, այնտեղ, որտեղից սկիզբ էր առնում Բոսկամ Վոս գետը: Բոսն համապատասխանում է Աշխարհացույցի Voh-Վոհ-ին, որ Ճորոխն է կամ, ավելի ճիշտ, նրա վերին հոսանքը. Ճորոխի աղանքները սկիզբ են առնում Սպերի շրջակայքում: Հին հնդկականների վկայությամբ Սիսպիրիտիցում սակու հանքեր կային, որոնք հետաքրքրել էին նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացուն: Ըստ այս տվյալների Փառանգիոնը համընկնում է հայկական Սպերին՝ դասական Սիսպիր-խիզին: Ոսկի արդյունահանելու գործով Վահան Մամիկոնյանի նկատմամբ արված մատուցումը հավանորեն վերաբերում է Սպերի հանքերին¹:

Փառանգիոնը պարսիկների սեփականությունն էր: Կավառի օրոք ոսկու հանքերը կառավարում էր Սիմեոն անունով մի հայ, որը Հուստինիանոսի ժամանակ անցավ հռոմեացի կողմը և նրանց հանձնեց Փառանգիոնը: Այդ ժամանակ էր, որ Կամսարական Իսահակ իշխանն էլ նրանց հանձնեց Բող բերդը:

Ճիշտն ասած՝ Փառանգիոնի մոտ պարսիկները սահմանակից էին ոչ թե հռոմեացիների, այլ Ճանիքին: Ճանիքը կամ Խաղտիքը, ճանների կամ խաղտիների երկիրը, գրավում էր լեռնային այն շրջանը, որ ընկած էր Ճորոխի ու Սև ծովի առափնյա շերտի մինչև Տրապիզոն ձգվող Պարխար լեռների միջև: Ճորոխի հովտում Ճանիկեն (Ճանիքը) սահմանակից էր պարսից տիրույթներին և Տայոց գավառին՝ սկսած Փառանգիոն-Սպերից մինչև Թուխարս բերդը, այժմյան Խերհուր, այնուհետև Գուգարը գավառին ու Կղարջ (Ետ) քին՝ Արտա-

¹ Proc. Pers. I 15, p. 77. φρούριόν τε τὸ Βῶλον καὶ τὸ Φαράγγιον καλούμενον, ὅθεν δὴ τὸν χροσόν Πέρσαι ὀρύσσοντες βασιλεῖ φέρουσιν, նաև I 22, p. 112 և 114. *Gois.* p. 526. *Pers.* II p. 288. Βόας δ' ποταμός ἔξεισιν ἄγχισθὰ πητῶν Τζανικῆς ὀρίων ἐν Ἀρμενίοις, οἱ δὲ ἄμφι τὸ Φαράγγιον ᾤκησται. Βόα-ς = Աշխարհացույցի Վոհին, էջ 30 կամ Յոհին, էջ 35: Այստեղ յ-ն նախիր է — Ոհը Վոհի բարբառային գրությունն է, եթե նկատի ունենանք, որ բառակցումն-ն կարգացվում էր — վո: Strab. p. 744: Μετάλλα δ' ἐν μὲν τῇ Συσσιρίτι ἐστὶ χροσὸν κατὰ τὰ Καβαλλα. Փառանգիոնի ծագումը մշտապատ է Գեստանիք կարծում է, թե հնարավոր է, որ այն առաջացած լինի հունարեն φόραγξ, ձորակ, հովիտ բառից: Պոսիպիոս, I, p. 189, Սանթ. 1: Ինճիճյանը կապում է Արզնի հետ, կարգալով φόργανον Հնախոս., I, 188: Պատմագրի տ՝ Փարάγγιον καλούμενον՝ արտահայտությունից երևում է, որ Far angius-ը պարսկ. farhang, հայերեն՝ հրահանգ բառն է, արդյունաբանություն, մշակում իմաստով, այլ խոսքով՝ գործարան, հանք, որ համապատասխանում է Փարսիցու «գործ ոսկեհատ»-ին. էջ 117:

նույն գետի երկարությունը: Այնուհետև Ճորոխ գետը, ինչպես նկարագրում է Աշխարհացույցը, մտնում է Եգեր, և հոսելով Նիգալ, Մրուզ և Մրիա գավառների միջով, թափվում է ծովը¹: Նիգալ անունը, ինչպես մեզ թվում է, պահպանել է Մուրղուզ գետակը, որ Ճորոխ է թափվում ձախ կողմից, Արզվիսից ներքև: Աճարա գետի վտակներից մեկը կոչվում է Մարատ, որ նույնն է, ինչ որ Մրիաը, իսկ Մրուզը կարելի է համեմատել Իմեր-խևի, *Մեր-ուլիի հետ: Ուրեմն՝ երեք գավառները գրավում էին համապատասխան գետակների հովիտները՝ Ճորոխի ստորին հոսանքում, Իմեր-խևիի գետաբերանից մինչև ծով, կազմելով Եգեր նահանգը par excellence:

Եգեր, Եգերիա անվանումը պահպանվել է մինչև այսօր Աճար-խա ձևով, ընդ որում սովորական տառադարձությամբ կոկորդային գ-ն գարձել է քմային և: Եգեր տերմինը Աշխարհացույցի մեջ գործ է ածվում դեռևս լայն իմաստով և նշանակում է արևելյան ամրոցը թափվող՝ Ափխազիայից մինչև Տրապիզոն՝ ընդգրկելով նաև Ճանիքը: Ճորոխի արևելյան ափը, որտեղ ընկած էին Տայոն ու Կղարջը, պատկանում էր պարսիկներին, ըստ օրում, չի կարելի հաստատապես ասել, թե Տայոց սահմանափակվում էր արդյոք միայն արևելյան ափով, թե՛ գրավում էր նաև մյուս ափի մի մասը, ինչպես որ կարեցի է եզրակացնել մի շարք տվյալներից²: Վերջին դեպքում պարսկական տիրույթների վերջին սահմանը պիտի համարել Պարխարի ստորաբաղ: Գրանից հետո սկսվում էր Ճանիքը: Վերջինս, և առհասարակ Եգերը, նշված լայն իմաստով, իսկապես, թողնված էր ինքն իրեն: Համենայն դեպս Փարսիցից գտնում է, որ Ճանիքը, այնուամեն-

¹ Աշխարհացույց, էջ 35. «Անցանէ առ Թուխարս բերդով ի Կլարճս ևւ անտի չօրը, ընդ Նիգալ, ընդ Մրիա գառոսս ի Պոստոս ծովու: Թուխարսը հիշատակում է Անեղը, էջ 26: Վախուշտին՝ էջ 112: Ետեց օղծածունու: Թուխարսից ներքև գտնվում է Իրխանը, Փալստոսի էջ 112. հիշատակած պատմական էրախանին: Իրխանից հարավ ընկած էր Իշխանը Սերեսս, էջ 140, իսկ սրանց միջև՝ Ավարեսը՝ թերևս, Արահեզը, որ Գիւս կաթողիկոսի ծննդավայրն էր, Փարսիցի, էջ 110: Ավելի մոտ Սպերին գտնվում էր Ոչնազը—Որշնհազը, Փարսիցի, էջ 74:

² Աշխարհացույց, Արանց փորը, որ Տայոց գավառներից մեկն էր, դեռում է «առ Պարխար լեռամբ», իսկ Պարխար լեռները գետի ձախ ափին են: Ըստ Փարսիցու, էջ 74, Պարխար լեռները ընկնում են «մերձ առ սահմանադրութիւն Խաղտեաց» և ոչ թե բուն Խաղտիքի մեջ, ինչպես որ կարելի էր սպասել: Պարխար լեռներում գտնվող ամրոցները, որտեղ, Փարսիցու ասելով, ապաստան է գտնում Հմայակ Մամիկոնյանը, հավանաբար պատկանում էին Մամիկոնյաններին և կազմում էին Տայրի մի մասը:

նայնիմ, «բնակվում էին հոռոմների երկրում», թեև օգտվում էին ազատությունից¹։ Նրանք նվաճվեցին և հարկադրված եղան ճանաչել կայսեր իշխանությունը միայն Հուստինիանոսի օրոք, որը Լազիկեի ժայռում, ձորտխի գետաբերանից հյուսիս՝ ծովի ափին կառուցեց Պետրա բերդը, որը կարելի է համարել ավյալ ժամանակաշրջանում կայսրության սահմանազրույթը ոչ այնքան հողային տիրույթների, որքան կայսրերի և պարսից թագավորների ազդեցությունը սահմանազատելու իմաստով։ Իրականում մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում այդ երկրամասին տիրանալու համար կայսրերի և պարսից թագավորների միջև փոփոխակի հաջողությամբ կատաղի պայքար էր գնում։

Այսպիսով, Մծբինից մինչև ձորտխ անցկացրած գծով հայկական հողերը բաժանված էին երկու մասի՝ Արևմտյան կամ Հռոմեական Հայաստանի և Արևելյան կամ Պարսկական Հայաստանի։

¹ Perts. I 15. p. 77, τὸ Τζανικὸς ἔθνος, οἱ ἐν γῆ τῆ Ῥωμαίων αὐτόνομοι ἐκ παλαιοῦ ἴδρυντο.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Ի

ԻՆՔՆԱՎԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

SATRAPIAE

Ինքնավար իշխանությունները։ Նրանց տեղադրությունը ծագումնաբանական ազգագրով։ Հառայանք և Քալանոփոս։ Մոփենեն լայն առումով։ Անգիանեի դիրքը — Մոփի, Խարբեղ, Աշուշատ և Անծիտ։ Անծիար Մոփի մաս։ Մոփի բաժանումը. Մեծ Մոփի և Շահունյաց Մոփի կամ Մոփանեն և Մոփենեն։ Անգիլենեն Մեծ Մոփի մաս։ Ինքնավար սատրապությունների ծագումը։

Հառայանքի և Քալանոփի միացումը սատրապություններին 378 թվականին։

Միջնադարի Հայաստանը ո՛չ քաղաքական և ո՛չ էլ մշակութային տեսանկյունից համասեռ մեծություն չէր։ Այս հանդամանքը պայմանավորված էր գլխավորապես նրանով, որ նա կայսրության կազմի մեջ մտավ ոչ միանգամից, այլ մաս առ մաս, տարբեր ժամանակներում և ոչ միևնույն պայմաններով։ Կայսրությունը Արևմտյան Հայաստանում տարբերում էր հողերի երեք շրջան, նայած ինչ աստիճանի էր նրանց կախվածությունը կայսերական իշխանությունից՝ ինքնավար իշխանություններ, ներքին Հայք և Փոքր Հայք։

Փոքր Հայք էին կոչվում հայկական անդրեփրատյան հողերը։ Այն Հռոմեական կայսրության մեջ մտավ շատ վաղ, կարելի է ասել դեռևս իր քաղաքական կյանքի արշալույսին։ Իսկ այն հողերը, որ տարածվում էին մինչև Եփրատ, կազմում էին այսպես կոչված Մեծ Հայքը՝ հայ Արշակունիների տիրույթները։ Հռոմի և Պարսկաստանի միջև պայքարը մղվում էր բացառապես Մեծ Հայքի համար։ Փոքր Հայքում հռոմեական իշխանությունը ամուր կերպով հաստատվել էր նախքան Հայաստանում Արշակունիների երևան գալը։

387 թվականին վեճի և բաժանման առարկա դարձան հենց Արշակունիների տիրույթները։ Այն գավառներից մի քանիսը, որոնք բաժին ընկան հռոմեներին, փաստորեն, արդեն նրանցն էին համար-

վում 374 թվականից՝ Արշակի անկման ժամանակվանից ի վերս Այդ գավառները մանր ինքնավար իշխանություններ էին՝ կայսրերի գերագույն հովանավորության տակ և իրենց արտոնյալ վիճակը կարողացան պահել մինչև Հուստինիանոսի ժամանակները: Գրանց կոչում էին ինքնավար սատրապություններ կամ հաճախ՝ *պարպասյես աղաթ*, *ἔθνη*, *gentes*: նախկին Մեծ Հայքի մաս կազմող մյուս գավառները, որոնք 387 թվականի դաշնագրով անցել էին կայսրությանը, հոռոմները շարունակում էին կոչել Մեծ Հայք, որպես *pars pro toto*: Մինչդեռ Մեծ Հայքի հիմնական մասը, որ մնաց պարսիկներին, կրում էր Պարսկաստան անունը: Հոռոմեական Մեծ Հայքի պաշտոնական անունը, ըստ երևույթին, եղել է *Նեբրին* Հայք, այդպես էլ մենք պիտի կոչենք այն՝ Մեծ Հայք տերմինի տակ թողնելով նրա իսկական նշանակությունը:

Ինքնավար իշխանությունները կամ, ինչպես կոչվում էին գրանք, սատրապությունները գտնվում էին Հայաստանի հարավում, Տիգրիսի և Եփրատի միջև: Մեծ կամ Ներքին Հայքից տարբերելու համար Հուստինիանոսի պատմագիրը նրանց տալիս է Մյուս Հայք անունը. «պարփակված լինելով Եփրատի ծոցում, այն տարածվում է Ամիդ քաղաքի կողմերը, և այնտեղ իշխում են հինգ հայ սատրապներ» — *τὰ μὲν οὖν ἄμφι τῇ μεγάλῃ καλουμένῃ Ἀρμενίᾳ... τῇ δὲ ἄλλῃ Ἀρμενίᾳ, ἥπερ ἐντὸς Εὐφράτου ποταμοῦ οὕσα διήκει εἰς Ἀμιδαν πόλιν, σατράπεις ἐφεστήκεισαν Ἀρμένιοι πέντε*¹. Իր իսկ՝ Հուստինիանոսի հրատարակած պաշտոնական վավերագրերում այդ նույն իշխանությունները կոչվում են *gentes* և *ἔθνη*, ի հակադրություն Armenia Magna կամ Interior և թվարկվում են անուն առ անուն՝ *Magnam Armeniam, quae interior dicebatur et gentes: Anzetenam videlicet, Ingilenam, Asthianenam, Sophe-nam, Sophanenam, in qua est Martyropolis, Balabitenam*. C. J. De off. mag. mil. 1 29, 5.

Τῶν ἐθνῶν... Τζοφαννή τε καὶ Ἀνζήτην καὶ Τζοφανή, καὶ Ἀσθιαννή καὶ Βαλαβιτηνὴ καλουμένη καὶ ὑπὸ σατράπαις οὕσα. *lust. Novella XXXI*².

¹ Proc. Aed., III, 1. p., 246—247.
² նովելլաների Bib. Teub. շարքի նոր հրատարակության մեջ Nov. XXXI = Cons. XLV: Այստեղ և մյուս հրատարակություններում կարգազույգ է Τζοφαννή τε καὶ Ἀνζήτην ἢ Τζοφανή καὶ Ἀσθιαννή) ἢ καὶ Βαλαβιτηνὴ. Անդրանների և Սոփենների միջև իջած քաղաքը բոլորովին անտեղի է և առաջ է եկել

Sancimus itaque, si quidem ab Aegyptiaco... vel Armenis et gentibus... C. J. De temp. et rep. app. VII 63, 5.

Ուշադրություն դարձնենք այն բանի վրա, որ սատրապների թվի վերաբերյալ տվյալները շեն համընկնում. պատմագրի վկայությամբ գրանց թիվը եղել է հինգ, բայց մեջ բերված վավերագրերից մեկում հիշատակված է հինգ անուն, իսկ մյուսում՝ վեց անուն: Սակայն նախ և առաջ ծանոթանանք հիշյալ գավառների տեղագրությանը:

Աշտիանենին և Բալավիտենեն, որոնց մասին մենք արդեն առիթ ունեցանք խոսելու, հայկական Հաշտյանքն ու Բալահոփտն են, որ գտնվում են Եփրատի վտակի՝ Արածանի-Մուրադ գետի վրա. և այն հանգամանքը, որ այդ գավառները դասված են սատրապությունների շարքը, ցույց է տալիս, որ նրանք գրավում էին գետի ոչ միայն աջ, այլև ձախ ափը: Հաշտյանքը համապատասխանում է մուսավորապես այժմյան Գենջ և Ճապաղ-ջուր կաղաներին, իսկ Բալահոփտը՝ Պալուին: Բալահոփտ հայերեն նշանակում է բալի հովիտ՝ բալ և հոփտ բառերից: Գրանից երևում է, որ տեղի անունը իսկապես Բալ է, որից առաջ է գալիս Բալու սեռական հոլովածը¹: *Βαλίη Աρζή-անեն կապ ունի Աρζή-շաթի հետ. այդ գեպքում պետք է ընդունել, որ ինչ-որ ժամանակ Աշտիշաթը համարվել է Հաշտյանքի քաղաքը և Տարսենին է վերագրվել հետագայում*²: Մնացած գավառները ընկած էին ավելի հարավ՝ Եփրատի և Արևմտյան Տիգրիսի միջև: Սոփենեն, Անդիտենեն և Սոփանենեն, ինչպես նաև Անդեյիկեն կոչվող տեղիտորիան ավելի հին ժամանակներում հայտնի է եղել Սոփենեն ընդհանուր անունով: Ըստ Ստրաբոնի, նրա արևմտյան սահ-

համարեն, նախորդ բառի վերջին դ-ից: Նույնը կարելի է ասել նաև Բալավիտենեին նախորդող *ἢ καὶ-ի* մասին, որտեղ դ-ի ահշատումը ավելի է ալթի ընկնում: Ուսանք առաջաբերում են *ἢ καὶ-ն* ուղղել *καὶ ἦ-ի*. Güterbock, p. 30, not. 3: Բայց հիմք չկա ենթադրելու *ἦ-ի* գոյությունը Բալավիտենեի հետ, երբ մյուս գավառների անունները գրված են արանց այդպիսի հոդի Ուշագրավ է, որ հին հրատարակություններից մեկում կարգազույգում է այնպես, ինչպես մենք ենք ենթադրում. հրատ. Haloander 1531 թ.:

¹ Պալու բառը ծագում է բալոյ-ից (sc. քաղաք կամ հովիտ), *καστρον Βα- (του)λουος*, Georg Cypr. p. 49.

² Ազարանգեղոսը, էջ 469, քաղաքի անունը համարում է առաջացած «յաշտից սեղեթ»-ից, որ նշանակում է զոհաբերության վայր, Յաշտիշաթ: Բայց այս մեկնությունը լուրջ նշանակություն չունի: Աճի-ձատ-ի հետ, որտեղ ձատ-ը հին համարմենք է ձահր-ի երկիր, քաղաք, կապ ունի, գուցե, նաև Շտեպին, որ նույն Հաշտյանքում գտնվող Ողին գյուղի մի այլ անունն է:

մանն էր Եփրատի հոսանքը, հարավային կողմում նա Միջագետքից բաժանվում էր Տարոնի գլխավոր լեռնաշղթաներից մեկով՝ Մասիոնով, որ անցնում է Մծբինի վերևով: Հյուսիսում Սոփենենն ձգվում էր մինչև Ակիլենանեն, նրա արևելյան սահմանները ճշտորոշվում էին այն դիրքով, որ գրավում էր նրա մայրաքաղաք Կարկաթիտկերտը, որը «հարում էր Տիգրիսին» և, հավանորեն, բնկած էր Մարտիրոսուպոլսի տեղում¹:

Փավստոսը Սոփենեի մեջ է դնում Բնարեղ բերդը, որտեղ պահվում էին Արշակունի թագավորների գանձերը, որ Գևորգ Կիպրացու καστρον Βαναβήλων է, այժմ Մարդինից մի քանի վերոս Տեւաւորութեան վրա բնկած Բենարիլ անունով մի փոքրիկ գյուղ: Սոփենեան էր գտնվում նաև Քիւր—Փիտար գյուղը՝ Հարիր երանելու ծննդավայրը, որ այժմյան Փիտարն է, նույնպես բնկած է Մարգինից ոչ հեռու, նրանից դեպի արևմուտք²: Սրանից երևում է, որ Ստրաբոնի գծած Սոփենեի՝ Միջագետքի կողմի սահմանները բնավ էլ չափազանցված չեն:

Սոփենեն վերահիշյալ սահմաններով ավելի շուտ քաղաքական տեղումն է. ազգագրական տեսակետից այն ներկայացնում էր տարբեր ազգութիւնների մի խառնուրդ: Ստրաբոնի մոտ, որ լավ ծանոթ էր Սոփենեին, չի հիշատակվում նրա ստորաբաժանումների մասին. նրանի՝ տարբեր գավառների արոճվելը տեղի ունեցավ հետո՝ Ֆեոդալական նախարարական կարգերի զարգացմանը զուգընթաց: Ամենից առաջ, ինչպես մեզ է թվում, անջատվեց Անդիտենե գավառը, շնորհիվ իր ցեղային յուրահատուկ կազմի: Գեոևա Չ դարում այստեղ

¹ Str. XII 2 p. 751, (Μελιτηνή) ἀντίκειται δὲ τῇ Σωφηνῇ, μέσον ἔχουσα τὸν Εὐφράτην ποταμὸν. XI 4 p. 733, Ταῦρος, διορίζων τὴν Σωφηνὴν καὶ τὴν ἄλλην Ἀρμενίαν ἀπὸ τῆς Μεσοποταμίας... ἐν δὲ τούτοις καὶ τὸ Μάσιον, τὸ ὑπερκεκλιμένον τῆς Νισίβιος ὄρος καὶ τῶν Τιγροκοκέρτων; Եփրատն ունի օրստերօ δὲ τὴν Ἀχιλσισην καὶ Σωφηνὴν τῆς Μεγάλης Ἀρμενίας; ib. p. 741, βασιλεῖον δὲ τῆς Σωφηνῆς Καρχαθιόκερτα. Plin. Nat. hist. VI 26. Tigri proximum Carcathiocerta.

² Փավստոս, Ե, է, յերրիին Սոփաց ի Բնարեղ բերդին Գ, Ժր, ի Բնարեղ բերդ արքունի Մեծ Սոփաց գաւառին. Georg. Cyr. p. 49, καστρον Βαναβήλων Ioan. Erhess. De beatis, p. 3, Habib... e regione Sophenorum oriundus... erat natus in vico cui nomen Phitar նաև p. 149, monasterio Pitarensi, քու իժաւսի, in terra Sopheniorum, այստեղ են գտնվել Beth-rummantha. p. 148 և locus Curtha գյուղերը, p. 41:

այրում էր օրտա ժողովուրդը, որ լեզվով տարբերվում էր հայերից և այսորիններից¹: Գասական հեղինակներից Անդիտենեի մասին առաջին անգամ հիշատակում է Պտղոմեոսը որպես Հայաստանի հարավային մասում, Եփրատի և Տիգրիսի ախուճքների միջև գտնվող երեք գավառներից մեկը²:

Ընդունված կարծիքի համաձայն Անդիտենեն ընկած է եղել Հաշտյանքից հարավ, Տիգրիսի վտակներից մեկի՝ Զիրանա գետի վրա³: Բայց ուշադիր զննությունը ցույց է տալիս, որ այդ տեղադրությունը ճիշտ չէ:

Հովհան Եփեսացին, իբրև բնիկ Անգեղտունցի, քաջ ծանոթ է այդ գավառին և Անդիտենեում ի թիվս այլոց հիշատակում է նաև Ուլա, Հուլա, Hulfa վանք և գյուղ, որտեղ ծնվել էր երանելին Մարան⁴: Խարբեղի մոտ այժմ գտնվում է Հուլվենք, Hulvenk անունով մի գյուղ մոտ 2000 բնակչով⁵: Ինչպես ցույց է տալիս վերջին վանկը, որ հայերեն վանք բառն է. այն նշանակում է Hul վանք: Որևէ կասկած չի կարող լինել, որ Hul-ը պատմական Hula-ն է: Նույն Խարբեղից ոչ հեռու կա մի ուրիշ գյուղ, որ կոչվում է Թիլենդիտ, Thil-enzit այս հետաքրքրական անվան վերջին մասի մեջ չի կարելի չտեսնել գավառի հին անվանումը՝ Thil-enzit ասորերեն նշանակում է բլուր—enzit: Այս երկու օրինակները մեղ հիմք են տալիս

¹ Ioan. Ephes. De beatis, p. 122, in Anzitenae Urtaeorum, p. 184, in finibus Urtaeorum in agro Anzitenae, p. 182, ոսն Թոհան, ծաղումով ասորի, այնպես լավ էր տիրապետում օրտաների լեզվին sermonem Urtaeorum, որ դժվար էր հավատալ, թե նա ասորի էր: Հմմտ. Nöldeke, Zwei Völker Vorderasiens, ZDMG, 35, p. 163:

² Ptol. V 12. ἐν δὲ τῷ... τμηματι μεταξὺ μὲν Εὐφράτου καὶ τῶν Τιγριδος ποταμῶν.

³ Kiepert, Die Landschaften. Berichte d. Berl. Acad. 1873, p. 197 և այլու Թեյլերը, նկարագրելով Զիրանա գետի ախուճքերը, ասում է this part of the Diarbekir Pashalik was a few years ago known by the name of Khanchoot, a corruption of the old name of Handth, Jour. Roy. As. Soc. 35, p. 43, բնդ որում նա հնկում է արաբ գրող Իբն ալ-Ասիրի վրա Սյո կարծիքը, ինչպես երևում է, ի նկատի է առնվել Անժիտի տեղը որոշելու:

⁴ De beatis, p. 75, beatus Maras clericus in ecclesia vici haud exigui in partibus Anzitenae, qui Hulfa vocatur, նաև p. 147, Այստեղ էին գտնվում նաև Paradisus (= պարսեղ), p. 45 և Nanas p. 122, գյուղերը, քայց քրանց տեղադրությունը հայտնի չէ:

⁵ Cuinet, II, p. 352.

մանն էր Եփրատի հոսանքը, հարավային կողմում նա Միջագետքից բաժանվում էր Տարոնի գլխավոր լեռնաշղթաներից մեկով՝ Մասիոնով, որ անցնում է Մծրինի վերևով: Հյուսիսում Սոփենեն ձգվում էր մինչև Ակիլեանեն, նրա արևելյան սահմանները ճշորոշվում էին այն դիրքով, որ գրավում էր նրա մայրաքաղաք Կարկաթիոկիտը, որը «հարում էր Տիգրիսին» և, հավանորեն, ընկած էր Մարտիրոսուպոլսի տեղում¹:

Փալատուր Սոփենեի մեջ է դնում Բեաթեզ բերդը, որտեղ պահվում էին Արշակունի թագավորների գանձերը, որ Գևորգ Կիպրացու յάστρον Βαναβήλων է, այժմ Մարդինից մի քանի վերոտ հեռավորության վրա ընկած Բենարիլ անունով մի փոքրիկ գյուղ: Սոփենեում էր գտնվում նաև Քնե—Փիտար գյուղը՝ Հարիր երանելու ծննդավայրը, որ այժմյան Փիտարն է, նույնպես ընկած է Մարգինից ոչ հեռու, նրանից դեպի արևմուտք²: Սրանից երևում է, որ Սարարոնի գծած Սոփենեի՝ Միջագետքի կողմի սահմանները ընկած էլ չափազանցված չեն:

Սոփենեի վերոհիշյալ սահմաններով ավելի շուտ քաղաքական աերմին է. ազգագրական տեսակետից այն ներկայացնում էր տարբեր ազգաբնակչության մի խառնուրդ: Սարարոնի մոտ, որ լավ ծանոթ էր Սոփենեին, չի հիշատակվում նրա ստորաբաժանումների մասին. նրանք՝ տարբեր զավառների արոհվելը տեղի ունեցավ հետո՝ ֆեոդալական նախարարական կարգերի զարգացմանը զուգընթաց: Ամենից առաջ, ինչպես մեզ է թվում, անջատվեց Անդիտենե գավառը, շնորհիվ իր ցեղային յուրահատուկ կազմի: Գեոևս Գ դարում այստեղ

¹ Str. XII 2 p. 751, (Μελιτηνή) ἀντίκειται δὲ τῇ Σωφηνῇ, μέσον ἔχουσα τὸν Εὐφράτην ποταμὸν. XI 4 p. 733, Ταῦρος, διορίζων τὴν Σωφανίην καὶ τὴν ἄλλην Ἀρμενίαν ἀπὸ τῆς Μεσοποταμίας... ἐν δὲ τούτοις καὶ τὸ Μάσιον, τὸ ὑπερκείμενον τῆς Νισίβιος ὄρος καὶ τῶν Τίγρανσκερτών; Եփրատի ունի օրս-տերք δὲ τὴν Ἀκιλσισηνὴν καὶ Σωφηνὴν τῆς Μεγάλης Ἀρμενίας; ib. p. 741, βασιλεῖον δὲ τῆς Σωφηνῆς Καρχαθιόκερτα. Plin. Nat. hist. VI 26. Tigri proximum Carthiocerta.

² Փալատու, Ե, է, յերիրն Սոփաց ի Բնարեզ բերդն Գ, ժբ, ի Բնարեզ բերդ արրունի Մեծ Սոփաց գաւառն. Georg. Cyp. p. 49, ἵάστρον Βαναβήλων Ioan. Erhess. De beatis, p. 3, Habib... e regione Sophenorum oriundus... erat natus in vico cui nomen Phitar նաև p. 149, monasterio Pitarensi, քառ իմաստի, in terra Sopheniorum, այստեղ են գտնվել Beth-rummantha, p. 148 և locus Curtha գյուղերը, p. 41:

այսրում էր օրտա ժողովուրդը, որ լեզվով տարբերվում էր հայերից և պոբրիններից¹: Գասական հեղինակներից Անդիտենեի մասին առաջին անգամ հիշատակում է Պտղոմեոսը որպես Հայաստանի հարավային մասում, Եփրատի և Տիգրիսի աղունքների միջև գտնվող երեք զավառներից մեկը²:

Ընդունված կարծիքի համաձայն Անդիտենեն ընկած է եղել Հաշտյանքից հարավ, Տիգրիսի վտակներից մեկի՝ Զիբանա գետի վրա³: Բայց ուշադիր զննությունը ցույց է տալիս, որ այդ տեղադրությունը ճիշտ չէ:

Հովհան Եփեսացին, իբրև ընթիվ Անգեղտունցի, քաջ ծանոթ է այդ զավառին և Անդիտենեում ի թիվս այլոց հիշատակում է նաև Ուլա, Հուլա, Hula վանք և գյուղ, որտեղ ծնվել էր երանելին Մարան⁴: Խարբեղի մոտ այժմ գտնվում է Հուլվենք, Hulvenk անունով մի գյուղ մոտ 2000 բնակչով⁵: Ինչպես ցույց է տալիս վերջին վանկը, որ հայերեն վանք բառն է. այն նշանակում է Hul վանք: Որևէ կասկած չի կարող լինել, որ Hul-ը պատմական Hula-ն է: Նույն Խարբեղից ոչ հեռու կա մի ուրիշ գյուղ, որ կոչվում է Թիլենդիտ, Thil-enzit այս հասցրբբազան անվան վերջին մասի մեջ չի կարելի շտեմել գավառի հին անվանումը՝ Thil-enzit ասորերեն նշանակում է բուրբ—enzit: Այս երկու օրինակները մեզ հիմք են տալիս

¹ Ioan. Ephes. De beatis, p. 122, in Anzitene Urtaeorum, p. 184, in finibus Urtaeorum in agro Anziteno, p. 182, ոսն Յոհան, ծագումով ասորի, այնպես լավ էր տիրապետում օրտաների լեզվին sermonem Urtaeorum, որ զովար էր հավասար, թե նա ասորի էր: Հմմտ. Nöldeke, Zwei Völker Vorderasiens, ZDMG, 35, p. 163:

² Ptol. V 12. ἐν δὲ τῷ... τμήματι μεταξὺ μὲν Εὐφράτου καὶ τῶν Τίγριδος ποταμῶν.

³ Kiepert, Die Landschaften. Berichte d. Berl. Acad. 1873, p. 197 և այլք: Բնարեզ, նկարագրելով Զիբանա գետի աղունքները, ասում է this part of the Diarbekir Pashalik was a few years ago known by the name of Khanchoot, a corruption of the old name of Handth, Jour. Roy. As. Soc. 35, p. 43, ընդ որում նա հավանում է արար գրող Իրն ալ-Ասիրի վրա Այդ կարծիքը, ինչպես երևում է, ի նկատի է առնվել Անձիտի տեղը որոշելու:

⁴ De beatis, p. 75, beatus Maras clericus in ecclesia vici haud exigui in partibus Anzitenes, qui Hula vocatur, նաև p. 147, Այստեղ էին գտնվում նաև Paradisus (= պարսեղ), p. 45 և Nanas p. 122, գյուղերը, բայց նրանց տեղադրությունը հայտնի չէ:

⁵ Cuinet, II, p. 352.

Անդիտենեն Տիգրիսի համակարգից փոխադրելու հարբերդի դաշտավայր, Տվյալ դեպքում համընկնում են ինչպես հնագույն, այնպես էլ համեմատաբար ավելի ուշ շրջանի հեղինակների պատմական արվյալները: Հստ Պտղոմեոսի Անդիտենեի շրջանում էին գտնվում ի միջի այլոց նաև Մազարա, Անդիտա, Բելիանիա, Արսամոսատա — Μαζαρα, Ἄνζιτα, Βελχανία, Ἀρσαμόσατα, քաղաքները, իսկ ըստ Աշխարհացույցի՝ Մուլքը և Հոռէ բերդերը: 1073 թվականին հոռոմ զորավետ Փիլարտոսը, որ քաղկեդոնիկ հայ էր, կանգ է առնում Մշարում և Սասունի Թոռնիկ իշխանից պահանջում հպատակվել իրեն. մերժում ստանալով՝ Փիլարտոսը հարձակվում է նրա վրա: Թոռնիկը պատրաստվեց դիմադրություն ցույց տալ և գնաց Ճապաղ-ջուր, այնտեղից էլ Աշմուշատ քաղաքը՝ նրան ընդառաջ և Ալեխուա դաշտում ընդհարվեց թշնամու հետ: Փիլարտոսը պարտություն կրեց ու փախավ Խարբերդ, իսկ Թոռնիկը վերադարձավ Սասուն. «Այս եղև ի Հանձիթ գաւառին ի յԱլեխուա դաշտին», — գրում է պատմիչը¹: Նշանակում է, որեմն, որ Խարբերդը, Աշմուշատը և Ալեխուան գտնվում էին Անդիտենեն զավառում:

Մշարը, որտեղ իր ճամբարն էր խփել Փիլարտոսը, այսօրվա Մուշարյան լեռների շրջանն է, Եփրատի ափին, Մալաթիայի դիմաց, որտեղ գտնվում է հայկական Սուրբ Ահարոն վանքը: Մշարի և Խարբերդի միջև նույնանուն լեռների ստորոտում հայտնի է Բելխան քաղաքը՝ Պտղոմեոսի Βελχανία-ն: Նրանից հարավ, Եփրատ թափվող գետի վրա, ընկած է Մազարա գյուղը, որ նույնն է, ինչ որ պատմական Mazara-ն: Tab. Peut հայտնի ուղեցույցի մեջ Mazara-ն նշվում է իբրև շորորդ կայան՝ Մեխտենեից հետո:

Melentines VIII Ad aras IX Thirtoma VIII Mazara. Ad aras-ի տակ պետք է հասկանալ Եփրատի ափը՝ Իզ-օլլու ավանի մոտ, որտեղ ինչպես այժմ, հավանորեն նաև վաղ ժամանակներում կատարվում է գետանցը: Այստեղից մինչև այժմյան Մազարա գյուղը 40 կիլոմետրից ավելի չէ, որ համապատասխանում է գետափից մինչև Մազարա 25 մղոն տարածությանը, ինչպես նշված է հիշյալ ուղեցույցի մեջ¹:

¹ Մառքեսու Ուոնյեցի, էջ 248—251, «Փիլարտոս... եկեալ բնակեցաւ ի Մշարն... Թոռնիկ զայր ի Ճապղ-ջուր... ի յԱշմուշատ քաղաքն եւ յԱլեխուա դաշտին հանդիպեցան զօրքն Փիլարտոսին... եւ գնաց փախստական ի Խարբերդ: Այս եղև ի Հանձիթ գաւառին ի յԱլեխուա դաշտին»:

² Hübschmann-ը Orstname, p. 301 և Kiepert-ը, Kleinasien, հին Մազարան,

Հայկական Մուլքը թուրքերեն այժմ կոչվում է Գյուլչեկ. այն մի փոքրիկ արվայան լիճ է Խարբերդից ոչ հեռու, արևմտյան Տիգրիսի ափունքների մոտ¹: Որոշ հավանականությամբ Hore berd-ն էլ կարող է համեմատվել Khar-berd-ի հետ, մանավանդ, եթե ընդունենք, որ արաբական հեղինակների Խարտա-բերդը պետք է կարգալ Խարե-բերդ², Խարբերդը, ինչպես տեսանք, գտնվում էր Անդիտենենում՝ Ալեխուա դաշտում. այստեղ էր գտնվում նաև Շամուշատը: Ալեխուա դաշտը համապատասխանում է այն դաշտին, որ հին հեղինակները կոչում էին Գեղեցիկ, որտեղ և գտնվում էր Արսամոսատ քաղաքը³: Այդ փաղաքական անվանը

ինչպես մեզ թվում է, անհիմն կերպով նույնացնում են Խարբերդի մոտ գտնվող Մեզրեի հետ: Բանն այն է, որ Խարիտի Մեզրեի ծագումը բոլորովին նոր է. այն հիմնել են Խարբերդից գաղթածները: Կիևի բացատրությամբ II, 355 և շար. քաղաքի դիրքը ժայռոտ լեռան վրա, չի պահաստվումը քաղաքային կարիքների համար, նեղ փողոցները, շինափայտի սակավությունը և այս կարգի այլ անհարմարությունները առիճ էն բնակիչներին տեղափոխվել քաղաքին մոտիկ դաշտավայրը, որտեղ այդ անհարմարությունները չկան: Վիլյամթի կնարարականոց Մեզրեի նորագոյն վերջին քաղաքացույցում օրոք այն վերանվանվեց Մամուրեթու-Աղիզ, որ նշանակում է Աղիզից բարեշնորհված, կամ Աղիզի շնորհիվ երջանիկ դարձած քաղաք: Հակառակ Հյուրշմանի նախադրույթմանը, թե «Մեզրեի անունը պիտի տարբերվե սովորական mezté-ից, որ նշանակում է վարելահող, մենք կարծում ենք, որ Մեզրեն հենց հիշյալ բառից է ծագում: Մեզրե, արաբերեն ܡܘܙܪܐ վարելու գաշտ, յայտալի և կշտալի հետ նույն նշանակությունն ունի Իր տեղադրությամբ Մեզրեն լեռնոտ Խարբերդի համեմատությամբ իրոք որ mezra է:

¹ Գյուլչեկը ܡܘܙܪܐ, փոքրիկ լճակ, մակերեսն է 50 քառ. կիլոմետր և խորությունը՝ 70—90 մետր, Cuinet, II, p. 399: Համանուն մի բերդի մասին հիշատակում է Մատթ. Ուոնյեցի, էջ 544, «Ս բերդն կաթողիկոսի, որ Սով առիս Այն կանդեած էր հավանաբար կղզու վրա, որտեղ այժմ էլ կա հայկական փոքրիկ մի գյուղ, Ինճիճյան, Աշխարհագր. էջ 240:

² Գրությունը թուլլատրեի է ܡܘܙܪܐ ընթերցումը փոխ. ܡܘܙܪܐ-ի հայերեն՝ «Խարե-բերդ. եթե միայն մոտովմանական Խարտաբերդը չի ծագում հայ խար(տ)-բերդից, ինչ-որ հնարավոր է, հմմտ. Ճանիթի Խարտ բերդի հետ:

³ Polyb. VIII 25, Ἀρσαμόσατα, ἢ κείται πρὸς τῷ Καλῶ πεδίῳ καλοῦμένῳ μέσον Εὐφράτου καὶ Τίγριδος, հմմտ. «Մատթ. Ուոն. այնշմուշատ... ի յԱլեխուա դաշտին»: Մի որիչ տեղ նույն հեղինակը գրում է. գնան ի Հանձիթ գաւառ եւ յաշու? ունէին զամուր բերդն Խարբերդոյ, էջ 443: Խոսքն այստեղ, իհարկե, նույն Ալեխուայի մասին է: Ցաշու պետք է կարգալ յալու Բնճիճյանի օգտագործած ձևագրերում Մառագր., էջ 50, եղև է նաև Ալեխու: Մենք կարծում ենք, որ ալեու, ալեու, ալու, թուրքական սև ١٥١٥/١٥/ կապ ունեն Hul-ի,

միանգամայն արժանի է հարբերդի դաշտավայրը, որը մեր օրերում էլ աչքի է ընկնում իր բնորոշությամբ և բնակչության խտությունով: Խարբերդի կազատում եղած 300 գյուղերի մեծ մասը գտնվում է այս դաշտավայրում: Քաղաքներն այն կոչվում է Յուս-օվա, այսինքն՝ Մեծ գաշտ, քայքայված է, որ Յուսն ծագում է հին Ալեքսանդրի անունից և միայն իմաստավորվել է թուրքական ձևով:

Անգլիտանների մյուս քաղաքը՝ Շամուշատը, գտնվում էր Արածանի-Մուրազ գետի վրա, Խարբերդից ոչ հեռու: Ըստ ժ դարի արաբ գրող Իբն-Սեբապիոնի նկարագրության Արդանաս գետը, որ կոչվում էր նաև Շամուշատ, «հոտում է Շամուշատ քաղաքի դուրպասի կողքով, իսկ այնուհետև Հիսն-Ջիադի դարպասի մոտով»:

Որ «Շամուշատը հեռու չէ Հիսն-Ջիադից», հաստատում է նաև Ք դարի գրող Իբն-Խարազմի: Նույն տեսակետին է հակված նաև Յակուտին, ըստ նրա հույժական Շիմշատ քաղաքը, որ նրա ժամանակ ժԳ դարի սկզբին, արդեն ավերված էր և շատ քիչ բնակչություն ուներ, ընկած էր Խարտաբերդի և Բալախի միջև: Ինչպես շատերի հետ վկայում է նաև Յակուտը՝ Հիսն-Ջիադը, այսինքն Ջիադ ամրոցը նույն Խարտաբերդի կամ Խարբերդի մի այլ անվանումն է¹:

Խարբերդի դաշտում Գյուլբեկի և Արածանի միջև գտնվում է Շամուշի, Շամուշի կամ Շամուշի գյուղը, որի անունը հիշեցնում է հին Շամուշատը: Նրանց կատարյալ նույնացմանը խանդարում է, թերևս, միայն այն պատկերացումը, որ գոյություն ունի Մամուսատի մասին որպես լեռների մեջ գտնվող բերդի: Ըստ Իբն-Սեբապիոնի ճշգրտության վերաբերյալ մի բարձր լեռ կա, որ պարփակում էր քաղաքը: Տակիտոսը այն անվանում է castellum: Բայց հնարավոր է, որ պատմական այդ քաղաքը գտնվել է նույն այդ շրջանում, լեռներին ավելի մոտ և նրա կործանումից հետո ազատված բնակիչները հաստատվել են մերձակա դաշտավայրում և, ինչպես հաճախ պատահում է, իրենց նոր բնակավայրին են փոխանցել հայրենի քաղաքի անունը: Համենայն դեպս մեզ

Hul վանքի հետ: Գուցե սրան է վերաբերում նաև Պաղոմոսի հիշատակած H λ & -բերձա քաղաքը Անգլիտանում:

¹ Plin. Nat. hist. VI 26, in Maggiore Armenia Arsamosata Euphrati proximum. Մարք. Ուեյլինգի, էջ 251, «ի բերդն իր յԱշուշատ քաղաք, ի յԱրձնոյ վերայ»։ Իբն-Սեբապիոն, IRAS, 1895, p. 11. Իբն-Խարազմի, Geog. Arab. VI, p. 123, Le Strange, op. cit. p. 117:

անհայտ է Շամուշիայի տեղագրությունը. թերևս այն իրենից ներկայացնում է մի ամրացված վայր: Եթե պարզվի, որ այդ տեսակետից Շամուշիան չի կարելի ընդունել որպես հին քաղաք, ապա, համենայն դեպս, նա այն կետն է, որի շրջակայքում պետք է որոնել մեզ հետաքրքրող հնավայրը: Այս եզրակացությունը հաստատվում է նաև նրանով, որ Մամուսատը, ինչպես պարզվում է Պետոսի և Վաղարշի միջև տեղի սենյած պատերազմների պատմությունից, ընկած էր այն գլխավոր ճանապարհի վրա, որ տանում էր Մելիտանից դեպի Ամիդ և Տիգրանակերտ: Շամուշիան իրոք գտնվում է այդ գծի վրա: Վաղարշի դեմ ուղարկված հռոմեական զորավար Պետոսը շարժվեց Փապադովկիայից և կանգ առավ Արսամուսատի շրջանում: Թշնամու ճամփան կտրելու նպատակով «իր ընտիր հեռակեր նա տեղավորեց մտտակա Տավրոսի լեռներում, իսկ դաշտավայրի մի մասը զբաղեցրեց նրա հեծելազորքը, կնոջը և որդուն փակեց մի ամրոցում, որ կոչվում էր Արսամուսատ... նրա ճամբարի առջևով հոտում էր Արսանիա գետը»¹:

Երբ Վաղարշը հարձակման անցավ, լեռնանցքներում տեղավորված հռոմեացիները չկարողացան գիմանալ թշնամու ճնշմանը և ետ շարժվեցին. ողջ մնացածները փախան խույ տեղեր, իսկ վերավորները շտապեցին ճամբար: Վաղարշը պաշարեց Արսամուսատ ամրոցը, ուր պաշտպանություն էին գտել զենք կրելու անընդունակ անձինք և որտեղ, ըստ երևույթին, պատասպարվել էր ոչ միայն Պետոսի ընտանիքը: Պետոսը ստիպված եղավ բանակցություններ սկսել և հասավ պաշարման վերացմանը, խոստանալով, որ բոլոր զինվորները կհեռանան Հայաստանի սահմաններից և բերդը կհանձնեն պարթևներին: Արսանիա գետն անցնելու համար Պետոսը կամուրջ գցեց, քայքայարթները, գրավելով կամուրջը, խանգարեցին նրան: Հռոմեացիները հարկազրկված եղան գնալ այլ ուղղությամբ: Պետոսը արագ նահանջեց և Եփրատի ափին հանդիպեց Կորբուլտինին, որը մինչ այդ Ասորթրում էր և Կոմագենեի ու Կապադովկիայի վրայով օգնության էր գալիս նրան: Այս բոլորից երևում է, որ Պետոսի գրաված լեռնանցքները գտնվում էին Տավրոսյան լեռների այն մասում, որ տարածվում էր Արդանա-Մադանի վերևով դեպի Արածանի: Վաղարշը, անցնելով լեռների մյուս կող-

¹ Tacit, Ann. XV 10, Ilumini Arsaniae (etinum is castra praefluebat) pontem imposuit, և շար. XV 13.

մը, պաշարեց Արսամոսատ-Շամուշիան, որից ոչ հեռու գտնվում էր Պետոսի բանակը: Վերջինս կամենում էր անցնել Արսանիան և դնալ դեպի հյուսիս, բայց պարթևները ստիպեցին նրան բռնել դեպի արևմուտք՝ Մալաթիա տանող ճանապարհը: Եփրատն անցնելու ժամանակ էլ հենց նա հանդիպեց Կորբուլոնին: Դիոն Կասիոսի հաղորդած տեղեկություններից խմանում ենք, որ Վազարը ռազմավար էր Պետոսի ճանապարհը դեպի Հռոմեացի, որ գտնվում էր Արսանիայի ափին: Ուրեմն, այն կետը, դեպի ուր սկզբում գնաց Պետոսը, բայց պարթևների կողմից հանդիպեց արգելքի, Հռոմեացի էր: հիշյալ պատմությունից երևում է, որ այն գտնվում էր Արսամոսատի հանդիպակաց ափին, այսինքն՝ գետի աջ կողմում: Արսանիայի գետանցը կատարվում է Շամուշայից վերև՝ Պրասակ քաղաքի մոտ: Այստեղ, գետի ափին, գտնվում են մի հինավուրց անհայտ քաղաքի ավերակներ, որոնք համապատասխանում են Հռոմեացիին, հայկական Նուանդ-ին, որ հիշվում է հայոց Պապ թագավորի մասին Փավստոսի արած պատմության մեջ¹:

Պաղամենսը Անդիտեննում հիշատակում է նաև *ΑΥΖΙΤΑ բնակավայր, որի տեղագրությունը ավելի անորոշ է, քան Սամոսատինը: Եփրեմ Ասորին իր երգերի մեջ ողբում է Անդիտ բերդի ճակատազերը, որ նրա օրոք, ի թիվս այլ քաղաքների, ենթարկվել է պարսիկների հարձակմանը: Դա, անկասկած, Ամմիանոսի հիշատակած Զիաթա բերդն է, որը 359 թվականին, իրոք գրավեց պարսից Շապուհ թագավորը: Բայց castellum Ziata-ն կարծես թե համապատասխանում է արաբ հեղինակների hisn Ziad-ին, որոնք այս անվան տակ նկատի ունեն խարբերդը: Թե ինչ կապ ունի Զիաթան Եփրեմի Անդիտի և այս երկուսը՝ *ΑΥΖΙΤΑ-ի հետ, բոլորովին պարզ չէ: Հարցը բարդանում է նաև նրանով, որ Իբն-Սեբապիոնը նույնպես գիտե և խոսում է մի ինչ-որ Անդիտա քաղաքի մասին, բայց այն գնում է բոլորովին ոչ այն վայրում, որտեղ որ խարբերդն է: Ըստ նրա տեղեկության Եփրատ գետը սկիզբ է առնում Ակրադիսի լեռից, ողողում է Միսֆին լեռների ստորոտը և քանցնում Կամախ քաղաքի միջով ու Մինշար բերդի

մոտով, ապա հոսում է Մալաթիայից երկու մղոն հեռավորության վրա և այնուհետև անցնում է Անդիտ ու ապա Սումայսատ քաղաքների միջով... և այլն: Ըստ այս նկարագրության, Անդիտը ընկած էր Եփրատի մոտ, Մալաթիայի և ասորական Սումայսատ-Արսամոսատի միջև: Եփրատի վտակներից մեկը, նույն հեղինակի ասելով, բխում է 62°20' երկարության և 41°5' լայնության սակ գտնվող լեռից, անցնում է Անդիտ քաղաքի և նրա գավառի միջով և թափվում է Եփրատի մեջ 61°30' երկարության և 39°20' լայնության տակ: Դատելով վերոհիշյալ աստիճանաշափերից, այն վտակը, որի վրա գտնվում էր Անդիտը, հոսում էր արևելքից դեպի հարավ-արևմուտք և ուրեմն, քաղաքի հետ միասին գտնվում էր Եփրատի արևելյան ափին: Թե ո՞ր վտակի մասին է խոսքը, դժվար է ասել, բայց իր դիրքով նրան ավելի մոտենում է Չալգար գետը, որի մոտ գտնվում է Մաղարան և որտեղ պետք է փնտրել Անդիտ քաղաքը: Այդ կողմից Անդիտենն գավառը տարածվում էր մինչև Եփրատի գետափը, ինչպես երևում է այն ցուցանից, թե Մալաթիայից այն կողմ, Եփրատի մյուս ափից անմիջապես սփռվում էր Անդիտի հովիտը:

Անդիտեննի ստույգ դիրքի ճշտումը շատ կարևոր է, քանի որ այն Սոփեննի երկու մասի բաժանվելու հավանական պատճառն է եղել: Նա գրավում էր հին Սոփեննի միջին շերտը և, դուրս գալով նրա կազմից, Սոփեննն բաժանեց արևելյան և արևմտյան կամ ավելի ճիշտ՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան մասերի: Առաջինը ընկած էր Արածանիի վրա, Բալազիտեննի կողքին՝ Սուզուր և Եփրատ գետերի միջև և տարածվում էր դեպի հյուսիս՝ Չմշկածագի, Մեծկերտի, Խողանի ուղղությամբ մինչև բնական սահմանը՝ Կազիկլինյան լեռները և կոչվում էր Շահունյաց Սոփք կամ Շահն, երբեմն էլ՝ Փոքր Սոփք ի տարբերություն Մեծ Սոփքի, այսինքն՝ հարավ-արևելյան մասի, որը գտնվում էր Հաշտյանքից հարավ, արևմտյան Տիգրիսի երկու ափերին, ընդ որում, ինչպես մենք տեսանք, աջ կողմից հասնում էր մինչև Բնաբեղ և Փիտար:

¹ Dio Cass. LXII 21, φεύγοντα δὲ αὐτὸν (sc. Παῖτον) ἐπιδιώξας τὴν τε ἐπὶ τοῦ Ταύρου καταλειφθεῖσαν ὑπ' αὐτῶν φρουρὰν ἐξέκοψε καὶ ἐκείνον ἐς 'Ρά ν δ ε ι α ν πρὸς τῷ Ἀροανίᾳ ποταμῷ οὖσαν κατέκλεισε. Փավստոս, Դ, ա, սլոնակ եւ ի Բախին, նույն տեղում, Ե, դ, սլոնակին ի Բախանն:

¹ Ephr. Syr. Carmina Nisibena, ed. Bickell, p. 93, Carmen... de An (a)-zit castello=Amm. XIX 6, 1 Ziata capto=castello. Իբն-Սեբապիոն, loc. cit. Bar-Heb. Chron. Syr. p. 506, venit usque ad Euphratem in limite Malatiae et transiit in vallem Hanzith, հմտ. Chr. Ecc. I, p. 412:

Շահունյաց Մոփքը, ըստ Փավստոսի (Գ, իդ), գտնվում էր Անդրտանների և Մուզուրի միջև Աշխարհացույցի մեջ Մոփքն այն գավառն է, որ ընկած է «Պաղնատունից և Բալահոփլիտից արևմուտք, այսինքն՝ համարադասարանում է Շահունյաց Մոփքին: Հետաքրքրական է, որ Պաղամեսոսն էլ Մոփենն ասելով հասկանում էր միայն Փոքր Մոփեննն. ըստ նրա էլ Մոփեննն Եփրատի և նրա վտակ Արածանիի միջև պարփակված գավառներից մեկն է և գտնվում է Ակիլիսանների և Աշտիանենների մոտ, գետի միևնույն վտակի, այսինքն՝ Արածանիի ուղղությամբ¹:

Հայ պատմիչներից միայն Փավստոսն է, որ տեղյակ է և միմյանցից ասարբերում է երկու Մոփք: Արևմտյան գրականության մեջ երկու Մոփք հիշատակվում են 451 թ. Քաղկեդոնի ժողովի արձանագրությունների մեջ: Ժողովին մասնակցող երկրների շարքում հիշվում է Միջագետքը չուր վեց ներկայացուցիչներով՝ Ամիդի, Մոփենների (Մոփքի), Անգիտենների, Մարտիրոսուպուլտի, Ինգելա-Անգելիների և Սոփան-ենների եպիսկոպոսներով²: Այդ երկու գավառ-

¹ Փավստոս, Գ, իդ «Մոփք Մեծ և Մոփք Շահունոց» (ափսի ճիշտ՝ Շահունոց, ինչպես Ինճիճյանի մոտ, Ստարգր. էջ 48), Մոփք Շահեի, Գ, ժբ, Շահունի Վարդան, Աշխարհագր. «Մոփաց գաւառն Մեծկերտ և Չմշկածագ է»: Պատմ. Երուս. վաեբերի «Մոփաց գաւառն, որ այժմ կոչի Չմշկածագ», Ասողիկ, էջ 63, «յաշխարհն Մոփաց ի գիւղաքաղաքին կողան»: Ptol. V 12, πρὸς αὐτῆ τῆ ἐκτροπῆ τοῦ ποταμοῦ ἢ Σαφηνῆ.

² Mansi, VII p. 403, provinciae Mesopotamiae ep. VI: Symeon Amudensis, Noe Cesariensis, Zephaniensis, Maras Azetiniensis, Zebennos Martyropoilitanus Gaiumas Inseles, Inreles (sc. Ingeles), Eusenius (sc. Eusebius) Rufuniensis, S uphaniensis. Պավստոսի ժողովի մասնակիցների ցանկը հայտնի է միայն մեկ կոդեքսից Cod. Maffei, ինչպես վկայում է հրատարակիչ Լարբեն: Անունները մի բիշ ազավաղված են, Cesariensis-ը հավանորեն Zephaniensis-ի ազավաղումն է, բայց այդ դեպքում աշխարհ էլ հասկանալի չէ երկու Մոփքերի (Մոփանենների) կոնկրետ նշանակությունը Մարտիրոսուպուլտի առկայության դեպքում, քանի որ այս վերջինս, ինչպես հայտնի է, համարվում էր Մոփանենների բաղաբ: Ժողովի նիսանի ստորագրությունների մեջ Սիմոն Ամիդացուց բացի հիշատակվում է նաև Ջավին Մարտիրոսուպուլտի, իսկ VI նիստի ստորագրության մեջ ասվում է Συμεώνης ἐπίσκοπος Ἀμιδῆς τῆς μετροπόλεως, ὑπέγραψα καὶ ὑπὲρ τῶν ὑπ' ἐμὲ, Εὐσεβίου Μαρονουπόλεως, Καίουμᾶ Οὐαλαροσεκουπόλεως, Σηρίκιου πόλεως... δια Πέτρου πρετβυτέρου. Mansi, VII p. 166—167.

Վերը հիշված Եփեփուսը և Կայունան Սոփանենների և Անգելիների եպիսկոպոսների են, որից էլ պետք է եզրակացնել, որ Անգիլ անոցը այլ կերպ կոչվում էր Վաղարշեկույրիս, իսկ Մարտիրոսիսը մեզ անծանոթ քաղաք է Մոփանենում:

ների տարբերությունը շատ որոշակի կերպով երևան է գալիս Հուստինիանոսի ղեկընտնեում, ընդ որում այստեղ ևս այդ տարբերությունն արտահայտվում է Մոփենն և Սոփանենն անդանուններով: Այսպիսով, արևմտյան վավերագրերը զանազանություն են դնում երկու տեղանունների միջև, որոնք, ըստ էության, միևնույն անբժինի լուկ երկու տարբեր ձևերն են: Հունա-հռոմեական տեսակետից Մոփենն ձևը Սոփանեններից ավելի հին է և ավելի գործածական: Այն հանդիպում է Ստրաբոնի, Պլինիոսի, Հովսեպոս Փլավիոսի, Պլուտարքոսի, Ապոլինոսի, Դիոդորոսի, Պաղամեսոսի և ուրիշների մոտ: Սոփանենն ձևն ըստ Ստեփանոս Բյուզանդացու վկայության առաջին անգամ հանդիպում է Թ դարի գրող Արրիանոսի մոտ: Թե ի՞նչ իմաստ ունեն Սոփանենն Արրիանոսի մոտ, մենք չգիտենք, բայց Ե դարի գրողը օգտվել է Արրիանոսից և էական տարբերություն չի դրել երկու ձևերի միջև: Տարակուսելի է նաև, թե Դիոն Կասիոսը, որի մոտ հանդիպում է Սոփանենն ձևը, գործածած լիներ այն ի տարբերություն Սոփանենի ճիշտն այն է, որ ըստ Կասիոսի և մյուսների Սոփանենն հավասարաբար է եղել Մոփեննին, որոնց տակ հասկանում էին ավելի կամ պակաս շափով իրենց ծանոթ միևնույն երկիրը, առանց որևէ տերիտորիալ սահմանազատման: Հետագայում դրանց մեջ առաջացած տարբերությունը միանգամայն պայմանական է: Մեզ զբաղեցնող երկիրը մեր թվարկությունից շատ առաջ հայտնի էր Supani անունով, որին համապատասխանում է Շաֆանդի

Ի պատասխան Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ Առն կայսեր արած հարցումին Միջագետքի եպիսկոպոսների պատասխան նամակը ստորագրված է հետևյալ ութ եպիսկոպոսների կողմից՝ Zoras (ափսի ճիշտ՝ Maras, ինչպես վկայված է նամակի վերնագրում), Maronius, Noe, Eusebius, Reticius, Valaras, Maras, Abrahamus. Mansi, VII, p. 555. Այս անձերից Maras-ը, Noe-ն և Eusebius-ը Անգիտենների, Սոփանենների և Մոփենների վերը հիշված եպիսկոպոսներն են: Reticius-ն, անկասկած, Պետրոս երեցի ստորագրության մեջ հիշված Տիրիկոս-ը կամ Tyricius-ն է: Մեզ թվում է, որ Μαρονου πόλεως-ը և Οὐαλαροσεκου πόλεως-ը ևս պետք է հասկանալ որպես Maronius և Valaras եպիսկոպոսների անուն (հայ. Վաղարշ, Վաղարշակ Օսալարեք), ընդ որում այն քաղաքների անունները, որոնց ներկայացուցիչներն էին հիշյալ եպիսկոպոսները, ձևագրերից դուրս են ընկել, Տիրիկոս πόλεως... Այդ դեպքում Valarseopolis-ը հղանա աշխարհագրական շինժու անուն:

¹ Steph. Byz. Σ ω φ η ν ῆ, χώρα τῶν πρὸς Ἀρμενίαν, ὡς Στράβων ἐν ἐνδεκάτῃ. παρὰ δ' Ἀρριανῶ Σῶφανηνῆ τετρασουλάβωσ. οἱ κατοικοῦντες Σωφηνῶ.

ձևը և այս պատճառով եթե հունա-հռոմեական տեսակետից Շաֆ-դսի ավելի գործածական է, քան Սոփենեն, ապա պատմականորեն վերջին ձևը անշուշտ ավելի հին է: Նախահայկական Տսրանի տեղանունը անցել է հայոց լեզվին Մոսփ ձևով, որի մեջ վերջին ք-ն ամ-ի պարզ համարժեքն է, որ հայերից առաջ այդ երկրում ապրող բնիկների լեզվում հոգնակիի նշանն էր:

Տսրանի անվանումը հարազատորեն պահպանվել է ասորական Տոֆան-աջե ձևի մեջ՝ հավանորեն հնաբնակիների հետ ասորիների ավելի մոտիկ ազգակցություն ունենալու հետևանքով: Հայկական և ասորական ձևերը իրապես, այսինքն՝ աշխարհագրական բմբռնումով, համընկնում են և նշանակում միևնույն երկիրը, որ բնակեցված էր գերազանցապես հայ և ասորի ծագում ունեցող ժողովուրդներով: Հույները Սոփենենին առաջին անգամ ծանոթացան Հայաստանի կողմից, այսինքն՝ նրա հյուսիս-արևմտյան մասերից, որոնք հարում էին Եփրատին և որտեղ գերազանցապես հայեր էին բնակվում, և ամբողջ երկիրը սկսեցին Սոփ-ենն կոչել հայկական Մոփ-ք-ի ազգեցությունը (ինչպես Գուգար-ք Գալար-դսի): Իսկ երբ մեր թվարկության երկրորդ զարում, Տրայանոսի օրոք Միջագետքը զարծալ հռոմեական պրովինցիա, և հռոմեացիները սերտ շփման մեջ մտան Սոփենենի հետ նաև այս կողմից, ապա յուրացրին նաև այդ երկրի անվանման ասորական ձևը, և Սոփանենեն սկսեց գործածվել Սոփենենի հետ իրրև նույնիմաստ հասկացություն:

Սոփենենի բաժանումից հետո նրա մասերը հայերի մոտ պահեցին իրենց նախկին անունը՝ զանազանելով զրանք Շահունյաց կամ Փոքր և Մեծ մակդիրներով: Հունա-հռոմեական աշխարհում տվյալ իրազրություն մեջ հնարավոր եղավ կողմնորոշվել միայն 298¹ թվականից հետո, երբ երկու Տիգրիսների վերին հոսանքները անցան կայսրերի իշխանության տակ: Վերին Սոփենենի տրվեց Հայկական Մոփ-ք Soph-ena, իսկ ներքին Սոփենենին, որ հարում էր Ասորիքին՝ ասորական անվանումը՝ Sufan, Sophanena: Ասորիները հայկական Սոփենեն նույնպես սկսեցին կոչել Sof¹: Այս անունների վերջնական հաստատագրումը կատարվեց, թեև

¹ Օրինակ, Ռշու Սյունակեաց, էջ 39, սկսած աղբյուր Agel-ը, Տսր-ք և Armenia-ն. այստեղ Մոփ=Սոփենեն, որ հայոց Շահունյաց Մոփ-քն է:

ճիշտ է, ոչ միանգամից, այնպես որ, նույնիսկ Ե դարում, ինչպես այդ երևում է Ստեփանոս Բյուզանդացու օրինակից, այն դեռևս բոլորին հայտնի չէր: Սոփանենեն իր նոր իմաստով, այսինքն՝ հայկական Մեծ Մոփքի նշանակությամբ, առաջին անգամ հիշատակվում է 387 թվականին Gaddanae satrapae Sophanenae անունով տրված կայսրական դեկրետի մեջ: Սատրապի ասորական անունը ցույց է տալիս, որ խոսքը Մեծ Սոփենենի մասին է, որտեղ ուժեղ էր ասորական ազգեցությունը:

Սոփանենենի մի մասը կոչվում էր Անգեղեն: Թվում է, թե նրա ծագումը վերաբերում է Սոփենենի տրոհումից հետո ընկած ժամանակաշրջանին և առաջացել է Մեծ Մոփքից ճիշտ այնպես, ինչպես Անգիտենեն շտրոհված Սոփենենից: Քրիստոնյա Արշակունիների ժամանակ, Գ դարում Անգեղտունը արքունի կալվածք էր: Արշակի թագավորության ժամանակ ընդհանուր դժգոհությունների դժվարին օրերին, երբ նախարարները սկսեցին պառակտվել և հեռանալ նրանից, Անգեղտունը թագավորին հավատարիմ մնաց, և երբ Մուշեղ Մամիկոնյանը վերականգնեց Արշակունիների իրավունքները ապստամբած զավառների վրա, Անգեղտունը անպատիժ մնաց, զքանի որ ամբողջ նահանգը հնուց ի վեր արքայական կալվածք լինելով՝ հնազանդ մնաց: Արժրունյաց զավաճան իշխան Մերուծանի ավերիչ ասպատակությունների ժամանակ Արշակը նստած էր Անգեղտանը: Ինչպես երևում է, այդ զավառը Արշակը նստած էր Անգեղտանը: Ինչպես երևում է, այդ զավառը ժամանակավորապես եղել է Արշակունի թագավորների բնակության վայրը: «Այստեղ էին գտնվում Արշակունիների գերեզմանները, և պահվում էին նրանց հարուստ զանձերը, որ վաղ ժամանակներից ի վեր կուտակել էին նրանց նախնիները», այդ պատճառով էլ Մերուծանը, ասպատակելով Աղձնիքն ու Մեծ Մոփքը, խուժեց Անգեղտուն և պաշարեց Անգեղ բերդը:

Արշակի և նրա հոր՝ Տիրանի ժամանակ Անգեղտան իշխանն էր Դրաստամատը: Թայց իրականում նա այդ զավառին իշխում էր ոչ թե սեփական իրավունքով, այլ ավելի շուտ կառավարում էր այն՝ նշանակված լինելով թագավորի կողմից, որի բարեհաճությունն էր նա վայելում: Նրան էր հանձնված արքունի զանձերի և ամրոցների պաշտպանությունը. նրա իսկական կոչումը ոստիկան էր (ostikan), որը կապ ունի ոստան-ի հետ և հավանաբար նշանակում է թագավորական ոստան-կալվածքի վերա-

կացու Իր այդ պաշտոնով էլ նա մյուս իշխանների շարքում գրավում էր բարձր դիրք¹:

Արշակունիներին անհրաժեշտ էր հենակետ ձևոք բերել հարավում՝ այնպիսի վայրում, որը այնքան մեծ դեր էր խաղում պարսկա-հուսթեանական ընդհարումների մեջ, ուստի նրանք հաստատվեցին Անգեղ բերդում, որով հիմք դրվեց բերդի անունով Անգեղաուն նոր գավառի ստեղծմանը: Նրանք անցավ Անգեղ բերդի շուրջն ընկած Սուրանենի մի մասը՝ Զիրանա և Արղանա գետակների միջև: Հռչակավոր Անգեղ բերդի ավերակները գտնվում են այժմյան Ագիլ ավանի մոտ, որ պահել է հին անունը:

Անգեղաուն անշատուժով Մոփքի սահմանները այդ կողմից նշանակալիորեն կրճատվեցին: Տիրիսի ձախ ափին նրան մնաց միայն Մարտիրոսապոլսի գավառը և այն էլ, ինչպես երևում է Աշխարհացոյցից, հետագայում հանձնվեց Արղանենին:

Այսպիսով, նկարագրված գավառները ընկած էին Տիրիսի և Եփրատի միջև այն դասավորությամբ, ինչպես գրանք բերված են Փավստոսի մատ: Գավառան Մերուժանը, պարսից զորքերի գլուխն անցած, ասպատակեց ու ավերեց Աղձնիքը, Մեծ Մոփքը, Անգեղաունը, Անձիտը, Շահունյաց Մոփքը և ապա նաև հյուսիսում՝ Մուրբը, Գարանաղիքը և Եկեղիքը: Երկու Մոփքերը, Անգեղաունը և Անձիտը Հաշտյանի և Բալահունիի հետ միասին կազմում էին վեց ինքնավար սատրապուլթյուններ, որոնք հիշատակված են վերոհիշյալ պաշտոնական վավերագրի մեջ: Բայց մենք տեսանք, որ ժամանակակից պատմագիր Պրոկոպիոսը հաշվում է հինգ ինքնավար սատրապուլթյուններ: Որտեղից է այդ թվորիմացությունը: Հինգ թիվը պատմագրի գլխում ծագել է, ակներևաբար, այսպես կոչված անդրտիգրիսյան այն հինգ երկրների մասին պատմական

¹ Փավստոս, Ե, ԺԸ, «ոռտանն արքունի լեալ»... Գ, իդ, «Արշակ... յԱնգեղ սանն էր յուստառ», Գ, իդ, «յԱնգեղաուն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. բազում զանձք մթերեալ մնացեալ կային», Ե, է, «ոստիկան հաւատարիմ»: Այս բառի իմաստը պարզվում է պատմիչի հետևյալ խոսքերից. «վերակացու և ոստիկանս չերկրին Աղձնեաց թողուին», Ե, ԺԳ, որտեղ վերակացուն ճշտորոշում է ոստիկան-ը: Ասորիները ոստիկանի իշխանության տակ գտնվող Արզանենեն կոչում էին ARZON, իսկ նրա մի մասը Արզանենեն «αὐτὲξ ὄρη», Ostan Arzon կամ նույնիսկ beθ Ostan (Aoustan): 410 Բ. եկեղեցական ժողովում ներկա էին ARZON-ի Գանիել եպիսկոպոսը և Arzōn de Beth de Aoustan-ի Սամուիլ եպիսկոպոսը (Chabot, Syn. Or. p. 274):

հիշողություններից, որոնք այնքան լավ հայտնի են պարսկահուսթեանական հարաբերությունների պատմությունից: 298 թվականին, այն բանից հետո, երբ Գալիերոս Մաքսիմիանոսը պարսից նարսեհ թագավորին ամօթալի պարտության մատնեց, հոսթեանցիներն անցան «Անգեղաունը Մոփքի ու Աղձնիքի՝ Կորգուքի ու Մավղեքի հետ», այսինքն՝ ընդամենը հինգ գավառ: 363 թվականին պարսիկները վրեժխնդիր եղան, և ահեղ Շապուհը հաղթելով Հովհանոսին, «համառորեն ետ պահանջեց իր նախկին նահանգները, որոնք, ինչպես ինքն էր ասում, խլել էր Մաքսիմիանոսը, այսինքն՝ անդրտիգրիսյան հինգ երկրները՝ Աղձնիքը, Մոկքը, Մավղեքը, Ռեհիմենեն և Կորգուքը»¹:

Պատմագիրը բանն այնպես է ներկայացնում, որ կարծես թե երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է միևնույն նահանգներին: Իրականում 363 թ. վերադարձվելու ենթակա էին պարսիկներից 298 թ. խլված նահանգներից միայն երեքը՝ Աղձնիքը, Կորգուքը և Մավղեքը, իսկ երկուսը՝ Անգեղաունը և Մոփքը, մնացին հոսթեանցիներին: Վերադարձված նահանգներին ավելացնելով Մոկքը և Ռեհիմենեն, պատմագիրը գրանց թիվը հասցնում է հինգի, ընդ որում կամ անգիտությամբ կամ դիտալորյալ ձևացնում է, թե իբրև գրանք նույն այն հինգ նահանգներն են, որոնք 298 թ. գրավել էին հոսթեանցիները: Մոկքը Աղձնիքի մասն է, իսկ Ռեհիմենեն՝ Մավղեքի. գրանք, իհարկե, մտնում էին այն հողերի մեջ, որոնք 298 թվականին պարսիկները զիջեցին հոսթեանցիներին, բայց եթե դրանք հաշվելու լինենք առանձին-առանձին, ապա կստացվի, որ 298 թվականին հոսթեանցիները ստացան ոչ թե հինգ, այլ յոթ նահանգ, որոնցից հինգը վերադարձրին 363 թվականին:

Պետրոս Պատրիկիոսից և Ամմիանոսից բացի անդրտիգրիսյան հինգ փոքր ազգությունների՝ quinque gentium trans Tigridem մասին խոսում է նաև Պրոկոպիոսը: Կասկած չկա, որ Պրոկոպիոսը շփոթել է հայկական հինգ ինքնավար սատրապուլթյունները «անդրտիգրիսյան հինգ երկրների հետ»: Արտոնյալ իշխանու-

¹ Petr. Pat. p. 135, 'Ινγηληνὴν μετὰ Σοφηνῆς καὶ Ἀρζανηνῆν μετὰ Καρδοουηνῶν καὶ Ζαβδίκηνῆς. Amm. XXV 7 9, petebat autem rex, ut ipse aiebat, sua dudum a Maximiano erepta... quinque regiones Transstigritanas: Arzanenan, et Moxoenam, et Zabdicenam itidemque Rehimenam, et Corduenam.

թյունների թիվը իսկապես եղել է վեց: Նրանցից երկուսը՝ Հաշտյանքը և Բալահոփտը անշատվեցին Մյուս Հայաստանից և դավիցին ազատ սատրապությունների շարքը փոքր-ինչ ուշ, մեր կարծիքով 377 թվականին, 363 թվականին կնքված հաշտությանը արձակեց պարսիկների ձեռքերը Հայաստանի նկատմամբ: Շապուհը պատերազմ հայտարարեց հայոց Արշակ թագավորին, որը բավական երկար տևեց և ավարտվեց վերջինիս տապալումով: Վաղես կայսրը անհրաժեշտ համարեց միջամտել հայոց զորքերին: Նա դեսպանություն ուղարկեց Շապուհի մոտ և նրան հասկացնելով, որ Հայաստանի նկատմամբ պարսիկների մատուցած ծառայությունները ապօրինի են, և որ 363 թ. դաշնագրով նրա բնակիչներին ինքնուրույնություն է տրված: Դեսպանները՝ հեծելազորի պետ Վիկտորը և Միշազեաթի գուրս Ուրբիցիսը, անմիջապես ու արժանավայել ձևով կատարեցին կայսեր հանձնարարությունը, բայց դրա հետ միասին, ինչպես նկատում է պատմագիրը, նրանք ստանձնած առաքելությունից մի փոքր շեղում թույլ տվին և ընդունեցին Հայաստանից իրենց առաջարկված ոչ մեծ հողատարածություններ *absque mandatis oblatas sibi regiones in eadem Armenia suscepit exiguas*: Դրանից անմիջապես հետո կայսրի մոտ ուղարկվեց պատասխան մի դեսպանություն, որը նրան առաջարկեց նույն այն հողատարածությունները, որոնք, առանց երկար մտածելու, ընդունել էին հռոմեական դեսպանները, *eisdem Imperatori offerens partes, quas audacter nostri sumpsere legati*¹ բանակցությունները չկանխեցին ընդհարումը: Երկու կողմերն էլ դժգոհ էին բանակցությունների արդյունքներից և պատրաստվեցին պատերազմի: Շապուհը նույնիսկ հրամայեց «խել Վիկտորին և Ուրբիցիսին զիջած հողատարածությունները»: հրամանը կատարվեց, իսկ հռոմեացիները չկարողացան ընդդիմանալ, որովհետև զոթերի արշավանքը թրակիա կայսրի ուղադրությունը շեղեց Արևելքից: Նա ստիպված եղավ խնդիրը հաշտության վերջացնել և նորից Վիկտորին ուղարկեց պարսիկների մոտ, *ut super Armeniae statu pro captu rerum componeret inpendentium*², իսկ ինքը Անտիոքից մեկնեց մայրաքաղաք: Համաձայնությունը տեղի ունեցավ, և խաղաղությունը վերա-

¹ Amm. XXX, 2, 4—5;
² ibid, XXXI 7, 1:

կանգնվեց, բայց ի՞նչ պայմաններով՝ անհայտ է: Ըստ երևույթին, հռոմեացիները ընդունեցին պարսից դեսպան Սուրենի առաջարկը, որը գրանից առաջ մերժել էր Վաղեսը, այսինքն՝ համաձայնեցին Հայաստանի այն մի քանի փոքր հողատարածությունների բռնադրավման հետ, որոնց մասին խոսվում էր բանակցությունները սկսվելու ժամանակից:

Այդ փոքր հողատարածությունները, *regiones exiguae*, հենց Հաշտյանքն ու Բալահոփտն են: Չէ՞ որ ընդհարումը առաջ էր եկել 363 թվականի դաշնագրով հաստատված հարաբերությունների հողի վրա: դաշնագիրը վերաբերում էր Հայաստանին ընդհանրապես և մերձտիրգրիսյան հողերին՝ մասնավորապես: Շուտով հայտնի դարձավ, որ Հայաստանին վերաբերող հողավածը տարբեր ձևերով են մեկնաբանել հակառակորդները: Պարսից թագավորը Հայաստանի նկատմամբ իրեն ազատ էր համարում, իսկ Վաղես կայսրը պնդում էր Հայաստանի անձեռնմխելիության վրա: — *ad arbitrium suum vivere cultoribus eius permissis*: Պարսիկները Հայաստանում իրենց զզում էին տեր ու անօրեն և որպեսզի կանխեն կայսրի հավակնությունները, հենց սկզբից համաձայնեցին զիջել նրան Հայաստանի իրենց ենթակա տերիտորիաներից Հաշտյանքն ու Բալահոփտը, որոնք սահմանակից էին կայսրական սատրապություններին: Այդ իրադարձության թվականը կարելի է ճշտությամբ որոշել: Վաղեսը, որ Արևելք էր եկել պատերազմելու նպատակով, 377 թվականին՝ գտնվում էր Անտիոքում: Հենց այդ ժամանակ էլ պարսից թագավորի մոտ ուղարկվեց Վիկտորի երկրորդ դեսպանությունը: Այդ ժամանակին էլ վերաբերում է վերոհիշյալ գավառների միացումը սատրապություններին: Ամմիանոսը, պատմելով 359—360 թթ. դեպքերի մասին, ասում է, որ անդրտիրգրիսյան ազգությունները անշատվում են Հայաստանից Տավրոսյան լեռներով². նշանակում է 360 թվականին Տավրոսից այն կողմ ընկած գավառները՝ Հաշտյանքն ու Բալահոփտը, զեռես չէին միացվել սատրապություններին: նրանց միացումը տեղի ունեցավ միայն 377—378 թվականին:

¹ Amm. XXXI 7, 1. Այդ ժամանակ են հրապարակված նրա ղեկիտները. C. J. XII 33 2. D. VIII k. Febr. Antiochia; ib. XII 37 6. D. prid. non. April. Antiochia.
² ibid. XVIII 8 1, verticibus Taurinis... gentes Transtigritanas dirimentibus et Armeniam.

Գ Լ ՈՒ Խ III

Ն Ե Ր Ք Ի Ն Հ Ա Յ Ք

ARMENIA INTERIOR

Ներքին Հայքի մաս կազմող գավառները և նրանց տեղագրությունը եփրատի ուղղությամբ: Խորձյան և Պաղնատուն՝ այժմ Քրդիի կազա. Մրենուր՝ Մուզուր գետի վրա. Դարանաղին Կամախի շրջակայք: Սկեղիքը (Սկելեսենե) Սրգեկայի մարզ: Գերշանը այժմյան Քերշանի մի մաս: Մանաղին և նրա տեղագրությունը բառ պատմիչ կատարվեցան: Կարին և Շաղագոմ: Աղիւն-Անալիքա: Արեւմտյան ենդիակների տեղեկությունները ներքին Հայքի գավառների մասին: Այդ գավառների տեղագրությունը ավելի վաղ ժամանակներում: Մի քանի անունների վերլուծությունը. — ձի, — ըլի բնորոշ բեխմանը և նրա նշանակությունը: Նրա անույնությունը Aliun-ի և Aly-s-ի և Aly-bi և Chaly-bi-ի նեա: Ներքին Հայքը և ճանիքը սամմանաբաժան շեռտ նայկական և նանական հողերի միջև: Ճաները և նրանց եկրի տեղագրությունը. գլխավոր կետերը և նրանց տեղագրությունը:

Արշակունիների նախկին կալվածքների մի մասը, որ շրջանցվում էր եփրատի վերին հոսանքով և հետագայում դարձավ Հռոմեական կայսրության ժառանգությունը, կազմում էր Մեծ կամ Ներքին Հայքը — Magnam Armeniam, quae interior dicebatur կամ τὴν μὲν ἔνδοτάτην, ինչպես այն անվանված է Հուստինիանոսի նովիլլայում: Նրա մեջ մտնում էին Արշակունյաց Մեծ Հայքի հետևյալ տասնմեկ գավառները՝ Խորձիան-Են-Են, Պաղնատունը, Մունձուրը, Դարանաղին, Սկելես-Են-Են, Աղիւնը, Մանաղին, Գերշանը, Կարինը, Շաղագոմը և Սպերը:

Մրանցից Փալատուր հիշատակում է 1. Դարանաղին՝ Թորդան և Անի գյուղերով, 2. Սկեղյաց գավառը՝ Թիլ և Խախ գյուղերով, 3. Կարինը՝ Մարագ գյուղով, 4. Մզուրը և 5. Սպերը:

Ագաթանգեղոսին հայտնի են Դարանաղին՝ Թորդան գյուղով, Սկեղյաց գավառը՝ Նրեզ և Թիլ ավաններով, ինչպես նաև 6. Գերշանը և նրա մեջ՝ Բագայառիճ գյուղը: Կորյունը Սկեղյաց և Գեր-

շան գավառներից բացի հիշատակում է նաև 7. Խորձյան գավառը և 8. Պաղնահայն տունը: Մնացած գավառներից 9. Շաղագոմը առաջին անգամ հիշատակում է Ղազար Փարպեցին, իսկ 10. Մանաղին՝ Սերնուր և, վերջապես 11. Աղիւնը հայ մատենագրության մեջ հայտնի է միայն Սչխաբեհացույցից, ընդ որում մի քանի ընթերցումներում կարդացվում է Առիւծի:

Հայկական աղբյուրների տվյալների համաձայն հիշյալ գավառները դասավորված էին Եփրատ գետի ուղղությամբ. Խորձյանը, ինչպես հիշատակվեց վերը, ընկնում էր Գալլ՝ այժմյան Քրդի կամ Բերի-սու գետի վրա և համապատասխանում է մոտավորապես ներկայիս Թուրքական Քրդի կազային:

Պաղնատունը գտնվում էր Խորձյանի կողքին այդ նույն Գալլ գետի ստորին հոսանքի ուղղությամբ՝ մինչև Մզուր գետի հետ միանալը և արևմուտքից պարփակված էր Մեծկերտի լեռներով, հյուսիսից՝ Սիփուն՝ հայկական Սուրբ լույս լեռներով և հիշյալ գետի ափերով: Գավառն իր անունը ստացել էր Պաղին կամ Պաղան գլխավոր քաղաքից, որը որպես մի փոքրիկ ավան պահպանվել է մինչև մեր օրերը: Պաղինը և հարևան Բալուն համար-

Փալատու, Գ, ր և ժա, Դարանաղեաց գաւառին, ի զիւն թորդան, Գ, ժա և Գ, իդ յԱնի յկէզեցադաւան Դարանաղեաց, Գ, ր և ժդ, Ե, իդ և ին, յկէզեցադաւառի ի Թիլն աւանի Ե, իդ, յապարանս իւր ի Խախ աւանի յկէզեցադաւառի Գ, ժր ի Կարին գաւառէ ի զեղչէ Մարագայ: Ե, լէ, դաշտ Կարնոյ: Ե, իդ, ի գաւառն Կարնոյ: Գ, իդ, Մզուր գաւառս Ե, իդ, Սպեր գաւառս: Ագաթանգ. էջ 455 և 496, ի Դարանաղեաց գաւառն, ի զհաւն թորդան: էջ 39, յկէզեցադաւառ ի զիւն Սրեզայ: էջ 457, յերկն աւանի, Թիլն աւան: էջ 459, ի գաւառն Գերշան... ի զիւն Բագայառին, Կորյուն, էջ 12, Սկեզեցադաւառ, էջ 27, Գերշան, էջ 24, Խորձեհան գաւառ, էջ 19, Պաղնահայն տուն Պաղան կամ Պաղին քաղաքի անունով, այտեղից՝ Պաղին-ատուն, Պաղան-ախան տուն: էջ 24, ընթերցում է զի կայնեհաննա հավանորն Կարինականն-ի փոխարեն: Փարպեցի, էջ 145, ի գաւառին, որ կոչի Շաղագոմ: Խորեհացի, Գ, Կ, Շաղագոմ: Սերնոս, էջ 139, իշխանքն Մանաղայն և Դարանաղայն, Փարպեցի, էջ 44, տէր Զաւէն Ման(ան) աղւոյ պետք է ուղղել տէր Զաւէն-ի Մարգարոյ, ինչպես Սիլիսի ընդգրում է, թեև վերջինիս մաս կարկանդակ անունը ոչ թե Զաւէն է, այլ Սիլիս, Սիլիս, էջ 49: Առիւծ ընթերցումը նշում է Ինճիւլյանը, Ստորագր., էջ 2.

Հիշատակում է զնեա սեպագիր արձանագրությունների մեջ, Lehmann, Verh. d. Berl. Anthr. Gesel. 1900, p. 572 Huntington, Zeit. f. Ethnologie, 1901, p. 173 և շար. Ասողիկի մաս՝ էջ 144, Ասողին փխ. Պաղին, ինչպես հիշատակում ենք էջում:

վում էին կարևոր ամբողջներ: Գևորգ Կիպրացին երկու ամբողջներն էլ՝ Պաղին և Բալու հիշատակել է Պաղին և Բիլավիտենն՝ գավառներում¹:

Պաղինի կողքին գտնվում էր Մուղուր գավառը՝ մինչև այժմ էլ Մուղուր կոչվող գետի վրա և նույնանուն լեռների մոտ:

Մյուս գավառները ձգվում էին Եփրատի երկայնքով Կամախից մինչև նրա ակունքները՝ Քնոզոսուպուլսի մոտ: Մուղուրից հյուսիս՝ Եփրատի վրա կողք կողքի ընկած էին Գարանաղին և Եկեղյաց գավառները: Սրանք դիրքորոշվում էին առաջինը՝ Կամախ քաղաքով՝ հին Անի, երկրորդը՝ Երզնիշան կամ Երզնկա՝ հին Երեզ քաղաքով: Սրանց միմյանցից բաժանում էին Գոհանամ կամ Սեպուհ լեռները՝ հին Մանայալքը²: Գարանաղին գրավում էր Քյոմուր գետի հովիտը, իսկ Եկեղյաց գավառը՝ հարևան հարթավայ-

¹ Georg. Cypr. p. 49. κάστρον Πόλιος և Βα(ίου)λοῦς, κλίμα Παλινης և Βιλαβητινης. Παλι-ος-ի, այսինքն Պաղի-ն ոչ ոնջայնացած ձևի առկայության դեպքում կարելի է արդյոք կապ փնտրել նրա և Բալուի մեջ. համտ. Պա-լուեի, որ իշխանական տոհմի անուն է:

² Գոհանամ-ը այժմյան անունն է: Այդ լեռները ս. Հովհաննիսի վարքի մեջ կոչվում են Սեպուհ և նույնացվում են Մանեայ ալքրին (ի խորշ լեռինն Սեպուհ կոչեցեալ, որ անուանեցաւ Մանեայ ալքր, Ալիշան, Հայապատում, էջ 77): Առան անունը Ագաթանգեղոսի մոտ հնչում է Մանայալք, որ խորհնացին մեկնաբանում է իբրև Մանեի այր՝ Մանեայ ալքր, բայց հազիվ թե հիմնավոր է այդ Սկզբի մանա-ն ավելի շուտ ազգակից է Մանաղիի հետ: Ըստ Կիպրոսի Գոհանամը գտնվում է Քյոմուր գետի ակունքների մոտ, այսինքն՝ Կամախից դեպի հյուսիս, իսկ Լինչի մոտ՝ Կամախից դեպի արևելք, Կամախի և Երզնկայի միջև: Այստեղ է գտնվում Սուրբ Լուսավորչի վանքը: Ասողիկի ասելով, էջ 168, Հովհաննես կաթողիկոսը ապաստանեց թի մենաստան սրբոյ լուսավորչին մերոյ ի լեռան, որ Մանեայ ալքր ասի, ի Գարանաղեաց գավառին ի վանս Գոհանայա տարընթերցվածը՝ Կոհնայ: Եփրատի ափին գտնվող այժմյան Գոհանի ցույց է տալիս, որ Մանեայ ալքրը իսկապես այն լեռներն են, որ Լինչի մոտ կոչվում են Գոհանամ և Սեպուհ: Հովհ. Երզնկացին Սպիբեբ, Ե, էջ 127, Սեպուհ լեռը դնում է թի միջոցս սահմանին երկուց զաւառացն Եկեղեաց և Գարանաղեաց, այնտեղ, որտեղ, նրա ասելով, գործել է սուրբ Մանիան: Գոհանամ է կոչվում նաև Սպիբի մոտ գտնվող լեռը, որի վրա կա եպիսկոպոսական աթոռանիստ Սուրբ Հովհաննես վանքը, Ինճիճյան, Աշխարհագր., էջ 94: Կիսիսի մոտ այդ նույն լեռները կրում են Սեպուհ անունը: Նրա նկարագրություն համաձայն ծոբոսը սկիզբ է առնում dans la haute montagne de Sebouh dans la casa d'Ispr, I p. 171: Ըստ երևույթին, թյուրիմացություն է տեղի ունեցել: հնարավոր է, որ Կիսիսի աղբյուրների մեջ խոսքը գնացել է ծորոսի արևմտյան վտակի մասին, որ հասում է Սիպիկոս՝ հայկ. Սուրբ Գրիգոր լեռից, որը հարևան է Գոհանամ-Սեպուհին, իսկ նա սխալմամբ վերադրել է Սպիբի վտակին:

րը, որ ոտգվում էր Սիպիկոս հայկական սուրբ Գրիգոր լեռներից (այսինքն՝ սուրբ Գրիգորի լեռ) դեպի Եփրատ հոսող մանր վտակներով: Այդ լեռների ստորոտում, Եփրատի ափին, այժմ էլ կանգուն են Քորգան ու Գաննի գյուղերը, որոնք մտնում էին Գարանաղիի մեջ: Այդ նույն լեռների մյուս կողմում՝ հնում Գայլ կոչվող գետի ափին ներկայումս էլ գտնվում են Եկեղյաց գավառի Թիլ և Խախ ավանները¹: Արևելյան կողմից Եկեղյաց գավառը հասնում էր մինչև Եփրատի ծունկը և այստեղ սահմանակից էր դառնում Մանաղիին և Դերջանին: Այս վերջինիս անվանումը պահպանվել է տաճկական Քերջան կաղայի անվան մեջ, որի զլխավոր քաղաքն է Մամախաթունը: Այժմյան Քերջանը տարածվում է Եփրատի երկու կողմում, ներառելով Թուլլու և Պուլկ գետակների հոսանքները, որոնցից առաջինը Եփրատ է թափվում ձախից, իսկ երկրորդը՝ աջից: Իր տարածությունը այն գերազանցում է հին Դերջանին և ընդգրկում է ոչ միայն Դերջանը, այլև Մանաղին: Մամախաթունի մոտ գտնվող այժմյան Պեկերիջ գյուղը, որ Դերջանի հին Բագայ-առիճն է, ցույց է տալիս, որ այդ գավառը գտնվել է Թուլլու գետից հյուսիս, բայց թե Դերջանը սահմանակից Մանաղիից որտե՞ղ էր բաժանվում, այդ մասին ստույգ ավելանք չկան: Արիստակես Լաստիվերտցու մոտ գտնում ենք մի քանի ավյալներ, որոնք պարզաբանում են Մանաղիի կապը Դերջան և Եկեղյաց գավառների հետ:

«Թե որպէս եւ ի Մանանաղոյ սահմանն բորոքեցաւ հրդեհ մուրումնեան» գլխում Լաստիվերտցին պատմում է աղանդավոր կունծիկի քարոզչության մասին, «տմն շնանուն արեղայի, որ բնակէր մոտ ի բերդաքաղաքն, որ կոչի Շիրի, որ դեռ եւս այսօր աղարակին գնորայն անուն կոչենա»: Արեղան իր աղանդին է դարձնում ուրիշների թվում նաև երեք ազնվազարմ կանանց՝ Կաշե և Աղյուս գյուղերի տերերին: Մի անգամ աղանդավորները հարձակվում են Պախիր լեռան ճյուղավորություններում գտնվող Բաղմաղբյուր գյուղի սուրբ խաչի վրա և ջարդուխոշոր անում այն. «որ և զանուն գեղջն ի նոյն փոխեալ խաչ անուանին մինչև ցայսօր»: Հանցագործության վայրն է գալիս Սամվել Եպիսկոպոսը,

¹ Ագարեզեզո, էջ 457, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Երեզից Թիլ գետու համար պետք է անցներ Գայլ գետի մյուս կողմը, որն զգան Գայլ յայնկոյս անցանելը, որի տակ պիտի հասկանալ Երզնկայի գետը:

ձերբակալում է աղանգավորներին, տանում Զերմա քաղաքը և սպառնում՝ անարգանքի կնիք խարանդով նրանց դեմքին: Գրանից անմիջապես հետո քննիչ է ուղարկվում գործը քննելու Նազարիս է Եկեղյաց գավառը և իր մոտ կանչում եպիսկոպոսին: Սամվելը բազմաթիվան ուղեկցութեամբ գնում է նրա մոտ: Նա հասնում է «մինչև յեզր գետսյն Եփրատայ, որ Մանանաղի ի նմա խառնի» և նավակով անցնում է «յայնկոյս յաանն, որ կոչի Կոթեր, քանզի գաաաւորն անդ իսկ էր»: Գատավորը, այն նույն քննիչը, Կոթերից գնում է եպիսկոպոսարան, որ գտնվում էր Փրրիսում և այնտեղ էլ քննում է գործը¹:

Պատմության խորագրի իմաստից երևում է, որ Շիրի, Կաշե, Ադյուս, Զերմա, Խաչ գյուղերը և Պախիր լեռը գտնվում են Մանանաղիում կամ, ինչպես հեղինակն է արտահայտվում, Մանանաղիի սահմաններում: Իսկ Կոթերը գտնվում էր Եկեղյաց գավառում, քանի որ նա է գերթեալ ի գաւառն Եկեղեցաց՝ ընդհանուր արտահայտության ամենամոտիկ որոշիչը: Մանանաղի գետը, որ խառնվում է Եփրատին, իր անվան համար, ըստ երևույթին, պարտական է այն գավառին, որի միջով հոսում է և նույնն է ինչ այսօրվա Փուզլու գետը: Գծախառնարար Քուզլու գետի հոսանքը դեռ բավականաչափ ուսումնասիրված չէ: Ռժանց նկարագրություններ նա կազմվում է մի քանի վտակներից, որոնք իրար են միանում Մամախաթունի մոտ և թափվում Եփրատ՝ ճիշտ այնտեղ, որտեղ կանգուն է Կոթուր հին կամուրջը. ոմանք էլ տարբերում են գետի երկու գլխավոր բազուկներ, որոնք իրար են միանում Մամախաթուն շնառած և թափվում են Եփրատ նույն կամրջի մոտ, բայց Կոթուր գյուղից մի փոքր վերև²:

¹ Լատիվերացի, գլ. 23, թե որպես և ի Մանանգոյ սահմանս բորբոքեալ հրդեհ մարտիբան, էջ 101, Կուծիկ ոմն շնանուն արեղայ, որ բեաղէր ժօա ի բերդաբաղաքն, որ կոչի Շիրի, որ զեռես այսօր ագարակին զճորաչն անուն կոչեն, էջ 103, զագարական... որոց անուանք կոչին միւումն Կաշէ և միււումն Ադյուս, էջ 103—104, ի հատուածս լերինն Պախրայ... աւան ինչ էր գոր Բազմաբիր կոչեն, որ գատուածային նշանն... կանգնեալ էին, որ և զանուն զեղզն ի նոյն փոխեալ Խաչ անուանեն մինչև ցայսօր, էջ 105, երթեալ... մինչև յեզր գետոյն Եփրատայ, որ Մանանաղի ի նմա խառնի, յայնկոյս յաանն, որ կոչի Կոթուր... քանզի և գատուորն անց իսկ էր:

² Տե՛ս Կենչի «Armenia»-ի և Կիպրոսի Kleinasien բարտեղները: Cuinet I, 198, Khotour, où passe la route d'Erzeroum à Erzindjan, à 18 kil. 750

Կոթուրը կամ Կոթյուրը, անկասկած, հայ արտածիչի հիշատակած Կոթերն է: Բայց պատմական Կոթերը ընկած էր Եփրատի աջ ափին, մինչդեռ այժմյան գյուղը գտնվում է հեփաուտի ափին: Որ հին Կոթերը գտնվում էր Եփրատի արևմտյան ափին, երևում է նրանից, որ Մանաղիի գետաբերանից այնտեղ գնալու համար անհրաժեշտ էր անցնել Եփրատ գետը: Բացի այդ, Սամվելի Կոթեր հասնելու հետևյալ օրն իսկ դատարարը նրա հետ միասին գնում է Փրրիս, ընդ որում նրանք կարիք չունեցան անցնելու Եփրատը, նշանակում է Փրրիսի եպիսկոպոսարանը գտնվում էր այն նույն ափին, որտեղ՝ Կոթերը: Փրրիսը գոյություն ունի մինչև այսօր, հնչվում է Փրրիս՝ և ընկած է գետի արևմտյան ափին: Ելնելով դրանից, կարծում ենք, որ ժամանակակից Կոթերը հիմնադրվել է հին Կոթերի կործանումից հետո:

Քուզլու գետի հարավային և դըլտաղոր բաղուկի վրա ներկայումս նշվում են Զերմա, նրանից մի քիչ արեմաւոր՝ Շիրին և այս վերջինից դեպի հարավ՝ Կունչա գյուղերը: Վերջիններս գտնվում են միմյանց շատ մոտ և դժվար չէ կուսել, որ դրանք հին Զերմա, Շիրի և Կաշե գյուղերն են: Այդ անուններից առաջինը հնչում էր Եփրատի օրինաչափությունների համաձայն այժմ պետք է հնչի Զերմա: Շիրիի կողքին ձեռագրերում հանդիպում ենք նաև Շիրնի՝ Շիրին-ի սեռական հոլովը, որ այժմ կոչվում է նաև Շիրինի: Ինչ վերաբերում է Կաշեին, ապա քանի որ, ինչպես վկայում է պատմիչը, մի կողմից նրա սեփականատիրը Շիրիում բնակվող Կունծիկի հարևանուհին էր, իսկ մյուս կողմից Կունչան գտնվում է Շիրինից ոչ հեռու, ապա ալեկի քան հաղանախան է, որ Կունչան հին Կաշեն է:

mètres au sud-ouest de Momakhatoun; on y voit un très beau pont sur l'Enphrate.

¹ Լատիվերացի, էջ 107, ի լուսանալ աւուրն... երթեալ յեպիսկոպոսարանն, որ Փրրիսն կոչի ի նկատի ունենալով ներկա անունը՝ զերագասելի՝ է Փիրիսը, թե՛ թերցումը փառ. Փրրիսի:

² Վենետիկում կա հինգ ձեռագիր. Ինճիճյանի օգտագործած ձեռագրում ընթերցվում է Շիրի, Ստորագ. հին Հայաստանի, էջ 23, Սրիցյոնը Շիրինին համարում է Քուրբերն (sc. պարսկ.) Գաղթ, բայց միշտ չէ. Hase. Kaok. Or. Hmp. Pyc. Geop. Oby. 8-րդ հատորի առաջին պրակի 1883 թ. հավելված, Կրգումի Եանանգի բնակավայրերի ցուցակի լրացումներ, p. 97:

Զերմեից հյուսիս-արևելք, Դումանլու՝ լեռան ստորոտում, գտնվում է այժմ հայարնակ խաչ գյուղը, իսկ մի փոքր հարավ խաչ, խաչ-գաղ լեռները, որոնք ուղիղ շղթայով ձգվում են դեպի արևմուտք մինչև Եփրատ և այնտեղ կրում Բաղիր անունը։ Այդ էլ հենց պատմական Պախրա լեռն է, Պախիր-ի սեռական հսկվել, որի մի ճյուղը, ինչպես նշում է պատմիչը, իրոք խաչ-գաղն է, որտեղ կանգնեցված է եղել աղանդավորների կողմից անարգված խաչը։ խաչ-գաղը Թուզլու և Լիճիկ գետերի ջրբաժանն է և առատ ջուր է մատակարարում այդ երկու գետերին հյուսիս և հարավ ուղղությամբ, դրա հետևանքով էլ նրա մոտ գտնվող գյուղը իրավամբ կարող է կոչվել Բազմ-աղբյուր, այսինքն՝ բազում աղբյուրներ կամ վտակներ ունեցող։ Հետո վերանվանվել է խաչ՝ ի պատիվ այնտեղ կանգնեցված խաչի։ Իսկ այսօրվա խաչ գյուղը, որ գտնվում է Թուզլու գետի մյուս կողմում, Դումանլու լեռան ստորոտում, հավանորեն, իսկական հին խաչի հետ այնպիսի հարաբերության մեջ է, ինչպես այժմյան Կոթուրը՝ պատմականի հետ։

Վերահիշյալ կետերի ուսումնասիրությունից բավականաչափ պարզվում է Մանանաղիի դիրքը. այն տարածվում էր Բաղիր-խաչ լեռներից դեպի հյուսիս մինչև Թուզլու գետը, ընդ որում, գետի հարավային և գլխավոր վտակը անջատում էր Մանանաղին Դերջանից, իսկ Եփրատի հոսանքը մինչև Կոթուր՝ Եկեղյաց գավառից։ Կոթուրից և Թուզլուից այն կողմ սկսվում էին Դերջանի սահմանները։ Դերջանը խաղտոյ-առիճ բերդի մոտ սահմանակից էր Կարինին, որը և հանդիսանում էր Կարինի ծայրակետը։ խաղտոյ-առիճը այժմյան Կալգառիճն է, որ գտնվում է Սերշամ գետի և Եփրատի խառնվելու տեղում, Աշկալայի մոտ։ խաղտոյ-առիճի մոտ հիշատակվում են ինչ-որ կղևսուրներ, որ, հավանորեն, այժմյան Բոնակապանն է. հայերեն կապան-ից, որ ընկած է

¹ խաչ-քեօլ, 32 ծուխով, Երիցյան, նույն տեղ., էջ 96.
² Լաստիվերցի, էջ 15, մինչև լամուրն, որ կոչի խաղտոյ առիճ ի սպառնածն Կարնու։ Cuiet-ի մոտ, 1, 159, Kiaghid-aridj, Ըստ Ինճիճյանի Աշխահագրություն, էջ 79, կա Գաղտառիճ անունով՝ միմյանցից ոչ հեռու հայկական և մասնակա-կան երկու գյուղ։ Ասողիկ, էջ 192 և 278, տալ նմա գեղատոյ առիճ կղևսուրան, Վորմալի և Կարին, գրասևան։ Չորմալի ձորոխի ակունքների շրջանն է՝ ձորոխ կան էլ հյուսիսային լեռանց ջաղացիս ի թա մայրեաց միջոյ ի գառակն Չորմալոյ, Հակոբ Կարենցի, էջ 51։

Աշկալայից դեպի արևելք, Կոպ լեռան տակ, էրզրում-Բայրուրթ հաղորդակցության գլխավոր գծի վրա։ Բոնակապանի մոտ սկսվում է Կոպ լեռների հայտնի լեռնանցքը 7,5 մղոն երկարությամբ, 8040 ոտնաչափ բարձրությամբ¹։

Կալգառիճից դեպի արևելք Եփրատ (Կարա-սու) գետի վերին հոսանքներում տարածվում է Կարինը, Կարին-Թեղոսուպուլիս-էրզրում գլխավոր քաղաքով։ Նրան հարում էր Շատգոմը Սերշամ գետի վրա, իսկ այս վերջինի կողքին և Տայքի հարևանությամբ՝ ձորոխ գետի վրա՝ այժմյան Իսպիրի շրջանում գտնվում էր Սպերը։

Ուսումնասիրվող գրեթե բոլոր բնակավայրերը հայտնի են նաև ավելի վաղ ժամանակների դասական գրականության մեջ։ Ստրաբոնին շատ լավ ծանոթ են Կարինը՝ Կարեն-իտ-իա, Դերջան, Քսերքսենն, քո Դերքսենն և Ակիլիսենն գավառները, որոնք հայերը նվաճել են հարևան խալիբներից, մոսինոյկներից և կատանացիներից, ինչպես նաև ոսկու հանքավայր Սպերը՝ Սիս-պիր-իտ-իա։ Կարինը, ըստ Պլինիոսի, այն գավառն է, որտեղից Եփրատը հոսում է դեպի Կապոսես լեռան ստորոտը և անցնում է սկզբում Գերգենեով և ապա՝ Անախտիկայով։ Անախտիկան Եկեղյաց գավառի մի ուրիշ անունն էր և ի պատիվ Անահիտ դիցուհու այդ-պես էլ կոչվում էր՝ Անահտական, որի պաշտամունքը առանձնապես հարգվում էր այնտեղ։ Եկեղիքը Անահտական է կոչվում նաև Ազաթանգեղոսի մոտ, իսկ Դիոն Կասիոսի մոտ՝ Անահիտի երկիր։ Պաղոմենոսին այդ գավառը հայտնի է Ակիլիսենն, Պրոկոպիոսին՝ Եկեղեսենն ձևով, որ ավելի մոտ է հայկական անվանումին։ Գարանաղին հիշատակվում է 680 թ. վեցերորդ տիեզերական ժողովի արձանագրությունների մեջ. այդ ժողովին ներկա է եղել «Գեորգը՝ Մեծ Հայքի Գարանաղիի կամ Կամախի եպիսկոպոսը»։ Ուշագրավ է, որ լատինական թարգմանության մեջ Գարանաղին նույնացվում է Անալիրլային. «Գեորգ՝ եպիսկոպոս վիճակին Գարանաղեաց կամ Անալիրլայի գաւառին Մեծին Հայոց»։ Խորձյանը առաջին անգամ հիշատակված է Պրոկոպիոսի մոտ և այն էլ երկու ձևով՝ Խորձիան-են-ի և Կորդանա, որ համապատասխանում է հայկական Խորձյանին և Խորձայնին։ Գեորգ Կիպրացիին

¹ Lynch, Armenia, II, 230.
 5 Ն. Աղանց

հայկական գավառների թվում հիշատակում է Օրդիանենեն, Մուգուրան և Պալինան¹։

Եթե ընդունենք հայկական Ադինի նույնությունը Անալիբլայի կամ Անալիբլայի հետ, որի համար, ինչպես կտեսնենք, որոշ հիմքեր կան, ապա ներքին Հայքի հիշյալ տասը գավառներից արտաքին աղբյուրներին անծանոթ կմնա միայն Շաղազումը կամ Շատգումը, որը ըստ էության հանգիստանում է Կարինի մի մասը։

Շատգումից բացի, մնացած անունները նախահայկական ծագում ունեն։ Այդ գավառները, որ հայերը խլեցին հարևան ցեղերից, պահպանեցին իրենց անունները, որոնցից շատերը ավելի շուտ ազգագրական տերմիններ են։ Անվանումների, ինչպես նաև տեղադրությունների խնդրում դասական հեղինակները համաձայն են հայկական աղբյուրներին։ Աննշան տարբերությունները բացատրվում են նրանով, որ դասականների տվյալները համապատասխանում են ավելի հին ժամանակների իրադրություններին։ Ստրաբոնի ասելով՝ Կարեն-իտ-իեն և Դերքսենեն սահմանակից են Փոքր Հայքին և նույնիսկ նրա մի մասն են կազմում, և որովհետև Մեծ և Փոքր Հայքերի միջև սահման նա համարում է Եփրատ գետը, ապա նշանակում է, որ երկու գավառներն էլ մի մասով ընկած էին գետի աջ, իսկ մյուս մասով՝ ձախ ափին²։ Այսպիսի ճշգրտումը համապատասխանում է հայկական աղբյուրների տվյալներին, որոնց համաձայն հիշյալ գավառների

¹ Str. XI, 14 p. 743 և 744. Καρηνίτις, Ξερξήνη (sc. Δερξήνη) Ἀχιλισηνή, Συσπείριτις = Ζέρρονη Σάσπειρες-ին և Φαβենոφոնի Ἐσπερίται-ին, Anab. Plin. Nat. hist. V. 83, oritur in praefectura Armeniae Majoris Caranitide... sub radicibus montis quem Capolen appellat... fluit Derzenen primum, mox Anaeticam Armeniae regiones a Cappadocia excludens. Str. p. 748, τὰ τῆς Ἀναίτιδος διαφερόντες Ἀρμένιοι, ἐν τε ἄλλοις Ἰδρουσάμεοι τόποις καὶ δεξιῇ καὶ ἐν τῇ Ἀχιλίσινῃ. Dio Cass. 31, 36. ἡ Ἀναίτις χώρα. Ptol. V, 12, 6. Proc. Pers. 1, 17, ὁ ποταμὸς (Եփրատ) πρόεισι εἰς τὴν Ἐκελεσηνὴν καλομένην γόραν, οὗ δεξιὰ τὸ ἐν Ταύροις τῆς Ἀρτέμιδος ἱερὸν ἦν. Mansi, XI p. 645, Γεωργίου ἐπισκόπου Δαρανάλεως ἦτοι τῶν Καμάχων, Γεωργίου... ἐπίσκοπος τοῦ κλίματος Δαρανάλεως τῆς Μεγάλης Ἀρμενίας. Georgius... episcopus territorij Daranalisis sive Analiblae, Magnae Armeniae regionis. Georg. Cypr. p. 49, κλίμα Ὀρζιανιῆς, κλίμα Μουζουρῶν, κλίμα Παλινῆς.

² Str. XI 14 p. 743, Καρηνίτιν καὶ Ξερξήνην, ἃ τῇ Μικρῇ Ἀρμενίᾳ ἐστὶν ὄμορα ἢ καὶ μέρη αὐτῆς ἐστί.

մի մասը գտնվում էր Եփրատի աջ ափին՝ Սերշամ և Պուլի գետերի վրա։

Ստրաբոնը Ակիլիսենեն տեղադրում է Եփրատի ձախ ափին. «Եփրատը սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային կողմից, Հայաստանի միջով, որ Մեծ է կոչվում, հոսում է դեպի արևմուտք մինչև Փոքրը՝ իր աջ կողմում ունենալով այս վերջինս, իսկ ձախ կողմում՝ Ակիլիսենեն և ապա թեքվում է դեպի հարավ և այդ թեքվելու ժամանակ շփվում է Կապադովկիայի սահմաններին»։ Հետևաբար Ակիլիսենեն տարածվում էր Կամախից շատ հեռու՝ մինչև Եդիսի՝ հայկական Ակնի սահմանները, որտեղից էլ հենց սկսվում է Եփրատի աղեղը։ Հալածվելով Պոմպոսից՝ Միհրդատը, ինչպես գրում է նույն հեղինակը, «փախավ Պոնտոսի թագավորության ծայրամասը և Եփրատից ոչ հեռու՝ Դաստեյրայի մոտ, գրավեց Ակիլիսենեի ջրառատ լեռը, որ Ակիլիսենեն բաժանում է Փոքր Հայքից»։ Դաստեյրան ոչ այլ ինչ է, եթե ոչ այսօրվա Դոստալը Եփրատի վրա, Կամախի և Ակնի միջև։ Մի այլ անգամ Ստրաբոնը Ակիլիսենեն տեղադրում է Տավրոսի և Եփրատի միջև՝ մինչև նրա թեքվելը դեպի հարավ։ Այստեղ սխալմամբ Անտիտավրոսի փոխարեն գրված է Տավրոսը, ինչպես պարզ երևում է վերջինիս բուն նկարագրությունից. Անտիտավրոսը, սկսվելով Եփրատի և Տավրոսի մոտից, վերջանում է Հայաստանի արևելյան մասում, կտրում Սոփենեն թիր մյուս կողմում ունենալով Ակիլիսենեն Տավրոսի (իմա. Անտիտավրոսի) և Եփրատի միջև՝ նախքան դեպի թեքվելը դեպի հարավ»։ Ստրաբոնի պատկերացմամբ Ակիլիսենեն տարածված էր Եփրատի ուղղությամբ Դերքսենեից մինչև Դոստալի մոտ գետի թեքվելը, ընդ որում հաստատվից այն սահմանակից էր Սոփենեին։ Այստեղից հասկանալի է դառնում Ստրաբոնի այն վկայությունը, թե Ակիլիսենեն առաջ գտնվում էր սոփենեների տիրապետության տակ, մտնում էր «Սոփենեի, *Ակիսենեի, Օղոմանտիսի և ուրիշ այլ գավառների» թագավորի՝ Ջարիադրեսի տիրույթների մեջ¹։

¹ Str. XI 12 p. 732, ὁ Εὐφράτης... ῥέων δ' ἐπὶ δούσι διὰ τῆς Ἀρμενίας τῆς Μεγάλης καλουμένης μέχρι τῆς Μικρᾶς, ἐν δεξιᾷ ἔχων ταύτην ἐν ἀριστερᾷ δὲ τὴν Ἀχιλίσσην. εἶτα ἐπιστρέφει. πρὸς νότον. p. 780, καὶ τῆς Ἀχιλίσσηος κατὰ Δάστειρα εὐδρον, ὄρος καταλαβόμενος (πλησίον δ' ἦν καὶ ὁ Εὐφράτης ὁ διορίζων τὴν Ἀχιλίσσην ἀπὸ τῆς Μικρᾶς Ἀρμενίας). p. 741, ἐκ θατέρου δὲ μέρους,

Այս սահմաններով Ակիլիսենեն բավականին ընդարձակ մի երկիր էր, որ ընդգրկում էր այն բոլոր տերիտորիաները, որ հետագայում գրավում էին Ակիլիսենեն (Եկեղյաց գավառը), Գարանաղին, Մանաղին, Աղինը և Մուզուրը: Իր կազմությամբ ak-ilis-ene-ն հարազատ է daran-ali-ին, man-ali-ին¹, mard-ali-ին, այսինքն՝ բաղկացած է Ake-ից և ali-ից՝ *ակե-աղի ևունարեն ilis ձևում վերջին s-ն համապատասխանում է կամ հայերեն ց-ին, resp. նախագրաբարյան սեռական հոլովի ա-ին կամ հայցական հոլովի ս ձևովին: Մի շարք աշխարհագրական տեղանուններ ունեն ali ածանցը, արդյո՞ք հնում համապատասխան տերիտորիայի միջև ընդհանուր կապ չի եղել: Նրանց շարքին է պատկանում նաև Աղինը՝ Սշխարհացույցի Աղի-ւնը և Analibna, Analiba կամ Analibla-ն՝ ինչպես Պտղոմեոսի մոտ է. An-alibna-ի վերջին մասի մեջ չի կարելի շտեմել հայերեն աղիւն-ը, որտեղ ւ-ն հանդիսանում է սկզբնական բ-ի փոփոխությունը:

Աղինը գավառ է, իսկ Անալիբնան՝ ավան. Պտղոմեոսը այն հիշատակում է Փոքր Հայքի քաղաքների թվում: Ըստ Itin. Ant.-ի Անալիբնան գտնվում է Զիմարայից 16, իսկ ըստ Tab. Peul.-ի 15 մղոն հեռավորության վրա: Հին Zimara-ի ավերակները մինչև այժմ էլ կարելի է տեսնել նույնանուն Զիմար գյուղի մոտ՝ վերը հիշված Դոստալի կողքին: Աղինի դիրքը ստույգ հայտնի չէ. բանի որ Սշխարհացույցի մեջ այն գրվում է Գարանաղիից անմիջապես հետո, ուստի հավանական է, որ սա սահմանակից է նրան: Այդ դեպքում Աղինը նույնանուն է այն շրջանի հետ, որտեղ գտնվում էր Անալիբնան: Իր կազմությամբ An-alibna-ն մոտ է Գարանաղիին, Ակե-աղիին և ուրիշներին:

Փոքր Հայքի գավառներից մեկը, որ ընկած էր Լիկոս գետի՝ այժմյան Կելիթի ուղղությամբ և սահմանակից էր Ակիլիսենեին, կոչվում էր Օրբալիսենե, Օրբալիսոն, մյուսը, որ գտնվում էր նրանից մի փոքր հարավ, կոչվում էր Օրբիսենե, Օրբիսոն: Թացի դրանից, Զարիադեաի տիրապետության տակ գտնվող գա-

ἔχων τὴν Ἀκίλισσην μετὰ τὸν ἰδρυμένην τοῦ <Ἀντι>ταύρου τε καὶ τῆς τοῦ Εὐφράτου ποταμίας πρὶν ἢ κόμπειν αὐτὴν ἐπὶ νότον. *Հմտ.* p. 743. Ἀκίλισσην καὶ τὴν περὶ τὸν Ἀντίταυρον.

¹ միշտ ձևը՝ Մանաղի, ինչպես Սերետի մոտ, էջ 139, իսկ Ման-ան-աղին կրում է Գարանաղիի ազդեցությունը:

վառներից մեկը Ստրաբոնի մոտ մի տեղ հիշատակված է 'Ακίλισσην, իսկ մի ուրիշ տեղ՝ *Ακίλισσην անունով¹: Եթե միայն սա վրիպակ չէ փոխ. Ակիլիսենե, ապա երկու ձևն էլ ըստ կազմության պիտի համարել համանուն Orbalisena-ին և Orbisena-ին: Իսկ Orbisena-ի անվանության դեպքում հասկանալի է դառնում orb-alis-ena-ի կազմությունը. նրա մեջ մտնում է մեկ հետաքրքրող all-s բառը²:

Իսկ ի՞նչ է նշանակում ali-s-ը: ԺԳ դարի վերջի հայ գրող Հովհաննես Երզնկացին կարծում է, թե Գարան-աղին առաջ է եկել այդ գավառում եղած աղի քարանձավներից³, Բայց այս ժողովրդական ստուգարանություն է: Հավանորեն այսպիսի ստուգարանության հետևանքով էլ հին Մանաղի գետը վերանվանված է թուրքերեն Քուլլու-սու, որ նշանակում է աղի գետ: Ալիս գետի ակունքներից մինչև Արաքս տարածվող ընդարձակ շրջանը, ինչպես գիտենք, չափազանց հարուստ է աղահանքերով, և թվում է, որ այս հանդամանքը կարող էր անդրադառնալ տեղական տերմինաբանության վրա: Եվ սակայն քիչ հավանական է, որ հիշյալ բառերում alis-ը առաջ եկած լինի հայերեն աղի բառից:

Ալեյի միջոցն այն է, որ *ali ածականակերտ ածանցը նախագրաբարյան ծագում ունի և համազոր է վրացական ջլո-ին ու գրաբարի եղ-ին. ըստ այդմ Մարդ-աղի պարզապես նշանակում է Մարդ-յան (գավառ), Ման-աղի՝ Մանյան, Ակ-իլիսենե՝ Ակիլյան (հմտ. Վասպուրականի Ակէ գավառի հետ): Իր տեղում կտեսնենք, որ հին ժամանակներում Ատրպատականում ապրում էր մի փոքր ժողովուրդ Ἀντι-α-νοί, որի անունով էլ Փայտակարան նահան-

¹ Str. p. 745, τὴν Ἀκίλισσην, τὴν ὑπὸ τοῖς Σαφηνοῖς πρότερον οὖσαν. p. 742. τῆς Σαφηνῆς καὶ τῆς Ἀκίλισσην καὶ Ὀδομαντίδος καὶ ἄλλων τιμῶν.

² *Akis-ena, *ակի-ս, resp., ակեաց, ակի-բ, Akilis-ena, *ակի-աղի-ս, ակի-աղեաց, ակիաղի-բ: Orbis-ena, *որբի-ս, Orbalis-ena, *որբ-աղի-ս: Թերևս բռնց կարգը պիտի դասել Պտղոմեոսի Βασιλισσην-ն՝ Եփրատի վրա ընկած գավառներից մեկի անունը: Պետք է սակայն ալիացնենք, որ եթե միայն դա Բասենի վրիպակը չէ, ապա երկու անուններն էլ այնպես են վերաբերում մի-մյանց, ինչպես Օրբիսենեն և Օրբալիսենեն = Բասիան, բասի-աղիս, βασιλισ-σην: Հայ մատենագրությանը անծանոթ է այդ ձևը. արդյո՞ք այդ Բասիանի հարևան գավառի ավելի հին անվանումը չէ, որ հետո կոչվեց Մարդաղի, գաղթական մարդերի՝ Μάρδοι, այնտեղ բնակություն հաստատելու հետևանքով:

³ Հովհ. Երզնկացի, Սովմբ, Ե, էջ 143, «ի ծործորս քո լիբանց ի ներքոյ երկրի արբիսու աղի գարանացուսու ունիս... և Գարան աղի կոչիս յայտ ներգործութենէս»:

զի գավառներից մեկը կոչվում էր Hani: Ստրաբոնը հայտնում է, որ նրանց մի մասը գաղթեց Հայաստան և բնակություն հաստատեց «հայերից վեր՝ Արոսի և Նիրարոսի վերևում»: Աշխարհագրի նկարագրություններից երևում է, որ Արոս և Նիրարոս ասելով նա ի նկատի ունի Արարատի գագաթները: Սրանցից ավելի վերև գտնվող Անի ամրոցը՝ հետագայում Բաղրատունիների հռչակավոր մայրաքաղաքը, ըստ երևույթին իր անվան համար պարտական է Aenia-ni ժողովրդին: Ani անվան կողքին, ինչպես հայտնի է, Խորենացին ունի Hani ձևը, որ համապատասխանում է Փայտակարանի Hani-ին: Մենք ենթադրում ենք, որ Դարանաղիի Անին էլ նույն ծագումն ունի. ճիշտ այնպես, ինչպես որ նույն այդ Աարպատականից գաղթած մարդերը հանդիպում են Հայաստանի երկու տարբեր վայրերում՝ Մարդաստանում և Մարդաղիում, այնպես էլ այնիանները դեպի արևմուտք շարժվելով՝ տեղ են գրավել Շիրակում և Դարանաղիում:

Հնարավոր է նույնիսկ, որ այդ երկու ցեղերի գաղթը Հայաստանի մի ծայրից դեպի մյուսը պայմանավորված է եղել միևնույն պատճառներով: Այնիանների նոր հայրենիքը Սփրատի վրա պետք է կոչվեր Անաղի, ani-ali Մարդ-աղիի նմանությամբ. այստեղից էլ՝ արևմտյան հեղինակների Analiba-ն կամ Analibna-ն, այստեղ վերջի Ե-ն ուրիշ բան չէ, եթե ոչ վրացիերեն հոգնակիի նշան ցծօ-ն: Անալիբա նշանակում է անեցիք, ինչպես վրացիք՝ վիր-ք-ից, որոնց ք-ն համադր է Ե-ին, ինչպես արդեն նըշվեց, տիեզերական ժողովների արձանագրությունների մեջ Դարանաղին, Կամախը և Անալիբան կարծես թե հումանիշներ են և նշանակում են միևնույն գավառը: Կամախը Դարանաղիում գտնվող Անի քաղաքի մի այլ անվանումն է և այդ պատճառով հասկանալի է նրանց նույնացումը: Բայց ի՞նչ առիշտություն ունի Դարանաղին Անալիբայի հետ: Չախտը է արդյոք բաժանել dar-anali-ն dar-anali-ի. այդ դեպքում դժվար չէ վերջին մասը դիտել իբրև analiba-ի եղակի ձևը, իսկ dar-ը համադրել Դերջան-ի, der-xene-ի առաջին վանկի՝ der-ի հետ: Նկատի ունենալով, որ Դերջանը սահմանակից էր ճաների երկրին, ճան-ը կամ xene-ն կարելի է մտանցնել ԴՇՈՎ-ու-ին՝ Խորենացու Ճանիք-ին, որանդ ւ-ն ծագել է Ե-ից, ճan-ebi-է: Ինչ վերաբերում է սկզբի der վանկին, ապա նա կապ ունի, թերև, Δρίλοι-ի հետ՝ հարևան

կոլտիդյան ցեղերից մեկի անվան հետ, *dar-ili, որտեղ վերջին -ili-ն մեր բնությունն առած -eli, ջլո ածանցն է: Այս բացատրությամբ Դերջանը էթնիկական երկու տերմինների ղուգակցում է, ինչպես, օրինակ, Պլինիոսի մոտ՝ Armeno-chalybes.

Դերջանը պահպանվել է ներկայիս Տերջան և Դերսիմ ձևով: Դերսիմի մի փոքրիկ շրջանը կոչվում է Կոզլիջան: Մեր կարծիքով Դերսիմն ու Կոզլիջանը հայկական Դերջանի և Եկեղիբի ինչպես և միջնադարյան Կելցենի (*եկե-լես-ական-ից, հմմտ. Երզնջան *Երզնականից) արարա-պարսկական ձևերն են:

Աղին տերմինը սակայն չի հաստատում մեր ենթադրությունը -ali-ի մասին, որից կարելի էր եզրակացնել, որ ali-ն ավելի շուտ ինքնուրույն բառ է, քան հասարակ թերածանց: Աղիներ չի կարելի համարել վերջնականապես հաստատված ընթերցում, և հնարավոր է նաև <ան> աղին ձևը: Բայց հաշվի առնելով առաջիկա գոյություն ունեցող ընթերցումը՝ կարելի է առաջարկել տվյալ հարցի մի թիչ այլ լուսարանություն:

Մեզ հետաքրքրող *alis-ը շատ է հիշեցնում *Ալս-ը, Haly-s ձևով գետի անունը, որ հոսում է Դարանաղիի սահմաններում գտնվող լեռներից: Այդ լեռները հանդիսանում են Ալիսի, Սփրատի և Կիլոսի չրբաժանը: Ստրաբոնը գտնում է, որ Ալիս գետի անունը առաջացել է այն աղահանքերից, որոնք գտնվում էին նրա հոսանքի մոտ: Ստուգաբանորեն Ալիսին մոտ է *Ալի-ՇՈՎԵՏ-ը, որ նույն գետի ավազանում ապրող ժողովրդի անունն է, և որի մասին հիշատակում է Հոմերոսը: Ստրաբոնը, մեջ բերելով բանաստեղծի առղբը, ենթադրում է, թե ալիդաները հենց հին

¹ Str. p. 767, δνόμασται δ' (*Αλυσ) ἀπὸ τῶν ἀλῶν ἄς παραρρεῖ. p. 788, εἰσὶ δ' ἐν τῇ Εἰρηνῇ ἄλαι ὄρυκτῶν ἀλῶν, ἀφ' ὧν εἰκάουσαι εἰρησθαι "Αλυ τὸν ποταμόν, նաև, Κουλουπηνήν τε καὶ τὴν Καμισσηνὴν ὁμόρους οὐσας τῇ τε Μεκρῷ Ἀρμενίᾳ... ἔχουσας ὄρυκτους ἄλας καὶ ἔρουμα ἀρχαῖον τὰ κάμια αὖν κατεσπασμένον. Str. 786: Kulup-ena Պլինիոսի մոտ Kolor-ena-ն հետաքրքրական է համեմատել հայերեն Կոլ-րի հետ, որ նույնպես աղահանք կա: Դիոնիսիոսի ստանալովը 784 տան իր մեկնության մեջ, որի խոսքերով իբրև "Αλυος ποταμοῦ ἀπὸ τῶν Ἀρμενίων ὄρων ἐվσημαθησθε Ὅρωρονի ստուգաբանության առթիվ նշում է, որ եթե աշխարհագրագրի կարծիքը ճիշտ համարվի, ապա Αλυσ-ը միշտ գետ է գրել spiritus asper-ով, բայց ովքեր հնում են առանց այդ նշանի, նրանք անունը համարում են առաջ եկած ἄλγ, ραψαπῆν բառից, այն իմաստով, որ գետը հոսում է բազմաթիվ երկրների միջով: Gr. Mita. II, p. 354:

խալիբներն են, որոնք նրա ժամանակ կոչվում էին խալիբներ. նա նույնիսկ հակված է Հոմերոսի Ἄλυβη-ն ուղղելու Χαλύβη-ի: Մեծ աշխարհագիտը, անկասկած, իրավացի է, երբ նույնացնում է Chal-ybes-ը և Chal-daei-ն. այդ երկու բառերը համազոր են նաև քերականորեն, քանի որ -ib-ն և -di-ն հոգնակիի հավասարազոր նշաններ են, ինչպես վրաց. յծ-ը և հայերեն տի-ն¹, նշանների տարբերությունը թերևս ցույց է տալիս, որ այդ ցեղերը բնակվելիս են եղել տարբեր շրջաններում և կամ պատմական կյանքի տարբեր շրջաններում կրել են կոլուերի ու հայերի աղղեցությունը. Հայերին հարևան խալիբներին Պլինիոսը անվանում է Armenochalybes, Chal-di-ն, հավանորեն, հայ խալիբների անվանումն է. Խալիբան երբեմն կոչվում է Հայոց աշխարհ²: Ինչ վերաբերում է ալիբներին, ապա այն կարծիքը, թե նրանք և խալիբները նույնն են, նվազ համոզիչ է թվում: Ստրաբոնը իր Ենթադրությունը հիմնում է այն բանի վրա, որ երկուսն էլ տիրում էին մետաղահանքերի: Բայց Հոմերոսի ալիբները արդյունահանում էին արծաթ, իսկ խալիբները Ստրաբոնի ժամանակ արդյունահանում էին միայն երկաթ: Մեկը մյուսին հակասող այդ երկու փաստերը հաշտեցնելու նպատակով նա ենթադրում է, թե «խալիբների հանքերը սկզբում տալիս էին նաև արծաթ»³: Դժվար է, իհարկե, ստուգել Ստրաբոնի կարծիքը. ըստ էության անհավանական ոչինչ չկա այն բանում, որ chal-ը և al-ը resp. hal միևնույն անվան բարբառային տարբերակներ լինեն: Գուտշմիդտը ենթադրում է, որ խալիբների անունը առաջ է գալիս հունարեն χαλύβ, պղինձ բառից, և որ այդպես էին կոչվում մետաղամշակութամբ զբաղվող պոնտական ժողովուրդները⁴: Առավել հավանական կլիներ հակադարձ հարաբերությունը. այն է՝ հունարեն բառը իր ծագումով պարտական է այն ժողովրդին, կամ երկրին, որտեղից հույները պղինձ էին հայթայթում: Հասկանալի է, որ այդ չի բացառում, որ chal-ը որևէ աննշանություն ունենա հանքային արդյունաբերության հետ. կարող է պատահել, որ այդ

¹ H. Mepp, *Грамматика древнеармянского языка*, с. 98.
² Steph. Byz. v. Χαλδία χώρα τῆς Ἀρμενίας, *հմմտ.* Eustath. *Op. cit.* p. 350.
³ Str. p. 751, τὰ μέταλλα νῦν μὲν οἰδηρου πρότερον δὲ καὶ ἄργυρου.
⁴ Gutschmidt, *Kleine Schriften*, III p. 487.

բառը Պոնտոսի որևէ արխայիկ լեզվում նշանակում էր մետաղ:
 Ալիզոններին խալիբների հետ համեմատելը սոսկ անհիմն ենթադրություն է: Hali-zoni և Alibi-ն *ali-ibi-ից արդյոք չեն նշանակում այն ժողովուրդը, որ զբաղվում էր աղահանքերի մշակությամբ Halis գետի վրա և նրան հարևան խալիբների հետ շփոթելը տեղի չի՝ ունեցել արդյոք նրանց լեռնաարդյունաբերական նույն բնույթը կրող զբաղմունքի հետևանքով: Այդ զեպրում դասական Alyb-ին կհամապատասխաներ հայկական Աղիւն- Aliun, *alibn-ին և թերևս an-aliba-ին: Haly-s գետի անվանումն էլ, անկասկածանքով, մոտիկ ազգակցություն ունի լազերեն ḡala-ի «գետ», վրացերեն წყალ, «ջուր»-ի հետ:
 Մեր բնության ենթակա Հայաստանի մասը՝ Ներքին Հայքը հյուսիսից սահմանակից էր ճանների երկրին: Նրա ծայրամասային գավառներից՝ Սկեչլաց, Դերջան և Սպեր գավառներից այն կողմ տարածվում էր Լիկոս-Կելիթի և Ճորոխի հովիտը, որը հյուսիսից և հարավից շրջապատված էր բարձր լեռներով: Ըստ Աշխարհացույցի այդ հովիտը Մեծ Հայքի սահմաններից դուրս էր գտնվում և ալեյի շուտ պատկանում էր Փոքր Հայքին: Պրոկոպիոսը այն հայկական հող է համարում և այնտեղ նշում է մի շարք բազալտեր ու ամրություններ: Այստեղ էր գտնվում Սատալա բազալտը, որից առ հեռու՝ Օսրոշին գավառում Հուստինիանոսը կառուցեց մի բերդ: Նույն գավառում մի բլրակի վրա հին ժամանակներից ի վեր գտնվում էր մի փոքրիկ ամրոց, որը գրավելով՝ Պոմպեոսը լավ ամրացրեց և կոչեց Կոդոնիա: Այստեղ՝ են գտնվում նաև Բայբերդ և Առե, ինչպես նաև Լիսիորոմ և Լիթաբարդ բերդերը: Հուստինիանոսը մի նոր ամրոց կառուցեց Գերմանոսի փոսատ կոչվող վայրում: Դրանց շարքում պատմադիրը հիշատակում է հայկական Սերաստիա և Նիկոպոլիս բազալտերը¹: Հիշատակած բոլոր այս բնակավայրերը Պրոկոպիոսը վերագրում է այն «Հայքին, որն ընկնում է Սիրասից աջ»՝ ի հա-

¹ Proc. Aed. III 4, Σάταλα πόλις, p. 253, φρούριον δὲ Σατάλων οὐ πολλῶ ἀποθεν ἐν χώρῃ Ὀροσηνῶν καλουμένη. Այս շրջանը, որտեղ, ի միջի նույն, գտնվում էր նաև Սատալան, Պոդոմեոսը անվանում է Օրոսիանեն, իսկ նրանից քիչ հարավ ընկած մյուս գավառը՝ Օրսենե: Պրոկոպիոսի Օրսենեն ընդհանուր լինել շուրջ օրանց հետ և՛ այն կարելի է ալեյի շուտ՝ նույնացնել հայոց Երեզի հետ. կա Ὀροσηνῶν. տարբերակվածք ib. p. 253, note. Այստեղ է նաև φρούριον

կազմութիւն Մեծ Հայքի, որտեղ գտնվում են Թեոդոսուպոլիսը, Վիժանը և Մուսիխան¹:

Այնուհետև պատմագիրն անցնում է Ճանիքի նկարագրութեանը. «Ճանապարհի ցեղերը հարեան են հայերին»: Ճանիքի երկրում կա Սրիմալանիքոն վայրը, որտեղ Հուստինիանոսը քրիստոնեութիւնը նոր ընդունած ճանիքի համար կառուցեց առաջին եկեղեցին: Այստեղ երկիրը բաժանվում է երեք մասի: Հենց այստեղ սկսվում և այստեղ էլ բաժանվում են հոռոմների, պարսկահայերի և ճանիքի սահմանները: Հենց այստեղ էր, որ Հուստինիանոսը կառուցեց Օրոն բերդը՝ առաջինը այդ երկրում, և որը խաղաղության սկիզբ ծառայեց, որովհետև այստեղից հոռոմներն առաջին անգամ մուտք գործեցին Ճանիք»: Օրոնից երկու օրվա ճանապարհի վրա է գտնվում Խարտ գյուղը, ճանապարհի բազմաթիվ ցեղերից մեկի՝ Օկենիտ ճանիքի հողում: Խարտից դեպի արևելք բացվում է մի դառիթափ կիրճ, որ ձգվում է հյուսիսային ուղղությամբ, որտեղ և գտնվում է Բարխ բերդը: Քիչ ավելի հեռու՝ լեռնալանջերին փարախներ կան, որտեղ զիշերները հավաքվում են օկենիտյան ճանիքի անասունները և այստեղ էլ արածում են: Լեռան ստորոտից այն կողմ՝ մի տափարակ վայրում, գտնվում է Կենա գյուղը, իսկ այստեղից արևմուտք՝ Սիսիլիս ամրոցը: Սրա ճախ կողմում՝ դեպի հյուսիս Լոնգինոսի փոստա կոչված վայրն է, որ այդպես է կոչվում հոռոմացի զորավար Լոնգինոս Իսավրացու անունով, որը հին ժամանակներում արշավել էր ճանիքի երկիրը և ճամբար էր խփել այդ նույն տեղում: Այստեղ Հուստինիանոսի օրոք, Սիսիլիսից մեկ օրվա ճանապարհ հեռավորության վրա, կառուցվեց Բուրգ բերդը: Այնուհետև գալիս են Կոկսիլիսյան ճանիքի սահմանները, որտեղ երկու ամրություն կա՝ Սրիմալանիքոն և Մանդակ:

Κολώνεια, φρούρια τὸ Βαιβερόων καὶ τὸ Ἀρέων, καὶ τὸ Λυσαίμον σὺν τῷ Λυταραρίζων. ἐν τε χωρίῳ, ὅπερ Γερμανοῦ καλοῦσι φοσσαῖτον, φρούριον νέον. ἀλλὰ καὶ Σεβαστείας καὶ Νικοπόλεως τῶν Ἀρμενίας πόλεων.

¹ Aed. III 5, ταῦτα μὲν οὖν ἐν Ἀρμενία, ἧτις ἐστὶν ἐν δεξιᾷ Εὐφράτου ποταμοῦ. ὅσα δὲ οἱ ἐν Ἀρμενία τῇ μεγάλῃ... Θεοδοσιούπολις, τὰ Βιζαν... ἐν χωρίῳ Τζουμινῶ.

² Aed. III 6, p. 257, τὰ Τζανῶν ἔθνη... πρόσαιοι Ἀρμενίοις εἰσὶν p. 258, ἐκκλησίαν ἐν χωρίῳ Σχάμαλινίχων καλουμένῳ δειμάμενος, p. 259, ἐνταῦθα φρούριον Ὁρονῶν... ἐν χωρίῳ δὲ ὀδῶ ἡμέραιν δυεῖν Ὁρονῶν

Ճանիքի հողերից այն կողմ մի երկիր կա, որ տարածվում է Եվրոսինյան ծովի երկարությամբ, նրա զիսավոր քաղաքը Տրապիզոնն է¹: Տրապիզոնցիների սահմանները հասնում են մինչև Մուսարմենե և Ռիզե, որոնք գտնվում են Տրապիզոնից երկու օրվա ճանապարհ հեռավորության վրա: Սրանցից դեպի աջ բարձրանում են Ճանիքի լեռները, որտեղից հոսում է Ոհ գետը, իսկ նրանցից այն կողմ անցնում են հոռոմներին հպատակ հայերը: Ճանիքը բնակվում էին ծովափից բավականին հեռու՝ հայերի հարևանությամբ. նրանց միջև բարձրանում են բազմաթիվ անմատչելի խիտ դառիթափ լեռներ: Այստեղ մի ընդարձակ տարածություն խորրովին անմարդաբնակ է. անանցանելի խորիորատներն ու անդունդները, անտառապատ բլուրները ճանիքին բաժանում են ծովից²: Ճանիքի զորաշուկատը, որ մասնակցեց 550 թ. Պետրալի պաշարմանը, հայրենիք վերադառնալիս ծովափով անցավ դեպի Ռիզե, այնտեղից՝ Աթենք և Տրապիզոնի վրայով վերադարձավ տուն³: Այս նկարագրությունից երևում է, որ ճանիքը, իսկապես, անցնում էին ծովափից հեռու, մայրցամաքի խորքում:

Տրապիզոնից մինչև Ռիզե ծովափնյա շերտը պատկանում էր տրապիզոնցիներին, զրանից այն կողմը՝ լազական ցեղերին, իսկ այդ շերտի լեռնային մասը՝ դեպի ներս, մինչև Ոհ գետի ափունքները ճանիքի երկիրն էր: Վերոհիշյալ գետի ափունքները ճանիքում էին գտնվում, թե Հայաստանում, այնքան էլ պարզ չէ, որովհետև ըստ մի տեղեկության գետը հոսում էր ճանապարհ լեռներից, իսկ ըստ մի այլ տեղեկության՝ ճանիքին սահմանամերձ Փառանգիսի մոտ բնակվող հայերի երկրից: Բայերի և

δίδονται, οὐ δὴ Τζανῶν τῶν Ὠκενίτων ἢ καλουμένων τὰ ὄρια... ὀχύρωμα Χορτῶν... τῶ δὲ ἐνθῆνδε Ἴοντι πρὸς ἀνίσχοντα ἤλιον φάραγι... οὐ δὴ φρούριον Βασίλειον... ἐπέκεινα δὲ κατὰ τοῦ ὄρους τὴν ὑπώρειαν ἐπαύλεις εἰσὶν, ἵνα δὴ οἱ Τζανῶν τῶν Ὠκενιτῶν βόδες αὐλίζονται... μετὰ δὲ τοῦ ὄρους τὸν πρόποδα, οὐ Κενὰ τὸ χωρίον ἐν τῷ ὄμαλῳ... ἐνθῆνδε τοι Ἴον τι ἐπὶ δούοντά που τὸν ἤλιον τὸ Σισιλιόσω ἢ ὄνομα φρούριον... ἐνθῆνδε δὲ Ἴοντι ἐν ἀριστερᾷ πρὸς Βερρῶν ἀνεμον... Λογγίνοιο φοσσαῖτον... ἐνταῦθα φρούριον... Βούργουσις ἡμέρας ὀδῶ Σισιλιόσων διέχον... ἐντεῦθεν ὄρια τῶν Τζανῶν τῶν Κοξυλλίων... οὐ δὴ φρούρια Σχιμαλινίχων καὶ Τζαντζάκων.

¹ Aed. III 7 p. 260.
² Proc. Goth. IV 2 p. 463—4.
³ Pers, II 30, p. 294.

Սատաղ քաղաքները, որոնց դիրքը ստույգ հայտնի է, քանի որ մինչև այսօր էլ դրանք գոյութիւն ունեն՝ մեկը՝ Ճորոխի վրա, իսկ Սատաղը՝ այժմյան Սաղաղ գյուղը, Կելկիթ գետի մոտ, Պրոկոպիոսը երկուսն էլ վերագրում է Հայաստանին:

Սատաղի և Բայբերդի վերևից ձգվում է մի երկար լեռնաշղթա, որ Շապին-Կարահիսարի կողմից ծովափին՝ դուզահեն անցնում է գեպի Ճորոխի ակունքները: Հնում սա կոչվում էր Պարխարյան կամ Պարիադրեսյան լեռներ, և Ճորոխի երկարութեամբ տարածվող նրա մի մասը այսօր էլ կրում է հին Պարխալ կամ Բոլխար անունը: Քանի որ Սատաղը և Բայբերդը, ինչպես նաև հիշյալ շղթայի հարավային ճյուղերի վրա ընկած Կողոնիան՝ այժմյան Կոլլի-հիսարը, մտնում էին Հայաստանի մեջ, ուստի այդ լեռները պետք է համարել Հայաստանի և Ճանիքի միջև բնական սահման: Ճաների երկիրը ընկնում էր այդ լեռներից հյուսիս և դրավում էր լեռնոտ մի տարածութիւն, որ, պատմագրի վկայութեամբ, ծածկված էր անտառներով, այդ պատճառով էլ ճաները երկրագործութեամբ չէին զբաղվում և իրենց ապրուստը հոգում էին կողոպուտով և անասնապահութեամբ¹:

Ճաների երկրի ընդհանուր դիրքը որոշելուց հետո հնարավոր է ճշտել նրա՝ վերը հիշատակված վայրերի տեղագրութիւնը: Ճաները բաղկացած էին բազմաթիվ ցեղերից, որոնցից պատմագիրը հիշատակում է օկենիտներին և կոկսիլիներին. առաջինները բնակվում էին կոկսիլիներից ավելի հարավ: Օկենիտյան ճաների բնակավայրը որոշվում է խարտի դիրքով. վերջինս այժմյան խարտն է, Բայբերթից վերև, Ճորոխի արևմտյան վտակի վրա, խարտի դաշտավայրում, որ այժմ կոչվում է խարտ-օվասի: խարտից արևմուտք, ինչպես նշում է Պրոկոպիոսը, մեկ օրվա ճանապարհի վրա գտնվում էր Օրոն ամրոցը, որը ճաներին նվաճելու ժամանակ հռոմեաների համար ուղղմական հենակետ էր ծառայել, որտեղից էլ ճանապարհները բաժանվում էին երեք ուղղութեամբ՝ դեպի Հռոմական Հայաստան, Պարսկական Հայաստան և Ճանիք:

Ներկայումս Տաճկահայաստանից դեպի Տրապիզոն տանող հաղորդակցութեան երկու զխավոր գծերը, որոնցից մեկը էրզրումից անցնում էր Բայբերթի վրայով և խարտի մոտով, իսկ մյուսը՝ Երզրանից Սատաղի վրայով, Գյումրի-խանից ոչ հեռու,

¹ Aed. III 6, p. 257 և Pers I 16, p. 77.

իրար են միանում: Պրոկոպիոսի խոսքերի իմաստից երևում է, որ Օրոնը գտնվել է այդ հանգուցային կետում: Իսկապես, հենց այնտեղ, որտեղ հասավ են հիշյալ գծերը, կա մի վայր, որ թուրքերեն կոչվում է խալանեն խանլար, այսինքն՝ խալանի կայարան, իսկ խալանը ոչ այլ ինչ է, եթե ոչ հին Օրոնը spiritus asper-ով: Այս եզրակացութեան ստույգ լինելը հաստատվում է նրանով, որ խալանը գտնվում է խարտից այնպիսի հեռավորութեան վրա, ինչ որ նշել է Պրոկոպիոսը, այսինքն՝ մոտավորապես 40 կիլոմետրի վրա, որին հավասար է Պրոկոպիոսի մեկ օրվա ճանապարհը: Գտնվելով երկու լեռնանցքների դիմաց, որտեղով անցնում են Երզրանի և Բայբերթի ճանապարհները, և ծառայելով որպես պաշտպանական ամրոց՝ Օրոն-խալանը, ինչպես վկայում է պատմագիրը, իսկապես կարող էր կարևոր դեր խաղալ Ճանիքի նվաճման գործում:

Խարտի մյուս կողմում, հյուսիսային ուղղութեամբ ձգվում էր մի ձոր, որը հայերը կոչում են խաղտոյ ձոր, և որը հենց Ճորոխ գետի հովիտն է: Այստեղ էր գտնվում Բարխը, որի տեղը հայտնի չէ. հավանաբար Βαρχων-ը ինչ-որ շափով առնչութիւն ունի ձորի վրա բարձրացող Պարխար լեռների հետ: Այդ լեռներում էլ, Պարխարյան լեռնաշղթայի հենց այն մասում, որ անցնում էր խարտից վերև, գտնվում էին օկենիտյան ճաների փարախներն ու արտավայրերը, քանի որ խարտը հիշյալ ճաների կենտրոնն էր: Իսկ այն հարթավայրը, որտեղ գտնվում էր Կենա, resp. Օկենա ավանը, պետք է համարել նույն այդ լեռների վերջավորութիւնը: Կենան, ըստ էութեան, Τζαυ--ի ավելի հին ձևն է. կոկորդային Է-ը հնչյունը ձայնավորից առաջ կամ ետնալեզվայինի կողքին փոխվել է բմային ԴՇ-ի: Նախընտրելի է *Օկենա ընթերցումը, որտեղ օ-ն, *իօ-ն տեղ ցույց տվող նախածանց է, վրացական ՏՁ-ին հավասարազոր: Օկենա նշանակում է կեների կամ օկենիտյան ճաների բնակավայր: Այսպիսով, հենց Օկենան էլ եղել է օկենիտյան ճան կոչվող ցեղի իսկական հայրենիքը և այդ պատճառով էլ հարում էր օկենիտների արտավայրերին և փարախներին:

Օկենայից արևմուտք գտնվում է Սիսիլիսը: Արդյոք որևէ ընդհանուր բան կա՞ Սիսիլիսի և Tab. Peut.-ի և Ant.-ի Զիդիուլայի միջև, այնքան էլ պարզ չէ: Զիդիուլան, Ziziola, ինչպես կտեսնենք

Սատաղ քաղաքները, որոնց դիրքը ստույգ հայտնի է, քանի որ մինչև այսօր էլ դրանք գոյություն ունեն մեկը՝ Ճորոխի վրա, իսկ Սատաղը՝ այժմյան Սաղաղ գյուղը, Կելկիթ գետի մոտ, Պրոկոպիոսը երկուսն էլ վերագրում է Հայաստանին:

Սատաղի և Բայբերդի վերևից ձգվում է մի երկար լեռնաշղթա, որ Շապին-Կարահիսարի կողմից ծովափին զուգահեռ անցնում է դեպի Ճորոխի ակունքները: Հնում սա կոչվում էր Պարխարյան կամ Պարիադրեսյան լեռներ, և Ճորոխի երկարությամբ տարածվող նրա մի մասը այսօր էլ կրում է հին Պարխալ կամ Բոլլոար անունը: Քանի որ Սատաղը և Բայբերդը, ինչպես նաև հիշյալ շղթայի հարավային ճյուղերի վրա ընկած Կողոնիսեն՝ այժմյան Կոլլի-հիսարը, մտնում էին Հայաստանի մեջ, ուստի այդ լեռները պետք է համարել Հայաստանի և Ճանիքի միջև բնական սահման: Ճաների երկիրը ընկնում էր այդ լեռներից հյուսիս և գրավում էր լեռնոտ մի տարածություն, որ, պատմագրի վկայությամբ, ծածկված էր անտառներով, այդ պատճառով էլ ճաները երկրագործությամբ չէին զբաղվում և իրենց ապրուստը հոգում էին կողոպուտով և անասնապահությամբ¹:

Ճաների երկրի ընդհանուր դիրքը որոշելուց հետո հնարավոր է ճշտել նրա՝ վերը հիշատակված վայրերի տեղագրությունը: Ճաները բաղկացած էին բազմաթիվ ցեղերից, որոնցից պատմագիրը հիշատակում է օկենիտներին և կոկսիլիններին. առաջինները բնակվում էին կոկսիլիններից ավելի հարավ: Օկենիտյան ճաների բնակավայրը որոշվում է հարտի դիրքով. վերջինս այժմյան Խարտն է, Բայբերդից վերև, Ճորոխի արևմտյան վտակի վրա, Խարտի դաշտավայրում, որ այժմ կոչվում է Խարտ-օվասի: Խարտից արևմուտք, ինչպես նշում է Պրոկոպիոսը, մեկ օրվա ճանապարհի վրա գտնվում էր Օրոն ամրոցը, որը ճաներին նվաճելու ժամանակ հռոմեոսների համար ռազմական հենակետ էր ծառայել, որտեղից էլ ճանապարհները բաժանվում էին երեք ուղղությամբ՝ դեպի Հռոմեական Հայաստան, Պարսկական Հայաստան և Ճանիք:

Ներկայումս Տաճկահայաստանից դեպի Տրապիզոն տանող հաղորդակցության երկու գլխավոր գծերը, որոնցից մեկը էրզրումից անցնում էր Բայբերդի վրայով և Խարտի մոտով, իսկ մյուսը՝ Երզնիցայանից Սատաղի վրայով, Գյումրի-խանեից ոչ հեռու,

¹ Aed. III 6, p. 257 և Pers I 15, p. 77.

իրար են միանում: Պրոկոպիոսի խոսքերի իմաստից երևում է, որ Օրոնը գտնվել է այդ հանգուցային կետում: Իսկապես, հենց այնտեղ, որտեղ հատվում են հիշյալ գծերը, կա մի վայր, որ թուրքերեն կոչվում է Խալանեն խանլար, այսինքն՝ Խալանի կայարան, իսկ Խալանը ոչ այլ ինչ է, եթե ոչ հին Օրոնը spiritus asper-ով: Այս եզրակացության ստույգ լինելը հաստատվում է նրանով, որ Խալանը գտնվում է Խարտից այնպիսի հեռավորության վրա, ինչ որ նշել է Պրոկոպիոսը, այսինքն՝ մոտավորապես 40 կիլոմետրի վրա, որին հավասար է Պրոկոպիոսի մեկ օրվա ճանապարհը: Գտնվելով երկու լեռնանցքների դիմաց, որտեղով անցնում են Երզնիցյանի և Բայբերդի ճանապարհները, և ծառայելով որպես պաշտպանական ամրոց՝ Օրոն-Խալանը, ինչպես վկայում է պատմագիրը, իսկապես կարող էր կարևոր դեր խաղալ Ճանիքի նվաճման գործում:

Խարտի մյուս կողմում, հյուսիսային ուղղությամբ ձգվում էր մի ձոր, որը հայերը կոչում են Խաղտոյ ձոր, և որը հենց Ճորոխ գետի հովիտն է: Այստեղ էր գտնվում Բարխը, որի տեղը հայտնի չէ. հավանաբար Βαρχων-ը ինչ-որ շափով առնչություն ունի ձորի վրա բարձրացող Պարխար լեռների հետ: Այդ լեռներում էլ, Պարխարյան լեռնաշղթայի հենց այն մասում, որ անցնում էր Խարտից վերև, գտնվում էին օկենիտյան ճաների փարախներն ու արտավայրերը, քանի որ Խարտը հիշյալ ճաների կենտրոնն էր: Իսկ այն հարթավայրը, որտեղ գտնվում էր Կենա, resp. Օկենա ավանը, պետք է համարել նույն այդ լեռների վերջավորությունը: Կենան, ըստ էության, Τζαυ-ի ավելի հին ձևն է. կոկորդային k-ը հնչյունը ձայնավորից առաջ կամ հտնայեզվայինի կողքին փոխվել է քմային τζ-ի: Նախընտրելի է Օկենա ընթերցումը, որտեղ o-ն, *ho-ն տեղ ցույց տվող նախածանց է, իրացական sa-ին հավասարազոր: Օկենա նշանակում է կեների կամ օկենիտյան ճաների բնակավայր: Այսպիսով, հենց Օկենան էլ եղել է օկենիտյան ճան կոչվող ցեղի իսկական հայրենիքը և այդ պատճառով էլ հարում էր օկենիտների արտավայրերին և փարախներին:

Օկենայից արևմուտք գտնվում է Սիսիլիսը: Արդյոք որևէ ընդհանուր բան կա՞ Սիսիլիսի և Tab. Pent.-ի և Ant.-ի Զիզիուայի միջև, այնքան էլ պարզ չէ: Զիզիուան, Ziziola, ինչպես կտեսնենք

ստորև, Նիկոպոլիս—Սատաղ գծի վերջին կայանն է, վերջինից 18 մղոն հեռավորության վրա: Ճանապարհն անցնում էր Գայլ-Կելիկի գետի հոսանքով և այդ պատճառով էլ Զիզիոլան ընկնում է այժմյան Կելիկի ջրհեղեղի մոտ: Սատաղից ոչ հեռու Ըստ Պրոկոպիոսի Միսիլիսը, ինչպես և Կենան, ընկած էր Պարսարյան լեռների հյուսիսային վերջավորությունների վրա, մինչդեռ Զիզիոլան և Սատաղը գտնվում էին հակառակ կողմում: Բացի դրանից, Զիզիոլան ժանոթ է նաև Not. dign.-ից: Այստեղ գեոևս Հուստինիանոսից շատ առաջ կանգնած էր հոմեոկան պահակազորք, մինչդեռ ճաները առաջին անգամ նվաճվեցին Հուստինիանոսի օրոք, ուրեմն՝ Միսիլիս քաղաքը չէր կարող հոմեոկան պահակազորի համար կայան ծառայել: Սրանից հետևում է, որ կամ Զիզիոլան Միսիլիսից տարրեր մի վայր էր և գտնվում էր ոչ թե ճանիքում, այլ Հայաստանում, իսկ Միսիլիսը և Օկենան պետք է փնտրել Պարսար լեռների հյուսիսային ստորոտում, կամ էլ, եթե անառարկելիորեն ընդունելու լինենք Ziziola-ի և Σιζιλλισσ-ων-ի հնչյունային նմանությունը, պետք է ընդունենք, որ Միսիլիսը նույն Զիզիոլան է, և այս դեպքում նշանակում է, Օկենան ևս պետք է փնտրել Զիզիոլայի հարևանությամբ՝ արևելյան կողմում, այսինքն՝ Բայբուրթի դաշտավայրում, հաշտվելով Պրոկոպիոսի որոշ անհետևողականության հետ, որը Սատաղը վերագրում է Հայաստանին, իսկ նրան կից Միսիլիս-Զիզիոլան՝ Ճանիքին: Ասենք, կարող է պատահել, որ Միսիլիսը Սատաղի կողմից Ճանիքի ծայրակետն է եղել, ճիշտ այնպես, ինչպես Խարտը՝ Բայբուրթի կողմից: Ճաների երկիրը գտնվում էր առհասարակ Պարսարյան լեռներից հյուսիս, մինչդեռ Խարտը՝ օկենիտյանների կենտրոնը, այդ լեռների հարավային ստորոտում՝ Բայբուրթի և Սատաղի դիմաց: Երևի Ճանիքի նկատմամբ այդպիսի դիրք ունեւր Միսիլիս-Զիզիոլան, որպես ճանական ամենահարավային բնակավայր:

Միսիլիսից մեկ օրվա ճանապարհի վրա էր Բուրգը՝ Լոնգինոսի փոստայից ոչ հեռու: Բուրգից այն կողմ սկսվում էր կոկսիլիեներ ցեղի երկրամասը՝ Սքիմալանիքոն և Մանգակ քաղաքներով: Մովսիսին մոտիկ, Սուրմենեի մոտ, Կարա-գերե գետի ափին ներկայումս գտնվում է Զավգաղա գյուղը, որն իր դրաված դիրքով համապատասխանում է Պրոկոպիոսի Τζανζάα-ων-ին¹: Զավգաղայից

¹ Կարող է պատահել Τζανζάα-ων-ի փոխարեն պետք է կարդալ Τζανζάαων.

հարավ, նույն գետի մոտ նշվում է մի այլ գյուղ՝ Զիմա, որի անունը հիշեցնում է հին Σχιμαλα-νίχ-ων-ը: Այսպես գտնվում կարելի է եղբակացնել, որ կոկսիլիենյան ճաները գրավում էին Կարա-գերե գետի հովիտը: Κοξ-υλι-νοι-ն բաղկացած է *koks արմատից և uli, վրաց. Սլո-ից: Արևմուտքից Տրապիզոնին հարող շրջանը այժմ կոչվում է Կոչ, որի մեջ չի կարելի շտեմնել հին Κοξ-ը: Ինչպես հայտնի է, ճաների մասին հիշողություն պահպանվել է աշխարհագրական այժմ էլ կենդանի Զանիք տերմինի մեջ, որն ընդգրկում է Խարշուտ գետի ստորին ավազանը: Ճաները այստեղ են քշվել հետագայում, իսկ մինչ այդ նրանք բնակվում էին Խարշուտ գետից արևելք, Արգասայի և Գյումիշ-խանեի սահմաններից ընդհուպ մինչև Համշեն, այդպիսով գրավեցնելով Պարսարի ամրոց սարահարթը, մասամբ էլ իջնելով լեռների մյուս կողմը՝ Ոհ-Ճորոխի և Գայլ-Կելիկի գետերի հովիտը: Արգասայից հյուսիս նույնանուն լեռների ստորոտում, Տրապիզոն տանող գլխավոր ճանապարհի վրա գտնվում է Զիգանան: Զիգանան հնում մի կարևոր կետ էր և կազիկեի թեմի հինգ կախկապաններից մեկի աթոռաճիտը¹: Եկեղեցական առումով Ճանիքը պատկանում էր Լազիկեին: Ճաները այդ երկրում, որ հնագույն ժամանակներում ժանոթ էր Խալդիա անունով, բնակվող բազմաթիվ ցեղերից մեկն էին: Զ դարում ճաների քաղաքական նշանակության ուժեղանալու հետ միասին ամրոցը երկիրը սկսեց կոչվել Ճանիք: Փոքր-ինչ ուշ՝ Ջ դարում հին անունը վերահենդանացավ հայտնի է, որ Արմենիակոն թեմի տրոհման ժամանակ նրա մի մասը կոչվում էր Խալդիա:

¹ Georg. Cypr. p. 24, δ 776 Ζιγανέων.

Գ Լ Ռ Ո Ս IV

Փ Ո Ք Ր Հ Ա Յ Ք

ARMENIA MINOR

Փոքր Հայքի հողերի պատմական նահատակները: Նրանց տեղը հայոց պատմության մեջ: Հայաստանը Կապադովկիայի կազմում: Մեծ և Մեծ-պոնտական Կապադովկիա: Մեծ Կապադովկիայի բաժանումը ստրատեգիաների: Մեծպոնտական Կապադովկիա: Կապադովկիական հողերի բաժանումը ըստ Պտղոմեոսի, ստրատեգիաների նկարագրությունը և նրանց տարբերությունը Ստրաբոնից: Փոքր Հայքի առանձնացումը: Փոքր Հայքը *proprie dicta* և նրա հիմն ճահանգները՝ Օրբայիսեն, Հայրապետ, Հայերքիկե, Օսենև և Օրբիսեն: Նրանց տեղագրությունը, Բաղաբները ըստ Պտղոմեոսի, Կայսերային պանակտոցները հաղորդակցության գծերի վրա ըստ *Itin. Ant.*-ի և *Tab. Peut.*-ի: Գլխավոր շրջանակ նախապարհը, ներքին նախապարհները: Մեծ և փոքր շրջանակները և բաղադրությունը այժմյան հաղորդակցության գծերի հետ: Հին կետերի տեղագրության նշանակումը: Փոքր Հայքի սահմանների մասավոր նշանակումը: Փոքր Հայքը իբրև կայսրության վարչական միավոր: Վերսնյան ցուցակը և Պոլեմիոսի կամերալայնը: Նկղեցական աշխարհագրության ավայելները: Փոքր Հայքի բաժանումը I և II Հայքերի: Նրանց գլխավոր Բաղաբները:

Ներքին արևմտյան ափին գտնվող հայկական հողերը հին ժամանակներից ի վեր կոչվում էին Փոքր Հայք, ή μικρά Ἀρμενία, ի հակադրություն Մեծ Հայքի: Հայոց պատմության մեջ այդ երկրի վիճակը մի քիչ արտասովոր է: Հանդիսանալով, կարելի է ասել, ազգային քաղաքական կյանքի օրրան՝ Փոքր Հայքը հետագայում անջատվեց հայրենի հայրենից և դրվեց ապագազայնացման ուղու վրա: Նա առաջինն էր, որ Արևմտյան կայսրության փլուզումների վրա պաշարեց իր քաղաքական անկախության համար և սեփական թագավորական իշխանություն ձևավորեց ըստ ավելի վաղ, քան Մոսիսում Զարեհի և Արաքսի հովտում Արտաշեսի թագավորությունների հիմնումը: «Փոքր Հայքը բավական բախտավոր երկիր է, — ասում է Ստրաբոնը, — Սոփիսենի նման սա էլ միշտ սեփական թագավորներ է

ունեցել, որոնք կամ բարեկամական հարաբերության մեջ էին մյուս հայերի հետ, կամ էլ իրենց անկախ էին պահում: Նրանք իրենց տիրապետության տակ էին պահում նաև խաղտիներին և տիրաբեռներին, այնպես որ նրանց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փանակիա»¹:

Նրա բախտը, սակայն, կարճատև եղավ: Շուտով վրա հասավ Միհրդատի փոթորկալից ժամանակաշրջանը, և Պոնտոսի մեծ աշխարհակալի հզորանալու հետևանքով Փոքր Հայքը նույնպես ենթարկվեց նրան, իսկ նրա անկումից հետո անցավ հռոմեացիներին: Մեկ անգամ ընկնելով Հռոմի համաշխարհային քաղաքականության ուղիքը, նա այլևս չկարողացավ ազատվել կամ դուրս գալ նրա ազդեցությունից և հնազանդությունը կրեց բախտի քմահաճույքները, իր այդ ճակատագիրը բաժանելով Կապադովկիայի և պոնտական մյուս սահմանակից երկրների հետ: Սկզբում նա ձեռքից ձեռք էր անցնում հռոմեական իշխանությունների քմահաճույքով, որոնք այն նվիրաբերում էին մեկ այս, մեկ այն վասալ թագավորներին. այսպես՝ Պոմպեոսը Փոքր Հայքը նվիրեց Գաղատիայի քառասուն Գեյոտարոսին, Կեսարը՝ Կապադովկիայի թագավոր Արիոբարզանեսին, Անտոնինոսը՝ Պոնտոսի Պոզեմոն թագավորին, Օգոստոսը՝ Արքեդալոս Կապադովկիացուն, Կալիգուլան՝ Փրակիայի իշխան Կոտիսին, Ներոնը՝ Արիստոբուլոսին և, վերջապես, առաջին անգամ Տիբերիոսի և, վերջնականապես, Կեսպոսիանոսի օրոք այն դարձավ հռոմեական պրովինցիա²:

Փոքր Հայքի հողերի նշանակությունը հայոց պատմության մեջ ըստ արժանվուն չի գնահատված: Ըստ տարածված կարծիքի, վաղ ժամանակներում անջատված լինելով Հայաստանից, Փոքր Հայքը ոչ միայն կտրված էր հայերից, այլև խորթ մնաց նրանց պատմական մշակույթին: Այս տեսակետը այն աստիճան հաստատված է

¹ Str. XII 3, p. 779, [Μικρά Ἀρμενία] δ' ἐστὶν εὐδαίμων ἰκανῶς χώρα. δυνάσται δ' αὐτὴν κατείχον αἰεὶ, καθάπερ τὴν Σωφηνήν, τοτὲ μὲν φλοιοὶ τοῖς ἄλλοις Ἀρμενίοις ὄντες τοτὲ δὲ ἰδιοπραγούντες· ὑπηκόους δ' εἶχον καὶ τοὺς Καλδαίους καὶ Τιβαρηνοὺς, ὥστε μέχρι Τραπεζοῦντος καὶ Φαρνακίας διατείνεν τὴν ἀρχὴν αὐτῶν.

² Str. XII 3, p. 768 և 780, τὴν μὲν οὖν Μικρὰν Ἀρμενίαν ἄλλοι ἄλλων ἐχόντων, ὡς ἐβούλοντο Ῥωμαῖοι. Dio-Cass. XLI 63; XLIX 33, 44; LIX, 12. Tacit. XI 9 և XIII, 7. Jos. Fl. Ant. XIV 8, 1 և XX 8, 4.

համարվում, որ պատմաբանները առանց ալեկալուսյան Փոքր Հայքը գուրս են հանում հայկական շահերի շրջանակից՝ Փոքր Հայքի մասին կազմված ավանդական պատկերացումները դեռևս կարիք ունեն քննադատական ստուգման, որովհետև հիմք չկա հայոց պատմությանից դուրս հանելու վաղուց ի վեր բնիկ հայ բնակչություն ունեցող մի ամբողջ շրջան: Իրականում հայոց պատմական կյանքում Փոքր Հայքին վիճակվել է մի շատ լուրջ առաքելություն, և այն արդարացի գնահատել կարելի է միայն այն դեպքում, եթե հրաժարվենք եկեղեցական այն գաղափարախուսությունից, որին հարել և մինչև այսօր էլ հարում է հայ պատմագրությունը: Այդ միակողմանի վերաբերմունքն էլ խանդարել է Փոքր Հայքի ուսումնասիրությունը հայկական տեսակետից: Նրա մասին գոյություն ունեցող պատկերացումներն այնքան աղոտ են, որ շատերը չեն տարբերում Փոքր Հայքը Կապադովկիայից, և նույնիսկ մասնագետները հաճախ շփոթում են այն կամ Մոփքի, կամ էլ Կիլիկիայի հայկական հետագա տիրապետությունների հետ: Այդ նկատառումով անհրաժեշտ ենք համարում կանգ առնել Փոքր Հայքի տեղագրության վրա, որպեսզի ճշտենք նրա նշանակությունը պատմական հաջորդականության մեջ նախ և առաջ որպես աշխարհագրական հասկացություն:

Փոքր Հայքի հողերը հոռմեական նահանգների շարքն անցան որպես Կապադովկիայի բաղկացուցիչ մաս: Այդ վիճակում նա մնաց մինչև Գրոկղետիանոսը, մինչև Գ դարի վերջը, երբ Փոքր Հայքը առանձնացվեց որպես ինքնուրույն նահանգ: Հաջորդ դարի վերջերին, Թեոփոստոս Մեծի ժամանակ, այն բաժանվեց I և II Հայքի, իսկ Հուստինիանոսի թագավորության օրոք Փոքր Հայքի հողերը նախկին Մեծ Հայքի արևմտյան մասի հետ միասին նոր բաժանումների ենթարկվեցին:

Այն պայմաններում, որոնց մեջ ընթացավ Փոքր Հայքի պատմական կյանքը, նրա էթնիկական սահմանները, հասկանալի է, չէին կարող անաղարտ մնալ և պիտի կորչեին հարեան հողերի հետ ունեցած շփումների ընթացքում: Հոռմեական նահանգային բաժանումները, համենայն դեպս, ազգագրական սկզբունքի հիման վրա չէին կատարվում, և խոսելով Փոքր Հայքի մասին, այն պետք է հասկանալ ավելի շուտ որպես վարչական միավոր և ոչ թե ինչ-որ ցեղային ամբողջություն: Նրա վարչական սահմանները հաճախ տատան-

վում էին՝ նեղանալով կամ լայնանալով նրան սահմանակից գավառների միջև:

Փոքր Հայքը սկզբում մտավ Կապադովկիայի կազմի մեջ: Կապադովկիայի նահանգը կազմվեց փոքրասիական մասեր թագավորություններին պատկանող տիրույթներից: Կապադովկիան, մինչև նրա մեջ կմտներ Փոքր Հայքը, բաղկացած էր երկու մասից՝ բուն Կապադովկիայից և Պոնտոսից: Առաջինի մեջ մտնում էին Տավրոսին հարող հողերը, այդ պատճառով էլ այն կոչում էին Մերձտավրոսյան Կապադովկիա կամ Մեծ Կապադովկիա, իսկ երկրորդ մասը կազմում էին Պոնտոսի ծովափնյա հողերը, այն կոչվում էր Մերձպոնտական Կապադովկիա: Մեծ Կապադովկիան՝ Արքեղայոս թագավորի ժառանգությունը, դեռևս տեղական թագավորների օրոք բաժանված էր տասը շրջանների կամ ստրատեգիաների. դրանցից Մելիտենեն, Կատանոնիան, Կիլիկիան, Տիան-իտ-իան և Գարսավր-իտ-իան ընկած էին Տավրոսի երկարությամբ, իսկ դրանցից ավելի վեր մյուս հինգը՝ Լավիանսենեն, Սարգարավ-սենեն, Սարավենեն, Խամանենեն և Մորիմենեն՝ Ալիս գետի ուղղությամբ: Մինչև հոռմեական նահանգի վերածվելը Կիլիկիայի որոշ մասերից կազմվեց նաև տասնմեկերորդ ստրատեգիան¹:

Կապադովկյան Պոնտոսը գրավում էր Պափլագոնիայից կամ Ալիսի գետաբերանից մինչև Կողքիսն ընկած ծովափնյա տարածությունը: Այն բուն Կապադովկիայից բաժանվում էր Տավրոսին դուրսհեռ ձգվող մի լեռնաշղթայով, որի արևմտյան ծայրում գտնվում էր Խամանենեն, իսկ արևելյան ծայրում՝ Լավիանսենեն, ընդ որում երկու ստրատեգիաներն էլ պատկանում էին Կապադովկիային²:

Կապադովկիայի թագավորության վերացումից հետո տեղական նախահոռմեական բաժանումները, ըստ երևույթին, փոփո-

¹ Str. XII 1 p. 750—1, εις δέκα στρατηγίας διηρημένης τῆς χώρας, πέντε μὲν ἐξητάζοντο αἰ πρὸς τῷ Ταύρω, Μελιτηνῆ Καταονία Κιλικία Τυαίτις Γαρσαυρίτις, πέντε δὲ λοιπαὶ Λαουσιανῆν Σαργαυρασηνῆ Σαραουηνῆ Χαμανηνῆ Μοριμηνῆ. προσεγένετο δ' ὕστερον παρὰ Ῥωμαίων ἑα τῆς Κιλικίας τοῖς πρὸ Ἀρχελαίου καὶ ἐνδεκάτῃ στρατηγία... p. 760, Καππαδοκίων τῶν πρὸς τῷ Πόντῳ.

² Str. XII 2, p. 758, ὄριον δ' ἐστὶ τοῦ Πόντου καὶ τῆς Καππαδοκίας ὄρεινῆ τις παράλληλος τῷ Ταύρῳ, τὴν ἀρχὴν ἔχουσα ἀπὸ τῶν ἑσπερίων ὄκρων τῆς Χαμμανηνῆς... μέχρι τῶν ἐσθινῶν τῆς Λαουσιανῆς.

խության շենթարկվեցին: Գատելով Պտղոմեոսի նկարագրությունից՝ գրանք պահպանվեցին առնվազն մինչև Ք դարի վերջը: Պտղոմեոսի աշխարհագրության մեջ նույնպես տարբերվում են նահանգի պոնտական մասերը և բուն Կապադովկիան: Մի տարբերություն կա միայն, որ այն ժամանակ պոնտական հոգերը արևմուտքից մի փոքր կրճատվեցին, իսկ Կապադովկիան, ընդհակառակը, լիկառնիակի հաշվին ընդարձակվեց: Պոնտոսի սահմանները Ալիս գետից ձգվեցին մինչև Իրիսի գետաբերանը. Իրիսից մինչև Հերակլեայի հրվանդանը ձգվող շերտը կոչվում էր Գաղատական Պոնտոս, այստեղից մինչև Կերասուն՝ Պոզեմոնական Պոնտոս, իսկ այնուհետև մինչև Կողքիս՝ Կապադովկյան Պոնտոս՝ Pontus Galaticus, Polemoniacus և Cappadocus: Գաղատական Պոնտոսում գտնվում էին Ամասիան, Պիդան՝ այժմ Ֆիդի, Պոնտական Կոմանան՝ այժմյան Գյումենեկը Քոխաթի մոտ և Սերաստուպոլիսը, որը նույնացվում է Չեբերեք-սուի՝ հին Scylax-ի ակունքների մոտ գտնվող Սուլուսեբրայի հետ: Սկյուլաքսը Իրիսի վտակն է և Ալիսից բաժանված է Չամլի-բեկ լեռներով, որոնք Գաղատիայի և Կապադովկիայի բնական սահմանն են:

Պտղոմեոսը նեոկեսարիան և Սերաստիան տեղադրում է Պոզեմոնական Պոնտոսում. ուրեմն՝ այն տարածվում էր դեպի հարավ, մինչև Ալիս գետը, որի հյուսիսային ափին գտնվում է Սըվադ-Սերաստիան: Այն շրջանը, որտեղ գտնվում էր Սերաստիան, կոչվում էր Կողոպենե: Նրա մեջ էր մտնում նաև Սերաստուպոլիսը¹: Կողոպենեին սահմանակից էր Կամիսենեն՝ Կամիսե ավանով, այժմյան Կեմիս, որն ընկած էր Սըվազից արևելք՝ Ալիս գետի ափին: Այս երկու շրջանները ծանոթ են Ստրաբոնին, և նա գրանք համարում է Փոքր Հայքին և Մեծ Կապադովկիայի կալիանսենե ստրատեգիային սահմանակից²: Կամիսենեն հանդուցային շրջան էր. նրանից հյուսիս ընկած էր Կապադովկյան Պոնտոսը, դեպի արևելք՝ Փոքր Հայքը, ուստի կալիանսենեն նրա հետ կա-

րող էր շփվել միայն հարավից, ավելի ճիշտ՝ հարավ-արևմուտքից: Կալիանսենեի այդ դիրքը հաստատվում է նաև Ստրաբոնի վերը բերված այն տեղեկությամբ, թե կալիանսենեն Մեծ Կապադովկիայի ամենարևելյան ստրատեգիան է և գտնվում է այն լեռնաշղթայի վրա, որի մյուս ծայրում գտնվում էր Խամանենեն:

Թեև Պտղոմեոսը պահպանում է ստրատեգիաների հին բաժանումները, սակայն գրանցից մի քանիսի, այդ թվում և կալիանսենեի տակ հասկանում է բոլորովին այլ շրջաններ: Բան Ստրաբոնը: Այս վերջինիս մոտ ստրատեգիաները բերված են որոշակի կարգով: Տասից հինգը գտնվում են Տավրոսի գոգավորություններում, իսկ մնացած հինգը հարում են Ալիսին: Հարավից կալիանսենեին սահմանակից էր Սարգարավսենեն, որ տարածվում էր Կարմալա-սու՝ այժմյան Զամանտի-սու գետի ուղղությամբ: Խաման-ենեի՝ այժմյան Անկյուրայի վիլայեթի Այման կազայի նկատմամբ նույնպիսի դիրք էր զբաղում Մուրիմենեն՝ այժմ Քուշ-հոսար Տատտ լճի մոտ: Խամանենեի և կալիանսենեի միջև Ալիսի ուղղությամբ ընկած էր Սարավենեն: Լեռնային հինգ ստրատեգիաները արևելքից արևմուտք տարածվում էին հետևյալ կարգով՝ Մելիտենե՝ այժմ Մալաթիա, ամենածայրինը Եփրատի մոտ, նրանից դեպի արևմուտք՝ Կատտոնիան Պիրամոս, այժմ Զահան, գետի ուղղությամբ՝ Կոմանա քաղաքով Սարա, Սարիս-սու կամ Գյոք-սու գետի ափին, այնուհետև Կիլիկիան՝ Արդոս, այժմյան Արճիշ լեռան ստորոտում ընկած Մածթա քաղաքով, որ կոչվեց Եվսերիա և հետո՝ Կեսարիա. Կիլիկիայից հետո՝ Տիան-իտ-իք և Գարսավր-իտ-իք՝ մինչև Տատտ լիճը¹:

Պտղոմեոսը Կապադովկիայի նահանգում հիշատակում է 13 գավառ.

Ստրատեգիա Խամանենե	Փոքր Հայք
» Սարգավթսենե	Մելիտենե

¹ Plin. Nat. hist. VI 3, 3, in Colopene vero Sebastiam et Sebastopolim.

² Str. XII 3, p. 786, Κουλουπηνην και την Κομισσην, δμόρους οδοας τῆ τε Μικρᾷ Ἀρμενίᾳ καὶ τῆ Λαουιανσηνῆ. Դրա հետևանքով ոմանք Ալիսի ակունքները դնում են Մեծ Կապադովկիայում, ինչպես Ստրաբոնը, էջ 787, իսկ ոմանք էլ՝ Հայաստանում, ինչպես Հերոդոտը I, 72, իբի ճե էջ 'Արմենիու օրոս; հմմտք. Դրոսիսիս V, 786, ῥοσι "Αλυος... ἀρξάμενοι τὸ πρῶτον ἀπ' οὄρεος 'Αρμενίου.

¹ Str. XII 2, p. 754, ἐν τῇ Σαργαρουσηνῆ πολυχιόν ἐστι 'Ἡρτα καὶ ποταμὸς Καρμάλας, ὅς καὶ αὐτὸς εἰς τὴν Κιλικίαν ἐκδίδωσιν; p. 797, ἢ τε Αἰμνη ἐστὶ ἡ Τάττα παρακειμένη τῇ μεγάλῃ Καππαδοκίᾳ τῇ κατὰ τοὺς Μοριμηνοῦς; p. 752, διὰ δὲ τῆς Καταονίας ὁ Πύραμος. Եւոյն տեղում՝ διὰ μὲν οὖν τῆς πόλεως ταύτης (sc. τὰ Κόμανα) ὁ Σάρος πεῖ ποταμὸς. p. 755, ἐν δὴ τῇ Κιλικίᾳ καλουμένη τὰ Μάζακα ἢ μητρόπολις του ἔθους. καλεῖται δ' Εὐσέβεια καὶ αὐτὴ ἐπίκλησιν ἢ πρὸς τῷ 'Αργαίῳ.

Ստրատեգիա	Գարսավր-իտ-իա	ստրատեգիա	Կատաներիա
»	Կիրիկիա	»	Մուրիմենն
»	Լիկաներիա	»	Լավիանսենն
»	Անտիոփիանն	»	Առավենն ¹ :
»	Տիան-իտ-իա		

Այս ցանկի մեջ, Ստրաբոնի համեմատությամբ, ավել են Փոքր Հայքը, Լիկաներիան և Անտիոքիանեն: Վերջին երկու ստրատեգիաները ըստ էության կազմված են այն տերիտորիայից, որ Ստրաբոնի մոտ գրավում էր տասնմեկերորդ ստրատեգիան. տարբերության գլխավոր կետը մնում է Փոքր Հայքը: Պտղոմեոսի հրատարակիչները Փոքր Հայքի և հաջորդ հինգ զավառների նկարագրությունը սովորաբար առանձնացնում են հատուկ գլխում, ենթադրելով, որ այդ զավառները այն ժամանակ մտնում էին Փոքր Հայքի մեջ: Մյուսների վերջին քննական հրատարակության մեջ նախորդ հրատարակիչների սխալն ուղղված է այն իմաստով, որ Փոքր Հայքը դասված է Կապադովկիայի զավառների շարքը: Բայց կարծում ենք, զրանով դեռևս չի լուծվում Փոքր Հայքի տարածքի հարցը, որովհետև խնդիրը ոչ թե զավառների քաղաքական խմբավորման, այլ տերիտորիալ ամբողջության մեջ է. Մելիտենեն, Կատաներիան, Մուրիմենն, Լավիանսենն և Առավենն ըստ վարչական բաժանման կարող էին վերագրվել Կապադովկիային, ինչպես նաև Փոքր Հայքը, մնալով, սակայն, այս վերջինի հետ միասին իբրև ամբողջական միավոր այլ առումով: Վերոհիշյալ զավառներից առաջինը՝ Մելիտենեն, հակառակ Ստրաբոնի, Պտղոմեոսի մոտ ստրատեգիա չի կոչվում և հազիվ թե ստրատեգիա բառ բաց է թողնված պատահաբար. Պտղոմեոսը Մելիտենեն համարել է Փոքր Հայքի մաս: Բացի դրանից, մյուս ստրատեգիաներից միայն Կատաներիան է, որ իր դիրքով համապատասխանում է Ստրաբոնի նույնանուն զավառին, իսկ Մուրիմենն, Լավիանսենն և Առավենն, հակառակ Ստրաբոնի, Պտղոմեոսի մոտ բոլորովին այլ զավառներ են: Լավիանսենն և Առավենն, ըստ Պտղոմեոսի, հարում են Եփրատին, առաջինը՝ πρὸς μὲν

τῷ Εὐφράτῃ, իսկ երկրորդը՝ τὰρὰ μὲν τὸν Εὐφράτην և նրանց մեջ նշված են հետևյալ վայրերը՝ Կոռնն, Մետիտա, Կլավդիա, Հուլիոպոլիս և Բարզալո, որոնք ըստ հոմանիական ուղեցույցների կայաններ էին Եփրատի աջ ափին՝ Մելիտենն-Մալաթիայի և Սամոսատի միջև: Մինչդեռ, ըստ Ստրաբոնի, այդ զավառները, ինչպես տեսանք, պատկանում էին ոչ թե Եփրատին, այլ Ալիս գետի ավազանին: Որ Լավիանսենն և Առավենն ըստ Պտղոմեոսի իրոք որ ընկած էին Եփրատի վրա, երևում է նաև նրանից, որ նրանք գտնվում են երկարություն նույն աստիճանի տակ, ինչ որ Մելիտենեն, այսինքն՝ 71°: Կատաներիան նույնպես հարում էր Մելիտենենին, նրա մի մասը ավելի ուշ կոչվում էր Լիկանդոս և տարածվում էր Պիրամոս գետի վերին հոսանքներում Պլաստա՝ այժմ Ալիստան գլխավոր քաղաքով: Այստեղ հայ տարբր ուժեղ էր դեռևս Պ—ՓԱ գր.²:

Վերջապես Մուրիմենն նույնպես շատ հեռու չէր այդ վայրերից: Գտնելով միջօրեական հաշվումներով՝ 67°30'—69°20', այն ընկնում էր Կեսարիա-Մաթաթից արևելք 68°30': Պտղոմեոսը Մուրիմեննի մեջ է դնում, օրինակ, Արասաքսա քաղաքը, որ համապատասխանում է այժմյան Սերեսերին, Կեսարիայից դեպի արևելք յոթ ժամվա հեռավորության վրա: Միաժամանակ նրա մեջ նշվում են այնպիսի կետեր, ինչպես Նիսսան, այժմ Նիսն կամ Նարսն՝ եկեղեցու նշանավոր հայրերից մեկի ծննդավայրը, ինչպես նաև Զորոպասոսը, հավանորեն Ստրաբոնի Կորոպասոսը՝ Կեսարիայից դեպի արևմուտք, որոնք ցույց են տալիս Մուրիմեննի իսկական դիրքը Ալիսի երկարությամբ՝ Խամանեննի մոտ: Այսպիսով, քանի որ Մուրիմենն Պտղոմեոսի մոտ տեղաշարժվում է դեպի արևելք, իսկ Լավիանսենն և

¹ Առավենն, ըստ Մյուսների, այժմյան Առարան-օվասին է Սամոսատից ներքև, Եփրատի մեջ թափվող Առարան գետի հովիտը: Նա ենթադրում է, որ այդ հովիտը հնում հավանորեն կոչվել է Առավենն, որը Պտղոմեոսի հիմք է տվել նույնացնելու այն Ստրաբոնի Սարավեննի հետ (cf. Ptol. I, 2, էջ 876, not. 6): Մյուսների այս ենթադրությունը, սակայն, հակասում է Պտղոմեոսի այն ցուցումին, որի համաձայն Սամոսատի զավառը, հետևապես նաև Առարանը մտնում էին Կոմարգեննի մեջ (Ptol. IV, 14): Պտղոմեոսի Առավենն, անկասկած, համապարտ է Ստրաբոնի Սարավեննին, որ նա տեղափոխել է Եփրատի ավազանը նույն այն պատճառներով, որոնք առիթ են ծառայել Լավիանսեննի սխալ տեղադրության:

² Tomaszek, *Euphrat und Ost-Kappad.* Festschrift für Kiepert, p. 145 և շար.:

¹ Ptol. V 6, στρατηγία Χαμανή, 2 στ. Σαργουρασηγή, 3 στ. Γεροσσηρίτις, 4 στ. Κιλικία, 5 στ. Λυκαονία, 6 στ. Ἀντιοχειαή, 7 στ. Τυανίτις, 8. Μικρά Ἀρμενία, 9. Μελιτινή, 10 στ. Καταονία, 11 στ. Μουρμενή, 12 στ. Λαουσιανσηγή, 13 στ. Ἀρασηγή.

Առավելեմն Ալիսի հովտից ուղղակի փոխադրվում են Եփրատի հովիտը՝ Փոքր Հայքին հարևան Մելիտենեի և Կատաոնիայի շրջակայքը, ապա մասամբ իրավացի են Պտղոմեոսի այն հրատարակիչները, որոնք Փոքր Հայքի և հիշյալ գավառների նկարագրությունն առանձնացնում են հատուկ գլխում: Փոքր Հայքի անջատումը Կապադովկիայից ձևականորեն վերաբերում է ետպտղոմեոսյան ժամանակին, որ տեղի ունեցավ Գիոկղեալանոսի օրոք: Բայց քանի որ նրա անջատումից հետո էլ վերոհիշյալ տերիտորիաները մնացին գերազանցապես իբրև Փոքր Հայքի մաս, ապա կարելի է ենթադրել, որ այդ ինչ-որ բանի վրա հիմնված միասնականությունը գոյություն է ունեցել նաև նախկինում՝ նախքան Փոքր Հայք նահանգի կազմվելը:

Ստրաբոնի և Պտղոմեոսի վկայությունների անհամապատասխանությունները կարող են վերջինիս կողմից թույլ տրված հասարակ սխալների հետևանք լինել: Ստրատեգիաները, իբրև հատատություն, պետք է կորցնեին իրենց քաղաքական կարևորությունը այն բանից հետո, երբ Կապադովկիան միացվեց Հռոմեական կայսրությանը: Չունենալով վարչական նշանակություն՝ ստրատեգիաները թե՛ Պտղոմեոսի օրոք, թե՛ նրանից հետո զուտ պատմական հետաքրքրություն էին ներկայացնում: Երբ մի բան պատմության գիրկն է անցնում, տարակարծությունները նրա վերաբերյալ միանգամայն հնարավոր են և նույնիսկ անխուսափելի: Պտղոմեոսը իր աշխատությունը կազմելիս օգտվել է ոչ միայն իրենից առաջ գոյություն ունեցող աշխարհագրական գրականությունից, այլ նաև մեզ հասած զանազան ուղեցույցների նման այլ ուղեցույցներից: Ի վիճակի չլինելով հաղթահարել աղբյուրների հակասական տեղեկությունները՝ նա, բնականաբար, կարող էր սխալների մեջ ընկնել: Ստույգ հայտնի է, որ Կապադովկիայից անջատվելուց հետո Փոքր Հայքի գլխավոր քաղաքը դարձավ Մելիտենեն¹, իսկ երբ բաժանվեց I և II Հայքի, ապա նրա մեջ մտան ոչ միայն Սեբաստիա-Սըվազը, այլև Արաբիսոն-Յարփուզը, Կոկիսոն-Գյոքսունը և նույնիսկ Կոմանա-Շահրը ու Արիարաթիա-Աղիզիեն:

Համենայն դեպս տերիտորիայի նշանակալի մասը, շնայած սահմանային բոլոր փոփոխություններին, մշտապես մնաց Փոքր

¹ Amm. XIX 8-12, Melitina minoris Armeniae oppidum. XX 11 4, a Capadocia per Melitinam, minoris Armeniae oppidum:

Հայքի կազմի մեջ իբրև նրա անկապակի սեփականություն: Այդ մասը կարելի է անվանել Փոքր Հայք՝ proprie dicta: Այդ միանգամայն որոշակի նշված է Պտղոմեոսի մոտ, այսինքն՝ այն ժամանակ, երբ Փոքր Հայքը դեռևս միացված էր Կապադովկիային, և որ հիմք է տալիս ենթադրելու, թե այդ մասի բնակչությունը եթե ոչ ամբողջությամբ, ապա գերազանցապես բաղկացած էր հայերից: Այս իմաստով Փոքր Հայք ասելով Պտղոմեոսը հասկանում է հետևյալ հինգ շրջանների ամբողջությունը. ամենափյուսիսայինը՝ Օրբալիսենե, նրանից ներքև՝ Հայքուլանե, այնուհետև՝ Հայքիթիկե, ավելի ներքև՝ Օրսենե և ամենահարավայինը՝ Օրսենեից հետո Օրբիսենե: Փոքր Հայքում կային Եփրատի հոսանքի ուղղությամբ ընկած հետևյալ քաղաքները՝ Սինեբվա, Աղիրիս, Դալանա, Միամարա, Զիմարա, Դասկուսա, իսկ խորքում, լեռնոտ վայրերում՝ Սատաղ, Դոմանա, Տապուրա, Նիկոպոլիս, Խորասրիա, Խարաթա, Դադոնա, Սելեոբերիա, Կալտիոբիսա, Անալիբլա, Պիսինգարա, Գոդասա, Եվդոքսատա, Կարապե, Կասարա, Օրոմանդոս, Հիսոյա, Յուֆենա, Առանա, Յուֆազենա, Մարդարա, Վարսապա և Օրոսա:

Այս կայաններից շատերը անհետ կորել են. մի մասը ծանրթ է դարձյալ հռոմեական հին Itinerarium-քարտեզներից կամ ուղեցույցներից, իսկ մի քանիսն էլ պահպանվել են միշև մեր օրերը: Այսպես կոչված Անտոնինոս Օգոստոսի ուղեցույցը և Պետինգերյան քարտեզը² Փոքր Հայքի տեղագրության վերաբերյալ այնքան հարուստ նյութ են պարունակում, որ զիտական հետազոտությունները տեղում անկասկած հիանալի արդյունքներ կտային: Առայժմ ստիպված ենք սահմանափակվել գրավոր վավերագրերի վկայություններով, որոնց շնորհիվ հաջողվում է ճշտել միայն հաղորդակցության ճանապարհների ընդհանուր ուղղություն:

¹ Ptol. V 6, 18 p. 882, 'Αρμενίας Μικρᾶς ἢ μὲν ἀριτικωτάτη καλεῖται Ὀρβασίσην ἢ δ' ὕπ' αὐτὴν Αἰτουλάνη, εἴτα Αἰρετικὴ καὶ ὕπ' αὐτὴν Ὀροσηνὴ καὶ μεσημβρινωτάτη μετὰ τὴν Ὀροσηνὴν Ὀρβισσην, πόλεις δὲ εἰσι παρὰ μὲν αὐτὸν τὸν Εὐφράτην αἶθε. Σινίρα, Ἄζιρις, Δάλανα, Σισμαρα, Ζίμαρα, Δασκοῦσα, ἐντὸς δὲ καὶ παρὰ ὄρειάς. Σάταλα, Δόμανα, Τάπουρα, Νικέπαλις, Χορασβία, Χοραξ, Δάγωνα, Σελεοβέρεια, Καλτιάρισα, Ἀνάλιβλα, Πιογγάρα, Γοδάσα, Εὐδόξιατα, Καράπη, Κασάρα, Ὀρόμανδος, Ἴοπια, Φούφρηνα, Ἀράνη, Φουφάγηνα, Μάρδαρα, Οὐαρσάπα, Ὀρσα.

² Itinerarium Imp. Antonini Augusti & Tabula Peutingeriana, հրատ. Recueil des itinéraires anciens, publié par De Fortia D'urban:

նը և նրանց վրա գտնվող կայանների անվանքը: Նույն տվյալները հնարավորություն են տալիս մտաավարապես որոշել Փոքր Հայքի տեղեկություն, որ ընկած էր Սեբաստիայի, Նիկոպոլիսի, Սատաղի և Մեջիթանեհի սահմանային կետերի միջև: Սեբաստիան և Մեջիթանեն լավ հայտնի են. Սքվազն ու Մալաթիան մինչև այսօր էլ Առաջավոր Ասիայի կարևոր կենտրոններն են և նույնանուն վիլայեթների մայրաքաղաքները: Դեռևս հին ժամանակներից հայտնի Նիկոպոլիսը, որ հիմնադրել է Պոմպեոսը ի պատիվ Միհրդատի դեմ տարած հաղթանակի, գտնվում էր Լիկոս գետի ափին. նրա դիրքը նույնացվում է Ենդերեսի մոտ գտնվող Պյուրկ ավանի հետ, շնորհիվ այնտեղ հայտնաբերված մի արձանագրության, որի մեջ հիշատակված է ΝΙΚΟΠΟΛΙΣ անունը¹: Սատաղան հայկական Սատաղն է, որ գտնվում է Երզնկայից դեպի հյուսիս՝ Տրապիզոնի ճանապարհի վրա, որտեղ էլ կանգուն է Սատաղ գյուղը: Երզնկայից հարավ՝ Եփրատի ափին, Կամալի և Դիվրիզի միջև ընկած է Զիմարան, որը, ըստ երևույթին, հնում կարևոր պահակախո է եղել:

Փոքր Հայքի ծայրամասերում ընկած այդ բոլոր քաղաքները միմյանց հետ կապված էին շրջանաձև ճանապարհով, այնպես որ Փոքր Հայքը գտնվում էր ռազմական գլխավոր ճանապարհների հանգույցում: Սեբաստիայից ճանապարհը գնում էր Նիկոպոլիս, Նիկոպոլիսից՝ Սատաղ, այնուհետև՝ Զիմարա, Զիմարայից՝ Մեջիթանեհ և ապա՝ մինչև Սեբաստիա: Այդ գիծը Անտոնինոսի ուղեցույցի մեջ և Պետրոսյան քարտեզում ներկայացված է հետևյալ ձևով.

Itin. Ant.²

Sebastia

Camisa

Zara

Tab. Peut.³

Sevastia

Comassa

Doganis

¹ Taylor, *Jour. of a tour in Armenia* JRGS. 1868, t. 38-ի մեջ է բերում Ե. Բորեի 1840-ական թվականներին հայտնաբերած մի արձանագրություն. ինքը նույնպես Պյուրկից մի քիչ հեռու ընկած Ահչեհիրում հայտնաբերել է մի այլ արձանագրություն, որտեղ կարդացվում է Nicopolita, ib. p. 302:

² *Recueil des itinéraires*, p. 60 և 64:

³ *ib.* pp. 265, 266 և 267:

	Dagolasso	Megalasso	i
		Mesorome	
	Nicopoli	Nicopoli	
Olotoedariza	Carsat	Caltiorissa	
Dracones	Arauracos	Draconis	
	Suissa	Cunissa	
Aza		Hassis	
		Ziziola	
Satala	Satala	Satala	
	Suissa		
	Arauracos		
	Garsagis		
	Sinervas		
	Analiba		
	Zimara	Zimara	
	Teucila	Zenocopi	
		Vereuso	
	Sabus	Saba	
	Dascusa	Dascusa	
		Hispa	
		Arangas	
	Ciaca	Craca	
	Melifena	Melentenis	
	Pisonos		
	Ad Praetorium		

Aranis

Euspoena

Blandes

Sebastia

Նշված հանգուցային կետերը՝ Սերաստիան, Նիկոպոլիսը, Մատաղը և Մելիտենեն այժմ էլ գտնվում են գլխավոր ճանապարհի վրա, որ գտակորում է հին Փոքր Հայքը։ Կարելի է պնդել, առանց մեծ սխալի մեջ ընկնելուց վախենալու, որ այժմյան հաղորդակցությունը գիծը եղել է դեռևս ամենահեռավոր ժամանակներում։ Բնական պայմանների հետևանքով ճանապարհները Հայաստանում և առհասարակ Առաջավոր Ասիայում պետք է համարել երկրի անփոփոխ սեփականություններից մեկը։ Փոքր Ասիան՝ այդ լեռնաշխարհը, որ բոլոր ուղղություններով կտրտված է ձյունապատ Տավրոսյան լեռներով, որոնք առաջացնում են անհամար խոր ձորեր և գետային նեղ, հաճախ բոլորովին անանցանելի կիրճեր, հաղորդակցության համար շատ անհարմար է։ Մեկ անգամ արդեն զգված ճանապարհը, որ թելադրվում էր բնական պայմաններով, պետք է հետագա բոլոր ժամանակներում անփոփոխ մնար, մանավանդ, եթե դրա վրա այս կամ այն շափով մարդկային աշխատանք էր թափվել։

Սերաստիա-Նիկոպոլիս գծի սկզբի կայանները՝ այն է՝ Camis-ը և Zara-ն, մինչև այժմ էլ գոյություն ունեն Ալիս-Կըզըլ-Իրմակ գետի վրա Կեմիս և Զարա հին անուններով, առաջինը՝ Սըվազից 30 կիլոմետր հեռավորության վրա, իսկ երկրորդը՝ Կեմիսից նույնքան հեռու։

Կեմիսից և Զարայից վեր, ընդհուպ մինչև Ենդերես ձգվում են Քյոսե (լեռկ) և Հաբեշ լեռները։ Այս լեռների հյուսիսային լանջերով Զարայից դեպի Ենդերես այժմ խճուղի է անցնում։ Մի ուղեցույցի համաձայն Զարայի և Նիկոպոլիսի միջև միայն մեկ կայան է՝ Dagalassus-ը, իսկ ըստ մեկ ուրիշի՝ երեք կայան՝ Dagan, Megalass-us, Mesorome։ Ըստ երևույթին դրանք երկու տարբեր ճանապարհներ են, որոնցից մեկը ընթանում էր Ալիս գետի երկարությամբ, իսկ մյուսը՝ Կամիսից այն կողմ, դեռ Զարային չհասած, այժմյան խճուղու ուղղությամբ թեքվում էր դեպի լեռները։ Բայց բանի որ Նիկոպոլիսը ընկած էր Ենդե-

բեսից մի քիչ հարավ, ապա հավանական է, որ հին ճանապարհն էլ ընթանում էր հիշյալ Քյոսե և Հաբեշ լեռների ոչ թե հյուսիսային, ինչպես այժմ է, այլ հարավային լանջերով։ Այդ են վկայում նաև հիշյալ լեռների լանջերին գտնվող մինչև այժմ պահպանված մի շարք իջևաններն ու կայանները։ Այդ գծի վրա առաջին լեռնային իջևանը կլինի Գագանը, իսկ Մեգալասը, պարզվում է, որ Գագալասից տարբեր կետ է։ Անտոնինոսի ուղեցույցում նկարագրված մյուս ճանապարհը ձգվում էր Ալիսի հովտով և դեպի հոսանքն ի վար գնում մինչև այն ոչ մեծ լեռնապարը, որ Ալիսի ջրերը բաժանում էր Լիկոսից, ափելի ճիշտ՝ նրա Ակշեհի-սու վտակից, որի ափին էլ գտնվում էր Նիկոպոլիսը. այնուհետև ճանապարհը այդ լեռնապարի վրայով իջնում էր դեպի այս վերջին գետը և նրա հոսանքի ուղղությամբ հասնում Նիկոպոլիս։ Գագալասը պետք է որ եղած լինի Ալիսից դեպի Նիկոպոլիսի գետն իջնելու վայրում։

Երկու ճանապարհների գոյության օգտին է խոսում նաև այն, որ Պտղոմեոսը, որին ծանոթ էին Գագանան, Մեգալասը և Մեգոսոման, առաջին կետը դնում է Փոքր Հայքում, իսկ մյուս երկուսը՝ Պոզեմոնական Պոնտոսում։ Սերաստիայի շրջանում, Փոքր Հայքի և Պոզեմոնական Պոնտոսի բնական սահմանը պիտի համարել Քյոսե և Հաբեշ լեռնաշղթան, որի մի ծայրում գտնվում էր Գագանը, իսկ մյուսում՝ Նիկոպոլիսը, որոնք պատկանում էին Փոքր Հայքին։ Որպեսզի միջանկյալ Մեգալաս և Մեղդրոմա իջևանները պատկանեին Պոնտոսին, պետք է որ գտնվեին այդ լեռնաշղթայի կատարներին, բայց ոչ ափելի հարավ։ Հակառակ դեպքում, այսինքն՝ եթե գտնվեին այն նույն գետային ճանապարհի վրա, որ նկարագրում է Անտոնինոսը, ապա կհայանվեին Փոքր Հայքում։

¹ Հաղի շաննիով այս պարզան՝ Կիսերոսը, Kleinasien, Ant. Peut.-ի երկու գծերը համարում է միևնույնը և Megalass-us-ը նույնացնում է Dagalass-us-ի հետ։ Allas-us վերջավորությամբ կան մի քանի անուններ։ Բացի դրանցից, կան նաև Salm-allasus Peut. և Σαβαλασοός-ը Պտղոմեոսի մոտ, էջ 877։ Tab. Peut.-ի մեջ նշվում է մի ուրիշ վայր՝ Megalassus անունով, որ գտնվում է Մեթատիայի մոտ, բայց հակառակ կողմում՝ դեպի Կեսարիա տանող ճանապարհի վրա։ Այդ, հավանորեն, այն կայանն է, որ Պտղոմեոսը անվանում է Σαβαλασοός, իսկ միայն allas-us-ը չի նշանակում առիճ, պոչ, ապա այն պետք է դասել ali վերջածանց ունեցող տերմինների շարքը՝ որպես սեռական հույսի վերջավորություն։

Նիկոպոլսից Սատալա տանող ճանապարհը, ըստ Ant.-ի նկարագրութեան, ճյուղավորվում էր Նիկոպոլսից հետո՝ հաջորդ իջևանից՝ Օլտոտոզարիզայից. մի գիծն անցնում էր Լիկոսի ափով, իսկ մյուսը՝ նրանցից ավելի հարավ՝ լեռներով: Առաջին գիծը համապատասխանում է այն ճանապարհին, որ նկարագրված է Peut.-ի մեջ:

Ant. Nicopoli 24 Olotoedariza 26 Dracones 24 Aza 26 Satala.
Peut. Nicopoli 14 Caltiorissa—Draconis 13 Cunissa 10 Hassis 13 Ziziola 12 Satala.

Եվ իրոք, Hassis-ը ոչ այլ ինչ է, քան Aza-ն գործիական հոլովով, ինչպես որ սովորաբար ուղեցույցների մեջ բերվում են իջևանների անունները: Cunissa-ն և Ziziola-ն միջանկյալ կայաններ են՝ առաջինը Draconis-ի և Aza-ի, իսկ երկրորդը՝ Aza-ի և Satala-ի միջև: Այդ բանի ապացույց է իջևանների միջև ընկած տարածությունը. ըստ Ant.-ի Գրակոնից մինչև Ադա 24 m. p. է, իսկ այնտեղից մինչև Սատալա՝ 26, բայց ըստ Peut.-ի Գրակոնից մինչև Կունիսա 13 m. p. է, իսկ այնտեղից մինչև Hassis՝ 10, ընդամենը՝ 23 Ant.-ի դիմաց, իսկ Hassis-ի և Ziziola-ի միջև ընկած տարածությունը 13 է, և այնտեղից մինչև Սատալա՝ 12, ընդամենը՝ 25 Ant.-ի 26-ի դիմաց: Տարբերությունը շատ աննշան է: Ինչ վերաբերում է երկրորդ իջևանին, որը մի վավերագրի մեջ Olotoedariza է, իսկ մյուսի մեջ՝ Caltiorissa, ապա երկու դեպքում էլ, ըստ երևույթին, խոսքը միևնույն կետի մասին է: Caltiorissa-ի ընթերցումը չի ճշտված, և նրա հեռավորությունը Draconis-ից ձեռագրերում ցույց չի տրված:

Նիկոպոլսից Սատալա տանող երկրորդ ճանապարհը Օլտոտոզարիզայի մոտ թերթվում էր դեպի հարավ և այժմ Զիմեն-դադ կոչվող լեռան լանջերով անցնում էր Garsat 24 Arauracos 24 Suissa 26 Satala կայաններով: Որ այդ գծի ուղղությունը մեր կողմից ճիշտ է ցույց տրված, հաստատվում է նրանով, որ այն ծառայել է որպես հաղորդակցության միջոց Սատալայի և Զիմարայի միջև — Satala Suissa 18 Arauracos 24 Garsagis 28 Sinervas 28 Analiba 16 Zimara: Քանի որ Սատալայից Նիկոպոլիս Եփրատի վրա Զիմարա տանող ճանապարհը անցնում էր միևնույն իջևաններով՝ Suissa, Arauracos և Garsagis կամ Carsat, ապա պետք է ենթադրել, որ հիշյալ կայանները գտնվում էին Լիկոս և Եփրատ գետերի

միջև, նրանց հոսանքին զուգահեռ, այլ խոսքով, վերահիշյալ Զեմեն լեռնաշղթայի ուղղությամբ: Ենդերեսից Երզնիզյան տանող խճուղին այժմ անցնում է Գերջանիսի մոտով: Այդ կայանը, որի անունը աղավաղված է, Garsanis փոխ. Garsagis կամ Garsat, կարող է նույնացվել այժմյան Գերջանիսի հետ:

Peut.-ին անծանոթ է Սատալայից Զիմարա տանող ճանապարհը, բայց մեջ են բերված՝ երկու ուրիշ գծեր, որոնք ուղղակի միացնում էին Զիմարան Նիկոպոլսի և հարևան Գրակոնի հետ: Nicopoli 21 Oleoberda 15 Caleorsissa 24 Analiba 15 Zimara.

Draconis 16 Haris 17 Elegarsina 8 Bubalia 27 Zimara. Նիկոպոլսի գիծը ամենայն հավանականությամբ անցնում էր Ակշեհի-սուխ ձախ ափով և համապատասխանում է ներկայումս գոյություն ունեցող ճանապարհին, որի վրա, ի միջի այլոց, Սինի-բել լեռներում կա նաև Գուլարես գյուղը: Դա պատմական Galeor-s-issa-ն է, որ գտնվում է Կարաբուզաղ գետի ափունքների մոտ և Զիմարայի մոտերքից հոսում է դեպի Եփրատ: Գրակոնյան գիծը ընկնում էր առաջինից մի քիչ ավելի արևելք: Եթե թույլատրելի է ընդունել, որ Elegarsina-ն առաջ է եկել հայերեն եղեգ-առին-ից՝ եղեգնյա գյուղ, ապա *eleg-aris-ina-ն Elegaris-ից կաղմված ածական է, որնմն այն կարելի է կապել այժմյան Կամըշլը-դերեին, որ հին հայկական անվան թարգմանությունն է և նշանակում է եղեգնյա ձոր: Կամըշլի-դերեն գտնվում է Գերջանիս գետակի մոտ, որ նույնպես Լիկոսի վտակներից մեկն է. ըստ երևույթին մեր փնտրած ճանապարհը անցնում էր այդ գետակի ուղղությամբ և շատ հավանական է, որ Draconis-ը գտնվում էր Խափուլ-Քյոփրու-ի տեղում՝ այնտեղ, որտեղ Գերջանիսը թափվում էր Լիկոսի մեջ: Նախավերջին Bubalia կայանն ընկնում էր Գարանաղիի գավառում, Analibla-ի կամ Analibna-ի հարևանությամբ, ինչպես որ ցույց է տալիս նրա անվանումը¹:

Զիմարայի և Մելիտենեի միջև Եփրատի ուղղությամբ ընկած էին՝
Ant. Zimara 16 Teucila 26 Saba 16 Dascusa 32 Ciaka 18 Melitena.

¹ Bub.ali-ից, ինչպես որ an-ali և an-alibna; Տամաշկ, Kiepert's *Festschrift*. p. 139, analibla-ն (pro analibna) առաջ եկած է համարում հայերեն անուղի-բլիս salzloser sprudel:

Tab. Zimara 18 Zenocopi 18 Vereuso 13 Saba 18 Dascusa 18 Hispa 18 Arangas 9 Craca 28 (18) Melentenis.

Երկու վավերագրերն էլ ըստ էության միևնույն ճանապարհուն են ցույց տալիս: Այդ ճանապարհի վրա այժմ քիչ թե շատ նշանավոր կետերն են Դիվրիզը, էզինը, Արաբկիրը, Արզուվանը, ինչպես նաև Շեփիկն ու Ադինը. սրանց միջով դեպի Մալաթիա են ձգվում խաչածևվող ճանապարհներ: 1868 թ. հետազոտողներից մեկը հոտմեական շրջանի ճանապարհի հետքեր է հայտնաբերել Սարը-չիչեկյան լեռներում՝ Դիվրիզի և Արաբկիրի միջև: Դիվրիզից ոչ հեռու, որտեղ Չալթա-իրմակ գետը թափվում է Եփրատի մեջ, կա մի իջևանատուն, որ կոչվում է Ուոուսիա՝ մի կայան, որն անկասկած հոտմեական կամ նույնիսկ հոտմեական ծագում ունի: Զիմարայից ճանապարհը հավանորեն այդտեղով անցնում էր դեպի վերոհիշյալ լեռները և այնուհետև Արաբկիրի ու Արզուվանի մոտով ձգվում դեպի Մելիտենի: Կայանների դասավորության վերաբերյալ ստույգ տվյալներ չկան: Teucila փոխ. Teucira, *Teurica-ից կարելի է համեմատել Դիվրիզի, հայոց Տիվրիկ, բյուզանդական Տեփրիկայի հետ¹:

Saba-ն կարծես թե համապատասխանում է Շեփիկին, որ գտնվում է Արաբկիրից մի քիչ հյուսիս. Dascusa-ն գտնվում է Ադինի շրջակայքում՝ Անգու գետի վրա, որտեղ մինչև օրս մնացել է բյուզանդական արձանագրությամբ մի կամուրջ, իսկ Hispa-ն Սերաջիկի տեղում է: Aranga-ն հիշեցնում է Արզուվանը, ըստ բյուզանդական հեղինակների՝ Արգաուունը²: Ciaca-ն կամ

¹ Taylor, *Journal of a Tour in Armentia*, 1866, t. 38, p. 309.
² Theoph. Cont, Τεφρική, p. 166 և շար.: Sym. Mag., p. 690 փոխ. Τεφρική-ի ընթերցում է *Αφρική համապատասխան արաբ հեղինակների qafa Abrig-ի, Le Strange, p. 119: Քաղաքի անունը հիշեցնում է հայերենի տափարակը, եթե միայն այն *տարիկ չէ՝ Տափրոսի նվազականը: Ըստ Իբն-Սեբադիանի գետը ետևոպես Abrig էր կոչվում: Նա թափվում է Եփրատ, ինչպես ինքն է նկարագրում, բերդի մոտ: Հավանական է, որ հին բերդը գտնվում էր Եփրատին ավելի մոտ, ներկա Աուումիա իջևանատան տեղում: Մյուս վայրի՝ Zenocopi-ի անունը կարծես թե իր մեջ ունի հայերեն կապ, կապան բառը. հմմտ. կամր-կապ, Կամարկապ, որ մի գյուղ է էզինի մոտ. Խճիխյան, էջ 307, որտեղ և մոտավորապես գտնվում էր պատմական Zenocopi-ն:

³ Theoph. Cont. *Αργαούν, p. 166. Անգու-սուի սկզբնական հոսանքը կոչվում է Գորաուկ, զարտ: Արգյո՞ք Aranga-ն հայոց արանգը՝ մողեսը չէ

Craca-ն նույնացվում է Եփրատի ափին գտնվող Ջերմուկին¹: Siniscolon-ը քաղաք է Մելիտենիում և, հավանորեն, Եփրատի ափին Քեբեան-մաղնիի մոտ գտնվող այժմյան Սինեբլուն է:

Մելիտենիից Սեբաստիա տանող հին ճանապարհը, հավանաբար, համապատասխանել է այժմյան ճանապարհին: Ant.-ի մեջ թվարկված կայանները կարելի է մոտավորապես նույնացնել այժմյան շատ թե քիչ հայտնի իջևանների հետ, որոնք գտնվում են այդ գծի վրա. այսպես՝ Pisonos-ը՝ Հասան-բադրիբի հետ, Ad praetorium-ը՝ Հասան-Չելեբիի, Aranis-ը՝ Ալաշախանի, Euspoena-ն՝ Դելիբլու-գաշի, Blandos-ը՝ Թախթուկի² հետ: Ծանապարհը ձգվում է Կուրու-չայ գետի հոսանքով, անցնում Թերզիկյան լեռների միջով և մի փոքրիկ գետակի ափերով հասնում է մինչև Սըվազ: Այս կայաններից Aranis-ը և Euspoena-ն հայտնի էին դեռևս ժ դարում: 906 թվականին Եվստաթիոսը՝ Արգիրոս մականունով, արքայվեց Խարսիստան. նա փորձեց փախչել հավանաբար արաբների մոտ՝ դավաճանությունը գերադասելով արքայից, բայց Առանայում նրա ուղեկիցները թունավորեցին, և թաղվեց Սպունդիոնում³: Պաղոմենոսը ևս Փոքր Հայքի քաղաքների շարքում հիշատակում է Aranis-ը Առանա ձևով: Թախթուկ կայանից ոչ հեռու գտնվում է Գյունդուզ բնակավայրը. եթե Գյունդուզը Թուրքերեն բառ չէ, ապա կարող է համեմատվել Ant.-ի Գունդուզայի և Պաղոմենոսի Գոդասայի հետ: Gundusa-ն ընկած էր Զարայից

(H. Mapp, *Φιζιολογ*, p. 50) և չի՞ հանդիսանում արդյոք Գորաուկ գետի հին համանունը:

¹ Tomaschek, *loc. cit.*, p. 139 և շարունակությունը:
² Խճիխյանի Աշխարհագրության մեջ Թախթուկ, էջ 293, և Թախթուկ, էջ 298, Կիպրոսի քարտեզում Tahdu, Kleinasiens: Ահա այսպիսին են գլխավոր կայանները ըստ Թուրքական Djahan Numa-ի, Խճիխյան, էջ 293: Կիպրոսը վերցնում է Թուրք-մաջը, Կանգալը, Ալաշախանը, Բալլեկայան և Հասան-բադրիբը: Վերջին կայանի փոխարեն Խճիխյանի մոտ Ներիմ-խան է, բայց քանի որ այն կառուցվել է վերջին ժամանակներս, ինչպես մասնաշրջում է ինքը՝ Խճիխյանը, էջ 323, ապա զերադասելի է Հասան-բադրիբը, որ ծանոթ էր դեռևս արաբական հեղինակներին, Tomaschek, *op. cit.*, p. 140:

³ Theoph. Cont. p. 374, καὶ ὁδοῦ δὲ εἰς τὸ Ἄραν φάρμακον παρὰ ἀνθρώπου οὐτοῦλαβῶν τέθνηκεν, καὶ θάπτεται εἰς τὸ Σπυνὶν τοῦ Ἄρα<v> τῆν κορυφῆν. Tomaschek, *op. cit.*, p. 147.

Կարող է պատահել, որ Պաղոմենոսի Φουφήνη pro Φου<σ>φήνη և Φουσί<α>-para հավասարազոր է Euspoena և Pisonos *Peut.*

Տոնոս տանող ճանապարհի վրա:

Zara 18 Eumeis 30 Gundusa 23 Zoana 25 Tonosa. Tonosa-ն այժմյան Տոնուան է, համանուն Կարատոնուս լեռան ստորոտում, Սըվազից դեպի հարավ: Մեր մատնանշած Գյունգուլը իր դիրքով համապատասխանում է պատմական Գունգուլային:

Քննարկված հաղորդակցության ճանապարհները կայանային պաճակակետերով հանդիսանում են Փոքր Հայքի համար նաև սահմանային գծեր: Հաստատապես գիտենք, որ Գագոնը Մերաստիա-Նիկոպոլիս գծի վրա մտնում էր Փոքր Հայքի մեջ: Պտղոմեոսի մոտ Նիկոպոլիս-Սատալա գծի վրա գտնվող Ազա իջևանը դուրս է մնում Փոքր Հայքի սահմաններից և մտնում է Կապադոկիայան Պոնտոսի մեջ: Մինչդեռ Պլինիոսը այն Նիկոպոլիսի հետ համարում է Փոքր Հայքինը¹, ըստ երևույթին Ազան գտնվում էր սահմանագլխին և այդ պատճառով էլ այն վերագրում էին մերթ Պոնտոսին, մերթ էլ Փոքր Հայքին: Մելիտենեի կողմից Գասկուսան և Իսպան Պտղոմեոսի մոտ դասված են Փոքր Հայքի քաղաքների շարքը, իսկ Կիական և նրա հարևան Սինիսկոլոն-Սինեբլյուն՝ Մելիտենեի ստրատեգիայի շարքը: Առանա կայանը Մելիտենե-Սերաստիա գծի վրա մնում է Փոքր Հայքում, նրան է պատկանում նաև Գոդասա-Գունգուլան:

Այսպիսով՝ Փոքր Հայքը, նեղ կամ պտղոմեոսյան իմաստով, ընդգրկում էր հյուսիսում Լիկոս-Կելկիթ գետի ավազանը՝ սկսած նրա ափունքներից մինչև Նիկոպոլիս և Ալիս-Կըզըլ-իրմակի վերին հոսանքը՝ մինչև Կեմիս, իսկ հարավում՝ Կանգալ-սու և Չաթա-իրմակ կոչվող Գիլրիզյան գետի ողջ համակարգը: Կուրուսու գետը կամ գոնե նրա ստորին հոսանքը ընկնում էր արդեն Մելիտենեի ստրատեգիայի մեջ: Փոքր Հայքի բաղկացուցիչ մասերը կազմող հինգ գավառներից հյուսիսային Օրբալիսենեն ընկած էր Լիկոս գետի ուղղությամբ: Հետևյալ երկուսը՝ Հայթուլանեն և Հայրեթիկեն, հարում էին Ալիսին, մեկը՝ աջ, իսկ մյուսը՝ ձախ կողմից: Օրսենեն և Օրբիսենեն զբաղվում էին Կանգալ գետի շրջանը, առաջինը՝ հավանաբար, հյուսիսում, իսկ երկրորդը՝ հարավում:

Փոքր Հայքում Օրսա քաղաքը, որ գիտնականները սխալմամբ մոտեցնում են Orsdara-ին, անկասկած, կարևոր կետ է Օրսենենում

¹ Plin. Nat. hist. VI 26, oppida celebrantur in minore (sc. Armenia) Caesarea, Aza, Nicopolis.

և իր անունը տվել է ամբողջ գավառին: Թվում է, թե իր անվան համար Օրսենենին է պարտական նաև բյուզանդական թեմերից (բանակաթեմերից) մեկը՝ Խարսիան-սնը, որն այդպես էր կոչվում նույն թեմում գտնվող Խարսիան խάστρον Χαρσιανόν ամրոցի անունով: Վերջինին դիրքը մեզ ստույգ հայտնի չէ: Անհաշու գործ է կատարվել մոտեցնելու այն Karissa, Garsi-ին, որ գտնվում էր Ամասիայից ոչ հեռու¹: Բյուզանդական պատմագիրների տվյալներից երևում է, որ հիշյալ ամրոցը գտնվում էր Իպսալայից ոչ հեռու. արարները իրենց խիզախ ձեռնարկումների ժամանակ հասել են մինչև Խարսիան-ոն և Իպսալա բերդերը², Իպսալան նույն անունով մինչև այժմ էլ կանգնած է Կեմիսից և Չարայից հյուսիս՝ դեպի Սնդերես տանող խճուղուց դուրս: Սըվազի և Կեմիսի միջև Ալիսի ձախ ափին գտնվում է հայաբնակ նորոսնա գյուղը³: Հենց դա էլ, անկասկած, պատմական Խարսիան-ն է: Արար աշխարհագիրների վկայություների համաձայն Խարսիանից մինչև Կեմիս մեկ օրվա ճանապարհ էր, որը խոսում է մեր առածների օգտին⁴: Կարիք չկա նորսիանը տանել հասցնել մինչև Գաղմեոսի Օրսան, թեև դրա համար արգելքներ չկան: Գաղմեոսը Օրսան հիշատակում է Վարսապայից անմիջապես հետո և այդ երկու վայրերն էլ տեղադրում է Փոքր Հայքում: Ոմանք առաջարկում են կարգալ Վարսասա՝ այն Արարիստի հետ նույնացնելու համար, ուրիշները ուղղում են Սարսապայի և այն հավասարեցնում են բյուզանդական Σαρσάπιον ամրոցի հետ, որ գտնվում էր Լիկանդա-Ալբիստանում՝ Արարիս-Յարփուլի մոտերքում, այժմյան Սարսար-սուի ափին: Իսկ Օրսան, ինչպես ասվեց, հնարավոր են համարում նույնացնել Osdara-ին, որ Մելիտենեից Կոկիսոն-Գյոթսուն տանող ճանապարհի վրա գտնվող կայաններից մեկն է. Melitena 26 Arcas 24 Dandaxena 24 Osdara 24 Plan-dari 38 Cocuso.

¹ Ramsay, Asia Minor p. 249—250.

² Theoph. p. 630, παρέλαβεν δόλω τὸ Χαρσιανού. χάστρον. Theoph. Cont. p. 354, ἡ πόλις ἢ ἐπάνωμος Ὑψηλή. Cedr. II p. 250, ἢ κατὰ τὸ Χαρσιανόν διαχειμένη πόλις ἢ Ὑψηλή. Tomaschek-ը վերոհիշյալ տվյալների հիման վրա Խարսիան փնտրում է Քոչ-հիսարի և Իպսալայի միջև օր. cit., p. 149:

³ Ինճիլյան, Աշխարհագրություն, էջ 288, նորսանա: Կիպրոսի քարտեզում՝

G h o r z a n a .

⁴ Tomaschek, p. 149.

Արկան գոյութիւն ունի մինչև այժմ և գտնվում է Մելիտենից արևմուտք: Ptanda-ն իրավամբ նույնացնում են Յարփուլից հյուսիս գտնվող Տանիրին: Դանդաքսենն և Օսդարան գտնվում են վերոհիշյալ երկու կետերի միջև: Osdara-ն սովորաբար նմանեցնում են Դերենդե, նախկին Տարանտե քաղաքի հարևանութամբ ընկած Արսլան-դաշին, որն իրենից ներկայացնում է զույգ առյուծների նմանվող ժայռ: Թե՛ մեկ և թե՛ մյուս ճշտումը չի կարող բավարար համարվել: Ptanda-ր համապատասխանում է Պոդանեսի Tanadaris քաղաքին, որ գտնվում է Կատտոնիայի ստրատեգիայում: Արսլան-դաշը և Սարսարան գտնվում են Մելիտենի և Կատտոնիայի ստրատեգիաների սահմանագլխին, մինչդեռ Օրսան և Վարսապան հիշատակվում են Փոքր Հայքի՝ նեղ իմաստով վերցրած բնակավայրերի շարքում: Եթե հնարավոր է Վարսապայի փոխարեն Սարսապա ընթերցումը, ապա ավելի հիմնավոր է այն նույնացնել Կորու-չայ գետի վրա գտնվող նույնպես Սարսապ կոչվող գյուղի հետ: Ինչ վերաբերում է Orsa-ին, ապա կասկածից դուրս է, որ այն գտնվում էր Օրսենեում, անկախ նրանից կրնդունե՞նք նրա նույնությունը այժմյան Խորսանա գյուղի հետ, թե՛ ոչ: Տեղագրական տեսակետից Խորսանան ավելի հարմար է դալիս Փոքր Հայքում գտնվող Օրսա քաղաքին, քան Օսդարան: որ գտնվում է նրա սահմաններից դուրս:

Հայաստանի տեղագրությանը վերաբերող Ant.-ի և Peut.-ի ավյալները թեև բավական անորոշ են կայանների տեղերը ճշտելու տեսակետից, սակայն ընդհանուր առմամբ բուն Փոքր Հայքը դժագրում են այնքան հստակ, որ բացառում են Արարկիր — Ἀραβραχί կամ Οὐαρσαπα — Ἀραβισσός-ի նման սխալ համեմատությունները: նման վրիպումները հետևանք են Փոքր Հայք տերմինի նեղ և ավելի լայն իմաստների մասին ոչ այնքան հստակ պատկերացում ունենալու: Փոքր Հայքը որպես Կասպագովկիայի մաս և Փոքր Հայքը որպես ուրույն նահանգ՝ բոլորովին տարբեր մեծություններ են:

Փոքր Հայքը Կասպագովկիայի կազմից անջատվեց Գիոկղե-տիանոսի օրոք: Նրան են վերագրվում նահանգների վարչական խոշոր վերակազմությունները: Այդ ուեֆորմներից դժողճ ժամա-

¹ Ինչպես, օրինակ, Le Strange-ի մոտ op. cit, p. 119:

նակակիցներից մեկի ասելով՝ «նահանգները մասնատվեցին փոքրիկ կոորդների և ոչ միայն գավառները, այլև քաղաքները ծանրաբեռնվեցին բազմաթիվ կառավարիչներով ու դիվանատներով»¹:

1862 թվականին առաջին անգամ հրատարակվեց մի հետաքրքիր հիշատակարան՝ Հոռոմեական պրովինցիաների, այսպես կոչված, Վերոնյան ցուցակը, որ ձեռագրերի մեջ կրում է nomina provinciarum omnium վերնագիրը: Ինչպես պարզվում է հրատարակչի ջննական վերլուծությունից, պրովինցիաների այդ հասարակ ցուցակը իր ներքին կազմով վերաբերում է երրորդ հարյուրամյակի վերջին՝ 297 թվականին: Ենթադրում են, որ Վերոնյան ցուցակը Գիոկղետիանոսի նահանգային պեֆորմն է²: Այդ ցուցակով մերոջ կայսրությունը բաժանվում էր 12 դիոցեզներին, որոնցից երկուսը, այն է Oriens և Pontica դիոցեզները կազմված էին առիական ծայրագույն տիրույթներից: Պոնտական դիոցեզը բազմացած էր յոթ նահանգից, որոնց թվում հիշվում է և Փոքր Հայքը:

Diocensis Pontica habet provincias numero VII:

Bithinia

Cappadocia

Galatia

Paphlagonia, nunc in duas divisa

Miospontus

Pontus Polemiacus

Armenia minor, nunc et maior addita.

Թուր 12 դիոցեզները միասին ունեին 95 նահանգ, մինչդեռ, երբ Գիոկղետիանոսը զահ բարձրացավ, Հոռոմեական կայսրությունը, որ Տրայանոսի ժամանակվանից սկսած ընդարձակվել էր ևս 15 նահանգով, ուներ ընդամենը 57 նահանգ: 38 նոր նահանգներից (95—57) Գիոկղետիանոսին հաստատապես վերագրվում է զլիավորապես առիական 15 նահանգների, որոնց թվում նաև Փոքր Հայքի³ ստեղծումը:

¹ Lact. De morte persec. cap. 7, provinciae quoque in frusta concisae, multi praesides et plura officia singulis regionibus ac paene jam civitatibus incubare, Migne, VII 204. Lat.

² Mommsen, Abhand. d. Akad. d. Wiss. zu Berlin, 1862, p. 489.

³ Camille Jullian, De la réforme provinciale attribuée à Dioclétien, Revue Historique, t. XIX, 1882.

Կա Վերոնյան ցուցակի նման մի այլ հիշատակարան ևս. մենք նկատի ունենք *Laterculus Polemii Silvii*-ան, որի հեղինակը՝ Պոզեմիոս Սիլվիոսը, թեև ապրել է Ն դարի առաջին կեսին և ինչպես ինքն է ասում, իր աշխատությունը գրել է Ջենոնի և Պոստումիոսի հյուպատոսության ժամանակ, այսինքն՝ 448 թվականին, բայց նրա կատարելու իր բովանդակությամբ ավելի հին ժամանակների է վերաբերում: Մոմզենը կարծում է, որ այն կազմված է 386 թվականից ոչ ուշ, որովհետև այնտեղ չեն հիշատակված մի քանի նահանգներ, որոնք այդ թվականին արդեն հայտնի էին¹: Ըստ կատարելու Պոստոսն ունեցել է 8 նահանգ՝ *in Ponto VIII*:

- | | |
|---------------------|-----------------|
| 1 Pontus Polemiacus | 5 Paflagonia |
| 2 Pontus Amasia | 6 Armenia minor |
| 3 Honoriada | 7 Armenia maior |
| 4 Bithynia | 8 Cappadocia. |

Pontus Amasia-ն, Պոնտոսը՝ Ամասիա քաղաքով, հավասարազոր է Վերոնյան ցուցակի Դիոսպոնտոսին, որը Կոստանդին Մեծի օրոք ի պատիվ նրա մոր՝ Հելլենի վերանվանվեց *Helenopontus*²: Հանսրիպան կազմվել է Թեոդոս Ա-ի օրոք, գլխավորապես Բյուզանդիայի հողերից՝ ի պատիվ Հոնորիոսի, հավանորեն, նրա ծննդյան օրվա առթիվ՝ 384 թ.³:

Հակառակ պատմական իրականության Փոքր Հայքի հետ միասին նահանգների շարքն է դասված նաև Մեծ Հայքը: Բայց սխալ համարակալումը.

Septima: Armenia minor

Sexta: Armenia maior

արդեն կասկածի տակ է առնում մեզ հասած ցուցակի ճշտությունը: Ընթացողում են, որ խոսքը վերաբերում է I և II Հայքերին, որոնք *Laterculus*-ի հեղինակը կարող էր կոչել Փոքր և Մեծ, որովհետև II Հայքը իսկապես բավականին մեծ էր Փոքր Հայքից⁴: Այս մեկնությունը դեպքում թվահամարների տեղափոխությունն այնուամենայնիվ անհասկանալի է մնում: Մեր կար-

¹ Abhand. d. Sachs, Ges. d. Wiss. 1857. p. 233 և Adh. d. Berl. Acad. 1862 էջ 489.

² Just. Nov. 28.

³ Malala, p. 365, սխալ կերպով վերագրում է Թեոդոսիոս Բ-ին:

⁴ K. Güterbock, Römisch-Armenien, p. 25.

ծիքով դա բացատրվում է նրանով, որ Պոզեմիոսի ցուցակում բաց է թողնված Գաղատիա նահանգը: Վերոնյան ցուցակում, ինչպես հետո նաև *Not. dign.*-ում, Գաղատիան զրված է Պոնտոսի թեմի մեջ, մինչդեռ *Laterculus*-ի մեջ այն փոխադրված է Ասիայի թեմը, թերևս այն բանի հետևանքով, որ կատարելու ժամանակ Գաղատիան հարևան Հելլեսպոնտոսի հետ միասին ժամանակավորապես կառավարվում էր միևնույն կառավարչի կողմից: Ինչպես էլ բացատրելու լինենք Գաղատիայի տեղաշարժը, մի բան պարզ է, որ նա է նահանգների ցանկի մեջ տեղի ունեցած թվահամարների հիշյալ տեղափոխության պատճառ դարձել: Երկու հիշատակարաններն էլ բավականին նման են միմյանց. կատարելու հեղինակը իր տրամադրության տակ ունեցել է Վերոնյան ցուցակին շատ մոտ ազդուր: Այս վերջինի մեջ *Armenia minor* բառերից հետո ընթերցվում է *nunc et maior addita*: Այս դիտարկությունը մտել է կատարելուի մեջ, և երբ Գաղատիան այս կամ այն պատճառով դուրս է մնացել ցուցակից, որի հետևանքով էլ գաղտնիքի թիվը վերագրում ցույց տրված 8-ի փոխարեն իջել է 7-ի, ապա այդ մեղքը լրացնելու համար բաց թողնված նահանգի փոխարեն առաջ է բաշխել Մեծ Հայքը որպես առանձին նահանգ: Դրա հետ մեկտեղ այն պահել է իր նախկին տեղը և նրան տրվել է *Sextia* թվահամարը, որի տակ ցանկում սկզբում զրված է եղել Գաղատիան: Սկզբնական տեքստը եղել է այսպես.

Ponto VIII. 1 Pontus Polemiacus, 2 Pontus Amasia, 3 Honoriada, 4 Bithynia, 5 Paflagonia, <6 Galatia>, 7 Armenia minor, nunc et maior, 8 Cappadocia.

Ինչ վերաբերում է *nunc et maior*-ի հավելման վավերականությանը, ապա այդ մասին, անշուշտ, կարելի է վիճել: Եթե անգամ սա ներմուծվել է հետո, համենայն դեպս, այդ տեղի է ունեցել շատ վաղուց, նկատի առնելով նրա առկայությունը Պոզեմիոս Սիլվիոսի կատարելում: Վերոնյան ցուցակը և կատարելուը պատկանում են այն ժամանակներին, երբ Հայաստանի ճակատադրի մեջ տեղի էին ունենում մեծ փոփոխություններ: Մեծ Հայքին վերաբերող կասկածելի հավելումը, ճիշտ է, զուրկ է պատմական հիմքից, բայց Վերոնյան ցուցակում այն կարող էր ունենալ 298 թվականի քաղաքական դեպքերի որոշակի ակնարկի բնույթ, երբ Սասանյանների կողմից ցնցված հայ Արշակունիների գահը հոմանայինների օգնությամբ նորից վերականգնվեց Մեծ Հայքում:

Այդ ժամանակվանից սկսած՝ Հայաստանն ընկավ կայսրերի քաղաքական ազդեցության տակ կամ, ինչպես պատմագիրն է արտահայտվում, դարձավ *juri Romano obnoxia*¹ և սկսեց օգտվել նրանց հովանավորությունից: Վերոհյան ցուցակի նշումը ընդօրինակեց Սիրվիստը, որովհետև նա համապատասխանում էր այն նոր իրավիճակին, որ ստեղծվել էր նրա օրոք՝ Վ դարի վերջին, և որի հետևանքով Հայաստանը բաժանվեց երկու մասի, որոնցից մեկը անցավ հռոմեացիներին:

Նոր կազմված Փոքր Հայք նահանգը իբրև ուրույն վարչական միավոր ներկայացված է Նիկիայի 325 թ. տիեզերական ժողովում Մեծ Հայքի, Կապադովկիայի և հարևան մյուս նահանգների շարքում:

Վաղևս կայսրը 371 թ. Կապադովկիան բաժանեց երկու նահանգի՝ Առաջին և Երկրորդ Կապադովկիաների²: Թեոդոսիոս Մեծի 386 թ. հրամանագրում II Հայքը Կոմանա և Արիարաթիա քաղաքներով առաջին անգամ հիշատակվում է Երկրորդ Կապադովկիայի և Հելլենոպոնտոսի կողքին³: Բնական է ենթադրել, որ Փոքր Հայքի բաժանումը տեղի է ունեցել Կապադովկիայի հետ միաժամանակ, այսինքն՝ 371 թվականին: Բայց դրան խանգարում է այն հանգամանքը, որ Ամմիանոսը, որն իր աշխատությունը հասցնում է մինչև 378 թ., խոսում է միայն Փոքր Հայքի մասին և, ըստ երևույթին, զիտե նրա մասին որպես ղեռնա մի ամբողջություն⁴: Այդ ձևով է ներկայանում մեզ Փոքր Հայքը նաև 381 թվականի Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովում: Սակայն այստեղ Կապադովկիան էլ ներկայացված է իբրև ղեռնա անբաժան երկրամաս, հակառակ տասը տարի առաջ կատարված բաժանման: Եկեղեցական հիերարխիան, ըստ երևույթին, ղեռնա չէր կարողացել հարմարվել նոր իրավիճակին, և եկեղեցական տեսակետից

¹ Amm. XXIII, 5:

² Greg. Theol. *Oratio*, XLIII 58, τῆς γὰρ πατρίδος ἡμῶν εἰς δύο διαιρέθεισος ἡγεμονίας καὶ μητροπόλεις: *Հմմտ.* Malala, p. 342, Βάλης καὶ τὴν δεύτεραν Καππαδοκίαν ἐποίησεν ἐπαρχίαν, ἀπομέρισσας αὐτὴν ἀπὸ τῆς πρώτης.

³ Cod. Theod. XIII II 2=Cod. Iust. XI 47. 10; per. Commanensium et Ariarathensium Armeniae secundae, Amasenorum Helenoponti et Diocaesarensium Cappadociae secundae urbes. D. VI k. April. Cpl. Honorio et Euodio cons. (a. 386). *Թեոդոսիոսի* 420 թ. *ղեկերաք* C. I. VIII 10. 10, *զիտե* utramque Armeniam, *այսինքն* I և II Հայք:

⁴ Amm. XIX 9, 12. XX 11, 4:

Կապադովկիան շարունակում էր մնալ իբրև մեկ նահանգ¹: Բարսեղ Կեսարացին բողոքեց Կապադովկիայի բաժանման գեմ². Համարելով այն անմատչելի, ըստ նրա սուր համեմատություն, դա նույնն է, եթե մեկը իր ձին կամ եզը երկու կես անի, մեկի փոխարեն երկուսն ունենալու հույսով, չհասկանալով, որ իրականում նա զրկվում է իր ունեցածից: Երկրում տիրող զգաճուքը, որի արտահայտիչը եղավ Բարսեղ Կեսարացին, հավանաբար անուղղակիորեն այն ազդեցությունն ունեցավ, որ Փոքր Հայքի վերակազմությունը առժամանակ հետաձգվեց:

Քանի որ 386 թվականին, ինչպես ցույց տրվեց, արդեն հիշատակվում է Փոքր Հայքը, ապա պետք է ենթադրել, որ Վաղեսի մտազրույթունը իրագործվել է նրա հաջորդի՝ Թեոդոսիոսի օրոք՝ 378 և 386 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում: Փոքր Հայքը բաժանվեց երկու մասի՝ I և II Հայքի: I Հայքը կազմված էր Սեբաստիանի շրջանից՝ իր մեջ ունենալով Սեբաստիա մայրաքաղաքից բացի, Նիկուպոլիս, Կոզոնիա, Սատալա, Սեբաստոպոլիս և Վերիսա քաղաքները: Իսկ II Հայքի մեջ մտնում էին Մելիտենեն, Արկան, Արարատքը, Կուկուտեքը, Կոմանան և Արիարաթիան: I Հայքին սահմանակից Պողոմոնական Պոնտոս նահանգը գրավում էր նեոկեսարիա, Կոմանա (Պոնտական), Պողոմոնիոն, Կերասուս և Տրապիզոն քաղաքների շրջանները:

Նորակազմ նահանգների գրաված տերիտորիայի մասին տվյալներ հաղորդում է զլխավորապես եկեղեցական աշխարհագրությունը: Եկեղեցական բաժանումները աչքի են ընկնում իրենց առավել կայունությամբ: Արտացոլելով Թեոդոսիոսի ժամանակների վարչական ճիշտ պատկերը, նրանք հետադարձում էլ մնացին անփոփոխ և կարողացան խուսափել Հուստինիանոսի կատարած նահանգային փոփոխություններից:

¹ Ժողովի մասնակիցների ցուցակը տե՛ս Mansi-ի մոտ, III 568: Հունական բնագիրը հաստատվել է պ. Բենեշիչի XIV տիտղոսների կանոնավոր ժողովածուի հավելվածում, էջ 87. 'Αρμενία μικρά Μελητηνή և 'Αραβισσός քաղաքներով, Καππαδοκία Καισαρεία, Νύση, Τύανα, Κολωνία, Παρνασσός Ναζιανζός քաղաքներով:

² Bas. Mag. *epist.* 74, μήτοι νομίζειν αὐτοὺς δύο κεκτησθαι ἀντὶ μιας ἐπαρχίας... ἄλλα παραπλήσιον τι πεποιήσασιν, ὥσπερ ἂν εἴ τις ἵππον ἢ βοῦν κεκτημένος, εἶτα διχῆ διελῶν, δύο νομίζοι ἔχειν ἓνος ἀντι. οὔτε γὰρ δύο ἐποίησε, καὶ τὸν ἓνα διέφθειρεν, Migne XXXII p. 445.

Է դարի հեղինակ Գևորգ Կիրարացու տեղեկությունները համապատասխանում են Ս դարի Էջեղեցական ժողովների արձանագրությունների աշխարհագրական տվյալներին, ինչպես կարելի է համոզվել ստորև բերված ցուցակից: Քաղկեդոնի ժողովից հետո Ալեքսանդրիայում ծագած խռովությունների հետևանքով Առն կայսրը հարցումով դիմեց Եկեղեցական բոլոր թեմերին: Մեզ հասել են թեմերի պատասխան գրությունները մասնակիցների՝ եպիսկոպոսական աթոռների ներկայացուցիչների ստորագրություններով: Նրանց մեջ I և II Հայքերը ներկայացված են ավելի լրիվ, քան Քաղկեդոնի ժողովի արձանագրություններում, այդ պատճառով էլ աղյուսակում մեջ ենք բերում գրությունների տվյալները:

ad Leonem¹ 453 թ. Hierocl. ժոտ. 530 թ. G. Cyprii VII գ.

I Հայքի եկեղեցական բերք

1 Sebastia	Շեբաստիա	Շեբաստիա
2 Nicopolis	Նիկոպոլիս	Նիկոպոլիս
5 Colona	Կոլոնիա	Կոլոնեիա
6 S-Ataleni	Տատալա	Տատալա
3 Sebastopolis	Շեբաստոպոլիս	Շեբաստոպոլիս
4 Bariss-ar-a	—	Բրիսսի.

II Հայքի եկեղեցական բերք

1 Melitena	Մելիտին	Մելիտին
2 Arca	՝Արքա	՝Արքա
3 Arabissus	՝Արաբիսոս	՝Արաբիսոս
4 <Cucusus>	Կոկոսոս	Կոկոսոս
5 <Comana>	Կոմանա	Կեոմանա
6 Ariaratha	՝Արարաթիա	՝Արարաթի.

I և II Հայքերը իրենց տարածությունը նախկին Փոքր Հայքից ավելի մեծ են: Սահմաններն ընդարձակվեցին զլիսավորապես երկու մասի բաժանվելու ժամանակ: Կողոնիան գեոևս 381 թ. համարվում էր Կապադոկիայի մասը, ինչպես այդ երևում է ժողովին մասնակցած հայրերի ցուցակից: Մենք արգեն նշել ենք, որ սահմանների մասնակի ընդարձակում տեղի ունեցավ նաև Կապադոկիայի կազմից անջատվելու ժամանակ:

Փոքր Հայքի բաժանումը այս ձևով մնաց մինչև Հուստինիանոսի ժամանակները:

¹ Mansi, VII p. 590.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻՑ ԱՌԱՋ

Կայսրության ընդհանուր վարչակարգը: Քաղաքացիական և զինվորական իշխանությունները, նրանց զլիսավոր մարմինները: I. I և II Հայքերը վարչական նիւթարխայի մեջ: Նրանց զինվորական դուքսերը: *Dux Armeniae*. Նրանց հրամանատարության տակ գտնվող զորամասերը և սրանց բանակը: Ջարներ գառավարությունը եկրում: Զինվորական պանակակետեր՝ զլիսավոր և եկրագրական: Հրամանատարների ստիբանները: Հայաստանի ղուբսի ղեկը նիւթարխայի մեջ: Նրա ղեկավարները: Գեոեիայի փոխադարձի և Նախաստի գեոեի *Coditillus dignitatum*: II. Սատրապությունների և ներքին Հայքի գեոեիական և իրավական զինակը: Ֆեդրատի հաստատությունը *foedus non aequum*-ի նիման վրա: Այդ հաստատության տարբերակները: Ֆեդրատ հաստատությունը բյուզանդական աշխարհում: Սատրապներ — ֆեդրատներ: Կայսրության եկամտավոր դաշնակցային հարաբերության գծերը: Սատրապական իրավունքի ծագումը: Կաշնագրային ակտի տարբեր կայսրությունը միանալով զինակում: Ներքին Հայքի ֆեդրատային երկիր: Նրա միացումը կայսրությանը: Մրացման պայմանները և դրանց դաշնագրային սկզբունքը: Ազգաբախում և *aurum coronarium*: Գժրու ծրագրում: մասին հարցը: *Comes Armeniae*: Կամեսի աստիճանը, նրա իրավասության սահմանները: Երջոսոս ծրագրում: մասին հարցը: Կամեսի վերաբերմանը նիւթարխային նիւթարխային: Նիւթարխայինները ներքին Հայքում:

Համեմատական կայսրության ներքին կառուցվածքը Հուստինիանոսի դարում իր հիմքում սկիզբ է առնում այն կարգերից, որոնց ստեղծողը իրավամբ համարվում է Դիոկղետիանոսը¹: Պետական ընդհանուր կառուցվածքի նորոգման ուղղությամբ նրա սկսած գործը շարունակվեցին հաջորդները: Այն հասկապես մեծ թափ ստացավ Փլեգոսիոս Ա կայսեր օրոք: Դարավոր աշխատանքի արդյունքնե-

¹ cf. Gibbon, *Decline and fall of the Roman empire*, c. XIII, like Augustus, Diocletian may be considered as the founder of a new empire ed. Bury, I p. 351:

յը որոշ ձև ու կերպարանք ստացան, որոնք արտացոլված են *Notitia dignitatum* կոչվող հայտնի հուշարձանում¹: Վերջինս վերաբերում է հինգերորդ դարի սկզբին: Այդ յուրահատուկ վավերագիրը ոչ այլ ինչ է, քան կայսրության քաղաքացիական և զինվորական բոլոր պաշտոնների ու աստիճանների մանրամասն թվարկումը: Այն հստակ գաղափար է տալիս բրիտանյա միապետների կողմից ստեղծված պետական մեքենայի մասին, որը կարելի է բնութագրել այժմյան բյուրոկրատիզմ բառով: Կայսրության հռչակած միահեծանության սկզբունքը անխուսափելիորեն պետք է հանգեցնեի ղեկավարման այնպիսի համակարգի, որ համապատասխաներ միահեծանության նպատակներին. պաշտոնատարների մի ամբողջ ցանցի ստեղծումով ըստ էության ավելանում էր այն մարմինների թիվը, որոնց միջոցով գործում էր իշխանությունը: Մյուս կողմից, իշխանությունը բաժանելով բազմաթիվ պաշտոնատարների միջև, որոնք ստորազատված էին թարգմանչից, էին մեկը մյուսին, ուժեղացվում էր հսկողությունը նրանց վրա, և զրանով կանխվում էր դիմադրության որևէ հնարավորություն:

Not. dign.-ի մեջ քաղաքացիական իշխանությունը անշատված է գինվորականից, նրանցից յուրաքանչյուրը առանձին վարչական գերատեսչություն էր: Այդ ութորոշ վերագրվում է Կոստանդին Մեծին²:

Քաղաքացիական առումով ամբողջ կայսրությունը բաժանված էր չորս երկրամասի, որոնց գլուխը կանգնած էին պրեպոսիտի կան պրեֆեկտները, *praefecti praetorio*: Երկրամասերը

¹ *Notitia dignitatum et administrationum omnium tam civilium quam militarium in partibus Orientis et Occidentis*, ed. E. Böcking, 1839: Բյուզնդի հրատարակությունը, շնորհիվ մանրամասն և պատմական վերին աստիճանի արժեքավոր մեկնարանությունների, չի կարելի համարել Սեկի լույս ընծայած նոր և, անտարակույս, ավելի քննական հրատարակության կողմից դուրս մղված. Seeck, 1872 թ.: Իր մի առանձին ուսումնասիրության մեջ *Über die Not. dig. 1834* թ. Բյուզնդը, քննության ենթարկելով իրենից առաջ գոյություն ունեցող բոլոր կարծիքները *Not.*-ի կազմության ժամանակի մասին, գալիս է այն եզրակացության, որ այդ հուշարձանը ստեղծվել է 399 թվից հետո, Քենոզիոս Բ-ի ժամանակ, մոտավորապես 404 թվին: Այդ ժամանակվան է վերագրում նաև Tillemont-ը, *Hist. des empereurs* VI, 476 և 733—6: Այժմ ավելի հավանական է համարվում Սեկի կարծիքը, որը *Not.*-ը թվագրում է 413—415 թթ., տե՛ս *Questiones de Not. dign. 1872*:

² Zosim, II, 33.

կամ պրեֆեկտուրաները բաժանվում էին զիոցեզներին, որոնք կառավարում էին պրեֆեկտուրի տեղակալները *vicarii praefectorum*: Վերջապես, զիոցեզներն էլ իրենց հերթին տրոհվում էին նահանգներին, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր կառավարիչը, որ սովորաբար կոչվում էր *praeses*, հունարեն՝ *ἄρχων*:

Կայսրության արևելյան մասը բաղկացած էր երկու պրեֆեկտուրայից՝ *praefectus praetorio Orientis* և *p.p. Illyrici*: Դրանցից առաջինը, այսինքն՝ Արևելքի պրեֆեկտուրան բաղկացած էր հետևյալ հինգ զիոցեզներից՝ *Oriens, Aegyptus, Asiana, Pontica, Thracia*:

Պոնտոսի զիոցեզը ուներ տասնմեկ նահանգ, սրոնց թվում նշվում են հայկական հողերը՝ I Հայքը և II Հայքը, ինչպես նաև Պողեմոնական Պոնտոսը:

Sub dispositione viri spectabilis Vicarii dioceseos Ponticae provinciae infrascriptae: 1 Bithynia, 2 Galatia, 3 Pafliagonia, 4 Honorias, 5 Galatia Salutaris, 6 Cappadocia prima, 7 Cappadocia secunda, 8 Helenopontus, 9 Pontus Polemoniacus, 10 Armenia prima, 11 Armenia secunda.

I

I և II Հայքի գլուխ կանգնած էին պրեզիդենտները, որոնք ենթարկվում էին պրեֆեկտի տեղակալին: Զինվորական բաժանումները ամեն տեղ չէ, որ համապատասխանում էին քաղաքացիականին: Բարձրագույն իշխանությունը բաժանվում էր մի քանի զորապետների՝ *Magistri militum*-ների միջև: Ըստ *Not. dign.*-ի կայսրության արևելյան մասում կային այդպիսի հինգ զորապետներ. նրանցից երկուսը գտնվում էին մայրաքաղաքում՝ արբանիքին կից, և կոչվում էին *magistri militum praesentales*, իսկ երեքը՝ նահանգներում՝ Թրակիայում, Իլլիրիայում և Արևելքում և կոչվում էին *magistri militum per Thracias, per Illyricum, per Orientem*:

Magister militum զորապետը գինվորական իշխանության նույնպիսի ներկայացուցիչ էր, ինչպիսին էր պրետորիական պրեֆեկտը՝ *praefectus praetorio*-ն, քաղաքացիական գծով: Մագիստրոսներից հետո հաջորդ աստիճանը դուքսերն ու կոմեսներն էին, *duces, comites, rei militaris*: Իրենց հիերարխիկ դիրքով նրանք

հավասարեցված էին պրեֆեկտի տեղակալներին, քանի որ թե՛ մեկը, և թե՛ մյուսը *spectabilis*-ի աստիճան ունեին, բայց նրանց ենթակա օկրուդներն իրենց շափերով նշանակալիորեն զիջում էին դիոցեզներին. այդ տեսակետից դուքսերն ավելի շուտ նմանվում էին նահանգների կառավարիչներին՝ *praesides*: Թե ինչպիսի հարաբերության մեջ էին դուքսերն ու կոմեսները զորապետների նկատմամբ, հայտնի չէ. *Not. dign.*-ի մեջ այդ մասին ոչ մի տեղեկություն չկա: Ենթադրվում է, որ նրանք ենթարկվում էին այս վերջիններին, բայց ինչպե՞ս և ի՞նչ շափով, անորոշ է¹:

Ինչպես զորապետները, այնպես էլ դուքսերը իրենց տրամադրության տակ ունեին որոշակի քանակությամբ զինվորական ուժեր: Արևելքի զորապետի զինվորական ուժը որոշվում էր հետևյալ ձևով.

Sub dispositione viri illistris magistri militum per Orientem:
 Vexillationes comitatenses decem
 Auxilia palatino duo
 Legiones comitatenses IX
 Item pseudocomitatenses X²

Ինչպես հայտնի է, լեգեոնները հանդիսանում էին կանոնավոր բանակ: *Not. dign.*-ը տարբերում է երեք լեգեոն՝ *palatinae*՝ պալատական, *comitatenses*՝ ճամբարային և *pseudocomitatenses*՝ կեղծ ճամբարային: Առաջին երկու անվանումներով սկզբնապես հայտնի էին այն զինվորականները, որոնցից կազմված էր կայսրի թիկնապա՛հ զորքը, առաջինները՝ արքունիքում, իսկ մյուսները՝ արշավանքի ժամանակ: Այն ժամանակ նրանց թիվը սահմանափակ էր: Հետագայում *palatinae* և *comitatenses*-ները աճեցին ու զերազանցեցին իրենց ստուգաբանական նշանակությանը և ի տարբերություն սահմանային և բերդապա՛հ զորքերի՝ *milites limitanei* կազմեցին գործող բանակի կորիզը: Կեղծ ճամբարային էին կոչվում այն լե-

¹ Bethman Hollweg, *Civilprocess*, III, § 135, p. 83.

² *Not. dign.*-ը թվարկում է լեգեոնները անուն առ անուն, բերում ենք միայն *pseudo-comitatenses*-ի ցուցակը.

- | | |
|-----------------------|---------------------------|
| Prima Armeniaca. | Quarta Italica. |
| Secunda Armeniaca. | Sexta Parthica. |
| Fortenses auxiliarii. | Prima Isauria sagittaria. |
| Fundiflores. | Balistarum Theodosiaci. |
| Prima Italica. | Transfregitani. |

գեոնները, որոնք կազմվել էին ճամբարայինների օրինակով, բայց չունեին նրանց իրավունքները. նրանք չէին ստանում *majus stipendium*, ինչպես պալատական և ճամբարային լեգեոնները:

Not. dign.-ին ժամանակակից զինվորական գրող Վեգետիոս Հաննատոսի (383—450) վկայությամբ լեգեոնը բաղկացած էր 6100 հետևակ զինվորից և 726 հեծյալից: Զ դարի հեղինակ Հովհանն Լյուդագին լեգեոնում նույնպես հաշվում էր 6000 զինվոր: Գարձյալ նրա վկայությամբ *vexillatio*-ն 500 հեծյալից բաղկացած մի գումարտակ էր, իսկ *ala*-ն՝ 600 հեծյալից բաղկացած ջոկատ¹: *Not. dign.*-ի մեջ հիշատակված են *vexillationes palatinae* և *vexillationes comitatenses*-ը, բայց ոչինչ չի ասված *vexillationes pseudocomitatenses*-ի մասին: Հավանորեն այն ժամանակ առաջին երկու զորատեսակների լեգեոնների կազմից հեծելազորն առանձնացվել է, և նրանցից կազմվել է հատուկ հեծյալ գումարտակ, այնինչ *pseudocomitatenses*-ում այն պահպանված է հին ձևով: Նույն Վեգետիոսի մեկնարանությամբ *auxilia*-ները այն զորամասերն էին, որոնք կազմվում էին կայսրության այլազգի հպատակներից:

Այսպիսով՝

- 10 *vexillationes* յուրաքանչյուրը 500 հոգուց՝ կազմում է 5000 զինվոր.
- 9 *comitatenses* յուրաքանչյուրը 6000 հոգուց՝ կազմում է 54000 զինվոր.
- 10 *pseudo-comit.* յուրաքանչյուրը 6000 հոգուց՝ կազմում է 60000 զինվոր.
- և յուրաքանչյուրը 726, resp. 500 հեծյալ՝ կազմում է 7260 resp. 5000 հեծյալ.
- 2 *auxilia*, որոնց թիվը անորոշ է²:

¹ Vegetii Renati, *Epitoma rei militaris*, II 6: Հովհանն Լյուդագին, որ ծանոթ է եղել Հաննատոսի գործին, Ψεγάτον, *De mag.* p. 159, ἄλας ἀπὸ ἐξακοσίων ἰππέων, βηξιλιατίας ἀπὸ πεντακοσίων τοξοτῶν ἰππέων, καὶ λεγιῶνας ἀπὸ ἐξακοσίων πεζῶν καὶ ἕρητων ἰππέων. ib. p. 157, *quibus* է, որ *vexillationes* անուշ ծագում է *vexillum*, դրոշ-ից. նրանք կազմված են նախկին *vexilla*, *veteranorum* կամ *vexillarii* զորամասերից, որոնք կազմվում էին 20 տարի ծառայած վետերաններից:

² Renatus, ib. II 1, *auxilia a sociis vel foederatis gentibus mitteban-*

Նկատի ունենալով, որ լեգեոնները միշտ չէ, որ լրիվ կազմ էին ունենում, կարելի է ասել, որ Արևելքի զորապետի հրամանատարության տակ գտնվում էր կլորացված թվով 100.000 հոգուց բաղկացած մի բանակ: Ենթադրում են, որ բանակը շրջաններում սեղաբաշխված էր զինվորիկներով, որոնց զլուխ կանգնած էին *viri spectabiles duces* կամ *comites rei militaris*-ները¹: Այս ենթադրությանը կարելի էլինենր նախապես պարզել մագիստրոսների և դուքսերի հարաբերության հարցը, սակայն այդ ճիշտ կլինենր միայն Արևմտյան կայսրության վերաբերյալ, որտեղ, ինչպես ասված է *Not. dign.*-ում, դուքսերն ու կոմեսները ենթարկվում էին մագիստրոսներին. *sub dispositione viri illustris magistri peditum praesentalis comites militum sex, duces limitum decem*: Մինչդեռ կայսրության Արևելյան մասի վերաբերյալ նման տեղեկություններ չկան, և դուքսերի ու զինվորական կոմեսների զորագնդերը չեն հիշատակվում այն լեգեոնական ուժերի թվում, որոնք զբաղված էին *sub dispositione magistri*-ի տրամադրության տակ, մի հանգամանք, որ ավելի շուտ խոսում է դուքսերի՝ որպես որոշակի անկախություն ունեցող զինվորական հրամանատարների օգտին:

Պոնտական դիոցեզում, որ բաղկացած էր տասնմեկ նահանգից, կար միայն մեկ դուքս՝ *dux Armeniae*, որի իշխանությունը տարածվում էր երեք նահանգների՝ I Հայքի, II Հայքի ու Պողեմոնական Պոնտոսի վրա: Մյուս նահանգների, ինչպես նաև դիոցեզների զինվորական կազմակերպության մասին ոչինչ հայտնի չէ: Արևելքի դիոցեզում, որն ուներ տասնհինգ նահանգ, միայն մի քանիսը՝ *dux Palaestinae Foenices, Arabiae, Euphratensis et Syriae, Osrhoenae, Mesopotamiae*, ունեին հատուկ դուքսեր, մնացած նահանգները, որտեղ զինվորական հատուկ ներկայացուցիչներ չկային, հավանորեն գտնվում էին *magistri militum*-ի անմիջական հսկողության տակ, և նրա զորամասերը տեղաբաշխված էին հենց այդ շրջաններում:

Ինչ վերաբերում է դուքսերի կախմանը մագիստրոսից, ապա այդ ավելի շատ արտահայտվում էր դատական, քան զինվորական գործերում: Քրեական հանցագործության մեջ մեղադրվող

tur... II 2, auxillares ex diversis locis, ex diversis numeris venientes, nec disciplina inter se nec notitia nec affectione consentiunt.

¹ Виллемс, Римское госуд. право, т. III, стр. 714.

զինվորականները ենթակա էին մագիստրոսի կամ դուքսի դատաստանին՝ նայած ում բանակում էին ծառայում: Եթե մեղադրվում էր ինչ-որ բան կամ զինվորական կոմեսը, ապա այդ դեպքում սուրբ քննում էր անձամբ մագիստրոսը: Այսպիսով նա դուքսերի նկատմամբ գաղափարային իրավասություն ուներ:

Not. dign.-ի համաձայն Հայաստանի դուքսն իր արամադրության տակ ուներ հետևյալ ուժերը.

Sub dispositione viri spectabilis ducis Armeniae,

Equites sagitarii, S a b b u.

Equites sagitarii, D o m a n a.

Praefectus legionis quintaedecimae Apollinaris, S a t a l a.

Praefectus legionis duodecimae fulminatae, M e l i t e n a.

In Ponto:

Praefectus legionis primae Ponticae, T r a p e z u n t a.

Ala Rizena, A l a d e a r i z a.

Ala Theodosiana, a p u d A u a x a m.

Ala felix Theodosiana, S i l u a n i s.

Et quae de minore laterculo emittuntur:

Ala prima Augusta Colonorum, C h i a c a.

Ala Auriana, D a s c u s a.

Ala prima Ulpia Dacorum, S u i s s a.

Ala secunda Gallorum, A e l i a n a.

Ala castello T a b l a r i e n s i c o n s t i t u t a.

Ala prima praetoria n u p e r c o n s t i t u t a.

Cohors tertia Ulpia miliaria Petraeorum, M e t i t a.

Cohors quarta Raetorum, A n a l i b a.

Cohors miliaria Bosphoriana, A r a u r i c a.

Cohors miliaria Germanorum, S i s i l a.

Ala prima Iovia felix, C h a s z a n e n i c a.

Ala prima felix Theodosiana, P i t h i a e.

Cohors prima Theodosiana, V a l e n t i a.

Cohors Apuleia civium Romanorum, U s i p o r t o.

Cohors prima Lepidiana, C a e n e - P a r e m b o l e.

Cohors prima Claudia equitata, S e b a s t o p o l i s.

Cohors secunda Valentiana, Z i g a n n e.

¹ Bethman-Hollweg, Ib. § 135, p. 85.

Raetorum կոչվող կոնորտան, որ կանգնած էր Անալիբուլում. guinta Raetorum կոնորտան գտնվում էր Եգիպտոսում:

Ala prima Ulpia Dacorum-ը կրում է Ուլպիոս Տրայանոսի անունը, որ նվաճեց դակերին և նրանցից կազմեց մի քանի զորամաս: Այդպիսի ծագում ունի նաև cohors tertia Ulpia miliaria Petraeorum-ը, որը Հայաստան՝ Մեախոս, փոխադրվեց ոչ թե ուղղակի Գալիայից, այլ Պետրա քաղաքից:

Կոնորտաներին կցված miliaria-ն՝ miliaria Petreorum, miliaria Bosporiana, miliaria Germanorum-ն ըստ Վեգետիոսի մեկնությունն նշանակում է, որ տվյալ կոնորտան բաղկացած է հազար ընտրյալ զինվորից: Լեգեոնն ուներ տասը կոնորտա, որոնցից սովորաբար մեկը, և շատ դեպքերում առաջինը, զերազանցում էր մյուսներին ռազմիկների թվով և որակով, նրա մեջ մտնում էին 1105 հետևակ և 132 զրահակիր հեծյալ¹:

Ինչ վերաբերում է զորամասերի սեղաբաշխմանը, պետք է նկատել, որ Not. dign.-ի խորագրում Հայաստանի շորս զորակալանի կազմին նշված են նաև Պոնտոսում գտնվող երեք գլխավոր զորակալան՝ Տրապիզոն, Ավարսա և Սիլվանա, իսկ բուն բնադրում գրանց թիվը զորս է գալիս շորս. բացի թվարկվածներից, նշված է նաև շորտորգը՝ Aladaleariza: Խորագրի տվյալը հաստատվում է բնագրին կցված նկարով, որտեղ նշված է միայն երեք ամբողջ: Ստիպված ենք ենթադրել, որ բնագիրը աղավաղված է²:

¹ Veg. Ren. Epitoma Tei militaris, II 6, in una legione decem cohortes esse debere, sed prima cohors reliquas et numero militum et dignitate praecedit: nam genere atque institutione litterarium viros selectissimos quaerit... habet pedites mille centum quinque, equites loricatedos centum triginta duos, et appellatur cohors miliaria.

² Նախապես լուծելով Aladaleariza (հմտ. Itin. Aut-ի մեջ հիշված Oloedariza-ի հետ) բնակավայրի գոյության հարցը, կարելի է ենթադրել, որ ներկա գեպրում Aladaleariza-ն հանդիսանում է Ala-Rizena-ի պարզ երկրորդյունը (գիտադրաֆիա): Այդ գեպրում բնագիրը պետք է կարդալ Ala Rizena (Aladaleariza) apud Anaxam

Ala Theodosiana }
Ala (Felix) Theodosiana } Siluanis,

այսինքն՝ Ala Rizena-ն գտնվում էր Ավարսում, իսկ մյուս ala-ն՝ Սիլվանայում: Այս վերջին չոկատը կրում է Քեզզոսիոսի անունը, Կրկնությունը առգրի կրկնության հետևանք է և մեկ Theodosiana-ն մյուսից տարբերելու համար ավելացված է

Ջորակայաններից Տրապիզոնը հայտնի ծովափնյա քաղաք է Պիկսիտ Pyxites գետի՝ այժմյան Դեիրմե-դերեի գետաբերանի մոտ:

Auaxa-ն, անկասկած, այժմյան Ավադա կամ, ինչպես Լինչն է գրում, Ավդա գյուղն է, որ գտնվում է Գուլաթ կամ Կուլաթ լեռան ստորոտին և հիշյալ գետի ափունքների միջև:

Siluanis-ը Siluana-ի գործիական հոլովն է և հավանորեն Itin. Ant.-ում հիշատակված Solonenica-ն է, որը ածական է Solon-ից: Կարելի է, արդյոք, այն զուգահեռել այժմյան Սյուլե կամ Սուլու գյուղի հետ, որ գտնվում է Խարշուտ-սու գետի ափունքների մոտ, Կալազիկի մոտակայքում, որտեղ նշմարվում են հին բերդի ավերակներ¹:

Գուլաթ լեռներից արևմուտք ձգվում են Զիգանայի լեռները: Տրապիզոնից Արդասա տանող ճանապարհը անցնում է Զիգանայի լեռնանցքով, 6640 ոտնաչափ բարձրության վրա: Լեռնանցքի հարավային մուտքի մոտ Զիգանա ավանում, որ մինչև այժմ էլ կրում է իր հին անունը, կանգնած էր հռոմեական կոնորտա: Զիգանայից արևելք մինչև հիմա էլ պահպանվել է հին Մոխորա գյուղը, որ հռոմեական կոնորտայի զորակալան է եղել: Chaszanica-ն նույնն է, ինչ Peut.-ի Gizenenic-ը (հմտ. Ch-iaca = C-iaca) և կարող է համեմատվել Դեիրմե-դերե գետի մոտ գտնվող այժմյան Խաճանա գյուղի հետ²: Usiportus-ը Արիանոսի ԿՅՏՍՍ Ալմիոն-ն է՝ հետագայի Սուսարմիա-ն³, որ Սև ծովի վրա Տրա-

felix, որի վավերականությունը տարակուսի է մտավանդ այն պատճառով, որ ala prima felix Theodosiana-ն նշված է Եերքեում՝ Pithiae-ում:

¹ Ավերակները լուսանկարել է Լինչը, Armenia, II, p. 236:

² Իր անշարժությամբ նախան կարծես թե այնքան էլ չի համապատասխանում նախանկարին: Տրապիզոնից դեպի Մատաղ տանող երկու ճանապարհ կար. 20 ad vicissimum 32 Zigana 24 Thia 17 Sediscapifonti 24 Domana 18 Satala. 20 Magnana 10 Gizenenica 18 Bylae (Pylae) 6 Frigidarium 8 Patara 14 Medocia 12 Solonenica 18 Domana 18 Satala:

Գտնվող Ալավորոմիոնից՝ կարելի է եզրակացնել, որ Մագնանան նույնն է, ինչ vicissimum կետը, և այն պետք է որ լինի մոտավորապես Զենզիկի շրջակայքում: Gizenenica-ն, որ Մագնանայից հետո հաջորդ կայանն է, պետք է որ, համենայն դեպ, ընկած լինի նրանից հարավ: Այս հանգամանքը մի քիչ զիջարացնում է նախանկարին և նախանայի նույնացումը, քանի որ վերջինս ընկնում է Զենզիկից հյուսիս: Chaszanica-ի կամ Gi-zenenica-ի մեջ կա նաև ժողովրդի անունը:

³ Arrian. § 8. Geogr. Gr. min. I. p. 373. Anonymi Periopl. ib. p. 411, εις ԿՅՏՍՍ Ալմիոն τὸν νῦν λεγομένη Σουσαρμία.

պիղոնից դեպի արեելք ընկած այժմյան Սյուրմենեհ նավահան-
գիստն է: Caena Parembola, Καινή παρεμβολή-ն՝ նոր ճամբար,
հազիվ թե հատուկ անուն լինի: Phitia-ն և Sebastopolis-ը ոմանց
կարծիքով լազական Փիտունիտ և Սեբաստուպոլիս ամբուսթյուն-
ներն են. սակայն դրա դեմ իրավացիորեն տարրերում են¹, քանի որ
Not. dign.-ի ստեղծման ժամանակ վերոհիշյալ քաղաքները հոռ-
մեացիների կողմից զեռուս գրավված չէին, և դուքսի իշխանու-
թյունը չէր կարող տարածվել այդքան հեռու: Phitia-ի կապը
Itin. Ant.-ի Thia-ի հետ հավանական է: Սեբաստուպոլիս, ինչպես
և Valenta ու Caena Parembola անուններով փոխարինված են
նախկին տեղանունները, և նրանց տեղը հայտնի չէ:

Սարուստ, Դոմանայում, Սատաղում, Մելիտենեում, Տրապի-
զոնում (Ալադարիարիզում), Ավաքսայում և Միլվանայում գտնվող
զորամասերի պետերը գտնվում էին այլ վիճակում, քան մյուս
ջնկատների, կոհորտաների և ալանների հրամանատարները: Առա-
ջինների անունները գրվում էին laterculum maius-ի մեջ, իսկ
երկրորդներինը՝ laterculum minus-ի մեջ: Laterculum էր կոչ-
վում այն հատուկ պաշտոնական մատյանը, որի մեջ ցուցակա-
գրված էին բոլոր պետական ու պալատական պաշտոնյաները,
նշված էին նաև նրանց պաշտոնը, աստիճանն ու տիրոջնը: Աս-
տիճանները շնորհում էր անձամբ կայսրը հատուկ հրովարտակով՝
codicillus dignitatum: Այնտեղ ճշտությամբ որոշվում էր man-
data principis-ը, այսինքն՝ տվյալ պաշտոնի էությունն ու լիա-
զորությունները, ինչպես նաև նշվում էին յուրաքանչյուր պաշտոնի
արտաքին տարբերանշանները՝ insignia: Ապա նոր նշանակված
պաշտոնյայի անունը գրանցվում էր կատերկուլի մեջ: Հրովարտա-
կը ստանալու համար պետք էր անձամբ ներկայանալ կայսրին,
որը հանդիսավոր պայմաններում հանձնում էր այն: Ի միջի
այլոց, համեմատաբար ցածր պաշտոնյաներին հրովարտակը հանձ-
նում էր ոչ թե կայսրը, այլ քվեստորը², Ըստ այդմ էլ տարբերվում
էին laterculum maius et minus, մեծ և փոքր մատյանները: Առաջի-

¹ Böcking, I p. 434 not. 47.

² Ըստ Not. dign.-ի քվեստորի պարտականությունների մեջ էին մտնում օրի-
նագծերի նախապատրաստումն ու կայսրի անունով արված խեղադրերի ընդունումը
leges dictandae և Praeces, շեղ նա էլ վավերացնում էր օրենքները՝ quaestor legi
quam subscripsi:

նի մեջ գրանցվում էին այն անձանց անունները, որոնք նշանակվում
էին անմիջապես կայսեր կողմից, որը պահվում էր կայսեր դիվա-
նում՝ առաջին քարտուղարի՝ primicerius notariorum-ի մոտ: Իսկ
փոքր կատերկուլի մեջ գրանցվում էին այն աստիճանավորների
անունները, որոնք պաշտոն էին ստանում քվեստորի հայեցողու-
թյամբ, և այն պահվում էր նրա գրասենյակում: Հայաստանի դուք-
սին ենթակա պաշտոնյաներից բոլոր տասը կոհորտաների և ութ
ալաների (տասից) պետերը գրանցվում էին փոքր կատերկուլի, կամ,
ինչպես ասվում էր, de minore laterculo emittuntur-ի մեջ, իսկ
Ավաքսայում և Միլվանայում գտնվող ալանների պետերը լեգեոնների
և հեծելազորի պրեֆեկտների հետ միասին, ինչպես երևում է,
գրանցված են եղել մեծ կատերկուլում:

Ինքը՝ Հայաստանի դուքսը, պատվավոր դիրք էր գրավում
հիերարխիական սանդուղքի վրա. նա ուներ spectabilis-ի աստիճան:
Նախկին դասային ազնվական պրեդիկատները՝ ժերակուտային
clarissimus-ը և հեծյալների perfectissimus-ը, հիմնական փոփո-
խություն էին կրել: Հեծյալների դասի անհետացումով perfec-
tissimus պրեդիկատը դարձավ ստորին կարգի պաշտոնյաների
սեփականություն: Մերակուտային clarissimus-ը ձեռք բերեց
երեք երանգ կամ աստիճան՝ առաջինը և ամենաբարձրը՝ clarissi-
mus et illustris, երկրորդը՝ clarissimus et spectabilis և երրոր-
դը՝ սոսկ clarissimus: Այստեղից առաջ եկան illustris, spectabi-
lis, clarissimus և perfectissimus աստիճանները: Իլլուստրիսի-
մասի մեջ էին մտնում ի միջի այլոց նաև բոլոր պրետորական
պրեֆեկտներն ու զինվորական մագիստրոսները, սպեկտաբլիտատի
մեջ՝ պրետորական պրեֆեկտների տեղակալները՝ վիկարիոսները և
զինվորականներից՝ դուքսերն ու կոմսաները. իսկ clarissimus-ի
կարգն էին դասված նահանգների կառավարիչները՝ praesides,
և լեգեոնների պրեֆեկտները: Այսպիսով՝ Հայաստանի դուքսին,
ինչպես և մյուս դուքսերին շնորհված էր իր կարևորությամբ երկ-
րորդ՝ spectabilis-ի աստիճան: Նա, ինչպես և իշխանության
յուրաքանչյուր ներկայացուցիչ, իր տրամագրության տակ ուներ
առաջին թվով պաշտոնյաներ, որոնք իրենցից ներկայացնում
էին նրա officium-ը կամ, ինչպես այժմ են ասում, դիվանատունը:
Officium-ը զլիավորում էր princeps-ը՝ դիվանատան կառավա-
րիչը: Նա, ի միջի այլոց, ընտրվում էր scola agentum in rebus-ի
միջից, ինչպես նշված է Հայաստանի դուքսի officium-ում: Սքոլան

միլիցիայի մի տեսակն է՝ բաղկացած 1100 և ավելի հոգուց, որոնք կոչվում էին agentes in rebus: Նրանք պաշտոնական հանձնարարություններ էին տանում նահանգները և ենթարկվում էին magistri officiorum-ին՝ արքունիքի մինիստրին: Դուքսի գրասենյակը բաղկացած էր մի բանի բաժիններից՝ scrinia-ներից, որոնք ղեկավարում էին կառավարման զանազան ճյուղերը, դրանք էին numerarii՝ ֆինանսական բաժնի ծառայողները, commentariensis՝ քրեական գործերի բաժնի պետը, libellis-ը՝ դուքսի անունով տրված խնդրագրերը ընդունող բաժինը, exceptores՝ գործադիր մարմիններ և այլ բաժիններ¹:

Not. dign.-ի մեջ պահպանվել են յուրաքանչյուր պաշտոնի համար սահմանված տարբերանշանները, որ կայսերական հրովարտակի հետ միասին codicillus dignitatum, տրվում էին համապատասխան անձանց: Սրանցից բերենք Պոնտիկայի վիկարիոսի և Հայաստանի դուքսի տարբերանշանները: Առաջինի տարբերանշանները իրենցից ներկայացնում են տասնմեկ ֆիգուրներ, որոնք պատկերացնում են վիկարիոսին ենթակա դիոցիզի տասնմեկ նահանգները: Չիգուրները միմյանցից զանազանվում են գույների ներդաշնակությամբ: Սրանց վերևում գրակալի վրա դրված է մի մատյան, դա Liber mandatorum-ն է, իսկ նրա կողքին՝ մի սյունակ, որ ուրիշ զեպքերում սովորաբար կրում է երկու պատկեր (գուցե կայսրի և կայսրուհու), իսկ երբեմն էլ շորս պատկեր, ինչպես Ասիական դիոցեզի վիկարիոսի տարբերանշանում:

Հայաստանի դուքսի տարբերանշանը իրենից ներկայացնում է յոթ բերդերի նկար, շորսը՝ հայկական և երեքը՝ պոնտական: Դրանք այն կենտրոնական կայաններն են, որտեղ նստում էին գինվորական իշխանության ներկայացուցիչները laterculi maioris-ից, մինչդեռ minoris lateculi անձանց զորակայանները չէին նշվում տարբերանշանների վրա: Հայաստանի դուքսի liber mandatorum-ը առանց գրակալի է, ինչպես առհասարակ բոլոր դուքսերի տարբերանշաններում:

Illustris աստիճանի պաշտոնյաների տարբերանշաններում որքի կազմի վրա կա մի դիմանկար, ըստ երևույթին՝ կայսեր, իսկ մյուս պաշտոնյաների տարբերանշաններում դիմանկարի փոխարեն կա հետևյալ մակագրությունը.

¹ Bethman-Hollweg, Civilprocess, III § 142.

FL
INTALL
COMORD
PR

Այս հանելուկային տառերի իմաստը մեկնարանելու առաջին փորձը կատարել է հայտնի գիտնական Պանցերուլը, որը կարգա-
ցել է

Felix liber
iniunctus notariis tribunis a laterculo
continens mandata ordine
primicerii.

Բյուզինդը առաջարկում է մի այլ վերծանում.
felicitati laetitiae

qui imperatorii numinis, tutelae Augustorum Iarum
Civitates omnes maiestati obediant regiae domini
populi Romani.

Ընդ որում Բյուզինդը վկայակոչում է Կեդրինոսի պատմության մի շատ հետաքրքրական տեղը, որտեղ, խոսելով կայսրությունը Հոնորիոսի և Արկադիոսի միջև բաժանելու մասին, պատմագիրը հազորդում է, որ հոմեական զրամների վրայի KONOB¹ նշանները պետք է կարդալ՝

civitates omnes nostrae obediant venerationi².

Կարող է արդյոք սա դառնալ liber mandatorum-ի վրայի խորհրդավոր տառերի հանելուկը լուծելու բանալին: Վերջին մասի ընթերցումը ավելի կամ պակաս շարժով հավանական է թվում, բայց ընդհանրապես հանելուկը դեռ կարոտ է լուծման:

Գրքի կողքին կա մագաղաթի մի փաթեթ. թե դա ի՞նչ է նշանակում, գործյալ հայտնի չէ:

¹ KONOB տառերի վերծանման վերաբերյալ, օգտվելով Ս. Բ. Սմիտ-կոֆի բարձունք ցուցումից, նշենք, որ այդ տառերն այժմ կարդացվում են այսպես. CON<stantinopolis> և OB<ryzum> մաքուր ոսկի: Pinder et Friedländer, De la signification des lettres OB sur les monnaies byzantines, Berlin, 1851, II հրատ., 1873, նաև E. Babelon, Traité des monnaies grecques et romaines 1901—1907, Paris, t. I p. 880 և շարունակութ.

² Kedr. I p. 563, τὰ ἐν τοῖς νικαρίοις τοῦ νομισματοῦς ὑποκειμένα Ῥωμαῖκὰ γράμματα ἐηλοῦσι ταῦτα: τὸ κ κιβιτάτες, τὸ ο ὄμνις, τὸ ν νόστραι, τὸ ο ὀβέδισαντ, τὸ Β βεναρατίονι, τούτέστιν οἱ πόλεις πᾶσαι τῆ ἡμετέρα πειθαρχεῖτωσαν προσκυνησαι. Հմմտ. Böcking, I p. 284.

II

Այն ժամանակ, երբ Փոքր Հայքի հողերը կազմում էին կայսրության օրգանական մասը՝ նրան շաղկապված պետական կյանքի բոլոր թևերով, նախկին Մեծ Հայքի սասարապության գավառները, ինչպես նաև ներքին Հայքը, կրում էին ազատ տիրույթների բնույթ, որ թեև արտաքնապես կցված էին կայսրությանը, բայց ներքին կյանքով ու կառուցվածքով միանգամայն ինքնուրույն էին:

Համապետական տեսակետից հիշյալ գավառների իրավական վիճակը կարելի է նույնացնել կայսրության բաղկացուցիչ մասը կազմող այն միավորներին, որոնք վաղ ժամանակներից սկսած կոչվում էին դաշնակցային՝ foederatae և ազատ՝ liberae: Դաշնակցային տերիտորիաների հարաբերությունները բնորոշվում էին, ինչպես ցույց է տալիս հենց այդ տերմինը, հատուկ պայմանագրի՝ foedus non aequum-ի հիման վրա, որի շնորհիվ նրանք միացվում էին կայսրությանը: Այդ միջոցով անհավասար կողմը պետության կազմի մեջ մտնելիս իր համար ապահովում էր ինքնավարական որոշ արտոնություններ: Նման առավելություններ ունեին նաև այսպես կոչված ազատ ազգությունները՝ liberae, որոնք տարբերվում էին դաշնակցային երկրներից կամ ֆեդերատիվներից նրանով, որ իրենց ազատությունը ստանում էին կայսրության բարձրագույն իշխանությունից, մինչդեռ ֆեդերատիվների անկախությունը բխում էր պայմանագրից: Արտահայտվելով իրավաբանական լեզվով՝ ֆեդերատները ազատությունից օգտվում էին իրավունքով, իսկ ազատները՝ օրենքով: Ֆեդերատներին տրված ինքնիշխանության էությունը հանդիսանում էր libertas՝ վարչական անկախություն և autonomia՝ օրենսդրության ու գատավարության իրավունք: Սրանք իրենց տերիտորիայի տերն ու տնօրենն էին, ազատ էին հարկատվությունից, շունեին հոռմեական կառավարիչ և իրենց մոտ չէին պահում հոռմեական կայսրության հետ նրանց կապող միակ զլխավոր պարտականությունը՝ զինվոր մատակարարելը և առհասարակ կայսրությանը ռազմական օգնություն ցույց տալն էր:

Տեսականորեն այսպես էր իրերի վիճակը, իսկ իրականում ազատ ժողովուրդների հիշյալ պրեզիկաաները, որ ճանաչված էին de jure, կոնկրետ դրսևորումներով ընդունում էին զանազան ձևեր.

հարկատվությունից ազատ ինքնավար ազգությունների αὐτόνομοι καὶ φόρων ἀτελείς կամ liberi et immunes կողքին հանդիպում էին և այնպիսիները, որոնք թեև համարվում էին ազատ, բայց պարտավոր էին իրենց լուծան մուծել կայսրության գանձարանը:

Հետ այդմ էլ միմյանցից տարբերվում էին civitates foederatae, civitates liberae immunes և civitates stipendiariae կամ ἔνοσπενδοι, συμμαχικοί ժողովուրդներ, հակառակ մյուս ὑπήκοοι, ἀρχόμενοι¹-ի:

Հին աշխարհի կործանման հետ և հոռմեական պետության դանդաղ, բայց հաստատուն կերպով բյուզանդականի ալլաֆոսիվելու ժամանակաշրջանում ֆեդերատ հասկացությունը և նրա վիճակը, հին իրավունքի բազմաթիվ այլ հաստատությունների նման, կարող էր, իհարկե, փոխվել՝ հարմարվելով պետական նոր իրադրությանը: Այսուհանդերձ նոր ալլացիզ ուժերի ներխուժման և հենրի խմորումների ալեկոծ դարաշրջանում ֆոիդերատի տերմինը գործ էր ածվում ցեղային այն ինքնուրույն խմբակցությունների վերաբերյալ, որոնք հիմնավորվում էին կայսրության ծայրամասերում, զանազան կողմերից ճնշում գործադրելով նրա վրա և նրա հետ մտնելով հարաբերությունների մեջ, որոնք երբեմն խազաղ բնույթ էին կրում: Կայսրերը նրանց հետ բարեկամության պաշն էին կնքում և իրենց նպատակների համար վարպետորեն օգտագործում էին նրանց ուժերը: Հուստինիանոսի բանակը իրենցից ներկայացնում էր զանազան ազգությունների զիններից կազմված մի խճանկար, որոնք իրենց մեքողություն մեջ առանձնացվում էին ֆեդերատների տերմինով՝ ի տարբերություն կայսրության բուն ուժերից, նրա իսկական զորքից՝ ὄστρατιῶται:

Աֆրիկյան արշավների ժամանակ վանդալների դեմ գործող բանակը, ըստ ժամանակակից հեղինակի նկարագրության, կազմված էր ἔκ τε στρατιῶτων καὶ φοιδεράτων «ֆեդերատների մեջ, — բնագործ բացատրում է հեղինակը, — սկզբում մտնում էին միայն ալլազգիներ — բարբարոսները, որոնք ստրուկների՝ հպատակների թվին չէին պատկանում, բայց քանի որ հոռմեական զենքով չէին նվաճվել, կայսրության կազմի մեջ էին ընդունվում միևնույն

¹ Kuhn. Röm. Reich. II p. 14, Verbündete freie und Untertänige Gemeinden. Виллемс, Рим. госуд. право, p. 418—419.

իրավունքներով: Չէ՞ որ հռոմեացիները φοίδερα, foedera են կոչում թշնամիների հետ կնքած խաղաղության դաշինքը: Մինչդեռ այժմ յուրաքանչյուրը կամայականորեն իրեն է վերագրում այդ անվանումը¹: Հեղինակը նկատում է, որ ժամանակը հազվադեպ է պահպանում անվանումների սկզբնական նշանակությունը. հասկացություններն ու հանգամանքները անընդհատ փոփոխվում են, իսկ մարդիկ դեռևս անփութորեն շարունակում են գործածել նախկին բառերը: Պատմագիրը ակնհայտորեն այն կարծիքին է, որ ֆեդերատ տերմինը վերապրել է իր բովանդակությունը, բայց թե ինչո՞ւ է այդ անհամապատասխանությունը՝ մնում է անբացատրելի: Իր դիտողության մեջ պատմագիրը երևի ելնում է լատիներեն բառի ստուգաբանական նշանակությունից, աչքաթող անելով ֆեդերատ հասկացության իրավական բովանդակությունը՝ civitates foederatae որպես փոքրիկ մի կոլեկտիվ, որ կայսրության մեջ է մտնում անհավասար դաշինքի հիման վրա՝ foedus non aequum.

Թրակիայում գոթերի բնակություն հաստատելու կապակցությամբ նույն պատմագիրն ասում է, որ զգոթերը Հուստինիանոսի թուլլտվությամբ գրավեցին զանազան վայրեր, օգնում էին հռոմեացիներին և մյուս ուղամիկների նման ամեն տարի կայսրից ուճիկ էին ստանում և կոչվում էին ֆեդերատներ: Կարծում եմ, որ հռոմեացիները նրանց լատինական այդ բառով են անվանում՝ ցանկանալով գրանով ցույց տալ, որ գոթերը պատերազմում չեն նվաճվել հռոմեացիների կողմից, այլ մտցվել են իրենց դաշնակցության մեջ որոշակի պայմաններով²: Ուրեմն՝ գոթերը, առանց զուհարերելու իրենց ազատությունը, կայսրությանը օգնություն էին ցույց տալիս: Այդպիսի վերաբերմունքը կայսրության նկատմամբ միանգամայն արդարացնում է ֆեդերատ անվանումը բառի իսկական իմաստով և ցույց է տալիս, որ նրա գործածությունը Հուստինիանոսի դարում պետք է բացատրել ոչ միայն այդ բառի կեն-

¹ Proc. Vand I II p. 358, ἐν δὲ δὴ φοιδεράτοις πρότερον μὲν μόνοι βάρβαροι κατελέγοντο, ὅσοι οὐκ ἐπὶ τὸ δοῦλοι εἶναι, ἀτε μὴ πρὸς Ῥωμαίων ἠσσημένοι, ἀλλ' ἐπὶ τῇ ἰσῆ καὶ τῇ ὁμοίᾳ ἐς τὴν πολιτείαν ἀφίκοντο. φοίδερα γὰρ τὰς πρὸς τοὺς πολεμίους σπουδὰς καλοῦσι Ῥωμαῖοι. τὸ δὲ νῦν ἅπασι τοῦ ονόματος τούτου ἐπιβατεύειν οὐκ ἐν κωλύμῃ ἔστί.

² Proc. Goth. IV, 5 p. 477—8.

տնակությունը, այլև դեռևս գոյությունը շարունակող հասկացության կենսականությունը: Մեզ հետաքրքրող բառի ոչ ճիշտ գործածությունը, որ նկատել է Պրոկոպիոս պատմագիրը, ըստ նրանությի վերաբերում է մասնակի մի դեպքի և այդ էլ ոչ առանց հիմքի. աֆրիկյան արշավանքի ժամանակ իբրև ֆեդերատների պետի կանդնածներ չեն հիշատակվում այլազոր ծագում ունեցող անձնավորություններ, մինչդեռ ֆեդերատները սովորաբար պատերազմ էին գնում իրենց սեփական առաջնորդների հրամանատարությամբ: Տվյալ դեպքում անհայտ է նաև ֆեդերատների կազմը, հնարավոր է, որ զորամասերը իրոք բաղկացած էին այլազգիներից, բայց այս անգամ նրանք պատերազմ էին գնում հռոմեական զորավարների գորշների ներքո:

Ֆեդերատների ինը պետերի թվում, և առաջին տեղում, հիշվում է Գորոթնոսը՝ հայկական գնդերի հրամանատարը¹: Գորոթնոսը իրոք Հայաստանում գրավում էր Հուստինիանոսի ստեղծած զինվորական պետի՝ magister-ի պաշտոնը, իր այդ պաշտոնում էլ նա պատերազմեց պարսիկների դեմ և 532 թ. հաշտություն կնքելուց հետո ուղարկվեց Աֆրիկա: Հայաստանի մագիստրոսի տրամադրության տակ, ինչպես կտեսնենք ստորև, կային և՛ հայկական տեղական ջոկատներ, և՛ կայսերական զորամասեր: Գորոթնոսի հետ միասին Աֆրիկա փոխադրված գնդերը, ըստ երկվայթին, նույնպես խառը կազմ ունեին: Եթե ֆեդերատների մյուս պետերի մոտ էլ վիճական այդպիսին էր, ապա հասկանալի է պատմագրի կշտամբանքը այն անձանց հասցեին, որոնք ապօրինի կերպով յուրացնում էին ֆեդերատ անունը:

Անկախ վերը քննված մասնակի դեպքից, որ կարող է ճիշտ լինել կամ չլինել, ինքնըստինքյան կարևոր է այն փաստը, որ ֆեդերատների շարքն են զասվել հայկական գնդերը:

Ֆենելով Ներքին Հայքի և սատրապական հողերի կառավարմանը վերաբերող մեզ հասած աղբատիկ տվյալները, դժվար չէ նկատել, որ ըստ էության որոշ նմանություն կա հիշյալ հողերի և ֆեդերատների միջև:

Պատմագրի բուն խոսքերն են. սատրապական Հայաստանում իշխում էին հինգ հայ սատրապ, որոնք իշխանու-

¹ Proc. Vand. I. c., ἄρχοντες δὲ ἦσαν φοιδεράτων μὲν Δωροθέος τε, ὁ τῶν ἐν Ἀρμενίῳ καταλόγων στρατηγός.

Սատրապութիւնները մասին այս աղքատիկ տեղեկութիւններէք երևում է, որ դրանք նվաճված հողեր չէին բառի իսկական իմաստով, այլ ավելի շուտ կայսեր դաշնակիցներ, թեև անհավասար նրանց որպէս ֆեոդերատներ բնորոշող հիմնական գծերն են՝ լիակատար ինքնիշխանութիւն առանց հոռոմեական իշխողների հսկողութեան և դիւն վորական ժառանգութիւն կայսրութեանը: Սատրապութիւնները փոքրիկ պետութիւններ էին, որ կառավարում էին թագավորներին զավասար դիրք ունեցող սեփական իշխանները: Այն տարբերանշանները, որ կայսրը ուղարկում էր նրանց, հատուկ էին թագավորական իշխանութեանը: Գրանք էին՝ ծիրանի վերարկու և կարմիր ոտնամաններ, որոնք գերագույն աստիճան ունեցող իշխանավորների ղգեստավորման հատկանշական մասն էին կազմում: Նման պատվանշաններ կայսրերը շնորհում էին նաև լազերի թագավորներին՝ ճերմակ քղամիդից, ճերմակ պատմուճանից և ոտնամաններից բացի հիշատակվում են նաև հոռոմեական ձեւի պսակ և մարգարտակուռ գոտի՝ Այդպիսի գոտի ունեին նաև հայ իշխանները, բայց արդյո՞ք սատրապները գոտին ստանում էին կայսրից, հայանի չէ: Նույնը պէտք է ասել նաև սատրապական խուլրի մասին:

Սատրապների իշխանութեան էութիւնն ու սկզբնավորութիւնն իրենց արմատներով գտնվում էին այն իրավահարաբերութիւնների մեջ, որոնք ծաղկել էին Հայաստանում հատկապես Արշակունիների դարաշրջանում, և որոնց ամբողջութիւնը հայկական տերմինաբանութեամբ կոչվում է նախարարութիւն, նախարարական իրավունք:

Սատրապները հայ նախարարներ էին, իրենց այն տոհմակիցների թվից, որոնք իշխում էին Հայաստանի մյուս մասերում: Տեղական իրավարմբոնողութեան տեսակետից նրանք կամ հայոց կամ պարսից թագավորի վասալներն էին և իրենց քաղաքական իրավասութեան բնույթով միանգամայն համապատասխանում էին կայսրութեան իրավունքի մեջ սահմանված ֆեոդերատ հասկացողութեանը: Նրանց ինքնավարութեան սկզբնավորումը չպետք է կապել կայսրութեանը միանալու պահի հետ, որովհետև այդ ինքնավարութիւնը բխում էր Հայաստանում տիրող հասարակական-քաղաքական իրավիճակից: Կայսրութիւնը չէր փորձում ոտնահա-

ջնէ սատրապութիւնների ազատութիւնը՝ իհարկե նշ մեծահոգութիւնից զրդված, նա հարկադրված էր այդպես վարվել բացառապես այն կոնկրետ պայմանների, այն դարավոր մրցակցութեան թելադրանքով, որ գնում էր հոռոմեական և պարսկական ուժերի միջև Հայաստանին տիրելու համար: Այդ պայթարի մեջ և նրանցի համար Հայաստանի հաշիվներն ու համակրանքը, որ ստիպում էին նրան հակվել մեկ այս, մեկ այն կողմը, բնավ էլ աննշան գեղ չէին խաղում: Ըստ հայկական աղբյուրների Արշակ թագավորի անկումից հետո սատրապները իրենք սեփական նախաձեռնութեամբ անշատվեցին հայոց թագավորութիւնից և ենթարկվեցին հոռոմեաց կայսրին: Սատրապների այդ կամավոր հպատակութեան մեջ չի կարելի չնկատել դաշնագրային ակտի որոշ տարր, որով սատրապների կողմից կայսեր գերիշխանութեան ճանաչումը պիտի ազահողմը նրանց ունեցած ազատութիւններն ու իրավունքները: Պետք չէր ունենալ քաղաքական հատուկ հեռատեսութիւն՝ սատրապների հարցը կայսրութեան շահերի տեսակետից ցանկալի ձևով բռնելու համար, այսինքն՝ ընդունել սատրապներին՝ նրանց ինքնավարութեան առում և գրանդ իսկ հանձնինս նրանց սահմանազրկում պարտիկների գնմ միանգամայն վատահելի պատվար ունենալ: Գրեզունել սատրապներին կամ ոտնակոխ անել նրանց ազատութեանը՝ նշանակում էր վանել հավատարիմ դաշնակիցներին զեպի պարսից թագավորը:

Գաշնադրային սկզբունքը առանձնապես աչքի է զարնում սատրապութիւնների հետ հարեանութեան մեջ գտնվող Ներքին Հայք կայսրութեանը միացնելու պատմութեան մեջ: Բյուզանդական պատմադրի մտա պահպանված մի քանի տեղեկութեան համեմատի Արշակունիների առնմի վերջին հայ թագավորը մահվանից առաջ կտակում է թագավորութեանը բաժանել իր երկու որդիների՝ Արշակի և Տրդատի միջև, ընդ որում Տրդատի բաժինը շորս անգամ մեծ էր: Գրանից վերավորված՝ Արշակը դիմում է Թեոդոսիոս կայսրին՝ չանալով նրա օգնութեամբ անվալեր հայտարարել հոր կտակը: Տրդատն էլ իր հերթին դիմում է պարսից թագավորի հոռոմեացութեանը՝ վախենալով կայսեր վրեժխնդրութիւնից: Այդ ժամանակ Արշակը, որ նույնպես վախենում էր պարսից թագա-

¹ Malala, p. 413.

¹ Փալատա, Գ, Ժ, ւեթղ զարշաե հայոց եւ զեոց Սաղամուտ տըն Անձուեայ և ընդ նմա իշխանն մեծի Թոփաց եւ զեացին առ թագաւորն յունացոյ: Տրդատի ճիւղը Գ. Ե. Արեւել

վորի և իր եղբոր դավերից, որոշ պայմաններով հրաժարվեց թագավորությունից հօգուտ Թեոդոսիոս կայսրի ἐπί ξυσυθήκαις τισίν»¹, — գրում է պատմագիրը:

Հիշյալ պայմանների էությունը, ինչպես վկայում է հեղինակը, շարադրված է իր մի այլ աշխատության մեջ: Այնտեղ, իրոք, դրանք դրված են այն հայ իշխանների շուրթերին, որոնք, դժգոհ լինելով Հուստինիանոսի քաղաքականությունից, ներկայանում են պարսից արքունիք և նոսրով թագավորին ուղղած իրենց աղերսանքի մեջ, ի միջի այլոց, հավաստում են, որ հայոց վերջին Արշակունի թագավորը իր թագավորությունը հոծարակամ զիջել է հռոմեական Թեոդոսիոս կայսրին, պայմանով, որ «ծագումով իրեն մերձավոր բուր հաջորդ սերունդները ապագայում միշտ ապրեն լիակատար ազատության մեջ և ոչ մի հայի չվճարեն» ἀπαντες οἱ κατὰ γένος αὐτῶ μέλλοντες πάντα τὸν αἰῶνα προσήκειν τὰ τε ἄλλα βιοτεύουσαι κατ' ἔξουσίαν καὶ φόρον ὅποτελεῖς οὐδαμῆ ἔσονται: Ընդ որում նրանք հավատացնում էին, որ հիշյալ պայմանը պահպանվում էր մինչև պարսիկների և հռոմեացիների միջև 532 թ. կնքված հաշտությունը²:

Ըստ այս պատմության Հայաստանում Արշակունիների անկման հանգամանքները ներկայացվում են մի փոքր այլ լույսի տակ, քան մեզ հասած հայկական ավանդություններում: Ոմանց կարծիքով բյուզանդացի պատմագրի ասածները վստահելի չեն: Այնքան, որքան խոսքը վերաբերում է սույն պատմության մեջ հիշատակված անուններին կամ անձնավորություններին, կասկածներ, անշուշտ, կարող են լինել, և քննադատության է մնում դեռ որոշել բյուզանդացի Պրոկոպիոսի և հայ Փավստոսի ավյալների համեմատական արժեքը: Նոր հետազոտողներից մեկը հակված է, սակայն, մեջ բերված պատմությունը համարել ամբողջովին հերյուրանք. նրա կարծիքով Պրոկոպիոսը այդ պատմությունը քաղել է պղտոր աղբյուրներից, հավանորեն, հենց հայ նախարարների շուրթերից, որոնց ազգային սնափառությունը իբր թե թույլ չէր տալիս խոստովանելու, որ Հայաստանի բաժանման գաղափարը դուրս է եկել հենց այդ պետություններից³:

¹ Proc. Aed. III 1, p. 245—246.

² Pers. II 3, p. 163—4.

³ Güterbock, Römisch-Armenien, p. 19.

Նույնիսկ այդպիսի լուսարանության դեպքում պատմության ամենագեղատեսիլի մասը մնում է անառարկելի, էլ չենք խոսում այն մասին, որ այդ լուսարանությունը ինքնին գուրկ է հիմքից: Պրոկոպիոսի հաղորդած տեղեկությունները Արշակունիների վերջին արևի մասին, ըստ էության, չեն հակասում այն ամենին, ինչ որ մենք գիտենք այլ աղբյուրներից: Աղգային ավանդության համեմատն քաղաքի իշխան Մանվել Մամիկոնյանը, որ դահի խնամակալն էր, «անզոր աբբայորսիների՝ Արշակ և Վաղարշակ եղբայրների օրոք, իր մահվանից առաջ «զրեաց հրովարտակ առ թագաւորն Յոժայ և եմա յանձն արար զաշխարհս Հայոց և զԱրշակ արչարսի»: Բայց այդ, Արշակ և Տիգրան արքայորդիների գծուովություննք ըստ են Շիշեցեում Փավստոսի պատմության մեջ հիշատակված գուրկից թագավորների՝ Արշակի և Խոսրովի թշնամությունը: Բարբառն էլ այն չէ էական, թե ինչպես տեղի ունեցավ Արշակունիների թագավորության բաժանումը՝ շահագործված պետությունների բաշի կամքով, թե թագի շուրջը տեղի ունեցող տեղական երկգառակությունների հետևանքով: Կարևորն այն է, որ բաժանումից հետո Հայաստանի մի մասը միացվեց կայսրությանը այն հաստատ պայմանով, որ պահպանվի երկրի Արշակունիների ազատությունը և որ նա չնկթարկվի որևէ հարկատվության: Այսպիսին էր հայերի վիճակը մինչև Հուստինիանոսը, և գրանում չի կարելի տարակուսել:

Ընդունենք նույնիսկ, որ պատմագրի հաղորդածները արդյունք են մի ինչ-որ մեկի հերյուրանքի, բայց չի կարելի հերքել, որ այն, ինչ արտահայտված է հերյուրանքի մեջ, պետք է ընդունվի իբրև երկրի իրական գոյավիճակի արտացոլում, քանի որ պատմագիրը հնարավոր է համարում թեկուզ հայերի բերանով պեզել, որ նրանք մինչ այդ օգտվել են հիշյալ շնորհներից: Պետության մեջ այդպիսի բացառիկ դիրք գրավել, Հռոմեական կայսրության լեզվով նշանակում է լինել դաշնակցային երկիր (Ֆեդերատ): Գրանից հետևում է, որ ներքին Հայքը մի այնպիսի ազատ երկիր էր, ինչպիսին էին ազատ սատրապությունները:

Ճեզերատի առանձնահատկություններից մեկը հարկատվությունից ազատ լինելն էր: Կայսրության և հայկական հողերի միջև եղած ֆինանսական հարաբերությունների մասին որոշակի արվ-

¹ Փավստոս, Ե, Խդ

յալներ շատ քիչ կան: Գոյութիւն ունի 387 թվականի Սոփանենեի սատրապ Գադգանոսի անունով կայսերական մի հրամանագիր, որի մեջ խնդրվում է թագ նվիրաբերել:

Cod. Th. XII 13 6. Gaddanae satrapae Sophanenaе.

Այսու հրամայում ենք. թագի ոսկին ժողովել և ետ տալ նրանց, որոնցից, ինչպես և բեռում է, գանձված է ապօրինաբար, որպեսզի հնուց հաստատված սովորության համաձայն բոլոր սատրապները, ի նշան անձնվիրության, որ պետք է ցույց տան Հռոմեական կայսրությանը, թագ պատրաստեն իրենց սեփական միջոցներից մեր Մեծությանը հանդիսավոր կերպով մատուցանելու համար:

Կայսեր այս կարգադրության համար, ըստ երևույթին, սովոր են հանդիսացել իշխանության փութաշան գործակալների կողմից սատրապություններում թույլ տրված շարաշահումները: Մի քանի տարի դրանից առաջ՝ 384 թվականին, նույն կայսրը մի հրովարտակով ընդհանրապես խստորեն արգելել էր *auri coronarii* բռնի գանձումը կայսրության մեջ¹: Սատրապություններում, հետու լինելու կամ այլ պատճառներով, կայսերական հրամանը, ըստ երևույթին, չէր գործադրվում, և կարիք է զգացվել հրապարակելու հատուկ կարգադրություն, որով հրամայվում է սատրապություններում հավաքված *aurum coronarium*-ը վերադարձնել ըստ պատկանելիության և սատրապներին թույլ տալ գործելու սեփական հայեցողությամբ: *Aurum coronarium* կոչվող գանձումները մյուս պետական հարկերից տարբերվում էին նրանով, որ համարվում էին կամավոր նվիրատվություններ և ոչ թե օրենքով պարտադիր: Հուլիանոսի 362 թվականի հրովարտակներից մեկում ուղղակի

¹ Cod. Theod. XII, 13 5. Ad conlationem auri coronarii placuit neminem absque consuetudinem esse cogendum [a. 384].

ասված է, որ *aurum coronarium munus est voluntatis*¹: Այս ակնբեր ծագել է այն բանից, որ սկզբնական շրջանում կայսրին հաղթության կամ որևէ հանդիսության առթիվ մատուցվում էին ոսկե գահակներ: Այդպիսի նվերներ տալիս էին մանավանդ ազատ համայնքները կամ բարեկամ ժողովուրդները, որոնք կայսրության հետ կապված էին դաշնակցային կապերով: Այդ ձևով նրանք արտահայտում էին իրենց բարեհաճությունն ու բարեկամությունը: Հռոմեացիներն երբեմն իրենք էին աշխատում ձեռք բերել *τῶν στεφάνων χρυσῶν*, քանի որ հաղթել էին թշնամուն²: «Այն, ինչ որ Հռոմեոսի բնակիչները վճարում էին հռոմեացիներին, կոչվում էր *στεφάνων τῶν τέλεσμα*, որովհետև նրանք ինքնավար էին», — ասված է մի արժանահավատ աղբյուրում: Այն աննշան գումարը, որ նրանք ամեն տարի ուղարկում էին Հռոմին, համարում էին ոչ թե տուրք հաղթողներին³, այլ ավելի շուտ, «պսակ բարեկամների»⁴: Կայսրության հանդեպ այսպիսի կամավոր պարտավորություններ կատարում էին նաև Միջագետքի սարակիստության ինքնավար հորդանները: Այսպես, դեպի արևելք ձեռնարկած արշավանքի ժամանակ Միջագետքում Հուլիանոս Ուրացողին ներկայացան սարակիստության ցեղերի առաջնորդները կամ արքայիկները և հայտնեցին իրենց հնազանդությունը՝ մատուցելով ոսկե պսակ⁵: *Coronae*-ի ավանդույթը կենդանի էր դեռևս 9 դարում: Գոթերի Քեոզոս թագավորը Հուստինիանոսի հետ հաշտություն կնքեց ի միջի այլոց այն պայմանով, որ ամեն տարի նրան ուղարկելու է 300 ֆունտ կշռող ոսկե պսակ⁶:

Կասկած չկա, որ այդպիսի պսակների կարգին է պատկանում

¹ Cod. Theod. XII, 13 1.

² Dio Cass. 77, 48, *χαρίς γὰρ τῶν στεφάνων τῶν χρυσῶν, οὗς ὡς καὶ πολεμίους τινὸς οἰεῖ νικῶν πολλάκις ἔτει.*

³ Suida v. *Στεφανικὸν τέλεσμα* παρὰ Ῥοδίοις οὕτως ἐκαλεῖτο, ἐπειδὴ αὐτόνομοι ἦσαν οἱ Ῥοδίοι. Βραχὺ δέ τι μέρος Ῥωμαίοις ἐπιτιμῆ πέμποντες ἐτήσιον ὡς οὐ φόρου ἡγεμόσι μάλλον ἢ στέφανον φέροις 556v.

⁴ Amm. XXIII, 3, 6. *Saracenarum reguli gentium genibus supplices nixi, oblati ex auro corona, tamquam mundi nationumque suarum dominum adorant.*

⁵ Proc. Goth. I 6, p. 29, *πέμψει δὲ αὐτῷ καὶ στέφανον χρυσῶν ἀνὰ πᾶν ἔτος κατὰ τριακοσίας ἔλκοντα λίτρας.*

նաև սատրապների corona-ն, որի մասին խոսվում է Քեոզորոսի վերոհիշյալ հրովարտակի մեջ: Դա մի կամավոր նվիրատվություն էր, որ ինքնավար սատրապներն անում էին իրենց վեհապետին: Իր բնույթով կամավոր և ոչ հարկադիր corona-ն դառնում է ժամանակի ու սովորույթի կողմից սրբազոյժված պարտավորություն և կայսրությունից սատրապությունների կախվածության պատշաճ ձև:

Թվում է, թե պսակի նվիրատվությամբ էլ պիտի սահմանափակվեր ոչ հավասարազոր դաշնակիցների ֆինանսական հարաբերությունները, և քանի որ սատրապների ինքնավարությունը շարունակվեց մինչև Հուստինիանոսի թագավորությունը, ապա համենայն դեպս մինչև այդ նշանք պետք է որ ազատ լինեին դրամական այլ կարգի տուրքերից: Կա, սակայն, դրան հակառակ մի հիշատակություն, 502 թվականի պարսկա-հռոմեական պատերազմների ժամանակ պարսից Կավատ թագավորը մոտենում է Մարտիրոսուպուլսին այն պաշարելու համար: Քաղաքի բնակիչները, տեսնելով, որ ամեն դիմադրություն անհուսալի է, որոշում են անձնատուր լինել: Նրանք Սուփանենեի սատրապ Քեոզորոսի հետ միասին գուրս են գալիս թագավորին ընդառաջ՝ «իրենց հետ տանելով երկու տարվա պետական հարկերը φόρους δημοσίουս»¹:

Ինչպե՞ս հասկանալ այդ Քեոզորոսը, որ Գաղզանոսի հաջորդներից էր և Սուփանենեի սատրապը, նստում էր նրա մայրաքաղաքում՝ Մարտիրոսուպուլսում: Իր երկիրը ավերումից փրկելու համար կայսրի վասալը՝ Քեոզորոսը, անձնատուր է լինում պարսից թագավորին և նրա գույքը շարժելու համար նախօրոք նրան է հանձնում երկու տարվա ինչ-որ եկամուտներ: Արդյոք այդ փόροι-ն այն հասույթները չէին, որ պիտի ուղարկվեին կայսրության գանձարանը: Հնարավոր է, որ դա ավանդական corona-ն էր՝ վերածված դամի, aurum coronarium, եթե այս բացատրությունը չընդունվի և պարզվի, որ փόροι δημοσίουս-ն corona-ից տարբեր մի տուրք է, ապա պետք է ենթադրել, որ սատրապությունների ներքին կազմության մեջ Ջենոնի կատարած փոփոխությունը շատ էական է եղել: Մենք վերը մեջ բերինք պատմադրի բուն խոսքերը այն մասին, որ 485 թվականին Լեոնտիոսի և Իլլոսի

¹ Proc. Aed. p. 249, φόρους τε τούδ δημοσίουσ ἐπιουτοίσ δυοίν ἐν χερσίν ἔχοντες.

ազատամբռնությանը մասնակցելու համար կայսրը, իբրև պատիժ, վերացրեց սատրապների ժառանգական իրավունքները: Դրանից հետո սատրապական իշխանությունը այս կամ այն անձնավորությանը տրվում էր կայսրի հայեցողությամբ: Հնարավոր է, որ այդ ժամանակվանից սկսած՝ կայսրի կողմից նշանակված սատրապներից գանձվում էր մի նոր տեսակի հարկ, որ կոչվում էր փόροι δημοσίουσ: Իրավաբանորեն այդ նշանակում էր սատրապությունները ֆեոդերատներից իջեցնել civitas stipendiaria-ի աստիճանի, այսինքն՝ զրկել նրանց immunitas-ից: Այս հարջը մնում է կասկածելի:

Անաստաս կայսրի 496 թվականի հրամանագրերից մեկում խոսվում է հայկական տուրքերի մասին τὰ ἀρμενιακά δημοσίουσ: «Կ», արդյոք, որևէ ընդհանուր բան սրանց և փόροι δημοσίουս-ի միջև, հայտնի չէ: Անվանումից ելնելով, կարելի է ասել, որ այդ պահանջը վերաբերում էր հայերին ընդհանրապես և հավանորեն նաև կայսերական Հայաստանի մյուս ոչ սատրապական մասերին:

Ներքին Հայքը իր վիճակի տեսակետից ընդհանրությունն էր ուներ ստիպենդիար երկրների հետ: Նա սատրապությունից տարբերվում էր նրանով, որ այստեղ նստում էր պետական իշխանության ներկայացուցիչը: Հայաստանի բաժանումից հետո Վաղարշապատ կայսրը, — ասում է Պրոկոպիոսը, — իր մասում կառավարիչ նշանակում էր իր հայեցողությամբ, ում և երբ որ ցանկանում էր հետաժարիչը դեռևս մեր ժամանակ կոչվում էր comes Armeniacus²:

Այդ էն վկայում նաև հայկական աղբյուրները, որոնց համաձայն վերջին թագավորի՝ Արշակի մահվանից հետո հույները այլևս նրան հարջոյ չընտանդեցին և իրենց մասը հանձնեցին կոմսներին³:

Թագավորական իշխանության վերացումով հայոց քաղաքական կյանքում տեղի ունեցավ որոշ հեղաշրջում: Թայց այն երկրում գոյություն ունեցող իրավական հարաբերությունների կա-

² Proc. Aed. p. 286, ὁ Ῥωμαίων βασιλεὺσ ἀρχοντα τοίσ Ἀρμενίοισ ἀεὶ καθίστησ θεοῦσ καὶ ἀποκρίσθσ ἐν αὐτῷ βουλομένῳ εἶη κόμητá τε τῆσ Ἀρμενίασ ἐπιούσ καὶ εἰσ ἐπὲ τόν ἀρχοντα τοῦτον.

³ Կաթողիկոսի, Գ, Խ, 102 ևս կարգչին յոյնք ի բաժնի իրիանց թագաւոր... և այլուպէն ի բնուց մասին կարգչին յոյնք կոմէսս իշխաւոս:

ուսցվածքի մեջ առանձին փոփոխություններ չառաջացրեց: Ճիշտ ասած, հեղաշրջումը ավելի շատ շոշափում էր թագավորոզ տան, քան երկրի շահերը: Վերացնելով Արշակունի թագավորների իշխանությունը՝ կայսրերը իրենց հետագա գործունեությունն մեջ կիրառեցին զգուշավոր և լուրջ քաղաքականություն, խուսափելով այնպիսի միջոցառումներից, որոնք կարող էին շոշափել երկրի շահերը կամ հայերի ազգային ինքնասիրությունը ու մղել նրանց պարսիկների կողմը: Նրանք ձեռնուղահիմնացին երկրի ներքին կարգերին միջամտելու որևէ փորձից. այդ երկրամասում թագից ցած հասարակական կարգն ու քաղաքական պատկերը մնացին անձեռնմխելի: Կոմեսի իշխանությունը հաշտ ու համերաշխ էր տեղական ֆեոդալների, նախարարների իրավունքներին:

Գծրախտարար կոմեսի պաշտոնի էությունը մեզ լրիվ կերպով հայտնի չէ: Ստույգ դիտենք միայն, ոչ Հայաստանի կոմեսը իր տրամադրության տակ չունի զինվորական ուժեր, օձ παρόντων αὐτῆ στρατιωτικῶν καταλόγων¹: Այդ նշանակում է, որ նա քաղաքացիական իշխանության ներկայացուցիչն էր: Տեղական առումով կոմեսը հավասար էր մարզպանին՝ Արևելյան կամ Պարսկական Հայաստանի բարձրագույն քաղաքացիական պաշտոնյային, որը երկրի կառավարումը իշխանացնում էր նախարարների հետ միասին: Եթե մեզ հայտնի լիներ, թե վարչական ճիշտարտիստում ինչ դիրք էր զբաղում կոմեսը, մենք թերևս կկարողանայինք ավելի ճիշտ գծել նրա պարտականությունների սահմանները: Հայկական կոմեսը *Not. dign.*-ի մեջ չկա անշուշտ այն պատճառով, որ այդ պաշտոնը ստեղծվեց 410—413 թթ. լույս տեսած հայտնի հուշարձանից մի քիչ ուշ: Նշա մեջ հանդիպում են ուրիշ կոմեսներ, բայց նկատի առնելով կայսրության վարչական մարմիններում միօրինակություն և համաչափություն մտցնելու կայսրերի աչքի զարնող ընդհանուր ձգտումը՝ սխալ չէր լինի հայոց կոմեսին համեմատել *Not. dign.*-ի մեջ նշված կոմեսների որոշ տեսակի հետ:

Չշոշափելով Արևմուտքը և վերցնելով միայն Արևելքը՝ մենք գտնում ենք, որ կոմեսները նստում էին Եգիպտոսում, Իսաւրիայում և Արևելյան թեմում:

Comes limitis Aegypti

¹ Proc. Aed. loc. cit.

Comes per Isauriam
Comes Orientis.

Առաջին երկուսը չեն համընկնում Հայաստանի կոմեսին, որովհետև նրանք զինվորական իշխանության կրողներ են, մինչդեռ հայկական կոմեսը ուներ քաղաքացիական ֆունկցիաներ: Իսաւրիայի կոմեսը օժտված էր միաժամանակ և՛ զինվորական, և՛ քաղաքացիական լիազորություններով, ուստի կոչվում էր *comes rei militaris per Isauriam et praeses*: Իբրև զինվորական պաշտոնյա Իսաւրիայի և Եգիպտոսի կոմեսները համապատասխանում էին գուբսեղին, որոնք գտնվելով սահմանագծի վրա, ինչպես *dux Arabiae*, *dux Mesopotamiae*, պարտավոր էին կայսրության սահմանները պաշտպանել Սասանյանների մշտական սպանանքներից:

Հյուսիսում այդպիսի պոշտոնյաներից էր նաև *dux Armeniae*-ն, որ մյուս գուբսերի նման պարտավոր էր սահմանային պաշտպանության նույն ծառայությունը կատարել:

Վեշտհիշյալ կոմեսներից միանգամայն տարբերվում էր Արևելքի կոմեսը — *comes Orientis*, որը նախ և առաջ քաղաքացիական վարչության պաշտոնյա էր և իր դիրքով ու պարտականություններով համապատասխանում էր զինոցեղների փոխանորդներին: Արևելյան թեմում նա փոխարինում էր *vicarius praefecti Orientis*-ին: Դեռևս Կոստանդին Մեծի ժամանակ երբեմն նահանգներն էին ուղարկվում արտակարգ գործակալներ՝ *comites provinciarum*: Այդպիսիներից էր Արևելքի կոմեսը, որը հետագայում մնաց միակը և գործունեության շրջանակով հավասարվեց զինոցեղի սովորական փոխանորդին՝ պահելով, սակայն, իր հին կոչումը: Փոխանորդը պրեֆեկտի հասարակ տեղակալը չէր. նշանակվելով անմիջապես կայսեր կողմից՝ նա զինոցեղի սահմաններում գրավում էր ինքնուրույն դիրք և պրեֆեկտի հետ բաժանում էր նրա իրավունքներն ու լիազորությունները: Նրա պարտականությունն էր զլխավորապես հսկել նահանգների կառավարիչներին կամ պրեֆեկտներին, գանձել տուրքերը և վարել դատական գործերը: Փոխանորդները իրավունք ունեին կայսեր անունից դատ վարել՝ *vice sacra*, անմիջական կապ պահպանելով նրա հետ¹: Արևելքի

¹ Bethman-Hollweg, *Civilprocess* § 132, p. 53—54.

կոմեսը, փոխանորդների նման, դասված էր spectabilis-ի կարգը։
 Հստ իր գրաված դիրքի Հայաստանի կոմեսին պետք է դասել Արևելքի կոմեսի և սրա միջոցով թեմերի փոխանորդների կարգը¹։
 Բայց բանի որ Հայաստանը կայսրության նահանգների օրինակով չէր վերակազմված, ուստի նրանց լիակատար զուգադիպություն մասին խոսք լինել չի կարող։ Բայց որովհետև պետք է ու հնարավոր Հայաստանի կոմեսին նմանեցնել պետական պաշտոնյաների որևէ տեսակի, ուստի նշա նմանեցումը Արևելքի կոմեսին չի կարելի անհամապատասխան համարել։ Հայաստանի կոմեսին չի կարելի իջեցնել նահանգային կառավարիչի՝ praeses-ի աստիճանին, որովհետև նրան ենթակա երկիրը զգալիորեն գերազանցում էր նահանգային մարզերի սովորական չափերին։ Բարձրացնել նրան պրետորական պրեֆեկտի աստիճանի՝ նույնպես անօրին կլինի հակառակ նկատառումներով։ Մնում է ընդունել, որ կոմեսի և փոխանորդի իշխանությունները նույնն էին։

Հայաստանի կոմեսին առընթեր նահանգային կառավարիչներին՝ պրեֆեկտների գերը կատարում էին տիրակալ իշխանները, որոնք տիրում և կառավարում էին իրենց զավառը կամ նահանգը նախարարական իրավունքով։ Իշխանների նկատմամբ comes-ը, իբրև բարձրագույն իշխանության ներկայացուցիչ, ինչպես ասացինք, մարզպանին հավասար անձնավորություն էր։

Փոխանորդի և կոմեսի աստիճանների նույնացմամբ էլ որոշվում են կոմեսի իշխանության սահմանները։ Փոխանորդի պարտականությունների շրջանակը սահմանափակող վերը հիշված երեք հոդվածներից ամենակարևորը, հատկապես Հայաստանի կոմեսի մերաբերյալ, պետք է համարել պետական տուրքերը գանձելու հնդրում նրա պատասխանատվությունը, եթե միայն դրանք գոյություն ունեին։ Խնդրի այդ կողմը շատ պրոբլեմային է։ Անաստաս կայսեր վերը հիշատակված տաճարային ծախսերի մասին էլ պիտի մեջ ասված է հետևյալը.

C. J. X 17 13. Αυτοκράτωρ Ἀναστάσιος Α. Ἀνθεμίω ἐπάρχῳ τῶν πραιτωρίων.

...բոլոր տուրքերը և դրանց
 թվում, այսպես կոշված, հայ-
 կականները, պետք է գանձվեն

...trimenōs δὲ πάντα τὰ
 δημόσια εἰσφερέσθω, τὰ τε ἄλ-
 λα καὶ τὰ λεγόμενα Ἀ ρ μ ε ν ι-

երեք նվազով, այսինքն՝ հուն-
 վարի սկզբին, մայիսի սկզբին
 և ինդիկտի վերջերին¹, ընդ
 ոչում գանձումները բաժան-
 վում են երեք հավասար մա-
 սի և հարկատուներին ժամ-
 կետների ոչ մի նոր հետա-
 ձգում չի արվում։ Նկատի ու-
 նենալով, որ հայկական վճա-
 բումները կատարվում էին
 երկու նվազով, ապա նրանց,
 ուղբեր այդպես էին վճարում,
 եթե նրանք ցանկացած են,
 թույլ է արվում գերազանցել
 իրենց նախկին սովորությու-
 նը և այսուհետև էլ շարու-
 նակել վճարել կես-կես՝ երկու
 նվազով և երկրորդ կեսը մու-
 ծել հաջորդ ինդիկտի սեպ-
 տեմբերին։ Բայց եթե կան
 հայկական վճարումները երեք
 նվազով վճարել ցանկացող-
 ներ, այդպիսիներին արվում
 է հետաձգման արտոնություն
 մինչև հաջորդ ինդիկտի սեպ-
 տեմբեր ամիսը։ Նախկին
 կարգը պահպանելու դեպքում
 վճարումները կատարվում են
 ինչպես ընդունված է՝ յուրա-
 բանչուր ինդիկտի սկզբին,
 ինչպես այդ երեում է հենց
 նրանց անվանումից։

Տուրքերը, որոնց մասին այստեղ խոսվում է, հազիվ թե հնա-
 բավոր է վերագրել Փոքր Հայքի նահանգներին։ Վերջինները վա-

α κ α, τουτέστι καλάνδαις Ἰανο-
 υαρίαις καὶ καλάνδαις Μαΐαις
 καὶ πρὸς τῷ τέλει τῆς ἐπιμεμή-
 σεως, ἐξ ἴσων τριῶν μερῶν διαι-
 ρουμένων τῶν δημοσίων, καὶ
 μηδεμιᾶς καινοτομίας ἐν τῷ μέ-
 σῳ γινομένης κατὰ τῶν συντε-
 λῶν. Ἐπειδὴ δὲ τὰ Ἀρμενιακὰ
 τελέσματα ἐν δύο καταβολαῖς
 συντελεῖτο, ἔξεστι τοῖς ταῦτα
 συντελοῦσιν, εἰ βούλονται, τὴν
 προτέραν συνήθειαν προτιμᾶν
 καὶ ἐν δύο καταβολαῖς ἀνά ἡμισυ
 καταβάλλειν, καὶ τὸ ἕτερον
 ἡμισυ ἐν τῷ Σεπτεμβρίῳ τῆς
 μελλούσης ἐπιμεμήσεως καταβά-
 λλειν. Εἰ δὲ καὶ τριμερῶς βού-
 λονται τὰ Ἀρμενιακὰ δημόσια
 καταβάλλειν, ἐχέτωσαν τὸν Σεπ-
 τέμβριον μῆνα τῆς μελλούσης
 ἐπιμεμήσεως πρὸς ὑπέροισιν αὐ-
 τοῖς δεδομένον. Τὸ δὲ προαπεσ-
 ταλμένον κατὰ σύνθεσιν εἰσφερέ-
 σθω ἐν τῷ προνομίῳ ἐκάστης
 ἐπιμεμήσεως, ἐπειδὴ τοῦτο δηλοῖ
 καὶ ἡ προσηγορία αὐτοῦ.

¹ Cod. Th. XI—I 15, վճարումը կատարվում էր հունվարի մեկին, մայիսի մե-
 քին և սեպտեմբերի մեկին։

¹ Güterbock, Römisch-Armenien, p. 28.

դուց ի վեր ձուլվել էին կայսրությանը, և դժվար է ենթադրել, թե այնտեղ ընդհանուր կարգից շեղումներ էին եղել՝ թեկուզ վճարումների ժամկետների վերաբերյալ: Կայսրի կարգադրությունը ավելի շուտ վերաբերում է Ներքին Հայքին, որ ենթակա էր կոմեսին, և եթե այն մտել է պրետորիական պրեֆեկտին ուղղված էղիկտի մեջ, ապա դա միայն ապացուցում է, որ կոմեսը որոշ կախում ուներ այս վերջինից, և հաստատում է Հայաստանի կոմեսի հիերարխիայում գրաված դիրքի մասին եղած այն կարծիքը, թե նա յուրատեսակ փոխանորդ էր:

Հուստինիանոսի թագավորության սկզբում Ներքին Հայքում կայսերական իշխանության դեմ առաջ եկավ մի ուժեղ շարժում, և հայերի դժգոհությունը մեծանալով, վեշաժվեց բացահայտ ապստամբություն: Խոսովությունների զխավոր պատճառը, ժամանակակիցի ասելով, ծանր հարկերն էին:

Հայաստանի կառավարիչ Ակակիոսը ապօրինի հարկեր էր հավաքում և երկրի վրա դրեց մինչև այդ շտեմնված՝ մոտ շուրս կենտինարի հասնող հարկ¹: Ապստամբներին զսպելու նպատակով մայրաքաղաքից ուղարկված Յիստան խոստացավ միջնորդել կայսրի առաջ վերացնելու նոր հարկը²: Հենց այդ ժամանակին է վերաբերում Հուստինիանոսի դեմ հայ իշխանների՝ պարսից թագավորին ուղղված բողոքը, որի մեջ նրանք հենվում էին Քեոզոսիոսի հետ Արշակի կնքած պայմանագրի վրա: Ինչպե՞ս համատեղել *ἀρμενιακά δημόσια*-ի առկայությունը հայերի այն պնդման հետ, թե իրենք մինչև Հուստինիանոսը հարկերից ազատ են եղել: Կամ Անաստաս կայսրի հռովարտակի մեջ հիշատակված հարկը վերաբերում է Փոքր Հայքին և ոչ թե Ներքին Հայքին և կամ էլ սխալ ենք հասկանում Արշակի պայմանագրի իմաստը: Իսկապես ի՞նչ է նշանակում իրականում հետևյալ ձևակերպումը, *δωροισμόν* Արշակին մերձավոր բուրջ հաջորդ սերունդները, որոնց շահերը ապահովվում են դաշինքով: Խոսքը այստեղ Արշակին ենթակա Հայաստանի հայ բնակչության մասին է *in toto*, թե՞ բառի նեղ իմաստով՝

¹ Proc. Pers. III 3, p. 159, τὰ τε χρήματα ἐληίξητο οὐδενὶ λόγῳ καὶ φόρου αὐτοῖς ἀπαγωγῆν αὐπποτε οὐσαν ἐς κεντηνάρια τέσσαρα ἑταξεν.

² *ib.* p. 160, πείθειν βασιλέα ὑποσχόμενος ἀφεῖναι αὐτοῖς τὴν καινὴν τοῦ φόρου ἀπαγωγῆν.

Արշակունիների հաջորդների և կամ, նույնիսկ, առհասարակ նախարարական տոհմերի, որոնց անվանի ներկայացուցիչները ձգտում էին ազգակցական կապեր հաստատել Արշակունիների տան հետ: Հնարավոր է, որ ազնվականության վիճակը իսկապես վատացել էր, և մինչև այդ ազատ համարվող դասի իրավունքները սահմանափակվել էին: Զայրացած իշխանները մեղադրում էին Հուստինիանոսին պայմանագիրը խախտելու մեջ, այն բանում, որ նա իրենց վրա հարկ է նշանակել, մի բան, որ առաջ չկար ֆόρου ἀπαγωγῆν ἑταξεν οὐ πρότερον οὐσαν: Այդ հարկը հավասար էր շուրս կենտինարի կամ 400 ֆունտ ոսկու Հռոմեական ֆունտը մերից մի քիչ պակաս էր: Չորս հարյուր ֆունտ ոսկին, ֆունտը հաշվելով մոտավորապես 500 ուրբի, մեր դրամով կազմում է 200 հազար ուրբի: Եթե այդ հարկը դրված էր ազնվականության՝ նախարարների վրա, ապա պարզ է, որ դա հողային հարկ էր: Անմտություն է, սակայն, ենթադրել այդպիսի մի անհավատալի բարձր հարկ Ներքին Հայքի համար, որը բաղկացած էր ինք ժողովրդի զավառներից և հավանորեն նույնքան էլ իշխանական տուն ուներ:

Այդ տեսակետից էլ շուրս կենտինար ոսկին չի կարելի համարել օրինական հարկերից դուրս ամբողջ երկրից զանձվող հավելյալ տուրք՝ τὰ ἀρμενιακά: Ընդունելով նույնիսկ, որ Հայաստանից ստացվող պետական ամբողջ հասույթը կազմում է շուրս կենտինար ոսկի, ապա այդ էլ երկրի համար պետք է համարել ծանր: Եվ եթե ճիշտ է, որ շուրս կենտինար հարկը Հուստինիանոսի օրոք դրվել է Ակակիոսի կողմից, ապա պետք է անպայման ընդունել, որ մինչև այդ հայերը իրոք որ ազատ էին հարկերից, և որ պայմանագրի մասին եղած պատմությունը առասպել չէ՝ «ծնված հայ իշխանների սնափառությունից», ինչպես թվում է որոշ հետազոտողների:

Հայաստանի կոմեսի մյուս պարտականությունների մասին ոչինչ հայտնի չէ: Երկրում արդարադատության հաշցի վերաբերյալ հետաքրքրական է Հուստինիանոսի 529 թվականի դեկրետներից մեկի սկիզբը, որի մեջ կայսրին բողոք ուղղելու իրավունքը շեղծվում է ի շուրս մյուս նահանգների նաև Հայաստանի մասերին և ազգաց, այսինքն՝ հայկական նահանգ-

¹ Proc. Pers. III, p. 164.

ներին ու սատրապություններին¹: Արդյո՞ք այդ իրավունքը ապահովված էր նրանց համար anterioribus legibus-ով, թե Հուստինիանոսը ինքը այն տարածեց նաև հայերի վրա, պարզ չէ: Նկատի ունենալով, որ հիշյալ որոշումը նախորդում էր Հուստինիանոսի Հայաստանում կատարած ռեֆորմներին, հավանաբար այդպես էր գուշծի վիճակը նաև նրանից առաջ: Դրանում էր արտահայտվում արդարադատության գծով կայսեր սուլվերեն իշխանությունը դաշնակից երկրների նկատմամբ:

Կոմեսի վարչական իշխանությունը պետք է արտահայտվեր նախարարական իշխանության նկատմամբ նրա ունեցած հարաբերությամբ: Այդ մասին ուղղակի տվյալներ չունենք: Երկրում կառավարող այլ մարմիններ չունենալու պատճառով, ըստ երևույթին, տեղական նախարարներին էր վերապահված այն պարտականությունների իրագործումը, որ մյուս նահանգներում հանձնված էին կառավարիչներին, պրեզիդենտներին կամ արխոնտներին: Դժբախտաբար պակասում են տվյալներ նաև այն մասին, թե երկիրը ինչպես էր բաժանված իշխանության և իրավունքի տեղական ներկայացուցիչների միջև: Հին հուշարձանները չեն պահպանել այն իշխանական ընտանիքների անունները, որոնք առհասարակ կալվածքներ ունեին Հայաստանի արևմտյան մասում: Գիտենք, որ Սպերի գավառը պատկանում էր Բագրատունի իշխաններին²: Հիմք կա կարծելու, որ համենայն դեպս Հայաստանի բաժանման ժամանակվանից Կարինը դարձավ Արշակունիների արքունի կալվածքը: Մանվել Մամիկոնյանի օրոք և նրա առաջարկությամբ Արշակ և Վաղարշակ արքայորդիները հաստատվեցին Կարինում³: Դրանից առաջ, երբ նույն Մամիկոնյանը ապրստամբեց Աշակունիների վերջին թագավորներից մեկի՝ Վարագ-

գատի դեմ, թշնամական գործողությունները նրանց միջև տեղի ունեցան Կարինի դաշտում¹, մի հանգամանք, որից կարելի է եզրակացնել, թե Կարինը պատկանում էր Արշակունիներին:

Թագը կորցնելուց հետո Արշակունյաց տոհմը, անշուշտ, չվերացավ: Նախկին թագավորների հետնորդները իշխանական մյուս տոհմերի նման շարունակեցին օգտվել տիրող իշխանների իրավունքներից: Հինգերորդ դարի պատմության մեջ բազմիցս հիշատակվում է այսպես կոչված ո ս տ ա ն ի կ բառը, այսինքն՝ արքունի մարզիկ կամ (նախկին) արքայազներ²: Նրանք մասնակցում էին տեղի ունեցող իրագործություններին և գտնվում էին Վասակի բանակում: Նախարարական հեծելազորը պատերազմի էր գնում առանձին ջոկատներով՝ յուրաքանչյուրն իր իշխանի գլխավորությամբ: Մինչդեռ պատմիչները հակառակ հանվան հիշատակելով ն դարի ապստամբության մասնակից իշխանական տոհմերի առաջնորդներին, ոչ մի խոսք չեն ասում գեղերի պետերի մասին: Որպես բացառություն անվանապես հիշատակվում է ոստանիկ տեղից կամ գավառից ոմն Ջանդաղան³: Վասակի փոխարեն նշանակված հայազգի Ատրորմիզը, դատելով նրա Արշական մականունից, նույնպես ծագում էր Արշակունիներից⁴, որը հայկական Աշակունիի պարսկական համարժեքն է:

Արշակունի թագավորների հետնորդների մասին հայ հեղինակների համառ և անհասկանալի լուրջությունը խզվում է արտաքին ազդյունների տեղեկություններով, որոնք հավաստում են, որ Արշակունիները առաջվա նման կարևոր դեր են խաղացել երկրի ճակատագրի մեջ: Այն հայ իշխանները, որոնք Հուստինիանոսի գահակալության սկզբում ղեկավարում էին հայկական շարժումը բնորոշ բյուզանդական իշխանությունների, պարսից նոսրով թագավորի աջն պնդում էին, որ «իրենցից շատերը ծագումով Արշակունի են»⁵: Պատմագիրը հիշատակում է նաև ապստամբությունը

¹ C. J. VII 63 5, Cum anterioribus legibus ex omni provincia ad hunc nostrum sacratissimum comitatum similis cursus ad appellationes exercendas impertitus est, necessarium nobis visum est huius modi spatiis iustum imponere libramentum. Sancimus itaque, si quidem ad Aegyptiaco vel Libyco limitivel Orientali tractu usque ad utrasque Cilicias numerando vel Armeniis et gentibus et omni Illprico causo fuerit more appellationum transmissa, primum semestre sratium in antiqua definitione permanere et nihil penitus neque deminui neque adrescere...

² Փավստոս, Ծ, Խդ, Սերեսու, էջ 139:

³ Նույն տեղում:

¹ Փավստոս, Ծ, Խ:

² Աղյի, էջ 19, յարթուքի տակ գոտանիկ մարզիկ... նաև էջ 173, հմմտ. 136, ինչպես նաև՝ Փարպեցի, էջ 67, նաև էջ 73 և այլն, ալլը յոստանկադ:

³ Փարպեցի, էջ 61, Ջանդաղան յոստանեայ տանէն:

⁴ Աղյի տեղում, էջ 73, Ատրորմիզը Արշական, յայխարհէն հայոց=Աղյի, էջ 147, հմմտ. Ջամվան փոխանակ՝ մամիկոնեան:

⁵ Proc. Pers. II 3, p. 163, ετοι μεν ημιν πολλοι 'Αρσασίται. հմմտ. Փարպեցի, էջ 18, այնպես էլ այլոց... գրակից է յունոց իշխանութեանն, ընդ որոյ ձեռամբ բազումք են հնգանդեայք յազգէն Արշակունեայք:

գլխավորողների՝ Հովհաննեսի և նրա որդի Արտավանի անունները, որոնք Արշակունիների տոհմից էին: Արտավանը իր եղբոր հետ միասին տեղափոխվում է Բյուզանդիա, որտեղ նրան շուտով վիճակվում է դասվել կայսրության առաջնակարգ գործիչների շարքը: Հուստինիանոսի ժամանակ էր ապրում նաև սարկավազ Թովմա Երանելին, որ հայտնի էր իր ճգնավորական կյանքով և ժամանակակիցի խոսքերով ասած «սեղում էր Արշակունի տոհմից և մանկությունից դաստիարակվել էր արքայավայել ու Արևելքում մի ժամանակ շատ հզոր պատրիկ Բարբարիի զավակն էր»¹:

Հայադգի մի ուրիշ ճգնավոր, դարձյալ Թովմա անունով, որի հայրը *olim vir nobilissimus et regibus familiaris* էր՝ ամուսնացած Մարիամ անունով մեկի հետ, ծագումով «Արշակունիների նշանավոր տոհմից էր, արքայական շառավիղից»²: Այս օրինակները ցույց են հնարավոր կասկածները և հաստատում, որ Արշակունիների տոհմը թագր կորցնելուց հետո շարունակել է իր գոյությունը Ե դարի սկզբին: Մագումով Արշակունի աղնվականների կալվածքների թվին էր պատկանում, անկասկած, նաև Կարինը:

Ներքին Հայքի մյուս մասերում կալվածքներ ունեցող իշխանական տոհմերի անունները չեն պահպանվել: Մեզ հասած հուշարձանների մեջ դրանք կոչվում են գավառների անունով՝ «Սպեւրացիք, իշխանքն Բագրատունեաց, և Մանաղայքն, և Դարանաղայքն, և որք յԵկեղեցաց գաւառէ... և Կարնացիք, և Տայեցիք», ինչպես նաև Մարգաղայքն, Խորձենիք, Դերջայինք, և նույնիսկ Կամախայք՝ նշանավոր քաղաքի անունով³:

Դարանաղիքը և Եկեղյաց գավառը սովորաբար համարվում են Եկեղեցական կալվածքներ: Դ դարի դեպքերի պատմիչը հազորգում է, որ Ներսես կաթողիկոսի ժամանակ Եկեղեցին տիրում էր ընդարձակ կալվածքների՝ ունենալով 15 գավառ, որոնց թվում,

¹ Ioan. Ephes. *De beatis* XIII p. 69, vir fuerat magnificus et fastidiosus, a puero regie educatus, natus genere Arsacidarum, Bar-bar'i, olim patricii omnium in Oriente potentissimi, maximi, et illustrissimi, Bar-bar'i=bar վահրէ?

² *ib* XXI p. 101, feminam nobilem amplissima et clarissima gente Arsacuniorum natam, quae ut ajunt stirps regia nobilissima fuerat, uxorem duxerat:

³ Սերբոս, էջ 139, Սովեբ. 2, Կարնացիք, Խորձենիք, տարընթերցվածք՝ Խորձենք, Դերջայինք, տարընթերցվածք՝ Դերջայինք և Կամախայք:

բացի վերոհիշյալ երկուսից, հիշվում են Այրարատը, Տարոնը, Բզնունիքը և Մոփղը¹:

Մենք կարծում ենք, որ պատմիչի այս խոսքերը չպետք է այնպես հասկանալ, թե այդ բոլոր գավառները ամբողջությամբ պատկանում էին Եկեղեցուն, դա չէր համապատասխանի մեր ունեցած ուրիշ տեղեկություններին, այլ պետք է հասկանալ այնպես, որ այդ գավառներում իշխանական կալվածքների կողքին կային նաև Եկեղեցական կամ ավելի ճիշտ՝ հոգևոր կալվածքներ:

Հայտնի է, որ Եկեղյաց գավառը Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական տան կամ Պահլավունիների տոհմական կալվածքն էր²: Սահակ կաթողիկոսի մահից հետո (+439) արու զավակ չունենալու պատճառով կալվածքներն անցան նրա դստերը՝ Մամիկոնյան իշխանուհուն³: Այլ գավառների հետ միասին Մամիկոնյանները ժառանգեցին, ըստ երևույթին, նաև Եկեղյաց գավառը: Այդ ենթադրության օգտին են խոսում հատուկենտ հիշատակություններ, որոնցից կարելի է եզրակացնել, որ Տարոնի և Տայքի Մամիկոնյաններից բացի Հռոմեական Հայաստանում գոյություն ունեցող Մամիկոնյանների մի այլ ճյուղ: Ըստ Եղիշեի վկայության Ե դարում Վասակ մարզպանին դաշնակից էր «Վասակ անունով մի մարդ՝ այն Մամիկոնյաններից, որոնք ծառայության մեջ էին» հույների մոտ⁴, այսինքն՝ Հայաստանի կայսրությանը պատկանող մասում: Բացի դրանից, Ներքին Հայքում 536 թ. տեղի ունեցած ապստամբության գործույթյա մասնակիցներից մեկը կոչվում է Վասակ, որ Հովհաննես Արշակունու փեսան էր. նա էր, որ զբլխավորում էր պարսից խոսրով թագավորին ներկայացած հայ իշխանների դեսպանությունը⁵: Այդ ձևերից ուղղակի չենույնպես Մամիկոնյանների շառավիղներից էր, և կրում էր նրանց անունը և բուն ոգին, որ այնպես հատուկ էր այդ նշանավոր իշխանական ընտանիքին: Խոսրովի առջև արտասանած ճառի բովանդակությունից երևում է, որ Վասակը Հուստինիանոսին ենթակա Հայաստանի իշխաններից էր: Հետագայում նա հաշտվեց Հուստինիանոսի հետ

¹ Փավստոս, Գ, Ժդ:

² Նույն տեղում, Գ, բ և շար.

³ Փարպեցի, էջ 37:

⁴ Եղիշե, էջ 174—5:

⁵ Proc. Pers. II 3, p. 163, Βασσάχου σφίσιον ἡγουμένου, δραστρεπίου δ.δρόσ.

և մյուս ապստամբների հետ միասին տեղափոխվեց Բյուզանդիա՝ նթե այդ նկատառումների հիման վրա պետք է ընդունել Մամիկոնյանների երրորդ ճյուղի գոյությունը կայսերական Հայաստանում, ապա ամենից ավելի հավանական է փնտրել այն Եկեղյաց գավառում¹։

Կայսրության մեջ գտնվող հայկական հողերի վերը զգված պատկերը գոյատևեց մինչև Հուստինիանոսը, որի օրոք այն ենթարկվեց արմատական փոփոխության։

¹ Հստ Եղիշեի Վասակ Մամիկոնյանը՝ մարզպանի կուսակիցը, այն ժամանակ, այսինքն՝ 451 թվականին, ներքին Հայքի սպարապետն էր, և նրան էին հանձնված հոռմենական զորքերը պարսից սահմանազրիհն. «այրն այն սպարապետ էր ստորին Հայոց և հաւատարիմ զօրացն Հոռովոց ի սահմանին պարսից», էջ 175: Ստորին Հայք ասելով, ըստ երեսիլին, հասկացվել են սատրապությունները. ստացվում է, որ Վասակը սատրապներին մեկն էր Եղիշեի այս տեղեկությունը սակայն չի խոսում հօգուտ Եղիշեի, իբրև ն զարի պատմիչի։ Հայտնի է, որ ոչ սատրապություններում և ոչ էլ ներքին Հայքում կայսրերը զորք չէին պահում և սահմանների, ինչպես նաև երկրի պաշտպանության գործը զրված էր տեղական ուժերի վրա մինչև 529 թ., երբ Հուստինիանոսն առաջին անգամ նշանակեց Հայաստանի ստրատեգ և նրան ենթակա երեք դուքս։ Քանի որ պատմիչը խոսում է Հայաստանում հռոմեական զորքերի սպարապետի մասին, ում էլ հասկանալու լինենք նրա տակ՝ ստրատեգին թե՛ դուքսերից մեկին, այնուամենայնիվ, նրա պիտք չի կարող զրված լինել 529 թվականից առաջ։ Այդ Վասակի մասին շգիտե Փարպեցին։ Եղիշեի մոտ եղած տեղեկությունը նրա մասին պիտի համարել հետագայի հավելագրություններից մեկը, որ չկա Փարպեցու բնագրում։ Արդյոք Եղիշեի հիշատակած Վասակի անձնավորության մեջ թաքնված չէ՞ այն պատմական անձնավորության և ապստամբ հայերի պետի հիշատակը, որի մասին պատմում է Պրոկոպիոսը։ Հստ Պրոկոպիոսի Վասակը մայրաքաղաք է եկել մինչև 544 թ. պարսկական արշավանքը։ Այդ ժամանակ երեք դուքսերից մեկի պաշտոնը վարում էին Կամսարական իշխանները Կիթաոնում։ Կարող է պատահել, որ այն ժամանակ այդպիսի դուքս էր նշանակվել նաև Վասակը, որ լավ ծանոթ էր տեղական պայմաններին, և ուղարկվել էր Մարտիրոսապոլիս, որտեղ նստում էր գուբը, մի հանգամանք, որ հետաքրքրական է Եղիշեի քննության համար։

**ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՎԵՐԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Հուստինիանոսի և նրա բազմաթիվ բնութագիրը։ Նրա աշխարհակալական քաղաքականությունը։ Նրա ռեֆորմատորական գործունեությունը։ Հայաստանի զինվորական վերակազմությունը։ Զինվորական իշխանության կենտրոնացումը հանձին Հայաստանի ստրատեգոսի։ Հուստինիանոսի զեկրեալ ստրատեգոս նշանակելու մասին։ Մալաթիայի ճաղողած տեղեկությունները այս մասին։ Գեկրեալի վերլուծությունը։ Նրա հրատարակության քվակալը։ Ստրատեգոսի իշխանության էությունը։ Նրա բանակը և ղվակը։ Նրան ենթակա զուխերը։ Նրա ռազմական օկուպացումը։ Պաշտպանության համակարգը։ Հուստինիանոսի ամրացալիությունը՝ Մարտիրոսապոլիս, Կիթաոն, Արտաշեսոն, Կարին-Քեղոսապոլիս, Վիթան-Լեոնտոպոլիս, Մուսին-Հուստինիանոպոլիս, Սատաղ, Կոլոնիա, Բայբեդ, Անտոն, Լիսիոմ-Լիբաբարդ, Սեբաստիա, Նիկոպոլիս, Մելիտենե։ Հուստինիանոսի կառուցած տաճարները։ Ամրաշինական արվեստի նիմունքները՝ Քեղոսապոլիս կառուցումը քա Պրոկոպիոսի և ըստ հայկական ավանդությունների։ Ամրաշինների տեսակները։

Հուստինիանոսի գահակալությունը կայսրության զարգացման պատմության մեջ նշանավորում է շատ կողմերից ուշագրավ մի դարաշրջան։ Հուստինիանոսը այն անձնավորություններից է, որոնք գահ են բարձրանում որոշակի գաղափարական տրամադրություններով և իրենց գործունեության առաջիկա խնդիրների մասին հստակ պատկերացումով։ Առաջին իսկ տարիներից նա ձեռնամուխ եղավ մի շարք ռեֆորմների, որոնք շոշափում էին պետական կյանքի զանազան կողմերը։ Նրա վերափոխիչ գործունեությունն ընդգրկում էր հավասարապես թե՛ օրենսդրական և թե՛ դատական ու վարչական իրավունքի բնագավառները։ Դատարարական լինելով հռոմեական ավանդույթներով և մի տեսակ ստրկական ակնածանք տածելով հռոմեական անցյալի նկատմամբ՝ նա երազում էր վերականգնել կայսրության երբեմնի վեհությունը և նրան վերադարձ-

նել կենսարնների ու օգոստոսների նախկին ժամանակները: Հռոմեական պետականության վիթխարի շենքի հաստատուն հիմքը, Հուստինիանոսի համովամբ, զենքն ու օրենքն էին, որոնցով ապահովվում էր նրա ամբողջականությունն ու հզորությունը: Դրանք էին հռոմեացիների բարօրության արմատները: Ավելին՝ նա ենթադրում էր, որ դրանից է ստեղծվում այն ամուր պատվանդանը, որի վրա պիտի հիմնվի յուրաքանչյուր պետականություն: «Summa rei publicae tuitio,— հայտարարում է կայսրը,— de stirpe duarum rerum, armorum atque legum, veniens vimque suam exinde muniens felix Romanorum genus»¹:

Նշելով այդպիսի ըմբռնումից՝ Հուստինիանոսն իր առաջնահերթ խնդիրը դարձրեց կայսրության ուղղման հզորության և իրավական կարգի բարելավումը:

Armis atque legi-ին ծառայելը, իբրև պետականության պատվանդանի, արտաքին քաղաքականության մեջ անդիմադրելիորեն մղում է ղեպի աշխարհակալության, իսկ ճերբին քաղաքականության մեջ՝ ղեպի միահեծանության: Եվ Հուստինիանոսը, իդեալականացնելով հռոմեական անցյալը, տարվեց զինվորական նախկին փայլը վերականգնելու անիրագործելի երազներով, ամբողջովին համակվեց հռոմեական վաղուց արդեն մարած ոգու վերակենդանացման երազային գաղափարներով և բնականաբար մի կողմից կանգնեց լայն նվաճումների ուղու վրա, իսկ մյուս կողմից ձգտեց հռոմեական ավանդույթների հիման վրա կենտրոնացնել և ամրապնդել իշխանությունը: Նրա երկարատև թագավորությունն ընթացավ անընդհատ պատերազմների մեջ՝ մերթ Արևելքում, մերթ Արևմուտքում: Իր լեզենոնները նետելով կայսրության մի ծայրից մյուսը՝ Հուստինիանոսը պատերազմեց պարսիկների դեմ և հպատակեցրեց իր սահմաններից դուրս գտնվող մի շարք կիսանկախ ազգությունների՝ Միջագետքի սարախինոսներին, հայերին, ճաներին, լազերին, խորտակեց արևմտյան կայսրության սահմանները խուժող նոր ժողովուրդների ուժերը՝ նվաճելով գոթերի, վանդալների, մավրուսների թագավորությունները Իտալիայում, Աֆրիկայում և մինչև իսկ Իսպանիայում:

Հուստինիանոսի և նրա աշխարհակալական քաղաքականության փայլուն բնութագրիչը տվել է Պրոկոպիոսն իր երկու ճառում՝

¹ De J. C. confirmando, սիզրի բառերը:

պարտից նոսրով թագավորի մոտ ուղարկված գոթական և հայկական ղեսպանների բերանով: «Հուստինիանոսը այնպիսի մարդ է,— ասում են գոթերի ղեսպանները,— որ իր էությամբ հակված է հեղաշրջումների և անհագորեն տենչում է տիրանալու այն ամենին, որի վրա բացարձակապես որևէ իրավունք չունի. նա ի վիճակի չէ մեալ պայմանագրով հաստատված սահմաններում, վատվում է մբողջ տիեզերքը գրավելու կրթով՝ ձգտելով նվաճել բոլոր թագավորությունները»¹:

Նույնչափ դառն էին հնչում և հայերի խոսքերը: Հիշատակելով քաղքեր ժողովուրդներին Հուստինիանոսի հասցրած բոլոր աղետները՝ հայերը զայրույթով բացականչում են. «Զէ՞ որ ամբողջ աշխարհն անգամ չի տեղավորում այդ մարդուն. կարծես թե քիչ է նրան ամբողջ մարդկության վրա թագավորելը. աչքը դրել է նաև եթերի վրա և նայում է, թե օվկիանոսից այն կողմ չկա՞ն արդյոք թաքնված վայրեր, որպեսզի, ազահարար, այնտեղ էլ իր համար նոր աշխարհ ձեռք գցի»²:

Թև որքան ստույգ է այդ նկարագիրը, որ դուրս է եկել Հուստինիանոսին այնքան լավ ուսումնասիրած ժամանակակցի գրչի տակից, երևում է իր իսկ՝ կայսեր հետևյալ խոսքերից. «Այնքան ծախքերից և պատերազմներից հետո աստված մեզ հնարավորություն տվեց հաշտություն կնքելու պարսիկների հետ, հպատակեցնելու վանդալներին, ալաններին և մավրուսներին, նվաճելու ամբողջ Աֆրիկան և Սիցիլիան. և մենք հույս ունենք, որ Աստծո օգնությամբ կհաջողվի մեր իշխանությունը տարածել նաև երկու օվկիանոսների միջև գտնվող մյուս երկրների վրա, որոնց տիրում էին հին հռոմեացիները, և որոնք հետագայում աստիճանաբար անջատվեցին նրանց անփութության հետևանքով»³:

Մտահղացումներով վիթխարի այս ուղղման ձեռնարկումների վրա վատնվեցին կայսրության նյութական և հոգևոր հսկայական ուժեր: Պետության սահմանների ընդարձակվելուն զուգըն-

¹ Proc. Pers. II, 2, p. 157.

² id. p. 164—165, ή γή τόν άνθρωπον ού χῶρεί ξύμπασα. μικρόν ἔστιν αὐτῷ πάντων ὁμοῦ τῶν ἀνθρώπων κράτειν. ὁ δὲ καί τὸν αἰθέρα περισσοπέι καί τοὺς ὑπὲρ τὸν ὠκεανὸν διερευνᾶται μυχοὺς ἄλλην αὐτῷ τινα οἰκουμένην περιποιεῖσθαι βουλόμενος.

³ Nov. 30=Const. 44-ի վերջը:

թաց անում ու իրագործվում էր կենտրոնացման ձգտումը: Իշխանությունը կենտրոնացնելու սկզբունքը մտնում էր Հուստինիանոսի տեսական հայացքների մեջ, որոնք նա առանց երկմտության բազմիցս արտահայտել էր դեռևս իր առաջին դեկրետներում: Հուստինիանոսն ի ծնե իր էությունը բունապետ էր. նրա բնավորության այդ գիծը սքանչելիորեն արտահայտվում է հին օրենսդրությունը վերանայելու և հռչակավոր օրենսգիրքը մշակելու ու խմբագրելու առթիվ նրա կազմած դեկրետներում: Վերջիններում հռչակվում է կայսեր անձի սրբազանության սկզբունքը և նրա իշխանության աստվածային ծագումը. կայսրը հանդիսանում է օրենքի և արդարադատության մարմնացումը: Իշխանությունը ի վերուստ տրված պարզ է. *‘imperium nobis a caelesti maiestate traditum est’*¹, Եթե այդպես է, ապա, իհարկե, «ի՞նչը կարող է լինել ավելի վեհ, — շարունակում է կայսրը, — և ավելի սրբազան, քան կայսերական մեծությունը», *quid enim maius, quid sanctius imperiali est maiestate?*

Նա օրենքի միակ աղբյուրն ու կրողն է. ոչ միայն օրենք հրատարակելու իրավունքը, այլ և՛ օրենքը, և՛ նրա մեկնության իրավունքը հանդիսանում են գերազույն անձի անկապտելի սեփականությունը *tam conditor quam interpres legum solus imperator*²: Այն բոլոր դեպքերում, երբ օրենքի իմաստը հասկանալու հարցում տարակուսանքներ և անորոշություններ են ծագում, անհրաժեշտորեն պետք է դիմել տիրակալին, և նա *numine caelesti erecta emendabat et in competentem formam redigebat*³. «Եվ իրոք, կարելի է արդյոք պատկերացնել այնպիսի մի անպատկառ մարդ, որ հանդգնի շքեղունել թագավորի դատողությունները այն դեպքում, երբ հին իրավունքի հիմնադիրներն էլ պարզ և շափազանց հստակ որոշել են, որ կայսերական հրամանով արած բոլոր կարգադրություններն օրենքի ուժ ունեն: Եվ էլ ո՞վ պետք է լուծի օրենքի առեղծվածները և ո՞վ կարող է պարզաբանել դրանք բոլորին, եթե ոչ նա, որին միայն տրված է օրենքի կրողը լինելու իրավունքը»⁴:

Հուստինիանոսի վերը բերված բառացի խոսքերով ցայտուն

¹ C. J. 1, 7, 17-ի սկիզբը:

² C. J. 1, 12,

³ C. J. 1, 17, 2,

⁴ C. J. 1, 12,

կերպով գծագրվում է ինքնակալ և ինքնիշխան վեհապետի կերպարը: Բնական հակումները վեր են ածվել սկզբունքների, և ներգործուն ձգտումները շղարշված են տեսական հիմնավորումներով: Այս ամենը պետք է նպաստեին կայսրության ներսում ծագվում, բայց խիստ կենտրոնացված պետական իշխանություն առեղծելու նրա իղձերի կենսագործմանը:

Այդ նպատակով Հուստինիանոսը վարչական բնագավառում ձևափոխեց մի շարք ունիտարներ, որոնք, ինչպես արտահայտվում է ինքը՝ ունիտարմատորը, պետք է հանգեին այն բանին, որ *ut nostro moderamine recte gubernetur et firme custodiatur*¹: Ահա այն նշանաբանը, որ ընկած էր Հուստինիանոսի նահանգային ունիտարների, այդ թվում նաև հայկական հողերի վերակազմության հիմքում:

Այն փոփոխությունները, որ Հուստինիանոսը կատարեց Հայաստանում, անկասկած բխում էին նախ և առաջ աշխարհակալական ընդհանուր քաղաքականության ոգուց և ծառայում էին կայսրության միավորման և հզորացման շահերին: Կայսրության այլատարր մասերը համախմբելու գաղափարը, թեկուզև նրա միակողմանի ըմբռնումով, որ հատուկ է առհասարակ բոլոր ինքնակալներին, պահանջում էր այն առանձնատկությունների ունեցումը, որոնցով հայկական գավառները տարբերվում էին կայսրությունից, ուստի նա առաջ էր քաշում դրանց ինքնուրույնությունը վերացնելու անհրաժեշտությունը: Հարկավոր էր այդ կիսանկախ երկիրը դարձնել կայսրության սովորական պրովինցիա ընդհանուր հիմունքներով:

Հուստինիանոսի ունիտարական գործունեության հիմքում ընկած ընդհանուր պատճառներից բացի յուրաքանչյուր առանձին գեոլոգում գործում էին նաև տեղի և ժամանակի քաղաքական պայմանների հետ կապված մասնակի շարժառիթներ:

Հայաստանի զինվորական վերակազմության համար անմիջական առիթ ծառայեց պարսիկների հետ պատերազմը: Հուստինիանոսն իր ձեռքը վերցրեց կառավարման ղեկը իր նախորդի ժամանակ սկսված պատերազմի ամենարուտն շրջանում: Կայսերական զորքերը հենց նոր անհաջողություն էին կրել պարսիկներին ենթակա հայ իշխանների հետ ունեցած ճակատամարտում: Հոռմեական զենքի անհաջողությունները վերագրվում էին կայսրության

¹ C. J. 1, 27, 2-ի սկիզբը:

առաջին գծի վրայի գավառների սահմանների անբավարար պաշտպանությանը: Այդ գործը դրված էր Հայաստանի դուքսի և տեղակառն իշխանությունների ուժերի վրա, որոնք, ինչպես ցույց տվեց պատերազմը, երևան բերին իրենց կատարյալ անկարողությունը՝ կասեցնելու կայսրության տիրույթների վրա պարսիկների սրբնթաց գրոհը: Բացի այդ, ներքին Հայքի և սատրապությունների նախարարական զորախմբերը՝ այլատարր կազմ ունենալու հետևանքով չէին կարող ապահովել խիստ կարգապահություն: Նրանց համար դժվար կլինեին համատեղ գործել դուքսի կանոնավոր զորքերի հետ: Պատմագրի ասելով՝ Հայաստանի կոմսը անկարող եղավ ետ մղել թշնամիների ներխուժումը, քանի որ ռազմական ուժ չուներ: Հուստինիանոսն էլ կոհակելով, որ այդօրինակ անկազմակերպված ուժի պատճառով պարսիկները հեշտություն կարող են նվաճել Հայաստանը, վերացրեց կոմսի պաշտոնը և Հայաստանում նշանակեց ստրատեգ՝ στρατηγὸν δὲ τοῖς Ἀρμενίοις ἐπέστῆσε, տալով նրան անհրաժեշտ քանակությամբ զորք, որը բավական էր թշնամու հարձակումները ետ մղելու համար: Այսպես կոչված Մեծ Հայքում՝ կայսրը այդպես լուծեց հարցը: Ինչ վերաբերում է ինքնավար սատրապություններին, ապա նույն պատմագրից իմանում ենք, որ նրանք ևս հոռմեացիներից օգնություն չէին ստանում. նրանք ունեին հայերից կազմված իրենց սեփական զորքը: Բայց սատրապները ևս անզոր գտնվեցին դիմադրելու թշնամու հարձակումներին: «Մանոթանալով իրերի դրությունը, — ասում է Պրոկոպիոսը, — Հուստինիանոսն այնտեղ անմիջապես վերացրեց սատրապներին և այդ նույն ազգերի վրա նշանակեց երկու, այսպես կոչված, դուքս: Գուբսերին հոռմեական զորախմբերից կազմված համալրում տրվեց՝ այնքան զորք, որ բավական էր հոռմեական սահմանները պաշտպանելու»²: Բարեբախտաբար պահպանվել է այն հրամանագրի բնագիրը, որի հիման վրա տեղի ունեցան հիշյալ փոփոխությունները:

C. J. I 29 5. Imp. Justinianus A. Zetae viro illustri ma-

¹ Proc. Aed. III 1, p. 246.

² ib. p. 246, δ δὴ καταμαθὼν Ἰουστινιανὸς βασιλεὺς τὸ μὲν τῶν σατραπῶν ἄνομα ἐξήλασεν ἐνθὲνδε εὐθύς, δοῦκας δὲ τοὺς καλουμένους δύο τοῖς ἔθνεσιν ἐπέστῆσε· τούτοις; οἷς δὴ ξυνεστήσατο μὲν Ῥωμαίων στρατιωτῶν καταλόγους παμπληθεῖς, ἐφ' ᾗ τὰ Ῥωμαίων ξυμφυλάξουσι αὐτοῖς ὄρια.

gistro militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes.

Կամորն աստուծո ստանալով հոռմեական իշխանությունը, մենք անձկալից հոգատարությամբ և աշալուրջ փութաշանությամբ քննելով զբանք, որ պետք է նաև Հայաստանի, Պողեմոնական Պոնտոսի և [այլ] ազգությունների համար այս հրովարտակով սահմանել հատուկ զինվորական պետի (պաշտոն): Ուստի ձերդ բարձրությամբ, որ իրեն այնքան հիանալի է դրսևվորել նախկին գործունեությամբ, լիակատար վստահությամբ ընտրում ենք այդպիսի մի պատասխանատու պաշտոնի: Այդ նահանգները, այսինքն՝ Մեծ Հայքը, որ կոչվում է ներքին և ազգությունները՝ նկատի ունենք Անդիտենեն, Ինգիլենեն, Աշտիանենեն, Սոփենեն, Սոփանենեն՝ Մարտիրոպոլիս քաղաքով և Բալամվիտենեն, ինչպես նաև Առաջին և Երկրորդ Հայքերը ու Պողեմոնյան Պոնտոսը նրանց դուքսերի հետ միասին հանձնում ենք քո տնօրինությանը, ընդ որում բոլորովին վերացվում է կոմսի պաշտոնը: Քո իշխանության տակ ենք դնում մի քանի լեզոններ՝ ոչ միայն նրանք, որ նոր կազմա-

Cum propitia divinitate Romanum nobis sit deletum imperium, sollicita cura cauta diligentia pertractantes perspeximus oportere etiam partibus Armeniae et Ponto Polemoniaco et gentibus proprium magistrum militum per hanc legem constituere, tuamque magnitudinem, quae nobis ex ante gestis ortime commendata est, idoneam ad talem fore dignitatem confidentes elegimus certasque provincias, id est Magnam Armeniam, quae interior dicebatur et gentes (Anzetenam videlicet, Ingilenam, Asthianenam, Sopenam, Sophanenam, in qua est Martyropolis, Balabitenam) et primam et secundam Armeniam et Pontum Polemoniacum tuae curae cum suis ducibus commisimus, comite Armeniae penitus sublato, certosque subdidimus numeros, non modo quos in praesenti novos constituimus; sed etiam de praesentalibus et Orientalibus et aliis agminibus segregatos, non tamen quantitatem eorum

կերպում ենք այժմ, այլև նրանք, որ մենք առանձնացնում ենք մայրաքաղաքի արևելյան և այլ գործերի կազմից: Ընդ որում այս վերջինների կազմի մեջ լեզեոնների թիվը բնավ չի պակասի, որովհետև գրանից առաջ մենք նրանց միացրել էինք շատ լեզեոններ՝ չծանրարեոնելով սակայն պետությունը և հավելյալ ծախսերի դուռ չբանալով: Իսկ այժմ մենք վերցնում ենք այնտեղից մի բանի լեզեոններ, բայց այնպես, որ գրանից հետո էլ այնտեղ մրնան ալիլի, բան կային մեր երջանիկ թագավորությունից առաջ:

Ժամանակագիր Մալալան ծանոթ է եղել և օգտվել է այդ օրենսդրությունից: Նա հաղորդում է մի բանի մանրամասնություններ, որոնք բացատրում և լրացնում են պաշտոնական հաղորդագրությունը: Թերում ենք նրա խոսքերն ամբողջությամբ.

Հուստինիանոսի թագավորության վերոհիշյալ տարին ստրատելատի պաշտոնով Հայաստան ուղարկվեց Ցիստան: Մինչ այդ Հայաստանում ստրատելատ չկար, կային միայն դուքսեր, կառավարիչներ և կոմեսներ: Այս ստրատելատին կայսրը լեզեոններ տվեց մայրաքաղաքի և Արևելքի գործերից: Ստանձնելով իր պաշտոնը՝ Ցիստան կայսրի թույլտվությամբ տեղացիներից իր համար հավա-

agminum minuentes: sed quia plures eis addidimus sine rei publicae gravamine et sine augmento sumptuum, aliquantos subtraximus, ita tamen, ut et post hanc subtractionem ampliores remanserint, quam usque ad nostra felicia fuerant tempora.

՝Են ընդ քո յպոգրամենոս էտի տիς βασιλείας Ἰουστινιανοῦ κατεπέμφθη στρατηλάτης Ἀρμενίας ὀνόματι Ζίτας (sc. Τζίττας). ἐν γὰρ τοῖς προλαβοῦσι χρόνοις οὐκ εἶχεν ἡ αὐτὴ Ἀρμενία στρατηλάτην, ἀλλὰ δοῦκας καὶ ἄρχοντας καὶ κόμητας. δέδωκε δὲ ὁ αὐτὸς βασιλεὺς τῷ αὐτῷ στρατηλάτῃ ἀριθμοὺς στρατιωτῶν ἐκ τῶν δύο πραισέντων καὶ ἀνατολῆς, καὶ στρατεύσας ἐντοπίους σκρινιάριους ἐποίησεν ἑαυτῷ σκρινιάριους

բեց ստրատելատական սկրինարիուսներ և տեղացի բնակիչների համար կայսրից խնդրեց զինվորական ծառայության իրավունք, նկատի ունենալով Հայաստանի տեղանքին նրանց ծանոթ լինելը: Կայսրը թույլատրեց այդ և նրանց տվեց նաև հայկական այն դուքսերի, կոմեսների և նրանց հիպատեների իրավունքները, որոնք առաջ համարվում էին ճամբարային գործեր: Վերացվեցին մինչև այդ զույլություն ունեցող բոլոր իշխանությունները: Իսկ Ցիստան արևելյան ստրատելատից ստացավ շրջա լեզեոն: Այդ ժամանակներից սկսած՝ ուժեղացավ հոսմանական սահմանների պաշտպանությունը: Ցիստան քաջ զինվորական էր. նա հետո ամուսնացավ Թեոդորա կայսրուհու քրոջ՝ Կոմիտոյի հետ:

Ինչպես պարզվում է պաշտոնական փաստաթղթերից և պատմագրի տված տեղեկություններից, Հայաստանում կատարված զինվորական վերակազմության էությունն այն էր, որ հայկական բոլոր հողերը միավորվեցին զինվորական մեկ պետի՝ ստրատելատի կամ մագիստրոսի իշխանության տակ:

Magister militum-ը կայսրության ամենաբարձր զինվորական աստիճանն էր: Ամբողջ կայսրության մեջ այդպիսի հինգ մագիստրոս կար, որոնցից երկուսը՝ մայրաքաղաքում, մեկը՝ արևելքում և երկուսը՝ արևմուտքում: Հայաստանում այսպիսի մի բարձրաստիճան

στρατηλατιανούς ἀπὸ θείας σάκρας, αἰτησάμενος τὸν βασιλέα αὐτόχθονας στρατεῦσαι, ὡς εἰδόμενος τὰ μέρη τῆς Ἀρμενίας. καὶ παρέσχεν αὐτῷ τοῦτο καὶ τὰ δίκαια τῶν Ἀρμενίων τῶν δουκῶν καὶ τῶν κομήτων καὶ τοὺς ὑπάτους αὐτῶν, πρόφην μὲν ὄντας καστρισιανούς στρατιώτας: ἦσαν γὰρ καταλυθεῖσαι αἱ πρόφην οὖσαι ἀρχαί. ἔλαβε δὲ καὶ ἀπὸ τοῦ στρατηλάτου ἀνατολῆς ἀριθμοὺς τέσσαρας. καὶ γέγονεν ἔκτοτε μεγάλη παραφυλακὴ Ῥωμαίοις. ἦν δὲ καὶ ὁ ἀνὴρ πολεμικός· ὅστις καὶ τὴν ἀδελφὴν Θεοδώρας τῆς Αὐγούστας ἠγάγετο πρὸς γάμον, ὀνόματι Κομιτῶ¹.

¹ Malala, p. 429—430:

պաշտոնյա նշանակելը ցույց է տալիս, թե այն ժամանակ որքան մեծ կարևորություն էր տրվում կայսրության արևելյան ծայրամասին:

Կայսրի բուն ղեկրհտից երևում է, որ դուքսերը ենթարկվում էին նոր պետին, մինչդեռ Մալալան պնդում է, որ ստրատելատի նշանակումով մինչ այդ գոյություն ունեցող բոլոր պաշտոնները վերացվեցին: Պատմագրի տեղեկությունը ճիշտ չէ և թյուրիմացության արդյունք է: Զինվորական պետ նշանակելու ժամանակ Հայաստանում մի քանի դուքսեր և կոմեսներ չկային, ինչպես ենթադրել է պատմագիրը: Նա ըստ երևույթին շփոթել է այն, ինչ գոյություն ունենալով մինչև զինվորական վերակազմությունը եղած այն կացության հետ, որ ստեղծվեց քաղաքացիական վերակազմությունում և որը տեղի ունեցավ զինվորական վերակազմությունից մի քանի տարի անց, այսինքն՝ 536 թվականին:

Զինվորական պետ նշանակելու տարին ստույգ հայտնի չէ, հրամանագրի թվականը ընկած է: Դատելով վերոհիշյալ պաշտոնական վավերագրի առաջին խոսքերից՝ cum Romanorum nobis sit delatum imperium, այն տրված է Հուստինիանոսի դահ բարձրանալուց քիչ առաջ կամ անմիջապես հետո¹:

530 թվականին պարսիկների հետ Սատաղի տակ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ Հայաստանի ստրատեգն էր Դորոթեոսը՝ խելացի և զինվորական գործին հմուտ մի մարդ: Իսկ Հայաստանում գտնվող բոլոր զորքերի հրամանատարն էր Յիտտան՝ բյուզանդական զորապետներից մեկը²:

Հենց այդ երկու անձնավորություններից մեկն էլ գրավում էր Հուստինիանոսի հաստատած մագիստրոսի պաշտոնը: Թեև Դորոթեոսն անվանված է Հայաստանի ստրատեգ, այդ տեր-

¹ Հուստինիանոսը իր թագավորության սկիզբը համարում էր 527 թվականի ապրիլի 1-ը, Nov. 47=Const. 66, երբ նշանակվեց Հուստինոսի գահակիցը: *East Hist. Arc.* այդ տեղի ունեցավ զատիկից երեք օր առաջ. 527 թվականի գատիկը ապրիլի 4-ին էր: Նրա միանձնյա թագավորությունը սկսվում է նույն տարվա օգոստոսի 1-ից. *Güterbock-ը Röm-Arm.*, p. 40, սխալվում է նրա գահակալությունը հաշվելով 528 թվականից:

² *Proc. Pers.* I 15 p. 74, ἐτύχανε δὲ Ἀρμενίας μὲν στρατηγὸς Δωρόθεος, ὧν ἀνὴρ συνετός τε καὶ πολέμων πολλῶν ἔμπειρος, Σίττας δὲ ἀρχὴν μὲν τὴν στρατηγίδα ἐν Βυζαντίῳ εἶχε, παντὶ δὲ τῷ ἐν Ἀρμενίαις στρατῷ ἐφέσιτ' ἔκει.

մինով Պրոկոպիոսը արտահայտում է լատինական *magister militum*-ը, այնուամենայնիվ, Յիտտայի անունը կասկած չի թողնում, որ հենց նա է օժտված եղել մագիստրոսի իշխանությամբ: Նրան, իբրև բոլոր զորքերի գլխավոր հրամանատարի, միանգամայն համապատասխանում է *magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes տիտղոսը*: Իսկ Դորոթեոսը, ըստ երևույթին, ոչ այլ ոք էր, քան Հայաստանի դուքսը: Այդ նույն ժամանակ *magister per Orientem* էր Բելիսարիոսը: Կալլինիկայի տակ 531 թվականին տեղի ունեցած ճակատամարտում Բելիսարիոսը անհաջողություն կրեց. Հուստինիանոսը զժոհ հրանից, ևս կանչեց նրան մայրաքաղաք և աղատեց Արևելքի մագիստրոսի պաշտանից, իսկ «Արևելքի պաշտպանության համար կայսրի կարգադրությամբ այնտեղ մեկնեց Յիտտան»¹: Եվ իրոք, հոսմական զորքերի գլխին անցած՝ Յիտտան շուտով հայտնվեց Աթթալի գյուղում, պարսիկների կողմից պաշարված Մարտիրոսուպոլսին օգնություն հասցնելու համար²: Թվում է, թե Յիտտան փոխարինեց Բելիսարիոսին՝ ստանձնելով Արևելքի մագիստրոսի պաշտոնը: Մի այլ պատմագիր՝ Մալալան, նույնպես վկայում է, որ տեղեկանալով Կալլինիկայի տակ իր բանակի կրած պարտության մասին, Հուստինիանոսը «գրավոր հրաման տվեց Praeentis-ի պետ Յիտտային, որ այդ ժամանակ ժամանել էր Հայաստան, մեկնել Արևելք՝ մասնակցելու պատերազմին: Յիտտան գրավեց պարսից հողերը և, անցնելով հայկական լեռները, հասավ Սամոսատ»³:

Նույն պատմագրի տեղեկությունների համաձայն միաժամանակ պատերազմական գործողությունների թատերաբեմ է ուղարկվում հատուկ պաշտոնյա՝ պարզելու պատերազմի մասին ճշմարտությունը: Սրա տված զեկուցադրի հիման վրա Հուստինիանոսը Բելիսարիոսին ազատում է զորահրամանատարությունից և նրա փոխարեն Արևելքի ստրատեգն էր *στρατηλάτην ἀνατολῆς*

¹ *Proc. Pers.* I 21 p. 107, Σίττα δὲ Ἰουστινιανῷ βασιλεὶ τοῦτο δεδογμένον, ὡς φυλάξων τὴν ἐφ' ἂν ἐνταῦθα ἦλθε.

² *ib.* p. 108.

³ *Malala* p. 465, κελεύσας διὰ γραμμάτων Τζίττα τῷ στρατηλάτῃ πραιεέντου, ἐν Ἀρμενίᾳ διάγοντι, καταλαβεῖν τὴν ἀνατολὴν πρὸς συμμαχίαν. *Magister militum praesentis*, որ համազոր է Պրոկոպիոսի ձրչին մեն τὴν στρατηγίδα ἐν Βυζαντίῳ εἶχει *արտահայտությունը*:

է նշանակում Մ ու ն դ ո ս ի ն¹: Ի՞նչ եղավ Յիտտան, այնքան էլ պարզ չէ: Մալալային էլ հայտնի են Մարտիրոսուպոլսի տակ նրա գործուղությունները²: նրա ասելով այդ ժամանակ Հայաստանի ստրատելատ էր Գորոթենոսը: Այս պաշտոնում եղած ժամանակ նա Պարսկահայաստանում³ գրավում է մի ինչ-որ բերդ և ետ է մղում ունեն երի-ս ա վ ի բ ն եր ի հարձակումը⁴: Կալլինիկայի ճակատամարտը տեղի ունեցավ ավագ շարաթ օրը, ապրիլի 19-ին, որը համապատասխանում էր 531 թվականին: Յիտտան Հայաստանից մեկնեց այդ ճակատամարտից հետո. արդյո՞ք նա նշանակվեց Արևելքի մագիստրոս, ինչպես այդ երևում է Պրոկոպիոսի խոսքերից, թե վերադարձավ մայրաքաղաք, որովհետև այդ պաշտոնը, ինչպես հայտնում է Մալալան, տրվեց Մունդրոսին, մեր նպատակի համար նշանակություն չունի: Կարևոր և կասկածից վեր է այն, որ Յիտտան Հայաստանում մնացել է մագիստրոսի պաշտոնով մինչև 531 թվականի ապրիլի 19-ը: Հայտնի է նաև, որ Հայաստանում է գտնվել նաև նախընթաց՝ 530 թվականին և Սատաղի տակ կռվել է պարսիկների դեմ:

Այս ամենից հետևում է, որ Հայաստանի զինվորական վերահսկումությունը, որ կապված է Յիտտային magister militum per Armeniam պաշտոնում նշանակելու հետ, պետք է վերագրել Հուստինիանոսի գահակալությունից մինչև 530 թվականն ընկած ժամանակաշրջանին, հավանորեն 529 թվականին:

Վերոհիշյալ վերակազմության հետևանքով չվերացվեցին «զոյություն ունեցող բոլոր իշխանությունները», ինչպես պնդում է Մալալան: Լուծարքի ենթարկվեցին միայն Հայաստանի կոմեսի պաշտոնը և սատրապների ինքնավարությունը: Անձնոմխելի մնացին ոչ միայն I և II Հայքերի պրեզիդենտը կամ քաղաքական կառավարիչները, այլև Հայաստանի գուբար: Կոմեսի և սատրապների փոխարեն նշանակվեցին երեք նոր գուբար, որոնք ենթարկվում էին զինվորական պետին՝ մագիստրոսին: Վերջինս իր իշխանության լիիրավությամբ և բնույթով կարող է համեմատության մեջ դրվել այժմյան գեներալ-նահանգապետի հետ:

Հայաստանի մագիստրոսի տրամադրության տակ կային

¹ Malala, p. 466.
² ib. p. 470.
³ ib. p. 469.
⁴ ib. p. 472.

զինվորական զգալի ուժեր և officium: Դժբախտաբար նրանց կազմի վերաբերյալ հավաստի տեղեկություններ չկան: Հետաքրքրական է Մալալայի վիպությունը սկրինիարների մասին: Scriniarii-ն նույն official-ներն են, որ ծառայում էին զինվանատանը և կամ նրա բաժանմունքներում՝ սկրինիարներում: Մագիստրոսի officium-ը նրա շտաբն ու գրասենյակն են, Դիվանատան պաշտոնյաները հազնվում էին զինվորականների նման. նրանց ծառայությունը կոչվում է militia, բայց նրանք, այնուամենայնիվ, զինվորականներ չէին: Սկզբում զինվանատան պաշտոնյաները, ըստ երևույթի, կատարում էին զինվորական ծառայություն: Այսպես՝ Not. dign.-ի մեջ մայրաքաղաքի և Քրակիայի մագիստրոսների զինվանատների մասին magister militum praesentalis et mag. mil. per Thracias et Illyricum-ում ասված է, որ in numeris militat et in officio depulatur. Այդ տիպի էին նաև հայկական մագիստրոսին կից սկրինիարումները: Այդ բանը հատկապես խնդրել էր Յիտտան: Նրա միջնորդությունը կայսեր առաջ, ինչպես հետևում է պատմագրի խոսքերից, վերաբերում է երկու բանի. նախ՝ իրեն իրավունք տալ տեղացիներից, այսինքն՝ հայերից կազմել officium և երկրորդ՝ որ այդ ձևով իր կողմից պաշտոնի կանչված մագիստրոսական սկրինիարներին թույլատրվի նաև militare, στρατεῦσαι: Պետի պաշտոնում նոր նշանակված Յիտտան, որ մինչ այդ եղել էր Հայաստանում և այստեղ էլ զինվորական իր առաջին քայլերն էր արել, բայց գիտակցում էր, որ առանց տեղական ուժերի աջակցության դժվար կլիներ կատարել իր վրա դրված պատասխանատու գործը: Հնարավոր է, նույնիսկ, որ նա իր ծագումով օտար չէր Արևելքին: Յիտտա կամ Սիտտա ըստ երևույթի մականուն է. ստրատեգոսի իսկական անունը Ուրսուկիոս էր: Վերջերս հրատարակված մի հետաքրքրական հուշարձանի մեջ¹ այդ անու-

¹ Կարճ սրբ. Քեդոսի, էջ 3. οὐν στρατηγῷ Ούρσικῷ, ἀνδρὶ γε πάνυ ὄντι περὶ τὰ πολεμικὰ ἱκανώτατον, ὃν διὰ τὸ περιδοξόν τῆς μονομαχίας βασιλεὺς Ἰουστινιανὸς ἔξευξεν αὐτῷ γυναικα τὴν ἀδελφῆν Θεοδώρας τῆς αὐγούστης, δυνάστη Κορῆτῷ հրատ. Լուպարի, Յառ. Կա. Օտ. Իմպ. Բյւ. Արք. Օճ., հատ. I, 1904 թ., ենթադրվում է, որ Ուրսուկիոսը Յիտտայի հոմեականացված անունն է (տե՛ս նույն առիթով, առաջարկը), Խսկական անունն ավելի շուտ Ուրսուկ է, որ հարազատ է պահլավական asglik-ին, որ նշանակում է հողեր պաշտոնյա: 2 մ մ. Արսուկ-ե-ս՝ Լաֆիոսյոսի անուն՝ հիշատակված Ազաթանգեղոսի մոտ և Ասրիկ, որ խոյ եպիսկոպոսի հաջորդն էր, հիշատակված Փավստոսի մոտ:

նույ՛ հայտնի է այն բարձրաստիճան պաշտոնյան և պետը, որ ամուսնացավ Հուստինիանոսի քենու, Թեոդորայի քրոջ՝ Կոմիտոյի հետ: Մալալայի վկայությունից հայտնի է, որ այդ բարձրաստիճան պաշտոնյան՝ Թեոդորայի քեռայրը, հենց ինքը Ցիտտան է: Ցիտտայի արդարացի միջնորդությունն արժանացավ կայսեր հավանությունը: Թերևս տեղացիներից կազմված սկրիներաները մտնում էին այն numeros novos-ի մեջ, որոնց մասին խոսվում է կայսրի հրովարտական:

Numeri novi-ից բացի, Հայաստանի մագիստրոսի զորքերի մեջ կային նաև segregati de praesentalibus, orientalibus et alliis agminibus, այսինքն՝ մայրաքաղաքի և արևելքի մագիստրոսների հրամանատարության տակ magistri mil. praesentalis et per Orientem, գտնվող լեգեոններից առանձնացվել էին մի քանի զորամասեր և հանձնվել Հայաստանի մագիստրոսին: Not. dign.-ի մեջ մայրաքաղաքի զորքերի շարքում ի թիվս այլոց հիշատակվում են նաև sagittarii Armeni, հայկական նետածիղզիները, իսկ արևելքի զորքերի շարքում՝ prima Armeniaca, secunda Armeniaca և Transtigritani լեգեոնները: Հնարավոր է, որ հենց այդ զորամասերն էլ կազմում էին վերոհիշյալ segregati-ն կամ համեմայն դեպս մտնում էին նրա մեջ: Մալալան նույնպես հաստատում է, որ Ցիտտայի բանակը բաղկացած էր այն զորամասերից, որոնք առանձնացված էին ἐκ τῶν δὺο πραισέντων καὶ ἀνατολῆς, այսինքն՝ praesentalibus et orientalibus, ընդ որում հենց նրա տեղեկությունների համաձայն վերջիններից վերջվեց շորս լեգեոնը¹: Numeri novi et allia agmina հրահանգի փոխարեն նույն պատմագիրը հիշատակում է սկրիներաների և τοὺς ὀπάτους նախկին καστριαϊανούς στρατιώτας, castrensiანი milites. արդյոք դրանք համարժեք հասկացություններ չե՞ն և չե՞ն հաստատում այն ենթադրությունը, թե numeri novi նշանակում են scriniarii²

¹ Հստ Կեղրհնոսի, I, էջ 643, շորս numeri-ներն ունեին յուրաքանչյուրը 1000 մարդ, որը սակայն ստուգման կարիք ունի:

² Թեոփանը արտադրում է Մալալայից, բայց սկրիներաների մասին արտահայտվում է իր ձևով. προεβάλετο δὲ ὁ β. στρατηλάτην Ἀρμενίας Τζίταν ἀνδρα πολέμικόν καὶ ἰκανώτατον. οὐ γὰρ εἶχεν ἢ Ἀρμενία στρατηλάτην, ἀλλὰ δοῦρα καὶ κόμητας. ἐστράτευσεν δὲ ὀπ' αὐτὸν Ἀρμενίων πλῆθος. ὡς εἰδόμενος τὰ μέρη τῆς Ἀρμενίας ἔδωκεν δὴ αὐτῷ καὶ ἀπὸ τῆς ἀνατολῆς στρατοῦ ἀριθμούς τέσσαρας և այլն:

և հետևաբար՝ allia agmina նույնն է, ինչ որ milites castrensiანი: Նրանք տվյալների հիման վրա այժմ դժվար է որոշել Հայաստանի մագիստրոսի տրամադրության տակ գտնվող զորքերի քանակը: Գիտենք, որ Ցիտտան 530 թվականին պարսիկների դեմ Սատաղի տակ կռվում էր իր տրամադրության տակ ունենալով միայն 15.000 զինվոր¹: Մի քիչ ավելի ուշ՝ Դվինի արշավանքի ժամանակ, գործող բանակը, որ բաղկացած էր Հայաստանի մագիստրոս Վալերիանոսի և արևելյան մասի մագիստրոս Մարտինի ուժերից, ուներ 30.000 զինվոր²: Բայց այս թվերով սխալ կլինեի շփոթել կայսրության ռազմական ուժը արևելքում: Հնարավոր բան չէ, որ երկու մագիստրոսներ միասին ունենային ավելի քիչ զորք, քան, օրինակ՝ Հայաստանի դուքսը, որի ուժերը ըստ Not. d.gn.-ի 30.000-ից ավելի էին:

Հայաստանի ստրատեգոսի նստավայր դարձավ Թեոդոսուպոլիսը, որ գտնվում էր ներքին Հայքում. մինչ այդ զինվորական կենտրոն էր ժառանգում Մելիտենեն՝ Փոքր Հայքի մայրաքաղաքը: Այստեղ էր նստում Հայաստանի դուքսը: Զ գարի սկզբին պարսկահռոմեական պատերազմի ժամանակ հռոմեացի առաջնորդներից մեկը՝ Սվգանիսոսը, որ Միշադեաքում և Հայաստանում գործում էր պարսիկների դեմ, ուղղակի կոչվում էր Մելիտենեի դուքս³: Նա ոչ այլ ոք էր, եթե ոչ Հայաստանի դուքսը:

Հայկական գավառները կայսրությանը միացվելուց հետո ռազմական ուժերի կենտրոնը փոխադրվեց սահմանամերձ Թեոդոսուպոլիս քաղաքը: Ստրատեգոսին ենթակա նոր նշանակված դուքսերից մեկը նստում էր Արտաշեսում, երկուսը՝ սատրապությունների հողում՝ Կիթառիճում և Մարտիրոսուպոլիսում, և երկուսը՝ Պոնտոսում կամ Ճանիքում՝ Օրոնում և Սքիմալանիքում կամ Մանգակում: Այդ վայրերի տեղադրությունը մենք քննության ենք առել վերև:

Կենտրված կետերը նախատեսված էին նախ և առաջ ստրատեգիական նպատակների համար, և այդ պատճառով էլ Հուստինիանոսն էլ ավելի ամրացրեց դրանք նոր կառուցումներով: Հայաստ-

¹ Proc. Pers. I 15 p. 75, պարսիկները αὐχ ἦσσαν ἢ τρισμυρίους ἔβη, իսկ հռոմեացիք μόλις ἔς τὸ ἦμισυ ἐξικνούμενοι.

² Proc. Pers. II 24, p. 262, ξυσθῆι δὲ ὁ στρατὸς ἔπας εἰς τρισμυρίους.

³ Joshua the Stylite ed. Wright, p. 40 և 41:

նի է, որ Հուստինիանոսի գործունեության ուշագրավ և դարձանքի արժանի կողմերից մեկը նրա շինարարական ձեռնարկումներն էին, որոնք ապշեցնում էին ժամանակակիցներին: Նրանք կարծում էին, թե հետագա սերունդը շի հավատա, թե այսպիսի խոշոր և անհամար կառուցումները կարող են մեկ մարդու կատարած գործ լինել¹:

Կատարված աշխատանքները հիրավի վիթխարի էին և իրենց չափերով հավասարը չունեն պատմության մեջ: Ընդարձակ կայսրությունը և մանավանդ նրա ծայրագավառները ծածկվեցին կառուցումների խիտ ցանցով: Ամրությունների կառուցման և զորքերի տեղափոխման վայրերը ընտրվում էին երկրի պաշտպանական նկատառումներով: Առհասարակ կայսրի ամրոցաշինական աշխատանքները սերտորեն կապված էին պաշտպանության համակարգի հետ: Հռոմեացիների ռազմական ստրատեգիան, ինչպես կարելի է տեսնել Փոքր Ասիայի տեղագրության վերևում կատարված քննությունից, այն էր, որ նրանք դրավում էին գլխավոր ճամբարներում գտնվող առավել կարևոր պահակապետները: Հուստինիանոսի դարաշրջանում այդ բավական չէր երկրի անվտանգությունն ապահովելու համար: Կայսրությունն այնքան ընդարձակվեց և գտնվում էր այնպիսի տաղանապալից պայմաններում, որ պետության ընդարձակ տարածությունները պահպանելու համար անհրաժեշտ էին հսկայական պաշտպանական ուժեր: Զինված ուժերի պակասը լրացնելու համար Հուստինիանոսը պետք է ավելացներ ամուր զորքերի և հաստատուն կառուցումների թիվը, որոնք կհնչտացնեին պետության խնդիրը թե՛ պաշտպանության, և թե՛ հարձակման ժամանակ: Նա այդպես վարվեց նաև կայսրության արևելյան ծայրամասի՝ Հայաստանի նկատմամբ: Անհրաժեշտ էր նախ և առաջ ամրացնել սահմանային գիծը և այդ նպատակով էլ ամբողջ սահմանի երկարությամբ՝ Գարայից մինչև Տրապիզոն կառուցեց մի շարք բերդեր: Դա պաշտպանական առաջավոր զին էր, որ կազմված էր վերը հիշատակված պահակակետերից, որտեղ հինգ դուբսերի և ստրատեգի հրամանատարության տակ մշտական զորք էր պահվում: Այդ կետերն են՝ Մարտիրոսուպոլիս, Կիթաոիձ, Արտալես, Քեոզոսուպոլիս, Օրոն և Սանդակ:

Ստրատեգիական գլխավոր կետերն էին Մարտիրոսուպոլիսը և Քեոզոսուպոլիսը. դրանց պաշտպանությունը ապահովելու համար կառուցվեցին ուրիշ ավելի փոքր ամրոցներ: Մարտիրոսուպոլից այն կողմ գտնվում էին Փիսոն ոչ մեծ ամրոցը և հռչակավոր կղևսուրները՝ բնական անմատչելի կապանները, որոնք Հուստինիանոսը կառուցապատեց նոր շինություններով և այնտեղ դրեց պահակախումբ՝ Մարտիրոսուպոլիսի և Կիթաոիձի պաշտպանության համար: Նույն նպատակին էին ծառայում Քեոզոսուպոլիսի նկատմամբ Բայբերդի, Խարտի, Առնոնի և Բարխի ամրությունները, որոնք կառուցված էին արևելքից և հյուսիսից կատարվող հարձակումները կասեցնելու համար: Բացի դրանից, ճանական դուբսերին օգնելու նպատակով կառուցվեցին Սիսիլիսը, Բուրզը և այսպես կոչված Լոնգինոսի փոստաը:

Ամրությունների առաջին գծի ետևում ձգվում էր երկրորդ՝ Մեկիտենե և Սատաղ երկու գլխավոր կենտրոններով, որոնք իրենց դիրքով հավասարազոր էին Մարտիրոսուպոլիսին և Քեոզոսուպոլիսին: Վերջինների կառուցումով այդ հին քաղաքների նշանակությունը նույնիսկ ռազմական տեսակետից ամենեին չէր նվազում: Հուստինիանոսը բարձր էր գնահատում դրանց դիրքը, ուստի վերականգնեց այդ հինավուրց ամրությունները: Մեկիտենեին նա այնպիսի փայլ տվեց, որ ժամանակակիցները այն կոչում էին Հայաստանի դար: Սատաղը դարձավ առաջնակարգ բերդ: Վերականգնվեցին նաև Սատաղի շրջակայքում գտնվող հին վայրերը՝ Օրոսեն ամրոցը, Լիթարարիզը, Լիսիորմը, Գերմանոսի փոստաը, Վիժանը և Մումիան, ինչպես նաև Սեբաստիա, Նիկուպոլիս և Կոզոնիա հին քաղաքները:

Պրոկոպիոսը Հուստինիանոսի շինարարական գործունեությանը նվիրել է չորս գրքից բաղկացած հատուկ աշխատություն՝ «Կառուցումների մասին» (Գիրք շինուածոց) վերնագրով, որոնցից մեկը ամբողջովին վերաբերում է Հայաստանին:

Թե ինչ շինարարություն ծավալեց Հուստինիանոսը Հայաստանում, երևում է հետևյալից:

Մարտիրոսուպոլիս քաղաքը, ըստ հեղինակի տեղեկությունների, հնուց ի վեր վատ էր պաշտպանված: Այդ պատճառով Քեոզոսոս սատրապը 502 թվականին մտքով անգամ շանցկացրեց, թե կարելի է զիմադրել Կավատին և առանց այլևայլության անձնատուր եղավ: Անաստաս կայսրը, որ ծանոթ էր քաղաքի վիճա-

¹ Proc. Aed. I 1 p. 172, ὡς μὴ ὀπισθεῖν τῷ τε πλῆθει καὶ τῷ μεγέθει...
 ԾԻ Ծի ἄνδρὸς ἑνὸς ἔργα τυγχάνει ὄντα.

կին, բնավ չմեղադրեց նրան այդ վարմունքի համար, այլ, քնդհակառակն՝ այդ քայլը համարեց խելամիտ և զովասանքի արժանի: Գաս առնելով այդ փորձից՝ Անաստասը քաղաքը շրջապատեց քսան ոտնաչափ բարձրությամբ և շորս ոտնաչափ լայնությամբ պարիսպով: Բայց պարիսպը բավականաչափ ամուր չէր, որ կարողանար դիմանալ պաշարողական և պարսպակործան մեքենաներին. ասե՛նք նա այնքան էլ բարձր չէր և նրա վրայով կարելի էր քաղաք ներխուժել:

«Գիտակցելով այս ամենը՝ Հուստինիանոսը հրամայեց փորել գետինը պարիսպներից դուրս և նոր պարսպի հիմք դնել, որը և անցկացրեց նախկինին զուգահեռ շորս ոտնաչափ հաստությամբ և քսան ոտնաչափ բարձրությամբ՝ թողնելով երկուսի միջև մի տարածություն, որի լայնությունը նույնպես շորս ոտնաչափ էր. ստացվեց նախկինին բոլորովին նման մի նոր պարիսպ: Այնուհետև երկու պարիսպների միջև եղած տարածությունը լցրեց քարու կրով, որի հետևանքով ստացվեց տասներկու ոտնաչափ լայնությամբ մի միաձուլ կառույց: Իսկ վերևում շարունակելով պարիսպը իր ամբողջ հաստությամբ՝ ավելացրեց նրա բարձրությունը այնքան, որքան նա ուներ առաջ: Բացի դրանից, քաղաքը շրջապատեց հոյակապ ու հիանալի պրոտեյկտիվով՝ նախապարիսպով և այնպիսի նոր կառույցներով, որոնք անհրաժեշտ էին համարվում ամրացված քաղաքի համար»:

Այսպիսով՝ Մարտիրոսուպոլսի նեղ և ցածր պարիսպը Հուստինիանոսը վերափոխեց և դարձրեց տասներկու ոտնաչափ լայնությամբ և քառասուն ոտնաչափ բարձրությամբ մի ամուր կառույց:

Փիսոն ավանը և կղեսուրները, որոնց տեղը մեզ արդեն հայտնի է, Հուստինիանոսը «կառուցապատեց հզոր ամրություններով, կարգեց այնտեղ պահակազորք և դրանով կապանը դարձրեց անառիկ, իսկ երկիրը՝ թշնամիների համար միանգամայն անմատչելի»:

Կիթառի գյուղը ամրություններ չունի, և կայսրը «նրա բարձրագիր վայրում կառուցեց արտակարգ և ամեն տեսակ ուժերի համար անմատչելի մի նոր ամրոց: Նա այստեղ առատ ջուր բերել տվեց և բնակիչներին ապահովեց ամեն տեսակ անհրաժեշտ բանով: Հենց այստեղ էլ նշանակեց վերը հիշված դուքսերից մեկին՝ տալով նրան անհրաժեշտ թվով պահակազորք: Այսպիսով նա ապահովեց հայկական ազգությունների անվտանգությունը»:

Նույն ձևով «Հուստինիանոսը առավել ամուր պարսպով շրջապատեց Արտաշես գյուղը և այն դարձրեց անառիկ ամրոց: Այնտեղ դրեց մի զորամաս՝ հրամայելով նրան ենթարկվել իրենց պետին, որին լատիներեն կոչում էին դուքս»:

Թեոդոսուպոլսը, ինչպես պատմում է Պրոկոպիոսը, իր հիմնադրման համար պարտական է այն Թեոդոսիոսին, որ ժառանգեց հայոց վերջին արքա Արշակի թագավորությունը: Նա «բլուրնեքից մեկի վրա կառուցեց մի ամրոց, որ ամուր չէր և մատչելի էր թշնամուն և այն անվանեց Թեոդոսուպոլիս»: Քաղաքի հայկական աճունը Կարին էր, որը նահանգի հին անվանը համապատասխան ցույց է տալիս, որ Թեոդոսիոսի ամրոցի տեղում հնուց գոյություն է ունեցել եթե ոչ քաղաք, համենայն դեպս մի գյուղ: Եթե այդ վայրը սկզբից հայերին ծանոթ լիներ Թեոդոսուպոլիս անունով, ապա հազիվ թե կարիք լիներ նրան մի երկրորդ և հայկական աճուն տալ: Թեոդոսիոս կայսրին պատկանում է միայն հայկական գյուղի տեղում ամրոց կառուցելու նախաձեռնությունը: Եվ իրոք, յուր մի այլ աշխատության մեջ նույն պատմագիրը ասում է, որ Անաստասը Պարսկահայքի սահմանին մոտ կառուցեց մի քաղաք, «որ հնուց ի վեր գյուղ էր եղել»:

Թեոդոսիոսի կառուցումները, համենայն դեպս Կավատի պատերազմների ժամանակ, ռազմական նպատակների համար պիտանի չեղան: Մարտիրոսուպոլսի նման Թեոդոսուպոլիսն էլ շղիմացավ պաշարմանը և զրավվեց պարսիկների կողմից: Պատմագիրը հազարդում է, որ «հետագայում Անաստաս կայսրը այնտեղ հիմնադրեց մի քաղաք և պարսպապատեց այն բլուրը, որտեղ կանգնած էր Թեոդոսիոսի բերդը: Նա քաղաքին տվեց իր անունը, բայց նրան չառողջեց վերացնել նախկին հիմնադրի՝ Թեոդոսիոսի անունը: Չէ որ կյանքում հաճախ է պատահում, որ հասկացությունները փոփոխվում են, բայց արդեն ընդունված անվանումը դժվար է լինում վերացնել: Թեոդոսուպոլսի պարիսպները բավականաչափ լայն էին, բայց չունեին համապատասխան բարձրություն. դրանց բարձրությունը հազիվ հասնում էր երեսուն ոտնաչափի: Այդ պատճառով էլ գյուրին էր թշնամիների, մանավանդ պարսիկների համար հրավել քաղաքը՝ պաշարելով այն: Քաղաքը մատչելի էր նաև այն պատճառով, որ այն պաշտպանված չէր ոչ նախապարսպով և ոչ էլ իրամտով: Չարիքներից մեկն էլ այն էր, որ քաղաքի ճիշտ դիմացը գտնվում էր մի ինչ-որ բարձրություն, որ իշխում էր քաղա-

քի պարսպի վրա: Հուստինիանոսը որոշեց վերակառուցել և ամբարացնել քաղաքը: Նախ և առաջ նա հրամայեց քաղաքի շուրջը որքան հնարավոր է խոր խրամ փորել՝ տալով նրան լեռների դառիթափների արանքում բացվող կիրճի ձև: Ապա այն բլուրը, որ ցցված էր քաղաքի վրա, կտրատելով վերածեց անմատչելի զառիթափների և անանցանելի խորխորատների: Իսկ պարսպները էլ ավելի բարձրացնելու և հարձակման դեպքում անմատչելի դարձնելու համար կայսրը դրանց վրա կառուցել տվեց այնպիսի ամրություններ, ինչպիսիք կառուցված էին Դարայում: Պարսպի ատամնաձև մասերը միմյանց մոտեցնելով՝ նա դրանց միջև եղած տարածությունն այնքան փոքրացրեց, որքան անհրաժեշտ էր պաշարողների վրա նետ արձակելու համար, և քարեր շարելով՝ ստեղծեց շուրջանակի կամարակապ սյունասրահ, որի վրա կառուցեց ատամնաձև երկրորդ շարքը: Քաղաքի շուրջը կառուցեց նախապարիսպ, ինչպես Դարայում, և յուրաքանչյուր աշտարակ դարձավ իսկական բերդ: Այս քաղաքը դարձրեց զինվորական բոլոր ուժերի և Հայաստանի ստրատեգի նստավայր և հայերին դրեց այնպիսի նպաստավոր պայմաններում, որ նրանք այլևս որևէ երկյուղ չէին կարող ունենալ պարսիկների ասպատակություններից»:

Պատմագիրն այնուհետև պատմում է, որ կայսրը Վիզանուս ոչ մի կառուցում չարեց, որովհետև ռայդ գյուղը գտնվում էր հարթ վայրում՝ շորս կողմը ձիավարություն համար ընդարձակ դաշտեր էին և այնտեղ շատ ճահճուտներ և նեխած ջրափոսեր կային: Այսպիսով, գյուղը մի կողմից նպաստավոր էր թշնամու գործողությունների համար, իսկ մյուս կողմից՝ վարակիչ ու վնասակար էր բնակիչների համար: Դրա համար էլ Հուստինիանոսը ուշադրություն չդարձրեց դրա վրա և մի այլ վայրում՝ Մուսիխան կոչվող գյուղում իր անունով մի հռչակապ և անմատչելի քաղաք կառուցեց: Մուսիխան գտնվում էր Վիզանից երեք մղոն հեռու խիստ զառիվայր լանջի վրա և հռչակված էր իր առաջարար օղով»:

Τὰ Βιζάνά-ն այն քաղաքն է, որ Հուստինիանոսի նովելլայում կոչվում է Βάζανις կամ Λεοντόπολις: Հետադոտողները ճիշտ չեն ցույց տալիս նրա տեղը՝ նույնացնելով կամ Թեոդոսուսյուլաին կամ Երզնկային: Իրականում Վիզանը գտնվում էր այդ երկուսի մեջտեղում և ոչ այլ ինչ է, քան հայկական Վիթանը, որ մինչև օրս էլ գոյություն ունի Եփրատի ափին, ճիշտ այնտեղ, որ-

տեղ Եկեղյաց զավառը սահմանակից է Մանազիրին: Այն վերանվանվեց Լեոնտուպոլիս հավանորեն ի պատիվ Լեոն կայսեր (457—474), բայց թե ի՞նչ առիթով, հայտնի չէ: Մենք հնարավորություն չունենք ստուգելու, թե պատմագրի նկարագրած տեղադրական պայմանները որքանով են համապատասխանում իրականությանը: Նկարագրության ճիշտ լինելը հաստատվում է, ըստ նրանույթին, տեղի Վիթան անունով, որ հայերեն նշանակում է հեղեղում, ողողում:

Վիզանից ոչ հեռու՝ Երզնկային ավելի մոտ, Քեշիշ-գաղի ստորոտում գտնվում է Ջիմիս ավանը, որն, ի միջի այլոց, հայտնի է էր հիանալի գինիով: Սա էլ հենց պատմական Մուսիխան է²: Կայսրը ընդարձակելով այն՝ վերանվանեց Հուստինիանուպոլիս ու քարձրեց քաղաքացիական վարչության կենտրոն: Այստեղ նստում էր նաև նահանգի եպիսկոպոսը, որ կոչվում էր Հուստինիանուպոլսի եպիսկոպոս կամ շրջանի անունով՝ Եկեղյաց եպիսկոպոս³:

Իրար մատիկ լինելու պատճառով հնագույն ժամանակներից սկսած Թեոդոսուպոլիս, Լեոնտուպոլիս և Հուստինիանուպոլիս քաղաքները իրար հետ շփոթել են. նույնիսկ պաշտոնական վավերագրում՝ 31-րդ նովելլայում, սպրդել է մի սխալ, ըստ որի Հուստինիանուպոլիսը համարվում է Լեոնտուպոլսի նոր անունը: Այժմ

¹ Վիթնի բառից. Պրոկոպիոսի τὰ Βιζανά (ἐν Βιζανόις, Aed. p. 254) ձևը համապատասխանում է հայերեն վիթան-քին, իսկ Βιζανις-ը՝ Վիթանին: Այժմյան արտասանությունը վիթան է և ոչ թե վթան, ինչպես Ինժիճյանի մոտ, Աղաթեհագրութիւն, էջ 91: Վիզանը հիշատակվում է նաև Νова tactical-ի մեջ Աղաթեհագրութիւն, էջ 91: Վիզանը հիշատակվում է (Θρόνος) Βιζάνων: Ըստ իր բառարանի թիվս Տրապիզոնի թեմական քաղաքների ծ (Θρόνος) Βιζάνά-ի ուղղական կամ սեռական կոչությունն այն կարելի է համարել իբրև Βιζάνά-ի ուղղական կամ սեռական կոչությունն էլ Վիթանի նշանակում է նաև Κελετιζώνի քաղաքը, որ գյուրությունը կարելի է շփոթել Վիզանի հետ: Նախընտրում ենք կարգավորել Βαρζανισσα, այժմ Գեբջանիս, որ գտնվում է Երզնկայից վեր: Այս քաղաքը չի կարելի նույնացնել Վիզանի հետ, որովհետև վերջինս նշված է Տրապիզոնի միտրոպոլիտությունում:

² Հուս. ՄՀ-ն համապատասխանում է քմային ջ հնչյունին: Ինժիճյան, Աշխարհագրութիւն, էջ 101, ճիմին արևմտահայերի արտասանությունը արևելահայերի Ջիմիս է: Հմմտ. Τζάνοι և Ճանիթ-Ջանիթ:

³ 553 թ., Տիեզ. V ժողովում հիշվում է Գրիգոր Հուստինիանուպոլսո, Mansi, II, 391, VI ժողովում՝ Թեոդոսուս եպիսկոպոս, 'Εκελευζίνης ἦτοι 'Ιουστινιανου-πολιτεως. id. XI 613:

պետք է պարզ լինի, որ Հուստինիանուպոլիսը Զիմինն է, Լեոնտուպոլիսը՝ Վիզանը, իսկ Թեոդոսուպոլիսը՝ Կարինը:

Հուստինիանոսը վերակառուցեց նաև Սատաղ քաղաքը: «Սատաղ քաղաքը մինչև այդ գտնվում էր այնպիսի վիճակում, որ լուրջ երկչուղ էր ներշնչում: Այն գտնվում էր թշնամու երկրից ոչ հեռու մի հարթ վայրում, որ շրջապատված էր բազմաթիվ բլուրներով. բավական էր միայն պարսպապատել քաղաքը, և նա հարձակվողների համար միանգամայն անառիկ կդառնար: Եվ սակայն, շնայած այդպիսի բնական դիրքին, քաղաքը որպես ամրություն շատ անհուսալի էր: Նրա պարիսպները, որ հենց սկզբից կառուցել էին մի կերպ ու շատ անփութորեն, տարիների ընթացքում խարխլվել էին, ճաքեր տվել և փուլ էին գալիս: Հուստինիանոսը քանդեց ամբողջ պարիսպը և կառուցեց նորը, ընդ որում այնքան բարձր, որ թվում էր, թե շրջապատող բլուրներից էլ բարձր է. հասկանալի է, որ լայնությունը նույնպես արված էր այն հաշվով, որպեսզի այդքան բարձր պարսպի զանգվածը նրա վրա հուսալի լինի: Բացի դրանից, ի մեծ զարմանս թշնամիների, կայսրը կառուցեց հոյակապ նախապարիսպ: Սատաղից ոչ հեռու Օրոսեն կոչվող վայրում կառուցեց նաև մի շափազանց ամուր բերդ»:

Այդ նույն տեղում, ըստ պատմագրի նկարագրության, գտնվում էր Կոզոնիա քաղաքը: Նախապես այդ մի ամրոց էր՝ դառնիթալի բլրի գագաթին, որ գոյություն ուներ շատ հին ժամանակներից ի վեր¹: Հոռմի զորավար Պոմպեոսը, նվաճելով այդ երկիրը, գրավեց նաև վերահիշյալ բերդը, ամրացրեց այն և կոչեց Կոզոնիա: «Այդքան երկար ժամանակվա ընթացքում քաղաքը բոլորովին խարխլվել էր, բայց Հուստինիանոսը վերականգնեց նրա նախկին հզորությունը: Նա այդ կողմերի բնակիչներին անհամար միջոցներ բաժանեց և ստիպեց, որ իրենց դաշտերում ամենուրեք ամրություններ կառուցեն կամ էլ վերակառուցեն հին ավերակները: Կարելի է ասել, որ այդտեղի բոլոր ամրություններն էլ Հուստինիանոսի ձեռքի գործն են: Այդ նույն տեղում նա կառուցեց Բայբերդ և Առե-ոն բերդերը, վերանորոգեց նաև Լիսիոբոմբը, որ արդեն սկսել էր խարխլվել, ինչպես նաև Լիթարարիզը: Գերմանոս փոսատ կոչվող գյուղում կառուցեց նոր ամրոց: Հայաստանի Սեբաստիա և

¹ Հմմտ. Խորենացի, Բ, 9, բարձրավանդակ մի բլրով քարազագաթնի, որ այժմ նախ կոզոնիայ:

Նիկուպոլիս քաղաքների պարիսպները, որ խիստ խարխլվել էին երկար տարիների ընթացքում և արդեն փլվելու վրա էին, Հուստինիանոսը վերանորոգեց»:

Մելիտենեն, որ շատ կարևոր կենտրոն էր Հայաստանում և ընդհանրապես Առաջավոր Ասիայում, նախկինում մի փոքրիկ ամրություն էր, հոռմեական զորակայան: Նա կառուցված էր մի հարթ վայրում՝ քառակուսի ձևով: Տրայանոս կայսրի ժամանակից սկսած՝ Մելիտենեն րարձավ քաղաք և այդ երկրամասի մայրաքաղաքը: Երբ բնակչությունը այնքան աճեց, որ այլևս չէր տեղավորվում ամրությունների ներսում, մարդիկ սկսեցին բնակվել պարիսպներից դուրս՝ հարթավայրում, որտեղ նրանք կառուցեցին տաճարներ, տներ մագիստրոսների համար, հրապարակ, շրվա, փողոցներ գցեցին, կառուցեցին կամարակապ սրահներ, բաղնիքներ, քաղաքներ, և այն ամենը, ինչ հատուկ է բարեկարգ ու մեծ քաղաքին: Այսպիսով, հիմնվեց արվարձանային Մելիտենեն: Անաստաս կայսրը միտք հղացավ պարսպապատել ամբողջ քաղաքը, բայց մեռավ առանց իրագործելու իր ցանկությունը: «Հուստինիանոս կայսրը քաղաքն ամբողջովին նպարսպապատեց և Մելիտենեն գարձրեց մի հզոր ամրություն և Հայաստանի զարդը»:

Հուստինիանոսի կառուցումների շարքում Գիշատակվում են նաև մի քանի եկեղեցիներ: «Թեոդոսուպոլսում նա կառուցեց Մատվածածին եկեղեցին և վերանորոգեց այսպես կոչված Պետրիա և Գուկարիզ գյուղերի վանքերը: Նիկուպոլսում կառուցեց Քառասունհինգ նահատակների վանքը, իսկ Վիզանդում՝ Գևորգ վկայի տաճարը: Նա վերականգնեց նաև Քառասուն նահատակների վանքը Թեոդոսուպոլսի մոտ»:

Վերահիշյալ բոլոր վայրերը, բացառությամբ մի քանիսի, քաջ հայտնի են: Այս վերջինների թվին են պատկանում Առե-ոնը, Ախիոբոմբը և Պետրիան, որոնք պետք է փնտրել Բայբերթի մոտակայքում: Եվ այստեղ էլ Գերջանի կամ Կարինի հարևանությամբ այժմյան Կոկարիսի տեղում՝ գտնվում էր Կոկարիզը: Լիթա-

¹ Cuinet-ի մոտ, I, էջ 133, Բայբերթի կազմի 14 nahie-ների շարքում հիշատակված է Kokaris, որ հավանաբար պատմական Κουκαριζων-ն է, որ հայտնի է նաև Խորենացուն, Բ, 46, որպես Հավուկ Եպիսկոպոսի հայրենիք, Հատուկ Բ հոդվածում: Գերախոսաբար կին էի բարտեզում նրա տեղը չի նշված:

րարիզը անկասկած *Ant.*-ում հիշատակված Օլոտոյարիզն¹ է: Գերմանոսի փոստը մենք նույնացնում ենք Տրապիզոնի մետրոպոլիտոսի Ք դարի եպիսկոպոսանիստ քաղաքներից մեկի՝ Կեբամեոնի հետ, որ այժմյան Կրոմն է՝ մի փոքրիկ գյուղ Գյումիշ-խանեից հյուսիս²:

Հուստինիանոսի կառույցների վերոհիշյալ նկարագրությունը ոչ միայն տեղագրական հետաքրքրություն է ներկայացնում, այլև մեզ ծանոթացնում է այն ժամանակվա ուղղափառ արարական արվեստին: Այդ տեսակետից կարևոր է մանավանդ Քեոզոսուպոլսի և մասամբ նաև Մարտիրոսուպոլսի ամբուսությունների նկարագրությունը: Նախ և առաջ հետաքրքրական է բաղադատել Հուստինիանոսի պատմագրի տվյալները հայկական նյութերի հետ: Ազգային ավանդության համաձայն Քեոզոսուպոլսի քաղաքը Քեոզոսիոս կայսեր հրամանով հիմնադրել է Անատոլիոսը «գեղեցկադիր լեռան ստորոտում, որտեղից բխում էին բազմաթիվ փոքրիկ և վճիռ աղբյուրներ: Նա շուրջը խոր փոս փորել տվեց և այդ խորություն մեջ դրեց պարիսպների հիմքը: Դրանց վրա կառուցեց բարձրաբերձ աշտարակներ, որոնցից առաջինը Քեոզոսիոսի պատվին անվանեց Քեոզոսիոս: Դրանից քիչ հեռու կառուցեց ելուստավոր աշտարակներ՝ ճիշտ նավացուկների նման, ինչպես նաև գոգավոր խորշերով անցքեր, որոնք նայում էին լեռանը: Այդպիսի աշտարակներ կառուցվեցին դաշտի դիմաց նաև հյուսիսում: Իսկ արևելյան և արևմտյան կողմերում նա կառուցեց բոլորածև աշտարակներ, քաղաքի կենտրոնում՝ մի բարձր տեղում՝ բազմաթիվ շտեմարաններ, որոնք Օգոստոսի պատվին կոչվեցին Օգոստիոն: Նա շատ տեղերից գաղտնի ջրանցքներով քաղաք բերեց նոր ջրեր և քաղաքը ապահովեց զենքով ու պահակազորքով և անվանվեց այն Քեոզոսուպոլիս»³:

¹ Գծվար թե հիմք կա *Λυταραριζών*-ը համարել *Λομασσοί*ի հետ, որը Աշխարհացույցի մեջ նշված է IV Հայրում՝ Արածանիի և Եփրատի խառնարանում:

² *Κεραμείων* ըստ *Nova tactica*, X—XI դդ.՝ Գեյցերի հրատարակած *Georg. Cyp.*-ի հավելվածում, էջ 78: Կրոմի մտահայեցում է գտնվում Ռոմուկոբ, որ ըստ *Cuinet*-ի, I, 126, *Λεπίον* է՝ *δ* *Λεπίου*, որ նույնպես Տրապիզոնի մետրոպոլիտոսի Քյան եպիսկոպոսանիստ քաղաքներից մեկն էր:

³ *Խոսեմոցի*, Գ, 387:

Քեոզոսուպոլսի հիմնադրման մասին շատ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել մի առասպելական, բայց անկասկած իրազեկ աղբյուրներից ծագած *Զրույցի* մեջ: Հակառակ նախորդ տեղեկությունների, *Զրույցում* ասված է, որ քաղաքի հիմնադիրը ոչ թե Անատոլիոսն է, այլ Մովսես և Գավթի անունով երկու հայ վարդապետներ, որոնք ի թիվս այլոց ուղարկվել էին Բյուզանդիայի մայրաքաղաք՝ սուրբ գրքեր թարգմանելու Բյուզանդիայում հաշակ ձեռք բերած այդ երկու անձնավորություններին Քեոզոսիոս Կրոսսերը հանձնարարեց Հայաստանում մի նոր քաղաք կառուցել: Հայրենիք վերադառնալով՝ նրանք գործի անցան: Նրանք կառուցեցին խորություն տիպի ու պարսպակործան մեքենաների համար անվտանգ աշտարակ և մեկ հիմքի վրա բարձրացրին երեք պարիսպ: Հրամայվեց փորել և զուրս տանել երեք պարիսպների միջև եղած ամբողջ հողը և փորելով հասնել մինչև քաղաքի կենտրոնը (բառացի՝ պորտը): Դրանից հետո խոր փոսը լցրին շտաշված, խոշոր քարերով ու կրով և մեկ հիմքի վրա բարձրացրին երեք պարիսպ: Որպեսզի պարսպի հիմքը փորելու հետևանքով այդ պարիսպը լիսախառվի, քաղաքի կողմից ներսում կառուցեցին պարսպին հենվող երկու հարյուր աստիճան, որոնք հետզհետե իջնում էին ավելի ու ավելի ներքև: Նույն ձևով էլ այդքան աստիճան՝ մեկը մյուսից ցածր, կառուցեցին դրսի կողմից՝ թշնամու ականներն անվտանգ դարձնելու համար: Ձեռք առնվեցին նաև այլ միջոցներ թշնամու հարձակման, քաղաքը պաշարելու և քաղաք տանող ճանապարհները կտրելու գեպքում այն պաշտպանելու համար: Նրանք քաղաքում կառուցեցին ստորերկրյա անցուղիներ և հաջողացրին գետնի տակ խոր փոսեր և փորվածքը հասցնել մինչև դաշտը՝ քաղաքից կես օրվա ճանապարհ հեռավորության վրա, մինչև այնտեղ, որտեղ ջրերը լճացած են և գոյացնում են շամբուտ, եղեգնով ծածկված ճահիճ: Այսպիսով, եթե քաղաքը պաշարեին, նրանք կկարողանային անառևանների համար կեր և վառելիքի համար եղեգն հայթայթել, իսկ թշնամիները այդ մասին ոչինչ չէին իմանա: Նույն ձևով էլ քաղաքի մյուս կողմից մինչև Այծ-պտկունք լեռը անցկացրին ստորերկրյա անցք և մուտքը ծածկեցին խոշոր քարերով: Եթե հեծյալների կարիք զգացվեր, կարող էին մարդ ուղարկել ու կանչել, և այրուծին քաղաք կմտներ թշնամուց աննկատ:

Ենչ վերաբերում է ջրին, այդ խնդիրը ևս շատ լավ լուծված էր, այսինքն՝ այնպես, ինչպես պետք է լիներ: Քաղաքում չկար մեկը,

հարուստ, թե աղքատ, որ շկարագանար օգտվել ստորերկրյա ջրատարներից: Պալատներն ու աշտարակները հոյակապ էին և շինված էին քանդակազարդ քարերով: Փողոցներն ու հրապարակները, սպանդանոցներն ու շուկաները՝ շափազանց մաքուր, եկեղեցիները հիացնում էին գիտողներին. քաղաքի դռները լայն էին ու բարձր, պատերը կարգին էին, և աշտարակները բոլորն էլ՝ խոսրովյան»¹:

Ըստ Պրոկոպիոսի նկարագրության, Թեոդոսուպոլսից 42 ասպարեզ հեռավորության վրա՝ ոչ այնքան բարձր մի լեռից սկիզբ է առնում Եփրատ գետը: «Սկզբում նա հոսում է մի որոշ տարածություն, և շուտով նրա հոսանքը անհետանում է, բայց ոչ թե կորչում է գետնի տակ, այլ մի զարմանալի բան է տեղի ունենում: Զրի վրա 50 ասպարեզ երկարություն և 20 ասպարեզ լայնություն ունեցող մի տարածությանը շատ հաստ շերտով տիղմ է նստում: Այդ ճահճում փարթամորեն եղեգն է աճում: Գետինն այդ տեղում այնքան է ամրանում, որ այստեղով անցնողները կարծում են, թե ցամաքի վրա են: Այդտեղով անվտանգ անցուղարձ է կատարվում ձիով և հետիոտն: Ավելին՝ ամեն օր այստեղից անցնում են բազմաթիվ սալեր, և տիղմը դիմանում է նրանց ծանրությանը ու բոլորովին իրեն զգացնել չի տալիս: Տեղացի բնակիչներն ամեն տարի այրում են եղեգնը, որպեսզի իրենց ճանապարհը չփակվի. ուժեղ քամիների ժամանակ երբեմն կրակը հասնում է մինչև եղեգնի արմատները և միայն այդ ժամանակ մի փոքր տարածության վրա ջուր է դուրս գալիս: Բայց շատ շանցած՝ տիղմը նորից բարձրանում ծածկում է, և այն նորից ստանում է իր նախկին տեսքը: Այստեղից գետը շարունակում է հոսել դեպի, այսպես կոչված, Նկելեսենի գավառը»²:

Այստեղ նկարագրված են այն եղեգնատները, որ հայերը շամբ են անվանում, և որոնց մասին հայ պատմիչը ասում է, որ Եփրատի մի ձյուղը իր ակունքներից ոչ հեռու «տարածվում է ճահճային լճի նման, և նրա ափերին առաջանում է շամբ, և ա-

¹ Մրբոց վարդապետացն հայոց Մովսէսի և Գաբի հարցմունք ընդ երկարեակ չարափառոսն, Գ. Մրաւանտեան, Հնոց նորոց, 1874 թ.: Cothybeare, Հ. Ա., 1903, մայիս:

² Proc. Pers. I 17, էջ 82—83, Պրոկոպիոսը Տիգրիսի ակունքները ևս բխցնում է Թեոդոսուպոլսի մոտակայքից, ըստ երևույթին շփոթելով Արաքսի հետ:

ճամ է մեծ քանակությամբ եղեգն, դաշտերն աչքի են ընկնում ինքն խոտով և կորիզավոր պտուղների առատությամբ»¹:

Այդ տեղը թուրքերեն կոչվում է ս ա զ լ ը ղ՝ եղեգնուտ և քաղաքից հեռու է մոտավորապես այնքան, որքան ցույց է տալիս Պրոկոպիոսը, այսինքն՝ տասը կիլոմետրից ոչ ավել²:

Հակառակ կողմից, այսինքն՝ հարավից, քաղաքը գոտևորվում է Փալանթյոքենի լեռներով, որոնք հենց հին Այծպտկունքն են: Այդտեղյան կողմից քաղաքի վրա բարձրանում են Թոփդաղի գագաթները, որոնք այլ կերպ կոչվում են Սուրբ Նշան՝ նույնանուն եկեղեցու անունով: Քաղաքի միջնաբերդը գտնվում է բլրի վրա, որտեղ և, ի միջի այլոց, գտնվում է զինանոցը: Միջնաբերդի դեմ դիմաց բարձրանում է Թոփդաղը, որտեղից կարելի է կրակ տեղալ քաղաքի և զինանոցների վրա³: Եվ իրոք, 1878 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերը գրավեցին «նախ և առաջ Թոփդաղի ամրությունները՝ Աղիվիեն և Մեջիզիեն, որոնք ինչպես էին ամբողջ բերդի վրա»⁴:

Միանգամայն պարզ է ուրեմն, որ քաղաքի դիմաց եղած բարձունքը, որը կտրատել ու փոփրկել ավից Հուստինիանոսը, արժանանա Թոփդաղն է: Իսկ այն գեղեցկադիր լեռը, որի ստորոտում փռված էր քաղաքը, խորենացին համարում է ոչ թե Թոփդաղը, այլ Այծպտկունքը, ինչպես կարելի է կոտակ նրա այն խոսքերից, թե քաղաքի պարիսպների բուլցրածև աշտարակները նայում էին դեպի արևելք և արևմուտք, իսկ նավացուուկի նմանվող ելուստավոր աշտարակները՝ դեպի հյուսիս և դեպի լեռան կողմը, ըստ երևույթին՝ դեպի հարավ: Թեոդոսուպոլսեցի մի ավելի ուշ շրջանի հեղինակի խոսքերով քաղաքը տեղադրված է մի բարձունքի վրա և որպես մի արքայական դահ թաղմել է Շուլալար և Գոհանամ բարձր լեռների ստորոտում և նայում է բոլորածև և գեղեցիկ դաշտին Կան գյուղի

¹ Խոսեմցի, Գ, ձթ:

² Ետնք բառի ստուգաբանությունը հայտնի չէ: Թուրքական անունը ծագում է հնդկ *سازلق* կամ *سازگول*, այսինքն՝ եղեգնյա վայր կամ եղեգնյա լճի ջուր Հազոր Կարնեցու, էջ 47, շամբուտի հեռավորությունը քաղաքից կես օրվա հեռավոր է:

³ Այդպես տեղեկացնում է Խեթիյանը, Աշխարհագր., էջ 66:

⁴ Ген. маѣор С. Духовскій, Русские в Эрзеруме в 1878 г., с. 13, Воен. маѣор С. Духовскій, 1878 г.

ուղղութիւնը¹։ Կանք կամ Կյանք գտնվում է քաղաքի հյուսիսային կողմում, իսկ Շողալարն ու Գոհանամը միևնույն լեռն է, որ գտնվում է քաղաքից հարավ՝ Գեզի-բոյնուի և Փալանթյոքեն լեռնաշղթայի միջև²։ Նա համարվում է ամենաբարձր լեռնային կենտրոն ամբողջ շրջանում, որի գագաթից նրկում են Արարատն ու Սև ծովը։

Ամրոցին վերաբերող տվյալները, սակայն, միմյանց այնքան էլ չեն համապատասխանում։ Պատմագրի նկարագրությանը Հուստինիանոսի կառուցումները Թեոդոսուպոլսում բաղկացած էին երեք տեսակի պաշտպանական ամրություններից՝ խոր փոսից ինչպես βραχίονες, պրոտեյխիզմայից կամ նախապարիսպից προτειχισμα և հիմնական երկհարկանի ատամնաձև պարսպից՝ περιβολος կամ τεῖχος, որոնք միմյանցից անջատված էին աշտարակավոր սրահի նմանվող ծածկված միջանցքով, խորենացին խոսում է միայն խոր փոսի և աշտարակավոր պարսպի մասին, ընդ որում նրա մոտ փոսը, ըստ երևույթին, ինքնուրույն նշանակություն չունի, այլ ծառայում է այն բանին, որպեսզի հնարավոր լինի խորացնել քաղաքի պարիսպների հիմքը, ինչպես այդ երկում է նաև Զրույցից³։ Այդ առասպելական փաստաթղթի հեղինակը անտարակույս հավաստի աղբյուր է ունեցել և հավանորեն ինքն է մեղավոր նրա նկարագրության մեջ եղած մի քանի անհեթեթությունների համար, որոնք սկզբնաղբյուրը սխալ հասկանալու արդյունք են։ Պարիսպների միջև ընկած հողի փորելը, որի մասին խոսվում է Զրույցի մեջ, հիշեցնում է այն, ինչ արեց Հուստինիանոսը Մարտիրոսուպոլսի պարիսպների հետ։ Մեկ հիմքի վրա երեք պարիսպներ կառուցելը իսկապես համապատասխանում է պրոտեյխիզմային և երկհարկանի հիմնական պարսպին։ Անանուն Զրույցի նկարագրության համաձայն քաղաքի պարիսպները ներսից և դրսից նման էին 200 աստիճան ունեցող հսկայական սանդուղքի։

¹ Հակոբ Կարենցի, էջ 37—38։

² Իննիսեան, Աշխարհագրություն, էջ 59։ Այս երրորդ դեպքն է, երբ լեռ կողմում է Գոհանամ՝ մեկ ծրղնկայի մոտ, ապա՝ Մպերում և այստեղ Այծպտկունք հին անունը, ըստ երևույթին, դուրս է մղվել Շողալարով։ Իննիսեանի ասելով, ժողովուրդը Գոհանամ է փոխում ամեն մի սեպակն և բարձր լեռ, loc. cit.

³ Խորենացի, Գ, ծթ, շրջափակեալ խոր փոսի, անդգալիք հաստատեաց զհիմունս պատուարին, հմմտ. Հ ա ր ց մ ու ն ք, պեղեալ...ղվէմս անտաշս խորագոնս կրով զերեսս անդնոց փախեցին (sic) և ի վերայ միոս հիման կանգնեցին երես պարիսպս։

Այդպիսի կառույցը, անկախ նրա նշանակությունից, որ մատնանիշ է արվում, աննպատակ է արդեն նրանով, որ քաղաքը պաշարող թշնամին հեշտությամբ կարող էր աստիճաններով բարձրանալ պարսպի վրա։ Ուստի այդ վկայությունը բավականին կասկածելի է։

Թուն աղբյուրի մեջ ըստ երևույթին խոսք է եղել կամ պարիսպների կցված առանձին սանդուղքների մասին և կամ թե որո՞նք են ենք քաղաքի պարիսպների երկհարկանիության վերաբերյալ շահազանցված պատկերացման հետ։ Ստորերկրյա անցքերի մասին եղած պատմությունը ևս, եթև այն չհաստատվի տեղում կատարվելիք հետազոտություններով, կարելի է համարել այն փաստի շահազանցում, որ քաղաքը չորս դուռ ուներ, որոնցից երկուսը բացվում էին դեպի հյուսիս, իսկ մյուսները՝ դեպի հարավ Այծպտկունք։

Ինչպես խորենացու, այնպես էլ Զրույցի նկարագրությունը, վերաբերում են Հուստինիանոսի կողմից վերանորոգված Թեոդոսուպոլսին։ Հետագայում քաղաքի պարիսպները բաղմիցս խորացվել և նորից վերականգնվել են¹։ Չնայած դրան քաղաքի ներկա վիճակի հետ համեմատելիս որոշ հին գծեր, այնուամենայնիվ, երևում են։

Ներկայիս էրզրումը բաղկացած է երեք մասից՝ միջնաբերդից, քաղաքից և արվարձաններից, կամ միջնաբերդից, բերդից և քաղաքից։ Քաղաքը միջնաբերդի հետ միասին գտնվում է բարձունքի վրա և արվարձաններից բաժանվում է կրկնակի պարիսպներով, խրամատով և լիցքով։ Պարիսպների բարձրությունը հասնում է խրամատով և լիցքով։ Պարիսպների բարձրությունը հասնում է 24—30 ոտնաչափի, իսկ լայնությունը՝ մինչև 5 ոտնաչափի։ պարիսպներն ունեն 62 աշտարակ։ Քաղաքի շրջագիծը կես ժամվա ճանապարհ է։ Քաղաքի ամենաբարձր մասում, նրա արևմտյան անկյունում, գտնվում է միջնաբերդը, թուրքերեն՝ իշ-կալա, որը արևելյան կողմից շրջափակված է բարձր պարսպով։ Այդ մասը նման է քառանկյունու՝ 180 քալ երկարությամբ և 80 քալ լայնությամբ։ Նրա ներքը դատարկ տարածություն է, որտեղ կան միայն մեկ բարձր աշտարակ և մի քանի այլ շինքեր²։

¹ Կոստանդին Կոպրոնիմոս կայսրը Ը դարում դրավից այն և հիմնահատակ քանդեց պարիսպները, Ասողիկ, էջ 132։ Ժ դարի կեսերին Հովհ. Չմշկիկը սպասուսուց դեմոնոսի քաղաքին ևս փլույց դարձրաբերձ աշտարակս անդ., էջ 179։

² Քաղաքի վ ճանապարհորդներ են այցելել էրզրում և նկարագրել այն, Ամեն-

գծի վրա, որի ուղղութեամբ այժմ անցնում են բերդի կրկնակ պարիսպները: Ընդունելի է նաև այս կուսումը, չի՞ք դրա հետ մեկտեղ ընդունենք, որ Աստվածածնի եկեղեցին սկզբնապես կանգնած է եղել ամրոցում, բայց հետագայում՝ մահմեդական տիրապետության ժամանակ տեղափոխվել է քաղաքի արվարձանը¹: Այս հարցը կարող է վերջնականապես լուծվել միայն տեղում հնագիտական հետազոտություններ կատարելով:

Ամրաշինական տեխնիկայի տեսակետից կարևոր է նշել պաշտպանության հետևյալ երեք միջոցները. հիմնական նյարիսպը՝ *τείχος* կամ *περίβολος*, նախապարիսպը՝ *προτείχισμα* և խրամատը՝ *τάφρος*²: Ինչպես հիմնական, այնպես էլ անջևի պարիսպները պաշտպանված էին մի ամբողջ շարք աշտարակներով, որոնք ծառայում էին թշնամու գրոհները ետ մղելու հենակետ: Պարիսպները վերջանում էին ատամներով: Եթե ուզում էին պարիսպները բարձրացնել, ատամները լցնում էին քարերով՝ ստացելով սրահի տեսք և շարունակում էին բարձրացնել պարիսպը, որ կրկին վերջացնում էին ատամներով: Սրահը անցնում էր շիրջանակի ամբողջ պարսպի երկարությամբ և ստացվում էր խակահան երկհարկանի պարիսպ³: Պարիսպը պաշտպանվում էր սրահից, պարիսպների և աշտարակների վերևում: Այդպես էին կառուցված Գարայի և Թեոդոսուպոլսի, կայսրության ծայրամասի այդ երկու ամենակարևոր ստրատեգիական պահակակետերի պարիսպները: Մխալ կլիներ կարծել, թե ամրություններ կառուցելու վերահիշյալ համակարգը Հուստինիանոսն է բերել Արևելք. կասկածից վեր է, որ այն տեղական կուլտուրայի սեփականությունն է: Շատ հավանական է, որ հայոց լեզվի մեջ սովորական դարձած պարիսպ, պատվար, խանդակ կամ փոս բառերը արտահայտում են ամրության

¹ Ըստ Ինժեճյանի Աշխարհագր., էջ 69, քաղաքի արվարձանում Աստվածածնի անունով կան միմյանցից ոչ հեռու երկու եկեղեցի՝ մեկը կոչվում է Վերին, մյուսը՝ Ներքին: Առաջինը կոչվում է նաև սմիթրան Ածածին, սակայն սմա լինելուց միաբանությունը եզրի կաթուղիկոսի ընդ յուրացան: Կարնեցին հիշատակում է միայն մեկ եկեղեցի. միաբան Ս. Ածածին անունով: Այդ բացատրությունը հաղիվ թե հիմք ունի. շատ հնարավոր է, որ նույնանուն երկրորդ եկեղեցու ծագումը, եթե նոր ժամանակներում չի առաջ եկել, արդյունք է լուսավորչական և հունադավան հայերի տարածությունների:

² Ch. Diehl, *L'Afrique Byzantine*, p. 145.

³ Texier et Pullan, *Byzantine architecture*, 1864, p. 54.

երեք տեսակները, որ համապատասխանում են հունարեն *τείχος*, *προτείχισμα* և *τάφρος*-ին:

Ոչ բոլոր ամրություններն էին, որ ունեին վերահիշյալ բոլոր կառույցները: Առջևի լրացուցիչ պարիսպները սովորաբար կառուցվում էին խոշոր ամրությունների մոտ, որպեսզի շրջակայքի անպաշտպան բնակիչներին հնարավորություն տրվեր պաշտպանվել թշնամու հարձակման ժամանակ: Գարայի մասին Պրոկոպիոսը ասում է, որ այդ քաղաքը շրջապատված էր երկու պարիսպով, ընդ որում ներքին պարիսպն անհամեմատ ավելի բարձր էր, քան արտաքինը: Առաջինի բարձրությունը հասնում էր մինչև 60 ոտնաչափի, իսկ աշտարակներինը՝ 100 ոտնաչափի: Երկու պարիսպների միջև բնակած տարածությունը հաշվվում էր 50 ոտնաչափից ոչ պակաս. թշնամու ասպատակությունների ժամանակ «Գարայի բնակիչները սովորաբար այնտեղ էին թշնամու-բերում իրենց եղներն ու մյուս անասունները»¹:

Ամրություններն ըստ իրենց մեծության լինում են մի քանի տեսակ՝ ամրացված մեծ քաղաքներ, *πόλεις civitates*, կարևոր ամրոցներ՝ *φρουρά* կամ *castella*, աննշան ռեդուտներ՝ *byrgi*, խրամատով շրջապատված ճամբար՝ *castra* և լեռնանցքները փակող պարիսպներ՝ *clisurae*²: Ինչպես տեսանք, ամրությունների այս բոլոր տեսակները կային Հայաստանում:

¹ Proc. Pers. II 13, p. 212.

² Ch. Diehl, *ib.* p. 185.

Գ Լ ՈՒ Խ VII

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական եղբոր վերակազմության պետական զորապատանուներ՝ կապված ամբողջ կայսրության համանգային ռեֆորմի հետ: Պետական մեքենայի խարխվածությունը և դրա պարտադր ըստ Հուստինիանոսի: *Suffragium*-ը և նրա վերացումը. վարչական ռեֆորմ՝ համազգեների համապետականացման համակարգով: Դատավարական ռեֆորմը: Նովելլայի վերաբերությունը: Նոր բաժանումներ՝ I, II, III և IV Հայկ և նրանց սահմանները: Քառեփոխությունների վարձեր միեջև հովելլան: Արևիկոսի և Քովմայի դերը ռեֆորմների գործում: Հայաստանում Հուստինիանոսի հետապնդած հայատուները: *Sacra communitaria*-ն և հայերի մաս ժառանգելու կարգին վերաբերող նովելլաները: Նովելլաների վերաբերությունը: Ինչպիսի հասկանալի հովելլաներում արձարձված կանանց իրավաբանությունը: Ամուսնության հարցը և օժիտը կայսրության օրենսգրքային մեջ՝ *φέρνγη* և *ծարձ* կամ *mos* և *donatio*, վարձանք՝ *varžanž*-ը և օժիտը՝ *ožit*-ը հայերի մաս, հայկական պառչքը և առայրը՝ *proig* և *lovaiz* որպես հունական փոխառությունն որովհ-ից և *ծարձ*-ից: Ամուսնական հին սովորությունների ժամանակակից վերադարձները: Կանանց իրավաբանությունը տոնմային կապվածքներ՝ ժառանգելիս: Աղիարեստիզմը հայերի մաս: Մեկու երեսույթներն էլ հատուկ են նաև արևմտահայրապական ֆեոդալիզմին: Նովելլաների բուն իմաստը: Նախաբարական վարչակարգի կործանումը Հուստինիանոսի գլխավոր խնդիրներից մեկն է: Արևմտական գանձարանի շանք որպես բարենորոգչական գործունեության անմիջական զորապատանա ընդհանրապես և Հայաստանում՝ մասնավորապես:

Հուստինիանոսի օրոք Հայաստանի քաղաքացիական վերակազմությունը ըստ ամիլի էական նշանակություն ունեցավ երկրի համար, քան զինվորական վերակազմությունը, քանի որ այն շոշափում էր կյանքի դարավոր կացութաձևը: Ռեֆորմները հատուկ նովելլայի ուժով սկսվեցին 536 թվականին՝ Վերակազմության վերջնական նպատակը, անկասկած, երկրի քաղաքական և հասարակական յուրահատուկ կարգերի ոչնչացումը և նրա հումեակա-

նացումն էր: Թվում էր, թե հումեականացված Հայաստանը Արևելքի հարավային սպառնալիքների դեմ կծառայեր որպես առավել հուսալի պատվար: Հուստինիանոսը բնավ չէր թաքցնում իր ցանկությունը, որ հայերը ամեն բանում հետևեն հումեական օրենքներին, և Հայաստանը ոչնչով չտարբերվեր կայսրությունից»:

Չնայած բարեփոխիչ կայսեր ասիմիլյատորական ձգտումներին ակնհայտությունը, հայկական հողերի վերակազմության գաղափարը առաջին անգամ ծնունդ առավ, ըստ երևույթին, ոչ իբրև հայերի դեմ ուղղված բացառիկ մի միջոցառում, այլ առաջ եկավ բնականորեն՝ կապված Հուստինիանոսի վարչական ընդհանուր ռեֆորմների հետ:

Կայսեր ներքին քաղաքականությունը նույնչափ ուշագրավ է, որքան և արտաքինը: Հուստինիանոսի գահ բարձրանալու ժամանակ կայսրությունն ապրում էր չափազանց ծանր օրեր: Նրա մերձավոր նախորդների անհոգությունը հետևանքով պետության ներքին կառուցվածքն այնպիսի վիճակի էր հասել, որ բնավ վայել չէր մի հզոր կայսրության արժանապատվությունը և արդեն նկատվում էին քայքայման նշաններ. կաշառակերություն, արդարադատում էին քայքայման նշաններ. կաշառակերություն, արդարադատում էին քայքայման նշաններ, ժողովրդի վճարունակության անկում, երկրի աղքատացում՝ համատարած վտանգի ու անասլահովության պայմաններում — ահալասիկ պետական կյանքի անմխիթար պատկերի ցցուն գծերը: Վարչական բոլոր մարմինները վերակառուցման կարիք ունեին. պահանջվում էին վճուհական միջոցներ պետությունը կործանումից փրկելու համար: Ամեն ձևով ճնշված ու շահագործվող ժողովուրդը հուսահատություն էր հասցվել. դժգոհությունն աճում էր օրավոր, և ամբողջ կայսրությունով մեկ ծավալվում էին հուզումներ: Չանդվածային շարժումները, խռովություններն ու հաճախակի կրկնվող ապստամբությունները կայսրությանը անխուսափելի փլուզում էին սպառնում: Անհրաժեշտություն էր զգացվում վերակառուցելու և թարմացնելու պետական կյանքի հիմնարկները. դրան էլ ձեռնամուխ եղավ Հուստինիանոսը գահ բարձրանալուց ութ տարի հետո:

535 թվականի ապրիլի 15-ին լույս տեսավ Հուստինիանոսի նշանավոր և իր բնույթով եղակի նովելլան¹, որի մեջ կայսրը ար-

¹ Nov. VIII—Cons. 16. H διατάξις περί τοῦ τοῦς ἀρχόντας χωρὶς τῆς ἐλαστοῦν δόσεως γίνεσθαι.

Հին Հռոմը իր վեհօրհան համար մասամբ պարտական էր երկրի նահանգալիկ կառուցվածքին: Նրա կարծիքով փոքր Հռոմը երբեք չէր դառնա համաշխարհային հզոր տերություն, եթե իրենց նկատմամբ հարգանք ներշնչելու նպատակով նահանգներում շնչանակեին բարձր դիրք ունեցող կառավարիչներ և շրջապատեին նրանց շուրջով՝ նրանց վիճվորական և քաղաքացիական լիակատար իշխանություն տալով¹: Այդպիսի համոզմունքի բնական հետևանքը եղավ այն, որ ի տարբերություն Դիոկղետիանոսի ժամանակվանից գործող սկզբունքի, ըստ որի կայսրությունը աստիճանաբար բաժանվում էր մանր մասերի, իսկ քաղաքացիական ու վիճվորական իշխանությունները անջատվում իրարից, Հուստինիանոսը կիրառեց կայսրության հոգերն ու իշխանությունները կենտրոնացնելու սկզբունքը:

Աւթերորդ նովեմբրյան անմիջապես հետո, 535 և այնուհետև 536 թվականներին, հրապարակվեցին նահանգների վերակազմությանը վերաբերող մի շարք այլ նովեմբրյան Պատիլագոսիան, որ Հուստինիանոսի կարծիքով անհիմն կերպով բաժանված էր Պատիլագոսիայի և Հոնորիոսի, վերականգնվեց իր նախկին սահմաններում և գրվեց *spectabilis*-ի² աստիճան ունեցող պրետորի իշխանության տակ: Նա միավորեց երկու Կասպողովիանները և նրանց կառավարումը հանձնեց նույնպես *spectabilis*-ի աստիճան ունեցող մեկ պրոկոնսուլի (փոխհյուպատոսի)³: Պողևմունական Պոնտոսը և Հելլենոպոնտոսը միավորվեցին Հելլենոպոնտոս անունով մեկ նահանգի մեջ: Նրա կառավարիչը կոչվում էր մոդերատոր և ուներ միևնույն աստիճանը⁴: Նման փոփոխությունների ենթարկվեցին նաև մյուս դիոցեզների նահանգները⁵: Այդ ժամանակ էլ ընդհանուր վերակազմության կողքին երևան եկավ նաև հայկական հոգերի վերակազմության մասին նովեմբրյան:

Նահանգները վերակազմելիս Հուստինիանոսը առաջնորդվում էր ոչ միայն վարչական նկատառումներով, այլ նաև դատարանի

¹ Nov. 24.

² Nov. 29.

³ Nov. 30.

⁴ Nov. 28.

⁵ Nov. 24. Praefor Pisidiae. Nov. 25, Praefor Lycaoniae. Nov. 27, Comes Isaurae. Nov. 102, Moderator Arabiae. Nov. 103, Proconsul Palaestinae. Nov. 104, Praefor Siciliae.

շահերով: Որպեսզի հասկանալի լինեն նրա ռեֆորմներն ընդհանրապես և Հայաստանում մասնավորապես՝ անհրաժեշտ է նախապես ծանոթանալ դատական օրենսդրության գեթ ընդհանուր ուղղվածքին:

Արդարադատությունը Հռոմեական կայսրության մեջ առանձնացված չէր որպես հատուկ գերատեսչություն: Վարչական մարմինները իրենց մյուս պարտականությունների հետ իրականացնում էին նաև դատավարությունը: Կառավարիչներից յուրաքանչյուրը, անկախ իր կոչումից ու աստիճանից, միաժամանակ հանգիստում էր նաև *judex*: Կառավարիչների երեք տարբեր աստիճաններին համապատասխան տարբերում էին երեք դատական աստիճան՝ սովորական կամ կլարիսիմյան, սպեկտաբլիյան և իլլուստրալիսի՝ *judices ordinarii, spectabiles, illustres*¹: Բարձրագույն աստիճանը հանդիսանում էր կայսեր՝ արդարադատության գեղազույն պահապանի դատարանը: Սովորական դատարանից ցած կանգնած էին քաղաքապետական մագիստրատները, բայց նրանց իրավասությունը շատ սահմանափակ էր և կարելի է ասել, որ առհասարակ դատական գործերը քննվում էին առաջին աստիճանով՝ սովորական դատավորների կողմից: Նրանց էին ուղարկվում նաև հիշյալ մագիստրատների վճիռների դեմ արված բեկման բողոքները, իսկ նրանց միջոցով էլ ուղարկվում էին սպեկտաբլիյան դատավորներին, այսինքն՝ փոխանորդներին: Պրետորիաների պրեֆեկտների վճիռը վերջնական էր և բեկման ենթակա չէր: Մինչդեռ փոխանորդների վճիռները ենթակա էին բողոքարկման, ընդ որում այդ բողոքները ուղարկվում էին ոչ թե պրեֆեկտի դատարանը, ինչպես պետք էր սպասել, այլ ուղղակի կայսրին, իբրև *sacro judicii*:

Այդպես էր մինչև Հուստինիանոսը: Նրա օրոք դատական գործերի հաջորդականությունը ենթարկվեց որոշ փոփոխության:

Սկսած Պ դարի երկրորդ կեսից՝ բաղաճնեբերում, ի հակակշիռ մագիստրատների, գոյություն ուներ *ἔκδικος* կամ *defensor civitatis* հատուկ կոչումը: Նրա պարտականությունների մեջ էր մտնում շքավորների շահերի պաշտպանությունը մագիստրատների իբրև ունեոր դասակարգի մարմինների դեմ: Գեֆենդորները, սակայն, հետզհետե կորցրին իրենց նշանակությունը, նրանք ժողովրդի ալքից այնքան ընկան, որ Հուստինիանոսի բառերով ասած, նրա

¹ Bethman-Hollweg, *Civilprocess* III, § 131.

ժամանակ defensor-ը ավելի շուտ հնչում էր որպես վիրավորական մականուն, քան պատվավոր տիտղոս¹։ Կայսրը վերականգնեց դեֆենզորների անունն ու զիրքը, և եթե առաջ նրանք իրավասու էին քննելու 50 սկուտից ոչ ավելի գումարի գանգատներ², ապա այժմ նա բարձրացրեց նրանց իրավասությունը մինչև 300 սկուտի³, 300 սկուտից ավելի գումարի հայցերն ու գանգատները ենթակա էին նահանգային կառավարչի դատարանին։

Հուստինիանոսի նահանգային ռեֆորմների հետևանքով կառավարչինքրը, հազվագյուտ բացառությամբ, բարձրացվեցին սպեկտարիլի աստիճանի և դարձան iudices spectabiles։ Մեր գիտնելով նրա 11 նահանգներից, հայկական գավառների հետ միասին, կազմվել են սպեկտարիլ իշխանություններ։ Դրանով փաստորեն վերացվեցին iudices ordinarii-ն և նրանց փոխարինեցին defensor-ները։

Հուստինիանոսի օրենսդրությամբ սպեկտարիլյան դատավորները իրավասու էին բողոքարկման ոչ ենթակա վճիռներ կայացնել 500 սկուտից ոչ ավելի գումարի վեճերի վերաբերյալ, իսկ եթե հայցի գումարները ավելի էին դրանից, ապա դատարանի վճիռը կարող էր բողոքարկվել պրեֆեկտի և քվեստորի դատարանում։ Այս հարցին նվիրված նովելյան կորեւ է, և նրա մասին մենք գիտենք այն հատուկեւնա մեջբերումներից, որ հանդիպում են վերջին օրենսդրությունների, ի միջի այլոց նաև հայկական հողերի վերակազմությանը վերաբերող նովելյայի մեջ⁴։

¹ Nov. 37:

² C. J. I 35, 1:

³ Nov. 15, c. 3, § 2, 535 թ. հուլիսի 17-ը:

⁴ Այդ մասին ամենավաղ հիշատակությունը մենք գտնում ենք 535 թվ. մայիսի 18-ի 24-րդ և 26-րդ նովելյանների մեջ։ Նույն ամսվա ապրիլի 15-ին մեզ հնամարտագրող նովելյան դեո հայտնի չէր, որովհետև Գաղատիայի և Փոյուզիայի կոմսաներ նշանակելու մասին այն ժամանակ հրապարակված նովելյաններում այդ կոմսաների դատական իրավունքների մասին խոսք չկա։ Նովելյան հրապարակվել է հովանորեն 535 թ. ապրիլի 15-ին և մայիսի 18-ի ժամանակամիջոցում։ Որոշ ժամանակ անց, 536 թ. հունվարին, հրապարակվեց De appellationibus կոչված նովելյան, որտեղ հեղինակը զանգամուտ է, որ «անկարևոր գործերի համար անհանգստացնում են բարձրագույն դատարաններին և աննշան դատավարությունների համար մարդիկ ուժից վեր ծախսեր են անում, այնպես որ երբեմն վեճը ատարկա գումարը չի բավարարում ծածկելու դատական ծախսերը»։ Դրանից հետո մինչև 10 ֆունտ ոսկու հասնող վեճերի բողոքները պետք է ուղարկվեն ոչ թե մայրաքաղաք, այլ մտավա սպեկտարիլյան դատարան։ Փանի որ մինչև 536 թ.

Հիշյալ ընդհանուր շարժառիթները, որոնք Հուստինիանոսի ռեֆորմությունների հիմք են հանդիսացել, մեզ հասկանալի են ցուցնում նաև այն ռեֆորմները, որ նա կատարեց Հայաստանում։ Այդ ենք բերում Հայաստանում շոքս կառավարչինքր Գաստատիլու վերաբերյալ 31-րդ նովելյայի բնագիրն ու թարգմանությունը ամբողջությամբ։

Περὶ διατυπώσεως τῶν τεσσάρων ἀρχόντων Ἀρμενίας.
 Ὁ αὐτὸς βασιλεὺς Ἰωάννη τῷ ἐνδοξοτάτῳ ἐπάρχῳ τῶν ἱερῶν
 τῆς Ἐω πραιτωρίων τὸ δεύτερον ἀπὸ ὑπάτων καὶ πατριῶν.

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այն ամենը, ինչ որ լրված է անկարգ վիճակի մեջ է, եթե կարգի է բերվում և լավ դատվորվում, բուրբուլին այլ տեսք է ընդունում, քան առաջ. անճոռնին դառնում է հանելի, տղեղը՝ գեղեցիկ, անկազմակերպ ու խառնակ քանք կարգավորվում և պարզորոշ է դառնում։ Տեսնելով, որ այս թերությունը հատուկ է նաև Հայոց աշխարհին, մենք հարկ համարեցինք վերակազմել այն միատեսակ ձևով և բարեկարգելով՝ տալ նրան պատշաճ զորություն, հաստատել այնտեղ արժանավայել կարգ ու կանոն։

Τὰ μάτην κείμενα καὶ ἐκκεχυμένος εἰ πρὸς τὴν προσήκουσαν ἀφίκοιτο τάξι καὶ διατεθείη καλῶς, ἕτερα τε ἀνθ' ἑτέρων τὰ πράγματα φαίνοιτο, καλλίω τε ἐκ χειρόνων, ἐξ ἀκόσμων τε κεκοσμημένα, διηρθρωμένα τε καὶ διακεκριμένα ἐκ τῶν ἔμπροσθεν ἀτάκτων τε καὶ συγκεχυμένων. τοῦτο καὶ ἐπὶ τῆς Ἀρμενίων χώρας ἀμαρτανόμενον εὐρόντες φήθημεν χρῆναι πρὸς μίαν ἀρμονίαν τάξαι αὐτὴν, καὶ ἐκ τῆς εὐταξίας ἰσχύον τε αὐτῇ δοῦναι τὴν προσήκουσαν, τάξιν τε ἐπιθεῖναι τὴν πρέπουσαν.

Հանվարը դեռ չէին ավարտվել նահանգներում սպեկտարիլ իշխանություններ հաստատելու ռեֆորմները, այդ պատճառով էլ հայկական գավառներից դիմում են Հիշվեալոսնոսի մոզերատորին որպես ամենամտաթի սպեկտարիլի Առաջիագույն գումարը 500 սկուտի փոխարեն կազմում էր 10 ֆունտ ոսկի, այսինքն՝ 720 սկուտ, մի հանգամանք, որ բացատրվում է կամ ոսկու արժեքի ժամանակավոր անկումով և կամ նրանով, որ գատական գործերի վարումը տարբեր նահանգներում ավելի քան էր նստում, և այդ պատճառով էլ գումարը դիտավորյալ կերպով ավելացված է։

գտավ մոզերատորի իշխանությունից վերցնել շորս քաղաք՝ Զելա, Կոմանա, Տրապիզոն, Կերասուս, և միացնել հայկական հողերին: Առաջին և Ներքին Հայքը այս քաղաքների հետ միասին կազմեցին երկու նոր նահանգ: Ամբողջ Ներքին Հայքը, նախկին Առաջին Հայքի մի մասը՝ Սատաղի, Նիկոպոլիսի և Կողոնիայի սահմաններով և նոր ձևով բերված Տրապիզոն և Կերասուս քաղաքների շրջանների հետ միասին կազմեցին մեկ նահանգ, որ ստացավ Առաջին Հայք անունը:

Մյուս նահանգը կազմվեց նախկին Առաջին Հայքի մնացած մասից՝ Սերաստիա, Սերաստուպոլիս և Վրիսա քաղաքներից, ինչպես նաև Պանտական Զելա և Կոմանա բնակավայրերից և կոչվեց Ներքող Հայք:

Նախկին Երկուրդ Հայքը վերանվանվեց Երրորդ Հայք, առանց սահմանների փոփոխության: Նա ընդգրկում էր Մելիտենն, Արկա, Արարիսսոս, Արիարաթիա, Ոսկե Կոմանա և Կուկուսոն քաղաքները:

Վերջապես Չորրորդ Հայքին անցան հինգ ինքնավար իշխանությունների հողերը. Սոփանենն, Անդիտենն, Սոփենն, Հաշտիանենն և Բալավիտենն զբաղակները միասին կազմեցին մի նահանգ Մարտիրոսուպոլիս մայրաքաղաքով:

Կասկածից վեր է, որ նախկինում ազատ սատրապական երկրները առաջին անգամ կայսրության նահանգի վերածվեցին 536 թվականի նովեմբրի, ինչպես այդ մասին պարզ վկայում է պաշտոնական փաստաթուղթը: Այլ է Ներքին Հայքի հարցը: Ըստ մի քանի և բավականին աներկմիտ տվյալների այնտեղ նահանգային վարչաձև մտցնելու փորձեր են արվել մինչև մեր նովեմբրի հրապարակումը: Նովեմբրիցից մեկում, հրապարակված հայկականի հետ միաժամանակ, այսինքն՝ 536 թվականի մարտի 18-ին, Հայաստանի պրոկոնսուլի մասին հանդիպում է մի հետաքրքրական հիշատակություն. «Առաջ մենք հաստատեցինք այնտեղ սովորական իշխանություն, — ասված է նովեմբրում, — իսկ այժմ ոչինչ չավելացնելով նրան՝ բարձրացրինք այն փոխհյուպատոսության աստիճանի»¹: Բացի դրանից, նահանգների 535 թվականի ապրիլի 15-ի սուֆրա-

¹ Nov. 20 = Const. 46. γ'. Ταὐτὸ δὲ τοῦτο καὶ ἐπὶ τοῦ τῆς Ἀρμενίας ἀνθυπάτου, ἐπειδὴ πρότερον ἀρχὴν αὐτῆν ὁ ρ δ ι ν α ρ (ι α ν ποιήσαντες, νῦν οὐδὲν αὐτῇ προσθέντες εἰς τὸ τῆς ἀνθυπατείας μετηγόγομεν σχῆμα.

պալ ցանկում, ինչպես մենք տեսանք, I և II Հայքի կողքին նըշված է նաև ἄρχων Ἀρμενίας Μεγάλης¹, Մեծ Հայքի այն մասի կառավարիչը, որ կոչվել է Ներքին Հայք: Պարզ է, որ 536 թվականի մարտի 18-ի նովեմբրի հրապարակումից առաջ Հայաստանի այդ մասում արդեն գոյություն ունեւր կայսերական քաղաքացիական իշխանություն՝ հանձին արխոնտի կամ սովորական պրեզիդի:

536 թվականին խոսքը գնում էր միայն իշխանությունը ստորագասից գերամեծարության բարձրացնելու և արխոնտին պրոկոնսուլով փոխարինելու մասին: Կայսեր «բարեպաշտ անունով լաբարված» նոր մայրաքաղաքի ընտրությունը ըստ երևույթին կապ ունեւր երկրի քաղաքացիական վերակազմության հետ: Իսկական մայրաքաղաքը՝ Քեոզոսուպոլիսը, տրամադրվեց զինվորական պետին: Գտնվելով նահանգի ծայրամասում և թշնամու երկրին մոտ, այն չէր կարող դառնալ քաղաքացիական վարչության կենտրոն: Ուստի պետք էր ընտրել քիչ թե շատ կենտրոնական դիրք ունեցող մի այլ բնակավայր. այդպիսին հանդիսացավ Վազանից ոչ հեռու գտնվող ավանը:

Նրա կառուցումը և Հուստինիանուպոլիս վերանվանելը նախորդեց նովեմբրի հրապարակմանը²: Ճիշտ այդպես էլ Ակակիոսը արդեն Հայաստանի կառավարիչ էր, երբ երևան եկավ նովեմբան: Քե մեկը և թե մյուսը բխում է նույն այս նովեմբրի բովանդակությունից: Հայտնի է նաև, որ Ակակիոսը Ներքին Հայքում կայսերական իշխանության ներկայացուցիչներից առաջինը չէր: Նրանից առաջ այդ երկիրը կառավարում էր տեղական իշխաններից մեկը՝ Համազասպը, որը հայերի վրա արխոնտ էր նշանակված հենց Հուստինիանոսի կողմից: Համազասպի մասին շարանենգ մատնություններ անելով՝ Ակակիոսը վերջապես կայսեր համաձայնությամբ պանեց նրան և ստացավ Հայաստանի կառավարչի պաշտոնը³: Ետևով ինքն էլ սպանվեց հայերի ձեռքով:

¹ Nov. 8 = Const. 16: Տե՛ս վերը՝ էջ 198:
² Ավելորդ չէ մատնանշել, որ Պրոկոպիոսը Aed.-ի մեջ հիշատակում է Հուստինիանուպոլիս, երբ, ըստ երևույթին, դեռ չդիտեր Հուստինիանոսի 536 թ. բարեկարգության մասին:
³ Proc. Pers. II 3 p. 159 ἄρχοντα κατεστήσατο Ἀρμενίους αὐτὸν (sc. τὸν Ἀμαζάσπην) ... γνώμη βασιλέως Ἀκάκιος τὸν Ἀμαζάσπην δόλω' ἔκτεινε καὶ τὴν Ἀρμενίων ἀρχὴν δόντος βασιλέως· ἔσχεν αὐτός.

Համազասպը, սկզբնական շրջանում նաև Ակակիտսը հասարակ կառավարիչներ էին, և նրանց ենթակա Հայաստանը դասվում էր սովորական նահանգների շարքը: Երբ 536 թվականին այն դարձավ պրոկոնսուլական, ապա իր իսկ՝ կայսեր խոստովանությամբ «նրան ոչինչ չավելացվեց»: Այդ հայտարարությունը, եթե այն հասկանանք տերիտորիալ իմաստով, իսկ այլ կերպ չի էլ կարելի հասկանալ, տարակուսանք է հարուցում: Ստացվում է, որ պրոկոնսուլական Հայաստանը իր այն սահմաններով, որոնք, թվում է, թե առաջին անգամ նշված են 31-րդ նովեբրարիում, իրականում սահմանագծված է եղել դրանից առաջ, այսինքն՝ նախկին կառավարիչը իշխել է նույնպիսի ամբողջական տերիտորիայի, ինչ որ պրոկոնսուլը: 535 թվականի հուլիսի 23-ի 28-րդ նովեբրարից մենք իմանում ենք, որ պրոկոնսուլական Հայաստանի կազմի մեջ մտնող Տրապիզոն և Կերասոս քաղաքները այն ժամանակ դեռևս գտնվում էին Պոնտոսի մոզերատորի իշխանության տակ: Հետևաբար, եթե տվյալ հարցի վերաբերյալ ընդհանրապես գոյություն են ունեցել ինչ-որ կարգադրություններ, որոնք մեզ չեն հասել, ապա դրանք պետք է եղած լինեն 535 թվականի հուլիսի 23-ի և 536 թվականի մարտի 18-ի միջև ընկած ժամանակամիջոցում¹:

Կոմեսի պաշտոնը վերացվելուց հետո Համազասպը ներքին Հայքի առաջին կառավարիչն էր և կայսերական իշխանության կրողը. նա այդ պաշտոնին նշանակվեց, ըստ երևույթին, 532 թ. հաշտությամբ ավարտված պարսկական պատերազմից հետո հայ իշխանների միջև ծագած երկպառակությունների առիթով: Պատահական չէ, որ պարսից խոսրով թագավորին ներկայացած հայոց դեսպանություններ այդ թվականին է վերադրում Հուստինիանոսի կողմից ձեռնարկված հալածանքների սկիզբը: Հայքի վկայություններն, անշուշտ, նպատակ ունեին ընդգծելու հաշտության աննպատակ լինելը այնքանով, որքանով այն ժառանգեց հոգուտ Հուստինիանոսի, բայց այն բանում, որ հաշտության տարին հայ նախարարները դիտում էին որպես իրենց հասած աղետների սկիզբ ու պատճառ, բացի ագիտացիոն դիտավորությունից չի կարելի շտեպնել նաև փաստական որոշ ճշմարտություն այն իմաստով, որ, ըստ երևույթին, կայսրը այդ ժամանակվանից սկսեց միջամտել երկրի ներքին գործերին՝ մտցնելով այնտեղ կայսերական

¹ Հմմտ. նովեբրարի հրատարակիչների ծանոթ. Const. 45. Teub. I p. 277.

իշխանության մարմին: Հնարավոր է, որ դրանից հետո փորձ արված լինի ընդարձակելու ներքին Հայքի սահմանները, բայց ամբողջ Հայաստանի լիակատար վերակազմությունը, տերիտորիալ փոփոխություններով, պետք է վերագրել 536 թվականին, երբ հրապարակվեց նշանավոր նովեբրարի:

Թվում է, թե հայկական հողերը շուրջ մասի բաժանելը հակասում է այն միավորող ձգտումներին, որ մենք նշեցինք Հուստինիանոսի նահանգային քաղաքականության մեջ: Իրականում այս դեպքում ևս ընդհանուր սկզբունքը պահպանվեց այն շահով, ինչ շահով որ այն անհրաժեշտ էր արդարադատության տեսակետից: Գատական տեսակետից շուրջ գավառները կազմում էին երկու մեծ շրջան, որոնք ենթակա էին պրոկոնսուլին և կոմեսին: Սրանք երկուսն էլ սպեկտաբիլյան իշխանություն կրողներ են և ունեն իրենց աստիճանին հատկացված իրավասություններ, ընդհուպ մինչև սահմանված 500 սկուտի բեկման ոչ ենթակա վճիռներ կայացնելը: Պրոկոնսուլին բողոքարկումներ էին ուղարկվում 11 Հայքից, իսկ կոմեսին՝ IV Հայքից:

Հյուսիսում երկու նահանգներից սպեկտաբիլ դարձավ նա, որն ընկած էր ավելի արևելք: Կարելի է մտածել, որ այստեղ դեր է խաղացել թշնամու տերիտորիային հարող ծայրամասում իշխանությունն ուժեղացնելու մտահոգությունը: Այդ դեպքում մենք իրավացի կլինեինք սպասելու, որ օրենսդիրը նման վերաբերմունք ցույց տար նաև հարավի նկատմամբ, մինչդեռ Հուստինիանոսը կոմես է կարգում ոչ թե IV, այլ III Հայքում: Նա այդպես վարվեց ամենևին էլ նկատի չունենալով Մելիտենե մայրաքաղաքի բնական առավելությունները, որի գեղատեսիլ դիրքը և առողջարար օդը այնքան դուր էին եկել կայսրին: Թե՛ այս, և թե՛ մյուս դեպքում Հուստինիանոսն առաջնորդվել է ոչ թե ինչ-որ լուրջ գաղափարներով, այլ պարզ հաշիվներով՝ վարձահատուց լինել կայսեր սիրեցյալներ Ակակիոսին և Թովմային: Նովեբրարի հրապարակման պահին և՛ Ակակիտսը, և՛ Թովման պաշտոնավարում էին Հայաստանում: Կայսրը հիշյալ նահանգներին ուշադրություն դարձրեց ոչ թե հաշիվ առնելով նրանց համեմատական առավելությունները, այլ ի սեր նրանց՝ այն ժամանակվա կառավարիչների:

Ակակիտսի անձնավորությունը բավականաչափ ծանոթ է Պրոկոպիոսի պատմությունից: Չնայած նա ծագումով հայ էր, սակայն

շատ հետո էր իր հայրենիքի շահերը պաշտպանելուց: Իրրև Հայաստանի կառավարիչ նա շկարողացավ դահի հանդեպ ունեցած հավատարմությունը զուգակցել օրինավոր մարդու ոչ բարդ հատկությունների հետ: Կառավարչի պաշտոնը նա ձեռք ձգեց նենգությունամբ և իր մերձավորի արյան գնով, Եր թագից հենց ինքը: Ի ծնե լինելով դաժան բնավորության տեր՝ նա անհասկանալի շարություններ էր լցված իր ազդակիցների նկատմամբ՝ և իր կարճատև իշխանության ժամանակ այնքան շարիքներ գործեց, որ հայերը այլևս շկարողացան տանել նրա հասցրած անարգանքները, և նա իր մահը գտավ նրանց ձեռքով:

Ինչ վերաբերում է Թովմային, ապա նրա մասին Հուստինիանոսի հայտնած գովասանական կարծիքները՝ որպես շատ օգտակար և ազնիվ գործչի, ավելի շուտ ապացուցում են այն, որ իր հատկանիշներով ու տրամագրություններով նա Ակակիոսից ոչնչով չէր տարբերվում, և երկրի ու ազգաբնակչության շահերի տեսակետից նրա գործունեությունը նույնպես պիտի բացասական համարել. նրանց մատուցած ծառայությունների համար կայսրը այդ երկու կամակատար ծառաներին ի տրիտուր շնորհեց սպիկտաբիլության աստիճան: Թովմա կոմեսին նշանակեց 700 սկուտի ոռճիկ, որը զգալիորեն գերազանցում էր սովորական 300 սկուտի դրույքին, որ ստանում էին կոշտեմով ու դիրքով նրան հավասար մյուս նահանգներին՝ Պիսիդիայի, Լիկաոնիայի, Թրակիայի պրեֆեկտները կամ Իսավրիայի կոմեսը²: Իսկ նրա ընթերակային ոռճիկ սահմանվել էր այդ կարգի աստիճանավորների համար ընդունված չափով, այն է՝ 72 սկուտ: Նրա ղիվանը կամ ղիվանատունը ավելի քիչ էր ստանում, քան սահմանված էր՝ ընդամենը 60 սկուտ, մյուսների երկու լիտր

ուսկու դիմաց³: Գիվանատների քանակական կազմը փոփոխվում էր՝ նայած ժամանակին և պաշտոնի բնույթին: Հուստինիանոսը հակված էր առհասարակ պակասացնել այն. այսպես, կառավարիչներին կից ղիվանատների, ղինվորական և քաղաքացիական իշխանությունամբ օժտված պրետորների և կոմեսների թիվը նա հասցրեց 100 հոգու⁴:

Ակակիոս պրոկոնսուլը ևս հավանորեն մեծ պատիվ ուներ: Նրա պատվա տարբերանշաններից հիշատակվում է stola-ն և այլ արտոնություններ: Այս վերջինների տակ պետք է հասկանալ sella currulis, fasces և securis-ի իրավունքը, որ պրոկոնսուլական իշխանության վաղնի առիթբուտներն էին: Այդ արտոնություններն ունեին, օրինակ, Կապադոկիայի պրոկոնսուլը և Պիսիդիայի պրետորը⁵:

Մենք տեսանք, որ դուրսերից մեկը նստում էր Մելիտենեում: Կոմես նշանակելու հետ, օրի վրա դրվեցին նաև ղինվորական պետի պարտականությունները, դուրսի պաշտոնը ինքնաբերաբար վերացվեց: Պարտականությունների բարդություն էր մասամբ հենց պատճառներից մեկը, որ կոմեսի պաշտոնը համարվում էր զժվարին և խիստ պատասխանատու: Իր աշխատանքային փորձառությունամբ հարմար թեկնածուն եղավ Թովման: Սա նույնպես հայ էր, և, անկասկած, այն Թովման է, որ ծառայում էր Լազիկեում: Այստեղ նա «կայսեր հրամանով» կառուցեց բազմաթիվ ամրություններ, վարեց տեղական զորքերի հրամանատարությունը և կայսեր մոտ ձեռք բերեց գործունյա մարդու համբավ: Նա ուներ Հովհաննես անունով մի որդի՝ Գուդես մականունով, մի արտակարգ խիզախ սազմիկ, որ դեռևս երիտասարդ հասակում՝ 550 թվականին, Պետրայի պաշարման ժամանակ, հիշյալ քաղաքը գրավելիս աչքի ընկավ իր սխրանքով⁶:

¹ Proc. Pers. II, 3, p. 159, γέγονεν οὖν ἐς τοὺς ἀρχομένους ὠμότατος ἀνθρώπων ἀπάντων.

² Միայն Պոնտոսի մոզիլատորն էր ստանում 725 սկուտից մի քիչ ավելի: Կապադոկիայի պրոկոնսուլը ստանում էր մյուսներից ավելի՝ 20 ֆունտ սակի (var. 10): Այդ շրջանում գտնվում էին արքունի ընդարձակ հողեր (ταμειακή κτήσις), և պրոկոնսուլը բացի իր անիշխական պարտականություններից, կառավարում էր նաև այդ կալվածքները և նրանց հասույթներից, τῶν ταμειακῶν πόρων, տարեկան 50 ֆունտ սակի տալիս էր կայսեր և կայսրուհու անձնական ծախսերի համար: Nov. 30=Const. 44, դրանով էլ բացատրվում է պրոկոնսուլի չափից ավելի բարձր ոռճիկը:

¹ Արդյո՞ք պետք է այդ բացատրել ղիվանատան փոքրաթիվ կազմով, թե բնազդի անճշտությամբ: Մյուս նովելլաներում ևս թվերը ամեն տեղ չէ, որ ճիշտ են, ինչպես այդ երևում է Teub-ի նոր հրատարակության մեջ կատարված ուղղումներից:

² Nov. 25=Cost. 26. տե՛ս Bethmann-Hollweg, III, p. 137:

³ Nov. 30=Const. 44 ζ', ὄχημα ἐξ ὄργυρου καὶ πέλεκυος καὶ ῥάβδου ἐξ ἄλων. Պրետորի մոտ: Nov. 24=Const. 23 δ', δίφρον ἐξ ὄργυρου καὶ πέλεκυος καὶ ῥάβδου.

⁴ Proc. Pers. II 30 p. 293, νεστίας τις Ἀρμένιος γένος, Ἰωάννης δνομα

Լինելով տեղացի, Թովման լավ գիտեր այն երկրամասը, նրա առանձնահատկությունները, որտեղ նա նշանակվեց, մանավանդ, որ արդեն այնտեղ ծառայել էր: Այդ մարդն էլ հենց հարմար զենք հանդիսացավ կենսագործելու կայսեր ձեռնարկումները և ավարտելու երկրի կիրպարանափոխությունը: Նրան խիստ զգուշացվեց, որ իր գործունեությունը համապատասխանեցնի բարձրագույն հրահանգներին, *sacra commonitoria*: Պետք էր հետևել նրանց իրազորմանը ոչ միայն կոմեսական նահանգի սահմաններում, այլև նրանից դուրս, զլխավորապես հարևան IV Հայքում:

Թե իրենցից ինչ էին ներկայացնում *commonitoria*-ները, անհայտ է: Կարելի է կոահել, սակայն, որ սրանց միջոցով անց էին կացվում բացահայտ կամ գաղտնի միջոցառումներ կայսրության կարգ ու կանոնը այն նահանգներում հաստատելու համար, որոնք աչքի էին ընկնում իրենց առանձնահատուկ վարչակարգով: Ներքին Հայքն ու սատրապական հողերը կամ I և IV Հայքերը գտնվում էին հասարակական-քաղաքական կեցության այն փուլում, որը բնութագրվում է նախաբացույցուն տեղական տերմինով: Որն է նրա արմատական էությունը՝ հանդամանորեն կպարզաբաններ ստարև առայժմ սահմանափակվենք ընդհանուր ասմամբ նշելով, որ իր հիմքում նախարարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ համաշխարհային այն երևույթի տեղական այլաձևությունը, որ Արևմուտքում հայտնի է ֆեոդալիզմ անունով:

Այն ընդարձակ տերիտորիայից, որտեղ տիրում էին նախարարական կարգ ու կանոնը, կայսրության սահմաններում էր գտնվում համեմատաբար մի փոքր կտոր: Արշակունիների ժառանգությունը բաժանելիս կայսրերին բաժին ընկավ մեկ քառորդ մասը, իսկ երեք քառորդը անցավ Պարսկաստանին: Ներքին Հայքը և սատրապությունները հանդիսանում էին նախարարական Հայաստանի արևմտյան ծայրամասերը: Նախարարականությունը, որպես հասարակական կարգ, պայմանավորում էր մշակութային և կենցաղային այն իրադրությունը, որ Հայաստանը մտնեցնում էր Իրանին: Նրա մեջ էին թաքնված հայերի և պարսիկների փո-

Θωμά υἱός, ὄνπερ Γούζην ἐπίκλησιν ἐκάλουν. οὗτος ὁ Θωμάς πολλά τῶν ἀμφὶ τὴν Λαζικήν ὄχυρωμάτων ἐδείματο... καὶ τῶν ἐκείνη στρατιωτῶν ἤρξεν, ἔμφρων τε βασιλεὶ ἔδοξεν εἶναι. *Goth.* IV 8 p. 493, 'Լավանց 'Արմենոս, ձափերոնտոս օգաթոս տօ քոլեմիա, Յոմօ սուօս, օնքեր քիքլիսոն քիքալոն Գուշոն.

խաղարձ կապի հիմնական թելերը: Նախարարական կենցաղի տեսակետից Հայաստանի կայսերական և պարսկական մասերը, շնայած նրանց իրարից բաժանող քաղաքական պայմաններին, իրենցից ներկայացնում էին ինչ-որ ամբողջություն: Նախարարները՝ Հռոմեական Հայաստանի կալվածատեր-իշխանները, անքակտելի կապերով կապված էին Պարսկական Հայաստանի իրենց եղբայրակիցների հետ և նրանց հետ միասին պետք է որ սրոշ հակում ցուցաբերեին դեպի պարսիկները: Կայսրության համար անցանկալի այդ երևույթի հետ պետք էր հաշվի նստել: Բնական է, որ Հուստինիանոս կայսրը, որ համակված էր բարենորոգումների կրթով, աչքաթող չարեց այդ հանգամանքը և միջոցներ ձեռք առավ ոչնչացնելու կամ խախտելու ֆեոդալական կարգերի հիմքերը Հայաստանում: Ըստ երևույթին ոչ քիչ թվով տիրահաշակ *commonitoria*-ներ նվիրվեցին այս գործին: Մեզ է հասել երկու վավերագիր, որոնք, անկասկած, պատկանում են ֆեոդալական կարգերի դեմ ուղղված միջոցառումների թվին, և երկուսն էլ վերաբերում են հայերի մոտ այն ժամանակ գործող ժառանգական իրավունքին: Առաջին հայացքից կարծես թե նրանք ընդհանուր ոչինչ չունեն ֆեոդալական հարցի հետ, սակայն ըստ էության դրանք հանդիսանում են Հուստինիանոսի բարենորոգումների էությունը բացահայտող բանալի:

Գրանցից մեկը խոսում է Հայերի ժառանգական իրավունքի մասին, իսկ մյուսը՝ Այն մասին, որ հայերն էլ ամեն բանում հետևեն Էռոմեական օրենքներին: Ծանոթանանք դրանց բնագրերին.

Const. 73 = Ed. 3 Περί τῆς τῶν Ἀρμενίων διαδοχῆς.

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Մենք ցանկանում ենք հայերին ևս, ազատելով նախկին անարդարություններից, ամբողջովին փոխադրել մեր օրենքներին և տալ նրանց հարկ եղած հավասարությունը:

Kai Ἀρμενίους βουλόμεθα τῆς προτέρας ἀπαλλάξαντες ἀδικίας ἐπὶ τοὺς ἡμετέρους διὰ πάντων ἀγαγεῖν νόμους, καὶ δοῦναι αὐτοῖς ἰσότητα τὴν πρέπουσαν.

Գ Լ ՈՒ Խ I

Վերջերս մենք իմացանք, Կալ էքեյդի մեմոթիքամեն քո նրանց մոտ դոյություն այգոս քարքարիկոն տինա քալ քրա-

կարգվի և ոչնչով շտարրերվի մեր պետությունից, մենք այնտեղ հաստատեցինք հոսմեական հիմնարկություններ, վերացնելով նրա նախկին անվանումները և վարժեցրինք նրանց օգտվելու հոսմեական կարգ ու կանոնից և սահմանեցինք, որ նրանք այլ օրենքներ չունենան բացի նրանցից, որոնք հարգվում են հոսմեացիների մոտ:

Մենք միաժամանակ անհրաժեշտ համարեցինք սույն օրենսդրությամբ ուղղել նրանց կյանքի կոպիտ թերությունը, որպեսզի բախ սովորության համաձայն ծնունդների, եղբայրների և մյուս ազգականների թողած ժառանգությունը չբացարձակապես միայն տղամարդկանց և երեք՝ կանանց, ինչպես նաև այն պատճառով, որպեսզի կանայք առանց օժիտի չամուսնանան և չզնվեն իրենց փեսացուների կողմից. խիստ անկուստրականություն այս հատկանիշները մինչև այժմ էլ զոյություն ունեն նրանց մոտ: Ասենք նման վայրենի բարբեր ընդունված են ոչ միայն նրանց մոտ: Կան ուրիշ ժողովուրդներ ևս, որոնք նույնպես անհարգալից վերաբերմունք ունեն դեպի բնությունը և ստորացնում են իրական սեռը, կարծես թե նրան աստված չի ստեղծել, և նա չի ծառայում մարդկային ցեղը շարունակելուն, այլ որպես ինչ-որ անկարևոր և արհամարհելի դատապարտված է պատվազուրկ վիճակի:

μηδέν τῆς ἄλλης ἡμῶν διεστάναι πολιτείας, ἀρχαῖς τε Ῥωμαϊκαῖς ἐκοσμήσαμεν τῶν, προτέρων αὐτὴν ἀπαλλάξαντες ὀνομάτων, σχήμασι τε χρῆσθαι τοῖς Ῥωμαίων συνειθίσασμεν, θεσμούς τε οὐκ ἄλλους εἶναι παρ' αὐτοῖς ἢ οὓς Ῥωμαῖοι ὀνομάζουσιν ἐτάξαμεν. καὶ ψήθημεν χρῆναι ἔργῳ νόμῳ κἀκεῖνο ἐπανορθῶσαι τὸ κακῶς παρ' αὐτοῖς ἀμαρτανόμενον, καὶ μὴ κατὰ τὸ βαρβαρικὸν ἔθος ἀνδρῶν μὲν εἶναι τὰς διαδοχὰς τῶν τε γονέων τῶν τε ἀδελφῶν τοῦ τε ἄλλου γένους, γυναικῶν δὲ οὐκ ἔτι, μηδὲ χωρὶς προικῶς αὐτάς εἰς ἀνδρὸς φοιτᾶν, μηδὲ ἀγοράζεσθαι παρὰ τῶν συνοικεῖν μελλόντων, τοῦτο ὅπερ βαρβαρικώτερον μέχρι τοῦ νῦν παρ' αὐτοῖς ἐνομισθῆ, οὐκ αὐτῶν μόνων ταῦτα ἀγριώτερον δοξασάντων, ἀλλὰ καὶ ἐτέρων ἔθνῶν οὕτως ἀτιμασάντων τὴν φύσιν καὶ τὸ θῆλυ περιυβρισάντων ὡς οὐ παρὰ θεοῦ γενόμενον οὐδὲ συντελοῦν τῇ γενεσιουργίᾳ, ἀλλ' ὡς εὐτελές τε καὶ ἠτιμασμένον καὶ πάσης ἕξω προσῆκον καθεστάναι τιμῆς.

Նկատի ունենալով այդ մենք այս սրբազան օրենքի սովոր հրամայում ենք, որպեսզի հայերի մեջ ևս կիրառվի այն, ինչ որ կանանց ժառանգական իրավունքի վերաբերյալ ընդունված է մեզ մոտ՝ առանց որևէ խտրություն զնելու արական և իգական սեռերի միջև: Այդ հարցը ինչպես որ դրված է մեր օրենսդրության մեջ, և ինչ ձևով որ ծնողներին ժառանգում են վերընթաց գծով, այսինքն՝ հորը կամ մորը և կամ պապին ու տատին, նույնը և վարընթաց գծով, այսինքն՝ որդուն կամ աղջկան, ինչպես որ այստեղ կատարվում է ժառանգումը, այդպես էլ պիտի լինի հայերի մոտ: Հայաստանում իրավական նորմերը ոչ մի բանով չպետք է տարբերվեն հոսմեականից: Քանի որ հայերը մեր պետության մեջ են մտնում, մյուս ժողովուրդների նման ենթարկվում են մեզ և ճաշակում մեր բարիքները, ապա և նրանց կանայք չպիտի զրկվեն մեզ մոտ գոյություն ունեցող իրավահասարակությունից: Բոլորի համար հավասարապես պարտադիր պիտի լինեն մեր օրենքները, ինչպես նրանք, որ մենք հավաքել ենք հին ակներից և մտցրել մեր ինստիտուցիաների և Դիզեստների մեջ, այնպես էլ նախկին կայսրերի և մեր կողմից հրատարակված մյուս օրենսդրությունները:

Θεσπίζομεν τοῖνυν διὰ τοῦδε τοῦ θεοῦ νόμου, ὥστε καὶ παρὰ Ἀρμενίοις τὰ αὐτὰ κρατεῖν ἅπερ καὶ παρ' ἡμῖν προφάσει τῆς τῶν θηλειῶν διαδοχῆς, καὶ μηδεμίαν εἶναι διαφορὰν ἄρῆνός τε καὶ θηλείας, ἀλλ' ὥσπερ ἐν τοῖς ἡμετέροις νόμοις τέταται, κατὰ ποῖον μὲν σχῆμα κληρονομοῦσι γονεῖς, ἤγουν πατέρα καὶ μητέρα καὶ πάππον καὶ μάμμην καὶ τοὺς ἔτι πρόωτέρω, ἢ καὶ τοὺς μετ' αὐτοῦς, τουτέστιν υἱὸν καὶ θυγατέρα, ὅπως τε αὐτοὶ κληρονομοῦνται, αὕτως καὶ παρὰ Ἀρμενίοις εἶναι, καὶ μηδὲν τὰ Ἀρμενίας νόμιμα τῶν Ῥωμαίων διεστάναι. εἰ γὰρ τῆς ἡμετέρας πολιτείας εἰσι, δουλεύουσί τε ἡμῖν μετὰ τῶν ἄλλων ἔθνῶν καὶ πάντων ἀπολαύουσι τῶν ἡμετέρων, οὐ δὴ που μόναι παρ' αὐτοῖς αἰθῆλαι τῆς παρ' ἡμῖν ἰσότητος ἐκβληθήσονται, ἀλλὰ πᾶσιν ἐν ἴσῳ τὰ τῶν ἡμετέρων ἔσται νόμων, ὅσα τε ἐκ τῶν παλαιῶν συνηθροίσασμεν καὶ ἐν τοῖς ἡμετέροις ἐτάξαμεν ἰσότητοῦ τοῖς τε καὶ διγέστοις, ὅσα τε ἐκ τῆς βασιλικῆς νομοθεσίας τῶν τε ἔμπροσθεν αὐτοκρατόρων καὶ ἡμῶν τε αὐτῶν ἀπογέγραπται.

Վերնադիրն ընկած լինելու հետևանքով անհայտ է մնում նաև այն անձնավորությունը, որին ուղղված է եղել առաջին նովելլան: Գրառված նովելլայի եզրափակիչ խոսքերի մեջ եղած *ή σή ύπεροχή* դիմումից, պետք է ենթադրել, որ այն ուղղված է եղել Արևելքի պրետորիական պրեֆեկտ Հովհաննեսին, այսինքն՝ այն նույն անձնավորությանը, որին ուղղված է նաև 31-րդ նովելլան. *ύπεροχή հոսմ. excellentia* նույնն է, ինչ որ մեր *Ձ եր գ բ ր ձ ր ու թ յ ու ն ք* կամ *գ եր ր ա զ ան ց ու թ յ ու ն ք*, որը պրեֆեկտի սովորական տիտղոսն է, ինչպես այդ երևում է այն բաղմամբով նովելլաներից, որ հրապարակվել են նրա անունով: Սակայն առաջին նովելլայում մատնանշվում է նաև այն, որ սույն օրենքը հրապարակված է *πρός τήν σήν μεγαλοπρέπειαν*¹ մի տիտղոս, որ տրված է Ակակիոսին ժառանգմանը վերաբերող երկրորդ նովելլայի մեջ: Արդյո՞ք այստեղ ի նկատի չի առնված Թովման, որ իր պաշտոնական դիրքով հավասար էր Ակակիոսին: Այս հարցը կարևոր է, որովհետև կասկածից վեր է, որ ում անունով էլ որ հրապարակված լինեին Հայաստանին վերաբերող օրենսդրությունները, նրանց պատճենները ուղարկվում էին և՛ Ակակիոսին, և՛ Թովմային, և՛ նրանց պետին՝ Հովհաննես պրեֆեկտին:

Երկու նովելլաների մեջ էլ կայսրը ժառանգման խնդրում անց է կացնում կանանց իրավահավասարության սկզբունքը. նա մատնանշում է, որ հայերի մեջ գոյություն է ունեցել մի սովորություն, որի համաձայն կանայք զրկված էին ժառանգական իրավունքից: Գրանով է բացատրվում մասամբ և այն, որ կանայք ամուսնանում էին առանց օժիտի. դեռ ընդհակառակը, փեսացուներն էին վճարում հարսնացուների համար, զնում էին նրանց: Պաշտոնական վավերագրի վկայության ճշմարտությանը կասկածելու ոչ մի հիմք չկա: Միայն թվում է, որ մի փոքր շափազանցված է այն նվիրաբերությունների բնույթը, որ անում էին փեսացուները իրենց հարսնացուներին:

Հունա-հռոմեական աշխարհում ամուսնության խնդրում օժիտը շատ կարևոր դեր էր խաղում. նրա շափք ճշտությամբ որոշվում էր հատուկ պայմանագրով, որ կնքվում էր նշանդրեքի ժամանակ: Հույների մոտ այդ կոչվում էր *φέρνη* կամ *προίξ*, իսկ հռոմեացիների մոտ՝ *dos*: Նրանց մոտ ընդունված էր նաև, որ, իբրև օժիտի փոխհատուցում, փեսան հարսնացուին ընծաներ տար, որ կոչ-

վում էին *προγαμία* (α δωρεά, ante nuptias donatio: Փեսացուի այս մինչամուսնական նվիրատվությունը, ըստ երևույթին, տարբերվում էր նրանով, որ այն այնքան էլ պարտադիր չէր, ինչպես հարսնացուի օժիտը:

Հուստինիանոսը 531—533թ. *donatio ante nuptias*-ը վերանվանեց *donatio propter nuptias*-ի, այսպիսով ցանկանալով ընդգծել փեսացուի նվիրատվությունների և հարսնացուի օժիտի *dos* նշանակության հավասարությունը, որը, կայսեր ասելով, նույնպես *propter nuptias* fit է: *Donatio*-ն, ըստ Հուստինիանոսի բացատրության, ոչ թե հասարակ ընծա էր, այլ վերադարձվող կամ հարսնացուի օժիտի դիմաց տրվող նվիրատվություն. դա մի *antipherna* էր՝ մի պարզ և ահապատուցում: Ուստի և *donatio*-ն նույնչափ պարտադիր էր, որքան *dos*-ը: Օժիտը սակայն չէր համարվում ամուսնության անհրաժեշտ նախապայմանը: Ըստ Հուստինիանոսի *sine dote autem nuptiae possunt celebrari*, այսինքն՝ *թույլատրվում էին ամուսնություններն նաև առանց օժիտի*¹:

Հայկական նովելլաների հրապարակումից երկու տարի հետո, 538 թվականին, Հուստինիանոսը որոշակի դասի պատկանող անձանց համար պարտադիր դարձրեց ամուսնության պայմանագիրը. *աթարձր կոչումներ կրողների, ընդհուպ մինչև սենատորներն ու զեբամեծար illustres*,— ասված է նովելլայի մեջ,— ամուսնությունները պետք է կատարվեն օժիտով և մինչամուսնական նվիրատվությամբ, ինչպես նաև այն ամենով, ինչ որ պատշաճ է այդչափ անվանի մարդկանց²: Նրանց իրավունք է տրվում ամուսնանալ նաև առանց օժիտի՝ *«միայն հակումն երող»*, բայց այս դեպքում զույգի վրա պարտավորություն է դրվում ներկայանալ եկեղեցի, *զեֆենզորին՝ ἔκδικος*, վկայական ստանալու այն մասին, որ այսինչ անձնավորությունները ամուսնացել են այսինչ ժամանակ³: Թուրքիկ կերպով նշեք, որ այս պահանջը հետաքրքրական է նաև այն տեսակետից, որ նրա մեջ երևում են եկեղեցական ամուսնության սաղմերը:

¹ C. J. V 3 20.

² *Const.* 94 = *Nov.* 74 c. 4 § 1. *ἐπι μὲν οὖν τῶν μειζόνων ἀξιωμάτων, καὶ ὅσα μέχρι τῶν ἡμετέρων ἐστὶ συγκαλητικῶν καὶ τῶν μεγαλοπρεπεστάτων ὀλοουστρίων... Ἔστω πάντως καὶ προίξ καὶ προγαμία α δωρεά καὶ τὰ ἄλλα πᾶσι ὅσα τοῖς σεμνοτέροις πρέπει τῶν ονομάτων.*

³ *Const.* 94 = *Nov.* 74 c. 4 § 1.

Մի քանի տարի հետո, 542 թվականին, հրապարակվեց մի նովելլա, որով Հուստինիանոսը վերացնում է հենց նոր արված կարգադրությունն այն մասին, որ նոր ամուսնացած զույգերը ներկայանան եկեղեցու երեցփոխանին՝ զեֆենզարին: «Էկեչերո մենք հրապարակեցինք մի օրենք այն մասին,— ասում է նովելլայի հեղինակը,— որպեսզի ամուսնությունները, ելնելով ամուսնությունների հաստատության շահերից՝ կատարվեն կամ պայմանագրով և կամ եկեղեցական էկզիկի ներկայությամբ արված երգումով, այժմ, սակայն, զերադասում ենք հետևել այն օրենքներին, որոնք պայմանում ունենին նախկինում: Այդ պատճառով մենք հրամայում ենք, որպեսզի «բարձր կոչումով մեծարված անձինք, ներառյալ illustres-ը, ամուսնանան ոչ այլ կերպ, քան միայն ամուսնական պայմանագրերով»: Ուշագրության արժանի է օրենսդրի այն վերապահումը, թե «այս օրենքի ճիշտ գործադրումը չի պահանջվում կայսրության հպատակ բարբարոսներին, թեկուզ նրանք կրեն հիշյալ կոչումները, բայց նրանց հնարավորություն է արվում, եթե նրանք ցանկանում են, ամուսնանալ նաև փոխադարձ հակումներով»: Ինչ վերաբերում է բարձր կոչում չունեցողներին, ապա նրանք բարձր ազատ են փոխադարձ համաձայնությամբ ամուսնանալու, ինչպես որ կամենան՝ պայմանագրով, օժիտով կամ առանց օժիտի»:

Քանի որ ամուսնացողների գույքային պարտավորությունները հարկադիր բնույթ չէին կրում, ապա թվում է, թե հիմք չկար շեշտել հայերի անկուստրական սովորույթները, որոնք իբրև թե աններդաշնակ էին կայսրության օրենքներին: Ինչպես էր ամուսնությունը հայերի մոտ, և ո՞րն էր ամուսնության այն առանձնահատկությունը, որ դուր չէր գալիս Հուստինիանոսին:

Մաղումնարանական տեսակետից դասական donatio-ն ոչ այլ ինչ էր, եթե ոչ հեռավոր անցյալի մի հուշ՝ երբեմնի գոյություն ունեցած սովորույթ, երբ ամուսինը կին էր ձեռք բերում նվերներ՝ *ξδνα*, տալով, այլ խոսքով՝ գնում էր նրան: Ամուսնության այդ

¹ Const. 141 = Nov. 117 c. 4 ...τοιαύταις άξίαις μη άλλως άγεσθαι γαμετάς, πλην ει μη μετά προικ φων συμβολαίων. ταύτην δε τήντοϋ νόμον άκριβειαν συγχωροϋμεν τοίς ύποτεταγμένοις τή ήμετέρα πολιτεία βαρβάροις, κόν άξιώμασι τοιοϋτοις ύπάρχοιεν κεικοσμημένοι, ώστε και διαθέσει ψιλῆ δύνασθαι αυτοϋς βεϋλομένους συναλλάσσειν γάμους.

² *ib.*

ձևը, որ հատուկ էր ժողովուրդներին նրանց կյանքի որոշ շրջանում, Միստոստիչի հեղինակավոր վկայությամբ, խորթ չէր նաև հույներին¹, Հնագույն ժամանակներում սա գոյություն ուներ նաև հայերի մոտ: Ազգային ավանդության համաձայն հայոց Արտաշես թագավորը, հաղթելով արևնեքին, ցանկություն է հայտնում կնություն առնել նրանց թագավորի աղջկան՝ Սաթենիկին: Արտաշեսի առաջարկությանը արևաց թագավորը պատասխանում է. «Էլ ուստի ասե՛ք քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բիրս բիրուց ընդ քազազուց կոյս օրիորդին Ալանաց»:

Այն ժամանակ «հծաւ արի արքայն Արտաշէս ի սեան զեղեջիկ, և հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ զետն և ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝ ընկէց ի մէջը օրիորդին Ալանաց և շատ ցանցոյց զմէջը փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր»²:

Մեզ բերելով ժողովրդական երգի վերոհիշյալ տողերը՝ Խորենացին հայտնում է, որ դրանք պետք է հասկանալ այլաբանորեն և առիթ է իր մեկնությունը: Ըստ նրա ոսկեօղ-շիկափոկ պարանը նշանակում է կարմիր մորթի, որ շատ թանկ էր գնահատվում արևների մոտ. հայոց թագավորը նվիրեց նրան «մորթ կարմիր, շատ լայքա և ոսկի բաղում» իբրև գլխագին և առավ արքայի զուտար Սաթենիկին: Խորենացու մեկնությունը մեզ համար պարտադիր չէ, բայց չափազանց հետաքրքրական է: Տոգորված բնազտական հայացքներով՝ հայ պատմիչը ամեն տեղ փնտրում է իր իմաստ և հաճախ այլաբանություն է գտնում այնտեղ, որտեղ այն բնավ չկա: Ներկա դեպքում ժողովրդական երգիչները, այսպես կոչված վիպասանները, պարզապես երգ են հյուսել այն մասին, թե ինչպես հայոց թագավորը, սև ձիու վրա նստած, թոկի գնությունը առևանգել է արևների թագավորի աղջկան: Երգիչների կենդանի նկարագրության մեջ արտացոլվում է առևանգման սովորությունը, որ կին ձեռք բերելու նախնական ձևերից մեկն էր: Մեր յազան թողը ներկայացված է իբրև կարմիր կաշվից, այսինքն՝ քաղաքակրթական կաշվից հյուսած, որը, ինչպես վայել է թագավորին, ոսկեօղ է և ոչ թե հասարակ: Խորենացու բացատրությունը կարևոր է այն տեսակետից, որ արտացոլում է իր ժամանակվա կամ իր

¹ *Polit.* II 8, 12, και τὰς γυναίκας ένωσϋντο παρ' άλλήλων.

² *Խորենացի*, Բ, 81

պատկերացմամբ գլխազնով կատարվող ամուսնությունը: Առեան-
դումը, ըստ երևույթի, նրան արդեն հասկանալի չէ. և միաժամա-
նակ առեղծվածային է թվում նաև պարանի գոյությունը: Նա հարցը
լուծում է նրանով, որ թուրք դարձնում է կարմիր մորթի՝ ար-
ժեք ներկայացնող մի առարկա, որ գործ է ածվում որպես գլխազին:
Այն բուրբը, ինչ Արտաշեսը տալիս է թագավորի դստեր համար՝
մորթի և ոսկի, Խորենացին արտահայտում է varđanē — վար-
ձատրություն բառով: Ըստ երևույթի հոռոմները հենց այդ վարձի
մեջ էլ տեսնում են հարսնացուի այն գնումը, որ պախարակվում է
Հուստինիանոսի նովելլայում. այսպիսով նովելլայի խոսքերը մա-
սամբ արդարանում են:

Նույնը չի կարելի ասել օժիտի վերաբերյալ եղած նրա վկա-
յությունների մասին: Հարսնացուի բաժինրի իմաստով գրաբա-
րում αυζιλ, օժիտ բառի առկայությունը շափազանց կասկածելի
է դարձնում Հուստինիանոսի այն պնդումները, թե հայ կանայք
ամուսնանում էին առանց օժիտի: Հիշյալ բառը պատկանում է
հայոց լեզվի ոչ արիական տարրերի թվին, այդ պատճառով էլ
նրա հնությունը կասկածից դուրս է: Ասորական օրենքների ժո-
ղովածուի մեջ, որտեղ մանրամասն քննվում է ամուսինների
գույքային փոխհարաբերությունների հարցը, ի միջի այլոց գտնում
ենք հետևյալ նշումը. «այն, ինչ ամուսինը տալիս է կնոջը, կոչ-
վում է ճաբեճ, պարսկերեն՝ dastir, ասորերեն՝ z a b h d a կամ
mahra՝»¹: Այստեղ հիշատակված ասորական zabhda բառը սուու-
գաբանորեն համապատասխանում է հայերեն αυζιλ, աժիտ-ին.
Եռատառ z-b-d արմատը՝ = հայերենի Վ-ժ-տ-ին, հնչյունների
սովորական տեղափոխությամբ և ընդհատումով²: Վերահիշյալ
բառը թե՛ հայերենում, թե՛ ասորերենում նշանակում է նվեր
ընդհանրապես և օժիտ՝ մասնավորապես: Թեև ասորական ժո-
ղովածուի մեջ այն համապատասխանում է ճաբեճ-ին, այսինքն՝
նրանով արտահայտվում է այն, ինչ ամուսինը նվիրում է իր կնո-
ջը, բայց թե՛ ասորերենում և թե՛ հայերենում ընդհանրապես

¹ Syrische Rechtsbücher I B, ed. Sachau 1907, Berlin. Leges Constan-
tini Theodosii Leonis, § 31, p. 17.

² Սրան է վերաբերում նաև վրացական ջუბოთო, giziŷ-i, შბოთოვე, m-ziŷev-i,
ჯჯ, հմմտ. Zebed-ee, Ζεβεδ-αιος, Zantha անունը, որ հավասար է հայկ.
Ջոիթին, հմմ. տուրք. պարզև.

արտահայտում է գերազանցապես հարսնացուի օժիտը¹:

Պարսկական հոմանիշը dastir-ը կամ ավելի ճիշտ՝ dastiri,
որ dastiari-ի կրճատ ձևն է, իսկապես նշանակում է օգնություն,
օժանդակություն²: Այդ բառով էր արտահայտվում փեսացուի
նվերը իր հարսնացուին: Որ պարսիկներին մոտ ընդունված էր նաև
օժիտը, երևում է այս նույն օրենսգրքից: Այստեղ ասված է, որ
հակառակ հոռոմեական օրենքների, որոնց համաձայն ինչքան
օժիտ՝ φερνῆ, որ կինը բերում է իր ամուսնուն, նույնքան էլ այս
վերջինը պիտի փոխհատուցի կնոջը, Արևելքում, այսինքն՝ սասան-
յան պետության մեջ ընդունված է, որ «եթե կինը բերում է 100
դինար, ապա ամուսինը բերում է դրա կեսը, երբեմն ամուսինը
ավելի է բերում, քան կինը, երբեմն ոչինչ չի բերում, իսկ երբեմն
էլ կինը ոչինչ չի բերում»³: Պետք է ենթադրել, որ այդ օրենք-
ները գործում էին նաև Հայաստանում, որ հանդիսանում էր իրա-
նական մշակութային աշխարհի մի բաղկացուցիչ մասը:

Հայոց կյանքում արդյո՞ք պատվաստվելիցին հոռոմների πρῶξ
և ճաբեճ հասկացությունները պայմանագրի իմաստով և ի՞նչ
շափով, շատ կասկածելի է: Հոռոմեական այդ տերմինները հայկա-
կան գրավոր որոշ հիշատակարանների մեջ մտան պոռոջ և տուայր
ձևով: Որքան զիտենք, սրանք առաջին անգամ հանդիպում են
ասորա-հոռոմական օրենքների ժողովածուի հայերեն թարգմանու-

¹ Հնարավոր է, որ օժիտ բառը հայերենում ևս գործ է ածվել այն նվերի
իմաստով, որ փեսացուն տալիս է հարսնացուին, ինչպես ասորերենում:

² Dastar հանդիպում է նույն տեղում. § 43, p. 23: Ժողովածուի հրատարա-
կիչ Sachau-ն ասում է, որ պարսկերենում այդպիսի բառ իրեն հայտնի չէ և սխալ
համեմատություն է անում 'vielleicht darf man est mit dastār in dem
Ausdruck استیاری = Geschenk gehen kombinieren' p. 187,
31-ի ծանոթ.: Իրականում փնտրված բառը պարսկ. استیاری, nom. abs.
استیاری -ից՝ բարեկամ, զործակից իմաստով, որ ծագում է *dasta-dara կամ
ավելի ճիշտ՝ *dasta-dara-ից, որ նշանակում է ձեռք մեկնող կամ ձեռք բռնող,
հմմտ. ձեռն-տու, ձեռնուտություն: Իսկ Զախաուի առաջարկած բառը استار
բաղկիմակ-ի նվազականն է, հայերեն՝ դատառ-ակ:

³ Syr. Recht, p. 17, ինչպես և էջ 81, § 51, որտեղ ասվում է, որ ըստ հոռոմ-
ների օրենքի, կին կինը բերում է 100 դինար, ապա փեսան նույնպես նրան տալիս
է 100 դինար, եթե 200, ապա՝ 200, իսկ Արևելքում, եթե կինը բերում է 100,
ապա փեսան՝ դրա կեսը, այսինքն՝ 50 դինար. հմմտ. հայերեն թարգմ., գլ. 45:
Syrisch-Röm, էջ 112: Հայերենում հայտնի է պաշտատական բառը օժիտ իմաս-
տով, արդյո՞ք պարսկ. *peš-data-ն նախա-ավտությունից չի ծագում:

թյան մեջ¹: Հայերեն թարգմանությունը այնքան հին չէ, որքան ասորական բնագիրը: Բառերի տառադարձությունը և առհասարակ լեզվական սովորույթները խոսում են հօգուտ այն ենթադրության, որ նրանք պատկանում են մի դարաշրջանի, որ մոտ է կիլիկիականին: Պետերմանը այն կարծիքն է հայտնել, թե թարգմանության հեղինակը Մխիթար Գոշն է²: Ներկայումս ստույգ ճշտված է թարգմանչի անձնավորությունը, նրա իսկ թողած հիշատակարանի հիման վրա, որ հրատարակել է Մխիթարյանները: Ասորական այդ հուշարձանը հայերեն թարգմանել է Ներսես Լամբրոնացին հայկական թվականության 645 թ., այսինքն՝ 1197 թ., Գրիգոր կաթողիկոսի օրոք, Քնոզոս անունով մի ասորի կրթված քահանայի հանձնարարությամբ³, Իսկ Մխիթար Գոշը, ինչպես վկայում է ինքը, իր աշխատությունը կազմել է 1184 թվականին: Այսպիսով երկու օրենսգրքերն էլ լույս են տեսել համարյա միաժամանակ, բայց քանի որ Մխիթար Գոշի աշխատությունն այնուամենայնիվ ասորական ժողովածուի թարգմանությունից 13 տարով հին է, ուստի խոսք լինել չի կարող, թե Մխիթար Գոշի երկը կապ ունի նրա հետ⁴: Իսկ երկու աշխատությունների մեջ գոյություն ունեցող ընդհանուր տեղերը, եթե միայն դրանք չեն վերցված հոսմեական աղբյուրներից, պետք է վերագրել այն բանին, որ Գոշի բուն աշխատությունը հիշյալ թարգմանական ժողովածուներին ծանոթ անձանց կողմից ենթարկվել է որոշ հավելումների:

Գոշի Գատաստանագրքի ներկայումս գոյություն ունեցող հրատարակությունը, որի համար մենք պարտական ենք էջմիածնի միաբան հանգուցյալ գիտնական Վահան վարդապետ Բաստամյանին, իր բոլոր արժանիքներով հանդերձ, գոհացուցիչ համարել չի կարելի: Հրատարակիչը հալած յուղի տեղ է ընդունում այն ամենը, ինչ որ ձեռագրերի մեջ վերագրվում է Գոշին՝ ուշադրություն չդարձնելով նույնիսկ ձեռագրերի իր իսկ նշած էական տարբերությունները վրա: Մինչդեռ քննադատական վերաբերմունքի զեպքում հեշտությամբ կարելի է երևան հանել հետագա հավելագրություն-

¹ *Sirisch-Römisches Rechtsbuch aus dem V Jahr*, ed. K. Bruns und E. Sachau. 1880. Ասորերեն բնագիրը հայերեն և արաբերեն թարգմանությամբ:

² Նույն տեղում, էջ 163:

³ Զարբանական, *Թարգմանությունը նախնեաց*, էջ 754—755:

⁴ Ասորական ժողովածուի հայերեն թարգմանության հրատարակիչները են-

ներ, այսինքն՝ տարրեր, որ սողոսկել են Մխիթարի ժողովածուի մեջ իրենից հետո: Մեզ թվում է, որ պոսյոյի և տաւյրի մասին եղած հոգվածները կրում են կիլիկյան շրջանում թարգմանված հուշարձանի ազդեցությունը, և դրանք պետք է դասել Գոշի Գատաստանագրքի հետագա նորամույժ տարրերի շարքը: Ըստ ասորական ժողովածուի ևս կայրը որոշեց՝ «այն, ինչ բերում է կինը, դրի առնել որպես proig, προίξ, նաև գրի առնել touar, δωρεά այսինքն՝ վարձանք կամ մահր»¹: Մխիթար Գոշի գրքում էլ հոգված-ներից մեկը սկսվում է այսպես. «Այլապէս լինի առ մահմեդականսն զուգումն ամուսնութեանս. զի հատանեն նախ զին անձին կնոջն, որ կոչի մահր. նոյն եւ այս տո հոովմայեցիսն տաւյր կոչի. ապա սահմանեն եւ զբաժին եւ կնոջն ի հայրենի իրաց, որ կոչի պոսյոյ»²:

Այս բաների մեջ չի կարելի շտեմանել ասորական օրենքների հայերեն թարգմանության ազդեցությունը տերմինոլոգիայի տեսակետից: Այդ հասկացությունները, մինչև կիլիկյան մատենագրությունը, հավանաբար խորթ էին հայոց կյանքին: Հետաքրքրական է, որ նորամույժ հոգվածի հեղինակը, ընդգծելով προίξ-ի և δωρεά-ի հոսմեական ծագումը, անմիջապես ավելացնում է. «Մեզանում այդպես չէ. ամուսինը չի մուծում կնոջ համար սահմանված գին, բայց որոշ բան տալիս է, որ կոչվում է երեսացանս,

թագրել են, որ Գոշը ծանոթ է եղել այդ ժողովածուին. նույն տեղում, էջ 163: Բայց այն ժամանակ Մխիթարյանները դեռ չէին հրատարակել վերը հիշված հիշատակարանը, «Պոռոյզ և տուսյոյ վերնագրով իր մի փոքր հոգվածում Կ. Կոստանյանը, անտեսելով այդ հիշատակարանը, պնդում է, որ մինչև այժմ էլ անհայտ է, թե երբ և ում կողմից է կատարվել ասորական օրենքների հայերեն թարգմանությունը և սխալ ենթադրություն է անում, թե Գոշը օգտվել է նրանից: Ազգ. հանգէս, XIII, 1906, էջ 131:

¹ *Syrisch-Röm.* p. III «գոր ինչ բերէ կինն պոուս գրեցան զայն. նոյնպէս զլեցին զտուարն, այսինքն զվարձանսն որ է մահր» զլ. 45, հմմտ. Գոշ, Ա, մեջ: Հրատարակչին հայտնի չորս ձեռագրերում չկա այս հոգվածը. մեկի մեջ այն զետեղված է Բ մասում: Հոգվածի սկիզբը ցույց է տալիս, որ այն իր տեղում չէ. այլ պահված է ուրիշ տեղից: Տուարը, որ δωρεա-ի աղավաղումն է, Գոշի Գատաստանագրքում ստացել է տուայր ձևը, հավանորեն սխալ ստուգարանային հետազոտում որպես հայերեն տու-այր, առնպէս յառե՛լ խմատով, ինչպես և քաջատրված է այն Հայկազյան բառարանում: Մահրի մասին տե՛ս *Основами закона мусульманского права* Л. В. С. фонъ-денъ Верга. թարգմ. Гиргас-ի *Сб.* 1882, с. 106. «цена, платимая за жену, называется мегрѳ или садакѳ».

² Մխիթար Գոշ, *Գատաստանագիրք*, Ա, էջ 11:

իսկ կիրնը մտնում է ամուսնու տունը օժիտով¹: Հայ ժողովրդի գեղեկ նոր հովերով շտարված նահապետական խավերում մինչև այժմ էլ երիտասարդ աղջիկը նշանդրեքից հետո թաքնվում է փեսայուհից և նրա մերձավոր հարազատներից: Երևալ նրանց աչքին, բաց երեսով կանգնել նրանց առջև կամ խոսել նրանց հետ, ընդունված չէ և, համենայն դեպս, համարվում է հարսնացուին ոչ վայել անհամեստ վարքագիծ: Այս նույն բանը փեսացուի հարազատների նկատմամբ շարունակվում է նաև ամուսնության առաջին տարիներին: Յուրաքանչյուր առանձին դեպքում կնոջ հետ խոսելու կամ նրա երեսը տեսնելու իրավունքը ձեռք է բերվում նրան նվերներ տալով, որոնք կրում են համապատասխան անուններ²: Այդ արարողությունը տարբեր վայրերում տարբեր ձևով էր կատարվում: Գողը երեսացես և անվանում, ըստ երևույթին, բոլոր նվերները միասին առած: Նվիրատվության նպատակն է օտար անձնավորությունը վարժեցնել նոր միջավայրին. այդ ոչ ալ ինչ է, եթե ոչ նվերների բնույթ ստացած հին վարձանքի սիմվոլիկ վերապրուկը:

Հայկական օմիալը և վարձանքը ըստ էության համարժեք են հունական προξενիս և δωρεά-ին կամ dos-ին և donatio-ին, նրանց նման, օժիտն ու վարձանքը ևս պարտադիր շինելով հանդերձ, արժատացած ու նվիրագործված էին բացառապես սովորույթի ավանդականություններ:

Այս պայմաններում ինչպես հասկանալ ինչի՞ դեմ էր պայքարում Հուստինիանոսը իր նովելաներով:

Մեզ թվում է, որ վերոհիշյալ նովելաների հրապարակման առիթ են ծառայել զլիսավորապես տոհմական կալվածքները, այն հողերի բաժանման հարցը, որոնք նովելաներում կոչվում են γενεαρχικά χωρία: Հենց այս կալվածքներից է, որ կանայք ժառանգական կարգով բաժին չէին ստանում: Կայսրի պնդումով հայերի մոտ գոյություն ունեցող սովորույթի համաձայն աղջիկները չէին մասնակցում ժառանգմանը չէ δόξαθétου, ab intestato: Իրավունքի պատմությունը հայտնի է ժառանգման երկու ձև՝ կտակով և առանց կտակի. վերջին դեպքում, այսինքն՝ երբ մարդ մեռնում է առանց կտակ թողնելու, ժառանգումը կատարվում է

օրենքով՝ successio ab intestato: Այդ կարգը, անվիճելիորեն, կտակով ժառանգելու սկզբնական ձևն է: Ժողովուրդների կյանքի վաղնշական շրջանում օրենքը կամ սովորույթը հետևում էր ազնատիկական սկզբունքին, այսինքն՝ ժառանգելու իրավունքը վերապահվում էր միայն արական սեռի ժառանգներին: Այդ սկզբունքը խորթ չէր նաև դասական աշխարհին¹, և հռոմեական իրավունքը, նույնիսկ Հուստինիանոսի ժամանակ, դեռևս բոլորովին չէր հրաժարվել դրանից: Այդ հարցին վերաբերող գործող օրենքները ներկայացնում էին զանազան սկզբունքների այնպիսի մի խառնուրդ, որ Հուստինիանոսը ստիպված եղավ վերանայել այդ հարցը և խստորեն կարգավորել ժառանգական հարաբերությունները: Այդ նպատակով հրատարակվեցին նովելաներ, որոնցից մեկը կոչվում է Ազնատիկական իրավունքը վերացնելու և ժառանգելու ab intestato կարգ հաստատելու մասին²: Այս նովելան երևան եկավ 543 թվականին, այսինքն՝ նշանակում է հայկական նովելաներից հետո: Եթե ազնատիկական սկզբունքը նախապատվություն էր վայելում նաև հռոմեական օրենսդրության մեջ, ապա, թվում է, հարկ չկար դարձանալու և բարբարոսության հիմքեր փնտրելու այն բանի մեջ, որ հայերի մոտ գործում էր նույն այդ համակարգը, թեկուզև անաղարտ ձևով:

Կայսրին հետաքրքրում էին genearchica կոչվող հողերը՝ հայկական նախարարական տիրույթները: Նախարարական իրավունքը բաղկացած էր տոհմային և ֆեոդալական տարրերից: Ֆեոդալական աշխարհում, ինչպես հայտնի է, հողը ազնատիկական գծով փոխանցվում էր հորից որդուն, եղբորը, ժառանգման իրավունքից զրկելով կանանց: Այդ մասին է խոսում նաև Lex salica-ն³: Այս վիճակը բխում է ֆեոդալիզմի էությունից: Չէ՞ որ ֆեոդալական հողատիրությունը պայմանավորված էր զինվորա-

¹ Ըստ XII Tab. si intestato moritur—agnatus proximus familiam habeto. Հայերի մոտ նույնպես ոչ միայն մինչև Սողոմոն, այլև նրա օրենսդրությունից հետո աղամարդկանց՝ կանանց նկատմամբ նախապատվությունը տրվում էր ab intestato ժառանգելու դեպքում:

² Const. 143—Nov. 118. Διάταξις ἀναίρουσα τὰ ἀδνατικά δίκαια καὶ τυπούσα τὸς ἐξ ὀδίαθétου κλησίαις.

³ Lex salica 59, 5. De terra vero nulla in muliere hereditas est, sed ad virilem sexum qui fratres fuerint tota terra perteneat; տես G. Waitz. Deutsche Verfassungs-geschichte, III auflage, I, p. 64.

¹ Մխիթար Գոշ, Գատառանագիրք, գլ. 121:
² Վերբերուք, երեսուեսուք, բերանբացէք:

կան ծառայութեամբ, և կանայք, որ անընդունակ էին այդ ծառայութեանը, բնականաբար պիտի զրկվեին հողատիրութեան իրավունքից: Ընդ այդպէս էլ տոհմական միջավայրում կանանց հողային ծառանգութեանը անմասն լինելը արդարացիում էր նրանով, որ նրանք անընդունակ էին մասնակցելու տոհմական վրեժին: Գրեթէ բոլոր կանայք, որ համարուեցան ծառայութեանը, Հայկական նախարարութեանը, որ բովանդակութեամբ ֆեոդալական էր, իսկ էութեամբ՝ տոհմային, կանանց կամ կողմնակցական գծի նկատմամբ բռնեց այնպիսի դիրք, որը բխում էր նրա էութենայից, այսինքն՝ հողատիրութեան իրավունքը շատ քիչ էր տարածվել կանանց վրա: Ըստ նովելլայի հայ ընտանեկան իրավունքի մեջ առհասարակ ընդունված չէր կտակելու սովորութեանը¹, մի փաստ, որ շատ բնորոշ էր նախարարութեանը: Նկատի ունենալով այն, որ հայերի մոտ պայմանական հողատիրութեանը տեղավորվեց տոհմական թաղանթի մեջ, կտակելու կարիքը ինքնին վերանում էր: Կտակը անձնական սեփականությունը ազատ կերպով անօրինելու մի ազատ է, ուստի պետք է որ խորթ լինի այն միջավայրին, որտեղ գոյություն ունի տոհմական սեփականություն: Որպէս տոհմի զուլա կանգնած առաջնակարգ անդամներ առանձին անձնավորություններ միայն ղեկավարում են ընդհանուր սեփականությունը և լիազորված չեն իրենց իրավունքները փոխանցելու այս կամ այն անձնավորությունը սեփական հաջորդութեամբ: Տոհմական կենցաղի տեսակետից կան միայն հաջորդներ, բայց ոչ ծառանդներ, ըստ որում հաջորդելու կարգը որոշվում է ոչ թէ տվյալ հաջորդի անձնական ցանկութեամբ, այլ ծննդի իրավունքով, արյունակցական մերձավորութեամբ և ազգութեամբ: Այսպէս, օրինակ՝ գերմանացիների մոտ յուրաքանչյուրի համար ծառանդներ և հաջորդներ էին համարվում իրենց զավակները, իսկ կտակի մասին նրանք զազափար չունեին²: Ընդ այդպէս էլ կտակի

¹ Պետք է նշել նովելլայի հետևյալ արտահայտությունը՝ μη καλούμενος εις τήν εξ εθού ο υς άδοϋέτου διαδοχόν, սովորական էξ άδοϋέτου - փոխարենի Ձեռագրերում թեև կարգացվում է էξάτασιν, բայց նոր հրատարակչները իրավամբ ուղղում են էξ εθούσ, նկատի ունենալով Հովթանոսի լատիական թարգմանությունը՝ ab intestato parentibus suis secundum pristinam Armeniorum consuetudinem non succedant.

² Tacit. Germ. 20, heredes tamen successoresque sui cuique liberi, et

բացակայությունը Հայաստանում պետք է համարել նախարարական ընտանեկան իրավունքի բնորոշ գիծը:

Պատմիչները հայտնում են, որ հայոց Սահակ կաթողիկոսը արու զավակ չունենալու պատճառով իր ամբողջ կարողությունը հավիտենապէս ծառանգություն թողեց իր միակ աղջկան՝ Մամիկոնյան իշխանուհուն և նրա զավակներին¹: Ինչպէս կտեսնենք, եկեղեցում գործում էին նույն ֆեոդալական օրենքները, ուստի եկեղեցական ոլորտից վերցրած տվյալները միանգամայն պիտանի են նախարարական կարգը լուսաբանելու համար: Աղջկա օգտին արված կտակը պատմիչը բացատրում է նրանով, որ Սահակ կաթողիկոսը արու զավակ չունէր, այդ նշանակում է, որ աղջիկը ծառանդելու իրավունք է ստանում միայն այն դեպքում, եթե չկան արական սեռի ծառանդներ: Այստեղ էլ նկատվում է համաձայնություն արևմտյան ֆեոդալիզմի հետ, որտեղ կանայք աստիճանաբար ճանապարհ էին հարթում դեպի ֆեոդը (կալվածքը) ծառանդելուն, ընդ որում սկզբնական շրջանում նրանց իրավունքները ճանաչվում էին միայն այն դեպքում, երբ ընդհատվում էր արական գիծը²:

Այսպիսով, հայերի ազգի ասիական սովորույթը անառարկելի փաստ է: Եվ երբ հարց է ծագում, թե կայսերական իշխանությունը ինչու՞ զինվեց նրա դեմ, ապա միակ պատասխանը դառնում ենք կայսրի կողմից նախարարական վարչակարգը խարխուլելու ցանկություն մեզ: Ինչպէս պատմականորեն զարգացած յուրաքանչյուր ինքնուրույն վարչակարգ պատվար է արտաքին ոտնձգությունների դեմ, նախարարությունն էլ խտրընդոտ էր մեծ աշխարհակալի կենտրոնաճիգ նկրտումների ճանապարհին: Հուստինիանոսի պահանջը, ինչպէս և նախարարական հողային ամբողջականության դեմ ուղղված որևէ միջոցառում, պետք է

nullum testamentum, si liberi non sunt, proximus gradus in possessione fratres, patruī, avunculi.

¹ Փարպեցի, էջ 37: Խորհեցե՛ք, Բ, կր, հիշատակում է Դրուսայ պարսիկի ձախն, «որ ինամացեալ էր ընդ նախարարս Վասպուրականի, որում տունալ էր զուսնն Տատեոսս հանգերձ ազարակօքեռ»:

² Waitz. loc. cit. Here, ditatem refincti filius non filia suscipiat. Si filium non habuit qui defunctus est, ad filiam pecunia et mancipia, terra vero ad proximam paternae generationis consanguineum pertineat.

խարխուլեր հողատիրութեան վրա հիմնված իշխանների հղորութիւնը:

Հասկանալի է, որ կայսեր բարեփոխումները, հակառակ նրա բազմիցս հայտարարութիւններին, ամենից քիչ էին բխում երկրի բարորութեան մտահոգութիւններից: Հայաստանին վերաբերող նովելլաների ամպագոռզոս հայտարարութիւնների տակ հազիվ թէ կարելի է տեսնել այն նպատակները, որոնց իր նրանք ձգտում են: Բանն այն չէ, որ ռեֆորմատորը վերելից է նայում տեղական մշակույթին: Արհամարհանքը Արեւելքի և նրա մշակույթի նկատմամբ հատուկ էր ինչպէս հին, այնպէս էլ ներկայիս Արեւմուտքին: Կարելի է մտածել, որ Հայոց աշխարհը իսկապէս գտնվում էր մի ինչ-որ անկարգ և քաոսային վիճակի մեջ, և որ Հուստինիանոսը վճռեց նրան դուրս բերել այդ քաոսից ի բարորութիւն հայերի: նովելլաների վերամբարձ ոճը կարծես ծառայում է թաքցնելու կամ մթազննելու ճշմարտութիւնը:

Հուստինիանոսի նովելլաները, իբրև գրական ստեղծագործութիւն, իրենց ձևով ու բովանդակությամբ զերծ չեն որոշ սխոլաստիկութիւններից: Գրանք բոլորն էլ կազմված են նույն կաղապարով և բաղկացած են երեք մասից՝ ներածութիւնից, շարագրանքից և վերջաբանից: Ընդ որում ներածութեան մեջ իբրև թեղ սովորաբար արվում է որևէ խրատաբանութիւն, աֆորիստական իմաստութիւն, որի կենսագործմանը իբր թէ ծառայելու են նովելլաներում առաջարկված միջոցառումները: Թեզերը բնավ էլ չեն արտահայտում բարեփոխումների իսկական դրդապատճառները և ավելի շուտ պատասխանում են արմատացած գրական ճաշակներին, քան օրենսդրական ճշմարտութեանը: Այսպէս, օրինակ, 23-րդ նովելլայի ներածութեան մեջ հայտարարվում է. «Հուստինիանոսը երբեք չպետք է կարողանային ստեղծել համաշխարհային ինքնակեղծութիւն, եթէ նրանց նահանգային կառավարիչները չլայելիին շրջապատի հարգանքը»: 24-րդ նովելլան սկսվում է հետևյալ կերպ. «Քանի որ կիլիկիայի ժողովուրդը իր փառավոր ծագումը ստացել է կիլիկոն թագավորից և ազգակցական կապերով կապված է հուստինիանոսի հետ, արժանի է ավելի պատվարժան կառավարիչ ունենալու»: 25-րդ նովելլան հրապարակվել է իբր թէ այն պատճառով, որ «թրակիացիների անունը աննշվում է ինչ-որ հղորութեան և ուղղման նշանների գաղափարի հետ»: 31-րդ նովելլայով Պողոսնոսական Պոնտոսը և Հելլենոպոնտոսը պետք էր միացնել, որովհետև «ուժը ոչ թէ անունների շատութեան, այլ իրերի ճշմար-

տացի վիճակի մեջ է»: Պատիղազներին արժանի է բարեփոխումների, որովհետև նրա ժողովուրդը «հին է և փառավոր»: Կապաղովկիայի վերակազմութիւնը նույնպէս հիմնվում է «այն ժողովրդի մեծահաշակ փառքի և անվան վրա, որ մի ժամանակ արիւմ էր ամբողջ Պոնտոսին» և այլն:

Այս բոլոր դատողութիւնները իրականում շատ հեռու էին բարենորոգումների իսկական պատճառները լինելուց: Մենք արգեն եշեցինք Հուստինիանոսի բարեփոխիչ գործունեութեան ընդհանուր հիմունքները: Եվ եթէ դրա հետ մեկտեղ նա հաշվի էր առնում նաև սովյալ նահանգի վիճակը, ապա գերազանցապէս պետական նախնադրանքի շահի տեսակետից: Նահանգներին վերաբերող նովելլաները երևան էին գալիս ոչ թէ անցյալին վերաբերող այս կամ այն հաճելի, ռոմանտիկ հիշողութիւնների, այլ այն տագնապալի իմաստների պատճառով, որոնց հետևանքով խիտ բնակեցված տարածութիւնները, նովելլաների վկայությամբ, հաճախ հրաժարվում էին հարկեր վճարելուց, իսկ անհանգիստ տարրերը խումբ թափառում էին՝ զբաղվելով կողոպուտով և սպանութիւններով:

Հայկական նովելլաների ներածութիւնները նույն արժեքն ունեն, ինչ որ առհասարակ բոլոր նովելլաների վերոհիշյալ ներածական խրատաբանութիւնները: Հուստինիանոսի աչքին Հայաստանի կարգուկանոնը, իհարկե, կարող էր քաոսային թվալ: Բայց նա մտահոգված էր նրա վերացմամբ ոչ թէ հանուն երկրի շահերի, այլ նախ և առաջ հանուն այն բանի, որպէսզի կարգավորվեր ու ապահովվեր պետական հասույթների գանձումը: Այդ տեսակետից նովելլայի անկեղծ վերջաբանը, որտեղ կայսրը պրեֆեկտին հրամայում է խստիվ հսկել, որ հարկերը կանոնավոր կերպով գանձվեն, ավելի շատ ճշմարտութիւն է պարունակում և, կարելի է ասել, քան է նետում այդ նովելլան պարուրող բարի ցանկութիւնների արտաքին շղարշը:

Հուստինիանոսը հասավ իր նպատակին, համենայն դեպս՝ «կղերական շրջանում»: Նրա գոված Ակակիոսը՝ I Հայքի կառավարիչը, մի ժամանակակցի վկայությամբ, առանց բաշխելու կողոպ-

1 Noo. № 24, կիլիկիայի և Պոնտոսի մասին:

տում էր ազգաբնակչությանը և երկրի վրա դրեց մինչ այդ չստանալ
հարկ՝ 400 ֆունտ ոսկի¹։

¹ Proc. Pers. II, 3 p. 159, τὰ τε γὰρ χρήματα ἐληϊζητο οὐδενὶ λόγῳ καὶ
φόρῳ αὐτοῖς ἀπαγωγῆν οὐποτε οὐσαν ἐς κεντηνάρια τέσσαρα ἔταξεν.

Պատմագիրները թվարկում են մի շարք տարբեր, որոնք Հուստինիանոսի դարա-
շրջանում ծանրացած էին ընդհանրապես կայսրության ազգաբնակչության վրա։
Ch. Diehl, Justinien, p. 296: Քն դրանցից որոնք էին գանձվում նաև հայերից,
հայտնի չէ։ Հավանական է, որ 400 ֆունտ ոսկի գումարի մեջ մտնում էին նաև
այն եկամուտները, որ պետական գանձարանը ստանում էր այն ոսկու հան-
քից, որ գտնվում էր Հայաստանի՝ Ակակիոսին ենթակա մասում։ Մարալա-
յի վկայությամբ, Հայաստանի պարսկական սահմանի վրա գտնվող լեռները շատ
հարուստ էին ոսկով։ Տեղատարափ անձրևների ժամանակ ջուրը տանում էր լեռ-
ների հողը, և երևան էին գալիս ոսկու հատիկները։ Այդ հողերը հոռոմները և
պարսիկները առաջ 200 ֆունտ ոսկով կապալով էին տալիս։ Երբ Անաստասի
ժամանակ լեռները անցան կայսրությանը, սա ինքը սկսեց ստանալ նշված եկա-
մուտը, ծե γὰρ βροχαὶ καὶ δῦμβροὶ γίνονται, κατασύρεται ἡ γῆ τῶν αὐτῶν
ὄρέων, λεπτιδας ἀναβλύζουσα χρυσοῦ τὰ δὲ αὐτὰ ὄρη ἐμισθοῦντο τὸ πρότερον
τινες ὀπὸ Ῥωμαίων καὶ Περσῶν χρυσοῦ λιτρῶν διακοσίων. ἐξ οὗ δὲ παρελήφ-
θησαν τὰ αὐτὰ ὄρη ὑπὸ τοῦ θειοτάτου Ἀναστασίου. Ῥωμαῖοι μόνοι κομιζόντο
τὴν θεοπισθεῖσαν συντέλειαν, Malala, p. 456. Նշանակում է ամեն տարի պետու-
թյան գանձարան էր մտնում մինչև 200 ֆունտ ոսկի։ Եթե միայն այդ գումարը
մտնում էր ըստ կենտրոնի կամ 400 ֆունտ ոսկու մեջ, ապա հասկանալի է
դառնում տարեկան հարկի քանակը։ Քնոփանը ասում է՝ «ոսկու հանքերը սկզբում
հոռոմներին և պարսիկներին տալիս էին մեկական տաղանգ, իսկ այժմ նրանցից
օգտվում են միայն հոռոմները... քրոսոսիան... քրոնց անձ ղաժաժա տեղոնտան
Պրոմաօիս տե կալ Πέρσαις, νῦν δὲ Ῥωμαῖοις μόνοις τελούντων, p. 275: Քնո-
փանը անկասկած օգտվել է Մարալայի վկայություններից, ընդ որում նա տաղանգ
գործ է ածում, ինչպես երևում է, կենտրոնարի իմաստով։

ՀՈՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՌԵՅՈՐՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

Հայերի վերաբերմունքը Հուստինիանոսի վերափոխումների եկա-
մամբ։ Նրանց անմիջական նետանկները։ Նախադարձական կարգի վերա-
գումարը։ Հայերի տեղաշարժը դեպի կայսրություն և Փոքր Հայքի հողերի
վերածնունդը։ Էքսիլիական շերտի նախապատրաստությունը Արմենիական
բեմի և Կիլիկիայի հայկական բազմաթիվության համար։ Հայերի տեղաշարժի
նշանակությունը կայսրության տեսակետից։ Ինչպե՞ս անդրադարձավ այդ
տեղաշարժը Հայաստանի նախապարտ վրա։ Բյուզանդական կրթության
ազդեցությունը հայերի վրա և հունարեն դրոսը։ Հուստինիանոսի քաղա-
քականությունը Արևելյան կայսրության շահերի տեսակետից։

Παντός δὲ συγγενούς δεδουλωμένον τε καὶ σχεδανυ-
μένου ἀεὶ πανταχόσε τῆς Ῥωμαίων ἀρχῆς.

Հուստինիանոսի վերափոխչական գործունեության նշանա-
կությունը ճշտելիս և գնահատելիս նախ և առաջ պետք է կանգնել
նրա ժամանակակիցների տեսակետի վրա և պարզել, թե այն ժա-
մանակ երկրում նրա նկատմամբ ինչպիսի վերաբերմունք կար-
ժամանակակիցների տեսակետները, որոնք հաճախ սուբյեկտիվ
են լինում, մեծ մասամբ պայմանավորվում են տվյալ պահով և,
իհարկե, միշտ չէ, որ արդարացվում են հետագա իրադարձու-
թյուններով։ Հաճախ ըստ էության դրական երևույթ կամ արարք
կյանքի հետագա ընթացքը օբյեկտիվորեն կշռադատելիս դուրս է
գալիս բացասական, երբ արտաքին պատահական գործոնների ազ-
դեցության հետևանքով ծավալվում են միանգամայն անսպասելի և
նախընթաց իրադարձությունների ընդհանուր շղթայի մեջ շտե-
ղավորվող հետևանքներ։

Հուստինիանոսի անֆորմներից անմիջապես հետո կայսերական
իշխանության դեմ Հայաստանում ծավալված շարժումը ցույց է
առնում, որ հայերը բացասաբար էին վերաբերվում նրա հաստատած

կարգուկանոնին: Վերափոխումների հետ կապված հարկերի ավելացումը լայն զանգվածների մեջ առաջ բերեց ուժեղ խմորումներ և արյունահեղ ընդհարումների պատճառ դարձավ: Բայց շուտով ամեն ինչ հարթվեց, և ապստամբության ղլխավոր հանցավորները հաշտվեցին կայսրի հետ և տեղափոխվեցին մայրաքաղաք:

Ի՞նչ փոփոխություններ կրեցին զրանից հետո Հուստինիանոսի վերափոխումները, արդո՞ք հայերը ինչ որ բանի հասա՞ն իրենց վիճակը թեթևացնելու իմաստով, թե՞ կիրառված միջոցառումները շարունակեցին անդամալիորեն գործել, մեզ հայտնի չէ: Բանն անշուշտ ծանր հարկերը չէին, որ կարող էին վերացվել կամ թեթևացվել: Ծանրության կենտրոնը գտնվում էր նախարարության ճակատագրի մեջ: Այդ տեսակետից կայսեր ձեռնարկած միջոցառումների հետևանքները կործանարար եղան: Հայանի է, որ մեզ հասած հայկական հին գրավոր հուշարձանները բացարձակապես սլինչ չեն հայտնում Արևմտյան կամ կայսերական Հայաստանի նախարարությունների մասին. նույնիսկ նախարարությունների հատուկ պատմիչ Մովսէս Խորենացին շատ քիչ բան է հաղորդում Հայաստանի այդ մասի իշխանական տների մասին: Նկատի ունենալով մեր պատմիչի արտակարգ քննասիրությունը այն ամենի նկատմամբ, ինչ վերաբերում է նախարարություններին, որոնց ծննդաբանությունը նրա ղլխավոր խնդիրն էր, այդ փաստը անհասկանալի է և կարող է բացատրվել միայն նրանով, որ Հայոց պատմությունը գրելու ժամանակ կայսերական Հայաստանում նախարարական տները փաստորեն կորցրել էին իրենց նշանակությունը, լավագույն դեպքում դարձել էին պաշտոնատար դաս, և նրա ղլխավոր ներկայացուցիչները հավանորեն կլանվել էին կայսրության բյուրոկրատիայի կողմից:

Հայաստանի Հուստինիանոսյան վերակազմության արժանի գնահատականը տալու համար, ճիշտն ասած, առանձնակի նշանակություն չունի այս կամ այն միջոցառման տեսականության հարցը: Կարևորը ոչ թե առանձին միջոցառումներն են, որոնք կարող էին մնալ կամ փոխարինվել ուրիշներով, արժեքավոր է ընդհանուր սկզբունքը, վերակազմությունների հիմնական գաղափարը, որը չէր կարող փոփոխվել հետագայում: Կան գաղափարներ, որոնք իրենց կենսունակությամբ նման են պարարտ հողի մեջ բնկած հատիկի, մեկ անգամ կյանքի կոչվելով՝ նրանք այլևս կոչմանակի օժանդակության կարիք չեն զգում, այլ ապրում ու զարգանում են

իրենց սեփական ներքին ուժով: Կայսերական իշխանության հետապնդած նվիրական նպատակն էր խորտակել և ոչնչացնել այն պայմանները, որոնք նպաստում էին հայկական կյանքի պարփակվածությունը, նրա ազգային ինքնատիպությունը և նրան ներքաշել կայսրության ընդհանուր շահերի ոլորտը. այս դեպքում ենթադրվում էր, որ արևելյան նահանգների պաշտպանությունը պարսկական միապետության սպառնալիքների դեմ կարելի էր համարել ապահովված:

Այսպիսի քաղաքականության շնորհիվ սկսվեց հայերի տեղաշարժը դեպի կայսրության կենտրոնը: Քաղաքական ընդհանուր տեսաչառությունները և երկրի ներսում հաճախակի երկպառակույթունները, որոնք տեղի էին ունենում եկեղեցական, քաղաքական և այլ կարգի տարակարծությունների հողի վրա, հաճախ հայրենիքի սահմաններից դուրս էին նետում ոչ միայն առանձին անհատներ, այլև կենսական ամբողջ խմբակցություններ: Այդ կարգի բուր տարրերը ելքը գտնում էին դեպի Արևմուտք գաղթելու մեջ և բախտ էին որոնում համապետական կյանքում: Բյուզանդիայի մայրաքաղաքը՝ համաշխարհային կյանքի և մշակութային այդ օջախը, դեպի իրեն էր ձգում ոչ միայն մերժվածներին ու հերձվածողներին, այլ նաև ուրիշ ուժերի: Կյանքի նոր ասպարեզը գրավում էր նաև նրանց, որոնք այլ պայմաններում կմնային իրենց հայրենիքում:

Հայերի ձգտումը դեպի Բյուզանդիա, որ Հուստինիանոսի ժամանակվանից սկսած գնալով ուժեղանում էր, ուներ իր և՛ դրական, և՛ բացասական կողմերն ու հետևանքները: Կարևոր հետևանքներից մեկը պետք է համարել Փոքր Հայքի ազգային վերածնունդը: Փոքր Հայքը, շատ վաղ բաժանվելով Մեծ Հայքից, ընթանում էր զարգացման այնպիսի ուղիով, որը սպառնում էր վերջնականապես զարգացման այնպիսի ուղիով, որը սպառնում էր վերջնականապես զրկել նրան ազգային կերպարանքից: Հայկական տարրն այնտեղ զորավոր էր դեռևս Յ դարում: Բավական է հիշել II Հայքի նպիսկոպոսների 452 թվականին կոն կայսրին ուղղած պատասխան թղթի նշանավոր խոսքերը, որտեղ հոգևոր հայրերը կայսրին հավաստիացնում են, որ իրենք հավատարիմ են ուղղափառությունը, բայց զանգատվում են, որ ի վիճակի չեն ինչպես հարկն է արտահայտելու իրենց մտքերը, որովհետև «ապրում են աշխարհի ժուրին՝ հեռու արքայանիստ քաղաքից և չունեն վիճաբանության ընդունակ լեզուներ. մենք բնակվում ենք,— շարունակում են

բարձրաստիճան հոգևորականները, — այլազգի հայերի մեջ և թեև ուղղադավանք ենք, բայց կանոնավոր կերպով չենք փրոսպետում հոսմանական լեզվին. նրանցից՝ հայերից, մենք բաժանված ենք որոշ տարածությունք՝ մեծ մասամբ Եփրատի հոսանքով և այլազգիների հետ շարունակ խառնվելու հետևանքով լեզուն չդիտենք այնքան, որ կարողանանք երկար ճառեր ասել»¹:

Այս նույն խոսքերը առավել իրավունքով կարող էին կրկնել նաև I Հայքի եպիսկոպոսները: Անդրեփրատյան հայերը բուրովին էլ մեզք չունեն այն բանում, որ I և II Հայքի հոգևորականությունն անգամ վատ դիտեր լատիներենը, խոսքը վերաբերում է այն հայերի ազդեցությունը, որոնց մեջ ապրում էին եպիսկոպոսները, այսինքն՝ I և II Հայքի բնակչությանը, որոնցից էլ հենց գանձատվում են եպիսկոպոսները: Երկու գավառներում էլ բնակչության կորիզը կազմում էին հայերը, որոնք Ս դարի կեսին դեռ խոսում էին մայրենի լեզվով:

Աղբալին գաղափարի և զգացումների համար ոչ պակաս վտանգ էին ներկայացնում գավառաբանական հարցերը, որոնք զնալով այնպիսի լարված բնույթ էին ստանում, որ կարող էին խեղդել ազգային շահերը: Կրոնական տարբերություններով էին որոշվում այն ժամանակ լեզվի ընտրությունն ու զործածությունը ոչ միայն ժամերգության, այլև եկեղեցական ոգով տոգորված գրականության մեջ: Դրա հետևանքով էլ կոյսերական եկեղեցուն հարած հայերը Փոքր Հայքի սահմաններում ազգային դպրություն ստեղծելու անընդունակ գտնվեցին: Գրականության և ազգային կրթության բացակայության պայմաններում լեզվի և ազգության ճակատագիրը դառնում է երերուն և անկայուն: Հայությունը Փոքր Հայքում անկասկած կհանդեր համապետական կյանքի և շահերի հորձանուտում, եթե Հայաստանի սահմանամերձ մասերից եկող թարմ ուժերի հոսանքը չթարմացներ նրան և շարժացներ նրա ազգային ինքնագիտակցությունը:

Այն հանգամանքը, որ Հուստինիանոսը իր նահանգային ակֆորմների ժամանակ ոչ միայն պահպանեց Փոքր Հայքի հողերի Հայք

անունը, այլև տարածեց այն հարևան հողերի վրա, հաստատում է, որ վերածննդի պրոցեսը սկսվել էր նրանից առաջ: Թվում է, ավելի հարմար կլիներ Կապադովկիա անվանումը, մանավանդ որ մի քանի շրջաններ, որոնք այն ժամանակ միացված էին հայկական հողերին, փաստորեն մինչ այդ պատկանում էին Կապադովկիային: Իրականում մենք տեսնում ենք, որ Հուստինիանոսը ի հաշիվ հարեվան երկրների ընդարձակում է Փոքր Հայքի հողատարածությունը և որոնք Հայաստան է համարում Մեծ Հայքի կայսերական մասերի մեջ: Սա փաստ է, որը պետք է բացատրել հայ բնակչության դեպի Արևմուտք, դեպի կայսրության խորքերը սկսված գրոհով նորենացու մոտ պահպանված այն ավանդությունները, թե հայկական արևելյանները նվաճումների ճանապարհով հասնում էին մինչև Պետասու ու Մաթալ-Կեսարիա, և որ այդ ամբողջ տարածության վրա խոսում էին հայերեն, ըստ էության հանդիսանում է Հուստինիանոսի դարաշրջանում գոյություն ունեցող իրադարձությունների և ոչ թե Արամի հեռավոր ժամանակների արձագանքը, ինչպես ներկայացնում է պատմիչը: Այդ պարզ երևում է նրանից, որ հիշյալ երկրների նվաճման կապակցությամբ նորենացին հիշատակում է հայկական հողերը I, II, III և IV Հայքերի բաժանելու մասին, սակայն համառորեն այն վերագրում է Արամի առասպելական ժամանակներին՝ չվստահելով հիշյալ բաժանման իրական շարժառիթների մասին եղած այն լուրերին, որ շրջում էին Հայաստանի կայսերական մասում:

Հարձակողաբար առաջ շարժվելով՝ հայերը սկսեցին իրենց սահմաններից դուրս գալ և շարժվել դեպի սահմանակից երկրները երկու ուղղությամբ՝ սկզբում այդ շարժումն ընթանում էր II Հայքից դեպի արևմուտք՝ որոշ շափով թեքվելով դեպի հյուսիս՝ դեպի ծով: Պարճ ժամանակամիջոցում հայ տարրը այստեղ այնքան հզորացավ, որ այնուհետև՝ սկսած է դարից նոր նահանգային կազմակերպության լայնածավալ միավորներից մեկը կոչվեց հայկական. մենք նկատի ունենք Արմենակիոն թեմը՝ Θέμα τῶν Ἀρμενικῶν: Այն տարածվում էր Կապադովկյան Կեսարիայից մինչև Մեծ ծով՝ բնդրվելով այն ամբողջ տարածությունը, որ ընկած էր Մինոպից մինչև Փասիս և Եփրատ՝ բացառյալ III Հայքը, որն այդ ժամանակ դրավել էին արաբները: Այդ ամբողջ լայնածավալ տարածությունը, որ մեծությամբ հավասար էր նախկին Կապադովկիայի, I և II Հայքի ու Պոնտոսի գավառներին միասին վերցրած, թա-

¹ Mansi, VII p. 590, cohabitamus enim circa Armenios barbaros, fideles quidem, sed recte Romano eloquio non ulentes, brevi quodam spatio ab eis, magis autem intercisione Euphratis fluminis separati, et propter frequentem barbarorum permixtionem longos nequimus proferre sermones.

դակիր գրողի հեղինակավոր վկայությամբ «այն տեղ և նրանց հարեանությամբ ապրող հայերի անունով» ստացավ լճոն 'Αρμενιάκων անունը¹։

Հայերը տեղաշարժվում էին նաև III Հայքի կողմից, այսինքն՝ Մելիտենեից՝ Կիլիկիայի ուղղությամբ՝ դարձյալ դուրս գալով դեպի ծով։ Այդ ճանապարհով նախապատրաստվում էր էթնիկական այն շերտը, որի վրա հայ Բաղրատունիների ճյուղերից մեկի գերիշխանության տակ հետագայում ծնունդ առավ քաղաքական ինքնուրույն կյանք, որն այդ հարստության հիմնադիր Ռուբենի անունով կոչվեց Ռուբինյան։

Կայսրության շահերի տեսակետից հայերի գաղթը դեպի արևմուտք շատ ցանկալի էր. դրա ապացույցն է այն, որ կայսրերը խրախուսում էին այդ շարժումը, և երբեմն էլ իրենք էին հայերին տեղահան անում հայրենի հողերից ու բնակեցնում կայսրության մյուս մասերում։ Հայտնի են մանավանդ Մորիկ կայսեր փորձերը²։ Հայերի թափանցումը բյուզանդական հողերը խիստ արդյունավետ եղավ կայսրության համար և շափազանց մեծ օգուտներ բերեց նրան։ Իրենց բախտը կապելով կայսրության հետ՝ հայերը նվիրվում էին նրան արտակարգ անձնազոհությամբ։ Գուրս գալով իրենց հայրենիքի քաղաքական կյանքի համեմատաբար նեղ շրջանակներից ավելի լայն ասպարեզ՝ նրանք իրենց ուժերը ծավալեցին ամբողջ հզորությամբ ու բազմակողմանիությամբ։ Հայերը աչքի ընկան պետական կյանքի բազմաթիվ բնագավառներում՝ ինչպես ղինվորական, այնպես էլ քաղաքացիական. նրանք տվեցին հռչակավոր անուններ, որոնք շատ խոշոր ծառայություններ մատուցեցին կայսրությանը։ Նրանց ներկայացուցիչներից շատերը մինչև անգամ փայլեցին դահի վրա և որոշ դեպքերում նույնիսկ հիմք դրին ամբողջ հարստության։ Հայկական այրուծին պետության հեռավոր ծայրամասերում կոչում էր կայսրության ռազմական ձեռնարկումների, փառքի ու հաջողության համար։

Շատ նշանակալից եղավ հայերի դերը նաև մշակութային և հոգևոր կյանքում. Բյուզանդիայի պատմության համար այնքան

բնորոշ պատկերամարտության շարժումը ծնունդ առավ կայսրության արևելյան ծայրամասում և իր զարգացման համար նշանակալից չափով պարտական է հայերի համակրանքին և հովանավորությանը։ Մինչև այսօր էլ գերազանցապես եկեղեցական դավանաբանական ուսումնասիրության առարկա հանդիսացող պատկերամարտությունը մշակութային տեսակետից բավարար չափով չի դնահատված։ Պատկերամարտությանը, որպես կրոնական խորհուրդների աշխարհում որոշ օացիոնակիզմ մտցնելու լուղունգային արտահայտության մի փորձ, վիճակված էր բյուզանդական մշակույթի մեջ խաղալու նույն դերը, ինչ որ ռեֆորմացիան Արևմուտքի նոր պատմության մեջ։ Պատկերամարտությունը պարունակում էր մի այնպիսի ուսմունքի սաղմեր, որն իր հետագա զարգացման դեպքում խորտակելու էր եկեղեցական դավանաբանական արդեն հնամաշ շերտերն ու այն ավանդույթները, որոնց մեջ պարտված էին Քրիստոսի հավատն ու հավատացյալ մարդու կյանքը։ Գիտակցելով այն վտանգը, որ սպառնում էր նախ և առաջ եկեղեցական հիերարխիայի շահերին, հոգևոր և աստվածապետության վրա հիմնված աշխարհիկ իշխանությունները ամեն միջոց գործ էին դնում արմատախիլ անելու այդ շարիքը նրա զարգացման սկզբնական փուլում։ Այս ուղղությամբ հայերի կատարած դերը բնավ էլ վերջիններից չէր. նրանք, անկասկած, այնտեղ մտցրին որոշակի և շատ վառ կոլորիտ։

Ինչպե՞ս անդրադարձավ հայերի հիշյալ տեղաշարժը Հայաստանի ճակատագրի վրա։ Հայերի կայսրությունով մեկ սփռվելը իրենց հայրենիքի շահերի տեսակետից, անշուշտ, չի կարող դրական երևույթ համարվել։ Արտագաղթը տվյալ երկրի համար բնականոն և անվտանգ է այն դեպքում, երբ այն պայմանավորված է խիտ բնակչությամբ կամ բնակչության բնական աճով։ Կայսրությունը, սակայն, հայերից խլում էր ոչ թե ժողովրդական ուժերի ավելցուկը, այլ, ընդհակառակը՝ այն տարրերը, որոնք ավելի շատ էին պետք երկրին։ Երկրից հեռանում էին առավել ձեռներեց և առույգ ուժերը, այնպիսի ձիրքերով օժտված անձինք, որ կարողանում էին մնալ և աչքի ընկնող տեղ գրավել կայսրության կյանքի խոռվա-հայզ ծովի մակերևույթի վրա։ Հայաստանի համապատասխան մասի հայ ազնվականության ծաղիկը՝ նախարարական բոլոր տոհմերը, աստիճանաբար կենտրոնանում էին մայրաքաղաքում և զարգարում պետական գործիչների շարքերը։

¹ Const. Porphyg. De them. p. 17—18, ἀπό τῶν ὀμοροῦντων καὶ συνοικοῦντων Ἀρμενίων τῆν προσηγορίαν ἐκτίθεσθε.
² Սերևոս, էջ 47, 51, 54 և հաջորդ, նաև Հովնանենս եփեսոսցի, եկեղեց. պատմություն, էջ 243 և 258։

Հայրենիքից հեռացած հայերը իրենք էլ էին գիտակցում, որ իրենց համար խորթ թահերի բնագավառում եռանդ վատնելը անպատակ է այն ժամանակ, երբ իրենց հայրենի երկիրը հեծում է այն իշխանութիւնի տակ, որի համար իրենք ոգորում են մարտի դաշտերում, իրենց արյունը թափում նրա արտաքին թշնամիներին դեմ մղած պայքարում: Այս տեսակետից շատ բնորոշ է մայրաքաղաքի հայ գործիչներից մեկի կարծիքը: 548 թվականին հայերը դավադրութիւն նյութեցին Հուստինիանոս կայսրի դեմ, որի պարագլուխներն էին Արշակը և Արտավանը՝ երկուսն էլ Արշակունյաց արքայական տոհմից: Այդ ժամանակ Արտավանը մեծ հռչակ էր վայելում Լիբիայում կատարած իր բազմական սխրագործութիւնների շնորհիվ, որտեղ սպանել էր բռնակալ Գոնթարիսին: Գավադրութիւնը նյութվեց Արշակի նախաձեռնութիւնով, որն էլ իր տոհմակից Արտավանին համոզեց ստանձնել այդ գործը: Արշակը նախատում էր նրան, — պատմում է դեպքերի ժամանակակից պատմիչը. — որ «ուրիշների թշվառութիւնի դնով նա՝ Արտավանը, հերոսի և բռնապետութիւնը տապալողի անուն է վաստակել՝ առանց որևէ պատճառի սպանելով իր բարեկամ և սեղանակից Գոնթարիսին: Իսկ այժմ արիւթիւնը կորցրած՝ նա նստած է այստեղ վեհերոտ, մինչդեռ նրա հայրենի երկիրը մշտապես հեծում է ապօրինի հարկերի ծանրութիւնի տակ: Նրա հորը սպանեցին հաշտութիւն բանակցութիւնների պատրվակով, նրա ազգը ամբողջովին ստերկացրին և շարունակ ցարուցրիվ են անում Հռոմեական կայսրութիւնի բռնութիւնի տակ»¹:

Այս դառը խոսքերը, որ հայկական գործերին լավատեղյակ պատմիչը դնում է Արշակունիների շառավիղի՝ մայրաքաղաքացի հայի շուրթերին, և որոնք հնչում են իրրև տխուր ճշմարտութիւն, պատկերավոր ձևով արտահայտում են այն վիճակը, որին ենթարկ-

¹ Proc. Goth. III 32, p. 409, ἐπὶ μὲν γὰρ κακοῖς ἀλλοτριῶς γενοῖσιν τε καὶ τῆς τυρρανεῖδος διαλύτην αὐτὸν γεγονέναι, φίλον τε ὄντα καὶ ἐσιτίατορα Γόνθῆριν αὐτόχειρα λαβόντα κτεῖναι οὐδενὶ λόγῳ. ἐν δὲ μετ' αὐτὸν παρόντι ἀποδειλιάσαντα οὗτος ἀνάνδρως ἐνταῦθα κατήσθαι, τῆς μετ' αὐτὸν πατρίδος ὀφρουρουμένης τε ἐνδεδεχέσαστα καὶ δασμοῖς ἐκτετηκνίας ἀψῆσαι, τοῦ δὲ πατρὸς ἀνηρημένου ἐπὶ ξυθηκῶν τε καὶ εὐμβάσεως λόγῳ, παντός δὲ τοῦ ξυγγενοῦς δεδουλωμένου τε καὶ σκεδανυμένου ἀεὶ πανταχόσε τῆς Ῥωμαίων ἀρχῆς.

վեց Հայաստանը Հուստինիանոսի վերակազմութիւնների ժամանակվանից, Հայաստանի համար այդ ճակատագրական քաղաքականութիւնը կայսերական իշխանութիւնը շարունակեց նաև այնուհետև: Արժեքավոր տեղեկութիւն կա այն մասին, որ Հուստինիանոսի մերձավոր հաջորդներից մեկը հայ նախարարների և նրանց զորքերի հասցեին ամբաստանագիր է ուղարկել պարսից արքային: «Հայերը, — գրում է կայսրը, — անվստահելի և անհնազանդ ժողովուրդ են. ապրում են մեր մեջ և խանակութիւն անում, եկեք պայմանավորվենք այսպես՝ ես կհավաքեմ իմ հայերին և կուղարկեմ Քրակիա, իսկ դուք կհավաքեք ձեր հայերին և կհրամայեք տանել դեպի Արևելք: Եթե նրանք այնտեղ կոչնչանան, մեր թշնամիները ոչնչացած կլինեն, իսկ եթե սպանեն, ապա մեր թշնամիներին կսպանեն, և մենք կապրենք հաշտ ու խաղաղ: Չէ՞ որ քանի դեռ նրանք կգտնվեն իրենց երկրում, անկարելի է, որ մենք հանգստութիւն ունենանք»:

Թագակիր քրիստոնյայի այս լիտի առաջարկը հիանալի կերպով ցուցադրում է բյուզանդական արքունիքի այն խելագան նենդ և հրեշավոր քաղաքականութիւնը, որից ոչ միայն Հայաստանը տուժեց, այլև դրա համար ինքը՝ կայսրութիւնը ևս շատ թանկ վճարեց:

Գաղթեցնելով հայերին իրենց հայրենիքից՝ ներծծելով հայ ազգաբնակչութիւնի առաջավոր խավերին, կայսրութիւնը երկիրը զրկեց հուսալի պատվարից: Հետևանքները պերճախոս կերպով երևան եկան արաբական տիրապետութիւնի դարաշրջանում: Այն ժամանակ, երբ Հայաստանի՝ արաբներին անցած նախկին պարսկական մասերում տեղի ունեցած որոշ մարտերից հետո հաջողվեց Այրարատում, Վասպուրականում, Տարսուսում և Սյունիքում կազմակերպել ազգային պետութիւններ, հռոմեական շրջանները անկարող եղան քաղաքական խնդիրներ լուծելու նախարարութիւնի թուլացումով խորտակվեցին երկրի բազմական ուժերը, և ոչնչացվեցին նախարարական ավանդութիւնները նաև քաղաքական ազատութիւնի բնագավառում:

Կայսրութիւնի հետ հայերի ունեցած սերտ շփման հետևանքով, բնականաբար, համապետական կյանքն ու կրթութիւնը իրենց հերթին պետք է ուժեղ ազդեցութիւն թողնեին հայոց հոգևոր կյանքի վրա: Մանրազնին հետազոտութիւնները ցույց են տալիս, որ Հուստինիանոսի ժամանակվանից սկսած՝ աստիճանաբար երևան է դալիս

մի ուղղութիւն, որ խիստ կերպով տարբերվում է նախորդ շրջանի գրական ավանդույթներին: Հայաստանում քրիստոնեական տարածումից հետո հայոց եկեղեցական կյանքը և նրա պահպանած դպրութիւնը սկսեցին զարգանալ գլխավորապէս ասորական քրիստոնյա աշխարհի հետ սննցած ընդհանուր ճաշակների ու ավանդույթների հիման վրա: Որոշ ժամանակ անց գրական երևույթներ մեջ նկատվում է բեկում, որ որոշակիորեն աչքի է զարնում նախ և առաջ լեզվի ասպարեզում: Ծիշտ է, լեզվական ավալները այնքան էլ վստահելի չեն, և նրանց վրա հիմնված դրույթներն ու եզրակացութիւնները երբեմն վտանգավոր են, բայց ներկա դեպքում գործ ունենք օրինակով բնույթ կրող լեզվական մի հատկանիշի հետ, այսինքն՝ լեզվի բառական կողմի հետ, անկախ նրա ոճական այլ առանձնահատկութիւններից: Կան որոշակի կատեգորիայի բառեր ու բառաստեղծումներ, որոնք բոլորովին խորթ են հայկական, այսպէս կոչված, առաջին շրջանի քրիստոնեական գրավոր հուշարձաններին, Աստվածաշնչի *exceptis excipiendis*, Փալատոսի, Ղազար Փարպեցու գործերին և այլ երկերին: Այդ բաների առկայութիւնը ապացույց է այն բանի, որ ավյալ հուշարձանը վերաբերում է քիչ ավելի ուշ ժամանակաշրջանի, երբ ծաղկում էր, այսպէս կոչված, հունաբան դպրոցը¹:

Հիշյալ տարրերը լեզվի մեջ ներթափանցում էին փիլիսոփայական և առհասարակ հայեցողական գրականութիւն միջոցով: Կայսրութիւն կյանքի հետ շփվելու անմիջական արդյունքներից մեկը եղան եկեղեցական տարածաշրջանները: Դավանաբանական վեճերն ու երկպառակութիւնները մեծ ծավալ ստացան: Ե՛վ կայսերական եկեղեցու դավանանքի կողմնակիցներին, և՛ ազգային եկեղեցական ավանդութիւն հետևորդներին հավասարապէս անհրաժեշտ էր մտքի ճկունութիւն հայեցողական, վերացական մտածողութիւն բնագավառում, որպէսզի կարողանային հասկանալ և մեկնաբանել Քրիստոսի բնութիւնը վերաբերող բարդ և մանվածադաս հարցերը: Այդ և այլ պատճառներով առաջ եկավ նոր հոսանք, և ստեղծվեց գիտական կամ տեսական ոգով տոգորված

գրականութիւն: Մտավոր կյանքի հորիզոնի լայնացման հետ միասին գիտական տերմինաբանութիւն թարմ շերտով հարստացավ նաև լեզուն: Այս հոսանքը սկսվեց Հուստինիանոսի ժամանակներից և սերտորեն կապված է նրա վերափոխումների հետ: Ուստի մենք իրավունք ունենք Ա դարի երկրորդ կեսը համարել մի նոր շրջանի սկզբնավորութիւն հայոց մտավոր կյանքում: Թե որքան խոշոր է հունաբան շրջանի նշանակութիւնը հայ դպրութիւն պատմութիւն մեջ, կարելի է դատել նրանով, որ այդ շրջանի արգասիք են Դավիթ Անհաղթի փիլիսոփայական գործերը, նշանավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացու աշխատութիւնները և վերջապէս Մովսէս Խորենացու առաջին լիակատար և քննական Հայոց պատմութիւնը: Իսկապէս մի հոյակապ հուշարձան, որ շատ կողմերով իր հավասարը չունի հայ դպրութիւն մեջ՝ նշանավոր նախ և առաջ ազգային այն խոր գաղափարայնութիւնով, որը ստեղծեց նա, և որով շատ դարերի ընթացքում դաստիարակվեցին հետագա սերունդները:

Հայ կյանքի վրա բյուզանդական կրթութիւն ազդեցութիւնը և ընդհակառակը՝ հայոց տեղաշարժը դեպի կայսրութիւն, թեև տարբեր կողմերից, բայց տանում էին դեպի միևնույն նպատակը՝ դեպի մշակութային հավասարեցում: Եթե երևույթները դիտենք բացառապէս կազմակերպվող պետականութիւն տեսակետից, ապա չի կարելի չընդունել, որ էթնիկական այլազանութիւն հարթեցումը և նրանց վերափոխումը միասնական մշակութային դանդաղածի, պետք է որ բարեբար ազդեցութիւն ունենային Արևելյան կայսրութիւն քաղաքական ապագայի և նրա ամբողջ ճակատագրի վրա:

Հոռմեական կայսրութիւնը երկու մասի բաժանվելուց հետո գրանցից յուրաքանչյուրի կյանքը պետք է զարգանար տարբեր ուղղութիւններով. արդեն կայսրութիւն բաժանումը նշանակում էր, որ երկու մասերում էլ մշակութային կյանքում արդեն գոյութիւն ունեւ որոշ աններգաշնակութիւն: Արևմտյան կայսրութիւնը հոռմեականանում էր, իսկ Արևելյանը, էթն կարելի է այսպէս ասել, ընթանում էր արեւելականացման ուղիով: Արևմուտքում գլխավոր գործոններ հանդիսացան էթնիկական թարմ խմբերը, իսկ Արևելքում ասպարեզ մտան պատմական մանր ազգութիւններ,

¹ Գրանց թվին են պատկանում, օրինակ, աղացոյց = ἀποδείξις, շարունակ = συνεχές, տար-բերութիւն = δια-φορά, բաց-ասութիւն = ἀπό-φασις, բաց-ատրութիւն = ἀπό-δωσις, վերաբերիլ = ἀνα-φέρεσθαι, բանակ = πόσον, որակ = ποίον, արամա-գրութիւն = δια-φασις, շար-ագրութիւն, շար-ամանութիւն = συμ-πλοκή և այլն:

որոնք ոգի ի բռի միմյանց հետ մրցում էին պետական կյանքում առաջնակարգ դեր խաղալու համար:

Հուստինիանոսի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ այնքանով, որքանով այն հետապնդում էր նրանց, ինչպես և մյուս ժողովուրդներին կայսրության մեջ ներգրավելու նպատակ, թեև դրված է իրերի բնական ընթացքով և արդարացվում է կայսրության պատմության ներքին միտումով: Բայց, դժբախտաբար, կայսրության արևելյան և արևմտյան կեսերի փոխհարաբերության մասին ավանդական պատկերացումները խանգարեցին, որպեսզի այդ մերձեցումը ամբողջապես ծառայի Արևելյան կայսրության օգտին: Չնայած կայսրության երկու մասերի մեջ գոյություն ունեցող խզումը գնալով ավելի ու ավելի էր խորանում՝ խթանվելով հասարակական և քաղաքական կյանքի սեղան պայմաններով, Հուստինիանոս կայսրը, տարվելով նվաճողական նպատակներով, աշխատում էր վերստին միացնել անջատված մասերը և վերականգնել պետության նախկին ամբողջականությունը: Դրա հետևանքով այդ գաղափարի համար զոհաբերած նյութական և հոգևոր հսկայական միջոցները գործ էին ածվում ոչ թե Արևելյան կայսրության կարիքների և օգտի համար, այլ փոխադրվում էին Արևմուտք՝ այդ մասը բարբարոս հրոսակների ասպատակություններից պաշտպանելու: Ուրիշների կողքին հայկական, ասորական և վրացական զորախմբերը ևս իրենց զորավարների առաջնորդությամբ կռվում էին Աֆրիկայի անապատներում, Իտալիայում և կայսրության մյուս մասերում՝ պաշտպանելու այն, որ բուլղոսները օտար էր իրենց ոչ միայն իբրև տարբեր ազգության ներկայացուցիչների, այլ նաև իբրև Արևելյան կայսրության քաղաքացիների: Ուժերի նման վատնումը, ճիշտն ասած, Արևելյան կայսրության անմիջական շահերի տեսակետից չի կարող արդյունավոր համարվել:

Արևելքից շատ կենսական ուժեր անցան գնալի կայսրություն. պատմությունը մեր առջև բաց է անում մեծ ձիրքով օժտված գործիչների մի ամբողջ շարան, որոնք արտակարգ անձնազոհությամբ և եռանդով իրենց կյանքը նվիրեցին կայսրության բարօրությանը¹: Քիչ չէր նրանց թիվը նաև Հուստինիանոսի ժամանակներ

¹ Հեղինակավոր մասնագետներից մեկի կարծիքով հայերը haben dem Reiche unermessliche Dienste gethan. Die fähigsten Offiziere, die genialsten Heeresleiter der folgenden Jahrhunderte (այսինքն՝ Հուստինիանոսից հետո)

բում. բավական է հիշատակել Հուստինիանոսի թագավորության շրջաններից մեկին՝ հայ նարսեսին, մի մարդու, որը մեծ հուշակ ձեռք բերեց քաղաքացիական կյանքում, ճգնաժամային պահին ցուցաբերեց արտասովոր տաղանդ նաև ռազմական արվեստում և իր հաղթանակներով նսեմացրեց նույնիսկ Ֆելիսարոսի՝ իր ժամանակի այդ զինվորական հանճարի փառքը: Բյուզանդիայի նախաշեմին նարսեսի հոյակապ կերպարը ճշտությամբ կանխագուշակում է այսպան՝ հանդիսանալով հոգևոր և նյութական այն հարստության ու զորության մարմնացումը, որ արևելյան զավառներից անդադար հոսում էր դեպի կայսրության կենտրոնը նրա գոյության ամբողջ ընթացքում:

sind armenischen und iberischen Geblüts. Gelzer, H. Die Genesis d. Byz. Them. p. 24. 'Der hohe und niedere Adel der Armenier (Naharark, σατραπάται und Azak, Ἄζακοι) bildeten neben den Iberern den kernhaftesten und tüchtigsten Stamm der römischen Reiterregimenter (Καβαλλαρικά θέματα >. ib. p. 96.

հանգում էր եկեղեցին նախարարականացնելու և նախարարական հարաբերությունները եկեղեցական բնագավառին պատվաստելուն: Նախարարությունը համարվում էր մի այնպիսի արմատացած կենսածն, որ արդարացիվում ու պահպանվում էր այն բարդ պայմաններով, որոնց մեջ գտնվում էր Հայաստանը, ուստի յուրաքանչյուր նոր կազմակերպություն կարող էր պատվաստվել միայն գոյություն ունեցող նախարարական միջավայրին անվերապահորեն հարմարվելու դեպքում: Այնտեղ, որտեղ այդ հաջողվում էր եկեղեցուն, նա դառնում էր նախարարական-ազգային, իսկ երկրի այն մասում, որտեղ կայսերական քաղաքականության ազդեցության հետևանքով չէր կարողանում կամ անհրաժեշտություն չէր զգում կառչելու տեղական ձևերին, հայ եկեղեցին մնում էր ընդհանուր եկեղեցական կյանքի հունի մեջ: Այդպիսին էր եկեղեցական իրադարձությունների քաղաքական կառուցվածքը, որ բնկած էր հայոց եկեղեցին ընդհանուր եկեղեցուց մեկուսացնելու հիմքում՝ անկախ դավանաբանական սկզբունքներից և տարածաչնություններից: Նախարարական շրջանում եկեղեցու նշանակությունը շափվում էր ոչ թե նրա քրիստոնեական բովանդակությամբ, ինչպես թվում է շատերին և կամ ոչ այնքան նրանով, այլ նախ և առաջ ֆեոդալական կամ նախարարական կառուցվածքով:

Նախարարական հաստատություն այդպիսի նշանակության դեպքում հասկանալի է, որ նրան հանգամանորեն ժանոթանալը անհրաժեշտ է հայոց պատմության մինչև մոնղոլական նվաճումներն ընկած ընդարձակ ժամանակաշրջանը լուսաբանելու համար:

Արշակունիների ժամանակ ձևավորված այդ հաստատությունը նրա անկումից հետո էլ շարունակեց զարգանալ և գործել նրանց բոլոր տիրույթներում: Բայց զլխավորապես Հուստինիանոսի ժամանակվանից ի վեր Արշակունյաց Հայաստանի արևմտյան կեսը սկսեց կորցնել նախարարական կերպարանքը, մինչդեռ արևելյան մասում այն շատ երկար պահպանվեց: Նախարարությունների մասին հայ մատենագրության մեջ եղած տեղեկությունները վերաբերում են գրեթե բացառապես Արևելյան Հայաստանին, ուստի և Հայաստանի այդ մասի գոյավիճակի ուսումնասիրության ժամանակ նախարարությանը պիտի հատկացվի կենտրոնական տեղ:

Յուզանդական աղբյուրների մեջ Արևելյան Հայաստանը սովորաբար կոչվում է Պարսկահայք: Նա Վիրքի, Աղվանքի և Ատրպատականի հետ միասին կազմում էր Սասանյան Պարսկաստանի վարչական խոշոր բաժանումներից մեկը: Սասանյանների ժամանակ պարսկական պետությունը բաժանված էր չորս մասի կամ կրկրամասի՝ Արևելյան, Արևմտյան, Հարավային և Հյուսիսային kust i xorāsān, xorwārān nēmrōs, apāxtar¹.

Հյուսիսային երկրամասը հաճախ կոչվում էր kust-ak i Kapkoh, ինչպես հայերն էին կոչում, կամ կենտրոնին առավել մոտ շրջանի անունով՝ kust-ak i Atrpatakan: Իսկ apāxtar անունը վերաբերում էր սկյութական կամ սարմատական ժողովուրդներին, որոնք բնակվում էին ավելի հեռու՝ հյուսիսում, և իրենց գոյությունը զգացնել էին տալիս պարսկական և հոմեական տիրապետությունների վրա կատարած հաճախակի ասպատակություններով:

Պարսկաստանը չորս երկրամասերի բաժանելը որոշ դիտնականներ վերադրում են Խոսրով Անուշիրվանին (531—579): Կարծում են, որ Պարսկաստանը մինչ այդ բաժանված է եղել բազմաթիվ պրովինցիաների, որոնց սատրապները կամ կառավարիչները կախում են ունեցել անմիջապես թագից, բայց քանի որ դժվար էր հետևել այդքան բազմաթիվ ենթակա մարմինների գործունեությանը, Խոսրովը «միտք հղացավ կազմել չորս մեծ նահանգ և դրանք հանձնել թագավորի զստահությունը վայելող չորս անձնավորությունների: Նրանց պարտականությունն էր հետևել նահանգային սատրապների գործունեությանը, ուղղություն տալ նրանց, հսկել և շարաշահումների մասին զեկուցել թագավորին»²:

Այս կարծիքն այնքան էլ ճիշտ չէ. հաղիվ թե կարելի է Խոսրովին համարել հիշյալ վարչական բաժանման նախաձեռնող: Արաբ հեղինակ Տարարին, որ իր տրամադրությունն տակ ունեցել է պահլավական շատ նյութեր և օգտվել է նաև Խուրայ-Նամեից՝

¹ Աշխահացույց, էջ 40 քուստ ի Խորասան (pro Խորասան, համաստ Աշխահացույցի տպագրված տեքստում՝ Խորասյանք), քուստ ի նեմոջ, քուստ ի Խորասան, քուստ ի Կապիոհ, որ է կողմն Կակասու լիբանցա: Անանիա Շիրակացու մոտ հանդիպում ենք այսպիսի արտահայտության, «սպայապետն զոր Խորասանն կոչեն», այսինքն՝ Արևմտյան երկրամասի՝ Խորավարանի սպարապետ, որ անհասկանալի է մնացել հրատարակչին՝ Միաբանին, Արարատ, 1906, փետրվար և ապրիլ:

² Rawlinson, *The Seventh monarchy*, p. 439.

նշանավոր Շահ-Նամեհի նախատիպից, հայտնում է, որ, երբ խոսրով Անուշիրվանը զահ բարձրացավ, «նամակներ ուղարկեց չորս պագոսպաններին, որոնք կառավարում էին Պարսկաստանի չորս երկրները»։ այդ նամակներից մեկը ուղղված էր «Հաղոյ Նախվեր-գանին՝ Ադարբայգանի, Հայաստանի և հարևան հողերի պագոսպանին»¹։

Չորս քուստակների գլուխ էին կանգնած չորս պագոսպանները. այսպես, Ատրպատականի քուստակի կամ Կովկասյան երկրամասի պետն էր Հաղոյը։ Գատելով այդ վկայությունից՝ Պարսկաստանի մեզ հետաքրքրող բաժանումը տեղի է ունեցել խոսրով Անուշիրվանից առաջ և չի կարող համարվել նրա գործը։

Այդ նույն պատմագիրը հայտնում է, որ «մինչև խոսրովի թագավորելը սպահբեդի, այսինքն՝ գլխավոր զորահրամանատարի պաշտոնը ամբողջ կայսրությունում զբաղեցնում էր մեկ անձնավորություն։ Իսկ խոսրովը, հենց որ թագավոր դարձավ, այդ պաշտոնը բաժանեց չորս մարդկանց միջև. Արևելքի, այսինքն՝ խորասանի և հարևան հողերի սպահբեդի, Արևմուտքի սպահբեդի, Նիմուզի, այսինքն՝ Եմենի սպահբեդի և Ադարբայգանի ու հարևան հողերի, այսինքն՝ խաղարների երկրի սպահբեդի»²։

Նշանակում է, խոսրովին վերագրվում է միայն այն, որ չորս երկրամասերում կամ քուստակներում պագոսպանների կողքին նա նշանակեց մեկական զորահրամանատարու Այս ունիտորմը վերաբերում էր զինվորական իշխանությունը քաղաքացիականից անջատելուն. այսինքն՝ պագոսպանները համարվում էին քաղաքացիական, իսկ սպահբեդները՝ զինվորական իշխանության մարմիններ³։

¹ Nöldeke, *Tabari*, p. 151—152.

² *ib.*, p. 155.

³ Padospan. այսպես էր կոչվում, իմիջիայոց, Սպահանի կառավարիչը 641 թ. արաբների նվաճումների ժամանակ։ *Tabari, Zotenberg III, գլ. 43.* Հայերեն պատգոսպան, Սերես, էջ 77, նույն ձևով է կազմված, ինչպես *marzpan* և նշանակում է երկրի պահպանող կամ կառավարիչ։ *Paikos* բառը հանդիպում ենք սլավոնական գրականության մեջ նահանգ իմաստով. *West, Pahlavi textis II, 297; Hübschmann, Arm. Gram. I, p. 223:* Հայ պատմիչ Փովստ Արժունու մոտ պատգոս նշանակում է ինչ-որ կոչում, «առաքին յարքունուստ պատրոսք պատուարք դորք բաղմոր», էջ 286։ Նույն իմաստով գործ է ածվում նաև Մովսես Կաղանկատավացու մոտ՝ «եկն իսզար փառաղոս», էջ 265 և շատ

Ըստ հայկական վկայությունների, բանակի բաժանումը չորս հրամանատարության տեղի է ունեցել ոչ թե խոսրովի, այլ նրա քուսան՝ Հազկերտի՝ վերջին Սասանյանի ժամանակ։ Ինչպես հազարգում է Սեբեոսը, նրա օրոք «պատուեալ բաժանեցան զարք աշխարհին պարսից յերես մասունս, զար մի այն որ ի Պարսից և յարեւելից կողմանէ, և զար մի խոռեմայ, որ յԱսորեստանկայց կողմանէ և զար մի որ յԱտրպատական կողմանէ, բայց թագաւորութիւն նորա էր ի Տիգրոն, և ամենեքին միաբան պատուէին զնա միաբանութիւնմը»¹։

Պարսքն այստեղ Ֆարսն է, հարավային երկրամասի գլխավոր նահանգը և այստեղ գործ է ածված ամբողջ քուստակի փոխարեն, ինչպես *pars pro toto*։ Ինչպես երևում է, հայ պատմիչն էլ տարբերում է չորս բանակ, նկատի ունենալով, ըստ երևույթին, չորս սպահբեդությունները։ Նրանց առաջացման մեջ հայ պատմիչը պարզապես տեսնում է Հազկերտի օրոք թագավորական իշխանության թուլացումը, իսկ ըստ արաբական տվյալների դա հանդիսանում էր Հազկերտի պապի՝ խոսրով Անուշիրվանի կողմից կիրառված ունիտորմ։ Ըստ երևույթին ոչ մեկը, ոչ մյուսը ճիշտ չեն, և չորս սպահբեդությունները, ինչպես և չորս պագոսպանությունները Պարսկաստանում գոյություն են ունեցել խոսրովից ու Հազկերտից շատ առաջ։

Հայտնի է, որ ըստ հին իրանական տիեզերաբանության ամբողջ երկնակամարը նույնպես բաժանված էր չորս սպահբեդների միջև. տիշտարաստղը իշխում էր արևելքի վրա, սատավեսը՝ արևմուտքի, վանանտը՝ հարավի և ապտոբրինգը՝ հյուսիսի²։

Հազկերտն Անուշիր մոտ՝ «ոչ կարաց ընդոստախոս պատագրոսն այն համբաւ զգլուխ իւր», էջ 133։ Այս մեջբերման մեջ ընդգծված բառը վրիպակ է. «ոչ» է լինի պատգոս։ Բերված քաղվածքում պատգոս նշանակում է կառավարիչ, պաշտոնատար, *patkos-pan* իմաստով։ Գծարխտարք բառի ստուգաբանությունը անծանոթ է, Հայերեն օրինակների հիման վրա կարելի է բաժանել *pati-kos-ի*, որ նշանակում է երկրի գլուխ հիմտ. *kos-ի* կապը *kost-ak-ի* հետ, Թերևս *patgos-pan-ի* մտածելը ժամանակագրական կարգով հասնում է *pat-kos-t-pan-ին* և *patkost-ին*։ Արդ՝ «չ չի կարելի ընդունել, որ *kos-ը* ինքնուրույն բառ է, իսկ *kost-ը*՝ նրա անանցավոր ձևը։

¹ Սերես, էջ 99—100։ Սասանյան բանակը չորս մասի բաժանելու արձագանքները կարելի է գտնել նաև խորենացու մոտ Հայոց Արտաշես թագավորը նույնպես իր զորքը բաժանում է չորս հրամանատարների միջև. *Խորենացի, Բ, Ժլլ*։

² *West, Bundahis̄, p. 12, Sacred-ի մեջ Books of the East, vol. V.*

ձիշտ է, Bundahiš գիրքը, որից բաղված են հիշյալ տեղեկությունները մեզ հասած խմբագրություններ, Սասանյանների անկումից հին չէ, բայց իր հիմքում այն վերաբերում է ավելի հեռավոր ժամանակներին: Կասկած չկա, որ պարսիկների տեղեկագրական պատկերացումները տվյալ դեպքում Պարսկաստանի վարչական բաժանման՝ նրա շորս հրամանատարության բաժանվելու անմիջական արտացոլումն են:

Պաղոսպանությունների և սպահերգությունների հաստատությունները, ըստ էության, կարող են համեմատվել հռոմեական կայսրության praefectus praetorio և magister militum-ի հետ: Սկզբում պրետորիական պրեֆեկտն իր ձեռքում միավորում էր քաղաքացիական և զինվորական լիազորությունները, և միայն Գ դարից զինվորական իշխանությունն անջատվեց որպես առանձին տեսություն: Մենք տեսանք, որ հռոմեական ամբողջ կայսրությունը բաժանված էր շորս մեծ պրեֆեկտուրաների, որոնց գլուխ կանգնած էին շորս պրեֆեկտները: Նրանցից երկուսը պատկանում էին կայսրության արևելյան, իսկ մյուս երկուսը՝ արևմտյան կեսին: Նույնքան էլ զինվորական պետեր, magister militum, կային արևելյան, իլիրյան, թրակիական և գալլիական, եթե չհաշվենք արքունական շորս պետերին, praesentales, երկուական՝ երկու մայրաքաղաքների յուրաքանչյուր արքունիքում: Հազիվ Պե պատահական լինի կայսրությունների բաժանումների միջև եղած այդպիսի նմանությունը. այստեղ, ըստ երևույթին, ինչ-որ կապ կա: Գծաբախտարար երկու հարևան երկրների քաղաքական հաստատությունների ծագումնաբանական փոխհարաբերությունների հարցը հետազոտողների կողմից չի շոշափված, որոնք, ըստ երևույթին, մտքով անգամ չեն անցկացրել, որ հսկարտ Հռոմը կարող էր որևէ բան փոխ առնել բարբարոս պետությունից: Թերևս դա ձիշտ է, և փոխ առնող կողմը ներկա դեպքում հանդիսանում է Պարսկաստանը: Համենայն դեպս կասկածից վեր է, որ պարսկական քուստերը կամ քուստակները նույնքան հին են, որքան հռոմեական պրեֆեկտուրաները:

Պրեֆեկտուրաները բաժանվում էին գիտցեղների (թեմերի), որոնք իրենց հերթին ստորաբաժանվում էին նահանգների, իսկ պարսկական քուստակներն էլ պատմականորեն ստեղծված տերիտորիալ և էթնիկական պայմանների համաձայն ուղղակի բաժանվում էին ավելի մանր միավորների: Սրանցից յուրաքանչյուրն իր

պատմական անցյալով իրենից ներկայացնում էր ավելի կամ պակաս ինքնատիպ երկիր՝ šahr: Աշխարհացույցի համաձայն Կովկասյան քուստը կամ երկրամասը բաղկացած էր այդպիսի 13 երկրներից կամ շահերից.

- | | |
|----------------------|-------------------------|
| 1. Ասրպատական | 8. Գեղան |
| 2. Արմն, որ է Հայք | [9. Շանհան] |
| 3. Վարջան, որ է Վիրք | 9. Գեղիմ |
| 4. Ռան, որ է Աղուանք | 10. Գմբաւանգ |
| 5. Բալասական | 11. Տալուրսան |
| 6. Սիսական | 12. Բովան |
| 7. Առէ | 13. Ամոպ ¹ : |

Նույն աշխատության համառոտ խմբագրության մեջ հիշված է ընդամենը 10 երկիր, ընդ որում առաջին շարքից հիշատակված է միայն Ասրպատականը, իսկ երկրորդի մեջ տրված է ամբողջը, միայն այն տարբերությամբ, որ Շանհանի փոխարեն հիշված է Մուկանը և բացի դրանից, նշված է Համագանը, որ չկա առաջին խմբագրության մեջ, բայց, անշուշտ, սրան է վերաբերում: Ուշագրավ է, որ մահմեդական աղբյուրները ևս Սասանյան հյուսիսային երկրամասը նկարագրելիս երբեմն բաց են թողնում Կովկասյան երկրները²:

Հին և քաջատեղյակ արաբ աշխարհագրագետներից մեկը հաստատում է, որ ռճարբի կամ հյուսիսի երկրները կազմում էին Պարսկական կայսրության մեկ քառորդ մասը և գտնվում էին սպահերգի իշխանության տակ, որ կոչվում էր Ադարբադկան-

¹ Աշխարհացույց, էջ 40. Ասրպատական, Արմն (որ է) Հայք, Վարջան, որ է Վիրք, Ռան, որ է Աղուանք, Բալասական, Սիսական, Առէ, Գեղան, [Շանհան], Գլուանք, Գմբաւանգ, Տալուրսան, Ռան, Ամլ, զոր պատմելի առաջի կալ մեզ: Սոացւում է 14 շահր, հահառակ այն ցուցման, թե նրանց թիվը 13 է: Մարկվարտը հաստատում է Շանհանը, փխ. Շերլանի որպես ներմուծություն, Eranšahr, էջ 125: Ուշագրավ է Աշխարհացույցի վերջին նշումը, որից պետք է եզրակացնել, որ կամ մեզ հասած խմբագրությունը լրիվ չէ, կամ Պարսկաստանի բաժանման մասին եղած հավանական քաղված է մի այլ աշխատությունից, որի մեջ տրված է եղել վերահիշյալ ջահերի մանրամասն նկարագրությունը:

² Marquart, Eranšahr. p. 95, p. 94: Արդյո՞ք այն չի նշանակում, որ շորս երկրամասերի ծագումը նախորդել է հիշյալ երկրները պարսից գերիշխանությանը ենթարկվելուն:

սպահբեզ», այդ քառորդը ընդգրկում էր Հայաստանը, Ատրպատականը, Ռեհեր... Աշանքը և այլն¹։

Այս նույն հեղինակը, խոսելով թագավորների տիրոջաների մասին, հայտնում է, որ Արտաշիսը շահ տիրապետով մեծարում էր հետևյալ թագավորներին՝ Բուզուրի-Արմենիան-շահ, Աղարբազ-կան-շահ, Ալան-շահ, որը Մուկանն է, Բարաշական-շահ և Միսազան-շահ²։

Այդ բառերը տառացիորեն չպետք է հասկանալ։ Սրանց իմաստն այն է, որ հիշյալ երկրները ունեին սեփական թագավորական իշխանություն, մի հանդամանք, որը թեև կապվում է Մասանդյան հարստության հիմնադրի անվան հետ, բայց իրականում վերաբերում է առհասարակ նրանց տիրապետության ժամանակաշրջանին։ Բերևս այս երկրների համեմատական անկախությունը պիտի բացատրել այն հանգամանքը, որ մի քանի դեպքերում, ինչպես ցույց տվինք, նրանք Կովկասյան քուստակի գավառների մեջ չէին մտնում։ Թագավորական իշխանություն, իրոք, գոյություն է ունեցել Բուզուրի-Արմենիայում, այսինքն՝ Մեծ Հայքում և Առանում՝ Աղվանքում, բայց արար հեղինակը առանձին թագավորություն է համարում նաև Միսազանն ու Բարաշականը, այսինքն՝ այն գավառները, որոնք փաստորեն պատկանում էին Մեծ Հայքին։ Այստեղ, երևի, արտացոլված է Ջ—Է դարերի իրերի գրությունը, երբ այդ գավառներն արդեն Հայաստանից անջատված էին։ Ինչ վերաբերում է Իբերիայի (Վիրք) բացակայությանը, ապա այդ բացատրվում է նրանով, որ հեղինակն այն դեղ է Հայաստանի կազմում, ինչպես ընդունված է մասնագիտական աղբյուրներում։

Ջաքարիա Հոնտորի աշխատության վերջին դիտում Պտղոմեոսի թվարկած երկրների համառոտ նկարագրությունից հետո ասվում է, «նկարագրված երկրներից բացի, հյուսիսային երկրամասում կան ևս հինգ հավատացյալ ժողովուրդներ. նրանք ունեն 24 եպիսկոպոս, և նրանց կաթողիկոսը ապրում է Գվինում» Պարսկական Հայաստանի մայրաքաղաքում։ Նրանց առաջին կաթողիկոսի անունը Գրիգոր է, այր բարեպաշտ և շատ նշանավոր»։

¹ Ibn-Khordadbeh, Bib. Geog. de Goeje, VI, p. 118, թարգմ. p. 90.

² ib. p. 17, شيريدان شاه, ملان شاه, آذربايجان شاه, جزرك ارمينيان شاه, ինչպես որ մեր կարծիքով պետք է կարգալս

«Այնուհետև՝ Գուրդանը. սա մի երկիր է Հայաստանում, հունարենին նման լեզվով, այնտեղ բրիստոնյա իշխանը ենթակա է պարսից թագավորին։

«Այնուհետև՝ Առան երկիրը Հայաստանում, սեփական լեզվով. ժողովուրդը հավատացյալ է և մկրտված. նրանք էլ ունեն պարսից թագավորին ենթակա իշխան։

«Այնուհետև՝ Միսական երկիրը, սեփական լեզվով. ժողովուրդը հավատացյալ է, բայց բնակիչների մեջ կան նաև հեթանոսներ։

«Բաղդուն երկիրը, սեփական լեզվով, հարում է ծովին և հոների հողում ձգվում է մինչև Կասպից դոները։ Դոների մյուս կողմում ապրում են բուլղարները»¹։

Առաջին հայացքից թվում է, թե հինգ հավատացյալ ժողովուրդները առանձնացված են նրանցից հետո հիշատակվող երկրներից. իրականում, սակայն, դրանք հենց Հայաստանը, Գուրդանը, այսինքն՝ Վիրքը, Առանը, այսինքն՝ Աղվանքը, Միսականը և Բաղդունն են։ Վերջին անվանումը սովորաբար նույնացնում են Աբազգիայի հետ։ Աբազգիան՝ ներկայիս Ափխազիան, ինչպես հայտնի է, ընկած է Սև ծովի ափին, իսկ Բաղդունը, բերված նկարագրության համաձայն, «հարում է Կասպից ծովին և դոներին»։ Հիմք չկա Աբազգիան հասկանալ լայն քաղաքական տերմինի իմաստով, որ ընդգրկեր մինչև Կասպից ծով տարածվող հողերը, մանավանդ որ Ջ դարում, որին վերագրվում է մեջ բերված նկարագրությունը, այդպիսի նշանակություն ուներ Լազիկեն և այն էլ Սև ծովի ափերին։ Աբազգիայի քաղաքական վերելքը տեղի է ունենում մի փոքր ուշ։ Մեզ թվում է, որ Բաղդունը Բարասականի կամ Բարասականի աղավաղումն է, bazgun փոխանակ Ba<ra>zgan, գավառ, որ ավելի մոտ է գտնվում հիշյալ երկրներին, քան Աբազգիան։ Բարասականը գտնվում էր Ատրպատականում՝ Բերզենդ և Վարդանակերտ քաղաքների սահմաններում։ Բերզենդը մինչև այսօր գոյություն ունի և գտնվում է Բուլղարու-չայ գետի վտակներից մեկի վրա՝ ուս-պարսկական սահմանադրված. դրանով էլ ճշտվում է Բայասականի դիրքը Արաքսի ստորին հոսանքում։ Նրան հարևան Վարդանը, հայ մատենագիրների Վարդա-

¹ Zach. Mityl. The Syriac Chronicle, XII, 7, p. 327—8. London, 1899.

նակերտը, որի ստույգ տեղը հայտնի չէ, հիշվում է Փայտակարանի գավառների թվում, երևի Բալասականն էլ գտնվել է այնտեղ¹:

Բալասականը հիշվում է Կորյունի մոտ՝ Միսականի, Հայաստանի, Աղվանքի և Վիրքի կողքին: Գրանք այն երկրներն են, որ շրջագայել է Մեսրոպը իր քարոզչական գործունեության ժամանակ:

Միսականի անշատումը Հայաստանից, ըստ մի վկայության, տեղի է ունեցել 571 թվականին՝ հայերի ապստամբության և Սուրեն մարզպանի սպանության ժամանակ: «Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց՝ անուանեալ Վահան իշխան Սիւնեաց և խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից զի տարցեն զգիւան աշխարհին Սիւնեաց ի Դրւնայ ի Փայտակարան քաղաք և կարգեսցէ զքաղաքն ի շահմար Ատրպատականի. զի մի ևս կոչեսցէ անուն Հայոց ի վեայ նոցա»: Միսականը կրկին միացավ Հայաստանին Մասանյանների անկումից հետո²:

Զաքարիայի բերած նկարագրության մեջ, որ վերաբերում է 555 թվականին, Միսականը հիշատակվում է արդեն որպես Հայաստանից առանձին երկիր՝ Աղվանքի և Վիրքի կողքին. պե՞տք է արդյոք ենթադրել, թե այդ ժամանակ Միսականը արդեն անշատված էր Հայաստանից: Աշխարհագրական և էթնիկական պայման-

¹ Ըստ Իբն-Խաղաբենի, op. cit., p. 121, Բերդնդից մինչև Բալասականի դաշտը և այնտեղից մինչև Ատրպատականին սահմանամերձ Վարդանը 12 փարսախ է. Համառոտ Աշխարհացույցի մեջ Աղվանքի գավառների թվում հիշվում է «դաշտ ի Բալասական»: Աշխարհացույցի ընդարձակ խմբագրության մեջ Աղվանքի նկարագրությունը, ինչպես թվում է մեզ, թերի է, ուստի ղվար է ասել, թե ինչպես է եղել այնտեղ: Վստոյ պատմիչը թվելով այն գավառները, որոնք ենթարկվել են խազարների 763 թ. ասպատակություններին, գրում է. «այս դավառք աշխարհին Աղուանից» և շարունակում է «սալին և զցանկալի դաշան Բաղասական», էջ 132: Հնարավոր է, որ Բալասականը վերադրվել է Աղվանքին վերոհիշյալ խոսքերի հիման վրա:

² Գուցե Բաղասականը ընդհանրություն ունի Փայտակարանի Բաղան-ոտի կամ Ռոտ-ի-բաղայի հետ, եթե ընդունենք Ռոտ-ի-բաղաս և Բաղաս-ոտո՝ Բաղաս գետ Ալիշանի մոտ Բուլղարու-չայը կոչվում է Բալա-ոտոց և համեմատության մեջ է գրվում Բալա-ոտաի հետ, Մեծ Հայք, էջ 92:

³ Մերեսս, էջ 26, զի տարցեն զգիւան աշխարհին Սիւնեաց ի Դրւնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահմար Ատրպատականի Նույն պատմիչը 152-րդ էջում խոսում է Սյունյաց իշխանների մասին, «որք լծեալ էին յառաջադն յաշխարհազիրն Ատրպատական, մինչև բարձա թագաւորութիւն պարսից»: Šahr-mar-ը ճիշտ թարգմանված է հայերեն աշխարհազիր բառով:

ներով Միսականը Հայաստանից փոքր-ինչ մեկուսի էր, ուստի այդ երբեմն կարող էր բուլղարովին առանձնացած երկրի տպավորություն թողնել: Պրոկոպիոսին ևս թվացել է, թե սունիտները, այսինքն՝ սյունեցիք պարսկահայերից տարբեր ժողովուրդ են¹:

Միսականը Փայտակարանի, ուրեմն նաև՝ Բալասականի հետ միասին վերադրված էր, ինչպես ասում է պատմիչը, Ատրպատականի շահմարին: Թվում է, թե Միսականը, ինչպես և Բալասականը, որպես Կովկասյան քուստակի ինքնուրույն միավորներ, պետք է որ ունենային սեփական շահմարքը, բայց, ըստ երևույթին, վարչական տեսակետից դրանք Հայաստանին կամ Ատրպատականին հավասար չէին համարվում: Ըստ էության Միսականը պատկանում էր Հայաստանի, իսկ Բալասականը՝ Ատրպատականի շահմարին, նրանք շունեիին նաև մարզպաններ, այլ կառավարվում էին իրենց իշխաններով: Մոտավորապես նույն վիճակում էին հայկական Աղձնիք և Նուշիրական գավառները Արևմտյան քուստակում. առաջինը, ըստ երևույթին, պատկանում էր Արվաստանի շահմարին, իսկ երկրորդը՝ Ադիաբենի, կամ Աշխարհացույցի Նոհադրայի շահմարին, բայց գտնվելով տեղական տիրադատավոր իշխանների՝ բղեշաների տիրապետության տակ, միաժամանակ վայելում էին որոշ անկախություն: Աշխարհացույցի մեջ այդ երկու գավառներն էլ զբանջված են Արևմտյան երկրամասում որպես առանձին շահրեր, Միսականի և Բալասականի նման²:

Այսպիսով, Հայաստանին հավասար վարչական միավորներ են Վիրքը, Աղվանքը, Ատրպատականը, Ադիաբենը և Արվաստանը: Արշակունիների անկումով Հայաստանի տերիտորիալ հարաբերությունը հիշյալ երկրներին նկատմամբ որոշակի փոփոխություն կրեց, և մեղ մնում է պարզել, թե ինչպես էին արտահայտվում այդ փոփոխությունները, այլ կերպ ասած՝ աշխարհագրական տեսակետից ինչով էր տարբերվում թագավորական շրջանի Հայաստանը մարզպանական Հայաստանից:

¹ Proc. Pers. I 15, p. 74, τὸ δὲ στράτευμα τοῦτο Περσσορμενίων τε καὶ Σουσιῶν ἦσαν οἱ δὴ Ἄλ<β>ανοῖς εἰσι δμοιοι.

² Աշխարհացույցի մեջ կարգացվում է Երևական, Մայձինբասեհ, Այս վերջին բառը ազվաղումն է Արձն ոստան-ի Ատրական հուշարձանները տարբերում են Արզոնը Ոստան-Արզոնից, տևս վերը 54-րդ էջի ծանոթությունը: Համառոտ Աշխարհացույցի մեջ նշված է Մարձին, Արձն: Մարկվարտը ենթադրում է, որ այդ գետագրաֆիկ վրեպակ է, Eranšahr, p. 25:

Հայաստանը մարդպանական ենթ կոչում, որովհետև Արշակունիներից հետո երկրում նստում էր պարսից արքայի ներկայացուցիչը, որ կոչվում էր մարդպան¹: Նրա մայրաքաղաքը Գլինն էր, որը Արևելյան Հայաստանի համար ուներ նույն նշանակությունը, ինչ որ Թեոդոսուպոլիսը՝ կոմեսի աթոռանիստը, Արևմտյան Հայաստանի համար, և միաժամանակ Ասիայում միջազգային կյանքի կարևոր կենտրոնն էր համարվում²:

Հյուսիսում Մարդպանական Հայաստանը տարածվում էր մինչև Կանգար: Ղազար Փարպեցին պատմում է, որ վրաց Վախթանգ թագավորը սուրհանդակ է ուղարկում հայերին հայտնելու, որ «գունդ (պարսից) սաստիկ նհաս յերկիրս վրաց և իմ տեսեալ, թե ոչ եմ կարող կալ առաջի՝ խոյս տեսալ ի լերինս Հայոց մօտ ի սահմանակցութեանն վրաց՝ մնամ ձեզ»: Վահան Մամիկոնյանը գնում է Վախթանգին օգնութեան, «յարուցեալ վաղվաղակի և անհապաղ ամենայն զօրքն Հայոց առ արքան վրաց հասանէին եւ բանակեալք առ վայր մի գաւառին Կանգարաց դադարէին», որտեղ Վախթանգը հայերին հավատացնում է, որ պարսիկները ետ դարձան³: Այստեղից երևում է, որ Վրաստանին սահմանամերձ հակական լեռները, որտեղ նստած էր Վախթանգը, գտնվում էին Կանգարի մոտ կամ նույնիսկ հենց Կանգարում. իսկ Կանգարը մտնում էր Գուգարքի մեջ և զբաղվում էր նրա հարավային անկյունը, ուրիմն Գուգարքը գտնվում էր Հայաստանի սահմաններից դուրս:

Ավելի արևմուտք Վրաստանին սահմանակից էր Տայք զավա-

¹ Մարդպանը առաջ է եկել marz-երկիր, աշխարհ և ran-դահապան բառերից և նշանակում է երկրի կառավարիչ: Մարդբանը նոր պարսիկերեն արտասանությունն է:

² Պրոկոպիոսի վկայությամբ Գլինը ծառայում էր որպես հռոմեական և պարսկական արքաների փոխանակման շուկա. ἐξ τε γὰρ Ἰνδῶν καὶ τῶν πλεῖστοιχόρων Ἰβήρων πάντων τε ὡς εἰπεῖν τῶν ἐν Πέρσαις ἐθῶν καὶ Ῥωμαίων τινῶν τὰ φορτία ἐσχομιζόμενοι ἐνταῦθα ἀλλήλοις ἐξυβάλλουσι. Pers. II 25, p. 263: Գլինը գտնվում էր Արարի ափին, ենթադրաբար ներկայիս Գյուլիստն գյուղի տեղում: Հայադեաներին մի ժամանակ այնքան հետաքրքրող քաղաքի անվանումը իմ կարծիքով նույն ծագումն ունի, ինչ որ Փոքր Հայքում գտնվող Dabana քաղաքի անունը, և նշանակում է գյուղ նախաարիական հայերենի dava-ից, վրաց. ღაბა-ից:

³ Ղազար Փարպեցի, էջ 132 ...զօրքն հայոց առ արքան վրաց հասանէին, եւ բանակեալք առ վայր մի ի գաւառին Կանգարաց դադարէին:

ռը, և սահմանային կետ էր համարվում նրա ամենահյուսիսային գավառը, հենց Կողբ. այսպիսով՝ Տայքը ամբողջովին մնում էր Հայաստանում¹:

Ազվանքի կողմից Կուրը դադարեց սահման լինելուց, որ սահման էր Արշակունիների ժամանակ: Սահմանագիծը գետից տեղաշարժվել էր մինչև Խաղխաղ քաղաքը, որ Ղազար Փարպեցին գնում է Ազվանքում, իսկ Եղիշեն համարում է Ազվանից թագավորների ձմեռային նստավայրը: Խաղխաղը գտնվում էր Կուր գետի աջ ափին. պարսից զորքը, Ազվանքից Խաղխաղ գնալիս, պետք է անցներ Կուրը: Խաղխաղի մոտ ճակատամարտ տալուց հետո հայոց այրուձին անցնում է գետի վրայով, որպեսզի շարժվի գետի Ազվանից դուրս: Շատ հավանական է, որ այժմյան թուրքական Խիլիսիա գյուղը, Ձեզամ գետի վրա, հենց հին Խաղխաղն է: Վերջինս գտնվում էր Ուտիքում, քանի որ Ղազար Փարպեցու մոտ այն համարվում է Ազվանից քաղաք. պետք է եզրակացնել, որ այն ժամանակ Ուտիքը մտնում էր Ազվանքի մեջ²:

Փավստոսը որպես արևելքում Հայաստանի և Ազվանքի սահմանակից զավառ հիշատակում է Հարանդը՝ Ամարազ գյուղով, որտեղ թաղված էր Ազվանից կաթողիկոս Գրիգորիսը՝ Գրիգոր Լուսավորչի թոռը: Հարանդի տեղը ստույգ հայտնի չէ: Աշխարհացույցի մեջ հիշվում է երկու Հարանդ, մեկը՝ Սյունիքում, մյուսը՝ Արցախում: Խորենացին, վերապատմելով Փավստոսի հաղորդածը, Հարանդը փոխարինում է Փոքր Սյունիքով, որի տակ նա հասկանում է ամբողջ Արցախը³ կամ, որ ավելի թիչ հավանական է, նրա այն զավառը, որը Աշխարհացույցի մեջ կրում է պարսկական Sisakan i kotak-անունը, այսինքն՝ Փոքր Սիսականը: Արցախի Հարանդը հարում էր անմիջապես Սյունիքին՝ կազմելով Սյունյաց Հարանդի մի մասը և Արցախի մյուս զավառների հետ միասին պատկանում էր Ազվանքին:

¹ Ղևեղ, էջ 168, հասանելի սահմանս վրաց ի գաւառն Կող:

² Փարպեցի, էջ 65, մինչև ի գետն, որ կոչի Խաղխաղ յերկրին Աղուանից. Եղիշն, էջ 139, Մերձ ի սահմանս վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորաց Աղուանից: Այլշան, Մեծ Հայք, էջ 84: Բարխուդարյան, Արցախ, էջ 420, Վախուշտի քարտեզի վրա Խիլիսիան մի քաղաք է Շամշաղիլոյում:

³ Փավստոս, Գ, գ, բերին ի գաւառն իւրեանց ի կողմանն Աղուանից ի սահմանս Հայոց ի Հարանդ, ի գետն... Ամարազ=Խորենացի, Գ, գ, բերելով ի փոքր Սիւնիս, Թաղեցին յԱմարաս աւանի:

Ատրպատականի հողերից Հայաստանը բաժանվում էր Հեր և Զարեանդ գավառներով, որոնք ընկած էին Ուրմիա լճի հյուսիսային ափերին՝ Սալմաստի և Խոյի սահմաններում: Ե դարի ապստամբության ժամանակ պարսիկները այստեղից, որպես ապահով հենակետից, գործում էին հայերի դեմ: Լսելով պարսից զորքերի Հեր և Զարեանդ գալու մասին, Վարդան Մամիկոնյանը շտապում է նրանց դիմագրավելու՝ մտածելով, որ «թերեւս անդէն ի տեղտոյն ի Հեր եւ ի Զարեանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին, եւ ոչ որ լինէր արգել զօրուն պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ և գերելով յարձակել և վնասել»¹: Ընդ այդպէս Վահանը, իմանալով նաև, որ պարսից զորքը մտել է Հեր և Զարեանդ, ժողովեց իր ուժերը և ուղղվեց այնտեղ՝ ճակատելու նրանց դեմ այն վայրերում, «թերեւս ոչ լիցի անցանել բազմութեան Պարսից ի միջոց կողմն աշխարհիս Հայոց»²: Իսկ երբ պարսիկները որոշեցին հաշտութիւն կնքել Վահան Մամիկոնյանի հետ և այդ առաքելութեամբ ուղարկեցին Նիխորին, նա «եկեալ յաշխարհն Հայոց ոչ իշխեաց միջամխել ի Հայոց տեղիսս, այլ դարարեալ ի գաւառին, որ կոչէր Հեր»³: Մեզ զբաղեցնող Հեր և Զարեանդ վայրերը հարեան հողերի հետ միասին հետագայում կազմեցին այն նահանգը, որ Աշխարհացույցի մեջ կոչվում է Պարսկահայք, այսինքն՝ Պարսկահայաստան: Բերված տվյալները ցույց են տալիս, որ այդ շրջանը ևս չէր մտնում Մարզպանական Հայաստանի մեջ:

Հարավից Հայաստանը շրջափակում էին Աղբակի, Անձևացոց և Մոկրի գավառները: Պարսիկների դեմ Ե դարի ապստամբությունը ծավալվեց բացառապես Մարզպանական Հայաստանի սահմաններում, ըստ որում հիշյալ գավառները հայկական այն տիրապետություններից ամենահարավայինն էին, որոնց ներկայացուցիչները մասնակցում էին դրան: Աղբակը գրավում էր Զավ գետի վերին հոսանքը, և մինչև օրս էլ այդպէս է կոչվում Բաշկալայի շրջակայքը: Իրանից դեպի արևմուտք՝ Բոհտանի ակունքների վրա Անձևացոց գավառն է, որտեղ գտնվում են Կանգովար ամրոցը և Հոգեաց վանքը: Ավելի արևմուտք՝ Անձևացոց գավառի կողքին, նույն Բոհտանի հովտում, գտնվում է Մոկրը, այժմյան Մոկուր:

¹ Փարսեցի, էջ 69:
² Նույն տեղում, էջ 128:
³ Նույն տեղում, էջ 160:

Մոկուրից այն կողմ տարածվում էր Աղձնիքը, որ արդեն պատկանում էր Արևմտյան երկրամասին՝ Խորվարանի քուստակին և, նշանակում է, դուրս էր մնում Մարզպանական Հայաստանից, որին նա հարում էր Բալալեյսի՝ հայկական Բաղեշի, այժմյան Բիթլիսի մոտ¹:

Ուրվագծված սահմաններով Մարզպանական Հայաստանը իր մեծությամբ զգալիորեն զիջում էր թագավորական շրջանի Հայաստանին: Մայրամասային հողերի գոտին, այսինքն՝ 1. Գուգարքը, 2. Ուտիքը, 3. Արցախը, 4. Փայտակարան-Բաղասականը, 5. Պարսկա-Հայքը՝ Պարսկա-Հայաստանը, 6. Կորճայքը և 7. Աղձնիքը նրա սահմաններից դուրս էին մնում:

Աշխարհացույցը այդ նահանգները դնում է Հայաստանի մեջ, բայց և նշում է, որ Գուգարքը հայերից խլել են վրացիները, Ուտիքը և Արցախը՝ Աղվանքը, իսկ Փայտակարանը՝ Ատրպատականը: Գծվար չէ կոահել, որ նույն ճակատագիրն են ունեցել նաև Պարսկահայքն ու Կորճայքը: Այդ հողերը Հայաստանից անջատվել են Գ դարի երկրորդ կեսին՝ Արշակի անկման ժամանակ՝ Հայաստանի բաժանման նախօրյակին: Փավստոսի վկայությամբ այդ ժամանակ հայերից անջատվեցին 1. Աղձնիքի ըզեշխը, 2. Նորշիրականի, Մահկերտի, Նիխորականի և Գասանի բզեշխը, 3. Գուգարքի բզեշխը, 4. Գարդմանի տերը, 5. Արցախ նահանգը, 6. Տմորիք-Կորդուր-Կորդուենե աշխարհը. ինչպես նաև 7. «ձեռին իշխանութեան սանն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպայական աշխարհան», 8. Մարաց աշխարհը և 9. Կասպից աշխարհը:

Արշակի հաջորդի և որդու՝ Պապի ժամանակ փորձ եղավ հտ գրավելու անջատված երկրները. պատմիչի ասելով՝ վերստին Հայաստանին միացվեցին՝ 1. «զտուն թագավորին Հայոց, որ յԱտրպայականին էր»², 2. Նորշիրական աշխարհը, 3. Կորդուենե-Կորդիք-Տմորիք գավառները, 4. Մարաց հողերը, 5. Արցախ երկիրը, 6. Ուտի, Մահաշեն, Գարդման, Կողթ գավառները, որով և վերականգնվեց

¹ Georg. Cyp. p. 48, ἡ κλεισοῦρα Βαλ-αλ-είων, καὶ ἄρχεται κατὰ τὸ ἄνωθεν μέρος ἢ Μεγάλη Ἀρμενία. Կղեսուրները այն լեռնանցքն է, որ հայերը կոչում էին Չորայն կոյս, Փավստոս, Գ, 6, պարսոյ անէին ի Հայոց կուսէ որ Չորայ կոչեն, դրունս զնէին. Մերեսս, էջ 108, ընդ ճանապարհս Չորոյ յաշխարհն Եւրոպոյ Այժմ այդ լեռնանցքը կոչվում է Ռահվա. Ինճիկյան, Նոր Աշխարհագր., էջ 128, Պարզոյան, Տեղագրութիւնը, էջ 274:
² Փավստոս, Ծ, ք:

Հայաստանի սահմանը Կուրի հոսանքով, ինչպես և էր նախկինում: Այնուհետև՝ 7. Կասպից երկիրը Փայտակարան քաղաքով, 8. Գուգարքը և այդ կողմից Կուր գետը առաջվա նման դարձավ Հայաստանի և Վրաստանի միջև սահման և վերջապես 9. Ազձնիքը: մի խոսքով այն ինը նահանգները, որ թվարկված են վերը և որոնք լուրջ էին Արշակից¹:

Պայ թագավորի ուխտագրուժ սպանությունից հետո Արշակունիների թագավորութունը անշեղորեն զնաց դեպի կործանում, և շուտով Հայաստանը բաժանվեց երկու հավակնորդների՝ Արշակի և խոսրովի միջև: «Եւ ի նոցանէ,—տրտնջում է պատմիչը,—բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անդր, եւ մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսեան թագաւորս»²: Այդ «սակաւ մասն» էլ հենց կազմում էր ետարշակունյաց շրջանի Մարզպանական Հայաստանը:

Աշխարհացույցն էլ, Փավստոսի նման, անշատված գավառները համարում է հայկական, բայց մի տարրերությամբ, որ նրանց շարքում չի հիշատակում «Տուն թագավորին Հայոց, որ յԱտրպայականին էր» և Նորշիրական աշխարհը: Որ հայոց թագավորը Ատրպայատականում մեծ կալվածքներ ուներ, մեզ համոզում են Փավստոսի այն հաճախակի պնդումները, թե Ատրպատականի կողմից Հայաստանի սահմանը հանդիսանում էր Գանձակը, և այստեղ նստում էին հայոց թագավորի սահմանապահ զորքերը³: Ատրպատականի Գանձակը, որ տարբեր է հայկական նույնանուն քաղաքից, ընկած էր Ռւրմիա լճի հարավ-արևելյան կողմում, Մարաղայի և Զենջանի միջև, Թախտ-ի-Սուլեյմանի ավերակների տեղում և Սասանյանների ժամանակ կրոնական շատ կարևոր կենտրոն էր⁴:

Արշակունիների վերականգնման ժամանակ՝ Ք դարի վերջին,

¹ Փավստոս, Գ, Ժ և Ծ, ր—ժզ:

² Նույն տեղում, Զ, ա:

³ Փավստոս, Գ, իա, սահմանապահք թագաւորին հայոց, որ նստէին ի Գանձակ Ատրպատականի», Ծ, ա, «մինչև ի բուն ի սահմանս ի Գանձակ Ատրպատականի», Ծ, դ, «մինչև ի Գանձակ յԱտրպայական ի սահմանս հայոց հալածէին», Ծ, ե, «զնալ ի սահմանս հայոց ի Գանձակէ կուտէ յԱտրպայական սանէ», Ծ, լդ, «մինչև ի Գանձակ սահման երկիրն, որ պարսից կուտէ էր, հայոց սահման էր», հմմտ. Գ, է, «զամենայն երկիրն հայոց... մինչև ի փոքր քաղաքիկն Սատաղու և մինչև ի Գանձակ սահմանս Ատրպատականս»:

⁴ Hofmann, Auszüge p. 250. Nöldeke, Tabari, p. 100.

298 թվականի դաշնագրով Հայաստանի և Պարսկաստանի միջև սահման ճանաչվեց Զինթա քաղաքը: Այդ դաշնագրի կետերից մեկի մեջ ասված է. «Հայաստանի սահմանը պետք է լինի Զինթա ամրոցը, որ ընկած է Մարաստանի սահմանագլխին»¹: Դժբախտաբար Զինթայի տեղը հայտնի չէ: Կարելի՞ է արդյոք այն կապել այժմյան Սիննա քաղաքի հետ, որ գտնվում է Թախտ-ի-Սուլեյմանից հարավ: Ըստ հայկական ավանդության Ատրպատականը հայերին զիջել է պարսից Շապուհ թագավորը. հենց նա էլ կայսեր դեմ մղած պատերազմի ժամանակ հայերի ցույց տված օգնության համար խոստանում է որպես փոխհատուցում Արշակ թագավորին «եւ տաց նմա տուն մեծ, զի յորժամ գնասցէ ի Հայոց դալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչև ի Տիղբոն մինչև առ մեզ համակ չլիւրում տան ազցի, մինչև առ մեզ եկեսցէ»²: Այս խոսքերը, անկախ նրանց հեքիաթային գունավորումից, հաստատում են 298 թվականի դաշնագրի՝ Ատրպատականի հետ ունեցած Հայաստանի սահմանների վերաբերյալ կետը:

Հետո էին տարածվում Հայաստանի սահմանները նաև հարավում: Նորշիրականը, Մահկերտը, Դասանը և Նիխորականը ենթարկվում էին հայ Արշակունիներին: Նրանք ընկած էին հայկական կորդուքից հարավ՝ Ազիարենի եզրին: Այժմ էլ գոյութուն ունեցող Ալիի քաղաքը ընկած էր Կորդուքում կամ Տմորիքում՝ Կորդուքի գավառներից մեկում³: Նշանակում է, հիշյալ գավառները ընկնում էին Ալիից ավելի հարավ, Զեղիր-ի-Թմար քաղաքից ներքև՝ Տիգրիսի մեջ թափվող Խաբուր գետի հովտում: Եկեղեցական հարցերով հայերի հետ հարաբերության մեջ գտնվող գավառների թվում Բաբգն կաթողիկոսի օրոք, Զ. դարի սկզբին, հիշատակվում է Նոշիրականը, ընդ որում, սա համարվում է Նինվեի բաղկացուցիչ մասը⁴: Նինվեն նեստորական հինգ թեմերից մեկն էր, որ ասորիների մոտ հաճախ հայտնի է էդայաբ անունով՝ անցյալի հեղինակների Ադիա-

¹ Petr. Patr. p. 135, Ἀρμενίαν δὲ Ζίνθα τὸ κάστρον ἐν μεθορίῳ τῆς Μηδικῆς καίμεινον ὀρίζειν Կիպրոսի մոտ նշված է Zindu անունով մի վայր, Նինվեից հյուսիս՝ Ակրայի մոտ, բայց հավիվ թե նա որևէ աղբյուր ունի պատմական Զինթայի հետ:

² Փավստոս, Գ, ի և Գ, ժբ, եւ երկրորդական զմեծ տունն տայր նմա յԱտրպատական աշխարհին:

³ Խաբեցացի, Բ ծզ:

⁴ Գիբր զրրոց, էջ 41, քրիստոնեայք Նոշիրականին ի Նինուէ նահանգ:

Պետք է ենթադրել, որ Հայաստանի նկարագրության մեջ շմտած նոշիրահանն ու Նիխորականը ավելի վաղ են անջատվել. Հայաստանը դրանք ընդմիջտ կորցրեց Արշակի գերութունից հետո՝ նրա հաջորդները ամբողջությամբ տիրում էին այն երկրներին, որ Աշխարհացույցը համարում է հայկական: Հենց դրանք էլ կազմում էին Արշակունիների թագավորությունը par excellence: Հայաստանի հետագա բաժանումը Արշակունի երկու արքայորդիների և ապա երկու պետությունների միջև ուղեկցվեց ծայրամասային հոդերի նոր մասնատմամբ, որի հետևանքով Հայաստանը փոքրացավ մինչև մարզպանական սահմանները: Այդ երկու հանգամանքները սրբազարանում են ծայրամասային նահանգների՝ Գուգարքի, Ուտիքի, Արցախի, Փայտակարանի, Պարսկահայքի, Կործայքի և Աղձնիքի առաջացումն այն տեսքով, ինչպես դրանք ընդունված են Աշխարհացույցում: Խոսքն, իհարկե, անվանումների մասին չէ, որոնք շատ հին են, իսկ շատերն էլ նախահայկական ծագում ունեն: Մենք խոսում ենք այդ տերմինների տերիտորիալ բովանդակության մասին Աշխարհացույցի տվյալներով: Հիշյալ նահանգների արտաքին սահմանը որոշվում էր թագավորական շրջանի Հայաստանի առավելագույն սահմանագծով, իսկ ներքինը՝ Մարզպանական Հայաստանի նույնպիսի սահմանագծով: Նրանց միջև գտնվող հողերի շրջանաձև գոտուց կազմվեցին Գուգարք, Ուտիք, Արցախ, Փայտակարան, Պարսկահայք, Կործայք և Աղձնիք նահանգները: Այդ նահանգները միմյանցից բաժանվում էին նրանով, որ պատկանում էին վարչական տարբեր միավորների. այսպես՝ Գուգարքը՝ Վրաստանին, Ուտիքը և Արցախը՝ Աղվանքին, Փայտակարանը և Պարսկահայքը՝ Ատրպատականին և, վերջապես, Կործայքն ու Աղձնիքը՝ Խորվարան քուստակին. մեկը՝ էդայաքին, մյուսը՝ Արվաստանին:

Այսպիսով, պետք է ընդունել, որ ծայրամասային նահանգների տակ պետք է հասկանալ վարչաքաղաքական և ոչ թե եկեղեցական ծագումը: Դրանց բնակչությունը միշտ խառը կազմ ուներ՝ հայ-վրացական, հայ-աղվանական, հայ-պարսկական, հայ-ասորական և հայ-կործայական (քրդական), որի հետևանքով հիշյալ բնույթի տրոհումը ըստ նահանգների պաշտպանվում և արդարացվում էր նաև էթնիկական տեսակետից:

Մայրամասերի անջատումից հետո Մարզպանական Հայաստանի կազմի մեջ մնաց մի երկրամաս, որն ըստ Աշխարհացույցի բաժանվում էր վեց երկրների՝ Այրարատ, Տուրուբերան, Վասպու-

րական, Սյունիք, Տայք և Մոկք: Ինչի՞ վրա է հիմնվում այս բաժանումը: Վերջին երեք նահանգները առաջին երեքից տարբերվում են նրանով, որ գտնվում էին մեկ իշխանական տոհմի տիրապետության տակ. այսպես, Տայքը՝ Մամիկոնյանների, Սյունիքը՝ Սյունիների և Մոկքը՝ Մոկսերի, մինչդեռ Այրարատը, Տուրուբերանը և Վասպուրականը բաժանված էին բազմաթիվ իշխանական տների միջև: Հնարավոր է, որ Սյունիքը և Մոկքը Աշխարհացույցում տրված են այն ծավալով, ինչ ծավալով որ դրանք տվյալ ժամանակաշրջանում հանդիսանում էին համապատասխան իշխանական տոհմերի կալվածքները, այլ կերպ ասած՝ նրանց ծագումը տերունական էր:

Տուրուբերանը Վասպուրականից անջատվել էր 591 թվականի գաշնագրով Հռոմեական և Պարսկական Հայաստանը բաժանող նոր սահմանագծով: Ըստ էության այդ նույն գիծն էլ բաժանում էր Այրարատը Վասպուրականից: Տուրուբերանն ու Այրարատը նույն ժառանգումն ունեն, ինչ IV Հայքն ու Բարձր Հայքը: Այս վերջին գավառները ստեղծվեցին այն հողերից, որ 387 թ., Հայաստանի բաժանման ժամանակ, անցան կայսրությանը, իսկ Այրարատը և Տուրուբերանը՝ 591 թ. կայսրության ձեռք բերած նոր հողերից:

Պարսկական Հայաստանը մինչև 591 թ. իր այն սահմաններում, որտեղ տարածված էր, այսպես կոչված, տանուտերական իրավունքը, հայերի մոտ երբեմն կոչվում էր տանուտերական տուն՝ tanuterakan tun: Հիշյալ ժամանակվանից սկսած՝ տանուտերական տան մի մասն անցնում է կայսրությանը: Պարսկական պալատում տեղի ունեցած խռովությունների ժամանակ արքայորդի Խոսրովը Մորիկ կայսրից օգնություն է խնդրում, որպեսզի ետ գրավի իր հայրենի գահը՝ խոստանալով «տաց քեզ զկողմանս զԱսորոց՝ զԱրուստանն ամենայն մինչև ի Մծբին քաղաք. եւ յերկրէն Հայոց՝ զաշխարհն տանուտերական իշխանութեան մինչև ցԱրարատ եւ զԲուփն քաղաք, եւ ծովուն Բզնունեաց եւ ցԱռեստ աւան»: Երբ Խոսրովը կայսրի օգնությամբ հաստատվեց գահի վրա, կատարեց իր խոստումը՝ «ետ նոցա զԱրուստան զամենայն, մինչև ցՄծբին, եւ զերկիրն Հայոց, որ ընդ իրով իշխանութեամբ էր, զտուն տանուտերական մինչև ցգեան Հուրազդան եւ զգաւառն Կոտէից, մինչև ցաւանն Գառնի եւ ցեզը ծովուն Բզնունեաց եւ ցԱռեստ աւան»:

1 Սեբեոս, էջ 33:

և զԳոգոսիտ զաւառ, մինչև ցՀացիւն և ցՄակու Եվ կողմն Վասպուրական զնդին էր ի ծառայութիւն պարսից արքային¹։

Այս խոսքերի մեջ հստակ դժված են պարսիկների զիջած հողերի սահմանները. կայսրութեանն էր անցնում Պարսկական Հայաստանի ամբողջ արևմտյան կեսը, ընդ որում Կոտայքում Գառնին հանդիսանում էր սահմանագծի վերին կետը, Առեստը՝ ծովի փին՝ ստորին կետը, իսկ Հացիւնը և Մակուն՝ Գոգոսիտի կողմից՝ միջին կետը։ Ուրեմն՝ սահմանագիծը Գառնիից անցնում էր Հացիւնի և Մակուի վրայով դեպի Առեստ։ Գծից դեպի արևմուտք տանուտերական երկիրն էր, դեպի արևելք՝ Վասպուրական զնդի երկիրը. այստեղ պատմիչը կարծես հակադրում է այս երկու տերմինները Վասպուրական—vaspurakan բառի իսկական նշանակությունը պարզվում է vaspurakan hamarakar — վասպուրական համարակար դարձվածքից, որ նշանակում է վասպուրական համարող կամ հարկահավաք, իսկ վասպուրական նշանակում է պարսկական։ Պարսկաստանում վասպուրներ էին կոչվում ազնվական սոսմի անդամները, և մեզ թվում է, որ վասպուրականը վերամբարձ ոճի մեջ կարող էր փոխարինել սովորական պարսիկ արտահայտությունը։ Համենայն դեպս հնարավոր է նաև, որ վասպուրականը հայ հողերի նկատմամբ կիրառելիս հայկական տանուտերական տերմինի համարժեքը լինի։ Փաստորեն տանուտերական էր և, ինչպես երևում է, այդպես էր կոչվում ամբողջ Պարսկական Հայաստանը մինչև 591 թ.։ Տանուտերական հողերի մի մասը հոտոմնեի նանցեկուց հետո, ի տարբերություն հոտմեականի, վասպուրական էր կոչվում պարսիկների ձեռքում մնացած Հայաստանը²։

¹ Սերես, էջ 45, Եվ ոչ թե «զԱռեստան և ցԳոգոսիտ», ինչպես տպագրված է։ Հմմտ. Քովմա Արծրունի «մինչև յԱռեստան և զԿողմիտ»։

² Վասպուրական բառն առաջին անգամ գործ է ածում Սերեսը վասպուրական և սեպհական երկու ձևով, էջ 140։ Միայն մեկ անգամ գործ է ածում Խորենացին, Բ, կր, տե՛ս վերը, էջ 195։ Գլխի բղբոցի մեջ գտնում ենք հետաքրքրական մի կազմություն՝ վասպուրականագույն։ Վրաց Կյուրոն կաթողիկոսը գրում է Սմբատ մարզպանին. «Աստված զբեզ տերանց վասպուրականագոյն արասցէ դաւակաղ հանդերձ», էջ 170։ Կյուրոնը աղոթում է Աստուծոն, որպեսզի Սմբատը լինի ոչ թե հասարակ տեր, այլ տերանց տեր։ Վասպուրականագոյնը համարոք է տերագոյն արտահայտությանը, և թե հնարավոր է այսպիսի կազմություն։ Այս բանը հիմք է ծառայում մեր այն ենթադրությանը, թե վասպուրականը և տանուտերականը հոմանիշներ են։

Տանուտերական երկիրը Վասպուրականի զնդի նման երբեմն կոչվում է տանուտերական գունդ։ Գունդը իրապես համապատասխանում է բյուզանդական Θ έ μ α-ին և նշանակում է զինվորական ուժերի որոշ քանակ։ Նույնիսկ Դիլի և Գեյցերի մանրագրերին հետազոտությունից հետո էլ Բյուզանդիայում թեմերի կազմակերպության ծագումը չի կարելի վերջնականապես պարզված համարել¹։ Պատմական ավանդությունը թեմերի սկզբնավորումը հասցնում է Հերակլ կայսրի ժամանակները, իսկ գիտնականները ենթադրում են, որ հիշյալ կազմակերպության համար ելակետ են ծառայել Մորիկ կայսեր Իտալիայում և Աֆրիկայում հիմնած էքզարքությունները։ Մենք այն տեսակետին ենք, որ թեմերը, որպես զինվորական կազմակերպություն, որը դուրս մղեց քաղաքացիական վարչությանը, պետք է լուսաբանվեն՝ կապված Պարսկաստանում զնդերի հաստատության հետ։ Գիտնականների հետազոտության համաձայն Θ έ μ α բառը միաժամանակ նշանակում էր և պրովինցիա և այնտեղ կանգնած բանակի կորպուսը. ընդ որում սա վերաբերում էր բանակի կորպուսին, անկասկած, ավելի շուտ, քան այն սկսեց գործածվել պրովինցիա իմաստով²։ Այս երկակի նշանակությամբ Θ έ μ α բառը կարելի է համեմատել իրանական gund-ի հետ։ Մահմեդական հեղինակները վկայում են, որ Պարսկաստանում գոյություն ունեւր զինվորական ճամբարների հաստատություն, որոնց վրա էր հիմնված պարսից հզորությունը և ռազմական փայլը։ Դրանք կոչվում էին gundjāigāh կամ ramm: Ըստ որոշ տեղեկությունների զնդերի համար հինգ զորակայաններ կային, իսկ ըստ մի այլ տեղեկության՝ չորս³։ Գնդերը, ըստ երևույթին, այն ուժերն էին, որոնք գտնվում էին սպահնեղների հրամանատարության տակ։ Զինվորական ճամբարները Պարսկաստանում իրենց գոյությունը պահպանեցին մինչև թուրքական արշավանքները, որոնք առաջին անգամ ոչնչացրին դրանք, որպեսզի վերջնականապես խորտակեն պարսիկների ուժը։ Գիտնականները չեն ժխտում, որ թեմական կազմակերպությունը թեև իր լրիվ արտահայտությունն է գտնում Լևոն Գ-ի ժամանակ (716—741), բայց նրա սաղմերը նկատվում են դեռևս

¹ Ch. Diehl, l'Origine du régime des thèmes dans l'empire Byzantin: H. Gelzer, Die Genesis der Byz. themenverfassung.

² Diehl. op. cit. p. 12.

³ Justi, Geschichte Irans. Grund. d. Ir. Phil. II, p. 469.

Ձ դարում: Գունդը, զորամասի, գնդի իմաստով, սովորական բառ է հին հայ հիշատակարաններում, իսկ աշխարհագրական նշանակությունը սա առաջին անգամ հանդիպում է Ձ և է դարերի հեղինակներ Ղազար Փարպեցու և ապա Սեբեոսի մոտ: Այս տվյալները ցույց են տալիս թեմի և գնդի հարադատությունը:

Տանուտերական և վասպուրական երկրները, հավանաբար, հայկական կամ պարսկական որոշ զորամասերի համար ծառայում էին որպես զորակայաններ և այդ պատճառով էլ կրում էին նաև գունդ անվանումը: Համապետական կազմակերպության իրազարմությունները հաճախ անդրադառնում էին Հայաստանի և առհասարակ Պարսկաստանին հպատակ երկրների վարչակարգի վրա:

Տանուտերական երկիրը բազկացած էր երկու կեսից, որոնք կոչվում էին գլխավոր բազկացուցիչ նահանգների անունով՝ Այրարատ և Տարոն կամ Տարուբերան: Վասպուրականը կամ Սեպուրկանը նույնպես բաժանվում էր վասպուրական գավառի նեղ իմաստով և Մարգսետականի:

Հիշյալ նահանգական բաժանման համար հավանական առիթ է ծառայել Հռոմեական Հայաստանի նահանգների վերակառուցումը: Հուստինիանոսյան IV Հայքը նոր հողամասեր ձեռք բերելու հետևանքով 591 թվականին փոփոխություն կրեց: Աղծնիքի կայսրությունն անցնելով, Սոփանենեն Ամիդի շրջանի հետ միասին կազմեց նոր նահանգ՝ Վերին Միջագետք կամ IV Հայք անունով, իսկ նախկին IV Հայքը ներքին Հայքից վերցված Խորձայն և Մուզուր գավառների հետ կազմեց մի եպարքություն, որ կոչվեց Հուստինիանոսյան կամ Մյուս IV Հայք: Առաջինի մայրաքաղաքն էր Ամիդը, իսկ երկրորդինը՝ Գաղիմը: Այս բաժանումը պահպանվել է Գևորգ Կիպրացու աշխատության մեջ¹: Աշխարհա-

ցույցի IV Հայքը տարբերվում է Գևորգ Կիպրացու համանուն նահանգից նրանով, որ այնտեղ չկա Մուզուրը, իսկ IV Հայքը կամ Վերին Միջագետքը Աշխարհացույցում կրում է գլխավոր բազկացուցիչ երկրամասի՝ Աղծնիքի անունը, ընդ որում նրա մեջ մտնում է ոչ թե ամբողջ Սոփանենեն, այլ միայն այն մասը, որ ընկած է Տիգրիսի ձախ ափին և կոչվում է նեփրես, իսկ Տիգրիսի աջ ափը՝ մինչև Բնաբեզ, դուրս է գցված:

Այս բոլոր փոփոխությունները և Աշխարհացույցի շեղումները Գևորգ-Կիպրացուց հայկական հողում տեղի ունեցան 591 թվականից հետո:

Այսպես է պատկերանում մեզ Հայաստանի նահանգական բաժանման ծագումը, որ ներկայացված է Աշխարհացույցում: Նրա վերջնական հաստատումն ու ամրապնդումը տեղի է ունենում Ձ դարից հետո ընկած ժամանակաշրջանում: Մինչ այդ Հայաստանը բազկացած էր մեծ և փոքր շրջանների մի ամբողջ ցանցից՝ բնական սահմանների և այլ պայմանների համապատասխան: Պարսկական պետական իշխանության տեսակետից այդ բոլորը միասին կազմում էին մեկ վարչական միավոր՝ Մարզպանական Հայաստան: Նշված տերիտորիալ մասնատվածությունը բխում էր երկրում տիրող սոցիալ-քաղաքական վարչակարգից՝ նախարարու-

¹ Geor. Cyp. p. 46, ἐπαρχία Μεσοποταμίας ἔνω ἦτοι Ἄ Ἀρμενίας, Ἀμιδα μητρόπολις. p. 48, ἐπαρχία Ἄ Ἀρμενίας ἄλλης, Δαδίων νῦν μητρόπολις: Վերին եպարքության ներկայացուցիչ եղևան 692 թ. եկեղեցական ժողովում կոչվում է ἐπίσκοπος Δαδίων μητροπόλεος τῆς Ἄ Ἰουστινιανῆς Mansi, XI p. 992: Հայ պատմիչ Հովհաննես կաթողիկոսը հիշատակում է այդ փոփոխությունների մասին, ընդ որում Iustiniana-ն թարգմանում է Յուստ<ին>իանուսիսա բառով, էջ 47: Գեղցիքը՝ հենվելով Հովհաննես կաթողիկոսի վկայության վրա, IV Հայքի, որ կոչվում էր նաև Վերին Միջագետք, մայրաքաղաք է համարում Մարտիրոսուպոլիսը, Ամիդի փոխարեն, op. cit, p. 68, մինչևն այդ այդպես էր նախկինում՝ մինչև նշված փոփոխությունները:

Գ Լ ՈՒ Խ X

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Առաջադրված խնդրի սահմանները: Պատմագրական տեղեկություններ Եւրասիական տարածքի Բալթիկի մասին: 900 կամ 400 տոնների գոյություն մասին եղած կարծիքը և Երա անհիմն լինելը: Փաստական ավյալներ Եւրասիական հարստությունների (դինաստիա) մասին, պատմիչների մաս և եկեղեցական ժողովների արձանագրություններում պահպանված նյութերը և Երանց ընդհանրացումը: Գանձամակ և Զորանամակ, հայ հին մատենագիրների տեղեկությունները Երանց մասին: Նրանց գրական վերլուծությունը: Գանձամակի կազմը Զորանամակի համեմատությամբ: Գանձամակի տարբերակները և Երանց նշանակությունը: Խորհնացու ավյալները Եւրասիական մասին, դրանց բաղադրումը Գանձամակի հետ: Երկու փաստաթղթերի գույքությունը և Խորհնացու վերաբերմունքը դրանց նկատմամբ: Խորհնացու՝ դրանց հետ ծանոթ լինելու հետքերը: Գանձամակի և Զորանամակի պատմական վեճությունը: Գանձամակի կենցաղային հիմքը—գանձեցություն (բարձակություն) հաստատություն, Երա կենսունակությունը միևնույն Մասնականների անկումը է դարձում: Զորանամակի կենցաղային հիմքը—գինվորական ծառայությունը և Երանով պայմանավորված Եւրասիական հեծելազորի հաշվեգրումը միևնույն դարի սկիզբը: Զորանամակի հիմնական գծերը, շփման կետերը Զենոն Գլակի և Խորհնացու հետ: Պատմական տեղեկանք հայկական հեծելազորի Բալթիկի մասին: Ընդհանուր հետևություն: Քննարկվող փաստաթղթերի գրական ծագումը: Գանձամակի աղբյուրները: Զորանամակը և r a m a k a n nama-ն:

Նախարարական վարչակարգը Հայաստանում գոյություն ունեւր հնագույն ժամանակներից միևնույն մոնղոլների արշավանքը: Տեղի և ժամանակի պայմաններում զարգացող բոլոր մյուս երևույթների նման նախարարությունն էլ հաճախ իր բնույթով փոփոխվել է՝ վերապրելով զարգացման մի քանի փուլեր: Արշակունիների օրոք մշակված նախարարական կարգ ու կանոնը շարունակվեց համարյա անփոփոխ գործել և՛ Մասանյանների, և՛ Հուստինիանոսի զարաշրջանում: Մարզպանական կամ Տանուտերական Հայաստանի մեծ մասի

կայսրերի իշխանության տակ ընկնելու ժամանակներից, մոտավորապես 628 թվականից, երբ պարսիկները վերջնականապես հրաժարվեցին նրանից, սկսվում է Արշակունյաց շրջանին բնորոշ նախարարության քայքայումը: Արաբների դաժան և սկզբում թշնամական քաղաքականությունը նախարարության նկատմամբ նպաստեց այդ քայքայմանը: 705 թվականի Նախիջևանի աղետը շանթահարեց նախարարությանը և խարույկների ու կախաղանների միջոցով ոչնչացրեց հայ աղնվականության ծաղիկը: այդ հարվածը նախարարությունները ուժասպառ անելու պատմության մեջ հանդիսացավ շատ վճռական պահ և, թերևս, կարող է համեմատվել միայն արաբ ոստիկան թուրք Բուղայի Թ դարի կեսերին կազմակերպած ջարդի հետ:

Խորհնացու «Հայոց պատմությունը» հեղինակի հետապնդած պատմական խնդիրների բնույթով և էությունով զուգահեռում է նախարարության Արշակունյաց նորմերի քայքայման ժամանակաշրջանին: Այդ աշխատությունը նախարարության պատմությունը շարադրելու առաջին փորձն է: Նա պատմական մյուս հուշարձաններից տարբերվում է նախ և առաջ հեղինակի սուբյեկտիվ վերաբերմունքով դեպի իր շարադրության առարկան: Խորհնացին հասարակ պատմիչ չէ, որ վաղուց անցած-գնացած օրերի դեպքերը շարադրում է պարզամտորեն, այլ գերազանցորեն քննադատ է և հետազոտող, նա ոչ միայն պատմում է, այլ աշխատում է հասկանալ ու բացատրել երևույթները, որի ընթացքում երբեմն ավելորդ ծայրահեղությունների մեջ է ընկնում: Որպես նախարարությունների պատմիչ նա իր առջև դրված խնդրին նայում է հեռանկարային տեսակետից՝ փորձելով նրանց ծագումը պարզաբանել պատմական անցյալի լույսի տակ:

Կյանքում գործող երևույթներն ու հաստատությունները, քանի դեռ դրանք կենդանի ու կենսունակ են, կարիք չունեն կանոնակարգության և մեկնաբանության, բայց դրանք անխուսափելիորեն գառնում են հետազոտության առարկա, երբ իրենց դարն ապրում են, երբ նրանք սկսում են խամբել կյանքում ու մարդկանց հիշողության մեջ և աստիճանաբար հեռանալով՝ դառնում են անցյալի սեփականություն: Այս տեսակետից «Հայոց պատմությունը» նրա հեղինակի քննական ոգու շնորհիվ նշանավորում է անկման շրջանը, երբ նախարարական կյանքի նախկին հենարանները խախտվել են, պատմական չափանիշները քայքայվելով՝ կենդանի իրական

նությունից անցել էին հիշողությունների և ավանդությունների գիրքը: Այդ վիճակը հարազատորեն բնորոշել է ինքը՝ Խորենացին, որ առաջին Արշակունու բերանով հարց է տալիս. «Ուստի նախարարութիւնքս որ աստ կան. զի ոչ կարգք ինչ լեալ աստ յայտնի... եւ ոչ զլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է եւ ոչ վերջինն, եւ ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն եւ վայրենի»¹:

Խորենացու ասելով, այս վիճակի մեջ գտավ Հայաստանը Արշակունյաց հարստության հիմնադիրը, որը Հայաստան գալով, կամեցավ ծանոթանալ իրեն վստահված երկրին, ինչպես և այնտեղ պոյություն ունեցող նախարարական կարգուկանոնին: Հասկանալի է, որ դա թագավորի ցանկությունը չէր, այլ իր իսկ պատմիչի հետաքրքրասիրությունը, և այն վիճակը, որ նկարագրված է այստեղ, բուրրուի են էլ չի վերաբերում Հայաստանում Արշակունիների հայտնեցնելու ժամանակին, այլ պատմիչի ժամանակվա իրականության ճշմարտացի պատկերն է:

Քանի որ «Հայոց պատմությունը» սերտորեն կապված է այն ժամանակաշրջանի հետ, որը մենք նկատի ունենք իբրև նախարարության մասին ներկա հետազոտության վերջին սահման, ապա նրա սովախները մեզ համար կարող են ելակետ ծառայել առաջադրված խնդիրը կատարելիս:

Թե ինչպես է լուծել «Պատմության» հեղինակը իր առաջ դրված հարցերը, կտեսնենք ստորև, իսկ մինչ այդ մենք կաշխատենք այդ հարցերին պատասխանել ինքնուրույն, առանց նրա օգնության և այն նյութերի հիման վրա, որոնք նրան ևս ծանոթ են եղել: Քննության առնենք նախ և առաջ հարցի կոնկրետ կողմը՝ նախարարական տոհմերի քանակը և երկրում նրանց տեղադրությունը:

Որոշ հետազոտողներ ենթադրում են, որ Հայաստանում Արշակունիների ժամանակ գոյություն են ունեցել մինչև 900 իշխանական տոհմեր. այդ կարծիքը հիմնված է թյուրիմացության և պատմական մի վկայություն ոչ այնքան ճիշտ հասկանալու վրա:

Փավստոսը պատմում է, որ Արշակը գահ բարձրանալով, ձեռնարկեց երկրի շինարարությանն ու պետական կյանքի վերա-

¹ Խորենացի, Ա, Թ:

կանգնմանը, որ խախտվել էր իր նախորդի ժամանակ: Նրա քանքերի շնորհիվ երկիրը կարծես վերածնվեց և նախկին կերպարանքն ստացավ: Ամեն ոք գտավ իր տեղը. «մեծամեծքն յուրաքանչիւր գահու եւ զործակալն յուրաքանչիւր շահու»: Հազարապետի պատասխանատու պաշտոնը թագավորը հանձնեց Գնունիների տոհմին, իսկ սպարապետությունը՝ Մամիկոնյաններին, ապա անմիջապես հաջորդում են պատմիչի հետևյալ խոսքերը. «եւ այլ յայսմ ազգաց եւ ի իոննարհ՝ որ զործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի զուխ բազմէին, թող զնահապետս մեծամեծս եւ զտանուտեարս, որք զործակալք միայն էին ինն հարիւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց, թող զտեղայս զործակալութեանն սպասու»¹:

Պատմիչը նահապետներին ու տանուտերներին տարբերում է զործակալներից, այսինքն՝ ծառայողներից կամ աստիճանավորներից: Գնունի և Մամիկոնյան իշխանները, ստանձնելով հազարապետի և սպարապետի պաշտոնները, զբաղվելով իսկ դառնում էին զործակալներ՝ պետական ծառայության մարմիններ: Այդ կարգի զործակալներ Արշակի պալատում 900 հոգի էին, որոնք ունեին իրենց բարձ-բազմոցը թագավորի սեղանի շուրջը, բացի նրանցից, որ ոտքի վրա կանգնած էին լինում: Ծիշտ է, պալատական ծառայության էին կոչվում, ինչպես երևում է պատմիչի խոսքերից, ազնվականները և միևնույն անձը միաժամանակ կարող էր լինել և՛ նահապետ, և՛ զործակալ, բայց այս դեռ չի նշանակում, որ զործակալ-աստիճանավորները թվում այնքան էին, որքան նախարարական տոհմերը, քանի որ այդ նույն տոհմից կարող էին ծառա-

¹ Փավստոս, Գ, բ: Տպագիր հրատարակության մեջ կետադրությունը ճիշտ չէ, որի հետևանքով սորք զործակալք միայն էին» խոսքերը կարող են սխալմամբ վերագրվել նախորդ թեոլ զնահապետս և այլն դարձվածքին: Իրականում դրանք միայն «որ զործակալս անուն բարձիւք» և այլն նախադասության կրկնությունն են, որ տեղի է ունեցել «թող զնահապետս...» միջանկյալ դարձվածքի հետևանքով: Բացի այդ, «բազմակալացն» պիտի կարգալ «բազմակալացն», որ նշանակում է խնջույք և բազմոց, արոտ, այստեղից էլ «բազմակալաց կարգելոց» կարող է նշանակել կամ կազմակերպվող խնջույքներ կամ շարված բազմոցներ: Հմմտ. Փավստոս, էջ 172 սի-տախտին արկանել բազմակալս և շարունակությունը: Ինչ վերաբերում է «զործակալութեան սպասու» արտահայտությանը, ապա այն այսպես, ինչպես մեզ թվում է, մեկ հասկացողություն է, և նշանակում է զործակալված պաշտոն և ոչ թե սպասավորություն սեղանի շուրջը:

յության մտնել մի քանի հոգի: Պատմիչին այսպես հասկանալու դեպքում 900 իշխանական տոհմերի գոյության մասին եղած կարծիքը բուրրովին զրկվում է հիմքից:

Հայ գրականության մեջ հայտնի է մի հուշարձան «Վարք Ներսեսի», որը եթե քաղվածք չէ Փավստոսի աշխատությունից, ապա սրա հետ միասին ծագում է մի ընդհանուր աղբյուրից և Փավստոսից տարբերվում է նրանով, որ փավստոսյան Արշակի փոխարեն առաջին պլան է քաշված վերջինիս ժամանակակիցն ու թշնամին՝ Ներսես կաթողիկոսը, որի շուրջն էլ պտտվում են դեպքերը:

«Վարքի» մեջ նախարարական գահերի վերականգնումը, ինչպես որ պետք էր սպասել, վերագրվում է Ներսես կաթողիկոսին, և համապատասխան բարձրի թիվն էլ ոչ թե 900 է, այլ 400- «նեբուէս կարգէր ի ժամ ճաշոյն ի սեղան արքային Արշակայ բարձաչորեհարի» և «Վարքի» հեղինակը անմիջապես փորձում է տալ բոլոր գահերի ցանկը, բայց թվելով 132 անուն (և 13 անուն էլ գահերից դուրս) վերապահում է անում. «և այլ և յլով, զոր ծանր համարեցայ արկանել ընդ գրով» և կրկին հաստատում է, որ բոլոր բարձրի թիվը 400 էր, և որ դրանք Ներսեսի հրամանով հաստատված էին Արշակ թագավորի կողմից¹:

400 բարձրի մասին տեղյակ է նաև համեմատաբար ավելի ուշ շրջանի՝ ԺԳ դարի պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը. նրա տրված յալներով գործի նախաձեռնողը եղել է ոչ թե Ներսեսը, այլ Գրիգոր Լուսավորիչը. «Գրիգորիս հրամայէ մեծին Տրդատայ կարգել զթագավորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն յունաց և տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի գահ և պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ. որ և զեղեցկապէս յօրինեալ ի ժամ ճաշոյն նստել բարձաչորեհարիւր իշխանաց»²:

Թովմա Արծրունու մոտ հանդիպում ենք մի հետաքրքրական վկայության. նա ասում է, որ Սմբատ Բագրատունի թագավորը Վասպուրականի իշխաններից մեկին շնորհել է «զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ»³:

1 Սոփիբ, 2:
2 Ստեփաննոս Օրբելյան, 2:
3 Թովմա Արծրունի, էջ 239:

Այս քաղվածքից կարելի է եզրակացնել, որ դեռևս Թովմա Արծրունու ժամանակ, ժ դարում Գահնամակի կամ բարձրի ցուցակի ծագումը կապվում էր Տրդատի անվան հետ:

Թվում է, թե զորո՞ւ ունենք մի հին ավանդույթի հետ, որ պետք է հաշվի առնել, մինչդեռ իրականում այդ ամենը հիմնված է մի ցավալի թյուրիմացության վրա: Զենոբ Գլակը պատմում է, որ Տրդատի օրոք հյուսիսի թագավորը ասպատակեց Վրաստանը և ավերեց ամբողջ երկիրը՝ մինչև Կարին: Վրացիների խնդրանքով Տրդատը նրանց օգնության ուղարկեց հայկական մի զորախումբ: Հայերը հաղթեցին թշնամուն և հալածեցին լեռնականներին, ընդ որում գերի վերցրին երեք իշխաններ ի շորս հարյուր ընտրյալների ու բերին թագավորի մոտ: Նրանց բանտարկեցին Ողական ամրոցում, և երբ Տրդատը Տարոնից ուղևորվեց Ապահոնիք, իր հետ տարավ «վիշխանսն՝ որք էին ի բերդն Ողկան և զզորեհարեւր արսն ի դիւանն արքունի տայր արկանել»¹: Այս պատմության ընթացքին անուշադիր վերաբերվելու դեպքում պատմիչի խոսքերը կարող են այն իմաստով հասկացվել, թե բոլոր 400 գերիները բարձրացվեցին իշխանական աստիճանի: Այստեղից հետո չէ մինչև այն առասպելը, որ գոյություն են ունեցել 400 իշխանական բարձր, և Տրդատն էլ եղել է դրանց հաստատողը: Զարմանալի չեն նման թյուրիմացությունները, որովհետև օտարազգիների արշավանքների հետևանքով հայերի զարգացումը այնպիսի ընդհատումներ էր ունենում, որ նույնիսկ ամենամոտիկ սերունդը երբեմն իրեն նույնքան անօգնական էր զգում մոտավոր անցյալի շատ հարցերում, որքան և մենք այսօր. հարկ էր լինում կռահել ու մեկնաբանել, իսկ այդպիսի դեպքերում հնարավոր, նույնիսկ անխուսափելի են սխալներն ու վրիպումները:

Այսպիսով, 900 կամ 400 նախարարությունների հարցը բոլորովին վերանում է: Այդ թվերը չեն արդարանում Հայաստանի նախարարությունների քանակին վերաբերող նաև այլ տվյալներով:

Արար հեղինակ Յակուբին, որ ապրում էր Պ դարում, հայտնում է, որ իշխանությունների թիվը Հայաստանում հասնում էր 113-ի: Յակուբին, թեև սպահանցի էր, բայց, իր իսկ խոսովանությամբ, երկար ժամանակ ապրել է Հայաստանում և նույնիսկ մի

¹ Զենոբ Գլակ, էջ 43, ածին ընդ ինքեանս երիս իշխանս և շորեհարիւր արքաբր. նաև էջ 49:

քանի թագավորների և կառավարիչների քարտուղար է եղել: Դրանով էլ հենց նրա վկայությունները առանձնակի արժեք են ստանում: Պետք է, սակայն, վերապահում անել, որ մահմեդական հեղինակները Հայաստան ասելով հասկանում էին ոչ միայն Հայաստանը, այլ նաև Առանը և Վրաստանը: Ի թիվս 113 իշխանությունների Յակուբին, օրինակ, այսինների և Բար-ուլ-աբվաբի միջև մտցնում է Սահիբ-ա-սեբիբի իշխանությունը, իսկ Առանը համարում է Հայաստանի առաջին իշխանությունը²: Քանի՞ իշխանություններ էին գտնվում բուն Հայաստանի սահմաններում, մնում է վիճելի, համենայն դեպս միայն Հայաստանին վերագրված 113 թիվը ենթակա է կրճատման:

Արաբ հեղինակի վկայությունը շատ մոտ է իրականությանը. այդ բանում մեզ համոզում է գործի փաստական կողմը՝ պատմական գրականության մեջ գոյություն ունեցող նյութերի քննությունը. վերջիններս զխավորապես քաղված են պատմական աշխատություններից և հատուկ փաստաթղթերից, այսպես կոչված Գահնամակներին:

Դրանցից առաջին տեղը զբաղում են Փարպեցու և Նղիշեի գործերը, որոնք հարուստ նյութ են պարունակում նախարարական անվանացանկի մասին: Ղազար Փարպեցու մոտ կա իշխանների մի քանի ցուցակ, այսպես՝

1. 450 թվականին պարսից թագավոր Հազկերտին ուղղված պատասխան նամակը կազմելու համար հավաքված ժողովի մասնակիցների ցուցակը³:

¹ Յակուբիի աշխատությունը մեզ ծանոթ է այն քաղվածքներից և հատվածներից, որ գտնում ենք ուրիշ հեղինակների մոտ: Մեջբերված տեղեկությունները վերցված են Իրն-ալ-ֆակիհից, որ գրեթե ժամանակակից է Յակուբիին, de Goeje, Geog. V, p. 281: Караулов, Сбор. Каб. XXXI, p. 23. *ان عدا مجال كها ماثا*, 23. *وذكره ان عدا مجال كها ماثا* 23. *وذكره ان عدا مجال كها ماثا* 23. Յակուբիի մոտ VIII դ. (էջ 13) 113 իշխանություններ, 113-ի փոխարեն: Ըստ Արևելյանի սա էլ ազդվել է Յակուբիից:

² Սահիբ-ա-սեբիբի նշանակում է զահի տիրակալ: Ըստ ավանդության պարսից ոսկե դահլիճ Սասանյանների անկումից հետո անցավ Վահրամ Զուբինի ժառանգներից մեկին, որը այն իր հետ տարավ և իշխեց մի երկրում, որ արաբները զահի անունով կոչում են *جرجان*: Մովսես Կաղանկատվացու ասելով՝ Վահրամ Զուբինի հետնորդները հաստատվեցին Առանում, և նրանցից էր սերում Զիվանչիբը, նկատի ունենալով այս՝ Սեբիբը կարելի է նույնացնել Առանի կամ, ավելի ճիշտ, նրա հյուսիսային մասի հետ:

³ Փարպեցի, էջ 45:

- 2. Հազկերտի մոտ կանչված անձանց ցուցակը¹,
- 3. Վասակի կողմնակիցների ցուցակը²,
- 4. Վարդանի համախոհների ցուցակը, որոնք ընկան 451 թ. ճակատամարտում³:

5. Ապստամբության այն մասնակիցների ցուցակը, որոնց գերի վերցրին պարսիկները⁴:

Առաջին ցուցակից բացի, մյուս բոլոր ցուցակները կան նաև Նղիշեի Պատմության մեջ, ընդ որում այնպիսի ճշտությամբ, որ նույնիսկ հերթականությունը երկու պատմիչների մոտ համընկնում է: Նղիշեն առաջարկում է նաև Վարդանի համախոհների մի հատուկ ցուցակ⁵, որ չունի Փարպեցին և երկրորդ անգամ մեջ է բերում Վասակի համախոհների ցանկը մի այլ խմբագրությամբ⁶: Հարևանցիորեն նկատենք, որ Փարպեցու համեմատությամբ այդ շեղումները շափազանց կարևոր են Նղիշեի գործի քննության համար: Հիշյալ նյութերը ամփոփելու համար իբրև հիմք ընդունենք Ղազար Փարպեցու մոտ տրված ժողովի մասնակիցների ցուցակը և այն լրացնենք մյուս ցանկերով.

1. Սիւնեաց	Վասակ	Իշխան
Արծրունեաց	Ներշապուհ	Իշխան
Մաղխազ	Վրիւ	Իշխան
Մամիկոնէից	Վարդան	Իշխան
5. Վահեունեաց	Գիւտ	Իշխան
Մոկաց	Արտակ	Իշխան
Անձնացեաց	Շմաուն	Իշխան
Ապահունեաց	Մանէն	Իշխան
Վանանդայ	Առաւան	Իշխան
10. Արշարունեաց	Արշաիր	Իշխան
Ամատունեաց	Վահան	Իշխան
Գնունեաց	Ատում	Իշխան
Պալունեաց	Վարազշապուհ	Իշխան

¹ Փարպեցի, էջ 47 = Նղիշե, էջ 76:

² Նույն տեղում, էջ 67 = Նղիշե, էջ 136:

³ Նույն տեղում, էջ 72 = Նղիշե, էջ 225:

⁴ Նույն տեղում, էջ 86 = Նղիշե, էջ 369:

⁵ Նղիշե, էջ 185:

⁶ Նույն տեղում, էջ 172—173:

Աշոցայ	Հրահատ	Իշխան
15. Գիմախենից	Հմայեակ	Իշխան
Աբեղենից	Գագրիկ	Իշխան
Առանդենից	Փափագ	Իշխան
Զինական	Վրէն	Իշխան

Այստեղ թվարկված են իշխանական տոհմերից ամենանշանավորները. չեն հիշատակված Ռշտունիների ու Քաղբատունիների ներկայացուցիչները, որոնք, չհամակրելով շարժմանը, չներկայացան ժողովին, Ռշտունին հիշատակվում է Պարսկաստան կանչված իշխանների ցուցակում՝

Ռշտունեաց	Աբտակ	Իշխան:
Երրորդ ցուցակից պետք է նշել.		
20. Քաղբատունեաց	Տիրոց	Իշխան
[Գ]արեղենից	Արտէն ¹	Իշխան
Ուրծայ	Ներսէն	Իշխան:

Զորրորդ ցուցակից.		
Գնդունեաց	Տահատ ²	Իշխան
Քաղբերունեաց	Ներսէս	Իշխան
25. Ընծայնոյ	Արսէն	Իշխան
Սրուանտայ	Գարեգին	Իշխան:

Վերջին ցուցակից ³ .		
Տաշրաց	Վրէն	Իշխան
Արծրունեաց II	Ապրսամ	Իշխան
Մանդակունեաց	Մահակ եւ Փարսման	Իշխան
30. Ռոփսենից	Բարիկ եւ Յոհան	Իշխան:

¹ Բնագրում Աբեղեան, փոխանակ Գ-արեղեանի, ինչպես ճիշտ կերպով գրված է 73-րդ էջում, համաձայն Եղիշեի էջ 173-ի, որտեղ ընթերցվում է Արտէն Գարեղեան: Աբեղեանների ներկայացուցիչն էր Գաղբիկը: Վասակի կողմնակիցների ցուցակում նշված է Գաղիշոյ նորխոռունի: Այս ազգանունը վերը նշված է իրենց տոհմիցան մաղխազ տիտղոսով: Նրանց ներկայացուցիչ նորինը մեկ կոչված է մա <ղ>խազ, էջ 72, իսկ թիչ հետո նույն էջում՝ նորխոռունի:

² Գնդունեաց, էջ 67, և Գնթունեաց, էջ 75:

³ Տաշրաց(եաց), էջ 86 և Տաշրայ, էջ 75, ճիշտ է՝ Տաշրաց: Եղիշեի մաս, էջ 370, Ռափսունեան, Սոփիրբում(Ձ)՝ Առոփսունիք, էջ 35 և Ռափսեանք, էջ 36: Արծրունի երկու անիք, մեկի ներկայացուցիչն էր Ներշապուհը, Փարսպեցի, էջ 47, որ նշված է վերը, իսկ մյուսինը՝ Ապրսամ, Փարսպեցի, էջ 86, նաև էջ 75:

Եղիշեի ինքնուրույն ցուցակներից¹.

Ակէոյ	Ընշուզ	Իշխան
Սահառունեաց	Կարէն	Իշխան
Սլկունի	Այրուկ	Իշխան
Քոզեան		Իշխան
35. Տրպատունի		Իշխան

Փարսպեցին Վահան Մամիկոնյանի պատմության մեջ, բացի նըշվածների հետ ընդհանուր անուններից, հիշատակում է նաև².

Երուանդունի	Ներսէն	Իշխան
Առակունեաց	Պապ	Իշխան
Արշամունեաց	Խուրս	Իշխան
Առանեան	Քոնք	Իշխան
40. Յովսէպեան	Ներս	Իշխան
Կարհային	Վասատուր	Իշխան
Աղբերկացի	Առաւան	Իշխան
Մարզպետական	Պանոկ	Իշխան

¹ Ակէոյ իշխանը Վասակի համախոհների ցանկում է, էջ 170: Այստեղ նշված է նաև Արտակ Ռշտունին, որը ցույց է տալիս, թե Ռշտունիները Վասակի համախոհների թվում էին: Վարդանի կողմնակիցների ցուցակը Եղիշեի մաս բովանդակում է ընդամենը 26 անուն, որոնցից 20-ը ծանոթ են ուրիշ ցանկերից: Սահառունի հանդիպում ենք Փարսպեցու մոտ Վահան Մամիկոնյանի պատմության մեջ, էջ 125 և 144: Սրանցից խոսքով Գարեղեանը պետք է ուղղել Գաղբիկ Աբեղեան, ըստ Փարսպեցու, էջ 45 և 58: Գարեղեանները Վասակի կողմնակիցների բանակում էին: Գաղբ-իկը = Եղիշե արդյո՞ք խոսքով անվան բարբառային ձևը չէ. հմտ. ինչպես Եղիշեի Յոխնան, էջ 370, նույնն է Փարսպեցու Յոհանի հետ, էջ 86:

² Փարսպեցի, էջ 127, 129, 149, 153 և 163: Կարհայինը հավանորեն պետք է կարգաւ շարհային: Վերը նշված մյուս իշխաններից հանդիպում են՝

- | | |
|---|-----------------------------|
| 1. Մամիկոնեան Վահան, Վասակ, Արտաշէս, Վարդ, Մուշեղ | 9. Գնթունեաց Վանդոշ |
| 2. Սլկնի Բարիկ, Բարդէն, Գղիհոն | 10. Արծրունի, Յաշկուր |
| 3. Ամատունի Առնակ, Վարաղապուհ | 11. Անձեւացիք Սեուկ և Յոհան |
| 4. Մալխազ Գաղիշոյ, Գարշոյլ | 12. Մոկաց Յոհան |
| 5. Ուրծայ, Կողթիկ, Վարաղեբրտէհ | 13. Ռշտունեաց ազատորեար |
| 6. Բաղբատունի Սահակ | 14. Վահեւունի Բաշղ |
| 7. Կամսարական Հրահատ, Ներսէհ, Սահակ | 15. Պալունի Փապակ |
| 8. Գնունեաց Ատոմ եւ Առաստոմ | 16. Վանանդացի Վրէն, Ազգէն |
| | 17. Գարեղենից Մատոյ, Գարազ |
| | 18. Գիմախենից Որդի |
| | 19. Սահառունի Վասակ, Քաշազ |

Ըստ երևույթին նախարարությունների թվին են պատկանում նաև՝

- Արշական Ասորոմիզդ իշխան
- 45. Ջանդաղան իշխան
- Շանխոռապետ իշխան:

Ձ դարի եկեղեցական ժողովների արձանագրությունները և է դարի Սերեոսի պատմական երկը բավական նյութեր են պարու-նակում նախարարական տոհմանունների վերաբերյալ և մեր թվարկածներին ավելացնում են մի քանի նոր տոհմեր: 505 թվա-կանին, Բարզեն կաթողիկոսի օրոք, հրավիրված ժողովի արձա-նագրության մեջ պահպանվել է իշխանական 14 անուն, որոնցից պետք է նշել²:

¹ Փարպեցու խոսքերի իմաստից երևում է, որ Ասորոմիզդը հայ ծագում ուներ: «Գևորգոմիզդ ոմն անուն յաշխարհէն Հայոց մարզպան հրամայէր թողույ», էջ 78: Գուցն պետք է կարգալ սյաշխարհին Հայոց», այսինքն՝ «Գևորգոմիզդ յաշխարհին Հայոց մարզպան հրամայէր թողույ: Այդ դեպքում մարզպանի ծա-գումը կմեա վեհեկի Ուշագրավ է Եղիշի մոտ հետևյալ հատվածը. «Գմի ոմն յաւա՞ նախարարացն Ասորոմիզդ անուն, որոյ իշխանութիւնն իսկ խառն էր ընդ Հայոց աշխարհին և գործակից էր գորավարին»: Թվում է, թե պատմիչը նույն-պես նկատի է ունեցել հենց Փարպեցուն և չի կարողացել հասկանալ Ասորոմիզ-դի ծագումը: Արշակ-ան աղգանունը հայերեն Արշակ-ունի-ի պարսկական ձևն է: Հավանորեն նա հայոց Արշակունիների սերնդիցն էր: Ջանդաղանը այն անձի անունն է, որ էր յոստաննայ տանէն», Փարպեցի, էջ 61, ինչպես և «Արտակունի, այր ոստանիկ», էջ 129: Պարզ չէ, թե Ջանդաղանը անձնանուն է, թե տոհմանուն: Ինչպես կտեսնենք, Ջորանմակում նա հիշատակված է նախարարների շարքում: «Շահխոռապետն արքունի» հանգիպում է Եղիշի մոտ, էջ 185 և Սոփեբում, Ձ, էջ 35 և նշանակում է թաղավորական արտոսպետ, հավանորեն, Արշակունիների ժամանակ եղած պաշտոնի համաձայն:

² Կիրք բղրոց, էջ 74: Մյուս իշխաններն են.

- | | |
|------------------------|----------------------------|
| 1. Վարդ Մամիկոնեան | Վասամ Ապահունեաց տէր |
| Սահակ Կամսարական | Գնէլ Գնունեաց տէր |
| Սպանդիատ, Հայոց սպայետ | 10. Բաշխեն Վահեուհեաց տէր |
| Արտաշիր Հայոց մա<զ>խազ | Արտաշիր Սիւնեաց տէր |
| 5. Ջիկ Վանա<ն>ղայ տէր | Ատրենթէ՛՛ Ոշտունեաց տէր |
| Մանդեն Ամատունեաց տէր | 13. Արտաշիր Առանդենից տէր: |
| Տիրոտ Պայունեաց տէր | |

Վարդ Մամիկոնյանը Հայաստանի նշանավոր Վահան մարզպանի եղբայրն է: Նրա մասին հիշատակում է Փարպեցին, էջ 111 և այլն. Բարզեն կաթողիկոսի պատասխան ուղերձում՝ ուղղված Պարսկաստանի բրիտանականներին, Վարդը հիշ-ված է որպես մարզպան. «Ի Վարդայ Մամիկոնից տեառն է ի հայոց մարզ-պանէ», նույն տեղում, էջ 48: Սերեոսից դիտենք, «որ յետ Վահանայ կալու դիշխա-

Դաշտակարան(ի) Վարազներւէն իշխան
Ներսես կաթողիկոսի օրոք, 555 թվականին, կայացած ավելի բազմամարդ ժողովում ներկա է եղել 32 իշխան, որոնցից առա-ջին անգամ հիշվում են¹:

Եռթին Վարդ պատրիկ եղբայր նորա», էջ 25, այսինքն՝ Վարդը նշանակվեց մարզպան: Սահակ Կամսարականը, հավանորեն, այն հայտնի գործիչն է և Վա-հանի համախոհը, որ հիշատակված է Փարպեցու մոտ, էջ 62: Հավանական է, որ նաև Բաշխեն Վահեուհին ոչ այլ ոք է, քան Բարդղ Վահեուհին, Վահանի ժամա-նակակիցը, Փարպեցի, էջ 134: Այս տեղեկությունները ցույց են տալիս, որ մեր գիսատաթղթի ծագման ժամանակը իրոք հասնում է մինչև Ձ դարի սկիզբը:

¹ Կիրք բղրոց, էջ 42: Մյուս իշխաններն են.

- | | |
|--|---------------------------|
| 1 Համաղասպ ի Գուզվառամեան ի տանէ Մամիկոնից | |
| Գարշոյր Հայոց մազխազ | 15 Գրիգոր Արեղեան |
| Սամէլ յԱրտաազղան սպարապետ | Մերշապուհ ի Շինական |
| Գրիգոր ի Հմայական | Համաղասպ ի Զինականեան |
| 5 Սահակ ի Վարդանան | Արշոտ ի Վարազտիրոցեան |
| Աստուածատուր Վանանդայ տէր | Մուշեղ ի Հմայկեան |
| Դատոյ ի Գարշուղեան | 20 Վրիւ յԱրտաշրան |
| Գրիգոր եւ Վարզան ի Վասակայ | Աստուածատուր Արշարեան |
| Զաւրակ ի Գզաւոնան | Սամուել ի Մամական |
| 10 Վարազ Յոհան ի Յոհանան | Վարդ ի Հմայական |
| Վարզան ի Մուշեղեան | Ներսէս ի Մամսոնեան |
| Համաղասպ | 25 Վարդան Վահեուհի |
| Սահակ ի Հմայակեան | Վարդ եւ Արտաազղ ի Մամական |
| Գննալ Գնունի | Համաղասպ ի Մամական |
| Վարազ Գարեղեան | Սահակ ի Մանուկեան |
| | 29 Վարդան ի Մուշեղեան: |

Այստեղ թվարկված ստորագրություններից միայն տասնմեկն են պատկանում իշխանական հայտնի տոհմերին, մյուսները կարծես թե իշխանական չեն, բայց քանի որ դրանք մեջ են բերված «իշխանք» անվանացանկի տակ, ապա պետք է ենթադրել, որ ժողովի մասնակիցներից շատերը կոչված են իրենց հոր և ոչ թե տոհմական անունով: Միայն առաջին ստորագրությունն է, որ մեջ է բերված լրիվ անուն հայրանուն և տոհմանուն: Դատելով անուններից՝ 18. Արշոտ ի Վա-րազտիրոցեանը և 27. Համաղասպ ի Սահականը Բագրատունեաց տոհմից են (ուշագրավ է Արշոտ ձևը, որը ուշ շրջանի Բագրատունյաց Աշոտ անվան նախա-տիպն է), 9. Զաւրակ ի զզաւոնանը և 21. Աստուածատուր Արշարեանը Կամսա-րականներից են: Անանիա Շիրակացու մոտ Զօրակ Կամսարական հիշատակվում է հայոց ապստամբության ժամանակ, 571 թ., Թվարանական խնդիրներ, «Արա-բատ», 1906, փետրվար և ապրիլ (Գաղաժն Կամսարականի մասին տես Խոհեմա-ցի, Գ, խը). այնուհետև 5 Դատոյ ի Գարշուղեան և 21 Վրիւ Արտաշրան ընդունված անուններ են Մաղխազ տոհմում: Մյուս ստորագրությունները, որոնց մեջ կրկնա-

Հանձնումի	Աստուածատուր	Իշխան
Վարածնունի	Հմայեակ	Իշխան
50. Սպանդունի	Մանուկ	Իշխան
Տայեցի	Սարգիս	Իշխան
Գողթնեաց	Վոսմ	Իշխան
Աբրահամեան	Քրիստափոր	Իշխան
Բասենացի		Իշխան

Պետք է նշել նաև.

վում են վարդան, Մուշեղ, Մանուկ և այլ անունները, այնքան բնորոշ Մամիկոնյանների համար, ըստ երևույթին պատկանում են այս վերջիններին: Մամիկոնյանների ազդեցությունը շատ մեծ էր 555 թ. եկեղեցական ժողովում, հոգևորականության մեջ նրանք ունեին ազդեցիկ ներկայացուցիչ՝ ներշնչված եպիսկոպոսը, որ ժողովի նախաձեռնողներից մեկն էր:

Պետք է նշել իզաբելով կազմությունը՝ Գրիգոր ի Հմայեակն. ի—ն ձայնափորից առաջ փոխարինվում է —յ—ի, ինչպես Մամիկ յԱբրահամեան՝ Վրիս յԱբրահամեան: Ութերորդ ստորագրության մեջ ի վասակայ պետք է կարդալ, Հալանորեն, ի Վասական: Տասներկուերորդ ստորագրությունը կամ պետք է լինի Համազասպ <Կ> Սահակ ի Հմայեակն և կամ էլ բաց է թողնված Համազասպի հայրանունը:

1 Արևոս, էջ 65 և 97, Մյուս իշխաններից հիշված են.

1 Մամիկոնեան, վահան, էջ 24, Վարդպատրիկ, էջ 25, Վարդան որդի Վասակայ, էջ 26, 29, Մուշեղ, էջ 37, 52, Համազասպ, էջ 50, Սահակ, էջ 53, Գաղիկ որդի Մանուկի, էջ 56, 58, Մամակ, էջ 48, 56, Մուշեղ որդի Դաւթի, էջ 107, Համազասպ, էջ 139 և հաջորդ:

Սինեաց, վահան, էջ 26, Ստեփաննոս, էջ 48, 56, Սահակ հօրեղբայր Ստեփաննոսի, էջ 58, Փիլիպոս, էջ 29, Գրիգոր, էջ 107:

Վահնունի, Սամուկ, էջ 48 և հաջորդ., Սարգիս, Վարազ-Ներսես, Ներսէս, Վաստմ, էջ 50 և հաջորդ., Խոսրով, էջ 56, 58, Թէոդորոս, էջ 108, Գրիգոր, էջ 109: Խորխոսունի, Ասատ, էջ 69, Թէոդոս, էջ 74 և հաջորդ., Վահան, էջ 102:

5. Ամատունի, Կոստա, էջ 56, Շապուհ, էջ 108:

Տրպատունի, Թէոդոս, էջ 50 և հաջորդ: Սարգիս, էջ 65 և հաջորդ:

Բազրատունի, Սմբատ որդի Մանուկի, էջ 53 և հաջորդ. Պապ որդի Աշոտայ սպանի, էջ 56, Սմբատ մարզպան Վրկանայ, էջ 59, 61—63, Վարազփորց որդի Կորա, էջ 63, 68 և հաջորդ: Սմբատ որդի Վարազ-Սահակայ, էջ 117:

Արծրունի, Վարդան, էջ 56, Վարազ-Շապուհ, էջ 65, Վասակ որդի Սահակայ, էջ 28:

Գիմարսեան, Մհերու, էջ 63, Սարգիս, էջ 65 և հաջորդ. Արտաակզ Գիմակսեան, էջ 149, արք տանն Գիմարսեանց, էջ 139:

55. Մեհնունեաց իշխան

որ հիշատակվում է Ջենոբ Գլակի մոտ, այդ տոհմից հիշյալ երկու ժողովներում էլ մասնակցում էր հոգևոր ներկայացուցիչ: Ժողովին հրավիրվել են նաև Բժուռնեաց և Զարեհազավանից եպիսկոպոսները¹: Անտարակույս գոյություն ունեին

56. Թժունեաց իշխան

57. Զարեհաւանի իշխան

իշխանական տոհմերը:

Այսպիսով, պատմական հիշատակարանների ստույգ տվյալները համաձայն Հայաստանում կար մինչև հիսուն իշխանական տուն, որոնք այս կամ այն չափով համբավ էին վայելում:

Մեր քննության ենթակա հարցի հետ անմիջական կապ ունեն, այսպես կոչված, Գահնամակներ - փաստաթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են նախարարական տոհմերի հաշվեգրումը ըստ իրենց զբաղեցրած դիրքի: Իրենց անպաճույճ, վստահություն չեն բրնշող արտաքին տեսքի պատճառով այդ փաստաթղթերը հե-

10. Ապահունի, Արտավազ, Վստամ, Հմայեակ, էջ 65:

Ապահունեաց տեր Մանուկ, էջ 65:

Ռշտունի, Թէոդորոս, էջ 97, 103 և հաջորդ, Ռշտունական, էջ 139:

Գնունի, Մսէժ, էջ 101, Վարազ-Գնէլ, էջ 103:

Սահաունի Դաւիթ, էջ 103:

15. Առանդեան Խաչեան, էջ 108, 139:

Մոկաց իշխան Վարդիկ Ակնիկ կոչեցեալ, էջ 109:

Վանանդայ իշխանը, Առ<ա>անեանը, Վարամունիք, էջ 20, Գեթունիք, Սպանդունիք, Գաշտակարան Վարազ-Ներսէ՛, էջ 140: Այստեղ էլ հիշվում են նաև իշխանը և զարք շորբորդ կոչեցեալ Հայոց, Սպերացիք, Մանադաթն, Գարանադաթն, որք լիկեղեցաց գավառէ, Կարնացիք, Բասենացիք: Մեր ցանկի մեջ մտցնում ենք միայն Բասենի իշխանությունը, որ հնուց ի վեր կոչվում էր գավառի անունով, ինչպես՝ Գողթնի իշխանություն, որ տեսնում ենք դեռևս Փավստոսի մոտ, Գ, Թ, իշխան Բասենոյ Սանակ, Գ, Ժբ, Ատամ իշխան Գողթնայ: Մյուս իշխանները շէին մտնում Մարզպանական Հայաստանի սահմանների մեջ և բացի դրանից, հավանական է, որ նրանք պատկանում էին արդեն նշված տոհմերին՝ Արշակունիներին, Բազրատունիներին և մյուսներին: Սերնոսի մոտ, էջ 93, հիշվում է, առան Վրնշունիք, Խառնեացի, Ա, լ, Վրանշունիք՝ մարած նախարարության անունով:

1 Ջենոբ Գլակ, էջ 48, «Մեհնունեանց արիք», «Գիրք բղբոց», էջ 70, Թագև Մեհնունեաց, Աստուածատուր Բժ(ն)ունեաց, Միքայէլ Զարեհաւանից, էջ 42, Մովսէս Զարեհաւանի Թէմբայ Մեհնունեաց, Հմմտ. Խառնեացի, Բ, ը, «Զարեհաւանեան ի զարմից Թագաւորաց»:

առաջտողները անհրաժեշտ ուշադրությանը չեն արժանացել, մինչդեռ պատմագրական տեսակետից դրանք շափազանց մեծ արժեք են ներկայացնում, նկատի ունենալով դրանց փոքր ծավալը՝ ավելորդ չենք համարում մեզ բերել դրանց բնագիրը:

Գ Ա Հ Կ Ա Մ Ա Կ

<Իմ Սա> հակայ խնդիր արարեալ ի դրան արժուի յԱրաաշէտի քաղաւորի գոր ի Տիսպոնն խաւսեցեալ երէ ես գումականն զեւմա գոր Արաաշրի ի դիւանին տեսի ի Լադոց ամսոյ ժէ: Եւ Վաւմայ արժայից արժայի ԼԻ բարեբարի ԼԵ գիր արարի ԼԵ Սահակ կարողիկոս քէ որպէս Վեր բարեբարութիւնդ հրաման տացէ հայոց ազատաց Եւ տանուտէրանց որպէս յառաջ առ հայոց ազգին, եոյնպէս Եւ ի ձերում դիւանի շահնամա<ր>ին առեել, որ յայսմ հետէ հայոց ազատաց Եւ տանուտէրանց զահ ի յայտ լինէր: Եոյնպէս ներսէն հրամանաւ արժայից արժայի Եւ Ես<Սա>հակ հայոց կարողիկոս կնեցաք զգահնեմակին Եւ Եղաք մատանի զարժայից արժայի ԼԵ զմերս. Եւ է այսպէս արդար Եւ նշմարիտ:

[Առաջին իշխան Հայոց Եւ մաղխագն]

- ա. Սիւնեաց տէր
- բ. Ասպետն
- գ. Արծրունեաց տէր
- <դ. Մաղխագունի>
- դ. Մամիկոնէից տէր
- ե. Շահապն Մոփսաց տէր
- զ. Մոկաց տէր
- է. Ռշտունեաց տէր
- ը. Վահունեաց տէր
- ր. Կասպէից տէր
- ժ. Անձաւացեաց տէր
- ժա. Ապահունեաց տէր
- ժբ. Կամաւարականն
- ժգ. Այդ Ապահունի
- ժդ. Վանանդացին
- ժե. Ամատունի տէր
- ժզ. Գողթան տէր

- խ. Գնթունեաց տէր
- իբ. Վարձատունին
- իգ. Գարդմանայ տէր
- իե. Սահառունին
- իզ. Գարեղէնից տէր
- իէ. Արեղէնից տէր
- իբ. Սիւնեաց երկրորդն
- իբ. Արծրունեաց երկրորդն
- լ. Արծրունեաց երրորդն
- լա. Մամիկոնէից երկրորդն
- լբ. Ռոփսեանն
- լգ. Գ-Աշոցեանն
- լդ. Գիմաֆսեանն
- լե. Բուխա Գիմաֆսեանն
- լզ. Այդ Արեղեանն
- լէ. Այդ Գիմաֆսեանն
- լը. Պալունին

- ժէ. Գնունեաց տէր
- ժը. Այդ Անձաւացի
- ժբ. Տայոց
 - ի. Բասենոյ դատաւարն
- իգ. Քիւնականն
- իդ. Ակէացին
- իե. Զարեհաւանեանն
- իզ. Ընծայեցին
- իէ. Մանդակունին
- իբ. Սղկունին
- իբ. Տայգրեանն
 - ժ. Եւմանքունին
- ժա. Սպանդունին
- ժբ. Առաւելեանն
- ժգ. Տրունին
- ժդ. Տամբերացին
- ժե. Հանունին
- ժզ. Բժնունին
- լբ. Առաւելեանն
 - խ. Աշահմարեանն
 - լա. Համբուժեանն
 - լար. Վարասպակեանն
- ժէ. Քաչքերունին
- ժը. Մեննունին
- ժբ. Նախներին
 - կ. Քաղաֆապետն արժունի
- կա. Ռուսպետն արժունի
- կբ. Արաաշեսեանն
- կգ. Վանանդացին երկրորդ
- կդ. Յոպն
- կե. Վիժանու <նի>
- կզ. Ս. Բաժու
- կէ. Շիրակա Գիմաֆսեան
- կը. Գագրիկեանն
- կբ. Մարացեան ա <էր>
 - ն. Վաագրասպու <նին> ¹:

Մյուս փաստաթուղթը, որը թեև հին հեղինակներից մեկը, ինչպես կտեսնենք, նույնպես Գ ա հ ն ա մ ա կ է կոչում, էսպես տարբերվում է նախորդ հուշարձանից: Այն նախարարական տների ցանկն է, որոնցից յուրաքանչյուրի մոտ նշանակված է նրանց հեծելազորի թիվը: Ըստ այդ ցանկի նախարարական ամբողջ զորքը բաժանված է եղել շուրս թևերի կամ, ինչպես ասված է մեր հուշարձանում, դրների, որոնք պետք է երկիրը պաշտպանեն հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան կողմերից: Գ ա հ ն ա մ ա կ ից տարբերելու համար մենք այս ցանկը կանվանենք Զ ո Ր ա ն ա մ ա կ :

¹ Գահնամակը հայտնաբերել է Յու. Հախվերդյանը, որը դիտարկելով հայտնաբերված փաստաթղթի մեծ արժեքը, այն հանձնել է Մ. Էմինին. վերջինս 1858 թ. հրատարակել է այն խորհնացու «Պատմություն» ուստերն թարգմանության հավելվածի մեջ: Ձեռագիր թերթից լուսանկարված ընդորինակությունը տպված է Ղևոնդ Ալիշանի «Այբարատումա»-ի 430, Գաշոցեանը, որտեղ զ առաջ է եկել ք Ք վ ի զ, պետք է ուղղել Աշոցեան: Մամբերացու փոխարեն պետի լինի Տամբերացի և Աշահմարեանը հավանորեն Աշխաղարեանի ազգագումն է:

Զ Ո Ր Ա Ն Ա Մ Ա Կ

Ա ր ւ ւ մ ա ե ա ն ղ ու ո ն		Ա ր ւ ւ ե լ ե ա ն ղ ու ո ն	
1 Անգեղ տուն	վն	1 Սիւնի	ա՛վն
Բղեշխն Աղձենաց	ա	Ամասկոնի	մ
Բրզնունական	վ	Աածացին	մ
Մանաւազեան	ն	Վարձաւանի	մ
5 Բագրատունի	ն	5 Տամրաացի	ն
Խորխոռունի	ն	Մազազացի	ն
Մոփացի	ն	Յողկեպան	ն
Վահունի	ն	Գրզնունի	ծ
Ապահունի	ն	Վառնունի	ծ
10 Գնունի	շ	10 Բաբան	ծ
Բասենացի	ն	Կնրունի	ծ
Պալունի	յ	Գուկանն	ծ
Ընծափն	ա	Պատսպարունի	ծ
Մանդակունի	յ	Գագրիկան	ծ
15 Սաղկունի	յ	15 Վիժանունի	ծ
Վարժնունի	յ	Ջանդաղան	ծ
Այծենական	ն	Սողացի	ծ
Առուենեան	յ	Աբաձեցի	ծ
Վարժնունեան	ն	Ասնշնեան	ծ
Սպան<ղ>ունի	յ	Կինան	ծ
21 Ռափսեան	ն	21 Տագրեան	ծ

Հ ի ւ ի ս ա յ ի ն ղ ու ո ն

1 Բղեշխն Գուգարաց	աշ
Կամսարական	ն
Կասպեցի	վ
Ուտէացի	ն
5 Մաղէացի	ն
Տայեցի	ն
Մամիկոնեանն	ն
Վանանդացի	ն
Գարդմանեցի	ն

Հ ա ր ա յ ի ն ղ ու ո ն

1 Կաղմէացի	ա՛վմ
Կորդուացի	ն
Արժունի	ն
Ռըշտունի	ն
5 Մոկացի	ն
Գողքնեցի	շ
Անձեացի	շ
Հարուժեան	ն
Տրպատունի	ն

10 Ռեղունի	շ	10 Մեհնունի	ն
Առուղեանէն	շ	Ակէացի	յ
Աշոցեան	շ	Զարէնուանեայ	յ
Ռիմաֆսեան	յ	Եր<ու>անքունի	յ
Գընքունի	յ	Համաստունեան	ն
15 Բոխայեցի	յ	15 Արտաշեսեան	յ
Գաբեղեան	յ	Սագրատունի	ն
Աբեղեան	յ	Աբրահամեան	ն
Հանունի	յ	Տրունի	յ
Սահառունի	յ	Բուժունի	մ
20 Ջենականան	յ	20 Քաջքերունի	ն
Աշխադարեան	ն	Բողունի	ն
22 Վարազարտիկյան	ն	22 Մուրացան	յ

...Եւ գոմանս ի յայլ աշխարհս գրաւեալս, եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք ձ դ-ից հազարաց թող զսպասաւորս դրանն արժունի՝ որ է ռստանդ որք ի պատերազմ ելանէին ընդ ա<ր> քայի եւ մարդպետական որ է ներքինի պահապան ի վերայ քազունայն եւ զանձուցն եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց՝ որ է հարիւր եւ քսան հազարաց՝:

Երկու փաստաթղթից ամեն մեկը ծանոթ է տարբեր և չափազանց անկատար ցուցակներից. դրանց մեջ կան շատ թերութիւններ և աղավաղումներ. մի քանի անուն անճանաչելիորեն աղճատված են:

«Առաջին իշխան Հայոց եւ մախրազն» վերնագրային նշումը պետք է վերագրել Գահեմամախի անճշտութեանը: Ըստ համարակալութեան առաջին տեղը զրաւում է Սյունյաց իշխանութեանը, հետո համարակալութեանը ընթանում է ճիշտ, մինչև իգ, իսկ իգ-ից թուշում է իե-ի՝ բաց թողնելով իդ-ն: Այդ մեկ թվահամարի պակասը, կարծում ենք, առաջ է եկել նրանից, որ փաստաթղթի բնագրում Մաղ-ի-ա իշխանութեանը տեղ է զրաւել թվարկութեան մեջ, իսկ հետո այս կամ այն պատճառով այն բարձրացել է ցանկի վերեր՝ շարքից դուրս: Ճիշտ կլինէր ենթադրել, որ բաց թողնված իգ թվի տակ եղել է հենց Մաղխազունի, բայց մի քանի տվյալներ, որոնց մասին

¹ Այս փաստաթուղթը առաջին անգամ հրատարակել է Հովհ. եպ. Շախաթուն-յանը: Տե՛ս Ստորագրութիւն էջմիածնի, 1842 թ, էջ 59:

խոսք կլինի հետո, մեզ ստիպում են Մ ա ղ ի ա գ ու Ն ի տոհմի ցանկի մեջ ավելի բարձր տեղ հատկացնել: Մեր այս ենթադրությունը, որ սկզբում բոլորովին ապրիորի էր, գործնականում արդարացվեց, երբ մենք Ռւստանես պատմիչի մոտ անսպասելիորեն հանդիպեցինք մինչ այժմ ուսումնասիրողների կողմից չնկատված մի հետաքրքրական վկայություն: Գահնամակը հայտնի է եղել Ռւստանեսին: Ըստ նրա Վաղարշակն Արշակին ուղղած իր դիմումի մեջ խնդրում է հենց «որոնք ղդիւանն արքունի եւ տալ զգահնամակ նախարարացն հայոց»¹: Արշակը Մար Աբասի առջև բաց է անում արքունի դիմանը, իսկ այս վերջինս փնտրում-գտնում է Գահնամակը և բերում այն Վաղարշակին: Ղեկավարվելով Գահնամակով՝ հայոց թագավորը հաստատում է նախարարություններ՝ տալով նրանցից յուրաքանչյուրին «բարձ եւ պատիւ ըստ բարձր՝ իշխանություն, համաձայն նրանց արժանիքների»: Քաղելով խորհնացուց՝ նա պատմում է այն մասին, որ թագավորը հատկապես առատ շնորհներ է ընծայում Ռազարատ իշխանին: Այնուհետև Ռւստանեսը շարունակում է. «եւ զայլ մի ըստ միջէ կարգէ եւ կոչէ անուանս.

առաջին՝ Սիւնեսց տէր,
 երկրորդն՝ ասպետ Բագրատունի,
 երրորդն՝ Արծրունի,
 չորրորդն՝ Մաղխազունի,
 հինգերորդն՝ Մամիկոնեան եւ զայլ եւս կարգէ եւ հաստատէ յիւրաքանչիւր իշխանութեան»²:

Այստեղից երևում է, որ Ռւստանեսը ծանոթ է եղել Գահնամակին և օգտվել է նրանից: Նրա խոսքերը մեզ հասած ցանկի մեջ կարևոր ճշտում են մտցնում՝ ցույց տալով Մաղխազունների իսկական տեղը: Բացի դրանից, հաստատվում է, որ Գահնամակը դոյություն է ունեցել մինչև Թ դարը, երբ ապրել է Ռւստանեսը և այն հանգամանքը, որ պատմիչը Գահնամակը հասցնում է մինչև Վաղարշակի ժամանակները, ցույց է տալիս, որ դեռևս Թ դարում այն համարվում էր բավականին հին փաստաթուղթ:

Մյուս փաստաթղթի՝ Զորանամակի հիշատակությունը ԹՎ դարից ավելի վաղ չէ: Օրբելյանը, պատմելով նախարարական գահերեցություն մասին, որ հաստատել էր Տրդատը, ավելացնում

¹ Ռւստանես, էջ 40:
² Նույն տեղում:

է, որ նույն թագավորը զորքերի և երկրի վրա կարգեց շորս հրամանատար. «իսկ զօրաց եւ աշխարհին վերայ շորս միայն կաջուցանէ... հրամանատարս... արեւելեան կողմանն՝ ղիշխանն Սիւնեսց քսանեմի իշխանօք, հիւսիսային կողմանն՝ ղբղեաշխն Գուգարաց քսանեւերկու իշխանօք, արեւմտեան կողմանն՝ ղկորդուսցին քսանեւերկու իշխանօք, հարաւային կողմանն՝ ղիշխանն Անգեղտանն քսանեւերկու իշխանօք, հարաւային կողմանն՝ ղիշխանն Անգեղտանն քսանեւերկու իշխանօք: Զայս այսպէս գտաք ի Գահնամակի իշխանացն Հայոց զոր Ղեւոնդ գրեաց, եւ սակաւ մի ցուցանէ Ազաթանգեղոսին և Ներսեսին»¹:

Պատմիչի արժեքավոր դիտողությունից իմանում ենք, որ մեզ հետաքրքրող փաստաթուղթը վերագրվել է Ղեւոնդի գրչին: Ղեւոնդ անվան տակ, ըստ երևույթին, պետք է հասկանալ այն նշանավոր պատմիչին, որ գրել է արարական շրջանի պատմությունը: Բացի այն, որ նա միակ հեղինակն է, որ կրում է Ղեւոնդ անունը, հօդուտ մեր ենթադրության է խոստում նաև այն, որ Օրբելյանի հակիրճ արտահայտության մեջ Ղեւոնդը որոշակիորեն ներկայանում է իբրև հանրածանոթ անձնավորություն, իսկ այդպիսին կարող է լինել միայն պատմիչ Ղեւոնդը: Այս հանգամանքը առաջ է քաշում թուցիկ կերպով շոշափված այն հարցը, որ Ղեւոնդի՝ մեզ հասած աշխատությունը թերի է, Գատելով ձեռագրի լրիվ վերնագրից, Ղեւոնդի երկը պիտի սկսվեր Մուհամմեդի հանդես գալու պատմությունով, մինչդեռ ներկա դեպքում այն սկսվում է մարգարիի մահից հետո տեղի ունեցած իրադարձությունների շարադրությամբ²: Նրա աշխատության սկիզբը, որ շունի սովորական ներածություն, ինչպես ընդունված է հայ մատենագիրների մոտ, թողնում է թերի, ոչ լրիվ աշխատանքի տպավորություն:

¹ Ստեփաննոս Օրբելյան, Գ. Վերջին դիտողությունը իրականում վերաբերում է ոչ թե շորս հրամանատարներին, որոնց մասին Ազաթանգեղոսի և Ներսեսի Գահնամակներում ոչ մի հիշատակություն չկա, այլ դրանից առաջ թվարկված իշխաններին, որոնք զրավում էին առաջին գահերը:

² Պատմութիւն Ղեւոնդայ մեծի վարդապետի հայոց որ յաղագս երեւելոյ Մահմետի եւ զինի նորին, թե որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տեղեկբաց, եւ ամառել ազգիս հայոց: Եահնազարյանի հրատ., 1857, Փարիզ, էջ 11: Էզովի ձեռագրում պակասում է սկզբի մասը մինչև 13-րդ գլուխը: Այս բացը հրատարակության ժամանակ լրացվել է էջմիածնի ձեռագրի հիման վրա, որտեղ կա լրիվ վերնագիրը:

Բայց եթե նույնիսկ ընդունենք, որ Ղևոնդի պատմութիւնն սկիզբը իրոք կորել է, ապա այդ զեպրում էլ հազիվ թե կարելի լինի վճռոված համարել այն հարցը, որ Գահնամակը նրան է պատկանում, Եվ իրոք, ի՞նչ առնչութիւն կարող էր ունենալ հայ նախաբարներին ցանկը Ղևոնդի աշխատութիւնն այն կորած մասի հետ, որ վերաբերում է մարգարեի կյանքին: Մյուս կողմից հայ մատենագրութիւնն մեզ՝ օրինակ Սեբեոսի մոտ, կա Սկզբնական պատմութիւնն և Հերակլի պատմութիւնն հատվածների միացման օրինակ: Նույն ձևով էլ Գահնամակը կարող էր կցվել Ղևոնդի աշխատութիւնը մի այլ պատմական ներածութիւն կապակցութիւնով: Կարող է պատահել նաև, որ Ղևոնդի այն ձեռագրի մեջ, որից օգտվել է Օրբելյանը, Գահնամակը եղել է իբրև մի պատահական հավելում, և պատմիչը կարծել է, թե այն Ղևոնդի իսկական երկի մասն է կազմում: Մինչդեռ, իրականում նա այնպիսի առնչութիւն է ունեցել Ղևոնդի հետ, ինչպիսին, ըստ որոշ գիտնականների, Անանունը՝ Սեբեոսի հետ: ԹՂ դարի հայ հեղինակ Սիմեոն Ապարանեցիին օգտվել է Ղազար Փարպեցու աշխատութիւնն մի օրինակից, որին կցված է եղել Հայաստանի Սկզբնական պատմութիւնը: Սիմեոնը ընդունել է այն որպես Փարպեցու աշխատութիւնն. նրա շարադրանքից, սակայն, երևում է, որ այդ հենց այն պատմութիւնն է, որը հասել է մեզ իբրև Սեբեոսի հավելված¹: Այս օրինակը մի նոր ապացույց է, որ նման բան կարող էր պատահել նաև Օրբելյանի հետ Ղևոնդի պատմութիւնը կցված Գահնամակի կապակցութիւնով: Օրբելյանի հաղորդածը, դժբախտաբար, որևէ զրական բան չի ավելացնում մեզ հետաքրքրող փաստաթղթի բախտը պարզելու համար:

Գահնամակի մեջ հիշատակված է 70 նախարարութիւն, իսկ Զորանամակի մեջ՝ 86: Հաշվի առնելով, որ Գահնամակի բնագիրը բաղկացած է մեկ թերթից՝ զրված ծայրածայր, նրա թերթի լինելու հարցը մնում է չլուծված: Երկու վավերագրերի համեմատութիւնը

¹ Սեմէօն Ապարանեցի, Վիպասանութիւն Պահլաունեաց և Մամիկոնեաց, էջմիածին, 1870: Անանունի հետազոտողների աշխատութիւնն՝ Հայաստանում մեջ, էջ 62: Կարող է պատահել, որ Ապարանեցու ձեռագիր ժողովածուի մեջ Փարպեցուց հետո զետեղված է եղել Սեբեոսի աշխատութիւնը այնպես, ինչպես այն հայտնի է այժմ, այսինքն՝ Անանունի հետ միասին: Սեմեոն Ապարանեցիին վերջինը սխալմամբ վերագրել է նրանից առաջ զետեղված Փարպեցու Պատմութիւնը:

ցույց է տալիս, որ եթե նույնիսկ թերթ է, ապա շատ անշշան: Գահնամակի մեջ չկան 32 անուն, որոնք կան Զորանամակի մեջ և ընդհակառակն՝ կան մի քանի ավելի համարներ, որոնք չկան Զորանամակի մեջ: Ելնելով Գահնամակի ներածական խոսքերի իմաստից, որոնցով այդ վավերագիրը կապվում է Սահակ կաթողիկոսի (մահ. 439 թ.) անվան հետ, Գահնամակի մեջ չէին կարող մտնել 32 նախարարութիւններից հետևյալները. 1. Բզնունական, 2. Մանուազեան, 3. Որդունի, — պարզապես ժամանակագրական նկատառումներով, որովհետև այդ տոհմերը մարեցին դեռևս Գ դարի սկզբին, — 4. Անդեղ տուն, 5. Աղծնեաց, 6. Գուգարաց, 7. Ուտէացի, 8. Մաւղէացի, 9. Կաղմէացի, 10. Կորդուացի, որոնք գտնվում էին Պարսկական Հայաստանի սահմաններից դուրս, [11 Ամասկունի¹], 11. Աւածացի, 12. Յողեկայան, 13. Գրղճունի, 14. Վառնունի, 15. Ասճշնեան, 16. Կինան, 17. Այծենական, 18. Համաստունեան, 19. Սագրատունի. այս ինն անունները բոլորովին չեն հանդիպում և, ըստ երևույթին, խիստ աղճատված են: Այդ նույն 32-ից մնացած անունները հիշատակվում են որոշ տեղեր. 20. Բաքանը, 21. Կճրունին, 22. Գուկանը, 23. Պատսպարունին, 24. Բոզունիքը գավառներ են Վասպուրականում, 25. Մաղազը գավառ է Այրարատում, 26. Վարաժնունին և 27. Վարաժնունի գավառներ են Վասպուրականում և Այրարատում, 28. Զանգազանը Փարպեցու մոտ նշված է Ոստանիկների թվում: 29. Սողացին, Սողբից է, որ Սյունիքի մի գավառն է, 30. Աշխաղարը Խորենացու մոտ Տրդատի աներոջ անունն է, 31. Տրպատունին և 32. Աբրահամեանը հայտնի են Սեբեոսից:

Զորանամակի համեմատութիւնով Գահնամակում եղած ավելի համարներից տասը կրկնվող անուններն են, որոնք հանդիսանում են մի քանի հայտնի տոհմերի երկրորդական ճյուղերը, ինչպես, օրինակ՝ Միւնեաց երկրորդն, Արծրունեաց երկրորդն, Արծրունեաց երրորդն, Մամիկոնեից երկրորդն, Այլ Անձաւացի, Այլ Ապահունի, Այլ Արեղեանն, Այլ Դիմաքսեանն, Շիրակա Դիմաքսեանն, Վանանդացին երկրորդ և դարձյալ վեց անուններ, որոնք բացառութիւնով

¹ Զորանամակի մեջ չի նշված Ամատունյաց հայտնի տոհմը: Մեզ թվում է, որ աղավաղված Ամասկունի (կամ Համաստունեանի) տակ թաքնված է Ամատունեաց իշխանութիւնը, թեև նրան վերագրված 200 հեծելազորի ուժը չի համապատասխանում Ամատունեաց իրական հզորութիւնը:

մեկի կամ երկուսի, աղավաղված են: Սրանք են Աշահամարեանն = Աշխադարեանն, Նախճերին, Ցուլն, Վաազրասպունին՝ քաղաքապետ և արքայական որսապետ:

Այս անուններն էլ հենց այն կասկածելի տարրերն են, որոնք վարկաբեկում են մեր հուշարձանը: Միայն նոր ցուցակի գտնվելու զեպքում կարելի է հուսալ, որ հնարավոր կլինի այն մաքրել կասկածելի շերտավորումներից: Ներսեսի Վարքի մեջ գտնվող կեղծ Գահնամակը ավելի շատ թերություններ ունի և պիտանի չէ տվյալ նպատակի համար, բայց և այնպես այն մեր փաստաթղթի հետ համեմատելը օգտակար կարող է լինել: Մենք այն մեջ ենք բերում, in extenso, ընդգծելով այն անունները, որոնք ընդհանուր են Գահնամակի հետ:

Գ Ա Ն Ա Մ Ա Կ Ի Տ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ը

1	Հայկազնիք	Գիտնք
	Պարթևեանք	Եկեղեանք
	Այրարատեանք	30 Քապետունիք
	Բաղրատունիք	Անձտեայք
	Տրդատունիք	Սերաստեանք
	Ասպետունիք	Աշտիշատեանք
	Մախազունիք	Սրուանձտեայք
	Խորխոռունիք	Անձաացիք
	Արձրունիք	Ասպազնունիք
10	Մամիկոնեանք	Ռշտունիք
	Սիւնեցիք	Վահանունիք
	Ամատունիք	Աղձնեանք
	Անզեղեանք	40 Քոզեանք
	Վրացիք	Կազրունիք
	Մոփք	Կամսարակաւնք
	Վարաժնունիք	Մոկացիք
	Մարդպետունիք	Սղկունիք
	Վանեունիք	Գերունիք
	Պահլավունիք	Աւարպատունիք
20	Կազբք	Գողթնեայք
	Սիւսեանք	Գագրիկաւնք
	Կաղմեանք	Ձողկերտք
	Մանաւազեանք	50 Մախազեանք
	Նզեսեանք	Մրուունիք
	Գամբեանք	Ռազմունիք
	Բզնունիք	Գաբեղեանք
	Սասանեանք	Սպարունիք

	Վահունիք	90 Համազդունիք
	Վրնչունիք	Ալիայք
	Սպրեանք	Վիժունիք
	Գիմակեանք	Առփսունիք
	Սրունիք	Շահուապետք
60	Գաբբանտեանք	Սայթիւնիք
	Արագածեանք	(Զա)նախնիրապետք
	Կողովեանք	Վարազատակեանք
	Ապահունիք	Ընծայեցիք
	Ընծայեցք	Մղրունիք
	Հարհեանք	100 Արշունիք
	Կորդուայք	Քատեանք
	Առաւելեանք	Մարգաղեանք
	Հաշտեանք	Լեկանդեանք
	Վրեանք	Խորձեանք
70	Վանանդեանք	Զիւնակաւնք
	Փառաճունիք	Համուծեանք
	Տաշրացիք	Կորթեանք
	Ուրծեայք	Կղունդիք
	Մանդակունիք	Զարեանք
	Տայք	110 Տուրքերանեանք
	Մելիտեանք	Բժունիք
	Գաշակարինք	Տփիտունիք
	Բասենք	Մենքունիք
	Մաղկունիք	Քաղափապետք
80	Մամիկոնք երկրորդ	Կայուշեանք
	Փերլժունիք	Սպանդունիք
	Տլքեանք	Արտաշատեանք
	Բագուանք	
	Աշ(տ)ոցեանք	Որսապետք
	Արեղունիք	Արհաձոց տեարք
	Խաղտեանք	120 Ռախսեանք
	Սահառունիք	Քագրասպունիք
	Աշխազորեանք	Պարսպունիք
	Գնունիք	123 Արահամեանք ¹ :

1	Այնուհետե կարող դալիս են.		
	Ազեղեազրոշք	130	Հիւսնակեանք
	Գրչունիք		Բաղասակեանք
	Նեաողք		Ճիղքք
	Նամակունիք		Լեառեակեանք
	Քաղուեանք		Սպարասամեանք
	Ասպարախաղք		Հեճմատակք
19	Ն. Աղանց		
			Գորոզուայք
			Վարդեշեանք
			Դրամանդք
			Խաշեանք
		140	Խաղրեանք
			Գրօշակիրք

Անունների երկար ցանկը, որ հեղինակը ներկայացնում է իբրև Արշակ թագավորի կամ նրա ժամանակակից ներսես կաթողիկոսի Գահնամակ, իրականում իրենից ներկայացնում է Գահնամակի հետագա և խղճուկ ուրվագիծը: Հրապուրված գրական այն տեղեկություններ, թե Արշակի ժամանակ գոյություն է ունեցել մինչև 400 զահ, անանուն ուսուցիչը աշխատել է գրականության մեջ եղած Գահնամակը մեծացնել և հասցնել համապատասխան ժամալի: Այս խնդիրը հեղինակի ուժերից վեր է եղել, որովհետև նա բավականաչափ ծանոթ չի եղել հայրենի գրականությանը. այնքան անիրազեկ է, որ առանց խորություն գահների ցանկի մեջ է մտցրել մի շարք աշխարհադրական անուններ: Նրա անտեղյակությունը պիտի բացատրել նաև Բաղրատունի և Ասպետունի, Խորխոտունի և Մաղխաղունի, Կաղբք և Կաղբունիք և այլ տոհմերի կրկնությունները: Մեղ համար կարևորն այն է, որ անանուն հեղինակը, անկասկած, իր տրամադրության տակ ունեցել է մեր Գահնամակը: Դրան իբրև պարզ ապացույց կարող են ծառայել երկու վավերագրերին էլ ընդհանուր և խիստ բնորոշ համարները՝ Մամիկոնի երկրորդ, Քաղափապետի, Ռուսապետի, Նախների և (Ջա)նախնիքապետ, Գահնամակում վանուների գրված է վան<ե>ունիք-ի փոխարեն. այդ պատահական վրիպակը մոծված է ցանկի մեջ, չնայած նրան, որ այնտեղ առանձին կա նաև վանեունիք ուղիղ ձևով:

Գահնամակի հետքերը գտնում ենք նաև Երուսաղեմի հայկական վանքերի մասին հայտնի Զրույցի մեջ: Անաստաս վանականը իշխան Համազասպ Կամսարականի խնդրանքով, որ պատրաստվում էր այցելել սուրբ վայրերը, կազմում է Երուսաղեմի այն եկեղեցիների նկարագրությունը, ավելի ճիշտ ցանկը, որոնք որպես թե կառուցել են հայ իշխանները: Դրանց թիվը հասնում է 70-ի,

Մախալունիք	Շահապունիք	160	Խնունիք
Ոսկեմանիք	Բարմեայք		Բազունիք
Այուծեանք	Կամխեայք		Ազնեունիք
Կաղարքք	Գառնապետք և		Ցիրանեանք
Տաթևեանք	այլ որք չէին ի գահս		Կղեունիք
Գատավճիռք	Յուրիպեանք		Տուշունիք
Ջորարեանք	Փոքայունիք		Կոռնիք
Ճակատամուղք	Մուսցեանք		Մաղեունիք
150 Դերշայինք	Ապեկունիք	168	Մախաղունիք. այս

են գահոյք և այլևս չույլ, զոր ծանր համարեցալ արկանել ընդ գրով:

մի թիվ, որը անմիջապես մտածել է տալիս Գահնամակի աղղեցության մասին և ստիպում կապ փնտրել նրա և 70 գահերի միջև Դժբախտաբար չի կարելի ստուգել, թե Գահնամակը ինչ տեսքով է մտել Անաստասի գործի մեջ, քանի որ պահպանված խմբագրության մեջ ոչ բոլոր եկեղեցիներն են կրում իշխանական տների անվանումները, իսկ նրանցից շատերն էլ նշված են այն սրբերի անուններով, որոնց նվիրված են¹: Զրույցը, անկասկած, առասպելական բնույթ ունի, թեև զուրկ չէ մի քանի հնագույն գծերից: Այն վերաբերում է «Աղվանից աշխարհի պատմության» նախորդող ժամանակներին, քանի որ այստեղ հիշատակվում է Անաստասի աշխատությունը և նրանից մի քանի քաղվածքներ, որոնք վերաբերում են Աղվանից եկեղեցիներին²: Այս և նախորդ վավերագրերը ցույց են տալիս, թե Գահնամակը որքան շատ տարածված և գրականության մեջ հայտնի փաստաթուղթ է եղել:

Գահնամակի 70 անուններից մեջ բերված տարբերակում տեղ չեն գտել միայն հետևյալ տասը.

Վարձատունի	Առանեան
Գարգմանայ	Տամբեացի
Պալունի	Հանունի
Տայգեան	Քաջբերունի
Նամանունի	Յուլն

¹ Նախարարական տոհմերից հիշատակվում են «Արծրունեաց, Զարհաանի, Մամիկոնեանց, Գուգարաց, Բղեշխն (իմա՝ Աղձնեաց), Միւնեաց, Ռշտունեաց, Խորխոտունեաց, Անձեւացեաց, Արշակունեաց, Կամսարականեաց, Ամատունեաց, Կարնացեաց, զոր Սմբատ Բաղրատունին շինեալ է, Մահոտունեաց, Պալունեաց, Զաղափունեաց?, Վարսմեանեաց, Վանանդացեաց, Մոկաց, Քաջբերունեաց, Կոշայ (Տայոց), Մպանդունեաց, Արշամունեաց, Տաշրաց(ւոց) և մի քանի ուրիշները, որոնք կոչվում են ըստ զավանների. Ալիշաւն, Հայապատում, էջ 227: Որոշ տոհմանուններ կրկնվում են. Այլ վանք Ամատունեաց, Անձաւացեաց, Միւնեաց և այլն, որ նույնպես միտում է զեպի Գահնամակը: Այդ բոլոր եկեղեցիները, Անաստասի վկայությամբ, «ի սբ. Լուսաորչն հաստատեցան, բայց չույլս ի ներսիսէ», այս ևս զավիս է Գրիգորի և Ներսեսի մասին եղած այն տեղեկություններից, թե Գահնամակի հեղինակները կամ պատճառ հանդիսացողները Գրիգորն ու Ներսեսն են եղել:

² Մ. Կաղանկատվացի, Բ, ծր, էջ 227, Անուանք վանորից... զորս ի թղթոյ երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան՝ առեալ տաքո Տարօրինակ ձեռով Համազասպ Կամսարականի փոխարեն այստեղ հանդես է գալիս Վահան Մամիկոնյանը: Անաստասի կազմած եկեղեցիների ցանկի վերջում հիշատակվում է Հովհաննես կաթողիկոսը, որ ըստ բնագրի Ներսես Բ-ի հաջորդ Հովհաննեսն է՝

Իսկ Զորանամակի համեմատությամբ 86 համարներից այստեղ պահպանում է ավելի քան 30-ը. հեղինակը, ըստ երևույթին, այն ձևերի տակ չի ունեցել: Բայց նա, անկասկած, օգտվել է Գահնամակից և վերջինիս համեմատությամբ եղած թերությունները կարելի է բացատրել կամ մեր ունեցած ցանկի անճշտությամբ կամ էլ այն ցանկի, որ օգտագործել է նա: Հարցի այս կողմը մի քիչ պարզվում է Գահնամակների և Խորենացու տվյալների բազմա-տությունը:

Ներկա ժամանակներում Խորենացու «Հայոց պատմությունը» հայ հին գրություն հուշարձանների տարիքը և ընդհանրապես նշանակությունը ճշտելու փորձաքար է: Երկու Գահնամակների և Խորենացու նախարարական տոհմանունների միջև անցկացվող զուգահեռը երևան է հանում քննարկվող վավերագրերի ամբողջ պատմագրական արժեքը:

Նախարարական տոհմերի տեսությանը և նրանց ծագմանը պատմահայրը նվիրում է Բ գրքի է և Ը գլուխները: Նրան հայտնի նախարարությունների շրջանակը հանգում է հետևյալին.

- | | | |
|----|------------|---------------|
| 1 | Բագրատունի | Գարդմանաց |
| | Գեթունի | Մավղեից |
| | Խորխոռունի | Գարգար |
| | Վարաժնունի | 20 Աշոցեան |
| 5 | Գաբեղեան | Տաշրաց |
| | Աբեղեան | Գուգարաց |
| | Արծրունի | Որդունի |
| | Գեունի | Անգեղ տան |
| | Սպանդունի | 25 Մոփաց |
| 10 | Հանեունի | Ապանունեաց |
| | Ջինական | Մանապեան |
| | Մարդպետ | Բզնունեան |
| | Մուրացան | Սղկունի |
| | Կաղմեան | 30 Մանդակունի |
| 15 | Սիսական | Վահնունի |
| | Ուտեաց | Առաւելեան |

վախճանված 573 թ.: Արդյո՞ք իշխանի անվան շփոթությունը չի բացատրվում նրանով, որ Աղվանից պատմագիրը նրան ընդունել է Վահան Մամիկոնյանին ժա-մանակակից Հովհան Մանգակունու տեղ:

- | | | |
|----|--------------|---------------|
| | Ջարեհաւանեան | Գիմախեան |
| | Աղձնեաց | Տրունի |
| 35 | Մոկաց | Ամասունի |
| | Կորդուաց | 45 Առաւելեան |
| | Անձնապեաց | Ռոփսեան |
| | Ուշունի | Մամիկոնեան |
| 40 | Գուգրան | Կամասրական |
| | Վանանդ | 49 Աշխաղարեան |

Խորենացու ցուցակը համեմատելով Գահնամակի հետ՝ տեսնում ենք, որ բացառությամբ 12 անունների՝ Կաղմեան, Ուտի-Ստեան, Մաւղեք, Գարգարք, Տաշիր, Գուգարք, Անգեղ, Աղձնիք, Որդունի, Մանաւաղեան, Բզնունի, Կորդուք, մնացածները համապատասխանում են Գահնամակին, ըստ որում Խորենացու Վարաժ-նունին հավասարազոր է Գահնամակի Ուսապետ արժունի-ին, իսկ Մարդպետը, ինչպես կտեսնենք՝ Արծրունիների երկրորդական երկու շառավիղներից մեկին: Խորենացու մոտ, Գահնամակի համեմատությամբ, պակասում է 22 անուն, չհաշված կրկնվողները.

- | | | |
|----|-------------|-----------------|
| 1 | Կասպ | Տամբեր |
| | Տայֆ | Բժնունի |
| | Բաւեան | Քաջբերունի |
| | Վարձաւունի | 15 Մեհնունի |
| 5 | Սահառունի | Նախների |
| | Պալունի | Աւտաշեւեան |
| | Համբուժեան | Վիժանունի |
| | Վարասպակեան | Յուլե |
| | Ընծայեցի | 20 Աւաձոյ |
| 10 | Տայգրեան | Գագրիկան |
| | Երվանդունի | 22 Վագրասպունի: |

Գահնամակի մեջ նկատի է առնված միայն Մարդպետական Հայաստանը, որով և հասկանալի է հիշյալ 12 նախարարությունների բացակայությունը, որոնց մի մասը մինչ այդ արդեն դադարել էր զոյություն ունենալուց, իսկ մյուսները գտնվում էին Մարդպետական Հայաստանի սահմաններից դուրս: Բացառություն են կազմում Կասպք իշխանությունը, որը ավելացված է Գահնամակի մեջ, թեև Հայաստանին չի պատկանել, և մասամբ էլ՝ Մոփաց սատրապությունը:

Ինչ վերաբերում է այն նախարարություններին, որոնք Գահնամակի հետ համեմատած՝ չկան հորենացու մոտ, ապա այստեղ էլ երևան է զալիս հորենացու և Գահնամակի միջև եղած կապը: Ուշադիր քննությունից հայտնի է դառնում հորենացու ծանոթությունը ոչ միայն Գահնամակին, այլև Զորանամակին: Նորից ներկայացնում ենք Գահնամակը՝ ըստ Զորանամակի տվյալների, նշելով յուրաքանչյուր տոհմի հեծելազորի քանակը.

1 Սիւնեաց իշխան	19400	30 Այդ Արծրունեաց III իշխ.	
Ասպետն իշխան	1000	Այդ Մամիկոնեկից իշխան	
Արծրունեաց իշխան	1000	Ռոփսեան իշխան	100
Մաղխազունի իշխ.	1000	Աշոցեան իշխան	500
5 Մամիկոնեկից իշխ.	1000	Գիմաֆսեան իշխան	300
Մոփաց իշխան	1000	35 Բուխա Գիմաֆսեան իշխ.	300
Մոկաց իշխան	1000	Այդ Աբեղեան իշխան	
Ռշտունեաց իշխան	1000	Այդ Գիմաֆսեան իշխան	
Վահունեաց իշխան	1000	Պալունի իշխան	300
10 Կասպեից իշխան	3000	Առաեղեան իշխան	500
Անձաուացեաց իշխան		40 Աշխադարեան իշխան	100
Ապահունեաց իշխ.	1000	Համբուժեան իշխան	100
Կամսարական իշխ.	600	Վարասպակեան իշխ.	100
Այդ Ապահունի իշխան		Զինակեան իշխան	300
15 Վանանդացի իշխ.	1000	Ակէացի իշխան	300
Ամատունի իշխան		45 Զարեհաւանեանն իշխ.	300
Գողթան իշխան	500	Ընծայեցի իշխան	4000
Գնունեաց իշխ.	500	Մանդակունի իշխան	300
Այդ Անձաուացի իշխ.	500	Սղկունի իշխան	300
20 Տայոց <իշխան>	600	Տայգրեան իշխան	50
Բասեւոյ դատաւորն	600	50 Եւմանքունի իշխան	300
Գեքունեաց իշխան	300	Սպանդունի իշխան	300
Վարձատունի իշխան	200	Առաեւեան իշխան	300
Գարդմանայ իշխան	1000	Տրունի իշխան	300
25 Սահառունի իշխան	300	Տամբերացի իշխան	100
Գաբեղէնից իշխան	300	55 Հանունի իշխան	300
Աբեղէնից իշխան	300	Բժնունի իշխան	200
Այդ Սիւնեաց իշխան		Քաջբերունի իշխան	100
Այդ Արծրունեաց իշխան		Մեհնունի իշխան	100

Նախների իշխան	65	Վիժանու <նի> իշխան	50
60 Քաղափապեան արժունի		Աֆածն = Արածոյ իշխան	50
Որսապետն արժունի	300	Շիրակա Գիմաֆսեան իշխ.	
Արտաշեսեան իշխան	300	Գազրիկեան իշխան	50
Վանանդացի II իշխան		Մարացեան իշխան	300
Ցուլն իշխան	70	Վագրասպունի իշխան	100

Դժվար չէ նկատել, որ Գահնամակի հիմքում դրված է զինվորական ուժը. նախարարությունները դասավորված են վարընթաց դժով, հեծելազորի ուժի համեմատ, որ ունեցել է իր տրամադրություն տակ նրանցից յուրաքանչյուրը: Այս հանգամանքն էլ սկզբում մեզ մտածել տվեց, թե Մաղխազունին իր տեղում չէ, որը և արդարացավ: Ընդ որում շեղումները ավելի շուտ կարելի է վերագրել մեր օրինակի թերի լինելուն: Համեմատությունը հորենացու հետ ցույց է տալիս, որ թերություններից մի քանիսը զալիս են հնագույն ժամանակներից, նախքան նրա «Հայոց պատմությունը» գրվելը: Գահնամակի համեմատությամբ հորենացու մոտ շփոթատակված նախարարությունները հենց նրանք են, որոնք կամ խախտում են զահերի գծի հաշորդականությունը և կամ ունեն 300-ից պակաս հեծյալ: Առաջինների թվին են պատկանում Կասպեից իշխանը՝ 3000 հեծյալ, Տայքի՝ 600, Բասեւոյ դատաւորը՝ 600, ինչպես և Ընծայեցին = Անձախը՝ 4000. Երկրորդների՝ Վարձատունին՝ 200, Համբուժեանը՝ 100, Վարասպակեանը՝ 100, Տայգրեանը՝ 50, Տամբերացին՝ 100, Բժնունին՝ 200, Քաջբերունին՝ 100, Մեհնունին՝ 100, Վիժանունին՝ 50, Արածուն՝ 50, Գազրիկանը՝ 50, Վագրասպունի, Սահրատունին՝ 100: Բացառություն են կազմում Ռոփսեանը և Աշխադարեանը, որոնք հիշատակված են հորենացու մոտ, թեև նրանց հեծելազորի թիվը 100 է: Եվ ընդհակառակն՝ Սահառունին, Պալունին, Արտաշեսեանը և Երվանթունին, որոնք ունեն 300-ական հեծյալ, անուշադրություն են մատնված պատմիչի կողմից: Ինչպես տեսանք, Պալունին և Երվանթունին չէին հիշատակված Գահնամակի այն ցանկում, որը մտել է Ներսեսի կեղծ Գահնամակի մեջ: Հավանական է, որ այդ անունները շին եղել նաև հորենացու ցանկում: Սահառունուն և Արտաշեսեանին պատմիչի կողմից լռություն մատնելը կարելի է վերագրել նաև նրա օգտագործած ցուցակի թերի լինելուն¹:

¹ Արտաշեսյանների մասին, ինչպես երևում է, գիտե հորենացին Գահնամակ:

Խորենացու բացատրիկ ուշագրությունը Ռոփսեան և Աշխադարեան տոհմերի նկատմամբ բացատրվում է սրանց բարձր ծագումով: Ըստ պատմիչի Ռոփսեանները սերում են Ռոփի թագուհուց, որ Տիգրանի կինն էր, իսկ Աշխադարեանները՝ Տրդատի կնոջ՝ Աշխեն թագուհու հոր սերունդներն են: Տիգրանի օրոք Ռոփսեաններին նախարարական պատվին արժանացնելու առթիվ մեր պատմիչը մի քանի նշումներ է անում, որոնք լույս են սփռում Գահնամակի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի վրա:

«Իսկ կրտսեր նախարարական ցեղեր,— ասում է Խորենացին,— թե՛ այստեղ՝ մեզ մոտ և թե՛ Կորճեքում հաստատում է այս Տիգրանը այն մարդկանցից, որոնք հեծելազորով աննշան էին, բայց անձամբ երեկի, և նրան փրկելու համար հույներին հետ պատերազմեցին, ոմանք Կորճեքից և ոմանք մեր կողմից: Խոսքս վերաբերում է վճեններին մերձավոր նախնադարյան ցեղերին՝ Հայկազանց սերունդներին, ինչպես և մի քանի եկվորներին: Մենք անուն առ անուն չենք պատմի նրանց մասին, մասամբ՝ որովհետև մեզ հայտնի չեն, և մասամբ՝ խույս տալով դժվար աշխատանքից, և երբորդ՝ որ շատերի անհաստատ լինելը կթելագրեր բոլորին էլ հետազոտել: Այս պատճառով էլ մենք ոչինչ չենք գրի Տիգրան վերջինից հաստատված ցեղերի մասին, թեկուզ շատ անգամ էլ սրա համար աղաչես, այլ կզրենք միայն հետո հաստատվածները, որոնց մասին հավաստի գիտենք, որովհետև մենք, որքան հնարավոր էր, խուսափեցինք այլևորդ ու պաճուճված խոսքերից և ինչ որ անհավաստի գործ կամ կարծիք կար, միայն հետևելով արդարն ու ճշմարիտը գրելու, ուրիշներից (օգտվելով) կամ մեղանից՝ որքան կարողություն ունեինք: Այստեղ էլ նույնպես վարվելով՝ խոսքիս ընթացքը կանգնեցնում եմ, երբ անպատշաճություն եմ նկատում կամ հավաստիության կողմից կասկածելի մի բան»¹:

կում Արտաշեսանը գալիս է արքունի Որսապետից հետո, Ըստ Խորենացու՝ Որսապետը Վարաժնունի նախարարության կոչումն էր, որ առաջ է եկել Վարժից, որ նշանակվել է պետ թի վերայ որոտց արքունեաց, Ա, ժբ և Բ, է: Այս նշանակումը տեղի է ունեցել, ըստ Խորենացու վկայության, Արտաշեսի օրոք. «այս զկնի յառաջ Արտաշիսին նույն տեղում: Արդյո՞ք այդ պատմիչի գուշակությունը չէ, որ հիմնված է ռուսապետ անբունի Արտաշեսան» ընթերցումի վրա:

¹ Մ. Խորենացի, Բ, կդ, սեւ այլ որ ինչ կրտսերագոն ազգ, եթէ աստ և և եթէ զկողմամբ Կորճէից, հաստատ է այս Տիգրան, որք միանգամ անազոփք էին ի վաշտս և անձամբ երեկիք և վասն նորա փրկութեան պատերազմեալ ընդ

Խորենացու դատողությունները արժեքավոր են. կարծես նա իր առջև ունի Գահնամակը և մանրամասն հաշիվ է տալիս նրա նկատմամբ իր ունեցած վերաբերմունքի մասին. մեր պատմիչը դանց է առնում այն նախարարներին, «որք միանգամ անազոփք էին ի վաշտս», այսինքն՝ աննշան քանակությամբ՝ 300 այրուձիուց պակաս զորք ունեին, մի քանիսի մասին նա պատկերացում չունի «վասն յայտնի ոչ լինելոյ մեզ», մյուսները թեև ծանոթ են իրեն, բայց կարիք ունեն ստուգման, մի բան, որ հոգնեցուցիչ է պատմիչի համար: Այս ակնարկը թերևս վերաբերում է մի քանի իշխանությունների երկրորդական տներին, ինչպես նաև 300 այրուձի ունեցող նախարարություններին, որոնց նա չի հիշատակում, և, վերջապես, շատ անուններ անստույգ են կամ կասկածելի: Պատմիչի արտահայտած դատողությունները, թե ինչու նա անուշադրության է մատնել մանր նախարարությունները, միանգամայն համապատասխանում են այն համարներին, որ Գահնամակի համեմատությամբ նրա մոտ պակասում են, և իրավացի են նրանց բուլորի վերաբերյալ ամբողջությամբ վերցրած և յուրաքանչյուրին առանձին-առանձին: Եիշտ է նաև այն, որ այդ նախարարությունները մասամբ ծագում են Կորճեքից և մասամբ էլ ուրիշ նահանգներից:

Խորենացու ուշագրությունից չի վրիպել նաև այն, որ Ամատունի և Կամսարական ազգեցիկ տոհմերը Գահնամակի մեջ զրավում են բոլորովին էլ ոչ այնքան պատվավոր տեղ: Կամսարական տոհմին հատկացված է 13-րդ տեղը, իսկ Ամատունիներին՝ 16-րդը. ստաշինի ուժը հաշված է 600 հեծյալ, իսկ Ամատունիները Զորանամակի մեջ նույնիսկ չեն հիշատակված: Եթե ընդունենք, որ Ամասկոնին կամ Ամաստունեանը Ամատունու աղավաղումն է, ապա նրանց վերագրված ուժերը՝ 200 կամ 100 մարտիկներով չեն համապատասխանում Ամատունիների նշանակությանն ու անվանը: Հայ պատմիչի կարծիքով Կամսարականները՝ Պահլավունիների փառա-

յունս, որք ի Կորճէից և որք ի մերմէ Գողմանէս զյառաջագունից ասացելոց մեաւարաց վճենից (կարգա զճեռից) և զարմից հայկազանց, ոմանք ի յկացո Զոր ոչ անուամբ պատմեցուք. է ինչ՝ որ վասն յայտնի ոչ լինելոյ մեզ, և է ինչ որ վասն աշխատութեան ի վաստակին խոյս տալով. երրորդ, զի և անհաստատութիւնն բազմաց կարծիս ի ներքս ածէ ընդ բնան անցանելիս: Էմիսի թարգմանու թյունը հարազատ չէ:

վոր տոհմի շատավիզները, նախարարների շարքում անկասկած արժանի են ավելի պատվավոր գահի: Կամսարականներին հասցված վերաժողանքը առանձնապես զգալի է պատմիչի համար մտնողանց այն պատճառով, որ նրա շիրքած Մամիկոնյաններին արված է հինգերորդ տեղը: Խորհնացու տարակուսանքները և նրանց լուծումը իրենց արտացոլումն են գտել նրա հետևյալ պատմության մեջ:

Մահակ Բագրատունի ասպետի մահից հետո Մահակ կաթողիկոսը աշխատում է, որպեսզի նրա տեղը նշանակվի իր փեսան՝ Համազասպ Մամիկոնյանը: Զիջելով իր գետեր թախանձանքներին՝ այս նպատակով նա ուղևորվում է պարսից արքունիք և միջնորդում է Շապուհ Երկարակյացի հաջորդ Աբտաշիլի առջև և միաժամանակ թագավորին խնդրում է մեղմացնել Կամսարական և Ամատունի շնորհագուրդի իշխանների վիճակը: Թագավորը շատ սիրալիր ընդունելություն է ցույց տալիս կաթողիկոսին և կատարում է նրա խնդրանքը՝ «վասն փեսայի նորա Համազասպայ, դարձեալ եւ վասն մնացելոցն մեղուցեալ նմա ազգացն Կամսարական և Ամատունի, որ սուղեալ շողեալ էին անյայտ տեղիս, վասն որոյ մաղթեաց գթալ, իբրեւ յաստուածային հրամանէ՝ ոչ բառնալ որդւոց զյանցանս հարց. մանաւանդ զի եւ հարքն որք մեղանն, նոքին սակս այնր եւ մեռան: Որոց մնացելոցն պարզեւեալ զկեալն, հրամայեաց զտունս երկաքանչիւրոցն զկալեալն յարքունիս դարձուցանել ի նոսա, բայց միայն ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ ի խոնարհ քան զբազումս մատուցանել նախարարս, ի կարգ կրտսերագունից պատրաստել. իսկ զազոն Համազասպայ, որ է տոհմ Մամիկոնեան, ի վեր մատուցանել, զի կարգեսցին ունել զհինգերորդ գահ նախարարացն հայոց, եւ ի դիւանի իւրումն գրել»¹:

Սեր պատմիչը իր տարակուսանքը փորձում է փարատել նրանով, որ Կամսարական և Ամատունի իշխաններին դնում է շնորհագուրդի վիճակի մեջ: Նա նույնիսկ պատմում է, թե ինչ է եղել նրանց հանցանքը: Երբ պարսիկները գերում են հայոց խոսրով թագավորին, ապա նրա հետ Պարսկաստան են տանում նաև Կամսարական քաջ իշխան Գագավոնին, որ մոր կողմից Արշակունի էր: Գագավոնի եղբայրը Ամատունի իշխանի հետ 700 զինված մարդկանց զուլխ անցած՝ դարան են մտնում պարսից քարավանի ճանապարհ-

¹ Խորհնացի, Գ, ծա:

հին, հարձակվում նրա վրա՝ ազատելու խոսրովին և մյուս գերիներին: Այս խիզախ փորձը հաջողություն չի ունենում, որովհետև թագավորը շղթայակապ էր և չի կարողանում փախչել: Գրա համար երկու իշխանական տները հատուցեցին գույքի բռնագրավումով: Ահա այդ պատճառով էլ թե՛ Կամսարականը, և թե՛ Ամատունին ընկել էին թագավորի աչքից և զրկվել իրենց տահմական գահից: Չնայած Սահակ կաթողիկոսի միջնորդությանը, նրանք այստեղ մնալով չհաստատվեցին իրենց տեղերում, և փոխադրվեցին նախարարական կրտսեր տոհմերի շարքը: Իսկ Մամիկոնյանները, ըստ խորհնացու բացատրության, ձեռք են բերում ավելի պատվավոր դիրք ոչ այն պատճառով, որ նրանք արժանի էին դրան, այլ միայն Մահակ կաթողիկոսի միջնորդության շնորհիվ:

Պատմաքննությունն արդեն նշել է, որ հայ պատմիչի դիտողությունը Մամիկոնյանի գահի մասին բխում է Գահնամակին ծանոթ լինելու հանդամանքից, որտեղ Մամիկոնյանները գրված են հինգերորդ տեղում²: Մամիկոնյանների գահի և նրա պարզարանություն հարցի մասին պատմիչը խոսում է ինչ-որ ավանդույթների մասին, որոնք իբրև թե գոյություն են ունեցել պարսից արքունիքում: Այդ խորհրդածությունները անշուշտ դալիս են նույն Գահնամակի ներածական խոսքերից: Պարսիկների մոտ ընդունված սովորության համաձայն, երբ նոր թագավորը գահ էր բարձրանում,—պատմում է պատմիչը,— արքայական գանձարանում եղած ամբողջ դրամը անմիջապես ձուլում էին՝ վրան գրոշմելով նոր թագավորի պատկերը: Դիվանը գրանցում էին նոր թագավորի անվամբ, աննշան փոփոխություն էին կատարում՝ պահպանելով նախորդի անունը: Եթե թագավորը իշխում էր երկար տարիներ և նոր աշխարհագիր էր կատարում, ապա մի կողմ էին դնում հին վերափոխված աշխարհագիրը, որպեսզի թագավորի անունը դրվի միայն նորի վրա: Բայց Աբտաշիլը իր կարճատև թագավորության պատճառով չհասցրեց նոր աշխարհագիր կատարել և հրամայեց իր անունից հին աշխարհագրի մեջ գրել այդ ամենը, այսինքն՝ Կամսար-

¹ Հետաքրքիր է նաև դորրի այն քանակը, որ ունեին Կամսարական և Ամատունի իշխանները այդ հարձակման ժամանակ: Ըստ Զորանամակի Կամսարականներն ունեին 600 մարտիկ, իսկ Ամատունեանը (այսինքն՝ Ամատունին)՝ 100, ընդամենը 700: Զուգահեռությունը նշանակալից է:

² Խալաթեանց, Հայ Արշակունիները, էջ 294:

րականի և Ամատունու շնորհազրկման և Մամիկոնյանների գահի բարձրացման մասին: Պարսից թագավորը միաժամանակ գրում է հայոց Վրամշապուհ արքային հետևյալ թուղթը՝ հանձնարարելով «ըշամազասպ կացուցես ի վերայ զորացդ սպարապետ՝ մեր հրամանաւ եւ ազգի դորս տացես զգահն հինգերորդ՝ պատուոյ նախարարացդ, եւ զգեւզս եւ զդաստակերտս զոր տուեալ է նախնեացն քոց հարց դորս, կալցին դոքաւ Սապէս և զտունս վնասակարաց ազգայդ, զոր կալաք յարքունիս, թողցես ի բաց՝ աներկիւղաբար ժառանգել նոցին մնացորդաց, բայց գահուց հայրենականաց պատուոյ մի արասցես արժանի»¹:

Շուտով մեռնում է Արտաշիրը՝ գահը թողնելով Վրամին: Խորենացին ստիպում է Սահակին դիմել նրան նույն կամ նույնանման խնդրանքով: Կանչված լինելով արքունիք հայրապետական աթոռի գործով՝ կաթողիկոսը օգտվում է բարեպատեհ պահից և խնդրում է թագավորին իրեն տալ «զգահ նախարարացն Հայոց, որպէս կարգեալ է յԱրտաշրէ եւ վարեցան մինչև ցայժմ, նորին օրինակաւ հրամայեսցէ եւ առ յապալ, զի մարդպանք սարսիկք մի՛ կարասցեն ծանուցումն սակս այնր առնելով ինչ գերազանցօրէն փոխել ըստ կամաց իրեանց», միաժամանակ կաթողիկոսը խնդրում է Հրահատին՝ Գագաւոնի որդուն վերադարձնել հայրական կալվածքները և հաստատել նրան մյուս նախարարներին համապատասխան կարգում՝ տալով նրան եթէ ոչ իր սեփական տեղը, ապա ըստ կամացն թագավորի», իսկ Ամատունիներին, զրկելով հանդերձ տոհմական պատվից՝ ծայրահեղ դեպքում նշանակել ավելի ցածր կարգերում²:

¹ Խորենացի, Գ, ծա:

² Նույն տեղում. Գ, կէ: Սահակ կաթողիկոսը խնդրում է վերադարձնել կալվածքները «զմեականն Գագաւոնի զորդուն Հրահատայ» ըստ Մ. էմինի ոտս. Թարգմանութեան ստացվում է. Հրահատի որդու Գագաւոնին, Գագաւոնը ոչ այլ որ է, քան վերը հիշված իշխանը, որ գերի էր տարվել Խոսրով թագավորի հետ միասին: Սահակը խնդրում է նրա որդու՝ Հրահատի համար, որի մասին արդեն խնդրել էր Արտաշիրին Մ. էմինը, սխալ հասկանալով շարժել համազն նորա Կամսարականն եւ կամ զԱմատունին» և այլն, այնպես է թարգմանում, որ կարծես թէ Սահակին սկզբում հաղորդվել էր վերացնել Կամսարականների և Ամատունիների շնորհազրկությունը և այժմ էլ խնդրում էր Կամսարականների ազգական, ինչ-որ Գագաւոնի համար: Իրականում կաթողիկոսը Վրամի առջև միայն կրկնում է իր նախկին միջնորդությունը շնորհազրկման ենթարկված տոհմերի մասին: Հրահատը հենց Գագաւոնի որդին է, այդ պատճառով էլ ավելի ճիշտ է թարգմանել «նշանակել նրան, այսինքն՝ Հրահատին, որի է ցանկացած գահ որպես իր ազգակցին, այսինքն՝

Այս տողերը Խորենացին պարտական է բացառապես Գահնամակին և նրա նախարարին, որի բովանդակությունը խառնաշփոթ է, ոճը՝ անհարթ: Խորենացու պատմածը նախարանի մշուշապատ իմաստը մեկնաբանելու մի փորձ է: Մեղ հասած բնագրի թիրությունները եթէ չեն զալիս բուն օրինակից, ապա, անտարակույս, եղել են հենց այն ձեռագրում, որից օգտվել է մեր պատմիչը: Նախարանում բառացի ասված է հետևյալը.

«Ես՝ Սահակ» փնտրեցի Արտաշես թագավորի արքունիքում այն, որի մասին խոսեցի Տիգրանում, որ ես զիվանում տեսա Արտաշիրի ramakan nāma-ն (քաղոց ամսի 17-ին), Եվ ես՝ Սահակ կաթողիկոսս, զիմեցի Վրամին՝ արքայից արքային և բարերարին, խնդրելով՝ թող հրամայե Ձերդ Բարերարությունը կատարել ցուցակագրություն հայ ազատների և տանուտերների Ձեր զիվանի համար, ինչպես առաջ այդ եղել է հայերի մոտ, որպեսզի այսուհետև ևս հայոց ազատների և տանուտերների գահերը հայտնի լինեն: Արքայից արքայի հրամանով ներսեհը և ես՝ Սահակ կաթողիկոսս, հաստատեցինք Գահնամակը և կնքեցինք արքայից արքայի և մեր մատանիներով և այսպես արդար է ու ճշմարիտ»¹:

Խնդրարկու Սահակին՝ կամ Սուրեն Պահլավին, որին և Սահակը ուղղում է իր խոսքը. իսկ ինչ վերաբերում է Ամատունիներին, ապա զրկելով նրանց տոհմական պատվի տեղից, իջեցնել առաջին կարգերից զոհե ավելի ցած կարգեր և կամ թե հանձնել սրան՝ Ամատունուն (և ոչ թե Կամսարականին) արքունի գործակալությունը, — ակնարկում է հազարապետի պաշտոնը, որ Սահակի ժամանակ վարում էր Վահան Ամատունին, ինչպես այդ մասին վկայում են Կորյունը և Եղիշեն:

¹ Բնագիրը շատ հեռու է կատարյալ լինելուց, անհարթ են մասնավոր սկզբի բառերը: Մեղ թվում է թե «ի քաղոց ամսոյ ի ժէ»-ն բնագիր մուծված զլուսսա՝ ընդմիջարկություն է, որ սկզբնապես մատնանշում է այն հուշարձանը, որտեղ եղել է ramakan nāma-ն: Գրասելով մեղքերումից, հուշարձանը իրենից ներկայացրել է մի տեսակ հեանազույն վարժ սրբոց և այնտեղ քաղոց ամսի 17-ի տակ ի միջի այլոց տրված է եղել նաև ramakan nāma-ն: Թերևս և անսի բառը վերաբերում է նրան, փոխ. տես(ի) ի քաղոց ամսոյ ժէ: Երկու դեպքում էլ ես զԱմական Նամա արտահայտությունը, որտեղ բացակայում է ստորոգյալը, պետք է համարել թիրի, հավանորեն զրի հանցանքով, որ ընթերցողին մատնանշելով մի այլ հուշարձան, չի վերջացրել պարբերությունը: Իսկ եթե ընդունենք, որ զոր Արտաշիրը վերաբերում է նախընթաց զՅամա-ին, ապա կվերանա քերականական անհարթությունը և կստացվի, որ Սահակը տեսել է «Արտաշիրի ramaka nāman-ն» զիվանում (թագավորական) և ոչ թե «Արտաշիրի զիվանում»: «Եւ զիր արարի» պարբերության մեջ պ. Խայաթյանը եւ-ը ավելորդ է համարում: Իսկ մեղ թվում է, որ այստեղ վրամ բաց է թողնված բարեբաղի կողքին թագավորի մի այլ մակդիր, կամ

Դժվար չէ համոզվել, որ սերտ կապ գոյություն ունի այս խոսքերի և Գահնամակի մասին կամ նրա առթիվ խորհնացու հաղորդած այն տեղեկությունների միջև, որտեղ հանդես են գալիս Սահակը, Արտաշիրը և Վռամը: Նախ և առաջ ո՞վ է Արտաշեսը, որի արքունիքում կաթողիկոսը փնտրել է Գահնամակը և Արտաշիրը, որի դիվանում կամ որի ուսմական նամակը նա տեսել է: Հնարավոր է, որ խոսքը վերաբերում է նույն անձին, և որ այդ անձը հայոց Արտաշես թագավորն է, այդ պատճառով էլ խորհնացին շրջահայեցորեն նշում է, որ պարսիկները փոխեցին հայոց Արտաշես թագավորի անունը և անվանեցին Արտաշիր¹: Բայց հավանական է նաև, որ Արտաշիրը, որի անվան հետ կապվում է ramakan nāmā-ն, պարսից միապետն է: Այս հավանականությունը ևս թույլ է տալիս խորհնացին, ինչպես որ այդ երևում է պարսից արքունիքի ինչ-որ ավանդույթների մասին նրա դատողություններից: Նա ընդունում է Արտաշիրի անվամբ անցկացրած շահմարին: Սահակի՝ Վռամին արած դիմումի համար, որի մասին պատմում է խորհնացին, նույնպես աղբյուր է ծառայել դարձյալ մեր վավերագիրը: Տարբերությունն այն է, որ այստեղ Սահակը խնդրում է ցուցակագրության մասին, իսկ խորհնացու մոտ խոսքը վերաբերում է Արտաշիրի Գահնամակը վավերացնելուն կամ օրինականացնելուն:

Այսպիսով, մեզ համար անվիճելի է, որ խորհնացին օգտվել է Գահնամակից: Չի կարելի հակառակ եզրակացություն անել, թե Գահնամակի հեղինակը կախում ունի խորհնացուց, նախ և առաջ այն պատճառով, որ անհրաժեշտություն չէր կարող լինել խորհնացուց հետո, առավել ևս նրա աշխատության հիման վրա թխել այնպիսի խղճուկ վավերագիր, ինչպիսին Գահնամակն է: Հայոց

էլ, որ ավելի հավանական է, եզրի-ը պիտի համարել ինչդիր բառի աղավաղում: Շահմարին-ը պ. հալաթյանցը ուղղում է շահմարն: Նկատի ունենալով, որ ձեռագրում պարզորոշ կերպով կարդացվում է -ի և նկատելի է ընկած տառի տեղը վերջում, ուստի և շահմարին ընթերցումը պիտի համարել ուղիղ և պիտի վերագրել այն հուշարձանի լեզվի առանձնահատկությանը, հմտ. զգահնեմակին փոխան. զգահնեմակն: Ներսէսից առաջ գտնվող Եղևպետ բառը վերաբերում է նախորդ պարբերությանը: Պարսից թագավորը բաբեբառ մակդիրով մեծարվում է նաև Փարպեցու մոտ, էջ 82, «շնորհսցէ մեզ բարեբարութիւնդ Ձեր» նաև էջ 107, 175, 97: Հմտ. Խորենացի, Բ, խզ:

¹ Խորենացի, Գ, ծք, թագաւոր կացուցանելով զԱրտաշէս... և փոխեալ զանուն Արտաշիր կոչելով:

պատմության երևան գալուց հետո, որի մեջ հեղինակավոր լուծում ստացան նախարարական կառուցվածքին վերաբերող բոլոր հարցերը, դրանց հետագա մշակման անհրաժեշտությունը ինքնին պետք է վերանայր:

Այս եզրակացությունը, որին մենք հանգեցինք, նշանակալիորեն բարձրացնում է Գահնամակի արժեքը որպես պատմական փաստաթուղթ: Գծրախտաբար խորհնացու ժամանակի հարցի վերաբերյալ ներկա իրավիճակում, երբ ավանդական վստահությունը խախտվելու հետևանքով նա դուրս է մնացել Հայաստանի առաջին լուսավորիչների շարքերից, և քանի դեռ նրա ժամանակը ճշգրտված չէ հետագա 2—3 դարերի միջև, Գահնամակին պատմիչի ծանոթ լինելը չի կանխորոշում ոչ նրա ժամանակը և ոչ էլ վավերականությունն աստիճանը: Քննության ենթակա վավերագրերի՝ Գահնամակի ու Զորանամակի ծագման և վավերականության հարցը անհրաժեշտ է դարձնում նախ և առաջ պատմական այն հիմունքների քննարկումն ու բացահայտումը, որոնց վրա ծնունդ էին առնում նման հուշարձանները: Մեզ մնում է ծանոթանալ հենց հիշված հուշարձանների պատմական raison d'être-ին. այդ տեղեկանքը, անկախ ամեն ինչից, բացահայտում է նախարարական կենցաղի կարևոր գծերը:

Գահնամակի պատմական կամ իրական-կենցաղային հիմքը գահերեցության հաստատությունն է, առանց որի անհնարին է նման հուշարձանների երևան գալը: Հայերի մոտ գահերեցության գոյությունը կասկածից դուրս է: Այն ընդունված էր ինչպես հայ Արշակունիների, այնպես էլ պարսից թագավորների արքունիքում: Այդ մասին վկայում են հայ մատենագիրները: Փավստոսը բազմիցս հիշատակում է «գահէրէց, բարձէրէց տաճարին արքունի»¹: Հենց նա էլ խոսում է Արշակի սեղանի շուրջը 900 բարձերի մասին, որոնք նախատեսված էին ավագանու համար: Պարսից Շապուհ թագավորը Արշակի մատուցած ծառայությունների համար նրան մեծ պատվի արժանացրեց ու ի միջի այլոց «ի միում տախտի գահուն ի ժամ ուրախութեան բաղմէին»²: Սակայն շուտով նրանց բարեկամական հարաբերությունները փոխվում են թշնամություն: Արշակը հրավիրվում է արքայից արքայի մոտ, և երբ հասնում է ընթերցի ժամը, սովորության հակառակ, որ «օրէնք էին»

¹ Փավստոս, Գ, Թ:
² Նույն տեղում, Գ, ժզ, նաև Գ, ժզ:

զի թագաւորն պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում գահոյս: Իսկ այն օր նախ զտեղի բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին... Եախ ամենեքեան իրրեւ բազմեցան չիւրաքանչիւր շափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ»¹:

Արշակունիների օրոք հաստատված նախարարությունների աստիճանակարգը շարունակեց գոյություն ունենալ նաև Արշակունիների հարստության անկումից հետո և պահպանվեց Սասանյանների արքունիքում: Ըստ Ղազար Փարպեցու՝ Վարդան Մամիկոնյանը Հազկերտի առջև արտասանած իր խոսքի մեջ հանդիմանում է, որ երեք երկրներից՝ Հայաստանից, Վրաստանից և Աղվանքից ներկա գտնվող իշխանների շարքում «բազումք են... որք են առագ քան զիս և գահու և ատուրքք, և շատ են որ ի խոնարհ են»²: Եղիշին նույնպես որոշ բան հայտնի է դահերեցություն մասին. պարսից թագավորը քրիստոնյա իշխաններին մեկ թույլ է տալիս գրավել իրենց տեղերը սեղանի շուրջը, մեկ զրկում էր նրանց այդ իրավունքից³: Մմրատ Բագրատունին՝ Վրկանի մարզպանը, հեծիթադների ղեմ տարած իր փայլուն հաղթանակների համար մեծամեծ պատիվների է արժանանում Խոսրով Փարվեզի կողմից և կարգվում է «երրորդ նախարար ի տաճարի թագաւորութեանն Խոսրովայ արքայի»⁴:

Այս հարցի կապակցությամբ հատկապես հետաքրքրական է դահի համար պարսից թագավորի հետ հայ իշխաններից մեկի ընդհարվելու հայտնի պատմությունը: Պատմում են, որ պարսից Շապուհ թագավորը մի անգամ կամենում է ստուգել, թե ո՞ր ազգերը և լեզուները ունեն բարձ և պատիւ: Պարսից մեծատոհմիկ նախարարների բոլոր (յոթ)⁵ տոհմերի մեծամեծներին հրավիրում է

1 Փավստոս, Գ, Ժզ:
 2 Փարպեցի, էջ 49:
 3 Եղիշե, էջ 37, կոչը գրազումս ի գինուորական քրիստոնեիցն. և ի ժամ գահուն պատրաստութեան զիւրաքանչիւր տեղիս շնորհէր նոցա բազմականին» նաև էջ 158 «և զարգելիալ բազմականն ի նոցանէ ի տեղի հրամայէր մատուցանելու:
 4 Սեբեոս, էջ 68, «և էր նա երրորդ նախարար ի տաճարի թագաւորութեանն Խոսրովայ արքայի»:
 5 Կազանկատվացի, Բ, ա, էջ 81, «գործեալ ճաշ մեծապէս ամենայն մեծամեծաց յիննամենից տոհմից, ազատատոհմն պարսից»: Օրբէլյանի մոտ համապատասխանում է այստեղի տեղանունը: Օրբէլյանի մոտ համապատասխանում է այստեղի տեղանունը:

ինչոյցքի և մեծարելով յուրաքանչյուրին ըստ իւր գահի՝ պատվում է նրանցից յուրաքանչյուրին բաժակով և ուռնու ճյուղով¹: Իսկ մտերգան-մոբեզն արքայական սեղանի շուրջը արժանանում է ամենամեծ պատվի: Խորհրդակցելով իր մեծամեծների հետ՝ թագավորն ասում է. «զՊարսից և զպարթևաց զընական պահլաիկ»² և զազատ արանց զնախազրութիւնս քաջ գիտեմ. իսկ զարմենու զազատատոհմն և զնոցին նախապատուութիւնսն ոչ կարացար գիտեմ՝ ոչ ի հարցն մերոց թագաւորաց և ոչ ի մատենագրաց: Եւ արդ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացդ Հայոց՝ ցուցանել զնախնական գիր իւրաքանչիւր տանց զաստիճան և զպատիւ, և զարձեալ մեծագոյն անել ի մինչ շքեղաշուք մեծարանս: Ապա թէ ոչ կարեք ակն հայանի Արեացս զնդի ցուցանել զնախանիստ բարձրս ձեր, զպատիւ և զտուն, զհող և զշուր և զամենայն ստացուածս ձեր Արեաց ազատ արանց շնորհեսցուք»³: Եվ Մեծ Հայքի իշխանները անմիջապէս խորհրդակցում են միմյանց հետ ու ներկայացնում թագավորի ցանկացածը՝ Ազաթանգեղոսի պատմությունը: Նա հրամայում է կարգալ այն և թարգմանել պարսկերեն: Իմանալով, որ գիրքը սկսվում է իր նախահայր Արտաշիրից, թագավորը ավելի է ուրախանում, գովում է գիրքը և խանդաղատանքով հպում իր աչքերին: Նա այնտեղ գտնում է 17 բարձի գիր և ըստ այնմ էլ արքայական սեղանի շուրջը սկսում է կարգավորել տեղերը: 14-րդ բարձը բաժին է ընկնում Սյունյաց տեր Անդոկին, բայց Անդոկը վիրավորվում է և հրաժարվում ճաշելուց: Թագավորին այդ բանը իմաց են տալիս, բայց նա այն անուշադիր է թողնում:

Այնուհետև պատմվում է, որ Անդոկը, գժտվելով Շապուհի

տասխան տեղում կարողացվում է ամենայն փոխ. յիննամենից Ա ը, էջ 20: Խոսքը վերաբերում է սասանյան յոթ նշանավոր տոհմերին: Թերևս, բնագրում եղել է յեթ, որից և առաջ է եկել ինն ընթերցումը թ տառից:
 1 Կազանկատվացի, Երաժակաւ և ուտով առաջի իւր... մեծարեալս թագավորը պատվում է նրանց իմիջողով և պսակով: Հետաքրքրական է համեմատել Եղիշեի հետ, էջ 216, «մի՛ մոռանայք զիդն և զպսակն և զուտն և զառատածեան պարգեւսն, որ շնորհէր ձեզ յարքունուտս»:
 2 Նույն տեղում. Այստեղ պահլաիկ բառը կործ է անվում հասարակ իմաստով և նշանակում է ազնվագործ, իսկական իշխան (հմմտ. պարթև, որ նշանակում է հաղթահասակ, բարեկազմ) և ոչ թե պահլաիկ բառի բուն իմաստով, ինչպես որ տխուր են հասկանում թարգմանիչները: Մենք թարգմանության մեջ պահպանում ենք այդ նույն բառը:
 3 Նույն տեղում. «Պարսուրիս Ազաթանց աշխարհի», Բ, ա, էջ 81:
 20 ն. Ազոնց

հետ, թողնում է իր երկիրը և ծառայության անցնում կայսեր մոտ: Նրա որդին՝ Բաբելը, հոր մահից հետո կամենում է վերադառնալ իր հայրենի երկիրը: Նա գնում է պարսից արքունիք և այնտեղ այնպիսի քաջագործություններ է կատարում, որ թագավորին մոռացնել է տալիս իր հոր հասցրած երբեմնի վիրավորանքը ու արժանանում է մեծարանքների: Ի վարձատրություն Բաբելի մատուցած ծառայությունների, պարսից թագավորը վերադարձնում է նրան յուր հայրենի աշխարհը և տալիս Բագրատունիներին և Մամիկոնյաններին հավասար պատվի իրավունք:

Այս պատմությունը հետաքրքրական է նախ և առաջ իբրև նախարարական միջավայրի կենցաղային մի պատկեր, և իբրև այդպիսին նա չի կորցնում իր նշանակությունը, եթե անգամ ամբողջովին հնարված լինի: Համենայն դեպս փաստական տեսակետից ևս այս պատմությունը զուրկ չէ պատմական որոշ տարրերից, թեև դրանք իրար կապակցված են ժամանակավրեպ կերպով:

Պատմության հերոսը՝ Անդոկը, Փավստոսի հիշատակած Սյունյաց հայտնի իշխանն է՝ գեղեցկուհի Փառանձեմի հայրը: Նա իրոք ապրում էր Շապուհ թագավորի ժամանակ: Փառավորված իր դատեր ռոմանտիկ բախտով՝ Անդոկ իշխանը նրա պատճառով զբտեսցրեց Արշակ թագավորին ու Շապուհին և Արշակի հետ միասին երկարատև պատերազմներ մղեց պարսիկների դեմ: Անդոկի վեճը Շապուհի հետ, իբրև հիմնական շարժառիթ, պահպանված է նաև վերը հիշված պատմության մեջ, բայց փոխադրված է ուրիշ միջավայր և ուրիշ դարաշրջան: Բաբելը նույնպես պատմական անձնավորություն է. միջագետքի մեջ նա ներկայացվում է որպես Անդոկի որդի, բայց իսկապես նա ոչ թե Անդոկի որդին է, այլ մերձավոր հաջորդներից մեկը: Ի դեմս Բաբելի մենք տեսնում ենք Վահան Մամիկոնյանի հայտնի ժամանակակիցին ու համախոհին, այն անձին, որի մասին պատմիչը մեծ գովասանքով է խոսում անվանելով նրան «լաւ ալր Բաբելն Սիւնի»¹: Նա այն իշխաններից մեկն էր, որոնք համախմբված Գյուտ կաթողիկոսի և Վահան Մամիկոնյանի շուրջը, ամուր կանգնած էին Ավարայրի անձնագոհ հերոսների ավանդների պաշտպանության գիրքերում՝ գործելով

¹ Վագար Փարպեցի, էջ 112: Ինչպես հայտնի է, Վասակ մարզպանի որդիներից մեկի անունը նույնպես Բաբել էր: Թե ինչ կապ ունի «լաւ ալր Բաբելը» նրա հետ, դժվար է ասել: Կարող է պատահել, որ նա էլ հենց մարզպանի որդին է:

նրանց նշած ուղիով: Վարդանանց պատերազմից հետո ամբողջ երկրում տիրող ընդհանուր վհատության և հուսաբեկության պայմաններում նրանք պահպանում էին արիության ոգին և շէին կորցնում իրենց հույսը բռնակալ պարսիկների դեմ շարունակվող պայքարում լավագույն ելքի նկատմամբ: Իրենց հայրերի օրինակով նրանք մտածում էին քրիստոնյա կայսրից օգնություն ստանալ և այդ նպատակով դեսպանություններ էին ուղարկում Աստի կայսրի մոտ (մահ. 473 թ.): Շատ հավանական է, որ դեսպանության կազմում եղել է նաև Բաբելը և այդ առաքելությամբ էլ նա եղել է Բյուզանդիայի մայրաքաղաքում: Նրա բարձր արժանիքները և ծառայությունները պատճառ դարձան, որ նրա հայրենակիցը՝ Սյունյաց Պետրոս եպիսկոպոսը, նվիրի նրան հատուկ աշխատություն՝ «Ճառ ներբողեան»: Վերջինս դեռևս մեր ձեռագրատներում չի հայտնաբերված: Նրա մասին ունեցած տեղեկության համար մենք պարտական ենք Ստեփաննոս Օրբելյանին, որ բազմիցս հիշատակում է Պետրոս Սյունեցու աշխատությունը որպես աղբյուր, որից նա վերցրել է Բաբելի պատմությունը: Նրա հիշատակումներից մեկում ասված է, որ Պետրոս եպիսկոպոսի ներբողը՝ նվիրված այն քաջակորով Բաբելին, որին պարսիկները իրենց լեզվով կոչում էին փառապանծ, այսինքն՝ veh = lav¹: Այստեղ Բաբելին տրվում է այն նույն մականունը, որով Փարպեցու մոտ մեծարվում է Վահանի ժամանակակից Բաբելը: Այս հանգամանքը լավագույն ձևով հաստատում է մեր կասկածը երկու Բաբելիների՝ Ջրույցի հերոսի և Վահանի ժամանակակիցի նույնությունը:

Օրբելյանը Պետրոս Սյունեցու գրչին է վերագրում ոչ միայն Բաբելի պատմությունը, այլև Շապուհին վերաբերող դրվագը: Պետրոս Սյունեցին ապրել է Ջ գարի առաջին կեսին և ներկա է եղել 555 թվականի եկեղեցական ժողովին: Ժամանակը այնքան էլ չէր բաժանում նրան Բաբելից, և նա կարող էր հետաքրքրվել նրա դրոծունեությամբ համարյա որպես ժամանակակից: Բայց մյուս կողմից

¹ Ստեփաննոս Օրբելյան, Թ, «յասացուածոց սրբոյն Պետրոսի», Ժ, Եի նոյն ձևովից տեսան Պետրոսի», «որպես զեկոյց մեզ ի ներբողման իբրում երանելին Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց, քերթողահօրն Մովսիսի աշակերտ», «չերանելոյն Պետրոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ի ներբողմանն առաք, զոր արարնի վեճն Բաբելի, զոր և պարսիկք լիւրանց լաւ կոչին զնա»: Օրբելյանի երկի հրատարակիչ էմիլը իզուր է բնագրից առանձնացրել արժեքավոր հիշատակումը և այն զետեղել ներքեում իբրև ծանոթություն, հակառակ ձեռագրի տվյալների:

անթույլատրելի է, որ ժամանակով Բաբելին ալգրան մոտիկ անձը թույլ տար այդպիսի անախրոնիզմ՝ միացնելով նրա՝ իր այլադ ժամանակակիցի ճակատագիրը Անդոկի և Շապուհի հետ, որոնք ապրում էին Գ զարում, Բաբելի և Անդոկի մասին գրույցը այն ձևով, ինչպես հասել է մեզ, չի կարելի ամբողջությամբ վերագրել Պետրոսին, այլ պետք է դիտել որպես Փավստոսից և Պետրոս Սյունեցուց վերցրած նյութերի ժողովրդական վերամշակում: Նրա մուտքը գրականության մեջ պետք է վերագրել Պետրոս Սյունեցուց հետո ընկած ժամանակներին, այսինքն՝ Զ զարից հետո:

Մեր այս նպատակի համար կարևոր է վերամշակման բնույթը: Անդոկի միջադեպը ըստ Փավստոսի ծագել է նրանից, որ պարսից թագավորը ցանկանում էր իր գտները կնություն տալ Արշակ թագավորին, որ արդեն ամուսնացած էր Անդոկի գտներ՝ Փառանձեմի հետ: Գրանից վերավերված՝ հայրը որոշում է պաշտպանել իր գտերը պատիվը և այդ նպատակով խափանում է Արշակի բարեկամությունը Շապուհի հետ և հասնում է այն բանին, որ նրանց մեջ պատերազմ է սկսվում: Իսկ Զրույցի մեջ գործը փոխադրվում է այլ հողի վրա՝ բարձի ու պատվի շուրջը եղած վեճերի հողի վրա, և Շապուհի հետ տեղի ունեցած ընդհարման հարցը լուսաբանվում է իշխանի վերավերված ինքնասիրության տեսանկյունից, որ դժգոհ էր նախարարական աստիճանակարգում իրեն հատկացված պահից:

Նրկպառակություններն ու դժգոհությունները գահի և պատվի համար պետք է ավելի հաճախակի դառնային Արշակունիների ավանդույթների թուլանալուն դուզընթաց, երբ գնալով ուժեղանում էր պարսկական իշխանությունների ազդեցությունը: Հայ Արշակունիների անկումից հետո բարձի և պատվի հարցերը կախված էին պարսիկների հայեցողությունից, որոնք փոփոխում էին գահերի տեղը ելնելով արքունիքի շահերից: Իզուր չէ, որ հայ պատմիչը Սահակ կաթողիկոսի բերանով շեշտում է այն վտանգը, որ սպառնում էր նախարարական գահերեցությանը պարսից մարզպանների կամայականության հետևանքով: Վտանգը շատ ղզալի էր Վահանի խմորումների շրջանում, ինչպես այդ երևում է Փարպեցու՝ իշխանական միջավայրի նկարագրությունից: Նախարարական հարաբերությունները պետք է սրվեն հատկապես Զ և է դարերում, երբ Հայաստանի մարզպան էին նշանակվում բացառապես պարսիկները:

Այսպիսով, Գահնամակի նման հուշարձաններ, որչափով դրանք համապատասխանում էին կյանքի պահանջներին, հայ գրականության մեջ կարող էին երևան գալ մինչև Սասանյան միապետության անկումը, որովհետև այդ ամբողջ ժամանակաշրջանում գահերեցության հաստատությունը չկորցրեց իր նշանակությունը: Այդ ժամանակաշրջանից հետո նման երկերի համար աղբյուր կարող էին ծառայել միայն հարցասիրությունն ու հետաքրքրությունը հին ժամանակների նկատմամբ:

Ինչ վերաբերում է մյուս հուշարձանին՝ Զորանամակին, ապա նրա նման աշխատությունները պետք է համարվեն կենցաղային տեսակետից ավելի կենսական, քան Գահնամակը: Եթե այս վերջինի նշանակությունը թագավորության և արքունիքի անկումով պիտի նվազեր, ապա նույնը չի կարելի ասել Զորանամակի մասին: Հայաստանում թագավորական իշխանության վերացումից հետո, պատմիչի արտահայտությամբ, «թագավորությունն անցավ նախարարներին» և դրա հետ միասին նրանց անցան հայկական թագի պարտականությունները արքայից արքայի նկատմամբ: Իրանից կախված լինելու գլխավոր արտահայտություններից մեկն էլ այն էր, որ Հայաստանը պարտավոր էր զինվորական օգնություն ցույց տալ նրան՝ տրամադրելով նախարարական հեծելազոր¹: Նոր պայմանները ոչինչ չփոխեցին իրերի դրություն մեջ. ինչպես և նախկինում, նախ և առաջ պահանջվում էր այն հեծյալ ուժերի ճշգրիտ հաշվառումը, որ նախարարություններից յուրաքանչյուրը և բոլորը միասին պարտավոր էին պահել և կռվի հանել արքայից արքայի պահանջով: Հեծելազորի հարցը կենտրոնական հարց էր այն աշխարհագիրների ժամանակ, որ մերթ ընդ մերթ կատարում էին պարսից իշխանությունները: Պարսից գործակալ Գենշապուհը, որ 451 թվականի ժողովրդական շարժման նախօրյակին ուղարկվեց Հայաստան, թագավորից հրահանգ ուներ ամբողջ Հայաստանում անցկացնել աշխարհագիր «ի թողութիւն հարկաց և ի թեթեւութիւն ծանրութեան այրեւծիոյ»: Թեև պատմիչը անվստահություն էր վերաբերվում պարսից պաշտոնյայի առաքելությանը,

¹ Եզրը, էջ 11, «ի նախարարսն հայոց անկաներ թագաւորութիւնն... այրուծին հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդը ի պատերազմի»: Թե ինչ ծխակատարությամբ էր զիմավորվում հայոց այրուծին և ընդունվում պարսից արքունիքում, տե՛ս Եզրը, էջ 78:

բայց ասպատամբությունից անմիջապես հետո Ատորոմիդդ մարզպանը, նկատի ունենալով երկրի համատարած ավերածությունները՝ իրոք «թողուլ հրամայեց զհարկս աշխարհին եւ զայրուծին եւս զարքունի թեթևացոյց առ ժամանակ մի»¹։

Հեծելազորին վերաբերող պահանջը Սասանյան բազմաթիվ ալլ գրվածքների հետ միասին որպես ժառանգություն անցավ արաբներին։ Ղևոնդ պատմիչը հաղորդում է, որ արաբ զորավար Մահմեդը 705 թվականին իր մոտ նախիջևան է կանչում հայ նախարարներին իրենց հեծելազորով՝ իբր թե մատչաններում նրանց ցուցակադրելու և ոռճիկ բաժանելու համար²։

Էականն անշուշտ այն չէ, թե որքան հիմնավոր է պատմիչի անվստահությունը և որքան անկեղծ է վարվել արաբ զորավարը, այստեղ կարևոր է աշխարհագիր անելու և հայ իշխաններին ոռճիկ բաժանելու մասին արաբների մոտ ընդունված սովորության վկայությունը։

Նախարարներին նպաստ բաժանելը նույնպես Սասանյաններից մնացած ժառանգություն էր։ Սասանյան դարաշրջանի պատմիչները բազմիցս հիշատակում են ոռճիկի մասին, որ հայ իշխանները ստանում էին պարսից թագավորներից։

Զարեհավանի տակ կրած անհաջողությունից հետո Հաղկերտը ներում շնորհեց բանտարկված իշխաններին և «նորից սկսեց վճարել մինչ այդ դադարեցրած ոռճիկը»։ Նույն կերպ վարվեց նա նաև 451 թվականի ղեպրեթի հրահրիչների և ղերի տարված նախարարների նկատմամբ³։ Դեռևս Հայաստանի բաժանման նախօրեին Մուշեղ Մամիկոնյանը, կանխազգալով վերահաս փոթորիկը, հոգ էր տանում, որպեսզի կայսրության կողմից հայոց ազնվականությունը մշտական նպաստ սահմանվի, որպեսզի կարելի լինի դիմադրել պարսիկների ոտնձգություններին⁴։ Պատմիչի ասելով՝

¹ Եղիշե, էջ 41, «Աշխարհագիր առնել ամենայն երկրին հայոց ի թողութիւն հարկաց եւ ի թեթևութիւն ժանրութեան այրեւծիոյ» էջ 247, «թողուլ հրամայեց զհարկս աշխարհին եւ զայրուծին եւս զարքունի թեթևացոյց առ ժամանակ մի»։

² Ղևոնդ, էջ 33, «անցուցանել ի համարու արքունի եւ առնուլ հոռզ»։

³ Եղիշե, էջ 158, «զհատեալ ոռճիկս կարգէր անդրէն իւրաքանչիւր» էջ 376, «կարգեաց ոռճիկ եւ զպատրաստութիւն սպառազինութեան հրամայեաց յարքունուտս», նաև էջ 382։

⁴ Փավստոս, Ե, լդ, «զամենայն ազատսն հայոց կայսերական թռակօք գինտորել»։

կայսրը մեծ հաճույքով ընդունում է Մուշեղի առաջարկը և խոստանում է կատարել այն։ Եթե միայն դրանք հետագա կարգ ու կանոնի արձագանքները չեն, ապա պետք է եզրակացնել, որ պատրաստվելով Հայաստանը իրար մեջ բաժանել, երկու պետություններն էլ դիմում են հայ ազնվականությանն ու զորքերին ոռճիկ բաժանելու միջոցին՝ նպատակ ունենալով այդ ճանապարհով մի կողմից շահել նրանց համակրությունը և մյուս կողմից՝ պատրաստի զորք ունենալ։

Այդ ավանդական կարգը գործում էր դեռևս է դարում։ Կոստանդ Բ կայսրը 653 թվականին արաբների դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ հայ իշխաններին կանչում է Կարին՝ միասին խորհրդածելու թշնամու դեմ ձեռնարկվելիք միասնական գործողությունների շուրջը, ընդ որում նրանց խոստանում է «տամ ձեզ աւզնութիւն հոռզի եւ խորհիմք ի միասին, եթե զինչ արժան իցէ առնել»¹։ Այդպիսի օգնությունը հայերին զայնպիսի կողմ էին նաև պարսիկները։ Պարսիկների դեմ մի քանի իշխանների ապստամբության առթիվ խոսքով թագավորը իր մոտ՝ մայրաքաղաք է կանչում իրեն հավատարիմ մնացած իշխաններին, նրանց ամեն տեսակ պատիվ է ցույց տալիս և արքունի գանձարանից ոռճիկ նշանակում²։

Հիշամ խալիֆայի իշխանության առաջին տարում, 724 թվականին, արաբները Հայաստանում ընդհանուր աշխարհագիր են անցկացնում, ինչպես ասում է պատմիչը, «վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան»³։ Դրանից քիչ անց՝ Աշոտ իշխանը ներկայանում է ամիրապետին և միջնորդում թեթևացնելու այն ծանր վիճակը, որի մեջ գտնվում էր երկիրը։ Ի միջի այլոց, նա զանգատվում է, որ «չերից ամաց եւ անդր արդելեալ էր զնախարարացն հայոց եւ նոցին հեծելոցն ղխածիթայսն»⁴։ Պետք է ենթադրել, որ արքունիքից յուրաքանչյուր տարի տրվող նպաստի դադարեցումը քիչ առաջ կատարված աշխարհագրի հետևանքներից մեկն էր։ Նկատի առնելով Աշոտի խնդիրը՝ Հիշամը հրամայում է տալ նրան երեք տարվա շվճարված գումարը, յուրաքանչյուր տար-

¹ Սերբոս, էջ 128։
² Նույն անգում, էջ 56, «կարգել նոցա ոռճիկս յարքունուտս»։
³ Ղևոնդ, էջ 100, «աշխարհագիր առնել ընդ աշխարհս հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան»։
⁴ Նույն անգում, էջ 113։

վա համար հաշվելով 100.000¹։ Հիշամի մահից հետո (743) և նրա մերձավոր հաջորդի՝ Աբգալլահ ամիրապետի (750—775) օրոք մի նոր հրաման արձակվեց, որի հետևանքով «յայնմհետէ հատաւ սակ արծաթոյն, որ գայր ամի ամի յարքունուստ զօրացն հայոց։ Եւ զհամար հեծելոցն պահանջէին յիշխանացն. եւ հարկ լինէր ի տանց իւրեանց հանգերձել զգունդս զօրացն»²։

Քանի զեռ նախարարական հեծելազորի վերաբերյալ գործում էր հիշյալ օրենքը, անհրաժեշտ էին ստույգ տեղեկություններ իշխանների և նրանց զորքերի քանակի մասին։ Այդ անհրաժեշտության հողի վրա պետք է ի հայտ գային պաշտոնական կամ այլ բնույթի վավերագրեր՝ համանման մեր քննությունն առարկա հուշարձանին՝ Զ ո ր ա ն ա մ ա կ ի ն ։

Ձինվորական նպաստը Աբգալլահի կողմից վերացվելուց հետո այլևս շվերականացվեց։ Հետագա պատմիչների՝ Հովհաննես կաթողիկոսի և Թովմա Արծրունու մոտ այլևս հիշատակություն չկա արաբների կողմից նախարարներին տրվող դրամական օժանդակության մասին։ Այս ավանդական կարգի վերացումով վերացավ նաև պարբերական աշխարհագիրների միջոցով նախարարության և նրանց հեծելազորի քանակը պահելու անհրաժեշտությունը։ Այս տեսակետից 724 թվականի աշխարհագիրը, կարելի է ասել, եղավ վերջինը։ Սա կասկած էր այն սարսափելի աղետի հետ, որ տեղի ունեցավ Հայաստանում դրանից քիչ առաջ։ Արաբները անբարյացակամորեն էին նայում իրենց նվաճած երկրների տիրակալ իշխանների վրա և սկզբից ևեթ հալածում էին նրանց։ Այսպես, օրինակ՝ 654 թվականին հաղիվ Գիլան մտած՝ նրանք ոչնչացրին տեղական ազնվականությանը և նրանց հեծելազորը³։ Նույն նպատակն էին հետապնդում նրանք նաև Հայաստանում։ Գեոկս Աբգալ-Մելիքի (685—705) օրոք Հայաստանի արաբ կառավարիչը, ըստ պատմիչի վկայության, «խորհուրդ վատ ի մէջ առեալ բառնալ զաղատախումբ տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հեծելովք»⁴, բայց հայերի կողմից խիստ դիմադրության հանդիպեց։

¹ Ղևոնդ, էջ 113, «տայր հրաման կշռել ի ձեռս նորա ամի ամի եռ զերից ամացն»։
² Նույն տեղում, էջ 128։
³ Սերեոս, էջ 147։
⁴ Ղևոնդ, էջ 23։

Աբգալ-Մելիքի հաջորդը՝ ամիրապետ Վալիդը (705—715), ըստ նույն պատմիչի, «խորհեցաւ բառնալ յաշխարհէս հայոց զտոհմն նախարարաց նոցին հեծելովք»¹։ Արաբական իշխանությունների դավադիր ծրագրով հայ նախարարները իրենց հեծյալ զնդերով հավաքվում են Նախիջևան քաղաքում՝ արաբ կառավարչի նստավայրում, իբրև թե ցուցակագրության համար, բայց խաբեությունը բանտարկվում են՝ մի մասը Նախիջևանի եկեղեցում, իսկ մյուսը՝ հարևան Խրամ ավանում։ Գրանից հետո հրաման է տրվում կոտորել նրանց բոլորին։ Այդ մասին հիշատակում է նաև բյուզանդական պատմագիր Թեոփանեսը, ընդ որում այդ դժբախտության պատճառը նա համարում է հայ նախարարների ապստամբությունը արաբների դեմ²։ Այդ դաժան պատժին զոհ զնացին բազմաթիվ նախարարներ։ Պատմիչը ողբալով այդ կորուստը՝ ավելացնում է. «ոչ բաւիմ մի ըստ միոջէ պատմէլ, զնոսա զամենեսեանն բարձեալ ի կենաց՝ անժառանգ առնէին զաշխարհս ի նախարարաց։ Թայնմ ժամանակի թափուր ևղեալ աշխարհս հայոց ի տոհմէ նախարարաց՝ մատնէին որպէս զոշխարս ի մէջ գալլոց»³։

Այս դեպքը տեղի ունեցավ Վալիդի իշխանության առաջին տարում, 705 թվականին։ Քիչ անց՝ 723 թվականին հետևեց ընդհանուր աշխարհագիրը։

705 թվականի նենդ շարագործությունը մեծ հարված հասցրեց հայ ազնվականությանը և նախարարության պատմության մեջ ամենատխուր դրվագներից մեկը հանդիսացավ։

Այս բոլորից հետևում է, որ ինչպես Սասանյանների կործանումով է դարի կեսին ոչնչանում է Գահնամակի հիմքը ծառայող բարձի ու պատվի հաստատությունը, ճիշտ նույնպես էլ, երբ Ը դարի կեսին Աբգալ-Մելիքի ժամանակ վերացվում է նախարարական հեծելազորի վերաբերյալ Սասանյան օրենքը, վերանում է Զորանամակի անհրաժեշտությունը։

Հաստատության գործողության սահմանները ճշգրտելուց հետո

¹ Ղևոնդ, էջ 31.
² Theoph. p. 570, τοὺς δὲ μείριστας Ἀρμενίας σωρεύσας ἐν τόπῳ ἐν Ἰωοκαύστους ἐποίησεν. Այս մասին գրած նաև Միքայել Ասորին, Chabot, II p. 474. նաև Ղևոնդ, էջ 33.
³ Նույն տեղում, էջ 35։

կարող ենք հարց առաջ քաշել, թե քննարկվող վավերագրերը ի՞նչ առնչություն ունեն այդ հաստատության հետ. արդյոք նրանք հանդիսանում են իսկական պատմական վավերագրեր, թե՞ առաջացել են մի ինչ-որ այլ հողի վրա: Այդ հարցի պատասխանը բխում է հիշյալ վավերագրերի ներքին տվյալների վերլուծությունից:

Ձորանամակը պարունակում է արհեստականության շատ նշաններ: Նրա բնորոշ գիծը նախարարական ամբողջ հեծելազորը չորս խմբի բաժանելն է՝ յուրաքանչյուրում 21 կամ 22 տուն: Խրմբավորման մեջ չի նկատվում որևէ հետևողականություն կամ որևէ սկզբունք, թեկուզ տերիտորիալ. Բազրատունին և Բասենի իշխանը, օրինակ, միասին հայտնվել են Անգեղտան խմբի մեջ, Կասպքի իշխանը վերագրված է Գուգարաց խմբին, Գողթան իշխանը՝ Կաղմիաց և այլն: Բացի այդ, ցանկի մեջ մտցված են այնպիսի նախարարական տոհմեր, ինչպես Որդունի, Մանավազյան, որոնք այդ վավերագրի երևան գալուց շատ առաջ արդեն անհետացած էին. այս հանգամանքը մատնում է նրա գրքային ծագումը:

Բանակը չորս զորամասերի բաժանելը չի համապատասխանում պատմական իրականությանը և չի արդարացվում տվյալ հարցի մասին մեր ունեցած տեղեկություններով: Այսպես, օրինակ՝ բովանդակությամբ ամենահին հուշարձանի՝ Փավստոսի պատմության մեջ զորքի որևէ բաժանման մասին ակնարկ անգամ չկա¹: Թագավորական շրջանում զորքերը գործում էին սպարապետի ընդհանուր հրամանատարության տակ: Մամիկոնյանների ռազմատենչ տոհմի մեջ ժառանգական էր այդ կոչումը: Խոսքով թագավորի ժամանակ սպարապետ էր Վաչեն: Տիրանի օրոք Վաչի որդին՝ Արտավազը, Արշակի ժամանակ նույն պաշտոնում մեծ հռչակ ձեռք բերեց հայտնի Վասակը, իսկ Պապի օրոք՝ ոչ պակաս քաջարի Մուշեղը: Պապի հաջորդ Վարազդատը՝ կայսեր դրածոն, կամենալով խորտակել Մամիկոնյան հզոր իշխանների ուժը, սպանում է Մուշեղին և սպարապետությունը հանձնում Բատ Սահառունուն, բայց Մամիկոնյան տոհմից Մանվելը կարողանում է պաշտպանել իր տոհմային իրավունքը, նորից գրավում է սպարապետությունը, որը հետո անցնում է նրա որդի Արտաշիրին²: Մարզպանական

շրջանում նույն կոչումը շարունակում էին կրել Մամիկոնյանները հանձինս հայտնի իշխաններ Վարդանի, Վարդի և այլոց:

Հին հուշարձանների մեջ խոսվում է չորս բղեշխների մասին, բայց դրանք չպետք է շփոթել քննարկվող հարցի հետ: Բղեշխների մասին այն պատկերացումը, թե դրանք իբր եղել են հայոց թագավորի վասալներ և պարտավոր էին ծայրամասերում պահակային ծառայություն տանել, չի համապատասխանում պատմական վկայությունների ճշգրիտ մեկնաբանությանը: Ըստ Փավստոսի, բղեշխները պատկանում էին հայոց թագավորի ծառայող Վասալների թվին և մյուս իշխաններից տարբերվում էին նրանով, որ նրանք «արքունիքում բարձով ու գահով բոլորից ավագ էին»: Բայց չորս անձնավորություն չէին կարող միատեսակ պատվավոր տեղ գրավել գահերի սանդուղքում, իսկ եթե մեկը բարձր էր մյուսից, ապա հիշյալ արտահայտությունը այնքան էլ ընդունելի չէ նրանց բոլորի վերաբերյալ: Բացի դրանից, Փավստոսի ասելով, առաջին գահը պատկանում էր Անգեղտան ներկայացուցիչներին: Պետք է ենթադրել, որ բղեշխները չէին մտնում գահերեցություն այն շրջանակի մեջ, որ սահմանված էր մյուս նախադարձների համար. նրանք գտնվում էին, այսպես ասած, hors ligne, առանձնահատուկ, գրեթե թագավորին հավասար վիճակում: Այդ իմաստով նրանցից յուրաքանչյուրը կարող էր համարվել գահերեց: Բղեշխները յուրօրինակ փոքրիկ արքաներ էին, որոնք իրենց թագավորությունն ունեին և սկզբում անկախ էին, բայց Տիգրան Մեծի ժամանակներից սկսած ենթարկվել էին հայոց թագավորների գերիշխանությանը: Բղեշխների վերաբերյալ այն կարծիքը, թե նրանք սահմանապահներ են, կաղմվել է բավականին ուշ, և կարծում ենք գալիս է պարսից պետության կառուցվածքից, որ Սասանյանների օրոք բաժանված էր չորս երկրամասի: Խոսքովի օրոք, ինչպես տեսանք, չորս երկրամասի քաղաքացիական կառավարիչները փոխարինվեցին զինվորականներով՝ սպահերգներով, և դրան համապատասխան էլ բանակը բաժանվեց նրանց միջև: Այս հանգամանքն էլ անդրադարձավ նաև հայերի՝ իրենց անցյալի մասին ունեցած պատկերացման վրա: Այն զրույցը, թե հայ զորքը չորս թևերի էր բաժանված, ոչ այլ ինչ է, եթե ոչ պարսկական կարգուկանոնի արձագանքը: Ընդօրինակելով պարսիկներին և նրանց աղբեցության տակ հայերը պատկերացնում էին, որ իրենց թագավորների ժամանակ էլ երկրի զինվորական ուժերը պետության սահմանների պաշտ-

¹ Ի միջի այլոց պետք է նշել Փավստոսի հետևյալ խոսքերը. «և հնազանդէր զմեծամեծսն զիրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց սահմանացն հայոց սահմանապահս կացուցանէր» Գ, ր:
² Փավստոս, Գ, է, ժա և ժը, Գ, բ, ճ, ա, լէ և խդ:

պանութեան նպատակով աշխարհի շորս կողմերին համապատասխան բաժանված են եղել շորս թևերի: Այդ գաղափարի գրական արտահայտութիւնն են Զորանամակի նման հուշարձանները: Այդ նկատառումներով Զորանամակը մեզ հասած խմբագրութեամբ խոսքով Անուշիրվանի (531—579) ժամանակվա գործ է և չէր կարող է գարից ավելի շուտ ստեղծված լինել: Ապրելով համեմատաբար այնպիսի մի ուշ ժամանակաշրջանում, երբ նախարարութեան պատմական լատինները քայքայվում էին, Գահնամակի հեղինակը իր մտադրութիւնն իրագործելու համար պետք է դիմեր դրքային աղբյուրներին: Գրքային ծագումով է պայմանավորվում նաև նախարարական հեծյալ ուժերի խմբավորման արհեստականութիւնը. շորս խմբերի գլուխ էին կանգնած Գուգարաց և Անգեղատան բզեշխները և Սյունյաց ու Կարմյաց իշխանները: Հետաքրքրական է, որ ասպարեզից անհետացած մյուս երկու բզեշխներին փոխարեն Սյունյաց աղբյուրի տան կողքին առաջ է քաշվում Կարմյաց Անանունի տունը: Այս շորս անունների շուրջը, առանց պահպանելու որևէ principium divisionis, համախմբվել են նախարարական մյուս տոհմերը: Հայ պատմիչներից զորքը շորս թևերի բաժանելու մասին խոսում է Խորենացին, ընդ որում ըստ յուր սովորութեան զրա նախածնունդները վերագրում է Արտաշէս թագավորին: Հենց նա է, որ, ըստ հայ պատմիչի վկայութեան, բանակը բաժանեց շորս զորախմբի՝ արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային և նրանց հրամանատարութիւնը հանձնեց իր երեք որդիներին ու զորավար Սմբատին¹:

Բանակի բաժանման մասին ծանոթ լինելու հետքեր նկատվում են նաև Զենոբի մոտ. նրան հայտնի է, որ Տրդատ թագավորը ետ մղելով հյուսիսի թագավորի արշավանքը՝ թողնում է այնտեղ «կողմնապահ՝ զիշխանն Աղծնեաց շորք հազար արամբ», իսկ դրանից առաջ պատրաստվելով ճակատամարտի և իր զորքերը դասավորելով, Տրդատը՝ «եւ փողոցս թողեալ պատերազմին դրունս երկու (ուրիշ օրինակի մեջ՝ ութ) եւ դոնապահս տեղեացն զԲագրատունեացն իշխանն կացուցանէր: Իսկ զաջ թեւն զօրուն տայր ի ձեռն իշխանին Սիւնեաց եւ զահեակ թեւն՝ ի ձեռն իշխանին Անգեղտան:

¹ Խորենացի, Բ, Ժգ, սբաժանէ Արտաշէս եւ զիշխանութիւն զօրուն ընդ շորս. զարեւելանն թողու ի վերայ Արտավազդայ եւ զարեւմտանն տայ Տիրանայ, զհարաւայինն ի Սմբատ հաւատայ եւ զհիւսիսայինն ի Զարեհ:

Իսկ զգահէրէց իշխանն կացոյց թիկնապահս իւր²: Աղծնյաց իշխանը 4000 մարդով, Սյունյաց և Անգեղտան իշխանները որպէս զորքի ձախ և աջ թևերի հրամանատարներ, սրանք փաստեր են, որ ցույց են տալիս Զենոբ Գլակի հարազատութիւնը մեր Զորանամակի հետ:

Խորենացին հաղորդում է, որ Վաղարշակ թագավորը հաստատում է զինվորութեան առաջին, երկրորդ, երրորդ կարգ և այլն²; խոսքը վերաբերում է զինվորական գահնեցութեանը. անկասկած պատմիչը ակնարկում է մեր սույն հուշարձանին նման մի ուրիշը, և շատ հավանական է, որ տվյալ դեպքում նկատի ունի հենց Զորանամակը:

Ճիշտ է, Խորենացու, ինչպես նաև Զենոբի ժամանակը վիճելի է և դեռ չի ճշգրտված, բայց և այնպես նրանց ծանոթութիւնը վավերագրին բարձրացնում է վերջինիս արժեքը, և մեզ օգնում ճշտելու նրա երևան գալու ժամանակը:

Վերահիշյալ վավերագրի տարիքը որոշելիս պետք է օգտագործել նաև նախարարական ուժերի քանակի մասին այնտեղ եղած տվյալները: Գահնամակի թվային վկայութիւնները, որպէս հուշարձանի, ամենահետաքրքրական և ինքնատիպ կողմն են: Հիմք չկա ենթադրելու, թե այդ թվերը մտացածին են: Թվերի հարցում Գահնամակը հենվում է պատմական քիչ թե շատ արժանահավատ նյութերի վրա:

Սյունյաց խումբը բաղկացած է 21 տոհմից՝ 21 հազ. այրուծի, Գուգարաց խումբը՝ 22 տոհմից՝ 18 հազ. այրուծի, Անգեղտան խումբը՝ 21 տոհմից՝ 24 հազ. այրուծի, Կարմյաց խումբը՝ 22 տոհմից՝ 21 հազ. այրուծի, ընդամենը՝ 84 հազար այրուծի:

Իսկ եթե շահավեցը իշխանական այն տոհմերը, որոնք դուրս էին Մարդպանական Հայաստանի սահմաններից և սահմանափակվեց միայն Սահակ կաթողիկոսի՝ Գահնամակի մեջ հիշատակված նախարարութիւնների շրջանակով, կստանանք՝

Սյունյաց խմբում՝ 7 տոհմ և 19 հազ. այրուծի,
Գուգարաց խմբում՝ 16 տոհմ՝ 7.800 (առանց Կասպքի 3.000) այրուծի,

¹ Զենոբ Գլակ, էջ 46, 49.
² Խորենացի, Բ, Բ, «եւ կարգս զինուորութեանց եւ հոցունց առաջինս եւ երկրորդս եւ երրորդս եւ որ ի կարգին»:

Անգեղտան խմբում՝ 13 տոհմ՝ 8.200 (առանց Անձախի 4000), Կարձյաց խմբում՝ 15 տոհմ՝ 6.000, ընդամենը՝ 51 տոհմ և 41.000 այրուձի՝ չհաշված 7000 կասկածելիները:

Թեև մենք հնարավորություն չունենք ճշտելու Գահնամակի վերոհիշյալ թվային տվյալները, բայց որքան կարելի է դառնել մատենագրության մեջ ցրված աղբատիկ նյութերից, դրանք հետու չեն ճշմարտությունից:

Ըստ Ագաթանգեղոսի վկայության, Տրդատ թագավորի օրոք հայոց զորքերի թիվը 70 հազարից ավելի էր¹: Այդքան էր զորքերի թիվը նաև Տրդատի որդու և հաջորդի՝ Խոսրովի օրոք. նրա զորավար Գաաաբենը Ազձնիթի ապստամբ բդեշխի դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ ուներ 40 հազար զորք: Զորավարի գավաճանության հետևանքով զորքերը չարզվեցին պարսիկների կողմից, և Խոսրով թագավորը այս վերջինների դեմ ելավ 30 հազար զորքով², Հարցը, Իհարկե, այն չէ, թե իրոք բոլոր 40 հազարը կոտորվեցի՞ր, թե դա պատմիչի չափազանցությունն է, այլ այն, որ նա թագավորի ուժը հաշվում է 40 հազար և 30 հազար, ընդամենը 70 հազար, այսինքն՝ ճիշտ այնքան, որքան ուներ Տրդատը:

Հայկական զորքերի հրամանատարները իրենց տրամադրության տակ ունեցել են 10 հազարից մինչև 120 հազար մարդ. պարսիկների դեմ մղած երկարատև պատերազմների ընթացքում վասակ Մամիկոնյանը թշնամու դեմ է դուրս եկել և խորտակել նրա անթիվ անհամար զորքերը՝ իր տրամադրության տակ ունենալով երբեմն՝ 12 բյուր կամ 120 հազար, երբեմն՝ 60, երբեմն՝ 40, երբեմն՝ 70, երբեմն՝ 30 հազար, իսկ երբեմն էլ՝ 11 և 10 հազար³: Մյուս զորավարի՝ Մուշեղ Մամիկոնյանի տրամադրության տակ եղել է ընդամենը 40 հազար ընտիր մարդ: Նպատ լեռան տակ՝ Նիբատ գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Մուշեղին հաջողվում է հավաքել մինչև 90 հազար: Նույնքան զորք կար նրա

¹ Ագաթանգեղոս, էջ 502—503, Տրդատը դնում է Հոռո՝ քաղաղ մեծամեծօք և և իթանատուն հազարաւ ընտիր զօրուն հանդերձա: Սա կրկնվում է Սեբեոսի մոտ՝ դավանաբանական հայտնի նամակում, էջ 128: Այս հանդամանքը կարևոր է Ագաթանգեղոսի և Սեբեոսի հեռագրությունների համար:

² Փավստոս, Գ, ր:

³ Նույն տեղում, Գ, ի, ի, ի, Կ, լր—լդ, խը, բը: Հանդիպում են նաև թվեր, որոնք ակնհայտորեն առասպելական են, ինչպես 400.000 այրուձի, Գ, ի, կամ 600 հազար, Գ, 21:

հրամանատարության տակ նաև Գահնակի ճակատամարտում: Ատրպատականի կողմից Հայաստանի սահմանները պաշտպանելու նպատակով զորքի մի մասը մարդպետ Գրակին հանձնելուց հետո Մուշեղին մնում է 30 հազար¹: Վարազդատի օրոք ծագած խռովության ժամանակ Մուշեղի հաջորդը՝ Մանվելը հաղթվ կարողանում է հավաքել 20 հազար, իսկ մի այլ դեպքում՝ 10 հազար զորք²: Այս վկայությունները համեմատելով Գահնամակի հետ, որի մեջ նախարարական ուժերը թագավորական և մարդպետական հեծելազորի հետ միասին հաշվվում էին մինչև 120 հազար, կարելի է վստահորեն ասել, որ բրիտանոսյա Արշակունիների օրոք Հայաստանը ի վիճակի էր մարտի դաշտ հանել մինչև 120 հազար այրուձի:

Մարդպանական իշխանության շրջանում նախարարական հեծելազորի քանակը իջավ մինչև 30 հազարի: Վահան Մամիկոնյանը, հակառակ Փարպեցու, որը ուժեղ տպավորություն գործելու նպատակով գիտակցաբար պակասեցնում է նշանավոր ռազմիկի զորքերի թիվը, ուներ մինչև 30 հազար հիանալի զինված մարտիկներ, ինչպես այս մասին վկայում է ճշմարտախոս Սեբեոսը³: Խոսրով Փարվեղի օրոք, ինչպես պատմում է Հովհան Մամիկոնյանը, Հայաստանի մարդպան իր տրամադրության տակ ուներ դարձյալ 30 հազար զորք⁴: Հետաքրքրական է, որ ըստ Զենոբի, Տրդատն ուներ 30 հազար զորք Ագաթանգեղոսի 70 հազարի փոխարեն, որ նշան է, թե Զենոբի աշխատությունը Ագաթանգեղոսի համեմատությամբ ավելի ուշ ժամանակվա գործ է: Բյուզանդական պատմագիր Պրոկոպիոսը հաղորդում է, որ պարսից Կավատ թագավորը 531 թ. կայսեր դեմ ուղարկում է մի բանակ, որ «կազմված է պերսարմեններից և ալաններին հարևան սուսիտներից», այսինքն՝ Սյունիքի և Հայաստանի մյուս նահանգների ուժերից⁵: Այդ զորքը, որ կազմված է բացառապես հեծյալներից, ինչպես վկայում է նույն հեղինակը, հաշվվում էր 30 հազար մարդ, որոնցից երեք հազարը հոներ էին: Օտար աղբյուրի այս արժեքավոր վկա-

¹ Փավստոս, Ե, ր, դ, և, զ:

² Նույն տեղում, Ե, լթ, խ:

³ Սեբեոս, էջ 24 «Վ հազար ընտիր վառելոց»:

⁴ Հովհ. Մամիկոնյան, էջ 13:

⁵ Proc. Pers. I 15, p. 74, τὸ δὲ στράτευμα τοῦτο Περσαρμενίων τε καὶ Σουσσιτῶν ἦσαν οἱ δὴ Ἄλ<υ>ανοῖς εἰσι ὄμοιοι. զորքի քանակի մասին, p. 75:

յությունն ամենալավ ապացույցն է, որ Մարզպանական Հայաստանի հեծյալ ուժը հասնում էր մինչև 30 հազար մարդու Արարական տիրապետության շրջանում այդ թիվը կիսով չափ կրճատվեց: Երբ արարենբը տիրեցին Հայաստանին, նրանց միջև կնքվեց դաշինք, որի կետերից մեկը պարտավորեցնում էր հայերին պահել 15 հազար հեծյալ¹: Երկրի համար բազմաքանակ հեծելազորը մեծ ծանրություն էր, և նրա կրճատումը արարենբի կողմից համարվում էր զիջում: Այդ պարտավորությունը, ըստ երևույթին, ուժի մեջ մնաց նաև արարական իշխանության հետագա ժամանակներում: Ղևոնդը պատմում է, որ Ը դարի կեսին գահին տիրելու համար Մովսեսի վարած պատերազմների ամենարուսն շրջանում, երբ հայոց իշխան Աշոտ Բագրատունին Հայաստանին վերաբերող գործով ուղևորվում է Ասորիք՝ Մովսեսի մոտ, պատերազմի դաշտ, թշնամիները պարտություն են կրում, որովհետև նրանց լուր է հասնում, թե հայոց պատրիկը օգնության է եկել Մովսեսին և իր հետ ունի 15 հազար ընտիր այրուձի²: Աշոտի հեծյալների քանակը, անկասկած, կախում ուներ պայմանագրային հիշյալ պայմաններից:

Սվ, ալսպես, Արշակունիների կործանումից հետո Հայաստանի զինվորական ուժերը աստիճանաբար նվազում են: Այդ հիման վրա մենք իրավունք ունենք եզրակացնելու, քանի որ Զորանամակի մեջ երկրի ուժերը հաշվվում են 120 հազար հեծյալ, այս դատարարում է այն վիճակը, որ գոյություն ուներ հայոց պատմության թագավորական շրջանում:

Մենք չունենք բավականաչափ տվյալներ նաև ստուգելու Զորանամակում առանձին իշխանների միջև հեծելազորի բաշխման հարաբերական ճշտությունը: Պատմիչների մոտ հանդիպում են վկայություններ զանազան մանր զորաբաժինների վերաբերյալ՝ մեկ կամ մի քանի իշխանների հրամանատարության ներքո, բայց այդ տեղեկությունները անբավարար են և որոշակի գաղափար չեն տալիս տվյալ հարցի մասին³:

¹ Սերեոս, էջ 138, «հեծելա կալէք յաշխարհին ժն հազար»:

² Ղևոնդ, էջ 120, «Ե՛հաս պատրիկն հայոց ի թիկունս օգնականութեան եւ ունի ընդ իւր ընտիրս հեծելոց ծնո արանց վառելոց»: Վահրամ Զորինի խոսքով թյունների ժամանակ հայերը պաշտպանում էին խոսքովին և ուղարկում են նրան օգնական ուժեր զարձյալ 15.000 այրուձի, բայց Սերեոսից երևում է, որ դա հայոց սովորյալ զորքը չէր, այլ միայն մի մասը, որք ի ժամուն առ ձեռն գտեալ», էջ 36:

³ Սերեոս, էջ 42, «Մամիկոնեան. արս 2000» էջ 48, Վահուտի, Խորխոտների,

Փավստոսի վկայությամբ, իշխան Դատաբենի միջադեպից հետո խոսքով թագավորը «գնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեալքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն կայցեն առ արքային»¹: Մի ուրիշ պատմիչի ասելով՝ Մորիկ կայսրը, պաշտպան կանգնելով պարսից խոսքով թագավորին, նրան օգնության է ուղարկում 15 հազար հեծյալ՝ հայերից բաղկացած մի զորամաս, որ կազմված էր հարյուրական և հազարական մարդուց բաղկացած նախարարական զնդերից, որոնցից յուրաքանչյուրը մի առանձին ջոկատ էր իր սեփական գրոշի տակ²:

Առաջին պատմիչի՝ Փավստոսի խոսքերից երևում է, որ կային նախարարներ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին մինչև 10 հազար այրուձի, ուրիշները՝ հազարական. և եթե Սերեոսի «հարիւրաւոր, հազարաւոր» արտահայտությունն էլ հասկանանք Փավստոսի իմաստով (և ոչ թե այն իմաստով, որ զորքը բաժանված էր հարյուրյակների և հազարյակների), ապա ըստ էության կարելի է ապացուցված համարել, որ նախարարական զորամասի բաշխումը հազար, հարյուր և հիսուն հոգիանոց ջոկատների, ինչպես այդ գտնում ենք Զորանամակի մեջ, ռոմանտիկ պատմիչի երևակայության պտուղ չէ, այլ պատմական հիմք ունի:

Այս բոլորից հետո կարելի է անցնել մեզ հետաքրքրող վավերագրերի ծագման հարցին: Նրանց մեջ եղած իսկապես կենցաղային և պատմականորեն ճշմարիտ գծերի գոյությունը դեռևս չի ապացուցում այն պաշտոնական ծագումը, որին նրանք հավակնում են: Ենթադրենք, թե երկու վավերագրերն էլ իրոք վերարտադրում են ծանոթ պատմական կացություն, բայց դրանք իբրև ստեղծագործություններ արդյոք պաշտոնական ակտեր են, թե՞ գրական ձեռնարկումներ: Նախընթաց վերլուծությունները արդեն որոշ շփոթված նախապատրաստել են այդ հարցի պատասխանը: Ուշագրությունը

Մամիկոնեան և մյուսների «հեծելաք 2000», էջ 55, Սահակ Մամիկոնեան՝ 1000, Միքայի Բագրատունի՝ Նույնքան, էջ 65, Արծրունի և մյուսները՝ 2000, էջ 101, Մուշեղ Մամիկոնեան՝ 3000 և այլն: Ըստ Փավստոսի Ասորպատակալի մարզպանը ուներ 3000 զորք, հմմտ. Զորանամակի «Կասպի» 3000-ի» հետ:

¹ Փավստոս, 9, 21:

² Սերեոս, էջ 36, «Անցեալք ի հանդիսի իբրև հազարք հեղեատասանք, իբր քանիդ գուճը նախարարաց ըստ հազարաւորաց ըստ գնդից ըստ դրաւուց իրեանց»: Սկիզբը՝ էջ 34 (թիւթերի ետևառջույն պատճառով):

նայելով Գահնամակում եղած նախարարական տոհմերի աստիճանակարգին՝ մենք տեսնում ենք, որ մերձավոր նմանություն կա նրա և իշխանների այն ցանկերի միջև, որ գտնում ենք Փարսեցու և Նդիշեի մոտ: Եվ իրոք, Գահնամակից դուրս հանելով Մոփաց սատրապին ու Կասպքի իշխանին և մնացածը բաղդատելով 450 թվականի ժողովի մասնակիցների ցանկի հետ, գտնում ենք.

Ը Ս Տ Գ Ա Հ Ն Ա Մ Ա Կ Ի

- 1 Սիւնեաց տէր
- 2 Ասպետն
- 3 Արծրունեաց տէր
- 4 Մաղխազունի
- 5 Մամիկոնէից տէր
- 6 Մոկաց տէր
- 7 Ռշտունեաց տէր
- 8 Վահ<եւ>ունեաց տէր
- 9 Անձաւացի
- 10 Ապահունեաց տէր
- 11 Կամաւրականն
- 12 Վանանդացին
- 13 Ամատունեաց տէր
- 14 Գողթան տէր
- 15 Գնունեաց տէր

Ը Ս Տ Փ Ա Ր Պ Ե Յ Ո Ւ

- 1 Սիւնեաց տէր
- 2 Բագրատունի
- 3 Արծրունի
- 4 Մաղխազ
- 5 Մամիկոնեան
- 6 Վանետունի
- 7 Մոկաց
- 8 Ռշտունի
- 9 Անձաւացի
- 10 Ապահունի
- 11 Վանանդի իշխան
- 12 Արշարունի = Կամաւրական
- 13 Ամատունի
- 14
- 15 Գնունի:

Փարսեցու ցանկի մեջ այնուհետև հետևում են ևս մի քանի անուններ, բայց նրանք չեն համընկնում Գահնամակի հետ ցանկի ոչ լրիվ լինելու պատճառով, քանի որ շատ իշխաններ ժողովից բացակայում էին: Գրանով է բացատրվում նաև, թե ինչու ցանկում չկան Բագրատունի և Ռշտունի իշխանները: Տիրոց Բագրատունին համակիր չէր գործին և չներկայացավ ժողովին, իսկ որ ներկա լինելու զեպքում նա կգրավեր երկրորդ տեղը, երևում է նրանից, որ ուխտագրութաների ցանկում նա հիշվում է առաջինը¹: Ժողովից բացակայում էր նաև Ռշտունեաց իշխանը:

Երկու սյունակներն էլ համապատասխանում են միմյանց

¹ Փարսեցի, էջ 142:

mutatis mutandis, ուրեմն՝ Գահնամակը արտացոլում է Ե դարի դահերեցությունից վիճակը: Բայց դրանից դեռևս չի հետևում, որ ինքը՝ հուշարձանը, վերաբերում է այդ նույն ժամանակին: Կարելի էր կարծել, որ Գահնամակը կազմված է հիշյալ երկի հիման վրա: Գրան խանգարում է, սակայն, այն հանգամանքը, որ Գահնամակը չի կարելի բխեցնել Փարսեցուց in toto. նրա մեջ կան բաներ, որոնք մեզ հայտնի չեն ոչ միայն Փարսեցուց, այլ նաև ուրիշ գրավոր հուշարձաններից¹: Ավելի հավանական է ենթադրել, որ Գահնամակի հեղինակը, հետաքրքրվելով հայրենի անցյալով, այն ժամանակ իրեն մատչելի գրավոր նյութերի, ի միջի այլոց նաև Փարսեցու աշխատության հիման վրա կազմել է մոտավոր Գահնամակ: Նկատի ունենալով, որ Գահնամակը ստեղծվել է մինչև Խորենացին, այսպիսի լուսաբանությամբ էլ նա մեզ համար ունի գրեթե պաշտոնական վավերագրի նշանակություն:

Գահնամակի ծագման ժամանակը ճշտելու համար Անդոկի մասին վերահիշյալ Զրույցի մեջ զգացվում է ինչ-որ հենարան: Այստեղ Ագաթանգեղոսի Գահնամակի տակ հասկացվում է այն իշխանների ցանկը, որոնք սրբ. Գրիգորին ուղեկցում էին Կեսարիա եպիսկոպոս ձեռնադրելու: Զրույցի հեղինակը չի իմացել մեր Գահնամակի գոյության մասին, հակառակ դեպքում նա չէր զլանա հենվելու նրա վրա մի այնպիսի բարեպատեհ առիթով, ինչպիսին էր Շապուհի հարցումը հայ իշխանների գահերի մասին: Արդյոք այստեղից չպե՞տք է եզրակացնել, թե Գահնամակի ծագումը Զրույցի համեմատությամբ ավելի ուշ է: Զրույցը չի կարող ընդունվել որպես Պետրոս Սյունեցու գործ, հակառակ նրա հայրենակից Օրբելյանի վկայության, և առայժմ այն պետք է լուսաբանել «Աղվանից պատմության» կապակցությամբ: Այս վերջինիս կոմպիլիտիվ բնույթը կասկածի ենթակա չէ: «Աղվանից պատմության» հետ

¹ Օրինակ, կրկնվող անունները: Գրանցից մի քանիսի մասին պատմիչների մոտ կան որոշ հիշատակություններ. Սեբեոս, էջ 65, գիտե նրկու Ապահունի, Ղ. Փարսեցին, էջ 64, և Նդիշեն, էջ 185, տարբերում են երկու Գիմարոյաններ, որոնցից մեկի ներկայացուցիչն է Թաթուլը, մյուսինը՝ Հմայակը: Նդիշեի մոտ, էջ 186, «միև եւս այլ Գողթի Գիմարոսեան»: Մենք արդեն նշեցինք Արծրունիների տոհմում երկու ճյուղերի առկայությունը: Փարսեցու մոտ հիշվում են երկու Գիւս Վահեունի՝ մեկը Վասակի համախոհներից է, էջ 67, մյուսը՝ Վարդանի հետ միասին Աղվանքում էր, էջ 64, ի միջի այլոց նշենք, որ Նդիշեի մոտ մի զեպքում Գիւս-ի փոխարեն կա գուեղն տարբեթերցվածքը, էջ 185:

Զրույցի ունեցած առնչության հարցը, բայց էություն, այն է, թե Զրույցը այդ պատմության ո՞ր շերտին պետք է վերագրել: «Աղվանից պատմության» միջուկն ու հնագույն տարրերը այն էջերն են, որոնք նվիրված են Վիրո կաթողիկոսի այցելությանը խազարների իշխանին 628 թվականին, և որոնք գրել է նկարագրված դեպքերի ականատեսը¹: Այդ ամենը շարագրված է Բ գրքում, որ և սկսվում է Անդոկի մասին եղած Զրույցով: Բնական է ենթադրել, որ Զրույցը նույնպես ավելի վաղ չի ստեղծվել, քան Բ գրքում շարագրված դեպքերը, այսինքն՝ մինչև է դարը: Մեզ դրադեցնող հարցին կարելի է մոտենալ նաև մի այլ կողմից, այսինքն՝ ճշտելով նույն այդ ցանկի ժամանակը, որը բերվում է Զրույցի մեջ Ազաթանգեղոսի Գահնամակ անունով: Ի՞նչ է ներկայացնում իրենից այդ Գահնամակը:

Ազաթանգեղոսի պատմության մեջ կա նաև մի ուրիշ ցանկ, որ պարունակում է այն իշխանների անունները, որոնք մտնում էին Տրդատի շքախմբի մեջ նրա Հոռմ ուղևորվելու ժամանակ: Այդ ցանկերը միայն թյուրիմացաբար կարելի է Գահնամակ անվանել: Անդոկի մասին եղած Զրույցի մեջ Գահնամակի տակ հասկացվում է առաջին ցանկը, որ բաղկացած է 16 տոհմից: Զրույցի մեջ հիշատակված է 17 բարձ, հավանորեն մտցված է նաև թագավորը: Հետաքրքրական է և այն, որ Ազաթանգեղոսի մոտ Սյունյաց իշխանը 11-րդ տեղումն է, իսկ Զրույցի մեջ՝ 14-րդ: Ազաթանգեղոսի արարական վերսիայի մեջ իշխանների ցանկից առաջ նշված են վրացական, ափսազական և աղվանական թագավորները, և միայն նրանցից հետո գալիս են իշխանները: Եթե այդ նրեք թագավորներին մտցնենք ցանկի մեջ, ապա Սյունյաց իշխանը, իսկապես, կհայտնվի 14-րդ տեղում: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Զրույցի հեղինակը օգտվել է ոչ թե ներկայիս Ազաթանգեղոսից, այլ նրա ավելի հին խմբագրությունից, որ համապատասխանում է նորահայտ արարական վերսիային²:

¹ Մովսես Կաղանկատվացի, էջ 125, «Անդ տեսաք զբազմոցս», էջ 130, «Ես Վիրոյ Աղուներից կաթողիկոս» և այլն:

² Եթե չլիներ արարական վերսիան, այս հանգամանքը կարելի կլիներ բացատրել Ազաթանգեղոսի երկրորդ ցանկի ազդեցությամբ, որի մեջ տվրում առանձին-առանձին նշվում են շորս բղեշխները և ապա գալիս են Անգեղ տունը և մյուսները: Առաջին ցանկում Անգեղտան իշխանին անմիջապես հաջորդում է Աղձեյաց բղեշխը, այդ պատճառով էլ Զրույցի հեղինակը ցանկի մեջ մտցրել է միայն երեք բղեշխներին, որի հետևանքով Սյունյաց իշխանը կարող էր հայտնվել

Տասնվեց իշխանները հետևյալներն են.

- | | |
|-----------------------------------|------------------------|
| 1 իշխան Անգեղտան ¹ | 9 Ռուշտունեաց |
| 2 Աղձենաց ² բղեշխն մեծ | 10 Մոկաց ⁶ |
| 3 Մարդպետութեան ³ | 11 Սիւնաց |
| 4 Ասկետութեան ⁴ | 12 Մալէից ⁷ |
| 5 Սպարապետութեան | 13 Ուտիւաց |
| 6 Կորդովաց ⁵ | 14 Չարաւանդ եւ Հեր |
| 7 Մովսաց | 15 Մաղիազութեան |
| 8 Քարգաւացաց միս րղեշխն | 16 Արծրունեաց |

14-րդ տեղում: Որ այդ դեպքում Փուգարաց բղեշխը երկու անգամ է ցանկի մեջ մտցվում, քանի որ նա հենց ինքն է առաջին ցանկի Մոկաց բղեշխը, ապա այդ պետք է բացատրել գուցե նրանով, որ հեղինակը չի իմացել նրանց հաջորդականությունը:

¹ Ազարանգեղոս, հայերեն, էջ 461—462; Հունարեն թարգմ.՝ էջ 68—69, ed. P. de Lagarde, Abh. Ac. zu Göttingen. Bd. 35. 1887; Արարական վերսիայում, էջ 115; Պետարում *سجستان* XI անդամով, որ Ն. Յա. Մառը նույն տեղում, էջ 202, առաջարկում է կարգով *الجبجيس*, ըստ որում դրա տակ նա տեսնում է հունարեն γύψ, հայերեն թարգմ. անգղ: Ես կարծում եմ, սկզբի վանկը բառի մաս է և ամբողջ բառը հանդիսանում է նախնական բառի ոչ ճիշտ ընթերցումը *انجيليين* Անջելին = Անգելներա:

² Ձեռագրում *ارظنوخ* անտարակույս ծագում է *ارظلين* կամ *ارظمون*-ից:

³ Ձեռագրում *ارمشان* փոխ. *ديشان* (մ):

⁴ Ձեռագրում կարդացվում է իշխան Ասպետների, ասպետ կոչումով, որին զետազված էր կոստների և մտզն-ների լեռների *جبل القوسيين* պահպանությունը, Հայ գրականության մեջ հայտնի լին կոստների լեռներ և բնավ հասկանալի չէ մտզն-ների բառը: Այդ դարձվածքն անտարակույս արտահայտում է հայերեն բնագրի սանեմանկալ յարեմտեց կուսե (համտ. ետեմացի, Բ, դ), որտեղ վերջին բառը հունարենի թարգմանիչը ընդունել է հատուկ անվան տեղ, իսկ արարներենի թարգմանիչը իր ունեցած հունարեն բնագրի *δρος* սահման բառը շփոթել է *δρος*—լեռ բառի հետ: Ինչ վերաբերում է *المطزنيون* բառին, ապա այդտեղ հավանաբար ունենք *المغزونيون* արեմտեց բառի աղավաղումը:

⁵ Կմբլի իշխան՝ կորդիտների մոտ *قمرذل* հավանաբար հայերեն Կորչ ճը-ի աղավաղումն է:

⁶ Ձեռագրում *المقنصون*, փոխ. *المقنصون*:

⁷ Ձեռագրում *داسيرواوان*, որ ըստ Ն. Մառի *θεοπιτεϊων* կամ *θεοπιότων* հունական տեքստի հայ. *Տափաօն*-ի Բայց *Տափաօն* հայ. Շահապ հիշվում է իշխանների մի այլ ցուցակում, որը չկա արարական վերսիայի մեջ: Ըստ բնագրի իմաստի այդ բառը համապատասխանում է հայ. Մալէից-ին, որի աղավաղումը պետք է ընդունել:

Այն միակ կէտը, որով այս ցանկը շփւում է Գահնամակի հետ, հանդիսանում է Մամիկոնյանների տեղը. թե՛ այստեղ և թե՛ այնտեղ նրանք զբաղեցնում են հինգերորդ տեղը, մի զուգահիշութիւն, որ կարծում ենք, պատահական է: Ուշադիր նայելով ցանկին, տեսնում ենք, որ 16 իշխաններից 8-ը Աշխաբհացուցի մեջ բնգունված երկրների՝ Աղձնյաց, Կորճից, Գուգարաց, Մոկաց, Սյունյաց, Սավղեից կամ Սուքի-Արցախի, Ուտիացոց, Զարեանգի և Հերի-Պարեանացի ներկայացուցիչներ են. մնացած ութը՝ կենտրոնական նահանգների՝ այն երկրների ներկայացուցիչները, որ կոչվում էին Տանուտերական: Մենք վերևում տեսանք, թե ինչ մասերի էր բաժանվում Տանուտերական երկիրը: Ցանկում դեռևս չկան այդ մասերը. նշվում է միայն Մարդաբաշահանի և Վասպուրականի միջև եղած տարբերությունը նեղ խմատով, Սրժրունիների և Ռշտունիների ներկայացուցիչների սահմաններում: Տանուտերական երկրի այն մասը, որը հետագայում կոչվեց Տարբերան, ներկայացված է հանձինս Մամիկոնյանների և Խորխոռունիների Այրարատից ներկայացուցիչներ չկան. որպես Արշակունիների կալվածք, այն ներկայացված է հանձին թագավորի: Նրա մի մասը՝ այն է Բագրևաճը սահմանակից Կողովրդի հետ միասին որպես ներկայացուցիչ ունի Բագրատունի իշխանին:

Այս ներկայացուցիչները արտացոլում են իրերի գրությունը Գ դարի վերջին՝ համապատասխանելով Հայոց աշխարհի բաժանմանը մինչև Աշխաբհացուցը: Ցանկը կրում է միտումնավորության գործը. նրա հեղինակը ցանկացել է Հայոց աշխարհը իր գլխավոր մասերով հաղորդակից դարձնել Լուսավորչի ձեռնադրությանը և առհասարակ նրա գործունեությանը: Փավստոսից զիտենք նաև այլ դեպքեր, երբ իշխանները հայրապետական աթոռի թեկնածուին ուղեկցել են Կեսարիա նույն նպատակով, բայց ուղեկցողների մեջ այդպիսի ընտրություն չի նկատվում: Ազաթանգեղոսի խմբագրությունը, ըստ երևույթին, վերաբերում է այն շրջանին, երբ Լուսավորչի անունը առաջ էր քաշվում որպես մի կոչ երկիրը հայոց եկեղեցու գերիշխանության տակ միավորելու համար: Գրիգոր Լուսավորչի անվան պրոպագանդան սկսվեց 555 թվականի ժողովից հետո հակախառնակության հողի վրա և այնուհետև աննկատելի, բայց հետևողականորեն փոխադրվեց հակաքաղկեդոնականության կամ հակաերկարնակության հողի վրա բնահանրապետ: Հայ-վրացական եկեղեցական հարաբերություն-

ների խզումը Զ դարի վերջին և է դարի սկզբին տեղի ունեցավ այնպիսի մի ժամանակ, երբ հակախառնականությունը բազաքական պայմաններին համապատասխան վերանեց հակաքաղկեդոնականության: 612 թվականին պարսից խոսրով թագավորի արքունիքում տեղի է առնում եկեղեցական ժողով՝ միաբնակների և նեստորականների միջև եղած վեճը լուծելու համար, որն ավարտվեց վերջիններիս պարտությունը: Հայկական եկեղեցու կողմից ժողովին արվեստ ներկայացուցիչներ մասնակցում էին Մամիկոնեից կաթիկոսոս Կոմիտասը, ապագա կաթողիկոսը և Ամատունյաց կաթիկոսոս Մատթեոսը: Հայ պատմիչի վկայությամբ նրանք «ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի»¹: Այդ ժամանակ արդեն զոյություն ունեւ Ազաթանգեղոսի այն խմբագրությունը, որ պահպանվել է արաբական թարգմանություններ ի հակադրություն մեզ հասած հայկական Ազաթանգեղոսի, որն ունի հակաքաղկեդոնական խմբագրություն:

Հակախառնական խմբագրության մեջ, ինչպես երևում է նաև արաբական վերսխաչից, արդեն կար 16 իշխանների ցանկը: Անդոկի Զրույցը «Աղուանից պատմության» մեջ իր ծագումով հասնում է 628—30 թվականները, ուստի հեղինակը կարող էր օգտվել հիշյալ ցանկից, որ խմբագրված էր հատկապես հակախառնականության ոգով: Այն հանգամանքը, որ դրա հետ միասին չի հիշատակվում Սահակի Գահնամակի մասին, թեև այդ անելու համար հարմար առիթ էր ներկայացել, ապացուցում է, որ այն ժամանակ Գահնամակը դեռևս գրականության մեջ հայտնի չէր: Այսպիսով, նկատի ունենալով մեզ հասած Գահնամակի ոչ պաշտոնական ծագումը, նրա երևան գալը պետք է վերագրել է դարից հետո բնկած ժամանակին:

Ավելի ուշ և դարձյալ ոչ պաշտոնական ծագում ունի նաև Զորանամակը. 21 և 22-ական տոհմերի համաշափ խմբավորումը բավականաչափ մատնում է նրա արհեստական ծագումը: Հեծեւազորի քանակի տեսակետից վավերագիրը վերարտադրում է Արշակունիների շրջանի իրավիճակը, իսկ հեծեւազորը չորս խմբի կամ թևի բաժանելու մեջ նկատվում է Զ դարի Սասանյան կարգերի ազդեցությունը. այսպիսի ժամանակավորագծերը նույնպես

¹ Սերևո, էջ 121:

կարող են բացատրվել վավերագրի միայն գրական բնույթով: Նրա ժամանակը ճշտելու համար պետք է հաշվի առնել այդ վավերագրի և խորենացու միջև եղած փոխհարաբերությունը: Սահմանապահ իշխանների մասին հայ պատմիչի ասածների մեջ կան թեևր, որոնք նրան կապում են վավերագրի հետ: Պատմիչի ասելով՝ «Կառքշակ թագավորի մտաճողություններից մեկը պետության պաշտպանությունն էր, որի համար էլ ծայրամասերում նշանակվեցին սահմանապահ կառավարիչներ: Արևելքի կողմից «զեղերք հայկական խօսից» այդ դերը վիճակվեց Սիսականի և Կագմեայ իշխաններին¹: Ավելի ճշգրտելով՝ պատմիչը Սիսականը զնում է արևելքում, իսկ Կագմեան՝ հարավում՝ Ասորեստանի մոտ²: Հյուսիսում «ընդդեմ լեռինն Կալիասայ» պաշտպանությունը հանձնվում է Գուգարաց բղեշխի մեծ և հզոր տոհմին³: Որպես արևմուտքի կառավարիչ հանդես է գալիս Անգեղտան իշխանը, մի այլ դեպքում՝ Բագրատունիների իշխանները⁴: Այս երկվությունը բացատրվում է Անանունի ազդեցությամբ, որի մոտ Անգեղը նույնացված է Բագրատի հետ: Բացի դրանից, պատմիչը նշում է հարավ-արևմտյան կողմի մեծ բղեշխին, այսինքն՝ Ազձնիքի կուսակալին⁵:

Ջորանամակի մեջ համապատասխանաբար շորս դռների գլխավոր կառավարիչներ են նշված Սյունյաց, Կագմեաց, Գուգարաց իշխանները և Ազձնեաց-Անգեղտան Բագարատ իշխանը: Նմանությունը կասկածից վեր է, սակայն պարզ չէ խորենացի⁶ կախում ունի վավերագրից, թե ընդհակառակը՝ վավերագիրն է կրում պատմիչի ազդեցությունը: խորենացու «կարգք զինուորութեանց» վերաբերյալ վերը մեջ բերած խոսքերը ցույց են տալիս, որ նրան ծանոթ է եղել Ջորանամակի նման մի բան, բայց թե այն ինչ կապ է ունեցել վավերագրի հետ, հայտնի չէ: Կարող է պատահել, գոյություն է ունեցել նախարարական հեծելազորի ցանկ, որը հետագայում վերամշակվել է և ստացել մեզ հասած Գահնամակի ձևը: Ջորանամակը, համենայն դեպս, այս

¹ խորենացի, Բ, ր:
² Նույն տեղում, Ա, ժգ:
³ Նույն տեղում, Բ, ր:
⁴ Նույն տեղում, Բ, ր և Բ, գ:
⁵ Նույն տեղում, Ա, իզ և Բ, ր

կամ այն տեսքով ծանոթ է եղել խորենացուն: Նախարարական ուժերի ցուցակը ունեցել է, ըստ երևույթին, նաև այն նշանակությունը, որ ըստ նրա կարգավորվել է Գահնամակը:

Ուժի սկզբունքը այն կամուրջն է, որ Գահնամակը կապում է Ջորանամակին: Այսպիսի բմբունման դեպքում հնարավոր է մեկնաբանել Գահնամակի ներածությունը: Ի՞նչ է նշանակում ramakan nāmā-ն, որը տեսել է Սահակ կաթողիկոսը արքունի դիվանում, և ինչ կապ ունի այն Գահնամակի հետ, որին և նվիրված է ներածությունը:

Ramakan-ի փոխ. vramakan վարկածը, որ առաջարկել է էմինը և բնագունել Այիշանը, որն է հիմք շունի, և խալաթյանցը իրավացիորեն մերժում է այն: Վերջինիս կարծիքով ռամականը առաջ է եկել պարսկերեն gam բառից, հայերեն՝ երամ, խուժան, ամբոխ իմաստով, որտեղից և՛ հայերեն ռամիկ, հասարակ ժողովուրդ, զուլաացի և պահլավական ramak-ը՝ նույն իմաստով: Ըստ այդ մեկնության ramakan nama արտահայտությունը նշանակում է «ցանկ կամ մատյան հարկատու գասի», ի հակադրություն ազնվականների ցանկին՝ Գահնամակին:

Սակայն ելնելով այն նկատառումից, որ ramakan nama-ն, ըստ ներածականի իմաստի, առնչություն ունի Գահնամակի հետ, պրոֆ. խալաթյանցի բացատրությունը բնագունելի չենք համարում և հակված ենք այն մտեսցնել Ջորանամակին: Դրան չի խանգարում ռամականի ստուգաբանական նշանակությունը: Կանխապես շորշեղով այն հարցը, թե արդյո՞ք միևնույն ծագումն ունեն երամ, երամ-ակ և ռամ, ռամիկը, մենք կարծում ենք, որ ramak-ի իմաստը բավական ստույգ ճշտված է պահլավական ramak և հայկական երամ-ակ՝ հոտ բառերի հիման վրա, որ նշանակում է առհասարակ ամբոխ, հավաք (մարդկանց կամ կենդանիների), ramak-ը ramakan nāmā արտահայտության մեջ ունի զինվորների խումբ, հեծյալների շոկատ իմաստը: Ըստ այդ բացատրության մեզ հետաքրքրող տերմինը նշանակում է զարգրն-դերի գիրք, ընդ որում ramakan-ը ավելի շուտ հոգնակի թվի սեռական հոլովն է ramak-ից, քան թե ածական gam-ից: ramak-ը, այսպիսով, միանգամայն նույնանիշ է խորենացու վաշտին: Ramak-ի նշանակության անցումը ramik-ի միջոցով ամբոխից դեպի ժողովուրդ շատ լավ բացատրվում է ռուսական ռՅԱԿ-ի և գերմ. volk-ի նույնանման փոխհարաբերությամբ:

Մեր մեկնարանությունը Գահնամակի ներածությունը դառնում է հասկանալի. Սահակը իմացել է ramakan nama-ի, այսինքն՝ նախարարական գործընդերի ցանկի մասին և միջնորդել է գահերի կարգը շահելու կամ Գահնամակ կազմելու մասին, ըստ երևույթի, առաջին վավերագրի՝ պինվսրահան ցանկի ավյալների համաձայն:

Գ Լ Ո Ւ Խ XI

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ՎԵՐՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

Նախարարությունը որպես նույնի միավոր: Նախարարական բնական, տերիտորիան: Կենսակալության և աշխարհագրական անվանակարգության նշանակությունը իշխանական տիրույթները որպես: Մայրամասային իշխանությունները: Նախարարությունների տեղաբաշխումը կենտրոնական նահանգներում: Այլ առաջ ըստ Աշխարհացույցի: Աշխարհագրական բաժանումների ծագումը և նախարարությունների զարգացման ընթացքը: Քանեք, Շիրակը, Այրարատը *par excellence* և Բագրևանդը կամսարականների, Արշակունիների և Բագրատունիների ու Քանեի իշխանների տիրույթ: Մանր իշխանությունները կամսարականների ազդեցության ոլորտում և Արշակունիների տերիտորիայում: Նրանց տեղագրությունը: Բագրևանդը և Կոզոլիար: Տարւթերանը ըստ Աշխարհացույցի: Տարունը և Հարեք նիմնական բաղկացուցիչ մասեր: Տարունի փոխանցումը Մամիկոնյաններին: Մանամակից իշխանությունները՝ Արշամունիքը և Արշամունիքները, Ասպակունիք և Խոյք: Հարեք Մանավազանների տիրույթ: Ապահույաց, Խորտունյաց և Բզունյաց իշխանությունները և նրանց վերաբերմունքը Հարեքի նկատմամբ: Մյուս մանր իշխանությունները: Վասպուրականը ըստ Աշխարհացույցի: Քենական դիտողությունը նրա կազմի վերաբերյալ: Սկզբնական 18 գավառների տեղադրությունը: Լրացուցիչ ստորաբաժանումները: Գլխավոր իշխանները. Ռշտունիները՝ Տասպուն, Արժունիները՝ Աղբալում, Մարդպետները՝ Մարդաստանում: Մարզպետների վերաբերմունքը Արժունիների նկատմամբ: Ամատունիները Արտագում: Մյուս իշխանական տների համախմբումը գլխավոր տների շուրջը:

Հայոց աշխարհը իր սահմաններով, ուր գործում էր նախարարական վարչակարգը, ներկայացնում էր ինքնաբերական հողային միավորների, իշխանական առանձին տիրույթների մի ամբողջ ցանց: Նախարարական հարստությունների տեսությունից հետո պետք է քննարկել նաև համապատասխան տերիտորիալ մեծությունները, որովհետև հողատիրությունն էլ հենց նախարարության գլխավոր հիմքն էր: Նախարարական հողերի սահմանադատումը,

Մեր մեկնարանությամբ Գահնամակի ներածութիւնը դառնում է հասկանալի. Սահակը իմացել է ramakan nama-ի, այսինքն՝ նախարարական զորագնդերի ցանկի մասին և միջնորդել է զահերի կարգը շահելու կամ Գահնամակ կազմելու մասին, ըստ երևույթի, առաջին վավերագրի՝ գինվարական ցանկի սովյալների համոծայն:

Գ Լ Ո Ւ Խ XI

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ՎԵՐՈՒԵՈՒԹՅՈՒՆԸ

Նախարարությունը որպէս հազարից միավոր: Նախարարական բեղմունիք տերիտորիան: Կենսակալության և աշխարհագրական անվանակարգության նշանակությունը իշխանական տիրույթները որոշելիս: Մայրամասային իշխանությունները: Նախարարությունների տեղաբաշխումը կենտրոնական ճանաչելով: Այլ առարկա ըստ Աշխարհացույցի: Աշխարհագրական բաժանումների ծագումը և նախարարությունների զարգացման բնթացքը: Բաները, Շիրակը, Այրարատը *par excellence* և Բագրևանդը Կամսարականների, Արշակունիների և Բագրատունիների ու Բասենի իշխանների տիրույթ: Մանր իշխանությունները Կամսարականների ազնեցության ոլորտում և Արշակունիների տերիտորիայում: Նրանց տեղադրությունը: Բագրևանդը և Կոզովիտը: Տարւորներ ըստ Աշխարհացույցի: Տարոնը և Հարէր նիմնական բաղկացուցիչ մասեր: Տարոնի փոխանցումը Մամիկոնյաններին: Մանամակից իշխանությունները՝ Արշամունիքը և Արշամունիքները, Ապպակունիք և Խոյր: Հարէր Մանավազանների տիրույթ: Ապահունյաց, Խորտունյաց և Բզնունյաց իշխանությունները և նրանց վերաբերմունքը Հարի նկատմամբ: Մյուս մանր իշխանությունները: Վասպուրականը ըստ Աշխարհացույցի: Քենտան ղիտողություն նրա կազմի վերաբերյալ: Սկզբնական 18 գավառների տեղադրությունը: Լրացուցիչ ստորաբաժանումները: Գլխավոր իշխանները. Ռշտունիները՝ Տասպուն, Արժունիները՝ Աղբակում, Մարդակները՝ Մարգաստանում: Մարգակների վերաբերմունքը Արժունիների նկատմամբ: Ամատունիները Արտագում: Մյուս իշխանական տների համախմբումը գլխավոր տների շուրջը:

Հայոց աշխարհը իր սահմաններով, ուր գործում էր նախարարական վարչակարգը, ներկայացնում էր ինքնաբերական հողային միավորների, իշխանական առանձին տիրույթների մի ամբողջ ցանց: Նախարարական հարստությունների տեսութունից հետո պետք է քննարկել նաև համապատասխան տերիտորիալ մեծությունները, որովհետև հողատիրությունն էլ հենց նախարարության գլխավոր հիմքն էր նախարարական հողերի սահմանադրումը,

նրանց տեղադրությունը և փոխհարաբերությունները որոշելը անհրաժեշտ և շատ կարևոր աստիճան է նախարարական հաստատությունների էությունը և բարդ ծագումը հասկանալու հանապարհին: Նախարարական Հայաստանը, իսկն ասած, համապատասխանում էր Արշակունյաց Հայաստանին: Թեև Արշակունյաց թագավորության բաժանումից հետո էլ Հայաստանի երկու մասերում նախարարական կարգերը շարունակեցին գոյություն ունենալ, բայց քաղաքական պայմանների շնորհիվ դրանք ավելի լավ պահպանվեցին և ավելի երկար գոյատևեցին պարսկական մասում: Համենայն դեպս Հայաստանի այդ մասի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները ավելի ամբողջական են: Դեռևս նախարարությունների առաջին պատմիչը՝ Խորենացին, նախարարությունը քննում է գերազանցապես Արևելյան կամ Մարդպանական Հայաստանի սահմաններում, այսինքն՝ այն երկրի նախարարությունները, որ ներփակված էին Գուգարքի, Ազձնիքի, Այունիքի և Կազմեայքի միջև: Նախարարությունների՝ մեր կողմից հշտված քանակական կազմը նույնպես ամփոփվում է գլխավորապես Մարդպանական Հայաստանի սահմաններում:

Աշխարհագրական տեղանունները բաղդատելով նախարարական տոհմանունների հետ, նկատում ենք, որ դրանց միջև սերտ կապ կա, իշխանական տները կամ կրում են երկրամասերի անունները և կամ, ընդհակառակը՝ այդ երկրամասերին տալիս են իրենց տոհմական անունները: Աշխարհագրական և նախարարական անվանումները զուգահեռաբար քննության ենթարկելիս երկվան են գալիս այնպիսի տվյալներ, որոնք կարևոր են նախարարական տոհմերը ծագումնաբանական հաջորդականությամբ դասակարգելու համար:

Մարդպանական Հայաստանի ժայռամասային նահանգները՝ Մյունիքը, Մոկքը և Տայքը, գտնվում էին Մյունյաց, Մոկաց և Մամիկոնյան իշխանական տների ձեռքին: Մյուս տոհմերը տեղադրված էին հիշյալ նահանգների միջև ընկած տարածքի վրա: Ըստ Աշխարհացույցի այդ տերիտորիան բաժանվում էր երեք մեծ երկրների՝ Այրարատ, Տարսիսեան և Վասպուրական: Թեև այս բաժանումը հաստատվել է այն շրջանից հետո, որը անմիջականորեն զբաղեցնում է մեզ, սակայն մենք պետք է օգտվենք դրանից, նկատի ունենալով շարադրանքի հարմարությունը:

Այրարատում Աշխարհացույցը հաշվում է 16 ստորաբաժանում կամ գավառ.

- | | |
|--------------|------------------------|
| 1 Բասեն | Շիրակ |
| Գաբեղեանք | Արագածոտն, Արագածի-ստե |
| Արեղեանք | Նիգ |
| Հատնիք | 12 Կոզովիտ, Կոզի-Ռովիտ |
| 5 Արշարունիք | Ռստան Հայոց |
| Բագրևանդ | Ռւրծանոք, Ռւրծի ձոր |
| Մաղկատն | Արած |
| 8 Վաեանդ | 16 Շարուր՝ |

Հին հեղինակները Այրարատի գավառները շգիտեն Աշխարհացույցի մեջ ընդունված իմաստով: Շատ կարևոր է պարզել աշխարհագրական բաժանումների ծագումը, քանի որ նախարարության դարգացումով պայմանավորված այդ բաժանումները պարզում են նախարարական տների զարգացման կամ ճյուղավորման ընթացքը:

Դասական հեղինակներին ծանոթ են Փասիան-Քասիանը, Սիրակենե-Շիրակը, Բագրավանդենա-Քագրեանը և 'Αραξηνόν πεδίον, Արագասի հովիտը, որի տակ ավելի նեղ իմաստով պետք է հասկանալ Այրարատյան հարթավայրը²: Մինչև Աշխարհացույցը եղած հայ հուշարձանները Այրարատ ասելով գերազանցապես հասկանում են ավելի ուշ ժամանակվա Այրարատի արևելյան կեսը՝ սկսած Ախուրյան գետի հովտից մինչև Շարուրի դաշտը: 'Αραξηνόν πεδίον տառացիորեն համապատասխանում է հայկական Երասխաձորին, որպիսի անունով հայտնի է Արագսի հոսանքի որոշ մասը, որ հարում է Շիրակին և որ հետագայում վերանվանվեց Արշարունիք:

Թագավորական ժամանակաշրջանի պատմիչ Փավստոսը վերոհիշյալ շորս նահանգներից բացի հիշատակում է նաև Վանանդը և Արշարունիքը: Առաջ Վանանդը Բասենի մի մասն էր և կոչվում էր, ինչպես վկայում է դեռևս Խորենացին, Վերին Քասեն,

¹ Աշխարհացույցի համառոտ խմբագրության մեջ կա 20 գավառ. լրացուցիչներն են՝ Երասխ, Մասնատոն, Աշոցք, Մազազ, Նշենք, որ Հատնիքի փոխարեն այստեղ կա ավելի ճիշտ ընթերցում՝ Վահատնիք:
² Anab. IV. 6, 5, Φασιανοί. Ptol. p. 938, Σιρακινηί, p. 947, Βαγρσαυανδηνηί. Str. 527, 'Αραξηνόν πεδίον = Երասխաձոր, Խորենացի, Բ, 9:

բայց Արշակունյաց շրջանում վերածվեց իշխանական հատուկ միավորի: Եթէ այդպես էլ Արաքսի այն գետեզրյա շերտից, որ առաջ մտնում էր Այրարատի կամ Շիրակի մեջ, կազմվեց Արշարունիքը: Քաղաքական շրջանում այդ բոլոր բաժանումները ոչ միայն աշխարհագրական, այլ նաև քաղաքական միավորներ էին և գտնվում էին նախարարական առանձին տոհմերի իշխանության տակ: Բասենին, Վանանդին, Շիրակին և Արշարունիքին տիրում էին նույն այդ անունները կրող իշխանները: Այրարատը հիշյալ սահմաններով Արշակունիների կալվածքն էր par excellence, իսկ Բագրևանդը, որքան մեղ հայտնի է, պատկանում էր Բագրատունիներին: Շիրակը հետո անցավ Կամսարական իշխաններին: Կամսարականների տոհմը ծագում էր Արշակունիներից և, թվում է, նախապես նա հաստատված է եղել Երասխաձորում, որը դրանից հետո սկսեց կոչվել Արշարունիք, ըստ երևույթին առաջին տիրոջ՝ Արշավիրի անունով: Կամսարականները հետագայում իրենց իշխանությունը տարածեցին հարևան Շիրակի վրա: Շիրակի մի մասը պատկանում էր Դիմաքսյան իշխանական տոհմին, որը կոչվում էր Շիրական ի տարբերություն նրանց մյուս ճյուղի, որ իշխում էր Վանանդի հարևանությամբ ընկած Բուխա գավառում:

Շիրակը զբաղեցնում էր Ախուրյան գետի հովիտը՝ Վանանդի և Այրարատի միջև և այժմ կոչվում է Երազյալ, հայերեն՝ Շիրակ-գավառ կամ Շիրակ-ավան անունից: Բասենը՝ այժմ Բասեն, տարածվում էր Արաքսի ակունքների մոտ մինչև Մալբոբա գյուղը, այսինքն՝ գրեթե մինչև այժմյան ռուս-թուրքական սահմանը: Արաքսի ափերին Բասենի և Արշարունիքի միջև ըստ Աշխաբհացույցի գտնվում էին Աբեղյան և Երի, Հավունի և Գաբեղյան և Երի իշխանությունները, ընդ որում առաջին երկուսը ձախ ափին, իսկ երրորդը՝ աջ: Իրենց աշխարհագրական դիրքով այս իշխանությունները ավելի շուտ պետք է վերագրել Արշարունիքին: Այդ վայրերը՝ Կաղզվան, նախկին Կաղզովան գլխավոր կետով, այժմ էլ առանձին շրջան են կազմում, որ կոչվում է Զալզրան, այնպես, ինչպես Բասենը, Վանանդը և Շիրակը հին ժա-

մանակների նման կազմում են Բասեն, Թախտին և Շորագյալ առանձին գավառներ:

Արշակունիների պատմիչ Փավստոսը ամենևին չի հիշատակում Աբեղյան, Գաբեղյան և Հավունի իշխանությունների մասին, որոնք շատ լավ ծանոթ են հետագա աղբյուրներից: Արդյոք այդ չի նշանակում, որ թագավորական շրջանում հիշյալ մասեր իշխանությունները գոռու հայտնի չէին, և նրանց հոգեբը թե՛ տեղագրական և թե՛ քաղաքական առումով մտնում էին Արշարունիքի կազմում: Այդ դեպքում կարելի էր նրանց համարել Կամսարական հզոր տան ճյուղավորումներ և նրանց ծագումն ու քաղաքական անջատումը վերագրել Հայաստանում թագավորական իշխանության անկման խառնակ ժամանակներին: Որ Կամսարականների ազդեցությունն աճում էր Արաքսի ուղղությամբ գեպի Բասեն, երևում է նրանից, որ Չ դարում Բասենում նրանց ձեռքին էր դրսևում Բող բերդը: Կամսարականների տիրույթներին էր հարում նաև Աշոցքի իշխանությունը: Վերջինս գրավում էր Շիրակի հյուսիսային անկյունը, որտեղից բխում է Ախուրյան գետը¹:

Այրարատը Արշակունիների արքունի կալվածքն էր, այսինքն՝ ոստանը. նրա մեջ մտնում էին հետևյալ գավառները՝ Արագածոտն, Նիդ, Վարաժնունիք, Մաղաղ, Կոտայք, Ոստան Գվին, Ուրծ, Արած, Եարուր, Ճակատք և Մասեացոտն: Սրանցից վերջին երկուսը ընկած էին Արաքսի հարավային ափին՝ Կողբից մինչև Արարատի գագաթները, իսկ մյուս գավառները՝ հյուսիսային ափին, ընդ որում սրանց տեղագրությունը որոշվում էր Արաքսի վտակների հոսանքներով: Քասախ գետի վերին հոսանքները կազմում էին Նիզը, այժմ Ապարան, ստորին հոսանքը և Արագածի ամբողջ նախալեռնային մասը պատկանում էին Աբրահամ-Պատին, որ բառացի նշանակում է Արագածի ստորոտ: Հրազդան գետի ակունքների մոտ ընկնում էր Վարաժնունիքը, այժմյան Մաղախձորը, այնուհետև, նույն գետի հոսանքն ի վրա՝ Կոտայքը, Ազատ-Գառնի գետի վերին հոսանքը գրավում էր Մաղաղը, այժմյան Գառնին, ավելի ներքև Գվինի ոստանն էր. Ուրծը և Արածը ընկնում էին Վեդի գետի վրա. հետո՝ մինչև Նախիջևանի սահմանները

¹ Կաստիլեոցի, էջ 15, «ի սպառուսն Բասենյ, ի տեղոն, որ կոչի Մալբոբա»:

¹ Աշոցը կա միայն Աշխաբհացույցի համառոտ խմբագրության մեջ, ընդարձակի մեջ չի հիշատակված: Վրացական աղբյուրներում կարդացվում է Արոց, վրաց. Օ տառը ց-ի հետ շփոթելու հետևանքով: Ալիշան, Այրարատ, էջ 127:

տարածվում էր Շարուրի դաշտը: Այրարատի այդ ստորաբաժանումներից շատերը մինչև Աշխարհացույցը հայ հին աղբյուրներում չեն հիշատակվում: Իհարկե, անմասնաճան կլինեիր դրա մեջ նրանց ուշ առաջացած լինելու փաստարկ տեսնել: Գոտայքը, օրինակ, ծանոթ էր դեռևս Պողոսմեծոսին, բայց հայ մատենագրության մեջ հիշվում է առաջին անգամ Սեբեոսի մոտ է դարձում: Հասկանալի է կասկածել, որ մյուս անվանումները նա վերաբերում են Սեբեոսի ժամանակին: Եթե նրանք չեն հիշվում ավելի հին աղբյուրներում, ապա այդ պետք է բացատրել ավելի շուտ նրանով, որ քաղաքական հետաքրքրություններից զուրկ բաժանումները կրում են զուտ տեղագրական բնույթ, մինչդեռ մարդպանական շրջանի հայ հեղինակները մեծ մասամբ խոսում են աշխարհագրական այն բաժանումների մասին, որոնք միաժամանակ քաղաքական կամ նախարարական միավորներ էին: Մինչդեռ Այրարատի նահանգը զոված սահմաններով Արշակունիների արքունի տիրույթն էր և, նշանակում է, քաղաքական տեսակետից զանդիսանում էր մի ամբողջական միավոր: Արշակունյաց Այրարատում մանր նախարարությունների երևան գալը պետք է վերագրել Արշակունիների անկումից 4 հոտ ընկած ժամանակաշրջանին: Գրանցից եղիչն հիշատակում է արդեն Ուրծը և Արածը, որպես առանձին իշխանություններ: 555 թվականի եկեղեցական ժողովի մասնակիցների թվում հիշվում է Վարաժնունի իշխանը: Վարաժնունի իշխանական տան կալվածքները, հորենացու ասելով¹, գտնվում էին Հրազդան գետի վրա, այդ պատճառով էլ նրանք Վարաժնունիների տոհմը համարում է սերված հարևան Գեղարքունի գավառի նախահայր Գեղամի որդի Գառնիկի սերնդից: Ըստ այդ վկայության Վարաժնունիքը համընկնում է Հրազդան գետի սկզբնական ձախ թևի հովտին և համապատասխանում է ներկայիս Մաղկաձորին՝ ծաղիկների ձոր, որ միջին հայերենում Մաղկունի անվան² թարգմանությունն է:

Նույն պատմիչի վկայությամբ, լճից ոչ հեռու, Վարաժնունիքին հարևան ապրում էին Գնթունի իշխանները³: Ապարանում,

Քասախ գետի ափին, մի հին եկեղեցու ավերակների մեջ հայտնաբերվել է ոմն Գրիգոր Գնթունի իշխանի արձանագրությունը, որի հիման վրա Ապարանը՝ հնում նիգը, պետք է համարել Գնթունի նախարարների տոհմական կալվածքը⁴:

Ապարանից հարավ՝ նույն Քասախ գետի հովտում, մինչև օրս էլ կանգուն է պատմական Օշական գյուղը, որին տիրում էին Ամատունի իշխանները. այդ գյուղը Ամատունիներին պատկանելու մասին վկայում է Փարպեցին⁵: Խորենացին հավատացնում է, թե Օշականն Ամատունիներին է անցել Խոսրով Կոտակ թագավորի ժամանակ, որն այն նվիրեց Վահան Ամատունուն՝ Սանեսանի խաժամուժ լեռնականների արշավանքը քաշությանը ետ վանելու համար: Փայտտուք պատմելով այդ գեպքը, ոչինչ չի ասում Օշական գյուղը Ամատունիներին նվիրելու մասին: Խորենացին Ամատունիներին համարում է Արևելքից, այսինքն՝ Պարսկաստանից գաղթածներ և ասում է, որ նրանք Հայաստան են եկել Արտաշես թագավորի ժամանակ⁶: Պատմիչը մեզ տեղեկություն չի տալիս Արտաշեսի և Խոսրով Կոտակի միջև ընկած ժամանակաշրջանում Հայաստանում Ամատունի տոհմի բնակավայրի մասին: Մենք կասենք, որ Ամատունիները նախապես ապրում էին Արտազ գավառի սահմաններում, որտեղից էլ շարժվեցին Օշական: Խորենացու ժամանակ Օշականն արդեն գտնվում էր Ամատունիների տիրապետության տակ, և պատմիչը իր սեփական կոհնումով a posteriori տանում հասցնում է այդ տիրապետության սկիզբը՝ Փավստոսից իրեն հայտնի դարձած Սանեսանի արշավանքի ժամանակները:

Արագածի ստորոտին՝ Շիրակին սահմանակից Մաստարա գյուղի հինավուրց եկեղեցում պահպանվել է մի արձանագրություն, որի մեջ ասված է, թե եկեղեցին կառուցվել է Գնունյաց Թեոդորոս եպիսկոպոսի օրոք⁷: Այս հանգամանքը պարզաբանում է ներսեսի Վարժում պահպանված այն տեղեկությունը, ըստ որի Գնունիները

¹ Խորենացի, Ա, Ժր և Բ, ժա ռաո եզերը Հրազդանի:
² Արևմտյան վավերագրերում Մաղկունին = Zachuniec, S. Martin, Mémoires I, 287: Ալիշան, Այրարատ, էջ 260:
³ Խորենացի, Բ, դ, ռեվ զծովեզրեայ մանկունս, որք ի Գեղամայ եւ ի Քանանացոց, ճ. Գնթունի, հմմտ. Ա, ԺԹ:

¹ Ալիշան, Այրարատ, էջ 248, Քս Ած յիշեա գրիգոր Գնթունեաց ալը:
² Փարպեցի, էջ 38:
³ Խորենացի, Գ, Թ և Բ, Ժէ:
⁴ Ծանխարունկյան եպիսոփ, Ստորագրութիւն, Բ, էջ 46 սյամս տեառն Թւոգրոսի Գնունեաց եպի շինեցաւ տունս, Ալիշան, Այրարատ, էջ 135:

հիշվում են Շիրակի նախարարների թվում¹, և անկասկած ապացուցում է Գնունի տոհմի առնչությունը Արազածի ստորոտի բնակավայրերին: Քովմա Արժրունուց գիտենք, որ նրա ժամանակ Գնունիները ապրում էին Ադիոլիտում, վանա ծովի ափին, որի գլխավոր քաղաք Արճեշը նա անվանում է «քաղաք Գնունեաց գաւառին»²: Խորենացին նույնպես վկայում է, որ Շահապիվանը սկզբում պատկանում էր Գնունյաց տոհմին, իսկ հետո անցավ Արշակունիներին³: Շահապիվանը գտնվում է Կոզովիտի սահմաններում և թերևս Գնունիների համար լճի ափերից դեպի Այրարատ կամ գուցե և հակառակ ուղղությամբ շարժվելու ժամանակ միջանկյալ կետ է հանդիսացել: Խորենացու ասելով՝ Գնունիները արքունիքում ծառայում էին որպես մատուցակներ. իրենց պաշտոնի բերումով նրանք պետք է ապրեին արքունիքին մոտ, նշանակում է, այն հարցը, թե Այրարատում որն է եղել Գնունյաց տոհմի բնակավայրը, վճռվում է ըստ Խորենացու՝ առաջնությունը տալով Այրարատին:

Պատմիչի վկայությամբ արքունական ծառայության մեջ էին նաև Սպանդուկունի և Ջյունական նախարարությունները, որոնց նույնպես պետք է որոնել թագավորական ոստանի մատակարարում: Թվում է, թե պատմիչը Արշակունիների արքունիքում նախարարական տոհմերին ժառանգական պարտականություններ վերագրելով՝ ելնում է նրանց անունների ստուգաբանությունից: Բայց ավելի ճիշտ կլիներ հակառակ եզրակացությունը, այսինքն՝ ստուգաբանական մեթոդներով և մեկնաբանությունների վրա անկասկած ազդել են տերիտորիալ տեսակետից տվյալ նախարարության արքունիքին մոտ լինելու մասին եղած տվյալները: Եթե, օրինակ, Գնունիներն ապրեին Արշակունիների ոստանից շատ հեռու, ապա Խորենացին դժվար թե Գնունի տոհմանունը գինի բառից ծագած համարեր, այդ տոհմին արքայական մատուցակի կամ համեղ գինիներ մատակարարողի պատվավոր պաշտոնով օժտելու համար: Խորենացու ստուգաբանական հետազոտությունները մեծ մասամբ անընդունելի են, բայց, այնուամենայնիվ, դրանք հե-

տաքրքրական են, որովհետև որոշ չափով արտացոլում են նախարարությունների տերիտորիալ հարաբերությունները ոստանի կամ թագավորական կալվածքի նկատմամբ¹:

Վարաժնունի, Գնունի և Սպանդունի նախարարությունների կողքին Սերետը հիշատակում է նաև Առավելդեան և Առավանեան տոհմերը, որոնք ապրում էին Այրարատի սահմաններում: Ըստ Խորենացու Առավանեան տոհմը ծագում է հին թագավորներից, իսկ Առավելդեանը՝ Սաթենիկ արքայադստեր աղգականներից, ալաններից, որոնք նրա հետ միասին եկել էին Հայաստան և դասվել նախարարությունների շարքը: Պատմիչի բացատրությունը, անկախ նրա հավաստիությունից, ապացուցում է, որ այդ երկու տոհմերը ապրում էին թագավորական ոստանում՝ Այրարատում, բայց թե որտե՞ղ, այդ մասին հավաստի տեղեկություններ չկան²:

Շիրակին սահմանակից Այրարատի տերիտորիայում էին գտնվում նաև Սահառունի իշխանների տիրույթները: Բագրատունյաց Սմբատ շահնշահ թագավորի 1037 թվականի արձանագրություններից մեկի մեջ հիշատակված է Սահառունիք գյուղը, որը, ինչպես ասված է վիճագիր արձանագրության մեջ, թագավորը նվիրել է Հոռոմոսի վանքին, որ Բագրատունիների տոհմական հանգրստարանն էր³: Բացի դրանից, տեղեկություններ կան, որ Դավիթ

¹ Ըստ Խորենացու Ձիւնական կոչվել է նախարարությունը ըստ նրանց պաշտոնի (ծառայության), որ կայանում էր այն բանում, որ նրանք ձյուն էին հայթայթում թագավորի ամառային աթոռանիստը: Ավելի ճիշտ է այդ անունը առաջացած համարել ձյունոտ տեղանքից, որտեղ ապրել են Ձիւնականները. հավանաբար նրանք ապրել են Արազածի լանջերին՝ Գնունիների հարևանությամբ:

² Վիճելի է նաև Սպանդունի առաջացած համարի Սպանդ-ից, Սպանդանոցի կառավարիչ իմաստով: Հնարավոր է, որ Սպանդ-ը Սպանդարտափ զորձատ ձևն է, որ ընդունված անուն էր Կամսարականների մոտ, և որ Սպանդունին այդ իշխանների շտապվողն է:

³ Առաւելդեանը իր ձեռով մոտենում է Արեղեան, Գարեղեան ձևերին և հնարավոր է, որ Առաւելդեան իշխանները ապրում էին սրանց մոտիկ՝ Շիրակի սահմանագլխին՝ Օշնակ վայրում, որ ծանոթ է դեռևս Սերետին և այժմ կոչվում է Եշնակ, Քալիչի մոտ: Առաւելդեանը Արտաւան-եանի բարբառային ձևն է: Արտաւանը Արշակունիների տոհմում ընդունված անուն է. կարող է պատահել, որ Առաւելդեանները ծագում են նրանցից:

⁴ Սարգսյան, Տեղագրութիւնք, էջ 166, «ի նձն թահ. Ես Սմպատ... Ետո զիմ զեղս զՍահառունիս ի մեր հանդստարանս թագաւորաց ի տիեզերահօշակ վանս Հոռոմոսի», Ալիշան, Շիրակ, էջ 31:

¹ Սովինք 2, 46, «ոմն ի մձ նախարարացն ի գաւառէն Շիրակայ որ էր միանձնացեալ ի լերինս յազգէն Գնունեաց»:
² Քովմա Արժրունի, էջ 247 և 308, «Արճէշ քաղաք Գնունեաց գաւառին»:
³ Խորենացի, Գ, իւր Ըստ Փայտոսի Շահապիվանը քաղաք է, ըստ Խորենացու լեռ, Կոզովիտից ոչ հեռու:

Սահառունին՝ Հայաստանի Բյուզանդական մասի ստրատելատը, Հերակլ կայսեր (մահ. 641) վերջին տարիներին Մրենում մի եկեղեցի է կառուցել¹։ Հավանաբար այդ ժամանակ Մրենը պատկանում էր Սահառունի տոհմին։ Հիշյալ Սահառունիք գյուղը, համանուն իշխանների ոստանը, հավանաբար գտնվում էր Մրենի և Հոսոմոսի միջև։

Այրարատին հարավից հարում էին Բագրևանդը, Մաղկոտը և Կոզը կամ Կոզովիտը։ Բագրևանդը գրավում էր Արածանիի երկու վերին զլխավոր բազուկների ավազանը։ աջ բազուկի ախուճները կամ Ալա-՛ն աղի՛՝ հին Մաղկէի լեռնաշղթայի նախալեռները կոչվում էին Մաղկեոտն²։ Արա կողքին, Արաքսի աջ վտակի ուղղությամբ, Մակու դեռի ափերին գտնվում էր Կոզը։ Բագրևանդի կարևոր կետերից էր Բագավանը, այն վայրը, ուր այժմ գտնվում է Հովհաննես Մկրտչի՝ Սուրբ Կարապետ վանքը³։ Կոզում էր գտնվում Գարոյնք Եղանավոր բերդը, այժմ՝ Բայազետ, իսկ Մաղկէոտում՝ Անզղ բերդը և Վարշակի հանքային ջրերի ախուճները⁴, որոնք մինչև այժմ էլ գոյություն ունեն Դիաղիկի՝ հին Տատեոնի⁵ մոտ, իսկ Անզղը, ըստ երևույթին, պետք է որոնել Ալագաղի մոտակայքում։

Փավստոսը ծանոթ չէ Մաղկեոտին։ Զարեհավան քաղաքը, ինչպես և Բագավանը նա տեղադրում է Բագրևանդում, մինչդեռ այլ տվյալներով Զարեհավանը համարվում է Մաղկեոտնի քա-

¹ Հովն. կարողիկոս, էջ 46, «չինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար, որ ի քաղաքագեղն Մրեն»։

² Փարսլեցի, էջ 60 և 132, Մաղկոտն և Մաղկէոտն, Ատղիկի մոտ, էջ 266, և 278 Մաղկոյոտն, ճիշտ ձևն է Մաղկէոտն՝ ժաղկեայ-ոտն-ից, ծաղկազարդ լեռան ստորոտ, հմմտ. ներկայիս Ալա-դաղ՝ երփներանգ լեռ անվան հետ։

³ Նույն տեղում, էջ 141, «Բագուան ի նահանգին Բաղրևանդայ, ի լանջա-կողման լերինն, որ անուանի Նպատ, մոտ ի սուրբ տեղի մատրանն որպէս երկու քարրեկեցօք», նաև էջ 139։ Փավստոս, Ծ, խզ, «ի Բաղրևանդ դաւառի ի Բագուան անտի, որ է մօտ յաւերական Զարեհուանդ քաղաքի...», էջ 260, «մտին առաջի սուրբ ոսկերացն Յովհաննու, որ կայր յայնմ գեղ»։

⁴ Փարսլեցի, էջ 60, «ի դաւառն որ կոչի Մաղկոտն, մերձ ի բերդն ամուր զոր Անզղն անուանեն, էջ 132, «ի Մարկէոտն, ի չերմկին, որ փոշի Վարշակի Անզղ հիշվում է Պրահայիսի մօտ, Pers. II 25, Ἰγγλῶν, Սերնոսի մօտ, էջ 74, «ի Մագկոտանն, ի զինզն որ կոչի Անզղն», նույնպես և Վարժ Ռսկիանց, Սոփերժ ԺԹ։

⁵ Նորէնացի. Բ. կր, զգուանն Տատեոնս։

ղաք¹։ Վերջինս քաղաքական միավոր չի հանդիսացել և, հավանաբար, պատկանել է Բագրևանդին։

Քաղաղորական շրջանում Կոզովիտը պատկանում էր Արշակունիներին, և այնտեղ՝ Գարոյնքում, պահվում էին արքայական գանձերը²։ Է դարում և զրանից հետո էլ մենք Կոզովիտը տեսնում ենք Բագրատունյաց իշխանների ձեռքին, և նշանավոր Գարոյնք բերդը համարվում էր նրանց ոստանն ու տոհմական հանգստարանը³։ Թե ե՞րբ է այդ կալվածքը Արշակունիներից անցել Բագրատունիներին, ստույգ հայտնի չէ. Փավստոսի մոտ այս վերջինների տոհմական կալվածքը համարվում է Սպերը⁴, Նկատի ունենալով այն, որ Ծ դարի շարժումներին մասնակցել են նաև Բագրատունիները՝ հանձին Տիրոց իշխանի, թեև որպես Վասակի համախոհ, իսկ շարժմանը մասնակցում էին բացառապես Հայաստանի պարսկական մասի նախարարները, ապա պետք է ենթադրել, որ Բագրատունիները Սպերից բացի, որ գտնվում է Հայաստանի բյուզանդական մասում, կալվածքներ են ունեցել նաև Պարսկական Հայաստանում, և որ Տիրոցը հենց այդ Բագրատունիների ներկայացուցիչն էր։ Հնարավոր է, որ դեռևս այն ժամանակ նրանք տիրում էին Կոզ գավառին Գարոյնք բերդի հետ միասին, որ նրանց էր անցել Արշակունիների անկումից հետո։ Նույնիսկ հիմք կա կարծելու, որ Բագրատունիները սկզբից ի վեր ապրում էին այդ տեղերում, և եթե ընդունենք, որ կապ կա Bagrata-ի և Bagra-vanda-ի միջև, ապա Բագրևանդը կդառնա Բագրատունյաց տոհմական նախնական կալվածք⁵։ Մի քանի նկատառումներով, որոնք մենք կներկայացնենք նախարարական տների ծագման հարցը քննելիս,

¹ Թոնդրակյան աղանդի հիմնադրի հայրենիքը. Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհուան գեղչէ ի Մաղկոտն գաւառէ։

² Փավստոս, Գ, ա, «բերդն Գարունից որ է լերկրին Կոզայ, ուր կային գանձք Արշակունեացն»։

³ Սերնոս, էջ 68, «զմարմին Սմբատայ տարան... ի բնիկ հանգստարանն եւ եղին ի տապանի ի զելզն Գարինս, որ է ի Գոզովիտ գաւառի», նաև էջ 116։

⁴ Փավստոս, Ծ, խզ։

⁵ *Bagrat-vanda-ից, որտեղ vanda-ն հին ձևն է ավելի ուշ ժամանակվա gund-ի, ի միջի այլոց, տուն նշանակությամբ, հմմտ. վանդ-ակ, Քեփիլիակապի մոտ III, 5 հանդիպում է Βενδοσαβείρων քաղաքը, որը զիտնականները նույնացնում են արաբական հեղինակների Gundē-šapur քաղաքին։ Nöldeke, Tabari, p. 41։

Քաղաքատունյաց տոհմը առաջ է եկել Հայաստանի իրանական կամ ատրպատականյան ծայրամասում: Քաղրեանդը Քաղրատունյաց տոհմի նախահայրենիք ընդունելը համընկնում է այս եզրակացությանը, որովհետև Քաղրեանդը Ատրպատականից շատ հեռու չէ:

Քրիստոնեության տարածումով, երբ Քաղավանում խաչ բարձրացվեց, Քաղրեանդը այնտեղ գտնվող սրբություններով հանդերձ անցավ եկեղեցուն, ավելի ճիշտ՝ Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական տոհմին: Փարպեցին Քաղավանը այլ կերպ չի կոչում, քան տուն, sc. Մուրբ Գրիգորի կալվածքը Սահակ կաթողիկոսը թեև մեռավ Վաղարշապատում, բայց թաղվեց Քաղրեվանդի Քլուր գյուղում, որը, ըստ երևույթին, պատկանում էր նրա տոհմին: Համենայն դեպս Սպերը չի կարող համարվել Քաղրատունյաց սկզբնական գավառ, այլ միջին կետ է Հայաստանից Վրաստան տանող ճանապարհին:

Կենտրոնական երկրորդ նահանգը՝ Տ ա Ր ու ր ե ր ա ն ը, ըստ Աշխարհացույցի, նույնպես կազմված էր 16 գավառներից:

- | | |
|---------------------|------------------------------|
| 1. Խոյթ | Հաբ |
| Ասպակունիք | Վարածնունիք |
| Տարաւն | Բզնունիք |
| 4. Ա < ր > շամունիք | 12. Սրեաւր |
| Մարդաղի | Աղիովիտ |
| Դասնաւոբ | Ապահունիք |
| Տուարածատափ | Կուրի ¹ |
| 8. Դալառ | 16. Խորխոռունիք ¹ |

Սրանցից իր հնությամբ և նշանակությամբ առավել կարեւորը Տարունն է, որը ծանոթ է զեռևս դասական հեղինակներին, regio Tauranitiu^m2, նրա լայն ճանաչման մասին է վկա-

¹ Աշխարհացույցի ընդարձակ խմբագրության մեջ պակասում են, հակասակ այն վկայության, թե զավանների ընդհանուր թիվը 16 է, լրացնում ենք ըստ համառոտ խմբագրության:

² Tacit. Ann. XIV 24, in regionem Tauranitiu. Proc. Pers. I p. 267, τὰ ἐπὶ Ταυραύνων χωρία. Const. Porph. de adm. p. 182, Ταυρών Tauran-itis, որ անշուշտ սերտ կապի մեջ է Taurus լեռների անվան հետ, սեմական t-v-ր: Նույն ծագումն ունի նաև հետագայի Տարուրեանը Տարույ-բերանից (հմմտ. մատչելի՝ մաւաշել-ից)-բարբառ. Տարուրեան, Հարկ չկա Tauranitis-ը ուղղել Tauranitis-ի, ինչպես այդ անում է Laqarde, Ges. Abh. 46 և Hübschmann, Ortsname, p. 325:

յում հաև այն, որ նույնիսկ Աշխարհացույցի մեջ Տարուրեանը որոշվում է նրանով¹:

Մեզ հետաքրքրող դարաշրջանում Տարունին տիրում էր Մամիկոնյան նեքրի նախարարական տունը: Նրանց իսկական գավառը համարվում էր Տայքը, ինչպես այդ երևում է Փավստոսից, որը բազմիցս այն կոչում է Մամիկոնյանների աշխարհ²: Տայքը Մամիկոնյանների նախահայրենիքն է, որի մասին մենք կխոսենք հետո: Թե երբ են նրանք Տարուն մտել, ստույգ հայտնի չէ: Հաստատապես գիտենք, որ նրանք Կ գարում արդեն այնտեղ էին: Փավստոսի ասելով՝ նրանց էր պատկանում Եփրատի ափին ընկած Ողական անառիկ ամրոցը, այնտեղ էր նստում Պապ թագավորի սպարապետ հայտնի Մուշեղ Մամիկոնյանը³: Նույն պատմիչը հայտնում է, որ Արշակի թագավորության ժամանակ Մամիկոնյան իշխանները՝ զժողո՛ւ լինելով թագավորից, Արժրունի և Ռշտունի նախարարական տոհմերի նկատմամբ դատան հաշվեհարդարի պատճառով, լքեցին նրան և գնացին իրենց նահանգը՝ Տայք և Եթողին, — ավելացնում է պատմիչը, — դալլ առև իւրեանց»⁴. այլ տուն ասելով այստեղ հասկացվում է Տարունը:

Տարունում կային նաև եկեղեցական դավաժքներ: Իշխան Մարդապետը, այցելելով Աշտիշատի սուրբ վայրերը, հիացավ ներսես կաթողիկոսի ամրոտանիստի գեղատեսիլ դիրքով և նախանձով լցված՝ սկսեց նախատել Տրդատ թագավորին այն բունի համար, որ այդպիսի հրաշալի տեղը նա տվել է, պատմիչի խոսքերով ասած, կանացի հագուստով մարդկանց, այսինքն՝ հոգևորականներին⁵:

¹ Աշխարհացույց, Տարուրեան, որ է Տարուն:
² Փավստոս, Գ, ժը, Եարք ի Մամիկոնեան տոհմէն... շոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց եւ թողին զայլ տուն իւրեանց... Դ, բ, Եդատներ զնոսա (զՄամիկոնեանն) յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին», Դ ժը, Եդատնէին (զՄամիկոնեանն) յիւրում զաւառին ի Տայս, յիւր ամուր բերդին որում անուն էրայսանի կոչիւք. Փարպեցի, էջ 111, Եվարդ (Մամիկոնեան) մնացեալ էր աղայ ի դաշակս իւր ի Տայս. հմմտ. էջ 73, 121, 135:
³ Նույն տեղում, Ե, գ, ԵՄուշեղ... էր ի նմին զաւառին (Տարուն. յիւրում բերդին՝ որում Ողական կոչեն, սը կայ ի վերայ գետայն Եփրատայս:
⁴ Նույն տեղում, Գ, ժը:
⁵ Նույն տեղում, Դ, ժը, Ելք Հայր մարդպետ ի դաւան Տարունոյ ընդ իւր զիւզան տեսանի... զնէր թշնաման Տրդատայ արքայի... զիարդ, ասէ, զայս-

Այսպիսով, Տարոնի մի մասը Ողականի հետ միասին պատկանում էր Մամիկոնյաններին, իսկ մյուս մասը Աշտիշատի հետ՝ եկեղեցուն կամ, ավելի ճիշտ, կաթողիկոսական տանը:

Խորենացու վկայությունների համաձայն Աշտիշատը սկզբում վաճուճի քրմական տոհմի ձեռքին էր, իսկ հետո այդ տոհմը հեռացվում է քրմությունից, և Աշտիշատն անցնում է արքունիքին¹: Ճշմարտությունն այն է, որ երբ հեթանոսական տաճարների տեղը կառուցվեցին քրիստոնեական սրբավայրեր, քրմական նախկին կալվածքները Աշտիշատի հետ միասին դարձան եկեղեցու սեփականությունը. այդ բանը հաստատում են Մարգպետի քիչ առաջ մեջ բերած խոսքերը, ըստ որոնց Աշտիշատի փոխանցումը եկեղեցուն վերաբերում է Արշակունիների առաջին քրիստոնյա թագավորի՝ Տրդատի ժամանակներին:

Նույն Խորենացին պնդում է, որ Ողականին սկզբում տիրում էին Ս լ կ ու ն ի իշխանները, որոնք, սակայն, պարսից թագավորի հետ Տրդատի դեմ նյութած դավադրությանը մասնակցելու պատճառով շնորհազուրկ են արվում: Մամիկոնյանները հնազանդեցրին Սլկունիների տոհմին և թագավորի հրամանով որպես վարձատրություն ստացան նրանց ժառանգությունը²:

Տարօրինակ է, որ Խորենացին տեղյակ չէ, որ Տայքը Մամիկոնյաններին է պատկանելու: Պատմելով Տրդատի ժամանակ նրանց Հայաստան գալու առասպելը, պատմիչը չի նշում նրանց բնակավայրը. նրա վկայությամբ Տրդատը նրանց որոշակի տեղ չի հատկացնում, այլ նրանց սիրալիր ընդունելով, տալիս է շիր տեղի աղխի նորա և ոռճիկ ի կերակուր, փոփոխելով տեղ ի տեղոջ՝ ցրովանդակ ամս», այսինքն՝ մինչև Սլկունիների հետ պատահած միջադեպը, երբ նրանք ժառանգեցին այս վերջինների տիրույթները³: Մամիկոնյանների տոհմային նահանգի մասին պատմիչը

պիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է ե ոչ արանց», Փարպեցի, էջ 38: Սահակ կաթողիկոսը թաղվեց թի դաւան Տարաւնոյ, ի բնիկ գիւղն իւր սեպհական, յանուանեալն Աշտիշատ:

¹ Խորենացի, Բ, Ժբ, Ժգ:

² Նույն տեղում, Բ, Ժդ:

³ Նույն տեղում, Բ, Ժա, Ողական ամբողջ այժմյան Ախիանն է Եփրատի վրա, նրանից ոչ հեռու Սուլուխ գյուղն է, որտեղ գտնվում է գետանցը՝ Մուշից հյուսիս: Խորենացու դատողությունները, անստորկոյս, հիմնված են Սլկունի և Sülüch-ի նմանության վրա:

ականհայտ անտեղյակության դեպքում Մամիկոնյանների Տարոնում հաստատվելու ժամանակի մասին նրա հաղորդումը առանձնապես վստահություն չի ներշնչում: Հնարավոր է, որ Մամիկոնյանները Տարոնը ձեռք են բերել Տրդատի սրբո՝ Խոսրովի օրոք, ի թիվս այն կալվածքների, որ թագավորը շնորհեց Վաչե սպարապետին նրա կողմից Սանեսանի արշավանքը հերոսաբար ետ մղելուց հետո¹: Սահակ կաթողիկոսի մահից հետո Մամիկոնյանները նրա կտակի համաձայն ժառանգում են նաև Տարոնում գտնվող կաթողիկոսական կալվածքները²: Հաշտյանքի սահմանազյխին, Տարոնի արևմտյան ծայրամասերին տիրում էին Պ ա լ ու ն ի³ իշխանները:

Տարոնին հարում էին Ա ր շ ա մ ու ն ի ք և Ա ս ո պ կ ու ն ի ք գավառները, որոնք նախապես մտնում էին Տարոնի կաղմում: Դեռևս Փավստոսի ժամանակ Արշամունիքը համարվում էր Տարոնի մի մասը, իսկ Փարպեցու մոտ այն հանդես է գալիս իբրև առանձին գավառ⁴: Անվանումը ծագել է Արշամից, որը, ամենայն հավանականությամբ, կապ ունի Արշամաշատ քաղաքի հիմնադրի հետ: Տարոնի արևմտյան ծայրում գտնվող նեմրութ-դաղ լեռների վրա համեմատաբար մոտ ժամանակներս հայտնաբերված մի արձանագրության մեջ նույնպես խոսվում է ինչ-որ Արշամ թագավորի մասին⁵: Ըստ երևույթին հին ժամանակներում Եփրատի հովտում եղել է Արշամունյաց իշխանական տոհմը. սրանց հաջորդները

¹ Փավստոս, Գ, Ը, ետ վաչի գարավարի զականս Զանցանակին և զՋրաբաշխս և ծլու գլուխ ամենայն գաւառակարն հանդերձ Այդ վայրերի տեղագրութունը անհայտ է. Մսիեբ, ԺԹ, Ջրաբաշխ=Քաղբեանդի Սուկավառ լեռներին: Ծլու գլուխ, ենթադրաբար թարգմանությունն է Տավրոսի, ταύρος=ցուլ, եզ, քո Տարոյ գլուխ, հմտ. Տարոյ բերան:

² Փարպեցի, էջ 37:

³ Տե՛ս վերը, էջ 28:

⁴ Փավստոս, Գ, Ժե, այ Արշամունեաց տեղեացն ի նահանգն Տարուն գաւառն», Փարպեցի, էջ 149, «գաւառ Արշամունեաց», նույն էջում «սուսեալ Խորոայ, որ էր ի գաւառն Արշամունեաց ի գեղջն Եփրմաց, գայեակորդի տուանն Եփրազայ կամսարականին» արտահայտության մեջ պետք է կարդալ Ա ր շ ա ր ու ն ե ա յ, փոխ. Արշամունեաց: Բացի այն, որ կամսարականները ոչ մի անշուքյուն չունեն Արշամունիքի հետ, Ասողիկից հայտնի է, որ Եփրիմ գտնվում էր Արշարունիքում թի գլուխս Արշարունեաց գաւառն, որում Ե ի ր ի մ ն կուիք», էջ 187:

⁵ Babelon, Les rois de Syrie, d' Arménie et de Commagène, 193. 211:

Բինգլյուի ստորոտում, այսինքն՝ այն վայրում, որ պահել է նրանց անունը, շարունակել են իրենց գոյութունը համեմատաբար երկար ժամանակ։ Լայ հին մատենագրության մեջ Արշամունիքը համարվում է աշխարհազրահան տերմին։ Արշամունյաց տոհմն այն ժամանակ արդեն գոյութուն չունի, և Ս դարում նրանց կալվածքները գտնվում էին Մ ա ն դ ա կ ու ն ի ն ախարարական տան ձեռքին¹։

Մատենագրության մեջ Ասպակունի իշխանների մասին նույնպես հիշատակություն չկա։ Արշամունիքի նման Ասպակունիքն էլ ունի միայն աշխարհազրահան վայրի նշանակություն և Աշխարհացայցի մեջ այդպես էլ կոչվում է՝ Ասպակունեաց կիրճ։ Ասպակունիքը խոյթին հարեան լեռնային հովիտներից մեկն է, որն ընկած է Կարա-սու գետի (հին Մեղրագետ) ձախ կողմում, նանդոշ լեռներում՝ Մասունի դիմաց։ Իր կոպիտ բարձրով ու բարբառով խոյթը տարրերվում էր Տարոնից ու Հայաստանի մյուս մասերից և կալվում էր ինքնուրույն շրջան²։

Տարուբերանի մյուս կարևոր շրջանը Հ ա ր ք ն էր Մ ա ն ա գ կ ե ր տ կենտրոնով³։ Մա Մ ա ն ա վ ա զ յ ա ն իշխանական տոհմի տիրույթն էր։ Նրան սահմանակից Ապահունիք, Խորխոունիք, Բզնունիք գավառները նախապես մտնում էին Հարք գավառի մեջ, որ հետո անջատվեցին որպես համանուն իշխանների տիրույթներ։ Այդ երևում է նրանից, որ ըստ ազգային ավանդության Մանավազը, Խոռը և Բազը, որոնք իբրև թե հանդիսանում են հիշյալ տների նախահայրերը, ազգակցական կապ են ունեցել միմյանց հետ։ առաջին երկուսը Հայկի եղբայրներն էին, իսկ Բազը՝ Մանավազի

¹ Ասողիկ, էջ 81, «ՅՏՈՆԵ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, որ էր ի դասուղն Արշամունեաց»։

² Փովմա Արժունի, էջ 121, անվանում է նրանց «գազանաբարոյք արիւնարբոք», և կարծում է, որ «շաղազս խրթնի ևս անհետագոսելի խօսիցն ևս բարուցն կոչին Խոյթ», հմտ. Georg Cypri. p. 48, εἰσι δὲ καὶ οἱ οἰχοῦντες εἰς τὸ ὄρος τοῦ Ταύρου πλησίον τοῦ αὐτοῦ κλίματος (sc. μεγάλης Ἀρμενίας) λαοὶ β' ὄνομαζόμενοι ὁ μὲν εἰς Χοθαΐται ὁ δὲ ἕτερος Σανασούνιται. Հովհան Մամիկոնյանի ժամանակ Խոյթը պատկանում էր Տարոնի իշխաններին, այսինքն՝ Մամիկոնյաններին, ասուել զՄուշեղ զտէրն Մշու ևս Խոյթայ Տարոնոյ իշխանն ևս Մասնոյ, էջ 13։

³ Փովստոս, Ե, իթ, Մանակերտ, 2, ր, Մանակերտ, Գ, դ, Մանակաղտփերտ։ Փառայցի, էջ 44, Մանեկերտ։ Const. Porphi. De Adm. p. 195. Μαντζικέρτ.

որդին. Հայկի սերնդից է ծագում նաև Ապահունյաց տոհմը¹։ Ապահունիքում էին գտնվում նաև Ա ր ր ա հ ա մ յ ա ն իշխանների կալվածքները։

Նոսրով թագավորի օրոք Մանավազյանները Ռրդունի իշխանների հետ ունեցած ներքին կոիվների ժամանակ անհետ կորան. թագավորի հրամանով երկու տոհմերն էլ բնաջնջվեցին, ըստ որում Մանավազյանների կալվածքները բաժին ընկան Աղբիանոս եպիսկոպոսին, իսկ Ռրդունիներինը՝ Բասենի եպիսկոպոսին²։

Դատարեն իշխանի մահով, որը մահապատժի ենթարկվեց դավաճանության համար, ընդհատվեց նաև Բզնունյաց նախարարական տոհմը։ Նրա կալվածքները հարթունիս գրավեցին և հետո, ըստ երևույթին, անցան Բզնունյաց³ եպիսկոպոսին։ Ա պ ա հ ու ն ի ք ը, ըստ Փովստոսի, ընկած է Մ ա ս ի ք մեծ լեռան ստորոտում. այստեղ գտնվում էր Աղիորսը⁴ բնակավայրը. խոսքը այստեղ Արարատի մասին չէ, այլ այն լեռան, որ Աշխարհացայցի մեջ կոչվում է նեխ Մասիք, այժմ՝ Ս ի փ ա ն⁵։

Նրանից դեպի արևմուտք՝ լճափնյա շերտի ուղղությամբ տարածվում էր Բզնունիքը, դեպի հյուսիս՝ Ապահունիքը, իսկ դեպի արևելք՝ Ա ղ ի ո վ ի տ ը։ Ըստ Աշխարհացայցի Արածանին հոսում էր ամբողջ Ապահունիքի միջով մինչև Բզնունիքի սահմանները. նշանակում է երկու գավառները սահմանակից էին միմյանց. Ապահունիքը գրավում էր Արածանիի հոսանքը մինչև նրա՝ Մանակերտի մոտ դեպի արևմուտք թեքվելը, իսկ դեպից դեպի հարավ՝ մինչև Վանա լիճը ընկած էր Բզնունիքը։ Մանակերտը գտնվում էր Ապահունիքի և Հարքի սահմանագլխին և այդ պատ-

¹ Խորենացի, Ա, Ժ և Բ, ը, «զնախարարութիւնն Ապահունեաց ևս զՄանակաղտփանն ևս զԲզնունեանն ի նոյն դատեպոսն Հայկոյ»։

² Փովստոս, Գ, դ։

³ Նույն տեղում, Գ, ը, Գ, ծղ, Բզնունիքը հիշված է եկեղեցական գտնուների շարքում։

⁴ Նույն տեղում, Գ, ի, քաղաք Աղիորսը, այստեղ քաղաքը գործ է ածվում, երևի, հին իմաստով՝ որսի համար հատկացված ցանկապատված վայր։ Աղիորսը բնկում է Աղի-հովտում, Փովստոսի մոտ Աղոյ-հովիտ, Աղիտ-ովիտ՝ Աշխարհացայցի մեջ. Գ, թե, երկու ձևն էլ ճիշտ է. Աղիտ կամ Աղա նշանակում է աղահանք, աղի բառից։

⁵ Սիփան—հին Սիպան, ըստ Աշխարհացայցի, էջ 31, նախապես Վանա լճի կղզյակներից մեկի անունն էր, որ հետո փոխանցվեց նեխ Մասիք լեռներին։

ճառով էլ պատմիչները այն տեղագրում են մերթ Ապահունիքում, մերթ՝ Հարբում¹։

Կոր գավառը, իսկն ասած, հանդիսանում է Բզնունիքի մի մասը ճիշտ այնպես, ինչպես Աղիովիտը՝ Ապահունիքի Մանազկերտից ցած, ձախ կողմից Արածանիի մեջ թափվում է Կոր-սու գետակը, որ սկիզբ է առնում Բուլամա փոքրիկ լճակից. երևի այդտեղ էր գտնվում հին Կարը։ Այս շրջանում՝ այժմյան Բուլան ըրում էր պանվում խորհոտունիքը Բզնունիքի և Կորի միջև՝ Նազուկ լճի մոտակայքում, Կորի և Խոռխոսունիքի տեղագրությունը ենթադրական է, քանի որ Աշխաբհացույցի մեջ դրանց մասին հիշատակություն չկա²։

Մնացյալ գավառներից Երևարքը գտնվում էր լճի հարավային ուփին՝ Աղձնիքի հարևանությամբ։ Մարդաղին գրավում էր Արաբ-սի ակունքները՝ Բինգյուլի հյուսիսային լանջերում։ Նրանից դեպի արևելք՝ Վարաժնունիքի և Հարբի վերևում հերթով գալիս էին Գասնավորը, Տավարածատափը և Գալառը, որոնք տարածվում էին մինչև Արածանի գետը։ Այդ նկարագրության համաձայն Գասնավորը գտնվում է Արաբսի հովտում, Մարդաղի կողքին, Տավարածատափը այժմյան Կարայաղն է, Գալառը՝ Ելմավիի հովտն է, Վարաժնունիքը խնուսն է՝ Բինգյուլից բխող Արածանիի վտակի վերին հոսանքի վրա։ Հարբը սահմանակից է սրան Արածանի գետով³։

Առաջին երեք սահմանակից գավառները, ըստ երևույթին, Մարդաղի եպիսկոպոսի սեփականությունն էին. պատմական

¹ Գիրք բրոքս, էջ 223, «է ժողով ի Մանազկերտ գետի սահմանադուրս գինակին Հարբայ»։ Նույն տեղում, «ի մի վայր յԱպահունեաց գաւառ ի զին Մանազկերտ»։ Չնայ Գրակ, էջ 40, «ի գաւառն Ապահունեաց ի քաղաքազեղն Մանազկերտ», Ասողիկ, էջ 277, «ի գաւառն Հարբ ի Մանազկերտ քաղաք»։

² Const. Porph. De Adm. p. 193, Μαντζικιερτ μετά τῆς χώρας τοῦ Ἀπαχουνής καὶ τοῦ Χαρκά καὶ τοῦ Κορη. *ib.* p. 195, τὸ Μαντζικιερτ... τὸ τε Ἀπαχουνής καὶ τὸ Κορη καὶ τὸ Χάρκα.

³ Գասնաւորի փոխարեն երբեմն հանդիպում է Գաստվոր, Տաւարածատափ, որ նշանակում է հովիտների դաշտ, համապատասխանում է Կարայաղ հարթավայրին, Գալառը՝ կանաչ. համապատասխանում է Ելմավիին, որ նշանակում է խնձորենիների հովիտ։ Խնուսը ծագում է միջին հայերեն խնուսի, ինուհիս-ից, Ալիշան, Հայապատում, էջ 550։

գրականություն մեջ այդտեղի իշխանների մասին ոչինչ հայտնի չէ։ Վարաժնունիքը իշխանական տիրույթ էր¹։

Վ ա ս պ ու ր ա կ ա ն ա շ խ ա ր Տ ր, երրորդ կենտրոնական նահանգը, ըստ Աշխաբհացույցի կազմված էր 35 գավառներից, թեև այնտեղ բերված են միայն 32-ի անունները։ Միայն այս նահանգներում ավելի շատ գավառներ կան, քան Այրարատում և Տարուբերանում միասին վերցրած։ Աշխաբհացույցի հեղինակը ոչ բոլոր գավառների դասավորությունն է ծանոթ. առաջին 18-ը նրան ավելի լավ են ծանոթ, քան մնացածները։ Պետք է նկատել, որ առհասարակ հայկական նահանգների նկարագրությունը Աշխաբհացույցում տրվում է ոչ հավասար. 15 աշխարհներից մանրամասն նկարագրված են միայն Այրարատը, Տարուբերանը, IV Հայքը և Տայքը։ մյուսները միայն թվարկվում են իրենց ստորբաժանումներով՝ առանց նշելու այս վերջիններիս տեղագրությունը։ Հենց այսպիսի անհավասարություն է նկատվում նաև Վասպուրականի նկարագրության մեջ, նման հակասական վերաբերմունքը հավանաբար պետք է բացատրել նրանով, որ Աշխաբհացույցի հեղինակը հավասարապես լավատեղյակ չէր նկարագրվող բնակավայրերին. կենտրոնական նահանգները անհամեմատ ավելի հանգամանորեն են ներկայացվում, քան ծայրամասերը։ Աշխաբհացույցի համառոտ խմբագրության մեջ նկարագրության անհավասարաչափությունը վերացվում է նրանով, որ այնտեղ միայն մեջ է բերվում յուրաքանչյուր նահանգի գավառի անունը՝ առանց բացատրական նշումների։

18 գավառները նկարագրելիս Աշխաբհացույցը հետևում է

¹ Թե ինչ առնչության մեջ է գտնվում Վարաժնունիքը Այրարատի համանուն իշխանների հետ, անհայտ է։ Ըստ Խորենացու Աղիովիտը հանձնված էր Արշակունիների երկրորդական շտաբվոդներին. արդյո՞ք այս տեղեկության մեջ չի անգրադարձել այն հանգամանքը, որ Այրարատից մի քանի տոհմեր, հավանորեն ոստանիկներից, տեղափոխվել են Տարոն։ H. H. Schman-ը *Ortsname*, p. 328, ենթադրում է, որ արարական հեղինակների Քաշունիսը جاشينيس ավելի շատ համապատասխանում է Վաժնունիքին, քան թե Ապահունիքին, ինչպես կարծում է Վազարյանը, *Armenien*, p. 21 և 74։ Առավել հիմնավոր կլիներ համեմատել ավելի հայտնի Բզնունիքի հետ, բայց այդ նահանգը արարները կոչում էին, ինչպես երևում է, գլխավոր քաղաքի՝ Խլաթի անունով, որ Քաշունիսի հետ միասին հիշատակվում է, օրինակ՝ Իբն-Խորդադեհի մոտ, էջ 122, Պետք է կարգալ Պահունիս = (Ա)պահունիս։

արշակի սկզբունքի՝ թվարկումը սկսում է հարավից հյուսիս՝ երեք շարքով. առաջինն սկսվում է հարավում գտնվող Ռշտունիքից և վերջանում Արարատի ստորոտում գտնվող Կողովխտին հարող Գառնիով. Ռշտունիք, Տոսպ, Բողունիք, Արճիշակովիտ, Արերաւնի, Գառնի մինչև Կողովիտ:

Երկրորդ շարքը առաջինին զուգահեռ արևելքից անցնում է Բուժունիք, Առնոյտան¹, Անձևացիք, Տրպատունիք, Երվանդունիք, Մարդաստան, Արտազ մինչև Կողովիտ:

Երրորդ շարքը նույն ուղղությամբ ընկնում է ավելի արևելք՝ Ակե, Մեծ Ազրակ, Անձախի ձոր, Թոնրավան, Ճուաշ-ոտ, մինչև Արաքս:

Այս գավառների տեղը մեծապ մասամբ հայտնի է: Ռշտունիքը Ռ ս տ ա ն կենտրոնով վանա լճի հարավ-արևելյան ափերն է, Տ ա ս պ ր Վանի շրջակայքն է, Արճիշակովիտը ընկնում է Վանից հյուսիս՝ Արճակ լճի և նրա կողքից հստող Մարմիտ գետի շրջանում²: Ա ու բ ր ա ն ք, ավելի ճիշտ Ա ու բ ր ա ն ք, ընկած էր լճի հյուսիսային անկյան մոտ՝ Բենդիմահի գետի վրա և հետագայում գլխավոր քաղաքի անունով կոչվեց Բ ե ր կ ր ի³: Նույն

¹ Առնոյ-ոտը Աշխաբհացյցի մեջ գրված է Երվանդունիքից հետո, համառոտ խմբագրության մեջ՝ Բուժունիքից հետո: Գերագասելի է վերջին ընթերցումը, որովհետև Առնոյ-ոտն՝ Առնոյ լեռան ստորոտը ընկնում էր Անձևացիքից հարավ: Մոկսի տակ գտնվող լեռնաշղթան այժմ էլ կոչվում է Առնոս-գաղ: Առնոս-քը, ըստ երևույթին, առաջացել է Առնոյ-սար-ից, որի մեջ հայկական սարը փոխարինվել է թուրքական դաղով, ընդ որում լեռան անունը հասկացվել է իբրև Առնոյ-սար: Այդպես էր կոչվում հնում այն լեռնաշղթան, որ ձգվում էր Մոկսից դեպի Ջուլա-ժերի. նրա հենց այն մասը, որ գտնվում էր Ջուլամերի վերևը, կազմում էր Առնոյ-ոտն:

² Աշխաբհացյցի մեջ գրված է Արճիշակովիտ փոխ. համառոտ խմբագրության Արճիշակովիտի Այժմյան անունն է Արճակ, որ հին Արճիշակի համառոտ ձևն է՝ Արճէշի նվազական ձևը: Արճեշը քաղաք է Վանա լճի հյուսիսային անկյունում. հնում այդ անունն էր կրում նաև լճի մի մասը, Արճեշի ծոցը, իսկ սպա նաև ամբողջ լիճը. Սարարոնի հի ծէ 'Αροσηή, ήν και Θωπίτιν καλοῦσιν էջ 743—744, պետք է կարգալ 'Αροσηή և Θωπίτιν=Արճեշ և Տապ, որ Վանա լճի անուններն են: Պլինիոսը VI 27, նույն անունը հիշատակում է Arethusa ձևով, որտեղ Ռ-ն համապատասխանում է քմային Ե-ին: Ի տարբերություն Արճեշի, Վանա լճի վերևում գտնվող ըակը կոչվում էր Արճիշակ, այսինքն՝ փոքր Արճեշ: Թերևս արճեշը հայերից առաջ գոյություն ունեցող բնակչության լեզվով առհասարակ նշանակել է լիճ:

³ Ղևնզ Վազգայեա, էջ 146, «ի գաւառ Արերաւնի ի գեղն Բերկրի»: Ա-

գետի վերին հոսանքի վրա ընկած էր Գառնին Թոնդերեկ և Գ ու ր Ե լեռների ստորոտի մոտ, որոնք Գառնին բաժանում էին Կողովիտից, այսինքն՝ Բայազետի շրջանից:

Երկրորդ շարքի սկզբի գավառները՝ Բուժունիքը և Անձևացիքը ընկած էին Բոհոտան կամ արևելյան Տիգրիս գետի վերին հոսանքի վրա, որտեղ այժմ Նորգուզի շրջանն է, ընդ որում, Անձևացիքը գրավում էր Կանգովար՝ այժմյան Կանգովա քաղաքի և Հ ո գ Ե ա ց վանքի շրջակայքը: Նրանից հարավ ընկած էին Բուժունիքը և Առնոյտանը, իսկ դեպի հյուսիս՝ Խոշար գետի վերին հոսանքի վրա, որի հովիտը կոչվում էր Հայոց ձոր, Տրպատունիքը և Երվանդունիքը¹: Այնուհետև դեպի հյուսիս Արճակ լճից մինչև Արտազ տարածվում էր Մարդաստանը: Ըստ Խորենացու Արտազը ընկած էր Մասիս-Արարատից հարավ-արևելք և ավելի վաղ ժամանակներում կոչվում էր Շավարշան կամ Շավարշական: Արտազում էր գտնվում Ե Ղ ի ն դ ք, որտեղ բանակել էր Վահան Մամիկոնյանը Նիխորի հետ բաժանակցություններ վարելու ժամանակ, այն մինչև օրս էլ գոյություն ունի Մակուից մի քանի կիլոմետր հեռավորության վրա և կոչվում է Երինդ. այդտեղ է նաև Խայսունը՝ հին Հացյունը: Սրանով է որոշվում Արտազի տեղադրությունը, որ Մակու կենտրոնով գտնվում է Ակ-շայ՝ հին Տղմուտ գետի վրա²:

Գավառների երրորդ շարքը տարածվում է Զավ գետի ափունքներից դեպի Արաքս, գրանք են Աղբակը, որ ներկայիս Աղբակի կազան է Բաշկալա քաղաքով, սրանից դեպի հարավ՝ Ակեն, դեպի հյուսիս՝ Անձախիձորը Կոտոր՝ հին Կոտոր գետի վրա համանուն քաղաքով, նրա կողքին, Կոտորից արևմուտք Թոնրավանն է՝ նկան, ներկայիս Նազան ամրոցով, այստեղ է գտնվում նաև մի

բնա, էջ 108, Const. Porph. p. 191: Արդյոք Գուրեն կապ լուծի՞ Գառնիի հետ և Գիրասուրը՝ լեռան ստորոտին գտնվող դուղը, արդյոք Գառնիձորից լի՞ ծագում: Հմմտ. նաև Բայազետի գետի Գերենիի անվանումը:

¹ Քովմա Արճունի, էջ 197, «գլուխ ձորոյն Հայոց.—(և ոչ Հացոց, ինչպես սուգաբոված է,—որ հանէ լԱրտաւթունի գաւառս: Խորենացի, Ա, ծ, այսպես է կոչվում նաև ներկայումս, ԻՅԵԻՅՈՒՆ, Աշխաբհագր., էջ 144:

² Խորենացի, Բ, խթ, Փարսիցի, էջ 164, «ի գաւառն, որ կոչի Արտազ ի գեօղն, որ անուանեն Եղինդ...», Լույն տեղում, էջ 69, «Արտազ հուպ ի գեօղն, որ կոչի Աարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին»: Ըստ Վազգանի Աշխաբհագրոյրյան «Արտազ Մակու է, ուր կայ սր. առաքեալն Բագէտոս». հմմտ. Քովմա Արճունի, էջ 259:

ուրիշ պատմական ամբողջ՝ Սևանը, որ կանգնած էր Լիմբի ձորում: Սևանը ներկայիս Սեյվան կալան է, որ ընկած է Արճակ լիճը թափվող Մահմեդիկ գետի վրա. այդտեղ է գտնվում նաև Լիմ ավանը: որ, անկասկած, հին Լիմբն է¹:

Ընծային ձորից այն կողմ տարածվում էր Խերական դաշտը, իսկ այնուհետև՝ Ճուաշք, որտեղ գտնվում էր Մարականը՝ Վասպուրականի իշխանների ձմեռանոցը: Խերականը գտնվում էր Հնր քաղաքի՝ այժմյան Խոյի շրջակայքում, այժմ էլ Կըզըլ-չայի, հին Կարմիր-գետի ստորին հոսանքը կոչվում է Խար-դաշտ, այս գետի ափին ցույց են տալիս Մ ա ր ի ք ն ղ գյուղը, որ թե՛ դիրքով և թե՛ անունով համապատասխանում է Մառականին²:

Վիճելի 13 գավառները, եթե դրանք պատկանելիս լինեին Աշխարհացույցի սկզբնական բնագրին, պետք է որ կազմեին չորբորդ շարքը՝ Գ ր ճ ու ն ի ք և Մ ա ր ա ն ղ ծայրակետերով: Կոտորից հյուսիս գտնվում է Կ ու ը ա ն բնակավայրը, որը կարելի է համեմատել Կրճունիքի հետ՝ իսկ Մ ա ր ա ն ղ ը հայտնի քաղաք է Աղբե-

¹ Քովմա Արժունի, էջ 233, սղամուրն Նկան ի Քոռնաւան (Աշխարհացույցի Քոռնավանի փոխ.) գաւառի և գամուրն Կոտոր ի ձոր Ընծայից, գամուրն Սեւանի ի փորն Լճքայս, հմժտ., նույն տեղում, էջ 275 թի գաւառին Լոմքայ կոչեցեալ փորակն: նույն տեղում, էջ 228, «ձորն Ընծայից, որոյ նրքն ընդ գաւառն Հնր քաղաքին, նույն տեղում, էջ 264, «քնդ ձորն Անծահոյ եկն էջ ի Խերական կոչեցեալ դաշտ», նույն տեղում, էջ 271, «թի բնրդն Կոտորոց ի ձորն Անծահոյ»: Փարսեցի, էջ 72, «ազգ Ընծայնոյ», Նդիշն, էջ 181 ընծայ<ն>ացի, նույնը, էջ 218, «ընծային», էջ 225 — ընծայնոց և վերջապես Գանեամակի մեջ՝ Ընծայեցի, Զորեամակում՝ Ընծարին, փոխանակ ընծարին=ընծահին: Երեի ճիշտ ձևն է ընծային-այ (Փարսեցու ընծայնոյն պետք է կարգալ ընծայնոյ). ընծահին վրիպակից առաջ են եկել մյուս ձևերը. Քովմա Արժունի, էջ 51, փորձում է ստուգարանել բառը ան-ձախ, ձախել բառով, բայց այդ անհիմն է. կարող է պատահել, որ այդ ամենը հետագայի մեկնություն է: Նկանը այժմյան Նագանն է (Hübshman, Ortsname, p. 136, հետևելով Ինժիճյանին՝ պնդում է, որ Նկանի տեղը հայտնի չէ): Նկանի տեղագրությունը հիմք է ծառայում Քոռնավանը փոխադրելու Արարսի մոտակայքից, որտեղ այն դնում է Հյուբշմանը, Վանա լճի ավազանը: Մի ուրիշ կարևոր բնրդ՝ Սևանը, Սեյվան-կալան ուսական քարտեզներում տեղադրված է Կոտորին, իսկ Լիեյի գրքում՝ Վանին ավելի մոտ:

² Քովմա Արժունի, էջ 264 քնդ ձորն Անծահոյ եկն էջ ի Խերական դաշտ... անցանել ի ձմեռոցան արբունի, ի գաւառն Ճուաշ յաւանն Մառական. նույն տեղում, էջ 254, «Մառական ասան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջան է ի գետն Նրասայս: Գետը հնում նույնպես կոչվում էր Ճուաշ-ոտո, Ճ ո ա ա շ գետ:

³ Ըստ Քովմա Արժունու, էջ 260. Մարգաստանից՝ թի յանցին դառնան

ջանում. մյուս գավառները պետք է որ տեղադրված լինեին դրանց միջև, Խոյից մինչև Արաբու: Բայց 13 գավառներից Գուկանը և Արաաշեսայանը մենք գտնում ենք Վանա լճի ավազանում. առաջինը նույնանում է Ռշտունիքի Գուկանը գյուղի հետ, իսկ երկրորդը՝ Վանից ոչ հեռու գտնվող Արաաշեսայան վայրի հետ: Մրանից երևում է, որ ոչ բոլոր 13 գավառներն էին ընկած Խոյի սահմաններում և, հետևաբար, այն ենթադրությունը, թե դրանք կազմում էին չորբորդ շարքը, վերանում է, և դրանով էլ ավելի է մեծանում կասկածը նրանց իսկությունն և կատամամբ: Սակայն վիճելի գավառները մեծ մասամբ հանդիսանում են փոքրիկ անկյուններ, թերևս հայտնի գավառների ստորաբաժանումներ, և այդ պատճառով էլ մեր հետապնդած նպատակի համար լուրջ նշանակություն չունեն:

Վասպուրականի պատմիչ Քովմա Արժունին, որ քաջ ծանոթ է երկրի տեղագրությանը, պատմելով երկու եղբայրների՝ Գագիկի և Գուրգենի միջև հողերը բաժանելու մասին, թվարկում է Վասպուրականի գավառները, բաժանելով դրանք երկու խմբի՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան: Թվարկելով առաջին խմբի՝ մեծ եղբոր՝ Գագիկի բաժնի գավառները, պատմիչը նշում է, որ «այստեղիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեանն Մարգպետն կոչեցեալ...»³: Արժունի պայմանական

ի Ճուաշ (գեպի ձախ) և թի Քոռնաւան գաւառ (գեպի աշ), անցեալ ընդ Կրճունեաց գաւառն», Կրճունի ծագում է ոչ թե կիրճ ունի-ից, ինչպես այն թվում է, այլ կրտիճ ունի-ից. կրտ-իճը կազմված է այնպես, ինչպես արապատ-իճ-ը և նշանակում է ք ու ղ: Հետաքրքրական է Կրճունին համեմատել Կորոնայի հետ Փափասոսի Կորտիճ-այք-ից, ինչպես կոչում է պատմիչը Սալմաստի այն շրջանը, որ հարում է Կրճունիքին:

¹ Վեռնդ, էջ 26, թի գաւառն Ռշտունեաց ի գիւղն, որում Գուկանն կոչենք, հմժտ. Քովմա Արժունի, էջ 256. Ռշտունիք, Բոզունիք, Գուլան, Արաաշեսան:

² Կասկածիլիներից Պատասպարունին, Արաաւանեանը, Բագանը, Գանթանը ծանոթ են նույնիսկ Քովմա Արժունու:

³ Քովմա Արժունի, էջ 251—252: Առաջին խմբին են վերաբերում «Ճուաշ գաւառն և Քոռնաւան, Արաաղ, Մարգաստան, Գառնի, Արբերանի, Աղանդոտ, Բառիլիլիտ, Պալունիք և Մեննունիք, Տոպ-Ռշտունիք, Բոզունիք, Գուլան գաւառ, Արաաշեսան. այստեղի գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարգպետն կոչեցեալ...»: Երկրորդ խմբին՝ «Անծահոյ ձոր, Կրճունի, Կուղանովիտ և բուն 23 Ե. Աղանց

մեջ այն է, որ Վասպուրականի մի մասը հին ժամանակներում կրել է Մարդպետի անունը՝ անկախ նրանից, թե թ դարում կատարած պատահական բաժանման հետևանքով այդ մասը համընկնում է Գագիկի բաժնին, թե ոչ: Հենց այդ էլ Մարդպետական երկիրն էր: Մարդպետական անվանումը երբեմն հաջորդում է Սեպհական տերմինին, որպես նրան համազոր աշխարհագրական հասկացողություն. այսպես, միևնույն անձնավորությունը մեկ կոչվում է Մարդպետական եպիսկոպոս, մեկ էլ՝ Սեպհական¹: Sephakan-ը ծագում է Sepuh-akan-ից, որ հին Vaspurakan, Vaspuh-akan-ի համեմատաբար նոր ձևն է: Աղբյուրներում դրանց գույաճեն գործածությունը պետք է բացատրել հենց նրանով, որ աշխարհագրական տեսակետից նրանք տարբեր մեծություններ են. մեկը հարաբերում է մյուսին այնպես, ինչպես մասը ամբողջին:

Ինչպես կտեսնենք, մարդ-պետ նախապես նշանակել է մարդերի պետ, այն ժողովրդի, որ բնակվում էր Մարդ-աստան կոչված վայրում. հետագայում ինչպես ասպետ, մաղխազ և սպարապետ տիտղոսները, մարդպետը ևս դարձավ տոհմային տիտղոս: Մարդերի իշխանական տան վերացումից հետո այդ տիտղոսը անցավ հարևան Արծրունի տոհմին, իսկ Մարդպետականը դարձավ աշխարհագրական հասարակ տերմին: Մարդպետ իշխանությունը խիստ թշնամական հարաբերության մեջ էր գտնվում հարևան Արծրունի իշխանների հետ. մարդպետներից մեկը Տիրան թագա-

Մարդաստան գառո, Արճիշակովիտ, ոտն Առնոյ, Աղբազ մեծ ևս փոքր, Ակէ Տամբեր, Տագրեան, Ըռնայ, Զարհաւանա: Վերջին զավառների վերաբերելու պատմիչը նկատում է, որ դրանք խլված էին Պարսկահայրից. այդպես է նաև Աշխարհացույցում: Նախիջևանի և Գողթանի բացակայությունը բացատրվում է նրանով, որ առաջինը 210, իսկ երկրորդը 186 տարի դրանից առաջ անջատվել էին Վասպուրականից: Քանի որ Աշխարհացույցում թե՛ մեկը և թե՛ մյուսը նշված են Վասպուրականում, պետք է, որին, եզրակացնել, որ Աշխարհացույցի խմբագրությունը կատարված է Քովմա Արծրունուց 210 տարի առաջ: Մյուս կողմից, նկատի ունենալով մեր հայտնած տարակուսանքը 13 զավառների մասին, կարելի է կարծել, որ Գողթանն ու Նախիջևանը ի շարս 13 զավառների Վասպուրականի մեջ մտցված են Քովմա Արծրունու վկայության հիման վրա. այդ դեպքում խմբագրությունը պիտի վերադրել նրանից հետո ընկած ժամանակներին:

¹ Գրիգորը մեկ համարվում է եպիսկոպոս «Սեփական Գնդին», Գրիգորաց, էջ 73, մեկ էլ՝ եպիսկոպոս Մարդպետականի, նույն տեղում, էջ 70 և 76, ինչպես նաև էջ 81: Քննողորոշ՝ մեկ եպիսկոպոս «Սեփական Գնդե»։ նույն տեղում, էջ 151, մեկ էլ՝ եպիսկոպոս «Մարդպետականի», նույն տեղում, էջ 146 և 156:

վորի ժամանակ փորձեց բնաջնջել Արծրունիների ամբողջ տոհմը. կոտորածից փրկվեց միայն մանուկ Շավասպը, որը հետո ժառանգեց հայրական տիրույթները: Այդ հարվածից Արծրունիները ուշքի եկան բավականին ուշ և, ինչպես նշում է պատմիչը, երկար ժամանակ նրանք չէին մասնակցում երկրի գործերին¹: Ճիշտ է, Շավասպը վրեժ լուծեց՝ սպանելով իր տոհմի ոխերիմ թշնամուն², բայց փոխադարձ վրեժն ու ատելությունը շարունակվեցին և հանգեցրին Մարդպետական տոհմի վերջնական կործանմանը, այնպես որ Ս դարում այն այլևս գոյություն չուներ: Հաղթողները մարդպետական տիրույթների հետ միասին ժառանգեցին նաև մարդպետ տիտղոսը: Եվ իրոք, Ս դարի շարժմանը Արծրունիների կողմից մասնակցող իշխան Միհր-Շապուհին Փարպեցին անվանում է տեր Արծրունեաց և Մարդպետ: Եղիշեի բնագրում հիշվում է միայն իշխան Արծրունի³: Ըստ Փարպեցու Վարդան Մամիկոնյանի հետ միասին գնալի Աղվանից աշխարհ պարսից դեմ են գնում նաև մարդպետական հեծելազոր գնդերը, իսկ Եղիշեի մոտ համապատասխան տեղում mutatis-mutandis հանդես է գալիս ներշապուհ իշխանը, այսինքն՝ այն նույն Միհր-Շապուհը՝ Արծրունի իշխանը, որը, ըստ երևույթին, զլխավորում էր մարդպետական հեծելազորը⁴: Այս համեմատություններից և Փարպեցու ուղղակի վկայությունից երևում է, որ մարդպետը դարձավ Արծրունյաց տոհմի տիտղոս:

Աղբակը հնուց ի վեր համարվել է Արծրունիների տոհմական ժառանգությունը, իսկ նստավայրը կամ ոստանը Հաղամակերտն էր⁵, որը, հավանաբար, գտնվելիս է եղել այժմյան Բաշկալա բաղաբի տեղում: Փարպեցին և Եղիշեն Արծրունյաց տոհմի մեջ տարբերում են երկու ճյուղ: Մեկի ներկայացուցիչը Ս դարի շարժման մասնակից ներկամ Միհր-Շապուհն էր, իսկ մյուսինը՝ Ապրսամը: Բնական կլիներ ենթադրել, որ մի ճյուղը տիրում էր

¹ Փավստոս, Գ, ժը.
² Նույն տեղում, Գ, ժը:
³ Փարպեցի, էջ 71, Եղիշե, էջ 218:
⁴ Նույն տեղում, էջ 64, «Երանգր ի զորացն Մարդպետական այրուձիտ», հմտ. Եղիշե, էջ 136, «Ներշապուհ Ռմբոսեան»: ներշապուհը Միհր Շապուհի ժողովրդական ձևն է: Փարպեցին երկու ձևն էլ գործ է ածում, էջ 71, 75, 78 և այլև: Ինչ է նշանակում Ռմբոսեան, հայտնի չէ:
⁵ Փարպեցի, էջ 5, Քովմա Արծրունի, էջ 116 և այլև:

Ազրապին, իսկ մյուսը՝ մարդպետի ժառանգությանը՝ Մարդպետականին¹:

Վասպուրական ընդարձակ նահանգը գտնվում էր գերազանցապես 3—4 ազնվական տների տիրապետության տակ, այսպես՝ Արծրունիները իշխում էին Ազրակում, մարդպետները, ԴԵՏԲ, Արծրունիները՝ Մարդպետականում, Ռշտունիները՝ Համանուն գավառում և, հավանաբար նաև Տոսպում², ինչպես և Ամատունիները՝ Արտաղոս³: Նրանց շուրջը համախմբված էին մնացած մանր իշխանությունները՝ Անձնվացի, Տրպատունի, Նըվանդունի, հավանաբար նաև Վարձավունիք, Գուկան, Արտաշեսյան, հնարավոր է նաև Պալունի և Տրունի⁴, Կրճունի և Լնծային-Անձախի իշխանությունները.—մարդպետի շուրջը՝ Ազրակից հարավ ընկած Ակեաց և Բուժունի իշխանությունները, Վանա լճի վրա՝ Բոգունիք, իսկ Բերկիրում՝ Գնունիները: Ավելի պակաս հայտնի իշխանությունները՝ Բաքանը, Պատսպարունին, Գազրիկանը, Վիժանունին կամ Վաժնունին, Ճուարշեանը, Տայգրեանը և մյուսները հավանաբար մեծ մասամբ հարում էին Ատրպատականի սահմանին⁵: Այդ

¹ Փարպեցի, էջ 75, Հմմտ. Եղիշե, էջ 185—186 և 369—370: Ազրակի իշխանը հենց Ներշապուհն էր, էջ 78 Մուշէ Ազրակացի, դրան հրէց իշխանին Արծրունեաց Ներշապուհը նաև էջ 75 և 101), որով ուրեմն Մարդաստանին տիրում էր Ապրսամի ճյուղը: Հակառակ սպասածին, մարդպետ է կոչվում Ներշապուհը և ոչ թե Ապրսամը: Հավանաբար ժամանակի ընթացքում այդ տիրույթը դարձել էր Արծրունիների ամբողջ տոհմի ընդհանուր սեփականությունը:

² Քովմա Արժրունու Տոսպաշտունիքը (էջ 291), կարծում ենք, հասարակ վերպակ չէ:

³ Որ Ամատունիները նախապես ապրում էին Արտաղոս, այդ երևում է նրանից, որ Արտաղի կայսկոպոսին Քովմա Արծրունին կոչում է կայսկոպոս Ամատունեաց սան, էջ 259: Եկեղեցական բաժանումը, ինչպես կտեսնենք, արտացոլում է հին վիճակը: Ամատունիները հնագույն տոհմերից մեկն էին, և նրանց ծագումը նույնպես ցույց է տալիս, ինչպես կտեսնենք ստորև, որ նրանց սկզբնական հայրենիքը գտնվում էր Ատրպատականի սահմանին մոտ:

⁴ Քովմա Արժրունի, էջ 116, «ի տոհմին Լնտրունեաց» պետք է կարգալ Տրունեաց, ինչպես է 134 էջում: Տիրունին, ըստ երևույթին, Տրպատունիի կրճատ ձևն է:

⁵ Բաքան հմմտ. Պազան-ի հետ, որ գյուղ է Մակուից քիչ հարավ: Գազրիկանը առաջ է եկել Գազրիկ-ից պարսկ.—an=հայ. Գազրիկ-ը-ին Քովմա Արժրունի, էջ 121, Գազրիկ Ապուհարազ, Բայց էջ 164-ում Գազրիկը Արունիմ և Վասակ և Վահան: Աշխարհացույցի Վաժնունի, համառոտ խմբագրության մեջ Վարձանունի, ըստ երևույթին վերջին ձևն էլ ավելի է իշտ է: Գահնամակի

տոհմերը շատ հին համարվել չեն կարող: նրանց մեծ մասը վերաբերում է Վասպուրականի թագավորության շրջանին:

Պետք է նկատել նաև, որ Քովմա Արժրունու մոտ Վասպուրականի իշխանների թվում հանդիպում են իշխանական այնպիսի տոհմանուններ, որոնք, ինչպես հաստատ դիտենք, ապրել են Վասպուրականից դուրս, երկրի ուրիշ մասերում¹: Նման երևույթները պետք է բացատրել նրանով, որ Վասպուրականի քաղաքական ազդեցության աճման հետևանքով բազմաթիվ իշխաններ ծառայում էին այնտեղ, պաշտպանություն փնտրելով երկրի տերերի՝ Արժրունի իշխանների մոտ:

Առհնեանը Ճուարշեանի ազնատունն է: Տայգրեանը կարելի է համեմատել Բաշկալայից հյուսիս գտնվող Գեբր-ի հետ:

¹ Օրինակ. Քովմա Արժրունի, էջ 116, Ապահունիք, Հանունի, Գարայիզեն, էջ 135, Արեղենից տէր հիշվում է Վասպուրականում, ինչպես նաև Քաչրերունիները, նույն տեղում, էջ 109, որոնք ապրում էին Արճեշում:

Գ Լ Ո Ւ Խ XII

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Եկեղեցին նախարարական միջավայրում: Ազգային ավանդությունները կառավարչի օրոք եղած եպիսկոպոսների և եկեղեցական քեմերի բլի մյսին. նրանց անկրթ լինելը: Ուխտանոցի և Ագարանգեղոսի արարական վերսիայի տվյալները: Արժանաճավատ տվյալներ 451, 505 և 555 բվականների եկեղեցական ժողովների վավերագրերում: Նրանց համեմատական վերլուծությունը: Հագևոր իշխանության կազմը Գ դարի կեսին: 607 և 644 թթ. եկեղեցական ժողովների վավերագրերը: Ուխտանոցի մտ պանդանված եպիսկոպոսների ցուցակի կենդանությունը, նրա համեմատությունը 726 թ. եկեղեցական ժողովի մասնակիցների ստորագրությունների հետ: Ագարանգեղոսի արարական վերսիայում պանդանված եպիսկոպոսների ցուցակի կենդանությունը: Նրա ղավանդարանական հիմքը. ցուցակը է դարից շուտ չէ:

II. Հավասարի տվյալներ հայ եկեղեցու հիերարխիայի վերաբերյալ. Աղբիանոսյաններ և Գրիգորյաններ: Նրկու տոհմերը որպես բրիտանեական տարբեր հոսանքների՝ հարավ-եղեօսիական և արևմտա-կեսարիական հոսանքների ներկայացուցիչներ: Պատմականը օրանց վերաբերող գրույցների մեջ: Նրկու տոհմերի մրցությունը: Եկեղեցական կազմակերպությունը: Գրիգորյանների հակվածությունը կայսրության կարգերին: Կայսերական եկեղեցու համակարգը: Նրա վերաբերմունքը կաղափարական կազմակերպությունների նկատմամբ: Միտոսպոլիտական ու պատրիարհական իշխանությունները և նրանց փոխհարաբերությունները: Հայկական եկեղեցու հիերարխիական կապերը կայսերական եկեղեցու հետ: Նրա պատակտումը: Եկեղեցու ազգայնացումը Հայաստանում: Նախարարական գծերը:

I

Նախարարական վարչակարգը քննությունն առնելիս չի կարելի շշտշափել եկեղեցական կազմակերպությունը: Հայ եկեղեցին, զարգանալով նախարարական միջավայրում, բնականաբար իր վրա պետք է կրեր նրա ազդեցությունը: Այս ապրիորի, ինքնին ծագող և միանգամայն հասկանալի հարցը թվում է, թե պետք է արժանանար հետազոտություն: Մինչդեռ հայ եկեղեցու ճակատագրով հե-

տարբերվող գիտնականները անտեսում են այդ հանգամանքը կամ բավարարվում են ընդհանուր դատողություններով և հայ եկեղեցու ծագման ու ազգայնացման պատմությունը լուսաբանելիս կրեմն կանգնում են հայ իրականությունը միանգամայն խորթ տեսակետի վրա: Գրա հետևանքով էլ, շնույած հայ եկեղեցու անցյալին նվիրված բազմաթիվ թվով հետազոտություններին, շատ հիմնական հարցեր դեռևս մնում են չլուծված: Կասկածի տակ է առնվում նույնիսկ այնպիսի, ըստ երևույթին, հասարակ հարց, ինչպես հայ եկեղեցու ազգային բնույթը. ըստ մի հայտարարության «հայ եկեղեցին հենց սկզբից ստեղծվել է որպես ինքնուրույն, ազգային եկեղեցի՝ քաղաքական և մշակութային միանգամայն այլ պայմաններում, քան կալսերական մեծ եկեղեցին»: Մյուս կարծիքը, ընդհակառակն, ասում է, որ հայ եկեղեցին «իր ինքնուրույն մեջ շափից ափելի է տարվում իր ազգային բնույթով, շափից ափելի արխաիկ է դարձնում այն»:

Տրամազորեն հակառակ նման կարծիքներ հայտնի են նաև եկեղեցական կյանքի մյուս կողմերի մասին, որ մեծ մասամբ պետք է բացատրել կամ ժամանակի կամ տեղի նկատմամբ պատմական հեռանկարի խախտումով: Նախքան ընդհանրացումներին անցնելը, անհրաժեշտ է ճշտորեն սահմանադատել, թե քննարկվող տվյալները Հայաստանի ո՞ր մասին և երկրի պատմության ո՞ր շրջանին են վերաբերում: Պատմական Հայաստանը ո՞չ մշակութապես, ո՞չ էլ քաղաքականապես միատարր ամբողջություն չէր, և նրա յուրաքանչյուր մասի բախտը պետք է քննության առնվի տվյալ մասի սեփական պայմաններում: Հայ եկեղեցին Հայաստանի մի մասում բոլորովին էլ այն չէր, ինչ էր մյուս մասում. դա կախված էր նրան շրջապատող քաղաքական մթնոլորտից: Երկրի քաղաքական վիճակի փոփոխության հետ փոփոխվում էր նաև եկեղեցին՝ հարմարվելով նոր պայմաններին:

Կյանքի այդպիսի հարափոփոխ պայմաններում զրական հուշարձաններն էլ չէին խուսափում այն ընդհանուր ճակատագրից, որին ենթակա էր կյանքը. պատմական գրականությունը բազմիցս վերանայման և վերամշակման է ենթարկվել ավյալ շրջանի ոգուն

¹ Karapet Ter-Mkrtshian, Die Paulikianer, p. 55 H. Mapp, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах халкедонитах, pp. 1—2.

և պահանջներին համապատասխան: Այդ պատճառով էլ գրական ժառանգությունները բնավ զերծ չեն միտումնավոր երանգավորումից իրական թե անիրական փաստերը լուսաբանելիս ու զուգակցելիս: Եկեղեցու դարգացման իսկական ընթացքը բացահայտելու համար պետք է նախ և առաջ դեն գցել երբեմն հին և տարածված, միտումնավոր հնարանքները և առանձնացնել ստույգ փաստերը, մաքրելով դրանք ամեն տեսակ շերտավորումներից ու շրջանակներից:

Այժմ մեզ հետաքրքրում է բացատրապես եկեղեցու արտաքին կառուցվածքը, նրա հիերարխիական կազմը: Մի կողմ թողնելով եկեղեցու ներքին կյանքը, այն ամենը, ինչ վերաբերում է նրա հոգևոր բովանդակությանը, մենք այն քննարկում ենք միայն արտաքին կողմից, վերցնում ենք, այսպես ասած, նրա կառուցվածքային ճարտարապետությունը: Ընդհանուր եկեղեցու հետ համեմատած՝ ո՞րն էր այդ կազմակերպության առանձնահատկությունը, որ նրան ապրիս էր ազգային հաստատության երանգ:

Ազաթանգեղոսը, որ հատկապես պատմում է Գրիգոր Լուսավորչի կյանքի և քարոզչության մասին, պնդում է, որ հայ եկեղեցու հիմնադիրը Հայաստանի համար ձեռնադրել է ավելի քան 400 եպիսկոպոս¹: Մի ուրիշ անգամ նույն պատմիչը հայտնում է, որ ընդամենը 12 հոգի արժանացան եպիսկոպոսություն աստիճանի և Լուսավորչի կողմից ձեռնադրվեցին եպիսկոպոս, ապա թվարկում է նրանց անունները²: Այդ հակասական տվյալները բացատրվում են Ազաթանգեղոսի աշխատության կոմպիլատիվ բնույթով, և գրանք պետք է վերագրվեն այն աղբյուրներին, որոնցից կազմվել է Լուսավորչի կյանքի մասին մեզ հասած խմբագրությունը: Տասներկու եպիսկոպոսների անվանացանկի վերջում տրված ոչ այնքան պարզ նշումը, որի իմաստը, ընդհանուր առմամբ, այն է, թե հակառակ բոլոր ցանկություններին հնարավոր չէ գրի առնել նաև մյուս եպիսկոպոսների անունները, ինչպես երևում է, նպատակ ունի որևէ կերպ միմյանց կապել երկու վիպությունները և հարթեցնել հակասությունները³:

¹ Ազաթանգեղոս, էջ 492, «որ եպիսկոպոսացն յաստիճան ձեռնադրեցան ի նմանէ, աւելի քան զերեքհարիւր եպիսկոպոս, որք կացին տեսուչ տեղեաց տեղեաց»:

² Նույն տեղում, էջ 487:

³ Ազաթանգեղոս, էջ 487, ի. Ը., և զայլոցն անուանս թէ և կամիցի որ, ոչ

Ազաթանգեղոսի խոսքերը 400 եպիսկոպոս⁴ փաստական տվյալներով է Ուխտանես պատմիչը, բայց քանի որ նա ունի, արժեքավոր են աղբյուրի վիպություն այն մասին, որ Լուսավորիչը հակա վերդամենը 30 եպիսկոպոսական աթոռ, ուստի մեջ բերելով մեն հայկոպոսների ցանկը, նշում է, որ Գրիգորը դրանցից բացի փայագրել է ևս 370 եպիսկոպոս, ըստ որում դարձյալ հակասություններ հարթելու նպատակով, ըստ երևույթին հնարավոր է համարում տարբերություն դնել աթոռ ունեցող և անաթոռ եպիսկոպոսների միջև:

Մի այլ պատմիչի տվյալների համաձայն, Լուսավորիչը հաստատել է ոչ թե 30, այլ 36 աթոռ: «Ապա կարգէ և սուրբն Գրիգոր,—ասում է Օրբելյանը,—զեկեղեցական դասս, զգահ և զպատիւ եպիսկոպոսացն և հրամայէ բազմել ընդ ինքեանս աթոռով և ոսկենկար բարձու 36 եպիսկոպոսաց՝ 18 յաջմէ և 18 յահեկէ առաջինն Հարթայ եպիսկոպոսն և յահեկէ առաջինն Բասենոյ, իսկ զՍիւնին յաջ կողմանէ յեօթներորդ գահուն նստեցուցանէ, և ցուցանէ զայս Սամուէլ Կամրջաձորեցի»²:

Հեղինակը, որին վիպակոչում է պատմիչը, Արշարունյաց գավառի Կամրջաձորի վանքի վանահայրն է, նույն Սամվել փրկիսոփան, որի մասին հիշատակում է Ասողիկը, անվանելով նրան «բազմաշնորհն ի դիտութեանս գրոց սրբոց և յերգս երածառութանց»³:

Նա ապրում էր Թ դարի վերջերին և ժամանակակից էր Ուխտանեսին ու խաչիկ կաթողիկոսին⁴, որի հանձնարարությամբ էլ Ուխտանեսը գրեց իր պատմությունը: Քանի որ նախքան կաթողիկոս դառնալը խաչիկը Արշարունիքի եպիսկոպոսն էր, այսինքն՝ այն

կարացել շարժել:

¹ Ուխտանես, էջ 99—100, Այս երեսուն եպիսկոպոսը որք աթոռակալութեամբ ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ, և այլ ևս երեք հարիւր և եօթանասուն եպիսկոպոսը, էջ 100:

² Ստեփաննոս Օրբելյան, էջ 1:

³ Ասողիկ, էջ 174, Տե՛ս նաև «Պատմություն կենարար խաչին», Ալիշանի Այրաբատի հավելվածում, էջ 547—549:

⁴ Սամվելից առաջ վանքի վանահայրը եղել է Պողիկարպոսը, Ասողիկ, էջ 174, որը խաչիկի հետ միասին մասնակցել է Ստեփաննոս կաթողիկոսի ընտրությանը 972 թ.: Նույն տեղում, էջ 181, Նրկու տարի անց՝ հայոց 421 թվականին սրան հաջորդ է ընտրվում խաչիկը, էջ 974, նույն տեղում, էջ 184:

- 15 Եպ. Վաւանդայ Եպ. Նրուտակայ
- 16 Եպ. Ապանունեաց Եպ. Աստեաց
- Եպ. Արշարունեաց 25 Եպ. Անձնացեաց
- Եպ. Գնունեաց Եպ. Պալունեաց
- Եպ. Գոգրան Եպ. Մէննունեաց
- 20 Եպ. Գարզմանայ Եպ. էլոյ
- Եպ. Ակէ<սյ> Եպ. Զաւեհաւանի
- Եպ. Բաժունեաց 30 Եպ. միւս Ասորեաց¹:

Աղաթանգեղոսի արաբական վերսիան հայկական բնագրին էական լրացումներ է առաջարկում՝ ավելի ճիշտ գծելով բրիտանեոսոսթյան տարածման սահմանները Լուսավորչի օրոք: Աղաթանգեղոսի հայերեն բնագիրը բավարարվում է սոսկ ընդհանուր ցուցումներով, թէ շրջ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն աւետարանութեանն. ի Սատաղացոց քաղաքէն մինչ առ աշխարհւան հալոցեաց, մինչև առ Կաղարչոք, մինչ ի սպառ ի սահման Մազքթաց, մինչև ի զրունս Ալանաց, մինչև ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց և յԱմդացոց քաղաքէն մինչև առ Մծրին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասուրոց առ Նոր Շիրական երկրան և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքր-Տան իշխանին, մինչև յԱտրպատական ձգտէր տարածանէր զավետարանութիւնն իւր²:

Լրացումները, որ այստեղ ավելացնում է արաբական խմբագրությունը, այն է, որ հականե-հանվանն նշվում են այն երկրներն ու նահանգները, որտեղ հիմնվել են եպիսկոպոսություններ: Ս. Գրիգորը եպիսկոպոսներ է ուղարկում ոչ միայն Հայաստանի գավառները, այլ նաև Վրաստան, զուրզուկների երկիրը և լաւանների մոտ: Վրաստան է ուղարկվում Իրիր-բ-դ-խուան, Ափխազիա՝ Սոփրոնիոսը և Ալանք՝ Թոման: Այնուհետև «ուղարկեց նա Անգեղ

¹ Ուխտանես, զլ. Ա, էջ 70: Վերջին բառը տուղիր հրատարակության մեջ կարգացվում է՝ Միւսուրեաց, փոխանակ, ինչպես մեզ թվում է, միւս Ասորեաց:
² Ագարանգեղոս, էջ 485, «Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց» արտահայտությունը նշանակում է Հայաստանի թագավորության ժամանակաշրջանի քաղաք:

տուն, Արզն¹, Մեծ Մոփք, Փոքր Մոփք, Հաշտյանք, Սյունիք, Մոկք և Մարդպետական և, այսպիսով, այն բոլոր վայրերը, որտեղ իշխողը բարեհաճ էր տրամադրված»:

Գրիգոր Լուսավորիչը շտապեց եպիսկոպոսներ ուղարկել Հայաստանի մնացած գավառները. ¹ Աղբիւանոսին ուղարկեց Բագրևանդ գավառ և Նփրատի ափերին բնակվողների մոտ:

- Նրալիոսին՝ Բասեան
- Բասոսին՝ Կող²
- Մովսեսին՝ Նկեղիփ և Գերգեճ
- 5 Նաբիոսին՝ Դարանալի
- Հովհաննեսին՝ Կարան [խտիփ]³
- Խարիրին՝ Սուսպեր [խտիփ]
- Աղբիոսին՝ Տարոն և Բզնունիփ
- Արտիքեսին՝ Մաղխագների երկիրը
- 10 Արսուկեսին՝ Սիրակ
- Անտիոֆեսին՝ Կորդուփ
- Տիրիկոսին՝ Ատրպատական
- 13 Կիրիկոսին՝ Արշամունիփ:

Այս տվյալները որքան էլ արժեքավոր լինեն, այնուհանդերձ չեն կարող օգտագործվել առանց նախնական քննադատության՝ նկատի ունենալով հատկապես այն անորոշ դրությունը, որի մեջ

¹ H. Mapp, Крещение армян, p. 137: արաբերեն հրատարակության մեջ՝ դիլաների աշխարհը և արխաղների մոտ Մեզ թվում է, որ երկու ընթերցումներն էլ աղճատված են: Ափխազների մասին հիշատակվում է վերը և բացի այդ, ափխազները, ինչպես և գրվածքը, Հայաստանի սահմանների զուրս են գտնվում և ընդհանուր ոչինչ չունեն հետո եկող հայ նահանգների՝ Մեծ և Փոքր Մոփքի, Հաշտյանքի, Մոկքի և Մարդպետականի հետ: Ավելի ճիշտ, առաջին անունը պետք է կարդալ انجيليين = Ἀγγελοῦν, իսկ երկրորդը համարել Արզանենի (Աղձնիքի) աղճատում:

² Հրատարակության մեջ, էջ 136, بيثوقون, առաջին վանկը պիտի դասել և կարդալ دلان = աշխարհ, իսկ Կող, կարծես թե = Կող, Տայքի մի գավառը, բայց որովհետև արաբերենը թարգմանված է հունարենից, ապա մենք պետք է սպասենք Կող Պաամական նկատառումներով այստեղ պետք է տեսնել Վանանդի եպիսկոպոսի աղավաղումը:

³ Բնագրում انجيليين, Կուսեթիսների, պետք է կարդալ فورايتيين = Κορηνίτιν, հայկական Կարեն-ին:

դտնվում է Ազաթանգեղոսի ստեղծման և խմբագրման հարցը: Մենք վստահելի նյութեր ունենք, որոնք բավական հստակ կերպով նկարագրում են հայոց եկեղեցու հիերարխիական վիճակը Ե և Ձ դարերում: Ենենլով այդ վիճակից՝ մենք կարող ենք որոշ եղրակացություններ անել Պ դարի՝ հայ եկեղեցու սկզբնական ժամանակաշրջանի վերաբերյալ և այդ դեպքում հնարավոր կլինի որոշել, թե որքան ճիշտ են և ընդունելի Ազաթանգեղոսի, ինչպես և Ռևատանեսի պնդումները Լուսավորչի օրոք եղած եկեղեցական հիերարխիայի կառուցվածքի մասին:

Ե և Հետագա դարերում հոգևոր իշխանությունն վիճակը ուրվագծելու համար ավելյաներ են հանդիսանում գլխավորապես եկեղեցական ժողովների արձանագրությունների մնացորդները: Մենք վերջնում ենք երեք կարևոր եկեղեցական ժողով՝ Արտաշատի, որ գումարվեց 451 թվականի աղստամբությունն Նախորյակին, Գվինի՝ Բաբգեն կաթողիկոսի ժամանակ 505 թվականին և Գվինի երկրորդ, որ տեղի ունեցավ Ներսես կաթողիկոսի ժամանակ 555 թվականին: Այդ եկեղեցական ժողովներին ներկա են եղել հետևյալ եպիսկոպոսությունների կամ եկեղեցական թեմերի ներկայացուցիչները:

450 թ. եկեղեց. ժողով ¹	505 թ. եկեղեց. ժողով ²	555 թ. եկեղեց. ժողով
Հ ո վ ս ե փ կաթ.	Բ ա ր գ է ն կաթ.	Ն ե ր ս է ս կաթ.
1 եպ. Այրարատոյ	1 եպ. Այրարատոյ	1 եպ. Այրարատոյ
եպ. Սյունեաց	եպ. Մամիկոնէից	եպ. Տարօնոյ
եպ. Արծրունեաց	եպ. Մարդպետական	եպ. Սեպակական
եպ. Տարօնոյ	եպ. Հարֆայ	եպ. Հարֆայ
5 եպ. Ռշտունեաց	5 եպ. Բզնունեաց	5. եպ. Բագրեւանդայ
եպ. Մանձկերտոյ	եպ. Բասենոյ	եպ. Բասենոյ
եպ. Բագրեւանդայ	եպ. Արշարունեաց	եպ. Մարդալոյ
եպ. Բզնունեաց	եպ. Խորխոսունեաց	եպ. Արշամունեաց

¹ Փարպեցի, էջ 44=եղիշե, էջ 49: ² Գրեք բղրաց, էջ 41:
 1. Տավափ կաթողիկոս շատ եղիշի եպ. Այրարատոյ Աեանեա Սիւնեաց
 1. Բարգէն հայոց եպիսկոպոսական Մերշապուհ Մամիկոնէից Ներսէս Մարդպետական

եպ. Բասենոյ	եպ. Տայոց	եպ. Սյունեաց
10 եպ. Մարդա-տանի	10 եպ. Արշամունեաց	10 եպ. Արծրունեաց
եպ. Վանանդայ	եպ. Ռշտունեաց	եպ. <Բզնունեաց>
եպ. Մոկաց	եպ. Մոկաց	եպ. Խորխոսունեաց
եպ. Անձեացեաց	եպ. Արծրունեաց	եպ. Ապահունեաց
եպ. Տայոց	եպ. Ամառունեաց	եպ. Ստրեաց
15 եպ. Տար<ու>բերանոյ	15 եպ. Պալտունեաց	15 եպ. Վանանդայ ¹

Մուշէ Արծրունեաց	Տեանտուր Հարբայ
Սահակ Տարօնոյ	5. Սամուէլ Բզնունեաց
5. Սահակ Ռշտունեաց	Փովկաս և Սամուէլ Բասենոյ
Մեյիտէ Մանձկերտոյ	Բաթուլ Արշարունեաց
Եղիշի Բագրեւանդեայ	Աշան Խորխոսունեաց
Սուրմակ Բզնունեաց	Ատատ Տայոց
Բաթիկ Բասենոյ	10. Տանատ Արշամունեաց
10. Նրեմիա Մարդաստանի	Գանիէլ Ռշտունեաց
Գաղ Վանանդայ	Յափիկ Մոկաց
Բասիլ Մոկաց	Խարիբ Արծրունեաց
Եղրայր Անձեացեաց	Շահէ Ամատունեաց
Տանատ Տայոց	15. Սահակ Պալտունեաց
15. Քաստ Տարբերանոյ	Պաւղոս Գնունեաց
Ջաւէն Մանանդուոյ	Մովսէս Զարիճուանի
Ըստ Եղիշի՝ Եղաղ Մարդալոյ	Գաիթ Տմորեաց
Եղիշէ Ամատունեաց	Գանիէլ Անձեացեաց
18. Նրեմիա Ապահունեաց	20. Թեմուր Մենունեաց

¹ Գրեք բղրաց, էջ 73:
 1. Ներսես հայոց կաթողիկոս Մերշապուհ Տարանու և Մամիկոնէից եպս. Գրեգոր Սեպակական զնդին Պարզեկ Հարբայ
 5. Տիրակ Բագրեւանդեայ Գրեգոր Բասենոյ Ներսես Մարդալ<ու>ոյ Վաղոս Արշամունեաց Պետրոս Սիւնեաց
 10. Գրեգոր Արծրունեաց Մարկոս <Բզնունեաց> Մաշոց Խորխոսունեաց Յոհան Ապահունեաց Արդիսոյ ասորեաց ուղղափառաց
 15. Յովնան Վանանդայ Հաուկ Արշարունեաց Քրիստոփոր Պալտունեաց Յայս Գողթան
 19. Թաղոս Մենունեաց.

Եպ. Մարգարայ	Եպ. Գճուճեաց	Եպ. Արշարունեաց
Եպ. Ամատունեաց	Եպ. Զարեհավանի	Եպ. Պալունեաց
18 Եպ. Ապահունեաց	Եպ. Տմորեաց	Եպ. Գողթաճ
	Եպ. Աճճեացեաց	Եպ. Մեհնունեաց
	20 Եպ. ՄԵՏՈՒՄԵԱՅ 20	Եպ. Ամատունեաց
	Եպ. <Սիւնեաց>	Եպ. Ռշտունեաց
	Եպ. <Մար- դարայ>	Եպ. Մոկաց
	Եպ. <Վանան- դայ>	Եպ. Աճճեացեաց
	Եպ. <Ապահու- նեաց>	Եպ. Ակե<ոյ>
		25 Եպ. Զարեհաւանից
		26 Եպ. Բուժունեաց
		Եպ. <Տայոց>
		28 Եպ. <Գեու- նեաց>

Այս ցուցակները գաղափար են տալիս հայոց եկեղեցու հիերարխիայի մասին՝ նրա աստիճանական զարգացման ընթացքում: 555 թվականի ցանկը առավել լրիվ է: Եկեղեցական թեմերի աճը արտահայտվում է մասամբ գոյություն ունեցող եպիսկոպոսությունների տրոհմամբ և մասամբ էլ՝ նորերի երևան գալով: Ե դարի կեսին կար 18 եպիսկոպոսական աթոռ. դրանք մի քանի զուտ արտաքին բնույթ կրող տարբերություններով առկա են նաև 505 թվականի ցանկում: 450 թվականի ցանկում եղած Մարդաստանը 505-ի ցանկում կոչվում է Մարդպետական, իսկ 555 թվականի ցանկում՝ Սեպհական ու Մարդպետական. մենք տեսանք, որ

Ներսեսի մեղադրական թղթից երևում է, որ նրա օրոք եղել են ևս հետևյալ եպիսկոպոսները, որոնք ժողովին չէին եկել:

- | | |
|-----------------------|------------------------|
| 20. Խոսրով Ամատունեաց | 24. Հոսոմանոս Ակիրոյ |
| Սահակ Ռշտունեաց | Միքայել Զարեհաւանից |
| Սողովմոն Մոկաց | 26. Ածատուր Բժնունեաց: |
| Ստեփանոս Անձնացեաց | |

Բնագրում 11 համարի տակ Մարկոսը նշված է որպես Բագրևանդի եպիսկոպոս, բայց Բագրևանդը արդեն հիշված է, ուստի պետք է այդ համարել վերիպակ Մարկոսը Բզնունիքի կամ Տայքի պապասող երկու եպիսկոպոսներից մեկն ու մեկն է:

այդ անվանումները հոմանիշ են: Մանազկերաի եպիսկոպոսությունը կոչվում է նաև Հարբի՝ այն գավառի անունով, որտեղ գտնվում է Մանազկերտը: Բագրևանդն ու Արշարունիքը միասին կազմում էին մեկ թեմ, որի առաջնորդը Փարպեցու մոտ՝ 505 թվականի ցանկում կրում է Բագրևանդի անունը, այսինքն՝ Արշարունեաց, իսկ 555 թ. Արշարունիքը անշատվում է և դառնում նոր եպիսկոպոսություն: Հավանաբար նույն վիճակում էին գտնվում Ապահունիք և Գնունիք կից գավառները, բայց եթե ընդունենք, որ Ապահունյաց եպիսկոպոսը ներկա չի եղել 505 թ. ժողովին, ապա Գնունյաց եպիսկոպոսի երևան գալը պետք է վերագրել այդ ժամանակին:

Տարբերանի, ավելի ճիշտ՝ Տարուբերանի, ինչպես Եղիշեի մոտ է, եպիսկոպոսը չկա հաջորդ ցանկերում, բայց Փարպեցու համեմատությամբ այստեղ կան մի քանի ուրիշ եպիսկոպոսություններ ևս, որոնցից մեկը անտարակույս համապատասխանում է հիշյալ եպիսկոպոսությանը: Մեր կարծիքով այդ Խորխոսունյաց եպիսկոպոսությունն է: Խորխոսունյաց իշխանները՝ ազնվատոհմ մագիստրոսները, որոնց ներկայացուցիչը 505 թվականի ժողովում կրում էր Հայաստանի մաղխազ մեծադոզորի տիտղոսը, պատկանում էին հին անվանի նախարարների թվին և անհավանական է, որ նրանք Ե դարում սեփական եպիսկոպոսություն չունենային: Ագաթանգեղոսի արաբական վերսիայի այն վկայությունը, թե Խորխոսունյաց եպիսկոպոսությունը հիմնվել է Լուսավորչի ժամանակ, թեև ճիշտ համարվել չի կարող, բայց համենայն դեպս վկայում է, որ այդ եպիսկոպոսությունը հին ծագում է ունեցել: Մեզ թվում է, որ Տարուբերանը այն գավառի աշխարհագրական անունն է. որը այլ կերպ նախարարական տան անունով կոչվում էր Խորխոսունիք: Հետագայում այդ տերմինը ավելի լայն նշանակություն ստացավ և դարձավ այն 15 աշխարհներից մեկը, որը կազմված էր Խորխոսունիքից և նրա շրջակա գավառներից՝ Տարունից մինչև Բագրևանդ:

Կայսերական Հայաստանին սահմանամերձ գավառներում եկեղեցական իշխանությունը բաժանված էր տարբեր կերպ: 450 թվականին եպիսկոպոսներ կային Վանանդում, Բասենում և Մարգադիրում, իսկ 505 թվականին հանդես են գալիս երկու եպիսկոպոս Բասենում և մեկը՝ Արշամունիքում, առանց Վանանդի և Մարգադիրի եպիսկոպոսների հիշատակության: Բասենը սկզբում

ընդգրկում էր նաև Վանանդը, և այստեղ նա գործ է ածված այդ առումով. երեի նրա երկու եպիսկոպոսներից մեկը նախատեսված է եղել Վանանդի համար: Ինչ վերաբերվում է Արշամունյաց և Մարդաղիի եպիսկոպոսներին, ապա քանի որ նրանք հաջորդում են միմյանց, այսինքն՝ այնտեղ, որտեղ նշվում է առաջինը, բացակայում է երկրորդը և ընդհակառակը, կարելի էր կարծել, որ երկու գավառներն էլ գտնվում էին մեկ եպիսկոպոսի իշխանություն տակ, որը համապատասխանաբար կոչվել է երկու անունով: Բայց դրան խանգարում է աշխարհագրական դիրքը: Միմյանցից կտրված լինելով Բինգյուլ-Սրմանցի լեռնային զանգվածով, հիշյալ գավառներից մեկը հարում է Բասենին, իսկ մյուսը՝ Տարոնին: Ըստ Փավստոսի Արշամունիքը Տարոնի մասն էր և, անկասկած, եկեղեցական տեսակետից կախում ուներ Տարոնից: Ներսեսի հաջորդի՝ Հովհաննես կաթողիկոսի օրոք Մարգաղի գավառը նշվում է Բասենի եպիսկոպոսության կազմում: Ներսեսի օրոք Բասենի եպիսկոպոսն էր Գրիգորը, Մարգաղիինը՝ Ներսեսը, նրանից հետո երկու գավառներն էլ գտնում ենք Ներս<էս>ի իշխանության տակ: Սա, անտարակույս, նույն Մարգաղիի եպիսկոպոսն է, և Բասենը նրան է անցել Գրիգորի մահից հետո¹: Հակառակ երևույթն է տեղի ունեցել 505 թվականին: Այն, որ այդ թվականի եկեղեցական ժողովին ներկայի եղել Մարգաղիի եպիսկոպոսը, բացատրվում է նրանով, որ այն ժամանակ այդ գավառը իր հերթին ժամանակավորապես ենթակա է եղել Բասենի եպիսկոպոսին: Ինչպես որ Մարգաղին անջատվեց Բասենից, այնպես էլ Արշամունիքը անջատվեց Տարոնից. 550 թվականի ժողովում նրանք երկուսն էլ Բասենի և Տարոնի եպիսկոպոսների կողքին ունեին իրենց առանձին ներկայացուցիչները:

Այսպիսով, 450 թվականի 18 եպիսկոպոսություններին 505 թվականին ավելանում են ևս հինգ նոր եպիսկոպոսություններ՝ Արշամունեաց, Գնունեաց, Պալունեաց, Զարեհավանի, Մեհնունեաց և Տմորեաց, որին համապատասխանում է 555 թվականին «ուղղափառ ասորեաց» եպիսկոպոսությունը. իսկ 555 թվականին եպիսկոպոսությունների թիվը աճեց դարձյալ չորս նոր թեմերով՝ Գողթան, Ակեոյ, Բժնունեաց և Արշարունեաց, որը 505-ին դրված էր Բաղրևանդի փոխարեն: Ուրեմն՝ Չ դարի կեսին հայոց եկեղեցին ուներ մինչև 27 եպիսկոպոսական թեմ:

¹ Գիրք բղթաց, էջ 78, ներս Բասենոյ և Մարգաղոյ եպիսկոպոս:

Հետևել եկեղեցական հիերարխիայի հետագա զարգացմանը բավական դժվար է, եթե նկատի ունենանք, որ Չ դարի վերջին եկեղեցու կյանքում սկսվում է գավանաբանական խմորումների և տարաձայնությունների շրջան. երկիրը բաժանվում է կուսակցությունների, և, դրա հետևանքով, այդ ժամանակամիջոցում տեղի ունեցած եկեղեցական ժողովները շնչն ներկայացնում եկեղեցական ամբողջ հիերարխիան. եկեղեցու ներկայացուցիչներից շատերը այս կամ այն նկատառումներով խուսափում էին մասնակցել եկեղեցական ժողովներին: Եկեղեցական տարակարծությունները շարունակվում են մինչև Չ դարի սկիզբը: Այդ ժամանակաշրջանում տեղի են ունենում մի քանի եկեղեցական ժողովներ՝ 607, 644 և 726 թթ.: Ներսեսից հետո կաթողիկոսական աթոռ է բարձրանում Հովհաննեսը, ապա Մովսեսը: Մովսեսի մահից հետո հրավիրվում է եկեղեցական ժողով, որը, ի միջի այլոց, պետք է ընտրեր նոր կաթողիկոս: Մի վկայության համաձայն այդ ժողովին որպես թե ներկա են եղել 50 եպիսկոպոս և 390 քահանա, բայց բերված են միայն 12 եպիսկոպոսի անունները¹: Սակայն այդ ժողովը կաթողիկոս չընտրեց, այդ պատճառով էլ եպիսկոպոսները վրկանի մարդպան Սմբատ Բաղրատունու նախաձեռնությամբ նորից են հավաքվում և կաթողիկոս ընտրում Ռշտունեաց Աբրահամ եպիսկոպոսին: Այս անգամ ներկա էին նույն եպիսկոպոսները, որոնք մասնակցել էին նախորդ եկեղեցական ժողովին՝ բացի Մարգաղեականի եպիսկոպոս Քեղոզրոսից և Արծրունեաց Հովհաննես եպիսկոպոսից²: Գահ բարձրանալով՝ նորընտիր կաթողիկոսը 607 թվականին նորից ժողով հրավիրեց, որպեսզի համոզվի հատկապես այն գավառների եպիսկոպոսների ուղղափառության մեջ, որոնք 571 թ. պայմանագրով անցել էին կայսրությանը³: Այդ ժողովների արձանագրությունների մեջ նշված են միայն 15 եպիսկոպոսությունների ներկայացուցիչների անունները⁴: Նրանցից

¹ Գիրք բղթաց, էջ 146:
² Նույն տեղում, էջ 149:
³ Նույն տեղում, էջ 151:
⁴ Նույն տեղում, կաթողիկոսից բացի ներկա էին հետևյալ եպիսկոպոսները՝

1 Մանասէ Բասենոյ	Գրիգոր Անձնեացեաց
Քրիստափոր Սիւնեաց	5 Սիովն Գողթան
Յովհաննէս Ամատունեաց	Ահարոն Մեհնունեաց

առաջին անգամ հանդես են գալիս էլ<ս> Յովհաննիկ և Առնայ Թաղէոս եպիսկոպոսները, որոնք Ատրպատականին սահմանամերձ հայկական թեմերի ներկայացուցիչներն էին¹:

Դվինի եկեղեցական ժողովին, որ տեղի ունեցավ 644 թվականին Ներսես Գ կաթողիկոսի և Կոստանդ Բ կայսեր օրոք, դարձյալ շատ եպիսկոպոսներ շմասնակցեցին. կայսեր հրավերին արձագանքեցին ընդամենը 16 եպիսկոպոս, մեծ մասամբ այն գավառներից, որոնք Մորիկ կայսեր օրոք ետ էին խլվել պարսիկներից և 628 թվականին վերջնականապես միացվել կայսրությանը: Նրանք բուլոյն էլ մեզ արդեն ծանոթ թեմերի ներկայացուցիչներն են²:

Դ ներսէս Բոժունեաց	Ստեփանոս Բագրևանդայ
Յովհանկայ էղոյ (Ուխտանեսի մոտ)	Մովսէս Խորխոռունեաց
աղապաղված է Յոհան Կայրոյ, էջ 64	Քրիստափոր Ապաճունեաց
և Կայիւրյ, էջ 57	Ներսէս Վանանդայ
Թաղէոս Առ(ա)նայ	15 Հովհաննէս Արծրունեաց, էջ 146
10. Թէոդորոս Սեպհական զեղի, էջ 146 և 196	

¹ Էլ կամ Ել, ավելի ճիշտ էլի, որ անտարակույս Աշխարհացաւցի Այլի հնչուհափոխված ձևն է, Պարսկահայքի գավառներից մեկն էր: Աշխարհացաւցում էլի-ն նույնացվում է Կուրիճանի հետ՝ Այլի որ կոչի Կուրիճան = այժմյան Կուրիճանը Գեղեճում, Cuinef, II, 717: Առնի-ն նույնպես Պարսկահայքում է: Գիրք բարբոսում՝ Առնայ, էջ 151, և Առնայոյ, էջ 147, Աշխարհացաւցի Առնիի փոխարեն:

² Առաջատ, 1905: Կանոնք Գունայ ս. Ժողովոյն, հրատ. Մխիթար վարդ. և Ս. Տիրանյան.

Ներսէս կաթողիկոս	Գրիգոր Խորխոռունեաց
1. Յովհաննէս Ոստան եւ	10. Սիմէօն Ռշաունեաց
Մարդպետական	Իսրայէլ Վանանդայ
Ներսէս Հարբայ	Թէոփիլոս Աշմունեաց
Քրիստոսատուր Բասենոյ	Ասայէլ Ամատունեաց
Իսրայէլ Տալոց	Գրիգոր Անձևացեաց
5. Յովհաննէս Մարդաղոյ	15. Թէոդորոս Գունեաց
Յովհան Բզնունեաց	Յակովբոս Պալտունեաց
Գրիգոր Արշարունեաց	Սամուէլ Մահունեաց
Սերէոս Բագրատունեաց	

Չամչյանն իր Հայոց պատմութեան մեջ, Բ 345, տալիս է միեւնոյն անունները, բայց այլ հերթականութեամբ: Այնտեղ Արշարունեաց եպիսկոպոսն է Թէոփիլոսը, իսկ Արշամունեացը՝ Գրիգորը, հակառակ մեր վավերադրի: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արշարունեաց տան եպիսկոպոսների ծանոթ ցանկի մեջ (նաև Տաշլյանի, Յուցակ ձեռագր., էջ 656) կա Թէոփիլոս անունով մեկը, որ հովվել է 36 տարի, պետք է դերադասութունը տալ Չամչյանի ընթերցումներին: Յանկի մեջ վա նաև Գրիգոր եպիսկոպոս, բայց նա այն նշանավոր գիտնականն է, որ մասնակցել է 726 թ. ժողովին:

Եկեղեցական ժողովների նյութերի ուսումնասիրութիւնը մեզ բերում է մի եզրակացութեան, որը կարող է հաստատ հենարան ծառայել ճշտելու այն տեղեկութիւնների արժեքը, որոնք վերաբերում են ավելի հին ժամանակներին: Այժմ մեզ պարզ է, որ Կամբոջաձորի ավանդութիւնները, Լուսավորչի կողմից 30 կամ 35 եպիսկոպոսութիւններ հիմնելու մասին, ճշմարտութիւնից շատ են հեռու:

Ուշադրութեամբ քննարկելով այն եպիսկոպոսութիւնների ցանկը, որը մենք բերեցինք վերևում և համեմատելով այն մեր քննութեան արդյունքների հետ, տեսնում ենք, որ փաստորեն նոր են միաֆոս Ռոստակի¹ և Ասորաց երկրորդ եպիսկոպոսները: Մեր պարզած եպիսկոպոսութիւններից այստեղ կարծես թե չկա Մարդպետական եպիսկոպոսը, սակայն նա փաստորեն մտնում է այն եպիսկոպոսութեան մեջ, որ կոչվում է Ոստան: 644 թվականի եկեղեցական ժողովում, ինչպես տեսանք, երկու գավառները ներկայացնում էր մեկ եպիսկոպոս, որ կոչվում էր եպիսկոպոս Ոստանի և Մարդպետականի: Այդպես էլ ցանկում նշված Առնայ եպիսկոպոսութիւնը, անկասկած, մտնում է հարեան էլի եպիսկոպոսութեան կազմի մեջ: Երկու նոր եպիսկոպոսութիւններից Ռոտակինը արդեն գոյութիւն ունենէր դարի երկրորդ կեսին, որովհետև հայտնի է, որ Սահակ Չորսփորեցին նախքան կաթողիկոսական գահ բարձրանալը 680 թվականին Ռոտակի եպիսկոպոսն էր²: Իսկ Ասորաց երկրորդ եպիսկոպոսը քննարկվող ցանկում հիշվում է առաջին անգամ: Այսպիսով, հայոց եկեղեցու հիմնադրին վերազորված ցանկը, իր կազմով, չի կարող վերաբերվել է դարի վերջից ավելի վաղ ընկած ժամանակներին:

Յանկի մի քանի առանձնահատկութիւնները հիմք են տալիս մտածելու, թե այն ոչ այլ ինչ է, եթե ոչ ինչ-որ ժողովի արձանագրութեան ստորագրութիւններ, որ պետք է տեղի ունեցած լինի Հայաստանում նշված թվականից հետո: Հետագայի ամենաժողովրդական և ամենակարևոր եկեղեցական ժողովը համարվում է Հովհան Օձնեցու ժամանակ՝ 726 թվականին հրավիրված Մանագ-

¹ Ռոտակը (=rostak) ըստ Հովհաննէս կաթողիկոսի, էջ 158, Սալմասի գավառն է. «զկողմամբքն Ռոտակայ գաւառին ի Հեր եւ Սաղամաս»:

² Հովհան կաթողիկոս, էջ 53, «կարգեալ էր յեպիսկոպոսութիւն Ռոտակաց եւ զկնի ապա կոչեցաւ յաթոս սրբոյն Գրիգորի»:

կերտի եկեղեցական ժողովը: Այդ ժողովի հայերեն արձանագրությունների մեջ բերված են միայն առավել ազդեցիկ ութ մասնակիցների անունները: Բարեբախտաբար ստորագրությունների լրիվ ցանկը պահպանված է ասորական մատենագրության, հատկապես հակորիկյան հայտնի հայրապետ Միքայել Ասորու «Ժամանակագրության» մեջ: Բերում ենք այդ ցանկը ամբողջովյամբ՝ դիմացը նշանակելով նաև այն ստորագրությունները, որոնք պահպանվել են հայերենի մեջ:

- | | |
|------------------------------|--------------------------------|
| Iwanēs, կաթողիկոս հայոց | Աղվիեսու Հարֆայ |
| 1 Halphai, <i>կպ.</i> Arkiws | Քաղէսու Ոստան |
| Theodoros, <i>կպ.</i> Armn | Սահակ Մամիկոնեան |
| Sahak, <i>կպ.</i> Mamikonean | Յեսու Բասենոյ |
| <Rsqw <i>կպ.</i> > Basean | Սարգիս Տայոց |
| 5 Sargis, <i>կպ.</i> Ditrīs | Քէտորոս Բզնունեաց |
| Theorios Beznunis | |
| Theodoros Ašamunis | Գրիգորիոս Բոբայիսկոպոս Ար- |
| Grigorios Ašarunis | շարունեաց |
| Nwzwn Asibwgn | |
| 10 Habel Amatunis | |
| David Ereštunis | |
| Iowsep Artsrunis | |
| Grigor Wanand | Salomon Mrina |
| Narkisos Khorkhorunis | Gabriel Arzon |
| 15 Esayi Goltn | Khosrow vardapet |
| Iwanes Gnumis | David Suphrin |
| Gorgi Rotakay | 25 Salomon վարդ. Makenis |
| Iowsep Bakratunis | Raphael, վարդապետ |
| Mikael Bakrewand | Simeon, doctor |
| 20 Eremia Apahunis | Iwanes, քորեպիսկոպոս |
| | Grigor, Taraun |
| | 30 Sahak, քորեպ. Matnis |
| | 31 Sargis <i>կպ.</i> Sanasnayē |

ինչպես նաև այլ երեցներ և վարդապետներ¹:

¹ Chabot, II, p. 497, Գիբ բրոց, էջ 223; Տաշյան, Յուցակ, էջ 768; Չամչյան, Բ, էջ 398: Ասորական մեջ եկեղեցական ժողովը վերագրված է հունական, այսինքն՝ Սեկիկյան թվարկության 1037 թ. և սխալմամբ հայոց 135 թ. փոխա-

Սեկեղեցական ժողովին կաթողիկոսից բացի մասնակցել են նաև զանազան թեմերի 31 ներկայացուցիչներ: Ուխտանեսի ցանկում հաշվվում է 30 թեմ: Ուխտանեսի ցանկի համեմատությամբ ավելի է Asibu<r>զո-ի, այսինքն՝ Սեպուրականը կամ Սեպհականը, որ այլ կերպ կոչվում է Մարդպետական ներկայացուցչություն: 644 թ. ժողովում այդ զավառը Ոստանի հետ միասին ուներ մեկ ներկայացուցիչ. ինչպես երևում է, ըստ Ուխտանեսի էլ այն մշտնում է Ոստանի մեջ¹: Ճիշտ այդպես էլ Բզնունիքը Տարոնի հետ միասին կազմում էր մեկ թեմ՝ Մամիկոնյաց եպիսկոպոսությունը, մինչդեռ այստեղ առանձին-առանձին հիշատակված են Բզնունեաց *կպ.* և Մամիկոնեաց *կպ.*: Շատ հավանական է, որ Բզնունին զբղջված է Բժնունի-ի, ավելի ճիշտ՝ Բաժունիի փոխարեն, և այդ թեմի ներկայացուցիչ Քեռորոս եպիսկոպոսը հենց այն Քեռորոսն է, որ Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Փիլիսոփայի մոտ բերված է Բազեն անունով²:

Համեմատելով հիշյալ եկեղեցական ժողովի մասնակիցների ցանկը Ուխտանեսի նշած թեմերի ցանկի հետ, զանում ենք, որ 30 անուններից 20-ը միանգամայն համընկնում է, իսկ 10-ը տարբերվում: Առաջին ցանկում շատ աղավաղումներ կան, որոնցից մի քանիսը հաջող կերպով սրբագրված են հրատարակչի կողմից, մյուսների ճիշտ ընթերցումները հեշտությամբ վերականգնվում են Ուխտանեսի ցանկի հետ բաղդատելու դեպքում: Այսպես, Mrina-ն կամ Mrdin-ը, Karzwn-ը, Suphrin-ը, Matnis-ը աղճատումներ և ոչ ճիշտ ընթերցումներ են Մարդաղիի, Ջարեհավանի, Պալունիի,

նակ 175, ինչպես հայերեն բնագրում է. Կիրակոս Գանձակեցու մոտ՝ 156, փխ. 175-ի ածն, փխ. ահեւ Ըստ Տաշյանի Յուցակի, էջ 108, ձեռագրերից մեկում «յամին տեան յնն փխ. յամի հայոց ահեւ»:

¹ Theodoros Armn-ը պետք է կարդալ <ostan> Armn=Ոստան հայոց Հարթայ-ն կարդացվում է Arki-ws, արդյոք վերջին ws=wostan-ին չէ՞, որ սխալմամբ տեղ է գտել Ark-ից հետո:

² Տե՛ս Ստեփանոս Իմաստասերի «Ջառն անապականութեան մարմնոյն», էջ 368, Արարատ, 1902, մարտ-ապրիլ, Բժունի-քը, որ Վասպուրականի հարավային գավառներից մեկն էր, ծագում է Բազ-ից և այժմ էլ Բազ է կոչվում Ջուլամերիկից հարավ գտնվող լիւնային շրջանը, որտեղ բնակվում է ասորական ինքնավար ցեղերից մեկը Բազ անունով, Cuinet, II, էջ 651, Բազ-ից առաջ է գալիս հայ. Բաժունի, ինչպես որ է Ուխտանեսի ցանկում, կամ Բժունի: Բժնունի ձևը կրում է Բզնունի-ի ազդեցությունը:

և Մհենունիի Գիտնական Խոսքով երեքը, որ կոչված է հայոց վարդապետ, հանդիսանում էր Մոկաց (կամ Անձևացեաց) ներկայացուցիչը, իսկ Սարգիսը՝ Սանասունի եպիսկոպոսը, համապատասխանում է Ուխտանեսի ցանկի Ասորաց եպիսկոպոսին:

Եկեղեցական ժողովի ցանկում չկան Ակէի, Անձևացեաց և Ասորաց-Տմորիքի գավառների եպիսկոպոսները: Սողոմոն, Սիմոն և Հովհաննես երեցները, որոնք հիշված են ժողովի մասնակիցների թվում առանց նշելու, թե որ թեմերն են ներկայացնում, հավանաբար հենց այդ վերահիշյալ երեք գավառների ներկայացուցիչներն են:

Ներկայացուցիչներ չկան նաև Գարդմանի և Էդոյ, resp. Առնայ գավառներից, բայց հիշվում են Bkrtunis-ի (տարընթերցվածք Srtunis) և Taron-ի եպիսկոպոսները: Նկատի ունենալով, որ Բագրատունյաց եպիսկոպոսը Բագրևանդի եպիսկոպոսն էր, որ արդեն նշված է ցանկում, իսկ Տարոնի եպիսկոպոսը՝ Մամիկոնյաց, որ նույնպես նշված է վերը, ապա կասկած է առաջ գալիս, թե արդյոք Bkrtunis-ը և Taron-ը Բ-Գ արդմանի և տ-Առանի աղճատումները չե՞ն:

Առաջարկվող ուղղումները հիմնվում են զլխավորապես երկու ցանկերի համեմատության վրա: Ասորական բնագրում հայկական անվանումները այն աստիճան են աղավաղված, որ թույլատրելի են դանազան տարընթերցվածքներ և մեր կուսուսմանը բռնազրոսիկ շպնոք է թվան: Համենայն դեպս, գործի էություն տեսակետից կարիք չկա ապացուցել երկու ցանկերի լիակատար ղուգադիպությունը և պնդել դրա վրա: Բավական է, որ երկու ցանկերը հիմնականում համընկնում են: Մանավանդ եկեղեցական ժողովը առաջնակարգ նշանակություն ունեցավ և նոր դարագլուխ բացեց հայոց եկեղեցու պատմության մեջ: Այդ ժողովի հետ է կապվում, այլ հարց է՝ սխալ թե՛ ճիշտ, հայ եկեղեցական ավանդույթների վերահաստատումը, որոնք իբր հիմնադրվել էին դեռ Լուսավորչի օրոք, բայց խախտվել ու մոռացվել էին Է դարի քաղբեղոնական հոսանքների կողմից: Ահա դրանով էլ բացատրվում է, թե ինչու հետագայում եկեղեցական ժողովին մասնակցած թեմերի ցանկին հին տեսք է տրվել և հարմարեցվել է Լուսավորչի ժամանակին:

Պատմական վավերականության տեսակետից նույնքան անվստահելի է Ագաթանգեղոսի մոտ պահպանված թեմերի ցանկը, որը նույնպես կասկածելի է թվում: Արարական վերսիսան մեկ

բանալի է տալիս մեկնաբանելու Լուսավորչի ժամանակներին վերագրված ցուցակի բնույթն ու նրա իսկական ծագումը:

Նախ և առաջ հետաքրքրական է հենց այն երկրների ու գավառների գասակարգությունը, ուր եպիսկոպոսներ են նշանակվել: Տարբերվում են երեք խմբեր. առաջինի մեջ հիշվում են Վիրքը, Ափխազիան և Այլ(վ)անիան, երկրորդում՝ վերը նշված հայկական ութ գավառները, և երրորդում՝ հայկական մյուս տասներեք գավառները կամ ալեյի ճիշտ՝ եպիսկոպոսությունները: Առաջին խմբի առանձնաբուժը Հայաստանի կողմից հասկանալի է, բայց ինչո՞վ բացատրել հայկական գավառների խմբավորումը, ինչո՞ւ ինքնավար սատրապությունները Սյունիքի, Մոկքի և Մարդպետականի հետ առանձնացված են Հայաստանի մյուս մասերից և ներկայացված են առանձին խումբ: Այս հարցի պատասխանի մեջ է թաքնված Ագաթանգեղոսի արարական վերսիսանի խմբագրության ժամանակը ճշտելու բանալին:

Այստեղ անշուշտ խոսք չի կարող լինել քաղաքական որևէ կոմբինացիայի մասին: Միակ բանը, որ կարող էր հիմք ծառայել միմյանց կապելու իրարից այնքան բաժան-բաժան գավառները, ինչպիսիք են Անգեղ տունը, Անզիտենեն, Մոփքը և Հաշտյանքը, մի կողմից, և Սյունիքը, Մարդպետականն ու Մոկքը, մյուս կողմից, դա գավառաբանական տեսակետ է: Արարական վերսիսան, ըստ երևույթին, վերաբերում է այն ժամանակին, երբ այդ և կենտրոնական մյուս գավառների միջև գավառաբանական տարակարծությունների պատճառով գծտույթուն էր ընկել: Այդպիսի ժամանակ էր Զ դարի երկրորդ կեսը: Փաստաթղթերով հաստատված է, որ այդ ժամանակ Սյունիքը, Մարդպետականը և Մոկքը հակված էին դեպի նեստորականությունը: Հայաստանում նեստորի վարդապետության հաջողությունների մասին առհասարակ կարելի է դատել նրանից, որ այն թափանցեց հենց Հայաստանի կենտրոնը և բուն դրեց կաթողիկոսական աթոռանիստ քաղաքում՝ Գլխում: Ներսես կաթողիկոսը դրա դեմ պայքարելու համար ստիպված եղավ դիմել շատ կարուկ միջոցների: Հենց այդ նպատակով էլ գումարվեց 555 թվականի ժողովը: Կաթողիկոսը հատուկ կոնդակով պահանջում էր, որ հատկապես մի քանի եպիսկոպոսներ անպատճառ ներկա լինեն ժողովին՝ հակառակ դեպքում սպառնում էր բանադրել նրանց: Գրանք են Արծրունյաց, Ոշտունյաց, Մոկաց և

մյուս հարևան դաժառնների հայտնությունները¹։ Այդ հայտնությունները գտնվում էին Ասորիքի սահմանագլխին և, ըստ երևույթի, բուրբից շատ էին ենթարկվել նեատորականության ազդեցությանը։ Ժողովի արձանագրության մեջ նշվում են Արծրունյաց, Պարսկաստանյաց և Մեհնունյաց հայտնությունների ստորագրությունները։ մյուսները հավանաբար շին արձագանքել կաթողիկոսի հրավերին։ Ժողովից հետո ներսեսը անհրաժեշտ է համարում կրկին դիմել Արծրունյաց և Մարդոքոսականի եպիսկոպոսներին և, թեև նրանք ներկա էին եղել ժողովին, այնուամենայնիվ հիշեցնում է ժողովի որոշումները և առաջարկում է նրանց խիստ միջոցներ ձեռք առնել նեատորի հետևորդների դեմ²։ Ներսեսի հաջորդը՝ Հովհաննեսը, Մյունյաց հայտնություն Վրթանեսին գրում է, որ նրա թեմում շատ նեատորականներ են ապրում, և որ պետք է նրանց հալածել³։ հիշելով Լուսավորչի պատգամները և այն աշխատանքները, որ նա կատարել է Մյունյաց աշխարհի համար⁴։ Այս հույժը կրկնվում է նաև Աղվանից եկեղեցուն ուղղված նրա նամակում⁵։

Այս տվյալները վկայում են, որ եկեղեցական թեմերի խմբավորումները արատացում են երկրի Զ դարի վերջի դաժանարածական վիճակը։ Այսպիսով, թեմերի ցուցակը միևնույն ժամանակ ունի, ինչ որ վերը քննարկված իշխանների ցանկը և վերաբերում է Զ դարի վերջին և է դարի սկզբներին։ Եթե Մյունիքի եկեղեցական մեկուսացումը որևէ կապ ունի Հայաստանից այդ նահանգի քաղաքական անջատման հետ, որ տեղի ունեցավ 571 թվականին, ապա ցանկը և Աղվանեղեցու խմբագրությունը վերաբերում են 571 թվականից հետո և մինչև 612 թվականն ընկած ժամանակամիջոցին։ Հայերեն Աղվանեղեցու լուծ է ոչ միայն Վիրքի, Աղվանքի և Ափխազիայի, այլև դեպի նեատորականությունը հակված հայկական ութ գաղափարների մասին. այստեղ անուն առ անուն նշվում են միայն 12 հայտնություններ, առանց ցույց տալու համապատասխան գաղափարները, բայց և չի թաքցնում, որ լեզու են նաև ուրիշ հայտնություններ, որոնց անունները ցանկության դեպքում էլ հնարավոր չէ հիշատակելու։ Այս խոսքերի իմաստը պարզվում է

¹ Գիւլ ըլրաց, էջ 70։
² Նույն տեղում, էջ 76։
³ Նույն տեղում, էջ 79, լուսաք եթև պեղծ նեատորականք բազումք ևս ի ան աշխարհից բնակեալ ենս։
⁴ Նույն տեղում, էջ 81։

այն արարական վերսիայի հետ համեմատելու դեպքում։ Այս ակնարկը, ըստ երևույթի, վերաբերում է այն ութ գաղափարների հայտնություններին, որոնց անունները շին նշված։ Հայ խմբագիրը ավելի շատ հետաքրքրվել է հայտնություններով, քան նրանց թեմերով։ Քանի որ նրա սկզբնաղբյուրում⁶ այժմյան արարական վերսիայի հայկական բնագրում, նշված չի եղել առաջին խմբի հայտնությունների, այսինքն՝ նեատորականությանը հարող հայտնությունների անունները, ուստի նա բավարարվել է ակնարկելով, և ցանկության դեպքում անգամ չի կարող նշել նրանց անունները։

Այժմյան Աղվանեղեցու խմբագրելիս օգտագործվել է արարական վերսիայի հայկական բնագիրը, սակայն այդ բնագիրն էլ Աղվանեղեցու սկզբնական խմբագրությունը չէր։ Խմբագրական անհարթությունը, որ աչքի է ընկնում հայտնությունների ցանկի մեջ, բավական է համոզվելու, որ այդ գործը շարահարական բնույթ ունի և այն Գրիգորի Վարքի ավելի հին խմբագրության վերամշակումն է։ Այլ հատկանիշների կողքին բնորոշ է նաև Աղբիանոսի անվան կրկնությունը ցանկի մեջ։ Ըստ արարական Աղվանեղեցու Գրիգորը Բագրևանդի և Եփրատի առափնյա բոլոր գաղափարների բնակիչների մաս է ուղարկում Աղբիանոս հայտնություններին, իսկ սպարապետ Մամիկոնյանների երկիրը՝ հատկապես Տարոնն ու Բղնունիքը՝ Աղբիոս հայտնությունին։ Մինչդեռ հայերեն բնագրում Աղբիոս անձնավորություն հայտնի չէ և հիշատակվում է միայն Աղբիանոսը։ Կասկած չկա, որ երկու անունների տակ թաքնված է միևնույն անձնավորությունը՝ հայտնի հայտնություն Աղբիանոսը։ Աղբիանոսի անձնավորության երկատումը առաջ է եկել նրանից, որ խմբագիրը ձեռքի տակ ունեցել է տարբեր աղբյուրներ, որոնցից մեկի մեջ գրված է եղել Աղբիանոս, իսկ մյուսում՝ Աղբիոս։ Ելնելով իր ժամանակ գոյություն ունեցող իրավիճակից, երբ Տարոնը Բղնունիքի հետ և Բագրևանդը շրջակայքի հետ համարվում էին առանձին թեմեր, հեղինակը Աղբիանոսին և Աղբիոսին համարել է տարբեր անձնավորություններ։ Ըստ բոլոր տվյալների, արարական վերսիան առաջ է եկել ավելի հին խմբագրությունից ճիշտ այնպես, ինչպես որ նրանից ստեղծվել է մեկ հասած հայկական բնագիրը⁷։

⁷ Աղվանեղեցու ոճական մի բանի առանձնահատկությունները հարազատացնում են Նրան Կորյունի Վարժ Մաշտոցի աշխատության հետ. կարելի է նրա անվան

Հետևել զարգացման ընթացքին և համեմատաբար հին տարրերը անջատել նորերից՝ շատ դժվար է: Մի բան ստույգ է, որ մեզ հետաքրքրող եպիսկոպոսների ցանկը ազգային խմբագրությանը չէր պատկանում: Այն չէր կարող մտնել նաև սկզբնական խմբա-

հետ կապել նաև Գրիգորի Վարժի ենթագրյալ հին խմբագրությունը: Տարօրինակ ճակատագրով Կորյունի աշխատությունը և ևնթարկվեց խմբագրական վերամշակման, և մեզ հասած տարբերակը չի կարելի համարել սկզբնական: Չազար Փարպեցին մեծապես օգտվել է Կորյունի աշխատության հավաստի մի այլ խմբագրությունից: Ահհամական է, որ պատմիչը Կորյունից փոխառնելով ամբողջ էջեր, այնպես խիստ կերպով փոփոխեց նրա ոճը: Մեզ թվում է, որ երկու հուշարձանները՝ Գրիգորի Վարժը և Մաշտոցի Վարժը հենց սկզբից էլ կապված են նրել միմյանց հետ և ևնթարկվել են միևնույն ճակատագրին: Վերջերս Ն. Մառը, Крещенуе. стр. 157, 180 և շար. կառնում արեց Մեսրոպի՝ իբրև Գրիգորի Վարժի հեղինակի հետ ունեցած պղծերի մասին. միայն թն Ն. Մառի հարցազրույցը կարիք ունի որոշ ճշտման: Մեսրոպի կողմից կատարելագործված գրերը հանդիսացան նոր և հոր միջոց օրիստոնեության քարոզչության համար. մի քանի գավառներ առաջին անգամ ընդունեցին քրիստոնեություն: Շարունակելով լուսավորչի գործը՝ Մաշտոցը, հավանորեն, առաջին անգամ լինելով, հավաքեց վարչագրական նյութեր Գրիգորը Լուսավորչի և սուրբ կույսերի մասին և կազմեց Գրիգորի Վարժը, այժմյան Ազաթանգիտի նախատիպը: Նրա աշակերտը՝ Կորյունը, կազմելով իր ուսուցչի վարչագրությունը, միաժամանակ վերանայում է նաև նրա գրական աշխատությունները, դրանց թվում նաև Գրիգորի Վարժը: Դրանով էլ բացատրվում են երկու աշխատությունների՝ Գրիգորի Վարժի և Մեսրոպի Վարժի միջև եղած շփման ընդհանուր կետերը: Ա և է դարերի սահմանազծին՝ 571 թվականից սկսած, կապված քաղաքական դեպքերի փոփոխվելու հետ, եկեղեցական խմբումների ազդեցության տակ Գրիգորի Վարժի Կորյունյան խմբագրությունը վերախմբագրվեց՝ նոր տրամադրությունների համեմատ: Նոր խմբագրության հավանական հեղինակ կարելի է համարել Եզնակ երեցին, որ հայտնի է Փարիզի ազգային մատենադարանում գտնվող Ազաթանգիտի մի ձեռագրի հավելվածում պահպանված մի փոքրիկ աշխատությանը: Նա վրում է հետևյալ վերնագիրը՝ «Եշանագիր կարգաց բանից Եզնակն երիցու» ըստ այն ընդօրինակաւության, որ մենք արտագրել ենք cod. 51-ից (Սամուել Անեցույ Հավելվածի մեջ, հրատ. Արշակ Տեր-Միքելյանի, 1893, էջ 266): Այս աշխատության մեջ հակիրճ պատմվում է Տրդատից հետո եկող կաթողիկոսների և թագավորների մասին մինչև Կոնստանդ, որի ժամանակ ապրել է Եզնակը և ակնատես եղել Ս. Հոփիսիմեի նշխարների գյուտին: Պատմությունը վերջանում է հետևյալ խոսքերով. «Եզնիցի յիշատակ Եզնակն ի թարգմանել զգիրս զաթա» (զրանից հետո եկող երկը Եզնակին չի պատկանում): Փարիզի մատենադարանի հարկական ձեռագրերի ցուցակը կազմող արքա Մարտինը հիշյալ ձեռագիրը նկարագրելիս այն կարծիքն է հայտնել, թն մեզ հասած Ազաթանգիտը Եզնակի աշխատությունն է: Այդ կարծիքը կրկնում է նաև Langlois, Collec. des hist. arm. 1867, I, p. 103: Ն. Մառը, Крещенуе..., стр. 152, համաձայն չի այդ կարծիքին, կարծելով, որ հիշատակարանը վերաբերում է միայն հայ կաթողիկոսնե-

գրության մեջ: Նեստորականությանը հարող վերոհիշյալ ութ թեմերի վերաբերյալ տարակույս չի կարող լինել: Նրանցից Սյունյաց եպիսկոպոսությունն, օրինակ, հիմնել է Մեսրոպը, ինչպես այդ մասին վկայում է նրա աշակերտը, և այդ պատճառով էլ նա չէր կարող տեղ գտնել առաջին խմբագրության մեջ, այսինքն՝ Գրիգորի հիմնած եպիսկոպոսությունների շարքում: Քննելով հետևյալ 12 եպիսկոպոսությունների կազմը՝ գալիս ենք նմանօրինակ ելքային կազմության: Այդ եպիսկոպոսները նշանակված էին Բագրևանդի և Եփրատի առափնյա գավառների, Բասենի, <Վանանդի>, Նիկիդիք-Գերջանի, Գարանաղիի, Կարինի, Սպիերի, Տարոն-Բղնունիքի, Խորխոռունիքի, Արշամունիքի, Շիրակի, ինչպես նաև Կորդուքի ու Ատրպատականի համար: Բացի վերջին երկու գավառներից, մյուս բոլոր գավառները, ըստ 531 թ. սահմանագծի, գտնվում էին Հայաստանի կայսերական մասում: Խոսքով արքայորդին, որ կայսեր աշակցությանը տիրացալ հոր զահին, ինչպես տեսանք, կայսրությանը զիջեց Պարսկական Հայաստանի զգալի մասը, և նախկին Արևելյան Հայաստանի կենտրոնական նահանգներից Պարսկաստանի տիրապետության տակ մնացին միայն Այրարատի մի մասը և ամբողջ Վասպուրականը: Հենց այդ գավառներն էլ չեն ներկայացված Ազաթանգիտի եպիսկոպոսների ցանկի մեջ: 591 թվականին Հայաստանի ճակատագրի մեջ տեղի ունեցած քաղաքական րեկումը ուղեկցվում է եկեղեցական խմբումներով: Դեռևս 571 թվականին պարսիկ մարզպան Սուրենի սպանության առիթով Հայաստանում ծագած խռովությունների ժամանակ Հով-

րի և թագավորների ցանկի թարգմանությանը, և ոչ թն սր. Գրիգորի պատմությանը: Բայց բանն էլ հենց այն է, որ կաթողիկոսների այդ ցանկը հազիվ թն կարելի է թարգմանություն համարել, և զիցի յիշատակ Եզնակն ի թարգմանել զգիրս զայն խոսքերը ավելի շուտ վերաբերում են Ազաթանգիտի գրքին: Հնարավոր է, որ սթարգմանելը բառն այստեղ ավելի լայն իմաստ ունի և նշանակում է մեկնարանել, կազմել (համա. Յովնանեան, Նախնեաց ուսմկորհն, էջ 179 և շար.): Ազաթանգիտը վերախմբագրելիս Եզնակը միաժամանակ միջատել է նաև Մեսրոպի Վարժին, որը, ըստ երևույթին, կցված է եղել Գրիգորի Վարժին իբրև հավելված: Եզնակի գրքին են պատկանում այն ընդհանուր տեղերը, որոնք առկա են Կորյունի աշխատության և Ազաթանգիտի նախարանի ու վերջին մասի միջև: Այսպիսով, պետք է ենթադրել, որ սր. Գրիգորի գիրքը անցել է զարգացման երեք հաջորդական փուլ և խմբագրության է ենթարկվել երեք անգամ. առաջին անգամ Մեսրոպ-Կորյունից, երկրորդ անգամ՝ Եզնակից և զարի սկզբին և երրորդը՝ ազգային խմբագրությունն է Ք դարում:

հաննես կաթողիկոսը և ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանը գնացին Բյուզանդիա՝ պարսից ճնշումների դեմ օգնություն խնդրելու, և այնտեղ այս կամ այն ձևով քաղքեղոնականություն ընդունեցին: Այդ դավաճանությունը ազգային ավանդույթներին, ինչպես վկայում է ժամանակակիցը¹, Հայաստանում առաջ բերեց ժողովրդական դժգոհություն: Շուտով Պարսկաստանում գահի համար խռովություններ ծագեցին և հայերը Մուշեղի ղեկավարությամբ, որ նույնպես Մամիկոնյան տոհմից էր, անցան Խոսրովի կողմը ընդդեմ Չուբինի: Սակայն փառապանծ Մամիկոնյանը չխուսափեց Խոսրովի հալածանքներից և ստիպված եղավ Վարդանի նման փրկություն գտնել Բյուզանդիայի մայրաքաղաքում²:

Մի գրույցի համաձայն, Մորիկ կայսրը այս իշխանին նույնպես առաջարկում է հրաժարվել հարազատ եկեղեցուց և միանալ կայսերականին: Մուշեղը խույս էր առելու՝ պատճառաբանելով, որ նախ պետք է լուծել վիճելի հարցերը, որի համար խորհուրդ է առելու կաթողիկոսին և եկեղեցու այլ ներկայացուցիչների հրավիրել մայրաքաղաք՝ ժողովի: Մովսես կաթողիկոսը կտրականապես մերժում է կայսեր առաջարկը: Կտրականապես հրաժարվեցին նաև Ասպուրական աշխարհի եպիսկոպոսները, որոնք պարսիկների հպատակության տակ էին: Բայց Տարոնի եպիսկոպոսները և մյուսները, որոնք գտնվում էին հռոմեացիների իշխանություն տակ, ուղևորվում են Կոստանդնուպոլիս և այնտեղ համաձայնում կայսեր բոլոր առաջարկներին³:

Ազաթանգեղոսի ցանկում պակասում են հենց Վասպուրականի և հարևան Մոկքի եպիսկոպոսները. այնտեղ ներկայացված է միայն կայսերական Հայաստանը: Իր կազմով ցանկը ակնհայտորեն քաղքեղոնական երանդ ունի և համապատասխանում է Ջ դարի վերջին տասնամյակի տրամադրություններին: Այդ ժամանակին էլ վերագրվում է ութ գավառների եպիսկոպոսներ խումբը: Թվում է, թե այդ գավառները մուծված են Լուսավորչի մկրտած երկրների ցուցակը, որպեսզի նրա պակասները լրացվեն: Թեև ցանկում նշված է Ատրպատականը, որի տակ հասկացվել է, հավանո-

¹ Հովհաննես Եփեսացի, Եկեղեցական պատմություն, գերմ. թարգմ. էջ 60-66:

² Սերեաս, Գ, գլ.:

³ Διήγσις ἀπὸ τοῦ ἁγίου Γρηγορίου, այսպես է իմ օգտագործած ընդորինականության մեջ ըստ Cod. Paris. 900 fol. 144.

րեն, առհասարակ Պարսկական Հայաստանը, բայց և այնպես ցանկի մեջ աչքի է զարնում Մարդպետական գավառների՝ Մոկքի, Սյունիքի և սատրապական հողերի բացակայությունը: Հենց սրանք էլ մացվել են տեքստի մեջ, որ դրա հետ մեկտեղ հաշվի են առնվել նաև ինչ-որ դավանաբանական կապեր, շատ հավանական է: Ուրեմն մկրտված երկրների ցանկը կրում է մասամբ քաղկեդոնական և մասամբ նեստորական կնիք: Մինչև է դարը հայոց եկեղեցու մեջ պայքարում էին երկու հոսանքներ: Ազգային կուսակցությունը, պայքարելով նեստորականության դեմ, ակամա ընկավ քաղկեդոնականության ազդեցության տակ, որը նույնպես հալածում էր նեստորի վարդապետությունը: Է դարի կեսին Հայաստանում քաղկեդոնականությունը հաղթող դուրս եկավ և դարձավ գերիշխող դավանանք: Միայն Ը դարի սկզբին հայերին հաջողվում է հրաժարվել քաղկեդոնականությունից և մշակել ազգային եկեղեցական քաղաքականություն, որի համաձայն Ազաթանգեղոսը վերստին ենթարկվեց համապատասխան վերամշակման:

II

Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ Ազաթանգեղոսի տվյալները բոլորովին պիտանի չեն Լուսավորչի օրոք եկեղեցական հիերարխիայի վիճակը պարզելու մեր խնդրի համար: Հայկական եկեղեցու սկզբնական պատմության համար առավել հին և վստահելի աղբյուրը մնում է Փավստոսի աշխատությունը: Պատմիչի նկարագրած ժամանակաշրջանում քրիստոնեական եկեղեցին Հայաստանում շատ քիչ եպիսկոպոսություններ ուներ: Փավստոսին քաջ հայտնի էին երկու տոհմ՝ Գրիգոր Լուսավորչի և Աղբիանոսի տոհմերը: Մեկ անգամ հիշատակվում է Բասենի եպիսկոպոսը և արվում է Փավստոս եպիսկոպոսի անունը՝ այն անձնավորության, որ ներսեսին սարկավազ է ձեռնադրել¹: Իր աշխատության վերջում պատմիչը թվում է Խոսրովի թագավորության ժամանակ ղոյություն ունեցող ղլխավոր եպիսկոպոսությունները, բայց այստեղ ևս, բացի Աղբիանոսի տոհմի ներկայացուցիչներից, հիշատակում է նույն ձեռունազարդ եպիսկոպոս Փավստոսին, Բասենի (Ջորթ, Արտիթ, Տիրիկ և Մովսես) եպիսկոպոսներին², ինչպես և

¹ Փավստոս, Գ, գ:

² Հմմտ. Խոսեհացի, Գ, ծն:

Տայոց Կիրակոս, Վանանդի Զորթուազ եպիսկոպոսներին և ոմն Ահարոն եպիսկոպոսի: Եթե դարի վնջում եկեղեցական հիերարխիայի կազմը բազկացած էր մի քանի եպիսկոպոսներից, ապա ակներև է, որ այն ավելի թույլ պետք է լիներ դարի սկզբում՝ Գրիգոր Լուսավորչի օրոք: Հոգևորականության նկատմամբ ունեցած այսքան ուշադիր վերաբերմունքի դեպքում պատմիչը չէր կարող մոռանալ և շփոթատակել ուրիշ եպիսկոպոսների մասին, եթե նրանք լինեին:

Հայոց եկեղեցու գոյության առաջին դարում հիերարխիան հատկապես բազկացած էր Աղբիանոս եպիսկոպոսի և Գրիգոր Լուսավորչի տոհմերից, որոնք միմյանց հետ մրցում էին երկրում առաջնակարգ դիրք ձեռք բերելու համար: Նրանց մրցակցությունը որոշակի դեր խաղաց եկեղեցական կազմակերպության ձևավորման ժամանակ, և անհրաժեշտ ենք համարում կանգ առնել այդ մրցակցության աղբյուրի և բնույթի վրա:

Գիտությունը չի հերքում Հայաստանում քրիստոնեական համայնքների գոյությունը մինչև Լուսավորչի քարոզչությունը: Քրիստոնեության սկզբնավորությունը այստեղ, ինչպես և ամեն տեղ, կորչում է առասպելական գրույցների խավարի մեջ: Հայաստանում քրիստոնեության տարածման վերաբերյալ ազգային ավանդությունները տարբերում են երեք հոսանքներ, որոնք կապված են Քաղեոս ու Բարդուղիմեոս առաքյալների և Գրիգոր Լուսավորչի անունների հետ: Հայաստանում առաքյալների քարոզչության վերաբերյալ ավանդությունները, որքան էլ առասպելական լինեն, այնուամենայնիվ պարունակում են որոշակի ճշմարտություն և ապացուցում են, որ քրիստոնեությունը Հայաստան մուտք է գործել առաքյալների ժամանակներում: Կարելի է կասկածել, թե առաքյալներից կամ նրանց մերձավոր աշակերտներից որևէ մեկը արդյոք եղե՞լ է Հայաստանում, թե ոչ, բայց և հիմք չկա ժխտելու, որ Հայաստանը պատկանում է այն առաջին երկրների թվին, որոնք լուսավորվեցին նոր վարդապետության ճառագայթներով: Հայկական հողերին հարող Ասորիքը Անտիոք մայրաքաղաքով առաջնական գործունեության ասպարեզներից մեկն էր. այստեղից նոր շարժման ալիքները կարող էին հեշտությամբ հասնել Հայաստան: Սկզբում քրիստոնեությունը տարածվեց արագ, և պարթևների տիրապետության շրջանում Արևելքում մեծ հաջողություններ ունեցավ, բայց Պարսկաստանում Սասանյանների հարստության բարձրացմամբ նրանց նկատմամբ եղած թշնամական քաղաքականու-

թյան հետևանքով երկու դարերի ընթացքում ձեռք բերված արդյունքները ի չիք դարձան: Այդ շրջանից մնացին միայն աղոտ հուշեր, որոնք միահյուսվելով հետագա հիշողություններին՝ կազմեցին զանազան առասպելների մի ամբողջ կույտ՝ պահպանվելով հին հուշարձանների մեջ: Քննադատությունը դեռևս չի ավարտել իր գործը Քաղեոսի և Բարդուղիմեոսի մասին եղած գրույցների հետ, դեռ չի մաքրել դրանք հետագա զանազան հավելումներից և չի ճշտել նրանց կապը Աղդեի և նրա աշակերտ Մարիի՝ մերձատրպասականյան գավառների առաքյալի մասին եղած ասորական համանուն ավանդությունների հետ: Այն, ինչ արդեն արված է այդ ուղղությամբ, հիմք է տալիս Քաղեոսի և Բարդուղիմեոսի մասին եղած առասպելների մեջ տեսնել Հայաստանում քրիստոնեության ավանտմի ճիշտ արձագանքները մինչսասանյան դարաշրջանում:

Քաղեոսի, Բարդուղիմեոսի և Գրիգորի անվան շուրջը խմբված երեք շարք գրույցները նշանակում են հայերի մեջ քրիստոնեության տարածման երեք պահեր: Դրանք միացնող ընդհանուր գծերը նշում են այդ պահերի հաջորդականությունը. նոր քարոզչությունը վերականգնում է խամբած հիշատակները և դրանց վրա դնում է նույնության կնիքը: Քաղեոսի և Բարդուղիմեոսի քարոզչությունը գալիս էր Հարավից: Առաջնական Անտիոքի և Հայաստանի միջև գտնվում է Օսրոյենե երկիրը Եդեսիա մայրաքաղաքով: Պարսկական արևելքում քրիստոնեությունը տարածելու գործում աչքի ընկնող դեր խաղաց Եդեսիան, սրա հետ են կապված նաև հայկական ավանդությունները: Անհնարին է ընդունել Հայաստանում քրիստոնեական կազմակերպված համայնքի առկայությունը Եդեսիայում քրիստոնեական եկեղեցու հաստատվելուց առաջ:

Արդարի մասին եղած առասպելի օբյեկտիվ վերլուծությամբ հաստատված է, որ Եդեսիայի նշանավոր տիրակալը, որ քրիստոնեություն ընդունեց, Աբգար Թ-ն է, պատմական մի անձնավորություն, որ ապրել է Բ դարի վերջերին, և որ առասպելի պատմական ճիշտ դեպքը ետ է տարել մինչև մեր թվարկության սկիզբը և վերադրել ուրիշ անձի՝ Քրիստոսի ժամանակակից Աբգար Ե-ին: Առայժմ հիմք չկա ընդունելու եկեղեցու գոյությունը Եդեսիայում մինչև Բ դարի վերջը: Իսկ հայ եկեղեցու մասին եղած ամենահին տեղեկությունը վերաբերում է Պ դարի կեսին. այդ ժամանակ հայերի մոտ հիշվում է Մ Ե հ ր ու ժ ա ն եպիսկոպոսը, որի հետ 248-

265 թվականներին գրադրութիւն է ունեցել Ալեքսանդրիայի Գիոնիսիոս եպիսկոպոսը¹:

Ենթադրվել է, թէ Մեհրուծանը եղել է Փոքր Հայքի եպիսկոպոսներից մեկը, հավանաբար Սերաստիայի եպիսկոպոսը: Այդ կարծիքի դեմ իրավամբ առարկում է Գեղեցքը և հենվելով եպիսկոպոսի բնորոշ անվան վրա՝ նրան որոնում է Մեծ Հայքի սահմաններում: Նա միանգամայն իրավացի կերպով նրա մեջ տեսնում է Արծրունյաց շտապվորին, որոնց տոհմի մեջ ընդունված էր Մեհրուծան անունը: Սակայն Գեղեցքը իրավացի չէ, երբ Մեհրուծանի նստավայրը համարում է Վասպուրականը: Արծրունիները սկզբեական նահանգը, ինչպես կտեսնենք, համարվում էր Մոփսը, և այդ պատճառով էլ ավելի ճիշտ կլիներ ընդունել, որ Մեհրուծան եպիսկոպոսի նստավայրը եղել է Մոփսում:

Բնականաբար մտք է ծագում Եգիպտոսի և Մեհրուծանի եկեղեցիների ծաղումնաբանական ազգակցութեան մասին: Այդ պես վաստի վրա էլ հիմնվում է, անշուշտ, քրիստոնեության սկզբնական շրջանի մասին եղած հայ ավանդությունների հակումը դեպի եգիպտական ավանդությունները: Ասորական մի վավերագրի վկայությամբ Ադդն առաքյալը նահատակվեց Մոփաց աշխարհում, Ադել՝ հայկական Անգեղ ամրոցում², մինչդեռ մյուս հուշարձանները կամ լռում են նրա մտնված մասին և կամ նրա մահը կապում են Եգիպտոսի հետ: Այդ վկայության մեջ իր անդրադարձումն է գտել այն հանգամանքը, որ Անգեղը Եգիպտոսի Ադդեի եկեղեցու հարազատ դուստր հայ եկեղեցու հովիվ Մեհրուծան եպիսկոպոսի աթոռանիստն է եղել: Քրիստոնեական եկեղեցու գոյութունը հայկական ծայրասասային Մոփաց աշխարհում Գ դարի կեսին կարող ենք համարել անլիճելի: Այստեղից քրիստոնեությունը կարող էր տարածվել Հայաստանի խորքը: Ինչպես որ Եգիպտոսի եկեղեցուց ծնվեց Մոփաց եկեղեցին, ճիշտ այդպես էլ վերջինիս հետագա զարգացումով եպիսկոպոսություն ստեղծվեց Մոփաց աշխարհի հարևան Տարոնում:

Մենք այսպես ենք պատկերացնում այն եկեղեցու ծաղումը, որի գլուխ կանգնած էր Ալեքիանոս եպիսկոպոսի տոհմը: Ազգաթան-

¹ Euseb. Caes. Hist. Ecc. VI, 46, 2, καί τοίς κατά Ἀρμενίαν ὠσοῦτως περὶ μετρούσιος ἐπιστάλλαι ὧν ἐπεκόπησε Μερούζανης.

² Gutschmid, König. Osroene, p. 16.

գեղոսի աշաբական վերսիայի մեջ Աղբիանոս եպիսկոպոսին հատկացվում է Բագրևանդը և Եփրատի ափերը, իսկ Աղբիանին՝ Տարոնը Բզնունիքի հետ միասին: Մենք արդեն նշեցինք, որ խոսքը վերաբերում է միևնույն անձնավորությանը: Փավստոսից զիտենք, որ Աղբիանոս եպիսկոպոսի տիրապետությունն ընդարձակվեց իսպուրի թաղը: Մանավազյան տոհմի բնաշնչումից հետո սպանված իշխանների տիրույթներն, այն է «Մանավազակերտը ամենայն սահմանօքն եւ գաւառական հանդերձ, որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ» անցան Աղբիանոսի եկեղեցուն¹: Դրանք հենց այն հողերն են, որոնք Ազգաթանգեղոսի մոտ կոչվում են Եփրատի ափեր: Նրանք անցան Աղբիանոսին միայն Գրիգոր Լուսավորչի երկրորդ հաջորդի՝ Վրթանեսի օրոք, և ոչ թէ Գրիգորի կենդանության ժամանակ, ինչպես ներկայացնում է Ազգաթանգեղոսը: Փավստոսը ոչինչ չի ասում Աղբիանոսի սկզբնական եկեղեցու մասին և ոչ էլ այն մասին, թէ որտեղ է գտնվել նրա եկեղեցին մինչև Մանավազյանների տիրույթներին տիրանալը: Ազգաթանգեղոսի վկայությունը Տարոնի և Բզնունիքի մասին, որպես Աղբիանոս եպիսկոպոսի աթոռապատկան կավածքների, ըստ երևույթին, զուրկ չէ պատմական հիմքից: Փավստոսի հաճախակի պնդումները Տարոնի եկեղեցու առաջնության և այն մասին, որ նա բոլոր հայկական եկեղեցիներից ամենահինն է, հենվում է նախ և առաջ նրա առաջնության վրա ժամանակի տեսակետով, որ Տարոնի եկեղեցին ստեղծվել է Լուսավորչի ժամանակվանից էլ առաջ:

Թաղեսիոս resp. Ադդեի քարոզչության մասին առասպելը, քարոզչություն, որ սկսվել է Եգիպտոսում և վերջացել Արտաղում, և որի մեջ եղեսացի Աբգարի ճակատագիրը միահյուսված է հայոց Սանատրուկ թագավորի հետ, նույնպես նշում է քրիստոնեական ասքի անցած ճանապարհը Եգիպտոսից մինչև Արտաղ-Մոփսի և Տարոնի վրայով: Առասպելի Սանատրուկը պատմական անձ է, նա հայոց այն Սանատրուկ թագավորն է, որին իր մոտ կանչեց Կարակալա կայսրը (211—217)¹ իբր նրան ապստամբ որդիների հետ հաշտեցնելու համար, բայց իրականում նրան թագից զրկեց, ցանկանալով Հայաստանը դարձնել հռոմեական պրովինցիա այնպես, ինչպես վարվել էր Օսրոյենի նկատմամբ՝ խաբեություն մեծաբար:

¹ Փավստոս, Գ, գ:

կալելով Աբգար թագավորին¹։ Առասպելի գործող անձերը՝ Աբգարը և Սանատրուկը իրոք ժամանակակիցներ են և միմյանց հետ կապված են ճակատագրի նմանություններով։ Զրույցի մեջ երկու թագավորներն էլ Պ դարի սկզբից փոխադրված են Քրիստոսի ժամանակը։ Այս սյուսնների մշակման մեջ եղած զուգահեռականությունը, կապված Նդեսիսի թագավորի պատմության, և հենց նրա՝ որպես Սանատրուկի հորեղբոր, հայացման հետ, կարելի է բացատրել միայն եկեղեցական հողի վրա, այն հանդիսանում է Նդեսիսի եկեղեցու հետ հայոց եկեղեցու ունեցած ծագումնաբանական ազգակցության արտացոլումը։ Հայաստանում սկզբնական շրջանի քրիստոնեության մասին եղած հիշողությունը, ասորական աշխարհի հետ կապված հայկական առաջին եկեղեցու մասին եղած ավանդությունները հետագայում խամբեցին և գրեթե անհետացան՝ լուծվելով Գրիգոր Լուսավորչի ժամանակվա քրիստոնեության երկրորդ և ավելի հզոր հոսանքի պատմության մեջ։

Պ դարի վերջում Հայաստանի ճակատագրի մեջ մեծ փոփոխություններ տեղի ունեցան։ Հայաստանին տիրելու համար պարսիկների և հռոմեացիների միջև մղվող երկարատև պատերազմներն ավարտվեցին հռոմեական զենքի հաղթանակով, և 298 թվականի պայմանագրով Հայաստանն անցավ կայսրության հովանավորության տակ։ Հայաստանում վերականգնվեց թագավորական իշխանությունը, և հայկական գահ բարձրացավ Արշակունիների շառավիղը՝ Տրդատը, որը հռոմեական զենքի օգնությամբ նվաճեց իր իրավունքները։ Քաղաքական հեղաշրջումը ուղեկցվում էր քրիստոնեության ներթափանցումով հարևան Փոքր Հայքի հողերից Մեծ Հայք։ Կայսրությունն այդ ժամանակ հին կրոնական համակարգի և քրիստոնեական վարդապետության պայքարի մի սուր պահ էր ապրում և գտնվում էր նոր վարդապետության հաղթանակի շեմին։

Քրիստոնեությունը տարածվելով կայսրության մեջ՝ նրա շատ մասերում արդեն հասցրել էր հաստատուն դիրք գրավել, իսկ Պ դարի սկզբին հաղթունակեց և ճանաչվեց պաշտոնապես։

Կայսրության համեմատաբար վաղ և զգալիորեն քրիստոնեացած մասերից էին նաև Կապադովկիայի և Փոքր Հայքի հողերը։ Կեսարիայի եկեղեցին արդեն Պ դարում մեծ համբավ էր ձևոք բե-

¹ Dio Cass, 77, 12 և 21:

րել՝ մոտ 200 թ. աթոռակալ ունենալով Ալեքսանդր եպիսկոպոսին և Փիլիմիլիանոսին (մա՛. 269թ.), որոնք Ալեքսանդրիայի եկեղեցում նշանավոր հայրերի՝ Կղեմեոսի և Օրիգենեսի բարեկամներն էին։ Փիլիմիլիանոսի շնքերով Կեսարիան դարձավ աստվածաբանական կրթության կենտրոն¹։ Քրիստոնեության ոչ պա՛լաս կարևոր օջախ էր նաև Փոքր Հայքի մայրաքաղաքը՝ Մալաթիան։ Քրիստոնեական տարրերը այստեղ այնքան զորեղ էին, որ նրանց էին վերադրում հեղափոխական այն հաճախակի բռնկումները, որոնք տեղի էին ունենում քաղաքում²։

Փոքր Հայքում և Կապադովկիայում քրիստոնեության ծաղկումով, ինչպես և նրա ազդեցությունը է բացատրվում, որ նոր կրոնը հարևան Մեծ Հայքում պետական կրոն հայտարարվեց ավելի վաղ, քան կայսրությունում։ Արշակունյաց Հայաստանը կայսրության գերիշխանության տակ ընկնելուց հետո վերացան երկու մասերի բաժանված էթնիկական մեկ ամբողջություն կաղմող Փոքր և Մեծ Հայքերի հայ բնակչության սերտ հարաբերությունների քաղաքական անջրպետները, և քրիստոնեությունը Եփրատի աջ ափից հորդեց դեպի ձախ ափը։ Այդ քրիստոնեության առաջյալն էլ հենց սուրբ Գրիգոր Լուսավորիչը եղավ։ Ի տարբերություն Ասորիքի և Նդեսիսի նախորդ շրջանի քրիստոնեության, այս հոսանքը անվանենք Փոքր Հայքի և Կեսարիայի քրիստոնեություն։ Մեղ համար կարևոր է տարբերել Հայաստանում քրիստոնեության տարածման այդ երկու ուղիները։

Փոքր Հայքից եկող քրիստոնեությունը նախ և առաջ անմիջապես տարածվեց նրան հարող շրջաններում, այսինքն՝ Դարանաղիում, Նկեղյաց գավառում, Գերջանում և այլն։ Փավստոսը հաճախ շեշտում է, որ Դարանաղի և Նկեղյաց գավառները պատկանում էին Լուսավորչի տոհմին. Գրիգորը և Վրթանեսը թաղվեցին թորդանում, Արիստակեսը՝ Թիլում, Հուսիկը թեև վախճանվեց Մոփբում, բայց նրա մարմինը բերվեց և թաղվեց թորդանի տոհմական դամբարանում³։ Նույն ձևով էլ քրիստոնեության նախորդ հոսանքը, ներթափանցվելով Մոփաց աշխարհի կողմից, սկզբում ընդգրկեց

¹ Harnack, Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten. 1906, II Auflage, Bd. II p. 163.

² ի՛ն. p. 166.

³ Փավստոս, Գ, բ, ժա, ծբ։

հարեան Տարոնը և Բղնունիքը: Գրիգոր Լուսավորչի զավակների օրոք Տարոնի եկեղեցու գլուխն էր Դանիել քորեպիսկոպոսը՝ ծագումով ասորի¹: Այդ եկեղեցուն էր պատկանում Փառենը՝ Հուսիկի հաջորդը: Նրանից հետո կաթողիկոս դարձավ Շահակը՝ Աղբիանոսի տոհմից, որն իր բնավորությամբ, ինչպես ասում է պատմիչը, նման էր Փառենին: Հնարավոր է, որ այդ բոլոր անձնավորությունները, նրանց թվում և Դանիելը, միևնույն ծագումն ունենան: Այն հրաշքները և լուսապսակը, որով Փալատոսի պատմության մեջ պարուրված է Դանիելի անունը, վկայում են այն մասին, որ նա հասարակ մարդ չի եղել և կարևոր դեր է խաղացել եկեղեցական կյանքում²:

Չնայած Փալատոսի ամբողջ համակրանքը Լուսավորչի ժառանգներին կողմն է, համենայն դեպս նա անկարող է թաքցնել այն փաստը, որ Աղբիանոսի, resp. Դանիելի եկեղեցու ներկայացուցիչները զգալի ազդեցություն ունեին նաև կաթողիկոսական աթոռի համար մղվող պայքարում, անկասկած, գեթակշռության ունեին Գրիգորի տոհմի նկատմամբ: Հետագայում, երբ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը հաղթանակեց, ասորական եկեղեցու մասին մնացին ազոտ հիշողություններ. հետագա վկայություններում այդ եկեղեցու ամենից առավել նշանավոր դեմքերը համարվում են Գրիգորի աշակերտները՝ Դանիելն ու Աղբիանոսը:

Հայաստանի քրիստոնեության երկու հոսանքների իրական փոխհարաբերությունը տրված է այն սքսնչիլի առասպելի մեջ, բայտ որի Գրիգորի ծնողները Պարսկաստանից Հայաստան փախչելիս կանգ են առնում Արտազ գավառում, Թաղեոս առաքյալի գերեզմանի մոտ, և այստեղ տեղի է ունենում «զղութին մօր

¹ Փալատոս. Գ, ԺԳ

² Մ՛ կարելի արդյոք, այսպես կոչված, դանիելյան գրեքը կապել այս սրբի անվան հետ: Ինչպես հունական քրիստոնեության ներկայացուցիչը՝ Մեթոդոսը, ջանք էր թափում կատարելագործելու այբուբենը նախ և առաջ բարոզության նպատակով, այնպես էլ ասորական քրիստոնեության ներկայացուցիչները պետք է մասնակից լինեին հարցի մասին: Շատ հնարավոր է, որ հենց Դանիելն էլ ասորական տոները հռոմայեցից հայոց լեզվին, որոնք անբավարար լինելու պատճառով շուտով դադարեցին գործածվել: Դեպի մոռացված տառերը հետաքրքրության հետ կրկին երևան եկավ նաև նրանց հորինողի՝ Դանիելի անունը: Տառերի դյուտի պատմության մեջ հեթանոսային շատ բան կա, և զարմանալի չէ, որ Դանիելն էլ ներկայացվում է իբրև ժամանակակից, որ ապրում էր Միջագետքի ինչ-որ տեղում: Թե ինչու՞ ասորի եպիսկոպոսը պիտի պահեր հայոց այբուբենը, անհասկանալի է:

սրբոյ և մեծի Լուսավորչին: Վասն որոյ եւ զնորին Առաքելոյ շնորհն ընկալելալ, որ առ հանգստարանաւ նորին զլինելութիւնն էառ, զնորին ելից զհոգևոր մշակութեանն պահատութիւնս¹: Առասպելից ինքնին զուրկ է իրական հիմքից, բայց ճիշտ է որպես այն կոնցեպցիայի սիմվոլիկ արտահայտություն, թե Լուսավորիչն իր գործունեությունը ծավալեց սուրբ Թաղեոսի նահատակությամբ պարարտացված հողում, որ Գրիգորի գործը Թաղեոսի առաքելության շարունակությունն է:

Մինչև հիշյալ երկու հոսանքները ամբողջությամբ կմիաձուլվեն, և կստեղծվեն միասնական եկեղեցի, մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում պայքար էր զնում, մի պայքար, որի ընթացքում մշակվեց եկեղեցու կազմակերպման ազգային սկզբունքը:

Ուշադրությամբ հետևելով կաթողիկոսական աթոռին Գրիգորի և Աղբիանոսի ժառանգների միմյանց հաջորդելուն՝ որոշակի համապատասխանություն ենք նկատում և այն պետությունների քաղաքական գերակշռության հաջորդ տատանումների միջև, որոնցից կախված էր Հայաստանը, ընդ որում Լուսավորչի ժառանգների աթոռակալությունը զուգադիպում է Հռոմեական կայսրության ազդեցության գերակշռությանը, իսկ Աղբիանոսի ժառանգներինը՝ պարսկականին: Հիրավի, Հայաստանի նկատմամբ կայսրության հովանավորությունը, որն ամբաստանվեց 298 թվականի պայմանագրով, պաշտոնապես անխախտ մնաց մինչև 363 թվականը: Այդ ժամանակամիջոցում պարսիկները մի քանի անգամ փորձեցին միջամտել Հայաստանի գործերին և 338 թվականին, երբ Կոստանդին Մեծի մահվանից հետո երկպառակություններ ծագեցին նրա ժառանգների միջև, հասան իրենց նպատակին: Այդ ժամանակ Հայաստանի թագավորն էր Տիրանը, և հենց սրա ժամանակ էլ Արիստակեսից, Վրթանեսից և Հուսիկից հետո կաթողիկոսական աթոռ են բարձրանում Աղբիանոսի տոհմի ներկայացուցիչները՝ Փառենն ու Շահակը: Տիրանի որդին և հաջորդը՝ Արշակը, համարվում էր կայսրի դրածոն. նրա հետ միասին կաթողիկոսական աթոռ է բարձրանում Գրիգորի թոռը՝ Ներսեսը: Հենց որ կայսրի հետ Արշակի բարեկամական հարաբերությունները վատացան², և հայոց թագավորը դաշինք կնքեց պարսից Շապուհ արքայի հետ, ներսե-

¹ Խառնակցի, Թ, հղ., Գևորգ Գլակ, էջ 21:

² Փալատոս, Գ, ԺԳ:

սը հեռացվեց աթոռից, որին փոխարինեց Չունակ եպիսկոպոսը¹, որ հավանորեն Աղբիանոսի տոհմից էր: Սակայն Արշակը շուտով գծավեց պարսիկներին հետ և ողբերգական մահով իր մահկանացուն կնքեց պարսկական գերութիւն մեջ: Նրա որդին՝ Պապը, իշխանութիւն հասավ հոռմենական զորքերի օգնութեամբ: Գահից հեռացված Ներսեսը նորից վերադարձավ եկեղեցու գլուխ²: Կայսրի հետ բարեկամութիւնը երկար չտևեց: Պապը երես դարձրեց նրանից և անցավ պարսիկների կողմը³: Այդ ժամանակ էլ տեղի ունեցավ Ներսեսի սուլանութիւնը և նրա տեղը նշանակվեց Ղուսիկը, որ Աղբիանոսի տոհմից էր⁴: Վերջապես Հայաստանի բաժանումից հետո կաթողիկոսական աթոռը մնաց պարսկական մասում և նշան տիրացան Աղբիանոսյանները՝ Չավենը, Շահակը և Ասպուրակենը⁵:

Այսպիսով, եկեղեցու պետերը փոփոխվում էին բարձրակարգ հովիտներ: Գրիգորյանները հանդես են գալիս որպէս կայսերական քաղաքականութեան կողմնակիցներ, իսկ Աղբիանոսյանները ավելի համակիր էին պարսկականին: Այստեղ իր արտահայտութիւնն է գտել քրիստոնեական հոսանքների՝ հունական և ասորական ծագումնաբանական տարբերութիւնը, որոնց կրողներն էին այդ տոհմերը: Աղբիանոսի տոհմի քաղաքականութիւնը գերազանցապէս Արշակունիների քաղաքականութիւնն էր, որը և դարձավ ազգային հիմք՝ ծառայելով հայկական եկեղեցու կազմակերպմանը: Հայոց եկեղեցու զարգացման ու աստիճանական ազգայնացման ընթացքը պարզվում և հասկանալի է դառնում, երբ այն համեմատում ենք կայսրութեան մեջ եկեղեցական կազմակերպութեան էվոլյուցիայի հետ առհասարակ:

Քրիստոնեութիւնը իր երևան գալու առաջին իսկ շրջանում ի հայտ բերեց կազմակերպչական բնական ձգտում: Պաշարելով շրջապատող թշնամական միջավայրի դեմ՝ նա անհրաժեշտութիւն

1 Փավստոս, Գ, 26:
 2 Նույն տեղում, Ծ, ա:
 3 Նույն տեղում, Ծ, բ:
 4 Նույն տեղում, Ծ, իթ:
 5 Շահակը կոչվում է Կորնէայ: Եթէ ճիշտ է ընթերցումը, պետք է ենթադրել, որ դրանից առաջ Շահակը եղել է եպիսկոպոս Կորնայրում: Ավելի քան հավանական է, որ նա ևս Աղբիանոսի տոհմից էր:

զգաց համախմբել իր ուժերը, ինչպէս արդեն գրաված դիրքերը պաշտպանելու, այնպէս էլ հետագա հաջողութիւններ ձեռք բերելու համար և իր զարգացման ու հավատացյալների շրջանակը բնդլայնելուն զուգընթաց ձգտում էր ստեղծել միութիւններ և բնդհանուր կապ հաստատել ցիրուցան համայնքների միջև: Նրանց իրար միացնող օղակ էր հանդիսանում նախ և առաջ հոգեւորականութիւնը՝ եպիսկոպոսները, որոնք կանգնած էին առանձին համայնքների գլուխ: Մի քանի եպիսկոպոս միանում և կազմում էին վարչական մեկ միավոր՝ նրանցից մեկի գլխավորութեամբ: Ընդ որում այդ համայնքների կենտրոնացումը և դրանց եպիսկոպոսների խմբավորումը ամփոփվում էին պետական կյանքում մշակված շրջանակների մեջ: Եկեղեցական հիերարխիայի էվոլյուցիան ընթանում էր քաղաքացիական կազմակերպութեան հետքերով, եկեղեցին իր իսկ համար աննկատելի կերպով հարմարվում էր կայսրութեան վարչակարգին՝ հարմարեցնելով իր բաժանումները քաղաքացիականի հետ: Եկեղեցու կազմակերպական աշխատանքը որոշ ավարտուն ձև էր ստացել արդեն մինչև Նիկիայի ժողովը (325 թ.), որը և իր ընդունած կանոններով հաստատեց այն ժամանակ գոյութիւն ունեցող կարգը: Այս վերջինը համապատասխանում էր կայսրութեան կառուցվածքին, որը դրանից առաջ ստացել էր հստակորեն գծազրված ձև:

Եկեղեցին անմիջապէս արձագանքեց Դիոկղետիանոսի Գ դարի վերջերին կատարած վարչական բաժանումներին և մինչև 325 թվականը կարողացավ իր հիերարխիայի մեջ համապատասխան փոփոխութիւններ կատարել՝ դրանք ամբողջովին հարմարեցնելով նոր կառուցվածքին: Վերը մենք ծանոթացանք Դիոկղետիանոսի ռեֆորմի գլխավոր գծերին: Մի կողմից գոյութիւն ունեցող պրովինցիաները տրոհվեցին ավելի մանր, վարչականորեն ինքնուրույն միավորների, իսկ մյուս կողմից մի քանի պրովինցիաներ միացվեցին միմյանց՝ հիերարխիական իշխանութեան համապատասխան՝ վարչական ավելի մեծ դիոցեզներ կազմելու համար: Կայսրութեան ասիական հողերը կազմում էին երեք դիոցեզ՝ Ասիա, Պոնտոս և Արևելք, վերջինիս մեջ էր մտնում նաև Սգիսպոսը: Նրանց գլուխ էին կանգնած վիկարիոսները, այսինքն՝ արևելքի պրետորիական պրեֆեկտի տեղակալները, իսկ նահանգների գլուխ էին կանգնած կառավարիչները կամ պրեզիդենտները, որոնք ենթարկվում էին համապատասխան վիկարիոսներին:

Ճիշտ նույն ձևով էլ այդ շրջանակներում քաշվում էր եկեղեցական իշխանությունը: Նահանգները միաժամանակ նաև եկեղեցական միապետներ էին՝ թեմեր, և նրանցից չարաքանչյուրում նստում էր մեկ պապական-միապետության, որ իր գերբով հավասարազոր էր քաղաքացիական իշխանության պրեզիդենտին: Նույն ձևով էլ գրեցեղները սաւցան եկեղեցական միապետների նշանակություն, որոնց մեջ վիճարկեցիկներն համապատասխանում էին եպիսկոպոս-պատրիարքները: Ինչպես որ չարաքանչյուր պրովինցիայում բոլոր եպիսկոպոսները միջից առանձնանում էր մեկը՝ պրովինցիալ մայրաքաղաքի եպիսկոպոսը, սրբան միապետության, ճիշտ նույնպես էլ չարաքանչյուր դիոցեզում միապետություններից մեկը գրավում էր պատրիարքի կամ գլխավոր միապետության առաջնակարգ դերը: Ասիայի գրեցեղում այսպիսին էր Ամենասի միապետությունը, Արևելքում՝ Անտիոքի միապետությունը և Պանսոսում՝ Կեսարիայի միապետությունը:

Որոշ առաջակարգություններ է առաջացնում այն հարցը, թե ե՞րբ են հասանալիկ հիշյալ հարաբերությունները: Ոմանք կարծում են, որ միապետության կազմակերպությունը առաջին անգամ մտցվել է Նիկիայի տիեզերական ժողովում, իսկ պատրիարքականը՝ Կ. Պոլսի, սեբիշները ընդունում են, որ ոչ միայն միապետությունների, այլ նույնիսկ պատրիարքությունների կազմավորումը ազելի առաջ է եղել, քան Նիկիայի ժողովը, և որ այս վերջինը միայն օրինականացրել է մինչ այդ գոյություն ունեցող վիճակը, ընդ որում նրանք հենվում են հիշյալ ժողովի 4-րդ և 6-րդ կանոնների վրա: Դրանցից առաջինը բացառություններ է տալիս պրովինցիալ եպիսկոպոսներին մասին, ինչպես նաև իրենց միապետության հետ անեցած նրանց հարաբերությունների մասին: Այդ կանոնը նշանավորում է միապետությունների զարգացման միանգամայն օրոշակի մոմենտ: Պատրիարքությունների ձևավորման համար նույնպիսի պահ հանդիսացավ 381 թվականը և այդ պահը արձանագրված է Կաստանդնուպոլսի ժողովի երկրորդ կանոնում: Այնուհետև ազում է. «Մեկ դիոցեզում պաշտօնավարող եպիսկոպոսները իրենց իշխանությունը չարեք է տարածեն նրա սահմաններից դուրս դանձից եկեղեցիները վրա և չխառնեն եկեղեցիները, այլ համաձայն կանոնների, Արևմտեղիայի եպիսկոպոսը պետք է վարի եկեղեցական գործերը միայն Եպիսկոպոսում, Արևելքի եպիսկոպոսները պիտի կառավարեն Արևելքը՝ պահպանելով

Անտիոքի եկեղեցու ավագությունը, որ նախատեսված է Նիկիայի ժողովի կողմից: Ասիայի դիոցեզի եպիսկոպոսները պետք է վարեն միայն Ասիայի գործերը, Պանսոսի եպիսկոպոսը՝ Պանսոսի և Քրակիայինը՝ Քրակիայինը»:

Ոմանց կարծիքով այդ կանոնով քաղաքացիական բաժանումների օրինակով եկեղեցում առաջին անգամ դիոցեզային բաժանումներ մտցվեցին: Մյուսները ընդհանրապես՝ ենթադրում են, որ ժողովը լի օրինականացրեց այն կարգը, որ գոյություն ուներ 381 թվականից առաջ, և որը, ինչպես նրանում է 6-րդ կանոնից, սկզբունքորեն ընդունվեց Նիկիայի ժողովում: Այդ կանոնը պարտավորեցնում է սահմանել այն հին սովորությունը, որի համաձայն Արևմտեղիայի եպիսկոպոսը Եպիսկոպոսում, կրիայում և Պենտապոլիսում վայելում է դերագույն իշխանություն... նույն ձևով էլ Անտիոքի և մյուս թեմերի եկեղեցիների նկատմամբ պետք է պահպանվեն նրանց նախապատվություն իրավունքները»:

Մի մեկնաբանությունը էջոսուսի և տաճարային բաժանումը արտահայտում են միապետության առանձնաշնորհությունները, իսկ մի այլ մեկնաբանությունը խոսքն այսուհետև վերաբերում է միապետության ազելի բարձրին կամ պատրիարքական իշխանությունը: Մեր կարծիքով երկու կողմերն էլ իրավացի չեն. հարցը կատարելաբար իր իսկական լուսաբանությունը, եթե աշխարհը շարժվեք այն հիմնական սկզբունքը, որի համաձայն սահմանվեց եկեղեցու հիերարխիան և այդ տեսանկյունից էլ լուսաբանվեք եկեղեցուական հիերարխիայի զարգացման միջևի պահերը:

¹ C. P. cap. 2. Τους ὑπὲρ διοίκησιν ἐπισκόπους ταῖς ὑπερορίοις ἐκκλησιασiais μὴ ἐπιέναι, μηδὲ συγχεῖν τὰς ἐκκλησίας· ἀλλὰ κατὰ τοὺς κανόνας τὸν μὲν Ἀλεξανδρείας ἐπίσκοπον τὰ ἐν Αἰγύπτῳ μόνον οἰκονομεῖν, τοὺς δὲ τῆς θνατολῆς ἐπισκόπους τὴν θνατολὴν μόνην διοικεῖν, φυλαττομένων τῶν ἐν τοῖς κανόσι τοῖς κατὰ Μικσίαν πρεσβείων τῇ Ἀντιοχείῳ ἐκκλησίῳ, καὶ τοὺς τῆς Ἀσιανῆς διοικήσεως ἐπισκόπους τὰ κατὰ τὴν Ἀσίαν μόνην οἰκονομεῖν, καὶ τοὺς τῆς Ποντικῆς τὰ τῆς Ποντικῆς μόνον, καὶ τοὺς τῆς Θρῆκης τὰ τῆς Θρῆκης μόνον οἰκονομεῖν. *Древне-славянская Коричая*, p. 96. *Հրատ. B. H. Beneshевича-ի*, 1907.

² Nic. cap. 6. Τὰ ἄρχαία εἶθι κρατεῖτω τὰ ἐν Αἰγύπτῳ καὶ Λιβύῃ καὶ Πενταπόλει, ὥστε τὸν ἐν Ἀλεξανδρείᾳ ἐπίσκοπον πάντων τούτων ἔχειν τὴν ἐξουσίαν, ἐπειδὴ καὶ τῷ ἐν τῇ Ῥώμῃ ἐπισκόπῳ τοῦτο σύνθηθές ἐστίν· ὁμοίως δὲ καὶ κατὰ Ἀντιοχείαν καὶ ἐν ταῖς ἄλλαις ἐπαρχίαις τὰ πρεσβεία οὐξ εἶσθαι τοῖς ἐκκλησιασiais. ed. cit. p. 86.

Դիոկղետիանոսի ռեֆորմով նահանգների թիվը ավելացավ, իսկ տարածութիւնը նախկինի համեմատութիւնով նրանք փոքրացան: Այսպէս, օրինակ, մինչև Դիոկղետիանոսը Կապադովկիայի մեջ մտնում էր նաև Փոքր Հայքը, Գաղատիայի մեջ՝ Պողեմոնական Պոնտոսը, Միջագետքը կազմված էր ուշ շրջանի Միջագետքից և Օսրոնենից, Ասորիքը՝ Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և այլն: Դիոկղետիանոսից ձեռք բաժանումն ավելի հեռուն գնաց. Կապադովկիան բաժանվեց I և II Կապադովկիանների, Փոքր Հայքը՝ I և II Հայքի, Ասորիքը բաժանվեց յոթ պրովինցիանների (Սիւրասենսիա, I և II Ասորիք, I և II Փյունիկիա, I և II Պաղեստին), Եգիպտոսը՝ Տինգ պրովինցիանների, Ասիան՝ յոթ՝ Եկեղեցական իշխանութիւնը ինչպէ՛ս պետք է հարմարվեր այս փոփոխութիւններին:

Պրովինցիանների մասնատման հետ միասին մասնատվեցին նաև եկեղեցական թեմերը, կազմվեցին նոր միտրոպոլիտութիւններ: Դիոկղետիանոսի ռեֆորմի Գետեանքով Անտիոքի, Կեսարիայի և Ալեքսանդրիայի շուրջը առաջ եկան մի շարք նոր միտրոպոլիտութիւններ. արդյոք նրանք պահպանում էին որևէ կախվածութիւն նախկին միտրոպոլիտութիւնից, թե՛ նրանք համարվում էին իրավաբանորեն հավասար արժեքներ: Այսպէս, օրինակ՝ մինչև Դիոկղետիանոսը Կեսարիան Կապադովկիայի քաղաքացիական կյանքի կենտրոնն էր և հանդիսանում էր միտրոպոլիտութիւն, ուստի և Կեսարիայի եպիսկոպոսը պետք է գրավեր միտրոպոլիտի դիրքը: Երբ Փոքր Հայքը անջատվեց Կապադովկիայից, նրա մայրաքաղաք Սեբաստիայի եպիսկոպոսն էլ դարձավ նոր կազմված պրովինցիայի միտրոպոլիտ: Արդյոք դրանից հետո նրա կապը խզվե՞ց Կեսարիայի նախկին միտրոպոլիտութիւնից. մի խոսքով, այն դեպքում, երբ որևէ եպիսկոպոս բարձրանում էր միտրոպոլիտի աստիճանի, ինչպէ՛ս էին որոշվում նրա հարաբերութիւնները իր նախկին միտրոպոլիտի նկատմամբ:

Մեզ թվում է, որ այդ հարցերին պատասխանում է Նիկիայի ժողովի՝ վերևում մեջ բերված 6-րդ կանոնը: Հոգևոր հայրերը կարծում էին, որ արդեն հաստատված ավանդույթները ենթակա չեն

¹ Marquardt, Römische Staatsverwaltung, t. I 332, Handbuch d. Röm. Altertums; Bd. IV, 1873.

վերացման, և որ նշված կենտրոնները պետք է պահպանեն իրենց նախապատվութեան իրավունքը: Ըստ այդ մեկնաբանութիւն Անտիոքը, Եփեսոսը, Կեսարիան և Ալեքսանդրիան, որ բարձր դիրքի էին հասել մինչև Դիոկղետիանոսը, պետք է պահպանեին իրենց նախապատվութիւնը նաև նրանից հետո, անկախ այն բանից՝ հարմարվե՞լ էր եկեղեցին գիոցեղային բաժանմանը, թե՛ ոչ: Երբ դրանից հետո եկեղեցին ընդունեց գիոցեղային կարգը, ապա դրանից հիշյալ կենտրոնների դիրքի մեջ ոչինչ չփոխվեց, որովհետև հենց նրանք էլ դարձան գիոցեղների մայրաքաղաքներ: 381 թվականի ժողովը հասակորեն ձևակերպեց և հաստատեց այն իրադրութիւնը, որ ստեղծվել էր մինչ այդ: Դիոցեղային մայրաքաղաքների միտրոպոլիտները, յուրաքանչյուրն իր գիոցեղի սահմաններում, դարձան գերագույն միտրոպոլիտներ: Այս ճանապարհով էլ ծագեց ու ամրապնդվեց պատրիարքական իշխանութիւնը գիոցեղների մայրաքաղաքներում՝ Անտիոքում, Կեսարիայում և Եփեսոսում: Թեև Եգիպտոսը պաշտոնապէս մտնում էր Արևելքի գիոցեղի մեջ, բայց իր գրաված դիրքով կար և մնաց որպէս առանձին միավոր, և այդ պատճառով էլ Ալեքսանդրիան, որպէս ինքնուրույն երկրի մայրաքաղաք, հիերարխիական առումով հավասարվեց գիոցեղային մայրաքաղաքներին, և նրա միտրոպոլիտն էլ համարվեց պատրիարք: Ուրեմն՝ գիոցեղային բաժանումը սահմանազատում էր միայն գերագույն միտրոպոլիտների կամ պատրիարքների ազդեցութիւնն ոլորտը որոշակի սերիտորիայի՝ գիոցեղի սահմաններում և սրբազործում էր պատրիարքների իշխանութիւնը, որը պատմականորեն զարգացել էր մինչև գիոցեղային բաժանումը և նրանից անկախ:

Եկեղեցական և քաղաքացիական կազմակերպութիւնների միջև գոյութիւն ունեցող զուգահեռականութիւնը հնարավորութիւն է տալիս պատրիարքների միջև առաջնութիւն համար մղվող մրցակցութիւնը բացատրել որպէս հիերարխիական աստիճան ստեղծելու ձգտում պրետորական պրեֆեկտի նմանութիւնով. պատրիարքներից մեկը պետք է դառնար գլխավոր, որպէսզի նրան ենթարկվեին մյուս պատրիարքները ճիշտ այնպէս, ինչպէս պրեֆեկտին ենթարկվում էին վիկարիոսները կամ գիոցեղների կառավարիչները: Արևելքի պրետորիական պրեֆեկտը մեծ մասամբ ապրում էր Անտիոքում, մասնավանդ սկզբում, իսկ հետագայում կառավարում էր՝ սովորաբար ապրելով մայրաքաղաք

քում: Ուստի հասկանալի է, որ գլխավորը լինելու համար մղվող պայքարում Անախորի աթոռը սկզբում առավել հարջուրեթյուններ ուներ, մինչև որ ժրջակացությունն ավարտվեց կաթորություն մայրաքաղաքի պատրիարքի օգտին: Հիերարխիայի հետագա զարգացումն ընթացող իշխանությունը մայրաքաղաքում կենտրոնացնելու ուղիով է վնաս և ի խախտումն նախ և առաջ Եփեսոսի և Կեսարիայի պատրիարքությունների իրավունքների: Այդ իմաստով 451 թ. Փաղկեդոնի ժողովը հանդիսացավ Կոստանդնուպոլսի եկեղեցու հաղթանակը: Այդ ժողովում կրկին քննելով նախորդ տիեզերական ժողովի որոշումները Կոստանդնուպոլսի եկեղեցու պերագապոսի վրիթի մասին սուրբ հայրերը հազանություն ավելին դրան և այն ավելի դարպասքին 28-րդ կանոնով, որտեղ ասվում է. «Պոնտոսի, Ասիայի և Թրակիայի միտրոպոլիտները, ինչպես նաև այդ նույն դիոցեզների ալտոգրիների եպիսկոպոսները պետք է ձեռնադրվեն Կոստանդնուպոլսի սուրբ եկեղեցու սուրբ աթոռի փողմից: Հիշյալ դիոցեզների միտրոպոլիտները իրենց թեմերի եպիսկոպոսների հետ միասին ձեռնադրում են եպիսկոպոսներ իրենց թեմի համար՝ համաձայն սուրբ կանոնների, իսկ իրենք՝ այդ դիոցեզների միտրոպոլիտները, ձեռնադրվում են Կոստանդնուպոլսի պատրիարքի կողմից»¹:

Այդ կանոնով վերացվեցին Եփեսոսի և Կեսարիայի աթոռների պատրիարքական առավելությունները, և այդ աթոռները ընդմիշտ կորցրին իրենց նշանակությունը: Դրանով պետք է բացատրել նաև հայերի բացասական վերաբերմունքը Փաղկեդոնի նկատմամբ, խզումը տեղի ունեցավ հիերարխիայի հողի վրա և ոչ թե դավանաբանական, ինչպես այն ներկայացնում են հետագա աղբյուրները:

Չսահմանափակվելով դրանով՝ Կոստանդնուպոլսի պատրիարքները ձգտում էին իրենց ենթարկել նաև մյուս պատրիարքությունները կամ առաջ մղել իրենց աթոռի նախապատվությունը:

¹ Xalk. can. 28. καὶ ὡστε τοὺς τῆς Ποντικῆς καὶ τῆς Ἀσιακῆς καὶ τῆς Θρακικῆς διοικήσεως μητροπολίτας μόνους, ἔτι δὲ καὶ τοὺς ἐν τοῖς βαρβαρικοῖς ἐπισκόπους τῶν προειρημένων διοικήσεων χειροτονεῖσθαι ὑπὸ τοῦ προειρημένου ἀγιωτάτου θρόνου τῆς κατὰ Κωνσταντινουπόλιν ἀγιωτάτης ἐκκλησίας: δηλαδὴ ἐκάστου μητροπολίτου τῶν προειρημένων διοικήσεων μετὰ τῶν τῆς ἐπαρχίας ἐπισκόπους, καθὼς τοῖς θεοῖς κανόσι διηγόρευται: χειροτονεῖσθαι δέ, καθὼς εἶρηται, τοὺς μητροπολίτας τῶν προειρημένων διοικήσεων παρὰ τοῦ Κ. ἀρχιεπισκόπου: *ed. cit.* p. 125.

558 թվականին Հովհան Պահեցաղը հանգիսավորությամբ ընդունեց տիեզերական պատրիարքի տիտղոս:

Այսպիսով, եկեղեցին ետ շնաց աշխարհիկ իշխանությունից և միևնույն ինքնակալական ձգտումներով առգործված՝ կարողացավ հասնել այն բանին, որ հենց Հուստինիանոսի օրոք՝ միահեծանություն հաղթանակի դարում, հոգևոր իշխանությունը համակենտրոնացվեց ի դեմս Կոստանդնուպոլսի պատրիարքի:

Կայսերական եկեղեցու աստիճանական դարգացմանը նվիրված այս սրբագրված մեզ թույլ է տալիս հասցնել եկեղեցու դարգացմանը հետևելու համար անել երկու եզրակացություն, առաջ քաշել երկու նախապայման. նախ՝ հասցնել եկեղեցու արտաքին հարաբերությունները, այսինքն՝ նրա հարաբերությունները կայսերական եկեղեցու հետ պետք է լուսաբանվեն քաղաքական իրադրությունն առնչությամբ, այլ խոսքով, եկեղեցու կախումը պետք է որ արտահայտվի այն շափով, ինչ շափով որ կրկնվե քաղաքականապես կախում ուներ կայսրությունից, և երկրորդ՝ իր ներքին դարգացման ընթացքում հասցնել եկեղեցին պետք է հարմարվե րեալական քաղաքացիական կարգերին այնպես, ինչպես կայսերական եկեղեցին հարմարվում էր կայսրության վարչական կառուցվածքին:

Մենք տեսներ, որ հայկական հոգիները քաղաքական տեսակետից մեկ ամբողջություն չէին կազմում, այլ բաժանված էին տարբեր քաղաքական կերպարանք ունեցող մի քանի մասերի: Այդ պատճառով էլ շենք կարող խոսել հայկական հոգիի սահմաններում ամբողջությամբ վերացած դաշույնուն ունեցող եկեղեցական միասնական կազմակերպության մասին: Փոքր Հայքը, որ օրդանապես կապված էր կայսրության հետ, եկեղեցական տեսակետից ևս ենթարկվում էր ընդհանուր իրազրություն Սկզբում, որպես Կաղազովիկիայի մի մասը, այն մտնում էր Կեսարիայի միտրոպոլիտի թեմի մեջ, այնուհետև, կաղմելով ինքնուրույն նահանգ, ունեցավ իր միտրոպոլիտու Նրբ Փոքր Հայքը բաժանվեց երկու մասի, Մեկիտենեն գաբձավ II Հայքի մայրաքաղաքը, իսկ Մերաստիան՝ I Հայքի՝ Այս երկու միտրոպոլիտությունները ընդունում

¹ Այդ միտրոպոլիտությունների եպիսկոպոսական քաղաքների մասին տե՛ս վերը՝ էջ 106: Հայկական շրջանների եկեղեցական բաժանումը մոփոխության ընթացիկից Հուստինիանոսի բարենորոգումների ժամանակ: Ցե՛ս վերը՝ էջ 195:

էին իրենց նախկին միտրոպոլիտութեան՝ Կեսարիայի աթոռի ավագութեան իրավունքը, իսկ հետագայում՝ 451 թ. Քաղկեդոնի ժողովի ժամանակից սկսած՝ ենթարկվեցին անմիջապես Կոստանդնուպոլսի պատրիարքին:

Ինչ վերաբերում է Մեծ Հայքին, ապա իր քաղաքական վիճակի անկայունութեան պատճառով եկեղեցական տեսակետից էլ նա միշտ աստանվում էր քաղաքական իրավիճակին համապատասխան՝ մերթ մոտենալով կայսրութեանը և մերթ հեռանալով նրանից: Հայկական եկեղեցու գոյութեան առաջին դարում, Գրիգոր Լուսավորչից մինչև Հայաստանի բաժանումը Գ դարի վերջին, Հայաստանը գտնվում էր առավելագույն կայսրութեան գերիշխանութեան տակ, և այդ պատճառով եկեղեցական հարաբերություններն էլ նրանց միջև ավելի սերտ էին: Ձեռնադրվելով Կեսարիայում՝ Գրիգորը Կեսարիայի աթոռի նկատմամբ հանդիսացավ այնպիսի եպիսկոպոս, ինչպիսին էին Մելիտենեի, Սեբաստիայի և մյուս քաղաքների եպիսկոպոսները, այն տարբերությամբ, սակայն, որ իբրև անկախ պետության եպիսկոպոս՝ մի երկրի, որ միայն օգտվում էր կայսրութեան հովանավորությունից, Գրիգորի կախումը կրում էր ավելի շուտ ձևական բնույթ¹:

Գրիգորին եպիսկոպոս կարող էր ձեռնադրել ամենամոտիկ միտրոպոլիտը, օրինակ, Մելիտենեի, որովհետև Նիկիայի ժողովի 4-րդ կանոնով սրբագործված հին սովորույթը թեմի եպիսկոպոսների համաձայնությամբ յուրաքանչյուր միտրոպոլիտի ձեռնադրության իրավունք էր տալիս: Եթե Գրիգորը դիմեց Կեսարիային, նշանակում է, նրա ձեռնադրությունը եղել է ավելի վաղ, քան Գրիգորեանոսի 296 թվականի ռեֆորմը, որի հետևանքով Փոքր Հայքից կազմվեց նոր նահանգ և առանձին միտրոպոլիտություն: Երկրորդ է, դրանից հետո էլ Գրիգորի հաջորդները գնում էին Կեսարիա, բայց այդ արդեն բնականաբար բացատրվում է նախկին և գլխավոր եկեղեցական կյանքի կենտրոնի հետ տրադիցիոն կապը պահպանելու ցանկությամբ, նրանով, որ նրանք չէին կամենում կախման մեջ լինել մի միտրոպոլիտից, որը դրանից առաջ հայ եպիսկոպոսի հետ միասին նույնպես ենթարկվում էր Կեսարիայի

աթոռին: Լուսավորչի հարաբերությունը Կեսարիայի հետ հավասարազոր էր եպիսկոպոսի հարաբերությանը միտրոպոլիտի նկատմամբ, իսկ նրա հաջորդները կամ այդ հաջորդներից նրանք, որոնք ձեռնադրվում էին Կեսարիայում, Կեսարիայի աթոռին վերաբերվում էին այնպես, ինչպես միտրոպոլիտները՝ պատրիարքին:

Այս վիճակը որոշ ընդհատումներով շարունակվեց մինչև Հայաստանի բաժանումը: Ընդհատումները տեղի էին ունենում պարսիկների միջամտության հետևանքով: Նրանց ազդեցության ուժեղացմանը զուգընթաց հայերի մեջ նկատվում էր կայսրությունից եկեղեցու կախումը խզելու և ինքնուրույն եկեղեցի ստեղծելու ձգտում: Մենք տեսանք, որ եկեղեցական քաղաքականության երկու հոսանքների արտահայտիչները երկու տոհմերի՝ Գրիգորի և Աղբիսեանոսի տոհմերի ներկայացուցիչներ էին: Երբ Հայաստանը բաժանվեց երկու պետությունների միջև, դրանով էլ լուծվեց եկեղեցու վարած երկակի քաղաքականության հարցը, երկու հոսանքներն էլ պարփակվեցին համապատասխան սահմաններում: Կայսերականը՝ Արևմտյան Հայաստանում, իսկ ազգայինը՝ Արևելյան: Այդ բաժանումից սկսած՝ Արևելյան Հայաստանը հաստատապես թևակոխում է եկեղեցու ազգայնացման ուղին որպես հիերարխիական առումով ինքնավար հաստատություն, իսկ Արևմտյան Հայաստանը շարունակում է մնալ կայսերական եկեղեցուց կախյալ վիճակում:

Եկեղեցու ազգայնացումը տեղի էր ունենում նրա նախարարականացման կամ ֆեոդալականացման ուղիով: Քանի որ Հայաստանի քաղաքական վարչաձևը կրում էր ֆեոդալական բնույթ, և իշխանությունը բաժանված էր բազմաթիվ ազնվական տոհմերի միջև, ուստի եկեղեցական իշխանությունն էլ, բնականաբար, պետք է համակերպվեր գոյություն ունեցող միջավայրին և վերցնե՛ր արդեն պատրաստի ձևերը: Եկեղեցու նախարարականացման պրոցեսը սկսվեց Պապի թագավորության ժամանակ, երբ կայսերական եկեղեցու հետ հարաբերությունները խզվեցին: Ներսես կաթողիկոսի սպանությունից հետո Պապ թագավորը նրա տեղը նշանակեց Հուսիկ եպիսկոպոսին, որ Աղբիսեանոսի տոհմից էր: Կեսարիայի պատրիարքը, իմանալով թագավորի ինքնազուլս կարգադրության մասին, որ կատարված էր առանց իր գիտության, դժգոհ մնաց: Այդ առթիվ տեղի ունեցավ Կեսարիայի թեմի եպիսկոպոսների ժողով, և նրանք Պապ թագավորին հղեցին մի ցատումնալից թուղթ, որի

¹ Գելազիոսն իր Նիկիայի ժողովի պատմության մեջ Կեսարիայի եպիսկոպոսին ենթակա երկրների թվում հիշատակում է նաև Πόντου Πολεμαϊκόν, Ἀρμενίαν μικράν καὶ μεγάλην. Gelazii Cyziceni, *Hist. conc. Nic.* Migne, 85, p. 1310.

մեջ, Փալատոսի խոսքերով ասած, «լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութեանն» և որոշեցին. «զի որ լիցին հայրապետ Հայոց, նա որանն արքունի իշխեցսէ՛ զհացն օրհնել. և մի իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի բնէ: Եւ յայնմ հետէ բարձրաւ իշխանութիւն Հայոց,— շարունակում է պատմիչը,— զեպիսկոպոսն ձեռնադրեալ. այլ որ լինէին եպիսկոպոսք ամենայն դաւառաց քաւառաց Հայոց և կողմանց կողմանց. յայնմ հետէ, որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթալին ի քաղաքն կեսարացոց և անդ լինէին եպիսկոպոսք: Վասն զի, յայնմ հետէ,— կրկնում է պատմիչը,— բարձաւ իշխանութիւն յերկրէն Հայոց, այնուհետև ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր առաջ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր և հաց օրհնէր թագաորացն»¹:

Մեր պատմիչի վկայութիւնը հաստատում է նաև նրանով, որ Կեսարիոյի եպիսկոպոս Բարսեղ Մեծի թղթերում նույնպես խոսվում է նրա՝ Պապի հետ ունեցած ինչ-որ ընդհարման մասին: Բարսեղը մերժում է Պապի խնդիրը՝ նրա ազարկած Փալատոսին եպիսկոպոս ձեռնադրելու մասին և նրա փոխարենը առաջարկում է իր թեկնածուին՝ ոմն Կյուրիզի: Այն ժամանակ հայերը շրջանցում են Բարսեղին և նույն հարցով դիմում են նրա հակառակորդ Անթիմիոսին՝ երկրորդ Կապադովկիայի միտրոպոլիտին և կարողանում են իրագործել իրենց ցանկութիւնը²:

Այս Փալատոսին կարելի է համեմատել հայ պատմիչի այն համանուն եպիսկոպոսի հետ, որ ձեռնադրեց Ներսեսին և ապրեց մինչև խոսքով թագաւորի օրերը: Այն, ինչ հաղորդում է Բարսեղ Մեծը, այնքան էլ չի համընկնում հայկական տվյալներին: Գրանք իրար համաձայնեցնել կարելի է միայն այն դեպքում, եթե ընդունենք, որ Պապ թագաւորը սկզբում պաշտպանել է հիշյալ Փալատոսի թեկնածութիւնը, իսկ հետո, երբ Բարսեղը մերժեց այն, անտեսելով ավանդութիւնները, իր իսկ բնորոշյալ մը շանակեց Հուսիկին:

Հայ պատմիչի վերը հիշված պատմութեան մեջ նկատվում է նրա հայացքը կաթողիկոսական իշխանութեան հոլովում նկատ-

մամբ: Այդ իշխանութիւնը կայանում էր գերազանցապես եպիսկոպոսների ձեռնադրելու իրավունքի մեջ, և այն խլելուց հետո կաթողիկոսի պաշտոնը իջեցվում և հավասարեցվում էր արքունի եպիսկոպոսի աստիճանին: Արդյոք այն ժամանակ հայոց եպիսկոպոսը կոչվում էր կաթողիկոս և ունե՞ր ձեռնադրութեան իրավունք, այս հարցը դեռ անորոշ է: Պատմիչի խոսքերի մեջ զբացվում է ավելի ուշ ժամանակվա աղղեցութիւնը, երբ կայունացավ կաթողիկոսի դիրքը: Ինչ վերաբերում է պատմիչի այն պնդմանը, թի Պապի միջադեպից հետո հայ եպիսկոպոսները ձեռնադրվում էին Կեսարիայում, պետք է ճիշտ համարել միայն Հայաստանի կայսերական կամ Արևմտյան մասի վերաբերյալ: Գիտենք, որ Հայաստանի բաժանումից հետո կայսերական մասում կաթողիկոս չկար, և այդտեղի եպիսկոպոսները չէին ենթարկվում Պարսկական Հայաստանում նստող կաթողիկոսին: Ե դարի ապստամբութեանը չէր մասնակցում Արևմտյան Հայաստանի եպիսկոպոսներին և ոչ մեկը:

Մենք չգիտենք, թե Հայաստանի բաժանումից հետո ի՞նչ վիճակի մեջ էին եկեղեցական գործերը կայսերական մասում: Դատելով մի քանի տվյալներից՝ այստեղ եկեղեցին հարմարվում էր երկրի յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի քաղաքական վարչակարգին: 451 թ. Քաղկեդոնի ժողովի ստորագրութիւններից երկուսն է, որ այդ ժողովին մասնակցել են ինքնավար սատրապութիւնների ներկայացուցիչները, Սոփանեի, Անզիտենեի, Անգելենեի, Սոփանենեի և Մարտիրոսուպոլսի եպիսկոպոսները, որ կազմում էին Միջագետքի թեմը և ենթարկվում էին Ամիդ քաղաքի եպիսկոպոսի միտրոպոլիտանը: Օսրոյենեի առանձնանալուց հետո Միջագետք նահանգի մայրաքաղաք դարձավ Մծրիւնը, իսկ երբ 363 թվականին վերջինս անցավ պարսիկներին՝ մայրաքաղաք դարձավ Ամիդը: Հիշյալ սատրապութիւնների եպիսկոպոսները անկախ էին այնպես, ինչպես նրանց տիրակալ իշխանները և ինչպես որ վերջինները պատվանշաններ էին ստանում կայսերական իշխանութիւնից, այնպես էլ եպիսկոպոսները ձեռնադրվում էին մոտակա կայսերական միտրոպոլիտի կողմից: Որպես հիերարխիկ կախում ունեցող բարձրաստիճան հոգևորականներ նրանք ներկա էին 451 թվականի տիեզերական ժողովին:

Ավելի անորոշ է եկեղեցու վիճակը կայսերական Ներքին

¹ Փալատոս, Ե, ԻԹ:
² S. Basilli epist. 58, 195, 313, տե՛ս Getzer, Die Anfänge der armenischen Kirche, p. 159 (Berichte über die Verh. d. Kön. Sächs. Ges. d. Wiss. zu Leipzig. 1895. Bd. 47).

¹ Տե՛ս վերը, էջ 50:

Հայքում: Քաղկեդոնի ժողովում այնտեղից ներկայացուցիչներ չկային: 553 թվականի հինգերորդ ժողովում հիշվում է Գրիգորը՝ Հուստինիանուպոլսի եպիսկոպոսը¹:

Կաթողիկոսության բաժանումից հետո, Ձ դարի վերջում, Քեոզոսուպոլսում նստում էր Քեոզորոս եպիսկոպոսը, որը և համարվում էր խոռվությունների ներշնչողը²: Կորյունի մոտ հիշատակութուն կա Գերջանի եպիսկոպոսի մասին: 680 թվականի ժողովի մասնակիցների թվում հիշված են Քեոզորոս եպիսկոպոսը՝ Սկեղեաց գավառից կամ Հուստինիանուպոլսից և Գևորգ եպիսկոպոսը Գարանաղիից կամ Կամախից: Նույն այս Գևորգը Կիթառիճի Մարիանոս եպիսկոպոսի հետ միասին ներկա է եղել նաև 692 թվականի ժողովին³:

Այսպիսով, Ձ—է դարերում եպիսկոպոսություններ գոյություն ունեին Ներքին Հայքի գլխավոր գավառներում՝ Կարինում, Գերջանում, Սկեղիբում և Գարանաղիում: Ե՞րբ և ի՞նչ հաջորդականությամբ հիմնվեցին այդ եպիսկոպոսությունները, այնքան էլ պարզ չէ: Կայսրությանը միացվելուց հետո Ներքին Հայքը շարժավ հոռմեական պրովինցիա բառի իսկական առումով, այլ պահեց իր ներքին նախարարական կառուցվածքը մինչև Հուստինիանոսի ժամանակները, ուստի եկեղեցական տեսակետից էլ նա առանձին միտրոպոլիտություն չկազմեց, այլ յուրաքանչյուր գավառ, իբրև ինքնուրույն իշխանական միավոր, ուներ իր եպիսկոպոսությունը, և բոլոր եպիսկոպոսները ենթակա էին կայսերական եկեղեցուն այնքանով, որ նրանից էին ստանում իրենց ձեռնադրությունը: Քաղկեդոնի ժողովում որոշվեց, որ այսուհետև «այլազգի եպիսկոպոսները պետք է ձեռնադրվեն Կոստանդնուպոլսի սուրբ եկեղեցու սուրբ աթոռի կողմից», ինչպես Պոնտական, Ասիական և Թրակիայի դիոցեզների միտրոպոլիտները: Գրանից առաջ հայոց եպիսկոպոսները իրենց ձեռնադրությունը ստանում էին մտտակա բարձր աթոռից՝ այն է Կեսարիայի եկեղեցուց, իսկ հետո, հիշյալ կանոնի

համաձայն, նրանք կախման մեջ գրվեցին ուղղակի Կոստանդնուպոլսի պատրիարքից:

Այս ամենից պարզվում է Փավստոսի հիշյալ վկայության բուն իմաստը՝ որ Կեսարիայի եպիսկոպոսի և Պապի ընդհարումից հետո հայոց եպիսկոպոսները ձեռնադրվում էին բացառապես Կեսարիայում. այդ պնդման մեջ արտացոլված է իրերի իսկական վիճակը Հայաստանի կայսերական մասում. նրա եպիսկոպոսները իրոք ենթակա էին Կեսարիայի աթոռին: Հայկական ավանդության համաձայն Հայաստանի բաժանումից հետո կաթողիկոսական աթոռի շուրջը եղած խոռվությունների ժամանակ փորձ կատարվեց կայսերական Հայաստանի համար ստեղծելու առանձին կաթողիկոսություն¹: Հնարավոր է, որ թագավորությունը երկու գահաժառանգ եղբայրների միջև բաժանելու ժամանակ, երբ նրանցից մեկը նրստում էր Պարսկական, իսկ մյուսը՝ Հռոմեական Հայաստանում, բաժանվեց նաև կաթողիկոսական իշխանությունը: Այդ դեպքում պատմիչի այն խոսքերը, թե կաթողիկոսը զրկվեց ձեռնադրության իրավունքից և իջեցվեց արքունի եպիսկոպոսի աստիճանին, պետք է վերադրել հատկապես Հայաստանի կայսերական մասում կաթողիկոսական իշխանությունը կրողին:

Ասենք, որ նույն այս խոսքերը կիրառելի են հայոց կաթողիկոսի վերաբերյալ նաև մինչև բաժանումը: Ձեռնադրության իրավունքի հարցի լուծումը կախված է այն բանից, թե քանի եպիսկոպոս ուներ հայոց եկեղեցին: Ըստ Նիկիայի ժողովի որոշման եպիսկոպոսի ձեռնադրությունը կատարվում է ավյալ թեմի բոլոր եպիսկոպոսների համաձայնությամբ: Բայց եթե դժվար էր լինում բոլորին հավաքել, ապա պարտադիր կերպով պահանջվում էր անվազըն կրեք եպիսկոպոսի ներկայությունը և բոլոր բացակա եպիսկոպոսների գրավոր համաձայնությունը²: Արդյունքը ներկայացվում էր միտրոպոլիտին ի հաստատումն: Մենք գիտենք, որ հայոց

¹ Խորենացի, Գ, 44, Քավա Արժունի, էջ 74, զՀատուկ ոմն Կուկոճացի կացոյց մասին Յունաց եպիսկոպոսապետ:

² Nic. can. 4. 'Επίσκοπον προσήκει μάλιστα μὲν ὑπὸ πάντων τῶν ἐν τῇ ἐπαρχίᾳ καθίστασθαι· εἰ δὲ δυσχερὲς εἴη τὸ τοιοῦτον, ἢ διὰ κατεπίγειουσαν ἀνάγκην ἢ διὰ μῆκος ὁδοῦ, ἐξάπαντος τρεῖς ἐπὶ τὸ αὐτὸ συναγομένους, συμψήφωσιν γινομένων τῶν ἀπόντων καὶ συντιθεμένων διὰ γραμμάτων, τότε τὴν χειροτονίαν ποιείσθαι· τὸ δὲ κῆρος τῶν γινομένων διδῶσθαι καθ' ἐκάστην ἐπαρχίαν τῷ μητροπολίτῃ.

¹ Mansi. IX, 391, Gregorius... ep. Iustinianopolitanorum civitatis magnae Armeniae. 191 էջում նույն անձնավորության անունը կարդացվում է Georgius.

² Մովսես Կաղաբկապաղացի, էջ 212:

³ Քեոզորոսի մասին տե՛ս վերը, էջ 167, Գևորգի մասին՝ Mansi, XI էջ 645 (տե՛ս վերը, էջ 66) և էջ 613 և 993, Նաև էջ 1005, Μαριανός ὄνομα επ. Κιθαρτζων. τῆς πρώτης sc. τετάρτης (Ἄ pro Δ) τῶν Ἀρμενίων ἐπαρχίας.

կաթողիկոսները՝ Գրիգորից սկսած մինչև Պայ թագավորի ժամանակը, բոլորն էլ ձեռնադրվել են Կեսարիայում: Միայն Արիստակեսը ձեռնադրվեց իր հոր կողմից. եթե միայն դա ճիշտ է, ապա ուրեմն՝ Արիստակեսի ձեռնադրությունը կատարվել է հավանաբար մինչև Նիկիայի ժողովը, երբ առանձին եպիսկոպոսներին, կարող է պատահել, տրված է եղել այդպիսի իրավունք: Եթե Հայաստանում լինեք զոհն երեք եպիսկոպոս, կաթողիկոսի ձեռնադրությունը կկատարվեք Հայաստանում, իսկ հետո կներկայացվեք Կեսարիայի աթոռի վաղերացմանը: Փափառուք պատմում է, որ Ներսեսին հրաժարացնելուց հետո Արշակ թագավորը հրավիրեց հայ եպիսկոպոսներին, որպեսզի կաթողիկոս ձեռնադրեն Չունակին, բայց նրանք հրաժարվեցին, և միայն Աղձնիքի և Գորգուքի եպիսկոպոսները ներկայացան և կատարեցին թագավորի ցանկությունը¹: Ծշմարտությունն այն է, որ հայ եպիսկոպոսներ չկային, և այդ պատճառով էլ Արշակը ստիպված էր դիմել շրջակա նահանգներին ներկայացուցիչներին, որոնք փաստորեն գտնվում էին Ասորիքի եկեղեցու կազմում: Հայերը հնարավորություն չունեին իրենց համար եպիսկոպոսներ կամ կաթողիկոսներ ընտրել առանց հարևան եկեղեցիներին դիմելու. երբ պատմիչն ասում է, թե Կեսարիայի եպիսկոպոսը հայերին զրկեց ձեռնադրության իրավունքից, սխալ կերպով այդ պահին է վերագրում այն իրադրությունը, որի մեջ հայոց եկեղեցին գտնվում էր մինչ այդ:

Մենք սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայոց եկեղեցու հերքարիտիան, որ բաղկացած էր միայն Գրիգորի և Աղբիանոսի տոհմերից, սկսեց զարգանալ Ներսես կաթողիկոսի ժամանակից: Նկարագրելով եկեղեցու ծաղկումը նրա օրոք՝ պատմիչը ասում է. «բազմացույց զկարգս պաշտօնէից... և յամենայն զաւառս կացույց տեսուչս եպիսկոպոսս»²: Նույնպիսի իմաստ ունեն պատմիչի այն խոսքերը, թե «պատիւ հարցն եպիսկոպոսաց յամենայն զաւառս հայոց յաճախէր ըստ արժանի իրեանց»³: Այն խառն շրջանը, որ վրա հասավ Պայից հետո, պետք է նպաստեք եկեղեցական հերքարիտիայի զարգացմանն ու ընդարձակմանը: Թագավորական իշխանությունը հետզհետե թուլանում և կորցնում էր զապիշ գործոնի իր

¹ Փափառու, Գ, ժե:
² Նույն տեղում, Ե, իա:
³ Նույն տեղում, Ե, լա:

նշանակությունը՝ բարենպաստ վիճակ ստեղծելով երկրում ֆեոդալական ուժերի ծավալման համար: Պայի հաջորդ և կայսրի հովանավորությունը վաղեղ վարապետի կարճատև թագավորությունից հետո սկսվեց սարարակա Մանգիկ Մամիկոնյանի խնամակալությունն շրջանը, որի յոթնամյա իշխանությունը նվիրված էր նախ և առաջ նախարարական վարչակարգի կանոնադրմանը¹: Այդ օրից ի վեր սկսվում է նաև եկեղեցական կազմակերպության համապատասխանեցումը նախարարական վարչակարգին. եկեղեցական իշխանությունը բաշխվում է առավել ազդեցիկ իշխանական տոհմերի միջև՝ նրանցից յուրաքանչյուրի համար առանձին եպիսկոպոսություն հաստատելու միջոցով: Այստեղ մենք չենք հանդիպում միտրոպոլիտական կազմակերպության, չենք տեսնում եկեղեցական թեմերի բաժանման տերիտորիալ սկզբունք²: Եկեղեցական վարչական միավորը համապատասխանում է նախարարական տիրույթներին՝ ավլալ նախարարական տոհմի տերապետության տակ գտնվող կալվածքներին՝ բոլորովին անկախ նրա ծախալից: Հիշյալ ժամանակաշրջանում, մինչև Արշակունիների տնկումը, եկեղեցական հիերարխիան այնքան աճեց, որ 451 թվականին արդեն ունեւ

¹ Փափառու, Ե, իւք. «յոթնեայն զաւառս կացացանէր Մանուէլ նահապետս և տեսքս զաւառաց զաւառաց»:

² Եկեղեցական հարարությունների լարվածության ժամանակ հույներն այս հանգամանքը օգտագործեցին հայերի դեմ: Նշանավոր գիտնական Սողոմոն Հարանց հոր վկայությամբ, որ մեջ է բերում պատմիչ Մովսես Կաղանկատվացին, նրանք նշում էին, որ եկեղեցական հերքարիտիայում պետք է լինի ինը դաս. «չպտրիարք, որ է հարապետ և արքեպիսկոպոս, որ կուշի եպիսկոպոսապետ և կաթողիկոս, մետրոպոլիտ և եպիսկոպոս, քահանա, սարկաւազ, կեսարկաւազ, ընթերցող ու փառաբան և ասում էին «եթէ ողջամտութեամբ հաստատւի, խոստովան լիւրս, եթէ ով է պատրիարքն ձեռք ձեռք հարցնում էին, թե հայոց եկեղեցին տիեզերական իբրս պատրիարքներից որին է ենթակա, քանի որ սուրբ Գրիգորը Կեսարիայում միայն արքեպիսկոպոս ձեռնադրվեց: Այդ առարկությունների ազդեցության տակ՝ «վրան մեծարանալիան յունաց, որ փորձացուցանել ջանային զկայս հանգստեան Թաղէոսի առաքելոջ՝ լուծել եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ», հայերը աշխատում էին ստեղծել պակասող բարձր աստիճանները և Մարզպետական եպիսկոպոսին, իսկ հետո՝ Սյունաց եպիսկոպոսին նշանակեցին միտրոպոլիտ: Ըստ մի այլ վկայության պատրիարք համարվեց հայոց կաթողիկոսը, արքեպիսկոպոս՝ Աղվանից կաթողիկոսը, իսկ միտրոպոլիտ՝ Սյունաց, Վրաց և Մարզպետական եպիսկոպոսները: Մովսես Կաղանկատվացի, Թ, իւք: Հովման կարգիլու, էջ 29: Սրբելյան, գլ. 2:

շուրջ 18 եպիսկոպոս, որոնք նախարարական կարևոր տոհմերի ներկայացուցիչներ էին:

Եպիսկոպոսներից մեկը կրում էր կաթողիկոս *καθολικός*¹ տիտղոսը և նրանց մեջ գրավում էր ճիշտ նույն դիրքը, ինչ-որ թագավորը նախարարների մեջ, այսինքն՝ *primus inter pares*. Եպիսկոպոսները, ինչպես և նախարարները, կոչվում էին *աէր* և ճիշտ այնպես, ինչպես որ նրանք հանդիսանում էին նախարարական մարզերի ներկայացուցիչներ, նույն ձևով էլ կաթողիկոսը համարվում էր նախ և առաջ արքայական մարզի, այսինքն՝ Այրարատի՝ Արշակունիների կալվածքների եպիսկոպոս: Միանգամայն ճիշտ են պատմիչի վերջը մեջ բերած խոսքերը, թե կաթողիկոսը արքունիքի եպիսկոպոսն էր և օրհնում էր արքայական սեղանը²:

Հոգևոր կոչումը և իշխանությունը, նախարարական իշխանության նման, նշանավոր տոհմերի ժառանգական սեփականությունն էին: Կայսերական եկեղեցու համար այս երևույթը, որը 692 թվականի Տրուլի եկեղեցական ժողովում քննության նյութ դարձավ, տարրինակ և անհասկանալի էր թվում: «Տեղեկանալով այն մասին, — ասված է ժողովի 33-րդ որոշման մեջ, — որ հայոց երկրում կղերական դասի մեջ են ընդունվում միայն հոգևոր ծագում ունեցող անձնավորությունները, որով այդպես վարվողները նմանվում են հրեից սովորությունը, որոշում ենք, որ այսուհետև եթե որևէ մեկը ցանկանում է կղերական դասնալ, չպետք է նայել ծա-

¹ Նիկիայի ժողովի կանոնների հայերեն թարգմանության մեջ *μητροπολίτης* թարգմանված է կաթողիկոս (Ն. Մելիք-Փանգոյան, Հայոց եկեղեցական իրաւունքը, էջ 256): Ըստ Փավստոսի Գ, դ Կեսարիայի եպիսկոպոս Նիզեքեսուր՝ նա, որ ձեռնադրեց Ներսեսին, կոչվում էր «կաթողիկոսաց կաթողիկոս», որ համապատասխանում է միտրոպոլիտների միտրոպոլիտ արտահայտությանը, որպիսին էր Կեսարիայի եպիսկոպոսը: Գիտնականների կարծիքով *καθολικός-կաթողիկոս* նախադաս նշանակում էր ֆինանսական պաշտոնյա և ապա փոխանցվել է հայոց, վրաց և ասորաց եկեղեցու պետերին (Gelzer, *Die Anfänge*, p. 139. 166ffևևև, Հնախոս. Գ, էջ 251): Զ դարի հեղինակ Պրոկոպիոսը հիշյալ տիտղոսը հասկանում էր բառացի իմաստով՝ *τό τε τῶν χριστιανῶν ἱερέα καθολικὸν καλοῦσι τῆ Ἐλληνικῶν φωνῆ, ὅτι δὴ ἐφ᾿ἑστίαθεν εἰς ὧν ἅπασι τοῖς ταύτη χωρίοις. Pers. II 25, p. 263. Եստ հնարավոր է, որ *καθολικός* փոխ. *καθολικός ἐπίσκοπος* թեմի պիսկոպոս եպիսկոպոսի սիլաբական կոչումն էր, որ հետո կոչվել է *ἐπίσκοπος* *μητροπολίτης*, քանի որ նստում էր թեմի մայրաքաղաքում:*

² Փավստոս, Ե, իթ, բրայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն ի վերոյ միայն նստէր և հաց օրհնէր թագաւորացն:

գումին, այլ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյոք նա արժանի՞ է հոգևոր կոչման ըստ սուրբ կանոնների մեջ հաստատված պահանջների և ապա ձեռնադրել նրան, անկախ այն բանից, թե արդյոք նրա նախնիները հոգևորական ծագում ունեն, թե՛ ոչ¹:

Տրուլի եկեղեցական ժողովին ներկա էին մի քանի հայ եպիսկոպոսներ, որոնց թվում նաև Կիթաոնի Մարիանոս եպիսկոպոսը: Ըստ երևույթին նրանք են վերոհիշյալ տեղեկության աղբյուրը, և նրանց նախաձեռնությամբ էլ հարցը հանձնվել է եկեղեցական ժողովի քննությանը: Այսպիսով, հիմք չկա կասկածի տակ առնելու եկեղեցական ժողովին ներկայացված ավյալների հավաստիությունը: Այստեղ խոսք չի կարող լինել Հին Կտակարանի կանոններին հետևելու մասին, ինչպես ենթադրում էին ժողովի մասնակից հայրերը: Եթե կա նմանություն, ապա այն պետք է բացատրել նրանով, որ հայ եկեղեցական հիերարխիան, ինչպես և Հին Կտակարանի քահանայությունը, զարգացավ մի այնպիսի միջավայրում, որտեղ գործում էին տոհմական հարաբերությունները: Ժառանգականությունը և նմանության մյուս գծերը ոչ թե ընդօրինակման, այլ բացառապես սոցիալական այն պայմանների ընդհանրության արդյունք են, որոնց մեջ հանդես եկան հայ եկեղեցին և հին հրեական հոգևորականությունը²:

Ժառանգական էր նաև կաթողիկոսական իշխանությունը, որը

¹ Trull. can. 33. 'Ἐπειδὴπερ ἔγνωμεν ἐν τῆ Ἀρμενίαν χώρᾳ μόνους ἐν κλήρω τοὺς ἐκ γένους ἱερατικοῦ κατατάττεσθαι, ἰουδαϊκοῖς ἔθεσιν ἐπομένους τῶν τοῦτο πράττειν ἐπιχειροῦντων, τινὰς δὲ αὐτῶν καὶ μὴ ἀποχειρομένουσ ἱεροφάλλτας καὶ ἀναγνώστας τοῦ θείου νόμου καθίστασθαι, σουμεῖδομεν, ὥστε ἀπὸ τοῦ νῦν μὴ ἐξεῖναι τοῖς εἰς κλήρον βουλομένοις προάγειν τινὰς εἰς τὸ γένος ἀποβλέπειν τοῦ προχειρίζομένου, ἀλλὰ δοκιμάζοντες, εἰ ἄξιοι εἶεν κατὰ τοὺς τεθέσντας ἐν τοῖς ἱεροῖς κανόσιν θροῦς ἐν κλήρω καταλεγῆναι, τούτους ἐκκλησιαστικῶς προχειρίζεσθαι, εἴτε καὶ ἐκ προγόνων γεγόνασιν ἱερέων εἴτε καὶ μὴ' ed. cit. p. 166.

² Հրեության հետ եղած նմանության մասին խոսում է նաև Գեյզերը, անկախ Տրուլի ժողովից. 'der Katholik hat thatsächlich wenig Aehnlichkeit mit dem christlichen Episcopat, sondern erinnert vielfach an jüdische und heidnische Vorbilder. Dahin gehört vor allem die Erblichkeit des Hohenpriesteramtes', *Die Anfänge*, p. 140: Այդ առանձնահատկությունները բացատրվում են նախարարական միջավայրի ազդեցությամբ և ոչ թե հրեության, ինչպես սխալ կերպով կարծում է հիշյալ գիտնականը և նրանից հետո նաև Simon Weber, *Die Kathalische Kirche in Armenien*, p. 218.

Լուսավորչի տոհմի ձեռքում մնաց այնքան ժամանակի, քանի դեռ քաղաքական իշխանությունը գտնվում էր Արշակունիների ձեռքում: Երբ Ծ դարի սկզբում վերացավ Արշակունյաց իշխանությունը, միաժամանակ հարց հարուցվեց զահրենկեց անկու Սահակ կաթողիկոսին: Այդ ծրագրի իրագործումով կաթողիկոսական աթոռ անորոշ վիճակի մասնվեց: Ինչպես եպիսկոպոսները համարվում էին զանազան նախարարությունների եկեղեցական ներկայացուցիչներ, այնպես էլ կաթողիկոսը ենթարկվում էր թագավորին և իբրև արքունի եպիսկոպոս՝ նշանակվում էր Արշակունիների կողմից: Նրանցից հետո այդ իրավունքն անցավ պարսից թագավորին: Բայց ո՛չ պարսից դրածոները՝ Սուրմակ, Բրթիշո և Շմուիլ եպիսկոպոսները, ո՛չ Սահակի մերձավոր աշակերտները՝ Մեսրոպը և Հովսեփը, որոնք կառավարում էին եկեղեցին, ոչ թե կաթողիկոսներ էին համարվում, այլ միայն տեղապահներ: Պատճառն անկասկած այն է, որ եկեղեցական միջավայրում իշխում էր ժառանգականության կարգը, և երբ ընդհատվում էր օրինական ժառանգների գիծը, այն հարցը, թե ում պետք է անցնի աթոռը, մնում էր բաց և սպասում էր լուծման: Հասկանալի է, թե ինչու այդ դեպքում նորից ասպարեզ է գալիս Աղբիանոսի մոռացված, բայց վաստակաշատ տոհմը, և աթոռի վրա մենք տեսնում ենք այդ տոհմի եպիսկոպոսներին՝ Մելիտային և Մովսեսին¹: Այս հարցի լուծման այդ փորձը պատմականորեն չհաջողվեց: Հաջանորեն վահան Մամիկոնյանի հովանավորության շնորհիվ Աղբիանոսյաններից հետո կաթողիկոսական աթոռը գրավեց Մամիկոնյանների նահանգի՝ Տայքի եպիսկոպոս Գյուտը:

Ե դարի վերջում հայոց ապստամբության բարեհաջող ելքից հետո ամրապնդվեց եկեղեցու դրությունը՝ հոգևորականության նշանակությունը սկսեց աճել: Եպիսկոպոսների մրցակցության հետևանքով, և թերևս ոչ առանց հարևան եկեղեցիների ազդեցության, որոնց հետ այդ նույն ժամանակ շփումը սերտացավ, կաթողիկոսական իշխանության հարցը լուծվեց ընտրական սկզբունքի հաղթանակով:

Պատրիարք-կաթողիկոսից հետո եկեղեցական կյանքում առավել մեծ նշանակություն ունեց Մամիկոնյանների եպիսկոպոսը: Այստեղ արտացոլված է նախարարական վարչակարգի ազդեցու-

թյունը: Ինչպես Արշակունիների օրոք և նրանցից հետո նախարարության գլուխ էին կանգնած Մամիկոնյան տոհմի ժառանգական սպարապետները, այնպես էլ եկեղեցական գործերում կաթողիկոսին առընթեր գլխավոր դեկավար դերը խաղում էր նույն տոհմի հոգևոր ներկայացուցիչը: Հայտնի է այն աչքի ընկնող դերը, որ Զ դարի եկեղեցական հարցերում խաղացել է Մամիկոնյանների Ներշապուհ եպիսկոպոսը:

Եթե եկեղեցու կազմակերպության նախարարական հիմունքի մասին մեր պաշտպանած միտքը ձիշտ է, պետք է որ որոշ համապատասխանություն լինի իշխանական տների և եկեղեցական ներկայացուցիչների միջև: Մենք իրավունք ունենք սպասելու, որպեսզի ամենաազդեցիկ նախարարական տոհմերը ունենային իրենց եպիսկոպոսությունները և ընդհակառակը: Եվ իրոք, եպիսկոպոսների ցանկը համեմատելով նախարարությունների ցանկի հետ, գտնում ենք, որ բոլոր հզոր տոհմերը ունենին իրենց եկեղեցական ներկայացուցիչները: Նախարարության տերիտորիալ հարաբերությունը, որ մենք քննեցինք վերը, նրանց համեմատական հզորության ամենալավ չափանիշն է: Աննշան են հատկապես այն նախարարությունները, որոնց կալվածքները ընկնում են խոշոր նախարարությունների տիրույթների մեջ: Հենց այդ նախարարություններն էլ, հազվադեպ բացառությամբ, եկեղեցական հիերարխիայում չունեն իրենց ներկայացուցիչները:

¹ Փառվեցի, էջ 110:

ՆԱԽՆԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍ

Գ Լ Ո Ւ Խ XIII

ՆԱԽՆԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍ

Հարցադրումը և նրա լուծման մեթոդները: Գրական և կոնստրուկտիվը հարցի ստումնասիրության մեջ: Պետականության սկզբունքը Արեւելում: Տոնակաճ զարգացումները որպես պետականության միջ: Σ Ο Σ Τ Η Μ Α μ ε ι ζ ο ν: Տոնակաճ իրավաբանական Իրանում և նրա տարրերը՝ ταυτα, viθa, zantu, dahiu-zana: Տոնակաճ կյանքը և habačaris-bazar, Էլեսթերա άγορα: Պարթևական ժամանակաշրջանում տոնակաճ երկրագործների փոխա-կերպումը ֆեոդալականի: Արշակունյաց կայսրության կառուցվածքը:

Նախարարության կուրսերը, որպես պատմական հաստատու-թյուն բնորոշելու համար ինքնին շատ կարևոր է հենց հարցա-դրումը: Մեր անմիջական նպատակն է ուրվագծել նախարարու-թյան վիճակը մեզ զբաղեցնող Հուստինիանոսի ժամանակաշրջա-նում: Հետևաբար նախարարության որակական կողմերի ուսում-նասիրությունը ևս պետք է կատարվեր այդ սահմաններում, այ-սինքն՝ այն չափով, որչափով դա վերաբերում է ավյալ շրջանին: Բայց արդյոք հնարավո՞ր է իրազործել այդպիսի խնդիր խստա-պահանջ գիտության տեսակետից:

Նշված ժամանակաշրջանում նախարարությունը որոշակի բեկում էր ապրում՝ թևակոխելով զարգացման նոր փուլ: Մինչդեռ նախարարության, ինչպես և հայ կյանքի յուրաքանչյուր այլ կող-մի զարգացումը ընթանում էր զիջողազածե ոչ միայն ժամանակի, այլև տեղի առումով: Կյանքն ամենևին էլ հավասարաչափ չէր ըն-թանում երկրում: Այն ժամանակ, երբ երկրի մի մասում որոշակի մի վիճակ դեռ նոր էր վրա հասնում, մյուսում այն անցնում էր որպես արդեն իր դարն ապրած: Աշխարհագրական բազմազան պայմանները և երկրի բազմազան ընդհանուր կյանքի հետ ունե-ցած ոչ նույն աստիճանի առնչությունը ստեղծում էին այնպիսի բնակավայրեր, որոնք միմյանցից տարբերվում էին և՛ մշակութա-

յին, և՛ կենցաղային առումով: մի մասում շարունակում էին դեռևս գոյություն ունենալ կյանքի հին ձևերը, երբեմն պահպան-վում էին շատ հին անցյալի ավանդները, մինչդեռ մյուս տեղե-րում սոցիալական կառուցվածքը փոփոխվում էր մի քանի անգամ:

Պատմագրությունը անզոր է մեր առջև վերականգնելու սո-ցիալական պատկերի ամբողջ խայտարակետությունը: Դպրությունը երևան եկավ, երբ Արշակունյաց կարգերը սկսել էին երերալ: այդ և դրանից հետո եկող շրջանին վերաբերող հուշարձանները քաղա-քական բնույթ չեն կրում: Ծիշտ է, զրանք պարունակում են նա-խարարական կենցաղի այս կամ այն կողմն արտացոլող շատ ար-ժեքավոր ավյալներ, բայց, ընդհանուր առմամբ, զրանք բավարար չեն ամբողջական բնութագրերը տալու համար, մանավանդ որ հաճախ դրանց բուն իմաստը չենք հասկանում և ստիպված ենք լինում ղլմել կոահումների: Եղած տեխնիկական տերմինները ճիշտ ստուգաբանելու դեպքում կբացահայտվեն նախարարական անցյալի շատ էական կողմեր: Փորձել նրանց բուն իմաստը ճշտել բնագրային բաղդատություն միջոցով, անհուսալի մի գործ է: Միևնույն հեղինակի մոտ միևնույն տերմինը գործ է ածվում բո-լորովին տարբեր իմաստներով: Այդպիսի դեպքերում զրանք ղի-տել որպես ոճական վրիպումներ կամ խմբագրական թերություն-ներ, միշտ չէ, որ կարող է ճիշտ լինել: Հուշարձանները, իհարկե, ենթարկվել են վերամշակման և միանգամայն հնարավոր է, որ մեկ արտահայտություն փոխարինվել է մյուսով: Բայց, համենայն դեպս, տերմինների իմաստի անկայունությունը և նրա փոփոխու-թյունները միշտ զրանով բացատրել չի կարելի: Շատ տերմիններ հանդիսանում են հնագույն ժամանակների սեփականությունը և դարեդար փոխանցվելով, նոր երանգավորում են ստանում փոփոխ-վող հարաբերությունների համաձայն: Դպրության շրջանում զրանք արդեն հանդիսանում են բարդ գաղափարներ ներքին հարուստ բովանդակությամբ: Բացահայտել յուրաքանչյուր տերմինի պատ-մական շերտավորումները, նշանակում է որոշ դեպքերում ուսում-նասիրել նախարարության ծագումնաբանական զարգացումը:

Նախարարական վարչակարգի պատմությունը նվիրված մեզ մատչելի գրական աղբյուրները ամբողջական գաղափար չեն տա-լիս նրա մասին: Օգտվելով արևմտաեվրոպական ֆեոդալիզմի նշանավոր ուսումնասիրողի համեմատությունից, կարող ենք ասել, որ նախարարությունը նման է մի հնամենի ծառի: հուշարձանները

լավագույնը դեպքում մեր հայացքի առջև բաց են անում միայն այդ ծառի տերևներն ու կատարը, իսկ արմատները թաքնված են, և նրանց հասնելու համար պետք է փորել հողը¹: Այդպիսի նպատակի համար զուտ բանասիրական մեթոդը, որ հիմնված է բնագրերի ուսումնասիրության և բազդատուության վրա, բավարար լինել չի կարող և ցանկալի արդյունքներ չի տա: Անհրաժեշտ է ուղղություն տվող մի կոնցեպցիա, որը մեզ բերեր և կանգնեցներ ծառի թաքնված արմատների հետքերի վրա: Եվ որպեսզի այդ կոնցեպցիան գիտականորեն ընդունելի լինի, ապա այն պետք է վերցված լինի պատմական այն միջավայրից, որի մեջ գտնվում էին հայերը:

Նախարարությունը սոցիալ-քաղաքական մի հաստատություն է, որի արմատները պետք է փնտրել իրանական պետությունների սոցիալ-քաղաքական ընդհանուր պայմանների մեջ: Հայաստանի կյանքը զարգացել է այդ պայմաններում և այն պետք է որ ձևավորվեր նույն այն պետական-իրավական հասկացությունների և շահանիշների ազդեցության տակ, որոնք գոյություն ունեին Իրանում: Բնութագրելով իրանական պետականությունը նրա հիմնադրման ժամանակ, մենք ձեռք կբերենք մի հենարան, որը մեզ հնարավորություն կտա ի մի բերել նախարարությունը վերաբերող ցարտցրիվ նյութերը և դրանցից ստեղծել ամբողջական մի ինչ-որ բան:

Պետականությունը, որպես իրավական համակարգ, Արևելքում այլ կերպ է հասկացվել և կազմակերպվել, քան Արևմուտքում: Եթե Արևմուտքում պետական գաղափարի զարգացման մեջ առավել նշանակություն են ունեցել քաղաքային կազմակերպությունները, ապա Արևելքում նույնպիսի նշանակություն են ունեցել տոհմական միությունները: Քաջատեղյակ գիտնականների կարծիքով հռոմեական պետությունը հանդիսանում է քաղաքների միություն, իսկ պարսկական պետությունը մարմնավորում է տոհմական քաղաքական միավորման բարձրագույն ձևը²:

¹ Montesquieu, *Esprit des lois*, liv. 30, ch. 1.
² «Das Römische Reich ist zu denken als aus Städte bestehend, welche der Kaiser beherrscht» ստում է անտիկ աշխարհի քաջատեղյակներից մեկը, Kuhn, *Die Verfassung des Römischen Reiches*, Vorwort, p. IX. Մյուս

Իրանի պետական կյանքի հետագա զարգացման մեջ տոհմական հարաբերությունները շարունակում էին գոյություն ունենալ իբրև հասարակական կենցաղի հիմնական մակարդ՝ անկախ դերագույն իշխանությունից, որը մի հարստությունից մյուս հարստությանն էր անցնում: Պատմության ասպարեզ իջնելու ժամանակ պարսիկները բազկացած էին բազմատեսակ ցեղերից. նրանց հարևան մարերը նույնպես բազկացած էին բազմաթիվ վանազան ցեղերից: Անցնելով մարական ցեղերի գլուխ՝ մար Դեյուկը, խորտակեց ասորեստանցիների տիրապետությունը, իսկ Կյուրոսը համախմբելով պարսկական բաժան-բաժան ցեղերը, առաջնորդեց նրանց մարերի դեմ և սկիզբ դրեց Աքեմենյանների տիրապետությանը: Մակեդոնացի աշխարհակալը իր հերթին տապալեց Աքեմենյանների իշխանությունը, և նրա հաջորդները իշխեցին այնքան ժամանակ, մինչև որ ստիպված եղան նահանջել պարթևական ցեղից սերված ավելի ահեղ տիրակալների առջև:

Այս բոլոր հարստությունների փոփոխությունների ժամանակ իրանական պետությունը հանդես էր գալիս որպես ցեղերի լայն միություն՝ σὺ σ τ η μ α μείζον, որոնք միավորվել էին կամավոր կերպով, իսկ մասամբ էլ բռնի ուժով: Միությունը գլուխ կանգնած էր առավել սերտ համախմբված և ավելի լավ կազմակերպված տոհմը: Այդպիսին էր Պասարգանների տոհմը, որից ծագում էին Աքեմենյանները: Վերջիններս միապետության վրա նայում էին ինչպես իրենց տոհմի սեփականություն կամ taumata, Դարեհը այլ կերպ չի խոսում, քան տոհմի անունից: Նրա հաճախակի արած հայտարարություններից երևում է, որ նրա գործունեության հիմքում ընկած էին գերդաստանի, տոհմի շահերը¹:

կողմից Իրանին քաջատեղյակ Եպիդեղ պեղում է՝ «die Verfassung der alten Perser und des alten Irans überhaupt eine Stammesverfassung war». Spiegel, *Über die Iranische Stammverfassung*. Abh. d. Bayer. Ak. München. 1855, p. 685.

¹ Weisbach, Keilinsch. I § 12. Գարեհն ստում է. xšatram tya Gaumata hya Magus adinā... amāxam taumāyā, այսինքն՝ այն թագավորությունը, որ Գաումասա մողը խլեց Գամբիանից, վաղուց ի վեր պատկանում էր մեր տոհմին, կամ § 14, xšatram tya hacā amāxam taumāyā parābartam, այսինքն՝ այն թագավորությունը, որ խլվեց մեր տոհմից, ես կրկին վերականգնեցի. Գարեհը իր գործունեությունը բնորոշում է նրանով, որ ինքը լար չի եղել, ստախոս չի եղել, բանապատդ չի եղել, այլ բարենաճ է եղել նրանց նկատմամբ, ովքեր օգնել են իր viθ-ին և

Արեմենյան տոհմի գերիշխանության համար պայքարն սկզբում ընթանում էր մարական մոզերի, իսկ հետո նաև ուրիշ ցեղերի դեմ, որոնք ձգտում էին անջատվել: Համառ պայքարի շնորհիվ Արեմենյաններին հաջողվեց համախմբել ցեղերը և ստեղծել միասնական մեծ միություն, $\sigma \upsilon \sigma \tau \eta \mu \alpha \mu \epsilon \tilde{\iota} \zeta \omicron \nu$, ինչպես արտահայտվում են անցյալի հեղինակները¹:

Պարսիկների իշխանությունն ընդունում են մի քանի տասնյակ ալլացեղ երկրներ. դրանք կոչվում էին dahiu, իսկ նրանց պետերը՝ dahiu-pati. Dahiu-ն սանսկրիտ *dasi-*-ի՝ թշնամի և սարուկ բառի իրանական ձևն է և նշանակում է թշնամիների կամ սարուկների երկիր՝ բնորոշ մի դարձվածք, որ ճշտորեն արտահայտում է տիրապետող տոհմի վերաբերմունքը ուրիշ ցեղերի նկատմամբ: Dahiu-ն իրենից ներկայացնում էր ավելի կամ պակաս միատարր էթնիկական խմբակցություն, այսպես կոչված՝ zana: Արձանագրությունների մեջ պարսից թագավորը կոչվում է *χ̄šayaθia dahiunam vispazanānām*, կամ *paruv zanānām*², այսինքն՝ dahiu գանազան և բազմաթիվ zana-ներով, ցեղերով: Zana-ն այն հասկացության էթնիկական արտահայտությունն է, որին համապատասխանում է տերիտորիալ dahiu-ն:

Ցեղերի կամ dahiu-ների կախվածությունն արտահայտվում էր նրանով, որ նրանք որոշակի հարկ՝ *bajim abaranta* էին վճարում: Որպես մարզային միավոր կամ հարկատու շրջան, dahiu-ն կոչվում էր *šatra*, իսկ պետը՝ *šatrapa* կամ *šatra-pati*, այլ խոսքով, այն, ինչ որ տոհմական իշխանության տեսակետից համարվում էր dahiu, քաղաքացիական վարչական բաժանման տեսակետից համարվում էր *šatra*: Այս երկու միավորները իրենց

ընդհակառակն՝ խոստրեն պատժել է նրանց, ովքեր թշնամարար են վերաբերվել իր *viθ-*-ին. § 62, *naiy arika ḡham, naiy draujana ḡham, naiy zurakara ḡham... hya hamataxšatā namā viθiyā avam ubartam abaram* և այլն:

¹ Պարսիկները իրենց նստավայրը Շոդ փոխադրեցին նրա համար, որպեսզի շոդցիները ալլես անջատման մասին չմտածեն և մային մեծ միության կազմի մեջ և այնպես շարքին, ինչպես հերոսական ժամանակներում: $\tau \omicron \mu \eta \delta \acute{\epsilon} \pi \omicron \tau \epsilon \kappa \alpha \theta' \acute{\epsilon} \alpha \upsilon \tau \eta \nu \tau \eta \nu \Sigma \omicron \upsilon \sigma \iota \delta \alpha \pi \rho \alpha \gamma \mu \acute{\alpha} \tau \omega \nu \mu \epsilon \gamma \acute{\alpha} \lambda \omega \nu \acute{\epsilon} \pi \eta \beta \omicron \lambda \omicron \nu \gamma \epsilon \gamma \omicron \nu \epsilon \nu \alpha \iota$, $\acute{\alpha} \lambda \lambda' \acute{\alpha} \epsilon \iota \upsilon \phi' \acute{\epsilon} \tau \epsilon \rho \omicron \iota \varsigma \upsilon \pi \acute{\alpha} \rho \xi \alpha \iota \kappa \alpha \iota \mu \epsilon \rho \epsilon \iota \tau \epsilon \tau \acute{\alpha} \chi \theta \alpha \iota \sigma \upsilon \sigma \tau \eta \mu \alpha \tau \omicron \varsigma \mu \epsilon \tilde{\iota} \zeta \omicron \nu \omicron \varsigma$, $\pi \lambda \eta \nu \epsilon \iota \acute{\alpha} \rho \alpha \tau \omicron \pi \acute{\alpha} \lambda \alpha \iota \omicron \nu \tau \omicron \kappa \alpha \tau \acute{\alpha} \tau \omicron \upsilon \varsigma \eta \rho \omega \alpha \varsigma$. Str. p. 728 = Teub. p. 1014.

² Weisbach, *Keilinsch.* pp. 44, 40, 42.

մեծությունը միշտ չէ, որ հավասար էին իրար, երբեմն մի քանի dahiu կազմում էին մեկ *šatra*: Արեմենյանների օրոք dahiu-ների թիվը հասնում էր 23—28-ի, իսկ Դարեհի կատարած բաժանումով ամբողջ կայսրությունը բաժանվել էր 20 սատրապությունների: Ըստ իրենց ուժի և ծավալի dahiu-ները տարբերվում էին միմյանցից: Դրանցից մի քանիսը ինքնուրույն թագավորություններ էին. նրանց պետերը կոչվում էին *χ̄šayaθia* = *šah*, և նրանց նկատմամբ պարսից թագավորը *χ̄šayaθiānām χ̄šayaθia* էր, այսինքն՝ *šahān šah*. Dahiu էին Պարսկաստանը, Մարաստանը, Պարթևաստանը, Հայաստանը, Բարեխունը և այլն:

Տոհմային այն բարձրագույն մեծությունը, որ իրեն ինքնուրույն միավոր մտնում էր կայսրության կազմի մեջ, *dahiu*-ն կամ *zana*-ն էր: Zana-ն ուներ իր ներքին կազմակերպությունը. սա բաժանվում էր առանձին տոհմերի, իսկ վերջիններս էլ իրենց հերթին ստորաբաժանվում էին ավելի մանր խմբերի: Այսպես, օրինակ, պարսիկները և մարերը, որոնք կազմում էին մեկ dahiu, բազկացած էին. առաջինները՝ տասը, իսկ վերջինները՝ վեց տոհմերից¹: Պարսից տասը տոհմերից մեկը Պասարգադներն էին, իսկ սրանց ստորաբաժանումներից մեկը՝ Արեմենյանները: Հույն պատմագիրը Պասարգադներին կոչում է $\gamma \acute{\epsilon} \nu \omicron \varsigma$, իսկ Արեմենյաններին՝ $\phi \rho \eta \tau \rho \iota$: Դարեհի արձանագրությունների մեջ Արեմենյանների ընտանիքը նշվում է *tauma* բառով, ուրեմն՝ *tauma*-ն որպես սոցիալական հասկացություն հավասարազոր է $\phi \rho \eta \tau \rho \eta$ -ին: Սոցիալական խմբակցության հետևյալ աստիճանը, որ համապատասխանում էր հունական $\gamma \acute{\epsilon} \nu \omicron \varsigma$ -ին, *zantu*-ն էր: Մարական տոհմերից մեկը կոչվում էր $\acute{\alpha} \rho \iota \zeta \acute{\alpha} \nu \tau \omicron \iota$, այսինքն՝ աղնվական *zantu*, տոհմ, որից կարելի է եզրակացնել, որ *zantu*-ն հենց ութ խմբերից յուրաքանչյուրի կամ $\gamma \acute{\epsilon} \nu \epsilon \alpha$ -ի անվանումն է:

Պարսկական տոհմերը նույն աստիճանավորումն ունեցող սոցիալական միավորումներն էին, ինչպես մարական տոհմերը, ուստի և սրանց նկատմամբ էլ կիրառելի է *zantu* անվանումը:

Այսպիսով, պարսից ամբողջ ժողովուրդը կազմում էր *zana*:

¹ Herod. I 125, $\acute{\epsilon} \sigma \tau \iota \delta \acute{\epsilon} \Pi \epsilon \rho \sigma \acute{\epsilon} \omega \nu \sigma \upsilon \chi \nu \acute{\alpha} \gamma \acute{\epsilon} \nu \epsilon \alpha \dots \Pi \alpha \sigma \alpha \rho \gamma \acute{\alpha} \delta \alpha \iota$, Μαράφιοι , Μάσπιοι . $\tau \omicron \upsilon \tau \omega \nu \text{Πασαργάδοι εἰσὶ ἄριστοι. ἐν τοῖσι καὶ Ἄχαιμενίδαι εἰσὶ φρήτηρ καὶ αἰὲν ἰδ. I 101, ἔσσι δὲ μῦθων τοσάδε γένεα, Βουσαι, Παρητακηνοί, Στρούχατες, Ἀριζαντοί, Βούδοι, Μάγοι.$

Պատարագաները, որպես այդ zana-ի մի տես՝ zantu էին, իսկ Աքեմենյանները որպես zantu-ի մեջ մտնող ընտանիքներից մեկը՝ tauma:

Արձանագրությունների մեջ մենք հանդիպում ենք նաև viθ և k̄āra, manā taumāyā կամ amaxam taumaya-ի կողքին պատահում են նաև viθam tyam amāxam, այսինքն՝ մեր tauma-ն և մեր viθ-ը: Kar a-ն կիրառվում է ամբողջ ժողովրդի նկատմամբ՝ թե՛ պարսից, թե՛ մարաց, օրինակ՝ kara Parsa hya viθa-patiy, kara Mada hya viθa-patiy, այսինքն՝ «viθ-երով ապրող պարսից ժողովուրդ, viθ-երով ապրող մարաց ժողովուրդ»¹: Այս արտահայտությունից երևում է, որ kar a-ն բաժանվում էր մի քանի vi θ-երի:

Ի՞նչ կապ ունեն այս տերմինները tauma-ի և zana-ի հետ, պարզ չէ. դրանք կարելի է համարել սոցիալական խմբավորման մի միջին օղակ, բայց ավելի հավանական է, որ viθ-ը tauma էթնիկական հասկացություն տերիտորիալ արտահայտություն է, ինչպես որ dahiu-ն zana-ի նույնպիսի համարմեքը: Ինչ վերաբերում է հատկապես kara-հ գ ո Ր բառին, ապա դա ավելի շատ ռազմական տերմին է և ցույց է տալիս zana-ի ակտիվ, պատերազմի համար պիտանի տարրերը, այստեղից էլ նրա երկրորդ նշանակությունը՝ գ ո Ր ք:

Ավեստական գրականության մեջ հաճախ հանդիպում են nēmana, vis zantu, danhu բառերը որպես արյունակցական կապերով մոտիկ մարդկանց տարրեր սոցիալական միավորումների մի աստիճանակարգ: Համեմատաբար ավելի ուշ ժամանակների մեկնություն համաձայն nēmana-ն բաղկացած էր հինգ զույգ կանանցից և տղամարդկանցից, vis-ը՝ տասնհինգ զույգից, zantu-ն՝ երեսուն, և danhu-ն՝ հիսուն զույգից: Խնդիրը թվական ավելաները չեն, ոչոնք կարող են հասկացվել պայմանական ձևով, կարևորը խմբերի այն հաշորդականությունն է, որ ցույց են տալիս թվերը: Nemāna-ն համակեցություն առաջին աստիճանն է և նշանակում է մեկ հարկի տակ ապրող մարդկանց ընդհանրություն: Նման մի քանի nemana-ներ կաղմում են vis, մի քանի vis-եր՝ zantu, իսկ մի քանի zantu-ներ՝ danhu կամ ժողովուրդ՝ zana:

¹ Weisbach, § 40 և § 16: Նշենք նաև, որ մարական ամբողջ ժողովուրդը կոչվում էր kara, իսկ Huvaxšātara-ի, այսինքն՝ Կրաքսարի հարստությունը՝ tauma:

Հիշյալ խմբերի անդամները համապատասխանաբար կոչվում էին nmanya, visya, zantumā, danhumā, իսկ նրանց պետերը՝ nmāno-paiti, vis-paiti, zantu-paiti, danhu-paiti: Այստեղ չի հիշվում մեկ ծանոթ tauma-ն. թվում է, թե այն փոխարինված է nmāna-ով, որ Դարեհի արձանագրություններում հայտնի է manya ձևով: Բայց մենք արդեն ասացինք, որ tauma-ն տերիտորիալ vis-ի էթնիկական երկվորյակն է, ուստի առավել հավանական է ենթադրել, որ nmāna-ն, որպես սոցիալական հասկացություն, վերաբերում է ավելի ուշ ժամանակներին և համապատասխանում է tauma-ից անջատված ընտանիքին:

Տոհմական տերմիններից մի քանիսը ցույց են տալիս արյունակցությունը term. gent. ինչպես tauma, zantu, zana մյուսները՝ տերիտորիալի ընդհանրությունը term. loci, ինչպես nmāna, viθ, dahiu: Այս տերմինների երկու շարքերի միջև եղած համապատասխանությունը պարզելը դժվար է. ժամանակի ընթացքում որոշ տերմիններ դուրս են մղում մյուսներին, տերիտորիալ տերմինը ստանում է էթնիկական² երանգավորում և այլն: Կարևոր է նշել տոհմական կաղմակերպության օղակները. նրանցից վերջինը dahiu-ն է, որից հետո գալիս է այնպիսի միավորում, որն անհրաժեշտ է գերազույն տիրակալի իշխանություն սակ քաղաքական դաշինք և մեկ պետական միասնություն ստեղծելու համար:

¹ Այս տերմինները հաճախ են հանդիպում ավեստական գրականության մեջ, բայց առանձնապես արժեքավոր է այն մասը, որտեղ այն հարցին, թե որքա՞ն տերեր կան, թվարկվում են շորս պետեր, իսկ հինգերորդն է՝ Զրադաշտը kaya ratavo nmānyō, visyō, zantumō, danbujumo, Zarathustro puxīo. Yasna, XIX, 18: Մի ուրիշ անգամ մեջ է բերվում որանց համանունները՝ nmāno-paiti, vis-paiti, zantu-paiti, danhu-paiti, spanaḡha, vaedyā-paiti. ib. IX 27: Վերջին բառը, որ նշանակում է կրոնի պետ—Zarathustra.

tauma զինգ. taoxman, սերմ, ծիւ և անգլակցություն, սանսկր. takman, հուն. τέχνον, երբիս, τοκεύς, ընող: zantu, սանսկր. jantu, լատին. gen(t)i s, հուն. γένος, հայերեն ծին, jan, zan, այստեղից էլ zana, հայերեն հնա-զանդ:

nmāna, հին պարսկ. manya, man-ից: viθ, սանսկր. veṣ-as, viṣ, լատ. vic-us, հուն. οίκος=οἶκος, սլավ. vici, danhu, սանսկր. dāsi, պարսկ. dēh:

² Օրինակ Դաշեհի արձանագրությունների մեջ viθ-ը դրո՞ծ է ավելում term. gent. իմաստով viθam tyam amaxam gāθva avāstāyam, այսինքն՝ մեր viθ-ը նորից իր տեղը դրի, Op. cit. § 14.

Տոհմի ներքին կյանքի տեսակետից ամենազործուն օղակը պիտի համարել viθ-ը: Որպես արիական ժողովուրդների պատմության և իրավունքի ելակետային պահ համարվում է ոչ թե ընտանիքը, այլ տոհմը-gens-ը, որ մարդկային համակեցություն սկզբնական ձևը եղավ, և որից առաջացան հետագա ավելի բարդ միավորումները: Նրանից առաջացավ նաև նահապետական ընտանիքը, երբ տոհմը ավելի մանր խմբերի տարրալուծվեց: Իրանում այդպիսի ելակետային պահ է, ըստ երևույթին, viθ-ը. Գարեհն իր արձանագրություններում հաճախ է հիշատակում viθ-ը և պաշտպանում նրա շահերը: Պարսիկները և մարերը բաժանվում էին ըստ viθ-երի, viθapaliy, թագավորը հայտարարում է, որ վերականգնեց ուղտը պատր Գառամատայի կողմից ավերված āyadāna-ն և նրանից ետ խեց abāčaris, gaiθamča mānyamča viθibisča, որից երևում է, որ թվարկված հաստատությունները նույնպես տեղարաշխված էին ըստ viθ-երի: Վերջապես աստվածությունները նույնպես կոչվում էին viθ-երի անուններով, bagaibiš viθibis¹: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ viθ-ը և մյուս տերմինները, ինչպես դեռ կտեսնենք, հայ նախարարական տերմինոլոգիայի մեջ չափազանց հետաքրքրական վերապրուկներ ավելցին:

Պարսիկների տոհմական կյանքի մասին հետաքրքրական տվյալներ կան Քսենոփոնի մոտ: Ճիշտ է, հույն հեղինակը մի քիչ միտումնավոր է, բայց նրա հաղորդածը հիմնականում ճիշտ է և լավ է լուսաբանում պարսկական կյանքի մի քանի կողմերը: «Պարսիկները,— ասում է պատմագիրը,— ունեն այսպես կոչված ազատ հրապարակ էլեւթերա ἀγορά, այնտեղ, որտեղ գտնվում են արքայական պալատն ու հասարակական մյուս շենքերը... այն բաժանված է շորս մասի. մեկը երեխաների համար է, մյուսը՝ պատանիների, երրորդը՝ հասուն մարդկանց և վերջինը՝ զինվորական տարիքից դուրս եկածների համար: Ըստ օրենքի նրանք բոլորը ներկայանում են իրենց տեղերը՝ երեխաները, ինչպես և հասուն մարդիկ՝ վաղ առավոտյան, իսկ ծերունիները՝ ինչպես նրանցից յուրաքանչյուրին հարմար է՝ բացի սահմանված օրերը, երբ նրանք պարտադիր կերպով պետք է գտնվեն այնտեղ: Իսկ պատանիները թեթև զինված՝ գիշերները շրջադաշտում են և հսկում

հասարակական շենքերը: Բացառություն են կազմում ամուսնացածները, որոնք, այնուամենայնիվ, պարտավոր են ներկայանալ, երբ իրենց կանչում են, և առհասարակ նրանց հաճախալի բացակայությունը չի խրախուսվում: Այդ մասերից յուրաքանչյուրի վրա կարգված է տասներկուական պետ. չէ՞ որ պարսիկները բաժանվում են տասներկու ֆիլերի կամ ցեղերի: Երեխաների դաստիարակ կարգվում են ծերերից նրանք, որոնք բոլորից ավելի լավ են դաստիարակում երեխաներին, պատանիների համար հասակավորներից ընտրվում են նրանք, որոնք բոլորից ավելի լավ են դաստիարակում պատանիներին. իսկ հասակավորների համար ընտրում են նրանց, ովքեր բոլորից ավելի լավ են սովորեցնում գործադրել օրենքներն ու բարձրագույն իշխանության կարգադրությունները. ծերունիների համար էլ կային ընտրովի պետեր, որպեսզի սրանք էլ կատարեն իրենց պարտականությունները»:

Պատմագիրը այնուհետև կանգ է առնում պարսիկների դաստիարակչական համակարգի վրա: «Երեխաներին սովորեցնում էին նիտ ու աղեղ գործածել, նիզակ նետել. դրանով զբաղվում էին մինչև 16—17 տարեկանները, որից հետո անցնում էին պատանիների դասը: Այս վերջինների դաստիարակությունը կայանում էր նրանում, որ նրանք, ինչպես հիշվեց, տասը տարի շարունակ շրջում էին հանրային շենքերի շուրջը և պահակություն անում, որը զարգացնում էր նաև նրանց զգոնությունը: Յերեկը նրանք գտնվում էին իրենց պետերի տրամադրության տակ՝ հասարակական կարիքների համար: Երբ թագավորը որսի էր գնում, երիտասարդների մի մասը ուղեկցում էր նրան, և, բացի այդ, պետերը նրանց օգտազործում էին պահակային ծառայության, ոճրագործներին որոնելու կամ ավազակներին հետապնդելու համար և առհասարակ այն բոլոր դեպքերում, երբ պահանջվում էին ուժ և արագաշարժություն: Տասը տարի անցնելուց հետո երիտասարդները փոխադրվում էին հասակավորների դասը և այստեղ մնում էին 25 տարի: Նրանք շարունակում էին կատարել պետերի կողմից իրենց վրա դրված պարտականությունները: Պատերազմ գնալիս նրանք զինվում էին ոչ թե նետ ու աղեղով, այլ մերձավոր մարտի համար պիտանի զենքերով՝ կրծքին՝ զրահ, ձախ ձեռքին՝ վահան, ինչպես մենք տեսնում ենք նկարներում, իսկ աջ ձեռքին՝ սուր կամ դաշույն: Հասակավորներից ընտրվում էին պետեր, եթե նրանք արդեն չէին նշանակվել երեխաների դաստիարակներ:

¹ Weisbach, p. 34:

Քսանհինգ տարի հետո, երբ անցնում էր նրանց հիսուն տարին, նրանք փոխադրվում էին, այսպես կոչված, ծերերի դասը, որոնք իսկապես ծեր էին: Ծերունիները երբեք իրենց երկրի սահմաններից դուրս պատերազմի չէին գնում, բայց, տանը մնալով, նրանք վարում էին մասնավոր և ընդհանուր բնույթ կրող դատեր, ունեին նույնիսկ մահապատիժ տալու իրավունք: Նրանք էին ընտրում նաև բոլոր պաշտոնատար անձանց: Այն դեպքում, երբ երիտասարդներից կամ հասակավորներից մեկնումեկը մեղանշում էր օրենքի դեմ, այդ մասին համապատասխան ֆիլարքոսները կամ մեկ ուրիշը հայտնում էր, և ծերերը, լսելով մեղադրանքը, դատավճիռ էին կայացնում. դատապարտվածը ամբողջ կյանքում մնում էր պատվազուրկ¹:

«Պարսիկների հասարակական կարգը պիլի պարզ պատկերացնելու համար,— շարունակում է հեղինակը,— պետք է իմանալ, որ պարսիկների թիվը հասնում էր մինչև 12 միլիոն, այսինքն՝ 120 հազար մարդու. նրանցից ոչ ոք օրենքով զրկված չէ պատվի և իշխանության հասնելուց, և բոլորին էլ հնարավորություն էր տրվում իրենց երեխաներին ուղարկել հանրային դպրոցները: Իրականում, սակայն, իրենց երեխաներին այստեղ ուղարկում են միայն ունևորները, որոնք հնարավորություն ունեին կերակրելու իրենց երեխաներին առանց նրանց աշխատանքի, իսկ սով հնարավորություն չունեն, նա չէր ուղարկում: Հանրային ուսուցիչների մոտ դաստիարակություն ստացածները կարող են մտնել երիտասարդների դասը, իսկ կրթություն չստացածները զրկված էին այդ իրավունքից: Ծիշտ այդպես էլ՝ ով եղև է երիտասարդների դասում և անցել է օրինական դասընթացը, նրան թույլատրվում է անցնել հասակավոր մարդկանց դասը և ձեռք բերել պատիվ ու պաշտոններ. իսկ եթե մեկը երիտասարդների դասում չի եղև, նա չի կարող անցնել հասակավորների դասը: Վերջապես նա, ով ավարտում է հասակավորների դասը անբասիր կերպով, նա դառնում է ծերունի»¹:

Քսենոփոնի վկայությամբ նրա հերոսը՝ Կյուրոսը, անցել է բոլոր դասերով: Պատմագիրը երեխ փորձել է նկարագրել պարսկական տեսակետից իդեալական դաստիարակության համակարգը, այդ պատճառով էլ մանրամասնությունների մեջ հնարավոր

են չափազանցություններ, բայց ընդհանուր առմամբ նրա պատմածը համապատասխանում է իրականությանը: Նրա նկարագրության մեջ պատկերված է տոհմական կյանքի հին հաստատություններից մեկը: Աղատ հրապարակը, ἔλευθ'ερα ἀγορὰ-ն ոչ այլ ինչ է, քան համայնքի ժողովը, նույն այն հաստատությունը, որ արձանագրությունների մեջ կոչվում է habācharis և որի համար Գարհհը կոչվում էր ինքնակոչ Գառմատայի դեմ: Habācharis-ը իր հնչյուններով և բուն նշանակությամբ համընկնում է սանսկրիտ sabhācāra-ին, որ ծագում է sabhā=հավաքույթ և cāra=գն ալ-ից և նշանակում է ժողով: Հնդիկների մոտ sabha էր կոչվում այն համայնքների ժողովը, որոնք ապրում էին grama գյուղերում gramani՝ գյուղապետի իշխանության ներքո: Այդ ժողովները գումարվում էին համայնքի գործերը քննելու, ինչպես նաև զվարճության և միասին ժամանակ անցկացնելու համար: Ժողովները այնքան մեծ նշանակություն ունեին, որ մարդիկ երբեմն գնահատվում էին ժողովի համար պիտանի լինելու տեսակետից, գնահատվում էր sabheya անձնավորությունը¹:

Աղատ հրապարակում հավաքվում էին պարսիկների 12 ցեղերի ներկայացուցիչները: Յուրաքանչյուր ցեղ բաղկացած էր մինչև 10 հազար մարդուց, իսկ բոլոր պարսիկների թիվը 120 հազար էր: Հարևանցիորեն նկատենք, որ այդ թիվը ապշեցուցիչ կերպով աննշան էր մի ժողովրդի համար, որ այնպես սպառնալից թափահարում էր իր մականը և ապացուցում մեր զարգացրած այն տեսակետը, որ պարսից պետությունը հիմնված էր հենց դաշնակցային սկզբունքի վրա: Պատմագրի այն վերապահությունը, թե ցեղի ոչ բոլոր անդամներն էին հրապարակ դուրս գալիս, թեև ըստ օրենքի նրանք իրավաբանորեն իրավունք ունեին, այլ միայն ունևորները, ապացուցում է, թե ինչպես տոհմական հին հաստատությունը կորցրել էր իր իսկական բնույթը, և բոլոր անդամների հավասարության վրա հիմնված հաստատությունը դարձել էր դասային շերտավորության և անհավասարության աղբյուր: Նախկին սովորական ժողովը վերասերվեց յուրատեսակ գիվորակուն դպրոցի, որը փաստորեն նախատեսված էր հասա-

¹ Xen. Cyrop. I, 2.

¹ Sabha բառը պահպանվել է գերմաներենում sippe ձևով, ազգակցություն իմաստով. իմաստի փոխանցումը հասկանալի է և ապացուցում է, որ sabha-ն հատկապես ազգակից համայնքների ժողով էր:

բազիլյան ունեւոր խավերի համար: Ջրավորները ժամանակ և հնարավորութիւն չունենին հիշյալ հաստատութիւնից օգտվելու: Ջիւղորներին ուղղված իր խոսքի մեջ Կյուրոսն ի միջի այլոց ասում է. «Պուք հայրենիքում մեզ հետ հավասար իրավունքներ չունեք, և այդ ոչ թե այն պատճառով, որ մենք ձեզ գրկել ենք գրանից, այլ որովհետև դուք ստիպված եք աշխատել ապրուստի միջոցներ հայթայթելու համար»¹: Այսպիսով, ազատ հրապարակը կամ habāčaris-ը հասարակութիւն շերտավորման առիթ էր դառնում, ստեղծում էր արտոնյալ անձանց դաս և նրանց համար ապահովում էր գերիշխող դեր և բացառիկ իրավունք երկրի կառավարման գործում: Կյուրոսի 30 հազար զինվորներից միայն հազար հոգի էին պատկանում արտոնյալներին կամ, ինչպես նրանք կոչվում էին, համառիմները² թվին:

Քսենոփոնը հավատացնում է, որ հրապարակում շէր թուլատրվում առևտուր անել: Habačaris-ից ծագում է նոր պարսկերեն

¹ Xen. Cyrop. II I ed. Teub. p. 56.

² Կիւրոսի այն հարցին, թե նա որքան զորք ունի, Կյուրոսը պատասխանում է՝ 30 հազար հոգի, որոնք առաջ էլ ծառայել են ձեզ իբրև վարձկաններ, իսկ մնացածները համառիմներ են, որոնք երբեք դուրս չեն եկել Պարսկաստանից: Որքան է նրանց թիվը.— հարցնում է Կիւրոսը.— Այդ թիվը քեզ չի ուրախացնի և բանակի մեջ չէ հարցը, միայն իմացիր, որքան էլ որ սակավաքանակ են այդ, այսպես կոչված, համառիմները (οἱ δμοτιμοὶ καλοδμενοι), նրանք, սակայն իշխում են բոլոր պարսիկների վրա առանց որևէ դժվարութեան, Cyrop. II, 1 էջ 52: Համառիմները այն 1000 հոգին էին, որոնց հավաքել էր Կյուրոսը, երբ երիտասարդներից անցել էր հասակավորների դասը. նրան ընտրել էին զորահրամանատար և թույլ էին տվել, որ իր համար ընտրի διακοσίους τῶν δμοτιμων, իսկ 200 մարդուց յուրաքանչյուրին իրավունք էր տրված վերցնել չորսական մարդ է՛ք τῶν δμοτιμων, այսպես ստացվեց 1000 մարդ: Այնուհետև նրանցից յուրաքանչյուրը իր համար ժողովրդից է՛ք τοῦ δήμου ընտրում էր 30-ական մարդ, և կազմվեց 30 հազար հոգուց բաղկացած մի բանակ: Cyrop. I, 5, p. 31: Այստեղ δμοτιμοὶ հակադրվում են δήμος-ին. δμοτιμοս է կոչվում այն դասին պատկանող անձնավորութիւնը, որտեղից ծագում է ընտրողը: Կյուրոսի կարծիքով բոլոր հազար հոգին էլ δμοτιμοὶ են, այսինքն՝ հասակավորների դասից են: Այդ երևում է նաև նրանից, որ համառիմները զինված էին այնպես, ինչպես հասակավոր դասին պատկանողները, այսինքն՝ կրում էին θώραξ περὶ τὰ στέρνα, γέρον δὲ εἰς τὴν ἀριστεράν, κόπις δὲ ἢ σάγαρις εἰς τὴν δεξιάν, p. 54, հմմտ. էջ 7-ի հետ: Հունական δμοτιμοὶ արդյոք թարգմանութիւնը չէ՞ հայոց լիզվի մեջ պահպանված իրանական համհարդ hatz, arz = (حز) և արժ-անի-ք, համարածանալոր և հմմտ. պատվավոր բառի:

bāzar, շուկա, հայերեն՝ վաճառքառը, որից երևում է, որ հին հաստատութիւնը հետագայում այլասերվել է և վերածվել շուկայի՝ ապրանքներ փոխանակելու համար. այլ խոսքով, habačaris-ը վերապրել է զարգացման երեք փուլ՝ տոհմական հաստատութիւնից վերածվելով ռազմաազնվականականի և ապա բուրժուականի: Habačaris-ը հանդեցրեց համոտիմների դասի առաջացմանը, որոնց մեջ թաքնված են ապագա դասային ավազանու սաղմերը: Այն հրապարակը, որ հավանորեն նրա հանրամատչելի լինելու իմաստով կոչվում էր ազատ, հետագայում դառնում է միայն ազատների սեփականութիւն: Միատարր գանգվածի մասնատումը վկայում է, որ արդեն տոհմական կյանքի հիմքերը խարխվում են, իսկ այդ ուղեկցվում է ֆեոդալականացման պրոցեսների սաղմնավորումով:

Ֆեոդալիզմ կոչված երևույթի ուշադիր ուսումնասիրութիւնը բացահայտում է նրա էութիւնը ամբողջ բարդութիւնը: Ներկայումս խոսում են ոչ միայն միջնադարյան, այլ նախնադարյան ֆեոդալիզմի մասին, որ առաջ է եկել տոհմական կենցաղի փլատակների վրա: Սոցիալական հավասարակշռութիւնը վաղ ժամանակաշրջանում էլ պահպանվում էր համայնական հողատիրութիւն շնորհիվ: Տիրապետութիւն այդ ձևի խախտումով ծնունդ է առնում տնտեսական անհավասարութիւնը, որի հետեանքը լինում է քաղաքական իշխանութիւն անհավասարաշափ բաշխումը: Այսպես են հանդես գալիս ֆեոդալիզմի գլխավոր տարրերը, այսինքն՝ քաղաքական իշխանութիւնը զուգակցված հողատիրութիւնը:

Ե՞րբ է ավարտվել տոհմական ձևերի անցումը ֆեոդալականի, անհնար է պարզել: Ոչ միայն ֆեոդալիզմը, այլև հոռմեական իմաստով առնված զուտ պետականութիւն սաղմերը նկատվում են Աքեմենյանների դարաշրջանում: Առանց հաշի առնելու էթնիկական խմբերը, որոնց թիվը մոտ 70 էր, առաջին անգամ՝ Աքեմենյանները ամբողջ կայսրութիւնը բաժանեցին վարչական քսան միավորների, այսպես կոչված սատրապութիւնների և զինվորական իշխանութիւնը անջատեցին քաղաքացիականից՝ առաջինը հանձնելով ֆրուրարքոսներին և խիլարքոսներին¹, իսկ երկրորդը՝ սատրապներին: Եթե տվյալ հարցում առհասարակ թուլատրելի է պարբերացումը, ապա Իրանի սոցիալ-քաղաքական հարաբերու-

¹ Cyrop. VII 6, 1:

թյան պատմության մեջ պարթևական տիրապետության ժամանակաշրջանը պիտի շրջադարձային համաբնույթ Արեմենյանների օրոք պետականությունը հիմնված էր տոհմական ձևերի դաշինքի վրա: Հետևյալ՝ մակեդոնա-սելևկյան դարաշրջանում պետականության սկզբունքը սկսեց տիրապետող դուռնալ իհարկի ոչ տասնց արեմայան նվաճողների օրոշ ազդեցության: Պարթևների հզորացումով, սրտնք, իրանական մյուս ցեղերի նման, այն ժամանակ զբաղվում էին տոհմական պայմաններում, կազմավորվող պետականությունը բախվում էր տոհմական սկզբունքին: Պարթևական տոհմային ավանդույթները սելևկյանների պետական միջազգայնում բեկբեկվում է ֆեոդալիզմի բնույթ են ստանում: Ֆեոդալականացման պրոցեսը արտահայտվում էր նրանով, որ պարթևները դարձան հոմոտոիմներ՝ ամբողջ Իրանի նկատմամբ գրավելով դինվորական դասի դիրքը:

Պարթևների, իրեն առանձին էթնիկական խմբի, ներքին կյանքի զարգացումը պետք է հանգեցնեն միևնույն հետևանքների, այսինքն՝ նրանց մոտ էլ հասարակությունը պետք է տրոհվեր ճիշտ այնպես, ինչպես պարսիկների մոտ:

Պարթևստանում բնակվում էին իրանական բնույթի զանազան ցեղեր: Արշակունյաց թագավորական տոհմը թեև կոչվում է պարթևական, բայց ծագել է ոչ թե պարթևներից, այլ նրանց հարևան ցեղերից՝ դալիսից: Դայերը *parthai* երկրի ծայրերը թըշված իրանցիների վաշկատուն տարրերն էին և հնարավոր է, որ ազգակից էին այն նույնանուն նոմադներին, որոնց մասին հիշատակում է Հերոդոտը¹: Սկզբնական շրջանում նրանք ապրում էին Իրանի սարահարթում, մարդերի հարևանությամբ, հետո, շարժվելով դեպի արևելք՝ հայտնվում են Իրանի ծայրամասում՝ այժմյան Թուրքեստանի տափաստաններում: Դայերը տարբեր ցեղերի² խառնուրդ էին, նոր նվաճողները՝ հանձին Արշակի, ծագում էին ապարների ցեղից: Գ դարի կեսին այդ ցեղերի միջև առաջ եկած ներքին երկպառակությունների հետևանքով ապարները ստիպված

¹ Herod. I 125.

² Str. XI, 511 = Teub. 718 τῶν Δαῶν οἱ μὲν προσαγορεύονται Ἀπαρνοὶ οἱ δὲ Ἐάνθιοι, οἱ δὲ Πίσσοιοι, նաև p. 508: Առաջին անվանումը *Tomašek-ը* համարում է ալեքսանդրական *aperenčyuka*, հին պարսկերեն **aparenayu*, *a + parēna* = թերի (նոր պարսկերեն *burnā*, սլավ. *пѣл-и*) տհաս, անչափահաս իմաստով: Paul. Wiss, Encyc. v. Ἀπαρνοί.

եղան լքելու իրենց բնակավայրը: Նրանք հարձակվեցին հարևան Պարթևստանի վրա և նվաճեցին այն: Այսպիսով, Արշակունիները Պարթևստանի նկատմամբ իսկապես համարվում են նվաճողներ: Ամրացնելով իրենց դիրքը՝ հարյուր տարի հետո, Ք դարի կեսին նրանք քաղաքական ասպարեզ ելան պարթևական հարստություն անվան տակ:

Այժմ այլևս որևէ կասկած չկա այն մասին, որ ոչ միայն պարթևները, այլև դայական ցեղերը մտնում էին իրանական բնույթի մեջ: Արեմենյան արձանագրությունների մեջ Պարթևստանը ինքնուրույն *dahiu* է: Նրա տոհմական ներքին կազմակերպության մասին ոչինչ հայտնի չէ. մեզ հաստատուոր տեղեկություններ են հասել թագավորական ժամանակվա հասարակական կարգերի մասին: Թագավորին կից գոյություն ունեւ ինչ-որ կոլեգիալ մարմին, խորհուրդ, որ կոչվում էր *ordo probulorum*: Նրա անգամներին էին հանձնվում զինվորական և քաղաքացիական պաշտոնները³, իր նշանակությամբ այս խորհուրդը հիշեցնում է հոմոտոիմների, ավելի ճիշտ, հասակավորների դասը, որ գոյություն ունեւ պարսիկների մոտ. չէ որ նրանք էլ էին իշխող դաս և հանրային պաշտոններ զբաղվելու բացառիկ իրավունք ունեին: Ըստ որոշ վիպությունների պարթևների մոտ կար դրա նման երկու հաստատություն. մեկը բաղկացած էր թագավորական տան ազգականներից, մյուսը՝ իմաստուններից և մոգերից: Այդ երկու խորհուրդների համաձայնությամբ էլ նշանակվում էին թագավորները⁴: Պատմագիրները հաճախ հիշատակում են պարթևների ծերակույտի մասին, որից կախված էր թագավորների բախտը⁵: Սենատ ասելով, ըստ երևույ-

¹ Ստրաբոնի կողմ աշխատության՝ τὰ ἱστορικὰ ὑπομνήματα-ի վեցերորդ գիրքը մարդողովին նվիրված է եղել պարթևների կայսրության քաղաքական կազմակերպության նկարագրությանը. περί τῶν Παρθυσίων νομίμων, որի մասին վկայում է ինքը՝ հեղինակը, XI 516 = Teub. 794: Այդ արժեքավոր գործից նույնպես քաղվածքներ չեն պահպանվել:

² Iust. 41, 2, proximus maiestati regum ipsorum probulorum ordo est; ex hoc duces in bello, ex hoc in pace rectores habent.

³ Str. XI 9, p. 724, τῶν Παρθυσίων συνέδριόν φησι εἶναι Ποσειδώνιος διττόν, τὸ μὲν συγγενῶν τὸ δὲ σοφῶν καὶ μάγων, ἕξ ὧν ἀμφοῖν τοὺς βασιλεῖς καθίστασθεα.

⁴ Iust. 41, 4. Mithridates... propter crudelitatem a senatu parthico regno pellitur. *ib.* cap. 5, Phraates... in exilium a populo suo pellitur.

թին, հասկացվում էին այդ մարմինները: Եթե նրանցից առաջինը համապատասխանում է պարսիկների հասակավորների դասին, ապա երկրորդը՝ ծերերի դասին: Երկու հիմնարկներն էլ, անկասկած, առաջացել են տոհմական շրջանում և հանդիսանում են նախնադարյան հաստատությունների հետագա զարգացումը: Նման հաստատությունների գոյությունը պարթևական հասարակության մեջ տեղի ունեցած շերտավորման ամենաբնորոշ հատկանիշն է: Մենք գիտենք, որ նրանց մոտ հասարակությունը տրոհվում էր ազատների և ստրուկների: Վերջիններին բանակը մշտապես աճում էր այն բանի հետևանքով, որ պարթևները սովորություն չունեին ազատ արձակելու իրենց ստրուկներին: Եվ քանի որ ազատները թվով քիչ էին, ապա զորքի գերակշռող մասը բաղկացած էր ստրուկներից: Ինչպես ազատներին, ստրուկներին ևս վարժեցնում էին ռետաձգության և ձիավարության: Որքան ազատը հարուստ էր, այնքան շատ հեծյալ էր տալիս թագավորին. այսպես, Անտոնիոսի դեմ պատերազմելու ժամանակ 400 ազատներ նրա զեմ հանցին 50 հազար հեծելազոր: Պարթևական բարբերի բնորոշ կողմը ձի հեծնելու մեծ սերն էր. նրանք զրեթե ձիուց չէին իջնում. ոչ միայն կռվում էին, այլև ուտում ու հանգստանում էին ձիու վրա. հանրային գործերը նույնպես վարում էին ձի հեծած. առևտուր էին անում, խորհրդակցում էին ձիերի վրա: Ազատները ստրուկներից արտաքուստ հենց նրանով էին տարբերվում, որ նրանք ման էին գալիս ձիով, իսկ ստրուկները՝ ոտքով¹:

Այստեղ populo, ինչպես և senatu ասելով հասկացվում է ordo probulorum. Հուստինոսի ձեռագրերում կարգացվում է ordo populorum. propulorum ընթերցումն առաջարկել է Գուտշմիդտը (Geschichte Irans, p. 57, not. 3) և նա ընդունված ու մտցված է Տեյլերի նոր հրատարակության բնագրի մեջ: Գեռս de Saint-Croix-ը կարծում էր, որ բնագիրը ճիշտ չէ և առաջարկում էր կարգալ optimatium, Mémoires sur les Parthes, Acad. des Inscr. t. 50, p. 60, not. y: Նկատի ունենալով Հուստինոսի վերոհիշյալ տեղը, որտեղ populo-ն անկասկած համազոր է վիճելի ordo-ին, հազիվ թե կարիք կա կոնյուկտուրայի կամ թե չէ, պետք է ուղղել և հիշյալ populon-ն ու դարձնել probulis:

¹ Iust. 42, 2, Exercitum non, ut aliae gentes, liberorum, sed maiorem partem servitiorum habent, quorum vulgus nulli manumittendi potestate permissa ac per hoc omnibus servis nascentibus in dies crescit. Hos pari ac liberos suos cura et equitare et sagittare magna industria docent. Locupletissimus ut quisque est, ita plures in bella equites regi suo praebet. Denique Antonio bellum Parthis inferenti cum L milia equitum occurissent, soli

Կյանքը ձիու վրա անցկացնելը, որ բնորոշ է վաշկատուն ժողովուրդների կենցաղին, ներկա դեպքում պարթևների, որպես վաշկատուների, անցյալի ժառանգությունն է: Քաղաքական նոր պայմաններում ձի հեծնելու բնածին հակումը պարթևներից ստեղծեց հիանալի ռազմիկների մի դաս, իսկ այդ հանգամանքը անդրադարձավ նրանց պետական քաղաքականության վրա: Պարթևների ռազմական սովորությունների նշանակությունը պետք է հաշվի առնել այն պատճառները բացատրելիս, որոնք պետությունը տարան դեպի ֆեոդալականացում:

Պարթևների կայսրությունը, որ ընկած էր Կարմիր և Վրկանա ծովերի միջև, ըստ Պլինիոսի կազմված էր 18 թագավորություններից¹: Նրանցից տասնմեկը կոչվում էին superiora և տարածվում էին Հայաստանի սահմաններից մինչև սկյութացիների երկիրը, մնացած յոթը՝ regna inferiora: Պատմիչը նրանց անունները չի տալիս: Ընթացվում է, որ զրանք այն նահանգներն են, որոնք հիշատակված են Իսիդոր Քարակասպոս ուղեցույցում²: Իսիդորի նկարագրած շրջանները ընդգրկում են Պարթևստանը, Մարաստանը, Ասորեստանը և Միջագետքը իրենց ստորաբաժանումներով: Եթե 18 թագավորությունները գտնվում էին այս երկրների սահմաններում, ապա, համեմայն դեպս, զրանք պետք է համարել պարթևական տիրույթներ՝ par excellence: Մայրամասերում ընկած էին. հյուսիսում՝ Ատրպատականն ու Հայաստանը, հարավում՝ Պարսկաստան-Կարմանիան, արևմուտքում՝ Ադիարենը և Օսրոյենեն, և արևելքում՝ Բակտրիան Սոգդիանայի հետ: Սելևկյանների դեմ սկսված խմորումների շրջանում այս երկրներից մի քանիսը պարթևների հետ միաժամանակ, մյուսները, դեռևս նրանցից առաջ, անջատվեցին և կազմեցին անկախ թագավորություններ: Որպես այդպիսին, զրանք հետագայում մասն Պարթևական կայսրության մեջ: Իր քաղաքական

CCCC liberi fuere. ib. 3. Equis omni tempore vectantur; illis bella, illis convivia, illis publica ac privata officia cbeunt; super illos ire, consistere, mercari, colloqui. Hoc denique discrimen inter servos liberos, ut est, quod servi pedibus, liberi non nisi equis incedunt. ib. c. III.

¹ Plin. Nat. hist. VI 29, regna Parthorum duodeviginti sunt omnia. ըստ Ամմիանոսի Սասանյան կայսրությունը ևս 18 խոշոր նահանգ ուներ, Amm. Marc. XXIII 6, 14. Արդյո՞ք այս պատմական զուգորդություն է, թե պատմագիրը բնագրի նախնի է Պլինիոսից:

² Isidor. Σταθμοί πάρθοιοι. Müll. Geog. Gr. I 250.

վիճակով այդ հողերի ծայրամասային շերտը տարբերվում էր կենտրոնական տիրույթներից:

Արշակունիները իրենց նվաճումները պետում էին իբրև իրենց տոհմի սեփականություն, ուստի ձգտում էին խզել իրենցից կատրում ունեցող թագավորական գահերը և քառանկել իրենց ազգահաների միջև: Երանք հասան այն քանին, որ վերջը թվարկված երկրներում սեղանական թագավորական հարստությունները փոխարինվեցին Արշակունիների հարստությամբ: Արշակունիները երկրորդական ժառանգները շատ շատ էին քանակաբանում այն երկրներին, որտեղ բնակություն էին հաստատում և կենտրոնական իշխանություն հանդիսանում: Բշխանությունը ձգտում էին բռնում, ինչպես տեղական հարստությունը: Բշխանության ձգտելու տոհմական հավակնությունն էլ մասամբ խանգարում էր, որպեսզի կազմակերպվի սխառական սեփական օրգանիզմ: Պարթևների կայսրությունը ոչ թե պետություն էր, այլ պետական ֆունկցիաներով օժտված փոքր մարմինների ամբողջ համալիր:

Արշակունիների գլխավոր ճշտող օգտվում էր գերիշխանությունից: Ցողիցուցից թագավորությունների գլուխները կոչվում էին արքաներ, իսկ կենտրոնական իշխանության գլուխը՝ արքայից արքա: Այս ամպագոտուտ արևելա Արեմենյաններից ստացած ժառանգությունն է, իսկ Արեմենյաններն իրենց հերթին այն փոխ էին առել ասորեստանցիներից: Այսպիսի ունենալով, որ առաջին Արշակունիները պարզապես կոչվում էին արքաներ, և միայն Միհրդատ Ա-ի ժամանակվանից, երբ ըսնորեն ընդարձակվեցին նրանց սահմանները, սկսեցին կրել արքայից արքա տիտղոսը, պետք է ենթադրել, որ խնդիրը միայն Արեմենյաններին հենց այնպես նմանվելու մեջ չէր, այլ որ այդ տիտղոսը համապատասխանում էր նաև իրերի փաստական վիճակին: Մուսուլմանական հեղինակների տեղեկությունների համաձայն, որոնք հասնում են մինչև սասանյան ավանդությունները, Արշակունիների գերիշխանությունը հանաչում էին 90 թագավորներ, 90 երկրների կառավարիչներ: Ըստ այդ նույն տեղեկությունների Պարթևական կայսրությունը moluk-al-tawaf էր, այսինքն՝ հավաքածու մի պետություն, որ կազմված էր զանազան ժողովուրդների և ցեղերի թագավորություններից: Այս-

¹ Այս թիվն ուսմացված է, կամ էլ որևէ թյուրմիտություն արդյունքը Սեղևոտ նիկատորի օրը (312—230) արեմենյան սարգավթյունները բաժանվեցին ավելի

պիտով, Պարթևական կայսրության նկատմամբ ևս կիրառվել է օստիսսա մեյզոն արտահայտությունը: Նա նույնքան մեծ դաշնակցություն էր, ինչպես Արեմենյանների ժամանակ, փոխվել էին միայն դաշնակցության բաղկացուցիչ միավորները: Այդ դաշնակցությունը իր գոյությունը պահպանում էր նախկին հիմքի վրա. մոլուքների կամ փոքր արքայիկների փաստական կախումը արտահայտվում էր այն պարտավորությունների կատարումով, որոնք պարթևներից առաջ էլ կազմում էին թրակտական պետությունների հիմքը, այսինքն՝ հարկ վճարել և զինվորական օգնություն ցույց տալ: Այս պարտավորությունների մեջ պետական խնդիրներն ու ֆունկցիաները պարզեցված են մինչև minimum: Միջոցից մասերի այսպիսի բնույթ կրող կախման մեջ է հենց ժառանգանություն էությունը, որը ֆեոդալական վարչակարգի ամենաէական ատրիբուտներից մեկն է:

Նման մեխանիզմի գնալքում պետությունը, ինչպես երևում է, չէր կարող կյանքը ընդգրկել խորը կերպով: Այն ժամանակվա ըմբռնումով իշխանությունը ձեռք էր բերում երկու ձևով՝ նվաճելու կամ ծննդյան իրավունքով: Առաջինի գնալքում իշխանությունը իր դրսևորումներով սահմանափակվում էր պետականության հիշյալ ձևերի նկղ շրջանակներով. իսկ արքան իրավունքի գերազանցության վրա հիմնված իշխանությունն ընդգրկում էր հասարակական կյանքի մնացած բոլոր ճշուղերն ու կողմերը և գործում էր տոհմական կազմակերպության ձևով: Արքան իրավունքը, որպես հասարակության հիմք, և նրանից բխող իրավահարաբերությունները աչքի են ընկնում արտակարգ կայունությամբ: Այդ մեղ ուղղություն է տալիս լուծելու մեր առջև դրված խնդիրը՝ պարզելու Հայաստանի սոցիալական կացության մեխանիզմը:

մանր միավորներին՝ մինչև 72, իսկ Պարթևստանը բաղկացած էր 18 շրջաններից: Գոցն 90 թիվը կազմվել է 72 + 18-ից:

¹ Ըստ Tabari-ի, բացի դրանից, բոլոր թագավորները մեծարանքի իրենց պարուն էին մատուցում արքայից արքային նրա ազնվական ժառանգ համար: Նրանք ընդունում էին նրա զգալի իշխանությունը, նամակների մեջ նրա անունը դրվում էր առաջին տեղում: Արքայից արքան, այնուամենայնիվ, իրավունք չուներ մուլտիպլիցիտեթի շնորհիվ կամ դրանից զրկել:

² Հմմտ. Քսենոփոնի խոսքերը Կյուրոսի մասին. διψενγκε τών ἑλλαν βασιλέων καί τών πατριους ἀρχάς παρειληφῶτων καί τών δι ἑαυτῶν κτησαμένων, Cyprip. I 13.

ԳԼՈՒԹ XIV

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայոց պատմության երկու շրջաններ՝ Տիգրանյան և Արշակունյաց կամ կամարտների և ստրատեգոսների ժամանակները: Տանական կենցաղը առաջին շրջանում: Հայաստանի էրեթիկան: Հայ ազգության կազմավորման վնասկան պահը: Նրա նիմնական տարրերը: Տանական ձեռքի վերապրուկները՝ *malgaz, aspei, mamak, tgr* բառ կազմության *a posteriori*: Այդ տեքստիներն առաջաբանությունը որպես տանների պետերի նախնիք արտահայտություններ էրեթիկական տարրեր գտնվեցան: Տանական միջավայրի շերտավորումը և տանների պետերի առանձնանալը: Առանձնացման պրոցեսը Վիբի և Ալվանի օրինակով: Նրիցի ազնվականացումը Տիգրան Մեծի դարաշրջանում: Վերնախալի աչի ընկնող ներկայացուցիչները նրա օտոբ. չորս բղջիկները՝ Քաղաղապար, Միքրոպոլիսներ և Մանկայոսը որպես Քաղաղապար, Մոսիացի Արժուտի և Մամիկոնյան իշխանների նախնականներ: Խախտանքների տունը: Դասայության ձևերը ցեղային մյուս խմբերում մարդկանց մարդերի պետ, Մակ-երի կամ Մոկաց իշխանը կուրսիների կամ Կարեայի իշխան: Կտեռում Ամատունի և Մարացան տանների մասին: Մյուսինի-Միսականի, Շիրակի և այլ իշխանությունների ցեղային նիմր: Դասային էվոլյուցիայի ավարտը մինչև Հայաստանում Արշակունիների երևան գալը:

Հայաստանը, որպես Իրանի քաղաքական-մշակութային աշխարհի բաղկացուցիչ մաս, նրա հետ միասին պետք է անցնեն զարգացման նույն ուղին: Այդ զարգացման հիմնական փուլերը՝ Իրանի պատմության ամենացայտուն պահերը, պետք է անդրադառնային հայկական կյանքի վրա: Այդ իմաստով Իրանի պատմական կյանքի պարբերացումը կիրառելի է նաև հայկականի նկատմամբ: Պարթևների տիրապետությունը մի շրջադարձային պահ էր, որ նոր շրջան բացեց ինչպես պարսիկների, այնպես էլ հայերի պատմության մեջ: Քանի որ պարթևական հարստությունը հաստատվեց Հայաստանում փոքր-ինչ ուշ, քան Պարսկաստանում, այսինքն՝ մեր թվականության սկզբին, ապա այդ ժամանակվանից էլ պետք է հաշվել հայոց պատմության Արշակունյաց ժամանակաշրջանը:

Արշակունիների երևան գալուց առաջ եղած ժամանակաշրջանը արտաքին տեսակետից կարող ենք անվանել Արքեմեյան, իսկ ներքին տեսակետից՝ Տիգրանյան, այն հարստության անունով, որից ծագում էին Արտաշեսն ու Ջարնհը, և նրանց նշանավոր հաջորդ Տիգրան Մեծը: Սոցիալ-քաղաքական տեսակետից այս ժամանակաշրջանը համապատասխանում է պարսից պատմության նախապարթևական ժամանակաշրջանին և հանդիսանում է զերազանցապես տոհմային հարաբերությունների շրջան:

¹ Ընդհանրապես կարծում են, որ Արշակունիներին նախորդող արքայական հարստությունը Հայաստանում տիրում է Արտաշեսից և Ջարնհից: Ըստ Մարտրոսի՝ Անտիոքոս Մեծի (223—187 մ.թ.ա.) այս երկու զորավարները Անտիոքոսի պարտությունից հետո (189 թ.) Հայաստանը բաժանեցին իրար մեջ և իրենց ինքնուրույն թագավորներ հռչակեցին: Իրականում Հայաստանը երկու մասի էր բաժանված վաղուց, նրանք ըստ էության արժանյան շրջանի 13-րդ և 18-րդ ստորապետություններն էին, կամ Արևելյան և Արևմտյան Հայաստանները՝ Տիրի-բազի և Օրոնտեսի սիրույթները: Մատրապների հետ միաժամանակ երկու մասերում էլ գոյություն ունեին սեղանական թագավորներ: Քսենոփոնը հիշատակում է մի հայ թագավորի, որը ժամանակակից էր Կյուրոսին և Աստիագեսին. նա ուներ երկու տղա՝ *Τιγράνης και Σάβαρις, Cыр. III 1, 10*: Պատմագիրը չի տալիս թագավորի անունը. հայ պատմությունների համաձայն նա կոչվում էր Տիգրան և Կյուրոսի դաշնակիցն էր Աստիագեսի դեմ: Արտաշեսի հայտնի հաջորդը նույնպես կրում էր այդ անունը՝ Տիգրան Մեծ: Տարակույս չունենք, որ Արտաշեսի տոհմը հանում է մինչև Տիգրանի՝ Աստիագեսի ժամանակակից օրերը: Ջարնհը՝ Սոփաց թագավորը, նույնպես ծագում էր հին հայկական տոհմից: Անտիոքոս Մեծը ընդհարում է ունեցել հայոց Քսենոփոնի թագավորի հետ Արշամաշատում, *Ioannes Antioch. Frag. 53, Müller, IV 557*: Դեռևս Սելևկոս Ա-ի ժամանակ (312—280 մ.թ.ա.) հիշատակվում է մի հայ թագավոր, որի անունը ընթերցվում է *Ardaotes* կամ *Artaontes*, վերջին ձևը նմանվում է *Ἀρτάωνης*-ին, որ Սոփաց թագավորի՝ Ջարնհի հաջորդներից մեկի անունն է: Ըստ երևույթին այդ անունը ընդունված էր Ջարնհի տոհմում: Քսենոփոնի թագավորը հավանորեն Ջարնհի նախնայիններից էր: Քսենոփոն և Ջարնհի, հայերեն Շավարշ և Ջարնհ անունները ընդունված էին Արժուտիների տոհմում, իսկ նրանք, ինչպես կտեսնենք, ծագում էին Սոփաց աշխարհից: Անտիոքոսի մոտ հիշվում են Ջարնհ, Շավարշ և Արժուգ (= Արտոկ, համարելի *Ἀρτάωνης-ի հետ*) (նմտ. *Εραζαήρ, p. 177*): Հայաստանի բաժանման սկիզբը շատ հին է, և ինձ թվում է, որ կապ ունի սեպական արձանագրությունների մեջ եղած Ուրարտու և Միննի երկու խոշոր թագավորությունների հետ, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են ստորապետների ժամանակվա Արևելյան և Արևմտյան Հայաստաններին: Սոփաց թագավորությունը Տիգրանի օրոք ձուլվեց Արտաշեսի թագավորությանը: Տիգրանի հարստության առաջին նշանավոր ներկայացուցիչ անունով և ի պատիվ նշանավոր աշխարհակալ Տիգրան Մեծի Արշակունիներին նախորդող շրջանը կոչում ենք Տիգրանյան:

Հայոց պատմութիւնի հիշյալ երկու ժամանակաշրջանները՝ Տիգրանյան և Արշակունյաց, երկրի ներքին սոցիալական տառալընթացի տեսակետից կարելի է անվանել առաջինը կոմարքոսոսերի, իսկ երկրորդը՝ ստրատոկոսոսերի ժամանակաշրջան: Հայ գյուղի նկարագրութեանը, որ տալիս է Քսենոփոնը տասը հազար հույների նահանջի ժամանակ, մոտավորապէս 400 թղակահին մ.թ.ա., բավարար չափով բնութագրում է երկրի հասարակական կացութեանը: Հայաստանը բաղկացած էր բացառապէս գյուղերից, որոնց գլուխ կանգնած էին կառավարիչներ ռωμάρχης կամ ἄρχων τῆς κώμης: Կոմարքոսները հանդիսանում էին վարչական մարմիններ սաարապի՝ պարսից թագավորի ներկայացուցչի կողմին: Հույն պատմադրի նկարագրած հայ գյուղի նահանգնական պատկերը նկատի առնելով, զգալոր չէ կոահել, որ կոմարքոսները գյուղերում բնակվող տոհմերի պետերն էին: Գյուղերի շուրջը՝ բնորոշ հողն պատնէշ, նախնազարչան տնտեսութիւն, գետնափոր տներ, որտեղ մարդկանց հետ միասին տեղավորված էին կենդանիները՝ ոչխարներ, այծեր, կովեր և առհասարակ ընտանի կենդանիներ. այս ամենը հանդիսանում է ոչ այլ ինչ, քան տոհմային համակեցութեան հասկանիչներ: Գյուղապետը, որ ուղեկցում էր հույներին, հրաժարվում էր այն ամենից, ինչ որ նրան առաջարկում էին օտարերկրացիները, բայց շատ նահանգնական էր իր տոհմակից որևէ մեկին, միշտ վերցնում էր իր մտած: Այդպիսի հայրական հոգատարութեան մեջ չի կարելի շտեմել տոհմի հորը՝ տոհմապետին հատուկ զօնը:

Հարչութամյակներ հետո՝ հատկապէս Հայաստանում Արշա-

¹ Anab. IV 5, 9—35, 'Οδὲ μὲν ἄλλο μὲν οὐδὲν ἐδέχετο, ὅπου δὲ τινα τῶν συγγενῶν Ἴδιοι, πρὸς ἑαυτὸν ἀεὶ Ἐλάμβανεν, ib. 32: Մի գյուղից հույները իրենց հետ առան-տարան բնակիչներին, կոմարքոսին և 17 մարդի, որոնք պետք է պարսից թագավորին ուղարկվեին որպէս տուրք. τῖνι οἱ Ἴπποι τρέφονται՝ ὁ δὲ Ἐλεγεν ὅτι βασιλεῖ δασμός, Anab. IV 5, 24—34: Մտարածը հաղորդում է, որ հայոց ասարապը ամեն տարի պարսից թագավորին 20 հազար ծնույզ էր ուղարկում Միհրասան տանի առթիվ Διομυρίδους πῶλους τοῖς Μιθρακίνοις Ξεπεμπεν, XI 14, p. 530—744: Քսենոփոնը ասում է, որ կոմարքոսից խլած ձին նվիրված էր Յրեին, ἱερὸν εἶναι τοῦ Ἥλιου. Մտարածի տեղեկութիւնները վերաբերում են ավելի հին ժամանակներին, որովհետև նրա որոք Հայաստանն անկախ էր և գտնվում էր թագավորի և ոչ թէ սարապի իշխանութիւն տակ: Եթէ մի գյուղը տալիս էր 17 մարդի, ապա 20.000 մարդի կազմում էր մոտավորապէս 1200 կոմարքոսների հարկը:

կունիների հաստատվելու սկզբնական շրջանում, մեր առջև այլ պատկեր է ներկայանում: Այդ ժամանակ Հայաստանը բաժանված էր 120 մասի կամ պրեֆեկտուրայի, որոնք կոչվում էին ստրատեգիաներ, նրանց թվում նաև նախկին թագավորութիւններից մի քանիսը. dividitur in praefecturas, quas strategias vocant, quaedam ex his vel singula regna quondam, barbaris nominibus CXX¹: Ճիշտ է, այդ բաժանումների էությունն այնքան էլ պարզ չէ. և հայտնի չէ, թե ո՞վ է նրանց ստրատեգիաներ անվանել, և տեղական ինչ տերմինի են նրանք համապատասխանում. այդ հարցին մենք դեռ կանդորադանք, բայց համենայն դեպս կասկածից դուրս է, որ strategia-ն զինվորական տերմին է և, իբրև այդպիսին, ցույց է տալիս, որ զինվորական ֆունկցիաները ստրատեգիաների պետերի կամ ստրատեգոսների մյուս բուր պարտականութեաններից ամենահիմնականն են եղել: Մենք գիտենք, որ հայ նախարարները զինվորական ծառայութիւն էին տանում և պարտավոր էին առաջին իսկ կոչով իրենց հեծյալ շտկասի գլուխն անցած՝ ներկայանալ թագավորին, այս իսկ պատճառով հիմք կա ստրատեգիաները համարել իբրև տիրակալ իշխանութիւնների՝ թեկուզ և նրանց զարգացման սկզբնական շրջանում:

Ստրատեգոսները և կոմարքոսները գտնվում էին սոցիալական տարբեր աստիճանների վրա և միմյանցից բաժանված էին չորս հարչութամյակով: Նրանք երկրի հասարակական ուժերի աճման պատմութեան մեջ նշանավորում են երկու կարևոր սահմանագծային պահեր: Մեր խնդիրն է բացահայտել այն պատմական պրոցեսի ինքնակարգը, որ կոմարքոսներից բերեց-հասցրեց ստրատեգոսներին. այլ խոսքով՝ տոհմական շրջանից՝ ֆեոդալականին:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմութեան մեջ տոհմական կեցութեանը համարվում է զարգացման նախնական անհրաժեշտ փուլ: Հայաստանն էլ իրական և աշխարհագրական պայմաններով այդպիսի կացութեանի համար հատկապէս բարենպաստ պայմաններ ունի: Գանվելով մեծ ժողովուրդների տեղաշարժերի խաչմերուկի վրա՝ Հայաստանը բնութագրվում է իր մեջ ներծծում էր բազմաթիվ էթնիկական հոսանքներ և ցեղային շիթեր: Երկրի պայմանները ևս մասն համար բարենպաստ չէին. բարձրաբերձ լեռնաշղթաները,

¹ Plin. Nat. hist, VI 10.

ակոսելով երկիրը բոլոր ուղղութիւններով, կազմել էին հովիտների և կիրճերի մի ցանց, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում էր ցեղային առանձնահատկութիւնները պահպանելու մեկուսացված ու վերին աստիճանի նպաստավոր միջավայր: Գրանց առատութիւնը աւանում էր գեպի կյանքի տոհմական ձևը և կանխորոշում նրա պահպանողականութիւնը:

Հայոց պատմութեան a priori կերպով ընդունված տոհմական ժամանակաշրջանի մասին փաստական տվյալներ քիչ կան: Գրանք զլխավորապէս հայ հին մատենագրութեան մեջ պահպանված տերմիններն ու դրանց հետագա վերապրուկներն են, որոնք որոշ գաղափար են տալիս կոմարքոսների ժամանակվա սոցիալական կառուցվածքի մասին:

Նախ և առաջ ուշադրութիւն են դրավում առնմ-*tauma*, ազն-*zana*, ինչպէս և *οὐθ*-ի վերապրուկները՝ *վիս, *վաս ձևով, սե[պուն], դեհ-*dankhu*, վանառ-*habacaris*, աշխարհ-*χῆσαθρα*, շահապ-*σαθραρα* և այլ իրանական տերմինները: Սրանցից մի քանիսը Սասանյանների ժամանակվա փոխառութիւններ են, մյուսները շատ ավելի հին, որ թերևս գալիս են Աքեմենյանների ժամանակներից: Վարչական կառուցվածքին վերաբերող բառերի՝ ինչպէս աշխարհ կամ շահապ փոխառումը հասկանալի է և քաջատրվում է նվաճողների քաղաքական ազդեցութեամբ: Բայց մենք իրավունք ունենք սպասելու, որ ինքնատիպ տոհմական հարաբերութիւնների հողի վրա ստեղծված տոհմական տերմինարանութիւնը կրեր զուտ հայկական բնույթ: Սակայն այստեղ էլ մենք հանդիպում ենք իրանական բառերի, ըստ որում այնպիսի երանգավորումով, որ չի կարելի դրանք համարել հասարակ փոխառութիւններ: Նման երևույթներ նկատվում են նաև այլ ծագում ունեցող լեզվական նյութերի մեջ, որոնք հայերին մոտեցնում են Հայաստանը մյուս կողմերից շրջապատող հարևան ժողովուրդներին: Մեզ դրադեցնող հարցի համար բնորոշ և կարևոր մի քանի տերմինների դասակարգման և լուսաբանութեան համար անհրաժեշտ է ծանոթանալ հայ ժողովրդի էթնիկական կազմին:

Առայժմ հնարավոր չէ պեղել Հայաստանի մինչև առաջին բնակեցումը հասնող էթնիկական շերտերը: Մահմանափակվելով մեզ մատչելի պատմական տեսադաշտով՝ գտնում ենք, որ հայ ազգութիւնը կազմավորվել է ոչ միայն տարբեր ցեղային, այլև տարբեր էթնիկական տարրերից: Այն տերիտորիան, որ Աքեմենյանների ժա-

մանակ կոչվեց Հայաստան, բնակեցված էր տարբեր ազգութիւններով և կազմում էր երկու սատրապութիւններ՝ պ ա կ տ ի ն երը և հ ա յ երը իրենց հարևանների հետ՝ մինչև Սև ծով, կազմում էին 13-րդ սատրապութիւնը, իսկ մ ա տ ի ն ն երը, ս ա ս պ ե յր ն երը և ա լ ա բ ո ղ ն երը՝ 18-րդ: Հայերին արևմուտքում սահմանակից էին կիլիկիացիները, իսկ արևելքում՝ մատիենները, ընդ որում առաջիններից հայերը բաժանվում էին Եփրատի հոսանքով, իսկ մյուսներից՝ հավանորեն Տիգրիսի Ձավ վտակով: Քանի որ ալարոդները և սասպեյրները մատիենների հետ միասին կազմում էին մեկ սատրապութիւն, հավանաբար նրանց հարում էին հյուսիս-արևմուտքից: Քսերքսեսի արշավանքի ժամանակ հայերը փոյուզիացիների հետ միասին գտնվում էին մի դրոշակի տակ, իսկ ալարոդներն ու սասպեյրները՝ մի այլ: Մահմանակից ժողովուրդներից ամենից ավելի հայտնի են մ ո ս ք երը և տ ի բ ր ե ն ն երը, մ ա կ բ ո ն ն երը և մ ո ս ի ն ո յ կ ն երը, մ ա բ երը և կ ո լ ի երը, ու տ ի ն երը և մ ի կ երը, որոնք զուգ-զուգ ունեին առանձին հրամանատարներ, իսկ մարերը գտնվում էին հատուկ հրամանատարութեան տակ: Տասը հազար հույների նահանջի ժամանակ փ ա ս ի ա ն ն եր ի և հ ե ս պ եր ի տ ն եր ի, այսինքն՝ սասպեյրների, ինչպէս նաև տ ա ո թ ն եր ի երկիրը արդեն համարվում էր Հայաստան և ի տարբերութիւն մյուս Հայաստանի, կոչվում էր Արևմտյան: Մի մասի կառավարիչը կամ սատրապն էր Տիրիբազը, իսկ մյուսինը՝ Օրոնտեսը¹: Իսկ հարևան ցեղերը, հատկապէս կ ո բ ո ջ ն երը, ի ս ա լ ի բ ն երը, ի ս ա լ զ ի ն երը, մ ա կ բ ո ն ն երը, կ ո լ ի երը, մ ո ս ի ն ո յ կ ն երը, կ ո յ տ երը և տ ի բ ր ե ն ն երը այդ ժամանակ անկախ էին²: Մեկ հարյուրամյակ հետո, Քավգամելայի ճակատամարտի ժամանակ, Հայաստանում դարձյալ երկու սատրապ կար՝ Օրոնտեսը և Միթրավաստեսը, իսկ հարևան մարերը գտնվում էին Ատրոպատեսի հրամանատարութեան տակ:

¹ Herod. III 93 և 94:
² ib. V 49, Κιλικίων δὲ τῶνδε ἔχονται Ἀρμένιοι... Ἀρμενίων δὲ Ματινηοὶ χώρην τήνδε ἔχοντες. ib. 52, οὖρος δὲ Κιλικίας καὶ τῆς Ἀρμενίας ἐστὶ ποταμός... Εὐφρότης և 2^{ος}.
³ ib. VII 62—79:
⁴ Xen. Anab. III 5, 17; IV 3, 4 և 4, 4, VII 18, 25;
⁵ Anab. VII 8, 25:

և նրանց հետ էին կազուսիները, ազվանացիները և սակասինները¹։

Այդ բոլոր ազգությունները մասամբ կամ ամբողջովին բնակություն էին հաստատել այն տերիտորիայի վրա, որը հետագայում զբաղեցնում էր Հայաստանը։ Թվով քսանից սովելի, նրանք իրենց արյան մերձավորությունը կազմում էին մի քանի խմբեր։ Հայերի մասին ասվում է, որ «նրանք զինված էին փոշուղեացիների նման, որովհետև զաղթել էին Փոշուղեայից»։ Հետևապես, սպառազինության նմանությունը կարելի է համարել որպես ազգակցության նշան, և քանի որ ուտիները, միկերը և պարիկանիները զինված էին ինչպես պակտիները, տիրարենները և մակրոնները, իսկ մոսինոյկները՝ ինչպես մոսիները, ալարոզները և սասպեյրները՝ ինչպես կոլխերը, իսկ մարերը ունեին հատուկ սպառազինություն, ապա այստեղից հետևում է, որ վերոհիշյալ ցեղերը համախմբվում էին պակասիների, մոսիների և կոլխերի շուրջը՝ չհաշված հայերին և մարերին։ Այդ ցեղերից մի քանիսը անհետացան՝ երկրին ավանդելով իրենց անունը։ Այսպես, օրինակ՝ սասպարեղից իբրև ազգություն հետագան ալարոզները, սասպեյրները, տաոխները, փասիաները, բայց հիշողությունը նրանց մասին պահպանվեց աշխարհագրական անունների մեջ՝ Այրարատ, Սպեր, Տայք, Բասեան։ Պակտիների անունը պահել է արեւելյան Տիգրիսի վրա գտնվող այժմյան Բոհոտանը. կա նաև քրդական բոհոտուցեղ։ Պակտիներին ազգակից միկերի, հայկական Մոկ-էի մի մասը քաշվեց հյուսիս և բնակություն հաստատեց Կուր և Արաքս գետերի միջև. սրանցից է առաջանում Մխան-էը՝ Արցախի գավառներից մեկը և Մալաբը, որ հայտնի տափաստանի անունն է։ Հյուսիս քշվեցին նաև կոլխերը, մոսիները և ուրիշ ազգություններ։ Այդ խմբորումները տեղի էին ունենում հայ ազգության ձևավորմանը զուգընթաց։

Պատմությունը հիշատակում է նրա կազմավորման վճռական պահերից մեկը։ Գա վերաբերում է Ջարեհի և Արտաշեսի շքրջանին և արտահայտվել է ամբողջ ժողովրդին մատչելի միասնական լեզվի մշակման մեջ²։ Հենց նրանց օրոք, ըստ մի արժանահավատ վկայության, նախկինում փոքր Հայաստանը ընդարձակվեց ի հաշիվ հարևան հողերի. մարերից խլեց Կասպիանան, Սամիտիսը,

¹ Arriani, Anab. III 8.
² Str. VI p. 528=743, ὥστε πάντας ὁμογλώττους εἶναι.

Բասորուպեդան, իբերներից՝ Պարիադրեսյան նախալեռները (Տայք և Սպեր), Խորդենեն, Գոգարենեն, խալիբներից և մոսինոյկներից՝ Կարենիտիան և Գերքսենեն, կատաոններից՝ Ակիլեսենեն և, վերջապես, ասորիներից՝ Տամորիտիսը³։

Հողերի միացման պրոցեսը սկսվեց երկու կենտրոններում՝ Արտաշեսի և Ջարեհի տիրույթներում, որոնք առաջացել էին նախկին երկու սատրապություններից։ Այս շարժումը տարածվեց շքրջանաձև և Մարաստանի, Վիրքի, Կապադովկիայի ու Ասորիքի կողմից ընդգրկեց հարևան ազգությունների գրաված տարածությունները։ Կատաոնները Կապադովկիայի բնակիչների մի մասն էին։ Մարարոնի խոստովանությամբ հին հեղինակները նրանց համարում էին կապադովկիացիներից տարբեր ժողովուրդ, բայց նրա օրոք նրանք լեզվով և սովորույթներով նմանվում էին երկրի մյուս բնակչությանը՝ կորցրած լինելով իրենց ցեղային ինքնատիպությունը⁴։ Իսկ Կապադովկիայի բնակիչները, շնայած իրենց ալադանությունը, հիմնականում հարում էին ասորական աշխարհին. հույները, ի տարբերություն մյուսների, նրանց կոչում էին ասորիներ կամ սպիտակ ասորիներ⁵։ Կապադովկիան, ուրեմն, էթնիկական տեսակետից կապված էր սեմական ընտանիքին։ Այժմ բավականաչափ այսպես ցված է, որ իբերական ցեղերն էլ ազգակցություն ունեն սեմական ժողովուրդների հետ⁶։

Այսպիսով, համաձայն Ստրաբոնի այն վկայության, թե հնում ասորիների անունը տարածվում էր Բաբելոնից մինչև Եվբսիդյան ծովը, Միջագետքի հարթավայրերից մինչև Սև ծովը տարածված էր ինչ-որ ժամանակ ազգակից էթնիկական մի գոտի⁵։ Մասամբ

¹ Str. նույն տեղում, Σαμαρπίδαθι մեջ կարդացվում է Ταρωνίτις, բայց Քսենոփոնի նկարագրությունից երևում է, որ այդ շրջանը հույների նահանգի ժամանակ (400 թ.) արդեն գտնվում էր հայերի ձեռքին։ Ավելի ճիշտ ընթերցումն է Ταρωπίτις = Տմորիք։
² Str. XII I, p. 533=Teub. 749.
³ Herod. I 72, οἱ δὲ Καππαδοχαὶ ὑπὸ Ἑλληνῶν Σύριοι οὐνομάζονται, նաև VII 73. Str. XVI I, p. 737=1027, οἱ γοῦν Καππαδόκες... λευκόσυροι καλοῦνται.
⁴ Н. Марр, Основныя таблицы къ грамм. древне-грузинского языка съ предзарительнымъ сообщениемъ о родствѣ грузинского языка съ семитическими.
⁵ Str. VI I, p. 737=1027, δοκεῖ δὲ τὸ τῶν Σύρων ὄνομα διατεῖναι ἀπὸ μὲν τῆς Βαβυλωνίας... μέχρι τοῦ Εὐξείνου τὸ παλαιόν.

հետևելով Ստրաբոնին՝ ասորական կամ սեմական աշխարհը անվանենք արամեական: Մեծ աշխարհագետը, հենվելով հին տեղեկությունների վրա, այդ աշխարհի մեջ մտցնում է նաև հայերին, հակառակ Հերոդոտի, որի կարծիքով հայերը գաղթել են Փոյուզիայից: Հին հեղինակների մոտ տարակարծություններ կային Համերուսի հիշատակած էրեմբոյ ժողովրդի մասին: Ստրաբոնը կողմնակից է Պոսեյդոնի կարծիքին՝ «թվում է, որ ամենից ավելի լավ,— ասում է աշխարհագետը,— Պոսեյդոնն է բացատրում, ելնելով ժողովուրդների միմյանց հետ ունեցած ազգակցությունից և շփումներից: Չէ՞ որ հայ, ասորի և արաբ ժողովուրդները իրենց լեզվով, նիստուկացով և դիմագծերով ցեղային մեծ նմանություն են դրսևորում հատկապես այն վայրերում, որտեղ նրանք ապրում են հարևանությամբ: Հայտնի է, որ Միջագետքը բաղկացած էր այդ երեք ժողովուրդներից, և հենց այստեղ էլ ականառու կերպով երևան է գալիս նրանց նմանությունը: Եթե կլիմայական պայմանների շնորհիվ առաջ է գալիս որոշ տարբերություն՝ հատկապես հյուսիսում և հարավում բնակվողների միջև, ինչպես նաև նրանց և նրանց արանքում բնակվողների միջև, ապա ընդհանուր դժերը այնուամենայնիվ գերակշռում են: Ասորեստանցիները և արիանները նույնպես մոտ են հիշյալ ժողովուրդներին և միմյանց: Թվում է, թե այդ ժողովուրդների անուններն էլ իրար նման են: նրանց, ում մենք ասորի ենք կոչում, իրենք՝ ասորիները անվանում են հայեր և արամեացիներ, այդ անվանը նման է հայերի, արաբների և էրեմբոսների անունները¹: Իր աշխատության վերջում անդադառնալով նույն

¹ Str. I I, p. 53=Teub. 41, τὸ γὰρ τῶν Ἀρμενίων ἔθνος καὶ τὸ τῶν Σύρων καὶ Ἀράβων πολλὴν ὁμοφυλίαν ἐμφαίνει κατὰ τε τὴν διαλέκτον καὶ τοὺς βίους καὶ τοὺς τῶν σωμάτων χαρακτῆρας, καὶ μάλιστα καθὸ πλησιόχωροί εἰσι, δηλοῖ δ' ἡ Μεσοποταμία ἐκ τῶν τριῶν συνεστῶσα τούτων ἔθνων· μάλιστα γὰρ ἐν τούτοις ἡ ὁμοιοτης διαφαίνεται. εἰ δέ τις παρὰ τὰ κλίματα γίνεται διαφορὰ τοῖς προσθόρροις ἐπὶ πλέον πρὸς τοὺς μεσημβρινούς καὶ τούτοις πρὸς μέσους τοὺς ὄρους, ἀλλ' ἐπικρατεῖ γε τὸ κοινόν. καὶ οἱ Ἀσσύριοι δὲ καὶ οἱ Ἀριοὶ παραπλησίως πως ἔχουσι καὶ πρὸς τούτους καὶ πρὸς ἀλλήλους. εἰκάξει γε δὴ καὶ τὰς τῶν ἔθνων τούτων κατονομασίας ἐμφερεῖς ἀλλήλαις εἶναι. τοὺς γὰρ ὕφ' ἡμῶν Σύρους καλοῦμεν οὐ π' αὐτῶν τῶν Σύρων Ἀρμενίους, καὶ Ἀραμμαίους καλεῖσθαι· τούτῳ δ' ἔοικέναι τοὺς Ἀρμένιους καὶ τοὺς Ἀραβας καὶ Ἐρεμβούς, τάχα τῶν πάλαι Ἑλλήνων εὖτα καλοῦντων τοὺς Ἀραβας.

հարցին, աշխարհագետը նորից կրկնում է այն կարծիքը, որ այդ երեք ժողովուրդները, ապրելով հարևանությամբ, ազգակցություն են դրսևորում և կոչվում են միանման անուններով: Գրանցից մեկը կոչվում է արամեներ, մյուսը՝ արամեացիներ, իսկ երրորդը՝ արամբներ, կարծես մի ժողովուրդ կլիմայական պայմանների համաձայն բաժանվել է երեքի¹:

Այս արժեքավոր վկայությունից երևում է, որ հին հեղինակները ընդհանրություն էին գտնում հայերի, ասորիների ու արաբների միջև. դա արտահայտվում էր ոչ միայն բարասքինի և նիստուկացի մեջ, այլև լեզվի: Նրանց նմանությունը զարմանալի էր մասնավորապես այն բնակավայրերում, որտեղ նրանք ապրում էին կողք կողքի: Պոսեյդոնի ստուգաբանական մերձեցումները հիմնված են կյանքի իրական տվյալների, միմյանց հետ համեմատվող ժողովուրդների ընդհանրության և նմանության վրա և ոչ թե հակառակը, այսինքն՝ հեղինակը հօգուտ ստուգաբանության չի խեղաթյուրում իրականությունը: Այն կտրական հայտարարությունը, թե Պոսեյդոնը իր բացատրություններում ելել է ցեղային ազգակցությունից և շփումներից, շատ կարևոր է²:

Փոյուզիացիների հետ հայերի ազգակից լինելու մասին եղած վկայության կողքին ունենք նույնպիսի վկայություն նաև հայերի՝ արամեացիների հետ ունեցած ազգակցության վերաբերյալ: Թե՛ մեկ և թե՛ մյուս վարկածի ճիշտ լինելը կարելի է ապացուցել միայն հայոց լեզվի՝ իր բարդությամբ այդ զարմանալի հուշարձանի վերլուծության միջոցով: Եթե փոյուզիացի ասելով պետք է հասկանալ հնդեվրոպացիներ, ապա Հերոդոտի խոսքերը արդարևում են: Հայոց լեզվի հետազոտությունները հնդեվրոպական հնչյունաբանության տեսակետից բացահայտեցին հնդեվրոպական մեծ ընտանիքի հետ հայերի ունեցած ազգակցական կապերը և ճշտեցին նրանց լեզվի տեղը հնդեվրոպական լեզուների արևմտյան ճյուղի մեջ: Կասկած չկա, որ պատմական մյուս վկայությունների ողով տարվող ուսումնասիրությունները երևան կհանեն հայերի անշուքությունը նաև արամեական ընտանիքին: Այդ կարգի աշխատանքի հաջողությունը կարելի է ապահովված համարել բառական այն նյութերի հիման վրա, որ առայժմ հաջողվել է առանձնացնել:

¹ Str. XVI p. 784=1094.
² ib. loc. cit. από της τῶν ἔθνων συγγενείας καὶ κοινότητος ἐτυμολογῶν.

Հայոց լեզվի մեջ եղած արիական և սեմական տարրերի հարբերակցությունը ցույց տալու համար պետք է ընդունել, որ Հայաստանը նախապես մտնում էր գերազանցապես արամեական տարրեր ունեցող ցեղախմբերի՝ կառդու-խ-ների, մաու-խ-ների, սա-ապեյր-ների և այլ ցեղային խմբերով բնակեցված գոտու մեջ: Կիմերների հայանի արշավանքը է դարձում Փոքր Ասիայում առաջ բերեց ժողովուրդների տեղաշարժ: Փոյուգիական հայերը, որոնք դուրս քշվեցին իրենց սահմաններից, անցան Եփրատը և խուժեցին տեղական արամեական բնակչության մեջ: Նրա մի մասը մնաց հյուսիսում, մյուսը՝ հարավում, իսկ նվաճված շերտը խառնվեց հազթոզներին¹: Եկվոր փոյուգիացիների և գերազանցապես արամեական ծագում ունեցող բնիկների ձուլումով ձևավորվեց հայ ազգության միջուկը:

Միջուկի երկակի կազմ ունենալու ամենալավ ապացույց է ծառայում հայերի երկու անվանում ունենալը՝ հայ-իւսի, ինչպես իրենք են իրենց կոչում, և armen-ius, ինչպես կոչում են հարեանները: Մեկը ծագում է եկվորներից, իսկ մյուսը՝ բնիկներից: Հայ ազգության ծագման պրոցեսը զարմանալի ճշտությամբ ներկայացված է հայ հին ավանդությունների մեջ, որոնք պահպանված են Խորենացու և Անանունի մոտ: Երկու էպոսիմները՝ H a i-k Հայ-կ և A r a m a n e a k Արաման-եակ կամ A r m e n - a k Արմեն-ակ, մարմնավորում են երկու՝ հնդեվրոպական և արամեական տարրերը: Հենց armen արմէն, A r m e n i - k Արմենիք անվանումը, ըստ Խորենացու, ծագում է A r a m -ից և այս հարցում հայ ավանդությունը պաշտպա-

նում է Պոսեյդոնին, որը ἀρμένιοι համեմատում էր ἀραμείοι-ի հետ: Հայ-ի ծագումը բացատրելու փորձերը առայժմ անհաջող են¹:

Հիմնական զանգվածին միացան ուրիշ ցեղեր ևս. դեպի այն մշտապես սկսեցին հոսել էթնիկական խմբեր ծայրամասերից՝ Ատրպատականի, Վիրքի, Կասպաղովկիայի և Սիրիայի սահմաններից: Ժողովուրդների ձուլումը շարունակվեց մինչև Զարեհի և Արտաշեսի ժամանակները. նրանց ժամանակ էլ ավարտվեց երկրի հայացման կարևոր փուլերից մեկը: Տիգրան Մեծի կայսրության սկզբնավորման նախօրյակին ցեղային այլազանություններն արդեն այնքան էին հարթվել, որ ամբողջ բնակչությունը խոսում էր մի ընդհանուր լեզվով: Համազգային լեզվի մշակման պահը կարող է համարվել ցեղային-տոհմական կենցաղի սահմանադիժ:

Մի երկրի համար, որտեղ այդքան շատ էին տարբեր ցեղերն ու ազգությունները, տոհմական իրավակարգը հանդիսանում է այն բնական շրջանակը, որի մեջ պետք է կադապարվեր կյանքը: Տարբեր ցեղերից կազմված միջավայրում մարդու դիրքը պետք է որոշվի ավելի շուտ այս կամ այն տոհմի հետ ունեցած արյունակցական մերձավորությամբ: Հայերի, որպես խաշնարած ժողովրդի մասին Հերոդոտի վկայությունը ակնառու կերպով ցույց է տալիս, թե հայերը այն ժամանակ զարգացման ինչ աստիճանի վրա էին գտնվում²: Այն, ինչ մենք գիտենք հայերի հետ նույն մշակութային աշխարհում գտնվող նրանց հարեան ժողովուրդների կյանքից, որոշակի դադափար է տալիս այդ փուլի մասին:

Հնդհանուր տոհմային գույք, որ տնօրինում է տոհմի ավագ

¹ Այս հիման վրա կարելի է հարց հարուցել մի քանի ժողովուրդների ազգակցության վերաբերյալ, որոնք ապրում են Հայաստանից դեպի հարավ և հյուսիս Kardu-, Καρδοῦ-χοι, Κορδου-σίων, Κορδου-ήνοι և Karðu, Դժժոճ-ըլո, Դժժոճ[ը]-ըլո (Այն կարծիքը, թե կարգուխները բրդերի նախաձայրներ են, այժմ մերժված է. բրդերին հիշատակում են Խորտո անունով, Nöldeke, Kardu und Kurden, տե՛ս Festschrift für H. Kiepert, Berlin 1898, p. 73. M. Hartmann, Bohtan, p. 90): Μόσ-χοι հարազատ է հայ. Մուշին, որտեղից և Մուշ-եղ, որտեղ եղ=վրաց. ըլո հարավի χαλδοί-ն՝ հյուսիսի խաղտի-թին և χαλ-υβ-εσ-ին: Մտարոնը տարբերում է երկու մարզ, որոնք կրում են Συσπιρίτις անունը, մեկը Ճորոխի վրա Հերոդոտի Σάσπειρες, Քսենոփոնի Έσπερίται, իսկ մյուսը՝ հարավում Տիգրիսի մոտ Առաջին մարզը այժմյան Ս պ կ բ ն է, իսկ երկրորդը՝ Ե ու պ ի ա ն, Eranšahr, p. 159: Հայ. Մոկ-ք և Μύχοι, որտեղից և Մուչանն ու Մխանը Արցախում:

¹ Հին հեղինակներից անկախ Ն. Մառը հնարավոր է համարում որ, armen-ius-ը առաջ եկած լինի Aram-ից. տե՛ս նրա հոդվածը Ի. Ա. Զավախովի «Государственное строю древней Грузии и древней Армении» 1905 թ. գրքի մասին տպագրված 1908 թ. «Жур. М. П. Просвещения»: Ինչ վերաբերում է հայ-ին, ապա ոմանք գտնում են, որ այն առաջ է եկել pari-զրախ-ից՝ հազթոզի իմաստով, մյուսները՝ H a i i -ից, Jensen, Hittiter und Armenien 1898 և վերջապես համեմատության մեջ են դնում pari-ի հետ Παλονία Մակեդոնիայի մեջ մի երկիր, որ եղել է փոյուգիացիների սկզբնական հայրենիքը: Hommel, Grundriss d. Geogr. und Gesch. d. alten Orients I p. 31. Հայերի Քեսալիայից ծագած լինելու մասին են վկայում, Մտարոնի կարծիքով, նաև նրանց հազուսաները. και την έσθιτα δό την Ἀρμενιακήν Θεταλιικήν φάσιν, οίον τούς βαθείς χιτώνας. . . και ζωνόουσι περί τὰ στήθη και έφαπτιδας. p. 530 = p. 745.

² Herod. V 49, Ἀρμένιοι. . . έόντες πολυπρόβατοι.

անդամը, ինչպես այդ իրերների և արարենների մոտ էր, եղբայրների նախապատվությունը որդիների առջև և կանանց ընդհանրությունը արարենների մոտ, հանրային կառավարման բնորոշ մարմինների գոյությունը ասորեստանցիների մոտ, մասնավոր ժառանգության բացակայությունը՝ կապված ազվանների մոտ գոյություն ունեցող մեռնողի հետ միասին նրա գույքը թաղելու սովորության հետ, թագավորին պաճելը և ընդհանրապես նրա գիրքը այդ նույն աշխարհին պատկանող մի քանի ժողովուրդների մոտ, այս ամենը հանդիսանում են տոհմական ժամանակաշրջանի կացութաձևը ընդհանրապես երևույթների:

Մի քանի գծեր, որ ավելի ուշ կարելի է տեսնել Հայաստանի տոհմական ազնվականության մոտ, այն է՝ հողատարածությանը ամբողջ տոհմի կողմից անբաժան տիրելը տոհմի ավագ անդամի գլխավորությամբ ցույց են տալիս, թե որտեղ են թաքնված նման երևույթների արմատները, Հայտնի չէ, թե մոտավորապես ի՞նչ ձև ստացավ հայերի տոհմական կյանքը: Բնակչության այդպիսի բազմացեղ կազմի պայմաններում կյանքի ձևերը կարող էին խիստ բազմազան լինել՝ նայած թե տվյալ էթնիկական խումբը զարգացման ինչ աստիճանի վրա էր գտնվում: Բայց այնուամենայնիվ հնարավոր են ընդհանուր խմբավորումներ էթնիկական զանգվածի գլխավոր մասերին համապատասխան: Լեզվական վերապրուկների մեջ հատուկ ուշադրության են արժանի նախաբարական անվանումների մի քանի տերմիններ, որոնք տոհմական կաշտիձաձևի սեփականությունն են և ճիշտ լուսաբանության դեպքում դադարափար են տալիս այն մասին, թե ինչպես էին դասավորվում էթնիկական գլխավոր շերտերը տոհմական ժամանակաշրջանում, և թե ինչ ձևով էր տեղի ունենում ժողովրդական ուժերի ինտեգրացումը կյանքի տոհմական ձևերի քայքայման ժամանակ: Այդ տերմիններն են՝ malxaz, aspet, *mamak և tēr իրենց նախնական նշանակությամբ, որը և մենք կփորձենք պարզաբանել:

Բոլոր շորս տերմիններն էլ սկզբնապես նշանակում էին իշխանություն կրող անձնավորություն երկրի զանազան մասերում: Malxaz-մալխազը խորխոռունի իշխանների տոհմական տիտղոսն

¹ Այդ ժողովուրդների՝ վրացիների, ազվանացիների նիստուկացի նկարագրությունը տե՛ս p. 501 = Teub.-ի հրատ. p. 703 և հաջորդ, ասորեստանցիների մասին՝ p. 745—1039, արաբական ցեղերի մասին՝ p. 783—1092 և 778—1086:

էր, որ նշանակում էր ընդհանրապես տիրող, իշխան, թագավոր, որ ծագում է ասորական malxazu = արաբական melik-ից: Նրան համապատասխանող տիրույթը ավելի փոքր միավորով հանդիսանում էր աղխ-ալխ-ը *haχl-ից, որ նույն ծագումն ունի, ինչ որ վրացերեն saxli-տունն էր: Այս նույն արմատից է աղախիքը՝ alaxin-ը, սկզբնապես այն անձը, որ պատկանում էր ալխ-ին, հետագայում՝ սպասուհի:

Մյուս տերմինը՝ aspet-ասպետ, նույնպես տոհմական տիտղոս է և պատկանում է Բագրատունյաց իշխաններին¹: Այս բառը մեկնաբանվում է զանազան ձևով և, ինչպես մեղ թվում է, առանց հիմքի: Իրականում այն կազմված է as և pet-ից, որտեղ երկրորդ մասը նշանակում է գլուխ. ամբողջ դժվարությունը առաջին վանկի մեջ է: Հիմք կա այն համեմատելու նախաբարական կենցաղից վերցրած մի այլ և ոչ պակաս կարևոր տերմինի՝ se-puh՝ սե-պուհի առաջին վանկի հետ: Sepuh բառի ստուգաբանությունը արդեն ճշտված է²: Sepuh-ը, որ ծագում է ավելի հին se-puh-ը ձևից, իրանական viθaruθra-ն է, որտեղ ruθra՝ պլուն, նշանակում է որդի, իսկ viθ-ը, ինչպես տեսանք վերը, տոհմական կազմակերպության օղակներից մեկն է, ուստի և se-ն viθ-ի կրճատ ձևն է:

Սեպուն տերմինը հայ գրականության մեջ պահպանվել է նաև aspirak՝ Ասպուր-ակ ձևով, որ Փավստոսի մոտ հիշատակված հայտնի եպիսկոպոսի անունն է: Նախաշեշտային ու-ի գոյությունը ցույց է տալիս, որ ու-ն եղել է երկու բաղաձայններից առաջ, այսինքն՝ բառը հնչվում է որպես aspuhr-ak: Մասնիկի զեղչումով մնացել է spuhr, որը չի կարելի չբաղդատել sepuh-ի հետ, նրա հնագույն sepuhr ձևով: -as և -se սկզբնավանկերի նույնությունը անկասկած է:

Հետաքրքրական է, որ Ասպուրակ-ը գործ է ածվում նաև Ծ սկզբնատառով՝ Վասպուրակ, և ընդհակառակն՝ ոչ հայկական հուշարձաններում Վասպուրական նահանգի անունը, որ հանդում է միևնույն բառին, մեջ է բերվում առանց սկզբի հնչյունի՝ *Aσ-

¹ Այս տիտղոսը բացառապես Բագրատունիներին է պատկանում. «Ասպետն մեծ պարթևն և պահլան» Սեբեոս, էջ 34. պետք է կարգալ սևս <պարս> պահան՝ ինչպես ոչ ճիշտ գրված է 36-րդ էջում «զվասպարպետն մեծ զպարթևն և պահլան»:

² Н. Марр, Этимология двух терминов арм. феодального строя. Зап. В. О. Имв. Р. Арх. Общ. томъ XI.

πουρ <αυ> άν¹, Aspurg-ի կազմին vaspur ձևի գոյությունը էլ ալիքի անկերը ցույց է տալիս, որ այդ երկուսն էլ ծագել են viθa-puθra-ից: Ի միջի ալից հնչյունական մի երևույթի համաձայն, բոս որի բառակազմի օ-ն իրարի է հայաց լեզվի հնչյունաբանությունը, իրանական viθapuθra-ն, resp. vaiθapuθra, պետք է որ հայերին անցներ isapuhr, asapuhr ձևով կամ անշեշտ օ-ի զեղչումով ispuhr, aspuhr ձևով²:

aspuhr-ի և sepuhr-ի կամ as-ի և se-ի նույնությունը պարզուրույց հետո պարզվում է նաև մեզ հետաքրքրող aspet տերմինի ստուգաբանությունը: Aspet-ը ծագում է viθa-pati-ից այնպես, ինչպես aspurg-ը viθapuθra-ից, այլ կերպ ասած՝ aspet նշանակում է viθ-ի կամ տոհմի գլուխ, պետ, իսկ sepuh՝ տոհմի արջի: Վեճմ, վսամ բառը, որի լրիվ ձևն է վսեամ, անկասկած իրանական *viθya-ma-ն է և գերաբերում է viθ-ին այնպես, ինչպես zantim-ma-ն zantim-ին: Երա սկզբնական նշանակությունն է՝ տոհմի անդամ, տոհմիկ, հետագայում՝ մեծատոհմիկ, պեհ³:

¹ Կիբալոս Գանակիցի, էջ 14, Վասպուրակ-նո. Narr. de rebus arm. et ἑπικοποτοί τῆς Ἀσπυρ <αυ> άν χώρος. (Համաձայն Փարիզի պաշտոնական հրատարակչության, հրատ. Migne, Patr. Grace. 132, p. 1249): Такайшвили, Три хронологи, p. 122, Միզանթիոն և Ասպուրացուն. Մովսես Կաղապիսապոստոս մոտ, էջ 69, Վաչաչանի ժողովին մասնակցողներից մեկի անունը Ասպուրակ-նո էր:

² Ինչ vaspurg-ը ալիքի մոտ է իտալական ձևին, քանց հայկական հնչյունաբանության տեսակետից aspurg-ը ալիքի նախնական է: Նախադրաբարյան շրջանում իրանական փոխառությունները հայաց լեզվի մեջ կորցնում էին սկզբի օ հնչյունը, որովհետև հայերը, հույների նման, բառի սկզբում այդ հնչյունը չէին արտասուելու: Սերմատական բառերում օ-ն օրինաբար դառնում էր ջ, իսկ փոխառյալ բառերի մեջ անհնարանում էր V-ով սկզբով իրանական բառերը, որ մտել են հայաց լեզվի մեջ, պատկանում են դարարյան շրջանին: Այս բացատրություններից հետո բոլորովին վերանում են Հլուրջմանի տարակուսանքները ZDMG 46, p. 327, sepuh բառի սկզբնական vi-ի անհնարանը հնարավորության մասին Իրանական viθa-puhr-ը, ինչպես կարելի է տեսնել նրա համարմեջ հունական οἶκος=viθ բառից, ծագում է *vaiθa-puhr-ից, որանդից և *vasθ-puhr և *vasia-puhr, հայաց ἄσε-puhr-ի և ase-puhr-ի նախատիպերը և նայած թի շեշտը որտեղ է նաև առանց սկզբնական օ-ի Ասենք as-ի և se-ի հերթադառնությունը կարելի է բացատրել նաև ձայնավորի անցումով մանավանդ բառակազմի sp-ի գուրդրման ժամանակ, օրինակ՝ aspanj, հայերեն ապանչական և պարս. sḡpanj: Aspahapel, Spahpet, Ispahbed. aspar և spar, վ ա հ ա ն և ալիս:

³ Հավանորեն նաև վէս-կպարտ=viθya, *vaiθa viθ-ից -ya մասնիկով: Վեճմի նման նաև վեր սկզբնական ցույց էր տալիս տոհմի պատկանելը.

Ինչպես և նախորդ տերմինը, նույն բնույթն ունի նաև mama-k-ը մամակը: Պատմական դրականության մեջ այն հանգիստում է որպես Մամիկոնյան տոհմին հատուկ անձնանուն: Սկզբում այն իշխանական տոհմերից մեկի արտաքին էր, իսկ հետագայում քրննարկված երկու տիտղոսների նման դարձավ տոհմական անձնանուն. մամակ կամ մամիկ-ը դարձավ Մամիկոն-եան¹, ինչպես ասպետից՝ Ասպետունի կամ մաղխազից՝ Մաղխազունի: Մենք կարծում ենք, որ mama-k-ը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրերական mama, հայք բառի հայացված ձևը. այս բառը նույնպես գալիս է տոհմական ժամանակաշրջանից և նշանակում է տոհմի հայք, տոհմապետ և համանիշ է վրացական mama-saxlisi-ին:

Ուշագրավ է, որ հայկական ավանդություն համաձայն էլ Մամիկոնյանները ծագում են Մամիկ-ից: Ասաջարիվազ ստուգաբանությունը հաստատվում է ավանդությանը և նոր լույս է սփռում իշխանական հայտնի տան ծաղման մասին եղած առասպելի վրա: Ըստ հայկական ավանդությունների Մամիկոնյանները ծագում են «ճ. և ն. ե. բ. ի. ց.». Փավստոսի մոտ իրենք՝ Մամիկոնյանները, իրենց մասին հպարտությանը ասում են, որ իրենք ծագում են Ճենաց աշխարհի թագավորներից²: Փավստոսի խոսքերից շի երևում, թի ինչ է նշանակում «աշխարհի ն. ճ. և ն. ա. ց.»: Անանունի հազարամից երևում է, որ դրա տակ պիտի հասկանալ Պարսկաստանից արևելք՝ Բալխից այն կողմն ընկած երկրներից մեկը, այսինքն՝ Ջինաստանը: Մամիկոնյանների ենթադրյալ նախահայրերը՝ Մամիկը և Կո-

նձմո. տոհմ, տոհմիկ օSAM բառը հնագույն նշանակությամբ պատահում է Քովմա Արճունու մոտ, էջ 231 սեբանիկի ել. Գրիգոր Քրտունաց վ ա մ ա Վոզես Կաղապիսապոստոս, էջ 68, Վաչաչանին վերաբերող եկեղեցական կանոններում եղհաս եկեղեցու ի վսամ եկեղեցին տացեն կամ Գի կիրակիի տը և ծառայ ի վսամ եկեղեցին երթցին յաղթա: Հենց այստեղ էլ, 18-րդ կանոնում՝ «որ ասասնորդ տան պատ մարդիկ՝ զկան ի բուն եկեղեցին տացեն, և զկեթն վարանց եկեղեցին» հավաքվում է ազատների կամ ազնվականների բուն եկեղեցուն: Գրանցից մեկի տակ էլ հասկացվում է վսամ եկեղեցին: Եթե հնարավոր համարենք viθyama-pati-ի գոյությունը, ապա ասպետների սիրած Սմ-պատ անունը կարելի է ծագած համարել *i-sḡmpati-ից:

¹ Պեռես է դարձավ Մ մ մ ի կ անունը ընդունված է եղել Մամիկոնյանների տոհմում, Սեֆես, էջ 48, 49, 56 և 58: Ունի կամ ուն վերադարձությունը, վրաց. -ո՛ճ Մամիկ-ուն և Մամիկ-ուն հոգնակի թվի ցուցիչի ճՈ-ի տարբերակն է, իսկ եսնը կրկնված և միևնույն նշանակությունը անցնող վերջածանց է:

² Փավստոս, Ե, էջ 11Եր նախիք լեալ էին թագաւոր աշխարհին ճենացա:

նակը, ըստ ավանդության, Չինաստանում թագավորից հետո ամենանշանավոր իշխանի որդիներն էին: Այդ իշխանի մահից հետո թագավորը ամուսնանում է նրա այրու հետ և նրանից ունենում է մի որդի ձեռնադրանով, որը և պետք է ժառանգորդ դաճը: Նույն մորից ծնված նրա եղբայրները՝ Մամիկը և Կոնակը, դավադրույուն են նյութում, որպեսզի տիրեն դահին: Դավադրույունը չի հաջողվում, և նրանք փախչում են Բալխ, ապաստանում Արշակունի թագավորի մոտ: Ընկերակուրը պահանջում է փախստականներին իր ձեռքը հանձնել, բայց Արշակունին մերժում է՝ նրան հանգստացնելով, թե փախստականներին կուղարկի հետո արևմուտք, աշխարհի ծայրը, ուր մայր է մտնում արևը: Եվ իսկապես, ձենրակուրի հետապնդումներից ազատելու նպատակով նրանց ուղարկում է Հայաստան՝ իր ազգակից Արշակունու մոտ:

Այս դրույցի վերջին մասի նպատակն է բացատրել, թե ինչպես Մամիկոնյանները Չինաստանից եկան հաստատվեցին Տայրում՝ իրենց տոհմական կալվածքում. բանից դուրս է գալիս, որ թագավորը դիտմամբ է նրանց բնակեցրել աշխարհի ծայրը: Ավանդության մեջ հիշված ձենաց աշխարհի մեկնաբանության շուրջը թյուրիմացություն կա: Նախնական ավանդության մեջ ձեռք ասելով հասկանում էին ոչ թե հեռավոր շինացիներին, այլ հարևան ծաներին, որոնք ապրում էին Մամիկոնյանների տոհմական կալվածքից՝ Տայրից, ոչ հեռու: Ըստ Խորենացու վկայության հայերը ծաներին կոչում էին նան, ձան-իք, այժմ Զանիք: Մամիկոնյանների տոհմական հատկությունները՝ դյուրաբորբոք խառնվածքը և արտասովոր քաջությունը ցույց են տալիս, որ նրանք ավելի շուտ ազգակից են դեռևս Զ դարում իրենց ուղեմատենությունից արքի ընկնող ծաներին, քան հեղաբարո շինացիներին: Այս լուսաբանությանը Մամիկոնյանների մասին եղած դրույցը պատմական հիմք է ձևեր բերում:

Հրեթացս նշենք նաև, որ Վրաստանի Օրբելյան իշխանները ևս իրենց նախահայրերին որոնում էին ձենաց աշխարհում, և որ նրանց մետ էլ հանդես է գալիս ձենրակուրը: Զուգադիպությունը պատահական չէ. ըստ երևույթին տվյալ դեպքում գործ ունենք Մամիկոնյանների տոհմական դրույցի մի վերապարուկի հետ, և այդ կարելի է բացատրել նրանով, որ Օրբելյաններն իրենց համարում էին Մամիկոնյանների ժառանգներ: Եվ դարմանալու բան չկա. ինչպես որ Բագրատունիները շարժվեցին Սպերից դեպի Վրաստան, Մամիկոն-

յաններն էլ կարող էին Վրաստան անցնել հարևան Տայրից: Օրբելյանների թշնամական վերաբերմունքը վրաց Բագրատունիների նկատմամբ կարծես թե Մամիկոնյանների՝ դեպի հայ Բագրատունիներն ունեցած անբարյացակամ վերաբերմունքի արձագանքն է:

Մեր քննության ենթակա տերմիններից վերջինը՝ ալք-ը, անծանցված է աի-ից և այր-ից: Այս երկրորդ մասը հայոց լեզվի մեջ շատ ծանոթ մի բառ է, որ նշանակում է մարդ, այլ: Տի-այր-ի օրինակով է կազմված աի-կին բառը: Տի-ի իմաստը գրեթե անբունելի է. նույնիսկ շատ էլ պարզ չէ, թե ինչ հարաբերության մեջ է այն այր-ի և կին-ի հետ, որոշիչ է նրանց համար, թե՞, ընդհակառակը, ինքն է որոշվում նրանցով: Ըստ կազմության այս բառերը հիշեցնում են վրացական *mama-upali* և *deda-upali*: Առաջին բառը հայտնի է *ma <m> pa *-ից սղված *mepe* ձևով, ինչպես հայերեն տէր-ը: Վրացական *upali*-ին իրականում և ստուգաբանորեն համապատասխանում է սեմական *vaal*-ալիսակալ բառին. սեմիտները այսպես էին կոչում իրենց տոհմերին հովանավորող աստվածներին: Այս բառը, որ սեմիտների մոտ աստվածություն, երկնքի տիրակալ էր նշանակում, վրացիները փոխանցել են թագավորին որպես երկրի տիրակալ: Ըստ երևույթին ինչ-որ նման բան էլ պատահել է նաև հայկական աի-ի հետ: Հնչյունական կազմով և իմաստով հայերենի աի-ի ծագումը կարելի է բխեցնել հնդեվրոպական *di*-բառարմատից, որ հայտնի է շատ լեզուներում և զանազան բարդություններում: Նրանից անծանցված բառերը հանգում են երկու հիմքի՝ *di* և *diu*. այդ երկուսն էլ ընդգրկում են լույսի-ցերեկվա և երկնքի-աստծո հասկացությունները: Հայերենում կա թե՛ մեկ և թե՛ մյուս բառահիմքը և աիվ-ցերեկ և աի-ք plur ձևով. *tant*-աարիք, այսինքն՝ օրեր: *di* հիմքից է առաջացել հենց մեզ հետաքրքրող աի-ն: Նախապես աի-ն, ինչպես և լատինական *deus*-ը, արտահայտում էր բարձրագույն էակի, աստծո գաղափարը¹, իսկ հետո սկսեց գործածվել նաև թագավոր և առհասարակ երկրային տեր նշանակու-

¹ Սրան են վերաբերում լատին, *deus* և *dies*, հուն. *θεός*, *δίας*, սանսկրիտ. *djāu-s* երկինք և աստված, *devas* աստված, գեղ. *daeua*, Ըստ Հերոդոտի I 131, հին պարսկ. *Δία* նշանակում էր *τὸν κύκλον πάντα τοῦ αἰθρανοῦ*. *ույի* նշանակություն ունի հայկական աի-ն տի-եզերք բառի մեջ, որ նշանակում է հատկապես երկնակամար, նման պարսկ. *Δία*-ին (նշանակությունը խոտացնելու համար կըցված է եզերք-ծայր) և ապա՝ փեղեկ:

թյամբ, այսինքն՝ նա էլ արժանացավ այն բախտին, ինչ որ վրացական սթալի-ին, տի-ի այս վերջին նշանակությունը գորք-ինչ նսեմացնելու համար սկսեցին նրան կցել այ՝ մարդ բառը, տի-այր տէր: Հետաքրքրական է այն, որ մտքի այդ պրոցեսը մի անգամ էլ կրկնվեց: Հետագայում, երբ տի-այր բառը գործածությունից իսպառ դուրս վանեց տ-ին և սկսեց հայաստանյան նշանակել թե՛ երկրի և թե՛ երկնքի տեր, ադա հիշյալ երկու գաղափարները տարբերելու համար կրկին հանդես եկավ նույն այր բառը և կազմվեց տի-այր բառը, որ գրականության մեջ հայտնի է որպես հատուկ անուն, բայց տարակույս չկա, որ սկզբում այն գործ է ածվել առհասարակ իշխողի, տիրողի նշանակությամբ¹:

Նախարարական միջավայրից վերցված բննաբնիկ տերմինները մեր լուսարանությունը հանդիսանում են տոհմական կարգի հնագույն ժամանակաշրջանից եկող ժառանգություն: Դրանք հենց այն տեղական անվանումներից են, որ ունենին կոմարքոսները: Էթնիկական միջավայրի խայտարղենության հետևանքով կոմարքոսները պետք է որ տարբեր անվանումներ ունենային: Այն շորս գերակշռող հոսանքներին համապատասխան, որոնցից en gtos բաղկացած էր Հայաստանի էթնիկական կազմը, նշված շորս տերմինները պետք է համարել այդ անվանումներից առավել տարածվածները: Այն շրջաններում, ուր գերակշռում էր արամեական աղղեցությունը, տոհմի պետերը կոչվում էին malxaz, Ատրպատականի կամ Իրանի ծայրամասում գործածական էր իրանական տերմինաբանությունը՝ aspet, sepuh, vsem, իրերիական գոտում առավել գործածական էր mamak անվանումը և, վերջապես, փոյուզիական շերտով բնակեցված վայրերում՝ ter, tun և այլն: Սրանցով սակայն, կրկնում ենք, չէր սպառվում տերմինաբանությունը. բացի այն, որ մեր առանձնացրած գոտիները ամենևին էլ միատարր չէին, և նրանցից յուրաքանչյուրին հատուկ էր որոշակի խայտարղենություն, որը

պետք է արտահայտվեր անբնաբանության մեջ, կային նաև ուրիշ էթնիկական իմբեր. այսպես, օրինակ՝ կար մի ամբողջ փոքրիկ ժողովուրդ՝ մարպեր անունով, որոնց պուլսը կաշվում էր mard-pet մարգպետ և այլն:

Տոհմային հարաբերությունների ժամանակաշրջանը ավարտվում է Զարեհի և Արտաշեսի օրոք Հայաստանում տեղի ունեցած քաղաքական խմբումներով: Այդ ժամանակին է վերաբերում տոհմային կարգերի քայքայման սկիզբը և սոցիալական նոր հարաբերությունների ծնունդը: Հնդաշրջման էությունը կայանում էր սոցիալական դանդախի շերտավորման և դասայնության սկզբունքի առաջացման մեջ. տոհմերի պարագլուխները կամ պետերը հետզհետե դառնում են անվանի մարդիկ, տիրակալներ, և դրանով իսկ դրվում է սպառա տոհմական իշխանությունների սկիզբը: Այս փոխակերպությունը տեղի է ունենում այն պահից սկսած, երբ տոհմապետի կոչումը դառնում է ժառանգական: Դրա շնորհիվ նրա սերունդը առանձնանում և հատուկ տեղ էր գրավում հասարակության մյուս անդամների շարքում: Ժառանգելու իրավունքը իր հետևից բերում է նաև սեփականության իրավունք այն ամենի վրա, ինչ ենթակա է տոհմապետի իշխանությանը: Այս ճանապարհով նախկինում միատարր և իրավահավասար հասարակական օրգանիզմը սոցիալապես բաժանվում է երկու անհավասար մասերի. թվով փոքր մասը, որ ժառանգ էր տոհմապետից, իշխում է, իսկ մեծամասնությունը հպատակվում է նրան: Տոհմապետը տիրակալ դառնալով, շատ հեշտությամբ կարողանում է իր իշխանությունը տարածել նաև ուրիշ տոհմերի վրա և, հետզհետե ընդլայնելով իր աղղեցության ոլորտը՝ բարձրանում և հասնում է թագավորի աստիճանի: Այս պրոցեսը հիանալի կերպով կարելի է ցույց տալ Իրերիայի սոցիալական շերտավորման օրինակով: Այստեղ, ըստ Սարաբոնի, կային շորս կարգի մարդիկ. առաջին կարգից նշանակվում էին թագավորները, երկրորդից՝ բուրմերը. երրորդ կարգը բաղկացած էր այն բնակչությունից, որ զբաղվում էր երկրագործությամբ ու վեճվորական գործով, իսկ չորրորդը՝ հասարակ մարդկանցից, թագավորի ստրուկներից, որոնք նրան ապրուստի միջոցներ էին հայթայթում. նրանց ունեցվածքը ընդհանուր էր՝ ըստ տոհմերի, և յուրաքանչյուր տոհմը կառավարում էր ամենաավագ անդամը:

Թագավորների տոհմը և բուրմերի տոհմը, ալսպես ասած, ար-

¹ Ըստ Pom. Trog. prologus 42, successores deinde eius Artabanus et Tigranes cognomine deus a quo subacta est Media et Mesopotamia: Նուրբ Տիգրան Մեծի մասին է. ինչպիսի պետք է հասկանալ նրա deus մականունը. արդյո՞ք դա հայերեն տի բառի թարգմանությունը չէ բազմաթ և ասաված իմաստով: Գուցե և Տիգրան անունը կապ ունի մ արմատի հետ և նշանակել է աստվածություն, ինչպես լատ. Գիանու, հուն. Διωνη. Hommel, Grundriss, p. 39 ann. 2 և 43 ann. 1 էնթաղում է, որ Techib, Tişup, Teisbas, Tişpak անունների սկզբի te վանկը նշանակում է տէր:

հետապահան տոհմեր էին, որ առաջացել էին այն անձնավորության սերունդներից, որը, որպես տոհմապետ, յուրացրել էր այդ կոշումը ժառանգաբար կրելու իրավունքը: Նա սերում էր այն նույն տոհմից, որի մեջ նախապես մտնում էին այն մարդիկ, որոնք հետագայում ստրկության մեջ ընկան, այլ կերպ ասած՝ թագավորն իր ստրուկներով հանդերձ սկզբում տոհմային մի ամբողջական միավոր էր, որի գլուխը հանդիսանում էր ինքը: Տոհմապետի ժառանգական իրավունքը ճանաչելուց հետո նրա ընտանիքը սկսում է սոցիալապես առանձնանալ տոհմից, և որքան նա վեր է բարձրանում, նույնքան էլ ցած է իջնում տոհմի մնացած մասը. վերջապես իր տոհմին ստրկացնելու գնով նա հասնում է թագավորական աստիճանի: Հետագայում նա իրեն է հպատակեցնում նաև ուրիշ տոհմեր՝ Իրերիայի մնացած բնակչությանը, որը բաժանված էր տոհմերի ու դրադվում էր մասամբ հողագործությանը և մասամբ էլ՝ ղինվորական գործով¹:

Կարելի էր մտածել, թե քրմական տոհմն էլ նույնպիսի ծագում ունի, ինչ որ թագավորականը, այսինքն՝ այն առաջ է եկել տոհմի քայքայման հետևանքով: Սակայն այդ դեպքում նրանք էլ պետք է ստրուկներ ունենային, որը չենք տեսնում: Ստորաբունը պնդում է, որ թագավորական տոհմից մեկը՝ ամենաավագը, ժառանգում էր գահը, իսկ թագավորից հետո եկող անձնավորությանը հանձնվում էին արդարադատությունը և զորքի հրամանատարությունը: Այդ վկայության մեջ է թաքնված այն ուղին, որով կազմվել է քրմական տոհմը: Թագավորը, բարձրանալով տոհմապետությունից, սկզբում իր ձեռքն է կենտրոնացնում բոլոր ֆունկցիաները. նա միաժամանակ իշխող է, զորապետ՝ կովի ժամանակ, դատավոր, քուրմ և առհասարակ ընդհանուր ղեկավար: Գալիս է մի ժամանակ, երբ մեկ անձի համար դժվար է դառնում կատարել այս բոլոր պարտա-

կանությունները, և նրան սկսում է օգնել թագավորի մերձավորներից մեկը՝ նա, որին պատկանելու է գահը՝ թագավորի մահվան դեպքում: Այնուհետև նրա վրա է դրվում ղեկավարության որոշակի բնագավառի պաշտոնական պարտավորություններ՝ կրոնի և միջազգային քաղաքականության գծով. առաջին հայացքից գործունեությամբ միմյանցից տարբեր այս երկու պաշտոնների զուգակցումը բացատրվում է նրանով, որ կրոնական աշխարհայացքը, քրմերի բարձր հեղինակության և մի քանի պաշտամունքների համընդհանրության պայմաններում, այն հողն էր, որի վրա կարող էին միավորվել մշակույթով միմյանցից տարբեր ազգություններ: Հանդամանքների բերումով քրմությունը տվյալ անձնավորության գերզաստանում նույնպես դառնում է ժառանգական: Այդ դեպքում թագավորից հետո այդ նույն երկրորդ անձին վստահվում է մի այլ բնագավառ՝ դատավարությունը և զորքի հրամանատարությունը, ինչպես այդ տեսնում ենք Իբերիայում²: Անշուշտ հետագայում այդ պաշտոններն էլ քրմականի նման ժառանգականության կարգով պիտի դառնային տվյալ տոհմի առանձնաշնորհությունը: Եվ իսկապես՝ Արշակունիների օրոք այդ այդպես էր:

Այսպիսով, այն շորս խմբերը, որոնցից բաղկացած էր Իբերիայի բնակչությունը, ոչ միայն սոցիալապես, այլև ծագումնաբանորեն տարբեր մեծություններ էին: Առաջինը և վերջինը, այսինքն՝ թագավորների և ստրուկների տոհմերը ծագում են միևնույն միավորից. քրմական տոհմը ծագում է թագավորականից: Այդ երկու տոհ-

¹ Նախապես նա, թերևս, միայն փոխարինում էր թագավորին նրա հիվանդության կամ բացակայության դեպքում, ինչպես որ էր սաքայցիների մոտ, որոնց թագավորը իր բարեկամներից մեկին զարմնում էր իր տեղակալը, որը կոչվում էր կղբայր<թագավորի>, καλούμενον ἀδελφόν, Str. XVI, 4 p. 1088=779; Հմմտ. βασιλέως ἀδελφός, βασιλέως ὀφθαλμός պարսից մոտ, Cyrop. VIII, 6 p. 322:

² Գատավորի և զորահրամանատարի մեկ անձնավորության մեջ համատեղուժը ցույց է տալիս, որ գատավորը կարիք ուներ հարկադրող ուժի Ասորեստանցիների մոտ էլ զորությունը վերաբերող վեճերը ընկնում էին ղինվորական խորհրդում: Այս հանգամանքը բերոր է տոհմական կարգի քայքայման շրջանին: Քանի դեռ ամուր են ընկան-իրավահարաբերությունների հիմքերը, հասարակությունը պահպանում է իր հավասարակշռությունը և գատարանի կարիք չի զգում: Ստորոնի բարեկամ հույն փիլիսոփաներից մեկը արար սաքայցիների մայրաքաղաքում գտնված ժամանակ շատ է զարմանում տեսնելով, որ ասորերի քաղաքները մշտապես դատվում էին թե՛ միմյանց և թե՛ տեղացիների հետ, իսկ տեղացիները իրար հետ ոչ մի վեճ չուներին և սպորում էին հաշտ ու խաղաղ: Str. ib. p. 779=1088; Գարձ-

¹ Ստրաբոնը XI, 3, էջ 500=702, Իբերիայում տարբերում է բնակչության երկու տեսակ. դաշտավայրերի բնակիչները ալելի շատ զբաղվում էին հողագործությամբ, խաղաղ կյանք վարում և հազնվում հայրի ու մորերի պես: Իսկ լեռնային մասերում բնակվողները, որոնք մեծամասնություն էին կազմում և ուզումառնել էին, կենցաղով նման էին հարեան սկյութներին, թեև նրանք զբաղվում էին նաև հողագործությամբ: Պատերազմի ժամանակ հավաքում էին շատ մեծ քանակությամբ զորք: Ահա թե ինչու աշխարհագրորդ ասում է՝ τρίτον δὲ τὸ τῶν ὀστρατευομένων καὶ γεωργοῦντων և ոչ թե այն դատողությունների հետևանքով, որ մեջ է բերում Ի. Զախարյովը. Голуб. строд, p. 56:

մերը առաջացել են նույն գերդաստանից և ավելի շուտ հանդիսա- նում էին դասեր, քան տոհմեր¹:

Նկարագրված սոցիալական պրոցեսը տեղի է ունեցել նաև հա- րևան Աղվանքում. քանի որ այնտեղ բնակվում էին 26 մանր-մունր ազգություններ, որոնք խոսում էին տարբեր լեզուներով, ուստի այդ պրոցեսը տեղի ունեցավ երկրի 26 կետերում²: Սկզբում նրան- ցից յուրաքանչյուրն ուներ իր թագավորը: Հետագայում նրանք բո- յորը միացան մեկ թագավորի իշխանություն տակ: Այս մանր ցեղե- րի մեջ թագավորի իշխանությունը առաջ եկավ այնպես, ինչպես իրերների մոտ: Նրանց թագավորները նախկին տոհմապետերն էին, որոնք հասան տիրակալի, իշխանի դիրքի: Լեռնականների աս- պատակությունների դեմ միացյալ ուժերով պաշտպանվելու ան- հրաժեշտությունը հարկադրեց նրանց համախմբվել և կազմել քա- ղաքական մեկ մարմին: Աղվանքի բնակիչների մոտ, ինչպես և Իբե- րիայում, քրմի պարտականությունները կատարում էր թագավորից հետո ամենից ավելի հարգանք վայելող անձնավորությունը, որը և կառավարում էր ընդարձակ և խիտ բնակչություն ունեցող սրբազան հողերը և տաճարապատկան սարուկներին³: Անշուշտ, արդարա- դատությունը և զինվորական հրամանատարությունը գտնվում էին նույն վիճակի մեջ, ինչ որ Իբերիայում, այսինքն՝ հանձնված էին թագավորից հետո եկող երկրորդ անձնավորությանը⁴: Իբերիայում

յալ Ստրաբոնի նկարագրության համաձայն ստրաբոնյաները գտնվում էին զարգաց- ման նախնական աստիճանի վրա:

¹ Իբերիայի բնակչության շուրջ տոհմերի փոխհարաբերության հարցը քննու- թյան չի անված Ի. Ջավախովի «Государственна́я строи…» աշխատության մեջ և թագավորական ԾՕՍԼՈՒ ծագումը սխալ է մեկնարանված նրա կողմից: Հեն- վելով վրացական Յոժո-Մանյա սարուկ անվանման վրա, նա եզրակաց- նում է, որ հենց այդ հաստատությունն է փոխառություն, էջ 74: Եթե ընդունենք այդ տեսակետը, ապա ստիպված կլինենք շատ բան համարել օտարերկրյա:

² Str. XI 3, p. 706—503, νυνί μὲν οὖν εἰς ἀπάντων ὄρχαι, πρότερον δὲ καὶ καθ' ἐκάστην γλῶτταν ἰδίᾳ ἐβασιλεύοντο Ἐκαστοί. γὰρ εἰσὶν εἴς καὶ εἰσοῖσι αὐτοῖς διὰ τὸ μὴ εὐεπίμικτον πρὸς ἀλλήλους.

³ ibid. XI 3, p. 706, ἐρᾶτα δ' ἀνήρ ἐντιμώτατος μετὰ γε τῶν βασιλέσ πρῶτος τῆς ἱερῶς χώρας, πολλῆς καὶ εὐάνδρου, καὶ αὐτῆς καὶ τῶν ἱεροδοί λέγει.

⁴ Պոմպոսի դեմ մղվող կռիվների ժամանակ Աղվանից զորքերի (60 հազար հետևակ և 22 հազար այրուժի, Պլուտարքոսի մոտ 12 հազար Ստրաբոնի 22 հազ. փոխարեն պետք է կարդալ εἰσχιλοῦς ἐπὶ <δici>μυρίους} հրամանատարն էր

գեղազույն իշխանությունը հենվում էր տոհմերի կամ նրանց պե- տերի միություն վրա, իսկ Աղվանքում՝ արքայիկների կամ իշխան- ների միության վրա: Ուրիշ խոսքով, էթնիկական պայմանների հե- տևանքով սկզբնապես կազմվեցին 26 մանր թագավորություններ, իսկ հետո արդեն միավորվեցին:

էթնիկական տեսակետից Հայաստանը պակաս խայտաբղետ չէր, քան Աղվանքը, և եթե դատելու լինենք համեմատության կար- գով, ապա հասարակության առաջընթացը այստեղ պիտի տեղի ունենար այնպես, ինչպես Աղվանքում, այսինքն՝ երկրի միավոր- ման առաջին հետևանքները պետք է արտահայտվեին ուժերի համա- կենտրոնացման մեջ՝ քստ էթնիկական տարատեսակության կետերի: Միավորումը պետք էր սպասել նախ և առաջ էթնիկական ամենից ավելի կարևոր գոտիներում՝ մաղխազների, ասպետներին, մամակներին, տերերին և այլոց շուրջը: Այս ենթադրությունը արդարանում է, երբ քննության ենք առնում այն սակավաթիվ տվյալները, որ մեզ տալիս է փաստական պատմությունը:

Տոհմական հարաբերությունների քայքայումը, որ ուղեկցվում էր դասայնության ծնունդով, հանձինս իշխանավորների՝ ապագա տիրակալների, ավարտվեց Տիգրան Մեծի փոթորկալից գարաշրջա- նում: Պատերազմական ժամանակի տագնապը նպաստավոր մթնո- լորտ է ստեղծում տոհմական հարաբերությունները դասայինի փո- խակերպվելու համար: Հայաստանի քաղաքական հզորությունը Տիգրանի օրոք, ընդարձակ նվաճումները Կապադովկիայի Մաժակ քաղաքից մինչև Մարաց Եկրատանը և Իբերիայից ու Աղվանքից մինչև Արաբիան ու Պաղեստինը նախ և առաջ ցույց են տալիս, որ երկրի ներսում արդեն տեղի է ունեցել միավորում: Թե ինչպես էին ձևավորվում հասարակական խմբերը և տերիտորիալ ու սոցիալա- կան տեսակետից ինչպիսի ձևեր ընդունեցին դրանք, այդ մասին

ու թե Օռիզ թագավորը, այլ նրա եղբայր Կոսիսը, ἦγειτο δὲ αὐτῶν βασιλέως ἀδελφὸς ὄνομα Κῶτις, Plut. Pomp. 35: Կոսիսը զորքերի գլուխ էր կանգնած հավանորեն ի պաշտոնն, իբրև գերագույն առաջնորդ. հավանական է, որ նա միա- ժամանակ վարում էր նաև դատական գործը, ինչպես այդ Իբերիայում էր: Պոմ- պոսի հաղթական կարգի առջևից 324 պարտված վեհապետների շարքում բացում էին նաև իբերական երեք և աղվանից երկու պարազուլները և ἡγεμόνες τρεῖς, Ἰβήρων καὶ Ἀλβανῶν δύο, App. Mithr. 117: Իբերական երեք պարազուլներն էին թագավորը, քրմապետը և զորավետը, իսկ աղվանական երկուսը՝ թագավորը և բուրմը, իսկ զորագետ Կոսիսին Պոմպոսը սպանեց:

անմիջական տվյալներ չկան պատմագիրների մոտ, որոնք գույնք չէին խնայում արտաքին իրադարձությունները նկարագրելու համար: Տիգրանի օրոք հայերի ունեցած զինվորական ուժերի մասին եղած ընդհանուր տվյալների մեջ, բարեբախտաբար, մենք հանդիպում ենք մի քանի որոշակի ցուցումների, որոնք շատ կարևոր են մեր նպատակի տեսակետից:

Պատմագիրները հայոց թագավորին ներկայացնում են շրջապատված բազմաթիվ աջակից արքաներով: Տիգրանի բանակի մեջ հայերից և զորդիկներից բացի կային նաև իրենց սեփական թագավորների հրամանատարություն տակ գտնվող մարերի և ադիարենների զորքերը, ինչպես նաև արարական ցեղեր Պարսից ծովի ափերից, բազմաթիվ ազվանացիներ Կասպից ծովի ափերից, հարևան իբրները և ոչ քիչ թվով ազատ վաշկատուններ Արաքսի ափերից: «Շատ թագավորներ սպասավորում էին Տիգրանին,— պատմում է Պլուտարքոսը,— իսկ նրանցից շորսը անբաժան կերպով գտնվում էին նրա մոտ որպես ուղեկիցներ կամ թիկնապահներ, երբ նա գնում էր ձի հեծած, նրանք վազում էին նրա հետևից կարճ պարեզոտով, իսկ երբ նստած էր կամ զբաղվում էր զործերով, նրանք մեկը մյուսի ձեռք բռնած կանգնում էին նրա մոտ¹: Արքաներ ամպագոռոռ անվան տակ այստեղ ակնարկված են հայոց իշխանները, ընդ որում Տիգրանի մոտ մշտապես գտնվող շորս թագավորները հենց շորս բղիշխներն են, ծայրամասերի այն իշխանները, որոնք ըստ զահի և ըստ բարձի Արշակունիների արքունիքում դրավում էին առաջին տեղերը²: Լուկուլլոսի հաճոյակատար զովերգուները, որոնք իրենց տեղեկությունները քաղում էին նրա իսկ սնա-

պարծ զեկուցումներից, չեն քաշվում իրենց հերոսին շափից անվելի փառաբանելու շափազանցումներից, որ իբր թե ջախջախել է այդքան ահեղ թագավորի: Ներկա զեպքում հայ իշխաններին բազիլևսի աստիճանի բարձրացնելը այդպիսի աստառ ունեի:

Բղիշխներից բացի, հայ իշխաններից հականհանվան հիշվում են ևս մի քանիսը: Նրանցից մեկը թագադատն էր Երր Տիգրանը, հաղթելով Անտիոքոսին, տիրեց Ասորիքին, Կիլիկիայի և մյուս բոլոր երկրներին մինչև Եգիպտոս, նա թագադատին նշանակեց նոր նվաճված երկրների ստրատեզոս: Վերջինս այդտեղ կառավարեց 14 տարի, մինչև Լուկուլլոսի 70 թվականի արշավանքը: Այն ժամանակ նա ստիպված եղավ շտապել Տիգրանին օգնություն, և Ասորիքը կրկին անցավ Սելևկյաններին¹:

Հիշատակվում են նաև Միթրոբարզանեսոսու Մանկայոսը: Առաջինը 2000 հեծյալներով դուրս եկավ Լուկուլլոսին ընդառաջ, երբ նա անցավ Եփրատը և ներխուժեց Սոփենե, իսկ Մանկայոսին վստահվեց մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի պաշտպանությունը: Միթրոբարզանեսը կովի բռնվեց Լուկուլլոսի հետ, բայց փախուստի դիմեց, իսկ Լուկուլլոսի զորավարներից մեկը՝ Սեքստիլիոսը, շրջապատեց Տիգրանակերտը և Մանկայոսին պաշարեց այնտեղ²:

Ըստ մի այլ խիստ գունազարդված պատմության, Միթրոբարզանեսը Տիգրանի մերձավոր անձնավորություններից մեկն էր, և քանի որ ոչ ոք չէր համարձակվում թագավորին հաղորդել Լուկուլլոսի արշավանքի մասին, ապա նա առաջինը հայտնեց նրան ճշմարտությունը: Այս հանդեպի համար, իբրև պատիժ, Տիգրանը հրամայեց նրան շարժվել թշնամիների դեմ, բռնել նրանց զորահրամանատարին ու կենդանի իր մոտ բերել, իսկ մյուսներին կոտորել: Իսկ Լուկուլլոսը Միթրոբարզանեսի դեմ մի ջոկատ ուղարկեց

¹ Plut. Luc. 21, βασιλείς δὲ πολλοὶ ἦσαν οἱ θεραπεύοντες αὐτόν, τέσσαρες δὲ, οὓς δὲι περὶ αὐτόν εἶχεν ὄσπερ ὄπαδοὺς ἢ δορυφόρους, ἱππότην μὲν ἐλάουσιντι πεζοὺς παραθέοντας ἐν χιτωνίσκοις, καθημένω δὲ καὶ χρηματίζοντι περιεστῶτας ἐπιγλαυμὲναι ναὶ δὲ ἀλλήλων ταῖς χερσίν.

² Տե՛ս վերը, էջ 315: Մարկավարտի անվան լուծումից հետո Eranşahr, p. 172, բուրդին անհավանական է Գուտմիտի այն կարծիքը, թե խոսքը վերաբերում է Ասորպատականի, Կորդոքի, Ադիարենի և Օսրոյենի թագավորներին, Geschichte Irans, p. 85: Հիշյալ կարծիքը շիշտ չէ թեկուզ այն պատճառով, որ Լուկուլլոսի արշավանքի ժամանակ այդ թագավորները դեռ Տիգրանի մոտ չէին, նա սպասում էր Ադիարենի և Ասորպատականի թագավորներին, Կորդուց Չարրիմեսոս թագավորը դրանից առաջ գլխաւորել էր զավաճանութան համար, իսկ Օսրոյենի թագուհին՝ Կլեոպատրան, Սելևկիայում հեղոդոթյան տակ էր:

¹ App. Syr. 48, Τηγρᾶνης ἦρχε Συρίας τῆς μετ' Εδφράτην, ὄσα γένη Σύρων μέχρι Αἰγύπτου· ἦρχε δὲ ὁμοῦ καὶ Κιλικίας. Βαγαδάτην στρατηγὸν ἐπιτάξας ἅπασιν, ἐπὶ ἔτη τεσσαρεσκαίδεκα... ib. 49, ὁ Βαγαδάτης ἔει μετὰ τοῦ στρατοῦ Τηγρᾶνη βοηθήσων. Βαγαδάτης-ի փոխարեն սպասորդ Մոգաձոտի է. Անագրեթում կա և այս, և այն ընթերցումը ծիշտ է առաջինը, Marquart, Eranşahr, p. 174.

² App. Mithr. 84, 86 Μιθροβορζάνην προὔπεμπε μετὰ διοχιλίων ἱππέων, Λούκουλλον ἐπισ χεῖν τοῦ δρόμου. Μαγακίω δὲ Τηγρανόκιερτα φυλάττειν ἐπέτρεψεν.

Անքստիկրոսի հրամանատարությունը քակասամարտում հերոսի մասնով ընկալված Միթրոբոսյանները¹։

Վերջապես հարսնի է մի երբորդ անձնավորություն՝ Գ ու ր ա ս ր ւ ր ւ ր ։ Նրա մասին առում են, որ նա Տիգրանի հարազատ եղբայրն է և պաշտպանում էր Մծրինը Լուկուլլոսի գեմ, Էբբ վերջինս, ետ շարտվելով Արտաշատից, անցավ Տափուսը և պաշարեց այդ ստրու- ա ն փ ա կ ա ն կ արևոսը կետը²։

Βαγαδάτης անունը լեզվական անկանխություններին դիտել չենթարկված հայկական Քազա-րաա-ի Bagarata-ի սկզբնական ձևն է, որ ծագում է Bagadata-ից՝ ա ս տ ծ ու տ վ ա ծ՝ бага-ից և data-ից — հուն. Θεόδοτος։ Այս անունը կրող Տիգրանի ստրատեղը անկասկած հանդիսանում է Քազ<ա>րատունիների նշանավոր տոհմի նախահայրը։ Հանձին նրա արդարացվում են հայկական երկու միմյանց հակասող ավանդությունները Քազա- տունիների ծագման մասին։ Ըստ Անանունի՝ Քազարատունիները ծա- գում են Հայկից՝ Հայրի նախահորից։ Մյուս ավանդությունը, որ պահպանվել է նորենացու մոտ, վիայում է նրանց հրեական արյան մասին։ Հենց ինքը՝ տոհմի անունը, հատկապես նրա տոհմա- կան aspect փառաբար, որը մենք պարզաբանեցինք վերը, ցույց է տալիս, որ այդ հարստությունը առաջ է եկել հայ-իրանական էթնի- կական հողի վրա։ Նրանց սկզբնական հայրենիքը, ըստ երևույթին, գտնվում էր, ինչպես մենք արգեն նշեցինք, Ասորպատական ծաչ- րամասում։ Մենք կարծիք հայտնեցինք նաև, որ ստուգաբանական աղերս կա Քազարատի և Բազրեանդի միջև։ Մյուս ավանդությունը, որի համաձայն Քազարատունիները եկել են հարավից և հրեական ծագում ունեն, և՛ թե միայն այդ նորենացու ենթադրությունը չէ, ինչ- պես որ կարծում են ուսումնասիրողները, պետք է համարել այն փաստի յուրօրինակ ռեֆլեքսը, թե Տիգրանի օրոք Քազարատը փա-

խողովեց հարավ և նշանակվեց Ասորիքի՝ սեմական ժողովրդով բնակեցված մի երկրամասի կառավարիչ¹։ Ի դեպ, Անանունն էլ է Քազարատունիներին տեղադրում Հայաստանի հարավում, հենց Անգեղատուն գավառում, որն էլ համարում է նրանց տոհմական կալ- վածքը²։ Այս ավանդությունը, համեմատյալ դեպս, կապված է Քազա- րատի հարավում գտնվելու հետ. կարող է պատահել նույնիսկ, որ երբ Ասորիքը անջատվեց Տիգրանից, Հայաստանի հարավային սահ- մանները պաշտպանությունը հանձնվեց Քազարատին, և որ Անգեղ- տան իշխանությունը Քազարատունիների մի ճյուղն է³։

Հոտմեական զորաբանակին առաջինն ընդառաջ ելած զորա- վարի անունը Μιθροβαρζάνης-ի փոխարեն ճիշտ կլինի կարգալ Μιθροβουζάνης⁴—հայ. Մեհրուսան Mehruzan։ Այս անձնավորու- թյունը ոչ այլ որ է, և՛ թե ոչ Մոսիենի իշխանը։ Հայկական առաջին գավառը, որին հոտմեացիք սպառնում էին Եփրատը անցնելուց հե- տո, Մոսիենն է, ուր ներխուժեցին Լուկուլլոսի լեզեոնները։ Միթրո- բուզանսը, որպես նահանգի իշխան, դուքս եկավ պաշտպանելու իր երկիրը։ Բայց որովհետև նրա ուժերը անձրան էին, նահանջեց հոտ- մեացիների ճնշման տակ։ Այն ամենը, ինչ որ պատժում է Պլու- տարքոսը Միթրոբուզանսի մասին, անմտություն է և արված է սպավորություն գործելու համար։ Միթրոբուզանսը պետք է դուքս գար Լուկուլլոսի դեմ իր գիրքի բերումով, որպես երկրի իշխան և ոչ թե նրա համար, որ Տիգրանը ուզում էր պատժել նրան, ինչպես րացատրում է պատմագիրը⁵։ Միթրոբուզանսը, անկասկած,

¹ Sés Marquart, *Eranšahr*, p. 174.
² Սեբոս, էջ 6 սորդիքն Քազարատայ ժառանգեցին զժառանգութիւն իւրեանց ի կողմանս արեւմտից, այսինքն՝ Անգեղ տուն։
³ Այդ դեպքում կարելի է ենթադրել, որ կապ կա Անգեղ տան և Անգղ գյուղի միջև, որ գտնվում է Քազրեանդում՝ Քազրատունիների՝ ինչպես մենք ենթադրում ենք, հայրենիքում։ Ս. Գրքի Անգղը—հուն. Νεργέλ (հավանորեն էποίησας τήν [ν]εργέλ-ից փոխանակ էոյελ) կապ լուծի Անգեղ տան հետ, անկախ նրա հետ Անանունի ծանոթ լինելուն, ինչպես հնարավոր է համարում Խալաթյանցը, *Arch. zpus*, p. 84։

⁴ Ապպիանոսի ձևագրերում կա ճիշտ ընթերցումը՝ Μιθροβουζάνης, ինչպես վկայում է Հուստինոս *Namensbuch*-ում։ Μιθροβουζάνης-ը կազմված է Μιθρα-ից և βουζάν-ից, հայերեն՝ բ ու ժ - ե ի և նշանակում է Միեի միջոցով փրկված։
⁵ Առաջին մարդը, որ Լուկուլլոսի արշավանքի լուրը բերեց Տիգրանին, ըստ Պլուտարքոսի, գլխատվեց, իսկ ըստ Ապպիանոսի՝ կախաղան հանվեց։ Գրանից հե- տո, ինչպես հավատացնում է Պլուտարքոսը, ոչ որ չէր համարձակվում խոթ բա-

¹ *Plut. Luc.* 25, πρῶτος δ' αὐτῶ τῶν γέλων ἐτόλμησε Μιθροβαρζάνης φράσαι τὸ ὄληθές.
² *Plut. Luc.*, 32, ταύτην (sc. Νίσιβιν) εἶχεν ἀξιώματι μὲν ἀδελφός Τιγρά- νον Γο υ ρ α ϑ, ἐμπειρίᾳ δ'... Καλλιμάχος.
³ Sés վերը, էջ 341։ Այդ մասին է խոսում նաև Տ Հելյունի փոխվելը Ե-ի Bagarata անունը փոխառություն է Bagadata-ից, որ իրանադեաները համա- րում են ասորպատական բարբառի առանձնահատկություն, *Grundris d. Ir. Phil.* I 2, 355, § 116.

պատկանում է Սոփենեի թագավորի, Զարեհի և Արտաշեսի ժամանակակցի տոհմին: Միթրոբուզանես անունը ընդունված էր այդ տոհմում: Զարեհի որդին, որ Արտաշեսի հայածանքներից ազատվելու համար փախավ Կապադովկիայի Արիարաթես Դ թագավորի մոտ և նրա օգնությամբ ետ խլեց իր հոր գահը, կրում էր նույն Միթրոբուզանես անունը¹: Տիգրանի ժամանակ Սոփենեի թագա-

ղելու հետևանքով մասին Կային շոգորթիներ, որոնք օրորում էին թագավորին կղզի-ծավոր խոտերով, թե կուկուլուսը մեծ հրամանատար կհամարվի, եթե խիզախի Եփեսոսի մոտ սպասել Տիգրանի զայուն և շիփախի առանց ետ նայելու, տեսնելով նրա անհամար զորքը: Միայն Միթրոբուզանեսը հանդիմանք բաց անել թագավորի աչքերը սպառնացող վտանգի առջև, բայց փոխանակ պարզելի՝ հրաման ստացավ գնալ կուկուլուսի դեմ և բռնել նրան ու կենդանի բերել, իսկ մյուսներին կոտորել: Ապափանոսի պատմելով թագավորի հանձնարարությունը ըստ համեստ էր Λουκοῦδλου ἐπιτοχῆν τοῦ δρόμου: Միթրոբուզանեսը ուներ ընդամենը 2000 հեծյալ և կուկուլուսի հետ ունեցած բախումը ավարտվեց Միթրոբուզանեսի փախուստով: Իսկ Պլուտարքոսը նրա զորքի թիվը հասցնում է 3000 այրուծի ու բազմաքանակ հետևակի և նրան կովի է բռնեցնում ոչ թե կուկուլուսի, այլ Սեքստիլիոս Լեզասի հետ, որի հետանցով սպանվում է հայոց զորահրամանատարը: Այս տարակարծությունները մատնում են պատմագիրների կողմնակալությունը, Տիգրանի պատմությունը դեռ սպասում է իր անաշտ հետազոտողին: Գիտնականները անվերապահորեն հավատ են ընծայում այն ամենին, ինչ հաղորդում են պատմագիրները, մոռանալով, որ վերջինները իրենց երկերը կազմել են շափից ավելի պարծենկոտ կուկուլուսի ստահոգ զեկուլյցների հիման վրա, որը պարտիզանական ընդհարումները և ավազակային հարձակումները ներկայացնում էր որպես կանոնավոր ճակատամարտեր: Ուր քան հազարով պարտության է մատնում Տիգրանի հրաշալի զինված՝ հսկայական, մինչև 260—300 հազարի հասնող ուժերը, ընդ որում այն զեպում, երբ թշնամին 100 հազարից ավելի սպանված է տալիս, իսկ 55 հազարանոց հեծելազորից զրեթե ոչ մեկը չի փրկվում, կուկուլուսի զորքից վերավորվում է 100 հոգի և սպանվում միայն հինգ կամ նույնիսկ ավելի պակաս՝ մեկ զինվոր: կուկուլուսի զեկուլյցների բնույթի և պատմական արժեքի մասին կարելի է դատել հետևյալ դասական օրինակով. Արտաշատի տակ տեղի ունեցած ճակատամարտի մասին իր զեկուլյցի մեջ նա ի միջի ալյոց գրում է, թե «իր դեմ կովոչ երեք թագավորներից ամենախայտառակ կերպով փախչողը իրրե թե Միհրդատն էր՝ Պոնտոսի թագավորը: Նա նույն իսկ հռոմեացիներին ազաղակներին ազաղակներին շղիմացավ: Եվ այս ամբողջ է պատմության մեջ իր անվահեղությունը նմանը չունեցող այն մեծ մարդու մասին, որի անունը միայն սարսափ էր ազդում Հռոմին, և որի մասին նրա մահից հետո ասում էին, որ «միայն հանձին մեկ Միհրդատի մեռան հազարավոր թշնամիներ»: Plut. Pomp.

¹ Diod. XXXI 22, cf. Polyb. 30, 15: Մենք տեսանք, որ Մոփաց եպիսկոպոսն էլ կրում էր Μερουζάνցս անունը, տե՛ս վերը, էջ 386:

վորը Արտանեսն էր, որ սպանվեց Տիգրանի ձեռքով: Միթրոբուզանեսը Արտանեսի հարազատներից մեկն էր, թերևս նրա որդին կամ եղբայրը: Զրկվելով արքայական դիրքից՝ Զարեհ-Արտանեսի ժառանգները իրենց տիրակալական իրավունքները պահպանեցին Սոփենեում:

Մեկ հետաքրքրող անուններից երրորդը՝ Μαγαῖος-ը պետք է կարգալ Μαμαῖος կամ Μα<μα>γαῖος, որը համապատասխանում է հայկական Մամիկ-ին: Շատ կարևոր է ձեռագրերում որոնումներ կատարել: Եթե հաստատվի մեր առաջարկած ձևը, հարկ կլինի Մամիկոնյանների քաջարի տոհմի սկզբնավորումը ետ տանել մինչև Տիգրան Մեծի դարաշրջանը:

Հիշյալ անձնավորությունները, որոնց Տիգրանը առաջավոր պաշտոններ էր հանձնել Հռոմեացիների դեմ մոտալուտ պատերազմի կապակցությամբ, Բաղադատն է, Միթրոբուզանեսը, Մանկայոսը, էլ շենք ասում Գուրասի մասին, այն թագավորներից էին, որոնք շրջապատել էին Տիգրանի արքունիքը: Մեր այն հիմնական միտքը, թե Տիգրանի դարաշրջանում արդեն հանդես է գալիս դասային ազնվականությունը, ըստ էության ապացուցված է անկախ նրանից, թե որքան հիմնավոր են կամ ընդունելի մեր եղբակացությունները հիշյալ անձնավորությունների վերաբերյալ: Եվ լուրջ հիմքեր էլ չկան առարկելու, թե նշված գործիչները հետագայում մեղ լավ ծանոթ իշխանական գերդաստանների՝ Բ ա գ ր ա տ ու ն ի ն եր ի, Մ ա մ ի կ ո ն յ ա ն ն եր ի և Մ ո փ ա յ ի շ ի ս ա ն ն եր ի ն ա լ ա հ ա յր եր ն են: Այս վերջիններից էին ծագում Ա թ թ ու ն ի ի շ ի ս ա ն ն եր ի, ի ն շ ա ի ս կ ա թ ե լ ի է դ ա տ ե լ նրանց տոհմում ընդունված անուններից¹:

Այսպիսով, իրենց նշանակությամբ առավել կարևոր դիրք ունեցող իշխանական երեք գերդաստանները գոյություն ունեին արդեն Տիգրանի օրոք և հավանական է, որ նոր էին հանդես եկել: Այդ ժամանակ, անկասկած, հայտնի էր նաև Մ ա ղ ի ս ա ղ ն եր ի

¹ Մարկվարտի կարծիքը Eranşahr, p. 176, ըստ ճշմարտեման է: Մոփաց իշխանական տան մի ճյուղի տեղափոխությունը Ադրակ տեղի է ունեցել ոչ թե Տիգրանի ժամանակ, ինչպես կարծում է գիտնականը, այլ ավելի ճիշտ Արշակունիների օրոք: Արթուրի բառի ստուգաբանությունը դեռ ճշտված չէ: Այդ անվան ծագումը մեկնաբանելու բազմաթիվ փորձերից և ոչ մեկը չի կարող ընդունելի համարվել:

տունը, որը, դատելով անունից, ավելի հին է, քան հիշյալ գերդաստանները:

Երկրի դասային շերտավորման և ազնվականացման ժամանակ այնուամենայնիվ որոշ դեր է խաղացել էթնիկական խայտաբղետությունը: Որքան էլ որ ստիմիլյացիայի ենթարկվեցին տարածա զանգվածները, բայց, փերչին հաշվով, բազկացուցիչ մասերը պահեցին իրենց հոլորիտը: Մ ա ղ խ ա ղ ի իշխանությունը խորխուռունիների տոհմում, ա ս պ ե տ ի ն ը՝ Բագրատունիների, մ ա մ ի ե ի ն ը՝ Մամիկոնյանների և, վերջապես, ա է ր -ի գերագույն իշխանությունը նշանավորում են համապատասխան էթնիկական տարրերի ազդեցության գերակշռությունը ընդհանուր խմբման ժամանակ: Արանց եզրապատող գոտիները, որ անմիջական շփման մեջ էին հարեան ժողովուրդների հետ, ավելի քիչ էին ենթարկվում ձուլման: Ենորհիվ այն բանի, որ նրանց խառն բնակչությունը միշտ թարմացվում էր հարեան ժողովուրդների առանձին հասվածաների ներգաղթով, էրանք ինչ-որ չափով օտար էին մնում կենտրոնական մասերին: Գրա հետևանքը եղավ Հայաստանի շրջագծի վրա քաղաքական շրջ փոքր մարմինների, այսինքն՝ Գուգարաց, Աղձնյաց և Նոշիրահանի բղեջնությունների առաջացումը. շորորդ բղեջնի անունը հայտնի չէ: Հայկական ավանդությունը քաղորովին սխալ է լուսաբանում նրանց ծագումը: Բղեջնները իրոք որ պաշտպանում էին Հայաստանի սահմանները, բայց ոչ թե հայոց թագավորի կամքով, այլ իրենց գրաված դիրքի բերումով, իբրև այդ ժայռմասների տիրակալներ, ընդունելով, սակայն, հայոց թագավորի իշխանությունը:

Էթնիկական կազմի խայտաբղետությունը չէր սպառվում հիշյալ տարրերով կամ խմբերով. կային նաև ամբողջ երկրում ցրված ցեղային ուրիշ դանգվածներ, որոնցից հետագայում նույնպես իշխանական տներ կազմվեցին: Այդ ցեղերից մի քանիսը իրենց սկիզբն առնում էին շատ հին ժամանակներից, մյուսները երևան եկան համեմատաբար ավելի ուշ: Եկվոր տարրերը՝ մեծ մասամբ քոչվոր ժողովուրդներից, իրենց հետ բերում էին կենցաղի այնպիսի ձևեր, որոնցից նա վաղուց հրաժարվել էր: Այդ պատճառով էլ ազնվականության կազմին կարելի էր հանդիպել ավելի կամ պակաս կարևոր խմբերի, որոնք դեռևս ապրում էին առհասարակ կյանքով՝ առհասարակ իշխանության տակ: Էթնիկական խայտաբղետությունը բնականաբար առաջ էր բերում սոցիալական կա-

ցության խայտաբղետություն: Պատմական կյանքի՝ մեր կողմից ընդունված պարբերացումը, ինչպես որ յուրաքանչյուր պարբերացում, չիշտ է և ընդունելի լոկ ընդհանուր զարգացման տեսակետից: Միշտ էլ կարող են լինել ընդհանուր հոսանքի հունից դուրս ընկած հետամնաց տարրեր:

Արդեն Տիգրանի օրոք աչքի են ընկնում եկվոր ցեղերից մի քանիսը, որոնք սկիզբ են դնում շատ կարևոր իշխանական տների: Ինչպես պատմում է Պլուտարքոսը, Արտաշատի վրա Լուկուլլոսի հարձակման ժամանակ Տիգրանը նրա դեմ պուրա բերեց մեծաթիվ հեծելազոր, որի առաջին շարքերում կանգնած էին մ օ ր դ և ր ի հեծյալ նետածիգները և նիզակահիր իրերները: Հայոց թագավորը հատկապես որանց վրա էր գրել իր հույսը՝ Մարդերը ծագում էին իրանական այն ցեղերից, որոնք ցրված էին Զագրոսի վրա, քոչվոր կյանք էին վարում և զբաղվում էին ավազակությամբ¹: Երբ Քսենոֆոնը անցնում էր Կենտրիտես դեպք, որ Տիգրիսի արևելյան բազուկն էր, նրա վրա հայերի հետ միասին հարձակվեցին նաև մարդերը: Սրանք, անկասկած, Քրտնի սահմաններից Հայաստան գաղթած հայկական մարդերն են²: Երբ մ. թ. ա. 68 թվականին հռոմեական զորավար կորնուլոսը՝ Լուկուլլոսի հաջորդը, Արտաշատից նահանջեց Տարոնի ուղղությամբ, նա ստիպված եղավ անցնել մարդերի կրկի միջով: Մարդերը, որ դեռ այդ ժամանակ զբաղվում էին ավազակությամբ, հարձակվեցին հոսմեացիների վրա, բայց հակահարձակման ենթարկվելով, փախան և թաքնվեցին լեռներում³: Սրանից երևում է, որ արդեն այն ժամանակ մարդերը բնակվել էին այն վայրերում, որոնք ավելի ուշ հաչերը կոչում էին Մ ա ր գ ա ս ա տ ա ն կ ամ Մ ար գ օ ց և ք, այսինքն՝

¹ Plut. Luc. 31, πολλοί γὰρ ἦσαν ἱππεῖς καὶ λοχάδες ἀντιπαρατεταγμένοι, πρὸ δ' αὐτῶν ἱπποτοξοῦντο Μάρδοι καὶ λογχοφόροι *Ἰβηρες.

² Str. XI 13, p. 735-523, οἱ ἐν τῇ Περσίῃ Κύρτιοι καὶ Μάρδοι (καὶ γὰρ οὕτω λέγονται οἱ *Ἀμαρδοί) καὶ οἱ ἐν τῇ Ἀρμενίᾳ μέχρι νῦν ἀμυνόμεως προσσχορευόμενοι τῆς αὐτῆς εἰσὶν ἰδέας: Մարդերին ազգակից է համանուն ցեղը Կասպից ծովի մոտ, մարդի կամ ամարգներ, որտեղից առաջ է կել Ամուր, Աշաբա-ցույցի Ամլը, որ ծագում է *Amrda-ից: Andreas, Pauly-Wiss. RE. A m a r d i -ի սակ: Marquart. Eranšahr, p. 136.

³ Anab. IV 3, 4. *Արմենիո և Մարձո և Քալձաօի.

⁴ Tac. Ana. XIV 23, Corbulonem fines suos pragredientem incur-sare Mardi latrociniiis exerciti contraque iurumpentem montibus defensi.

մարդերի երկիր¹: Այս մարդերից է իր ծագումն առել իշխանական այն տունը, որի ներկայացուցիչը կրում էր մարդպետ, *mardpet*, այսինքն՝ մարդերի պետ անունը: Հետագայում այս անունը մաղխազի և ասպետի նման դարձավ տոհմական տիտղոս, և ինչպես վերջիններին կրողները սկսեցին կոչվել Մ ա ղ խ ա զ ու ն ի, Ա ս ս ե տ ու ն ի, ճիշտ այդպես էլ մարդպետների տոհմը և նրանց տիրույթները կոչվեցին Մ ա ղ խ ա զ Ե տ ա կ ա ն:

Ըստ Պլինիոսի, հայերին մոտ ապրում էին *menobardi-*ները և *moscheni-*ները²: Առաջին անվանումը, ըստ երևույթին, պետք է կարգալ <ar> *menomardi*, իսկ երկրորդը՝ **mochs-eni*, որ համապատասխանում է ոչ թե մոսխերին, ինչպես կարող է թվալ, այլ հայերի Մոսխին: Ուրեմն՝ Մոկաց իշխանական տունն էլ էթնիկական առանձնահատկության աստառ ունի:

Մարդերի հետ միասին Զագրոս և Նպատ լեռների միջև ապրում էին *κὺρτιοι* կ ու Ր տ ի ն ե Ր ը, որոնք մարդերի նման հաստատվել էին Հայաստանի սահմանադրված մարդերից հարավ այն տեղում, որ հետո նրանց անունով կոչվեց Կորենե³: Կուրտիները այժմյան քրդերի նախահայրերն են և նրանց շպետք է շփոթել կարդուխների հետ, որ այլ ծագում ունեցող մի ժողովուրդ է: Վերջիններիս երկիրը, ի տարբերություն Կորենի՝ կուրտիների երկրի, հայերը կոչում էին Կորդուխ: Գեոևս Փավստոսի մոտ Կորենը համարվում է Սալմաստի շրջանը, ավելի ուշ, ըստ երևույթին քրդերի աղդեցույթյունը ուժեղացավ և նա ընդգրկեց նաև հարևան Կորդուաց հողերը:

¹ *Sb's* վերը, էջ 354, Մարդեթե Սեբեոս, էջ 138, կամ Մարդուցայք, Պտոմեոս, էջ 7, բաղկացած է Մարդոց-ից *nom. loci mard-ից*, իսկ էՖ կամ այլ անանցը տալիս է *nom. ethn.* նշանակությունը. Մարդոցի բնակիչներ: ինչպես Կորեն-էք, Հայաստան-եայք և այլն: Մարդաստանից բացի, մարդերի անունը կրում է, ինչպես մենք կարծում ենք (*սո'ս* վերը, էջ 56), նաև Մարդաղի գավառը: Կարող է պատահել, որ մարդաղյան մարդերը ծագում են այն մարդերից, որոնք խաղաղների հետ միասին հարձակվեցին Քսենոփոնի վրա Կենարիտես ղեաի ափին: Խաղաղների հետ միասին նրանք, ինչպես երևում է, շարժվել են ղեաի հյուսիս և գրավել այն վայրերը, որոնք կոչվեցին Մարդաղի և Խաղաղի: Իսկ մարդերը Մարդաստան եկան, հավանորեն, ավելի ուշ՝ Իրանի կողմից:

² Plin VI, 10.

³ Կորենը առաջ է եկել *Կորտիեն-այթից, որ կորտիեն նշանակում է բազմ, ինչպես ատրպատ-իք, բազաս-իք և այլն: Անգրեասի *kurti-ha'ic* մեկնաբանությունը հիմքից զուրկ է:

Կուրտիները և կարդուխները մյուսներից ավելի քիչ ընկան հայերի աղդեցույթյան տակ. բայց և այնպես աննկատելի կերպով թափանցում էին հայոց հողերը, և երբեմն նրանց երկրները համարվում էին Հայաստանի նահանգներ: Կարմասի կամ Կարմեան իշխանական տունը, ըստ երևույթին, շատ սերտ կապ ունի Կորդուենի՝ Կարդուրի հետ¹:

Սկզբում կուրտիների երկրում և հետագայում նրանց հարևանությամբ ապրում էին *matiani-*ները: Հին հեղինակների տրվյալները հաստատվում են նոր հետազոտողների եզրակացություններով այն մասին, որ *mati* ժողովուրդը ոչ միայն արյունով, այլև անունով ազգակից է մարդերի, *mada-*ների հետ: Նույն անվանման մի այլ ձևն է *manda*: Ասորեստանյան արձանագրությունների մեջ այսպես է կոչվում այն ժողովուրդը, որի թագավորը Աստիադեսն էր: Մագան այնպես է հարաբերում *manda-*ին, ինչպես *mati-*ն՝ *manti-*ին: Այս ձևը կա Ուրմիո լճի *Μαντιανή-*ի անվան մեջ, որ առաջ է եկել, անկասկած, մի ժամանակ այնտեղ ապրող ժողովուրդներից²: Զուգահեռ ձևերը հանդիսանում են բար-

¹ Ըստ Անանուհի և Խորենացու Կարմուրը Հայկի թոռն է և Արամենակի որդին, նրանից էլ ծագում է Կարմեայ տունը: Կարող է պատահել, որ *kadm-*ը սխալ հասկացված ասորական *kadum-*առաջին բառն է և որ սետ ժառանգություն Կարմեայ (թոռին իբրև) սրբույն Արամենակայն նշանակում է տվեց Արամենակի առաջին կամ ավագ որդուն: Մյուս կողմից պակաս ճշմարտանման չէ, որ կադ-մ-ուր ասորական *kasdim-*ի, որ *kasd-*ի հոգնակին է, տեղական համարժեքը լինի, որտեղից էլ առաջ եկած են համարում *kard-*ը՝ *kardu-x-oi*, *Cordu-eni* և *Chaldu* բառերի հիմքը: H. Mapp. *Основные таблицы древне-арм. языка*, 1908, p. 5. Hommel, *Grundriss der Geogr. und Gesch. d. alten Orients*, 1904. I, p. 187, anm. 4 և p. 244, anm. 4: Այսպիսի լուսաբանությամբ Կարմեանը նույնպիսի անուն է, ինչպես Բորգոմեան, Կրամեան և այլն:

² Herod. V, 52, *Μαντινη-*ն հայերին հարող մի երկիր է Զար ղեաի կամ, ինչպես նա անվանում է, երրորդ Տիգրիսի վրա: Ըստ նրա վկայության՝ Մարդեից Շոշ տանող արքայական ճանապարհը անցնում էր Հայաստանի և Մատինների միջով, ընդ որում Հայաստանում 56,5 փարսան տարածության վրա գտնվում էին 15 կայան, իսկ Մատիններում՝ միայն չորս: Մրանից երևում է, թե այդ երկրների գրաված տարածությունների միջև ինչ հարաբերություն դարձրեց Մարդուրը *Μαντιανή-*ն տեղադրում է Մարաստանում, X, 7, p. 509—714: Պտղոմեոսը VI, 2, 5 հիշատակում է *Ματουστάνα matu-*ից և *στῆνα-*ից նաև *Μαρτιανή*: Ըստ Ստրաբոնի, Ուրմիո լիճը կոչվում էր *Μαντιανή*, որը նրա բացատրությամբ *χουανή ἐρηνηνευθεῖσα*: Մարաստանի նկարագրության մեջ այդ նույն լիճը կոչվում է *Σπαυτῶν*, p. 735: Մի ղեպում աշխարհագրաբ. օրոգում է Ապոլոնիդեից,

բառային առանձնահատկություններ¹: Դրանց հետ սերտորեն կապվում են հայոց Ամատունի՝ A-mat-uni և Մանդակունի՝ Mand-ak-uni իշխանական տների անունները: Հայկական ավանդությունները, նաև այն, որ Ամատունիները բնակվում էին Արտազում, վկայում են նրանց իրանական ծագման մասին², մի հանգամանք, որ խոսում է հօդուս վերոհիշյալ զուգադրությունից:

Մոզերը ծանոթ էին հայերին սովորաբար մարեր անունով, իսկ mar-ը նույնպես ծագում է mada-ից: Հայկական այն ավանդությունը, ըստ որի Մուրացան իշխանական տոհմը ծագել է մարերից, ինձ թվում է, որ անհիմն չէ: Այն վայրը, որտեղ բնակություն հաստատեցին մարերը, հայերեն պիտի հնչվեր Մարոց, ինչպես որ մարդերի հայրենիքը կոչվում էր Մարդ-ոց: Այստեղից էլ Մարոց-Եան, կամ պարսկ. մի-ով՝ Մարոց-ան և ավելի ուշ՝ Մուրացան³:

Իսկ մյուս դեպքում՝ էրատոսթենեսից, ընդ որում, թյուրիմացաբար նա խօսող-կապույտ բար համարել է Մանտանի-ի թարգմանությունը, մինչդեռ թարգմանությունը վերաբերում է Σπαυταν-ին՝ <Ka>πουταν-ից: Աշխարհացույցի կապույտանը, պարսկ. مودان է, որը իրոք նշանակում է կապույտ:

¹ Mada-ի և ուրիշ աների ստուգաբանությունը դեռ չի ճշտված, տե՛ս Hommel op. cit. p. 195 և Paul Rost. Untersuchungen zur altorientalischen Geschichte. Mith. d. Vord Ges. 1897, 2. Վերջին հեղինակը համեմատում է mada-ն madh-ի հետ verständigen, in verständlicher Sprache redenden իմաստով, I. c. p. 73. Մարաբեի վկայությամբ Մարաստանը և մանավանդ Մասրանան հռչակված էին նրանով, որ ἢ μὲν ἀμπελος μητροτην οἴνου φέρει և որ ἔν δὲ τοῖς δένδροις σμηνουργείται καὶ τῶν φύλλων ἀπορρεῖ μέλι, XI 7, 2, p. 509=714 և p. 73=95. Քերու երկրի այդ հատկությունը հիմք ծառայի mada-ն և mali-ն սառչ եկած համարելու դիմի և մեզը նշանակող արմատից, mada պղեսա, mada, հուն. μέθυ, սլավոն. медъ (մեղր):

² Հստ Խորենացու Բ, ծ, Ամատունիները կկն են Համարանից և ծագում են Եր Մանուկայ ումննէ: Ամատունի նա ստուգաբանում է՝ կկ-ե կ զ օր ն Եր, ըստ երևույթին պարսկ. مادل բառից: Էլ ինչու՞ է նա հիշատակում Մանու նախահորը, որի անունով, ինչպես հավատացնում է պատմիչը, պարսիկներից ոմանք նրանց անվանում են Մանուեան: Հստ երևույթին ավանդության մեջ խոսքը Մասու-ի և Մասուեան-ի մասին է, որ անջատվել է և դարձել Մանու, Մանուեան: Իսկ Malu-ն համահուն ժողովուրդ ցույց տվող կարծիք է Ամատունիի սկզբի ա-ն հանդիպում է նաև A-madai անով, փոխ. Madai-ի, որը ի միջի այլոց համարվում է ալարոցյան արտասանության առանձնահատկությունը Hommel, op. cit. p. 195, ann. 2.

³ Գահամական Մարացեան է, այսպես է նաև Քովմա Արժուեու մոտ,

Ասրպատականի հողերից Հայաստան էին թափանցում ցեղային առանձին խմբեր: Ասրպատականը և Կասպից ծովի ափերը հին ժամանակներից սկսած բնակեցված էին խաշնարած կամ քուզորական կենցաղով ապրող բազմաթիվ ցեղերով: Տիգրանի ժամանակ նրանցից շատերը, որ թափառում էին Արաքսի ափերին, նրան օգնության եկան ընդդեմ հոմեկացիների¹: Գեղերի, կադուսիների, ամարդների կողքին հիշատակվում են ՕՄՏԻՈՒ-ուտիները կամ ուիտիները, որոնց հետ ազգակցություն ունեն հայկական ուտիացիները: Սկզբում ուտիները ապրում էին Արաքսից հարավ, ապա՝ հյուսիս, ընդ որում Արաքս գետը սահման էր Օտենայի և Ասրպատականի միջև: Պարզմեոսի ժամանակ Օտենան արդեն ընկած է Կուր գետի ափին և ուրեմն՝ համապատասխանում է հայկական Աուտիքին²:

Ուտիների հետ միասին գեպի Արաքս և Կուր գետերի միջև ընկած ավազանը շարժվեցին գեղերը, որոնցից ծագում է, հավանաբար, հայկական Գեղ, Գեղարունի³ տեղանունները, ինչպես նաև անիս-նեբը, որոնք Փայտակարանի Հանին կապում են Շիրակի Անի քաղաքի հետ⁴:

Օտենայի գավառներից մեկը՝ Շակաշենը, սովորաբար նույ-

է 109, փոխանակ Մարոցեան: Խորենացին Բ, Ը, պնդում է, որ սոչ սանն նահապետի ազգին Մուրացան աէր, ալլ Մարացուցն տէրս, բայց ինքը Արգամին անվանում է Ետանուտէր ազգին Մուրացանս, Բ, խդ և Ետահապետ Մուրացանացս, Բ, խդ:

¹ Plut. Luc. 26, οὐκ ὀλίγοι δὲ τῶν περὶ τὸν Ἀράξην νεμομένων ἀβασιλευτοὶ χάριτι καὶ δώροις πεισθέντες.

² Herod. II 93, VII 68, Str. p. 714=508, p. 721=514. Plin. VI 42, Atropatene ab. Armeniae Otene regione discreta Araxe. Ptol. V 12, 4 παρὰ δὲ τὸν Κύρον ποταμὸν... ἢ Ὠτηνή.

³ Դ՛հլալ, որտեղից էլ այժմյան Գիլան-Գեղացը, Նիլշե, էջ 218, կամ Գեղամեն, Կաղանկապաղքի, Բ, ծԹ, Լրկիր Գեղամայ Աբքնալի մոտ, էջ 57-58, երկիր Գեղամայ, Խորենացու մոտ, Բ, ծգ, Գեղամանց լեռան: Հմմտ. Գեղ, Գեղամ, Գեղարունի:

⁴ Հստ Մարաբեի Ἀινιά-νοι պարում էին Աուիթում, և նրանց քաղաքը կոչվում էր Աινιάνα, էջ 508=714: Անդրեանի կարծեքով այստեղից է սառչ եկել հայկական Հակեի Փայտակարանում, Paul-Wiss. RE. Ainiāna: Իսկ Մարաբեի վկայում է, որ τῶν Αἰνιάνων τινὲς οἱ μὲν τὴν Οὐτίαν οἰκῆσαι οἱ δ' ὑπερθε τῶν Ἀρμενίων ὑπὲρ τὸν Ἄβρον καὶ τὸν Νίβαρον, p. 531=746: Այս խոսքերի հիման վրա հայկական Անի-ն կարելի է վերագրել Ἀινιά-νοι:

նացվում է հին հեղինակները՝ Սակասենի հետ, իսկ Սակասենին համարվում էր սակերի առհմական տիրույթը: Պատմում են, որ միջինասիական տափաստաններից սակերը շարժվել են գեպի հարևան Բակտրիան և զրավել այն երկրամասը, որ հետո նրանց անունով կոչվեց Սակաստան, ներկայիս Սեխստանը: Այնուհետև նրանց մի մասը շարժվեց գեպի Արևմուտք և անցնելով Հայաստանի վրայով՝ հասավ Պոնտոսի ափերը: Սակերի մնացորդները Հայաստանում հաստատվեցին ամենաբերրի շրջանում, որն այն ժամանակվանից սկսած հայտնի է Սակասենե անունով: Սակասենի կապը սակերի հետ վերջին ժամանակներս վիճելի է համարվում, բայց ըստ էրևույթին այդ այնքան էլ հիմք չունի: Պարեհ Կողոմանոսի ժամանակ արդեն հիշատակվում է Σαχεσίονα ժողովուրդը, որ ապրում էր աղվանացիների և կազուսիների հարևանությամբ. այս երեք ժողովուրդները գտնվում էին Մարաց բանակում՝ Արտոլատեսի հրամանատարության տակ³, ինչպես էլ որ բացատրելու լինեն Սակասենի ծագումը և նրանց կապը սակերի հետ, այնուամենայնիվ, անվիճելի է, որ եղել է այդպիսի մի ժողովուրդ: Աղվանքին հարևան հայկական աշխարհներից ամենից ավելի հայտնին Սյունիքն է: Այն կազմում էր մի միասնական իշխանություն, ինչպես Մոկրը և Տայրը, և թեև մտնում էր Հայաստանի մեջ, բայց աչքի էր բնկնում անջատողական հակումներով: Այս հան-

¹ Str. XI 8, 4, p. 511=718, Σακαί... τήν Βακτρίαν κατέσχον και τῆς Ἀρμενίας κατακτήσαντο τὴν ἀρίστην γῆν ἣν και ἐπόνυμον ἑαυτῶν κατέλιπον τὴν Σαχασηνίαν.

² Hübschmann-ը Ortsname, p. 457, գտնում է, որ դրան խանկարում է —§ հնչյունի առկայությունը —s-ի փոխարեն Շակահենի մեջ: Եթե անգամ անվիճելի լիներ, որ saka-ն հայերեն պիտի հնչեր սակ, և ոչ թե շակ, այնուամենայնիվ այդ անկանոնությունը կարելի է վերագրել ուտիական կամ աղվանական արտասանության առանձնահատկություններին: Մարկվարտը, *Eranšahr*, p. 120, n. 3, կարծում է, որ Սակասենի ստուգաբանությունը, ինչպես նաև τὰ σάσια տոնավառարությունների նկարագրությունը հին հեղինակների հասարակ մի ենթադրություն է, զուրկ պատմական արժեքից: Նրա կարծիքը ճիշտ է σάσια-ի վերաբերյալ, որ ոչ մի կապ չունի սակերի հետ և հավանորեն ծագում է sāk-սուրբ բառից և ջույց է տալիս, թե ինչ մեծ նվիրաբերություններ էին կատարվում տոնակատարության ժամանակ:

³ Arr. Anab. III 8, ξυνεστόπτοντο δὲ Μήδοις Καδοῦσιοι τε και Ἀλβανοί και Σαχεσίονα. Սարգսեի մոտ p. 528=742, Σαχασηνί, Plin. VI 29, Sacasani, Ptol. V 12, ΣακαΠηνί.

գամանքը անկասկած պետք է վերագրել նախ և առաջ երկրի էթնիկական առանձնահատկությանը: Հասկանալի է, որ գիտնականները սակերի հետքերը որոնել են ոչ միայն Սակասենեում, այլ նաև հարևան Սյունիքում, կամ, ինչպես անվանում էին պարսիկները, Սիսականում: Նույնիսկ փորձեր են եղել Σαχασηνί-ի փոխարեն կարդալ Σισαχάνη, հակառակ բնագրի տվյալների:

¹ De Lagarde, *Gesam. Abh.* 155, *Arm. Stud.* 1895, կարծում է, որ երկրի բուն անունը եղել է Si, իսկ սակերի կոչմից զրավվելուց հետո զարձել է Si-sakēn, այսինքն՝ ս ա կ ե ր ի ս ի: Այս մեկնաբանությունը անընդունելի է: Կրկնակի անվանումները մեծ մասամբ ունենում են առանձին ծագում: Հայկական Միակն անը բաղկացած է սի հիմքից և ունի վերջավորությունից, մինչդեռ պարսկականը իրեն հիմք ենթադրում է սիս-ը: Սյունյաց իշխանական տան պատմիչը հազորում է, որ Վաղարշակ թագավորը Սիսական տունին հանձնեց արքայական զորքերի բարձր հրամանատարության իրավունք՝ պայմանով, որ նրանք շրջապատում կալ հանապաղ պատերազմալ դրանք Հոնաց, որոյ անուն առաջնոյն Սիսան կոչիւր, Օրբելյան Ա, դ: Օրբելյանից մի քանի դար առաջ արար հեղինակ Իրն-ալ-Ֆակիհը (մոտ 903 թ.) նշում է, որ Օսման խալիֆի ժամանակ (644-656) արարները զրավեցին Բայլական քաղաքը և հեծելազոր ուղարկեցին

De Goeje V, p. 293=Карауловъ, *Сборникъ Кавк.* p. 27: Այդ պատահել էր մեջ դժվար չէ նշմարել Սիսանը (փոխ. տպագր. Սիսարի), Մեհուրանը՝ Մեծկուան-քը, Ուրի՝ Ուսիքը, Մեզիրան՝ Մեծիրան-քը, վերջին անունը՝ Հարճյան-ը կամ Մու<լյան> Հարճյան-ըի աղճատումն է: Բացի անաչիներից, մյուսները Աշխարհացյացից հայտնի են որպես Արցախ նահանգի պատաներ: Առաջին անունը Օրբելյանի Սիսանն է, որի տեղեկությունների համաձայն այդպես էին կոչվում սկզբում Հոնաց դուները, այսինքն՝ այժմյան Դերբենդը: Վերոհիշյալ արար հեղինակը, մանրամասն նկարագրելով Դերբենդի անցքը, որը մի երկար պարսպով ամրացրեց խորով նուշիրվանը, ասում է. պարսպի մեջ փորված է յոթ անցք և նրանցից յուրաքանչյուրի մոտ կառուցված է քաղաք, որի մեջ ապրում են սիսսիկին կոչվող պարսիկ գիւնթրներ *المقاتلة من السيسيكين* թասում են, — շարունակում է նույն հեղինակը, — որ Հայաստանից եկած հայերը պարտավոր են պաշտպանել այդ պարսպը և այդ դուները: Նույն տեղում, 291, Карауловъ, էջ 23: Վերջին խոսքերը տարակույս չեն թողնում, որ արարական սիսսիկինը սիսականի հոգնակին է: Արարական իսկական արտասանությունը սիսաջանն է, հոգնակին՝ սիսաիչին: Այսպես է նույն տեղում, էջ 728, Карауловъ, էջ 17: Նուշիրվանը Սիսաջան երկրում շինեց Վայսը *وایس* = Վայսը <ձոր> և ուրիշ ամրոցներ և դրանք բնակեցրեց սիսսիչիցիներով, որ ռազմասեր և խիզախ ցեղ էր): Արարական ճիշտ արտասանությունից կատարված շեղումը ցույց է տալիս, որ հեղինակը ներկա դեպքում այն վերցրել է հին պարսկական աղբյուրից: Քանի որ դուների պաշտպանությունը զրված էր Սիսականի բնակիչների վրա, որտեղ գտնվում էր Սիսան գավառը, ապա հասկանալի է, թե ինչու

Այս բնթերցումն անհաշող է նաև այն պատճառով, որ Միսականը, որը ըստ Խորենացու Սյունիքի համարժեքն է, շկա հին հուշարձանների մեջ և, դատելով նրա ձևից, ծագել է նույն ժամանակ և նույն էանապարհով, ինչ որ Տաեուտերական, Սեպհական, Վասպուրական տերմինները, և սրանց նման Միսական գունդ-ի կրճատ ձևն է:

Տվյալ նահանգի կրկնակի անվանումների ծագումը դեռ մտթ է, և որոշակի ոչինչ չի կարելի ասել, թե նրանք ի՞նչ կապ ունեն ինչպես միմյանց, այնպես էլ սակերի հետ: Անկասկած է միայն մի բան, որ Հայաստանի ազվանական ծայրամասը՝ Սյունիքը, իր բնակչությամբ փոքր-ինչ տարբերվում էր Հայաստանի կենտրոնական մասերից: Նրա ցեղային բացառիկութունը պահպանվում և թարմացվում էր մերձակա լեռնային երկրներից թափանցող գաղթականական հոսանքներով: Նրանց հետքերը պահ-

այդ դեմքը կրում էին Սիսան անունը: Դա պատմական այն փաստի արձագանքն է, որ այդ դեմքը պաշտպանում էին Սիսանի հայերը (հմմտ. Վասակի խոսքերի հետ), Վազար Փարզիցի, էջ 83, «ես մինչ Վրաց մարզպան էի եւ զուն Աղտանից յիմում ձեռնն էր՝ բաղում զօրազուխք հոնաց ընդ իս բարեկամացան»: Պէ՛տք է արդյոք ենթադրել, որ Միսանը Միս<ակ>անի կամ Միս<աջ>անի կրճատումն է, թե՛ պետք է ընդունել, որ այն կազմված է նույն Միս հիմքից, հոգնակիի նշան հանդիսացող ան-ի օգնությամբ և համեմատության մեջ դնել այն արդի Միսիանի հետ, որ Ջանդեղուրի գավառի՝ հին Սյունիքի մի մասն է, թեև Միսիանը կարող է համարվել նաև Միսականի կրճատ ձևը: Այն հարցը, թե արդյոք Միս առանձին ցեղի անուն է, թե միեւնույն ծագումն ունի, ինչ որ Մյունիքը, մնում է չպարզված: Սյունիք ձևը Միսականից ալիլի հին է: Այն հիշվում է Եվսեբիոսի մոտ, չալ ձղղ ղի՝ Ἀλανία καὶ Ἀλβανία καὶ Ἰντιγῆ καὶ Σαυνία. Προπ. εὐαγγ. VI 31, Латышев, Источник, p. 664: Ենթադրվում է, որ Մոլորսոնի Փասն-ուց պետք է կարդալ Σαυνί-ուց. Պրոնոպիոսը հիշատակում է Σουνίται, որպես ազվանացիների հարևաններ, Pers. I, 15, p. 74: Պարսկերեն սիսական ձևը առաջին անգամ հիշատակում է Ջարբրիա Հոնտորը (554 թ.) Sjsagān-ը Ջաքարիան համարում է Հայաստանից զուտ մի երկիր Artān-ի և Gurzān-ի նման: Հայ գրականության մեջ նա Միսականը հիշատակվում է Սյունիքից ալիլի ուշ եղած: Ուշագրավ է, որ Անանունը Հայկազյան տոհմի ծննդաբերության մեջ Միսակին չի հիշատակում, թեև կա Խորենացու մոտ: Արդյոք այդ նշանակում է, որ նրա օրոք Միսականը դեռ գործածական չէր, թե՛ Նրում է այն շրջանը, երբ Սյունիքը անշատվել էր Հայաստանից (571-ից մինչև 660 թ.): Միսականի sis հիմքը կարելի է հանդգնել Միսիքի սի-ին, եթե ընդունենք, որ sis-ը վերաբերում է Տի, si-k այնպես, ինչպես Բաղաս[ական]-ը՝ Բաղ-բին, Moks-ena-ն՝ Մոկ-բին, Akilis-ena-ն՝ Եկեղի-բ-ին, Եկեղեց-ին և այլն:

պանվել են աշխարհագրական անունների մեջ, այսպես՝ Բաղբ, Մարբ, Արանէնբ, Գարգար-ացիբ, Մուխանբ տեղանունների էթնիկական ծագումը կասկածից դուրս է:

Առաջին անվանումը կապ ունի Բաղասականի հետ և ծագում է լեռնական բաղասանի-բ ցեղից, որ հայտնի է դեռ Փավստոսից¹:

Սոթ-քը Sot-k Սյունիքի գավառներից մեկն է, որ իր անունը ստացել է հարավային Աղվանքում ապրող sodi, հայկական՝ ծով-դէ-ացի ժողովրդից և համապատասխանում է Սողունկենին, որ հին հեղինակների մոտ հիշատակվում է Օսենայում գտնվող Կուլ-թեննի՝ հայկական Կողթ-ի կողքին²:

Գարգարներին Փավստոսը հիշատակում է այն լեռնակաճեների թվում, որոնք Խոսրով Կոտակի թագավորության ժամանակ բաղասանից ցեղի հետ ներխուժեցին Հայաստան: Սրանք հենց Խորենացու գարգարներն են՝ Ուտիների, Գարդանների և ծավղեացիների հարևանները³: Հետագայում Գարգարների դաշտ կոչվեց հին

¹ Փավստոս, Գ է, «զօրս Բաղաս-ճաց» ապրում են Կուր գետից հյուսիս: Կոչումն էր մոտ, էջ 31, «Բաղասական կողմանքս ընկնում են Աղվանքից Գարգարն և Տաշիր տանող ճանապարհի վրա, նշանակում է Կուր գետի հոսանքով: Մասուլման հեղինակները Բաղասականը նշում են Արարատի արգարիլի և Վարդան [ակերտ]ի միջև, Eranşahr, էջ 120 (հմմտ. Բաղասուտ balān rod, որ Փայտակարանի մի գավառն էր): Այստեղից երևում է, որ հիշյալ ժողովուրդը լեռներից իջել է Կուր գետի հովիտը, առաջ է անցել և հասել մինչև այն վայրերը, որտեղ Կուրը միանում է Արաքսին: Այս տեղաշարժի ժամանակ, հավանորեն, նրանց մի մասը բնակություն է հաստատել մի բնակավայրում, որ հետո կոչվել է նրանց անունով՝ Բաղ-ք, Բաղ-ս: Եղիշեն ասում է, որ Վասակը «բարեկամացալ էր ընդ Հեռանս» հոնի միաբանութեամբ Բաղասական արքայի», էջ 253: Քանի որ Վազար Փարզիցու խոսքը միայն հոնների մասին է, ապա պետք է ենթադրել, որ Եղիշեի հիշած Բաղասականի արքան նույն հոն Հեռանն է: Այս զեպքում կարող է պատահել, որ Հեռանը ոչ այլ ինչ է, քան Առանի Աղվանք ձևը, այսինքն՝ Վասակը բարեկամություն էր հաստատել Առանի կամ Աղվանքի հոների հետ, որոնց վրա իջնում էր Բաղասականի արքան: Հավանորեն, Բաղաս-ները հոնական ցեղերից էին:

² Plin. VI, 29: sodi: Պաղոմեոսի մոտ՝ Σοδοουκ-ըրդ, հայկական Սողոն է: Ուշագրավ է Օրբելյանի Եղումը՝ «սակս հանապազորդեան բբոց և գառնաշունչ օրոցն կոչեցաւ Սոթք, Ա, գ, Աղահէճք, ըստ երևութիւն, առաջ են կելել այն փոքրիկ ժողովրդից, որի մնացորդները այժմ կուլում են լահիճ և բնակվում են Գաղասանի հարավային մասերում:

³ Փավստոս, Գ է, «զօրս Գուգարացս փոխ. Գարգարաց, Գուգարբի շատ հայտնի շրջաններից մեկը՝ Գուգարեննի ազդեցությամբ, Խորենացի, Բ 8, Գարգարացոց,

Ուտիքը կամ Օտենեն par excellence Պարսավ բարաքի հետ միասին: Պարսավի մոտ Կուր գետի վտակներից մեկը այժմ էլ կոչվում է Կարկար: Հայ գարգարները, ինչպես երևում է, ծագում են այն լեռնական գարգարցիներից, որոնք ապրում էին Աղվանքից հյուսիս՝ Կերավնյան նախալեռների ստորոտներում կամ Կովկասյան լեռնաշղթայի աղվանական ճյուղի վրա¹:

Իշխանութիւն, Քովմա Արմուրի, էջ 117—216, Ի գաշան Գարգարացոց... Ի բաղաբն Պարսաւ:

¹ Str. VI, 5, էջ 504=707, Γαργαρεῖς: Γαργαρηλή համահունչ անունը, որ ծանոթ է նաև Ստարաբոնին, բնդհանուր ոչինչ չունի գարգարացոց հետ և պարսկական է հայկական անվանացանկին և, թերևս=ստորական kakkari-ին, որ նշանակում է երկիր, նահանգ Ի միջի այլոց ո՛չ ստորագրանորեն և ոչ է՛լ պատմական տեսակետից արդիւք չկա գուրար-ը մոտեցնել գարգարքին և գրանց համարել ավելի վաղ ժամանակվա եկվորներ: Այդ շատ դալթակաղի է մանավանդ նրանով, որ Գոգարենների հարեան գավառները ևս՝ Երրակը և Աշոցքը, հիշեցնում էին լեռնական այն ցեղերը, որ հիշատակվում են Ստարաբոնի մոտ Σιρόδων κοί² Ἀόρων φῦλα, Str. p. 506, որոնք Մեոտիան և Կասպից ծովերի միջև բնիված ասորական լեռնաշղթայից ցեղերից ամենամեծագույնն ու ամենաուժեղն էին: Նրանք հյուսիսից իջնում էին հարավ (φυγάδες τῶν ἀνατορών) և, ասորիճանաբար գարգանալով, գրաղվում էին հնդկական ու բարբելական ստանդարտների անտարով՝ ստանալով դրանք մարերից և հայերից, ἐνεπορευόντο καμήλοις τὸν ἰνδικὸν φόρτον καὶ τὸν βαβυλωνιον παρά τε Ἀρμενίων καὶ Μηδῶν διαδεχόμενοι, Str. p. 711: Նկատի ունենալով հայերի հետ ունեցած այլաբան սերտ հարաբերությունները, գարմանալի չէ, եթե նրանց մի մասը գաղթեր Հայաստան և հաստատվեր այն բնակավայրում, որը հետո կոչվեց Երրակ=Σιρακ և Աշոցք=Ἀόρσοι: Հստ Պլինիոսի VI, 16, Seraci-ների կողմից ապրում էին Cephalotomi-ները: Ստարաբոնից իմանում ենք, որ նրանք իսկական անունն էր ս ար ա ա ա և որ նրանց մի մասը գաղթել է դեպի Սարաց սահմանները փաօի δὲ καὶ Θρακῶν τινας, τοὺς προσαγορευομένους Σαράπαρας οἷον κεφαλοτόμους, οἰκῆσαι ὑπὲρ τῆς Ἀρμενίας πηλοῖον Γουραίνων καὶ Μηδῶν, Str. XI 14, p. 531=747, ըթե ընդունենք, որ իրենց հարեան սիրակ-ների հետ միասին Հայաստան են գաղթել նաև սարապարաները, այդ Երրակի իշխանների՝ Կամսարականների տոհմական անունը մեզ կներկայանա նոր լույսի տակ: Sará-para նշանակում է տառացի հենց κεφαλό-τομος: Հստ Խորենացու Բ, ձ է Կամսար նույն նշանակությունն ունի՝ պակաս զուով բուրբութիւն գազաբանն, այսինքն կաղմված է kam-ից և sara-ից: Այդ հիման վրա կարելի է ենթադրել, որ Կամսարականները Երրակ գաղթած սարապարանների հաջորդներն են: Հետագայում, երբ Երրակն անցավ Արշակունիների այն էլուղին, որ հաստատվեց Արշարունիքում, նրան անցավ նաև Կամսարականների տոհմանունը: Խորենացու մեջ բերած հայկական գրույցների համաձայն Երրակը առաջացել է Եարալից, իսկ Գուրարը՝ Գուրարից: Պարզ է, որ Եարայը և Գուրարը պարզ էլսոնիմներ են: Եարայը այն-

Մուխ-ան-Գը Արցախի նահանգի գավառներից մեկի անունն է, որ ծագում է Կասպից ծովի ափերին ապրող ցեղերից՝ մեկի՝ μύχοι-ներից¹: Սրանց մասին հիշատակություն պահպանվել է այն տափաստանի անվան մեջ, որ կոչվում է Մուղան-ղաշտ, այսինքն՝ մուղերի դաշտ:

Այդպես էլ Պաղկան-քը, ավելի ճիշտ՝ Պարսականքը, որ գտնվում է նույն Արցախում, ծագում է Πάρσοι Ժողովրդից, և դուցե kust-i párens-ը կապ ունի Παρράσιοι-ի հետ²:

Ինչպես բուրբ թվարկված, այնպես էլ մյուս էթնիկական խմբերը այն տարրերն են, որոնցից կազմվեցին համապատասխան իշխանական տոհմերը: Նոր տարրերի ներգաղթը, ցեղային առանձին խմբերի ներթափանցումը շարունակվեցին նաև դրանից հետո: շրջակա երկրներից հաճախ գալիս էին նոր խմբեր, որոնք ժամանակի ընթացքում նույնպես ծնունդ տվին իշխանական տներին: Այդպիսի պայմաններում երկրի ազնվականացումը չէր կարող տեղի ունենալ միանգամից, և եթե մենք նշում ենք Տիգրան Մեծի դարաշրջանը որպես տոհմական հիմքերի կործանման և դասային ազնվականության առաջացման ժամանակաշրջան, ապա դա պետք է համարել իրավացի՝ ընդհանուր առմամբ:

պես է վերաբերում Երրակին, ինչպես Գուրարը Գուրար-բին: Թերևս ճիշտ բնթերցումը Գուրար է, հմմտ. այժմյան Գուրարթի հետ:

Հնարավոր է, իհարկե, նաև այն, որ չիրակ-ը ունենա դաշտ նշանակությունը (հմմտ. Երրակի հարթավայրը տարածվում է Ալագան գետի երկարությամբ), χείθρα, չեհրա, չիրակ:

¹ Herod. VII 68, Μύχοι ապրում էին Օծտի մոտ և դիմվում էին ինչպես Πάκτιες-ները, այսինքն՝ Բոհտանի բնակիչները: Այս վերջին հանգամանքը այն միտքն է հուշում, որ μύχοι ազգակցություն ունեն մեկաց այսինքն՝ մոկ-ս-երի հետ: Ուշագրավ է, որ Խորենացին Մոկեի հարեան գավառի՝ Մշտունիքի բնակիչներին համարում է Սյունիքից՝ Մուղանի մոտ գտնվող այդ երկրից գաղթածներ:

² Str. p. 508=714, աշխարհագրի տեղեկության համաձայն Παρρασίων τινὰς οὖς καλεῖσθαι νῦν Παρσίους, ավելի ճիշտ՝ պարսիկները և պարսպիկները թեև միմյանցից տարբեր, բայց ազգակից ցեղեր էին: (Պլինիոսը նույնպես հավատացնում է, որ Gaeli quos graeci cadusios appellavere, VI 48, թեև հայտնի է, որ գելերը և կադուսիկները իրարից տարբեր փոքր ժողովուրդներ են): Հստ Մովսես Կաղանկատվացու կա սաշխարհ մի Արցախայ՝ պարսկական անունն, կամ ինչպես նույն գլխի վերնագրի մեջ է՝ պարսկաց Ա, ժբ, իսկ Գ, ի, նույն անունը հնչում է Պաղկան-ք, Աշխարհացույցի մեջ՝ Պածկան-ք, մյուս աշխարհն է Քուսու-ի-փառնես, Առդիկի մոտ, էջ 198, 236, 283, Փառխ(ոս):

Այս խմբումաների հետևանքն այն եղավ, որ ստվար թիվ կազմող կոմարքոսներն ու տոհմապետները դարձան փոքրիկ իշխանավորներ. նրանցից կազմվեցին այն 120 ստրատեգիաները, որ մենք տեսնում ենք Հայաստանում Արշակունիների երևան գալու ժամանակ, և որոնց ձևավորումը Հայաստանի հասարակական-քաղաքական աճի պատմության մեջ կարելի է համարել նոր իրավակարգի սկիզբ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԵՈՒԱԼԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

I. Տիգրանյան հարստության փոխարենում Արշակունյանով: Տրդատը եւր հարստության հիմնադիր: Նրա անձնավորությունը. նրա պատմական կերպարի արագությունը հայկական ավանդությունների մեջ: Տրդատի վերաբերմունքը 120 ստրատեգիաների նկատմամբ: Երկրի վիճակը Արշակունիների երևան գալու ժամանակ: Ֆեոդալական իրավակարգը Պարթևների պետության մեջ և նրա հիմունքները: Դասային իրավակարգը Պարսկաստանում Արշակունիների *ornaf* *šaθradarān*, *vaspuθrakān*, *vazrakān* և *azatān* ու նրանց փոխհարաբերությունները: Արշակունյաց կտրգերը Հայաստանում: Հողերի և պաշտոնների բաշխումը՝ *naxarar*, *nahang*, *azat*: Տոհմական սկզբունքների խառնվելը պետականի հետ: Անդրադարձ երևույթներ՝ *tanuter* և *nahapet*: II. Հայաստանի ֆեոդալական նկարագիրը: Ֆեոդալիզմի էությունը: Հռոմեական և գերմանական նախընթացները Արևմտյան եվրոպայի ֆեոդալիզմի զարգացման մեջ: Նախադրությունը ֆեոդալիզմի շրջանակներում՝ հալթեմիքը և պարզեականքը՝ որպես ալլոդիալ և բենեֆիցիալ հողատիրության նման հողեր: Վասալական կազմը՝ ծառայություն—*servitium*: Ֆեոդալական օրգանիզմի տարրերը: Մենյուրությունը որպես ֆեոդալիզմի գլխավոր հաստատություն: Հայ իշխանական տիրույթները որպես *iefs-seigneuries*: Մենյուրական իրավահարաբերությունները՝ [տանու]տէրություն — սենյուրություն, նրա հատկանիշները: Ֆեոդալական հարաբերությունը նեղ իմաստով՝ *hommage*, *auxilia*, *consilium* և համապատասխան հասկացությունները հայերի մաս: Սուրինֆեոդալիա և ս ե պ ու հ ու ր յ ու ն. նրա ծագումը: Ո ս տ ա ն ի կ — ազատություն: III. Գյուղացիական հողատիրություն: Դրությունը Արևմուտքում: Հարկային համակարգը պարսիկների մաս: Գլխավոր պարտույթները. *charadž* և *gōzith* կամ *sak* և *bāz* = ցենց և *chevage*; *bahrak* = *cham-part*, *kor-bekār corvées*: Հարկերի բանակն ու տեսակները: Մեր եզրակացությունները հորենացու համեմատությամբ: Խորենացին նախադրության պատմիչ:

I

մահով Հայաստանում ընդհատվեց Տիգրանյան հարստությունը¹, և սկսվեց մի կատաղի պատերազմ հարևան պետությունների միջև՝ թափուր գահին տիրանալու համար: Հռոմեացիները գործում էին իբրևների միջոցով և պաշտպանում էին նրա արքայորդիներին թեկնածությունը Արշակունիների հավակնորդների դեմ: Վաղար-

1. Տիգրանյան հարստությունը սկսվում է Կյուրոսի և Ամղահակի ժամանակներից. նրանց օրոք կար հայ թագավոր, որ ուներ երկու որդի՝ Տիգրան և Շավարշ (տե՛ս վերը՝ էջ 390 ժանտիությունը) նրանցից սերում են.

- 1. Արտաշես 190 թ. մ. թ. ա.
- 2. Տիգրան Ա, *Lucas App. Syr.* 48, Տիգրան Մեծը Տիգրանի որդին էր βασιλεύς Ἀρμενίας Τυγράνης ὁ Τυγράνους.
- 3. Արտավազ Ա, *Վախճ.* 94 թ.:
- 4. Տիգրան Բ, Մեծ, 94—56 թ. մ. թ. ա., նրա որդին նույնպես կոչվում էր Տիգրան և ամուսնացած էր Պարթևաց Հրատա թագավորի դստեր հետ: Տիգրանի դուստրը ամուսնացած էր Ատրպատականի Միհրդատ թագավորի հետ, *Dio*, 36, 16: Խորենացին շփոթել է Պոնտոսի Միհրդատին Մարաց Միհրդատի հետ: Առաջինի դստեր՝ Կլեոպատրայի հետ ամուսնացած էր Տիգրանը, իսկ Տիգրանի դուստրը ամուսնացած էր Երկրորդի հետ:
- 5. Արտավազ Բ, 56—30 թ., դերի ընկավ 33 թ. և սպանվեց Կլեոպատրայի հրամանով 30 թ. մ. թ. ա.:
- 6. Արտաշես Բ, Արտավազի որդին, սպանվեց *per dolum propinquorum*, *Tac.* II 3:
- 7. Տիգրան Գ, Արտաշեսի և Երատոյի եղբայրը, *nec. diuturnum*, *Tac. ib.* նույն տեղում:
- 8. Արտավազ Գ, *զահրնկեց արվեց մ. թ. առաջին տարում*, *Tac.* II 4:
- 9. Արիստրգանես, *մար*, *Tac.* II 4:
- 10. Էրատ, Տիգրան Գ-ի բույրը և կինը, թագավորեց երկրորդ անգամ, *Tac.* II 4:
- 11. Վոնոն Պարթև, *Tac.* II 4:
- 12. Արտաշես Գ=Ջենոն, Պոռնոն թագավորի որդին, *Tac.* II 56:
- 13. Արշակ, Արտաքանի որդին, *Tac.* VI 40:
- 14. Տիգրան Գ, *գլխատվեց 36 թ. մ. թ.* *Tac.* VI 40:
- [15. Միհրդատ, *վրացի*, *Tac.* XII 44 և հաջորդ:
- 16. Հուգամիզդ, *Վախճ.* 54 թ., 50 թվականից սկսած՝ Տրդատի հակառակորդը:
- 17. Տիգրան Ե Կապադովկիացի, Հռոմի թեկնածու՝ Տրդատի հակառակորդը]: Արշակունեյաց հարստություն:
- 1. Տրդատ, 50 թ., *վերջնականապես 66—80 թթ.*, *Tac.* XIII—XV:
- 2. Եսողար, *Վախճ.* 110 թ., Տրդատի եղբայր Բակուրի որդին:
- 3. Պարթամասի, 111—114 թթ., Եթսողարի եղբայրը, *Dio Cass*, 68, 17, 2:
- 4. [Վաղարշ] —117, *Spartian. Hadr.* 21.
- 5. Թագավոր, Անտոնինոս Պիոսի դրածոն (133—161)ր.

շակ Ա-ն 50 թվականին բարձրանալով պարթևական գահը՝ Հայաստանից վտարեց Հռոմի դրածո Հուգամիզդին և շուրջ 53 թվականին թագավոր կարգեց իր եղբայր Տրդատին: Անմիջապես հայտնվեցին հռոմեական լեզեոնները Կորբուլոնի ղեկավարությամբ և պարթևներին ստիպեցին հեռանալ Հայաստանից, հենց այդ ժամանակ էլ ժամանեց Ներոն կայսեր նշանակած Տիգրանը՝ ստանձնելու Հայաստանի թագավորությունը: Վրկանում զբաղված լինելով պատերազմով՝ Վաղարշակը չկարողացավ հակահարված տալ հռոմեացիներին, մինչդեռ Տիգրանը իրեն պահում էր հանդուգն և ասպատակում էր հարևան Ադիաբենը: Տիգրանի այս վարմունքը պարթև ավագանին համարեց վիրավորանք իր հասցեին. ամենից ավելի զայրացած էին Ադիաբենի կառավարիչ Մոնորազը և հայոց գահից վտարված Տրդատը: «Ընշող տալավորություն էր թողնում,— ասում է պատմագիրը,— հատկապես Տրդատը իր լուսթյամբ և զուսպ գանդատներով. մեծ պետությունները ոչ թե անգործությունք են կանգուն, տրանշում էր նա, այլ պահանջվում է մարդկանց և ղեկի մրցություն. մարդկության վերնախավում արդարացի է այն, ինչ հզոր է. սեփականը պահպա-

- 6. Սոնեմոս, 159—162:
- 7. Բակուր, 162—164: Սոնեմոս, երկրորդ անգամ 164—169:
- 8. Սանատրուկ, 190—197:
- 9. Վաղարշ, 197—216:
- 10. Տրդատ Բ, 217, Գ դարի թագավորները անծանոթ են, զոյություն ունեցող տլյաները խառնաշփոթ են: Հիշատակվում է 11. Տրդատ Գ, 253 թ. սկզբներից և 12. Արտավազը, 269 թ.:
- 12. Տրդատ Գ, բրիտանյա, լուսավորչի ժամանակակիցը:
- 13. Խոսրով:
- 14. Տիրան, *զահրնկեց արվեց 344 թ.*
- 15. Արշակ, 346—349 թթ.:
- 16. Պապ, 369—374 թթ.:
- 17. Վարազդատ, 374—378 թթ.:
- [Մանուկ, 378—385 թթ.]
- 18. Արշակ և Վաղարշակ,
- 19. Վամշապուհ,
- 20. Արտաշես:
- 1 Tac. *Ann.* 14, 26.

նկը առանձին մարդկանց գործն է, իսկ ուրիշի ունեցածի մասին վիճելը՝ թագավորների փառքը»¹:

Այս խոսքերի ազդեցության տակ Վաղարշակը խորհարդ է հրավիրում և Տրդատին նստեցնելով իր կողքին, այսպիսի ճառ է ասում: «Իմ հարազատ եղբայր Տրդատին, քանի որ ավագության կարգով նա ինձ ղեջեց թագավորական կոչումը, ես տեր դարձրի Հայաստանին, որ հանդիսանում էր մեր տիրակալության երրորդ աստիճանը, որովհետև Մարաստանը ավելի վաղ վերցրել է Բակուրը: Թվում էր, թե եղբայրների միջև գոյություն ունեցող հինավուրց թշնամության և մրցության հակառակ ես, ինչպես հարկն է, կարգի գցեցի մեր ընտանեկան հարաբերությունները, բայց հոռմեացիք թույլ չեն տալիս այդ, և ահա խաղաղությունը, որ նրանք միշտ էլ խախտել են ի վնաս իրենց, այժմ էլ խախտեցին, որ իրենց կործանում է բերելու: Խոստովանում եմ, որ ես ավելի գերազասում էի իմ նախնիների ձեռք բերածը պահպանել արդարությանը, քան արշուն թափելով, ավելի շուտ իրավունքով, քան զենքի միջոցով: Եթե ես սխալ թույլ տվի գանդաղաշարժությանը, ապա կշտկեմ այն արիությունը»²: Դրանից հետո նա Տրդատի գլխին ապարոջ կապեց և մի հեծյալ ջոկատի ուղեկցությամբ, որի հրամանատարն էր ազնվազարմ Մոնեսը, ուղարկեց Հայաստան՝ հանձնարարելով վտարել Տիգրանին և գրավել զահար:

Տրդատն ու Մոնեսը գործեցին փայլուն կերպով և Կորբուլոնին այնպիսի վիճակի մեջ դրին, որ նա «վախենալով կորցնել տարիների ընթացքում ձեռք բերած իր փառքը», — ինչպես ասում է պատմագիրը³, — խնդրեց Հայաստանը պաշտպանելու համար իր փոխարեն ուրիշ զորավար նշանակել: Նրա հաջորդ Կ. Պետոսը՝ սպաշնորհի մեկը, կատարյալ անհաջողություն կրեց և բանակցության մեջ մտավ Պարթևների թագավորի՝ լիսպոսի և հեծելազորի հրամանատար Վասակի հետ: Նա համաձայնեց ամոթալի պայմանների հետ՝ լեզեոնները դուրս բերել Հայաստանից և բոլոր ամրություններն ու պաշարները հանձնել թշնամուն: Պետոսին

¹ Tac. Ann. 15, 1, non enim ignavia magna imperia cantineri; virorum armorumque faciendum certamen; id in summa fortuna aequius, quod validius, et sua retinere privatae domus, de alienis certare regiam laudem esse.

² ib. 15, 2.

³ ib. 15, 6.

նորից օգնություն եկավ Կորբուլոնը: Հոռմեացիները համաձայնեցին զիջել Հայաստանը Տրդատին՝ պայմանով, որ «նա Կեսարի արձանի առջև ցած դնի իր արքայական իշխանության տարբերանշանները և դրանք նորից վերցնի միայն Ներոնի ձեռքից»¹:

Այս նպատակով Տրդատը իր ընտանիքի՝ կնոջ և երեխաների, Վաղարշակի որդիների, մարաց Բակուրի, Ադիաբենի Մոնորազի ու երեք հազար հեծյալի ուղեկցությամբ դուրս եկավ հեռավոր ճանապարհորդության: Ինչ ամիս հետո Տրդատը հասավ Իտալիա: Քանի որ այդ ժամանակ Ներոնը գտնվում էր Նեապոլում, ուստի Տրդատը ուղևորվեց այնտեղ: Հայոց թագավորի ընդունելությունը կատարվեց այնպիսի շուքով, որին հոռմեացիների կողմից չէր արժանացել օտար տիրակալներից և ոչ մեկը: Նեապոլը և մինչև իսկ Հոռոմը տոնական կերպարանք էին ստացել: Առաջինը լուսավորված էր և զարդարված դրասանդներով: Ամբողջ քաղաքը դուրս էր թափվել թագավորին զիմավորելու և նրան տեսնելու. ամբոխը լցվել էր փողոցները, բարձրացել տների տանիքները: Հրապարակի մեջտեղում, որտեղ պիտի տեղի ունենար թագադրությունը, շարքշարք կանգնած էր ժողովուրդը՝ սպիտակ զգեստներ հագած և դափնեպսակները գլխներին. շուրջ բոլորը շարված էր զորքը: Այդպիսի տոնակատարություն իր հանդիսավորությամբ և շքեղությամբ մինչև այդ չէր եղել: Թագադրությունից հետո ի պատիվ թագավորի տեղի ունեցան ներկայացումներ, թատրոնն այդ կապակցությամբ ամբողջովին զարգարված էր ոսկով²:

Այս բոլորը ցույց է տալիս, թե հոռմեացիները որքան բարձր էին գնահատում իրենց ինքնասիրությունը շոյող արտաքին ձևը, որի տակ բողոքված էր Հայաստանում իրենց կրած պարտությունը: Պարթևները հասան իրենց բաղձալի նպատակին, և Հոռոմի ցնձագին հնչյունների տակ հաստատվեցին Հայաստանում:

Տրդատից սկսվում է Արշակունիների հայկական ճյուղը, հակառակ ազգային ավանդությունների, որոնք այդ հարստության հիմնադիր են համարում Վաղարշակին: Տրդատը՝ Արշակունիների այդ իսկական նախահայրը, առհասարակ ամենաուշագրավ զեմքերից մեկն է ոչ միայն հայերի, այլև պարթևների նշանավոր ներկայացուցիչների շարքում: Զինվորական քաջության հետ

¹ Tac. Ann. 15, 29.

² ib. 16, 24. Dio Cass. 63, 1—7.

միասին նա իր մեջ համատեղում էր նաև քաղաքական շրջահայացությունը: Պատմագրի կողմից նրա շուրթերին դրված այն խոսքերը, թե պետությունների գոյությունը պահպանվում է պայքարով, հիանալի բնութագրում են նրան որպես զինվորականի և պետական մարդու: Նրա մեծ եղբայրը ավելի հակված էր դեպի մարդասիրական հայացքները և շեշտում էր արդարության առավելությունը արյան՝ և իրավունքի առավելությունը՝ զենքի նկատմամբ, բայց հետագա զեպերը ցույց տվին, թե ում կողմն էր ճշմարտությունը, և թե որքան խորն էր ըմբռնում իրերի դրությունը Տրդատը:

Իր անկեղծությամբ համարձակ այն միտքը, թե id aequius quod validius, այն է՝ «իրավունքը ուժեղներինն է» իրավացի է հնչում նաև մեր ժամանակների համար: Այս խոստովանությունը բնորոշ է այն ժողովրդի առաջնորդին, որը ճակատագրի բերումով ճաշակել է անդորրության բոլոր դառնություններն ու աղետները:

Արշակունի հպարտ թագածառանգը իր գլուխը խոնարհեց ատելի մարդու արձանի առջև, որպեսզի ձեռք բերի այն թագը, որ արդեն պատկանում էր իրեն: Տրդատը համաձայնեց կատարել այդ նվաստացուցիչ արարողությունը, անշուշտ, ոչ թե այն պատճառով, որ բավականաչափ հպարտ չէր: Հին հեղինակների վկայությամբ զոռոգության հասնող արժանապատվության զգացումն ու անվեհերությունը ընդհանրապես Արշակունիների բնավորության հատկանշական գծերն են եղել: Այդ հատկությունները ոչ պակաս չափով զարդարում էին նաև Տրդատին, որի մասին վկայում է հոռմեացիների դեմ նրա մղած կատաղի պայքարը: Բնատուր հպարտությունը նա հաղիվ էր կարողանում զսպել. ամեն վայրկյան պատրաստ էր պոռթկալու: Երբ նեպաղում Տրդատին ներկայացնում էին ներոնին, նրանից պահանջեցին, որ սուրը վրայից հանի. ինքնասեր գահաժառանգը կտրականապես մերժեց կատարել այդ պահանջը և համաձայնեց միայն այն դեմք պատշաճի մեջ: Հանգամանքները հարկադրեցին Տրդատին «հաղթահարել իր հպարտությունը, — ինչպես ասում է պատմագիրը, — և հնազանդվել անխուսափելիին իր իսկ շահի համար»¹:

Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատի անձնավորությունը խորապես ապավորվել է ժողովրդի հիշողության մեջ և

¹ Dio Cass. 63, 1—7. Ուշագրավ է համեմատել նման մի այլ դեպքի հետ, որ Մուշեղ Մամիկոնյանի մասին պատմում է Սևրեոսը, էջ 42:

վառ հետքեր է թողել ժողովրդական զրույցներում: Հայերի պատմական ավանդությունները, նույնիսկ այն ձևով, ինչպես պահպանվել են հորենացու մոտ, նրբեմն զարմանալի ճշտությամբ արտացոլում են առանձին պահեր և փաստեր: Նրանք վարագործած են հաճախ այն կեղծ պրպամատիզմով, որ ազգային ավանդությունների վզին է փաթաթում հորենացին կամ այն հեղինակը, որ առաջին անգամ մշակել է դրանք:

Տրդատ թագավորի բնավորության գծերը ավանդությունների մեջ հատուկենտ են պահպանվել և ավելի ցայտուն են հանդես գալիս Վաղարշակի, ժողովրդական երգիչների կողմից սիրված Արտաշեսի և նույնիսկ Լուսավորչի զինակից Տրդատի կերպարի մեջ: Հայկական ավանդությամբ հայ Արշակունիների նախահայրը կոչվում էր ոչ թե Տրդատ, այլ Վաղարշակ: Valars-ak-ը Vologaesa-ի¹, պարսկ. Valas-ի ժողովրդական ձևն է. այսպես էր Տրդատի ավագ եղբոր անունը, որ թագավորում էր Պարսկաստանում: Նա գործուն մասնակցություն է ունեցել Տրդատի ճակատագրի մեջ և, հավանորեն, այդ է պատճառը, որ նրա անունը փոխանցվել է եղբորը: Պարթևների թագավորը, իր եղբորը ուղարկելով Հայաստան, նշում է նրա տիրապետության սահմանները և մասնավորապես ասում է. «սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հասանէ, այնքան ունի»²: Այս ասույթը զարմանալի կերպով հիշեցնում է վերը մեջ բերված Տրդատի խրատաբանությունը թե՛ id aequius quod validius և հիանալի արտահայտում է նրա հիմնական իմաստը:

Մորիյուղիկը, որի դեմ կռվել է Վաղարշակը, ոչ այլ ոք է, եթե ոչ հոռմեական զորավար Կորբուլոնը՝ Տրդատի հակառակորդը:

Պատմական արժանահավատ տվյալների համաձայն առաջին Արշակունի թագավորը՝ Տրդատը, 75 թվականին կասեցնում է պարսկների արշավանքը և նրանց դուրս է վճռում Հայաստանից. ազգային ավանդությունը Սաթենիկ արքայազատեր մասին ումանտիկ զրույցի մեջ այդ դեպքը վերագրում է Արտաշես Բ-ին: Նույն Տրդատի մի քանի գործերը հորենացու մոտ փոխանցվել է Լուսավորչի ժամանակակից և նույն անունը կրող թագավորին: Արտաշեսին է վերագրվում ոսկեօղ պարանի ծանոթ գրվագը, որ իրական-

¹ Volagaesa համապատասխանում է հայկական Վարգ-զէսին կամ Վաղարշին
² ետեհացի, Ա, ք:

վարչական բնույթ չեն կրում. դրանք առաջացել են մասնավոր նախաձեռնությունից անկախ: Առաջին Արշակունուն կարելի է վերագրել միայն դրանց կարգավորումը կամ որոշ համակարգի բերելը: Նոր հարստությունը վավերացրեց այն վիճակը, ինչ որ զբտավ երկրում:

Այդ բաժանումների և առհասարակ երկրի սոցիալ-քաղաքական կերպարանքի վերաբերյալ ստույգ վկայություններ չկան: Տրդատյան պատերազմների պատմիչները տարբերում են բնակչության երկու խավ՝ *proceres* և *plebs*, ազնվական դաս և հասարակ ժողովուրդ: Ազնվականները այլ կերպ կոչվում էին նաև *megistanes* կամ *primores* և կամ պարզապես *nobiles*¹. Այս արտահայտությունների սոցիալական բովանդակության մասին մենք կարող ենք կռահել այն ամենի հիման վրա, ինչ որ ասվեց վերը: Մենք տեսանք, որ Տիգրանյանների դարաշրջանում առհավան կենցաղը քայքայվեց: Տոհմը տրոհվեց երկու մասի, և դրանցից մեկից ծնվեց ու զարգացավ ազնվականությունը: Բոլոր այդ *proceres* և *megistanes*-ները այլ բան չեն, եթե ոչ զանազան անվանումներ կրող նախկին տոհմապետներ, որոնք այժմ հասել են տիրակալի աստիճանի: Տոհմական քայքայված կյանքի հողի վրա ծնված ազնվական դասը՝ *nobilitas*-ը մի փակ միջավայր էր, որտեղ շարունակում էին գործել նախկին տոհմական կյանքի նորմերը: Այս միջավայրը փոխադրվեց նաև տոհմական տերմիտոլոգիան: Նշանավոր տոհմերի պետերը առաջվա նման շարունակում էին կոչվել *ալք*, *ասպետ*, *մալխազ*, *մամակ* և այլն, չնայած որ փոխվել էր տոհմի բնույթը: Մանուկ, սեպուհ, *ալք-ալք*, աղախին բռները, որոնք նախապես նշանակում էին տոհմական համայնքների զավակներ ընդհանրապես, սկսեցին գործածվել բացառապես նշանավոր տոհմերի որդիներին կամ անդամներին նշելու համար, ընդ որում *manuk*-ը և *alaxin*-ը, դրանից բացի, պահեցին

¹ Հստ Տակիտոսի, Ջենոն թագավորը, որ վերանվանվեց Արտաշես, իր կողմը գրավեց *proceres plebemque* և թագադրվեց Արտաշատում *adprobantibus nobilibus*, II 56; Հոազամիզը *primores Armeniorum ad res novas inclinit*. XII 44: Կորբուտը *megistanas Armenios... pellit sedibus, castella eorum excoendit*, XV 27: Պարթևների ավագանին նույնպես կոչվում էր *primores gentium*, XV 1, *proceres gentium* II 58, նաև II 2, VI 31, 42 և այլն:

նաև իրենց ընդհանուր իմաստը: Նման երևույթ նկատում ենք նաև լատիներենում, որտեղ *liberi* նշանակում է զավակներ և միևնույն ժամանակ՝ ազատներ, ինչպես նաև *patres* և *patricii*, որոնց միջև կա նույն հարաբերությունը, ինչ որ *aspet*-ի և *sepuh*-ի միջև: *Patricius*-ը *pater*-ի ածականն է և ցույց է տալիս ընտանիքին պատկանելը. *patricii* նույն սենատոր հայրերի *liberi* ներքն են:

Մի շարք բառեր, որոնք սկզբնապես նշանակում էին տոհմազգ, ազն, տոհմ, գաղմ, նույնպես ազնվադարձության երանգ են ստանում: Նույն ձևով տալս բառը ստանում է իշխանական տոհմի կամ նահանգի իմաստ:

Բնակչության մնացած մասը՝ *plebs*-ը, որ չէր պատկանում ազնվական դասին, ըստ շրջանների կոչվում էր գեղջուկ, շինական, ուսմիկ, գոեհիկ, թերևս նաև մշակ և այլն: *Ram-ik*-ը և *ms-ak*-ը, ըստ երևույթին բնիկների՝ *ἀραμειοί-ι μός-χοι-ի* էպոնիմներն են, որոնց նվաճեցին և հպատակեցրին եկվոր տարրերը, և որի հետևանքով նրանց անունը այդպիսի նշանակություն ստացավ. այդ նույն պատճառով էլ արամեական աղախիներ ստացավ սպասուհու իմաստ: *Gfeh-ik* բառը համապատասխանում է վրացական *glexi*-ին և ունի միևնույն ծագումը:

Մոտավորապես այսպիսի վիճակ էր տիրում Հայաստանում նոր հարստության երևան դալու ժամանակ: Ազնվականացման պրոցեսը ավարտվում էր, և նրա հետևանքով ստեղծվեցին 120 մեծ ու փոքր իշխանություններ, այնպես որ հետագայի ամենակարևոր իշխանական ընտանիքներն արդեն առկա էին:

Ազգային ավանդությունների համաձայն Արշակունիների օրոք սոցիալական հարաբերությունները մտել էին զարգացման այն փուլի մեջ, որ նշվում է նախարարություն տերմինով: Մենք տեսանք, որ Արշակունիների տիրապետությունը Իրանի պատմության մեջ նշանավորում է հասարակական-քաղաքական վարչաձևի մի շրջան, որ հիշեցնում է Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմը: Հայաստանում նախարարական վարչակարգը հանդիսանում է նրա արտահայտությունը:

Արշակունիների մոտ ֆեոդալիզմի ծագման հարցում ուսում-

¹ *Manu-k*, հայ. մանու՝ ման-ր-ից, ռուս. *мен-уши*, լատ. *min-ori*: Խորենացու մոտ՝ «հաստուած գնացեալ վարդգէս մանուկ», *manuk* այստեղ գործ է ածված ի շխանազն իմաստով:

նասիրողները մեծ նշանակություն են տալիս նվաճողական տարրին, որն այնքան էլ ճիշտ չէ¹։ Կյանքի հետագա զարգացման ընթացքում տոհմական կացութիւնը ինքնին հանգում է մի հասարակարգի, որ նման է ֆեոդալական կարգուկանոնին։ Տոհմական ժամանակաշրջանից հետո, բնականաբար, պարսիկների մոտ ֆեոդալիզմը պիտի առաջ գար որպէս որոշ իմաստով զարգացման անհրաժեշտ փուլ։ Խնդրի էությունն այն է, թե կա՞յին արդո՞ք անցման պրոցեսն արագացնող կողմնակի հանգամանքներ։ Պարսից պետությունը ստեղծվեց Ասորեստանի և Բաբելոնի հանգած պետությունների մշակութային հարստություններով պարարտացված հողի վրա։ Նա Ասորեստանից և Բաբելոնից շատ բան ժառանգեց նաև պետական կառավարման գծով։ Նրանք ունեին կառավարման բավական զարգացած համակարգ, որը այս կամ այն շափով պետք է անդրադառնար նաև պարսից պետության կառուցվածքի

¹ Արշակունիների վարչակարգի ֆեոդալական բնույթի մասին առաջին անգամ արտահայտվել է Գիրբոնը, իսկ հարցի բանաձևումը պատկանում է Սեն-Մարտենին։ 1821 թ. Փարիզի Ակադեմիայի նիստում արտասանած իր ճառում ականավոր հռչակեցր ասում էր. «Ենդունված է կարծել, որ կառավարման այն ձևը որ տիրապետում էր մի քանի հարյուրամյակ արևելից առաջ և որ կոչվում էր ֆեոդալական համակարգ, Եվրոպայի բացառիկ առանձնահատկությունն է եղել, և որ նրա սկզբնավորությունը պիտի փնտրել Գերմանիայի անտառներում... Բայց եթե XII դարի Եվրոպան համեմատենք Ասիայում մեր թվականությունից երեք դար առաջ Արշակունիների հիմնած միապետության հետ, ապա կտեսնենք միանման սովորություններ և հաստատություններ. մենք կզտենք բարձրաստիճան անձնավորություններ նույնպիսի կոչումներով՝ մարկիզներ, բարոններ, ապետներ և զենքի սովորական մարզիկ։ Այստեղ էլ մարզիկանց մի զգալի խումբ վաշխում է ազատության բոլոր իրավունքները, մինչդեռ նրանցից շատ ավելի մեծ թվով մարդիկ բոլորովին զրկված էին դրանից»։ *Discours sur l'origine et l'histoire des Arsacides, Hist. des Arsacides* II-ի հավելված p. 293։ Սեն-Մարտենը ավելի հետևել է գնում և պնդում է, որ եթե Եվրոպան չի հնարել ֆեոդալական համակարգը, ապա թող չկարծեն, թե այն հորինել են պարթևները։ *Qu'est-ce que le gouvernement feodal, շարունակում է նա, — c'est tout simplement l'occupation militaire d'un vaste territoire, partagé entre tous les soldats: les rangs y sont distribués comme les grades dans une armée; c'est la consequence inévitable d'un gouvernement militaire ou d'une conquête. Les Arsacides ne furent pas les inventeurs de ce mode gouvernement, puisqu'ils ne furent pas les premiers conquérants de l'Asie. ib. p. 296.* Ֆեոդալիզմի բնութագրումից հրեում է, որ նշանավոր գիտնականը կանգնած է գերմանական դարձի տեսակետի վրա, որը այժմ հնացած է։

վրա։ Տոհմական կազմակերպությունների կողքին պարսիկների մոտ վաղուց ի վեր գոյություն ունեին պետական իշխանության մարմիններ։ *Dankiu*-ից բացի կար նաև *šatra*, որի գլուխ կանգնած էր սատրապը։ Արքայից արքայի այդ ամենազոր ծառաները հասարակ պաշտոնատարներ կամ կառավարիչներ չէին. նրանք ունեին այս կամ այն երկիրն ինքնուրույն կառավարելու իրավունք, բայց իրականում այն դարձնում էին իրենց սեփականը այդ պաշտոնը հաջորդաբար ծառանգելու միջոցով։ Այդ իմաստով էլ սատրապությունն ուներ ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական գործոնի նշանակություն։

Սատրապներին հավասար դիրք ունեին նաև այն անձնավորությունները, որոնց հողեր էին պարգևում, թեև նրանք կառավարիչներ չէին, այլ գտնվում էին թագավորի պալատում՝ հարկ եղած դեպքում նրանք ծառայություն մատուցելու համար։ Հողերի բաշխումը տեղի էր ունենում կամ կառավարման կամ պարզ տիրապետության ձևով։ Սատրապի պաշտոնները բաժանելով իր մերձավորների միջև, պարսից Կյուրոս թագավորը իր այն բարեկամներին, որոնց պահում էր իր մոտ, ասում էր. «Թե՛նձ թվում է, որ ձեզնից նրանք, որոնք մնում են այստեղ, և որոնց ես կարող էի ուղարկել նվաճված ժողովուրդների մոտ զանազան հանձնարարություններով, պետք է այնտեղ իրենց տրամադրության տակ հողեր և տներ ունենան, որպեսզի նրանց հասույթները ուղարկվեն ձեզ այստեղ, որպեսզի այնտեղ գնալու դեպքում դուք մի տեղ ունենաք, որտեղ կարողանաք մնալ, ինչպես ձեր տանը»։ Այս խոսքերից հետո, շարունակում է պատմագիրը, «զանազան նվաճված երկրներում Կյուրոսը իր մերձավորներից շատերին հողեր և ենթակա մարդիկ տվեց և զեռ այժմ էլ տարբեր վայրերում ցրված այդ հողերը գտնվում են այն անձանց ծառանդների ձեռքին, ովքեր դրանք այն ժամանակ ստացան, իսկ իբեներ գտնվում են թագավորի մոտ»¹։

¹ *Xen. Cyr. VIII 6, 4—6, δοκεῖ δέ μοι τῶν ἐνθάδε μενόντων ὁμῶν οἷς ἀν ἐγὼ πράγματα παρέχω πέμπτων πράξοντάς τι ἐπὶ ταῦτα τὰ ἔθνη χώρας γενέσθαι καὶ οἰκους ἐκεῖ, ὅπως θασμοφορῆται τι αὐτοῖς δεῦρο, ὅταν τε ἴωσιν ἐκείσε, εἰς οἰκεία ἔχωσι κατάγεσθαι. ταῦτα εἶπε καὶ ἔδωκε πολλοῖς τῶν φίλων κατὰ πάσας τὰς καταστραφείσας πόλεις οἰκους καὶ ὄπηκόους· καὶ νῦν εἶσι ἐπι τοῖς ἀπογόνους τῶν τότε λαβόντων αἱ χῶραι καταμένουσαι ἄλλαι ἐν ἄλλῃ γῆ· αὐτοὶ δὲ οἰκοῦσι παρὰ βασιλεῖ.*

Այս անձնավորութիւնների տակ, ըստ երևույթին, պետք է հասկանալ ոչ միայն արքունի, այլև առհասարակ պետական ծառայութեան մեջ գտնվող պաշտոնյաներին: Արքեմենյանների ծամանակ արդեն էϑϑϑϑν οάτραπαι, սատրապներից բացի, կային նաև հետևյալ պաշտոնատար անձինք՝ հարկահավաք, ծախսարար, հասարակական աշխատանքների վերակացու, դանձապետ, մատակարարութեան պետ, ախոռապետ, որսապետ, հետևակազորի պետ, հեծելազորի պետ, զորահրամանատարներ և այլն: Քագավորն ուներ նաև բարապան, հացթուխ, խոհարար, մատուցակ, լողացնող, մատուցողներ, սենեկապան, հավաքարար և այլն¹:

Հասարակական կամ արքունի ծառայութեան վերոհիշյալ բոլոր մարմինները տարբերվում էին նահանգային կառավարչներից: Ըստ այդմ գոյություն ուներ հողատիրութեան երկու ձև. ոմանց համար հողային սեփականությունը հողային գույք էր, կալվածք էր, իսկ մյուսների, այսինքն՝ սատրապների համար այն հողային տիրապետություն էր, այսինքն՝ հողային գույքի և պետական իրավունքների զուգորդություն: Այս է ֆեոդալիզմի ընդհանուր և զխաղի հիմքը:

Սատրապներին ուղարկելով իրենց նշանակված վայրերը՝ Կյուրոսը խրատում էր նրանց ամեն բանում ընդօրինակել իրեն և, ի միջի այլոց, նրանցից, «ովքեր տիրում են հողերի և իշխանութիւն ունեն»², պահանջել, որպէսզի նրանք ներկայանան սատրապի պալատը, իրենց զավակներին դաստիարակութեան տան այնտեղ և առհասարակ ծառայեն սատրապին:

Ըստ այս վիպակութեան, տվյալ սատրապութեան հողատեր ազնւրկանությունը այնպիսի հարաբերութեան մեջ էր սատրապի հետ, ինչպես իրենք սատրապները՝ արքայից արքայի հետ: Սատրապը իրեն հանձնված երկրում մի տեսակ թագավոր կամ տիրա-

¹ Cyp. VIII 1, 9 և շարունակ. προσόδων ἀποδεκτῆρες, δαπανημάτων δοτῆρες, ἔργων ἐπιστάται, κτημάτων φύλακες, τῶν ἐπιτηδείων ἐπιμεληταί, ἱππῶν ἐπιμεληταί, κυνῶν ἐπιμεληταί, ταξιάρχοι πεζῶν, ταξῖ ἱππέων, στρατηγοί և այլն. id. VIII 8, 20, θυρωρός, σιτοποιός, οἰφοποιός, ἀνοχοός, λουτροχός, παρατιθέντες καὶ ἀναιροῦντες, κατακοιμιζόντες καὶ ἀνιστάντες, ὁ κοσμητῆς և այլն:

² Cyp. VIII 6, 10, ὅποσοι δ' ἂν γῆν καὶ ἄρχεῖα λάβωσιν; ἄρχεῖα նշանակում է պետական հիմնարկություն, բայց այստեղ գործ է ածված «իշխանություն, տիրապետություն» իմաստով:

կալ էր: Նրան ենթակա էին այն անձնավորութիւնները, որոնք ունեին γῆν καὶ ἄρχεῖα, այսինքն՝ հողային և իրավական գերիշխանություն՝ երկու հիմնական հատկանիշներ, որոնց միացումը բնորոշում է ֆեոդալական հողատիրությունը: Այդ ձևով Արքեմենյան պետությունը ներկայանում է որպես թույլ զարգացած ֆեոդալական օրգանիզմ:

Հողերի բաշխման միջոցով կառավարելու հիշյալ համակարգը գործում էր նաև Արշակունիների ժամանակ: Արքեմենյանների նման, որոնք սովորաբար սատրապությունները բաշխում էին իրենց ազգականների միջև, Արշակունիներն էլ, կանգնելով տոհմական սկզբունքի վրա, հպատակ երկրների կառավարությունը հանձնում էին իրենց գերդաստանի անդամներին: Պարթևների հանձնում էին իրենց գերդաստանի անդամներին: Պարթևների թագավոր վաղարշակը իր եղբայրներից մեկին նշանակելով Մարաստանի, մյուսին՝ Հայաստանի թագավոր, մտադիր էր դրանով կարգավորել իր ընտանեկան գործերը՝ familiae nostrae penates rite composuisse¹: Արշակունի թագավորների մոտ գոյություն ուներ ազնւազարմների կոլեգիա, ordo probulorum, որը, ինչպես երևում է, բաղկացած էր գլխավորապես նշանավոր տների ներկայացուցիչներից: Պատմագրի վիպակութեամբ բացատրապես այդ կոլեգիայի անդամներից էին նշանակվում հրամանատարներ պատերազմի ժամանակ և կառավարիչներ՝ խաղաղ ժամանակ ex hoc duces in bella, ex hoc in pace rectores habent²: Rectores ասելով պիտի հասկանալ ոչ միայն նահանգական կառավարիչներին, այլև առհասարակ պաշտոնատար մարմինները: Իսկ այդպիսի մարմինների թիվը քիչ չէր: Բյուզանդական հեղինակներից մեկը հաղորդում է, որ մարերի (sc. պարթևների) մի հին օրենքի համաձայն յոթ նշանավոր տոհմեր ժառանգաբար վարում են պետական կյանքի ամենից ավելի պատասխանատու և պատվավոր գործերը: Նրանցից առաջինը Արշակունիների հարստությունն է, որ տիրում էր թագավորական իշխանութեանը, նրան էր պատկանում նաև թագավորի գլխին թագ դնելու իրավունքը: Այնուհետև գալիս են այն տները, որոնք կատարում են հետևյալ ֆունկցիաները. զորահրամանատարությունը, քաղաքացիական վարչությունը, դատական տեսչությունը, հեծելազորի

¹ Տե՛ս վերը, էջ 478:
² Տե՛ս վերը, էջ 427 ծանոթությունը:

Այսպիսով, տոհմական սկզբունքին զուգահեռ հնուց ի վեր գործում էր զուտ պետական՝ ժառանգական սկզբունքը, որը տոհմական միջավայրի ազդեցության տակ հանգեցրեց ֆեոդալական կարգի դասերի առաջացմանը: Մենք տեսանք, որ դասայնությունը ծնունդ առավ նաև տոհմական կենցաղի քայքայման հետևանքով: Թե ինչպիսին եղան այս կրկնակի պրոցեսի հետևանքները, և ինչ ձևեր ընդունեց դասային կարգը Արշակունիների մաս, հայտնի չէ: Այդ մասին կարելի է որոշ գաղափար կազմել Շապուհ Ա-ի (240—270) Հաջի-աբադի արձանագրության հիման վրա: Արձանագրությունը փորագրվել է թագավորական որսի ժամանակ և այնտեղ, ի միջի այլոց, կարելի է կարգալ հետևյալ պարբերությունը. ես նեոս արձակեցի ներկայությամբ — šatrdārān va barbīlān va rabān va āzātān, որի պահլավերեն թարգմանությունը կլինի՝ քšaθrdārān և vāspuθrakān և vačarkān և āzātān¹.

Այստեղ թվարկված են ազատ դասի զանազան աստիճանները²: Որ խոսքը վերաբերում է ոչ թե պատահականորեն բերված, այլ խստորեն որոշված դասային օղակների անվանումներին, երևում է նրանից, որ արաբ հեղինակները ևս նշում են պարսկական ավագանու շորս աստիճանների մասին, թեև սխալմամբ համարում են, որ դրանք հաստատել է Սասանյան Արտաշիրը³: Ծիշտ է, հիշյալ արձանագրությունը պատկանում է Սասանյան Շապուհին, բայց դասերին վերաբերող այնտեղ հիշատակած տվյալները նախորդ՝ Արշակունիների շրջանի արդյունք են: Արձանագրության փորագրության ժամանակ նոր հարստությունը հաղիվ թե կարողանար երկրում կարգերի էական փոփոխություններ կատարել, մանավանդ որ, նա երկար ժամանակ զբաղված էր իր քաղաքական վիճակն ամրապնդելով:

Առաջին տերմինը բաղկացած է šatra-ից՝ երկիր և dar-ից՝ ունեւ, բռնեւ և համապատասխանում է արեմենյան շրջանի satrapa-ին՝ հայերեն շահապ-ին, նույն satra-ից և pa-ից՝ պա-

հեւ: Այն փաստը, որ šaθrdarān-ները որսի ժամանակ ուղեկցում են թագավորին, ցույց է տալիս, որ նրանք սովորական սատրապներ կամ նահանգների կառավարիչներ չեն, որ նրանց տակ թաքնված է ավելի լայն իմաստ: Չի կարելի ենթադրել, թե սատրապներին նահանգներից կանչում էին թագավորի մոտ որսի առիթով: Այդ անձնավորությունները, ըստ երևույթին, մշտապես գտնվում էին մայրաքաղաքում և հավանաբար շփում ունեին պալատի հետ: Արձանագրության մեջ šaθrdar-ը ոչ թե վարչական մեծություն է նշանակում, այլ ավելի շուտ՝ սոցիալական կամ դասային՝ նրանք անվանի հողատերեր էին, խոշոր հողատիրության ներկայացուցիչներ: Ծագումով սրանք թագավորի այն մտերիմների թվին են պատկանում, որոնց, ինչպես տեսանք վերը, հողամասեր էին շնորհվում: Սոցիալական դրությամբ նրանք հավասար էին սատրապներին, սակայն առանց ժառանգական կամ վարչական պարտականությունների:

Մյուս աստիճանը՝ vāspuθrakān-ը, տոհմական կացութաձևում մեղ արդեն ծանոթ տերմին է, որ նշանակում էր տոհմի որդի, իսկ տոհմական կյանքի քայքայումից հետո՝ տիրակալի որդի: Տոհմական աշխարհում տոհմի որդիները բարձր էին դասվում, քանի որ նրանք հանդիսանում էին տոհմապետի գլխավոր աջակիցները թե թշնամու հետ ընդհարվելու ժամանակ, թե որս փնտրելիս⁴:

Վասպուրների բարձր դիրքը նշված է ավեստական գրականության մեջ: Այստեղ nemanopati-ն գնահատվում է ցածր տեսակի ցուլով, vispati-ն՝ միջակ տեսակի ցուլով, zantupati-ն՝ առաջին տեսակի ցուլով, dahiupati-ն շորս ձի լծված կառքի արժեքով: Viso-puθra-ն առանձնացվում է այդ խմբից և գնահատվում է առաջին տեսակի մեկ ցուլի արժեքով, այսինքն՝ այնքան, որքան zantupāti-ն, ուրեմն, visopuθra-ն ավելի ցածր է դասվում, քան dahiupati-ն: Վերջինս իր դիրքով հավասարազոր է satrapa-ին կամ šaθrdar-ին որպես շրջանի danhiu = šaθra կառավարիչ: Ավեստական ավանդույթները, այսպիսով, համընկնում են վասպուրների դիրքի վերաբերյալ արձանագրությանը, մանավանդ որ արձանագրության մեջ էլ vāspuθrakan-ները հաջորդում են šaθradarān-ին⁵:

¹ WZKM, VI p. 72:
² Nöldeke, Tabari, p. 71 ծանոթությունը:
³ ib. p. 8, ծանոթ.: Արաբ հեղինակները տարբեր կերպ են մեկնաբանում շորս կարգերի մասին եղած տեղեկությունը՝ առաջնորդվելով, ըստ երևույթին, ոչ շրջանի իրագրությամբ:

⁴ Leist, Graeco-Italische Rechtsgeschichte p. 123 n. c.
⁵ Darmsteier, Etudes Iranienes, I p. 140 և շար.

Vaspuθrakān-ը շահրդարների որդիներն են, ընդ որում պետք է հասկանալ ոչ միայն որդիներին, այդ բառի ուղղակի իմաստով, այլև առհասարակ գերդաստանի բոլոր անդամներին, նրա արական սեռի բոլոր ներկայացուցիչներին, բացի պետից՝ շահրդարից: Շահրդարի կենդանություն օրոք նրա որդիները, որպես նրա ժառանգներ, համարվում են պայմանական մեծություններ, ուստի սրանք նրանից ցածր են, բայց բարձր են մյուս բոլորից:

Երրորդ աստիճանը vačarkān-ը resp. vazrkān նշանակում է ա վ ա գ ն ե ռ, vazraka-ից, պարսկ. buzurg, մ ե ծ: Այս անունը ամենից ավելի համապատասխանում է այն տոհմիկ ազնվականներին, որոնք ծագում էին հնագույն տոհմապետներից: Habačaris-ը կամ Ἐλευθερά άγορά հաստատությունը, որին ծանոթացանք վերը, հանդիսանում էր մի քաղաք, որտեղ տոհմի գլխավորները փոխակերպվում և դառնում էին անվանի մարդ, տոհմիկ ազնվական: Habačaris բառը պահպանվելուց հետո կարող է հնչել vačar, ինչպես ցույց է տալիս հայերեն վաճառք: Երրորդ աստիճանի անվանումը կարելի է կարգալ vačrakān կամ vačarkān. վերջին դեպքում այն կարելի է առաջ եկած համարել vačar-ից՝ habačaris-ի մասնակցի կամ անդամի իմաստով: Այստեղ ներկայանում էին միայն նյութապես ապահովվածները և զբաղվում էին ռազմական գործով: Այս հանգամանքն էլ նրանցից ստեղծեց արտոնյալ դաս: Մեզ թվում է, որ անկախ ստուգաբանությունից vazarkān-ը պիտի համարել այն ազնվականության ընդհանուր անվանումը, որ ծնունդ առավ և աճեց տոհմական արմատներից:

Ինչ վերաբերում է վերջին աստիճանին՝ azat-ān-ին, ապա այն հարաբերում է vazrakān-ին ճիշտ այնպես, ինչպես vaspuθrakān-ը šaθradarān-ին: Azat-ān-ը azata-ի անցյալ դերբայի հոգնակի թիվն է, ā-zan, ā-zā-ից, որ նշանակում է ծնել: Ազատները վազրականների որդիներն ու ժառանգներն են և իրավական տեսակետից բախտակից էին վասպուրների: Նրանք համարվում էին ուժեղներ, ինչպես ապագա վազրականները:

Այդպես են պատկերանում մեզ հիշյալ դասային աստիճանները իրենց փոխհարաբերության մեջ: Դրանցով ավարտվում է դասայնության զարգացումը Արշակունիների շրջանում, և այս վիճակը պետք է հաշվի առնել նաև Հայաստանում Արշակունիների իրավակարգը ուսումնասիրելիս:

Տոհմական և զուտ պետական հաստատություններից առաջացած դասային ազնվականության զարգացման երկակի պրոցեսը պետք է ճիշտ համարել նաև Հայաստանի վերաբերյալ: Հողեր և պաշտոններ նվիրելու սովորությունը ընդունված էր նաև հայ Արշակունիներին մոտ: Քրիստոնյա Արշակունիների պատմիչը՝ Փավստոսը, վկայում է, որ հայ իշխանները շատ բանով և ամենից առաջ հողային սեփականությամբ պարտական էին Արշակունիներին: Վերջիններս նրանց ընդարձակ շրջաններ, երկրներ, գյուղեր և այլ կալվածքներ էին նվիրում, բարիք էին անում՝ օժտելով նրանց պաշտոնով, պատվով կամ իշխանությամբ ու ծառայությամբ: Ինչպես տեսանք, իշխանությունը տարբերվում էր գործակալությունից, իշխանական գիրքը՝ ծառայության կամ պաշտոնատարության գիրքից: Ոմանք շահաւորվում են ըստ զահի, մյուսները՝ ըստ աստիճանի, «մեծամեծք յիրաբանչիր զաճու, գործակալք յիրաբանչիր շափու»¹:

Հայաստանում Արշակունիներից առաջ էլ իշխաններ կային, իսկ ծառայության մեխանիզմը նրանք մտցրին: Ըստ հորինացու առաջին Արշակունու կազմակերպչական գործն այն եղավ, որ նա հասարակական և արքունի բնույթ ունեցող զանազան պաշտոնները բաշխեց տեղական իշխանական տների միջև: Պարթևական պետության պաշտոնական վերահիշյալ մարմինները գոյություն ունեին նաև Արշակունյաց Հայաստանում:

Պարսկաստանում թագադրության պատվավոր պաշտոնը համարվում էր Մուրենյան տան արտոնությունը, իսկ Հայաստանում՝ Բագրատունիները²:

Պարսկաստանում բանակի գերագույն հրամանատարությունը՝ սպարապետությունը, ժառանգական էր Ասպարապետների՝ resp. կոշմյանների տոհմում, իսկ Հայաստանում՝ Մամիկոնյանների տոհմում:

¹ Տե՛ս էջ 269 և հաջորդ.
² Tac. Ann. VI 42. Sarena patrio more Tiridatem insigni regio evinxit. Բագրատունիների մասին տե՛ս Փավստոս, Ե խդ, «Թագադրեն (?) Թագակապեն լեաւ էին ի բնէ ազդին Թագաորութեանն Արշակունոյ: Այս կոշումը չիար Արեւելեայանների մոտ: Ինչպես երևում է, այն վերացել է Արշակունիներից հետո: Ամմիանոսը հիշատակում է Մուրենի բարձր դիրքի մասին Սասանյանների օրոք, potestatis secundae post regem, բայց ոչինչ չի ասում Թագադրության մասին Amm. 30, 5, 3 նաև 24, 2:

Մեծ կարևորություն ուներ հազարապետի hazarapet պաշտոնը: Սա իր բոլոր հատկանիշներով համապատասխանում էր Քեոփիլիակտեսի մոտ հիշատակված վարչություններից երրորդին, որ ընդգրկում էր τὰς πολιτικός φροντίδας, ի հակադրություն πολεμικῆς συντάξεως վարչության: Փալլասոսի մոտ հազարապետությունը կամ հազարապետական գործակալությունը որոշ իմաստով հակադրվում է սպարապետությունը: Առաջինը սահմանվում է իրրև աշխարհապետ խնամակալություն և տարածվում է դեմեկանություն, այսինքն՝ հողագործ գյուղացիության վրա. հազարապետի իշխանությունը օժտված Գնունիների տոհմը կոչվում է Շինականաշէն՝ *šinakanašēn*: Իրրև սպարապետ՝ Մամիկոնյանները կանգնած են «ի վերայ իշխանութեանն բովանդակ», այսինքն՝ բոլոր իշխանությունների վրա, «ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեան», բոլոր գործակալական և բնակչության վրա: Հայոց գործը կազմված էր այն զորախմբերից, որ տալիս էին իշխանական տները: Յուրաքանչյուր զորախմբի հրամանատարությունը վարում էր նրա իշխանը, իսկ ընդհանուր հրամանատարությունը պատկանում էր ժառանգորդ սպարապետներին՝ Մամիկոնյաններին, հենց այդ իմաստով էլ նրանք կանգնած էին բոլոր իշխանների և նրանց զորքերի գլուխը:

Հազարապետի իշխանությունն էլ ենթարկված էր ամբողջ գյուղացիական բնակչությունը: *Hazara-pati* = *χιλίαρχος* — հազարապետ զինվորական տերմին է, որ քաղաքացիական ասպարեզ է փոխադրվել դեռևս Արեմենյանների ժամանակ: Ինչպես պատմում է Քսենոփոնը, Կյուրոսը շատ էր մտահոգված ֆինանսները կարգավորելով, այն հսկայական ծախսերի պատճառով, որոնք պահանջում էին այդքան լայնածավալ պետության կարիքները, ուստի որոշում է այդ ասպարեզում մտցնել ստորաբաժանման զինվորական համակարգ և ֆինանսական ղեկավարությունը հեշտացնելու նպատակով ստեղծեց ղեկուրիոններ, լոխագներ, խիլիարքներ և միրիարքներ¹: Ըստ այդ համակարգի հազարապետը

¹ Cyr. VIII 1, 14, ὅπως ἄν τὰ τε οικονομικά καλῶς ἔχει καὶ ἡ σχολή γένοιτο κατενόησέ πως τὴν στρατιωτικὴν σύνταξιν. Հետաքրքրական է, որ նոր Կտակարանի մեջ հազարապետ բառով օրգանված է հունական οἰκονομος-ը. ի մեջ հազարապետաց, ἐν τοῖς οἰκονόμοις Կորնթ. Գ. 1, երբեմն դրված է *χιλίαρχος-ի*, փոխ. Մարկոս, 2 21:

պետը է լինել պետական եկամուտների գերատեսչության ամենաբարձր պաշտոնյան. այս դեպքում հասկանալի է նաև նրա վերաբերմունքը հարկատու բնակչության՝ գյուղացիության նկատմամբ: Թվում է, թե հենց հազարապետն էլ պետք է վարեր հարկերը հավաքելու գործը. բայց վերը մեջ բերված ցանկից երևում է, որ հարկեր նշանակելը և այն բնակչությունից հավաքելը առանձին գերատեսչության իրավասությունն էր: Հավանական է, որ սկզբում հազարապետի պարտականությունների մեջ այդ էլ էր մտնում, բայց հետագայում այն առանձնացվել է: Սասանյան ամենազոր աշնվական Միհր-Ներսեսին հայ պատմիչները կոչում են մեծ հազարապետ, իսկ Տաբարին՝ *buzurg-framadār*, որ նրա իսկ թարգմանությամբ նշանակում է մեծ վեզիր¹: Միհր-Ներսեսի օրոք ոմն Մահգուշնասպ վարում էր հարկահավաքության գործը և կոչվում էր *vaštriošansalar*, այսինքն՝ երկրագործների պետ²: Այս կոչումը հազարապետությանը համապատասխանում է այն իմաստով, ինչ իմաստով այն գործ է ածում Փալլասոսը Գնունիների տոհմի վերաբերյալ³: Կարող է պատահել, որ նախկին հազարապետությունը բաժանվել է երկու մասի՝ մեկը մոտավորապես *πολιτικός φροντίδας-ը* տնօրինում էր *buzurg-framadār-ը*, իսկ մյուսը՝ *vaštriošansalar-ը*, մինչդեռ Հայաստանում այն մնաց առաջվա նման:

¹ Nöldeke, *Tabari* p. 111, եղիշ, էջ 43 և Փալլասոս, Գ Ժդ, *framadār* = հրամանատար, նյուդեկի կարծիքով, նշանակում է *Vorankommer*, ib. p. 9: Տաբարիի մոտ Միհր-Ներսեսի կոչումը հեշտ է *hazārābanda*, որը նույն գիտնականը բաղադրատուն է *Theod.-ի* Σουρήνην χιλίων οικητῶν δεσπότην վկայության հետ, *Hist. Ecol.* V 39.

Նկատի ունենալով այն, որ Սուրենին հայերը կոչում են հազարապետ, թերևս Տաբարիի մոտ պետք է կարգալ *بزرگ پسر* փոխարեն *دند پسر* -ի, իսկ Քեոփորիտի վկայությունը, հավանորեն, նույն բառի սխալ մեկնության արդյունք է:

² Nöldeke, *Tabari*, p. 110.

³ Նրանցից առաջ հազարապետ էր Վաղարշը՝ Անձիտի իշխանը. Փալլասոս, Գ, Ժբ, եզրամասաց զմեծամեծ նախարարն... զմեծ հազարապետն ի հազարապետութեան [ի]սկի տոհմ է ամենայն հայոց զՎաղարշ: Փակագծի մեջ առնված վերջական ավելորդ է, որովհետև շարունակությունից երևում է, որ հազարապետը հենց Վաղարշն էր: Այս պաշտոնի վերջին կրողներն էին Առավանք, Վահան Ամասունի, Կարյուն, էջ 44 և 42, այնուհետև նշանակվում էին պարսիկներ, եղիշ, 42, Փարպեցի, 118:

Գատակահ իշխանությունը կամ արդարագատությունը գտնվում էր մոգերի և առհասարակ հօգևորականության ձևերին: Քրիստոնեությունը ընդունելուց հետո այն անցավ եկեղեցուն և յուրաքանչյուր գավառում դատարանը ենթակա էր տեղի եպիսկոպոսին: Դանիել եպիսկոպոսի իշխանությունը Փավասուր կոչում է զործակալութիւն մեծի դատաւորութեան¹: Հայաստանում և Պարսկաստանում հօգևորականության միջամտությունը քաղաքական գործերին և նրա մեծ ազդեցությունը բացատրվում է մասամբ նրանով, որ նա հանդիսանում էր արդարագատության մարմին²:

Հեծելազորի հրամանատարությունը **Τῆς Ἰππου** ևս մի առանձին ընտանիքի իրավունքն էր, բայց թե ո՞ր ընտանիքի, տվյալների բացակայության պատճառով դժվար է ասել: Հայերի մոտ զորքը գլխավորապես կազմված էր հեծելազորից և գտնվում էր սպարապետի հրամանատարության տակ: Ըստ որոշ նշանների Պարսկաստանում հեծելազորը գտնվում էր Սպանդհատի տոհմի ձեռքին³:

¹ Փավստոս, Գ, ԺԳ: Թերևս Գահնամակի «Թառեհոյ դատարան» նշանակում է եպիսկոպոսական իշխանություն:

² Թագավորական իշխանությունը Հայաստանում մերացնելուց հետո պարսիկները նշանակեցին «մագպետ դատարար աշխարհին», Նղշե, էջ 42: Սասանյանների օրոք գլխավոր հեծե՛ծ = αθρο-paiti-ին, որ գրեթե հավասար էր գերազգային m Ծ bed magu-pati-ին, տնօրինում էր die Kirche und die Rechtgelehrsamkeit, Nöldeke, Tabari p. 110.

³ Իրանական էպոսի մեջ Սպանդհատը՝ Վշտասպի որդին, հայտնի էր շատ ազդու ժողովուրդների վրա իր տարած բազմաթիվ հաղթանակներով: Նրան է վերադրվում Արևացի դռների կառուցումը և Երկաթե քաղաք ամրոցի գրավումը: Նրա սխրագործություններին է նվիրված Paikār-nāma գիրքը, Marquart, Streifzüge, p. 116: Անտարակույս հենց նա է այն «բաշ Սպանդհատը», որի մասին բարբարոսներն ասում էին. «հասեալ պատերազմաւ մինչև ցայս վայր ցցիալ զնիզակ իր զետնիս», Մերեսո, էջ 130: Մովսես Կաղանկատվացին նրան նմանեցնում է ինչ-որ թ անդրի-ս ան աստծու, որին հոնները ձերբ էին զոհարեցում. «հակայի ումէմն վայրադի անձոռնույ, միախորով զոհից պաշտօն մատուցանէին՝ կարդալով զնա թանգրի խան աստուած, զոր պարտիկը Աստանդատ կոչեն», էջ 191: «Ասպանդե<ատ> այ ումեմն վայր հակային ձիովը այրեցելովը զոհ մատուցանէր», էջ 195: Սպանդհատին մատուցվող զոհերը նրա պաշտամունքը մոտեցնում են Ատրպատականի αθρο-ϋξναςք կրակին՝ Միհրանյանների պաշտամունքին: Սպանդհատը Արշակունի ծագում ունի, և Սերնոսը հիշատակում է նրա մասին Արշակունի Չուբինի արշավանքի կապակցությամբ: Զինքի զոհարեցությունը խորհրդանշել է արդյուք Սպանդհատի՝ որպես հեծելազորի հրամանատարի տոհման-

Τῶν ὄπλων καὶ τῆς πολεμικῆς ἐσθῆτος գերատեսչությունը համապատասխանում է ներկայիս ինտենդանտությունը և, ըստ երևույթին, առնչվում էր մարդագետական տոհմի հետ: Պատմական հուշարձաններում նշվում է, որ նրանք բարձր դիրք ունեին քրիստոնյա Արշակունիների արքունիքում, բայց նրանց պաշտոնի մասին պատկերացումները աղոտ են, և առայժմ եղած վկայությունները՝ անորոշ:

Մ արդպետ տիտղոսի ծագումը, որ մենք պարզեցինք վերելում, արդեն մոռացվել էր գրությունն սկզբնավորման ժամանակ: Արտաքին տեսքից այնպես է թվում, թե այն կազմված է մառդբառից և այդ սխալ զուգորգությունը խանգարում էր հասկանալու նրանց պաշտոնի էությունը: Խորենացին նույնիսկ չի հիշատակում մարդպետին և անկեղծորեն խոստովանում է, որ իրեն ոչինչ հայտնի չէ Հայր իշխանի տոհմի մասին¹: Մարդպետը տոհմական-իշխանական տիտղոս է և ոչ մի առնչություն չունի առհասարակ պաշտոնի հետ: Մարդպետ-իշխանը ըստ պաշտոնի կոչվում էր **թ ա գ ա մ լ ո ս թ ի հ ա յ ր**, «մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գարծոյլն հայր քաղաւորին»², ուստի և մարդպետութիւն և հայրութիւն գործ են անվում որպես համանիշ հասկացություններ³: Թե իրականում ի՞նչ է նշանակում այդ բարձրագույն կոչումը, անհայտ է, զիտեևք միայն, որ մարդպետի պարտականությունների մեջ էին մտնում արքունի գանձերի և այն բերդերի տնօրինությունը, որանց դրանք պահվում էին, և որ «այս գործակալութիւն (SC. հաւատարիմ գանձուց ևս բերդաց) ևւ մարդպետութիւն, որում հայրն կոչէին՝ ներքիննաց գործ լեալ ի բնէ ժամանակաց»⁴: Մարդպետի հավակնոտ անունը ցույց է տալիս, որ նա շատ սերտ շփում ուներ արքունիքի հետ: Որպես ներքինիներ մարդպետներին էր հանձնված **թաղուհու** պաշտպանությունը⁵: Թվում է, որ նրանց

վան: Այդ անվան աղիլի հին ձևն է Սպանդարատ spanda-δοτα, որ հանդիպում է Կամսարականների տոհմում. չի՞ կարելի արդյոք այդ հիման վրա եզրակացնել, որ նրանք արյունով և կոշումով աղակցություն ունեին Սպանդհատի հետ:

¹ Խորենացի, Բ, է:
² Փավստոս, Ծ, Գ:
³ Նույն տեղում, Ծ, Գ:
⁴ Նույն տեղում, Ծ, է: Տպագրության մեջ ճիշտ չէ կետագրությունը, պետք է լինի «ներքիննաց գործ լեալ» և ոչ թե «այսն ներքիննաց»:
⁵ Զորանամակում ճիշտ են ցույց տրված մարդպետի երկու պաշտոնները:

է հանձնված եղել նաև արքայական հանդերձարանի հսկողութիւնը: Որոշելով սպանել Գղակ մարդպետին, Պապ թագավորը հրամայում է նախ նրան հագցնել անհամեմատ լայն զգեստներ, տանել «տուն պատմութեան» և այնտեղ գլխատել: Եթէ հանդերձատունը գտնվում էր Գղակի տնօրինութիւնի տակ, ապա տիրոջ սպանութիւնը նրա պատերի ներսում պետք է ավելի վիրավորական թվար, ինչ որ կամենում էր թագավորը:

«Մարդպետական, որ է ներքին պահպան ի վերայ թագաւոյն և գանձոց»: Նետեալ վաբի մեջ գանձերի պահպանութիւնը մտնում է սենեկապետի պարտականութիւնների մէջ. «Ենթաւ լինէր սենեկապետ ի վերայ ամենայն գանձոց նորա»: Փավստոսի բնագրում խոսվում է միայն այն մասին, որ ներսերը, որպէս սենեկապետ, կանգնում է թագավորի դիմադրելու [վարքի մեջ այս մասը կարգավորում է զարուհեակաւ մատանին, որը ըստ երևույթին Փավստոսի գարբունական <տուներն ոսկէ> պատեանն» նախադասութիւնի աղճատումն է]: Նկատի առնելով մարդպետի զգեստները արքունի սենեակ կարգաւորիչ խոսքերը, Փավստոս, Բ, ԺԳ, կարելի է կարծել, թէ մարդպետը կապ ուներ սենեկապետի հետ: Քերես սենեկապետը զանձեր պահելու պաշտոնի անունն է: մանավանդ որ Փավստոսի մոտ «գործակալութիւն սենեկապետ» հասկացվում է շատ լայն՝ որպէս «հավատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեան ի ներքոյ և արտաքոյ», Գ, Գ:

1 Փավստոս, Ե, Գ, համար. նաև Դրաստամատի խնդրանքը այն մասին, որպէսզի իրեն թույլ տան տեսնել Արշակ թագավորի հետ՝ «լուսնալ զգլուխ նորա և օձանել և ասուցանել նմա պատմութեան» և այլն, Ե, է:

2 Փավստոսը գիտէ մարդպետական տոհմի մի բանի ներկայացրելներէ: Տիրանի ժամանակ կար «այր մի անօրէն, որ ուներ զպատիւն մեծի մարդպետութեան, այր ներքինի, որում Հայր կոչէին» Փավստոս, Գ, ԺԵ. Հենց նա էլ մտնում էր ներսերի շքախմբի մէջ, «զՀայր մեծ իշխանն մարդպետութեան», Գ, Դ և սպանվեց Շավասայ Արծրունու ձեռքով, Գ, ԺԳ: Մյուս մարդպետը նա էր, որ Արշակի գերութիւնից հետո մտնում է Արտազերս ամրոցը և վիրավորանք հասցնում թագուհուն. «եմուտ-զաղտ ի ներս ի բերդն Հայր մարդպետ ներքինին և թշնամեաց զտիկինն», Գ, ԺԵ. նա սպանվեց Մուշեղ Մամիկոնյանի ձեռքով և նրա փոխարեն նշանակեցին «ի տեղի հայրութեան մարդպետութեան զ(Դ)զղակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հօր նորա գամու միջ լնալ նոյն գործ մարդպետութեանն», Ե, Գ: նա նույնպէս զլխատվեց Պապի օրոք պարսից թագավորի կողմն անցնելու փորձ կատարելու համար, Ե, Գ. Հենց սա է Մուշեղի համախոհ հայր մարդպետը, որ հիշվում է ներսերի մահվան ժամանակ, Ե, ԼԳ: Վերջապես, Արշակ թագավորի ողբերգական մահվան պատմութիւնի մեջ հանդես է գալիս ևս մի մարդպետ՝ Դրաստամատը, Ե, է:

Սրանցից ատուգ պատմական անձնավորութիւնն է Գղակը, որ լավ հայտնի է Ամմիանոսին: Ինչպէս պատմում է նա, Գղակը սպանվեց իր համախոհ Արտավանի (Փավստոսի Մուշեղը) հետ միասին պարսից թագավորի զորամար: Ըստ

Հիշյալ պաշտոններով չէր սպանում Արշակունիների պետութիւնը սպասարկող մեխանիզմը: Այդ պաշտոնների մասին մեր այս տեսութիւնն նպատակն էր ապացուցել Պարսկաստանում և Հայաստանում Արշակունիների պետական կառուցվածքի հարազատութիւնը: Հողերի և պաշտոնների նվիրատվութիւնն սովորութիւնը Հայաստանում պետք է հանգեր նույն հետևանքներին, ինչ որ Պարսկաստանում, այսինքն՝ պիտի առաջացնէր սոցիալական

Փաւստոսի Մուշեղը Գղակից ավելի ավրեց և մտածում էր Հայր մարդպետի հետ միասին անցնել կայսրի կողմը: Իրականում զա ոչ այլ որ է, բաց եթէ նույն Գղակը: Ըստ Ամմիանոսի՝ Արտազերս ամրոցում փակված Փառանձեմ թագուհու հետ բանակցում են հենց նույն Գղակն ու Արտավանը: Նրանք գործում էին հօգուտ պարսից թագավորի, բայց բանակցութիւնն ժամանակ, խղճալով անօգնական կնոջը, հրաժարվում են իրենց դիտավորութիւններից: Հետեաբար, Փավստոսի այն մարդպետը, որ Արտազերսում վիրավորանք է հասցնում թագուհուն, նույն Գղակն է: Փավստոսը հավատացնում է, որ Գղակը մի ժամանակ Արշակի կամ նույնիսկ Տիրանի օրոք, վարել է մարդպետի նույն պաշտոնը: Այս բանը հաստատում է նաև Ամմիանոսը, ըստ որի Գղակն ու Արտավանը նախկին փախստականներ էին, որ հեռացել էին հայր թագավորից և անցել Շավասի կողմը, quos olim susceperat perfugos commisit Armeniam, Amm. 27, 12: Այս հանգամանքը թույլ է տալիս նույնացնելու Գղակին առաջին մարդպետի հետ, որ ապրում էր Տիրանի օրոք: Ո՛չ Շավասայ Արծրունին և ո՛չ էլ Մուշեղ Մամիկոնյանը ոչ մի մարդպետ չեն սպանել: Այս զուտ դիպակտիկ մի տարր է Փավստոսի գրուցների մեջ, որի նպատակն է պատժել հանցանքը: Արծրունիներին կոտորելու համար մարդպետը սպանվում է այդ տոհմից միակ փրկվածի՝ Շավասայի ձեռքով, իսկ հայր թագուհուն վիրավորանք հասցնելու համար նրանից վրեժխնդիր է լինում Մուշեղը:

[Դրաստամատի մասին էլ Փավստոսը ասում է, որ նա ծառայում էր Տիրանի օրոք. կարելի է կարծել, որ Գղակի փախուստից հետո Դրաստամատը զրավեց նրա տեղը: Ամմիանոսը ոչինչ չգիտէ Դրաստամատի մասին, և Արշակը, ըստ նրա, մահ է ընդունում դահձի ձեռքից: Դատելով նրա անունից August amat, որ նշանակում է ձի շտ մահանակի նկալ, Դրաստամատը ավելի շուտ հեջթաթային անձնավորութիւնն է, որ ստեղծված է զարգարելու Արշակի ողբերգական վախճանը]:

Առաջին երկու մարդպետներին Փավստոսը անվանում է Հայր, որ կարելի է համարել հատուկ անուն կամ կոչում: Մեր բացատրութիւնն այն մասին, թէ նրանք նույնն են, ինչ որ Գղակը, հարցը լուծում է հօգուտ այն վարկածի, թէ Հայրը կոչում է: Այս բացատրութիւնների հետևանքով կասկած է ծագում. արդո՞ք մարդպետները ներքինիներ էին: Ճիշտ է, որ Գղակը ներքինի էր: Ամմիանոսը նրան կոչում է spado: Նրա կերպարը չորս անձնավորութիւնն մասնատվելով, այդ պատահական հատկանիշը փոխադրվել է մարդպետների վրա ընդհանրապես:

այնպիսի միավորումներ, որոնք, որպես հողային կալվածքների սեփականատերեր, իրենց դիրքով նման լինեին տեղական իշխաններին, բայց տարբերվեին նրանցից իրենց դիրքի ծագումով: Պարսիկ Արշակունիները նման դիրք ստեղծում էին իրենց ազգակիցների համար, բայց հայ Արշակունիները, գոնե քրիստոնեության շրջանում, մեծ մասամբ առաջ էին քաշում տեղական տոհմիկ ազնվականության ազդեցիկ ներկայացուցիչներին: Հնարավոր է, որ սկզբում նրանք էլ առաջնությունը տալիս են եղել իրենց մերձավորներին: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում ինչ որ նոր բան էր մտցվում տեղական իրավակարգի մեջ՝ կամ տոհմական ազնվականությունը պաշտոնական մարմնի կրանդավորում տալով կամ ստեղծելով նոր ազնվական տներ, որոնք իրենց իրավունքների ազբյուրով տարբերվում էին տեղական իշխաններից:

Այդ նորը արտահայտվեց համապատասխան տերմինով, ինչպիսին է նախարարը: Դժբախտաբար այդ բառը ղեռնահնարավոր չէ ստուգաբանական վերլուծման ենթարկելու: Հավանորեն նախապես այն նշանակել է նահանգների կառավարիչ, *rectores*: Որպես սոցիալական հասկացություն նախարարը համարվեց է պարսկերեն *šardar*-ին¹, որի համապատասխան հողա-

¹ Մինչև այժմ կատարված փորձերը անհաջող են: Ինճիճյանը, Հնախոսություն, Բ, 77, նախարար բառը համեմատում է լատիներեն *praefectus*-ի հետ՝ էլեկելով հայ. նախ և արար բառերից: Այս բացատրությունն ընդունում է նաև Մ. էմինը, թեթևակի ուղղումով: Խորենացու թարգմանության հավելված, 1893 թ., էջ 298: Ն. Մառի առաջարկած ստուգաբանությամբ, նախ կամ նահ, նահ-անգի կապակցությամբ, նույն ծագումն ունի, ինչ որ արարեհեռում պահպանված իրանական *nahie* ناهیه նահանգ, իսկ -բար-ի *rad*-ի ազնվազումն է, գեներդերեն *raiu*, որ նշանակում է պարոն. Н. Март. Этимология даях терминое, З. В. О. Р. Арх. О. XI, էջ 170: Հայտնի իրանագետ Անդրեասը ենթադրում է, որ նախարարը կապ ունի Ամմիանոսի հիշատակած մի պարսիկ զորավարի *Nohodares*-ի անվան հետ, Hübschmann, *Grammat.*, II, էջ 514: Կասկածից դուրս է, որ այս տերմինի երկրորդ մասը -*tar* ծագում է -*dar*-ից և ոչ թե *raiu*-ից: Դժվարությունը առաջին վանկի մեջ է, որը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նախադասի, նահ-ատակ, նահ-անգ պարս. *naxust*, *nahie*, գուցե և նիխորական և այլն: Պատմական նկատառումները հանդիպում են *naxarar*-ի համեմատության *šardar*-ի հետ, այդ պատճառով էլ ուշադրով է Ն. Մառի արած ենթադրությունը *nah*, *nahr* և *šah*, *šahr* բառերի կապի մասին: Հմմտ. նահ-ատակ և շահ-ատակ: Հետաքրքրական է, որ Նիդերլանդ, էջ 156, պարսից

յին միավորը *nahang*-ն է, որ հավասար է *šahr*-ին: Հավանական է, որ *azat* բառը նշանակում է նախարարի որդի:

Նոր տերմինները գործածությունից դուրս չվանեցին հներին, որովհետև նրանցով արտահայտված հասկացությունները ոչ թե փոխարինեցին, այլ գործեցին հների հետ կողք կողքի: Եվ վերջով նոր հարաբերությունների հետ՝ տոհմական հին տերմինոլոգիան ենթարկվեց որոշակի համահարթման: Բուրր անվանումներից, որոնց տակ հասկացվում էին տոհմերի պետերը, տ է բ-ը *ter* գերակշռող դարձավ: Մյուսները կամ անհետացան կամ նրանց գործածությունը տեղայնացվեց՝ մնալով առանձին տոհմերի մեջ որպես ժառանգական տիրոջանուններ: Տ է բը դարձավ տեխնիկական տերմին իշխանական տիրոջանուններ: Տ է բը դարձավ տեխնիկական տերմին իշխանական տոհմերի պետերին կամ ավագ անդամներին նշելու համար: Որոշակի փոփոխություն կրեցին նաև տոհմի երեխաներ կամ որդիներ նշանակող արտահայտությունները. *sepukh*-ը բացառապես դարձավ իշխանական տների սեփականությունը, իսկ մյուս բառերը պահպանեցին իրենց նախնական սովորական նշանակությունը: Նույն ձևով էլ տերիտորիալ արտահայտություններից *տունը-տն* դարձավ տեխնիկական տերմին՝ համապատասխան հողային գաղափար նշելու համար:

Այսպիսով, տ է բ, ս ե պ ու հ, տ ու ն *tēr*, *sepukh*, *tun* տոհմական հասկացությունների կողքին հանդես եկան նախարար, ազատ, նահանգ—*naxarar*, *azat*, *nahang* վարչական հասկացությունները: Տոհմական ավանդույթներն այնքան ուժեղ էին, որ ինչպիսի նոր հարաբերություններ էլ որ առաջ գային, դրանք պետք է մնային նրանց շրջանակում: Այդ պատճառով էլ հուշարձաններում տ է բ և նախարար, ս ե պ ու հ և ազատ, տ ու ն և նահանգ բառերը միմյանց հաջորդում են որպես հավասարազոր հասկացություններ: Պետական սկզբունքի ուժեղացման հետ մեկտեղ նախարարը գերակշռություն է ստանում իշխանի և ավա-

արքունիքի ավագանին բաժանում է վզուկի և պատական նախարար-ի, որ համապատասխանում է *buzurgān* և *šardarān*-ին:

Քանի որ նախարար բառի ստուգաբանությունը ղեռնահնարական կառուցման է ենթարկությունների շրջանում է գտնվում, ավելորդ չի լինի նշել, որ կարող է պատահել, որ *nah* առեղծվածային բառը լինի *da-nihū*-ի հատած ձևը, որ կրթքի է սկզբի *da*-ն և որ *nahōšar*-ը մոտենում է *da-nhūšar*-ին, ինչպես և *nahapet*-ը՝ *da-nhupati*-ին:

գանիի իմաստով, իսկ տէրը դառնում է տիրոջ, սեփականատիրոջ համար ոչ բնորոշ արտահայտութիւն: Ազնվականական տոհմի պետին կամ ավագ անդամին շուք տալու համար տերի և նախարարի փոխարեն անհրաժեշտ եղավ ստեղծել նա հասարակական տնտեսական և տանուտեղ-տանութի նորակազմ արտահայտութիւնները: Առաջին բառի ծագումը պարզ չէ, բայց հավանական է, որ այն այնպես է վերաբերում nahang-ին, ինչպես տանուտեղ-տանութի նոր բառակազմութիւնները պետք է փոխարինեն տէր-ին և նախարարին նրանց սկզբնական իմաստով, թեև գրանք ամբողջովին չբացատրեն նրանց տեղը, բայց գերազանցորեն գործ էին անում նրանցից առաջ այն բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտ էր լինում հատուկ շուք տալ տոհմի պետին:

Այսպես են պատկերանում մեզ հայերի սոցիալական կացութեան իմաստով բնորոշ տերմինները իրենց պատմական հաջորդականութեամբ: Մեր պրպտումները մենք կատարեցինք պատմական ընդհանուր կշռադատումների լույսի տակ, շարունակելով այն իրականութեան հողից, որ պատկերված է մատենագրութեան մեջ: Օգտվելով վերը բերված համեմատութիւնից, կարող ենք ասել, որ սկսելով հետազոտվող ծառի կատարներից, մենք աշխատեցինք երեւան հանել նրա արմատներն այն ուղեցույց թիւերով, որ ընձեռում է ծառի տեսանելի կամ մեզ մատչելի մասը: Այդ ճանապարհով ստացած արդյունքը՝ մեր տեսութիւնը, այնքան նշանակութիւն ունի, որքան առհասարակ յուրաքանչյուր կոնստրուկտիվ աշխատանք:

Իսկ այժմ մենք քննութեան կառնենք մեր ուսումնասիրութեան ենթակա երևութի այն փուլը, որի մեջ գտավ նրան հայ դպրութիւնը, և որը մեզ ex silentio հիմք ծառայեց պատմական անցյալին վերաբերող մեր նախորդ քննութիւնների համար:

II

Արշակունյաց Հայաստանը, ինչպես այն պատկերված է հայ մատենագրութեան մեջ, իրենից ներկայացնում էր մի քանի տասնյակ իշխանական տիրույթների բաժանված երկիր: Իրավական տեսակետից իրար հավասար լինելով, փաստորեն նրանք իրարից տարբերվում էին իրենց քաղաքական կշռով և թագից ունեցած կախումով: Համեմատաբար ավելի ինքնուրույն էին այն իշխանու-

թիւնները, որոնք գտնվում էին ծայրամասերում, և ամենից առաջ՝ այսպես կոչված, բոլոր իշխանները, ապա Սյունիքի, Մոկքի, Տայքի և Մոփքի իշխանական տները: Ներքին իշխանութիւններից առանձնապես աչքի էին ընկնում Մամիկոնյանները, Բագրատունիները, Մարզպետները, Արծրունիները, Խորխոռունիներն ու կամսարականները: Մնացած մեծամասնութիւնը բաղկացած էր մանր իշխաններից, որոնք իրենց ծագումով և կալվածքների չափով շատ ավելի ցածր էին կանգնած և մեծ մասամբ ապաստան էին գտնում հզոր իշխանութիւնների ազդեցութեան ոլորտում:

Իրենց դիրքով բոլոր տերիտորիալ միավորները համարվում էին հավասար և կազմում էին տուն, որի գլուխ կանգնած էր տերը կամ տանուտերը, և կոչվում էր տանուտեղ-տանութիւն կամ նախարարութիւն: Տանուտերութիւնները հանդիսանում էին մեկուսացված միջավայր՝ պետական իրավասութիւններով: Նրանք ունեին դատաւարչական անկախութիւն և գերագույն իշխանութեան այլ ատրիբուտներ: Դրանք յուրատեսակ մանր պետութիւններ էին, որոնց գլուխ կանգնած իշխանները արքայիկներ, փոքրիկ թագավորներ էին: Նրանցից յուրաքանչյուրի իրավասութեան սահմանները de facto կախված էին այն հզորութիւնից, որ նրանք ունեին տվյալ պահին: Պատմիչները հաճախ խոսում են մեծամեծ աւագանու մասին և տարբերում են ավագ տանուտերներին կամ նախարարներին կրտսերներից, անշուշտ ելնելով նրանց համեմատական հզորութիւնից: Տանուտերութեան ընդհանուր վիճակը որոշվում էր իշխանների և թագավորի ունեցած ուժերի իրական փոխհարաբերութեամբ և նշանավորվում էր մերթ կենտրոնաձիգ և մերթ կենտրոնախույս ձգտումների գերակշռութեամբ: Հնարավորութեան դեպքում թագավորները չէին քաշվում բռնագրավելու հանցանք գործած իշխանների կալվածքները:

Հայաստանի քաղաքական նկարագրի այս ընդհանուր պատկերը՝ վերը նշված գծերով, թվում է, թե բավական է, որպեսզի նրա ներքին կառուցվածքը հարազատացնենք այն իրավակարգին, որ հայտնի է Ֆեոդալիզմ անունով: Քաղաքական մարմնի բաղմագլուխ կամաքը պետական թույլ միութեամբ բնութագրում է հենց Ֆեոդալական պետութիւնը:

Ֆեոդալիզմի դասական երկիրը՝ Ֆրանսիան, Ֆեոդալական կարգերի ծագման ժամանակ նույն պատկերն էր ներկայացնում,

ինչ որ Արշակունիների Հայաստանը: Երկիրը բաժանված էր բազմաթիվ խոշոր և մանր իշխանությունների, որոնք պետական իրավունքներից օգտվում էին տարբեր չափով: Մի քանիսը ներկայացնում էին խիստ զարգացած ֆեոդալական օրգանիզմ և օժտված էին լիակատար զերագույն իշխանություններով, մյուսները հանդիսանում էին մեծ սենյորություններ նույնպես իշխանություններով և վերջապես կային սահմանափակ իրավունքներով մանր տիրույթներ: Սուվերենության տեսակետից բոլոր իշխանությունները բաժանվում էին երկու խմբի՝ խոշոր սենյորությունների և մանր սենյորությունների՝ grandes seigneuries, petites seigneuries: Առաջինները, թվով մոտ քառասուն, ունեին պետությանը հատուկ բոլոր իրավունքները՝ droits régaliens և հանդիսանում էին տարբեր դքսություններ, հերցոգություններ, կոմսություններ — duchés, comtés, vicomtés: Մանր սենյորությունները, որոնք խիստ բազմաքանակ էին, կազմված էին châtelanies-ներից, երկրորդական vicomtés, vidamies-ներից և avoueries-ից, շունեին քաղաքական նույն նշանակությունը և նրանց տերերը սահմանափակ իրավունքների հետևանքով հաճախ վասալներից չէին տարբերվում: Արշակունյաց Հայաստանի ֆեոդալական բնույթը միայն արտաքին քաղաքական կերպարանքի մեջ չէ որ արտահայտվում էր. այն ավելի խորն էր գնում և ընդգրկում էր այնտեղ գործող իրավակարգի էությունը:

Ֆեոդալիզմը սոցիալ-քաղաքական հայտնի համակարգ է, որ հատուկ է ոչ միայն միջին դարերին. այն որոշ իմաստով հանդիսանում է մարդկային հասարակությունների զարգացման անհրաժեշտ մի փուլ և նկատվում է տարբեր ժողովուրդների մոտ և տարբեր դարաշրջանների և կուլտուրական կենցաղավարության մեջ: Պատմագրությունը բացահայտել է, որ ֆեոդալիզմը ծագում է և՛ վերընթաց, և՛ վարընթաց ձևով, այսինքն՝ կամ մշակութային վերելքի և կամ նրա անկման ու քայքայման պրոցեսում: Այս տեսակետից ֆեոդալիզմի ծագման մասին ուժանիստների և գերմանիստների վեճը դադարում է միմյանց ժխտող տարակարծություն լինելուց: Երկու կողմերն էլ իրավացի են նույնիսկ իրենց միակողմանիության մեջ: Դեպի անկում գնացող Հռոմեական կայսրությունն արդեն դրսևորում էր ֆեոդալականացման պրոցեսներ: Հռոմեականու-

թյան նկատմամբ հաղթանակած բարբարոսությունն իր հերթին կյանքի տոհմական ձևերի քայքայմանը զուգընթաց, որի մեջ նա գտնվում էր դեռևս Ե դարում, նույնպես ոտք էր դնում ֆեոդալիզմի ուղին:

Երկու պրոցեսները մեկը մյուսից անկախ տանում էին դեպի նույն հասարակարգը. նրանց հանդիպումը և բխումը գերմանական նվաճումներից հետո միայն բարդացրին ծնվող հաստատությունների բնույթը:

Ֆեոդալական կարգերի ամենից ավելի բնորոշ առանձնահատկությունը գիտնականները համարում են զերագույն քաղաքական իշխանության մասնատվածությունն ու ցրվածությունը: Ըստ այդ բնորոշման ֆեոդալականացումը սկսվում է այն ժամանակ, երբ հողը, զերագույն իշխանությունը և առհասարակ պետական իրավահարաբերությունները կոտորակվում են բազմաթիվ շրջանային կառավարիչների միջև, և ընդհանուր պետական ենթակայության փոխարեն զարգանում են մասնավոր ենթակայության խմբավորումներ: Ընդ որում ելակետը խոշոր հողատիրությունն է, որը ամբողջ իրավակարգի հենարանն է, և որից կախված են նրա մյուս բոլոր յուրահատկությունները:

Ֆեոդալական հողատիրության հիմքը համարում են երկու տիպի հողեր. ալլոդներ՝ հայրենական և արքայական բենեֆիցիարումներ՝ նվիրատվություններ: Վերջին տիպի հողատիրությունից, ինչպես ենթադրում են, առաջ է եկել ֆեոդ հաստատությունը, որից և ամբողջ հասարակարգը ստացել է իր անվանումը: Feodum, [fief բառը հուշարձաններում հանդիպում է Թ դարից ոչ շուտ: Սկզբում այն գործ էր ածվում բենեֆիցիում իմաստով և նրան հավասար, բայց հետո ԹԱ դարի սկզբից նրան դուրս մղեց: Այդ ժամանակից սկսած՝ ֆեոդը այն հողն էր, որից օգտվելը պայմանավորվում էր զինվորական ծառայությամբ, ընդ որում ֆեոդը բենեֆիցիումից տարբերվում էր, ըստ հետադատողների բացատրության, նրանով, որ տրվում էր որպես ժառանգական տիրապետություն, մինչդեռ բենեֆիցիումը տրվում էր ցմահ օգտագործման:՝

Մեզ թվում է, որ ֆեոդի ծագումը և նրա առնչությունը բենեֆիցիումի հետ ֆեոդալիզմի մասնագետների կողմից այնքան էլ ճիշտ չի մեկնաբանվում: Feodum, fief բառը թեև փաստաթղթե-

¹ Luchaire, Manuel des institutions francaises, p. 235—6.

¹ Luchaire, op. cit. p. 155.

րում հանդիպում է ժ դարից սկսած, բայց անվիճելի է, որ այն ավելի հին ծագում ունի: Ֆեոդալական դադափարներն ու տերմինները վերլուծելիս պետք է տարբերել հոմեակական և գերմանական հակադեպերը: Ֆեոդը, ինչպես և ալլոդը գերմանական կյանքի սեփականությունն են: Հոմեակական իրականության մեջ իրենց նշանակությամբ համապատասխան հասկացություններ են լատիֆունդիան և բենեֆիցիումը, որպես առաջիններին հավասարազոր սոցիալական գործոններ:

Ալլոդները, որպես հայրենական ստացվածք և պարհակներից ազատ ժառանգական հողեր, ծագումնաբանորեն սերում են հողային այն տիրույթներից, որոնք մի ժամանակ պատկանում էին համայնքներին, որոնց քայքայումից հետո անցան նրանց պետերին կամ այն հզոր տարրերին, որոնցից կազմվեց ապագա ազնվականությունը:

Իսկ ֆեոդը, ամենայն հավանականությամբ, հակառակ ալլոդին, սկզբնական շրջանում այն հողն էր, որ ենթակա էր հարկման կամ հողային տուրքի, ինչպես նաև որոշ պարհակների: Եթե *allogd*-ը իր բառակազմությամբ *all-*ամբողջ և *od-*գույք ցույց է տալիս լիակատար սեփականություն (կամ, ավելի ճիշտ, ամբողջ սոհմի կամ համայնքի սեփականություն լինելը), ապա *feodum*, *fief-*ը *fieh-*ից և *od-*ից, որտեղ *fieh* = գերմաներեն *vieh*-ին, որը նույն արմատից է, ինչ որ լատիներեն *pec-us*-ը, լատիներենի նման նշանակում է *pecus* և *pecunia* և բնորոշում է հողերի որոշ տեսակ, որոնց բերած հասույթը կոչվում է *pecunia*: Այս լուսաբանությամբ ֆեոդը կարող է նշանակել և ցենզիվա, և բենեֆիցիում՝ նայած այն հարկատվության բնույթին, որոնց ենթակա է: Դրանով է բացատրվում այն, որ ֆեոդալական դարաշրջանում, երբ ֆեոդը ստացավ ժառանգական բենեֆիցիումի նշանակություն, Ֆրանսիայի մի քանի վայրերում ֆյեֆը նշանակում էր նաև ցենզիվա՝ *terresroturières*, այսինքն՝ հասարակ խավի հողաբաժիններ¹: Ժառանգականությունը սկզբից ևեթ հատուկ էր ֆեոդին: Ժ դարից սկսած՝ մեզ հանդիպում է *perpetuum beneficium* արտահայտությունը, որը ցույց է տալիս, թե բենեֆիցիալ հողերի զարգացումը ևս գնում էր դեպի ժառանգականություն: Շատ հնարավոր է, որ հենց այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ բենեֆիցիումը միաձուլվի ֆեոդի հետ և անհետանա:

¹ Luchaire, *op. cit.* p. 156.

Ֆեոդալական կարգի հատկանշական կողմն այն է, որ հողային հարաբերությունները սերտորեն միահյուսվում են անհատների միջև եղած հարաբերություններին: Հողը դառնում է ոչ միայն հարստության աղբյուր, այլև մարդկանց վրա իշխելու միջոց: Ազատ հողերի տերը դառնում է սենյոր, իսկ ֆեոդինը՝ ֆեոդալ կամ սենյորից կախված վասալ: Այսպիսի ենթակայությունը նույնպես արմատներ ունի գերմանական և հոմեակական անցյալում: Հոմեակացիների մոտ, մանավանդ անկման շրջանում, գոյություն ունեին պատրոնատի և կլիենտելի զանազան ձևեր. գերմանացիների մոտ կային սենյորներ և գասինդներ, վասսալներ, այսինքն՝ ուղեկիցներ կամ ջոկատ, որ կազմված էր լինում սենյորին նվիրված մարդկանցից: Սենյորին մատուցած ծառայության համար նրանք վայելում էին նրա հովանավորությունը: Այս ծառայությունը տարբերվում էր այն կախումից, որ հաստատվեց ֆեոդալական դարաշրջանում: Ծառայությունը, բացառություն չհամարելով նաև ղեկավարականը, հնարավոր է նաև առանց հողային փոխհատուցման, և թերևս այդ տեսակի կախումը կարելի է կոչել վասալական: Բայց ֆեոդալական վասալության էությունը հանդիսանում է հողի հետ կապված ծառայությունը և զլխավորապես զինվորական ծառայությունը: Հողատիրությունը պայմանավորված այս ծառայության մեջ էլ կայանում է անձնական կախվածության ֆեոդալականացման էությունը:

Այսպիսով ալլոդը և լատիֆունդիան հանդիսանում էին ազատ կամ սենյորական հողատիրության հիմքը, իսկ ֆեոդը և բենեֆիցիումը՝ պայմանական կամ ֆեոդալական հողատիրության: Սենյոր-սյուզերենը սոցիոլոգիապես ծագում էր գերմանական սենյորից և հոմեակական մագնատից, իսկ վասալը՝ *vassi-*ից և *clientes-*ից:

Հայաստանում կային այն հիմնական տարրերը, որոնցից ստեղծվում էր ֆեոդալական ոեժիմը: Հողատիրությունը, որ ամեն ինչի հիմքն է ոչ միայն արտաքնապես, այլև մասամբ ծագումով, մեծ նմանություն ուներ ֆեոդալականի հետ: Հայերի մոտ էլ տարբերվում էին հողերի երկու տեսակ՝ հայրենիք և պարզակալանք, այսինքն՝ հայրենական հողեր և բենեֆիցիումներ¹: Բացի

¹ Եղիշե, էջ 159, «երկիրք, եթէ հայրենիք, էթէ պարզեականք և էթէ քսակազիներ»:

դրանից հիշատակվում են նաև քաղաքներ, այսինքն՝ գնովի կալվածքները Այդպիսի հողեր ժԲ դարից սկսած հայտնի էին նաև Արևմուտքի ֆեոդալական աշխարհում: Բայց հողային անշարժության գլխավոր տիպերը ինչպես Արևմուտքում, այնպես էլ Հայաստանում հայրենական և պարզական հողերն էին:

Մերովինգյան շրջանի ավտորը, որպես հողային գույքի տեսակ, միանգամայն համապատասխանում է հայկական հայրենիքին: Երկուսն էլ հայրենական են, այսինքն՝ ժառանգական հողեր են և սերնդից սերունդ անցնում են լիակատար սեփականատիրության իրավունքով: Հայրենիք ընդհանուր անվան տակ հասկացվում էին իշխանների տոհմական տիրույթները, որոնց միավորը հանդիսանում էր տունը: Գրականության մեջ այդ տները պատկերացվում են սենյորության գծերով: Գրանք հանդիսանում են ալեոսիս, *teruſium*-պետություն: Նույն ձևով էլ ֆեոդալական *dominium*-ը որպես ավտորական կալվածատիրության միավոր հանդիսանում էր սենյորության հիմքը:

Ինչ վերաբերում է պարզեական կոչված հողերին, ապա թերևս այս տերմինը պատմիչը գործ է ածում միայն այն փոքր հողամասերը, շեներն ու գյուղերը նշելու համար, որոնցով այս կամ այն ծառայություն համար վարձատրվում էին իշխանները: Բայց ավելի հին ժամանակներում պարզատրման առարկա էին ծառայում նաև ավելի ընդարձակ հողեր: Արշակունիների պատմիչի վկայությամբ, ինչպես նշված է վերը, իշխաններից շատերը «գավառատեսարք լիայք ի նոցանէն (Արշակունիներից), եւ ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ-աւագ աւանաց զեղից եւ զանձուց տեսարք լիայք էք եւ պէսպէս դաստակերտացն»¹:

Մենք այն կարծիքը հայտնեցինք, որ *nah-ang*-ը այնպես է հաջրաբերում պարզական հողերին, ինչպես տուն-ը տոհմականին կամ հայրենականին. այն միաժամանակ վարչական մեծություն էր: Այնտեղ իշխողները նախարարներն էին, ինչպես որ տան գլուխ կանգնած էին տէր-երը կամ տանուաւէր-երը, իսկ նրանց կալվածքներն էլ կոչվում էին *nochararudium*-նախարարություն: Նախարարությունն իր էությունը ունիւմ չէր տարբերվում

տանտերությունից: Երկուսն էլ սենյորության նման տերիտորիալ-քաղաքական մեծություն էին, ընդ որում նախարարությունները կարելի է բազդատության մեջ դնել հոմեոկան նախկին պրովինցիաներից առաջացած *comitès* և *duchès*-ների հետ, իսկ տանտերությունները՝ ավտորական սենյորությունների *alleux* *souverains*-ի հետ:

Ալտոնների էվոլյուցիան կատարվեց երկու ուղղությամբ. դրանց մի մասը, աստիճանաբար ընդարձակվելով, դարձավ հողային այնպիսի մեծ ուժ, որ նրանց տերերը հեշտությամբ, այսպես կոչված, ի մ ու ն ի տ ե տ ի միջոցով կարողացան քաղաքական իրավունքներ ձեռք բերել: Թագավորական իշխանությունը նրանց է զիջում դատավարությունը, հարկերի զանձումը և ավտորի ներքին կյանքում հասարակական իրավունքի այլ հողվածներ, հաճախ նաև դքսության տիպի պետական պաշտոններ: Զեռք բերած անհատական իրավունքներն ու առավելությունները հաճախ դառնում էին ժառանգական: Ոտք դնելով քաղաքական ուղին՝ ավտորները ձգտում էին սենյորության, և, իսկապես, հետագայում բոլոր մեծ ավտորները դարձան սենյորություններ:

Մյուս և շափազանց շատ ավտորները հնարավորություն չունենալով ընդարձակվել ո՛չ տերիտորիապես և ո՛չ էլ քաղաքականապես, ընդհակառակն՝ իրերի թելադրանքով հարկադրված էին լինում կորցնել իրենց ազատ ժառանգական հողերի իրավական բնույթը և մոտենալ բենեֆիցիումներին կամ պայմանական-ծառայական հողատիրությանը՝ ֆեոդին: Գրանք տերերը դառնում էին ավելի ուժեղ սենյորների վասալներ կամ ֆեոդալներ:

Կարելի է արդյոք նման պրոցեսներ գտնել նաև հայ հողային հարաբերություններում, և ամենից առաջ ֆեոդալական հասկացությունների տեսակետից ինչպե՞ս որակել հայ իշխանական տիրույթների հարաբերությունները թագի նկատմամբ:

Ըստ հայկական աղբյուրների՝ իշխանները, նախարարները կամ տանտերները «ծառայք թագաւորի էին»: Նրանց և թագավորի հարաբերությունը համարվում է ծառայութիւն: Թագավորը նրանց համար տէր է, սուվերեն, թագավոր: Ծառայութիւն տերմինը համապատասխանում է *servilium*-ին և *obsequium*-ին, արտահայտություններ, որոնցով նշվում էին վասալի ծառայական պարտականությունները սենյորի նկատմամբ. վա-

¹ Փավստոս, Գ, ծա:

սալը ինքը ոչ այլ ոք է, և թե ոչ ծառա՝ *famulus*¹: Մտառայական կախումը դուցե և հիմնված է *fides*-ի կամ ֆեոդի վրա. հայկական աղբյուրներն այնքան էլ պարզ չեն ներկայացնում հարցի այդ կողմը: Մի կողմից իշխանները դուրս են բերվում իբրև իրենց կալվածքների կատարյալ սեփականատերեր այնպիսի անկապտելի իրավունքներով, ինչպես թագավորը, մյուս կողմից հազվադեպ չեն այնպիսի դեպքերը, երբ թագավորը այս կամ այն իշխանի կալվածքները հարքունիս է գրավում կամ ընդհակառակը՝ նոր հողեր է նվիրում: Օտարումների և նվիրատվությունների իրավունքը վերաբերում է *dominum directum*-ին, որով բնորոշվում է գերագույն իշխանի հարաբերությունը ֆեոդալի նկատմամբ: Իշխանական հողերի բունագրավումը Արշակունիների օրոք կարելի է մոտեցնել *forfaiture* իրավունքին, որ գործադրում էին սենյորները հանցանք գործած վասալների նկատմամբ: Հայաստանում իրավիճակն աչքի չէր ընկնում կայունությամբ, մի բան, որ հատուկ է ֆեոդալական միջավայրին:

Հայոց իշխանական հողատիրությունն ավելի շուտ մոտենում էր այն ֆեոդերի տիպին, որոնք ֆեոդալիզմի պատմաբանների մոտ կոչվում են ֆյեֆ-սենիորի ա՝ *fiefs-seigneuries*:

¹ G. Waitz. *Deutsche Verfassungsgeschichte*, IV p. 273, Das Verhältniss zum Herrn als ein Diener (serviere), Dienst (servitium) bezeichnet; der Wassall heisst um des Willen auch wohl selber Diener (*famulus, puer*). Փավստոս, Գ, Թ, «սպասարեաց յարքայէն հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխան Աղծնեաց... զբարեկիր զծառայս իւր, զիշխանն Կորդուաց, Սովորտաց...» և այլն... «Կայր բղեաշին Վաղինակ ի ծառայութեան արքային» Գ, Ժ «մեծ ծառայն արքային Հայոց առ Մանածի՛ր Ռշտունի», էջ 250, իշխանները դիմեցին «յարտից թագավորին. «զի զնա պաշտիցեն և նմա միամտութեամբ ծառայեսցին»: էջ 253՝ գտեալ իւրանց զարքայն պարսից և կային ի ծառայութեան նորա, Փարպեցի, էջ 46, «ծառայից զրել առ իրեանց տէրն... ծանուցանել նոցա զձեր տէրութիւն և զնոցա ծառայութիւն», էջ 49, «... զվաստակ և զհպատակութիւն, զոր ծառայիցն պարտէ առ իրեանց տեարան», էջ 55, «ի ժամանակէ յորմէ հնաէ կարգեալ և մք ի ծառայութիւնդ» էջ 83, ծառայն ձեր Վարդան (Մամիկոնեան), էջ 137, ձեզ Արեաց տեսն արբանեկութեան արժանի եղէ, ի մտիւնդ... ձեզ ծառայութիւն առնել. էջ 147, արքայից արքայի ի ծառայութենէ մի՛ Լյուսնք, էջ 169, մեր բնիկ տեսրք էք և մեր ձեր բնիկ ծառայք և մք, էջ 138, մեր բնիկ տեսրք էք, և հարցն մերոց և նախնեաց և մք ծառայութիւն առնեմք», Եղիշ, էջ 81, «հարքն մեր... կացին ի ծառայութեան վաստակ... և մք զնոյն ծառայութիւն ծառայեցաք» և այլն:

Պատմաբանները տարբերում են իսկական ֆեոդերը և այնպիսիները, որոնք թեև կոչվում են ֆեոդեր, բայց իրենց իրավական վիճակով նման են սենյորություններին¹: Ֆեոդերի այդ երկու տեսակները հենվում են ֆեոդալական հողատիրության երկու հակադիր սկզբունքների վրա. մի կողմից ֆեոդը համարվում է պայմանական-հողատիրություն՝ ենթակա բռնագրավման, եթե տիրողը դրժում է ծառայության երդումը, մյուս կողմից՝ ֆեոդալը, շքանկանալով այլևս ծառայել տվյալ սենյորին, իր հողերով ծառայության է անցնում մի ուրիշ սենյորի մոտ, այսպես կոչված կոմենդացիայի հիմունքով: Մի սենյորից մի ուրիշի մոտ ծառայության անցնելը ցույց է տալիս, որ տվյալ անձը համարվում է հողի լիակատար սեփականատեր, և նա ազատ է ծառայելու նրան, ում ցանկանում է: Նշանակում է, այդ դեպքում ֆեոդալի անձնական կախումը սենյորից գերակշռում էր հողային կախումից: Այս տիպի սենյորություն մենք նկատում ենք հատկապես ֆեոդալիզմի առաջին շրջանում: Նոր պատմաբաններից մեկի կարծիքով դուքսերի և իշխանների տերիտորիալ գերիշխանությունը տարածվում էր միայն նրանց սեփական հայրենական կալվածքների վրա, իսկ հայրենական կալվածքներից դուրս նրանց իշխանությունը տերիտորիայի նկատմամբ ավելի քիչ էր իրագործվում, քան այն անձերի նկատմամբ, որոնք կապված էին նրանց հետ հավատարմության վասալական երդումով²:

Այսպես կարելի է բնորոշել նաև Հայաստանում թագավորի հարաբերությունները իշխանների հետ: Այդ հարաբերությունները ավելի շուտ կրում են անձնական, քան թե տերիտորիալ կախման բնույթ: Թագավորը ինչ-որ հանցանքի համար տվյալ իշխանին զրկում է կալվածքից, բայց այդ պատիժը չի տարածվում նրա ժառանգների վրա. պատժված իշխանի մերձավոր ժառանգը տե՛ր է դառնում իր իրավունքներին. դրաված հողը վերագրվում է նրան որպես իր տոհմի անկապտելի սեփականություն: Սակայն Հայաստանում, ինչպես առհասարակ ֆեոդալական միջավայրում, սո-

¹ Luchaire, *op. cit.* p. 159, Il faut distinguer les fiefs qui sont des seigneuries et les fiefs qui n'en sont pas. Ռուսական ֆեոդալիզմի մասնագետ Ն. Պ. Սիլվանսկին առաջին տիպի ֆեոդերը անվանում է ֆեոդեր-բենեֆիցիումներ, իսկ երկրորդը՝ ֆեոդեր-ալոդներ: *Феодализм в древней Руси*, p. 76.

² Mortet, *Feodalité*, Grande Encyclopédie XVIII, p. 206.

ցիալական հարաբերությունները կարգավորողը ոչ թե իրավա-
կան նորմերն էին, այլ կոնկրետ ուժը, և նրանից կախված էլ
հարաբերությունները միանգամայն տարբեր ձև են ընդունում:
Ինչպես որ Արևմուտքում կային սենյորություններ, որոնք իրեն-
ցից ներկայացնում էին պետություններ, որոնց համար թագավո-
րը միայն հանդիսանում էր իշխանների միության գլուխ, իսկ
մյուս սենյորությունները օգտվում էին նույն իրավունքներից
ավելի պակաս շահով, բայց, այնուամենայնիվ, համարվում էին
սուվերեն և, վերջապես, կային դանաւան հրանգավորումների
ֆեոդեր՝ ծառայության պայմանով, երաշխավորության իրավունքով
և այլն, ճիշտ այդպես էլ Հայաստանում, սահմանապահ իշխան-
ները, այսինքն՝ բզեչևները իրենց գերբով համարվում էին փոք-
րիկ թագավորներ, ավագ տանուաւերությունները փաստորեն
օժտված էին անհամեմատ մեծ իրավունքներով, քան կրտսեր-
ները, և կային իշխաններ, որոնք մեծապես կախման վիճակում
էին գտնվում:

Ըստ ընդունված սխեմայացման ֆեոդալական համակարգը
բաղկացած է անձնական և հողային կախման երեք օղակներից.
1. Սենյորը և նրա հայրենական տիրույթը (զոմենը) կամ սենյորի
անմիջական օգտագործման ենթակա սենյորության մի մասը,
2. մի շարք վասալներ և նրանց ֆեոդերը կամ հողամասերը, որ
նրանց է զիջել սենյորությունը, 3. ռամիկները և նրանց հողաբա-
ժինները, որ կոչվում էին ցենդիվաներ:

Ֆեոդալիզմի հիմնական գիծը առաջ համարվում էր հողա-
տիրության պայմանականությունը՝ ֆեոդը, իսկ այժմ պատմա-
բանները առաջին պլան են քաշում հողի հետ անձի կոմմենդա-
ցիան և ֆեոդալական կարգերի ծանրության կենտրոնը փոխադ-
րում են սենյորության վրա: Իսկն ասած՝ կոմմենդացիան չի
հակասում պայմանականության սկզբունքին. այն միայն ֆեոդը
պաշտպանում է ճորտացումից, իսկ պայմանական սեփականու-
թյունը մնում է ֆեոդի հատկանիշը, այնպես որ ֆեոդի տերը, մի
այլ սենյորի մոտ անցնելով՝ չի ազատվում ծառայությունից:

Ֆեոդալական հարաբերությունների յուրաքանչյուր համակար-
գում, կարևորի և անկարևորի տարբերումով, մի յուրատեսակ
աբստրակցիա է՝ տեսական մի կառուցվածք. իրական կյանքում
այդ հարաբերությունները դրսևորվում են բազմազան զուգորդում-
ներով ու ձևերով: Պատմական ուսումնասիրության խնդրի հա-

մար ավելի արդյունավետ է երևույթներն ուսումնասիրել կոնկրետ
բարդության մեջ, քան թե կանգ առնել այս կամ այն կողմի
կարևորության համեմատական աստիճանի վրա: Մենք ճիշտ
տեսակետի հետևած կլինենք, եթե, ելնելով ֆեոդալական հասա-
րակության մեջ երկու խավերի՝ սենյորների և ֆեոդալների առկա-
յությունից, ֆեոդալական հասարակարգի իրավահարաբերությու-
նները ևս համապատասխանաբար բաժանենք երկու բնագավառի,
այսինքն՝ սենյորականի և ֆեոդալականի բառի նեղ իմաստով
վերցրած և նրանցից յուրաքանչյուրը քննության առնենք առան-
ձին- առանձին:

Արշակունյաց Հայաստանը, ամբողջությամբ վերցրած, կա-
րող է ուսումնասիրվել որպես մի մեծ սենյորություն, որտեղ
սենյոր են Արշակունի տիրակալները, իսկ վասալ՝ նրանց իշխա-
նությունն ընդունող իշխանները, մնացած բնակչությունը՝ ռամիկ-
ները կամ գյուղացիությունը: Նախարարության՝ թագավորի նկատ-
մամբ ունեցած հարաբերությունից հետևում է, որ նրանցից յուրա-
քանչյուրը կարող է այս կամ այն շահով հաճախելով պարզ սեն-
յորություն: Չքանախական թագավորության նման, որ հանդիսա-
նում էր նախ և առաջ բարձրագույն սենյորություն, Արշակունյաց
թագավորությունն էլ իրենից ներկայացնում էր մի մեծ նախարա-
րություն, իսկ նախարարություններն էլ իրենց հերթին ձգտում էին
իրենք իրենց ցույց տալ իբրև Արշակունիների տիպի մանրիկ թա-
գավորություններ: Հաշիական կենցաղում սենյորականության և
ֆեոդալականության հետքերն ուսումնասիրելիս կարևոր է ցույց
տալ նրանց բնորոշ հատկանիշների առկայությունը՝ անկախ նրա-
նից, դրանք թագավորակա՞ն իշխանության հատկանիշներ են,
թե՞ նախարարական:

Հայաստանում կյանքն ավելի շատ ենթարկվում էր բարբե-
րին և սովորույթին, քան՝ օրենքին, և այդ պատճառով էլ իլուր է
այստեղ փնտրել հարաբերությունների օրենսդրական այն կանո-
նարկումը, որ նկատվում է արևմտյան ֆեոդալիզմի մեջ: Այն, ինչ
Արևմուտքում ձևակերպված է իրավական աղետի ձևով, Հայաս-
տանում հանդես է գալիս սովորույթի քողի տակ: Այս չի խանգա-
րում, սակայն, որ մենք զուգադրենք դրանք, քանի որ ֆեոդալական
օրենսդրությունը վավերացրել է միայն այն փաստական կարգը,
որ ստեղծել է կյանքը:

Այն, ինչ Ֆրանսիայում կոչվում էր *seigneurie*, Անգլիայում՝ *manor* և Գերմանիայում՝ *grundherrschaft*, հայերի մոտ կոչվում էր տէրութիւն և տանտէրութիւն կամ նախարարութիւն և նահապետութիւն: Սենյորը, ըստ այդմ, կոչվում էր տէր և տանտէր կամ նախարար և նահապետ: Մեզ հասած պատմական հուշարձաններում այս տերմինները հաջորդում են միմյանց որպէս պարզ հոմանիշ հասկացություններ, այն տարբերությամբ միայն, որ հեղինակներից մի քանիսը գերազանցապէս գործ են ածում գրանցից մեկը, իսկ ոմանք էլ՝ մյուսները¹:

Տերությունը կամ նախարարությունը քաղաքական տերմին է, որին համապատասխանող տերիտորիալ դադափարն է տուն, աշխարհ, զավառ և այլն: Այդպիսի տերիտորիալ միավորի կենտրոնը ուսանն էր, որ նշանակում է արքունիք, բառացի՝ շեմ և համապատասխանում է արևմտքի սենյորական *curtis domicalis*-ին, այլ կերպ այն կոչվում է գան, գանոյժ աթոռանիստ իմաստով²: Արշակունիները ունեին իրենց սենյորությունը *par excellence*. ինչպէս եկեղեցու գլուխը համարվում էր Հայաստանի կաթողիկոսը, բայց Այրարատի եպիսկոպոս, այնպէս էլ Արշակունի թագավորները հանդիսանում էին Հայաստանի թագաւորն եր և միաժամանակ՝ Այրարատի իշխանն եր: Ի տարբերություն իշխանական կալվածքների, նրանց հայրենական կալվածքները կոչվում էին թագավորական՝ աբուներ տուն, աբուներ ուստան:

Որ տանտերությունը հասարակ կալվածք չէր, այլ խնկապէս սենյորություն, այսինքն՝ պետական կարգի տերիտորիա, երևում է թագավորական իշխանության նկատմամբ նրա ունեցած հարա-

¹ Փավստոսը մեծ մասամբ գործ է ածում նախարար և նահապետ տերմինները: Տանուտէրը հազվադեպ է գործածված, ընդամենը յոթ անգամ, ընդ որում երեք անգամ նահապետի կողքին, էջ 130, 245, 246. անկախ գործ են ածված 52, 131, 164, 263 էջերում: Հազվադեպ են հանդիպում նաև տէր, տէրութիւն տերմինները տեխնիկական իմաստով, էջ 267, 261, 133, 208, 239, 250, 249, Փարպեցիին ընդհակառակը՝ չգիտեմ նահապետ տերմինը, նա գործ է ածում տանուտէր, տէր, նախարար: Եղիշեն նախապատմությունը տալիս է նախարարին և ոչ մի անգամ չի գործածում նահապետ կամ տանուտէր բառերը:

² Որոշ շրջանում Արշակունիների ուստանը Վաղարշապատն էր, Կամարուկաններինը՝ Երվանդաշատը, Արծրունիներինը՝ Հաղամակերտը, Բագրատունիներինը՝ Գարջնը, Ոչտունիներինը՝ Ուստանը և այլն:

բերությունից: Քաջ հայտնի է, որ տանտերական իշխանությունը տվյալ տոհմում ժառանգական էր և մի անդամից մյուսին էր անցնում ավագության իրավունքով՝ ճիշտ այնպէս, ինչպէս ֆեոդալական սենյորության մեջ¹: Չնայած դրան՝ գերագույն իշխանությունը միջամտում էր նախարարական դահլը ժառանգելուն վերաբերող հարցերին: Արշակունիների ժամանակ հայոց թագավորները, իսկ նրանց անկումից հետո պարսից արքաները մշտապէս հետևում էին, թե ո՞վ է ժառանգում տանտերական իշխանությունը: Պատմիչները նույնիսկ խոսում են այն մասին, որ թագավորը տանտերներ էր կարգում կամ բաշխում էր տանտերական պատիվ²: Ժառանգության խիստ կարգի գոյություն

¹ Եղիշեն, էջ 185, ցույց է տալիս ժառանգելու կարգը. «Էղեղարս կամ զորդիս կամ նըրարցն զորդին»: Ըստ ավագության ժառանգելու որոշակի փաստեր մենք գտնում ենք Փավստոսի մոտ Մամիկոնյանների տան վերաբերյալ: Այսպէս, օրինակ՝ Խոսրով թագավորի ժամանակ տոհմի նահապետն էր Արտավազդի որդի Վաչեն, նրանից հետո իշխանությունն անցնում է սրա միակ որդուն՝ Արտավազդին, «զի այլ յազգին ոչ գաւա հօծկու», էջ 28: Տիրանի օրոք, որպէս Մամիկոնյանների ներկայացուցիչներ, հանդես են գալիս Արտավազդը և Վասակը: Արշակը «կացցոյց զՎարդան զերէջ եղբայրն ի նահապետութեանն ազգին իւրեանց», էջ 67, այդ պատճառով էլ Վարդանը կոչվում է «մեծ նահապետ Մամիկոնեան տոհմին», էջ 106 և 120, «տանուտէր նահապետն Մամիկոնեան տոհմին երեց եղբայր Վասակու», էջ 130: Վարդանին հաջորդեց նրա մյուս եղբայրը՝ Վասակը, էջ 164, «չիլիմէ տանտետանէ Վասակայս» Վասակը միաժամանակ և սպարապետ էր: Նրանից հետո «լինէր սպարապետ» նրա որդի Մուշեղը, էջ 189, որ և հավանորեն նահապետ էր: Վարազդատը սպանեց Մուշեղին և սպարապետությունը տվեց Բատ Սահառունուն, իսկ «ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացցոյց Վաչէ անուն ի նմին տոհմէ», էջ 245: Երբ Մամիկելը վերադարձավ գերությունից՝ Վաչեն, «որ յառաջն լիալ էր նահապետ...» եւ զնա զպատիւ իշխանութեան, քանզի նա էր երէց յազգին, եւ Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանտէրութեան պատիւլ եւ Վաչէ լինէր երկրորդ», էջ 246: Մամիկելին հաջորդեց իր որդին՝ Արտաշիրը: Արտաշիրի որդին էր, հավանորեն, Սահակ փաթողիկոսի փեսան՝ Համազասպանը, որ ուներ երեք որդի՝ Վարդան, Համալակ և Համազասպանան. Փարպեցի, էջ 37: Տանտերը Վարդանն էր, իսկ նրանից հետո, մյուս եղբայրների վաղաժամ մահվան պատճառով տանտերը դարձավ նրա եղբորորդին՝ Վահանը:

² Փավստոս, էջ 67, Արշակ թագավորը Մամիկոնյան տոհմի նահապետ կարգեց Վարդանին, Վարազդատը՝ էջ 245, Վաչին, Մանվելը զրավելով գերազույն իշխանությունը, «կացցոյցանէր նահապետս եւ տեսարս դաւառաց զաւառաց», էջ 257: Փարպեցի, էջ 75, հետևյալ խոսքերն է զնում մարդպանի բերանը. «եռլ զտէրութիւն եւ զպատիւ հանեմբ յումերէ: Վասակի անկումից հետո պարսիկները «տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց» կարգեցին նրա թշնամուն՝ ուրացող Վարազ-Վաղա-

պայմաններում թվում է, թե թագավորի միջամտության անհրաժեշտություն չի եղել և տվյալներ էլ չկան, որ թագավորը գործեր ավագություն իրավունքին հակառակ Ակնհայտ է, որ տանուտերական պաշտոնների նշանակումները և բաշխումները, որոնց մասին խոսում են պատմիչները, պետք է հասկանալ այն իմաստով, որ թագավորը ճանաչում կամ վավերացնում էր օրինական ժառանգների իրավունքները: Եթե տանուտերությունները կրեին մասնատիրական կամ կալվածատիրական բնույթ, ապա թագավորի վավերացումը ավելորդ կզանալ: Տանուտերությունները ունեին կարևոր պարտականություններ և բարձրագույն իշխանություն կողմից տանուտերի վավերացումը իր պաշտոնում նպատակ ուներ ապահովել պետության նկատմամբ նրա ունեցած պարտականությունը, այսինքն՝ վասալական ծառայությունը:

Ճեռզալական աշխարհում վասալի մահով ընկնում էր նրա սեփականատիրական իրավունքը. սենյորը պետք է բարձրացնե՛ր այն նոր վասալի հանձնելու համար և, նկատի ունենալով իր իսկ շահերը, սովորաբար այդ իրավունքը նա թողնում էր մեռածի որդուն: Հայաստանում թագավորի կողմից տանուտերի ժառանգի իրավունքների ճանաչումը ընդհանուր երևույթ չէր.

Եին, էջ 85: Պարսից թագավորը առում էր, եթե նա մազզեզականություն ընդունի, զգուշանալիս որոշ զտանուտերութիւն տամ եւ զգահ եւ զպատիւ», էջ 97. «Ի պարսկաց զտանուտերութիւն գնեալ որացութեամբ» էջ 114. «ցոյց ինձ այր մի... որ թէ առաւելաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասեալ է ի տերութիւն, աչլ որեար ավազակ... ընդ կրակի փռոս դնեն եւ տէրութիւն», էջ 136: Վահանը պարման էր դնում, որպեսզի «ունեք յաղաքս մոզութեան զահ եւ պատիւ շտաք», էջ 161: Հենց ինքն էլ միշնորգում էր թագավորի առջև «շնորհել զտանուտերութիւն կամսարականին», որ և կատարվում է «եղիցի վասն զո առեալ զտերութիւն կամսարականին», էջ 175: Տանուտերներ կարգելիս նկատի էին առնվում ժառանգությունները, մերժելով Վահանի նույն կարգի միջնորդությունը Արծրունի իշխանների վերաբերյալ, թագավորը նշում է, որ անհրաժեշտ է սուպաս ինչ արժանաւորապէս ցոյցանել ստ մեզ եւ վաստակս ինչ յօղտաւ Արեւաց աշխարհիս վաստակել»: Եղիշ, էջ 25, թագավորը շնորհալուրկ է անում Գարեգին իշխանին, «հանեալ ի բաց զտէրութիւն ի նմանէ», էջ 217. «ամենայն հայրենի զաւառք հառան ի նոցանէ» նաև էջ 312: «Նտուք զմա զտէրութիւն Սիւնեաց», էջ 255: Թագավորը «խոտասցաւ տալ նոցա զիրաքանչիւր իշխանութիւն ըստ կարգի պատուոցն», էջ 377: Սիլբոս, էջ 65. «Նոսրովջ ստայ Սմբատայ զտանուտերութիւն իսկ նրա որդուն՝ «տոյզ զիշխանութիւն տանուտերութեան» էջ 97: Նրա որդուն՝ Սմբատին՝ «լորդի նորա զանդորանիկ կարգեաց արքայ ի պատիւ հար փրոյ, տուեալ նմա զիշխանութիւն քնիկ տանուտերութեան Ասպետութեան (ասպետների տոմից)», էջ 116:

զա շեշտվում էր բացառիկ կարևոր դեպքերում: Այդ ճանաչումը ուներ կալվածքին տիրելու Արևմուտքում բնորոշված ինվեստիտուրայի նշանակություն: Ինչպես հայտնի է, Արևմուտքում ի ն վ ե ս տ ի ա ու ր ա յ ի խորհրդանիշներ էին կանաչ ոստը կամ գուղձի կտորը, որպես հողի խորհրդանիշ, ինչպես նաև գլխարկը, մատանին, դրոշակը և այլն, նայած թե որտեղ ինչ էր բնորոշված: Դրա նման մի բան ենք տեսնում նաև նախարարական կյանքում: Մենք գիտենք, որ յուրաքանչյուր տանուտեր ուներ իր մատանին, որ միաժամանակ ծառայում էր իբրև կնիք. յուրաքանչյուր իշխանական տոհմ ուներ իր դրոշը, լայնեզր գլխարկին փոխարինում էր ապարոշը՝ պատիվը, որպես գլխի հարգարանք: Հայտնի են դեպքեր, երբ ապարոշը և մատանին տրվում էին տանուտերությունը հանձնելու ժամանակ՝ սա մի նշանակալից փաստ է, և նրանց տալիս է ինվեստիտուրային բնույթ¹: Այդպիսի նշանակություն ուներ, անտարակույս, նաև դրաշը²: Վերը մենք առիթ ունեցանք հիշատակելու ո ս տ ր և պ ս ա կ ր, որոնցով պարսից թագավորները մեծարում էին հայոց իշխաններին³: Թե ինչ են նշանակում դրանք, հայտնի չէ: Արևմուտքում հողեր շնորհելիս սուվերենը վասալին նվիրում էր կանաչ ոստ կամ գուղձ, որպես հողի խորհրդանիշ. ամենայն հավանականությամբ, ոստի կամ պսակի նվիրաբերումը հայերի մոտ ուներ նույնպիսի սիմվոլիկ նշանակություն:

Այդ հատկանիշներից բացի հայ տանուտերության սենյորական լինելը ցույց է տալիս նաև այն հանգամանքը, որ տէրալիւն բառը, որ տանուտերական տիրույթի հին և սովորական անվանումն էր, հետագայում ստացավ պ ե ս ու թ յ ա ն իմաստ: Մյուս կողմից տանուտերական տերիտորիան կոչվում էր աշխարհ, զաւառ, այսինքն՝ նշվում էր պետական բնույթ ունեցող տերմիներով: Այս ամենը հիմք է տալիս տանուտերությունը համարելու միջնադարյան ֆեոդալական սենյորության ոգուն համապատասխան

¹ Փավստոս, Գ, ժա, «Ի հայրենի բարձ զահուն մատուցանէին... առաջի թագաւորին զհօրն պատիւ ի գլուխ զնէին», Գ, բ, «առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին», Փովմա Արժուծի, էջ 272, «տայ մ ա տ ա ն ի ի ձեռս Աշոտոյ ե տիրացուցանէ ռեփտակ ժառանգութեան»:
² Նույն տեղում, Գ, դ, յուրաքանչյուր իշխանական տոհմ ուներ իր դրոշը, որոնք ի միջի ալլոց, ունենում էին նաև աղավետ պատկեր աղանաղորշ-աղանաղորշից, վարուժանի՝ վարժանականի՝ վարժանակ-անիւից կամ արծի՝ արծուէնչան:
³ Տե՛ս վերը, էջ 305:

սոցիալ-քաղաքական միավորը թե մոտավոր ձևով ինչպե՞ս էին ճշտվում տանուտերական իրավունքները, այդ մասին շատ քիչ ավելաներ կան: Արևմուտքում սենյորական իշխանությունն ընդգրկում էր կյանքի առավել կարևոր բնագավառները: Սենյորը ուներ օրենսդիր իշխանություն՝ *droit de ban*, և Քրատարակում էր սրոշումներ *constitutiones* կամ *assisiae*, որ պարտադիր էին նրան անմիջականորեն ենթակա տերիտորիայի սահմաններում: Եթե դրանք վերաբերում էին ամբողջ սենյորությանը, ներառյալ նաև ֆեոդերը, այդ դեպքում պահանջվում էր վասալների համաձայնությունը, և այդ նպատակով սենյորի պալատում գումարվում էին խորհրդակցություններ՝ *curia plenaria*¹: Փրենսդրաբյան իրավունքը հատուկ էր թագավորական իշխանությանը նաև Հայաստանում: Այգպիսի իրավունք այս կամ այն չափով անտարակոյս ունեին նաև նախարարները կամ տանուտերները: Եթե մեզ հասած աղբյուրներում օրենսգրական ակտերի մասին հիշատակումները հազվագյուտ են, ապա այդ բացատրվում է մասամբ նրանով, որ կյանքը ղեկավարվում էր գլխավորապես անցյալի քարացած ավանդույթներով, և օրենսգրական կանոնարկման ստիպողական կարիք չկար: Այդ միջավայրում ավելի շուտ գործում էին բարձր և սովորութիւնք, քան օրենքները²:

Յուրաքանչյուր նախարար, ֆեոդալական սենյորի նման, իր տիրույթներում դատավոր էր³: Արևմուտքում աղղեցիկ իշխանները որպես *seigneurs justiciers* դատում էին վասալներին: Հայոց թագավորը, որպես գերագույն սենյոր, այգպիսի իրավասություն ուներ իրեն ենթակա իշխանների նկատմամբ⁴:

Միջնադարի սենյորը վարչական գործերը վարում էր վասալների խորհրդի հետ միասին: Կային իշխանության դանազան մարմիններ՝ *ministeria*, որ սենյորները ստեղծում էին՝ հետևելով

¹ Luchaire, op. cit. p. 250 և շար.

² Հայերենում օրենքի գաղափարը արտահայտելու համար բառ չկա և գործ է ածվում իրանական փոխառյալ աւրէն բառը, որ ծագում է *daena*-ից:

³ Ինճինեան, Հնախօսութիւն, Բ, էջ 87, ճիշտ է նկատում, որ հուշարձաններում չենք հանդիպում անպիսի դեպքերի, որ թագավորները միջամտեին նախարարությունների ներքին գործերին, և դրանից եզրակացնում է, որ նրանք ակեխա էին:

⁴ Հմմտ. Աշտուղյաց Պատարեն իշխանի օրինակը, որ թագավորի հրամանով մահապատժի ենթարկվեց զավանանության համար, Փայտաս, Գ, ք:

թագավորներին: Առանձին կոմսերի և հերցոգների պալատներում տիրում էր թագավորական արքունիքի նիստուկացը. նրանք էլ ունեին իրենց *sénéchal, chambrier, connetable, bouteiller, chancelier*-ները, որոնք, պալատական ծառայության մեջ լինելով, միաժամանակ վարում էին վարչական պաշտոններ՝ ստանալով դրանք որպես *fiel-office*:

Հայ Արշակունիների կառավարման համակարգը բավական բարդ էր: Պաշտոնը կոչվում էր *գարծ, office*, իսկ նրանով օժտված անձնավորությունը՝ գործակալ, *officier*, այստեղից էլ ծագում է *գարծակալութիւն ministerium, office*, որի համապատասխան պարսկերեն արտահայտությունն էր *քարիկար, kartakāra* գարծ-կալ: Արշակունի թագավորների արքունիքում կային 900-ից ավելի գործակալներ: Այս թիվը, որ տալիս է Փավստոսը, անտարակոյս, չափազանցված է: Առավել կարևոր ֆունկցիաները մենք քննության առաջը վերը: Նրանք ընդհանուր շատ բան ունեին ֆեոդալական դարաշրջանի մեծ սենյորների և թագավորների արքունիքում գոյություն ունեցող բարձր պաշտոնների՝ *grands offices* հետ: Ինչպես Արևմուտքում, այնպես էլ Հայաստանում գլխավոր պաշտոնները ամբացվում էին աղղեցիկ գերդաստաններին իրրև ժառանգական սեփականություն: Բարձր պաշտոնյաներից առաջին տեղն էին զբաղվում *sénéchal*-ը և *chancelier*-ը: Առաջինը իր դիրքով սենյորության մեջ համարվում էր սենյորից հետո ամենակարևոր դեմքը. նրա նշանակությունը պայմանավորված էր գլխավորապես նրանով, որ նրան էր պատկանում բանակի հրամանատարությունը: Իսկ *chancelier*-ը պալատական պաշտոն էր, բայց նա միաժամանակ տնօրինում էր

¹ Ըստ Փավստոսի 900 մարդ նստում էր արքայական սեզանի շուրջը՝ չհավանաբար վրա կանգնածներին: Պարսկական աղբյուրներից հայտնի է հետևյալ դեպքը. «Պարսից խորովներից մեկը հրամայում է պետության բոլոր կողմերից խրախճանքի հավաքել ամեն տեսակ մարդիկ և տեղավորել նրանց որոշ կարգով: Միաժամանակ նշանակվում են որոշ թվով պաշտոնյաներ՝ հսկելու, պահպանելու, ըստ սովորության, պահանջվող կարգը»: К. Иностранцев, Материалы из арабских источников для кувльтурной истории сасанидской Персии. Приметы и поверья, 1908, p. 177: Խոսքը վերաբերում է մեզ ծանոթ գահերը սահմանելուն, Գահնամա է կին: Այն անձնավորությունները, որոնք հսկում էին կարգ ու կանոնին, հավանաբար, հենց նրանք էին, որոնք, ըստ Փավստոսի, մեռնում էին «տունկայս գործակալաց թեան սպասու», տե՛ս վերը, էջ 239:

պետական եկամտաների դործը, և հենց դրա մեջ էր նրա ազդեցութեան աղբյուրը¹:

Սենեչալի և շանսելյի ֆունկցիաները հիմնականում համապատասխանում էին հայոց պատասխանատու պաշտոններին՝ սպարապետութեանն ու հաղարապետութեանը: Ինչպես յուրաքանչյուր ֆեոդալական պետութեան մեջ Հալաստանում ևս թագավորին ենթակա հողի մի մասը գտնվում էր իշխանների տիրապետության տակ, որոնք կառավարում էին իրենց բաժինը, մի մասն էլ օգտագործում էին գյուղացիները: Ըստ այդմ անհրաժեշտ էին նախ և առաջ երկու մարմիններ՝ մեկը «ի վերայ իշխանութեան» և մյուսը՝ «ի վերայ շինականութեան»: Իշխանների պարտականությունները ինքնակալ թագավորի նկատմամբ հանդիսանում էր նրան զինվորական օգնություն ցույց տալը՝ հեծելազոր արամադրելը, այդ պատճառով նրանց գլուխ կանգնած անձը հանգիստանում էր սպարապետ, բանակի պետ: Իսկ հաղարապետը վարում էր հարկատու բնակչության՝ գյուղացիության գործերը: Գյուղացիական համայնքների ներքին կազմակերպության մասին ոչինչ հայտնի չէ: Գիտենք, որ այնտեղ կային գլխավորներ, որոնք կոչվում էին դասապետ կամ գեղջապա, որոնց կարելի է համեմատել Ֆրանսիայում գոյություն ունեցող *doyens* = *decani* և *maires* = *maiores*-ի հետ²:

Մենք բիշ բան գիտենք նաև այն մասին, թե ինչպես էին կառավարվում իշխանությունները: Նրանք իրենց տիրույթների ծավալի համապատասխան հավանորեն ունեին համապատասխան վարչական մարմիններ, ինչպես թագավորը³:

Մենք տարբերեցինք սենյորական պարտականությունները

¹ Luchaire, *op. cit.*, p. 262, dans la plupart des États féodaux, le plus important des hauts fonctionnaires est le sénéchal. Apres le duc ou le comte, il est le souverain en second de la seigneurie; il dirige la justice et l'administration locale, commande l'armée... Le chancelier est un personnage non moins considérable... il est percepteur et collecteur perceptuel de tous les revenus du comté.

² Luchaire, *op. cit.*, p. 264, Փավստոսի մոտ դասապետը Գ ծա = գեղջապա, Գիբ բղրոց, էջ 41 = գիւղապետ, Մովսես Կաղանկատվացի, էջ 124:

³ Բազրատեմիների մոտ է գտնվում ժողովրդի մեջ էր Գիմարտեան իշխաններից մեկը սկզբնալ էր ի վերայ տան իւրոյ հաւատարիմ և կամակարար, Սերնու, էջ 63:

Ֆեոդալների կամ վասալների պարտականություններից: Այդ իմաստով ֆեոդալական հարաբերությունները կլակետ ունենին *hommage* և *fidelite* = *hominium* և *fidelitas*: Սրանցով էր սահմանվում ֆեոդալի՝ իբրև հողն օգտագործողի կախումը հողի սեփականատիրոջից՝ սենյորից, այսպես կոչված l'engagement de vasselage: Հավատարմության և հոմաժի գաղափարից բխում էին վասալական պարտականությունները, որոնք իրականում պահպանվում էին հողի օգտագործմամբ: Դրանք գլխավորապես արտահայտվում էին *auxilium*-ով և *consilium*-ով՝ կառավարմանը սենյորության մասնակցությամբ:

Ֆեոդալական հիմնական պարտականությունները կարելի է տեսնել նաև նախարարական կյանքում: *Hominium*-ը (*homo*-ից) հենց այն է նշանակում, որ տվյալ անձը իրեն համարում էր սենյորի մարդը, *homo*-ն, որ և վավերացվում էր երզումով: Այն երզումուխար, որ հայ իշխանները տալիս էին թագավորին՝ նրա հավատարիմ ծառան լինելու, նույնանման ակտի նշանակություն ուներ: Ուխտը հաստատվում էր երզումով, ընդ որում նրա խորհրդանշանն էր աղը¹: Ուխտի միջոցով կողմերից մեկը ստանձնում էր տերությունն ու խնամակալությունը, իսկ մյուսը՝ հավատարիմ ծառայությունը և հնազանդությունը²:

Վասալի զինվորական պարտականությունները հետևյալ երեք տեսակ ծառայություններն էին՝ զինվորական ծառայություն *service d'ost et chevauchée*, սյուզերենի դոլակի պահպանությունը՝ *estage* և սյուզերենի պահանջով սեփական դոլակը նրան հանձնելը³: Զինվորական ծառայությունը պարտադիր էր նաև

¹ Իշխան Մերուժան Արծրունին, դավաճանելով Արշակին, գնում է պարսից թագավորի մոտ և օգնել ընդ նմա ուխտ երզմամբ, զի լախտեան ծառայ լիցի նմա», Փավստոս, Գ, ից: Արշակ թագավորը «խնդրել հաւատարիմ երզումն ուխտիս և պարսից թագավորը «եստ բերել... աղ կիքել վարազ նկարագիր մատանեա», Փավստոս, Դ, Ժգ: Սերնուսի մոտ, էջ 43, «եստ տանել աղ կիքեալ երզումն»: Ըստ Պրոկոպիոսի *Pers.*, I, 4, p. 20, պարսից Պերոզ թագավորը հոների առջև երզում է աղի վրա էջ օձ (sc. ձև) τὸν ὄρχον Περόζης ὤμοσε. Սիլի, էջ 159, պարսից թագավորը «խնդրել վկայութիւն հաւատարմութեան և երզմամբ լուխտ մտանել առաջի նոցա»:

² Փարսեցի, էջ 48, «մեր առ ձեզ տէրութիւն և խնամարկութիւն եւ ձեր առ մեզ արգարութեամբ ծառայութիւն և հնազանդութիւն»:

³ Luchaire, *op. cit.* p. 195.

նախարարական միջավայրում: Արևմտյան Եվրոպայի վասալների նման հայ նախարարներն էլ պարտավոր էին թագավորի պահանջով իրենց հեծյալ շոկատներով ներկայանալ մասնակցելու ռազմական ձեռնարկումներին կամ պատերազմին *hostis* և կամ արշավանքներին *chevauchée* = *cavalcata*, ասպատակ, Զորանամակում եղած նախարարական հեծելազորի ցուցակը, որ քննությունն առանց վերևում, մեզ գաղափար է տալիս նախարարությունների զինվորական ուժի մասին: Արևմուտքում առաջին կարգի բարոնությունները սյուզերենին տրամադրում էին մի քանի հարյուր հեծյալ. մինչդեռ Ֆլեմիշ տալիս էր միայն մեկ հեծյալ. հաճախ մի քանի Ֆլեմի միասին տալիս էին միայն մեկ զինված մարդ¹: Ըստ Զորանամակի հայ իշխանները այդ տեսակետից բաժանվում էին մի քանի խմբերի, ընդ որում, Զորանամակից դատելով՝ ոչ մեկը հիսուն հեծյալից պակաս չէր տալիս²:

Արքայական բերդերը պահպանելու պարտականությունը, այսպես կոչված *estage*-ը, հայերի մոտ դրված էր որոշակի տոհմի վրա և մյուս ժառանգական կոչումների նման հանդիսանում էր նրա ժառանգական սեփականությունը: Մոփրում և Անգեղտանը գտնվող արքայական ամրոցների պահպանությունն ու վերահսկողությունը վստահված էր Մարդպետ իշխաններին³: Պարսիկների մոտ այդ պաշտոնը համարվում էր շատ պատվավոր. այն տրվում էր թագավորական ընտանիքին պատկանող անձի, որ և կոչվում էր *argbed*, հին *arkapat*⁴:

Յուրաքանչյուր իշխանության մեջ Արշակունի թագավորներն ունեին իրենց ամրոցները: Իշխանական ամրությունները նրանց համար հանդիսանում էին *jurabilia et reddibilia*, որ ֆեոդալական սովորույթով պահանջվում էր Արևմուտքում: Հայաստանում

¹ Luchaire, *op. cit.*, p. 196.
² Հայերը հեծելազոր հավաքում էին նաև գյուղացիներից, ինչպես այդ ընդգրկված էր պարթևների մոտ *exercitum non ut aliae gentes liberorum, sed maiorem partem servitorum habent, տն՝ս վերը, էջ 386: Այստեղից էլ ռամիկ հեծեալ, զեղրուկ հեծեալ արտահայտությունները:*
³ Փավստոս, Ե, է, «հավատարիմ զանձուց Անգեղ բերդին և ամենայն բերդացն արքունի, որ ի կողմանս յայնս»:
⁴ Nöideke, *Tabari*, p. 5 և 111: Հանդիպում է պարսկական արձանագրությունների մեջ՝ ἀργαπέτης, Levy, *ZDMG*, XVIII, 89: Բառը ծագում է պարս. *اړگ* բերդ = լատ. *arx* և նշանակում է բերդակալ:

թագավորության վերացումից հետո պարսիկները երկրի զանազան մասերում գրավել էին բազմաթիվ ամրություններ, որտեղ պահում էին մշտական կայազոր¹: Պետք է ենթադրել, որ այդ վայրերը նրանց անցան ոչ թե նվաճելու միջոցով, այլ իբրև Արշակունիներից ստացած ժառանգություն:

Հայ իշխանները ունեին նաև *consilium*-ի նմանվող մի այլ պարտականություն: Տարակույս չկա, որ հայ ավագանին մասնակցում էր երկրի կառավարմանը: Պաշտոնատար մարմինների բազմաքանակ անձնակազմը համարվում էր բացառապես իշխաններից: Բացի դրանից, իշխանները հաճախ հավաքվում էին թագավորի մոտ՝ նրա հետ միասին քննարկելու արտաքին և ներքին քաղաքականությունը վերաբերող զանազան հարցեր: Կարևոր դեպքերում թագավորը ինքն էր հրավիրում նրանց, իսկ երբեմն էլ սեփական նախաձեռնությամբ իրենք էին ներկայանում: Տրդատի որդի Խոսրով թագավորին է վերագրվում այն որոշումը, որ հազարից ոչ պակաս հեծյալ ունեցող առավել ազդեցիկ իշխանները մշտապես մնային թագավորի պալատում և շրջին թագավորի հետ²: Սակայն դեռևս Կյուրոսը պարտականություն էր դնում նրանց վրա, ովքեր հող և իշխանություն ունեին, որպեսզի ժամանակի մի մասն անցկացնեին սատրապի պալատում և այնտեղ զաստիարակեին իրենց երեխաներին: Այդ սովորությունը, ինչպես երևում է, ընդունված էր նաև Հայաստանում:

Ֆեոդի բնորոշ կողմերից մեկը հիերարխականացման հակումն էր: Ժամանակի ընթացքում ֆեոդը կարող էր աճել և՛ տերիտորիալ, և՛ քաղաքական առումով: Այն ժամանակ նրա տերը հողից որոշ բաժիններ առանձնացնում և վասալական հիմունքներով

¹ Եղիշե, էջ 125, «յարձակեցան ի վերայ բերդիցն և առնիցն, զոր ունին պարսիկն ի տեղիս յամրոցս աշխարհին» Արտաշատ, Գառնի, Անի, Արտազես և այլն:
² Փավստոս, Բ, ժդ, «միաժողով Եղեալ մեծամեծք նախարարացն... խորհուրդ խորհեցան», Բ, իա, «ժողովեցան ի մի ժողով... նախարարք մեծամեծք, աւագք, և այլն, Գ, գ, «ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց» և այլն, ինչպես նաև Գ, ա, 165 և այլն: էջ 242, «մեծ նախարարն... սկսան ըստ կամաց իրեանց վարել զթագաւորն» և այլն: Դադար Փարսեցին հիշատակում է բազմաթիվ դեպքեր, երբ նախարարները հավաքվում են խորհրդի:
³ Նույն տեղում, Գ, ք, Դատարենի զավաճանության առիթով:

տալիս էր իր մերձավորներին: Մնալով իր սենյորի վասալը՝ նա իր հերթին միաժամանակ դառնում էր փոքրիկ սենյոր: Տեղի էր ունենում հողերի և անձերի ենթաֆեոդացում: Նոր հողաբաժինները և անձինք գլխավոր սենյորի նկատմամբ համարվում էին ենթաֆեոդներ և ենթավասալներ՝ *arrière-fiefs*, *arrière-vassaux*:

Նմանօրինակ երևույթ նկատվում է նաև հայոց ֆեոդալական կյանքում: Այստեղ ֆեոդերի մասնատումը տեղի է ունենում առհմի սահմաններում և մայրաքաղաքի թուլացման և կազմալուծման հողի վրա: Ֆեոդի անօտարելիությունը և անբաժանելիությունը, մենաժառանգության համակարգի գեպըմ, հատուկ էին ֆեոդալական աշխարհին և ժառայում էին սենյորի անմիջական շահերին, որովհետև այդ պայմաններում լավագույնս ապահովվում էին վասալական պարտավորությունները: Եթե հողը հավասարապես բաժանվեր ժառանգների միջև, ապա շուտով վասալները կզրկվեին հողային ապահովումից, որ անհրաժեշտ էր վասալական ժառայություն կատարելու համար: Այդ պատճառով էլ սենյորները պաշտպանում էին ֆեոդի ամբողջականությունն ու ժառանգման ավագության իրավունքը: Բայց հետզհետե իրավահավասարությունը իր համար ճանապարհ էր հարթում: Սկզբում որպես զիջում ժառանգելու արտոնություն էր տրվում նաև մյուս որդիներին, սակայն հողի ամենալավ մասը հատկացվում էր ավագ որդուն, և նա էլ պատասխանատու էր թե՛ իր, և թե՛ իր եղբայրների համար: Միայն նա էր հոմած տալիս և ինվեստիտուրա ստանում: Բայց, ի վերջո, իրավահավասարության սկզբունքը հաղթանակեց:

Հայրենական ստացվածքի ժառանգության կարգը և անդրանիկության սկզբունքը հնուց ի վեր հայկական ֆեոդալիզմի հատկանիշներն են եղել: Այս սկզբունքների աստիճանական թուլացման հետևանքով ծնունդ է առնում այն իրավունքը, որ կոչվում է սեպուլնական, Մ ե պ ու հ ը, ինչպես տեսանք, նշանակում է տ ո հ մ ի ո ռ դ ի և նախարարական շրջանում հանդիսանում էր տեխնիկական տերմին՝ իշխանական տան յ ու ր ա ք ա ն շ յ ու ր անդամին նշելու համար: Ճանտերերից կամ տան գլխավորից բացի, առհմի մյուս բոլոր անդամները համարվում էին սեպուհներ: Գրավոր հուշարձանների մեջ անխտիր այդպես են կոչվում տանտերի ե ղ բ ա յ

ր ը, ո ռ դ ի ն, ե ղ բ ո ռ ո ռ դ ի ն և առհասարակ տանտերի ա զ գ ա կ ա ն ը ՚:

Քանի զեռ դրծում էր մենաժառանգության համակարգը, տանտերական իշխանությունը տանտերի մահից հետո անցնում էր սեպուհներից ավագին՝ մեծ կամ ավագ սեպուհին:

Ժամանակի ընթացքում խախտվում է իշխանական հողի անբաժանելիության սկզբունքը, և սեպուհները սկսում են պահանջել իրենց բաժինը: Առաջ է բաշվում հողատիրության նոր կարգ, որի հետևանքով վերջինս բաժանվում է ժառանգորդ սեպուհների միջև: Այսպիսով առաջ է գալիս հողատիրության և ազնվականության մի նոր աստիճան: Հողի այն կտորը, որ բաժին է ընկնում սեպուհին, կոչվում է սեպուհական, իսկ սեպուհների դասը, որպես ազատ մարդկանց դաս՝ սեպուհական ազատութիւն:

Սեպուհության առանձնանալու և ինքնուրույն հաստատություն

1 Փարպեցիի սեպուհ է կոչում տանտերին:

ա) եղբորը, «մեծ սեպուհ Մամիկոնէից, եղբայր Վարդանայ=Հմայակ, էջ 52, 74: Վարդան ուներ եւ մի եղբայր՝ Համազասպեան անունով, էջ 37: Վարդան տանտերի երկու եղբայրներից ավագը Հմայակն էր, այդ պատճառով էլ նա կոչվում էր «մեծ սեպուհ»: Տոհմի տանտերի՝ Վահան Մամիկոնյանի օրոք նրա եղբայր Վասակը կոչվում էր սեպուհ Մամիկոնէից», էջ 122:

բ) որդուն, «սեպուհ մի Ռեծացի, որդի Կողթեկայ իշխանին Ռեծայ», էջ 121:

գ) եղբորորդուն, «Վահանը արձակէր զիւր եղբորորդի մի, զորդին Կահատաւէ կին Վասակայ Գրիգոր... սեպուհն Մամիկոնէից Գրիգոր», էջ 171—2:

դ) ազգակառից, Անձեացոց Սեուկ իշխանն ուներ մի ազգակից Յոհան անուշեով, որին պատմիչը կոչում է «Անձեացոց սեպուհ... յունայ պատասխանի յազգակցին Յոհանայ, իշխանէն Անձեացեաց Սեուկ» էջ 137: Սեպուհ է նաև Վառազ-Վաղանը, որպես «այր մի ի տոհմէն Սիւնեաց», էջ 39, Վասակի փեսան՝ «փեսայացեալ իշխանին Սիւնեաց Վասակայ, սեպուհ Սիւնեաց, էջ 40, 41: Պարզ չէ, թե նա սեպուհ էր կոչվում որպես Սյունյաց տոհմի անդամ, թե՛ իբրև Վասակ իշխանի փեսա:

ե) Արեւոտը սեպուհ է կոչում միևնույն տոհմից երեք հոգու, էջ 50, «սեպուհքն Վահուհեթ՝ Մամուէլ, Սարգիս եւ Վարագ-Ներսէս», իսկ նրանց տանտերն էր «եսորով Վահուհեաց տէր», էջ 56, 58: Մյուս պատմիչների մոտ հազվադեպ է հիշատակվում սեպուհ բառը: Փաղտոսի մոտ այն հիշատակվում է միայն երկու անգամ՝ «Գնել մեծ սեպուհն Արշակունի, եղբորորդին Արշակայ», էջ 124, 129 և «Համազասպեան սեպուհ մի ի Մամիկոնեան տոհմէ», էջ 249: Նղիշի մոտ նույնպես երկու անգամ՝ «սեպուհք ոմանք յայլմէ-տոհմէ», էջ 137, [=Փարպեցի, էջ 67], «սեպուհ մի ազգէն Ամատունեաց», էջ 197, [=Փարպեցի, էջ 69]: Սերբեսի մոտ միայն վերահիշյալ տեղը:

Երբ որ և նոր տեղի տանտերն անգամ մեծ սեպուհ սեպուհուց գնե պղծման

կազմելու պրոցեսին դժվար է հետևել: Ս դարի դեպքերի մասին պատմող պատմիչների մոտ արդեն նկատվում են սեպուհների ինքնուրույնության որոշ նշաններ: Սեպուհները տանուտերների կողքին ամենուրեք հանդես են գալիս որպես մի տեսակ անկախ մարմիններ: Հայերի ապստամբության ժամանակ նրանք տանուտերների հետ միասին հրավիրվեցին պարսից արքունիք բանակցություններ: Ապստամբության ժամանակ վավերագրերը հաստատվում էին ոչ միայն տանուտերների, այլև սեպուհների կնիքով, և առհասարակ բոլոր կարևոր դեպքերում սեպուհները հանդես են գալիս տանուտերների հետ անբաժան¹:

Սեպուհական իրավունքի սկզբնավորությունը վերաբերում է Արշակունյաց շրջանից հետո ընկած ժամանակներին: Խորենացին պատմում է, որ Արշակունյաց տան մեջ մի սովորություն կար, որի համաձայն արքունիքում միայն գահաժառանգն էր մնում, իսկ թագավորի մյուս որդիներն ու ազգականները ապրում էին հատկապես նրանց համար առանձնացված գավառներում՝ սկզբում Հաշտյանքում, իսկ հետո նաև՝ Աղիովիտում և Առքերանում: Եկավ մի ժամանակ, երբ այդ գավառները նեղվածք էին, և նրանք դիմեցին թագավորին, որ ընդարձակի իրենց կալվածքները, բայց թագավորը մերժեց նրանց խնդիրը և «հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունին հաւասար արոհել յինքեանս, զոր բաժանեալ ըստ մարդաթուի»²: Այն ժամանակ ըստ մարդաթվի կատարեցին նոր հողաբաժանումներ և Արշակունի իշխաններին հավասարապես տեղավորեցին վերոհիշյալ գավառներում:

Այդ պատմության մեջ ամենից ստույգը և արժեքավորը ըստ մարդաթվի 4ողաբաժանման Արշակունիների մոտ ընդունված սո-

¹ Ըստ Փարպեցու պարսից թագավորին ուղարկվելիք պատասխանը կազմում են «առաջ տանուտեարք հանդիճ աագ սեպուհ», էջ 75: Թագավորի հրամանով նրան պետք է ներկայանալին «ամենայն տանուտեարքն և աագ սեպուհը», էջ 47: Թագավորը հարցում արեց «ցհայոց տանուտեարան և ցսեպուհան» էջ 49: «Դուք, տանուտեարք և սեպուհը» էջ 53, 54, 55 և այլն: «Ամենայն տանուտեարամբքն և սեպուհը հաստատելին զերդումն և որոց մատանեալ լիս ևս էր փնթալ զաւտաբանն կնքելին», էջ 61: «Կնքեալ նախ մատանեալ իշխանին Սիւնեաց Վասակայ ևս ապա մատանեօք ամենայն տանուտերացն հայոց ևս աագ սեպուհացն», էջ 62: «Եւս խարարք և սեպուհը» էջ 73 և այլն, և այլն:

² Խորենացի, Բ, իր և կր:

վորություն մասին հիշատակությունն է: Թագավորական տունը ներքուստ հիմնված էր նույն սկզբունքների վրա, ինչ որ իշխանական տոհմերը և անշատ հողատիրության սովորությունը, որ հիշատակում է պատմիչը, ընդհանրապես ուժի մեջ էր նաև իշխանական միջավայրում: Այս երևույթը, սակայն, չի վերաբերում Արշակունիների ժամանակներին, ինչպես ներկայացնում է պատմիչը: Այստեղ մենք գործ ունենք պատմիչի ժամանակ գոյություն ունեցող կարգի արտացոլման հետ, որը նա վերագրում է հնագույն ժամանակներին: Ժառանգական կալվածքի բաժանումը գերդաստանի անդամների միջև սեպուհական իրավունքի արտահայտությունն է: Այն զարգացավ, ըստ երևույթին, Զ դարում: Դվինի 641 թվականի եկեղեցական ժողովի ժամանակ արդեն բավականին հստակ ձև էր ստացել: Ժառանգական ստացվածքները ըստ սեպուհական իրավունքի բաժանելու ժամանակ տեղի էին ունենում մասնավոր վեճեր, որոնց մասին էլ հիշատակում է Խորենացին: Դեռևս նրա օրոք պարսկերեն և հունարեն լեզուներով կալին դատական հայցի հարուստ վավերագրեր: Պատմիչը դրանք ունեցել է իր տրամադրության տակ և պնդում է, որ վավերագրերի մեծ մասը վերաբերում էր սեպուհական ժառանգական իրավունքին²:

Հետագայում սեպուհ, սեպիական բառերը ստացան սեպականի իմաստ: Ներկայումս հայոց լեզվում սեպականության գա-

¹ Հիշյալ ժողովի կանոններից մեկը սկսվում է՝ «յորժամ ազատք զիրանց զերդ և զմարդ բաժանեն», Եղիշի մոտ Աղվանից թագավորը, ստիպված լինելով հրաժարվել գահից, պարսից արքայից «իսնդրիաց դմանկութեան սեպականն, զոր հօրն իրոյ շեռհեալ էր նմա ի տղայութեանն՝ հազար երդ», էջ 381: Այս վիսյությունը գտնվում է Ը դլխում, որ, անտարակույս, տարբեր և համեմատարար ավելի ուշ ժամանակվա ծագում ունի, քան մյուս դուխները:

² Խորենացի, Ա, գ, «զիրոյից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ դտանին անբաւ զրոցաց մատաներ, մանաւանդ որ ի սեպական ազատութեան պայաջատութիւնս: Առանձնականութեանց բառն այստեղ հանուրց-ին հակառակ նշանակություն չունի, ինչպես վարդ է թվալ (և ինչպես հասկացել է Ն. Մառը իր թարգմանության մեջ Ի. Զալախովի աշխատության մասին գրած հիշյալ հոդվածում): Դարձվածքի երևում է, որ վեճերը ծագում էին զլիավորապես սեպական և ժառանգությունը բաժանելիս: Իր բաժինը ստանալով, սեպուհը դուրս էր գալիս ընտանիքից, դառնում առանձնական: Այդ կարգի առանձնականութեանց համար էլ հատկապես վեճեր էին ծագում:

զափարն արտահայտելու համար սեպտեմբերի 16-ից բացի ուրիշ բառ չկա: Հին հուշարձաններում այս բառը գործ է ածվում նաև որպես ժառանգ, ժառանգություն բառերի հոմանիշ: Վերջին իմաստը հեշտ է բխեցնել սեպտեմբեր ամսի սկզբից սեպտեմբերի 15-ը, և, ըստ երևույթի, հենց սա էլ հանդիսացել է փոխանցման աստիճան գեպի սեպտեմբերի 16-ը:

Սեպտեմբերի կարգը, դուրս վանելով անդրանիկության իրավունքը, խաբխում էր նախարարության հիմքերը. հասկանալի է, որ հուշերի բաժանման և վերաբաժանման հետևանքով նախարարական տիրույթները պիտի մանրանային: Բնական է, որ իշխանական գերզատանների տրոհման դեմ երբեմն ձեռք էին առնվում արհեստական միջոցներ, օրինակ, մերձավորների միջև թույլատրվում էին ամուսնությունները, որպեսզի պահպանվի տիրույթների ամբողջությունը¹:

Տոհմից անշատված սեպտեմբերի վիճակը անտրոշ է: Հայտնի չէ, թե իր տոհմի տանուտերի նկատմամբ ինչ հարաբերությունների մեջ էր մտնում այն սեպտեմբեր, որը իր հողարածնով դուրս էր գալիս տոհմից: Տեր դառնալով համեմատաբար ոչ մեծ հողային սեփականության, նա շեր կարող հուսալ, որ ինքնուրույն վիճակ կստեղծի իր համար: Ըստ մի քանի ակնարկների՝ առանձնացած սեպտեմբերը ավելի զորավոր իշխանների հովանավորության տակ էին մտնում և ծառայությամբ կապվում էին նրանց հետ: Ք զարում Աշոտ իշխանի թիկնապահն էր սեպտեմբերը, որը անձնավորություն էր նրա մոտ կային ուրիշ սեպտեմբեր ևս, որոնք զանա-

¹ Ըստ Խոսրովի «սեպտեմբերի ամսի սերուն և անհակառակելիքն»:
² Խորենացի, Գ, Ի, «զմերձաւորաց ինամուծիւն զոր վասն ազանելոյ սեպտեմբեր արզաւթեանն անէին»: Խոսրը վերաբերում է այդ կարգի ամուսնությունների արգելմանը ներսես կաթողիկոսի կողմից: Փավստոսի բնագրում կարգում ենք՝ «սեպտեմբեր ամսի ի մերձաւոր և յազգին առճակից խառնակութեան ամուսնութենէն. և մանաւանդ ի մերձաւորական ի նուոց և որ զամ մի այսմ նման լիալ էր ինչ, Գ, դ: Մերձավորների ամուսնության զրգապատճառների մասին Փավստոսը ոչինչ չի ասում: Իր տեղեկությունները բաղելով Փավստոսից, Խորենացին իր կողմից բացատրություն է տալիս, ենթադրելով, որ այդպիսի ամուսնության նպատակն էր սեպտեմբերական ազատություն ժառանգել: Եվ իսկպես, եղբայրը, ամուսնանալով իր հարսի (եղբոր կնոջ) հետ, պետք է տիրանար իր եղբոր սեպտեմբերական բաժնին: Խորենացու մեկնարանությունը բնորոշ է ժամանակի կարգերի համար, և ոչ թե Փավստոսինը, որի մոտ ներսեսի փանոնագրությունը հանդիսանում է նախ և առաջ ակնարկ Արշակի արածի նկատմամբ:

զան պարտականություններ էին կատարում: Այդպիսի վիճակում հայտնված սեպտեմբերը նմանվում են վասալի: Որպես անկախ հայրենական հողերի տերեր, ալլոդիալ սեփականատերերի նման նրանք ևս ազատ էին ծառայելու իրենց տանուտերներին կամ ծառայության մտնելու ուրիշ մոտ: Քաղաքական պայմանները կասեցրին սեպտեմբերական հաստատության զարգացումը, որի հետևանքը եղավ ֆեոդալական ուժերի կենտրոնացումը և մի քանի խոշոր մարմինների առաջացումը, որոնք էլ կլանեցին մանր սեփականատերերին:

Պատմիչների մոտ հիշատակվում է ազատ մարդկանց ևս մի հատուկ դաս. դրանք, այսպես կոչված, ո ս տ ա ն ի մ ա ր դ ի կ կ ա մ ո ս տ ա ն ի կ ն ե ր ն են²:

Ոստան, ինչպես մենք տեսանք, նշանակում է արքունի դուռ, իսկ ոստանիկ՝ դրանիկ, ազնվական: Ոստանիկ-ազատությունը իր անվանումով զուղադիպում է ոստական ДВОРЯНСТВО-ին: Իսկ իր նշանակությամբ ոստանիկը համապատասխանում է աբուսինի, արքայական բառին, որով նա երբեմն փոխարինվում կամ մեկնաբանվում է: Ոստան էր կոչվում իշխանական յուրաքանչյուր պալատ, բայց այն գերազանցապես գործ էր ածվում թագավորի պալատ իմաստով, իրրև նրանցից ամենակարևորը, իսկ երբեմն էլ նշանակում էր ամբողջ հայրենական տիրույթը, դոմենը: Ոստանիկ-ազատությունը, ինչպես ցույց է տալիս հենց այս անվանումը, սերտ կապ ունի թագավորական պալատի՝ արքունիքի հետ: Ինձ թվում է, որ ոստանիկները նույն կապն ունեին արքայական տան հետ, ինչ որ սեպտեմբերը՝ նախա-

¹ Փովմա Աբդուլի, էջ 131, «Վահրամ սեպտեմբերի կնանկաց: իշխանին... և այլք ի սեպտեմբեր պաշտեմէից»: Այդ նույն Վահրամի մասին 134 էջում ասված է. «Վահրամ, որ և թիկնապահ իշխանիս: Հետաքրքրական է, որ Փովմա Աբդուլու մոտ սեպտեմբեր մի սեպտեմբեր անունով կոչվում է և հիշատակվում է, ինչպես որ հին հեղինակներն էին անում, առանց մատնանշելու այն տոհմը, որին իբրև սեպտեմբերականում էր տվյալ անձը, սեպտեմբեր Գալիթ, սեպտեմբեր Սահակ էջ 109: Լաստիվերացու մոտ, էջ 40, հանդիպում ենք սեպտեմբեր զունդն ազատաց ելեալ ի հայրենեաց... մանչին ուր և են»:
² Նդիշե, էջ 173, «բազում և այլ ազատ մարդիկ, զոր ոստանիկան անուանեն յարքունի տանէ»=Փարպեցի, էջ 67 «և այլք յոստանկաց», էջ 19, «զազատ և զազատորդի և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ», էջ 136 «այսրոնի յարքունի տանէ», էջ 137 «զորս յարքունի տանէն», նաև էջ 370: Փարպեցի, էջ 73, «նախարարք և սեպտեմբեր, ոստանիկք և ռամիկք», էջ 170, «նախարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկանէ», Խորենացի, Ա, լ «զոստանն անուանեալ ազատութիւնս»:

բարականի: Ոստանիկ-ազատության ծագումը և նրա էությունը հետաքրքրել են դեռևս հորենացուն: Բայց պատմիչը, ըստ երևույթին, ձեռքի տակ այնքան տվյալներ չի ունեցել, որքան ունենք մենք: Նա այն եզրակացությունն է հանգել, որ ոստանիկները ծագում են այն շուրս գնդերից, որոնք իբր թե Հայկի տոհմից սերված հին թագավորների սերունդներից կազմել էր Վաղարշակ թագավորը՝ արքունի դաան պահպանության համար: Հետագայում, ըստ նույն պատմիչի վկայության, պարսիկները գնդեր են կազմել ուրիշ անձերից և անվանել են ոստան *ostan*, ընդ որում հորենացին չգիտե, թե այդ ինչու տեղի ունեցավ. արդո՞ք այն պատճառով, որ նախկին տոհմերը սպառնալի էին, թե՞ նրանք հեռացվել էին ինչ-որ բարոստ արարքի համար, և նրանց փոխարեն կազմվել էին աբխազի կոչվող ուրիշ գնդեր: Պատմիչը պնդում է միայն այն, որ նախկին գնդերը ծագում էին առաջին թագավորների տոհմից, ճիշտ նրանց նման, որոնք նրա օրոք վրացիների մոտ սեփծուղ էին կոչվում¹:

հորենացու դատողությունները անտարակույս հիմնված են մեր նշած այն տվյալների վրա, որ կան Փարսիցու և Նդիշի մոտ: Նկատելով, որ դրանց մեջ ոստանը պարբերաբար հաջորդում է աբխազիին, պատմիչը իրավացիորեն եզրակացնում է, որ նրանք նույնն են և գուշակությամբ ընդունում է, որ առաջին անվանումը ավելի հին է՝ Արշակունյաց շրջանից, իսկ երկրորդ վերաբերում է Սասանյան դարաշրջանին: Որ ոստանիկ գնդերը գոյություն ունեին, այդ կարելի է եզրակացնել պատմիչների այրումի կամ զօրս յաբխունի սանէ խոսքերից, բայց որ նրանք նախատեսված էին արքունիքի պահպանության համար և թվով շուրս էին, այդ պատմիչի ենթադրությունն է, որ նա արել է Արշակունյաց արքունիքի շուրս դահերից բղեջիների մասին եղած տեղեկության ազդեցությամբ²: Մեր պատմիչի լուսաբանությունների մեջ հավաստին այն է, որ ոստանիկները արքայական ծագում ունեին, ընդ որում, ոստանիկ ասելով պիտի հասկանալ ոչ

¹ հորենացի, Բ, է, Սեպուղ-Եղջո-սեպուհ և ՔՁԼԾ-որդի բուռերից, տե՛ս Н. Март, Этимология, 3. В. О. Им. Русск. Арх. Об. V, p. 286:

² հորենացին շատ աղոտ պատկերացում ունի բղեջիների մասին: Նա հիշատակում է Քուգարաց և Աղձնյաց բղեջիների մասին. մյուսների մասին նա տեղեկություն չունի: Որ բղեջիները թվով շուրսն էին և բարձր դիրք էին զբաղում Արշակունյաց արքունիքում, այդ մասին նա ոչինչ չի ասում:

թե հին թագավորների շառավիղներին, ինչպես կարծում է հորենացին, այլ բացառապես Արշակունիների ժառանգներին: Դրանք Արշակունի սեպուհների էին, և իրավացի է պատմիչը, երբ նրանց համեմատում է Վրաստանի սեփծուղն և րի հետ: Հիմք չկա կասկածի տակ դեմքու նրա այն հայտարարության ճշմարտությունը, թե ոստանիկների կազմը նրա օրոք այն չէր, ինչ որ առաջ: Ոստանիկների թվում ոչ միայն Արշակունիների ժառանգներն էին, այլ կային նաև ուրիշ ծագում ունեցողներ, որոնք ինչ-որ բանով աչքի էին ընկել: Դրանց թվին են պատկանում իշխանական այն մասնոր տոհմերը, որոց մենք տեսնում ենք Արշակունյաց Այրարատ նահանգի հայրենական տիրույթում: Թերևս այդ պատճառով էլ ազատների այդ դասը սկսեց կոչվել ոչ բնորոշ ոստանիկ, ոստանիմարդիկ տերմինով, փոխանակ սեպուհ, որ հավանորեն մինչև նրանց կազմի փոփոխվելը կիրառվում էր նաև նրանց նկատմամբ:

Հուշարձաններում ոստանիկներ հիշատակվում են միայն թագավորական նահանգում՝ յաբխունի տան, որի տակ հասկացվում էր Այրարատը: Նախարարությունների ծագումը բացատրելիս հորենացին նշում է դեպքեր, երբ մարդիկ ազատների աստիճանի էին բարձրացվում թագավորին աչքի ընկնող ծառայություն մատուցած լինելու համար: Արշակունիների անկումից հետո այդպիսի դեպքերն սկսեցին զաճախակի դառնալ: Պարսից իշխանությունները այս ճանապարհով էին ստեղծում իրենց շահերին նվիրված միջավայր: Այդ պատճառով էլ ոստանիկ-մարդկանց կազմի փոփոխությունը հորենացին վերադրում է պարսիկներին: Հայ Արշակունիներն էլ կարևոր ծառայություն մատուցած մարդկանց իրենց տիրույթում՝ Այրարատում, պարգևատրում էին հողաբաժիններով: Արքունիքում ծառայողների հսկայական կազմը բաղկացած էր ազատ մարդկանցից, և Արշակունիների անկումից հետո նրանք պիտի հայտնվեին ոստանիկների շարքում: Այսպիսով, այսպես կոչված ոստանիկ-ազատության մեջ մտնում էին երեք տեսակի մարդիկ. Այրարատում սեպուհական հողաբաժիններ ունեցող Արշակունիների ժառանգները, հողերով պարգևատրված անձինք և թագավորության անկումից հետո մնացած պալատականները:

¹ հորենացի, Բ, է, «յառաջադիմութենէ ազատացեալք, որդէս ընտանիք թագաւորացոյ:

III

Հայաստանի գյուղական բնակչության և մանավանդ նրա սոցիալական վիճակի մասին շատ քիչ տեղեկություններ կան: Գրավոր հուշարձանները որոշակիորեն տարբերում են գյուղացիությանը ազատներից, բայց սրանց փոխհարաբերության և հողի գծով տերերից ունեցած կախվածության աստիճանի մասին գրեթե ոչինչ չեն ասում: Բուրք նրանք, ովքեր չէին մտնում ազատների՝ ազնվականության և հոգևորականության դասի մեջ, պատմիչների պատկերացմամբ հանդիսանում էին մի զանգված, ստորին բնակչության մի խավ՝ շինակառուիքին անվան տակ: Շինակառու գյուղացի իմաստով ամենագործածական բառն է, բայց այն հաճախ փոխարինվում է ռամիկ, գեղջուկ բառերով և եկեղեցական ժողովուրդ տերմինով¹:

Գյուղական բնակչության գլուխ կանգնած էր հազարապետը, ինչպես իշխանական դասի գլուխ՝ սպարապետը: Հայտնի չէ, թե արդյոք երկրի ո՞րչ գյուղացիությունն էր ենթարկվում հազարապետին, թե նա մի մարմին էր հատկապես թագավորական տիրույթների գյուղացիության գործերը վարելու համար: Եթե առաջինը ավելի հիմքեր ունի, ապա պարզ չէ ինչո՞վ էին որոշվում գյուղացիության հարաբերությունները իշխանների և թագավորի նկատմամբ, և ի՞նչ էր ներկայացնում իրենից գյուղացիական հողատիրությունը:

Արևմուտքում ֆեոդալական գյուղացիությունը կոչվում էր ս եր վ ա ժ: Սերվի հողաբաժինը իրավաբանորեն համարվում էր *tenure*-ի՝ միայն ցմահ հողակալություն, որոշ պարտույթներ կատա-

¹ Փավստոս, էջ 33, «բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն եւ կամ շինակառութեանն», էջ 54, «ի շինականաց անգամ ասմիկ մարդկան» էջ 80, «առ ազատ եւ առ շինականս» էջ 221, «պատահանք եւ անարգք, ազաթ եւ շինական», նաև էջ 233, 234 և այլն: Փարպեցի, էջ 67, «առ իշխանս եւ շինականս» էջ 73, «նախարարք եւ սեպուհք, ստանիկք եւ ռամիկք», էջ 128, «զնախարարս եւ զազատս եւ զայլ ամենայն ռամիկն», էջ 145, զբազումս ի ռամիկ մարդկանէ», էջ 171, «կրտսեր շինական մարդիկ», էջ 37, «միահամուս ժողովրդոց», էջ 126, «նախարարացն հայոց եւ ռամկացն», նաև էջ 169, 178 և այլն: Նիզի, էջ 95, «զստերք ազատաց եւ շինականաց», էջ 103, «արանց եւ կանանց, շինականաց եւ ազատաց», էջ 123, «ազատ փափկացեալ եւ զեղջուկ վշտացեալ», էջ 122, «ամենայն ռամիկ բազմութիւն» և այլն:

րելու պայմանով: Սերվի մահից հետո նրա հողաբաժինը անցնում էր սենյորին, քանի որ նա ժառանգություն տալու իրավունք չուներ: Նրա ձեռքը մեռած էր, ինչպես ասում էին, իր ժառանգներին հող տալու համար: Ասենք, սենյորը սերվի հողաբաժինը սովորաբար տալիս էր նրա որդուն: Սերվը կախված էր սենյորից նաև անձնապես. նա չէր կարող հեռանալ իր հողից առանց սենյորի թույլտվության, մի բան, որ սերվածի բնորոշ առանձնահատկությունն էր: Միջնադարյան գյուղացիության իրավական բնույթն արտահայտվում էր նաև սենյորից ֆինանսապես կախված լինելու մեջ: Գյուղացիները վճարում էին սուրբեր՝ հօգուտ սենյորի: Հիմնական սուրբը *chevage*-ն էր՝ *census capitis*, իսկական գլխահարկ, որ հավաքվում էր ամբողջ հասարակ ժողովրդից: Ունեցվածքից զանձվում էր *tenures à cens*, ցենզ, այսինքն կապալավարձ՝ հողից օգտվելու համար և *tenures à champart* = *campi pars*՝ բերքի մի մասը, որ հավաքվում էր հօգուտ սենյորի: Դրանից բացի, կային *corvées* զանազան տեսակի պարտույթներ՝ փոխադրական, կառուցողական, աշխատանք տիրոջ դաշտում և այլն:

Գյուղացու հողաբաժինը հայերի մոտ կոչվում էր կեանք, աբար, կալուած: Ասենք այդ նույն տերմինները գործ էին ածվում նաև իշխանական և եկեղեցական հողերի նկատմամբ¹: Կալվածքը իմաստաբանական տեսակետից համապատասխանում է *tenure*-ին, իսկ կյանքը պարզապես նշանակում է կյանք: Կարելի՞ է արդյոք այդ հիման վրա հողաբաժնի իրավական բնույթի մասին եզրակացություն անել, որպես հողակալություն կամ ցմահ տիրապետություն:

Մեզ չեն հասել նաև որոշակի տեղեկություններ գյուղացիության հողային պարտույթների վերաբերյալ: Փավստոսի մոտ այդ մասին ոչ մի ավյալ չկա²: Հայտնի է միայն, որ մարդպանական

¹ Նիզի, էջ 247, «եթէ յազատաց իցեն, եթէ ի շինականաց իցեն, եթէ յեկեղեցուց զինչ կ ե ա ն ու ե թողեալ իցէ, եկեցցեն եւ զայլնս զիրաքանչիր կ ա լ ու ա ծ ս»: Բազումք իսկ եկին եւ ժողովեցան եւ կայան զիրաքանչիր կ ա լ ու ա ծ ս:

² Մուշեղի պատմության 12 գլուխներից յուրաքանչյուրում, որոնք բոլորն էլ նվիրված են նրա հաղթանակներին, կրկնվում է միևնույն նույնանման գարձվածք՝ «զմիացորդսն ետաճէր եւ ի հարկի կացուցանէր» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանէր», երկու դեպքում գործ է ածվում «հարկ զնէր մնացորդացն», Փավստոս, Ե, ր-ժԹ: Բայց «ի հարկի կացուցանել» արտահայտությունը չի նշանակում «հարկ զնել», այլ «հեռադատեցնել», լրիվ ձևն է՝ ի հարկի <ծառայութեան>

ըրջանում հայերը պարսիկներին հարկ էին վճարում: Այս հարկը մուծվում էր, անկասկած, նաև Արշակունիների գանձարանը: «Հարկըս ամենայն աշխարհին հայոց առ իս են. եւ գործակալք ամենայն յիմում ձեռին են եւ այլ եւս բազում կարասի, զոր ի պարսից գործակալացն հանի»¹:

Արշակունիների անկումից հետո պարսիկները նոր մարդահամար կատարեցին հավանորեն պարտույթների շարք ճշտելու և ավելի կանոնավոր ձևով բաշխելու համար: Ըստ Նղիշի, մարդահամարի հետևանքներից մեկը եղավ հարկերի ավելացումը, որի նպատակն էր, ինչպես ենթադրում է պատմիչը, գյուղական բնակչության սնանկացումը: Հարկերը անհավատալիորեն ծանր էին. «բանդի ուստի արժանն էր առնուլ հարիւր դահեկանաւ շափ, կրկին առնուին. սոյնպէս եւ եպիսկոպոսաց եւ երիցանց զնէին, ոչ միայն շինաց, այլ եւ աւերակաց: Նա բնաւ ո՛վ իսկ կարէ,—բացականչում է պատմիչը,—պատմել վասն ծանրութեան մտից եւ սակից, բաժից եւ հասից եւ հաւկաց լերանց եւ դաշտաց եւ մայրեաց. ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով»²:

Հայ իշխանները Հազկերտի առջև հայտարարում են, որ նրա օրոք Հայաստանը վճարում էր ավելի շատ մուտք ու սակք և այլ հարկք, քան նրա հոր ժամանակ³:

Այս վկայությունները արժեքավոր են այն տեսակետից, որ ըստ երևույթին պարունակում են զանազան տուրքերի տեսնիկական անվանումները: Ուղղակի վկայություններ չունենալու պատճառով սրանց մասին կարելի է զազափար կազմել, համեմատե-

կացուցանել», ստիպել հպատակվել: (Հմմտ. Մակարայեցոց, Ա 4, «զմնագորդան ի հարկի կացուցին տալ նոցա հարկս ամյամէ»): Բացի այդ, ինչպես հայտնի է, կարծիք կա, որ Փավստոսի աշխատության այդ մասը հավաստի չէ:

¹ Փարպեցի, էջ 83: Հմմտ. Յազավորի խոսքերը, էջ 85... «զհարկեր գիմոյ աշխարհին հայոց եւ կամ զպարսկացն... խնդրել ի տանէ քումմէ»: Հմմտ. նաև Նղիշ, էջ 251, «զող եւս գտանէր հարկի աշխարհին»: Հայերի ապստամբությունից հետո պարսիկները աշխատում էին հնազանդեցնել երկիրը «եւ ի հարկադրութեան կացուցանել», նույն տեղում, էջ 75: Հմմտ. Նղիշ, էջ 247՝ «թողուլ հրամայելը զհարկս աշխարհին»:

² Նղիշ, էջ 41, «զհարկս աշխարհին առաւել ծանրացոյց... էջ 42, «զի զշինականն վատնեցէ», էջ 43, «էր ծանրութիւն հարկացն...»:

³ Նույն տեղում, էջ 83, «զմտից եւ զսակից եւ որ այլ եւս էին հարկք աշխարհին բազմազոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս»:

յով պարսից պետության մեջ ընդունված հարկային համակարգի հետ:

Սասանյան կայսրության մեջ գոյություն ունի երկու տեսակ հարկ. *charadz'* հողային հարկ և *gezith'* գլխահարկ: Այս նույնն ընդունված էր նաև հռոմեացիների մոտ՝ *tributum soli* և *tributum capitis* կամ, Գիոկղետիանոսի ռեֆորմի տերմիններով ասած, *capitatio terrena* և *cap. humana* կամ թե *plebeia*: Արաբական տիրապետության ժամանակ տարբերվում էին հողային պարտույթների երկու տեսակ՝ *vaxifē* և *mukasame*: Առաջինը *دخلك* համապատասխանում էր եվրոպական ցենզին՝ Գողի կապալավարձին, և հողի յուրաքանչյուր միավորի համար վճարվում էր մի որոշակի գումար, իսկ երկրորդը *مكاسم* եվրոպական շա մ պարն է, բերքի մի մասը, որ տրվում էր հողատիրոջը: Արաբների հարկային համակարգը իրենք շին ստեղծել. այն ստեղծվել էր մինչև արաբների երևան գալը և սասանյան շրջանից մնացած ժառանգություն է: Արաբների մոտ գլխահարկից ազատվում էին քսանից ցածր և հիսունն անց անձինք, այսինքն՝ տարիքով զինվորական ծառայության անընդունակները, իսկ հայտնի է, որ պարսիկները զինվորական ծառայություն էին կրում 20-ից մինչև 30 տարեկան հասակը¹: Այդ փաստը ցույց է տալիս, թե որքան հին էին այն հարկային սահմանումները, որոնք արաբները ժառանգել էին պարսիկներից: Արաբական վազիֆեն իրականում համապատասխանում է խառաջին, իսկ մուկասամեն պարսկերեն կոչվում էր *bahrak*²:

Այս շրջանակում կարելի կլինի բացատրել տուրքերի վերը նշված տեսակները՝ մուտ, սակ, բաժ, հաւ և հարկ: Սրանցից սակը և բաժը շատ հայտնի են պարսից գրականության մեջ և հատկանշական է, որ հաճախ գործ են ածվում միասին *sak* և *baž* կամ *sāv* և *baž*³: Այս զուգակցումը մենք համարում ենք Գատկանշա-

¹ Str. XV, 2, 19, p. 734=Teub. p. 1023, στρατεύονται δὲ καὶ ἄρχουσιν ἀπὸ εἰκοσίου ἐτῶν ἕως πεντήκοντα.

² Պարսկ. *چراغ* = պահ. **bahrak*, նոր. *bahraq*: Այս բառը մինչև այսօր էլ գործ է ածվում Անդրկովկասում շամպարա=մայժեղատի իմաստով: Պարձ է ածվում նաև մուկասամե-տ թաթարականացած կասիմեակ ձևով:

³ *Matihān-i-Čalrang*, I 12. *Sahnāme* I, p. 247. Hübsch. *Gramm.* I, p. 234.

կան, արավհետև ցույց է տալիս, որ այդ տերմինները արտահայտում են հարկային որոշակի նորմաներ: Ավելի քան հավանական է, որ sak-ը և baž-ը անալ բովանդակությամբ համընկնում են χαράδζ-ին և gezith-ին, այսինքն՝ նշանակում են հողային հարկ և գլխահարկ: Այս արտահայտությունների հոմանիշ լինելը, թերևս, պետք է բացատրել նրանով, որ նրանցից առաջինները վերաբերում են ավելի վաղ, իսկ մյուսները՝ ավելի ուշ ժամանակների, կամ էլ որոշ տերմիններ սովորական էին կայսրության մի մասում, իսկ մյուսները՝ մյուս մասերում: Ստուգաբանական կազմությունը թերևս լուծեր հարցը, եթե այն կասկածներ չհարուցեր: Baž-ը հայերեն¹ բաժ, նշանակում է բաժին, ինչպես որ հուն. δασμός-ը δαίωμα-ից՝ բաժանել = բաժին և հարկ: Baži էր կոչվում այն տուրքը, որ Աբեմենյանները զանձում էին հպատակ երկրներից: Կյուրոպիդիայում Կյուրոսի ստացած հարկերը նշելու համար գործ է ածվում δασμός, որ արտահայտում է պարսկ. baži-ի իմաստը¹: Սակ, sak տերմինը պարսկ. sâ և sâw անտարակույս ազգակցություն ունի հայերեն սակ-ի հաշիվ, սակ-արկել-ի հետ², որի իրանական, նույնիսկ արիական ծագումը սակայն տարակուսելի է: Ոչ առանց հիմքի նաև χαράδζ-ը, պարսկերեն χαράδ-ից, կարելի է համարել ազգակից հայերեն հարկի, վրացերեն ხარადჯ-ի հետ, կապելով դրանք այն արմատի հետ, որից ծագում է հայերեն հերկ-ելը: Վերջապես, gezith-ը տառ առ տառ համապատասխանում է հայերեն զգաթին, որ նշանակում է բրդի շափ, զգել արմատից, սեմ. giza՝ սանրել ալիքները, այս-

¹ Արմատական бага-ից հասկանված бага-ից դեռ. baži, Մեր կարծիքով նրանից է ծագում նաև bahra-ը, Իրանագետները bahrak-ը մտնեցնում են ավեստական baxra-ին, որ նշանակում է հարկ կամ սնունդ: Horn, Wörterbuch, p. 56, այն առաջ եկած է համարում ավեստական hu-baδra-ից, որ նշանակում է բախտավոր: Այս երկու ձևերն էլ ենթադրում են bag արմատը δρα ածանցով և baž-ի ու անցյալ դերբայ baxta-ի բախտի նման կարող են նշանակել հարկ և ճակատադիր, բախտ: baxδra-ից ծագում է baxra-ն կամ bahra և barx-ը քչ:

² Մրան է վերաբերում նաև սակավը, որ նշանակում է բիշ, ավելի ճիշտ հաշվեկատ, խնայողությամբ և սակս, որ նշանակում է համար, ի պետս (հմտ. ռուսերեն насчет-ի հետ):

տեղից էլ՝ gizath, Այս բառը ստացել է հարկի իմաստ ընդհանրապես, երևի այն քանի հետևանքով, որ մի ժամանակ որպես հարկ տալիս էին մի զգաթ բուրգ: Սկզբնապես բոլոր հարկերը վճարում էին մթերքով: Բրգով վճարելը բնորոշ է խաշնարած կենցաղի համար: Դրանում զարմանալի ոչինչ չկա, որովհետև նույնիսկ միջին դարերում sa chevage կամ census capitis-ի փոխարեն ֆեոդալները երբեմն վերցնում էին մի քանի ֆունտ մոմ:

Եթե sak-ի իրանական ծագումը անվիճելի լիներ, ապա կարելի կլիներ ընդունել, որ և՛ sak-ը, և՛ baž-ը, և՛ χαράδζ-ը, և՛ gezith-ը հոմանիշներ են՝ մշակույթի արիական և սեմական գոտիներում միևնույն գաղափարներն արտահայտելու համար: Շատ հնարավոր է, որ հայկական միջավայրում դրանց համապատասխան արտահայտություններն էին մաս-ը և հաս-ը, որ պատմիչը գործ է ածում սակ-ին և բաժ-ին զուգահեռ: Նույն ձևով էլ bahrak-ի համարժեքն է պտուղը: Baž-ը—բաժը, հավանորեն հողային հարկն է, իսկ սակը՝ գլխահարկը: Համենայն գեպս միևնույն տերմինները կարող էին գործածվել տարբեր իմաստով՝ նայած տեղի և ժամանակի պայմաններին: Օրինակ՝ խառաջը արարների մոտ նշանակում էր հողային հարկ, մինչդեռ հրեական գրավոր ազգայիններում այս վերջինս կոչվում էր tasq, իսկ խառաջը գլխահարկի իմաստ ունի: Մեր նպատակի համար կարևոր է հենց հարկային հարաբերությունների համակարգը և ոչ թե տերմինաբանությունը: Նշված հարկերից բացի հայտնի էր նաև այն-միևնաբանությունը: Նշված հարկերից բացի հայտնի էր նաև այն-պիսի մի պարտույթ, ինչպիսին է եվրոպական corvées = cortogata opera, ռուսերեն՝ барщина, և կոչվում էր քեկար, bekār: Այս բառը ծագել է պարսկերեն ٭bekār bekār amadan՝ աշխատանքի գնալ արտահայտությունից և մինչև այժմ էլ ժողովուրդը барщина-ն գործ է ածում կոռի իմաստով: Իրականում այդ պարտավորությունը կոչվում էր kār, հայերեն՝ կոռ, աշխատանք, երբեմն միասին՝ կոռ ու քեկար: Իսկ քեկար բառը մենք հանդիպում ենք Դավինի 641 թ. եկեղեցական ժողովի կանոնների մեջ²:

Այսպիսով, հարկերի գլխավոր տեսակներն էին խառաջը՝ հո-

¹ Nöldeke, Tabari, p. 241: Հարավային Ֆրանսիայում tasca կոչվում է բնատուրքը, champart, Luchaire, op. cit. p. 337:

² Կանոն 8, «գլխի շնորհի կացի յազպս ձեռնադրությանն, ազատ և հարկե և ի քեկարե», հրատ. Ս. Տիգրանյանի և Զ. Մխիթարի:

դային հարկ, գգաբը՝ գլխահարկ, բահուակը՝ բնատուրք և բեկաբը՝ կոռ: Սրանց չափերի վերաբերյալ կան մի քանի կցկոտուր տեղեկություններ: Տարարիի մոտ եղած տեղեկությունների համաձայն պարսիկները մինչև խոսքով Նուրշիրվանը հողային հարկը գանձում էին բնամթերքով, եկամտուրի $\frac{1}{3}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{5}$ և $\frac{1}{6}$ չափով՝ նայած հողի արգավանդությանն ու մշակույթի որակին: Հողային հարկը կանոնավորելու համար Կավատը իր թագավորության վերջին շրջանում պատրաստվում էր ճշտել հողերի, դաշտերի և լեռների սահմանները: Բայց նա շուտ մեռավ, թողնելով որդուն և հաջորդին՝ խոսքովին ավարտելու գործը: Խոսքովը իրականացրեց հոր մտադրությունը և գրանից բացի անցկացրեց հարկատու դասի մարդահամար: Աշխատանքն ավարտելուց հետո նա սահմանեց հարկերի գանձման չափերը: Հողային այն միավորը, որ կոչվում էր *garib* և հավասար էր 3600 քառակուսի կանգունի, ենթարկվում էր տարբեր չափի հարկման՝ նայած մշակույթի տեսակին: Յորենի կամ գարու մեկ զարիբ ցանքից պետք է գանձվեր մեկ դիրեմ հարկ, մեկ զարիբ խաղողի այգուց՝ 8 դիրեմ, մեկ զարիբ առվույտից՝ 7 դիրեմ և այլն:

Գլխահարկի ենթակա էին բոլորը՝ ըստն տարեկանից մինչև հիսուն տարեկանը, հասկանալի է, իշխաններից, ազնվազարմաներից, զինվորականներից, հոգևորականներից և պաշտոնյաներից բացի: Յուրաքանչյուր հարկատուից, ելնելով նրա նյութական վիճակից, գանձվում էր 12, 8, 6 և 4 դիրեմ: Վերջին թիվը, ըստ երևույթին, ավելի ընդունված էր, որովհետև շինական աղբյուրները հիշատակում են, որ Պարսկաստանում յուրաքանչյուր մարդ հարկ էր վճարում շորս արծաթ դրամ: Սահմանված էր նաև, որ վճարումները կատարվեն շորս ամիսը մեկ՝ երեք նվազ կամ ինչպես կոչվում էր պարսկերեն՝ երեք *simarrak*-ով:

Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունում ևս հողային հարկի հիմքում նույն ձևով ընկած էր *jugum* կոչված չափը: Յուրաքանչյուր *jugum*-ից գանձվում էր որոշ հարկ, որի չափը որոշվում

¹ Nöldeke, *Tabari*, p. 241—246, *Simarrak*-ը հավանորեն կազմված է *sl*, *sč*, որ նշանակում է երեք և *hmar* համար, հաշիվ բառերից: Այստեղից է ծագում ներկայումս գործածվող կշռաչափը՝ սոմարը կամ սոմարը, որ հավասար է 2 կամ 3 փթի, հավանորեն այն պատճառով, որ այդքան հացահատիկ էր վճարում յուրաքանչյուր սիմարակում:

էր կայսրի հրամանագրով: *Jugum*-ի չափը կախված էր հողի տեսակից: Օրինակ, Սիրիայում մեկ *jugum*-ը բաղկացած էր 5 *jugera* խաղողի այգուց, կամ 20 *jugera* բարձրորակ վարելահողից, կամ թե 40 *jugera* միջակ և կամ 60 *jugera* ցածրորակ հողից և այլն: Ուշագրավ է, որ այստեղ ևս հարկերը հավաքվում էին երեք նվազով՝ սեպտեմբերի, հունվարի և մայիսի մեկին:

Այս բոլոր հիշյալ հարկերը ընդունված էին նաև Հայաստանում, հայ ֆեոդալական միջավայրում: Դրա լավագույն ասպացույցն են գրականության մեջ պահպանված տեխնիկական տերմինները: Հարկերի քանակի վերաբերյալ փաստական տվյալները քիչ են, եթե չհաշվենք եկեղեցական կյանքին վերաբերող մի քանի տեղեկությունները: Հայկական եկեղեցին իր կազմակերպությունը ֆեոդալական էր և կենցաղային ու տնտեսական առումով ընդօրինակել էր նախարարական միջավայրում ընդունված նորմերը, որոնք մասամբ պահպանել էին նաև աշխարհիկ ֆեոդալների անկումից հետո: Այս իսկ պատճառով եկեղեցական կյանքին վերաբերող տվյալները կիրառելի են նաև նախարարական միջավայրի նկատմամբ: Դվինի ժողովի որոշումների մեջ նշվում է, որ մի քանի իշխաններ նեղում են բարեգործական հիմնարկություններն «որպես ի կենդանեաց հարկս պահանջեն և ի կերակուրս և լրմպելիս զիրեանց գործակալս մատուցանեն», փոխանակ «հողալ և խնամել յուրաքանչյուր վաստակոց ի կալոյ և ի հնձանէ և յամենայն արմտեաց տալ մասն և բաժին»²: Այստեղից երևում է, որ գյուղատնտեսական արտադրանքի որոշ մասը գանձվում էր հոգուտ ֆեոդալի:

Ավելի արժեքավոր են Վաչագան թագավորի օրոք տեղի ունեցած Աղվանական եկեղեցական ժողովի որոշումները: Հոգևորականության հասույթների վերաբերյալ որոշվում է հետևյալը. «մնևորը

¹ Եղիշե, էջ 82, «ազատ էր ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ» Կառնեմ Դրեւայ ժողովոյն. 9. ս. Լուսավորիչը և Տրդատը «գուրբ եկեղեցւոյ մանկունս ընդ ազատաց տոհմին ևն կարգեալ և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և շոր նաե ի պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ և չէ խառնեալ ի շինական, իշխանութեամբ զերիցունեաց տունն ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասն տալ արքունի»:

² Կառնե 11, հմմտ. Սահակին վերագրվող կանոնների հետ՝ իսկ ի կալոյ և ի հնձանէ և յայլոց արմտեաց տասնորդս հանցեա, Մելիք-Քաղցաբ, Հայոց եկեղեցական իրավունքը, էջ 557:

տալիս է հօգուտ քահանայի շորս գրիվ-գարիբ ցորեն, վեց գրիվ գարի և 16 շափ քաղցու, իսկ չքավորը տալիս է հացահատիկ՝ կիսով շափ (նշանակում է՝ 2 գրիվ ցորեն և 8 գրիվ գարի), և գինի որքան որ կարող է: Իսկ ով որ հողագործությունը չի զբաղվում և այդի շունի, նրանից ոչինչ չվերցնել: Ով ոչխար ունի, տալիս է մեկ ոչխար, երեք զգաթ բուրդ և մեկ պլուխ պանիր, ով ձի ունի, տալիս է մի մարուկ, իսկ եղևներ և կովեր ունեցողը՝ մեկ հորթ¹:

Այս պաշտոնական փաստաթուղթը բավարար չափով բնութագրում է բնակչության նյութական և ֆինանսական կախվածությունը հողերականներից և, հետևաբար, աշխարհիկ տիրակալներից: Երկրի սոցիալական պատկերի համար կարևոր է և այն, որ եկեղեցական ժողովի ժամանակ (2 դարից ոչ ուշ) երկրագործ բնակչությունից բացի, կար նաև բացառապես անասնապահությունը զբաղվող մարդկանց մի դաս: Իզուր չէ, որ Խորենացին գանգատվում է, թե Հայաստանում «ոչ ամեն տեղ էին զբաղվում երկրագործությամբ, այլ որոշ տեղերում ապրում էին մարդիկ, որոնք սնվում էին, ինչպես հյուսիսային երկրներում, հում նյութներով և նման բաներով»²:

¹ Մովսես Կաղաբկատպացի, էջ 66, «Պատուք ի ժողովրդեն է երիցուն՝ կարգն՝ այս իցի: Թուանիկն՝ շորս գրի ցորեն, վեց գրի գարի և վեշտասան թաս քաղցու, և որ տառապեան է՝ զհացից կլան տացե և գինի՝ որչափ և կարող իցէ, իսկ որոշ վար և այդի ոչ է, մի առցեն... և որ ոչխար է ի տան՝ ոչխար մի և երեք զգաթ բուրդ և մեկ պանիր և որ ձի ի տան իցեն՝ մի յովանակ և որ պախորթ իցեն՝ որթ մի: Թուանիկ բար Հայկազյան բառարան է մտել գրուանիկ ընթերցումով, որ գրուանի նվազական է: Մինչդեռ այն պարսկ. պաշտ. تواج توداج, ունևոր, հարուստ բառն է: Մի ժողովածուի մեջ, որտեղ տեղ է գտել մեղ հետազոտող կանոնը, կարդում ենք. «Թ Թուանիկ, որ է շեղը կալույ, Գ գրիվ ցորեն, որ է շափ. 2 գրի գարի և 8 գրի փառք քաղցու, Տաշյան, Ցուցակ, էջ 275: Այս մեկնաբանությունը գրիչի ենթադրությունն է, թեևս Թուանիկը թեղի, թեղանիկի հետ շփոթելու հետևանքով: Այս նույն տեղում փաստը փոխաբերված է փառքով, որ հեղուկ մարմինների շափ է՝ պարսկ. փաս, պարսկ. داج: որ նշանակում է պահակ, որտի մաս և en generalporti dune chose համապատասխանում է հին pah-ին, pah-ին հայերեն պան, պանք, այստեղից և pas, ինչպես پاس -ից որդի: Հայերեն գրիվը garib-ն է, հողի շափ, իսկ ապա այդ հողը ցանելու համար պահանջվող հացահատիկի շափը: Այստեղից նաև՝ հայերեն գրուանը, գրուանբան, որ կշռի շափ է, այժմյան ֆունտը:

² Խորենացի, Բ, ծթ, ԷԱԿԵ և ոչ յամենան տեղիս երկրագործությունը, բայց դուզն որքեք ըստ օրինակի հիստիսականաց... կեցեալք» Մ. Էմիլի Խորենի թարգմանության մեջ ազդու ուրեք-ը վերագրված է նախորդ զարմվածքին, որ

Մխիթար Գոշի «Դատաստանագրում» տեղ գտած տվյալների համաձայն «վարեհատողներից վերցվում էր հինգերորդ մասը... գնված վարեհատողները, այգիները և ծաղկանոցները ազատ էին այդ տուրքից, ինչպես նաև ջրաղացները, տները և կրպակները: Արհեստներով և առևտրով զբաղվող մարդիկ հարկ էին վճարում, քրիստոնյաները զխահարկ չէին վճարում, այլ միայն այլազան վանները, որոնք նվաճված էին բուն ուժով: Ոռոգվող վարեհատողներից գանձվում էր հասույթի հինգերորդ մասը, իսկ շոտոզվող վարեհատողներից՝ տասներորդ: Նշված են նաև կոռի շափը, բնտանի անասուններից՝ եզան, կովի, ոչխարի վրա դրված հարկերի շափերը և այլն¹:

Անիի վիմագիր արձանագրությունների մեջ հաճախ հիշատակվում է այդ հարկերի մասին և, ինչպես հայտնի է, թվարկվում են տարբեր տեսակի հարկեր և պարտույթների մի քանի տասնյակ անվանումներ²: Այդ տվյալները վերաբերում են այն ժամանակաշրջանին, որ դուրս է մեր անմիջական խնդրի սահմաններից: Այդ անշուշտ չի նշանակում, թե հիշյալ հարկային համակարգը արաբական տիրապետության արդյունք է: Մասնագիտական իրավունքը, անկասկած, որոշ փոփոխությունները մտցրեց նախարարական կարգի մեջ: Այդ փոփոխությունները կարող էին ընդգրկել նաև առանձին նորմեր կամ հարկման գնահատումներ, բայց հարկային համակարգը, իբրև այդպիսին, արաբները ժառանգել էին իրենց նախորդներից: Ինչպես էին վերադասավորվում նախարարական հարաբերությունները արաբների օրոք և ի՞նչ չափով արտահայտվեց նրանց ազդեցությունը, այս խնդիրներն արդեն վերաբերում են Բագրատունյաց դարաշրջանը հետազոտողներին: Մեր խնդիրն այն էր, որպեսզի ցույց տայինք նախարարական կարգի էվոլյուցիան՝ նրա սկզբնավորումից մինչև այն ժամանակաշրջանը, երբ իրանական պետական իշխանությունը, որի հիման

սխալ է, որովհետև չի կարելի ենթադրել, թե Հայաստանում, թեկուզ Արտաշես Թագավորի ժամանակ, հողը մշակվում էր ոչ թե ամենուրեք, այլ մի քանի հազվագյուտ տեղերում միայն:

¹ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 314—316 = Sempadscher, Codex, I p. 22, ed. I. Karst, 1902: Արևմուտքում ևս գոյություն ունեին կենդանիներից գանձվող հարկեր, այսպես կոչված bovagium, vaccagium, multonagium, caprinum և այլն Luchaire, Institutions, p. 338:

² Ալիշան, Շիրակ, էջ 91:

վրա զարգացավ նախարարությունը, փոխարինվեց արարականով: Մեզ համար վերջին կեսը հորենացու ժամանակն էր: Մենք կամենում էինք անել այն աշխատանքը, որ իր ժամանակին կատարել է հայ պատմիչը: Հետաքրքրական է մեր եղբայրացու թյունները համեմատել նրանց հետ, որոնց հանգել է հորենացին տվյալ հարցի վերաբերյալ: Դա էլ մասամբ կլինի մեր հայացքների ստուգում:

Եթե քննադատությունն արդեն հասցրել է բացասական կարծիք հայտնել հորենացու՝ որպես պատմիչի հեղինակության վերաբերյալ, ապա այն բնավ երբեք չի նսեմացրել նրա գործի՝ որպես պատմագրական հուշարձանի արժեքը, որ արտացոլում է հեղինակին ժամանակակից աշխարհի տրամադրություններն ու հայացքները: Այդ տեսակետից հորենացու աշխատությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Նախարարությանը վերաբերող հարցերում կարևոր են ոչ թե այս կամ այն փաստական տրվյալներն ու լուսաբանությունները, որ առաջարկում է պատմիչը, այլ արժեքավոր է հեղինակի գաղափարախոսությունը՝ թե նա ինչպե՞ս է ըմբռնում նախարարական կարգի էությունը և ի՞նչ ձևով կամ մեթոդով էր մտածում լուծել նախարարության մասին իր առաջադրած հարցերը:

Հորենացին չէր կարող ամբողջովին կտրվել իր ժամանակի իրականությունից: Հին ժամանակների յուրաքանչյուր հետազոտողին այս կամ այն չափով հատուկ է անցյալին ներկայի պրիզմայով նայելու թուլությունը: Հայ անցյալին վերաբերող հորենացու մի շարք ըմբռնումներն իր ապրած դարաշրջանի իրավիճակի արձագանքներն են: Կարելի է կասկածել, թե փաստական տեսակետից որքան ճիշտ են հորենացու պատմածները, և թե արդյոք տվյալ նախարարությունը իրո՞ք ծագել է այսինչ ժամանակ և այդպիսի պայմաններում, բայց կասկածից վեր է այն, որ պատմիչի կողմից նախարարությանը վերագրված հատկանիշները իրական են, և որ նախարարական տների ծագման տվյալ ձևը համարվում էր հնարավոր, համենայն դեպս, այն ժամանակ, երբ մարվում էր հնարավոր, համենայն դեպս, այն ժամանակ, երբ մարվում էր հեղինակը: Մեր պատմիչը ձեռնարկեց մի պատասխանատու գործ այն դառն գիտակցությամբ, որ իր տրամադրության տակ չկան հայ հնագույն ժամանակների պատմությանը վերաբերող ստույգ աղբյուրներ: Նա պետք է աշխատեր՝ հենվելով անկասկածազուրկ տվյալների, պատահական տեղեկությունների, ան-

հասկանալի ակնարկների և այդ կարգի անվստահելի նյութերի վրա:

Նա հարկադրված էր իր ժամանակի կարգերի լույսի տակ համադրել ցարուցրիվ փաստերը և տվյալները, այդ պատճառով էլ ուշ շրջանի երևույթներն ու դրույթները նա ակամա վաղնջականացնում էր և վերագրում հին ժամանակներին: Հորենացու մտքի ընթացքը գնում էր փաստերից դեպի գաղափարը, իրականից՝ դեպի տեսականը և ընդհակառակը, կանխակալ կոնցեպցիաները լուսարանելու համար երբեմն նա ընտրում և հորինում է պատշաճ միջավայր՝ դասավորելով ավելի կամ պակաս ճշմարտամասն փաստեր: Պատմիչը երբեմն իր եզրակացությունները հիմնում է աշխարհագրական և նախարարական անվանումների ստուգաբանական մեկնության վրա: Այս մեթոդը հորենացին լայնորեն կիրառում է մանավանդ նախարարների ծագումնաբանությունը պարզաբանելու: Անկախ այն բանից, թե որքա՞նք ընդունելի են նրա ստուգաբանական փորձերը, շատ դեպքերում դրանք անընդունելի են, և նրա մի շարք բացատրությունները զուրկ են հիմքից հենց այդ շինծու ստուգաբանության պատճառով, սակայն նրա մեթոդը, իբրև այդպիսին, անկասկած գիտական է:

Մեթոդալոգիական առումով մեր հետազոտությունը ընդհանրություն ունի հորենացու հետ: Ելնելով այն իրականությունից, որ պատկերված է հորենացուց առաջ գոյություն ունեցած գրավոր հուշարձաններում, մենք աշխատեցինք թափանցել հնության խորքերը՝ գտնելու մեզ հետաքրքրող երևույթների արմատները, ընդ որում մեզ համար կական օժանդակություն հղավ նախարարական կենցաղի և անվանումների ամենաբնորոշ տերմինների ստուգաբանական վերլուծությունը: Մեր հետախուզումների արդյունքները ևս որոշ իմաստով նման են իրար: հորենացու մոտ ևս, ինչպես և մեզ մոտ, նախարարական կարգը սերտորեն առնչվում է Արշակունիների հետ: Չնայած այն բանին, որ առաջին Արշակունիների վաղարշակը, տիրանալով Հայաստանին, տեսավ, որ այնտեղ, ինչպես ասում է հորենացին, արդեն գոյություն ունեն նախարարություններ և այդ առթիվ հարցում արեց իր ավագ եղբայր Արշակին, թե «ուստի նախարարութիւնքս, որ աստ կան», պատմիչը այնուհետև պնդում է, որ վաղարշակը «սահմանեաց աշխարհիս և նախարարութիւնս, և նոցին նախարարութեանց նահապետու-

կան պատվի արժանացնելուն: Եթե հող տալ նշանակում է նոր տոհմ ստեղծել, ապա պարզ է, որ հողը արվում էր որպես ժառանգական սեփականություն¹: Ըստ հորենացու հողի բաշխումը և նրանից զրկելը դերագույն իշխանության իրավունքն էր, սա մի առանձնահատկություն է, որ բնորոշում էր ֆեոդալական հողատիրության էությունը²:

Բնչպես տոհմը, այնպես էլ նրա զբաղեցրած տերիտորիան հորենացին անվանում է նույն ձևով՝ նախարարութիւն: Այս նրա մոտ ամենից ավելի բնորոշված տերմինն է. այն երբեմն փոխարինվում է նահապետութիւն բառով, բայց «նախարարութիւնք եւ հոցին նախարարութեանց նահապետութիւնք» արտահայտությունից երևում է, որ հորենացին որոշ տարբերությունն է տեսնում այդ երկու տերմինների միջև. նահապետ նշանակում է նախարարության պես: Հանդիպում են նաև տէր և տանուտէր տերմինները նահապետ նշանակությամբ, ինչպես նաև տէրութիւն և տանուտէրութիւն՝ նախարարութիւն և նահապետութիւն իմաստով³:

¹ հորենացի, Բ, ձգ, «տաց նմա լախտենական իշխանութեամբ զգեօզս» և այլն: նոր տոհմերի մասին, Բ, խե, ծը և կզ:

² Նույն տեղում, Բ, ժդ, Տիրբանք խլեց վահունիների տիրությունը զընկնու ի քրմութենէ և զընդն յարբունի տնուս: Արտաշեսի օրոք Մուրացանները զրկվում են իրենց կալվածքներից՝ «զբաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւնս նոցա»: Բ, ծա, Փագավորը Սմբատ Բագրատունուն սպարզիւէ զմասն արքունի, որ ի շէնս Գողթան և Ուղտուակունս: Բ, ծզ և այլն:

³ Նույն տեղում, Ա, դ, «ուստի նախարարութիւնքս, որ աստ կան. ի թի նախարարութեանց, կարգէ ընդ նախարարութիւնս. նախարարութիւն Ապահունաց, Մանազկանս» և այլն, Բ, է, ք. նահապետութիւն Ոշտունաց, Սիսական, Կարմեան և այլն: Մուրացան տէր, Բ, ք, Արղամ տանուտէր ազգին Մուրացանս—Արղամ նահապետ Մուրացանաց Բ, խզ, Բ, խզ, «զյառաջասացեալ տանուտէրական պատիւ Բ, է, Անպահապետի պահլաւ յանն տանուտէրութենէ զանունն որոշեալ, Բ, իբ: Գլտի նահապետ նոցա զՄաղխազ, Բ, է, արտահայտությունից երևում է, որ նահապետը տոհմի զլուխն էր: հորենացին այսպես է անվանում նաև Հին Կտակարանի նահապետներին, Ա, դ, ինչպես բնորոշված է Աստվածաշնչում: նախարար տերմինը կազմված է, ըստ հորենացու, նախ և արաբ բառերից՝ նախարարյալի իմաստով, ինչպես կարելի է եզրակացնել հետևյալ օրինակներից՝ գիւտ որդեմութեան նահարարականացն ծննդոց չերից անտի որդոցն Նոյի, Ա, և. ի ծննդոց չերից նախարարականացն այտոցիկ արանցս, sc. Զրուան, Տիտան, Յապետոսի, Ա, Բ. զթագաւորացն եւ զնախարարականաց ազգաց եւ տոհմից, Ա, գ, Հմմտ. Փարպեցի, էջ 58, ի նախարար պատգամաւորացն:

հորենացուն լավ հայտնի են սեպուհական իրավունքը և ստանդի-ազատությունը զարգացման այն շրջանում, երբ նրանցից ծնունդ էր առնում նախարարական-ֆեոդալական ազնվականությունն որ աստիճանը:

Այսպիսով, եթե մի կողմ թողնենք փաստական իրադրությունը և վերցնենք նախարարության հետազոտության տեսական կողմը, ապա չի կարելի չհամաձայնել, որ մեր պատմիչը մեթոդոգրաֆիպես և առաջ քաշած խնդրով կանգնած էր ճիշտ տեսակետի վրա:

Նախարարության ծագումնաբանության և նրա բուն էության բացատրության մասին մեր և հորենացու միջև եղած շփման կետերը կարող են հաշվի առնվել, քանի որ դրանք խոսում են մեր եզրակացությունների օգտին: Թե որքան են այս վերջիններն ընդունելի, որն է նրանց գիտական արժեքը, այս մասին կարող են տարբեր կարծիքներ լինել: Մենք ամենևին էլ չենք կարծում, որ ունենալով այդքան քիչ և կցկտուր նյութեր, որպիսիք կային մեր տրամադրության տակ, հնարավոր է կառուցել ինչ-որ անառարկելի մի բան: Մեր առաջարկած կոնստրուկցիայում անշուշտ շատ բան ենթադրական է, կանխակալ, բայց դրանք արդեն այնպիսի թերություններ են, որոնք ավելի կամ պակաս շահով հատուկ են պատմական յուրաքանչյուր կոնստրուկցիայի: Այստեղ կարևորը ցնդհանուր Գարցադրումը և նրա լուծումն է հիմնական դժերով, այսինքն՝ Գաջողվեց հայտնաբերել նախարարության արմատները, ուրքան Յիշտ է հետազոտված նրա հետագա զարգացման ուղին և ցնդունելի՞ են, պրոբո, մեր նշած շփման կետերը նախարարական հաջոտություն և Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի միջև: նախարարության հարցի մեր պարզաբանությունամբ լույսի մի ճառագայթ է ջղում այն կիսախավարի մեջ, որ կախված է հայ հեռավոր պնդյալի վրա մինչև Արշակունիների շրջանը, և դրվում է հայոց պատմական կյանքի հետագա՝ մոնղոլական արշավանքների դարաշրջանից մինչև նախարարության ոչնչացումն ընկած ցնդարձակ շրջանի գիտական ըմբռնման հիմքը:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԻ ԳՎՈՒՆԳՈՐԾՈՅԸ

Նիկողայոս Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրության ուսերեն բնագրի հրատարակությունը (Ս. Պետերբուրգ, 1908) բոլորեց երեք Լաոուր դարը: Հարկավ, երա հայերեն քարգմանության և հրատարակման խնդիրը հասունացած էր և կարող էր լուծվել նաև տասնամյակներ առաջ: Սակայն այսօր էլ այն ոչ միայն ուղացած չէ, այլև ուղացած չէր լինի, եթե հրատարակվեր ևս տասնամյակներ անց: Համաշխարհային պատմագիտության մեջ էիջ նետագոտություններ են, որ ժամանակի այսպիսի բնություն են բռնել. պատմական հետազոտությունները մեծ մասամբ սակավակյաց են:

Խոսքս գործնական գիտական նշանակության, և ոչ սոսկ «գիտական ժողովրդագրություն» կոչված երևույթի մասին է, որը գլխավորապես վերաբերում է սոսկ իր ժամանակի գիտության մակարդակին լավ համապատասխանող գործերին: Ադոնցի երկը եթե իր որոշ մասերով կարող է դասվել «գիտական ժողովրդագրության» շարքը, այս հիմնականում, կարելի է ասել նույնիսկ՝ ամբողջությամբ վերցրած, այն տակավին բարձր է: Թարմ է ոչ միայն մեզանում դեռևս չգերագանցված՝ պատմաբանասիրական վերլուծությունների իր մեթոդիկայով, ոչ միայն հիմնական ու հարակից այն եզրակացություններով, որոնք առայժմ անասան են մնում մեր պատմագիտության մեջ, այլև մի շարք այնպիսի խոշոր իր ենթաբաժիններով, որոնցում հիմնվածից հետագա հայ պատմագրությունը որևէ էական փայլ չի արել տակավին, և որոնք, այսպիսով, մնում են գիտության վերջին խոսք:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»-ը ընթերցելուց հետո երա վրա ետադարձ հայացք ձգելով, գալիս ես այն եզրակացության, որ այդ խորագիրը հեղինակի՝ իր և իր գործի նկատմամբ ունեցած ծայրահեղ պահանջկոտության արդյունք է: Հիրավի, մենագրության բովանդակությունը անշափ ավելի լայն է. իրականում երկը ներկայացնում է Հայաստանի ներքին՝ սոցիալ-ֆազական

զարգացման պատմությունը՝ սկզբներից, այսինքն՝ ժողովրդի կազմավորման շրջանից, մինչև մ.թ. 7-րդ դար, և այն էլ առաջին անգամ շարադրված այդպիսի պատմությունը: Համոզվելու համար բավական է դիտարկել երկը կազմող երեք դրվագները, որոնք են «Արևմտյան Հայաստանը», «Արևելյան Հայաստանը», «Նախարարության ծագումը», հակառակ հերթականությամբ: Մենք այստեղ այդպես էլ կվարվենք, սկսելով մեր տեսությունը գիրքը եզրավակող՝ «Նախարարության ծագումը» դրվագից, որը հենց ծայր է անում հայ ժողովրդի ծագման ու կազմավորման խնդրից:

Ն. Ադոնցը այն ժամանակ ի վիճակի չէր շատ տեղ նվիրել ընդված խնդրին, որովհետև առկա պատմական և լեզվական սակավ նյութը դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէր, և տակավին հրապարակի վրա չէին սեպագրական՝ խեթական, ասուրական և ուրարտական արձանագրությունների հարուստ նյութերը: Հետագայում, 30-ական թթ., այդ նյութերը դառնալու էին Ն. Ադոնցի ուսումնասիրման անմիջական առարկան, ևս իր վերջին մենագրության մեջ ստեղծելու էր մի ծավալուն, փաստական նյութերով հագեցած պատկեր: Սակայն նախնական պարագաներում էլ Ադոնցը կանգնած է եղել նիշտ ու մինչև օրս գործուն այն տեսակետի վրա, որ նախ, հայ ժողովուրդը առաջացել է, կազմավորվել է իր հետագա պատմության զարգացման բնավայրում՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում, և երկրորդ, որ այն կազմավորվել է մի շարք, բազմաբիվ, էթնիկական բաղադրատարրերից, որոնց մեծ մասը տեղաբնակ էին, մի մասն էլ՝ եկվոր (էջ 439): Այստեղ հարկ չկա խորանալու այդ տարրերին Ադոնցի տված կոնկրետ բնութագրումների մեջ, քանի որ դրանք կրում են ժամանակի կնիքը և այսօր հնացած են: Կարևոր է շեշտել նրա բնդհանուր-տեսական մոտեցման մնայունությունը:

Հայաստանի ներքին՝ սոցիալ-ֆազական զարգացումը ժողովրդի կազմավորման դարերից մինչև հայ մատենագրության ավյակներով լուսավորված ժամանակի սկիզբը՝ 4-րդ դարը, վեր հանելու համար Ն. Ադոնցի ձեռքի տակ եղել են դեպքերին ժամանակա-

¹ Հրատարակված է *Խոսքում*, 1945 թ.: N. Adontz, Histoire d'Arménie. Les origines du X-e siècle au VI-e (Av. J. C.), Paris, 1945; Հայերեն քարգմանուք թյունը՝ Ն. Ադոնց, Հայաստանի պատմությունը Արևելքից՝ 10—6-րդ դդ. մ.թ.ա., Երևան, 1972:

կից օտար աղբյուրների ընդամենը երկու՝ Քսենոփոնի (մ. թ. ա. 5—4 դդ.) «Անաբասիս» և Պլինիոս Ավագի (մ. թ. 1—ին դ.) «Բնական պատմության» պարունակած հիմնական վկայությունները: Հետևելով դրանց, այդ մեծ ժամանակաշրջանը նա բաժանում է երկու փուլի:

Առաջին փուլը Ն. Ադոնցը անվանում է «կոմարֆոսների» (գյուղատեղիների) շրջան, օգտագործելով Քսենոփոնի այցելած հայկական գյուղի ավագի՝ գեղջավագի համար «Անարասիսում» կիրառված նունական տեղանունը: Գյուղի նկարագրության մեջ Ն. Ադոնցը տեսնում է տոհմային հարաբերությունների հարազատ պատկերը. «Այդ բոլորը,— գրում է նա,— հանդիսանում են ոչ այլ ինչ, քան տոհմային համակեցության ձևի հատկանիշներ» (էջ 484): Այդ փուլը Ն. Ադոնցն անվանում է նաև «Տիգրանյան» շրջան՝ նկատի ունենալով մ. թ. ա. 6-րդ դարի հայոց Տիգրան Երվանդյան բազավորին ու նրա նետերդներին:

Երկրորդ փուլը ստանում է «ստրատեգոսների» շրջան անվանումը ըստ Պլինիոս Ավագի՝ Հայաստանը 120 ստրատեգոսների բաժանված լինելու մասին հաղորդման: Ստրատեգոսների մեջ Ադոնցը տեսնում է ֆեոդալական իշխանություններ, ստրատեգոսների մեջ՝ ֆեոդալ իշխաններ. «հիմք կա ստրատեգոսները համարել տիրակալական իշխանություններ (*владетельные княжества*) բեկուզն նրանց զարգացման սկզբնական շրջանում» (էջ 485): Այս փուլը Ն. Ադոնցը անվանում է նաև «Արշակունյաց» շրջան և իր խնդիրն է համարում «բացահայտել պատմական այն պրոցեսի էությունը, որը «կոմարֆոսներին» հանգեցրեց «ստրատեգոսների» կամ այլ կերպ՝ տոհմային շրջան՝ ֆեոդալականի» (նույն տեղում):

Ադոնցը իրավացիորեն գտնում է, որ միայն Հայաստանի ներքին պատմությանը անմիջականորեն վերաբերող առկա խիստ սակավ նյութերի հիման վրա հնարավոր չէ ներքափանցել հիշյալ պրոցեսի էության մեջ: Բայց դրա համար նա տեսնում է երկու այլ կարևոր հենարան: Դրանցից մեկը հարևան երկրներից ծագող համապատասխան, բայց ավելի հարուստ, նյութեր և դրանց հիման վրա կառուցված տեսություններն են: «Անհրաժեշտ է,— գրում է Ն. Ադոնցը,— որևէ մի ղեկավար կոնցեպցիա <...>: Որպեսզի այդ կոնցեպցիան լինի գիտականորեն ընդունելի, այն պետք է դուրս բերվի այնպիսի պատմական միջավայրից, որում շփվել են հայերը»

(էջ 432): Այդ միջավայրը նա գտնում է իրանական աշխարհում:

Երկրորդ հենարանը Ադոնցը գտնում է բուն հայկական, բեև հետազոտվող շրջանի համեմատությամբ ուշ ժամանակից մեզ հասած նյութերի, այն է՝ մ. թ. 5-րդ և հաջորդ դարերի հայ մատենագրական աղբյուրների մատուցած տվյալների մեջ, որոնք պետք է որ պահպանած լինեն անցյալի վերհուշերը, մանավանդ տերմինաբանության բնագավառում:

Կիրառելով այս երկու լծակները ի լրումն «կոմարֆոսների» և «ստրատեգոսների» մասին հիմնական տեղեկությունների, Ն. Ադոնցը գալիս է այն եզրակացության, որ Արաաշեսի և Զարեհի (մ. թ. ա. 2-րդ դարի առաջին կես) «ժամանակին է վերաբերում տոհմային կարգերի փլուզման սկիզբը և սոցիալական նոր հարաբերությունների առաջացումը: Հեղաշրջման էությունը կայանում էր սոցիալական զանգվածի շերտավորման և դասայնության սկզբունքի առաջացման մեջ. տոհմերի գլուխները կամ պետերը նետգետե դառնում են անվանի մարդիկ՝ իշխանավորներ և այսպիսով դրվում է ապագա տոհմական իշխանությունների սկիզբը: Այս փոխակերպումն սկսվում է այն պահից սկսած, երբ տոհմի ավագի կոչումը դառնում է ժողովրդական <...>: Այս նախապահով հասարակական այն օրգանիզմը, որ առաջ միաժամուրի ու իրավահավասար էր, բաժանվում է երկու սոցիալապես անհավասար մասերի՝ թվով փոքր մասը, որ ծագում է տոհմապետից, իշխում է, իսկ մեծամասնությունը հպատակվում» (էջ 451): «Տոհմային հարաբերությունների փայտայնումը,— շարունակում է Ադոնցը,— որն ուղեկցվում է դասայնության առաջացմամբ ի դեմս իշխանավորների, ապագայի տիրակալ-իշխանների, ավարտվում է Տիգրան Մեծի փոքրակալից դարաշրջանում» (էջ 455):

Հայ հասարակության զարգացման հաջորդ նշանաձույրը, ըստ Ադոնցի, հայ Արշակունիների առաջին ներկայացուցիչ Տրդատ I-ի օրոք Հայաստանում «120 ստրատեգոսների ձևավորումն է, որ կարելի է համարել Հայաստանի հասարակական-հարակալական անի պատմության նոր իրավիճակի սկիզբ» (էջ 474):

Բերված հատվածները հատուկ մեկնաբանության կարիք չունեն: Ադոնցը առաջինն է հայ պատմագրության մեջ, որ այսպիսի խորությամբ վեր է հանել հայ հասարակության շարժումը նախադասակարգային հասարակությունից դեպի դասակարգային, կամ իբ

ըմբռնմամբ և տեղի հարստությանը՝ «զասային» հասարակու-
րյան:

Աղոնցի ներդրումը հին Հայաստանի սոցիալական հարաբերու-
րյունների գարգացման ուսումնասիրության մեջ նիշտ զննանաելու
համար պետք է ընդունել, որ նրա ողջ մենագրագրությունում հենց այս
դրվագն է, որից հետագայի հայ պատմագիտությունը ամենից
ավելի է հեռացել: Դա միակզամայն հասկանալի է, քանի որ վեր-
ջինս, նախ, զարգացել է այլ՝ մարմախառնական մերագրագրության
հիմքի վրա, և երկրորդ՝ գիտելի է հայ հնագիտության հայրաշրու-
պնացիսի նշարակական ազդեցությունը, որոնց մասին Աղոնցի ժամա-
նակ հույճնիակ ծրագրել չէր կարելի: Վեր է հանվել ու առանձնացվել
հին Հայաստանի պատմության մի ամբողջ դարաշրջան, որը մենք
ընտրողով ենք որպես ստեղծագրական, համեմայն դեպս այն ո՛չ
նախնադարյան է, ո՛չ էլ ֆեոդալական, այլ տեղափոխվում է նրանց
միջև, ընդգրկելով գրեթե հազարամյա մի ժամանակահատված:
Վեր են մանավել այդ դարաշրջանի սոցիալ-անանսական, բազմա-
կան ու մշտկութային զարգացման օրինաչափություններն ու
առանձնահատկությունները¹:

Իհարկե, այս պատկերացումները բավական հեռու են Ն. Աղոն-
ցի տեսակետից, սակայն անկասկած հենց նրա բռնած ուղղությունն
էր, որ շարունակվելով Հ. Մանանդյանի գործերում և բեղմնավոր-
վելով ավետաբեայ պատմագրության արդեգրած մարմախառնական
տեսությամբ, հանդես էր այդ արդյունքին²:

¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատ. 1, Երևան, 1971, ողջ հանրագումարի
են բերված հին Հայաստանի պատմության բնագավառում հայ պատմագիտության
ձևեր բերած նվաճումները:

² Աւշադրության արժանի է այն հանգամանքը, որ ավետաբեայ պատմագիտու-
թյան՝ հին Հայաստանի ներքին պատմության վերհանման օժանդակ միջոցները ևս
իրենց պետքն ունեն Ն. Աղոնցի հետազոտական մեթոդիկայի մեջ: Հայտնի և
արդյունավետ կիրառվել է, նախ, հին Հայաստանին հարկան, ժամանակակից ու
պատմական նույն արժեալատիվություններով զարգացած երկրներից. ժառոջ նյութը՝
համեմատանցման (անալոգիայի) կարգով, ըստ որում, Աղոնցի ընտրած յերանա-
կան ալիտարհիմն պատմաբան ինչպես նաև հին և հեղինակական Արևելյան ուղիղ հասարակու-
թյունների սովյունները Երկրորդ, ավելի մեծ մասշտաբով ու խորությամբ է օգտա-
գործվել հայ վաղ միջնադարյան մատենագրության հին Հայաստանին վերաբերելի
նյութը, հատկապես՝ տերմինաբանությունը: Ըստ որում, եթե Աղոնցի մոտ այդ
նյութը, կրելով, րնակներարք, ֆեոդալական հասարակության կիրքը, ձեռող դեր է

Դառնալով մենագրության հաջող գրվագներին՝ հայկական
ֆեոդալիզմի ծավալուն և խառնակ ուսումնասիրությանը, Աղոնցին
զտնում են միանգամայն այլ պայմաններում՝ գիտված գործի հա-
մար անհրաժեշտ առկա բոլոր նյութերով, և բնական է, որ այստեղ
առավել վառ է հանդես գալիս նրա հետազոտական արասկարգ
ասզանցի փայլը:

Երացնելով վաղ միջնադարյան հայ մատենագրության, հատ-
կապես պատմագրության հարուստ ավյալները և դիտարկելով
դրանքի ժամանակ էապիտեային համարված՝ աբսոլյուտիզմական
(հիմնականում՝ ֆրանսիական) ֆեոդալական հասարակարգի հետ
սխտեմատիկ տիպաբանական համադրության մեջ¹, Ն. Աղոնցը
ավել է հայկական վաղ ֆեոդալիզմին հատուկ նախաբանական տի-
րույթի դասական սահմանումը:

«Իհենց դրությամբ,— գրում է նա,— տեղիառիայ միաժողո-
րը համարվում էին հավասար և կազմում էին տուրն, որի գլուխ
կանգնած էր տերը կամ տանուտերը ու կոչվում էր առանուտերու-
թյուն կամ նախարարություն: Զարախանչյուր սանտաբեռու-
թյուն ներկայացնում էր մի ներքակ միջավայր, օժտված սրտական
իրավասություններով: Նրանք ունեին դասավարչական անկախու-
թյան և գերագույն իշխանության այլ աստիքումներ: Տանուտերու-
թյունները յուրատեսակ մանր պետություններ էին, որոնց գլուխ
կանգնած իշխանները՝ արհայիկներ, փոքրիկ քաղաքներ: Զարա-
խանչյուրի իրավասության սահմանները de facto կախված էին հոգ-
րության այն աստիճանից, որ նրանք ունեին տվյալ պահին: Պատ-

կատարել Հայաստանի նախաֆեոդալական հասարակարգը ևս որպես ֆեոդալական
ընկալելու իմաստով, ապա այժմ, հնարիտական և այլ աղբյուրների կուտակման
պարզանքում, այն մեծ հաջողությամբ ծառայում է հին Հայաստանի սոցիալ-
տնտեսական ու քաղաքական կարգերի բուն էությունը նորարարումները:

¹ Այդ համադրությունը, որն ընդօրինակել ու շարունակել է Հ. Մանանդյանը,
ույնի այլ բան չի նշանակում, քան հեղինակների փաստարկներից մեկը, թե հիթավի
Հայաստանում ևս գործ ունենք ֆեոդալիզմի հետ: Աղոնցի ավտարական (ֆրանսիա-
կան) ֆեոդալիզմն այստեղ ծառայելով է ստիկ որպես էապիտեային մոդել, այն-
պես, ինչպես մինչև վերջին ժամանակներու որպես այլախիսին էին ծառայելով
հունական և հռոմեական հասարակությունները՝ ստիկապետական կազմերի համար:
Պատմագիտությունն արդեն աղտոտվել է ֆեոդալիզմի ավտարական և ազատա-
զրվում է ստեղծագրական հասարակարգի առկայության այլօրինակ ապացույցների
անհրաժեշտությունից:

միջները համախ հիշատակում են մեծ տերերին՝ մեծամեծ ավագանուն, և տարբերում ավագ տանտերերին կամ նախարարներին կրտսերներին, ելնելով, ըստ երևույթին, նրանց համեմատական հզորությունից: Տանտերության ընդհանուր դրությունը պայմանավորված էր իշխանների և թագավորների ուժերի առկա հարաբերությամբ և դրսևորվում էր մերթ կենտրոնաձիգ մերթ կենտրոնախույս ձգտումների գերակշռությամբ: Հնաբավոր դեպքերում թագավորները չէին վարանում բռնագրավելու գանի նկատմամբ մեղանշած իշխանների կալվածները» (էջ 505)¹:

Բնականաբար, սույն լիարժեք իրավաբանական բնույթի սահմանմանը պակասում է սոցիալ-տնտեսական տարր՝ ֆեոդալիզմը ոչ մարքսիստ պամարանին ներկայանում էր սոսկ իր ֆադախական (իշխանության մասնատվածություն, էջ 507) և իրավական (սոցիալական նվիրապետություն, վասալականություն) կազմերով: Այդպես էլ արտադրական հարաբերությունները Ադոնցի մոտ փոխարինված են հողային սեփականության հարցերով: Չննշով Ֆախարարական Հայաստանին հատուկ սոցիալական նվիրապետության աստիճանները՝ վերից վար, սկսելով արքայից և մանրամասն ծանրանալով նախարարական և սեպհական աստիճանների վրա, պատմաբանը, ի վերջո, հասնում է գյուղական բնակչությանը և նշում, որ «գրավոր հուշարձանները որոշակիորեն տարբերում են գյուղացիությունը ազատներից, սակայն նրանց փոխհարաբերությունների և տերերից ունեցած հողային բնույթի կախվածության մասին համարյա թե ոչինչ չեն ասում» (էջ 534): Գյուղացիության վիճակին վերաբերող հաշորդ էջերում Ադոնցը իր ուշադրությունը հիմնականում սևեռում է հարկերի, տուրքերի ու պարհակների խնդրի վրա: Սակայն հեղինակը գյուղացիության վիճակի կարևորագույն հարցը բնավ չի լքել ուսումնասիրության այս մակարդակի վրա, այլ հանգամանորեն ու խորն անդրադարձել է դրան հետագա-

¹ Ն. Ադոնցի գործը այս բնագավառում շարունակելու գործը ընդհատվել է Լ. Մանանդյանը իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» (Երևան, 1934) արժեքավոր մեկնաբանության մեջ, որտեղ նա մանրամասն հետազոտության է ենթարկել նախարարությունների հարաբերությունը թագավորական իշխանության հետ, նախարարությունների ներքին կազմակերպությունը, ազատների, հողորտականության, շինականների ու ոսմիկների, ինչպես նաև թագաբային բնակչության՝ արհեստավորների ու սարուկների վիճակը:

յում, հատուկ աշխատության մեջ, որն անվանել է «Հին հայ շինականությունը»: Ֆրանսիական ֆեոդալական հաստատությունների նեո հայ վաղ միջնադարյան իրականության համադրումը Ադոնցն այստեղ լրացնում է հոսմեական իշխանության տակ գտնված՝ 4-րդ դարի Փոֆր Ասիային հատուկ հողային հարաբերություններին դիմելով: Դրանց լույսի ներքո հեղինակը հստակորեն տարբերակում է նաև Հայաստանում թագավորական կամ պետական հողերը՝ «կալվածատիրական» (մասնավոր սեփականատիրական — Գ. Ս.) հողերից և համապատասխանաբար գնեազանում նաև այդ հողերի վրա աշխատող հողագործների երկու խմբերի վիճակը, երկրորդ խմբի հողագործներին համեմատելով փոֆրանսիական կոլոններին: Նա ավելի հեռուն է գնում, առանձնացնելով «կալվածատիրական» հողերի երկու կարգ՝ հարկված և հարկերից ազատ, որոնք իրենց հերթին ենթադրում են կոլոնատիպ հողագործների երկու տարբերակ:

Արդարև, պատմաբանն այստեղ խոշոր քայլ է անում դեպի արտադրական հարաբերությունների սկզբունքի ըմբռնումը:

Ն. Ադոնցի հետազոտական մտքի բռնիչը իր բարձրակետին է հասնում «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեկնագրության երկրորդ, միջին դրվագում: Սրա խորագրեն է «Արևելյան Հայաստանը», որի տակ հասկացվում է 387 թ. բաժանումից հետո Հայաստանի՝ Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ ունեցած մասը: Իրականում, սակայն, այստեղ Ադոնցի տեսադաշտում է նաև ամբողջ 4-րդ դարը, այսինքն՝ ողջ Հայաստանը ու նրա սոցիալ-ֆադախական վիճակը:

Իր ընդգրկումով, նյութերի սպառիչ օգտագործմամբ և պատմաբանասիրական վերլուծության ներքին տեսակետից հայագիտության մեջ չգերազանցված նմուշ է տալիս Ն. Ադոնցը «Նախարարությունների ֆանակական վերլուծությունը» գլխում: Նրա խրեդիրն էր պարզել վաղ միջնադարում գոյություն ունեցած և գործած նախարարական տերի ֆանակական և անվանական կազմը, նրանցից յուրաքանչյուրի խաղացած դերի ու նշանակության համեմատական չափն ու աստիճանը, նրանց զինվորական հզորությունը և դրանով պայմանավորված՝ Հայաստանի ռազմական կարողության

¹ Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 157—205:

սահմանները, և այդ բոլորը, ըստ հնարավորության, երկու կտրվածքով՝ և՛ Արշակունիների օրով, և՛ մարգպետության ժամանակ:

Այդ նպատակով առկա աղբյուրները Ադոնցը բաժանել է երեք խմբի. ա) վաղ միջնադարյան պատմիչներ (բացառյալ Խորենացին) և եկեղեցական ժողովների տվյալներ, բ) Գահնամակ և Զորանամակ, գ) Մովսես Խորենացու տվյալները, և իր վերլուծությունը տառել է դրանց բնական համեմատությամբ: Առաջին խմբի աղբյուրները տվել են նրան նախաբանությունների բովանդակ կազմի ու կարգի կենդանի պատկերը, այդպիսինի բոլոր առավելություններով ու թերություններով հանդերձ, որ գոյություն է ունեցել 4—7-րդ դդ., իսկ երկրորդ խմբի աղբյուրները՝ դրա իրավական արտացոլումը: Սակայն Գահնամակն ու Զորանամակը մեզ են հասել ամենևին էլ ոչ որպես վավերագրեր, այլ որպես բազմիցս արտագրված ու խմբագրված գրական հուշարձաններ: Եվ Ադոնցը ենթադրում է դրանք նախապես ամենամանրակրկիտ հմտագույն աղբյուրագիտական բնույթյան, որի բովում նշգրտված ու զաված անխառն են միայն, որ նա գործի է դնում իր համեմատություններ կատարելու համար:

Վերջապես այդ աշխատանքի արդյունքը Ն. Ադոնցը համադրում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանգես եկող՝ նախաբանությունների համակարգի հետ, որը ստեղծվել է պատմահորը մտաշնչի բոլոր հնարավոր աղբյուրների տվյալները միահյուսման միջոցով: Այդ կապակցությամբ Ն. Ադոնցը նշում է. «Ներկայումս «Հայոց պատմությունը» հանդիսանում է հայ հին դպրության հուշարձանների տարիք և ընդհանրապես նշանակությունը որոշելու փորձաքար (էջ 292):

Ն. Ադոնցի վեր հանած՝ 4—7-րդ դդ., այսինքն՝ նախաբանության ծաղկման շրջանի այս համայնապատկերը մինչև օրս ուժի մեջ է և հազիվ թե էական սրբագրումների ենթարկվի¹:

¹ Կ. Քոմանովը (C. Toumanoff, Studies in Cristian Caucasian History, Georgetown University Press, 1963) փորձում է վերանայել այս համայնապատկերը, նշելով, որ Ադոնցը անտեսել է մի քանի նախաբանություններ, մի քանիսն էլ ներմուծել է առանց բավարար հիմքերի, և որ նրա եզրակացությունները նախաբանների զինվորական ուժերի և զահերի կարգի մասին որոշ ճշգրտում են պահանջում (էջ 147 և հաջորդ): Նշենք սակայն, որ Քոմանովի զիտողությունները ուշադրավ են, բայց մասնակի բնույթ են կրում: Առավել հետաքրքրական են նրա փորձերը:

Ն. Ադոնցն այնուհետև ձեռնամուխ է լինում այդ համայնապատկերին նաև տարածական տեսք տալու, քարտեզի վրա այն անդադրելու խնդրին («Նախաբանությունների տերիտորիալ վերլուծությունը» գրվածք): Այստեղ առավել դժվարին, բայց և, ըստ երևույթին, Ադոնցի համար առավել զբաղիչ է եղել նախաբանական տների զարգացման և նրանց տիրույթների շարժման պրոցեսի հետազոտությունը: Նախաբանական տիրույթները քարտեզով միավորներ չեն եղել. դառերի ու տասնամյակների ընթացքում դրանք անհանգել կամ արոհվել, միավորվել ու անջաշարժվել են, մի մասին տիրող տեղերը խաղաղ վերացել են պատմության ասպարեզից, դրանց տեղը զբաղեցրել են նորածին նախաբանական տներ: Ահա այս խառնաբոլորն ու պատմական առումով նշանակալից պատկերն է, որն իր ներքին օրինաչափություններով ու պատկաններով հանդերձ, վեր է հանել Ն. Ադոնցը իրեն հատուկ հմտությամբ, ցուցաբերելով նույնպիսի վարպետության պատմական աշխարհագրության բնագավառում, որպիսին նրան հատուկ է պատմության և բանասիրության մարզերում, և իր ստացած արդյունքը դարձնելով հայկական ֆեոդալիզմի ուսումնասիրման անկյունաքարերից մեկը:

Մենագրության երկրորդ, միջին դրվագն ավարտվում է «Նախաբանությունը և հոգևոր իշխանությունը» գլխով: Հեղինակն այստեղ վերացել է կրոնադավանական հարցերից և պարզաբանել հայ եկեղեցու ծագման և սոցիալ-ֆաղափական դերի ու նշանակության բարդ խնդիրները: Այս գլխի վրա արժե ավելի հանգամանաբեր են կանգ առնել, որովհետև, մի կողմից, հայազիտության մեջ այստեղ նետագա ֆայեր գրեթե չեն արվել, իսկ մյուս կողմից, էյուրո խիստ կարևոր է հայկական վաղ ֆեոդալիզմը մարքսիստաբան ըմբռնելու համար:

Ինչպես և նախաբանությունների դեպքում, Ադոնցին նախ և

ա) առանձնացնել նախաբանական տների խմբեր ըստ նրանց ծագման (այսպես, նրա կարծիքով, 15 տուն ծագում է նրվանդական թագավորական տոհմից, 9 տուն՝ Արշակունիներից, 5 տուն ուրարտական ծագում ունեն և այլն, էջ 222), բ) տիպաբանորեն համեմատել հայկական Զորանամակի թվական տվյալները Հունաստանի կոնֆեդերացիայի իշխանների զինվորական ուժերի հետ՝ 1648 թ. Վեստֆալյան հաշտությանից հետո, երբ Հռոմեական սրբազան կաթոլիկոսն իր վերջնական անգլոման էր ապրում (էջ 239—240), գ) բաժանել նախաբանական դահերի կարգն արտասահմանային ավանդական ցուցակը մի քանի այնպիսի հատվածների, որոնց նկատմամբ էին կատարվում զահերի տեղաշարժերը, այսպիսով կային չարդիվ ողջ ցուցակի ներթափացքած ընդհանուր պատկերի վրա (էջ 247):

առաջ հետաքրքրում են եպիսկոպոսությունների հետ կապված ֆանակական և տերիտորիալ հարցերը, որոնց լուծումը շոշափելիություն է հաղորդում հայ եկեղեցու զարգացման պատմությանը: Սղոթյանների կենտրոններ Ադոնցիին հանգեցնում է մի շարք բյուրիմացական կամ շափազանցված բվական ավյալները մեծիւլուն, հաստատուն կովաններ ընդունելով 5-րդ դարի կեսի և 6-րդ դարի սկզբի ու կեսի երեք եկեղեցական ժողովների ավյալները, որոնք համապատասխանաբար տալիս են եպիսկոպոսությունների բվական անի ստույգ պատկերը: Հետևելով եպիսկոպոսությունների տերիտորիալ բաշխմանը, Ադոնցը վեր է հանում Հայաստանի և հարևան երկրների (ուր եպիսկոպոսությունները կապված չէին խոշոր հողատերերի տիրույթների հետ, այլ իրենց կենտրոններն ունեին ֆաղաֆներում) եկեղեցիների կազմակերպման մեջ մի կարևոր տարբերություն. «եկեղեցական իշխանությունը.— գում է Ադոնցը,— բաշխվում է առավել ազդեցիկ իշխանական տոհմերի միջև՝ նրանցից յուրաքանչյուրի համար առանձին եպիսկոպոսություն հիմնելու միջոցով: Այստեղ մեք չենք հանդիպում միարապոլիտական կազմակերպության <...>, տերիտորիալ սկզբունք չենք գտնում: Եկեղեցական վարչական միավորը համընկնում է իշխանական տիրույթի հետ» (էջ 407): Այս երևույթը Ն. Ադոնցը շատ դիպուկ անվանում է եկեղեցական կազմակերպության նախարարականացում:

Ադոնցն անդրադառնում է հայ եկեղեցու ծագման խնդրին և համոզիչ մեկնաբանելով պահպանված սակավ ու հեղինակավոր ավյալները, ցուցադրում Հայաստանը 3—4-րդ դարերի ընթացքում ողողած՝ ֆրիստոնեության երկու ալիք: Առաջին ալիքը գալիս է հարավից՝ Ասորիքից: Որպես իր եզրակացությունների ելակետ, Ն. Ադոնցը ընդունում է մ.թ. 3-րդ դարի կեսերին Հայաստանում գործած հայտնի Մենհուսան եպիսկոպոսի նստավայրը Մոփսիում գտնվելու հանգամանքը: Մոփսի այս ֆրիստոնեական կենտրոնը անմիջականորեն կապված էր Նոեսիայի կենտրոնի հետ, որտեղ դեռևս 2-րդ դարի վերջերին Աբգար 9-րդ բազավորն ընդունել էր ֆրիստոնեությունը: Այս վաստի վրա է հիմնված Աբգարի մասին հայտնի ավանդությունը, որի մեջ, սակայն, Աբգար 9-րդը փոխարինված է նրա նախնի Աբգար 5-րդ՝ Քրիստոսին ժամանակակից բազավորով, և որը մանրամասն պատմում է Քաղենու առաջալի ֆառազական գործու-

նեության մասին: Նույն պատմությունը, ինչպես հայտնի է, հայացված անսովոր հանդես է գալիս Մովսես Խորենացու մոտ: Ադոնցը զգուշորեն, բայց վստահաբար արձակում է հայոց եկեղեցու առաջնական ծագում ունենալու ավանդության պատմական հիմքի հանգույցը:

Մենհուսան եպիսկոպոսի՝ Մոփսի ֆրիստոնեական կենտրոնը սերելով Նոեսիայի եկեղեցուց, իր հերթին ժամանակի ընթացքում ծնել է Տարոնի եպիսկոպոսությունը, որտեղ գործել է Աղբիանոսի տոհմը: Տարոնը եղել է Աղբիանոսի և նրա հետնորդների նստավայր 4-րդ դարում, երբ այդ տոհմի ներկայացուցիչները պայքարել են Հայաստանի եկեղեցին գլխավորելու համար: Այսպիսի ընթացք է ունեցել Հայաստանում ֆրիստոնեության տարածման առաջին ալիքը:

Քրիստոնեության երկրորդ ալիքը եկել է արևմտափյոց, կապադովկիայի և Փոքր Հայքի հունալեզու կենտրոններից, և իր առաջյուն է ունեցել ի դեմս Գրիգոր Լուսավորչի: Այն նախ և առաջ ողողել է Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան գավառները՝ Գարաբաղի, Եկեղյաց, Գեջան և այլ, ուր Լուսավորչի ու նրա տոհմի կենտրոնն է դարձել ու մնացել Քորդանը: Այնուհետև այն հանգեցրել է ֆրիստոնեության հաղթանակին ամբողջ Հայաստանում:

Ադոնցը հետևողականորեն վեր է հանում այն կապը, որ նշմարվում է 4-րդ դարի ֆաղաֆական անցքերի և Գրիգորի ու Աղբիանոսի հետնորդների պայքարի ընթացքի միջև: Հայաստանում Հռոմի գերակշռության պահերը, ինչպես հանգեցրել են սկզբում Գրիգոր Լուսավորչի հաղթանակին, այնպես էլ հետագայում պայմանավորել են նրա տոհմի ներկայացուցիչների՝ հայ եկեղեցին գլխավորելը: Ասորական եկեղեցուն հեցուկ կանգնած Իրանի գերակշռությունը օրինաչափ կերպով զուգադիպել է Աղբիանոսյանների իշխանություն գալու պահերին: Համապատասխանաբար Գրիգորի հետնորդները եղել են հոռոմասեր, Աղբիանոսիներ՝ պարսկասեր: Ադոնցին ավելի վաղ, քան որևէ ուրիշ հետազոտողի, հաջողվել է ցուցադրել վաղ միջնադարյան հայ եկեղեցու ֆաղաֆական դեմքը:

Ահա, այսպես, հայ ժողովրդի կազմավորման ընթացքին հետևելով, նրա հետագա սոցիալ-ֆաղաֆական զարգացման ընթացքը տոհմային կարգերից միջև դասային հասարակություն՝ ֆեոդալական կարգերի հաղթանակն ու ծաղկումը, ամփոփելով է, որ Ն. Ադոնցը

ցը դիմում է իր մենագրության վերնագրում ազդարարած նյութին: Գրքի այս դրվագը, որը ըստ շարագրանքի հերթականության առաջինն է, կոչվում է Արևմտյան Հայաստան: Այն նվիրված է Հոռմեական կայսրությանը միացված հայկական հողերի բազմակողմանի ուսումնասիրությանը՝ սկսած 387 թ. բաժանումից:

Ադոնցն այստեղ մի առ մի հետազոտում է այդ տարածքի ֆազականացումը տարբեր վիճակում գտնված երեք մասերը, այն է. Մոսկր և նրա շուրջը խմբավորված իշխանությունները, այսպես կոչված սառապոլությունները, որոնք բնորոշ միեջև Հուստինիանոս կայսեր ժամանակը շարունակում էին օգտվել, գոնե ներքին խնդիրներում, ինքնավարության իրավունքից, այնուհետև «Ներքին» կոչված Հայաստանը՝ Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան շրջանները, որը բնի այդչափ ինքնավար չէր, բայց և այնպես մինչև նշված կայսեր ռեֆորմները որոշակիորեն գերծ էր մնացել կայսրության վարչական մեկենայի մամլիչ գործողությունից և, վերջապես, Փոքր Հայքը:

Փոքր Հայքի՝ Ն. Ադոնցի ուսումնասիրությունը առանձնահատուկ կարևորություն ունի: Այդ երկրամասը, հնագույն ժամանակներում հայերի օրհաններից մեկը՝ Հայասան, բավական վաղ դուրս է մնացել հայ պետականության ոլորտից, բնորոշվել Հոռմեական կայսրության մեջ ու հարմարեցվել նրա վարչական համակարգին: Ն. Ադոնցը գալիս է այն եզրակացության, որ այսուհետև, հակառակ գոյություն ունեցող կարծիքների, Փոքր Հայքը շարունակել է նշանակալից շափով մնալ հայաբնակ և առնչվել բուն Հայաստանի պատմությանը: Նա գրում է. «Փոքր Հայքի հողերի նշանակությունը հայոց պատմության մեջ ըստ արժանվույն չի գնահատվում: Պատմաբանները Փոքր Հայքը առանց այլևայլության դուրս են հանում հայկական շահերի ոլորտից: ... Հիմք չկա հայոց պատմությունից դուրս հանել բնիկ հայ բնակչություն ունեցող մի ամբողջ շրջան: Իրականում հայոց պատմական կյանքում Փոքր Հայքին վիճակվել է շատ լուրջ առաջելություն...» և այլն (էջ 81—82):

Ցավով, Ն. Ադոնցի փայլուն նախաձեռնությունը՝ վերագնահատել Փոքր Հայքի պատմությունը «հայկական տեսանկյունից», շարունակողներ գրեթե չի ունեցել, և նրա կատարածը փաստորեն մնում է այս բնագավառում գիտության վերջին խոսք:

Ցուցաբերելով հայկական ու բյուզանդական իրականությունների հավասարապես խոր, պրոֆեսիոնալ իմացություն, Ն. Ադոնցը լուսաբանում է Հուստինիանոս կայսեր (527—565 թթ.) Հայաստանում իրականացրած ռեֆորմների պատճառները, էությունն ու հետևանքները: Այս կայսրը իր առջև անխաղաղ ճակատակ էր դրել՝ վերականգնել Հոռմեական կայսրությունը նրա հզորության գագաթնակետին գտնված վիճակում, որի համար անհրաժեշտ էր համարում լարել իր տերության բոլոր ուժերը, այդ թվում նաև լուծել տերության մեջ մտած, բայց տակավին նրա վարչական և հարկային սխառմիւն շմբկված, կայսրության կողմից կլանված, բայց դեռ չմարսված հողերի վերջնական յուրացման խնդիրը: Նման երկրների մեջ մի շարք առումներով Արևմտյան Հայաստանն ամենաերկնային էր: Հուստինիանոսի այստեղ իրագործած ռազմական վերափոխությունների նպատակը կայսրության արևելյան՝ պարսկական սահմանի ամրացումն էր: Նախկինում տրոհված ռազմական իշխանությունը միավորվեց Հայաստանի սարառեցութի ձեռքում, ձեռնարկվեց սահմանամերձ շրջաններում նոր հզոր ամրոցների ու ֆալակ-ամրոցների կառուցման և եղածների հիմնովին վերակառուցման գործը: Բախտորոշը Հայաստանի համար Հուստինիանոսի ձեռնարկած ֆալակային վերակառուցումն էր: Արևմտյան Հայաստանը, ներառյալ Փոքր Հայքը, բաժանվեց չորս մասի՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերի, որոնց միջև տրոհվեցին և կորցրին իրենց ամբողջականությունը բազմաթիվ նախարարական տիրույթներ: Երկիրն անցավ հռոմեական նահանգային կառավարման ու հարկման ոլորտը: Մյուս հայտնի ռեֆորմով հայ իշխանական տներում ընդունված ժառանգականության կարգի մեջ էական փոփոխություններ մտցվեցին ըստ հռոմեական օրինակի. վերացվեց այստեղ ավանդաբար տիրող մայրաքաղաք և, որդիներից բացի, դուստրերին ևս ժառանգության բաժին ստանալու իրավունք սահմանվեց: Երկու ռեֆորմներն էլ, յուրաքանչյուրը յուրովի, նույն նպատակն էին հետապնդում, պարզաբանում է Ն. Ադոնցը, բուլացնել, կազմալուծել բյուզանդական Հայաստանի նախարարական համակարգը, և այդպիսով իրականացնել երկրամասի կառառյալ հռոմեականացումը:

Դրվագը եզրափակող գլխում Ն. Ադոնցը բնութագրում է Հուս-

տնկիանոսի ունեւորման աղետաբեր բնույթը՝ Հայաստանի բյուզանդական իշխանության տակ գտնվող մասի համար: Նախարարությունների անկումից բացի, սկիզբ առավ կամ էսպես ուժեղացավ հայերի արտագաղթը հայրենիքից դեպի կայսրություն: Ճիշտ է, այս վերջին երևույթին հնարավոր չէ միանշանակ բացասական գնահատական տալ, քանի որ այն բեղմնավորեց կայսրության կյանքի տարբեր բնագավառները, ներմուծելով այնտեղ բազմաթիվ ու կարող հայ գործիչների ուժն ու եռանդը և փայլեցնելով նրանց կերպարները համաշխարհային պատմության բառերաբեմում և, բացի այդ, որոշակի վերածնունդ բերեց Փոքր Հայքի հայությանն ու հող նախապատրաստեց հետագայում Կիլիկիայի հայկական պետության առաջացման համար: Վերջապես, Ն. Աղոնցը վերոնիշյալ ունեւորման հետ է առնչում նաև Հայաստանում հունարան հայտնի դպրոցի ծաղկման երևույթը:

Այդպիսով, համեմատման բերելով շարադրվածը, կարելի է ասել, որ հանձին Ն. Աղոնցի հայ պատմագիտության մեջ գործել է մի հեղինակ, որը առաջինն է ամփոփել հայ ժողովրդի սոցիալական պատմության հիմնական երևույթները սկզբից մինչև վաղ միջնադարը ներառյալ: Եվ Աղոնցն այդ կատարել է ոչ միայն տալով էությունի պատմաբանասիրական և պատմաաշխարհագրական վերլուծության օբիեկտիվ նմուշներ, այլև միավորելով XIX դարի դասական հայագիտության և եվրոպական բնական պատմագիտական մտքի նվաճումները: Այս ամենը Ն. Աղոնցի երկը դարձնել են հայագիտության մեջ տակավին չգերազանցված մի արժեք:

